

ՕՐԵՍՏ ՍՈՒԲՏԵԼՆԻ



ՈՒԿՐԱԻՆԱ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ



ՆԱԳՈՒՅՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ

ԿԻԵՎՅԱՆ ՌՈՒՄԻԱ

ԼԵՆ-ԼԻՏՎԱԿԱՆ ՇՐՋԱՆ

ԿՈՋԱԿԱԿԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆ

ԿԱՅՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ

ՈՒԿՐԱԻՆԱՆ XX ԴԱՐՈՒՄ

21-92

ՕՐԵՍՏ ՍՈՒԲՏԵԼՆԻ

ՈՒԿՐԱԻՆԱ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ



4347

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

2010





ՀՏԴ 947 (477)  
ԳՄԴ 63.3 (2 Ուկ)  
Ս 920

Գիրքը տպագրվում է Հայաստանում և Ուկրաինայում  
հայտնի գործարար և բարեգործ  
պարոն Սամվել Շահնազարյանի մեկենասությամբ

Սուբտելնի Օ.

Ս 920 Ուկրաինա. պատմություն: - Վաղարշապատ: 2010. - 550 էջ:

Ամերիկայի և Կանադայի հայտնի պատմաբան Օրեստ Սուբտելնին (ծնվ. 1941 թ.) իր գիտական և մանկավարժական գործունեությունը սկսել է ԱՄՆ-ի Հարվարդի համալսարանում: 1982 թ.-ից Տորոնտոյի (Կանադա) Յորկի համալսարանում Օրեստ Սուբտելնին աշխատում է որպես պատմության և քաղաքագիտության պրոֆեսոր: 1973 թ.-ին պաշտպանել է Փիլիսոփայության դոկտորի գիտական աստիճան հայցելու դիսերտացիա՝ «Չեթման Պիլիպ Օռլիկի կապերը Ղրիմի խանության և Օտտոմանյան Բարձր Դռան հետ՝ 1710-1742 թ.թ.»։ 1975 թ.-ին գրել է «Իվան Մազեպայի նամակագրությունը՝ աշխատությունը», 1981 թ.-ին՝ «Մազեպայականները և XVIII դարի ուկրաինական անջատողականությունը», 1985 թ.-ին՝ «Գերիշխման խնդիրը Արևելյան Եվրոպայում՝ տեղական ազնվականությունը և արտասահմանյան բացարձակ իշխանությունը 1500-1715 թ.թ.-ներին»:

1988 թ.-ին Տորոնտոյի համալսարանի հրատարակչությունում տպագրվել է Օրեստ Սուբտելնու բազմամյա գիտական աշխատանքների արդյունքը՝ «Ուկրաինա. պատմություն» գիրքը, որը լայն տարածում գտավ և ճանաչվեց որպես ուկրաինական պատմության լավագույն շարադրանքն անգլերենով: Այս աշխատության լրջության մասին են վկայում նրա բազմաթիվ վերահրատարակումները, այդ թվում նաև այլ լեզուներով: Օ. Սուբտելնու աշխատությունը որպես դասագիրք օգտագործվում է Ուկրաինայի ԲՈՒՀ-երում, իսկ կրճատված տարբերակով՝ միջնակարգ դպրոցներում:

Լինելով Ամերիկա-Կանադական պատմագրության դասական օրինակ, ուսումնասիրությունն առանձնանում է իր գիտական անկողմնակալությամբ՝ Ուկրաինայի պատմության շատ խրթին, միևնույն ժամանակ վիճելի էջերի մանրակրկիտ լուսաբանությամբ:

Գիրքը, հայ-ուկրաինական բազմադարյան կապերի ընթացքում, ուկրաինական պատմության առաջին հրատարակությունն է հայերենով:

ՀՏԴ 947 (477)  
ԳՄԴ 63.3 (2 Ուկ)

- © Orest Subtelny. Ukraine: A History. University of Toronto Press, 1988
- © Թարգմանությունը՝ Ջառա Թումանյանի և Դավիթ Բաղդասարյանի
- © Ընդհանուր խմբագրությունը և վերջաբանը՝ Օլեքսանդր Բոժկոյի

ISBN 978-99941-2-343-8

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

## ՆՆԱԳՈՒՅՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ

Ուկրաինան ծգվում է Միջերկրածովյան աշխարհի հյուսիս-արևելյան եզրագծով, հավասարաչափ, ազատորեն տարածվում է բաց տափաստանը թավ անտառից բաժանող, երբեմնի շատ կարևոր գծի երկու կողմերով:

Երկրի աշխարհագրական մեկ այլ էական հատկանիշն էլ նրա բնական սահմանների բացակայությունն է: Բացառությամբ արևմուտքում Կարպատյան լեռների և հարավում՝ Ղրիմի բլրաշարքի, Ուկրաինայի տարածքի 95 %-ը հարթավայրային է: Այն սահուն թեքությամբ իջնում է Գալիչինայի, Վոլինի և Պոդոլյեի անտառածածկ սարահարթերից՝ Դնեպրի երկու կողմերում հետզհետե անցնելով թփածածկ բլրաշարքերի ու բացատների և, վերջապես, վերածվում հարթ ու անընդգրկելի, բոլոր քամիների դիմաց բաց Մերձսևծովյան տափաստանի: Ուկրաինական բնապատկերի համար այնքան տիպական են տափաստաններն ու հարթավայրերը, որ XX դարի սկզբի մի աշխարհագրագետ ասել է. «Ուկրաինացիների ինը տասներորդը հավանաբար սարեր չի տեսել և նույնիսկ չգիտե, թե ինչ ասել է սար»:

Չենց այս տափաստաններում ու բլրաշատ հարթավայրերում էլ գտնվում են Ուկրաինայի նշանավոր սևահողային շրջանները: Դրանք կազմում են երկրի տարածքի երկու երրորդը: Անկայն հյուսիսում և հյուսիս-արևմուտքում հողերն այնքան էլ բերրի չեն: Այդտեղ գերակշռում են անտառները (ի դեպ, դրանք զբաղեցնում են երկրի տարածքի լոկ յոթերորդ մասը):

Ուկրաինան հարուստ է օգտակար հանածոներով, հատկապես ածխա- և երկաթահանքերով՝ երկրի հարավ-արևելքում: Կարելի է ասել, որ բնությունը նրան չի զրկել շնորհներից. բնական պաշարներով այն, երևի, ամենահարուստն է Եվրոպայում:

Հյուսիսից Սև ծով են հոսում երեք գլխավոր գետերը, որոնք իրենց վտակների հետ միասին Ուկրաինան ապահովում են անհրաժեշտ քանակի ջրով: Դրանք են՝ 2285 կմ-անոց Դնեպրը (որ բնական ձևով երկիրը բաժանում է երկու մասի), Դնեստրը և Հարավային Բուզը:

Կլիման, չնայած ջերմաստիճանի երբեմն կտրուկ փոփոխություններին, հիմնականում բարեխառն է:

Ըստ իր ներկա սահմանների, Ուկրաինան զբաղեցնում է մոտ 600 հազ. քառ. կմ տարածք, որ ծգվում է հյուսիսից հարավ մոտ 900 կմ և արևմուտքից արևելք՝ 1300 կմ: Իր տարածքով Ռուսաստանից հետո երկրորդ երկիրն է Եվրոպայում, իսկ բնակչության թվով (մոտ 52 մլն.) մոտենում է Ֆրանսիային\*:

Գիտությունն ու տեխնիկան զգալիորեն նվազեցրել են մեր կախվածությունը բնությունից, այդ պատճառով էլ մենք հաճախ մոռանում ենք, թե որքան մեծ էր մեր նախնիների կախվածությունը բնությունից: Բայց որ այդ մասին մոռացվել է նաև Ուկրաինայում, առավել զարմանալի է: Չէ որ բնական միջավայրի նշանակությունը շեշտված է հենց երկրի անվանման մեջ: Երա պատմության շատ էջեր պարզաբանվում են հենց աշխարհագրությամբ:

Գտնվելով Եվրոպայից Ասիա տանող հիմնական ճանապարհների խաչմերուկում, Ուկրաինան մշտապես ենթարկվում էր տարբեր, հաճախ հակադիր մշակույթների ազդեցություններին: Սև ծովով կապվում էր Հունաստանի հետ: Ուկրաինան իր ողջ պատմության ընթացքում շատ կարևոր անմիջական շփումների մեջ է եղել ինչպես անտիկ, այնպես էլ բյուզանդական շրջանի հունական քաղաքակրթության հետ: Սակայն, որպես Եվրասիայի արևմտյան

\* Կերդին տվյալների համաձայն Ուկրաինայի բնակչությունը կազմում է 48 մլն մարդ (խմբ.):



ծայրամասային տափաստանների երկիր, Ուկրաինան դատապարտված էր ռազմատենչ քոչվորների ասպատակությունների հարատև գոհը լինելու: Չավթիչների դեմ մշտական ու անողոր պայքարը սպառում էր նրա մարդկային ու նյութական պաշարները: Բայց այդ պայքարում ի հայտ եկավ Ուկրաինայի պատմության ու մշակույթի կարևորագույն դեմքը՝ սահմանների պահպան **կրոակը**:

Ե՛վ տարածքով, և՛ բերրիությամբ աշխարհում նմանը քիչ ունեցող սևահողային գոտիները, որ աչքի են ընկնում հանդարտ ու բարեբեր բնությամբ, անշուշտ իրենց կնիքը պիտի թողնեն երկրի բնակչության կենսամակարդակի վրա: Չէ՞ որ Եվրոպայում երկրագործությունը սաղմնավորվել է հենց Ուկրաինայում և դեռ մինչև վերջերս էլ ուկրաինական կենսածնի խորհրդանիշն էր:

Բարեբեր հողերի այդ դրական ազդեցությունը հողագործի վրա առավել ակնառու է դառնում, երբ Ուկրաինայի գյուղացուն համեմատում ենք ռուսական հյուսիսի գյուղացու հետ (այնտեղ հողն աղքատ է, ավազոտ, կլիման՝ դաժան, բուսածի շրջանն առնվազն մեկ ամսով պակաս, քան Ուկրաինայում), որը բնակլիմայական պայմաններից ելնելով ստիպված էր հողը մշակել միացյալ ուժերով՝ համայնքով: Այնինչ Ուկրաինայում ծաղկում ապրեց մենատնտեսությունը: Այս հակասությունների հիմքով էլ պայմանավորված էր երկու ազգակից ժողովուրդների հոգեկերտվածքի, մշակույթի, սոցիալ-տնտեսական կացութաձևի էական տարբերությունները:

Յածր բերքատվությունը նպաստում էր հակասությունների խորացմանը և ռուս գյուղացին, քաղաքների զարգացմանը զուգընթաց, հաճույքով լքեց հողն ու հայացքը դարձրեց դեպի քաղաք՝ լավ ու հանգիստ կյանքի հույսը կապելով քաղաքի հետ: Այնինչ Ուկրաինայում գյուղացին կապված մնաց իր հովվերգական ու արխայիկ գյուղին:

Եթե բնությունը բարեհաճ էր Ուկրաինայի հանդեպ, ապա նույնը չի կարելի ասել նրա պատմության մասին: Հնագույն ժամանակներից մինչև վերջերս, իր բնական պաշարների հարստության և միևնույն ժամանակ՝ անպաշտպան լինելու պատճառով, Ուկրաինան առավել հաճախ, քան որևէ այլ եվրոպական երկիր, ենթարկվում էր օտարերկրյա նվաճողների ավերիչ հարձակումներին: Արդյունքում՝ նրա պատմության առանցքային թեման դարձավ օտարերկրյա բռնակալության, և նրա դեմ Ուկրաինայի ժողովրդի պայքարի թեման: Այս պատմական անվերջանալի, հախուռն ու վառ ներկայացումը ծավալվում է լայնարձակ, բաց ու շռայլորեն զարդարված բեմի վրա:

## Հնագույն բնակիչները


Գիտությանը հայտնի վերջին տվյալների համաձայն, ժամանակակից Ուկրաինայում մարդն հայտնվել է մոտավորապես 150 հազ. տարի առաջ:

Կովկասն ու, հավանաբար, Բալկաններն անցած և Սև ծովի ափերին հասած մարդը դեռևս պահպանել էր իր պարզունակ ծագման նշանները՝ փոքր ուղեղ, նեղ ճակատ, ամուր ծնոտ և խոշոր ատամներ, սակայն արդեն ամուր կանգնում էր երկու ոտքի վրա և քայլելուց «ագատյազրված» ձեռքերով բավական գործողություններ էր կատարում: Վերջին սառցադաշտային շրջանի կեսերին (մոտ 40 հազ. տարի մ. թ. ա.) նա վերջնականապես ձևավորվեց որպես բանական մարդ՝ *հոմո սապիենս*, կամ՝ *կրոմանյոնցի*\*, որից էլ սերում է ժամանակակից մարդը: Նա համեմատաբար բարձրահասակ էր, ուղիղ էր քայլում և մտավոր բավականին զարգացած էր:

Յուրտ ու դաժան կլիմային հարմարվելու և գոյատևելու համար մարդը տեխնիկական այնպիսի աննախադեպ գյուտեր արեց, ինչպիսիք են կայծքարե զենքերն ու կտրիչները, ձկնորսական կարթերն ու որսատեգերը, գազանների ոսկորներից ու մորթուց պատրաստվող պատսպարան-բնակարանները և այլն:

Մեր թվարկությունից մոտ 10 հազ. տարի առաջ, երբ ետ քաշվեց վերջին սառցադաշտը՝ իր ետևից թողնելով արդի Ուկրաինային բնորոշ լանդշաֆտը, մարդն ավելի արագ սկսեց փոխվել: Այսպես, նեոլիթի շրջանում, որն Ուկրաինայում տևեց մ. թ. ա. VI հազարամյակից մինչև II հազարամյակը, մարդու ներաշխարհն առավել զգալի փոփոխություններ կրեց, քան

\* *Կրոմանյոնցի* - Ֆրանսիայի Կրո-Մանյոն (*Cro + Magnon*) քարանձավի անունից, ուր հայտնաբերվեցին եվրոպայում բնակություն հաստատած և նեանդերտալցիներից խիստ տարբերվող մարդկանց կմախքներ (խմբ.):



Ուկրաինայի աշխարհագրական գոտիները








տափաստանների գերբնակեցվածության պատճառով: Առավել հզոր **ցեղերը** թույլերին դուրս էին մղում արոտավայրերից, իսկ վերջիններս էլ ետ էին քաշվում դեպի **Եվրասիական** տափաստանի ծայրամասերը: Այս ճանապարհով անասնապահները կամաց-կամաց **արևելքից** տեղափոխվում էին արևմուտք:

### Կիմերներ

Մ. թ. ա. 1500-1000 թ.թ.-ներն ընկած ժամանակում միայն մարդը **տիրապետեց** առաջին հայացքից շատ դյուրին թվացող ծի հեծնելու արվեստին: Ուկրաինայի առաջին քոչվոր **հեծյալները**, ինչպես նաև այն **առաջին բնակիչները**, որոնց **անունը հասել է մեզ, կիմերներն են**, և այն մեզ է հասցրել ոչ այլ ոք, քան Հոմերոսը, որ իր «Ոդիսականում» Սև ծովի հյուսիսային ափը հիշատակելիս, այն անվանում է «**կիմերների երկիր**»: Երևի հենց դա է Ուկրաինայի



Քոչվոր ցեղերի բնակությունը հաստատելը

մասին ամենահին գրավոր հիշատակությունը: Սակայն Հոմերոսն այդ հիշատակությունից բացի այլևս ոչինչ չի ասում կիմերների մասին, որոնք ապրում էին, ինչպես հնում էին կարծում՝ աշխարհի ծայրին...

Շատ զիտնականներ այն կարծիքին են, որ կիմերները լքել են իրենց հայրենի հողերը ստորին Պոլովժյեում, Հյուսիսային Կովկասի ցածրավայրերով անցել ու մ. թ. ա. մոտ 1500 թ.-ին հայտնվել են Ուկրաինայում: Սակայն շատերն էլ հերքում են գաղթի վարկածը և պնդում, որ կիմերներն Ուկրաինայի բնիկներն են: Այսպես թե այնպես, կիմերներն զբաղեցնում էին Դոնի և Դնեստրի միջագետքը մինչև մ. թ. ա. 700 թ.-ը: Ժամանակի ընթացքում, արևելքից եկած այլ քոչվորների ճնշման տակ աստիճանաբար տեղափոխվելով, նրանք հասան Փոքր Ասիա:

Ներկայումս հայտնի աղբյուրների սպառիչ վերլուծությունը թույլ է տալիս պատմաբաններին մի շարք եզրահանգումներ անել կիմերների՝ ինչպես հույներն էին նրանց անվանում,



Պոլովեց կանանց քարարձաններ


«զամբիկի կաթ խմողների» մասին:

1. Կիմերներն Ուկրաինայի առաջին անասնապահներն էին, որոնք անցել էին քոչվոր ապրելակերպի:
2. Նրանք տիրապետում էին ծի հեծնելու արվեստին և նրանց զորքը կազմված էր միայն հեծյալներից:
3. Մետաղներ մշակող Կովկասի վարպետների հետ ունեցած սերտ հարաբերությունների շնորհիվ, նրանք Ուկրաինայի պատմության մեջ բացեցին նոր՝ «երկաթի» դարաշրջանը:
4. Զինված հեծյալ ջոկատների դերի բարձրանալով պայմանավորված՝ ցեղային կառավարմանը փոխարինելու էր գալիս զինվորական վերնախավը:



## Սկյութներ

Սկյութները, որոնք Մերձսևծովյան տափաստանում հայտնվեցին մ. թ. ա. VII դարի սկզբներին, դուրս չմնացին Միջերկրական քաղաքակրթությունների ուշադրությունից, ինչի մասին վկայում են Հին կտակարանի խոսքերը. «Ահա հյուսիսի կողմից մի ժողովուրդ է գալիս, ձեռքներին աղեղ ու կարծ նիզակ, դաժան ու անագորույն: Նրանց ծայրը շառաչում է ծովի պես, արշավում են շարքերով՝ մի մարդու մեան... հեռվից եկած մի ժողովուրդ... հին ժողովուրդ... որի լեզուն դու չգիտես... նա խիզախ է... նա կլափի քո հացն ու բարիքը, կվերացնի քո զավակներին, կխժռի քո կովերն ու ոչխարները, քո խաղողն ու թուզը, և իր սրով կավիրի քո բնակավայրերը, որոնց հետ դու մեծ հույսեր էիր կապում»:



Սկյութները մարտի ժամանակ: Պատկեր ոսկե սանրի վրա (Մոլոխայի կուրգան)

Թալանելով Մերձավոր Արևելքի շատ երկրներ, սկյութները վերջապես հաստատվեցին Հյուսիսային Մերձսևծովյան տափաստաններում, ստեղծելով *Ուկրաինայում առաջին խոշոր քաղաքական միությունը*:

Մ. թ. ա. V դարում «պատմահայր» Հերոդոտոսը եղել է Սկյութիայում և նկարագրել նրա բնակիչներին: Նրանք, անկասկած, հնդեվրոպացիներ էին, իրանալեզու քոչվորներ, որոնք հազարամյակներ շարունակ իշխում էին Եվրասիական տափաստաններում: Հերոդոտոսը սկյութների մի քանի տեսակ է ներկայացնում: Դնեպրի աջ ափին բնակվում էին *մաճկալ սկյութները*՝ երկրագործ ցեղեր, որոնք այդ տարածքի բնիկներն էին, բայց անվանումը փոխառել էին իրենց իսկ նվաճած քոչվորներից: Որոշ պատմաբաններ նույնիսկ հակված են կարծելու, որ դրանք սլավոնների նախնիներն են: Քաղաքական ողջ իշխանությունը քոչվորների՝ այսպես կոչված «*արքայական*» սկյութների ձեռքում էր, որոնք իրենց համարում էին ամենալավն ու ամենահզորը և մյուս սկյութներին ու ոչ-սկյութական ցեղերին պարտադրում էին հարկ վճարել իրենց: Նրանց հեծելազորն ուժեղ էր ու դաժան, լավ զինված ու կարգապահ: Մարտնչելու բնազդն իրենց մեջ զարգացնելու համար սկյութացի զինվորները խմում էին իրենց առաջին սպանած թշնամու արյունը, հանում էին զանգամաշղը և գանգերից արծաթով ու ոսկով զարդարված զավաթներ էին պատրաստում: Թշնամիների հետ անչափ դաժան վարվելով հանդերձ, նրանք շատ ազնիվ ու հավատարիմ էին ընկերության մեջ, որն ամեն ինչից բարձր էին դասում:

Սկյութական հասարակությունն իր դարաշրջանի զավակն էր: Տոհմաբանությունը տարվում էր հայրական գծով, ունեցվածքը բաժանվում էր որդիների մեջ, իսկ բազմակնությունը բնական երևույթ էր: Հաճախ, երբ ամուսինը մահանում էր, նրա ջահել կանանց սպանում ու թաղում էին, նրա հետ: Ինչպես վկայում են «արքայական» սկյութների՝ ճոխ, տոհմական վերնախավի՝ հարուստ և, միաժամանակ, աղքատ մարդկանց գերեզմանները, որ այսօր էլ հայտնաբերվում են Ուկրաինայի տափաստաններում, *նրանց մոտ արդեն գոյություն ուներ նկատելի սոցիալ-տնտեսական շերտավորում*:

Բացի պատերազմական ավարից, նրանց հարստանալու հիմնական միջոցներից էր նաև *առևտուրը* Մերձսևծովյան հունական գաղութների հետ: Սկյութներն առաջարկում էին այն ապրանքները, որոնցով հռչակված էր Ուկրաինան՝ հացահատիկ, մոմ, մեղր, մորթեղեն և ստրուկներ: Այդ ամենի դիմաց վերցնում էին զինի, ոսկերչական իրեր և պերճանքի այլ առարկաներ, որոնց նկատմամբ շատ արագ մեծ հետաքրքրություն ու սեր հանդես բերեցին: Ըստ երևույթին շքեղության, կյանքը գեղեցկացնելու այդ ձգտումից էլ հենց սկիզբ է առել սկյութների՝ *ինքնատիպ ու բարձրարվեստ դեկորատիվ ոճը*, որը հեշտ ճանաչելի է նրանց նախասիրած թեմայից՝ կենդանիներից. անկրկնելի նրբազեղությամբ են իրենց հավերժական սլացքի մեջ քարացել սկյութական շքեղաշուք անոթները զարդարող եղնիկները, առյուծներն ու նտույզները:

Սկյութական դարաշրջանի Ուկրաինան Միջերկրածովյան դասական քաղաքակրթության չնայած հեռավոր, բայց կարևոր մի մասն է: Մերձսևծովյան հունական գաղութների միջոցով սկյութները ոչ միայն աղերսվեցին Անտիկ Հելլադայի քաղաքակրթությանը, այլև սովորեցին ըստ արժանվույն գնահատել այն: Միևնույն ժամանակ՝ հենց այդ հարաբերություններն էլ սկյութներին ներքաշեցին Միջերկրածովյան երկրների ներքին բախումների ու տարածանությունների մեջ: Մ. թ. ա. 513 թ.-ին պարսից թագավոր Դարեհի հսկայական զորքը ներխուժեց Ուկրաինայի տարածք: Սակայն, դիմելով «հող ու մոխրի» ռազմավարությանը, սկյութները Դարեհին խայտառակ նահանջի մատնեցին: Այնուհետև սկյութներն իրենք արշավեցին դեպի արևմուտք: Մ. թ. ա. V դարի վերջին և IV դարի սկզբին նրանք Դանուբի վրա հաղթեցին թրակիացիներին: Սակայն դա անիմաստ հաղթանակ էր, քանի որ դրանից հետո ճակատ-ճակատի հանդիպեցին Մակեդոնիայի արքա Փիլիպոսի՝ Ալեքսանդր Մեծի հոր զորքերի հետ: Մ. թ. ա. 339 թ.-ին մակեդոնացիները ջախջախիչ պարտության մատնեցին սկյութներին, որն էլ դարձավ նրանց վերջի սկիզբը: Մոտ մեկ դար հետո *սկյութների մեծ մասին կոտորեցին ու իրենց մեջ ձուլեցին սարմատները*՝ արևելքից եկած քոչվորների ավելի հզոր մի ցեղ: *Սկյութներից քչերին միայն հաջողվեց ապաստան գտնել Դրիմում, որոնց սերունդներն էլ գոյատևեցին մինչև մ. թ. III դարը*:

## Սարմատներ

Գրեթե 400 տարի՝ մ. թ. ա. II դարից մինչև մ. թ. II դարը, Հյուսիսային ու Արևելյան Մերձսևծովյան տափաստաններում իշխում էին *սարմատները, որոնք եկել էին Ստորին Պոլովոյեից*: Սկզբում նրանք խաղաղ գոյակցում էին իրենց իրանալեզու ազգակիցների՝ սկյութների, ինչպես նաև Մերձսևծովյան հյուսիսում բնակվող հույների հետ: Սակայն ժամանակի ընթացքում, արևելքի թշնամի ցեղերի կողմից մեծ ճնշումների ենթարկվելու և իրենց հողերից վտարվելու արդյունքում, սարմատներն ագրեսիվ դարձան, աստիճանաբար սկյութ առաջնորդներին ստիպեցին ընդունել իրենց գերիշխանությունը, իսկ սկյութացի զինվորները համալրեցին նրանց հեծելազորը:

Սարմատները, ուկրաինական տափաստանի նախկին քոչվոր տիրակալների նման, *միասնական ու միատարր ցեղ չէին*, այլ ազգակից ու շատ հաճախ միմյանց նկատմամբ թշնամացած ցեղակիցների (*յագիզներ, ռոկսուլաններ, ալաններ*) համադաշնություն էին կազմում: Եվ նրանցից ամեն մեկը ձգտում էր միահեծան իշխել Ուկրաինայում: Սակայն այդ «ձգտումները» հանրկան մարդկային հսկայական զանգվածների անվերջանալի տեղափոխությունների հետ, որ պատմության մեջ կոչվում է ժողովուրդների *Մեծ գաղթ* և Ուկրաինան հայտնվեց այդ քառսային շարժման կենտրոնում, ուստի սարմատների համար դժվար էր մշտական կայուն հսկողություն իրականացնել իրենց հողերի վրա: Եվ մ. թ. II դարում *սարմատների իշխանությունը կործանվեց*՝ արևելքից ասպատակող հոների անհամար հրոսակների, հյուսիսից՝ գերմանական զորքերի, և արևմուտքում պաշտպանությունն համառորեն իրենց ձեռքում պահող հռոմեական լեգեոնների պատասխան արշավների հարվածներից:

Սարմատների մասին կցկտուր տվյալներից կարելի է եզրակացնել, որ նրանք իրենց



արտաքին տեսքով ու ապրելակերպով քիչ էին տարբերվում սկյութներից և այլ իրանալեզու քոչվորներից: Ժամանակակիցներից մեկն այսպես է նկարագրում նրանց. «Նրանք բարձրահասակ են, գեղեցիկ ու շիկահեր, և կատաղի հայացքը՝ սարսափազդու»: Սարմատների հագուստն էր՝ լայն ու երկար անդրավարտիք, կաշվե բաճկոն, փափուկ կաշվից կարված ոտնամաններ և գլխարկ: Սնվում էին հիմնականում մսով, կաթով ու պանրով: Ապրում էին վրանատիպ ծածկված երկանիվ կամ քառանիվ սայլերի վրա: Հատկապես զարմանք է հարուցում այն, թե սարմատների կյանքում ինչ մեծ դեր են ունեցել կանայք: Հերոդոտոսը, հավատ ընծայելով այն առասպելին, թե սարմատներն առաջացել են սկյութների և ամազոնուհիների միությունից, տեղեկացնում է, թե սարմատ կանայք լրիվ նման էին հին ամազոնուհիներին. վարժ հեծյալներ էին, տղամարդկանց հավասար մասնակցում էին մարտերին և տղամարդու հագուստ էին կրում: Հնագիտական տվյալներն էլ վկայում են, որ սարմատ կանանց թաղում էին իրենց գեներով և որ հաճախ էլ նրանք քրոնիու դեր էին ստանձնում:

Երբ պատերազմը չէր բավարարում նյութական բոլոր պահանջները, սարմատներն առևտրով էին զբաղվում: Նրանց քարավաններն հասնում էին ամենահեռավոր երկրներն ու այնտեղից իրենց մայրաքաղաք՝ Դոն գետի վրա կառուցված Տանախս էին բերում չինական մետաքս, կովկասյան բյուրեղապակի, հնդկական ու պարսկական կիսաթանկարժեք քարեր: Իսկ հույն աշխարհագրագետն ու պատմաբան Ստրաբոնի կարծիքով, հույն-հռոմեացիների հետ շփումները սարմատներին ավելի շատ վնասել են, քան օգտակար են եղել. «Մեր ապրելակերպը փչացրեց այս մարդկանց, նրանց մեջ տարածելով այնպիսի արատներ, ինչպիսիք են պերճանքի և մարմնական զվարճությունների նկատմամբ մոլությունն ու անպիտան ձգտումները, որոնց բավարարումն ավելի անկուշտ է դարձնում մարդուն»:

Սարմատներից հետո եկան այլ քոչվորներ, սակայն սարմատներն արևելքից եկած վերջին հնդեվրոպացիներն էին: Նրանցից հետո մոտ մեկ հազարամյակ եվրասիական տափաստանները դառնում են թուրքական ժողովուրդների տիրույթները:


## Հունական գաղութներն Ուկրաինայում

Ոչ միայն տափաստանով, այլև ծովով էին նորանոր գաղթականներ գալիս Ուկրաինա: Դեռևս մեր թվարկությունից 1000 տարի առաջ փոքրիկ Հունաստանն արդեն գերբնակեցված էր զարմանալի տաղանդավոր, ստեղծագործ ու եռանդուն, միևնույն ժամանակ և արկածախնդիր ժողովրդով: Հայրենիքում անհրաժեշտ պայմանների բացակայության պատճառով, հույներից շատերն սկսեցին օթևան փնտրել Միջերկրական, Էգեյան և Սև ծովերի ամբողջ երկայնքով՝ հասնելով ամենահեռավոր ու ամայի վայրերը: Պլատոնի խոսքերով՝ հույները Ջիբրալթարից մինչև Կովկաս ծովերի շուրջը բոլորել են, ինչպես «գորտերը լճակի շուրջը»: Մ. թ. ա. VII դարի վերջից մինչև VI դարի սկիզբը նրանք Մերձսևծովյան հյուսիսում մի շարք գաղութներ հիմնեցին: Հաջորդող ողջ հազարամյակի ընթացքում այդ գաղութները եղան Ուկրաինայում քաղաքաշինության ձևավորման նախակարապետները:

Մ. թ. ա. IV դարում Ուկրաինայի ափամերձ շրջաններում կառուցվող հունական քաղաքներն արդեն ծաղկում էին ապրում: Նրանցից ամենահարուստը Բուզի գետաբերանում գտնվող Օլվիան էր, որ դարձավ Հունաստանի և Սևծովյան գաղութների միջև հացահատիկի առևտրի հիմնական կենտրոնը: Մյուս կարևոր կենտրոններն էին Դրիմի ափամերձ Խերսոնեսն ու Թեոդոսիան, Պանտիկապեոնը (ներկայումս՝ Կերչ), Արևելյան Դրիմի Կիմերյան Բուսպորում գտնվող քաղաքները: Այս քաղաքները մի քանի հարյուր տարի ծաղկում ապրեցին, սակայն մ. թ. ա. II դարում լուրջ բարդությունների առջև կանգնեցին: Սրվեցին տեղական վերնախավի և ստորին խավերի հարաբերությունները (ստորին խավը մեծ մասամբ նախկին ստրուկներից էր կազմավորվել): Քոչվորների շարունակական ասպատակությունները մեծապես վնասում էին սկյութների հետ հնուց հաստատված կապերին ու փոխհարաբերություններին: Իրավիճակը փոխվեց նաև տնտեսական հարաբերություններում: Եգիպտոսն իր էժան ցորենով ողողել էր Միջերկրածովյան երկրները, իսկ դա մեծապես վնասում էր Ուկրաինայից հացահատիկ արտահանելու գործին, որով հիմնականում հարստանում էին Մերձսևծովյա հույները:

Վերջապես, Հռոմի հզորանալը վերջնականապես խախտեց հին հելլենական աշխարհի քաղաքական հավասարակշռությունը: Այդ աշխարհի վերջին ամբողջ եղավ՝ ամբողջ մեկ դար հարևան քաղաքները, այսպես կոչված՝ Բուսպորի թագավորության մեջ համախմբող

Պանտիկապեոնը, որտեղ իշխում էր Սպարտացիների դինաստիան: Սակայն մ. թ. ա. 63 թ.-ին, հռոմեական լեգեոնների հուժկու հարվածների տակ, ընկավ նաև այս ամբողջը: Սպարտացիներից վերջինը՝ Միհրդատ VI-ը, վերջնականապես պարտություն կրեց: Սև ծովը դարձավ Հռոմեական կայսրության ներքին ծովը: Արդեն կայսրության կազմում Մերձսևծովյա քաղաքներն ինչ-որ ժամանակ ձեռք բերեցին տնտեսական ու քաղաքական կայունություն: Սակայն մեր թվարկության առաջին դարերում բարբարոսների շարունակական հարվածներից կայսրությունը թուլացավ այնքան, որ չէր կարողանում այլևս պաշտպանել իր ծայրամասային երկրները: Պարզ դարձավ, որ Մերձսևծովյա քաղաքներն իրենց վերջին օրերն են ապրում: 270 թ.-ին հրով ու սրով անցան գոթերը, իսկ մեկ դար անց, քարը քարին չթողեցին հոները:



Հունական գաղութարևակեցում




Եթե մի հայացք ձգենք Ուկրաինայի տարածքում մեր թվարկության առաջին դարի սկզբին մարդկային հարաբերությունների զարգացման պատմությանը, ապա հարկ է նշել հասարակության երեք առանձին տեսակ, որոնք կազմավորվել են երեք տարբեր աշխարհագրական գոտիներում:

**Յուսիսի և հյուսիս-արևմուտքի անտառապատ հարթավայրերը բնակեցնում էին երկրագործները:** Անտառներով ու ճահիճներով պաշտպանված լինելով ասպատակումներից, երկրի այդ հին բնակիչները ծանոթ չէին քաղաքական կազմակերպման ձևերին, ռազմական տեսանկյունից թույլ էին, իսկ մշակույթով՝ հետամնաց: Սակայն բոլոր գյուղացիների նման այս երկրագործները նույնպես բացառիկ տոկոսություն ցուցաբերեցին: Ինչքան-ինչքան նվաճողներ եկան ու անցան, բայց նրանք կառչած մնացին իրենց կերակրող մայր հողին:

**Քոչվորները տափաստանի լայնարձակ տարածքների բացարձակ իշխողներն էին:** Չգտելով հնարավորինս շատ տարածքների տիրանալ, արևելքից ներխուժած այս եկվորներն Ուկրաինայում ստեղծեցին քաղաքական առաջին մեծ միությունները: Ընկալունակ լինելով դրսից եկող բազում մշակույթների նկատմամբ, նրանք կապեր հաստատեցին հնագույն քաղաքակրթությունների մեծ կենտրոնների հետ: Սակայն արոտավայրերի ու ռազմական ավարի անդադար որոնումների հետևանքով դաժանորեն թշնամանում էին միմյանց հետ՝ շատ անգամ ոչնչացնելով ուրիշների ստեղծած քաղաքական կառուցվածքները՝ փոխարենը մի այլ կառուցվածք ստեղծելով, և այսպես շարունակ...

Եվ վերջապես, **հարավում՝ Սև ծովի սահմանամերձ գոտում զարգացում էր ապրել հույների քաղաքակրթությունը:** Նրանց հիմնած քաղաքներում զարգանում էին արհեստներն ու առևտուրը, դպրոցներ էին կառուցվում, իսկ բնակիչները հարաբերվում էին համայն աշխարհի քաղաքակրթությանը: Ըստ երևույթին, ծովափնյա շրջաններից հեռու գտնվող շատ ստորածքների բնակիչներ առևտրատնտեսական հարաբերությունների մեջ էին գտնվում հունական քաղաքների հետ և նաև այդ ճանապարհով էր նրանց մոտ զարգանում մշակույթը, բայց ինչ էլ լինի, դժվար թե հունական այդ քաղաքները դիտվեն որպես «հին ուկրաինական մշակույթի» օրգանական մաս. նրանք պատմության մեջ մնում են որպես հունական անտիկ մշակույթի ևս մի հիասքանչ ճյուղավորում:



# ԿԻԵՎՅԱՆ ՌՈՒՄԻԱ

## Կիևյան Ռուսիայի վերելքն ու անկումը

### Կիևյան Ռուսիայի հասարակությունն ու մշակույթը

#### Գալիցիա-Վոլինյան իշխանություն

4347







# ԿԻԵՎՅԱՆ ՌՈՒՄԻԱՅԻ ՎԵՐԵԼՔՆ ՈՒ ԱՆԿՈՒՄԸ


Մեր ծննդավայրի քաղաքներում արագ զարգացող քաղաքակրթությունից, քոչվորների աննախադեպ նվաճողական ասպատակություններից հեռու, Հյուսիսային Ուկրաինայի բնակչությունը, ապավինած իր թավ անտառներին ու գետահովիտներին, դարեր շարունակ խաղաղ ու հանդարտ գոյատևում էր՝ կարծես ի հակադրություն հարավի արագընթաց իրադարձություններին: Սակայն սկսած մ. թ. VI դարից, պատմության թատերաբեմը աստիճանաբար տեղափոխվում է հյուսիս, և նրանք հայտնվում են իրադարձությունների կենտրոնում: Ժամանակակից գիտնականների կողմից նրանց էթնիկական, լեզվաբանական և մշակութային հատկանիշների ուսումնասիրությունները վկայում են, որ այդ նարդիկ սլավոններն էին՝ Ուկրաինայի ներկայիս բնակչության անմիջական նախնիները:

## Արևելյան Սլավոնները


Սլավոններն առաջացել են Արևելյան Եվրոպայի բնիկ հնդեվրոպացիներից: Գիտնականներից շատերի կարծիքով՝ սլավոնների նախահայրենիքն ընդգրկում էր Կարպատների հյուսիսային լանջերը, Վիսլա գետի հովիտն ու Պրիպյատի ավազանը: VII դարի սկզբին այստեղից նրանք սկսեցին տարաբնակվել բոլոր ուղղություններով՝ ամբողջ Հյուսիսային Եվրոպայով մեկ: Հյուսիս-արևելքում խորացան ու գրո-ֆիննական հողերում՝ մինչև Օկան և Վոլգայի վերին հոսանքը, արևմուտքում նրանց բնակավայրերը հասնում էին Էլբա գետին՝ Հյուսիսային Գերմանիայում: Սակայն նրանց մեծ մասը շարժվեց դեպի հարավ՝ Բալկաններ, ուր նրանց մագնիսի պես ձգում էին տաք կլիման, բերրի հողերն ու հարուստ քաղաքները: Եթե այս տեղաշարժերը համեմատենք քոչվոր ցեղերի վերաբնակեցման հետ, ապա անհրաժեշտ է նշել, որ սլավոնների տարաբնակեցումն իրենից ներկայացնում էր տեղաշարժ նախահայրենիքից, որի հետ բոլոր կապերը պահպանվում էին: Արդյունքում նրանք մեծ տարածքներ գրավեցին: Այդ ընդարձակման ուրույն հատկանիշը նրա խաղաղ բնույթն էր: Բացառությամբ Բյուզանդիայի հետ տեղի ունեցած մի քանի ընդհարումների, սլավոնները նոր տարածքները գրավում էին հիմնականում բնակեցնելու, ոչ թե զավթելու նպատակով: Սակայն տարաբնակվելով, նրանք տարանջատվում, օտարվում էին: Ուստի հայտնի գիտնական Ալեքսեյ Շախմատովի հետազոտությունները վկայում են, որ VI դարի սկզբին սլավոնական ընդհանուր լեզվից կազմավորվեց երեք ենթախումբ.

1. Արևմտասլավոնական, որից հետագայում առաջացան լեհերենը, չեխերենը և սլովակերենը:
2. Հարավսլավոնական, որից առաջացան բուլղարերենը, մակեդոներենը և սերբերենն ու խորվաթերենը:
3. Արևելասլավոնական, որից առաջացան ուկրաիներեն, ռուսերեն ու բելոռուսերեն լեզուները:

VII դարում արևելյան սլավոնները կենտրոնացան Դնեպրի աջ ափին: Ձգտելով ճշտել Ուկրաինայի սլավոն բնակչության ծագումնաբանությունը, խորհրդային գիտնականները գտնում էին, որ արևելյան սլավոնները (կամ նրանց ուղիղ նախնիները՝ անտերը) տեղի բնիկներն էին: Իսկ արևմտյան մասնագետները, նշելով այդ տեսակետի թերությունները, կարծում են, որ ժամանակին արևելյան սլավոնները տարաբնակվել են այստեղ: VII-VIII դարերում



Արևելասլավոնական ցեղեր



Սլավոնների տարաբնակեցումը







ներից, վյատիչներին... 862 թվական... Այդ ցեղերը (ուղերը, սլավոնները, մերերն ու բուլղո կրիվիչները) վտանգեցին վարյագներին և տուրք չտվեցին, իրենց գլխի տերը դարձան: Եվ չկար արդարություն նրանց մեջ, և ելավ ցեղը ցեղի դեմ, պառակտվեցին նրանք և սկսեցին կռվել իրար դեմ: Եվ ասացին նրանք. «Մի իշխան ընտրենք, որ մեզ տիրի ու կառավարի օրենքով ու արդարությամբ»: Նրանք ծովն անցան ու գնացին վարյագ ռուսերի մոտ, այդպես էին կոչում դրանց, ոնց որ ոմանք կոչվում են սվեններ (շվեդներ), ոմանք՝ նորմաններ, անգլեր, ուրիշները՝ գոթեր, այդպես էլ նրանք՝ ռուսեր: Եվ ասացին ռուս վարյագներին չուղերը, սլո-վենները, կրիվիչներն ու բուլղոը. «Սեր երկիրը մեծ է և առատ, իսկ կարգուկանոն չկա: Եկեք մեզ իշխան դարձեք ու կառավարեք»: Եվ հավաքվեցին երեք եղբայրները (Ռյուրիկը, Սինե-ուսն ու Տրուվորը) «իրենց գերդաստաններով և հավաքեցին բուլղո ռուսերին ու եկան...»:

Յիմնվելով այս վկայությունների վրա, գերմանացի մի շարք գիտնականներ, մասնավորա-պես՝ Գոթլիբ Բայերը, Գերհարդ Միլլերը և Ավգուստ-Լյուդվիգ Շլյոցերը, որոնք XVIII դարում ծառայում էին Ռուսաստանում, մշակեցին այսպես կոչված՝ **Նորմանական տեսությունը**, ըստ որի՝ Կիևյան Ռուսիան հիմնադրել են վարյագները՝ գերմանականոցիանական մի ժողովուրդ, որն Արևմուտքում հայտնի էր որպես վիկինգներ կամ նորմաններ: Այս տեսության մեջ գերմա-նական ազդեցության շեշտվածությունն ու սլավոնների՝ սեփական պետություն ստեղծելու անընդունակության բաց ակնարկը մեծ գայրույթ առաջացրեցին XVIII դարի ռուս նշանավոր գիտնական Միխայիլ Լոմոնոսովի մոտ և նա ցասկոտ պատասխան գրեց գերմանացիներին՝ ապացուցելով սլավոնների առաջնային դերը Կիևյան Ռուսիայի ստեղծման մեջ: Լոմոնոսովի տեսակետը կոչվեց **հականորմանական տեսակետ** և սկիզբ դրվեց առ այսօր չդադարող տա-րածայնություններին: Այնպես պատահեց, որ XIX դարավերջին և XX դարասկզբին նորմա-նական տեսությունը գերակայեց, քանի որ մի շարք հայտնի ռուս և արևմտյան պատմաբան-ներ դրա կողմնակիցն էին: Սակայն ուկրաինացի երկու առաջատար գիտնական՝ Միխայիլ Յուրչևսկին և Միկոլա Կոստոմարովը, համառորեն պաշտպանում էին հականորմանական տեսակետը: 30-ական թվականներին խորհրդային գիտնականները հակահարձակում սկսե-ցին՝ հայտարարելով, որ նորմանական տեսությունը քաղաքականապես վնասակար է, քանի որ այն «Յերբում է սլավոնական ժողովուրդների՝ անկախ պետականություն ստեղծելու կա-րողությունը»: Ինքը՝ **Նեստոր-Տարեգիրը** (XI դարի լեգենդար վանական, «Անցած ժամանակ-ների պատմությունը» գրքի կազմողը) հայտարարվեց հակասական ու միտումնավոր հեղի-նակ: Ընդ որում՝ նրա նորաթուխ քննադատները աշխատում էին հենվել հնագիտական պեղումների տվյալների վրա, որոնք, իբրև թե չէին հաստատում Կիևյան Ռուսիայում վար-յագների մեծաքանակ ներկայությունը: Դրանից էլ հետևություն էին անում, որ Կիևյան Ռուսիան հիմնադրել են արևելյան սլավոնները:

Այնուհետև այս վեճերն իրենց էությանը և բնույթով տեղափոխվեցին լեզվաբանության բնագավառը և վերջիվերջո հանգեցրին **«ռուս»** բառի ծագումնաբանությանը: Նորմանական-ներն ապացուցում են, որ այն ծագել է «ruotsi» բառից, որը շվեդների ֆիննական անվանումն է, որն էլ իր հերթին գալիս է հին շվեդական «rod» բառից, որ նշանակում է «թիավարել» (նաև՝ փոցխել, հավաքել, թիով հավաքել, կուտակել): Քանի որ ֆինները երկարատև սերտ կապերի մեջ էին ինչպես շվեդների, այնպես էլ սլավոնների հետ, ապա համարվում է, որ շվեդներին բնորոշող անվանումը նրանք այնուհետև կիրառել են նաև սլավոնների նկատ-մամբ:

Հականորմանական տեսության համաձայն՝ «Ռուս» անվանումը կապված է Կենտրոնական Ուկրաինայի Ռոս և Ռուսնա գետերի անունների հետ:

Հականորմանականների տրամադրության տակ կա ևս մի վարկած, ըստ որի՝ հնարավոր է, որ «Ռուս» բառը կապ ունենա քոչվոր ռոքսոլան ցեղի անվան հետ, որ ծագում է իրանական «rhos» բառից և նշանակում է «լույս»:

Քանի որ բուլղո այս կարծիքները լուրջ թերություններ ունեն, դրանցից ոչ մեկն ընդհանուր ճանաչում չգտավ: Ինչ վերաբերվում է «Ռուս» բառին, ապա ինչպես պարզվում է, այդպես անվանում էին վարյագներին, այնուհետև պոլյանների հողերն էին այդպես կոչում (Կենտ-րոնական Ուկրաինան), իսկ հետագայում՝ այն քաղաքական միությունը, որը կոչվեց Կիևյան Ռուսիա («Ուկրաինա» բառն առաջին անգամ օգտագործվել է 1187 թ.-ի տարեգրություննե-րում և նախապես կիրառվում էր Կիևյան Ռուսիայի սահմանամերձ տարածքը նշելու համար):

Չհաջողվեց ընդհանուր եզր գտնել նաև Կիևյան Ռուսիայի կայանալու գործընթացում արտաքին՝ սկանդինավյան ազդեցությունների և սլավոնական ներքին՝ էվոլյուցիոն զար-գացման առաջնայնության հարցում: Երկար ձգձգվող վիճաբանությունը նոր փաստեր չար-

ծանազրեց և հավանաբար սպառիչ փաստարկների սնանկության պատճառով էլ գիտնա-կանների մեծ մասը (բացառությամբ խորհրդայինների) աստիճանաբար սկսեցին փոխզիջ-ման ուղիներ փնտրել: Ներկայումս կա մի ընդհանուր կարծիք. արևելյան սլավոնների հասարակական և մշակութային զարգացման գործում սկանդինավիցիների ազդեցությունը ճանաչել, բայց չհավազանցել:

Ռազմիկ-վաճառական վիկինգների թափառական հրոսակախմբերն արագաշարժ էին, եռանդուն ու վճռական, բայց շատ քիչ էին՝ արևելյան սլավոնների կենսաձևի վրա լրջորեն ազդելու համար: Ընդհակառակը՝ նրանք շատ արագ ընկալում էին տեղաբնակների (սլավո-նական) լեզուն ու մշակույթը: Սակայն չի կարելի նաև հերքել վարյագների մասնակցու-թյունը, ավելի՛ն՝ առաջատար դերը քաղաքական կյանքում, ի նկատի ունենալով, որ կիևյան բուլղո ղեկավարները՝ մինչև Սվյատոսլավը, ինչպես նաև նրանց դրուժինայի բուլղո անդամ-ները սկանդինավյան անուններ էին կրում: Ամեն դեպքում՝ վարյագները արևելասլավոնա-կան հասարակության քաղաքական զարգացման երևարկիչի դեր էին կատարում՝ կամ ենթարկելով և քաղաքականապես կազմակերպելով նրանց, և կամ էլ նրանց սպառնալի իրա-վիճակների առջև էին կանգնեցնում՝ ստիպելով համախմբվելու և քաղաքականապես կազ-մակերպվելու: Ճշմարիտ է նաև, որ մի շարք դեպքերում նրանց շահերը համընկնում էին: Դա մասնավորապես վերաբերում էր խազարների ազդեցության սահմանափակմանը, քոչվոր-ների հարձակումներին դիմակայելուն, դեպի Բյուզանդիա դնեպրյան առևտրային ճանա-պարհի անվտանգությունն ապահովելուն:

Ուստի ծանրակշիռ հիմքեր կան Կիևի առաջնալու ու զարգացումը համարել ոչ թե առան-ձին վերցրած էթնիկական խմբի ձեռքբերում, այլ սլավոնասկանդինավյան համագործակցու-թյան արդյունք: Վերջերս, ամերիկացի հետազոտող Օմելյան Պրիցակը կարծիք հայտնեց, որ Ռուսիայի էթնիկական ծագման հարցը եսկան չէ: Նրա կարծիքով՝ Ռուսիան սկզբում բազմ-էթնիկ և բազմալեզու առևտրային միություն էր, որը նպատակ դնելով վերահսկել Բալթիկ և Միջերկրական ծովերի միջև առևտրային ճանապարհները, ստեղծեց մի քաղաքական միու-թյուն՝ Կիևյան Ռուսիա անվանումով:

## Կիևի վերելքը

Աշխարհի բազում մեծ քաղաքների պատմությունը վկայում է, որ *հզորանալու առաջին նախապայմանը աշխարհագրական բարենպաստ, իշխող դիրքի ընտրությունն է*: Բացառու-թյուն չէր նաև Կիևը: Յիմնվելով Դնեպրի միջին հոսանքում, Կիևը ոչ միայն Մերձդնեստրյան և նրա վտակներին մոտ գտնվող հսկայական տարածքների համար տարանցիկ ճանապարհ-ների հանգուցակետ էր, այլև Դնեպրի հոսանքով մինչև Սև ծով և այնուհետև ծովով մինչև Արևելքի (Լևանտի)\* հարուստ քաղաքները հասնելու գերազանց հնարավորություն: Բացի դրանից, գտնվելով աշխարհագրական և մշակութային երկու գոտիների՝ Գոլեսի (Պոլես-յեի) անտառապատ հարթավայրերի և Գարավի արծակ տափաստանների սահմանում, ռազ-մավարական կարևոր նշանակություն էր ձեռք բերում, միաժամանակ դառնալով այդ երկու պատմական հոսանքների կամ միտումների գայթաքար:

Այդ հոսանքներից կամ միտումներից մեկը մենք արդեն հիշատակել ենք: Դա արևելա-սլավոնական բազում մասնատված համայնքների՝ աստիճանաբար խոշոր ցեղախմբերում միավորվելն էր: Այդ ցեղախմբերից յուրաքանչյուրն իր տարածքն ուներ, իր առաջնորդը և ցցապատնեշներով ամրացված իր «գրադը»: Այդ գործընթացի ավանգարդում պոլյաններն էին, որոնց տարածքում էլ հետագայում կառուցվեց Կիևը:

Գիտնականների հավաստմամբ, արդեն VI-VII դարերում պոլյաններն իրենց առասպելա-կան առաջնորդ Կիյի հետ ստեղծեցին մի հզոր ցեղային միություն, որն իրեն ենթարկեց հարևաններին և սերտ կապեր հաստատեց Բյուզանդիայի հետ: Ըստ առասպելի՝ Կիյն իր նորայրներ Շչեկի, Խորիվի և քույր Լիբիդի հետ հիմնեց Կիևը՝ քաղաքն անվանակոչելով իր անունով: Չնայած այդ շրջանի վերաբերյալ տվյալները շատ սուղ են, այնուամենայնիվ, կարելի է ենթադրել, որ հիմնականում արևելյան սլավոններն ու մասնավորապես պոլյան-

\* Լևանտ - ֆրանսերեն՝ Levant, կամ իտալերեն՝ Levante - Արևելք բառերից: Միջերկրական ծովի արևելյան սահմանը շրջաններում գտնվող երկրների (Սիրիա, Լիբանան, Իսրայել, Եգիպտոս, Թուրքիա, Գոնաստան, Կիպրոս) ընդհանուր անվանումը: Նեղ իմաստով՝ Սիրիան ու Լիբանանը:



ներն էին, որ հիմք դրեցին այն քաղաքական, մշակութային ու առևտրական **հզոր միավոր**-մանը, որի անունն էր **Կիևյան Ռուսիա**:

Առավել վճռական ու սրընթաց էին զարգանում մյուս հոսանքի **իրադարձությունները**, որոնց արդյունքում պատմության բեմում հայտնվեցին սկանդինավցիները: Այդ հասկանալու համար հարկավոր է մի հայացք ձգել VIII-IX դարերի Սկանդինավիայի ժայռոտ ու ամայի ափերին, որտեղ, մինչև հիմա էլ անհասկանալի պատճառներով, ժողովրդագրական անառջացավ: Չկարողանալով ապրուստի միջոցներ հայթայթել **հայրենիքում**, սկանդինավցի քաջ երիտասարդները նավ էին նստում ու գնում օտար երկրներ: **Նրանք** ավերիչ **հարձակումներ** էին գործում Արևմտյան Եվրոպայի վրա, բնակություն էին հաստատում Անգլիայում,



**Կիևը X-XIII դարերում (վերականգնված տեսքը)**

Ֆրանսիայում, Իտալիայում և Սիցիլիայում գավթած հողերում՝ հիմնելով իրենց թագավորությունները: Մի մասն էլ, Ատլանտյան օվկիանոսն անցնելով, գաղութացրեցին Իսլանդիան, Գրենլանդիան, և որ շատ հավանական է՝ հասան Ամերիկյան մայրցամաք: Ոմանք էլ, մասնավորապես Շվեդիայից և Գոթլանդ կղզուց դուրս եկածները, որոնց **վարյագներ** էին կոչում, ուղղվեցին հարավ-արևելք: Սկզբում բնակություն հաստատեցին Բալթիկ ծովի ափերին և Ալդեյգյուբորգում՝ Լադոգա լճի մոտ, հետագայում՝ Նովգորոդում՝ Իլմեն լճի մոտ: Ի տարբերություն սլավոնների հողաշեն ամրությունների ու փայտե ցցապատեղանքների, նրանք իսկապես քաղաք-ամրոցներ էին կառուցում, որտեղ բնակվում էր իշխանն իր ընտանիքի և դրուժինայի հետ, իսկ շուրջն աստիճանաբար բնակավայր էր աճում՝ լցվելով վաճառականների ու արհեստավորների կացարաններով:

Բնիկների հետ առևտուր անելով, հաճախ էլ թալանելով (երբ առաջինը չէր հաջողվում, նրանք հաճույքով երկրորդ միջոցին էին դիմում), վարյագները ձեռք էին բերում մորթեղեն, մեղր, մոմ և ստրուկներ: Սակայն նրանք շատ ավելին էին ուզում, քան արևելյան սլավոններն ի վիճակի էին հայթայթելու: Իրենց բնակավայրերը որպես հենակետ օգտագործելով, վարյագներն ուսումնասիրում էին գետային ուղիները, որոնք տանում էին դեպի հարավ՝ իսլամական քաղաքակրթությունն ու բյուզանդական մեծ ու ճոխ քաղաքները:

Կարճ ժամանակում ուսումնասիրեցին ջրային ուղիների ցանցն ու գետաբերանները՝

Վուլգայով Բալթիկ ծովից մինչև Կասպից ծով, որը ճանապարհ էր բացում դեպի Բաղդադ՝ իսլամական աշխարհի հարուստ ու բազմազգ մայրաքաղաքը: Հետագա արշավանքների ընթացքում վարյագները նոր ճանապարհի հայտնաբերեցին: Տարեգրություններում «**վարյագներից՝ հույներ**» անվանվող այդ ճանապարհն անցնում էր Դնեպրով դեպի Սև ծով՝ Կոստանդնուպոլսի ուղղությամբ, որն այդ ժամանակ ողջ քրիստոնեական աշխարհի ամենահարուստ քաղաքն էր և Արևելքի քաղաքների հետ առևտրի ամենամեծ շուկան:

Դեպի հարավ՝ Կոստանդնուպոլսին հնարավորինս մոտ բնակություն հաստատելը ճարպիկ ու ձեռներեց վարյագների համար լուրջ ժամանակի խնդիր էր: Ինչպես նկարագրված է «Անցած ժամանակների պատմությունում», Նովգորոդի վարյագ իշխան **Ռյուրիկի** գործի երկու առաջնորդ՝ **Ասկուլդն** ու **Դիրը**, «բույլտվություն» խնդրեցին իրենց գործի հետ միասին Դնեպրի հոսանքով նավարկել դեպի Կոստանդնուպոլիս: Ծանապարհին, գնահատելով Կիևի հիանալի դիրքը՝ գետի բարձրադիր ափին, նրանք զավթեցին քաղաքը, իսկ պոլյանների վրա տուրքեր դրեցին: Ակնհայտ է, որ նրանք արագ զորացան ու հարստացան, քանի որ 860 թ.-ին իրենց ենթակա պոլյանների հետ արշավեցին Կոստանդնուպոլսի վրա: Աստիճանաբար նրանց հաջողությունների լուրերն հասան Նովգորոդ: Եվ թեև Ռյուրիկն արդեն չկար, իսկ նրա որդի Իգորը (սկանդինավերեն՝ Ինգվար) դեռ շատ էր փոքր, որ գործն առաջնորդեր, Օլեգը, որ մինչև Իգորի չափահաս դառնալը խնամակալ էր նշանակված, վարյագներից, սլավոններից ու ֆիններից բաղկացած մի բանակ կազմեց, իր հետ վերցրեց Իգորին և նավարկեց դեպի Կիև: Ասկուլդին ու Դիրին խորամանկությամբ դուրս բերելով քաղաքից, նրանց մեղադրեց իշխանությունը բռնատիրելու մեջ և մահապատժի ենթարկեց: 882 թ.-ին Օլեգը տեղափոխվեց **Կիև**՝ «**ռուսիական քաղաքների մայր**» հայտարարելով այն:

Վարյագների՝ Կիև գալու մասին այսպես է պատմում Նեստոր-Տարեգիրը: Սակայն տարբեր ժամանակներում գիտնականների մի քանի սերնդի կողմից տեքստի մանրակրկիտ ուսումնասիրության արդյունքում այդ պատմության մեջ բազում հարցականներ առաջացան: Ժամանակակից պատմաբանները զարմանում են, թե ինչո՞ւ Իգոր (շատերի կարծիքով) Ռյուրիկի անունը այդ ժամանակներին վերաբերող ոչ մի այլ աղբյուրում չի հիշատակվում: Որոշ գիտնականներ նույնիսկ կասկածի տակ են վերցնում Ռյուրիկի գոյության փաստը: Եվ հետո, ինչպե՞ս Ասկուլդի ու Դիրի նման փորձված առաջնորդները խաբվեցին Օլեգի ակնհայտ ստիճ: Եվ մի՞թե Օլեգն իսկապես Ռյուրիկի ազգականն էր, թե՞ Նեստորը նրա համար ազնվական տոհմաբանություն էր ստեղծել: Եվ ինչո՞ւ բացատրել, որ չնայած Իգորը վաղուց չափահաս էր, բայց Օլեգի «խնամակալությունը» շարունակվեց մինչև իր մահը: Մի խոսքով, Օլեգի իշխանությունից առաջ ընկած ժամանակաշրջանի վերաբերյալ այլ աղբյուրներում տվյալների բացակայության պատճառով, միայն ըստ Նեստորի գրած պատմության, դժվար է իրականն անիրականից տարբերել:

## Կիևի առաջին իշխանները

Հզոր պետականություն կամ ծաղկուն քաղաքակրթություն ստեղծելու բարձրագույն նպատակներով չէին առաջնորդվում Կիևի առաջին իշխանները: Նույնիսկ կասկածելի է, թե նրանք որևէ զաղափար ունեին պետականության մասին: Ավելի շուտ նրանք անդադրում ձգտում էին հարստանալու հնարավորին չափ շատ աղբյուրների տիրանալ:

Կիևը գրավելով՝ Օլեգը մասնավորապես ձգտում էր այն կապել Նովգորոդի հետ և իրեն ենթարկել «**հույների**» հետ առևտրական ճանապարհի այդ երկու գլխավոր «պահեստները»: Ընդհանրապես, **կիևյան առաջին իշխանների գործունեությունը սահմանափակվում էր առևտրով և հարկեր հավաքելով**: Ամեն գարնան, երբ սառույցը շարժվում էր, արևելսլավոնական ցեղերից ծնունդն հավաքած հարկերը Դնեպրով ուղարկվում էր Կիև: Այստեղ իշխանները նավերի մեծ քարավան էին պատրաստում՝ բեռնված մորթեղենով ու ստրուկներով, որն իշխանի դրուժինայի պահպանության տակ նավարկում էր դեպի Կոստանդնուպոլիս: Այդ ճանապարհորդությունները լի էին բարդություններով ու վտանգներով: Կիևից ներքև պետք էր հաղթահարել Դնեպրի սահանքները՝ «պորոգները»: Վերջինը, որ կոչվում էր **Նեմասիտեց**՝ «անկուշտ», անհնար էր անցնելը: Դրա համար էլ նավերը բեռնաթափում էին և ցամաքով քարոջ տալիս: Այդտեղ էլ վտանգավոր էր՝ դարանակալած քոչվոր ավազակների պատճառով:

Ամերիկացի պատմաբան Ռիչարդ Փայփսը զուգահեռ է անցկացնում կիևյան վարյագների առևտրական գործունեության և Նոր դարաշրջանի այնպիսի հզոր առևտրական կազմակեր-



պուրյունների միջև, ինչպիսիք էին Օստ-Ինդիայի (Արևելա-Հնդկական) կամ Հուդզոնի ծոցի ընկերակցությունները, որոնց նպատակը բացառապես հարստություն դիզելն էր: Մեծ եկամուտներ ստանալու համար այդ կազմակերպությունները ստիպված էին կառավարման կենտրոնակ համակարգ չունեցող տարածքներն ապահովել կառավարման նվազագույն կառուցվածքով: «Մեծ իշխանը,- գրում է Փայփը,- ամենից առաջ վաճառական էր, իսկ նրա պետությունը՝ առևտրական կազմակերպություն, որ բաղկացած էր իրար հետ թույլ կապի մեջ գտնվող քաղաքներից, որոնց կայազորները հարկ էին հավաքում և քիչ թե շատ հասարակական կարգն էին պահպանում»: Հետապնդելով առևտրական նպատակները և քիչ թե շատ թալանելով տեղի բնիկներին, Կիևի առաջին իշխաններն այն աստիճանաբար վերածեցին մի հսկայական հզոր քաղաքական միավորման կենտրոնի:

### Օլեգ (իշխել է 882 թ.-ից մինչև մոտ 912 թ.-ը)

Կիևյան առաջին իշխանն է, որի մասին քիչ թե շատ պատմական վկայություններ կան, բայց դրանք բավական չեն նրա անձի մասին պատկերացում կազմելու համար: Հայտնի չէ՝ նա իսկապե՞ս պատկանել է Ռյուրիկովիչների դինաստիային, թե ինքնակոչ է եղել, որին Նեստոր-Տարեգիրը հարյուրամյակներ անց վերագրել է այդ դինաստիային: Սակայն ստույգ է, որ Օլեգը վճռական և տաղանդավոր անհատ էր: 882 թ.-ին գրավելով Կիևը և իրեն ենթարկելով պոլյաններին, նա ուժով իր իշխանությունն հաստատեց նաև հարևան ցեղերի վրա (այսինքն՝ նրանցից հարկ վերցնելու իրավունք վաստակեց), որոնցից ամենակարևորը դրևյաններն էին: Օլեգի այս նվաճումները դուր չեկան խազարներին և նրանք պատերազմ սկսեցին Օլեգի դեմ, որն հենց իրենց համար տխուր ավարտ ունեցավ: Օլեգն ավիրեց նրանց կասպիական նավահանգիստները: 911 թ.-ին Օլեգը հսկայական զորքով հարձակվեց Կոստանդնուպոլսի վրա և ավերեց ու թալանեց այն: Այնուամենայնիվ, «Անցած ժամանակների պատմությունը» երևի չափազանցում է նրա հերոսությունները, գրելով, թե նա իր վահանը խփել է բյուզանդական մայրաքաղաքի գլխավոր դարպասին: Սակայն ակնհայտ է, որ Օլեգի ռազմական ուժը զգալի ճնշում էր գործադրում Բյուզանդիայի վրա, քանի որ հույները ստիպված էին Կիևի իշխանի համար բավականին շահավետ առևտրական համաձայնություններ կնքել:

### Իգոր (913-945)

Իգորն այնքան հաջող չիշխեց, ինչպես իր նախորդ Օլեգը: Իրականում նրանից է սկսվում «Իշխանությունը նախ հաստատիր անհնազանդ ցեղերի վրա» կանոնի իրագործումը, որն հետագայում պարտադիր դարձավ կիևյան բոլոր իշխանների համար: Դրևյաններն ու ուլիչներն առաջինը ապստամբեցին նրա դեմ և մի քանի տարվա հոգնեցուցիչ արշավանքների գնով հաջողվեց կրկին հնազանդեցնել խռովարարներին և ստիպել շարունակելու հարկ վճարել: Ներքին խնդիրները լուծելուց և իշխանությունն ամրապնդելուց հետո միայն Իգորը կարողացավ իր նախորդի նման հեռավոր ու լայնածավալ արշավանքներ կազմակերպել և առևտրի, և՛ կողոպուտի նպատակով:


941 թ.-ին, երբ Բյուզանդիայի հետ Օլեգի կնքած խաղաղության պայմանագիրն ուժը կորցրեց, Իգորը ծովային արշավ կազմակերպեց դեպի Կոստանդնուպոլիս, բայց այստեղ էլ անհաջողության մատնվեց: Բյուզանդացիներն օգտագործեցին իրենց նոր հայտնագործությունը՝ «հունական կրակ» կոչված դյուրավառ խառնուրդը, որով Կիևի ողջ նավատորմը իրի մատնեցին և Իգորը խայտառակ փախուստի դիմեց: Արդյունքում՝ 944 թ.-ին չափազանց ստորացուցիչ պայմանագիր կնքեց բյուզանդական կայսեր հետ:

Նույն թվականին Իգորն իր բախտն է փորձում արևելքում և այս անգամ հաջողությունն ուղեկցում է նրան: Մեծաքանակ զորքի գլուխ անցած, նա Վոլգայով իջավ ներքև, թալանեց Կասպիայի ափամերձ մուսուլմանական հարուստ քաղաքներն ու մեծ ավարով վերադարձավ Կիև:

Իգորի իշխանությունն ավարտվեց այնպես, ինչպես սկսվեց՝ դրևյանների ապստամբությամբ: Հաճախակի դարձած հարկահավաք արշավանքներից չարացած դրևյանները դարանակալեցին ու սպանեցին նրան՝ ոչնչացնելով ողջ թիկնազորը:

### Օլգա (945-964)

«Անցած ժամանակների պատմության» հեղինակներն, անկասկած, բարեհաճ էին Օլգայի նկատմամբ (սկանդինավերեն՝ Հելգա), որն Իգորի կինն էր և իրենց որդի Սվյատոսլավի անչափահասության շրջանի խնամակալը: Նրանք հաճախ են բնորոշում Օլգային՝ որպես



Կիևյան Ռուսիան X դարում



գեղեցիկ, եռանդուն, խորամանկ և, ամենից առաջ, որպես իմաստուն կառավարիչ: Բայց ամենամեծ հաճոյախոսությունն արել է մի տղամարդ-տարեգիր, որն ընթերցողին ներկայացնում է նրա «տղամարդկային բանականությունը»: Այդ բոլոր «գովերգությունները», որ վանական-տարեգիրներն ուղղել են Օլգային, մասամբ բացատրվում են նրանով, որ նա 955 թ.-ին քրիստոնեություն էր ընդունել: Սակայն առանց այդ «գովերգությունների» էլ Օլգան կմնար որպես նշանավոր տիրակալ: Այն ժամանակներում, երբ վրեժ լուծելը բացարձակ բարոյական պարտք էր համարվում, Օլգան շատ արագ ու դաժան ձևով ամուսնու ոխը հանեց դրկյաններից: Միննույն ժամանակ նա պարզ գիտակցում էր, որ հարկավոր է փոխել հարկահանության ինքնակամ ու անկանոն ձևը, որն ամուսնու մահվան պատճառը դարձավ: Նա Կիևյան Ռուսիայի պատմության մեջ առաջին «բարեփոխումներն» է հրականացնում՝ հստակ բաժանելով այն տարածքները, որոնց բնակիչները նշված ժամանակում պետք է վճարեին սահմանված հարկը:

Օլգան հոգում էր նաև, որ իր հպատակները չզրկվեն ապրուստի միջոցներից և կարողանան շարունակել հարկ վճարել: Հաստատելով իշխանական գանձարանի իրավունքները մուշտակամորթ գազաններով հարուստ հողերի վրա, Օլգան կայուն եկամուտներ ապահովեց: Իր երկիրն ու հպատակ ժողովուրդներին լավ ճանաչելու նպատակով, Օլգան հաճախ էր ճանապարհորդում իր տերության հեռավոր վայրերն ու մեծ քաղաքները: Հարևանների հետ հարաբերություններում էլ դիվանագիտությունը գերադասում էր պատերազմներից: 957 թ.-ին նա ուղևորվում է Կոստանդնուպոլիս՝ բյուզանդական կայսրի հետ բանակցելու: Չնայած կիևյան տարեգրություններում շատ է պատմվում այն մասին, թե ինչպես Օլգան խորամանկությամբ գերազանցեց կայսրին, օտար աղբյուրներն հավաստիացնում են սակայն, որ բանակցություններն այնքան էլ հաջող չէին: Բայց այն փաստը, որ քրիստոնեական աշխարհի ամենահզոր տիրակալի հետ հավասարի իրավունքով բանակցություններ էր ընթացել, վկայում էր Կիևի նշանակության աճի մասին:

### Սվյատոսլավ (964-972)

Քաջ ու համարձակ, ուղղամիտ ու խիստ Սվյատոսլավն ամենից առաջ ռազմիկ իշխան էր: Հրուշակահուն նրան անվանում է գահին նստած կոզակ, իսկ նրա բուռն իշխանության շրջանը դիպուկ ներկայացնում է որպես մեծ արկածախնդրություն: Անդադար պատերազմելով, Սվյատոսլավը սիրում էր վիթխարի ու փառահեղ հղացումներ: Սլավոնական անունով, վարյազներին հատուկ պատվասիրությամբ ու քոչվորներին հատուկ թափառական ապրելակերպով, նա եվրասիայի հզոր որդին էր և ազատ շնչում էր անտառներում ու տափաստաններում: Նրա իշխանությունը Կիևյան Ռուսիայի վաղ հերոսական շրջանի բարձրակետը հանդիսացավ:

964 թ.-ին 22-ամյա Սվյատոսլավը պատերազմ է սկսում արևելքում, նպատակ ունենալով իրեն ենթարկել վյատիչներին՝ արևելասլավոնական մի ցեղ, որ ապրում էր Օկա գետի ափերին (այնտեղից էլ հենց սերում են ներկայիս ռուսները): Այնուհետև, Վոլգայով ներքև նավարկելով, նա ջախջախում է վոլգյան բուլղարներին, ինչը հանգեցնում է հզոր խազարների հետ սուր ընդհարումների: Արյունահեղ ճակատամարտում Սվյատոսլավը հաղթում է նաև խազարներին և հիմնահատակ անում Վոլգայի վրա գտնվող նրանց մայրաքաղաք Իտիլը: Այնուհետև նա գնաց նվաճելու Հյուսիսային Կովկասը: Այս ուռջակավոր արշավներն ունեցան իրենց հեռահար հետևանքները: Վյատիչներին նվաճելով, փաստորեն Կիևի գերիշխանության տակ հայտնվեցին բոլոր արևելյան սլավոնները, ինչպես նաև սլավոնական գաղութացման համար մատչելի դարձան հյուսիս-արևելյան հողերը, որոնք հիմա Ռուսաստանի կազմում են:

Խազարներին ջախջախելով, Կիևը չեզոքացրեց եվրասիայի գերիշխանության համար պայքարող իր հակառակորդին և վերահսկեց վոլգյան առևտրական մեծ ուղին: Սակայն խազարների անկումն իր բացասական նշանակությունն էլ ուներ: Նրանց հետ միասին վերացավ նաև այն բախարգելը, որը թույլ չէր տալիս պեչենեգների նման արևելքից եկած քոչվորներին թափանցել ուկրաինական տափաստաններ:

Իր իշխանության երկրորդ կեսին Սվյատոսլավն ուշադրությունն ամբողջովին կենտրոնացնում է Բալկանների վրա: 968 թ.-ին նա համաձայնվում է օգնել Բյուզանդիային՝ Բուլղարական հզոր թագավորության դեմ պատերազմում: Մեծ զորքով նա ներխուժում է Բուլղարիա, կոտորում հակառակորդին և տիրում մերձդանուբյան քաղաքներից շատերին՝ հենակետ ընտրելով Պերեյասլավեց քաղաքը: Սվյատոսլավն այնպես հիացած էր այդ հարուստ երկ-

րով, որ միայն պեչենեգների՝ Կիևի վրա հարձակվելու հնարավոր վտանգը ստիպեց վերադառնալ Կիև: Բայց երբ վտանգն անցավ, Սվյատոսլավը, ում գերիշխանության տակ էր Վոլգայից Դանուբ ընկած ողջ տարածքը, ասաց. «Սրտովս չի էլ Կիևում մնալը: Ուզում եմ ապրել Պերեյասլավեցում, քանի որ այն է իմ երկրի կենտրոնը և այնտեղ է հոսում ամբողջ բարիքը՝ հույներից՝ ոսկին, թանկարժեք կտորեղենը, գինին ու պտուղ-բանջարեղենը, չեխերից և հունգարներից՝ արծաթն ու ձիերը, Ռուսիայից՝ մորթեղենը, մոմը, մեղրն ու ստրուկները»: Եվ այսպես՝ իր ավագ որդուն՝ Յարոպոլիին, թողնելով Կիևում, միջնեկին՝ Օլեգին՝ ուղարկելով դրկյանների մոտ, իսկ փոքր որդուն՝ Վոլոդիմիրին՝ Նովգորոդ, ինքը վերադարձավ Բուլղարիա:

Անհանգստանալով նոր՝ ագրեսիվ հարևանից, Բյուզանդիան դուրս եկավ կիևյան իշխանի դեմ և երկարատև ու դաժան մարտերից հետո ստիպեց նրան ետ մահանջել: Կիևի ճանապարհին՝ Դնեպրյան սահմանների մոտ, ուժասպառ ռուսիչների վրա հարձակվեցին պեչենեգները և սպանեցին Սվյատոսլավին: «Անցած ժամանակների պատմությունն» ասում է, որ պեչենեգների խանը հրամայում է նրա գանգից գավաթ պատրաստել, մետաղապատել, և այդ գավաթով է խմում:

Այսպես ավարտվեց այդ «թափառական ասպետի» կյանքի ուղին:

## Կիևը փառքի գագաթնակետին

Արշավների և նվաճումների մասին հիշատակելիս, անհրաժեշտ է նշել նաև կիևյան իշխանների նպատակների և նրանց իշխանության սահմանների մասին: Չէ որ նույնիսկ Կիևյան Ռուսիայի աշխարհագրական սահմանները միանգամայն անորոշ էին: Անտարակուսելի է միայն այն, որ նրանք պաշարել էին արևելյան սլավոններով բնակեցված գրեթե բոլոր հողերը (հետագայում կորցրեցին Սվյատոսլավի գրաված ստորին Վոլգայի, Հյուսիսային Կովկասի և Բուլղարիայի տարածքները): Սակայն կիևյան առաջին կառավարիչների իշխանությունն իրենց իսկ հաստատուն տիրույթներում էլ անկայուն էր ու սահմանափակ: Այդ իշխանության պարզունակ ձևերն ու կառուցվածքը, ենթակա հողերի չափազանց մեծ տարածվածությունն ու շոշափելի մեկուսացվածությունը խոչընդոտում էին քաղաքական հզոր միավորի ստեղծմանը: Բացի պարբերաբար կատարվող հարկահանությունից, առաջին կիևյան իշխանները շատ սահմանափակ շփում ու ազդեցություն ունեին իրենց ենթակա ցեղերի վրա, հատկապես նրանց, որ կենտրոնական քաղաքներից ու բնակավայրերից հեռու էին ընկած: Ինչ վերաբերվում է հարկ հավաքելու իշխանական իրավունքին, ապա այդ իրավունքը նրանք ապահովում էին բացառապես կոպիտ ուժի միջոցով, ինչին և ինչքանով ընդունակ էր իշխանի դրուժինան, որն սկզբում վարյազներից էր բաղկացած: Իշխանի և դրուժինայի միջև ձևավորվում էր յուրահատուկ անմիջական և փոխադարձ կապվածություն, քանի որ նրանք միասին էին կիսում վտանգն ու ավարը: Այդ անմիջական, անձնական և փոխաշահավետ հարաբերություններն էլ Կիևյան պետության վաղ շրջանի քաղաքական համակարգի հիմքն էին հանդիսանում: Այսպիսով, հարկահանության արշավներում և հեռավոր երկրներ տանող առևտրական ուղիները իրենց ենթարկելու ձգտումով, իշխաններն իրենց դրուժինաներով 100 տարվանից էլ կարճ ժամանակում ստեղծեցին մի մեծ ու հզոր միություն՝ Կիևյան Ռուսիան:

Սվյատոսլավի մահից հետո Կիևյան Ռուսիան առաջին անգամ բախվեց, հետագայում քաղաքական քրոնիկ հիվանդություն դարձած, երկպառակություններին, որով վարակվեցին Ռյուրիկովիչների դինաստիայի անդամները: Հարկ հավաքելու իրավունքին տիրանալու վեժ ու կռվի ժամանակ Յարոպոլկը սպանեց իր եղբորը՝ Օլեգին: Վախենալով, որ իրեն էլ նույն բախտն է վիճակված, նրանց փոքր եղբայր Վոլոդիմիրը Նովգորոդից փախավ Շվեդիա: Մի քանի տարի անց, վարյազների մեծ բանակի գլուխն անցած, նա վերադարձավ և պատերազմ սկսեց Յարոպոլկի դեմ, որում էլ վերջինս գտավ իր մահը:

### Վոլոդիմիր Մեծ (980-1015)

980 թ.-ին բարձրանալով կիևյան գահին և իր ձեռքում կենտրոնացնելով ողջ իշխանությունը, Վոլոդիմիրը (սկանդինավերեն՝ Վալդեմար) մի նոր էջ քաղեց Կիևյան Ռուսիայի պատմության մեջ: Անդադրում վարյազ-իշխաններն այլևս Ռուսիային չէին նայում որպես հեռավոր նվաճումների ասպարեզի, կամ էլ մի երկրի, որը կարելի է միայն կեղեքել ու հարստահարել:



Վուլդիմիրը պետության կառավարման գործին առավել կառուցողական մոտեցում ցուցաբերեց: Ի տարբերություն իր նախնիների կառավարման ոճի, նրա ուշադրության կենտրոնում երկրի բարգավաճումն էր, ոչ թե կողոպուտն ու հարկեր հավաքելը: Նրա իշխանության օրոք Ռուսիան իսկապես ներկայանում է որպես ամբողջական մի պետություն և ժողովուրդ:

Ծիշտն ասած՝ սկզբում Վուլդիմիրը ոչնչով չէր տարբերվում իր նախորդներից: Նա բազում պարզներ է շնորհում իր դրուժինայի անդամներին, պահպանում է հեթանոսական ավանդական ծեսերը, ըմբոստ վյատիչների դեմ արշավներ է կազմակերպում և իր իշխանությունը տարածում ռադիմիչների վրա: Վարվելով հոր նման՝ ինքն էլ իր որդիներին (նա 12 օրինական որդի ուներ) մեծ տարածքների ու քաղաքների կառավարիչներ նշանակեց, այդպիսով տեղացի իշխանների ձեռքից խլելով իշխանությունն ու կենտրոնացնելով բացառապես իր դինաստիայի ձեռքում: Երբ վարյազներից բաղկացած նրա դրուժինան սկսեց ավելի մեծ պարզներ պահանջել, նա արեց այնպես, որ նրանք ծառայության անցնեն բյուզանդացիների մոտ:



Վուլդիմիր Մեծի ժամանակներում հատած դրամ

Հեռավոր արշավներ կազմակերպելու փոխարեն Վուլդիմիրը մտահոգվեց իր սեփական սահմանների պաշտպանությամբ: Պեչենեգների սպառնալիքներին դիմակայելու համար հարավում նա ամրությունների մի շրջանավորված ցանց կառուցեց, ինչպես նաև՝ նոր քաղաքներ հիմնեց: Կրկին խախտելով նախնիների ավանդույթը, նա հայացքը հառեց դեպի արևմուտք և իր տարածքներն ընդլայնեց արդի Արևմտյան Ռուսիայի հողերով՝ սկիզբ դնելով լեհերի հետ այս տարածքի համար երկարատև պայքարին: Նա լիտվական յատվյազների և ստիպեց ընդունել իր գերիշխանությունը: Վուլդիմիրն ընդհանուր առմամբ բարեկամական հարաբերություններ հաստատեց լեհերի, հունգարների ու չեխերի հետ: Նոր՝ արևմտյան կողմնորոշման հիմքում ընկած էր արևմուտք գնացող առևտրական գլխավոր ուղիները վերահսկելու, ինչպես նաև դեպի Կոստանդնուպոլիս նոր ուղիներ գցելու ձգտումը: Այդ նվաճումների արդյունքում Ռուսիան զբաղեցնում էր 800 հազ. քառ. կմ տարածք և այդպիսով ամենամեծ պետությունն էր այն ժամանակվա Եվրոպայում:

Սակայն, Վուլդիմիրի ամենամեծ նվաճումն, անկասկած, այդ անձայրածիր երկրում քրիստոնեության արմատավորումն էր: Գիտակցելով, որ Կիևյան Ռուսիայում նախնիներից ավանդված հեթանոսական կրոնն սպառնում է իրեն, նա մտահոգված էր ժողովրդի հոգևոր, սոցիալական և քաղաքական ձգտումների արտահայտման առավել նուրբ միջոցներ գտնելով: Եթե այսօրվա հետ համեմատենք, ապա նա «երրորդ աշխարհի» զարգացող պետության ղեկավարի է հիշեցնում, որը ձգտում է արագացնել իր երկրի արդիականացումը և այդ պատճառով ստիպված է ընտրել երկու աշխարհներից մեկը՝ երկու ամենազարգացած առաջատար զաղափարախոսություններից մեկը՝ կապիտալիզմը կամ սոցիալիզմը: Վուլդիմիրի համար՝ հավատքի այդ երկու զարգացած համակարգերն իր տեսադաշտում քրիստոնեությունն ու իսլամն էին, այսինքն՝ այն երկրների կրոնները, որոնց հետ Ռուսիան ուներ և ձգտում էր հաստատել քաղաքական ու առևտրական սերտ հարաբերություններ: Չնայած «Անցած ժամանակների պատմության» մեջ ասվում է, թե Ռուսիայի պատվիրակները մերժեցին իսլամը, որովհետև այն արգելում էր ոգելից խմիչքների օգտագործումը և նախընտրեցին Բյուզանդիայի քրիստոնեությունը, որը հրապուրեց իր ճոխ կրոնական ծեսերով, սակայն Վուլդիմիրի ընտրության պատճառն իրականում առկա քաղաքական և տնտեսական զործոններն էին:

Ինչպես վկայում է Օլգայի մկրտությունը, քրիստոնեությունն արդեն Կիևում արմատներ էր ձգել: Վաղուց քրիստոնեացած բուլղարների հետ Ռուսիայի հարևանությունը և նորադարձ

լեհերի ու հունգարների հետ ունեցած կապերը միայն արագացրեցին այս ընթացքը: Սակայն քրիստոնեության, հատկապես բյուզանդական տարատեսակի, ընդունումն ամենից առաջ բացատրվում է քաղաքական պատճառներով: 987 թ.-ին բյուզանդական կայսրերին ապրստամբության ճնշելուն օգնություն ցուցաբերելու դիմաց Վուլդիմիրը պահանջեց իրենց քրոջ՝ Աննայի հետ ամուսնանալու համաձայնություն տալ: Վախենալով, որ «բարբարոսի» հետ ամուսնության համաձայնությունը կսասանի կայսերական դինաստիայի հեղինակությունը, իրավիճակից դուրս գալու համար Վուլդիմիրից պահանջեցին քրիստոնեություն ընդունել: Սակայն նույնիսկ 988 թ.-ին Վուլդիմիրի մկրտությունից հետո էլ նրանք փորձում էին հետաձգել ամուսնությունը: Սակայն երբ ռուսիչները Դրիմում նվաճեցին բյուզանդական Խերսոնես (Կորսուն) քաղաքը, վերջապես ամուսնությունը կայացավ: 988 թ.-ին, ցանկանալով հնարավորինս արագ կնքել իր ժողովրդին, Վուլդիմիրը հրամայեց կիևցիներին մեծ բազմությամբ քշել Դնեպրի վտակ Պոչայնա գետի մոտ և բոլորին միանգամից մկրտել: Ժողովրդի դիմադրությունը հաշվի չառնելով, ավերում ու փշրում էին հեթանոսական կուռքերին ու նրանց մեղանները, փոխարենը կառուցելով եկեղեցիներ: Եկեղեցին, որի հոգևոր առաջնորդներն ու սպասավորները բերվել էին Կոստանդնուպոլիսից, ոչ միայն մեծ արտոնություններ և ինքնավարության իրավունք ստացավ, այլև իշխանական եկամտների տասներորդ մասը՝ եկեղեցու պահանջները բավարարելու համար: Այս նորամուծությունների արդյունքում աճեց բյուզանդական կայսրերի հռչակավոր տան հետ բարեկամական կապերով կապված Վուլդիմիրի և նրա դինաստիայի հեղինակությունը:

Սերտացան Վուլդիմիրի (որն արդեն քրիստոնեական «կառավարող ընտանիքի» անդամ էր) հարաբերությունները նաև եվրոպական մյուս միապետների հետ: Քրիստոնեության ընդունումն իր դրական ազդեցությունն էր ունենում նաև երկրի ներքին կյանքում: Քանի որ բյուզանդական եկեղեցին պաշտպանում էր միապետների իրավունքները, ուստի կիևյան իշխանները գտան այն գաղափարական հզոր հենակետը, որ նախկինում չուներին: Բացի դրանից, եկեղեցին իր ներքին բարդ կառուցվածքով կիևյան ղեկավարներին ծանոթացրեց կառավարման նոր ձևերի հետ: Իսկ Կիևյան Ռուսիայի ժողովուրդը այնպիսի հզոր հոգևոր վերելք ապրեց, որը ոչ միայն նրան մղեց հոգևոր և մշակութային միասնության, այլև մեծ ազդեցություն գործեց սոցիալ-տնտեսական կյանքի վրա: Ընդհանրապես, Վուլդիմիրի ընտրության շնորհիվ Ռուսիան ընդմիջտ կապվեց քրիստոնեական արևմուտքի հետ ավելի շատ, քան թե իսլամական արևելքի հետ, որն էլ Ռուսիայի պատմական, քաղաքական և մշակութային չտեսնված զարգացման նախապայման հանդիսացավ:

Դժվար է գերազանցահատել այն, որ քրիստոնեությունը Կիև եկավ ոչ թե Հռոմից, այլ Բյուզանդիայից: Հետագայում, երբ այս երկու կենտրոնների միջև կրոնական տարածայնություն առաջացավ, Կիևն անցավ Կոստանդնուպոլիսի կողմը՝ հրաժարվելով կաթոլիկությունից:

Այսպես դրվեց ուկրաինացիների և կաթոլիկության կողմնակիցներից ամենամոտ հարևանների՝ լեհերի միջև ապագա դաժան բախումների հիմքը:

### Յարոսլավ Իմաստուն (1036-1054)

Վուլդիմիրի մահը եղբայրասպան նոր պատերազմի պատճառ դարձավ Ռյուրիկովիչների միջև: Լեհերի աջակցությամբ Վուլդիմիրի ավագ որդին՝ Սվյատոպոլկը (տարեգիրները նրան հաճախ «Անիծյալ» էին անվանում) հարձակվեց իր եղբայրներ Սվյատոսլավի, Բորիսի ու Գլեբի վրա և սպանեց նրանց: Վերջին երկուսին, որոնք շատ երիտասարդ էին և ժողովրդականություն էին վայելում, ուղղափառ եկեղեցին սրբերի շարքը դասեց: Վուլդիմիրի մյուս որդին՝ Յարոսլավը, որ Նովգորոդում էր կառավարում, հոր օրինակով, 1019 թ.-ին, վարյազների մեծ զորքի զլուխ անցած ջախջախեց Սվյատոպոլկին: Բայց այդ հաղթանակը նրան լիարժեք իշխանության չբերեց: Յարոսլավի դեմ դուրս եկավ նրա մյուս եղբայրը՝ Մստիսլավ Քաջը, սակայն արյունահեղությունից խուսափելու համար նրանք որոշեցին իշխանությունը բաժանել իրար մեջ: Մնալով Նովգորոդում՝ Յարոսլավը ստանում էր Դնեպրից արևմուտք ընկած բոլոր հողերը, իսկ արևելյան կողմի հողերն անցնում էին Մստիսլավին, որը Տնուտորոկանից Չեռնիգով էր տեղափոխվել: Կիևը՝ երկու իշխանների համար էլ կարևորագույն նշանակություն ունեցող քաղաքը, մնաց անտեր: Միայն Մստիսլավի մահից հետո, 1036 թ.-ին կիևյան գահին նստեց Յարոսլավը, որը դարձավ Ռուսիայի միահեծան տիրակալը:

Յարոսլավի երկարատև իշխանության ժամանակաշրջանն ընդունված է համարել Կիևյան Ռուսիայի հզորության գագաթնակետը: Նա շարունակեց և ավարտեց այն շքեղ շինությունը,



որ հիմնադրեց հայրը՝ Կոլոդիմիրը: Նախ շարունակեց ընդլայնել իր՝ առանց այդ էլ հսկայական տերության սահմանները. ետ նվաճեց երկպառակության արդյունքում լեհերի գրաված արևմուտքի հողերը, հնազանդեցրեց մերձբալթյան նոր ցեղերին և վերջնականապես ջախջախեց պեչենեգների: Այս նվաճումների արդյունքում՝ *Յարոսլավի տիրակալությունը տարածվում էր Բալթիկ ծովից մինչև Սև ծով, և Օկա գետից մինչև Կարպատյան լեռները:* Սակայն նրա ռազմական նվաճումների փառքը նսեմացրեց դեպի Կոստանդնուպոլիս անհաջող արշավը, որը ռուսիչների վերջին պատերազմն էր Բյուզանդիայի դեմ: Ընդհանուր առմամբ՝ Կիևը պահպանում էր բարեկամական հարաբերությունները Կոստանդնուպոլսի հետ: Միջնադարյան եվրոպայում դինաստիայի հզորության ու հեղինակության նշան էր այլ

օրենքների համատեղումն ու կատարելագործումն էր, որը դարձավ ողջ երկրի իրավական օրենսգիրքը և կոչվեց *«Ռուսաց ճշմարտություն»:* Այդ օրենսգրքով, գործող օրենքները ոչ միայն համակարգվում էին, այլև ժամանակի պահանջներից ելնելով փոփոխվում էին, ինչը վկայում էր իշխանի՝ հպատակների կյանքի համար հոգ տանելու մասին: Այսպես օրինակ՝ արյան վրիժառույթունը փոխարինվում էր դրամական փոխհատուցմամբ, որը սահմանում էին իշխանն ու նրա տեղապահները: Այս և նման օրինակները վկայում են, որ Կիևյան Ռուսիայում ձևավորվում էր քաղաքակիրթ բարոյական նորմերով դաստիարակվող, զարգացող ու հարստացող մի հասարակություն, որն անսահմանորեն տարբերվում էր արևելասլավոնական անտառաբնակ տարանջատ այն ցեղերից, որոնք առաջին անգամ դիմակայելու ելան



Կիևի սբ. Սոֆիայի տաճարը - XI դար (այժմյան տեսքը)

նշանավոր դինաստիաների հետ ամուսնական կապեր հաստատելը: Այս չափանիշով՝ Յարոսլավի հեղինակությունն իսկապես որ պետք է բարձր լիներ: Նրա կինը շվեդական արքայադուստր էր, քույրերից մեկին կնության առավ լեհական թագավորը, մյուսին՝ բյուզանդական արքայազնը: Նրա երեք որդիներն ամուսնացան արքայադուստրերի հետ, իսկ երեք դուստրերը՝ ֆրանսիական, նորվեգական և հունգարական թագավորների կանայք դարձան: Իզուր չէ, որ պատմաբաններն հաճախ Յարոսլավին «Եվրոպայի աներ» էին անվանում:

Այնուամենայնիվ, նրա մնայուն փառքն ամենից առաջ հիմնված է ներքին քաղաքական նվաճումների վրա: Նրա աջակցության շնորհիվ ընդլայնվում էր եկեղեցու գործունեությունը: Հիմնվում էին վանքեր, որոնք դառնում էին մշակույթի ու լուսավորության կենտրոններ: Նրա երկարամյա կառավարման ընթացքում «Ոսկեդարի Կիևում» կառուցվեց ավելի քան 400 եկեղեցի: Այս թագի ամենամեծ գոհարը Սուրբ Սոֆիայի տաճարն էր, որ կառուցվեց Կոստանդնուպոլսի սբ. Սոֆիայի տաճարի նմանությամբ: Եկեղեցու խնդիրները լուրջ հոգալու վկայությունն այն էր, որ 1051 թ.-ին իշխանն առաջին անգամ կիևյան միտրոպոլիտ նշանակեց ռուսիչ Իլարիոնին: Որոշ պատմաբաններ այս փաստը որակում են որպես Կիևի կողմից Կոստանդնուպոլսի հոգևոր գերակայությունից հրաժարվելու ձգտում, սակայն շատերն էլ, ընդունելով հանդերձ ռուս եկեղեցու արագընթաց վերելքը, անհերքելի փաստերով հաստատում են Կոստանդնուպոլսի պատրիարքության գերիշխանությունը կիևյան միտրոպոլիայի նկատմամբ 1051 թ.-ից հետո էլ:

Սակայն Յարոսլավի անվան հետ կապված պատմական մեծագույն նվաճումը, որի համար նա «իմաստուն» մեծարձանն արժանացավ, այն ժամանակվա գործող համընդհանուր



Մարիա Օրանտա. Կիևի սբ. Սոֆիայի տաճարի խճանկար



Սկանդինավիայից եկած ռազմիկ-վաճառականներին:

Մահվանից քիչ առաջ Յարոսլավը փորձեց լուծել մի խնդիր, որը ժամանակին անհանգրստացնում էր նաև իր հորը՝ Վոլոդիմիրին. ինչպե՞ս խուսափել Կիևյան գահի երկպառակից պայքարից, որն անկասկած կբռնկվի իր մահից հետո որդիների միջև: **Յորդերի և քաղաքական իշխանության հարցում նա հաստատեց ընտանիքում ավագության սկզբունքը:** Իր ավագ որդի Իգյասլավին Յարոսլավը կտակեց Կիևն ու Նովգորոդը՝ հարակից տարածքներով, երկրորդին՝ Սվյատոսլավին, բաժին հասավ Չեռնիգովը, Վսեվոլոդին՝ Պերեյասլավը, Վյաչեսլավին՝ Սմոլենսկը, իսկ կրտսերին՝ Իգորին՝ Վոլոդիմիր-Վոլինսկին: Եթե այդ իշխանություններից որևէ մեկում ազատվում էր գահը, (Յարոսլավի որդիները) յուրաքանչյուր եղբայր մի աստիճան վեր էր բարձրանում, մինչև համակարգի վերին աստիճանին՝ Կիևյան գահին հասնելը: Որդիներին ապահովելով ընդարձակ հողերով և յուրաքանչյուրին խաղաղ ճանապարհով Կիևը կառավարելու հնարավորություն ընձեռելով, Յարոսլավը հույս ուներ խուսափել ընտանեկան վեճերից, որոնց մեջ ժամանակին հայտնվել էր նաև ինքը:

Չնայած շրջառական համակարգը որոշ ժամանակ գործում էր երեք ավագ որդիների՝ Իգյասլավի, Սվյատոսլավի և Վսեվոլոդի համագործակցության շնորհիվ, ժամանակի ընթացքում այն հանդիպեց մի շարք խոչընդոտների ու հակասությունների: Ամենալուրջ հակասությունն այն էր, որ իշխանության շրջառության միտքը հակասում էր մյուս՝ խորպայես արմատացած սկզբունքին՝ հորից-որդուն ժառանգության իրավունքին: Մահացած իշխանների որդիները ձգտում էին զբաղեցնել իրենց հոր տեղը և չէին ցանկանում զիջել հորեղբայրներին: Յետյարոսլավյան շրջանին բնորոշ այդ երևույթի արդյունքում հորեղբայրների և զարմիկների միջև անգութ բախումներ տեղի ունեցան: Ավելին՝ իշխանների թիվն ավելանալու հետ ավելի հաճախակի էին դառնում բախումները: Ի լրումն այս ամենի, սոցիալական աճող տարածայնությունների արդյունքում, կիևցիները 1068 թ.-ին, դժգոհելով Իգյասլավի կառավարելուց, վճռեցին նրան՝ գահին նստեցնելով նրա զարմիկ Վսեվոլոդին: Եվ չնայած լեհերի օգնությանը Իգյասլավը վերադարձավ և ճնշեց ապստամբությունը, այնուամենայնիվ, **1068 թ.-ի իրադարձությունները դարձան փաստացի գրառված առաջին «հեղափոխությունը» ուկրաինական հողում:** Այս ամենից բացի, կրկին ուկրաինական սահմաններին Մեծ տափաստանից եկող վտանգ էր սպառնում, վտանգ, որն այս անգամ երկար էր բզկտելու Ռուսիան: Նոր հարևանները՝ պոլովցեների (կումանների) քոչվոր ցեղերը, որոնք պեչենեգներից գործել էին, մի շարք հարձակումներ իրագործեցին՝ գրեթե հասնելով Կիևին, ինչը շատ վտանգավոր էր, և անհնարին դարձրին Դնեպրով առևտրական նավագնացությունը: Այս հարձակումների մի մասն իշխանների մեղքով էր: Ի վիճակի չլինելով սեփական միջոցներով զորք հավաքելու, երիտասարդ իշխաններից շատերը, որոնք իշխանության շրջառական համակարգում ժառանգորդի իրավունք չէին ստանում (նրանց կոչում էին *իզգոյ*), իշխանության հասնելու համար պոլովցեներին էին օգնության կանչում:

### Վոլոդիմիր Մոնոմախ (1113-1125)

Չամենայն դեպս, չնայած բազում խոչընդոտների, Ռուսիան կարողացավ խռովություններն հաղթահարելու ուժ գտնել իր մեջ: Հրապարակ է գալիս նոր ակնառու գործիչ՝ **Վոլոդիմիր Մոնոմախը՝ Մեծ իշխան Վսեվոլոդի որդին** (Մեծ իշխանի տիտղոսը կիևյան ղեկավարներն իրենց շնորհեցին XI դարում): Մինչ մեծիշխանական գահը բարձրանալը, նա մեծ դեր խաղաց երկրում կարգուկանոնը վերականգնելու գործում: Մոնոմախը 1097 թ.-ին Կիևի մոտ գտնվող Լյուբեչում ազդեցիկ իշխանների համդիպման կազմակերպիչներից մեկն էր: Նրանք եղբայրասպան պատերազմներին վերջ տալու ուղիներ էին փնտրում և կարծես թե արդեն ընդհանուր համաձայնության էին եկել վերադառնալու հորից որդուն գահաժառանգության օրենքին, բայց երբ բանը հասավ Կիևին, ամեն ինչ փլուզվեց և մեծիշխանական գահը կրկին մնաց կռվախնձոր:

Վոլոդիմիր Մոնոմախը մեծ անուն և հեղինակություն վաստակեց պոլովցեների դեմ հաղթական արշավներ կազմակերպելով: Ըստ ավանդության, Մոնոմախը, համախմբելով նաև մյուս իշխանների զորքն ու ժողովրդին, 83 անգամ դուրս է եկել նրանց դեմ և ոչնչացրել 200 պոլովցե-առաջնորդի: Հատկապես հաջողակ էին 1103, 1107 և 1111 թ.թ.-ների արշավանքները, որոնք քոչվորների դեմ Կիևի երկարատև պայքարի ամենափառավոր էջերից էին: Վոլոդիմիր Մոնոմախի բարձր հեղինակության և համաժողովրդական սիրո վկայությունն էր այն փաստը, որ նրա հոր մահից հետո կիևցիները մի մարդու պես ոտքի կանգնեցին՝ պահանջելով, որ Մոնոմախը բարձրանա մեծիշխանական գահին, չնայած որ նա անմիջական

ժառանգորդը չէր: Եվ միայն 60-ամյա Մոնոմախի համաձայնվելուց հետո ժողովուրդը խաղաղվեց: Իր մեծ հեղինակության շնորհիվ *Մոնոմախը կարողացավ միացնել տարանջատված համարյա բոլոր ռուսիական հողերը:* Այն ժամանակներից ի վեր Ռուսիայում այլևս չիշխեց այնպիսի համաձայնություն ու միաբանություն, ինչպես Մոնոմախի օրոք էր: Նրան անհանգստացնում էին նաև իր հպատակների միջև աճող սոցիալական հակասությունները: Ապստամբությունների ու խռովությունների պատճառով կապը կտրած խառնամբոխին կարգի բերելով, նա բոյարների ու վաճառականների սիրտը շահեց, բայց և, որքան էլ տարօրինակ թվա, ավելի մեծ հարգանք ու պատիվ էր վայելում ստորին խավի կողմից, որովհետև լսում ու հաշվի էր առնում նրանց կարիքներն ու ակնկալիքները, համակարգում նրանց իրավունքներն ու պարտականություններն իր Կանոնագրքում: Հասարակական խնդիրներին Մոնոմախի լրջորեն վերաբերվելու վառ վկայություն են **«խրատները»** որդիներին՝ մահվանից քիչ առաջ. *«Իսկ ամենից առաջ մի մոռացեք աղքատներին... Թույլ չտաք զորեղ կործանի թուլին... թե՛ ռամիկին, թե՛ աղքատ այրուն ես թույլ չեմ տվել նեղացնեն զորեղները»:*

Վոլոդիմիր Մոնոմախի որդուն՝ Մստիսլավին, հաջողվեց անբաժան պահել ռուսիական հողերը և զսպել բազմացող իշխաններին: Նա կիևյան վերջին Մեծ իշխանն էր, ում դա հաջողվեց: 1132 թ.-ին, նրա մահով ավարտվեց պատմական մի նշանավոր շրջան, որում Կիևը ռուսիական հողերի հիմնական կենտրոնն էր, և սկսվեց մի նոր շրջան՝ Կիևյան Ռուսիայի քաղաքական մասնատվածության շրջանը:

## Կիևի անկումը

### Քաղաքական մասնատվածություն

Ջարմանալի չէ, որ կիևյան առաջին ղեկավարների ջանքերով ստեղծված հողերի միավորումը համեմատաբար կարճ ժամանակում սկսեց տրոհվել: Չէ որ մնացորինակ ճակատագիր էր սպասում միջնադարյան Եվրոպայի մյուս կայսրություններին ևս՝ մասնավորապես Կառլոս Մեծի կայսրությանը: Արտաքինից այդպիսի մեծ ու հզոր, ներսից սակայն պարզունակ պետական կառույցներն ուղղակի չունեին համապատասխան քաղաքական ուժ և գործնական միջոցներ՝ ընդարձակ տարածքները երկար ժամանակ միաբան պահելու համար: Ռուսիայում իշխող Ռյուրիկովիչներն իրենց դինաստիայի ճյուղավորվածության շնորհիվ դեռ կարողանում էին ապահովել հողերի թվացյալ միաբանությունը, սակայն այնքան ժամանակ, քանի դեռ իշխանները պահպանում էին ավագի՝ գերագույն իշխանության իրավունքի սկզբունքը: Խզելով այդ միաբանությունը՝ տարբեր իշխանությունների բարեկամական կապերն էլ տկարացան:

Սակայն խոսելով Ռուսիայի քաղաքական մասնատվածության խնդրի առնչությամբ, պետք է ի նկատի ունենալ նաև, որ երբ գահաժառանգության (հայրական կալվածքի՝ *վոտչինայի*) սկզբունքը հաղթեց Յարոսլավ Իմաստունի շրջառական կամ ավագության համակարգին, իշխանական տոհմերն ավելի խորն արմատներ ձգեցին հայրական կալվածքներում: Ժամանակի ընթացքում *բաժնեկալվածային (ուղելային)* իշխանների համար ակնհայտ դարձավ, որ և իրենց, և իրենց հետնորդների ապագան կապված էր իրենց հայրական կալվածքների և ոչ թե Կիևի հետ, որի համար անդադար պայքար էր գնում: XII դարի ընթացքում ստեղծվեցին 10-15 բոլորովին անկախ բաժնեկալվածային իշխանություններ, որոնցից ազդեցիկներն էին *Պսկոգիա-Վոլինյան, Վլադիմիր-Սուզդալյան, Նովգորոդի, Չեռնիգովի և Սմոլենսկի իշխանությունները:* Նրանցից յուրաքանչյուրն ուներ քաղաքական, տնտեսական և նույնիսկ մշակութային անկախ կարգավիճակ: Արդյունքում՝ *Կիևյան Ռուսիան աստիճանաբար վերածվեց թագմաթիվ կենտրոններով մի ամբողջության՝ ընդհանուր կրոնական և մշակութային ավանդություններով ու ժառանգական կապերով:* Սակայն այդ կենտրոնները բավական ինքնույույն էին և հաճախ թշնամանում էին միմյանց հետ:

Բաժնեկալվածային նոր ու նոր իշխանություններ էին անջատվում Կիևից, ինչի հետևանքով նրա հարստությունները, բնակչությունը և հողերը այնքան նվազեցին, որ մյուս իշխանությունները ոչ մի բանով նրան չէին զիջում: Այդ ժամանակ Կիևն իր կից տարածքներով կոչվեց *«Ռուսիո երկիր»*՝ բառիս նեղ իմաստով:

Այնուամենայնիվ՝ Կիևը գրավիչ էր մնում: Նրանք, ովքեր նվաճում էին այն, հպարտանում էին «Ռուսիո քաղաքների մոր» ղեկավարի հեղինակությամբ և Ռյուրիկովիչների դինաստիայում կարող էին հավակնել ավագը լինելու պատվին: Քանի որ Կիևում էր նստում միտրոպո-



լիտը, և այստեղ էին գտնվում հիմնական տաճարներն ու վանքերը, այն, անկասկած, մնում էր ողջ Ռուսիայի կրոնական ու մշակութային, եթե ոչ նաև հոգևոր-քաղաքական կենտրոնը: Նույնիսկ իր տարածքների և բնակչության նվազման պարագայում Կիևն իր մնացած տարածքներով մնում էր ամբողջ Ուկրաինայի ամենագարգացած և խիտ բնակեցված իշխանությունը:

Սակայն Կիևի այդ առավելությունները միաժամանակ նրա դժբախտությունների պատճառն էին: Քաղաքին տիրանալու իշխանների անդադրում երկպառակությունները չէին դադարում: Ուկրաինացի պատմաբան Ստեպան Տոմաշևսկու հաշվարկներով՝ 1146 թ.-ից մինչև 1246 թ.-ը Կիևը 47 անգամ ձեռքից-ձեռք անցավ և 24 իշխաններ մեկը մյուսից նվաճեցին այն: Նրանցից մեկը 7 անգամ բարձրացավ Կիևի գահին, հինգը՝ 3-ական անգամ, իսկ ութը՝ 2-ական: Ի դեպ, հաշվի առնենք նաև, որ 35 իշխան էլ քաղաքը մեկ տարուց ավել չկարողացան պահել: Իշխաններից մեկը «Կիևի խնդիրը» լուծելու ինքնուրույն ձև գտավ: Հասկանալով, որ չի կարող երկար մնալ Կիևի գահին, և որ Կիևը դեռ երկար ժամանակ ստվերելու է հյուսիսարևելքում իր կալվածքների աճող փառքը, Վլադիմիր-Սուզդալյան իշխան Անդրեյ Բոգոլյուբսկին՝ մոսկովյան իշխանների այդ նախակարապետը, 1169 թ.-ին հարձակվեց Կիևի վրա, ավերեց ու բարբարոսաբար թալանի մատնեց քաղաքը, որն այլևս չկարողացավ հասնել իր նախկին վեհությանը:

### Տնտեսական լճացում

Քաղաքական խնդիրների խորանալուն գումարվում էին նաև տնտեսական դժվարությունները: Ինչպես արդեն գիտենք, «վարյագներից՝ հույներ» առևտրական ուղու վրա գտնվելը մեծապես նպաստում էր Կիևի զարգացմանը: XI դարի վերջից այդ առևտրական ուղու դերը նսեմացավ, ինչն էլ կործանարար ազդեցություն գործեց Կիևի տնտեսության վրա: Բանն այն է, որ իտալական ձեռներեց վաճառականները, շրջանցելով Կիևը, ուղիղ կապեր հաստատեցին մի կողմից՝ Բյուզանդիայի, Փոքր Ասիայի և Մերձավոր Արևելքի, մյուս կողմից՝ Արևմտյան Եվրոպայի հետ: Բացի այդ՝ միմյանց հետ պատերազմող ռուսիական իշխանների համար դժվար էր քոչվորների հարձակումներից պաշտպանել Դնեպրյան առևտրական ուղին: Վերջապես, այն բանից հետո, երբ 1204 թ.-ին խաչակիրները կողոպտեցին Կոստանդնուպոլիսը, իսկ Աբբասյանների երբեմնի ծաղկուն խալիֆայությունը, իր Բաղդադ մայրաքաղաքով, սրընթաց անկում ապրեց, Կիևը կորցրեց առևտրի իր երկու կարևոր գործընկերներին:

Տնտեսական այս դժվարություններն առավել սրեցին Կիևի աղքատ ու հարուստ խավերի միջև առանց այդ էլ լարված հարաբերությունները, որոնք հաճախ վերածում էին սոցիալական պողոթյունների: Ակնհայտ էր, որ Ռուսիայի երբեմնի հզոր մայրաքաղաքը քաղաքական, տնտեսական և սոցիալական անկում էր ապրում:


### Թաթար - մոնղոլները

Կիևի համար իսկական նեմեզիդա\* էին նրա վաղեմի թշնամիները՝ քոչվորները: Այս անգամ դրանք պոլովցիները չէին, քանի որ հարատև, երկու հակառակորդների համար էլ հյուծիչ պայքարի ընթացքում ռուսիական իշխանները նաև մշտական բարիդրացիական, երբեմն էլ՝ ամուսնական սերտ կապեր էին հաստատում այդ ցեղերի վերնախավի հետ: Կիևին ջախջախիչ հարված հասցրեցին անսպասելի հայտնված թաթար-մոնղոլները:

Չնայած վերջնականապես պարզված չէ թաթար-մոնղոլների ծագումը, սակայն հայտնի է, որ XII դարում նրանք թափառում էին Չինաստանի հյուսիս-արևմտյան սահմաններ՝ հողերում՝ համարյա ամբողջ ուժն ու եռանդը վատնելով աղքատ արոտավայրերի համար տոհմական ու միջցեղային ընդհարումների վրա: XII դարի վերջին տասնամյակներում նրանց մեջ հայտնվեց տաղանդավոր մի առաջնորդ՝ Թեմուչին անունով (1206 թ.-ին նա իրեն կոչեց Չինգիզխան, որ նշանակում էր «խաներին իշխող, ամենամեծ խան»): Ինչ-որ տեղ խորամանկությամբ, ինչ-որ տեղ ուժով նա կարողացավ վերջ դնել միջցեղային բախումներին և միացնել այդ քոչվոր ցեղերին՝ ստիպելով ընդունել իր բացարձակ իշխանությունը: Հաջորդ քայլը՝ այդ ցեղերի միացյալ հսկայական ռազմական ուժն ու ագրեսիվությունը հարևան ոչ-քոչվոր քաղաքակրթությունների դեմ ուղղելն էր:

Թաթար-մոնղոլների զորքերը, որ երբեք բազմաթիվ չեն եղել (120-140 հազ. զինվոր), չափազանց շարժուն էին, լավ կազմակերպված, և հիանալի զորավարներ ունեին: Նրանք

\* Հին հունական վրիժառության աստվածուհի Նեմիդիսի անունից՝ հատուցում, վրիժառություն:



Ռուսիա-մոնղոլական մեղիտուծ



սկզբում նվաճեցին Չինաստանը, Միջին Ասիան ու Պարսկաստանը: 1222 թ.-ին թաթար-մոնղոլների ջոկատն անցավ Կովկասը և հարձակվեց *պոլովցների վրա*: Պոլովցների խան Կոբյակը օգնություն խնդրեց ռուսիական մի քանի իշխաններից, որոնք աջակցեցին նրան: 1223 թ.-ին պոլովցների և ռուսիաների միացյալ ուժերը թաթար-մոնղոլներին հանդիպեցին Կալկա գետի մոտ և դաժան ճակատամարտում պարտություն կրեցին: Սակայն մոնղոլները, որ նույնպես մեծ կորուստներ էին կրել և կտրված էին իրենց հիմնական ուժերից, չհամարձակվեցին օգտվել այդ հաղթանակի պտուղներից և ետ վերադարձան: Ռուսիական իշխանները շուտ մոռացան այս աղետալի միջադեպը և կրկին ընկղմվեցին ներքին երկպառակությունների մեջ: Սակայն 1237 թ.-ին Ռուսիայի սահմաններում հայտնվեց թաթար-մոնղոլների հզոր բանակը՝ Չինգիզխանի թոռան՝ Բաթուխանի գլխավորությամբ, որը հրով ու սրով անցավ հյուսիս-արևելյան քաղաքներով, ոչնչացնելով Ռյազան, Սուզդալ և Վլադիմիր քաղաքները, իսկ 1240 թ.-ին հասավ Կիև: Չնայած կիևյան իշխան Միխայլոն փախավ, բայց կիևցիները վոյեվոդա (գորավար) Դմիտրոյի գլխավորությամբ, որին ուղարկել էր Գալիցիայի իշխան Դանիլոն, որոշեցին պաշտպանվել ու հակահարված տալ: Քաղաքի պաշարումը երկարատև էր ու դաժան, և նույնիսկ, երբ թաթար-մոնղոլները հաղթահարեցին պարիսպներն ու ներխուժեցին քաղաք, մարտերը շարունակվում էին յուրաքանչյուր փողոցի ու տան համար: 1240 թ.-ի դեկտեմբերի սկզբին Կիևն ընկավ:

\* \* \*

Պատմաբանները Կիևյան Ռուսիայի քաղաքական պատմությունը սովորաբար բաժանում են 3 շրջանի: *Մոաջինը՝ արագ զարգացման շրջանն էր*, որը տևեց մոտ հարյուր տարի՝ սկսած 882 թ.-ից, երբ Կիևում գահ բարձրացավ Օլեգը, մինչև Սվյատոսլավի մահը՝ 972 թ.-ը: Օգտվելով ռազմավարական տեսակետից Կիևի շահավետ դիրքից՝ վարյագ-իշխաններն իրենց ենթարկեցին Դնեպրով անցնող կարևորագույն զարկերակը՝ «վարյագներից» հույներ» առևտրական ուղին, հնազանդեցրին արևելասլավոնական ցեղերին և ոչնչացրեցին այդ տարածքի իրենց հիմնական հակառակորդներին: Այդպես ստեղծվեց քաղաքական ու տնտեսական մի մեծ միություն, որը կարող էր և պատրաստ էր ձեռնոց նետել Բյուզանդական հզոր կայսրությանը:

Երկրորդ շրջանն ընդգրկում էր Վոլոդիմիր Մեծի (980-1015) և Յարոսլավ Իմաստունի (1036-1054) իշխանության ժամանակաշրջանը, որը Կիևի տարածքների ամրապնդման, քաղաքական կայունության ու հզորության, տնտեսական ու մշակութային ծաղկման գագաթնակետին հասնելու շրջանն էր: Ի հակակշիռ նախկին՝ տարածքներն ընդլայնելու ձգտումներին, այս շրջանում գերակշռեց ներքին զարգացումներն ու հպատակների բարեկեցությունն ապահովելու ձգտումը: Նոր օրենքների ընդունումն ու իրագործումը կարգուկանոն հաստատեց: Չափազանց կարևոր դեր խաղաց քրիստոնեության ընդունումը, որն իր հետ նոր մշակույթ բերեց և հիմնովին փոխեց Կիևյան Ռուսիայի բնակչության աշխարհընկալումն ու ինքնադրսևորումը:

Վերջին շրջանին բնորոշ են իշխանների՝ անդադար ու քայքայիչ երկպառակությունները, քրչվոր ցեղերի հարձակումների աճող վտանգը և տնտեսական լճացումը: Պատմաբաններից ոմանք համարում են, որ այդ բոլոր անհաջողություններն սկսվեցին 1054 թ.-ին՝ Յարոսլավ Իմաստունի մահից հետո: Ոմանք էլ անկման սկիզբ համարում են Կիևի վերջին նշանավոր ղեկավարներ Վոլոդիմիր Մոնոմախի և նրա որդի Մստիսլավի իշխանության ավարտը: Այսպես թե այնպես, երբ Սուզդալի իշխան Անդրեյ Բոգոլյուբսկին 1169 թ.-ին գրավեց ու թալանի մատնեց Կիևը, իսկ հետո որոշեց լքել ու վերադառնալ իր հյուսիս-արևելյան հողերը, ակնհայտ դարձավ, որ Կիևի քաղաքական ու տնտեսական նշանակությունը նսեմացավ: 1240 թ.-ին թաթար-մոնղոլների կողմից Կիևի վերջնական կործանումը Ռևրախնայի պատմության մեջ ազդարարեց Կիևյան շրջանի ողբերգական ավարտը:

## ԿԻԵՎՅԱՆ ՌՈՒՍԻԱՅԻ ՆԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆ ՌԻ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Կիևյան Ռուսիան որպես պետական քաղաքական կառույց դիտարկելիս, ավելի հեշտ է նշել, թե ինչով չէր համապատասխանում այդ հասկացության նորմերին, քան այն, թե ինչ էր իրենից ներկայացնում: Կիևյան Ռուսիան պետություն էլ չէր՝ բառիս արդի իմաստով: Այն չուներ ո՛չ կենտրոնացված կառավարում, ո՛չ ամեն ինչ ընդգրկող և ճյուղավորված բյուրոկրատական համակարգ: Միակ հաստատուն և հուսալի «փոխադարձ կապը» տիրակալների և հպատակների (քաղաքաբնակների և հատկապես՝ գյուղաբնակների) միջև՝ հարկահանությունն էր: Քաղաքականության մեջ իշխաններն առաջնորդվում էին սեփական, կամ դինաստիայի շահերով՝ հաճախ անտեսելով պետության և ժողովրդի կարիքները: Քաղաքական հարաբերությունները թույլ էին ու անկայուն, իսկ ներքաղաքական խնդիրներն հաճախ լուծվում էին ուժի միջոցով: Այնուամենայնիվ, Կիևյան Ռուսիայի քաղաքական, սոցիալական ու տնտեսական կառույցը արագ ձևավորվում էր, զարգանում էր նրա մշակույթը, և այս բաժնի նպատակն է ընթերցողին ծանոթացնել այդ գործընթացի հիմնական հատկանիշներին:

### Քաղաքական կառուցվածքը

Մինչև վարյագների հայտնվելը արևելյան սլավոնների գլխավոր քաղաքական միավորը *ցեղն* էր: Նրանց ցեղային կազմավորման վերաբերյալ կցկտուր տվյալները վկայում են, որ ազգի և ցեղի առաջնորդի ձեռքում էր կենտրոնացված իշխանությունը: Կառավարման հիմքում ընկած էին սովորույթներն ու ավանդույթները: Կարևոր հարցերը լուծվում էին ավագանու անդամների համաձայնեցված որոշմամբ. նրանք ցեղական խորհուրդներ էին կազմում և համարվում էին քաղաքական կյանքի իշխող դեմքերը՝ համայնքի խնդիրներից սկսած մինչև ամենաբարձրը՝ ցեղերի դաշինքը, ինչպիսին էր օրինակ՝ պոլյանների, սիվերյանների և դրևկանների դաշինքը: Քաղաքական իշխանության կենտրոններ էին համարվում անտառի եզրին կամ բլրի գագաթին ցցապատնեշներով շրջափակված ցեղային «գրադները»՝ բնակավայրեր, որոնց շուրջը բնակություն էին հաստատում տվյալ ցեղի անդամները:

Արևելյան սլավոնների այս ցեղային համակարգին վարյագներն ավելացրեցին առևտրում և ռազմական գործում ձեռք բերած կազմակերպական միջոցները՝ տեղաբնակ ցեղերի միջև այնպիսի կարգ ու միաբանություն հաստատելով, որոնք առավել արդյունավետ տնտեսավարելու հնարավորություն էին տալիս: Նրանց առևտրային կազմակերպությունների ամենամեծ «տերերը» Ռյուրիկովիչների դինաստիայի անդամներն էին, և հենց նրանք էլ առավել շատ եկամուտ ու իշխանություն ունեին: Բայց քանի որ իշխանները մեծ կախվածության մեջ էին դրուժինայից, իրենց եկամտի մեծ մասը կիսում էին դրուժինայի անդամների հետ: Բնական է, որ կիևյան առաջին կառավարիչների հիմնական հոգսերից մեկը սեփական դրուժինայի պահանջները բավարարելու ձգտումն էր՝ որպեսզի վերջիններս հակառակորդի կողմը չանցնեին:

Որքան գերիշխող էր դառնում վարյագների ազդեցությունը, այնքան քաղաքական իշխանությունը կենտրոնանում էր առևտրային հիմնական ուղիների վրա գտնվող քաղաքներում, որոնցից կարևորագույնը Կիևն էր:

Կիևյան իշխաններից ոչ բոլորին էր հաջողվում իրենց ձեռքում կենտրոնացնել ողջ իշխանությունը: Մինչև XI դարի կեսերին Յարոսլավ Իմաստունի գահակալությունը, դինաստիայի



միայն ամենատաղանդավոր, դաժան ու փառասեր իշխաններն էին կարողանում միահեծան իշխել Կիևի գահին և իրենց ենթարկել գահի համար պայքարի ելած եղբայրներին ու մյուս Ռյուրիկովիչներին:

Հզորի կառավարման այդ շրջանում պահպանվում էին կենտրոնաձիգ միտումները և ապահովվում էր հպատակների ու տարածքների միասնությունը:

Յարուսլավ Իմաստունի՝ իշխանությունը ժառանգելու համակարգում կատարած բարեփոխումների հետևանքով, համաձայն որի՝ Ռյուրիկովիչների դինաստիայի յուրաքանչյուր անդամ տեսականորեն հավակնում էր իր բաժին տարածքի և իշխելու իրավունքին, սկսվեց իշխանության ապակենտրոնացումը: Արդյունքում՝ կիևյան Մեծ իշխանը դարձավ ընդամենը միմյանց դեմ անընդհատ թշնամացող բաժնեկալվածային իշխանությունների՝ ազգակցական կապերով կապված ղեկավար կոնգլոմերատի տիտղոսակիր կառավարիչ:

Ուրվագծելով Կիևյան Ռուսիայի քաղաքական զարգացման ընդհանուր հատկանիշները, դիտարկենք այն մեխանիզմները, որոնց միջոցով իրագործվում էր կառավարումը: Կարևորագույններն էին՝ *իշխանական կառավարումը*, բոյարների խորհուրդը՝ *դուման*, և քաղաքացիների հավաքը՝ *վիչեն*: Այս սահմանակարգերից յուրաքանչյուրը Կիևյան Ռուսիայի քաղաքական կառուցվածքի համապատասխան՝ *միապետական*, *ազնվականական* և *ժողովրդավարական* միտումների դրսևորումն էր:

Իշխանությունը և հեղինակությունը, որոնցից օգտվում էր իշխանը, *իրենց* հերթին պարտադրում էին ապահովել հպատակների պաշտպանությունը, արդարությունն ու կարգուկանոնը: Բայց *իշխանն առանց իր դրուժինայի գրեթե ոչինչ էր՝ ոչ հպատակների պաշտպան, ոչ թշնամու սարսափ*: Ռազմական պարտականությունները կատարելու համար իշխանն ամենից առաջ կախված էր իր դրուժինայից: Այդ զորքը համեմատաբար *փոքր էր՝* մոտ 2-3 հազ. մարդ, երբեմն էլ՝ ավելի քիչ: Ռազմական մեծ ուժի անհրաժեշտության դեպքում քաղաքացիներից աշխարհագոր էր հավաքվում կամ համընդհանուր զորահավաք էր կատարվում: Պետական ձևավորված կառուցվածք չունեցող հասարակարգերի նման, իշխանության կառավարմամբ զբաղվում էին իշխանի այնպիսի հատուկ ծառայողները, ինչպիսիք են՝ ծառայապետը, տնտեսավարը, կալվածքի կառավարիչը և ուրիշներ, քանի որ պետական ու սեփական ղեկավարման պարտականությունների մեջ պարզ սահմանված տարբերակում չկար: Իշխանները հեռավոր քաղաքներում և բնակավայրերում *պոսադնիկներ* (մարզպետներ) էին նշանակում, որ ընտրվում էին նրանց ընտանիքի անդամներից: Ծայրամասային բնակավայրերում իշխանի կամքը (հրամանները) կատարողը *տեղական* աշխարհագորի զորապետն էր՝ իր հպատակների հետ: Համաձայն Յարուսլավ Իմաստունի «Ռուսաց ճշմարտության»՝ արդարադատությունը վարում էր անձամբ իշխանը, կամ նրա նշանակած դատավորները: Պարզ է, որ Կիևյան Ռուսիայի կառավարման համակարգում գլխավոր դերը իշխանին էր, սակայն, որ դրա հետ միասին նրա գերիշխանության տակ էին ղեկավարման մյուս՝ ռազմական, դատական և վարչական կարևորագույն օղակները, վկայում է, թե որքան թերզարգացած ու պարզունակ էր կառավարման իշխանական համակարգը:

*Իշխանների ֆինանսավորման գլխավոր աղբյուրը հարկահանությունն էր*, որ հետագայում դարձավ զարգացած մի համակարգ, ընդգրկելով յուրաքանչյուր ծովա ու տնտեսություն (որոնք կոչվում էին «դիմ» կամ «սոխաս»): Եկամտի մյուս աղբյուրներն էին՝ առևտրի մաքսատուրքը, դատավարության և տուգանքների վճարումները: Վերջիններն առավել կարևոր էին, քանի որ կիևյան օրենքները հանցագործության համար դրամական *փոխհատուցումը* գերադասում էր մյուս բոլոր պատիժներից, մասնավորապես՝ նաև մահապատժից:

Աջակցություն ստանալու և խորհրդի համար իշխանը ստիպված էր լինում դիմել *բոյարական դումային*՝ մի մարմին, որն սկզբում խորհրդատու մարմին էր և կազմված էր դրուժինայի ավագ անդամներից, որոնցից շատերը վարյակ-ազնվականների կամ սլավոնական ցեղային առաջնորդների ժառանգներն էին: Հետագայում դումայում պաշտոնները ստացան նաև հոգևոր պետները: Դումայի պարտականությունները երբեք պարզ սահմանված չեն եղել, իսկ իշխանը պարտավոր չէր խորհրդակցել նրանց հետ: Սակայն դումային անտեսելու դեպքում իշխանը կարող էր կորցնել բոյարական ողջ վերնախավը ներկայացնող այդ ազդեցիկ մարմնի աջակցությունը: Այդ պատճառով իշխանները, որպես կանոն, դումայի կարծիքն հաշվի էին առնում: Վերջապես, *ժողովրդավարությունը* Կիևում ներկայացնում էր քաղաքացիների հավաքը՝ *վիչեն*, որը սկզբնավորվել էր դեռևս մինչև իշխանների ի հայտ գալը, և որոնք, հավանաբար, կազմավորվել էին արևելյան սլավոնների ցեղային խորհուրդներից: *Վիչեն* գումարվում էր կամ *իշխանի կանչով*, կամ *քաղաքացիների պահանջով*՝ խորհրդակցելու

կամ կարծիքներ հայտնելու անհրաժեշտության դեպքում: Վիչենում քննարկվող հարցերից էին՝ ռազմարշավները, խաղաղության համաձայնություններ կնքելը, գահաժառանգության խնդիրները, պետության մեջ պաշտոնների նշանակելը, զորքի կազմակերպելը և այլն: Վիչեն կարող էր քննադատել կամ հավանություն տալ իշխանի վարած քաղաքականությանը, սակայն իրավունք չուներ իր քաղաքականությունը թելադրել կամ օրենքներ սահմանել: Այնուամենայնիվ, երբ նոր իշխանը գահ էր բարձրանում, վիչեն նրա հետ ձևականորեն պաշտոնական համաձայնագիր էր կնքում (*ռյադ*), ըստ որի՝ իշխանը պարտավորվում էր չխախտել ավանդաբար սահմանված վիչեի իրավունքները, իսկ վերջինս էլ իր հերթին ճանաչում էր իշխանի իրավունքների գերակայությունը: Չնայած վիչեին մասնակցելու իրավունք ունեին ընտանիքների բոլոր գլխավորները, սակայն վիչեի հավաքներում իշխում էր տեղական վաճառականների վերնախավը, այնպես որ, այդ հավաքները երբեմն վեր էին ածվում քաղաքային թշնամի խմբավորումների միջև «խաշիվ մաքրելու» ասպարեզի:

## Հասարակական կացութաձև

Կիևյան Ռուսիան հսկայական տարածք էր զբաղեցնում՝ մոտ 800 հազ. քառ. կմ (ներկայումս Ուկրաինան զբաղեցնում է այդ տարածքի գրեթե կեսը): Բնակչության թվի հարցում պատմաբանները միակարծիք չեն. տարակարծությունը՝ 3-ից մինչև 12 մլն բնակիչ: Բոլոր դեպքերում, Կիևյան Ռուսիան միջնադարյան Եվրոպայի ամենախոշոր պետական կառույցն էր և այդ կառույցն արագ զարգանում էր: Հասարակ ժողովրդի և ձևավորվող ցեղային վերնախավի միջև աստիճանաբար խորացող տարբերությունների հետ մեկտեղ, IX դարի արևելյան սլավոնների երկրագործ հասարակությունը էթնիկական և սոցիալական տեսանկյունից, համեմատաբար համասեռ էր մնացել: Սակայն Կիևի բուռն ծաղկման շրջանում սլավոնական միջավայր են թափանցում ռազմիկ-վարյագները, ֆինն-որսորդները, թուրք վարձկանները, հույն արհեստավորները, հրեա առևտրականներն ու հայ վաճառականները: *Քաղաքների զարգացումը նպաստեց արհեստների ու առևտրի վերելքին, և վերջապես, քրիստոնեության ընդունումը նպաստեց նոր՝ հոգևոր դասի առաջացմանը*: Մի խոսքով՝ Կիևյան Ռուսիայի բնակչությունն իր մշակութային ուղղվածությամբ, էթնիկական բազմազանությամբ և սոցիալական բազմաշերտությամբ դարձավ համամարդկային մշակույթի մասնակիցն ու արարողը: Հասարակական հիերարխիայում ամենաբարձր պաշտոնները զբաղեցնում էին Ռյուրիկովիչների ճյուղավորված դինաստիայի բազմաթիվ անդամները: Հետո գալիս էր *բոյարների* (ինչպես նրանց նաև անվանում էին՝ «մուժ»-երի) դասակարգը, որ բաղկացած էր ռազմիկներից, դրուժինայի ավագ ու կրտսեր անդամներից և տեղական վերնախավից:

Ժամանակի ընթացքում սկանդինավյան ծագում ունեցող վարյագների վերնախավը սլավոնացավ. այն ամենից առաջ արտահայտվեց սկանդինավյան անունների սլավոնացմամբ, ինչպես օրինակ՝ Հելգի, Հելգա, Ինգվար, Վոլդեմար համապատասխանաբար՝ Օլեգ, Օլգա, Իգոր, Վոլոդիմիր սլավոնականի վերափոխվելը:

Քոչվորների անդադար հարձակումներն առևտրական ուղիների վրա, նաև՝ XII դարում Կոստանդնուպոլսի անկումը, խիստ սահմանափակեցին առևտրով զբաղվելու հնարավորությունները, որի հետևանքով նախկին ռազմիկ-վաճառականներն աստիճանաբար խոշոր հողատերեր դարձան: Հող ձեռք բերելը բարդություն չէր ներկայացնում, քանի որ իշխանները շատ հողային ազատ տիրույթներ ունեին և բաժանում էին դրուժինայի անդամներին: Ի տարբերություն Արևմտյան Եվրոպայի, որտեղ ավատատիրական հողատիրության իրավունքը կախված էր նրա՝ սյուզերենին ծառայելուց, Ռուսիայում բոյարներն օգտվում էին վտչինական ժառանգելու իրավունքից՝ պահպանելով այն նույնիսկ մեկ իշխանից մյուսին անցնելուց հետո: Բոյարներից շատերն ապրում էին քաղաքներում՝ հողը վարձով տալով գյուղացիներին, որի դիմաց վերցնում էին նրանց արտադրանքի մի մասն ու վաճառում շուկայում: Այսպիսով՝ տեղաշարժվելու ազատությամբ, քաղաքային կողմնորոշմամբ և շահութաբեր առևտրով զբաղվելու մեծ հնարավորություններով Կիևյան Ռուսիայի բոյարները շահեկանորեն տարբերվում էին արևմտաեվրոպական ավատատերերից:

Բոյարներից մի աստիճան ցած *քաղաքային վերնախավն* էր (ի տարբերություն «մուժ»-երի, սրանք ուղղակի «մարդիկ» էին), կամ, ինչպես կոչում էին՝ Կիևի «միջին դասը»: Այդ դասի նշանավոր ներկայացուցիչները խոշոր վաճառականներն էին, որոնք զբաղվում էին միջազգային առևտրով, բարեկամական կապեր էին հաստատում բոյարների հետ և գերիշ-



խող դիրքեր էին զբաղեցնում: Արևմտյան Եվրոպայի այն ժամանակվա քաղաքաբնակների (բյուրգերներ) հետ համեմատած՝ Կիևյան Ռուսիայի քաղաքային վերնախավն ավելի հզոր ու բազմամարդ էր՝ նույնիսկ XII դարում առևտրի անկման հետևանքով նրանց դերի նսեմացումից հետո:

Չափորդ խավը քիչ ազդեցիկ և քիչ ունևոր քաղաքացիների (նրանց նաև կոչում էին «փոքր մարդիկ») դասն էր, որոնց թվին էին պատկանում մանր առևտրականները, խանութպանները, բարձրակարգ արհեստավորները՝ մասնավորապես զինագործները, որմնադիրները, բրուտներն ու ոսկերիչները, որոնք նաև արհեստավորական միություններ («ցեխեր») էին կազմում:

Սոցիալական սանդղակի ստորին աստիճանն զբաղեցնում էր քաղաքային «հասարակ ժողովուրդը»՝ այսինքն՝ ուլքեր ոչինչ չունեին և վարձվում էին «սևագործ աշխատանքի»:

Բնակչության մեծամասնությունը հողագործ գյուղացիներն էին՝ գեղջուկները («սմերդ»); բայց նրանց մասին քիչ տվյալներ են պահպանվել, քանի որ գրավոր աղբյուրների ուշադրության առարկան իշխաններն էին, բարձր դասն ու հերոսները: Չանրահայտ է այն փաստը, որ Կիևյան Ռուսիայի գոյատևման ողջ ընթացքում գյուղացիների մեծամասնությունը համեմատաբար անկախ էր: Սակայն XI-XIII խառնակ դարերում ի հայտ եկավ ավատատերերի կողմից գյուղացիությանն ստրկացնելու միտում, որը գնալով խորանում ու տարբեր ձևեր էր ընդունում:

Ազատ գյուղացին դատարան դիմելու, տեղից-տեղ տեղափոխվելու, իր հողը որդիներին ժառանգելու իրավունք ուներ (եթե նա միայն դուստրեր ուներ, ապա նրա հողը կարող էր անցնել իշխանին): Գեղջուկների հիմնական պարտականությունը հարկ վճարելն էր և պատերազմի ժամանակ զորակոչին մասնակցելը (որպես կանոն, այդ ծառայությունն օժանդակ աշխատանքի բնույթ էր կրում): Գյուղացիների իրավագուրկ վիճակի մասին վկայում է «Ռուսաց ճշմարտություն»-ով սահմանված տուգանքը. գեղջուկին սպանելու համար այն կազմում էր 5 հրիվնա: Չանմատուության կարգով նշենք, որ վաճառական կամ դրուժինայի կրտսեր անդամի սպանության համար ընտանիքին դրամական փոխհատուցումը կազմում էր 40 հրիվնա, իսկ իշխանի դրուժինայի ավագ անդամի համար՝ արդեն 80 հրիվնա:

Չեշտությամբ կարելի էր գրկվել նաև ազատությունից: Բավական է ասել, որ վաշխառուները փողը պարտքով տալիս էին միայն 25-50 % հավելավճարով: Արդեն պարզ է, որ քչերը միայն կարող էին պարտքը ժամանակին վերադարձնել: Եթե գյուղացին, կամ սոցիալական մեկ այլ շերտի ներկայացուցիչ պարտքի տակ էր ընկնում (կարալա), կամ պարզապես նախօրոք համաձայնվում էր տոկոսների փոխարեն որոշակի ժամանակ աշխատել պարտատիրոջ համար, պայմանագիր էր կնքում և այդ ժամանակաշրջանում ամբողջովին գտնվում էր պարտատիրոջ ենթակայության տակ: Այդ՝ ժամանակավորապես ստրկացած կամ կիսանկախ վիճակի մեջ հայտնված աշխատողներին կոչում էին զակուլայ՝ այսինքն պարտքի դիմաց հողատիրոջից կախման մեջ ընկած գյուղացի: Իսկ նրանք, ուլքեր վերջնականապես ու անդաճալիորեն ստրկանում էին, կոչվում էին խոլոպներ:

Չասարակական բուրգի ստորոտում ստրուկներն էին, կամ՝ ճորտերը:

Քանի որ Կիևի և Կոստանդնուպոլսի միջև առևտրական փոխանակման առաջնային ապրանքը ստրուկն էր, ապա ակնհայտ է, որ ստրկությունը Ռուսիայում սովորական երևույթ էր՝ հատկապես մինչև քրիստոնեության ընդունումը: Ստրուկների շատերն աշխատում էին իշխանական կալվածքներում: Ստրուկների շարքերը մշտապես համալրվում էին ռազմագերիներով, անազատների զավակներով, ինչպես նաև այն զակուլաներով, որոնք փորձել էին խուսափել պարտավորությունների կատարումից, և այլ անհաջողակներով: Սակայն նրանք կարող էին գրավաթափվել, գնել իրենց ազատությունը, կամ՝ հավատարիմ ծառայելու համար տերը կարող էր ազատություն շնորհել ստրուկին:

Առանձնահատուկ և բավականին մեծ սոցիալական խումբ էր կազմում հոգևորականությունը: Բացառապես եկեղեցուն էին ենթարկվում ծխական քահանաները, սարկավագներն իրենց ընտանիքներով, հասարակ վանականներն ու միանձնուհիները: Բացի դրանից՝ եկեղեցու պաշտպանության տակ էին վտարանդիները՝ այսպես կոչված իզգոյները: Այդպես սկզբում անվանում էին իրենց վտառիկները կորցրած իշխաններին (նրանց այդպես էլ կոչում էին՝ իշխան-իզգոյներ), իսկ հետագայում իզգոյ էր կոչվում յուրաքանչյուրը՝ ով տվյալ սոցիալական շերտից դուրս էր մնում: Նրանց թվին էին պատկանում նոր ազատություն ստացած ստրուկները (եկեղեցին խրախուսում էր ազատումը՝ այն համարելով աստվածահաճո արարք), սնանկացած վաճառականները, քահանաների զավակները, որոնց անգրագիտության պատճառով թույլ չէր տրվում հոգևոր աստիճան կրել:

Պատմաբանները երկար ժամանակ համառորեն ընդհանուր գծեր էին փնտրում միջնադարյան Արևմտյան Եվրոպայի և Կիևյան Ռուսիայի հասարակական կացութաձևերի միջև: Նրանց առանձնապես հետաքրքրում էր, թե արդյո՞ք միշտ և ամենուր է արևմտաեվրոպական տեսակի ավատատիրությունը նախորդել արդյունաբերական հեղաշրջմանը: Խորհրդային պատմաբանները գտնում էին, որ Կիևյան Ռուսիան անտարակույս ավատատիրական հասարակարգ էր: Այդ կարծիքին էին նաև մի շարք ոչ-մարքսիստ գիտնականներ, այդ թվում՝ Նիկոլայ Պավլով-Սիլվանսկին, որը մեծ ուշադրություն էր դարձնում այն փաստին, որ XII դարում Կիևյան Ռուսիան տրոհվեց գլխավորապես գյուղատնտեսական գերակայության մի շարք փոքր իշխանությունների: Սակայն հակամարքսիստական տեսության ժամանակակից շատ պատմաբաններ համաձայն չեն այդ տեսության հետ: Նախ՝ նշում են նրանք, ավատատիրությանը հատուկ վասալային կախվածություն, որպես այդպիսին, գոյություն չունեին Ռյուրիկովիչների տերությունում, քանի որ բոյարների կախվածությունն իշխաններից աննշան էր: Եվ երկրորդ՝ Կիևյան Ռուսիայի կենսագործունեության մեջ քաղաքների և առևտրի հսկայական դերը, ազատ գյուղացիության գերակշիռ առկայությունը վկայում են, որ Եվրոպայի արևելքում իրավիճակն արմատապես տարբերվում էր արևմուտքի իրավիճակից: Ահա թե ինչու արևմուտքի պատմաբանները գերադասում են Կիևյան Ռուսիան ոչ թե խցկել ավատատիրության շրջանակների մեջ, այլ դիտարկել որպես իր տեսակի մեջ միակ և անկրկնելի հասարակական կառույց:

## Տնտեսական գործունեությունը

Կիևյան Ռուսիայի հնագույն աղբյուրներում վարյագներն առաջին անգամ հիշատակվում են և՛ որպես հանդուզն ավազակներ, և՛ որպես մոլի վաճառականներ: VIII-IX դարերում Բալթիկ ծովի ափերին գտնվող իրենց բնակավայրերից նրանք Վոլգայով շարժվում են դեպի արևելք, մինչև Կասպից ծով, որտեղ կապեր են հաստատում մուսուլմանական աշխարհի վաճառականների հետ: IX դարում, երբ առևտրի կենտրոնը տեղափոխվեց հարավ՝ Կոստանդնուպոլիս, Կիևի համար առևտրային գլխավոր զարկերակ դարձավ «վարյագներից՝ հույներ» հայտնի ճանապարհը: Այդպիսով, արտաքին առևտուրը Կիևյան Ռուսիայի տնտեսական համակարգի հիմքը դարձավ: Եվ պատահական չէր, որ Կիևյան Ռուսիայի առաջին միջպետական համաձայնագիրը՝ 911 թ.-ին Բյուզանդիայի հետ իշխան Օլեգի կնքած պայմանագիրը դարձավ, որով Կոստանդնուպոլսում չափազանց շահեկան պայմաններ էին ստեղծվում Ռուսիայից ժամանող վաճառականների համար: Սակայն խաչակիրների կողմից Կոստանդնուպոլիսը թալանելու, և քոչվորների՝ Դնեպրով առևտրային ուղու վրա հաճախակի հարձակումների հետևանքով, XII-XIII դարերում Բյուզանդիայի հետ առևտուրն անկում ապրեց: Այդ ժամանակ Կիևի համար կարևորվեց առևտրական կապերի սերտաճումը Արևմուտքի հետ, որ անցնում էր հիմնականում Կրակով-Պրահա-Ռեգենսբուրգ ճանապարհով:

Չակառակ միջնադարյան Արևմուտքի, ուր հողատեր ազնվականությունը խուսափում էր առևտրական գործունեությունից, Կիևյան Ռուսիայում առևտրով ակտիվ զբաղվում էին ոչ միայն բոյար-ազնվականները, այլև իշխանները: Տարվա մեծ մասն առաջին կառավարիչներն իրենց մոտակա ու հեռավոր կալվածքներից հարկ էին հավաքում, Կիև հասցնում և մեծ նավատորմ հանդերձում, որը Դնեպրով Կոստանդնուպոլիս էր տանում ստրուկներ, մորթեղեն, վուշ, մեղր, մոմ և այլ ապրանքներ, որոնք փոխանակվում էին պերճանքի առարկաների հետ: Նույնիսկ, երբ բոյարներն ու իշխաններն ավելի նստակյաց դարձան և մեծ կալվածքներ սեփականեցին, նրանց տնտեսությունների արտադրանքի զգալի մասը նախատեսվում էր արտաքին շուկայի համար: Իսկ Ռուսիայի բոլոր քաղաքներում իրենց ներկայացուցիչներն ունեցող մեծաթիվ վաճառականների միությունը պետք է հոգ տաներ ապահովելու բարենպաստ պայմաններ՝ այդ արտադրանքը համաշխարհային շուկայում սպառելու համար: Փոխարենը՝ Ռուսիայի հարուստ ու հզոր վաճառականները, որոնք առևտուր էին անում արտասահմանում, փաստորեն, բոյարների հետ հավասար օգտվում էին քաղաքական և իրավական նույն իրավունքներից: Այդ նույն ժամանակ, նրանց մեծամասնությունը կազմող մանր վաճառականներն ու խանութպանները, որոնք առևտուր էին անում ներքին շուկայում, հավասար պարտքերի տակ էին ընկնում, տուգանքի ու ստրկացման ենթարկվում:

Ժամանակակից գիտնականներին հայտնի տվյալներով՝ Ռուսիայի բնակչության 13-15 %-ը քաղաքներում էր ապրում: Ինչպես վկայում են տարեգրությունները, երկիրն ուներ մոտ 240



քաղաքներ ու խոշոր ավաններ: Սակայն միանգամայն հավանական է, որ նրանցից մոտ 150-ը պարզապես անրացված բնակավայրեր էին, որտեղի «քաղաքաբնակները» վարում էին գյուղական կյանք: Մնացած գրեթե 90 քիչ թե շատ մեծ քաղաքներից ու ավաններից ամենամեծն, անկասկած, Կիևն էր: Մինչ թաթար-մոնղոլների հարձակումը, Կիևի բնակիչների թիվն հասնում էր մոտ 35-40 հազ.-ի (Լոնդոնը միայն 100 տարի անց այդ քանակի բնակչություն ունեցավ): Եթե Կիևի բնակչության քանակը համեմատենք այնպիսի կարևոր կենտրոնների հետ, ինչպիսիք են Չեմնիգովն ու Պերեյասլավը, Վոլոդիմիր-Վոլինսկին, Լվովը և Գալիչը, ապա նրանցից յուրաքանչյուրն ուներ 4-5 հազ.-ից ոչ ավել բնակչություն: Քաղաքների բնակչության մեծ մասը մանր առևտրականներ ու արհեստավորներ էին, քանի որ արհեստները լայն տարածում ստացան: Այսպես՝ Կիևում 40-60 արհեստներ էին ներկայացված, որոնցից կարևորն ու պետքականը ատաղձագործությունը, դարբնությունը, բրուտագործությունն ու կաշեգործությունն էին:

Որոշ պատմաբաններ ընդգծում են Կիևյան Ռուսիայի տնտեսական կյանքի առևտրական ուղղվածությունը: Հակառակ նրանց, ոմանք էլ պնդում են, որ հիմնականը հողագործությունն էր: Այս կարծիքին էին նաև ուկրաինացի հայտնի գիտնականներ Միխայլո Զրուչևսկին, Դմիտրո Բահային և Յարոսլավ Պաստերնակը, ինչպես նաև այդ շրջանի ուսումնասիրությամբ զբաղվող խորհրդային առաջատար մասնագետները: Նրանց կարծիքով՝ քանի որ սլավոններն ավանդաբար հողագործ են եղել, ապա քիչ հավանական է, որ Կիևյան շրջանում կտրուկ փոխելիս իրենց ապրելակերպը: Այդ տեսության լրացուցիչ ապացույց են հանդիսանում Ռուսիայում հողագործության վերաբերյալ տարեգիրների հաճախակի հիշատակումները, ագրարային ուղղվածություն ունեցող օրացույցն ու հին սլավոնների դիցաբանությունը, և ինչն առավել համոզիչ է՝ հնագիտական պեղումները: Վերջերս կատարված պեղումների ժամանակ հայտնաբերվել է, որ X դարում Ուկրաինայում արդեն օգտագործվում էր երկաթե խոփը և այստեղ, ինչպես և Արևմտյան Եվրոպայում, ցանքսը կատարվում էր համեմատաբար առաջադեմ՝ երկդաշտ և եռադաշտ համակարգով (համաձայն որի՝ 1/2-ը կամ 1/3-ը հարոս թողած վարելահողն էր): Ռուսիայում աճեցնում էին հիմնականում՝ ցորեն, գարի, հաճար ու վարսակ: Ջարգացավ անասնապահությունը: Այն գյուղացիներին ապահովում էր ոչ միայն կաթով ու մսով, այլև հագուստով ու ոտնամանով, սկսեցին օգտագործել կաշին: Բազմացնում էին ձիեր, խոզեր, ոչխարներ, սագեր, հավեր, աղավնիներ: Եզներին բանեցնելը հնարավոր դարձրեց մեծացնելու հողագործության ծավալները: Չնայած որ գյուղացիներն ունեին իրենց սեփական գյուղատնտեսական անհրաժեշտ գույքը՝ հողը միայնակ մշակելու համար, սակայն նրանք, որպես կանոն, համախմբվում էին կամ համայնքներ կազմում՝ միմյանց օգնելու համար (այդ համայնքներում համախմբվում էին մի քանի սերունդների արյունակից հարազատներ՝ նահապետի գլխավորությամբ): Հետագայում համայնքներն առաջանում էին ընդհանուր տարածք ունենալու հիմքով՝ միացնելով հարևաններին, որոնք ազգակցական կապերի մեջ էին:

Եվ սակայն՝ եթե Ռուսիայի տնտեսությունն առավելապես երկրագործական էր, ապա այս մտտեցման կողմնակիցներն ինչպե՞ս են բացատրում առևտրական մեծ քաղաքների առաջացումն ու ծաղկումը: Խորհրդային հայտնի գիտնական Միխայիլ Տիխոմիրովը, ում հետ համակարծիք էին նրա խորհրդային գործընկերներից շատերը, պնդում է, որ բազմաթիվ արհեստների առաջացումը պայմանավորված է գյուղատնտեսության զգալի զարգացմամբ ու բարելավմամբ: Իսկ արհեստների կենտրոնացման շրջաններում էլ առաջանում էին քաղաքները: Նա գտնում է, որ քաղաքների առաջացման հետ, նրանց հետագա զարգացման գործում էական դեր խաղաց առևտուրը, բայց ամենից առաջ առևտուրը՝ քաղաքի և գյուղի միջև, այլ ոչ թե՛ արտաքին առևտրական գործունեությունը:

Հաշվի առնելով Կիևյան Ռուսիայի տնտեսության պատմության և «առևտրական», և «երկրագործական» մեկնաբանումների կողմնակիցների համոզիչ փաստարկները, ժամանակակից պատմաբաններն այս հարցում էլ են համաձայն «ոսկե միջինին»: Համաձայնվելով, որ իշխանը, նրա դուռժինան և ամենահարուստ վաճառականները շահագրգռված էին անդրծովյան աշխույժ և շահավետ առևտրով, որը ծաղկում էր հատկապես մինչև XII դարը, ընդունում են նաև այն փաստը, որ Կիևյան Ռուսիայի բնակչության մեծամասնությունը գյուղաբնակ երկրագործներ էին, որոնք իրենց հանապազօրյա հացը վաստակում էին ամենօրյա ծանր աշխատանքով ու արդար քրտինքով:

## Կիևյան Ռուսիայի մշակույթը

Միջնադարյան ցանկացած հասարակության մասին խոսելիս, հիմնականում և ամենից առաջ պետք է ի նկատի ունենալ տվյալ ժողովրդի կրոնական հավատալիքներն ու կառույցները: Այդ առումով Կիևյան Ռուսիան վերապրեց երկու տարբեր կրոնական, հետևաբար և մշակութային, դարաշրջան: Մինչև 988 թ.-ը արևելյան սլավոնների հոգևոր կարիքները բավարարում էր ոգեպաշտությունը (անիմիզմը), որի հիմքում բնության ուժերի աստվածացումն ու նախնիների ոգիների պաշտամունքն է: Հեթանոսական դիցարանի գերագույն աստվածը Պերունն էր՝ շանթ ու որոտի աստվածը: Սկանդինավյան ժողովուրդների դիցաբանության մեջ համանման աստված էր Տորը, որի վերաբերյալ սակայն առասպելներն այնպես լիարժեք ու մանրամասն չեն հասել մեզ, ինչպես Պերունի առասպելները: Այնուհետև՝ Դաժբոգն ու Սվարոգն են՝ օդի և արևի աստվածները, երկրային բարիքներ բաշխողները: Օրինաչափ է, որ որպես երկրագործ ժողովուրդ, նրանք ունեին նաև պտղաբերության աստվածների՝ Ռոդայի և Ռոժանիցայի պաշտամունք: Բացի այդ, պաշտվում էին նաև զետերի, անտառների, նախնիների բազում ոգիներ, որն արտահայտվում էր կենդանիների, երբեմն էլ մարդկանց զոհաբերությամբ: Արևելյան սլավոնները աստվածներին վեհաշուք տաճարներ չէին կառուցում, չկար նաև կայացած ծիսական համակարգ, ինչով էլ պայմանավորված է այն համեմատաբար թույլ դիմադրությունը, որ նրանց կողմից ցուցաբերվեց քրիստոնեության նորամուտին: Ամեն դեպքում, նախնիների հավատալիքներն անհետ չկորան: Դարեր շարունակ արեւելյան սլավոնների մոտ քրիստոնեության շղարշի տակ պահպանվում է կրոնական երկվություն (դուալիզմ), որի հիմքում հեթանոսական ծեսերի ու ավանդույթների կատարումն էր (օրինակ՝ զարնան գալստյան տոնակատարությունը):

Քրիստոնեություն ընդունելով, ժողովուրդն աղերսվեց նոր, զարգացած ու լավ կազմակերպված կրոնի հետ: 1037 թ.-ին Կոստանդնուպոլսից Կիևյան Ռուսիա հունական առաջին միտրոպոլիտի գալույն պես հիմնվեց միտրոպոլիտական թեմը (Կիևյան Ռուսիայի պատմության ամբողջ ընթացքում հույները միայն երկու անգամ չեն զբաղեցրել այս պաշտոնը): Սկզբում Ռուսիական թեմի կազմի մեջ մտնում էին ութ եպիսկոպոսություն, որ հետագայում հասավ տասնվեցի: Նրանցից տասը գտնվում էին Ուկրաինայի ներկա տարածքում: Եպիսկոպոսներից շատերը նույնպես բյուզանդացիներ էին: Նրանք Ռուսիա էին գալիս իրենց բազմամարդ ու ճոխ շքախմբով՝ օգնականներով, քարտուղարներով, արհեստավորներով ու վարպետներով, ինչի արդյունքում եպիսկոպոսությունները դառնում էին բյուզանդական մշակույթի զարգացման ու տարածման օջախներ: Հոգևորականները բաժանվում էին երկու խմբի՝ «սպիտակ» և «սև»: «Սպիտակը» ծխական քահանաներն էին, որոնք չէին պահպանում կուսակրոնության ուխտը և ամուսնանում էին՝ կին ընտրելով իրենց իսկ միջավայրից, իսկ «սևը» վանականներն էին, որոնցից ընտրվում էին բարձր հոգևոր պետերը: Ձգտելով խուսափել աշխարհիկ մեղքերից ու գալթակոլություններից՝ վանականներն ապրում էին առանձնության մեջ, դրա համար էլ համարվում էին հավատացյալ ժողովրդի ծաղիկը, իսկ նրանց վանքերը դառնում էին քրիստոնեական լուսավորության ու գիտության կենտրոններ: XIII դարում արդեն Կիևյան Ռուսիայում մոտ 50 վանք կար, որոնցից 17-ը՝ Կիևում:

Եկեղեցին մեծ ազդեցություն ուներ Կիևյան Ռուսիայի մշակույթի վրա: Միայն մի վանքի՝ Կիևի նշանավոր սբ. Սոֆիայի տաճարի կառուցումն արդեն իրեղեն ապացույցն է այն բանի, թե ինչ հսկայական ազդեցություն էր գործում եկեղեցին արվեստի վրա:

1037 թ.-ին Յարոսլավ Իմաստունի իշխանության օրոք կառուցված այս հրաշալի քարե շինությունը, որ հույն վարպետները կանգնեցրին Կոստանդնուպոլսի համանուն տաճարի նմանությամբ, ուներ հինգ կամարակապ խորան, հինգ բազիլիկ և տասներեք զմբեթ: Մարմարյա ու ալաբաստրե սյուներն իրենց ուներին էին պահում հարուստ զարդարված ինտերյերը: Հավանաբար, քրիստոնեական Աստու տաճարի գեղեցկությունն ուղղակի կուրացնում էր փայտե համեստ շինություններին սովոր կիևցիներին: Նման կուրացուցիչ ազդեցություն էր գործում նաև տաճարը, քանի որ բյուզանդական եկեղեցին գիտակցում էր, որ մարդու հոգևոր հուզաշխարհին ուղղված բարձր արվեստն ավելի արդյունավետ էր հավատքն ամրապնդելու հարցում, քան աստվածաբանությունը, որը դիմում է մարդկային բանականությանը: Այդ նպատակով եկեղեցին նպաստում էր արվեստի ու արհեստների զարգացմանը: Մասնավորապես սբ. Սոֆիայի ներքին հարդարանքը զարդարում են զուսավոր խճանկարներն ու որմնանկարները, որոնք զարմանալի ճշգրտությամբ պատկերում են մարդուն: Երկյուղածություն առաջացնելու մյուս միջոցը իկոնաների (սրբապատկերների)՝ այսինքն հատուկ ձևով



մշակված տախտակների վրա աստվածային էակների պատկերների արտահայտումն էր: *Իկոնաները տարածվեցին մասնավոր տներում, դառնալով ժառանգության ամենաթանկ իրը:* Արվեստի այդ նոր տեսակի պատկերներն ու ձևերը սկզբում հունական նմուշների ազդեցությամբ էին կրում: Սակայն ժամանակի ընթացքում Կիևյան Ռուսիայի վարպետները սովորեցին ավելացնել նաև տեղական տարրեր՝ ամեն մի սրբապատկերի ոճին ու էությանը համապատասխան: Այսպես ծնվեց ու զարգացավ հին ռուսիական արվեստի ինքնուրույն ոճը: Այնուամենայնիվ, արևելյան եկեղեցու ազդեցությունն արվեստի վրա միշտ չէ, որ բարեբար էր: Այսպես, քանի որ բյուզանդացիները (ի տարբերություն կաթոլիկ եկեղեցու) չէին սիրում իրենց վանքերում արձաններ կանգնեցնել, քանդակագործությունն զգալի առաջընթաց չապրեց:

Նույնքան զգալի էր քրիստոնեության ազդեցությունը հին ռուսիացիների մտավոր արտահայտչականության վրա: *988 թ.-ից հետո գործածության մեջ մտավ գիրը, որ հիմնված էր հույն վանական Կիրիլի և Մեֆոդիի ստեղծած այբուբենի վրա:* Կիրիլն ու Մեֆոդիին հայտնի էին նաև որպես սլավոնների մեջ քրիստոնեությունը տարածող հոգևորականներ: Ի տարբերություն Զոմնի, որ պահանջում էր ժամերգությունները կատարել միայն լատիներեն լեզվով, Կոստանդնուպոլիսը դեմ չէր, որ նորադարձ ժողովուրդները եկեղեցական արարողությունները վարեն իրենց լեզվով: Այդպես, ժամերգություններում և այլ հարցերում հոգևորականությունն օգտագործում էր *եկեղեցական սլավոնական լեզուն*՝ մի գրական նորմ, որ հասկանալի էր արևելյան սլավոններին, և որի հիմքում հարավսլավոնական բարբառներից մեկն էր: Այն աստիճանաբար տարածվեց ոչ միայն եկեղեցական, այլև աշխարհիկ գրականության մեջ, որով այն դառնում էր ավելի հարուստ ու բազմազան: Օրինաչափ է, որ այդ շրջանի գրական նմուշները կրոնական բնույթ էին կրում: Կան շատ օրհներգեր, քարոզներ, պատումներ սրբերի կյանքի մասին, Գին ու Նոր Կտակարաններից հատվածներ: Նրանցից ամենաուսուցիչներն են՝ «Պատերիկը», որ սրբերի կյանքի մասին Կիև-Պեչերյան մայրավանքի վանականների գրած պատմությունն է, սբ. Կիրիլ Տուրովսկու քարոզներն ու օրհներգերը, XI դարի կեսի կիևյան միտրոպոլիտ Իլարիոնի գրությունները (Իլարիոնը համարվում էր Կիևյան Ռուսիայի ամենալուսավորյալ մտածողը): Իր հայտնի՝ «Ասք Օրենքի և Երանության մասին» ստեղծագործության մեջ, որը 1052 թ.-ին նա կարդաց Յարոսլավ Իմաստունի ներկայությամբ, Իլարիոնը վարպետորեն հեթանոսությանը հակադրում է քրիստոնեությունը և նկարագրում Ռուսիայի մկրտումը: Այստեղ նա ցուցադրում է բյուզանդական ճարտասանության ոճական բարդ ձևերին իր հիանալի տիրապետումը, և նաև՝ Աստվածաշնչի խոր իմացությունը: Սակայն, չնայած հունական մշակույթի նկատմամբ ունեցած խորը հարգանքին, Իլարիոնը հունամեծար չէր: «Ասք Օրենքի և Երանության մասին» ստեղծագործության մեջ նա շեշտում է Ռուսիայի վեհությունն ու կարևորությունը և գիտակցաբար նշանակում էր Բյուզանդիայի դերը քրիստոնեություն ընդունելու հարցում՝ այդ պատմական քայլի իրականացման մեջ ամբողջ վաստակը վերագրելով Վոլոդիմիրին:

Եթե կրոնական ստեղծագործություններում գերիշխում էր հունական ազդեցությունը, ապա տարեգրություններում այն այդքան զգալի չէր: Վաղ շրջանի կիևյան տարեգրություններին, որոնց հեղինակները քրիստոնեական աշխարհայացքով ոգեշնչված վանականներ էին, բնորոշ էր ռեալիզմն ու պատումի մանրամասնումը: Նրանցում վերարտադրվում էին դարաշրջանի կարևորագույն խնդիրները, ինչպիսիք էին իշխանների երկպառակությունները, քոչվորների դեմ պայքարը և այլ իրադարձություններ՝ մանրամասն նկարագրություններով: Նրանցից կարևորագույնն է համարվում «Անցած ժամանակների պատմությունը» տարեգրությունը: Այն կապված է վանականներ Նեստորի և Սիլվեստրի անունների հետ, որոնք կազմեցին այդ տարեգրությունը 1113-1116 թ.թ.-ներին: Գրական ստեղծագործությամբ, չնայած հազվադեպ, զբաղվում էին նաև աշխարհիկ վերնախավի ներկայացուցիչները: Չնայած քաղաքական գործերով խիստ զբաղվածությանը, իշխան Վոլոդիմիր Մոնոմախը գրեց իր խորաթափանց և խոհեղով լի «Խրատները»: Գրքեր կան ենթադրելու, որ կիևյան շրջանի ամենահիանալի բանաստեղծական երկի՝ «Ասք Իգորի արշավանքի մասին» (1185-1187) անհայտ հեղինակը նույնպես իշխանական տոհմից էր: Ռուսիայի իշխանի՝ քոչվորների դեմ անհաջող արշավանքի մասին պատումը տողորված է ռուսիական թշնամացած իշխաններին ուղղված՝ ընդհանուր գործի համար միավորվելու բուռն կոչով: Եվ հիմա՝ հարուստ ու բանաստեղծական լեզու, վառ պատկերավորություն, բնության խորը անհատական զգացողություն: Անուրանալի ու բնությունը բռնած մի գեղեցիկ գուլխորոճոց:

Սակայն ինչ բարձունքների էլ որ հասներ գրավոր ստեղծագործությունը, Կիևյան Ռուսիայի

անգրագետ զանգվածների համար այն մնում էր անմատչելի: Ժողովրդական իմաստությունը և ստեղծագործական ոգու մատչելի գանձարան էր հանդիսանում բանահյուսությունը՝ երգերը, ասացվածքներն ու առակները, հանելուկներն ու հեքիաթները, և հատկապես բանավոր Լպոսը՝ *բիլիմաները:* Բերնե-բերան, սերնդե-սերունդ պատմվում էին բիլիմաները, ուր նկարագրվում էին սխրագործությունները ժողովրդական հռչակավոր այնպիսի հերոսների, ինչպիսիք էին գյուղացու ուրախ որդի Իլյա Մուրոմեցը, քահանայի ուշիմ զավակ Ալյոշա Պոպովիչը և բոյարի որդի Դոբրինյա Միկիտիչը. բոլոր երեքն էլ իշխան Վոլոդիմիրի առասպելական դրուժինայի անդամներ էին:

Արթուր թագավորի Կլոր Սեղանի ասպետների նման արևելասլավոնական այս դյուցազունները թողեցին Վոլոդիմիրի արքունիքն ու դուրս եկան չարիքների դեմ պայքարելու: Նրանց թշնամիների թվում հաճախ պոլովցեցների Տուգորկանն էր, որը կերպավորվում էր որպես վիշապ Տուգարին և խորհրդանշում էր տափաստանից անդադար ելող չարիք, կամ՝ ժիղովինը, որը վիպերգության մեջ հրեականություն դավանող խազարների դեմ պայքարի արձագանքն էր մարմնավորում: Այս բոլոր պատումները լի էին գաղտնիքներով ու կախարհական դյուցազուններով, իսկ քրիստոնեական արժեքները նրանցում հաճախ միահյուսվում էին հեթանոսական անցյալի մնացուկներին:

Գիտնականները տարբեր տեսակետներ ունեն Կիևյան Ռուսիայի լուսավորության մակարդակի վերաբերյալ: Կասկած չի հարուցում այն, որ վերնախավը ուսում էր ստանում: Տարեգրություններում նշված է, որ 988 թ.-ին իշխան Վոլոդիմիրը հրամայեց ուսման տալ բոյարների զավակներին, իսկ նրա որդի Յարոսլավը Նովգորոդում դպրոց հիմնեց՝ ազնվական ծագում ունեցող 300 տղաների համար: Իսկ Կիևում լուսավորության ու մշակույթի իսկական կենտրոն դարձավ սբ. Սոֆիայի տաճարը: 1037 թ.-ին տաճարի տարածքում գործում էին դպրոցն ու գրադարանը: Կիև-Պեչերյան մայրավանքը նույնպես գրադարան ուներ, իսկ նրա որոշ վանականներ հայտնի էին իրենց լուսավորվածությամբ, ինչն այդ ժամանակ կրոնական գրականության բարձր իմացություն էր ենթադրում: Իշխանների շրջանում էլ գիտությունը մեծ հարգանք էր վայելում: Դայտնի է Յարոսլավ Իմաստունի գրքասիրությունը, նրա որդի Վսեվոլոդը տիրապետում էր հինգ լեզուների, գրագետ էր նաև դուստրը՝ Աննան: Երբ նա դարձավ Ֆրանսիայի թագուհին, այն ժամանակվա կանանց համար արտասովոր այդ հատկությամբ խիստ տարբերվում էր ֆրանսիական արքունիքի կանանցից:

Սակայն միանշանակ չէ այն ժամանակվա հասարակ ժողովրդի մեջ լուսավորության աստիճանի վերաբերյալ հարցի պատասխանը: Որոշ գիտնականների կարծիքով, Նովգորոդում դպրոցականների համար կեչեկեղևի վրա հայտնաբերված այբուբենները և սբ. Սոֆիայի տաճարի պատերի մակագրությունները վկայություն են այն բանի, որ կրթությունը մատչելի էր նաև ստորին խավին, սակայն այլոք գտնում են, որ լուսավորությունն ընդհանրապես, և բյուզանդա-քրիստոնեական մշակույթի իմացությունը՝ մասնավորապես, աշխարհիկ և եկեղեցական վերնախավի արտոնությունն էին, և, որպես կանոն՝ անհասանելի հասարակ ժողովրդին:

\* \* \*

Ինչպես ուկրաինացի, այնպես էլ ռուս պատմաբանները, իրենց ժողովուրդների պատմության անկապտելի մասն են համարում Կիևյան Ռուսիայի պատմությունը: Այստեղ հաճախ օրինաչափ հարց է առաջանում, թե ավելի շատ իրավունք ո՞վ ունի իրեն ժառանգորդ համարելու: XIX դարի ռուս պատմաբանները, հատկապես այսպես կոչված՝ իրավաբանական դպրոցի հետևորդները, գտնում էին, թե՛ քանի որ արևելասլավոնական ազգերից միայն ռուսներն էին, որ ստեղծեցին իրենց ժամանակակից պետությունը (պատմական առաջընթացի զազաթնակետ էին համարում պետության ստեղծումը), ուրեմն և պատմական զարգացման գլխավոր թելը հենց այս պետությունից պետք է ձգվի դեպի անցյալը՝ Մոսկովյան Ռուսիայով դեպի Կիևյան Ռուսիա, այսինքն դեպի արևելյան սլավոնների առաջին պետականությունը: Պատմապատասխանաբար՝ ուկրաինացիներն ու բելոռուսները, որոնք չեն ստեղծել սեփական պետություն, Կիևյան Ռուսիայի օրինական ժառանգորդներ համարվել չեն կարող: Ռուս նշանավոր պատմաբան Միխայիլ Պոգոդինն ավելի առաջ գնաց, հաստատելով, որ Ռուսաստանը Կիևյան Ռուսիայի ոչ միայն պետականության, այլև էթնիկական ժառանգորդն է: Ըստ նրա տեսության՝ 1240 թ.-ին թաթար-մոնղոլների կողմից Կիևի ավերումից հետո, բնակչության մեծ մասը, որին հաջողվեց փրկվել, հարավից տեղափոխվեց հյուսիս (Ներկայիս Ռուս-



սաստանի կենտրոնը): Եվ չնայած այդ տեսության բազմակի հերքման փաստերի, այն դեռևս մի շարք հետևորդներ ունի ինչպես Ռուսաստանում, այնպես էլ նրա սահմաններից դուրս:

Սակայն, XIX դարում, ուկրաինացիների մոտ ազգային ինքնագիտակցության խորացման հետ միասին, աճեց նաև դժգոհությունը ռուսների դեմ՝ «Կիևյան փառքը» իրենց մենաշնորհը դարձնելու դեմ: 1906 թ.-ին «Ռուսական պետության պատմության» ավանդական ծրագրային ուրվագծի դեմ ծանրակշիռ փաստարկներով հանդես եկավ հռչակավոր ուկրաինացի պատմաբան Միխայլո Գրուշևսկին: Ի տարբերություն «պետականության» ռուս պաշտպան այրերի, Գրուշևսկին հանդես եկավ որպես «ժողովրդավար» պատմաբան, և կասկածի ենթարկեց հատկապես այն, ինչը ռուս ընդդիմախոսներն իրենց ամենակուռ հիմքն էին համարում. պատմական ողջ հարուստ գործընթացը հանգեցնել միայն պետության առաջընթաց զարգացմանը: Նրա համար՝ *Նախնիների հողի վրա ապրող, ազգակցական կապերով կապված, սերնդե-սերունդ իր ազգային կենարար փորձը կուտակող ժողովուրդն է պատմության առանցքը*: Գրուշևսկին ենթադրում էր (իսկ նրա ենթադրությունները հաստատվում են վերջերս խորհրդային գիտնականների հնագիտական պեղումներով ու մարդաբանական հետազոտություններով), որ սկսած VI դարից մինչև XX դար, Ռուկրաինայի մեծ մասն զբաղեցնում են *անտերի ցեղից* սերած, ծագումով միևնույն էթնիկ տեսակին պատկանող ժողովուրդներ: Եթե բնակչությունը Ռուկրաինայի կենտրոնական տարածքը իրոք թողնում էր թաթար-մոնղոլների ասպատակությունների պատճառով (ըստ Գրուշևսկու՝ թաթար-մոնղոլների ավերածությունների և դրանց պատճառով տեղի ունեցած գաղթերի ծավալն այնքան էլ մեծ չէր), ապա, երբ տարածքում համեմատաբար խաղաղություն էր տիրում, ժողովուրդը կրկին վերադառնում էր: Գրուշևսկին, որ հականորմանական տեսության կողմնակից էր, պնդում էր, որ ուկրաինացիները *պոլյանների* ուղիղ հետնորդներն են՝ մի ցեղի, որը Կիևի կայացման ու զարգացման հարցում մեծ դեր է խաղացել: Հետևաբար, այն ամենը, ինչ կապված է «Կիևի փառքի» պատմության հետ, ուկրաինացի ժողովրդի պատմական ինքնագիտակցության ծալքերում իր ամենակարևոր տեղն է զբաղեցնում:

Գրուշևսկին համարում էր նաև, որ Ռուսաստանի պատմության մեջ կիևյան ժամանակաշրջանին կենտրոնական տեղը վերագրելը կնշանակեր ոչ միայն նսեմացնել *պոլյան-ուկրաինական* յուրօրինակ ու եզակի նվաճումները, այլև ռուս ժողովրդի անցյալը ծանրաբեռնել ևս մի չափազանցված հավելումով, որն իր իսկական արմատների որոնումներին խոչընդոտ էր դառնալու: Ամեն դեպքում, եթե Կիևյան Ռուսիայի ժառանգության պահպանման գլխավոր պայման համարենք պետությունը, ապա պետք է նշել, որ այդ ժառանգությունը մեծապես պահպանեցին Գալիցիա-Վոլինյան իշխանությունը, և հետագայում՝ լիտվական Մեծ իշխանությունն իրենց ուկրաինական և բելոռուսական տարրերով: Պարզ էր, որ հյուսիս-արևելքում գտնվող Ռոստովի, Սուգդալի, Վոլոդիմիրի, Տվերի և Մոսկովյան իշխանությունները չէին կարող այն պահպանել: Ինչպիսի՞ն է, ուրեմն, Գրուշևսկու կարծիքով, Կիևյան Ռուսիայի պատմության կապը Ռուսաստանի պատմության հետ: Երևի այնպիսին, ինչպիսին որ է Ֆրանսիայի պատմության կապը Հռոմեական կայսրության պատմության հետ: Ինչպես որ Գալլիան (Նախկինում՝ Հռոմի Նահանգ, այժմ՝ Ֆրանսիան) իր հետագա հասարակական-քաղաքական կառուցվածքի, օրենսդրության ու մշակույթի բազում տարրերի գոյությամբ պարտական է Հռոմին, այդպես էլ Մոսկվան՝ Կիևին: Սակայն Մոսկվան Կիևից սկսված պատմական ընթացքի հաջորդ փուլը կամ շարունակությունը չէր: Գրուշևսկու կարծիքով՝ Կիևից փոխառած հատկանիշների հետ մեկտեղ, Մոսկվայի հիմքում Գյուսիս-արևելքին բնորոշ աշխարհագրական, քաղաքական և էթնիկական հատկանիշներն են:

Կիևյան պետության ժառանգականության հարցում խորհրդային պատմաբանները փոխզիջման դիրք էին գրավել: Նրանք համարում էին, որ Կիևը ստեղծել են բոլոր երեք արևելա-սլավոնական ժողովուրդները՝ ուկրաինացիները, ռուսները և բելոռուսները: Ավելի ճիշտ՝ Կիևյան Ռուսիայի բնակչությունը՝ այսպես կոչված «հին ռուսիական ժողովուրդը», այդ երեք ազգերի ընդհանուր նախնիներն էին: Խորհրդային գիտնականներն անընդհատ շեշտում էին «հին ռուսիական ժողովրդի» լեզվի, մշակույթի, սովորույթների, տնտեսավարման ու քաղաքականության միատեսակությունն ու միատարրությունը: Այդ բանը գիտակցաբար շեշտվում էր ոչ միայն Կիևյան Ռուսիայի ժառանգության մեծ մասի՝ այս կամ այն ժողովրդի «բուրժուական-ազգայնական պատմաբանների» ուղեկցությամբ խուսափելու նպատակով, այլև «լայնարձակ ռուսիական տարածություններում» տարածաշրջանային տարբերությունների առկայության մասին միտքն անգամ արմատախիլ անելու համար: Կիևյան Ռուսիայի էթնիկական ու մշակութային միատարրության տեսությունը տպավորություն է ստեղծում, թե «հին

ռուսիչները» ասես միատեսակ «խորհրդային ժողովրդի» դեպի անցյալը պրոյեկցիան լինեն, որը ծրագրված է ապագայի համար:

Խորհրդային պատմաբանների տեսությունը, որն աստիճանաբար դուրս մղեց ռուսական ավանդական պատմագրության հայացքները, հիմնվում էր այն հավաստման վրա, թե՛ քանի որ երեք արևելասլավոնական ժողովուրդները ձևավորվել էին Կիևի անկումից հետո, ուրեմն կիևյան ժառանգության վերաբերյալ տարածայնություններն հիմնադրվում էին: Արևելյան սլավոնների տրոհվելու հիմնական պատճառ էր համարվում թաթար-մոնղոլների հարձակումն ու լեհ-լիտվական պետության՝ ուկրաինացիների ու բելոռուսների «կլանումը»: Դա բավականին անսպասելի շեղում է ավանդական մարքսիստական դրույթից, որն ազգերի ձևավորման հարցում սոցիալ-տնտեսական գործոններին առաջնային նշանակություն է տալիս: Ավելին ասելով՝ այդ մոտեցումից բխում է, որ եթե չլինեին նշված արտաքին գործոնները, ապա «հին ռուսիական ժողովրդի» մեջ ոչ մի տարբերակում չէր առաջանա: Այսպես թե այնպես, կիևյան պետության ժառանգության վերաբերյալ տարածայնությունները հերթական անգամ վկայում են, թե Կիևյան Ռուսիայի պատմագրության մեջ ինչքան սերտորեն են կապվել քաղաքական, գաղափարական և գիտական խնդիրները:





## ԳԱԼԻՑԻԱ-ՎՈԼԻՆՅԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ

Կիևյան Ռուսիայի պես հսկայական, հապճեպ կազմավորված քաղաքական կազմավորումների տրոհվելը միջնադարի համար սովորական երևույթ էր: Այդպես Արևմուտքում, նախքան Կիևի վերելքը, բավական կարճ ժամանակ գոյատևեց Կառլուս Մեծի հիմնած Կարոլինգների կայսրությունը, իսկ Արևելքում՝ թաթար-մոնղոլների անծայրածիր տիրույթները, որ խաղաղ օվկիանոսից սկսելով, հասնում էին մինչև Կարպատներ ու ներառում նաև ավերակների վերածված երբեմնի Կիևյան Ռուսիայի տարածքը, Կիևը գրավելուց ընդամենը մի քանի սերունդ հետո տարրալուծվեցին: Այժմ, ժամանակների հեռվից ուշադիր դիտելիս, մեզ համար պարզ են դառնում դրանց կործանման պատճառները. հսկայական տարածքների վրա՝ թերզարգացած հաղորդակցության ուղիներ, քաղաքական կուռ միասնության բացակայության դեպքում՝ տեղական ու մասնավոր շահերի պարզորոշ գիտակցում, «տեղական հայրենասիրության» գերակշռում: Սակայն Կիևյան Ռուսիայի պատմաբանները ցավով էին նայում այդ իրավիճակին: Անդամալիորեն անցել էին Կիևյան կայսրության առաջին շինարարներն՝ իրենց մեծ ու հզոր ծրագրերով ու նախագծերով և լայնածավալ աշխարհընկալմամբ: Նրանց փոխարինելու եկան ճղճիմ խարդավանքները, տեղային վիճաբանությունները, սահմանափակ նպատակներն ու իրար դեմ թշնամացող իշխանիկների անհաջողակ արկածախնդրությունները: Արվեստի ու մշակույթի հրաշալի նվաճումները, որ ծնվեցին մայրաքաղաքում տաղանդների կենտրոնանալու արդյունքում, անցյալի սեփականությունը դարձան. նրանց չէին կարող արդեն հավասարվել շրջանային բազմաթիվ կենտրոններում ցրված արհեստավորների ու գիտնականների՝ երբեմն հիացունքի արժանի գործերն ու ձգտումները: Բաժնեկալվածային իշխանություններից շատերում բոյարները կամաց-կամաց թողնում էին իրենց առևտրական խոշոր ձեռնարկումները և զբաղվում էին սեփական կալվածքների առօրյա գործերով: Քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքի անկման հետ Կիևյան Ռուսիան դադարեց գոյություն ունենալ որպես միասնական միավոր:

### Մասնատվածություն

Բաժնեկալվածային իշխանությունների՝ Կիևից առանձնանալու պատճառներից մեկը 1097 թ.-ին Լյուբեչում կայացած իշխանների մեծ ժողովում պաշտոնապես ընդունված *վոտչինայի* սկզբունքի հաղթանակն էր: Ավերիչ թշնամությանը վերջ տալու նպատակով, իշխաններն այդ ժողովում միախանուր ընդունեցին այդ պահին իրենց իշխանության ներքո գտնվող հողերի սեփականաշնորհման իրավունքը: Իշխանական ամեն մի տոհմի համար մեծ պարզև համարվող Կիևի խնդիրը մնաց չլուծված:

Եթե որոշ Մեծ իշխաններ շարունակում էին պայքարել Կիևի համար, ապա մյուսները, հատկապես ցածրաստիճան իշխանները, այդ մրցակցության և նույնիսկ այդ քաղաքի նկատմամբ կորցրել էին հետաքրքրությունը՝ գիտակցելով, որ Կիևին տիրելու իրենց հավանականությունը նվազագույնն է: Դրա փոխարեն նրանք ուշադրությունը կենտրոնացրեցին իրենց *վոտչինաների մեծացման ու հարստացման վրա՝ դրանով իսկ նպաստելով մասնատվածության և տարածքային տրոհման խորացմանը*, ինչը ուշ կիևյան շրջանի հատկանիշն էր դարձել:

Ինչ վերաբերում է բոյարներին, ապա նրանք ավելի շատ էին զբաղվում իրենց կալվածքներով՝ բարեկեցիկ կյանքի միջոցներ հայթայթելու համար, և լսել անգամ չէին ուզում հեռավոր Կիևի համար մղվող իշխանական ընդհարումներին մասնակցելու մասին, կորցնելով նաև «համառուսիական» գործերին մասնակցելու հետաքրքրությունը: Իսկ ի՞նչ գործեր էին

դրանք: Արտաքին թշնամուն դիմակայելը: Ռուսիական իշխանությունների համար դժվար էր նույնիսկ համաձայնության գալ, թե ով էր նրանց ընդհանուր թշնամին: Նովգորոդն իր համար մեծագույն սպառնալիք էր համարում տևտոնական ասպետներին, Պոլոցկը՝ լիտվացիներին, Ռոստովն ու Սուզդալը՝ վոլգյան բուլղարներին, Գալիցիա-Վոլինյան իշխանությունը՝ հունգարներին ու լեհերին: Իսկ Կիևը կոչ էր անում իշխաններին «մեկ մարդու պես» ռուսիական հողերը պաշտպանել քոչվոր պոլովցեներից: Դա իհարկե հասկանալի է, թե չէ՝ մեկ էլ տեսար, ռուսիական իշխանները խճճվում էին քաղաքական բարդ խաղերի մեջ ու հայտնվում քաղաքական անջրպետի տարբեր կողմերում, կամ դաշնակցում էին իրենց թշնամիների հետ, իսկ որոշ իշխաններ էլ ոչ ռուսիական հարևանների հետ ավելի սերտ կապեր էին հաստատում, քան ուղղափառ հավատի իրենց եղբայրների հետ:

Մասնավորապես, հին Նովգորոդը հյուսիսում ներգրավված էր միջազգային առևտրական ընկերության մեջ (հետագայում անվանեցին Գանգայի ընկերություն), որը հիմնել էր հյուսիս-գերմանական քաղաքների դաշինքը: Այդ ընկերությունն աշխույժ առևտուր էր կազմակերպում Բալթյան ամբողջ ծովափի երկարությամբ: Այն ժամանակ, երբ Կիևում առևտուրն անկում էր ապրում, Նովգորոդում այն ծաղկում էր՝ հետզհետե ուղղվելով դեպի Դոնաուսային եվրոպա: Ինչպես առևտրական շատ այլ քաղաքներում, Նովգորոդում ևս զարգացել էր կառավարման հանրապետական ձևը, որում գերիշխում էր վաճառականական վերնախավը, այլ ոչ թե իշխանը կամ բոյարները: Տեղական սահմանազատման այլ օրինակ կարող է ծառայել Կիևյան Ռուսիայի հյուսիս-արևելքը: *Անծայրածիր, սակավամարդ, «անտառներից, հովիտներից այն կողմ» ընկած հողերի վրա, վելիկոռուսների օրրան դարձած երկրում, Ռյուրիկովիչների գահատոհմի կրտսեր անդամները հիմնեցին Ռոստովի, Սուզդալի, Վոլոդիմիրի և Մոսկովյան իշխանությունները*: Մինչ արևելաուսլովոնական նորաբնակների հիմնական մասի հայտնվելը, հյուսիս-արևելյան իշխանները հաստատվեցին այս՝ սկզբնական շրջանում ֆիններին պատկանող հողերում: Երևի այդ էր պատճառը, որ նրանք էին իրենց պայմանները թելադրում նորեկներին, և այստեղ հաստատվեց միախեծան իշխանություն՝ իր ամբողջ դաժան ձևերով: Դոնաուս-արևելյան իշխանների մեջ զարգացող միախեծան կառավարման միտումների վառ օրինակ է Սուզդալի՝ Անդրեյ Բոգոլյուբսկու կառավարումը: Սուզդալյան վերնախավի անող ընդդիմությունից դժգոհելով՝ նա իր արքունիքը պարզապես տեղափոխեց Վոլոդիմիր, որտեղ ազնվական ուժեղ վերնախավ չկար, որ նրան խոչընդոտ հանդիսանար: Իսկ 1169 թ.-ին Վոլոդիմիր Բոգոլյուբսկին ավերեց Կիևը, որին իր նոր մայրաքաղաքի մրցակիցն էր համարում: Բացարձակ իշխանության անդադրում ձգտումը ժառանգեցին Բոգոլյուբսկու հետնորդները՝ Մոսկվայի տիրակալները (սկզբում փոքր ուղեկալ՝ Մոսկվան առաջին անգամ տարեգրություններում հիշատակվում է միայն 1147 թ.-ին): Այդ հատկանիշն օգնում է հասկանալ նրանց հետագա քաղաքական հաջողությունները:


### Չարավ-արևմտյան Ուկրաինա Գալիցիա-Վոլինյան իշխանություններ

Մափազանց կարևոր այլ փոփոխություններ էին տեղի ունենում Չարավ-Արևմտյան Ուկրաինայում՝ Գալիցյան և Վոլինյան իշխանություններում: Եթե հին Կիևյան իշխանություններից որևէ մեկը կարող էր մարտահրավեր նետել հզորացող ռուսական հյուսիս-արևելքին՝ Սուզդալին, Վոլոդիմիրին և դեռ «չփետրավորված» Մոսկվային, ապա դրանք *հարավ-արևմուտքում գտնվող Գալիցյան և Վոլինյան իշխանություններն էին*: Մ. Դրուշևսկին Կիևի քաղաքապետ և մշակութային ավանդույթների անմիջական ժառանգորդ համարում էր հենց այդ երկու իշխանությունները: Մյուս ուկրաինացի ակամավոր պատմաբան Ս. Տոմաշիվսկին XIII դարի Գալիցիա-Վոլինյան միավորված իշխանությունն համարեց անկասկած առաջին ուկրաինական պետությունը: Եվ իսկապես, եթե այդ միավորված տերությունը դիտարկենք իր հզորության բարձրակետում, այն սահմաններում որին այդ ժամանակ հասել էր, ապա կպարզվի, որ նրա նպատակների 90 %-ը ապրում էին Ուկրաինայի այժմյան սահմաններում: Այդ միացյալ իշխանությունը կարևոր նշանակություն ուներ նաև այլ տեսակետներից: Տարածվելով Կիևյան Ռուսիայի արևմտյան ծայրամասով, այն ամենասկզբից ուկրաինացիների ու լեհերի միջև տեղի ունեցող մղվեցին պայքարի ասպարեզ էր, որն անընդմեջ ձգվեց մինչև XX դարի կեսը: Այս իշխանությունը նաև կարևոր մշակութային սահման էր. կաթոլիկ Արևմուտքի՝ ամենա-



արևելյան, և ուղղափառ Արևելքի՝ ամենաարևմտյան ֆորպոստն էր:

Գտնվելով Կարպատների արևելյան նախալեռնային շրջանում՝ դեպի Սև ծով հոսող Դնեստրի և Պրուտի (որ թափվում է Դանուբը՝ գետաբերանից ոչ հեռու) վերին հոսանքներում, **Գալիցիայում** (ուկրաիներեն՝ **Գալիչինա**) սկզբից բնակվում էին *դուլիբները, տիվերցիները* և սպիտակ խորվաթները: Արևելքում սահմանակից էր դուլիբներով և սպիտակ խորվաթներով բնակեցված Վոլինի բլրաշատ անտառածածկ հարթավայրերին: Գալիչինայի և Վոլինի պատմական սահմանները ձգվում էին տասնյակ կիլոմետրեր: Վոլինից դեպի արևելք Կիևյան իշխանությունն էր: Եթե Գալիչինան ստիպված էր իր արևմտյան և հյուսիսային սահմաններում պայքարել ագրեսիվ հունգարների ու լեհերի դեմ, ապա Վոլինի միակ օտար աշխարհիկ հարևանները հյուսիսում էին՝ լիտվական ցեղերը: Երկու իշխանություններն էլ տափաստա-



Գալիցիա-Վոլինյան իշխանություն

նից եկող քոչվորներից պաշտպանվելու՝ համար աշխարհագրական նպաստավոր դիրք ունեին: Վոլինը, և հատկապես Գալիչինան խիտ բնակեցված էին, իսկ նրանց քաղաքները գտնվում էին Արևմուտքի ռազմավարական կարևոր առևտրական ճանապարհների վրա: Բացի այդ, Գալիչինան աղի հարուստ հանքավայրեր ուներ, որից օգտվում էր ողջ Ռուսիան: 980-990 թ.թ.-ներին Վոլոդիմիր Մեծը լեհերից կռվով ետ նվաճեց Գալիչինան ու Վոլինը, և միացրեց իր տերությանը: Վոլինում նա հիմնեց Վոլոդիմիր քաղաքը, որն հետագայում այդ հողերի վեհաքանչ մայրաքաղաքը դարձավ: Գալիչինայում իշխանի նստավայրը Պերեմիշլից տեղափոխվեց Գալիչ քաղաքը՝ կարպատյան աղի հանքերին մոտ: Որպես իրենց բացառիկ տիրույթներ՝ կիևյան իշխաններն այս հողերը ժառանգություն թողեցին իրենց հետնորդներին: Գալիչինայի առաջին կառավարիչները Ռոստիսլավիչներն էին՝ Յարոսլավ Իմաստունի թոռան ժառանգները: Իսկ Վոլինում իշխանության եկան Մստիսլավիչները, որոնք Վոլոդիմիր Մոնոմախի տոհմից էին:

Պատմական աշխատություններում, հարմարության համար հաճախ միացված Գալիչինան և Վոլինը XII-XIII դարերում միանգամայն տարբեր իշխանություններ էին, ինչն ընդգծված արտահայտվում էր նրանց վերնախավի ելության մեջ: Ի տարբերություն Ռուսիայի մնացած տարածքների բոյարների, *գալիցյան բոյարները ինքնակամ էին ու քմահաճ, հարուստ ու հզոր*: Այդ ազնվականության ազդեցությունը քաղաքական կյանքի վրա այնքան անսահման էր, որ Գալիչինան հաճախ համարում էին Ռուսիայի օլիգարխիական կառավարման բացարձակ օրինակ, որը հանրապետական Նովգորոդի, միաիեծան Վոլոդիմիրի և Մոսկվայի կողմից, Կիևյան Ռուսիայի քաղաքական կառավարման համակարգի երրորդ տարատեսակն էր իրենից ներկայացնում:

Խորհրդային գիտնականների կարծիքով, գալիցյան բոյարների բացառիկ մեծ իշխանությունը բացատրվում էր առավելապես նրանց ծագումով: Ի տարբերություն մյուս իշխանությունների բոյարների, որոնք հիմնականում սերում էին իշխանական դրուժինայի անդամներից, հավանաբար գալիցյան ազնվականությունն առաջացել էր ամենից առաջ տեղական ցեղային վերնախավից և իր կալվածքները ոչ թե իշխանից էր ստացել, այլ համայնքի հողերը լուծատիրելով: Գալով այստեղ՝ Ռյուրիկովիչները հանդիպեցին այն ազնվականությանը, որն արդեն արմատներ էր ձգել և պատրաստ էր իր շահերը պաշտպանելու:

Այլ պատմաբաններ նշում են, որ շնորհիվ Ռոստիսլավիչների համեմատաբար կայուն կառավարման, չորս սերնդի անցման ընթացքում բոյարները բավական ժամանակ և հնարավորություն ունեին հզորանալու համար: Բացի այդ՝ նրանցից շատերը աղի առևտուր էին անում, ինչը լավ եկամուտ էր բերում և ապահովում էր նրանց՝ առանց այդ էլ կայուն տնտեսական վիճակը: Այս ամենից հետո ամենահարուստ բոյարները կարող էին իրենց թույլ տալ ունենալու մանր հողատերերից կազմված սեփական մարտական դրուժինաներ: Եվ վերջապես, Գալիչինայի՝ Կիևից մեծ հեռավորության վրա գտնվելու պատճառով, Մեծ իշխանին ուժվար էր վերահսկել տեղական անցուղարձը, մինչդեռ Լեհաստանի և Դոնգարիայի հետ հարևանությունը ոչ միայն ազնվականության տիրապետության օրինակ էր ծառայում, այլև հնարավորություն էր ընձեռում սեփական անհնազանդ իշխանների դեմ (անհրաժեշտության դեպքում) օգնություն խնդրել օտարներից:

Ի տարբերություն գալիցյան բոյարների՝ Վոլինյան իշխանության բոյարներն *ավանդական ընդ էին կազմավորվել*: Նրանցից շատերը այստեղ էին եկել իրենց իշխանների դրուժինաների կազմում, որոնք հաճախ նշանակվում կամ ազատվում էին պաշտոնից՝ համաձայն իրենց եկած հրամանի, քանի որ աննշան հեռավորության պատճառով Կիևն *ավելի մեծ քաղաքական ազդեցություն ուներ այդ իշխանության, քան թե Գալիչինայի վրա*: Այստեղ բոյարներն իշխանին ծառայելու դիմաց հողեր էին ստանում և կախվածության մեջ էին իշխանական առատածեռնությունից, հետևաբար ավելի մեծ հավատարմություն և նվիրվածություն էին դրսևորում: Եվ իսկապես, այդ երկու իշխանությունների միավորման նախաձեռնողները Վոլինյան և ոչ թե Գալիցյան իշխաններն էին:

**Գալիցյան Ռոստիսլավիչները**

Ուկրաինայի ներկա տարածքում գտնվող բոլոր իշխանություններից Գալիչինան առաջինն էր, որ ստանձնացավ Կիևից: Կիրառելով բոլոր՝ ազնիվ և անազնիվ միջոցները, խորամանկ Լեհան Վոլոդիմիրկոյին (1124-1153) հաջողվեց իր կամքին ենթարկել ամբողջ իշխանությունը և կամաց-կամաց դիմադրել կիևյան Մեծ իշխանների՝ Գալիչինան իրենց ազդեցության ոլորտում պահելու ձգտումներին: Դոր հաջողությունների վրա հիմնվելով՝ նրա տա-



ղանդավոր որդի *Յարոսլավ Օսմոնիսլը* (1153-1187), այն «*ուժ զգայարան ունեցող մարդը*», ընդլայնեց իշխանության սահմանները մինչև *Դնեստրի գետաբերանը*, որն հիմա ներկայիս Մոլդովայի կազմում է: Իր տիրակալությունում խաղաղությունն ու ծաղկումն ապահովելով, Յարոսլավը բարեկամական հարաբերություններ էր պահպանում հունգարների և Գերմանիայի Ֆրիդրիխ Առաջին Բարբարոսայի հետ: Ռուսիայում նրա տարածված փառքի ու հեղինակության մասին զովեստով է հիշատակվում «*Ասք Իգորի արշավանքի մասին*» ստեղծագործության մեջ:

*Դու, Օսմոնիսլ Յարոսլավ,  
իշխանդ Գալիցիայի.  
Բարձր ես բազմել դու  
Քո ոսկեկուռ գահին,  
Երկաթագրահ զորագնդերով  
Ամրացրել ես դու լեռները Կարպատ,  
Փակել ճանապարհը հունգար արքայի,  
Գոցել Դանուբի դարպասները բոլոր...\**

Գալիչինայի հզորանալու հետ մեկտեղ ծաղկում ապրեց և բոյարությունը: Յարոսլավի իշխանության օրոք բոյարներն այնքան ազդեցիկ դարձան, որ կարողացան իշխանին, որն իր փառքի գագաթնակետին էր, ստիպել հրաժարվելու երկրորդ կնոջից՝ Անաստասիայից, որին հետագայում այրեցին խարույկի վրա:

*Յարոսլավի մահից հետո քառս տիրեց:* Նրա որդի Վոլոդիմիրը՝ (1187-1199) Ռոստիսլավիչներից վերջինը, ըստ տարեգրի՝ «չէր սիրում խորհրդակցել իր պետական այրերի հետ»: Շուտով բոյարներն ըմբոստացան նրա դեմ՝ ստիպելով փրկություն գտնել Գրեկարիայում: Գրեկարիայի թագավոր Անդրիյը Վոլոդիմիրին խոստացավ գահը վերադարձնել, սակայն գալով Գալիչինա, այն հայտարարեց իր վտոջինան: Երբ ժողովուրդն ապստամբեց օտարի դեմ, Վոլոդիմիրը հաշտվեց բոյարների հետ և վճռեց հունգարներին: Ինչի՞ հասցրեցին տարածայնություններով ու ավերածություններով լի այդ տարիները: Չնայած Վոլոդիմիրը կրկին գահ բարձրացավ, սակայն հիմա ավելի շատ էր կախված բոյարներից, քան երբևէ: Այս ցավալի դեպքը տիպական դարձավ և կրկնվեց հետագա հիսուն տարիների ընթացքում. հզոր իշխանը միացնում էր հողերը, բոյարները մի կերպ ենթարկվում էին նրան, իսկ հետո, իրենց արտոնությունները կորցնելուց վախենալով՝ իրենց պահանջները ներկայացնում էին ավելի թույլ ժառանգորդներին՝ միջամտելու հարմար առիթ տալով օտար երկրներին: Եվ կրկին խառնակություն ու քառս, մինչև որ նորից մի նոր հզոր իշխան էր հայտնվում ու կարգավորում երկիրը:

### Գալիցիա-Վոլինյան Ռոմանովիչները

Չնայած Գալիչինայի բարգավաճումը երբեմնի հզոր տերության ժայռամասերի դերի ու նշանակության կարևորվելու համոզիչ վկայությունն էր, *սակայն դաշինքը Վոլինի հետ առավել արժեքավոր, նույնիսկ դարակազմիկ հետևանքներ էր խոստանում ողջ Արևելյան Եվրոպայի համար:* Եվ այդ դաշինքն իրականություն դարձրեց վոլինյան իշխան Ռոման Մստիսլավիչը (1173-1205): Դեռևս պատանի՝ նա արդեն քաղաքական պայքարի մեջ էր: 1168 թ.-ին, երբ հայրը՝ վոլինյան իշխան Մստիսլավը Կիևի գահի համար հարավում պայքարում էր սուզդալյան իշխան Անդրեյ Բոգոլյուբսկու դեմ, Ռոմանին խնդրեցին իշխել Նովգորոդում՝ հյուսիսում Սուզդալի ագրեսիվ գործողություններից քաղաքը պաշտպանելու համար: 1173 թ.-ին, հոր մահից հետո, Ռոմանը հոր գահին բարձրացավ՝ բարենորոգելով իր իշխանության բարձիթողի արված կալվածքները: 1188 թ.-ին Գալիչինայի բոյարները խնդրեցին Ռոմանին՝ դառնալ նաև իրենց իշխանը, սակայն դրան խոչընդոտեցին թշնամաբար տրամադրված բոյարների հակառակորդ խմբավորումները: Միայն 1199 թ.-ին նա կարողացավ վերադառնալ Գալիչինա, և այն միացնելով Վոլինի հետ, Արևելյան Եվրոպայի քաղաքական քարտեզի վրա ստեղծվեց մի նոր հզոր պետություն՝ եռանդուն, գործունյա և տաղանդավոր ղեկավարի գլխավորությամբ:

Ներքին քաղաքականության մեջ Ռոմանն ուշադրությունը կենտրոնացրեց իշխանության ամրապնդման վրա, այսինքն՝ բոյարների դերը նսեմացնելու վրա՝ աքսորելով կամ մահա-

\* Թարգմանությունը՝ Սուրեն Վահունու:

պատժի ենթարկելով նրանցից շատերին: Նրա սիրած ասացվածքն էր. «Մեղվին չսպանես՝ մեղրն անուշ չես վայելի»: Ինչպես Եվրոպայի մյուս երկրներում՝ օլիգարխիայի դեմ պայքարելու գործում իշխանի դաշնակիցներն էին քաղաքաբնակներն ու մանր բոյարները: Սակայն նրա տաղանդն առավել բարձր դրսևորվեց արտաքին քաղաքականության մեջ: Գալիչինան ու Վոլինը միացնելուց հետո, նա պարտության է մատնում Սուզդալի իր հակառակորդներին և 1203 թ.-ին տիրում է Կիևին: Այսպիսով՝ մի ղեկավարի իշխանության տակ են անցնում Ռուսիայի պատմական բոլոր (բացառությամբ Չեռնիգովի) հողերը՝ կիևյան, պերեյասլավյան, գալիցյան և վոլինյան: Թվում էր, թե հեռու չէ այն օրը, երբ կմիանան Կիևյան Ռուսիայի այն բոլոր տիրույթները, որոնք կազմում են այժմյան Ռուսիայի տարածքը: Հաշվի առնելով, թե ինչքան մոտ էր իշխան Ռոմանը այդ նպատակն իրականացնելուն, ժամանակակից պատմաբաններն իրենց ուսումնասիրություններում մեծ տեղ են հատկացնում նրան:

Ռուսիանական հողերը պաշտպանելու նպատակով Ռոմանը մի շարք չտեսնված հաջող արշավանքներ կազմակերպեց հարավում՝ պոլովցեների դեմ, իսկ հյուսիսում՝ խորացավ լեհական և լիտվական հողերում: Սակայն իր սկսայական տարածքներն առավել ընդլայնելու ձգտումն էլ նրա կործանման պատճառը դարձավ: 1205 թ.-ին, լեհերի հողերով անցնելիս, իր զինվորների հետ դարանն ընկավ և զոհվեց: Նրա «կայսրությունը» գոյատևեց ընդամենը վեց տարի՝ շատ կարճ ժամանակաշրջան, որպեսզի այն դառնար ամուր քաղաքական միավոր: Պանենայն դեպս, ժամանակակիցները, գնահատելով նրա ակնառու նվաճումները, նրան «Մեծ» էին անվանում, և նույնիսկ՝ «*համայն Ռուսիայի տիրակալ*»:

Իշխան Ռոմանի մահից հետո կրկին բորբոքվեցին իշխանական վեճերը, բոյարների խարդալանքները, սաստկացան օտարերկրյա միջամտությունները: Այս երեք մշտապես ուղեկցող դժվարություններն էին, որ վերջապես փլուզեցին այն երկիրը, որն իր ողջ կյանքի ընթացքում անխոց կառուցում էր իշխան Ռոմանը: Նրա երկու որդիները՝ Դանիլոն և Վասիլկոն, ընդամենը չորս և երկու տարեկան էին, երբ գալիցյան բոյարները արքունիքից վճռեցին նրանց՝ իրենց մոր՝ ուժեղ կամքի տեր իշխանուհի Աննայի հետ միասին: Նրանց փոխարեն իրավիքեցին երեք Իգորկիչներին՝ «Ասք Իգորի արշավանքի մասին» վիպասի հերոսի որդիներին, ինչը ճակատագրական դարձավ բոյարներից շատերի համար: Չկամենալով իշխանությունը կիսել բոյարական օլիգարխիայի հետ, Իգորկիչները ոչնչացրեցին մոտ 500 բոյարի, նախքան վերջիններիս կհաջողվեր նրանց էլ վերջնականապես վճռել երկրից (հետագայում գալիցյան վերնախավը բռնեց և կախաղան բարձրացրեց բոլոր երեք Իգորկիչներին):

Պետագայում բոյարները մի չլսված բան արեցին. 1213 թ.-ին նրանք իրենց միջավայրից իշխան ընտրեցին՝ Վլադիսլավ Կորմիլչիչին: Օգտվելով այս անպատկառ իրադարձությունների պատճառով առաջացած «լայն զանգվածների» վրդովմունքից, լեհական ու հունգարական սվատառները, իբրև թե Դանիլոյի և Վասիլկոյի իրավունքները պաշտպանելու «ազնիվ մղումով», գրավեցին Գալիչինան և բաժանեցին միմյանց միջև: Այս պայմաններում պատանի Դանիլոն և Վասիլկոն «սկսեցին վերականգնել» հողերի այն ամբողջությունը, որ ժամանակին պատկանում էր իրենց հորը: Սկզբում Դանիլոն հաստատվեց Վոլինում (1221), որտեղ նրա դինաստիան և՛ բոյարների, և՛ հասարակ ժողովրդի համակրանքն էր վայելում: Միայն 1238 թ.-ին նա կարողացավ վերադարձնել Գալիչը և Գալիչինայի մի մասը: Հաջորդ տարի նվաճեց Կիևը և այնտեղ ուղարկեց իր զորավար Դմիտրոյին՝ քաղաքը թաթար-մոնղոլներից պաշտպանելու: Միայն 1245 թ.-ին, Յարոսլավի մոտ վճռական ճակատամարտում հաղթանակ տանելուց հետո, նա վերջնականապես նվաճեց Գալիչինան ամբողջությամբ: Այսպիսով, իշխան Դանիլոյի քառասուն տարում միայն հաջողվեց հոր տիրույթներն «ամբողջովին վերականգնել»:

Իրեն բողոնելով Գալիչինան, Դանիլոն Վոլինը տվեց Վասիլկոյին: Եվ չնայած այդ բաժանմանը, երկու իշխանությունները շարունակում էին մնալ որպես մի ամբողջություն՝ ավագ և գործունյա իշխան Դանիլոյի գլխավորությամբ: Ներքին քաղաքական հարցերում, Դանիլոն, իր հոր նման, ի հակակշիռ բոյարների, աջակցություն էր փնտրում քաղաքաբնակների ու գյուղացիների մեջ: Նա հզորացրեց ու ամրացրեց քաղաքներից շատերը, հիմնեց նոր քաղաքներ, որոնց թվում էր 1256 թ.-ին հիմնված Լվովը, որ այդպես անվանվեց նրա որդի Լևի պատվին: Նոր քաղաքները Դանիլոն բնակեցրեց Լեհաստանից, Գերմանիայից ու Ռուսիայից իրավիքված արիստավորներով ու վաճառականներով: Գալիցյան քաղաքների բազմազգ բնույթը, որ մինչև XX դարը նրանց բնորոշ հատկանիշն էր, ամրապնդվեց Կիևի անկումից հետո այստեղ տեղափոխվող հայկական և հրեական մեծ համայնքների շնորհիվ: Ռամիկեն-



րին բոյարների կամայականություններից պաշտպանելու համար գյուղերում կարգադրիչներ (ուրյադնիկներ) նշանակվեցին, գյուղացիներից կազմավորվեցին մարտական ջոկատներ:

*Իշխան Դանիլոյի արտաքին քաղաքական ամենալուրջ խնդիրը թաթար-մոնղոլներն էին:* 1241 թ.-ին նրանք անցան Գալիչինայով ու Վոլինով, սակայն լուրջ վնասներ չպատճառեցին, ինչպես Ռուսիայի մյուս իշխանություններում: Սակայն Ռոմանովիչների հաջողությունները գրավեցին թաթար-մոնղոլների ուշադրությունը. Յարուսլավի մոտ տարած հաղթանակից հետո Դանիլոն խանի արքունիք ներկայանալու խիստ հրաման ստացավ: Վախենալով նենգ նվաճողների գայրույթն առաջացնելուց, նա ստիպված ենթարկվեց: Իշխան Դանիլոյի 1246 թ.-ի ուղևորությունը Սարայ-Բաթու մայրաքաղաք, կարելի է ասել, հաջող անցավ: Նրան լավ ընդունեցին և, ամենակարևորը՝ կենդանի բաց թողեցին: Սակայն դրա գինը թաթար-մոնղոլների գերիշխանության ընդունումը եղավ: Բաթու խանն ամեն կերպ շեշտում էր իշխանի համար նվաստացուցիչ այդ փաստը: Այսպես՝ թթու կունիսի գավաթը Դանիլոյին մեկնելով, Բաթուն ասաց. «Սովորիր, իշխան, հիմա դու արդեն մեզանից մեկն ես»:

Ի տարբերություն հյուսիս-արևելյան իշխանությունների, որոնք թաթար-մոնղոլների ակնապիշ հսկողության տակ էին, *Գալիչինան և Վոլինը, շնորհիվ իրենց ծայրամասային դիրքի, բավական թեթև տարան խանի գերիշխանությունը:* Նրանց հիմնական պարտականությունը՝ Լեհաստանի և Լիտվայի վրա թաթար-մոնղոլների հարձակվելու ժամանակ, նոր սյուզերեններին օժանդակ ջոկատներ տրամադրելն էր: Սկզբում թաթար-մոնղոլների ազդեցությունը Գալիչինայի ու Վոլինի վրա այնքան թույլ էր, որ իշխան Դանիլոն կարողանում էր անկախ արտաքին քաղաքականություն վարել, որն ուներ թաթար-մոնղոլների նվաստացուցիչ կախվածությունից խուսափելու անթաքույց ուղղվածություն:

Բարեկամական հարաբերություններ հաստատելով Գրեգորիայի և Լեհաստանի հետ, Դանիլոն դիմեց Ինոկենտի IV պապին՝ խնդրելով օգնել համախմբելու սլավոններին՝ թաթար-մոնղոլների դեմ խաչակրաց արշավանք կազմակերպելու համար: Փոխարենը, Դանիլոն համաձայնվում էր, որ իր տիրույթներն անցնեն Զոմի հոգևոր իրավասությանը: Այդպիսով նա բարձրացրեց մի հարց, որը ժամանակի ընթացքում դարձավ Գալիչինայի պատմության մշտական ու կարևոր խնդիրը: Դա արևմտյան ուկրաինացիների և հռոմեական կաթոլիկ եկեղեցու միջև հարաբերությունների խնդիրն էր: Գալիցյան իշխանին խրախուսելու համար պապը նրան արքայական թագ ուղարկեց, և 1253 թ.-ին Բուզի վրա գտնվող Դորոհոչինում պապի դեսպանորդը թագադրեց Դանիլոյին:

Սակայն իշխան Դանիլոյի հիմնական հոգսը խաչակրաց արշավանքի կազմակերպումն ու Արևմուտքից օգնություն ստանալն էր, ինչը, չնայած պապի հավաստիքներին, այդպես էլ չհաջողվեց իրականացնել: Այնուամենայնիվ, 1254 թ.-ին Դանիլոն սկսեց ռազմարշավը՝ Կիևը թաթար-մոնղոլներից ազատագրելու համար, քանի դեռ թաթար-մոնղոլների ուժերը կենտրոնացված էին հեռավոր արևելքում: Չնայած սկզբնական հաղթանակներին, նրան չհաջողվեց իրականացնել իր մտադրությունը, և նա ստիպված էր թանկ վճարել իր պարտության համար: 1259 թ.-ին թաթար-մոնղոլների հսկայական զորքը՝ Բուռնուդայի գլխավորությամբ անսպասելի հարձակվեց Գալիչինայի և Վոլինի վրա: Թաթար-մոնղոլները Ռոմանովիչներին կանգնեցրին ընտրության առաջ. կամ նա քանդում էր բոլոր ամրացված քաղաքների բերդապարիսպները՝ ժողովրդին թողնելով անպաշտպան և թաթար-մոնղոլների քմահաճությանը կախված, կամ էլ անհապաղ սկսում էին համատարած կոտորածը: Սրտին քարի պես ծանրացած ցավով Դանիլոն ստիպված էր հետևել իր իսկ ջանադիր կառուցած պարիսպների քանդելուն:

Հակամոնղոլական քաղաքականության անհաջողությունները սակայն չթուլացրեցին այն ազդեցությունը, որ Դանիլոն ուներ արևմտյան հարևանների վրա: Գալիցյան իշխանը մեծ հեղինակություն էր վայելում Լեհաստանում, հատկապես Մազովյան իշխանությունում: Այդ պատճառով լիտվական իշխան Մինդաուգասը (Մինդոլգ), որի երկիրը նոր էր վերելք ապրում, ստիպված էր Մազովիայում տարածքային զիջումներ անել Դանիլոյին: Բացի այդ, ի նշան բարի կամքի, Մինդաուգասը համաձայնվեց իր երկու զավակներին անուսնացնել Դանիլոյի որդու և դստեր հետ: Մինչ այդ, *գալիցյան իշխաններից դեռևս ոչ ոք այնպիսի որոշիչ դերակատարություն չէր ունեցել Կենտրոնական Եվրոպայի քաղաքական կյանքում, ինչպես Դանիլոն:* Անուսնությունն օգտագործելով որպես արտաքին քաղաքական նպատակներին հասնելու միջոց՝ նա իր որդի Ռոմանին ամուսնացրեց բաբենբերգյան գահի ժառանգորդ Զերտուդի հետ և փորձեց, թեկուզև անհաջող, որդուն ավստրիական դքսության գահին բարձրացնել:

1264 թ.-ին, գրեթե վաթսուամյա քաղաքական գործունեությունից հետո, Դանիլոն կնքեց իր մահկանացուն: Ուկրաինական պատմագիրները նրան համարում են արևմտյան իշխանությունների բոլոր կառավարիչներից ամենապատվոքը: Ի նկատի ունենալով այն բարդ իրավիճակը, որում գործում էր Դանիլոն՝ *Նրա նվաճումներն իրոք նշանավոր էին:* Իր հոր տիրույթներն ընդլայնելու և բարենորոգելու հետ միասին Դանիլոն ճնշեց լեհական ու հունգարական էքսպանսիան: Նվազեցնելով բոյարների դերն ու հզորությունը, հասավ նրան, որ իր տիրությունում սոցիալ-տնտեսական և մշակութային մակարդակը դառնա Արևելյան Եվրոպայում ամենաբարձրերից մեկը: Սակայն նրա ոչ բոլոր ծրագրերը հաջող ավարտ ունեցան: Դանիլոյին չհաջողվեց պահել Կիևը, ինչպես նաև չհաջողվեց իրականացնել իր կարևորագույն նպատակը՝ ազատվել թաթար-մոնղոլական լծից: Այնուամենայնիվ՝ նվազագույնի հասցրեց նրանց գերիշխանությունը: Չգտելով խուսափել Արևելքի ազդեցությունից՝ Դանիլոն հայացքն ուղղեց դեպի Արևմուտք՝ դրանով իսկ օրինակ ծառայելով արևմտյան ուկրաինացիներին, ինչն էլ նրանք ընդունեցին բոլոր հաջորդող հարյուրամյակներում:

Դանիլոյի մահից հետո գրեթե 100 տարի Գալիչինայում և Վոլինում ոչ մի նշանավոր փոփոխություն տեղի չունեցավ: Իշխաններ Դանիլոյի և Վասիլկոյի սահմանած կառավարման նախատիպը՝ եռանդուն և գործունյա իշխան Գալիչինայում և պասիվ՝ Վոլինում, որոշ չափով չարունակվում էր նրանց որդիների՝ համապատասխանաբար՝ Լևի (1264-1301) և Վոլոդիմիրի (1270-1289) կողմից: *Փառասեր ու անդադրում Լևն անընդհատ քաղաքական բախումների մեջ էր, իսկ համեստ Վոլոդիմիրը մնում էր սովորում:* Երբ Գրեգորիայում մահացավ Արպադների դինաստիայի վերջին ներկայացուցիչը, Լևը գրավեց Անդրկարպատյան Ռուսիան՝ հիմք դնելով Կարպատների արևմտյան լանջերի համար Ուկրաինայի հետագա պահանջատիրությանը: Լևն ակտիվ էր գործում նաև Լեհաստանում, որն ընկղմված էր պառակտիչ կոիվների մեջ. ինչ-որ ժամանակ նա նույնիսկ ձգտում էր լեհական գահին բարձրանալ Կրակովում: Չնայած Լևի ազդեցիվ քաղաքականությանը՝ XIII դարի վերջին և XIV դարի սկզբին Գալիչինան և Վոլինը համեմատաբար հանգիստ շրջան ապրեցին, քանի որ նրանց արևմտյան հարևանները ժամանակավորապես թուլացած էին:

Վոլինի իշխան Վոլոդիմիրն իր գալիցյան զարմիկի հակապատկերն էր, և նրանց հարաբերություններում ժամանակ առ ժամանակ լարվածություն էր ստեղծվում: Չցանկանալով մասնակցել պատերազմներին ու դիվանագիտական գործունեությանը, նա ուշադրությունը կենտրոնացրել էր այնպիսի խաղաղ գործերի վրա, ինչպիսիք էին *քաղաքների, ամրոցների ու եկեղեցիների կառուցումը:* Գալիցիա-Վոլինյան տարեգրության համաձայն՝ *նա «մեծ գրքասեր ու փիլիսոփա էր»*, և իր ժամանակի մեծ մասն անց էր կացնում հին ձեռագիր գրքեր կարդալով ու արտագրելով: 1289 թ.-ին Վոլոդիմիրի մահը ոչ միայն ցավ պատճառեց նրա հպատակներին, այլև շփոթեցրեց ժամանակակից պատմաբաններին, քանի որ, վերջինները որոշակի կապ են տեսնում իշխանի մահվան և Գալիցիա-Վոլինյան ժամանակագրության՝ հենց այդ տխուր դիպվածով հանկարծակի ընդհատման միջև: Այն մասին, թե ինչ է տեղի ունեցել Գալիչինայի և Վոլինի անկախության վերջին տասնամյակների ընթացքում՝ 1289-1340 թվականներն ընկած ժամանակահատվածում, գործնականում ոչինչ հայտնի չէ, եթե չհաշվենք մեզ հասած մի քանի պատահական կցկտուր տեղեկությունները:

Այսպես, օրինակ, մենք գիտենք, որ Լևի մահից հետո Գալիչինայում և Վոլինում իշխում էր նրա որդի Յուրիին: Երևի նա հզոր իշխան է եղել, քանի որ հարևան երկրների որոշ տարեգրներ նշում են, որ նրա խաղաղ կառավարման տարիներին այդ հողերը «հարստության ու փառքի մեջ ծաղկում էին»: Իշխան Յուրիի կայուն ու պատակառելի դիրքը թույլ էր տալիս նրան կրել «Ռուսիայի արքա» տիտղոսը: Նրա բարձր հեղինակության մասին համոզիչ վկայություն է նաև 1303 թ.-ին տեղի ունեցած իրադարձությունը. թեև իյուսիս-արևելքի Վոլոդիմիր քաղաք տեղափոխելու կիևյան միտրոպոլիտի որոշումից դժգոհ, Յուրին Կոստանդնուպոլսից Գալիչինայում առանձին թեմ հիմնելու համաձայնություն ստացավ:

Ռոմանովիչների դինաստիայի վերջին երկու ներկայացուցիչները Յուրիի որդիներ Անդրիյն ու Լևն էին, որոնք միասին կառավարում էին Գալիցիա-Վոլինյան իշխանությունը: Անհանգրտանալով Լիտվայի աճող հզորությամբ՝ նրանք դաշինք կնքեցին Տևտոնական ուխտի վերմանացի ասպետների հետ: Թաթար-մոնղոլների նկատմամբ եղբայրներն անկախ և նույնիսկ թշնամական քաղաքականություն էին վարում: Զիմբեր կան ենթադրելու, որ նրանք թաթար-մոնղոլների դեմ այաքարի զոհ են դարձել:

Երբ 1323 թ.-ին մահացավ տեղական դինաստիայի վերջին իշխանը, Գալիցիա-Վոլինյան վերնախավը երկու տարի անց գահ բարձրացրեց Ռոմանովիչների լեհ զարմիկին՝ Բոլեսլավ



Մագովեցկուն: Ընդունելով ուղղափառություն և անունը փոխելով Յուրիի, նոր իշխանը շարունակեց վարել իր նախորդների քաղաքականությունը: Չնայած իր լեհական ծագմանը, նա ետ նվաճեց նախկինում լեհերի կողմից զրավված Գալիցիա-Վոլինյան հողերը և վերահաստատեց լիտվացիների դեմ տևողականների հետ կնքած դաշինքը: Ներքին քաղաքականության հարցերում Յուրի-Բուլեսլավը շարունակում էր աջակցել քաղաքների զարգացմանը և ձգտում էր ընդլայնել իր իշխանությունը: Այդ մտտեցումը, հավանաբար, ընդհարումների հանգեցրեց բոյարների հետ, որոնք 1340 թ.-ին թունավորեցին նրան, իբրև թե՛ կաթոլիկություն մտցնելու ձգտման և օտարերկրացիներին հաճոյանալու համար: Այդպես Գալիչինան ու Վոլինը զրկվեցին իրենց վերջին իշխանից, ընդ որում՝ սեփական վերնախավի մեղքով: Այդ ժամանակից ի վեր արևմտյան ուկրաինացիներն ընկան օտարերկրյա տիրակալների իշխանության տակ:

\*\*\*

Կիևի անկումից հետո ամբողջ մեկ դար Գալիցիա-Վոլինյան իշխանությունը ուկրաինական պետականության հենարանն էր, այն իմաստով, որ ժառանգել էր ոչ միայն Կիևյան Ռուսիայի քաղաքական դերն ու կացութաձևը, այլև խոչընդոտում էր Լեհաստանի կողմից արևմտուկրաինական հողերը զավթելու միտմանն ու փորձերին: Դրանով նրանք պատմության բեկումնային շրջանում պահպանեցին ուկրաինացիների, կամ ինչպես նրանց անվանում էին՝ ռուսիների, մշակութային և քաղաքական նույնականության զգացումը: Հետագայում այդ զգացումը վճռորոշ ազդեցություն կունենա նրանց՝ որպես առանձին ազգային միավոր գոյատևելու վրա՝ գալիք վտանգներով լի ժամանակներում:



## ԼԵՏ-ԼԻՏՎԱԿԱՆ ՇՐՋԱՆ

### Լեհաստանի և Լիտվայի իշխանության ներքո

#### Սոցիալ-տնտեսական փոփոխություններ

#### Կրոն և մշակույթ





### ԼԵՆԱՍՏԱՆԻ ԵՎ ԼԻՏՎԱՅԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈՒ

Հազարամյակների ընթացքում Ուկրաինան այնպիսի հզոր քաղաքական կառույցների քուրահանդիսացավ, ինչպիսիք էին սկյութական, սարմատական և Կիևյան Ռուսիայի կայսրությունները: Այդ երկրի ժողովուրդը ոչ միայն իր պատմական ճակատագրի տերն էր, այլև, երբեմն նույնիսկ էականորեն ազդում էր հարևան ժողովուրդների ճակատագրերի վրա: Ուկրաինայում կազմավորված քաղաքակրթություններն ամբողջ Արևելյան Եվրոպայի մշակութային և սոցիալ-տնտեսական զարգացման առաջընթացը նախանշող ուժն էին: Սակայն Քալիցիա-Վոլինյան իշխանության անկումը դարակազմիկ փոփոխությունների հանգեցրեց: Այդ պահից ի վեր Ուկրաինան այլևս քաղաքական ազդեցիկ միությունների միջուկ չի դառնա և նրա բնակչության ճակատագիրը, բացառությամբ ազգային ինքնահաստատման մի քանի կարծատև շրջանների, կորոշվի այնպիսի հեռավոր մայրաքաղաքներում, ինչպիսիք են Վարշավան, Մոսկվան կամ Վիեննան:\*

Մշակութային և սոցիալ-տնտեսական առումով նույնպես Ուկրաինայի կարգավիճակը կունենա կարևոր, բայց ծայրամասային, զավառականի մակարդակի մշակութային, իսկ նրա ազնվականությունը կընտելանա օտարերկրյա տիրակալների մշակութային և տնտեսական համակարգերին: Ուկրաինայի բնակչությունը, որը ոչ միայն դադարեց իշխել, այլև կախման մեջ ընկավ, հիմա պետք է պայքարեր և՛ քաղաքական ինքնորոշման, և՛ որպես առանձին էթնիկական ու ազգային ընդհանրություն գոյատևելու համար: Այս պայքարը դարձավ (և գրեթե մինչև այսօր մնում է) ուկրաինական պատմության հիմնական խնդիրներից մեկը:

### Լիտվական էքսպանսիան Ուկրաինայում


XIV դարի պատմական իրադարձությունների զարգացման ընթացքը ոչ մի լավ բան չէր խոստանում Ուկրաինային, քանի որ նրա քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքի անկման շրջանում շատ արագ վերելք ապրեցին նրա հարևանները՝ Լիտվան, Լեհաստանն ու Մոսկովիան և, բնականաբար, նրանց գալթակողում էր հարավում առաջացած իշխանության վակուումը: *Կիևից մնացել էր նրա անցած փառքի աղոտ ստվերը միայն:* Բացի ուղղափառ միտրոպոլիտից, որը 1300 թ.-ին տեղափոխվեց հյուսիս-արևելք՝ ծաղկում Վոլոդիմիր, իսկ հետագայում վերջնականապես հաստատվեց Մոսկվայում, Կիևը լքեցին նաև շատ բոյարներ ու մեծամեծ վաճառականներ: Բավականին երկար ժամանակ Կիևը նույնիսկ իր իշխանը չուներ: Իսկ Քալիցիա-Վոլինյան դինաստիայի վերջին իշխանի մահից հետո, արևմտաուկրաինական հողերը նույնպես մնացին առանց առաջնորդի՝ մատչելի ավար դառնալով թշնամու համար: Մոտ 80 տարի ուկրաինական հողերի տեր ու տիրակալը թաթար-մոնղոլներն էին, սակայն պատմական այդ կարճ ժամանակում նույնիսկ, Ոսկե Հորդան, իր ներքին շարունակական գծտությունների պատճառով, չէր կարողանում ամուր կառավարել ու վերահսկել այդ հողերը, ուստի, Ուկրաինան, հասած պտղի նման, սպասում էր հաջորդ գավթիչին:

Այդ հնարավորությունից առաջինն օգտվեցին լիտվացիները: XIII դարի կեսին իշխան Մին-

\* Լեհ-լիտվական շրջանում ուկրաինացիներն իրենց ռուսիներ էին կոչում՝ «ռուսիա» բառից հետևող: Այդպես անվանում էին նաև բելոռուսներին: Իսկ ռուսներին այն ժամանակ անվանում էին մոսկովիտներ: Այդ մասին, մասնավորապես, բազում հիշատակումներ կան հայոց ձեռագրերում:

դաուգասը (Մինդուգ) միավորեց համեմատաբար հետամնաց հեթանոսական մարտնչող ցեղերը՝ դիմագրավելու համար մերձբալթյան հողերում հաստատված Տևտոնական օրդենի՝ գերմանացի գաղութարար-խաչակիրների ճնշումներին: Այս պայքարի հետևանքը եղավ այն, որ լիտվացիներն ուժեղացան և միաբանվեցին ավելի, քան երբևէ: XIV դարի առաջին տասնամյակներին Մեծ իշխան *Գեդիմինասի (Գեդիմին)* գլխավորությամբ նրանք շարժվեցին դեպի Բելոռուսիա: 1340-ական թվականներին, նրա որդի *Ալգերդասի (Օլգերդ)* կառավարման ժամանակ, որը վճռականորեն հայտարարել էր, թե՛ «Ամբողջ Ռուսիան պետք է պատկանի լիտվացիներին», նրանք ներխուժեցին ուկրաինական հողերը:

Մինչև 1350 թ.-ը Ալգերդասն իր իշխանությունն էր ընդարձակում դեպիայն Չախափնյակի մասը իշխանապետություններում, իսկ 1362 թ.-ին նրա զորքը գրավեց Կիևը: 1363 թ.-ին



Լեհ-լիտվական էքսպանսիան



ջախջախիչ պարտության մատնելով Ոսկե Չորրային, լիտվացիները ներխուժեցին Պոդոլյե: Այդ պահից սկսած, Լիտվական Մեծ իշխանությունը, իրեն ենթարկելով Բելոռուսիայի և Ուկրաինայի մեծ մասը (Կիևյան Ռուսիայի հողերի մոտավորապես կեսը), դարձավ ամենամեծը Եվրոպայում: Այս իշխանության ստեղծումն անկասկած ժամանակի մեծագույն քաղաքական նվաճումն էր, մանավանդ թե նկատի ունենանք, որ իրականացվեց ընդամենը մոտ 150 տարվա ընթացքում: Սակայն, ուկրաինական հողերի գրավումը լիտվացիների կողմից, պետք է պատկերացնել որպես օտարների դաժան հորդանքի ամողորմ ներխուժում: Ըստ էության, այս նպատակամետ ընթացքը բնորոշելու համար առավել հարմար է օգտագործել թափանցում, միացում, կցում բառերը: Ալգերդաի՝ Ուկրաինայում խորանալու ընթացքում հաճախ էր բնակչությունը աղուհացով դիմավորում նրա զորքերին, որոնք հիմնականում բաղկացած էին ուկրաինացի հպատակներից կամ դաշնակիցներից: Եթե մարտեր էին բռնկվում որոշ տեղերում, ապա, որպես կանոն, թաթար-մոնղոլների հետ:

Այն ժամանակների մասին տեղեկությունների սղությունը, ցավոք սրտի, հնարավորություն չի ընձեռում պատմաբաններին լիարժեք ներկայացնելու լիտվական էքսպանսիայի մանրատվությունը: Այնուամենայնիվ, այդ արագ և դյուրին իրականացված հաջողությունների պատճառների մասին մի շարք ենթադրություններ կան: Ներկայացնենք նրանք, որոնք կարելի է համարել բոլորի կողմից ընդունված:

Ամենից առաջ ուկրաինացիների, հատկապես Մերձդնեստրյան շրջանի բնակիչների համար ավելի ընդունելի էր լիտվական իշխանությունը, քան Ոսկե Չորրայի դաժան լուծը: Երկրորդը՝ լիտվացիները, սակավաթիվ լինելու պատճառով, իրենց շատ տիրույթների ղեկավարությունը (Լիտվական Մեծ Տերության գերազանցող մասը ուկրաինական տարածքներն էին) վստահում էին ուկրաինական տեղական վերնախավին, որոնք վարչական կառավարման ընթացքում շատ բարձր պաշտոնների էին հասնում, և բնականաբար, հեշտությամբ անցնում էին հաղթողների կողմը: Վերջապես, ի տարբերություն թաթար-մոնղոլների, լիտվացիներին չէին ընդունում որպես լրիվ օտարների: Չեթանոսությանը կառչած, մշակույթի առումով հետամնաց լիտվացիների վերնախավը առաջ շարժվելու ընթացքում արագ կերպով սլավոնական հպատակների մշակութային ազդեցությանն էր ենթարկվում: Գեդիմինասների դինաստիայի շատ իշխաններ քրիստոնեություն ընդունեցին: «Ռուսաց» լեզուն (այսինքն՝ ուկրաիներեն-բելոռուսերենը)՝ որպես բնակչության մեծամասնության լեզու, դարձավ պետական կառավարման լեզու: Տեղական ավանդույթների նկատմամբ մեծ հարգանքով լցված՝ լիտվացիները հաճախ էին ուղիղ հայտարարում. «Չինը մենք չենք փոխում, նորը չենք պարտադրում»:

Լիտվական ղեկավարներն այնպես էին հարմարվել Բելոռուսիայի և Ուկրաինայի տեղական ավանդույթներին, որ մեկ-երկու սերունդ հետո, իրենց տեսքով, լեզվով ու վարվելակերպով հիշեցնում էին իրենց նախնիներին՝ Ոյուրիկովիչներին: Նրանք իրենց նվաճումները դիտում էին որպես՝ «Ռուսիայի հողերն ամբողջացնելու» առաքելություն, որն հետագայում պետք է կիրառեր գնալով հզորացող Մոսկվան՝ երբ որոշեց արդեն ձեռք մեկնել Կիևյան Ռուսիայի հողերին: Ի դեպ, այս վերջին հանգամանքը որոշիչ հիմք հանդիսացավ Մ. Չրուչակու և այլ պատմաբանների համար, պնդելու, թե Լիտվական Մեծ Տերությունը առավել ուղիղ և անմիջական ժառանգորդն էր Կիևյան Ռուսիայի, քան Մոսկովիան: Իսկ որոշ պատմաբաններ էլ նույնիսկ հրաժարվում էին ի դեմս Լիտվայի տեսնել օտար մի տերություն, որ կլանեց Ուկրաինան, և պնդում էին, որ Մեծ Լիտվական իշխանությունն ավելի շուտ պետք է դիտարկել որպես Ռուսիայի վերածնված պետականություն:

## Լեհական էքսպանսիան Ուկրաինայում

Չնայած լիտվացիների նվաճումներն Ուկրաինայում պատկառելի էին, սակայն ուկրաինացիների ճակատագրի վրա շարունակական ազդեցություն և համակողմանի ներգործություն ունեցավ Լեհաստանի էքսպանսիան, որի սկիզբը դրեց Կազիմիր Մեծը (1320-1370 թ.թ.)՝ վերականգնելով միջնադարյան լեհական միապետությունը: Դեպի արևելք Կազիմիրի առաջ-խաղացման հաջողությանը նպաստում էին երեք կարևոր և ազդեցիկ ուժեր: Դրանք, առաջին հերթին, Չարավ-Արևելյան Լեհաստանի ավատատերերն էին, որոնք հույս ունեին ընդլայնել իրենց տիրույթները՝ խորանալով բելոռուսական և ուկրաինական հողերում: Երկրորդը՝ կաթոլիկ եկեղեցին էր, որ ձգտում էր ավելացնել նորադարձների թիվը: Եվ վերջապես՝ Կրակովի

հարուստ քաղաքաբնակներն էին, որ ցանկանում էին իրենց ենթարկել Գալիչինայի առևտրական կարևոր ուղիները:

Բոլեսլավի (Գալիչինայի վերջին անկախ իշխանի) մահից ընդամենը 9 օր հետո, 1340 թ.-ի ապրիլին Լեհաստանի թագավորը մտավ Գալիչինա՝ տեղի կաթոլիկներին (որոնք հիմնականում քաղաքաբնակ գերմանացիներ էին) պաշտպանելու պատճառաբանությամբ: Սակայն ամեն ինչ վկայում է այն մասին, որ Կազիմիրը նախօրոք էր ծրագրել այդ քայլը. դեռևս 1339 թ.-ին նա Լյուդովիկոս Չունգարացու հետ Ուկրաինան նվաճելու համատեղ գործողություններ իրականացնելու համաձայնություն էր կնքել:

Սակայն լեհերի համար ուկրաինական հողերը նվաճելն այնպես դյուրին չէր, ինչպես լիտվացիների համար: Կազիմիրը դեռ չէր հասցրել Լեհաստան վերադառնալ, երբ գալիցյան ինքնակամ բոյարները՝ Դմիտրո Դետկոյի գլխավորությամբ, իրենց երկրում հաստատեցին իրենց իշխանությունը: Կազիմիրն ստիպված էր Դետկոյին ճանաչել որպես Գալիչինայի փաստացի տիրակալ. իսկ վերջինս էլ, փոխարենը, չնայած դժկամորեն, բայց համաձայնվեց ճանաչել լեհական թագավորի ձևական ու խիստ սահմանափակ գերիշխանությունը: Լեհերի համար Գալիչինայում և Վոլինում առավել մեծ սպառնալիք էին ներկայացնում լիտվացիները: Բանի որ Գեդիմինասի որդի Լյուբարտը գալիցյան իշխան Բոլեսլավի փեսան էր, 1340 թ.-ին վոլինյան բոյարները երիտասարդ լիտվական իշխանին ճանաչեցին որպես իրենց սյուզերեն: Եվ երբ 1344 թ.-ին Դմիտրո Դետկոն մահացավ, Գալիչինայի և Վոլինի հողերի համար լեհերի և լիտվացիների միջև ընդհարումների հիմքն արդեն առկա էր:

Ավելի քան երկու տասնամյակ լեհերը՝ հունգարների հետ միասին, Գալիչինայի և Վոլինի համար պայքարում էին լիտվացիների դեմ, իսկ վերջիններիս աջակցում էին ուկրաինացիները: Ի տարբերություն հին Ռուսիայի բնակչության համար արդեն սովորական դարձած իշխանական երկպառակությունների, այս պայքարը նոր, տագնապալի երանգ ստացավ: Լեհերը՝ «քրիստոնեության վահան» հայտարարելով իրենց, մասամբ համոզվում էին, մասամբ էլ պապի աջակցությունն ակնկալելով, դեպի արևելք արշավանքը ներկայացնում էին որպես խաչակրաց արշավանք՝ հեթանոս լիտվացիների և հերետիկոս ուղղափառ ուկրաինացիների դեմ: Կաթոլիկներից բացի մյուս բոլորին բարոյականության ու մշակույթի տեսակետից որպես ցածր դասի մարդկանց վերաբերվելը լեհ-ուկրաինական ապագա հարաբերություններում ոչ մի լավ բանի չէր հանգեցնելու:

1349 թ.-ին բավական հաջող ռազմարշավի արդյունքում Կազիմիրն իրեն ենթարկեց Գալիչինան և Վոլինի մի մասը: Վերջապես, 1366 թ.-ին պատերազմն ավարտվեց՝ լեհերի կողմից ողջ Գալիչինայի և Վոլինի մի փոքր մասի նվաճումով: Մնացյալ ամբողջ Վոլինը լիտվացիների ձեռքում էր: Ինչևէ, առանց այդ էլ լեհերի նվաճած տարածքները հսկայական էին՝ մոտ 62 հազ. քառ. կմ տարածք՝ 200 հազ. բնակչությամբ, որը գրեթե կրկնակի անգամ ընդարձակում էր լեհական թագավորությունը: Ամեն դեպքում, նույնիսկ այդ ժամանակի լեհերը չկարողացան իրենց գերիշխանությունն հուսալիորեն ամրապնդել Ուկրաինայում:

Լյուդովիկոս Չունգարացու հետ կնքած վերոնշյալ դաշինքով Կազիմիրը համաձայնվում էր ուկրաինական հողերն ու լեհական թագը փոխանցել նրան այն դեպքում, եթե ինքը մահանա և երկիրը մնա առանց արական սեռի ժառանգորդի: 1370 թ.-ին Կազիմիրը մահանում է՝ թողնելով չորս դուստր: Չունգարական զորքը մտնում է Գալիչինա: Լյուդովիկոսն իր վստահելի վասալ Վլադիսլավ Օպոլսկուն նշանակում է Գալիչինայի փոխարքա և երկրով մեկ հունգարացի տեղապահներ կարգում: Սակայն այն, ինչ լեհերը կորցրել էին ժառանգության հետ կապված համաձայնագրով, վերադարձրեցին նույն ճանապարհով: 1385 թ.-ին Լեհաստանի թագուհի դարձավ Լյուդովիկոս Չունգարացու դուստր Յադվիգան, որը երկու տարի անց վճռականորեն ու վերջնականապես Գալիչինան միացրեց Լեհական թագավորության տիրույթներին:

Լեհերն սկզբում մեծ զգուշավորությամբ էին նոր կարգեր հաստատում իրենց նոր հպատակների շրջանում: Գալիչինայի վերջին անկախ ղեկավարների օրինակով, Կազիմիրն էլ այդ հողերն անվանում էր «Ռուսիական թագավորություն»: Լատիներենին համազոր պաշտոնապես ընդունվում էր նաև «ռուսաց» լեզուն, ինչպես որ շրջանառության մեջ էր «ռուսական» դրամը: Սակայն՝ «հին, բարի ժամանակների» ավարտն ազդարարող նորամուր նշաններ էին ի հայտ գալիս: Դեռևս 1341 թ.-ին Կազիմիրը դիմել էր Բենեդիկտոս XII պապին՝ խնդրելով ազատել իրեն «ուղղափառ հերետիկոսների» հին ավանդույթները, արտոնություններն ու ծիսակատարությունները պահպանելու պարտավորությունից: Պապը հենց դրան էլ սպասում էր: Կաթոլիկ եկեղեցին, որը թագավորական առատաձեռնության շնորհիվ ժամա-



նակի ընթացքում դարձավ Գալիչինայի ամենամեծ հողատերը, բացահայտ աջակցում էր ուղղափառ եկեղեցու քայքայմանը:

**1375 թ.-ին Լվովում հիմնվեց կաթոլիկական արքեպիսկոպոսություն:** Միևնույն ժամանակ ողջ երկրով մեկ վանքեր հիմնվեցին (հատկապես Ֆրանցիսկյան և Գոմինիկյան միաբանությունների), որոնք սպասարկում էին արագորեն աճող կաթոլիկ բնակչությանը: Դա լեհական, գերմանական, չեխական և հունգարական շյախտան էր (մանրակալվածք ազնվականություն), որ Գալիչինայում հողեր էր ձեռք բերել, և նաև գերմանացի-քաղաքաբնակները, որոնց լեհական միապետները հրավիրել էին քաղաքների զարգացմանը նպաստելու: Գալիցյան բոյարներն էլ, ձգտելով ամեն ինչով նմանվել լեհ շյախտիչներին, արագորեն ընդունում էին նրանց հավատը, հատկապես 1431 թ.-ից հետո, երբ նրանք լեհերին հավասար կարգավիճակ ստացան: **XV դարի կեսերին, Գալիչինան վերածվել էր Լեհական թագավորության սովորական գավառի, այսպես կոչված՝ Ռուսիական վոյեվոդություն էր, և երբեմնի հզոր Գալիցյան իշխանությունից գրեթե ոչինչ էլ չէր մնացել:**

**Ուկրաինայի հպատակեցումը Լեհաստանին երկու ժողովուրդների համար էլ շրջադարձային կարևոր կետ հանդիսացավ:** Լեհերի համար այն նշանակում էր ուղղվածություն դեպի Արևելք՝ ի տարբերություն նախկին՝ Արևմտյան ուղղվածության. այդ փոփոխությունն հանգեցնում էր հեռուն զննող քաղաքական, մշակութային և սոցիալ-տնտեսական հետևանքների: Ուկրաինացիների համար էլ այն ավելին էր, քան սեփական ղեկավարներին օտարերկրացիներով փոխարինելը: Այն նշանակում էր ենթարկվել օտար կրոն և մշակույթ ունեցող օտար ազգի: Չնայած նման համակեցության որոշ դրական հետևանքներին, ժամանակի ընթացքում այն վերածվեց էթնիկական, սոցիալական և կրոնական սուր ընդհարումների, որը տևեց մոտ 600 տարի և ներառեց Ուկրաինայի կյանքի բոլոր ոլորտների վրա:

## Լեհ-լիտվական ունիա (միություն)

Գալիչինայի հետ կապված խնդիրները կարգավորելուց հետո, Լեհաստանի և Լիտվայի միջև փոխըմբռնման հող ստեղծվեց: Նրանք հասկացան, որ *իրենց միացնում է և՛ ընդհանուր շահերը, և՛ ընդհանուր սպառնալիքը:* Երկու երկիրն էլ Բալթիկ ծովի ափերին իշխող Տևտոնական օրդենի ագրեսիվ ծրագրերի սպառնալիքի տակ էին: Դեպի արևելք իր էքսպանսիայից թուլացած Լիտվան ի վիճակի չէր արևմուտքում դիմադրել գերմանացիներին: Ստեղծված բարդ իրավիճակը վատթարանում էր նաև արևելքից սպառնացող Մոսկովյան իշխանության հզորության ու հեղինակության արագ աճելու պատճառով: Միևնույն ժամանակ լեհերը, որ դժգոհ էին հունգարների հետ դինաստիական կապերից և ձգտում էին տիրել ուկրաինական մյուս տարածքներին, իրենց նպատակն իրականացնելու ուղիներ էին փնտրում: Այդ ժամանակ Դարավ-Արևելյան Լեհաստանի ավատատերերն անսպասելի առաջարկություն արեցին՝ լեհական թագաւոի Յադվիգային ամուսնացնել նոր լիտվական Մեծ իշխան Յազայլոյի (Յազելլի) հետ և այդպիսով դինաստիական կապ ստեղծել Լիտվայի հետ:

**1385 թ.-ին, բելոռուսական մի փոքրիկ բնակավայրում Լեհաստանի և Լիտվայի միջև կնքվեց Կրևնյան ունիան:** Յազայլոն այնպես էր շտապում դառնալ Յադվիգայի ամուսինը, իսկ ավելի շուտ՝ Լեհաստանի թագավորը, որ առանց դուլյան ինչ տատանվելու համաձայնը վեց լեհերի բոլոր պայմանների հետ, այդ թվում և՛ պարտավորվում էր լիտվացիների մեջ տարածել կաթոլիկությունը, իսկ Լիտվայի և Ուկրաինայի հողերը «հուր-հավիտյան» միացնել Լեհական թագավորությանը:

Կարծես թե, ըստ պայմանագրի ստացվում էր, որ Լեհաստանի թագավորի տիտղոսի համար Յազայլոն համաձայնվում էր լուծարել Մեծ իշխանությունը: Սակայն, չնայած Յազայլոյի հետ լեհական ավատատերերի կնքած համաձայնագրին, *Լիտվական Մեծ իշխանությունը բավական հզոր ու կենսունակ էր, իսկ լիտվական վերնախավը՝ բավական վստահ իր ուժերին, որպեսզի թույլ տար Լեհաստանին՝ կլանել իրեն:* Եվ ահա սկսվեցին հակալեհական խնդիրները: Լեհերին ընդդիմացող լիտվացիներն ու ուկրաինացիները համախմբվեցին Յազայլոյի զարմիկ, տաղանդավոր ու պատվախնդիր իշխան *Վիտաուտասի (Վիտոլտ)* շուրջը, որը ոչ միայն դարձավ Լիտվայի փաստացի Մեծ իշխանը, այլև 1392 թ.-ին թագավորին ստիպեց իրավաբանորեն ճանաչել այն: Այսպիսով, Վիտաուտասի ժամանակ Լեհաստանը և Լիտվան միայն ձևականորեն էին միասնական (այդ միասնականության խորհրդանիշը Յազայլոն էր): Ավելին, Վիտաուտասը մի քանի անգամ փորձեց խզել բոլոր կապերը Լեհաս-

տանի հետ և թագավորական տիտղոս ձեռք բերել: Եվ չնայած այդ փորձերն անհաջողության մատնվեցին, սակայն դրանք բավականին համոզիչ վկայությունն են այն բանի, թե ինչքան ամուր էին թամբին նստած Մեծ իշխանության լիտվական և ուկրաինական վերնախավերը:

Ուկրաինական ավատատերերի համար (այս պարագայում ժողովուրդը դժվար թե քաղաքական դերակատարություն ունենար) Մեծ իշխանության ինքնավարությունը պահպանելը բավականին մեծ իմաստ ուներ, քանի որ լիտվացիներն, ի տարբերություն լեհերի, նրանց դասում էին իրենց հավասար: Ավելին, Վիտաուտասի գլխավոր քաղաքական նպատակներից երկուսը գոհացնում էին նրան հավատարիմ ուկրաինացի վասալներին: Նախ, Վիտաուտասը շարունակեց Ալգերդասի սկսած առաջ շարժումը դեպի արևելք՝ «ռուսիական հողերն ամբողջացնելու» նպատակով, և երկրորդ՝ Ոսկե Դորդայի մասնատած տարածքները վերականգնելու համար արշավեց դեպի հարավ՝ հընթացս կառուցելով ամրությունների համակարգ՝ հպատակներին բռնկողների ոտնձգություններից պաշտպանելու համար: Սակայն, դրա հետ միասին, ներքին քաղաքականության մեջ Վիտաուտասը մի շարք միջոցառումներ է ձեռնարկում, որոնք սառեցնում են ուկրաինացիների հիացմունքը և կամաց-կամաց նվազեցնում հարգանքը «ամուր ձեռք» ունեցող լիտվացի իշխանի նկատմամբ: Այդ միջոցառումների նշանակությունը հասկանալու համար փորձենք ընդհանուր գծերով բնորոշել Մեծ իշխանության քաղաքական կառուցվածքը:

## Լիտվական Մեծ իշխանների քաղաքականությունը

Լիտվական Մեծ իշխանությունը որոշ չափով հիշեցնում էր Կիևյան Ռուսիան: Այն կազմված էր մի շարք կիսանկախ իշխանություններից, որոնցից յուրաքանչյուրը ղեկավարում էր Գեդիմինասի դինաստիայի որևէ անդամ: Այս իշխանությունները սահմանակից էին Վիլնյուս քաղաքին, որն իշխանության մայրաքաղաքն էր և Մեծ իշխանների ոստանը: Սակայն, գոյություն ուներ մի էական տարբերություն, որը բնորոշ էր հատկապես Վիտաուտասի կառավարման ժամանակաշրջանին և որը թույլ տվեց Լիտվական Մեծ իշխանությանը խուսափելու մասնատվածությունից, ինչը տեղի ունեցավ Կիևյան Ռուսիայում: Բանն այն է, որ ի տարբերություն կիևյան Մեծ իշխանների, *լիտվական Մեծ իշխանները ոչ թե սոսկ «առաջինն էին հավասարների մեջ», այլ միահամուռ և միանշանակ ճանաչվում էին որպես Լիտվայի գերագույն ղեկավարներ:* Նրանց համար կարևոր էր միայն չկորցնել պահը և ժամանակին ապահովել համապատասխան քաղաքական գիտակցություն և իրավիճակ, ինչն էլ արեց Վիտաուտասը 1390-ական թվականների բարեփոխումների ժամանակ: Նրան անհանգստացնում էր այն, որ Գեդիմինասների դինաստիայի իշխաններից շատերը, որոնք ուկրաինացի էին, այնպիսի խորն արմատներ էին ձգել իրենց հողերում, որ ավելի շատ տարված էին տեղական շահերով, քան, ընդհանուր առմամբ Մեծ իշխանության հարցերով: Նրանցից մի քանիսը կասկածվում էին (ըստ երևույթին՝ ոչ անհիմն) նույնիսկ անջատողական տրամադրությունների մեջ:

Իրավիճակը շտկելու համար Վիտաուտասն անընդհատ իշխաններին տեղափոխում էր մի տիրույթից մյուսը՝ այդպիսով զրկելով նրանց տեղացիների մշտական ու ամուր հենարանից: Այսպես, Ֆեդիր Լյուբարտովիչին սկզբում մեկը մյուսի ետևից զրկեցին Վոլինի իր հարուստ կալվածքներից, փոխարենը շնորհելով առավել քիչ գրավիչ Լովգորոդ-Սիվերյան իշխանությունը (որը նա մտադեռ էր ընդունել), որը վերցրել էին Վոլոդիմիր Ալգերդովիչից, որն էլ իր հերթին, դրանից էլ փոքր կալվածք ստացավ: Եթե իշխանը հրաժարվում էր ենթարկվել, ինչպես օրինակ՝ Ֆեդիր Կորիատովիչ Պոդոլսկին, ապա Վիտաուտասը նրան մեղադրում էր անհնազանդության մեջ, իր զորքով հարձակվում էր նրա վրա և ստիպում էր փախչել Մեծ իշխանությունից դուրս: Կիսանկախ բաժնեկալվածային իշխանների փոխարեն Վիտաուտասը նշանակում էր իր շրջապատի մարդկանցից, հաճախ անտիտղոս բոյարների, որոնք այդ հողերն ստանում էին որպես «շնորհ իշխանի կողմից»: Փոփոխությունները վերաբերվեցին նույնիսկ մանր բոյարներին, որոնք իրենց հողերը պահելու համար պետք է ծառայության մտնեին Մեծ իշխանի մոտ: Այդպես՝ ուկրաինական վերնախավը դարձավ իրեն մինչ այդ անծանոթ հզոր՝ կենտրոնացված իշխանության մաս:

Այդպիսի քաղաքականությունն ուկրաինացիների մոտ համընդհանուր դժգոհություն առաջացրեց, իսկ հետագայում տեղի ունեցած իրադարձություններն ավելի սպառնալից դարձան: 1413 թ.-ին Գրոդնոյում Յազայլոն պայմանավորվեց Վիտաուտասի հետ լիտվական կաթոլիկ բոյարներին շնորհել այնպիսի լայն իրավունքներ, ինչպիսիք վերջերս ստացել էր



լեհական շլախտան: Այդ որոշումն արագ կյանքի կոչելու համար լեհ շլախտիչների 47 ընտանիք առաջարկեց նույն քանակի լիտվական բոյարական ընտանիքների՝ օգտվել իրենց ազնվական զինանշանից: Սակայն լեհական և լիտվական ազնվական ընտանիքների մերձեցումը մեծացնում էր լիտվական և ուկրաինական ընտանիքների միջև առաջացող ծեղրվածքը: Այն գրեթե աննշար տարբերությունը, որ ծնունդ առավ 1385 թ.-ի Կրևնյան ունիայի արդյունքում կաթոլիկների և բողոքականության մեջ ապաշնորհի իշխանը, կաթոլիկ լինելով հանդերձ, սերտ կապեր էր պահպանում ուղղափառ ուկրաինացիների հետ և իր ընտրվելուց շատ չանցած զգացնել տվեց, որ ձգտում է սահմանափակել կամ ամբողջովին խզել կապերը Լեհաստանի հետ: Վախենալով Լիտվայի արևելյան հսկայական հրապուրիչ հողերը ներթափանցելու հնարավորությունը կորցնելուց, լեհերը դիմեցին ուժի՝ գրավելով Պոդոլյեն ու Վոլինը: Ավելին՝ Սվիդրիգայլոյին ներսից վնասելու նպատակով լիտվացիների մեջ լեհամետ կուսակցություն հիմնեցին, որն անվավեր ճանաչեց Սվիդրիգայլոյի Մեծ իշխան ընտրվելը և նրա փոխարեն ընտրեց Վիտաուտասի կրտսեր եղբորը՝ Սիգիզմունդ Ստարոդոբսկուն: *Պրա արդյունքում, 1432 թ.-ին Մեծ իշխանությունը տրոհվեց երկու թշնամի բանակի. լիտվացիներով բնակեցված տարածքներն անցան Սիգիզմունդի կողմը, իսկ ուկրաինացիներն աջակցում էին Սվիդրիգայլոյին:*

Նույն թվականին, հիմնվելով լեհական մերձեցումից դժգոհ լիտվական որոշ ավատատերերի աջակցության վրա, ուկրաինացիները Մեծ իշխան ընտրեցին թագավոր Յագայլոյի կրտսեր եղբորը՝ Արևելյան Ուկրաինայի Սվիդրյան իշխանությունը կառավարող Սվիդրիգայլոյին: Այս բախտախնդիր և բողոքականության մեջ ապաշնորհի իշխանը, կաթոլիկ լինելով հանդերձ, սերտ կապեր էր պահպանում ուղղափառ ուկրաինացիների հետ և իր ընտրվելուց շատ չանցած զգացնել տվեց, որ ձգտում է սահմանափակել կամ ամբողջովին խզել կապերը Լեհաստանի հետ: Վախենալով Լիտվայի արևելյան հսկայական հրապուրիչ հողերը ներթափանցելու հնարավորությունը կորցնելուց, լեհերը դիմեցին ուժի՝ գրավելով Պոդոլյեն ու Վոլինը: Ավելին՝ Սվիդրիգայլոյին ներսից վնասելու նպատակով լիտվացիների մեջ լեհամետ կուսակցություն հիմնեցին, որն անվավեր ճանաչեց Սվիդրիգայլոյի Մեծ իշխան ընտրվելը և նրա փոխարեն ընտրեց Վիտաուտասի կրտսեր եղբորը՝ Սիգիզմունդ Ստարոդոբսկուն: *Պրա արդյունքում, 1432 թ.-ին Մեծ իշխանությունը տրոհվեց երկու թշնամի բանակի. լիտվացիներով բնակեցված տարածքներն անցան Սիգիզմունդի կողմը, իսկ ուկրաինացիներն աջակցում էին Սվիդրիգայլոյին:*

Այդ երկու բանակներին բաժանող խնդիրները սկզբունքային նշանակություն ունեին: Կապիտանի՝ արդյոք իր գոյությունը լեհ-լիտվական ունիան: Թե՞ գահին պահելով Սվիդրիգայլոյին, ուկրաինացիները կունենան իրենց արժանի տեղը Մեծ իշխանության քաղաքական կյանքում: Թե՞ հակառակը՝ Մեծ իշխանության ուկրաինական հողերը, այդ հսկայական, օտարներին մշտապես գայթակղող տարածքներն անապաշտպան կմնան լեհերի պահանջատիրական հավակնությունների առջև:

Ռազմական մի քանի բախումներից հետո կողմերն անցան բանակցությունների, որոնց ընթացքում Սիգիզմունդն ու լեհամետ կուսակցությունը գերիշխող դիրք գրավեցին: *Ուղղափառներին տալով կաթոլիկներին հավասար իրավունքներ՝ Սիգիզմունդն իր կողմն հրապուրեց Սվիդրիգայլոյի կողմնակիցներից շատերին:* Տեսնելով, որ ոտքի տակի հողը գնում է, Սվիդրիգայլոն կատաղած դիմեց ահաբեկչական մարտավարության, օրինակ՝ Սնոլենսկի միտոսպոլիտ Գերասիմին կենդանի այրելով, որով էլ ուխտադրժության մղեց իր վերջին կողմնակիցներին, և վերջնական պարտության մատնվեց: Այս ընդհանուր իրադարձությունների արդյունքում *Լեհաստանի ձեռքն անցավ ևս մեկ ուկրաինական տարածք՝ Պոդոլյեն:* Սակայն Վոլինը, որի բնակչությունն անողորմ հակահարված էր տալիս լեհական զավթիչներին, մնաց Լիտվական Մեծ իշխանության կազմում: Այսպես թե այնպես, լեհական ճնշումներն ու ազդեցությունը բացասականորեն անդրադարձան լիտվացիների և ուկրաինացիների՝ մինչ այդ խաղաղ հարաբերությունների վրա:

XV դարի կեսին լիտվական և ուկրաինական վերնախավերի հարաբերությունները վատացան հատկապես այն բանից հետո, երբ նոր Մեծ իշխան Կազիմիր Յագելոնովիչը կենտրոնամետ իշխանությունն ամրապնդելու ուղղությամբ մի շարք բարեփոխումներ անցկացրեց: *1452 թ.-ին լիտվական զորքերի կողմից գրավված Վոլինը, լեհականի օրինակով, Մեծ իշխանի տեղապահի կառավարման տակ անցած մի սովորական գավառ էր դարձել:* 1471 թ.-ին նույն ճակատագրին արժանացավ Կրևն իր մերձակա տարածքների հետ: Վրդովված ուկրաինացիներն ապարդյուն ջանում էին, որ Կրևի պես հեղինակավոր քաղաքն ինքնավար լինի, կամ գոնե կառավարվի իշխանի կողմից, այլ ոչ թե անտիտուո ու ստորակարգ պաշտոնյաների: Նրանց ձայնն այս անգամ էլ չէին լսում: Կիևյան Ռուսիայի պետականության և ուկրաինական ինքնավարության մնացորդներն արագ ու անհետ կորչում էին:

### Մոսկվայի զարթոնքը

Այն ժամանակ, երբ լիտվական Մեծ իշխանները չէին էլ մտածում իրենց ուկրաինացի վասալների բարեհաճությունը շահելու մասին, մոսկովյան Մեծ իշխաններն՝ ընդհակառակը,

ամեն կերպ «գուրգուրում» էին նրանց՝ դեռևս Կիևյան Ռուսիայի երբեմնի հզորությամբ ու փառքով սնվող երազային հոգիները: Իսկ Մոսկվան այդ ժամանակ արդեն իրենից մեծ ուժ էր ներկայացնում, որի հետ, կամա թե ակամա, հարկավոր էր հաշվի նստել:

Պարեր շարունակ, գտնվելով թաթար-մոնղոլների գերիշխանության և խաների ողորմածության ներքո, մոսկովյան իշխանները սերնդե-սերունդ իրենց հաջորդների մեջ ամրապնդում էին այն գաղափարը, որ հյուսիս-արևելյան Ռուսիայի իշխանությունների մեջ մոսկովյան իշխաններին մեծ ու առանձնահատուկ դեր է վերապահված: Ժամանակի ընթացքում ռուսական որոշ իշխանություններ ինքնական ընդունեցին մոսկովյան իշխանության գերիշխող դերը: Այսպես՝ 1463 թ.-ին՝ Յարոսլավը, 1474 թ.-ին՝ Ռոստոկը, 1478 թ.-ին՝ Նովգորոդն իր անձայրածիր հարուստ տիրույթներով, իսկ 1485 թ.-ին՝ վերջին լուրջ հակառակորդ Տվերի իշխանությունը: Իշխելով Ռուսիայի հյուսիս-արևելքին, 1480 թ.-ին Մոսկվան վերջապես ազատվեց թաթար-մոնղոլական դարավոր լծից: Մոսկվայի՝ գնալով աճող ու ընդլայնվող իշխանությունը պետք է որևէ կերպ պատճառաբանվեր: Եվ ծնվեց այսպես կոչված՝ «երրորդ Դոմնի» գաղափարը, ուսմունք, ըստ որի՝ Դոմնի և Կոստանդնուպոլսի անկումից հետո, Մոսկվան պետք է դառնար երրորդ սուրբ, հավերժ ու համաշխարհային կայսրության կենտրոնը: Միաժամանակ, *Մոսկվայի իշխան Իվան երրորդն իր համար ընտրեց «Դամայն Ռուսիո թագավոր» տիտղոսը և հայտարարեց, որ նախկին Կիևյան Ռուսիայի բոլոր հողերն այդ պահից դառնում են Մոսկովյան Ռուսիայի հողերը:*

Մոսկվայի հայտարարություններն ու գործերը լրջորեն անհանգստացնում էին Լիտվային և ինչպես պարզվեց՝ ոչ անհիմն: 1490-ական թվականներին, երբ մոսկովյան զորքը հասավ Արևելյան Ուկրաինայի սահմաններին և Չեռնիգովի մոտ մոտեցավ Լիտվական սահմանին, ուկրաինացի ուղղափառ իշխաններն ինքնական ընդունեցին Մոսկվայի գերիշխանությունը: Կարելի է նշել նաև այլ փաստեր, թե որքան գրավիչ էր դառնում Մոսկվան Լիտվական պետության ուկրաինացի ավատատերերի համար: Օրինակ՝ դրանից առաջ, դեռ 1481 թ.-ին, Ալեքսանդրի ուկրաինացած թոռ Ֆեդոր Բելսկին մի քանի ուղղափառ իշխանների հետ պայմանավորվեց սպանել այն ժամանակվա լիտվական Մեծ իշխան և լեհական թագավոր Կազիմիր IV-ին և Մոսկվայի իշխանությանը հանձնել ուկրաինական հողերը: Դավադրությունը բացահայտվեց, և չնայած Բելսկուն հաջողվեց Մոսկվա փախչել, բայց մյուս մասնակիցները բռնվեցին և մահապատժի ենթարկվեցին:

Լիտվացիների համար ուկրաինական վերնախավի դժգոհության առավել վտանգավոր պոթենցիալ տեղի ունեցավ 1508 թ.-ին, երբ Մեծ իշխան Սիգիզմունդի դեմ ուկրաինական իշխանների ու ազնվականների ապստամբությունը գլխավորեց արևմտաեվրոպական կրթություն ստացած ազդեցիկ ու տաղանդավոր ավատատեր Միխայլո Չլինսկին: Դիմելով երկողմնակիցներին, նա կոչ էր անում *պաշտպանել «հունական հավատքը» և պայքարել Կիևյան իշխանությունը վերականգնելու համար:* Սակայն շարժումը դեռ չէր հասցրել ծավալվել, երբ հզոր լեհ-լիտվական զորքը Չլինսկուն ստիպեց փախչել Մոսկվա: Չնայած դրան, 1508 թ.-ի ապստամբությունը նշանակալից էր՝ ոչ միայն որպես Լիտվական Մեծ իշխանությունից ուկրաինացիների դժգոհության արտահայտում, այլև նրանով, որ ուկրաինական վերնախավը վերջապես ներքուստ համոզվեց, որ *միայն զենքով պետք է պայքարի իր իրավունքների պաշտպանության համար:*

### Ղրիմի խանությունը

Մի նոր սարսափելի ուժ հայտնվեց Լիտվայի հարավային սահմաններում՝ նոր խնդիրների առջև կանգնեցնելով առանց այդ էլ բարդ իրավիճակում գտնվող Մեծ իշխանությանը: Ոսկե Կորդայի երկարածիզ անկման ու մասնամասն ընթացքում, Մերձսևծովյան շրջաններում տարածված նրա քոչվոր վասալ թաթարները անջատվեցին Գորդայից և Գիրեյների իրենց վիճաստիայի գլխավորությամբ կազմեցին *Ղրիմի խանությունը:* Չնայած որ Ղրիմի խաները և նրանց տոհմակից *Մոզայները* իշխում էին Կուրբանից մինչև Դնեստր ձգվող տափաստանի այնպիսի տարածքներում, սակայն չէին կարողանում իրենց ենթարկել Ղրիմի ափերին կանգնող հունական և ճենովական առևտրական քաղաքները: Այդ պատճառով դիմեցին իրենց հավատակից մահմեդական օսմանյան թուրքերին, որոնք վերջերս էին զավթել Կոստանդնուպոլիսը:

1475 թ.-ին օսմանյան զորքը գրավեց Կաֆան և Ղրիմի նավահանգստային շատ քաղաքներ: Օսմանյան արագ աճող հզոր կայսրությունն արդեն իր ռազմաբեմն ունեցավ Ուկրաինայում, որը 1478 թ.-ին ընդգրկեց ամբողջ Ղրիմի թերակղզին և ստիպեց Մենզլի Գիրեյ խա-



նին ընդունել օսմանյան սուլթանի գերիշխանությունը: Սակայն Ղրիմի խաներին հաջողվեց զգալի չափով պահպանել իրենց անկախությունը և հաճախ վարում էին միայն իրենց շահերից բխող քաղաքականություն: Ղրիմի խաների «արտաքին քաղաքականության» կարևոր քայլերից մեկը հարևան ուկրաինական հողերի վրա հարձակվելն էր՝ «եսիր» (թարգմանաբար՝ ստրուկ) գերելու նպատակով: Այդ գերիներին հետո նրանք վաճառում էին Կաֆայի կամ Կոստանդնուպոլսի շուկաներում: Եվ դարձյալ, տափաստանին մերձակա շրջաններում բնակվող Ուկրաինայի նստակյաց, խաղաղ ժողովուրդը մեծ վտանգի մեջ էր:

## 1569 թվականի Լյուբլինյան ունիան

XVI դարի սկզբին ակնհայտ դարձավ, որ Լիտվական Մեծ իշխանությունն անկման եզրին է: 1522 թ.-ին Մոսկվան նրանից խլեց Ուկրաինայի հյուսիս-արևելքում գտնվող Չեռնիգովն ու Ստարոդուբը: Իսկ 1549 և 1552 թ.թ.-ներին նա չկարողացավ դիմագրավել Ղրիմի թաթարների երկու հզոր ներխուժումներին: Եվ վերջապես, երբ 1562-1570 թ.թ.-ներին Լիտվան ներքաշվեց Մոսկովյան կայսրության դեմ մի նոր, երկարատև պատերազմի մեջ, աստիճանաբար սաստկացող ճգնաժամը հասավ իր բեկունային սահմանին: Ռազմական մեծ կորուստներ կրելով և վախենալով մոսկովյան ներխուժման վտանգից, նա օգնություն խնդրեց Լեհաստանից: Լեհերը պատրաստ էին օգնելու, բայց որոշակի պայմաններով: Չիմա նրանց հիմնական պայմանն այն էր, որ Լեհաստանն ու Լիտվան իրականում միանալով դառնում են քաղաքական մեկ միավոր՝ մեկ միապետի գլխավորությամբ, ինչը որ նախկինում միայն խորհրդանշական բնույթ էր կրում:

Վախենալով գերիշխող դիրքը զիջել լեհական ավատատերերին և անհանգստանալով կաթոլիկական ազդեցության աճի վտանգից, լիտվական և ուկրաինական ավատատերերը դիմադրում էին Լեհաստանի հետ վերջնականապես միաձուլվելուն: Սակայն, դժգոհելով սեփական ավատատերերի իշխանությունից, Մեծ իշխանության միջին և մանր ազնվականությունն աջակցում էր լեհերին՝ հուսալով ստանալ նույն արտոնությունները, ինչպիսիք որ ուներ լեհական շլախտան:

Թագավոր Սիգիզմունդ Ավգուստի՝ 1569 թ.-ին Լյուբլինում գումարած սեյմն անցնում էր դրամատիկ սուր պայքարում: Դժգոհելով բանակցությունների ընթացքից՝ Մեծ իշխանության ավատատերերը՝ բողոքական լիտվական իշխան Կշիշտոֆ Ռաձիվիլի և ուղղափառ ուկրաինական իշխան Կոստյանտին Օստրոժկու գլխավորությամբ, լքեցին սեյմը: Ի պատասխան, լեհերը՝ Պոդոլյեի, Վոլինի և Կիևի մանր ազնվականության աջակցությամբ, հայտարարեցին այդ հողերը Լեհաստանին միացնելու մասին: Դա ստիպեց ըմբոստ ավատատերերին վերադառնալ բանակցությունների սեղանի շուրջ, և 1569 թ.-ի հուլիսի 1-ին կնքվեց Լյուբլինյան ունիան:

Ունիայի ստորագրման հետևանքը նոր միավորման՝ Ռեչ Պոսպոլիտայի ստեղծումն էր, որն ուներ ընդհանուր ընտրովի թագավոր, խորհրդարան (սեյմ), դրամ, հարկեր և ընդհանուր արտաքին քաղաքականություն: Այնուամենայնիվ, Մեծ իշխանությունը որոշ չափով պահպանում էր ինքնավարությունը՝ մասնավորապես տեղական կառավարումը, զորքը, զանձարանն ու դատական համակարգը: Բայց Ուկրաինան դրանում քիչ օգուտ ուներ, քանի որ նախկինում Լիտվական Մեծ իշխանության մեջ մտնող ուկրաինական բոլոր հողերը այսուհետև լեհական թագավորության իշխանության տակ էին անցնում:

1569 թ.-ի Լյուբլինյան ունիան Ուկրաինայի պատմության մեջ շրջադարձային կետ հանդիսացավ: Չնայած իր թերություններին, Լիտվական Մեծ իշխանությունը երկու դար անընդմեջ ուկրաինացիների համար դարձավ այն բարենպաստ միջավայրը, ուր նրանք կարողացան ապրել ու զոյատևել: Ուկրաինական իշխանները, թեկուզ ենթարկվում էին լիտվացիներին, սակայն մեծ ներգործություն ունեին կյանքի հասարակական, տնտեսական, մշակութային ու կրոնական ոլորտներում: Եվ ինչպես վկայում էր Լեհաստանի իշխանության տակ անցած առաջին երկրի՝ Գալիչինայի ճակատագիրը, Լեհաստանի իշխանության տակ ուկրաինական հողերի անցնելու հետ, կասկածի տակ էր դրվում ուկրաինացիների՝ որպես առանձին ինքնուրույն երկրական ընդհանրության գոյությունը:

\* \* \*

Այսպիսով, XIV-XVI դարերում պատմության նախաբեմ ելան երկրներ, որոնք հետագա հարյուրամյակներում որոշելու էին Ուկրաինայի ճակատագիրը: Սկզբում Ուկրաինայում նշանակալի հաջողությունների հասավ Լիտվան, որի ղեկավարումն ամենից լավ ընդունվեց ուկրաինացիների կողմից: Սակայն ավելի մեծաքանակ ու ազդեցիկ լեհական շլախտան հետզհետե լիտվացիներին դուրս մղեց Ուկրաինայից: Լիտվայի վրա մեկ ճնշում գործադրելով, մեկ դիվանագիտական տարբեր հմտություններ կիրառելով, այն իր էքսպանսիայի հիմնական թիրախ ընտրեց ուկրաինական ամենաբերրի ու հարուստ հողերը: Չեռնիգովյան հայտնվեցին նոր պետություններ, որոնք հետո պիտի դերակատարություն ունենային և ազդեցություն գործեին Ուկրաինայի վրա: Դրանք արագ աճող ու հզորացող Մոսկովյան թագավորությունն էր և հզոր օսմանյան կայսրության հետ կապված Ղրիմի խանությունը: Այնուհայտ էր, որ նման պարագայում Ուկրաինան անկախություն ստանալու հեռանկար գրեթե չուներ:

Սակայն այդ ընթացքում ուկրաինական քաղաքական վերնախավն իր իրավունքները պաշտպանելու համար պայքարի մի քանի փորձ արեց: Դրանցից ամենանշանավորը 1340-ական թվականներին Դմիտրի Դեռլոյի կողմից Գալիչինայում իշխանության զավթումն էր (իննց այն ժամանակ, երբ տեղական իշխանական դինաստիան դադարեց գոյություն ունենալուց), ապա՝ 1430-ական թվականներին ուկրաինացիների աջակցությունը Սվիդրկոյայի և 1508 թ.-ի Չլինսկու հակալիտվական ապստամբությունը: Սակայն օտարերկրյա և ամենից առաջ լեհական իշխանությունը ծնունդ տվեց մի նոր երևույթի՝ իշխող պետության կողմից ուկրաինական վերնախավի մշակութային ծուլմանը: Ուկրաինական ազնվականությունը, սեփական ձգտումներն հետզհետե նույնացնելով պետության պահանջների հետ, որը պատրաստ էր նրան ընդառաջելու, աստիճանաբար կորցրեց սեփական շահերը պաշտպանելու ընդունակությունը:



## ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Լյուբլինյան ունիայի հետևանքները միայն քաղաքական չէին: Նրանք մեծ ազդեցություն գործեցին նաև ուկրաինացիների կենսաձևի վրա: Դեռևս մինչև ունիայի կնքելը Ուկրաինայում զարգանում էր բուլղոբիկ մոր սոցիալ-տնտեսական հասարակարգ, որն ընդհանուր քիչ բան ուներ Կիևյան Ռուսիայի ավանդական հասարակարգի հետ: Լեհերի, և նրանց միջոցով էլ Արևմտյան Եվրոպայի հետ հարաբերությունները վճռական ներգործություն ունեցան ուկրաինացիների տնտեսական զարգացման ձևերի վրա: Եվ հենց դա էլ պայմանավորեց արևմտյան տեսակի հասարակության կազմավորումը: Ուկրաինացիների տնտեսական կապերն Արևմուտքի հետ անմախաղեպ սերտացեցին, և Ուկրաինայի հետագա պատմության մեջ դժվար է նշել ուրիշ մի շրջան, երբ արևմուտքի ազդեցությունն ամենօրյա կյանքում այնքան մեծ լիներ, ինչպիսին էր լեհ-լիտվական իշխանության օրոք:

### Ուկրաինացիները Ռեչ Պոսպոլիտայի կազմում

Ռեչ Պոսպոլիտա («Յանրապետություն») անվանումն ստացած լեհ-լիտվական քաղաքական միավորումն ամենամեծն էր Եվրոպայում, իսկ ուկրաինական հողերը՝ և՛ տարածքով, և՛ բնակչությամբ, այդ կայսրության մեծ մասն էին կազմում: Երկրի բնակչության (մոտ 7,5 մլն) 28 %-ը (մոտ 2 մլն) ուկրաինացիներն էին (պետք է նշանակալի, որ այդ ժամանակաշրջանի վիճակագրական բոլոր տվյալները խիստ մոտավոր են): Լեհերը բնակեցնում էին կայսրության տարածքի միայն 180 հազ. քառ. կմ-ը (815 հազ. քառ. կմ ընդհանուր տարածքի դեպքում), բայց կազմում էին նրա ամբողջ բնակչության գրեթե կեսը: Երկրի մյուս խոշոր էթնիկական խմբերից հարկ է նշել նախ՝ լիտվացիներին, ապա և՛ բելոռուսներին, իրենաներին, գերմանացիներին և հայերին:

1569 թ.-ից հետո, երբ վերացան հին ռուսիական իշխանությունների վարչական համակարգի վերջին բեկորները, Ռեչ Պոսպոլիտայի կազմում հայտնված ուկրաինական հողերը բաժանվեցին 6 վոյեվոդությունների: Դրանց չափերի ու բնակչության քանակի վերաբերյալ մոտավոր տվյալները՝ ըստ XIX դարի լեհ պատմաբան Ալեքսանդր Յաբլոնսկու, բերված են աղյ. 1-ում: Ուկրաինայում բնակչության նվազ խտությունը նշում են նաև այն ժամանակի օտարերկրյա ճանապարհորդները: Եթե լեհական հողերում բնակչության խտությունը 1 քառ. կմ-ի վրա կազմում էր 22 մարդ, ապա ուկրաինական հողերում (բացառությամբ Լեհաստանի մոտ գտնվող Պիդլյաշչեի) այն չէր գերազանցում 7 մարդը: Ուկրաինական ամենամեծ՝ Կիևյան վոյեվոդությունը փաստորեն անմարդաբնակ էր: Լիտվական Մեծ իշխանության կազմավորման շրջանում իրավիճակը լրիվ այլ էր: XV դարի սկզբին, երբ Մեծ իշխան Կիտաուսան այն ընդարձակեց՝ հասցնելով մինչև Սև ծովի ափերը, տափաստանում բնակավայրերի պաշտպանության համար ամրությունների երկար պաշտպանագիծ կառուցեց, որն ավելի շատ էր խորացել դեպի հարավ, քան Կիևյան Ռուսիայի ժամանակ էր: Սակայն Դրինի խանության հզորանալու և թաթարների անդադար ու անկասելի հարձակումների հետևանքով նստակյաց ժողովուրդը տեղահանվում ու ձգվում էր դեպի հյուսիս, մինչև որ XV դարի վերջին Ուկրաինայի հարավի 1/3 մասում ոչ բնակավայր մնաց, ոչ նստակյաց մի մարդ:

Ուկրաինական վոյեվոդությունների մակերեսն ու բնակչությունը XVI դարում

Վոյեվոդություն	Մակերեսը հազ. քառ. կմ	Բնակչության թիվը հազ. մարդ	Խտությունը մարդ / քառ. կմ
Գալիչինայի	45	446	10
Վոլինի	42	294	7
Պոդոլյեի	19	98	5
Բրացլավի	35	311	9
Կիևի	117	234	2
Բելզսկի (միայն երկու շրջանը).			
Խոլմշչինայի	19	133	7
Պիդլյաշչեի	10	233	24

### Դասերի համակարգումն Ուկրաինայում

Միջնադարյան շրջանի ավարտին Արևմուտքից Լեհաստանի միջոցով Ուկրաինա ներթափանցեց հասարակության՝ ըստ կարգավիճակի (ստան) դասակարգումը, որը Կիևյան Ռուսիայում հայտնի չէր: Ի տարբերություն դասակարգերի, որոնք արտացոլում էին որոշակի սոցիալական խմբերի տնտեսական վիճակը, դասերն հաստատվում էին օրենքով սահմանված իրավունքների, արտոնությունների ու պարտականությունների հիման վրա: Սկզբում շլյախտայի, հոգևորականության, քաղաքաբնակների ու գյուղացիների միջև իրավական տարբերությունները խիստ սահմանված չէին, և մարդիկ կարող էին մի «դասից» մյուսն անցնել: Սակայն հետզհետե դասային սահմանազատումը, հատկապես շլյախտայի (ազնվականության) և մյուս խավերի միջև, դարձավ ժառանգական և գրեթե անհաղթահարելի: Հավանաբար այն շրջանում, որի մասին ժայտեղ խոսվում է, մարդու դասային պատկանելությունը ինքնագիտակցության և ինքնադրսևորման գրեթե նույնքան (եթե ոչ ավելի) կարևոր չափանիշ էր, որքան ազգությունը կամ հավատը:

### Շլյախտա

XIV-XV դարերում ձևավորված դասերից առաջին և ամենակարևոր դասը ազնվականությունն էր, որի բարձր դիրքը, առնվազն տեսականորեն, հիմնված էր թագավորական կամ մեծիշխանական ծառայության ժամանակ «թափած արյան» վրա: Իսկ գործնականում՝ այդ դասին պատկանում էին տարբեր սոցիալական խմբեր: Երբ Ուկրաինան Լիտվական Մեծ իշխանության կազմում էր, ուկրաինական ազնվականության միջուկը ներկայացնում էին 20-30 իշխանական կամ ավատատիրական տոհմեր, որոնք ծագում էին Ռյուրիկովիչների կամ Գեդիմինասների դինաստիաների՝ նախկինում անկախ իշխաններից: Այդ իշխանական տոհմերը մեծ մասամբ կենտրոնացած էին Վոլինում՝ ուկրաինական ազնվականության այդ անբեր ամրոցում: Նրանցից ամենահարուստը՝ իշխան Օստրոժսկու տոհմը, մեծ կալվածքների տեր էր. դրանք կազմում էին Վոլինի ամբողջ տարածքի երրորդ մասը (14 հազ. քառ. կմ) և ընդգրկում էին 100 քաղաք և 1300-ից ավելի գյուղ: Մյուս հարուստ ու նշանավոր ընտանիքներից արժե նշել Սանիուշկու, Չորտորիսկու, Զբարաժսկու, Վիշնևեցկու, Զասլավսկու և Չետվերտինսկու տոհմերը: Այս տոհմերն զբաղեցնում էին Լիտվական Մեծ իշխանության բարձր պաշտոններից շատերը, իսկ ի նշան նախկինում ունեցած անկախության, նրանց իրավունք էր վերապահվում պատերազմին մասնակցելու իրենց ջոկատներով ու դրոշներով, իսկ դատվելու դեպքում՝ ենթակա էին ոչ թե տեղական փոխանորդի դատաստանին, այլ միայն Մեծ իշխանի:

Սակայն ազնվականության հսկայական մեծամասնության արտոնություններն ամենից առաջ սահմանվում էին նրանց զինվորական ծառայությամբ: Հետագայում այդ ազնվականությանը սկսեցին կոչել լեհական «շլյախտա» բառով (գերմաներեն՝ Geschlecht - տոհմ, ծագում բառից): Ուկրաինական շլյախտայի վերին շերտը կազմում էին մի քանի հարյուր ընտանիք և մասամբ ծագում էին Կիևյան Ռուսիայի բոյարներից: Այդ ընտանիքներն ունեին 10-15 գյուղե-



րից բաղկացած կալվածքներ և տեղական կառավարման մարմիններում բարձր պաշտոններ էին զբաղեցնում: Շյախտայի ստորին շերտերն ամենաբազմամարդն էին: Քաղաքաբնակ և գեղջկական ծագում ունեցող հազարավոր ընտանիքներ շյախտայի կարգավիճակ էին ստանում՝ ծառայելով հեծելազորում (մասնակցելով արշավներին, պաշտպանելով սահմաններն ու ամրոցները, կամ լինելով պարզապես ավատատերերի զինված թիկնապահները): Նման շյախտիչներն այնքան հող ունեին, որ հազիվ կարողանում էին սովամահ չլինել, իսկ նրանց կյանքը գրեթե չէր տարբերվում գյուղացիների կյանքից: Դա վերաբերվում էր հատկապես Գալիչինային, ուր գրեթե ամեն գյուղում կարելի էր հանդիպել հետին մի աղքատի՝ Կուլչիցկի, Յավորսկի, Չայկովսկի կամ Վիտվիցկի ազնվական բարձրահունչ ազգանվամբ:

Չնայած սոցիալ-տնտեսական հսկայական տարբերություններին և շյախտայի ներսում առաջացող տարածայնություններին, 1387, 1413, 1430 և 1434 թ.թ.-ներին թագավորական հրամանագրերով արտոնությունների արժանացած «սուր կրող» մարդկանց մոտ միևնույն արտոնյալ դասի պատկանելու հպարտության զգացում էր ձևավորվում: Լեհաստանում, որտեղ շյախտան աչքի էր ընկնում իր կուռ համախմբվածությամբ և ամենաեզրույն էր եվրոպայում, կազմում էր բնակչության 8-10 %-ը (Եվրոպայի համար միջին ցուցանիշը 1-2 % էր): Լիտվական Մեծ իշխանության ուկրաինական հողերում վերնախավն աստիճանաբար իր հատուկ կարգավիճակն ստացավ, և հավանաբար չէր գերազանցում 5 %-ը:

### Քաղաքաբնակներ

Ուկրաինական հողերի բնակչության 10-15 %-ը քաղաքաբնակներն էին, որոնք նույնպես առանձնացան որպես առանձին դաս: Այն ժամանակներում Ուկրաինայում քիչ չէին խոշոր ու արագ աճող քաղաքները, որոնք հպարտ էին իրենց ինքնուրույնությամբ ու բարեկեցիկությամբ: Նման քաղաքներին լեհական թագավորներն ու լիտվական Մեծ իշխանները Մագդեբուրգյան իրավունք էին շնորհում, որ այն ժամանակներում Եվրոպայում շատ բարձր էր գնահատվում (քաղաքի ինքնակառավարման իրավունք՝ գերմանական Մագդեբուրգ քաղաքի օրինակով): 1356 թ.-ին այդ իրավունքն ստանում է Լվովը, 1374 թ.-ին՝ Կամենեց-Պոդոլսկին, 1432 թ.-ին՝ Լուցկը և 1497 թ.-ին՝ Կիևը: Դա նշանակում էր, որ այդուհետև թագավորական կամ իշխանական աստիճանավորներն իրավունք չունեին խառնվելու այդ քաղաքների բնակիչների ներքին գործերին: Ավելին՝ ըստ Մագդեբուրգյան իրավունքի, այդ քաղաքի բոլոր բնակիչներն հավասար իրավունքներ ունեին: Սակայն իրականում քաղաքացիների սոցիալ-տնտեսական մեծ տարբերություններ կային: Մի քանի մեծահարուստ, այսպես կոչված՝ պատրիկյան ընտանիքներ (օրինակ՝ Լվովում նման 40-50 ընտանիք կար) գրավում էին բոլոր պաշտոնները և օգտվում ինքնակառավարման բոլոր արտոնություններից: Քաղաքային միջին դասը կազմում էին մանր վաճառականներն ու առևտրականները: Իսկ աշխատավորները, որոնք քաղաքի բնակչության մեծ մասն էին կազմում, փաստորեն իրավագուրկ էին, քանի որ ոչ միայն սեփականություն չունեին, այլև նույնիսկ մի փոքրիկ անկյուն, և հաճախ քաղաքային դարպասներից դուրս էին պատսպարվում: Այն ժամանակ էլ (ինչպես բոլոր ժամանակներում) քաղաքի բնակչությունն իրենից էթնիկապես այլազան մի խումբ էր ներկայացնում, որոնց մեջ կարելի էր գտնել ուկրաինացի տեղաբնակներ և լեհական շյախտայի ներկայացուցիչներ, տեղապահներ, գերմանացի արհեստավորներ, հայ ու հրեա վաճառականներ:

### Գյուղացիներ

Եթե վերը նշված երկու դասերը տարբերվում էին իրենց հատուկ իրավունքներով, ապա Ուկրաինայի բնակչության գրեթե 80 %-ը կազմող գյուղացիությունը միայն պարտավորություններ ուներ: Դո՛ղը մշակելու իր միակ իրավունքն ստանալու համար գյուղացին պարտավոր էր ավատատիրոջը կոռ ու բահրա (հողատուրք) վճարել: Եթե գյուղացին կատարում էր այդ պարտավորությունները (իսկ XIV դարում դրանք համեմատաբար թեթև էին. տարեկան կոռը հազվադեպ էր գերազանցում 14 օրը), ապա նրան այդ հողատարածքից չէին վճարում: Բացի դրանից՝ գյուղացին կարող էր իր հողաբաժինը ժառանգել կամ վաճառել:

Այն ժամանակ, երբ հողերը շատ էին, իսկ բնակչությունը՝ քիչ, գյուղացին կարողանում էր իր համար համեմատաբար մեծ իրավունքներ ապահովել: Ստրկությունը, որ մի ժամանակ գոյություն ուներ Ռուսիայում, չէր համապատասխանում ոչ քրիստոնեության բարոյական նորմերին, ոչ Ուկրաինայի տնտեսական նոր պայմաններին և աստիճանաբար վերացավ: Գյուղացին հիմա փաստորեն ազատ մարդ էր, որը կարող էր ավատատիրոջը դատի տալ և

որոշակի հանգամանքներում նույնիսկ կարող էր լքել իր ավատատիրոջ կալվածքը՝ ավելի լավ պայմաններ փնտրելու նպատակով: Ուկրաինայի որոշ շրջաններում գյուղացին նույնիսկ անկախ էր ավատատիրոջից: Օրինակ՝ Կարպատներում, որտեղ գերակշռում էր անասնապահությունը, շատ գյուղեր օգտվում էին այսպես կոչված «նուղդովական օրենքից», համաձայն որի՝ հողատեր-ավատատիրոջը կանոնավոր կերպով վճարում էին միայն բահրա (որպես կանոն՝ ոչխարով): Ավատատերերի և գյուղացիների միջև նման համաձայնագիր նախատեսվում էր նաև «գերմանական օրենքով», ըստ որի՝ ձեռներեց գյուղացին կամ գյուղապետը (սուլտիսը) պայմանավորված կանոնավոր վճարի դիմաց իրավունք էր ստանում ավատատիրոջը հողում գյուղ հիմնել և ինքնուրույն, առանց ավատատիրոջ կողմից որևէ միջամտության, կառավարել այն: Եվ վերջապես, Կենտրոնական և Արևելյան Ուկրաինայի տափաստանամերձ բնակավայրերի գյուղացիներից շատերին ազատում էին ավատատերերի հանդեպ բոլոր պարտավորություններից՝ սահմանային պահազորում ծառայելու համար:

### Լիտվական Ստատուտ (կանոնադրություն)

Դասարակության սոցիալական տարբեր շերտերին Մեծ իշխանության շնորհած բազմաթիվ արտոնություններն ու իրավունքները համակարգված օրենքների ժողովածու ստեղծելու անհրաժեշտություն էին առաջացրել: Դրանում ամենից շատ շահագրգռված էր միջին և մանր շյախտան, որը ձգտում էր մեկընդմիջտ օրենսդրորեն ամրագրել իր արտոնյալ կարգավիճակը: Վերջապես, 1529 թ.-ին լույս տեսավ Լիտվական Ստատուտի առաջին տարբերակը: Շյախտիչների իրավունքներն ամրագրելուց բացի, այն ներառում էր նաև ավանդական իրավունքի դրույթներ, որ գալիս էին դեռ Կիևյան Ռուսիայից: Միաժամանակ, իրավաբանական նոր հասկացություններ էին ներմուծվել, որ գալիս էին Արևմուտքից, հատկապես Գերմանիայից:

Ստատուտի երկրորդ (1566 թ.) և երրորդ (1588 թ.) տարբերակները մի շարք նոր, կարևոր լուսացումներ էին պարունակում՝ կապված Լյուբլինյան ունիայի հետևանքով առաջացած փոփոխությունների հետ:

Ուկրաինայի իրավական պատմության մեջ Լիտվական Ստատուտի նշանակությունը դժվար է գերազանահատել: XV-XVI դարերում Ուկրաինայի սոցիալ-տնտեսական արմատական փոփոխությունների օրինականացումից բացի, այն նաև հիմք հանդիսացավ հաջորդ՝ այսպես կոչված «կոզակական» դարաշրջանի իրավական համակարգի համար: Նույնիսկ XIX դարում, Արևելյան Ուկրաինայի որոշ շրջաններում օրենքներն ըստ էության հիմնվում էին այս Ստատուտի վրա:

Պետք է նշել նաև էլի մի կարևոր դերի մասին, որ Ուկրաինայում խաղացին դասային համակարգն ու Լիտվական Ստատուտը: Դրանց կիրառումով ուկրաինացիների գիտակցության մեջ աստիճանաբար ամրագրվեց օրենքով հաստատված և երաշխավորված իրավունքի արժեքը: Իսկ դրա գիտակցումը ուկրաինացիներին սերտորեն կապում էր Արևմուտքի իրավական և քաղաքական մտքի հետ: Դրան հակառակ, Կիևյան Ռուսիայի մյուս ճյուղավորումը՝ Մոսկովիան, մի քանի հարյուրամյակ թաթար-մոնղոլների իշխանության տակ գտնվելու պատճառով, զրկված էր Արևմուտքում ձևավորվող ու զարգացող իրավական նորմերին ծանոթանալու հնարավորությունից:

## Ավանդական տնտեսություն

Մինչև XVI դարի կեսերը ավատատերը մթերք էր արտադրում հիմնականում իր ընտանիքի կարիքները հոգալու, իր անասուններին կերակրելու և հաջորդ տարվա ցանքը ապահովելու համար: Երկարատև ռազմական արշավանքներին մասնակցելը, ինչպես նաև կանխիկ դրամի ու շուկաների պակասությունը ավատատիրոջը զրկում էին առևտրական գործունեությանը զբաղվելու ցանկությունից: Այդ պառճառով էլ, բացի այն հողերից, որտեղ իր դաստակերտն էր, ավատատերը մնացած հողերը սովորաբար բաժանում էր գյուղացիներին: Այդ ժամանակը գյուղացիների համար ոսկեդար էր: Վերնախավը չէր խառնվում նրանց գործերին, գաղութացման հետևանքով հողերը շատանում էին, գյուղատնտեսական գործիքները կատարելագործվում էին և բարձրանում էր արտադրողականությունը: Եվ քանի որ ավատատիրոջ նկատմամբ պարտավորություններն ու բահրան մնում էին անփոփոխ, ապա գյուղացու եկամուտներն աճում էին:



Ունևոր գյուղացիների համար (իսկ նրանց թիվը մեծ էր) սովորական երևույթ էր 8-12 հա հողաբաժին մշակելը, ծի, մեկ-երկու եգ, երկու-երեք կով, մի քանի խոզ և տասնյակ հավ ու սագ պահելը: Միջակ ուկրաինացու օրաբաժինը կազմում էր մոտ 0,6 կգ հաց, 2,5 լ գարեջուր: Մյուս սովորական ուտելիքն էր շիլան, կաթնաշոռը, ձուն և տարվա եղանակին համապատասխան մրգերն ու բանջարեղենը: Միս հազվադեպ էին ուտում, որպես կանոն՝ մեծ տոներին: Միջին ազնվականի օրաբաժինը քիչ էր տարբերվում գյուղացու օրաբաժնից, բացառությամբ՝ որ նրա ընտանիքն ավելի շատ միս էր օգտագործում և նրանց սեղանին երբեմն հայտնվում էին այնպիսի նուրբ խորտիկներ, ինչպես օրինակ անդրծովյան համեմունքները, չամիչը, թուզը: Քաղցրավենիքը հազվագյուտ երևույթ էր և նույնիսկ հարուստ վերնախավը միայն մեծ տոներին կարող էր իրեն թույլ տալ գինի խմել: Այդուհանդերձ՝ նույնիսկ լավագույն ժամանակներում քաղաքաբնակների և գյուղացիների մեծ մասը մշտապես քաղցում էր: Կյանքի վատ պայմանների, հաճախակի բռնկվող համաճարակների, մանկական բարձր մահացուության պատճառով նրանց կյանքի միջին տևողությունը կազմում էր 25-30 տարի:

XIV-XV դարերը քաղաքաբնակների համար նույնպես բարգավաճման շրջան էր: Քանի որ նրանք վերնախավի համար եկամտի աղբյուր լինելուց բացի, նաև՝ տեղական ավատատերերի հետ հնարավոր տարածայնությունների դեպքում, հուսալի դաշնակիցներ էին, ուստի և լիտվական, և լեհական ղեկավարությունը ոչ միայն վերակառուցում ու ծաղկեցնում էին հին քաղաքները, այլև նորերն էին հիմնում: Ճիշտ է, որոշ տիրակալներ երբեմն մեծ եկամուտներ շորթելու նպատակով հաճախ մեծ մաքսատուրքեր էին սահմանում, իրենք էին որոշում, թե որ քաղաքը որ երկրների հետ պետք է առևտուր անի, կամ ջեղերին էին միայն թույլ տալիս ներմուծված ապրանքների առևտուրը, սակայն, դրա հետ մեկտեղ, ինչպես արդեն նշել ենք, քաղաքներին մեծ ինքնավարություն շնորհելով և քաղաքացիներին որոշակի իրավունքներով օժտելով՝ նպաստում էին քաղաքների զարգացմանն ու քաղաքային բնակչության աճին:

XV դարի սկզբին Ուկրաինայի ամենամեծ քաղաքը Լվովն էր, որն ուներ մոտ 10 հազ. բնակիչ (Կիևը, որն անպաշտպան էր թաթարների հարձակումների դեմ և որով այլևս կարևոր առևտրային ուղիներ չէին անցնում, ընդամենն ուներ 3 հազ. բնակիչ): Լվովում 36 տարբեր արհեստների ներկայացուցիչներ կային, որոնք միավորված էին 14 համքարություններում: Պետք է ասել, որ համքարությունները, կամ գիլդիաները, որ Ուկրաինա ներմուծեցին Գերմանիայից գաղթած արհեստավորները, քաղաքացիների համար շատ լավ ձև էր՝ իրենց շահերը պաշտպանելու և իրենց արտադրանքի որակն ու քանակը վերահսկելու համար: Միայն Լվովում 500-ից ավելի վարպետ-արհեստավորներ կային, որոնք միավորված էին իրենց, կամ իրենց հարազատների հետ կազմած համքարություններում: Քանի որ արագ աճող քաղաքային բնակչությունը սննդամթերքի, իսկ գյուղերի բնակչությունը՝ քաղաքացիների արտադրանքի կարիքն էին զգում, տեղական առևտուրը՝ ամենայն առևտրի հիմքը, ծաղկում էր ապրում պարբերաբար կազմակերպվող քաղաքային տոնավաճառներում: Ուկրաինայի (հատկապես՝ արևմտյան) քաղաքների բնակիչները հաջողությամբ զբաղվում էին նաև արտաքին առևտրով, քանի որ Լվովը և Կամենեց-Պոդոլսկին գտնվում էին Արևմտյան Եվրոպայից Դրին և Արևելքի երկրներ տանող առևտրական գլխավոր ուղիների վրա:

Եվ սակայն, եվրոպական մյուս երկրների համեմատ, Ուկրաինայում քաղաքները քիչ էին: Այսպես՝ համեմատաբար խիտ բնակեցված Վոլինում, յուրաքանչյուր 300 քառ. կմ-ին մի քաղաք էր ընկնում: Ոչ միայն քաղաքների քչությունը, այլև էթնիկական կազմը սահմանափակում էին քաղաքների դերն ուկրաինացիների կյանքում: Շուտով Լվովի պես մեծ քաղաքներում բնակչության մեծամասնություն կազմեցին ներգաղթածները՝ գերմանացիներ, իրեաներ, լեհեր, հայեր, հույներ, որոնց լիտվացի ու լեհ ղեկավարությունը իրավիճել էր Ուկրաինայի քաղաքների զարգացման համար: Ամենից շատ լեհերն ու գերմանացիներն էին, որոնց հավատը՝ կաթոլիկությունը, շուտով գերիշխող դարձավ քաղաքներում: Իսկ այն բանից հետո, երբ Գալիչիան, իսկ ավելի ուշ նաև Ուկրաինայի մյուս շրջանները միացվեցին Լեհաստանին, ուկրաինական քաղաքների լեզվա-մշակութային լեհացումը լայն թափ ստացավ:

Այս ամենը խիտ սահմանափակումներ առաջացրեց ուկրաինացի քաղաքաբնակների համար: Հայտարարելով, որ իրավունքներն ու առավելությունները վերաբերվում են միայն կաթոլիկներին, լեհացած քաղաքային վերնախավը ուղղափառ ուկրաինացիներին դուրս էր մղում դատարանից ու քաղաքային հաստատություններից: Ի վերջո, որոշակիորեն սահմանափակվեց նաև քաղաքաբնակ ուկրաինացիների քանակը: Օրինակ՝ Լվովում միայն 30 ուկրաինական ուղղափառ ընտանիք իրավունք ուներ ապրելու, այն էլ՝ փոքրիկ ու նեղիկ Ռուսիական փողոցում: Արգելված էին նույնիսկ ուղղափառների ծխական շքերթները, մինչ-

դեռ ուղղափառներին ստիպում էին հարկ վճարել կաթոլիկ քահանաներին: Մի խոսքով, ուկրաինացիների մեծ մասի համար Ուկրաինայի քաղաքները դարձան օտար բնակավայրեր և դարեր շարունակ այդպիսին էլ մնացին:

### Հացահատիկի մեծ բում

XVI դարը եվրոպական շատ երկրների համար դարձավ տնտեսական վերելքի դար: Եվրոպայի բնակչությունը շատ արագ էր աճում: Համապատասխանաբար աճում էին նաև սննդամթերքի գները: Կարևոր մեկ պատճառ, որ 1500-1600 թ.թ.-ների միջև ընկած ժամանակաշրջանում առաջ բերեց այսպես կոչված՝ գների հեղափոխություն: Դա նոր երկրից դեպի Եվրոպա ոսկու և արծաթի ներհոսքն էր, որի հետևանքով 4-5, որոշ տեղերում նույնիսկ 8-10 անգամ բարձրացան սննդամթերքի գները: Արևմտյան բազմամարդ քաղաքները հացահատիկի մեծ պահանջարկ ունեին: Դրան արձագանքեցին Ռեչ Պոսպոլիտայի հյուսիսային և կենտրոնական շրջանների հողատերերը, որոնք ավելի ու ավելի էին մեծացնում Արևմտյան Եվրոպա առաքվող հացահատիկի խմբաքանակները: Միաժամանակ, հարավային շրջաններում, ինչպես օրինակ՝ Պոդոլյեն, որ հեռու էր ընկած Վիսլա գետով անցնող «հացահատիկային մեծ ուղուց», մեծ քանակությամբ անասուններ էին բուծում, որոնք հետո հսկայական հոտերով բշտում էին Հարավային Գերմանիա և Իտալիա: Եվ այսպես, սկսվում էր արևելաեվրոպական «պարենային մեծ ռևոլյուցիան», իր հետևանքներով շատ կարևոր մի գործընթաց, որտեղ փոքր դեր չէր խաղում նաև Ուկրաինան:

Պարենամթերքն առավել արդյունավետ և մեծ քանակությամբ արտադրելու համար ավատատերերն իրենց կալվածքները վերածում էին առևտրական ուղղվածությամբ տնտեսությունների, որոնք կոչվում էին «ֆիլվարկ»: Զգտելով գյուղացիական հողերն իրենց անմիջական հսկողության տակ վերցնել, միացնում էին իրենց կալվածքներին և բահրայի փոխարեն առավել մեծ կոռ էին պահանջում գյուղացիներից: Ի տարբերություն Լեհաստանի, որտեղ ֆիլվարկային տնտեսությունը մեծ տարածում գտավ, Ուկրաինայում այդ գործընթացը ղարկաղ էր տեղի ունենում: Այդ տնտեսությունների համար էականորեն անհրաժեշտ էին մոտ շուկաներ ու մեծ աշխատուժ: Չնայած այդ պայմաններն առկա էին Գալիչիայում, Վոլինում և Պոդոլյենում, ինչի շնորհիվ այնտեղ առաջացան մեծ տնտեսություններ, սակայն դրանք չկային Կենտրոնական և Արևելյան Ուկրաինայում, որտեղ մինչ տնտեսություններ ստեղծելը, հարկավոր էր յուրացնել խոպան հողերը: Սակայն հատկապես Կենտրոնական և Արևելյան Ուկրաինայի հսկայական, սակավաբնակ հողերն էին առավել գայթակղում լեհ և լեհացած խոշոր կալվածատերերին, որոնք մեծ կապեր ունենալով արքունիքում, հույս ունեին այդ հողերը նույնիսկ ծրի ձեռք բերել: Իսկ հողերին տիրանալուց հետո պետք էր հոգալ գյուղացուն որևէ կերպ կապել այդ հողերի հետ: Այդ նպատակով ստեղծվեցին սլոբոդաները, այսինքն՝ բնակավայրեր, որոնք 15-30 տարով ազատվում էին և կոռից, և բահրայից: Այդ պատճառով սակավաբնակ Մերձդնեպրովյեում ֆիլվարկային տնտեսությունների համակարգն ուշացումով զարգացավ, որի ընթացքում ի հայտ եկած տեղական առանձնահատուկ պայմանների ազդեցությամբ նշանակալից փոփոխությունների ենթարկվեց:

### Շյախտայի հզորացումը

Ցնտեսական հզորացումը հնարավորություն տվեց Ռեչ Պոսպոլիտայի շյախտային առավել ընդլայնել իր առանց այն էլ համապարփակ արտոնություններն ու ամրապնդել քաղաքական ազդեցությունը: Շյախտան ամենից առաջ ձգտում էր նվազագույնի հասցնել իր պետական պարտավորությունները: Արքաներից խնդրելով ու նորանոր զիջումներ ձեռք բերելով, վերջիվերջո, հասավ նրան, որ ընդհանրապես հարկերից ազատվեց: Ավելին՝ շյախտիչներն արդեն դժկամությամբ էին կատարում իրենց դասի ուղղակի պարտականությունը՝ «Արյուն թափել հանուն հայրենիքի»: Երբեմնի հպարտ ու ռազմաշունչ ազնվականներն արագորեն վերածվեցին սովորական ձեռներեցների և արդեն չէին ուզում հասկանալ, թե հանուն ինչի այդ եկամտաբեր գործը թողած, իրենց կյանքը վտանգեն թագավորական ռազմարշավներում: Եվ նրանք, ինչպես կարողանում էին, միջամտում էին արտաքին քաղաքականությանը, ձեռք բարձրացնելով նույնիսկ արքաների՝ պատերազմ սանձազերծելու «սուրբ» իրավունքի վրա: XV դարի վերջին և XVI դարի սկզբին շյախտան ամենուր իրեն ենթարկեց տեղական կառավարման մարմինները՝ սեյմերը, իսկ շուտով նաև Ռեչ Պոսպոլի-



տայի Մեծ սեյմը, դրանով գործնականում տիրանալով երկրի գերագույն իշխանությանը՝ ինչպես օրենսդրական, այնպես էլ՝ գործադիր: Հիմա շլյախտան կարող էր սահմանափակել իր թագավորների արտոնությունները: Եվրոպայի ոչ մի երկրում վերնախավը նման իրավունքներ չունեն: 1505 թ.-ին շլյախտայի կողմից վերահսկվող սեյմն ընդունեց «Nihil novi» կոչվող մի օրենք, ըստ որի՝ թագավորին արգելվում էր առանց շլյախտայի ներկայացուցիչների համաձայնության որևէ հրամանագիր հրապարակել: Իսկ 1573 թ.-ին, երբ մահացավ Յագելոնների դինաստիայի վերջին ներկայացուցիչը, շլյախտան իրավունք ստացավ իրեն համար միապետ ընտրել և սահմանել նրա արտոնությունները՝ համաձայն հատուկ պայմանագրի, որ կոչվում էր «Pacta conventa»:


Թագավորական իշխանության սահմանափակումը շլյախտայի, չնայած կարևոր, սակայն միակ նպատակը չէր: Նաև ձգտում էր իրեն ապահովել հասարակության մյուս բոլոր դասերի կողմից իրենց արտոնյալ կարգավիճակին սպառնացող ցանկացած ոտնձգությունից: Սակայն մեծագույն վտանգը շլյախտային սպառնում էր ոչ թե որևէ այլ դասից, այլ հենց իր դասից: Իսկապես էլ, մոտ հարյուր «ազնվագարմ» ընտանիք, որ իրենց մեծահարուստ էին կոչում, տիրացել էին մեծագույն պաշտոններին ու տիրույթներին և միշտ պատրաստակամ էին շլյախտայի մյուս՝ «ցածր» խավին շահագործելու, ատելություն էին ծնում հենց այդ խավի «ազնվական եղբայրների» մեջ: Այդ իսկ պատճառով, XVI դարի սկզբին շլյախտային հաջողվեց, թեկուզև կարճ ժամանակով սահմանափակել ավատատերերի՝ պետական պաշտոններ և հողեր ստանալու իրավունքները:

Շլյախտայի մյուս «գլխացավանքը» քաղաքներն էին: Ի դեմս քաղաքների տեսնելով առևտրի իր մրցակիցներին, շլյախտան ամեն կերպ ձգտում էր վնասել նրանց գործունեությանը: Առաջին հերթին շլյախտան հասավ նրան, որ 1505 թ.-ին քաղաքներից շատերը գրկվեցին սեյմում ձայնի իրավունքից: Եվ արդեն 1565 թ.-ին, սեյմը, ուր ամբողջովին գերիշխում էր շլյախտան, ընդունում է օրենք, որով Ռեչ Պոսպոլիտայի վաճառականներին արգելվում էր զբաղվել արտերկրյա առևտրով: Այդպիսով, շլյախտան ձգտում էր իր ճանապարհից հեռացնել քաղաքաբնակ միջնորդ-վաճառականին, և արդյունքում արտասահմանյան վաճառականներն առևտուր էին անում անմիջապես վերնախավի հետ՝ նրանց թելադրած պայմաններով: Միաժամանակ սեյմը շլյախտային ազատեց ապրանքներ ներմուծելու և արտահանելու մաքսատուրքից: Չկարողանալով մրցակցել այդ դասի հետ, քաղաքացիները որոշեցին մերձենալ նրանց՝ սկսեցին իրենց կապիտալը ներդնել ֆիլվարկների մեջ և իրենց դուստրերի համար փեսացու փնտրել ազնվականների շրջապատից: Անկում ապրող քաղաքներում աշխատանք չգտնելով, արհեստավորներն էլ իրենց արհեստանոցները տեղափոխում էին հարուստ շլյախտիչների կալվածքները: Դրա հետևանքով Ուկրաինայում, ինչպես նաև ողջ Ռեչ Պոսպոլիտայում, քաղաքների զարգացման տեմպերն զգալիորեն նվազեցին:

Պետք է սակայն ի նկատի ունենալ, որ բոլոր այն արտոնությունները, որ ձեռք բերեց լեհական շլյախտան, Լիտվական Մեծ իշխանության ուկրաինացի ազնվականության վրա, ամեն դեպքում մինչև 1569 թ.-ը, չէին տարածվում, իսկ առավել ևս ուկրաինական ազնվականության ստորին շերտերը երազել անգամ չէին կարող նման արտոնությունների մասին: Մեծ իշխանը ուկրաինական վերնախավին հեշտությամբ կարող էր գրկել իր հողերից, իսկ նրա պարտականություններն իշխանի նկատմամբ ավելի շատ էին, քան լեհական շլյախտայի պարտականությունները: Իրականում, ինչպես արդեն գիտենք, Լեհաստանին միանալու գլխավոր պատճառը լիտվական ազնվականության (հատկապես ցածր խավի) ձգտումն էր լեհական շլյախտային համագոր իրավունքներ ձեռք բերելը: Այնինչ ստացվում էր, որ ուկրաինական ազնվականությունն ամեն ինչում ստիպված էր ընդօրինակել և հարմարվել լեհական օրենքներին, այսինքն՝ ընդունել նրանց կառավարման համակարգը, օրենքները, սովորությունները, և վերջապես՝ լեզուն: Բացի այդ, ըստ լեհական օրենքների, շլյախտիչի բոլոր իրավունքներն ունենալու ամենակարճ ուղին կաթոլիկություն ընդունելն էր: Մի խոսքով, որպեսզի ուկրաինացի ազնվականը լեհ շլյախտիչի իրավունքներն ունենար, և հետևաբար, նույնքան ամենագոր լիներ, զնալով ավելի ու ավելի պետք է նմանվեր լեհերին:

### Գյուղացիության ճորտացումը

Շլյախտայի հարստանալուն զուգընթաց գյուղացիությունն աղքատանում էր: Ամսահման հարստացած և բացարձակ իշխանության հասած շլյախտիչը գյուղացուն դիտում էր միայն



Լեհ-Լիտվական Ռեչ Պոսպոլիտայի քարտեզը



որպես էժան աշխատուժ: Ամբողջովին վերահսկելով Ռեչ Պոսպոլիտայի քաղաքական համակարգը, շյախտան կարող էր ցանկացած չափով խստացնել իր «օրինական» իրավունքներն ու պահանջները գյուղացիների նկատմամբ: Այսպես օրինակ, դեռևս XV դարում Գալիչինայում գյուղական համայնքի (ծխի) պարտականությունը կալվածատիրոջ նկատմամբ ընդամենն այն էր, որ յուրաքանչյուր ծխից երկու-երեք հոգի տարեկան մինչև 14 օր պետք է անվճար աշխատեր ավատատիրոջ համար: Սակայն հարյուր տարի անց արդեն՝ ծխի յուրաքանչյուր չափահաս անդամ պարտավոր էր շյախտիչի կալվածքում աշխատել շաբաթական երկու օր: Դա ամրագրված էր 1557 թ.-ին Լիտվական Մեծ իշխանությունում ընդունված այսպես կոչված՝ «Կանոնադրություն հողաբաժնի մասին» օրենքում («Կանոնադրության» սկզբնական նպատակը հողաչափական միասնական համակարգ հաստատելն էր, որն աստիճանաբար վերածվեց բռնաշխատանքի ռենտայի բարձրացման միջոցի): Հետագայում գյուղացիներին ստիպեցին աշխատել շաբաթական 3-4 օր, երբեմն էլ՝ ավելի: Սեփական հողաբաժնի վրա աշխատելու ժամանակի սղության պատճառով, գյուղացին հնարավորություն չուներ ոչ միայն օգտվելու սննդամթերքի գների բարձրացումից, այլև՝ պահպանելու նախկին կենսամակարդակը:

Գյուղացիներին շահագործելն առավել հեշտացնելու համար շյախտան ջանում էր ցանկացած ձևով ազատվել գյուղական համայնքների ինքնավարության ավանդական ձևերից: Շյախտան, ուժով լինելով, թե կաշառքով, խաղից դուրս էր թողնում տանուտերին, գյուղապետին և այլ «մոլորվական» կամ «գերմանական» գյուղացիների ավանդական «իրավունքը» պահպանողներին և հաստատում էր «լեհական օրենքը»՝ գյուղացու ուղիղ ենթակայությունը ավատատիրոջը: Դեռևս 1457 թ.-ից շյախտիչն իր գյուղացիներին ինքնուրույն դատելու և պատժելու իրավունք ստացավ, և հենց այդ պահից նրա իշխանությունը գյուղում դարձավ համապարփակ ու անառարկելի: Գյուղացու անձնական կյանքում արդեն չկար որևէ բնագավառ, որին կալվածատերն իրավունք չունենար միջամտելու: Բանն այնտեղ հասավ, որ որոշ հողատերեր հարկ էին վերցնում գյուղացուց՝ ամուսնության թույլտվության համար, կամ ստիպում էին օգտվել պանական ավրադացներից ու միկիտաններից, որոնք հաճախ վարձով տրվում էին հրեաներին: Եվ վերջապես, «Հողաբաժնիների կանոնադրության» ի հայտ գալով, գյուղացին վերջնականապես զրկվեց նաև սեփական հող ունենալու իրավունքից: այն հողը, որի վրա ապրում ու մշակում էր գյուղացին, կալվածատիրոջ սեփականությունն էր դառնում: Գյուղացին փորձեց օգտվել իր վերջին հնարավորությունից՝ կալվածքն ու տիրոջը լքելու և ավելի լավ տեղ ու պայմաններ փնտրելու իրավունքից: Սակայն այդ վերջին դուռն էլ փակվեց նրա առաջ: Սկզբում թույլատրվեց կալվածատիրոջից հեռանալ տարվա որոշակի սահմանված օրերին, հետո՝ միայն Ծննդյան տոներից առաջ, այն էլ՝ որոշակի գումար մուծելուց և իրեն փոխարինող գտնելուց հետո: 1496 թ.-ին այդ «իրավունքն» էլ ավելի կրճատվեց, տարեկան ամեն գյուղից միայն մեկ ընտանիք կարող էր լքել կալվածքը: Եվ վերջապես, 1505 թ.-ին սեյմը վերջնականապես արգելեց գյուղացուն լքել գյուղն առանց կալվածատիրոջ թույլտվության: Լրիվ իրավագուրկ և կամայականորեն շահագործվող գյուղացին դարձավ ճորտ և այլևս ոչնչով չէր տարբերվում մեծատոհմիկ հողատիրոջ ստրուկից: Այսպիսով, երբ Արևմտյան Եվրոպայում ճորտատիրությունը մեռնում էր, Արևելյան Եվրոպայում, այդ թվում և Ուկրաինայում այն, էնգելսի խոսքերով՝ վերածնվում էր մեկ այլ՝ շահագործման հատուկ ձևով:

Սակայն Ուկրաինայում գյուղացիության ճորտացման աստիճանը տարբեր շրջաններում տարբեր էր: Խիտ բնակեցված շրջաններում, ինչպիսիք էին Գալիչինան ու Վոլինը, ուր գերազանցում էր լեհական ազդեցությունը, ճորտացումը համատարած ու դաժան բնույթ էր կրում: Իսկ սակավաբնակ շրջաններում, ինչպիսիք էին Կարպատներն ու հատկապես Մերձդնեստրովյեն, ուր աշխատուժի պակաս էր զգացվում, հողատերերը ստիպված, որոշ հարցերում զիջում էին գյուղացիներին: Նրանք փաստորեն չգիտեին ինչ բան է ճորտությունը: Բացի այդ՝ ուկրաինական գյուղացիությանը ստրկացնելն այնքան էլ հեշտ չէր: 1490-1492 թ.թ.-ներին Մոլդովան, Բուկովինան և Գալիչինան ընդգրկվեցին Մոխայի գլխավորած գյուղացիական ապստամբության մեջ, որին մասնակցում էր մոտ 10 հազ. մարդ, բայց նրանց էլ, ինչպես բոլոր ժամանակների նման շարժումներին, ուղեկցում էին դասական թերությունները՝ առաջնորդների անփորձությունը, անկազմակերպվածությունը, մարտական վատ պատրաստվածությունը, ներքին խնդիրներին առավել նշանակություն տալը: Այս ամենի միասնական արդյունքում նրանք շուտով պարտություն կրեցին, կրկին ապացուցելով այն բացարձակ ճշմարտությունը, որ միայն գյուղացիությունը, առանց ռազմական ու քաղաքական գործ-

րում փորձ ունեցող դասի աջակցության, ի վիճակի չէ կործանել ավատատիրոջ իշխանության և արտոնությունների մենաշնորհը:

\* \* \*

Լեհ-լիտվական Ռեչ Պոսպոլիտայի կազմի մեջ մտնելով, Ուկրաինան նույնպես հայտնվեց Արևմուտքի բարեբեր ու խթանիչ ազդեցության ոլորտում: Միաժամանակ, Ռեչ Պոսպոլիտայի սոցիալ-տնտեսական կացութաձևում կարծես թե արդեն ծրագրավորված էին բոլոր այն սուր հակասություններն ու բարդ խնդիրները, որոնց ուկրաինացիներն ու լեհերը դեռ պիտի առնչվեին դարեր շարունակ: Հացահատիկային բումի արդյունքում, Ուկրաինայի տնտեսությունը (ինչպես, ի դեպ, և Լեհաստանի) դարձավ չափազանց անհավասարակշիռ, միակողմանի, քանի որ գրեթե ողջ տնտեսական գործունեությունը կենտրոնացված էր գյուղատնտեսության վրա, իսկ քաղաքներն ու արդյունաբերությունը լճացման շրջան էին ապրում: Տնտեսական հավասարակշռության խախտումը ուղեկցվում էր աճող սոցիալական լարվածությամբ: Որքան շատ անախադեպ արտոնություններ էր կորզում շյախտան, այնքան սարսափելի ձևով վատթարանում էին գյուղացիության կենսապայմանները: Եվ վերջապես, որքան շատ էին իշխանությունը, հարստությունն ու արտոնությունները զուգորդվում լեհերի հետ, այնքան ավելի էր կուտակվում ու աճում դժգոհությունը նրանց մոտ, ովքեր չէին կարողանում կամ չէին ցանկանում նախապատվությունը տալ լեհական կենսաձևին ու մշակույթին:



## ԿՐՈՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

Ուկրաինայի պատմության մեջ դարեր շարունակ առանցքային թեմաներից մեկը պայքարն էր ազգային արվեստի ու մշակույթի յուրօրինակությունը պահպանելու համար: Մշտապես գտնվելով օտար պետությունների գերիշխանության տակ, նրանք բազմիցս ենթարկվել են իշխողների մշակույթի մեջ ձուլվելու վտանգին: XVI դարում, երբ ուղղափառ ուկրաինացիներին վիճակվեց սերտ հարևանությամբ ապրել կաթոլիկ լեհերի հետ, նրանց մեջ սուր դիմակայություն առաջացավ, որը վերածվեց կրոնական ու մշակութային պատերազմի: Նախապես ձևավորվելով ու զարգանալով որպես պայքար ուղղափառության ու կաթոլիկության միջև (այն ժամանակներում ողջ Եվրոպայում կրոնը բոլոր զաղափարախոսությունների հիմնաքարն էր), Ուկրաինայի պատմության մեջ այն սկիզբ դրեց զաղափարախոսական առաջին մեծ բանավեճին: Թվում է, թե բացառապես կրոնական հարցերին վերաբերելով (օրինակ՝ քրիստոնեական երկու եկեղեցիներից՝ ուղղափառ և կաթոլիկ, ո՞րն է իսկապես ապահովում հոգու փրկությունը), այն նաև մի խնդիր էր շոշափում, որն Ուկրաինայի պատմության մեջ դարձավ հարակա, այն է՝ ուկրաինացիների մշակութային ժառանգությունը դատապարտված է մահվան, թե՛ վիճակված է ապրել:

### Եկեղեցի և մշակույթ

XV-XVI դարերում Ուկրաինայում ուղղափառությունը Կիևյան Ռուսիայի ժամանակների հանգույն մնում էր որպես մշակույթի հոմանիշ: Ավելին, նրա դերը հասարակական կյանքում զնալով աճում էր. սեփական պետականության բացակայության պայմաններում եկեղեցին հասարակական ինքնադրսևորման և ազգային միասնականության արտահայտման միակ միջոցն էր: Դժբախտաբար, երբ հզոր ու ոգեշնչող եկեղեցի էր պետք, ուղղափառությունը մեծ անկում ապրեց: Այն առավել, քան կաթոլիկությունը կամ բողոքականությունը, պետական աջակցության կարիք էր զգում: Կիևյան Ռուսիայի կամ Գալիցիա-Վոլինյան իշխանության շրջանում այդ աջակցության շնորհիվ եկեղեցին ծաղկում էր ապրում: Սակայն նոր՝ լիտվական և լեհական կաթոլիկ ղեկավարների վրա ուղղափառ եկեղեցին իհարկե չէր կարող հենվել: Առաջնահերթությունը տալով կաթոլիկ կոստյուլին (լեհական կաթոլիկ եկեղեցուն), ղեկավարները ուղղափառ եկեղեցուն խորթ զավակի պես էին վերաբերվում:

Լիտվայի իշխանության տակ անցնելով, ուկրաինացիներն, համենայն դեպս, հիմքեր ունեին լավատեսորեն մոտենալու սեփական եկեղեցի ունենալու հարցին: Լիտվական Մեծ իշխանությունը, չջանկանալով իր բազմաթիվ ուղղափառ հպատակներին թողնել մոսկովյան միտրոպոլիտության գերակայության տակ, 1458 թ.-ին վերականգնեց Կիևի թեմը: Ուկրաինայում և Բելոռուսիայում ընդգրկելով 10 եպիսկոպոսություն, նոր թեմը եկեղեցական կապերը խզեց Մոսկվայի հետ և կրկին անցավ Կոստանդնուպոլսի հայրապետության տակ: Սակայն կիրառելով այն ժամանակվա սովորույթը, Մեծ իշխանները, հետագայում նաև լեհական թագավորները, գրավեցին հովանավորության իրավունքը, այսինքն՝ կարող էին ուղղափառ եպիսկոպոսներ և նույնիսկ միտրոպոլիտ նշանակել: Դեռևս 1458 թ. «Երեմիայի» եկեղեցական կարևոր խնդիրներից շատերը սկսեցին որոշել աշխարհիկ ղեկավարները, որոնք պատկանում էին մյուս՝ ուղղափառությանը թշնամաբար տրամադրված եկեղեցուն: Այդ հանգամանքն աղետաբեր հետևանքներ ունեցավ: Աշխարհիկ իշխանության՝ եպիսկոպոս նշանակելու իրավունքը սասանեց միտրոպոլիտի հեղինակությունը: Իսկ այն, որ յուրաքանչյուր եպիսկոպոս ինքն էր սահմանում իր օրենքները, խախտեց ուղղափառ եկեղեցու հովվապետական կար-

գապահությունը: Առավել կործանարար էր կաշառակերությունը, որ աշխարհիկ հովանավորության ծնունդ էր: Բանն այնտեղ հասավ, որ որոշ պատեհապաշտ բախտախնդիրներ դառնալով քահանաներ, կաշառքի միջոցով հասնում էին եպիսկոպոսի աստիճանի և հնարավորություն ստանում ավերելու իրենց թեմը՝ վաճառելու թանկարժեք իրերը, հողը և նույնիսկ սրբապատկերները: Ժամանակի ընթացքում նույնիսկ ավատատերերն սկսեցին իրենց տիրություն գտնվող եկեղեցիներն ու ծխական համայնքները վաճառել նրան, ով ավելի կվճարեր: Իսկ երբեմն էլ այդ ամենը հողատերը կտակում էր ժառանգության իրավունքից զրկված իր աղքատ ազգականին: Այսպես սկսվեց մեծ բարոյալքությունը: Իրենց անպատշաճ էին պահում նույնիսկ բարձր հոգևոր հովվապետները: Այսպես՝ միտրոպոլիտ Օնիսիֆոր Դիվոչ-



Եկեղեցի-ամրոց Պոդոլյեում - XV դար

կան մեղադրվեց երկկնության մեջ, եպիսկոպոս Կիրիլ Տերլեցկին դատարանի առաջ կանգնեց սպանության, բռնաբարության և սպառնալու մեղադրանքով (բայց արդար ճանաչվեց), եպիսկոպոս Իոն Բորզոբոհատին ծխականներից հարկ էր վերցնում եկեղեցի այցելելու համար: Գոգևոր պետերից օրինակ վերցնելով, ծխական քահանաներն իրենց այնքան լկտի էին պահում, որ ոմն ժամանակակցի զնահատամբ՝ «այնպիսի տականքներ էին, որոնց տեղը ոչ թե եկեղեցին էր, այլ պանդոկը»:

Նման պայմաններում, պարզ է, որ ուղղափառ եկեղեցու բարերար ազդեցությունը ժողովրդի վրա բավական սահմանափակ էր: Դարանոցները, որոնց կազմակերպման գործում միշտ էլ եկեղեցին մեծ դեր է ունեցել, բարձիթողի վիճակում էին: Կիսագրագետ ուսուցիչները հազիվ էին կարողանում երեխաներին կարդալ-գրել և հավատի համառոտ հիմունքները սովորեցնել: Միջնադարյան ժամանակաշրջանից ի վեր դպրոցական ուսուցման ծրագրում գրեթե ոչինչ չէր փոխվել: 1453 թ.-ին թուրքերի կողմից Կոստանդնուպոլսի գրավումը խո-



րացրեց մտավոր ու մշակութային լճացումը՝ ուղղափառ եկեղեցին գրկելով առաջադեմ և ոգեշնչող հոգևորականի կենդանի օրինակներից: *Կորցնելով ներքին և արտաքին խթանները, ուղղափառ մշակույթը գլորվեց դեպի սահմանափակություն և անկում:*

Այդ ժամանակ *լեհերը մշակութային ծաղկման շրջան էին ապրում:* Սնվելով Արևմուտքից եկող ստեղծագործական ենթագիայի հզոր ճողվածներով, նրանց մոտ ձևավորվում էր Վերածնունդը, որն իր հետ նոր մտածողություն էր բերում: Այստեղ, ինչպես որ Արևմուտքում, ի հայտ եկան այսպես կոչված հումանիստները (որոնց թվում՝ աստղագետ Միկոլայ Կոպեռնիկոսը, փիլիսոփա Անջեյ Ֆրիչ Մոդրժևսկին, բանաստեղծ Յան Կոխանովսկին), մտածողներ, որոնք հրաժարվելով հոգևոր կյանքի մասին միջնադարյան քարացած մոտեցումներից (իբր հոգին տրված է մարդուն ֆիզիկական մահվան նախապատրաստվելու համար), իրենց ողջ ուշադրությունը կենտրոնացնում էին հենց մարդու ֆիզիկական գոյության, նրա կենսափորձի, բնական և հասարակական շրջապատի վրա: Նոր գաղափարների զարգացմանն ու խորացմանը նպաստում էին Կրակովի Յագելլոնյան համալսարանի շրջանավարտներն ու Իտալիայի և Գերմանիայի համալսարաններում կրթություն ստացած երիտասարդները: XVI դարի սկզբին Լեհաստանում կար մոտ 20 տպարան և ավելի քան 3 հազ. ծխական դպրոց:

*Եկեղեցական Ռեֆորմացիան*, որի ազդեցությունը Ռեչ Պոսպոլիտայում շոշափելի դարձավ XVI դարի կեսերին, նոր հոգևոր որոնումների աղբյուր հանդիսացավ: Շլյախտայի 25-30 %-ի մեջ իր հետևորդներին գտավ *Կալվինականությունը*՝ բողոքականության մի կարևոր ճյուղ, որ եկեղեցու գործերում մեծ դեր էր հատկացնում աշխարհիկ մարդուն: Կալվինականության արմատական հոսանքը արիականությունն էր, որ հերքում էր Երրորդության դավանանքը և խաղաղասիրություն (պացիֆիզմ) էր քարոզում: Այն իր հետևորդների ոչ մեծ, բայց ազդեցիկ ընկերակցություններ էր համախմբել Լիտվայում, Լեհաստանում և Վոլինում: Իրենց գաղափարները լայնորեն տարածելու նպատակով բողոքականները հիմնում էին բարձրագույն ուսումնական հաստատություններ, իրենց սեփական տպարաններում տպագրում էին բանավիճային գրականություն՝ լեհերեն լեզվով, որը ևս մի կարևոր խթան հանդիսացավ՝ լեհերենը գրական լեզվի որակներին հասցնելու համար (մինչ այդ Լեհաստանում հոգևոր ողջ գրականությունը հրատարակվում էր լատիներեն լեզվով): Սակայն, չնայած XVI դարում կրոնական հողի վրա տեղի ունեցող սուր ընդհարումներին, *Ռեչ Պոսպոլիտան, ի տարբերություն Եվրոպական շատ երկրների, մնում էր որպես կրոնական հանդուրժողականության օազիս:* Դա հիմնականում բացատրվում էր շլյախտայի հզոր ազդեցությամբ. ազնվականության իրավունքների անձեռնմխելիությունը նախատեսում էր նաև, որ ի թիվ այլոց, հարգանքի պետք է արժանանային նրա կրոնական հայացքները, նույնիսկ եթե դրանք տարբերվեին ընդունված ընդհանուր գաղափարներից:

XVI դարի վերջին և XVII դարի սկզբին, բողոքականության դեմ կաթոլիկության հզորացող հակազդեցությունն առավել զգացվեց Լեհաստանում, որը դեռ 1564 թ.-ից այստեղ գործունեություն ծավալած Հակառեֆորմացիայի հարվածային ուժի՝ *ճիզվիտների* միաբանության վաստակն էր: Իր շարքերն անընդհատ համալրելով խելացի, կրթված ու բանիմաց անդամներով, այս խիստ կարգապահ միաբանությանն հաջողվեց եկեղեցու գիրկը վերադարձնել «մոլորված հոտի» շատ ու շատ անդամների: Ռեչ Պոսպոլիտայի ողջ տարածքով մեկ կոլեգիաներ հիմնելով, ճիզվիտները ոչ միայն լեհերին էին դաստիարակում մարտնչող կաթոլիկության ոգով, այլև իրենց կողմն էին գրավում բողոքական և ուղղափառ տաղանդավոր երիտասարդությանը: Հակառեֆորմացիայի ծավալած բուռն գործունեության հետևանքով, *կրոնական հանդուրժողականությունն հետզհետե իր դիրքերը գիջեց մոլեռանդ կաթոլիկությանը:*

## Ուկրաինական վերնախավի լեհացումը

Լեհական շլյախտայի մեծածավալ իրավունքներն ու արտոնությունները, կրթվածության ու մշակույթի արտաքին փայլը հրապուրիչ ազդեցություն էին թողնում ուկրաինացի ազնվականների վրա, և նրանք ազախաբար ձգտում էին դեպի ամենայն լեհականը: Իսկ ճիզվիտները, համոզված բողոքականների դեմ իրենց հաղթանակի մեջ, կենտրոնացան *սխիզմատիկների (հերետիկոսների)* վրա (նրանք այդպես էին կոչում ուղղափառներին): 1569 թ.-ի Լյուբլինյան ունիայից անմիջապես հետո ճիզվիտների իսկական արշավանք է սկսվում Ուկրաինայի վրա: Յարոսլավում, Լվովում, Կամենեց-Պոդոլսկիում, Բարում, Լուցկում, Վիննիցա-

յում և վերջապես Կիևում բացվում են ճիզվիտական կոլեգիաներ: Նրանց լավագույն ճառասացները, որոնց թվում էր փայլուն ճարտասան, նշանավոր *Պյոտր Սկարզան*, իրենց քարոզների և բաց բանավեճերի ժամանակ, ողջ Ուկրաինայով մեկ, խարազանում էին ուղղափառությունը՝ նրան վերագրած «դոգմատիկ մոլորության» և «մշակութային հետամնացության» համար: Իր «Աստծո եկեղեցու միասնականության մասին» տրակտատում Սկարզան ձգտում էր ապացուցել, որ ուղղափառությունն այնպիսի անհույս վիճակում է, որ նրա կողմնակիցների համար միակ ելքը Հոռմի հետ վերամիավորվելն է: «Հույները քեզ խաբեցին, ո՛վ ռուսիո ժողովուրդ,- գրում էր ճիզվիտ Սկարզան,- քանզի, սուրբ հավատը քեզ տալով, հունարեն լեզուն չտվեցին, ստիպելով օգտագործել սլավոնական բարբառը, որ երբեք չընկալես ճշմարիտ ուսմունքը... Աշխարհում չկա մի ակադեմիա, որտեղ փիլիսոփայությունն ու աստվածաբանությունը, տրամաբանությունն ու այլ ազատ գիտություններ սլավոններն դասավանդվեն: Այդ լեզվով գիտնական չես կարող դառնալ...»:

Ուկրաինացի ազնվականը, ինչպես ամեն մի ազնվական, որ արտակարգ զգայուն է իր հասարակական դիրքի նկատմամբ, հիվանդագին էր ընդունում իր պատկանելությունը մի հավատքի ու մշակույթի, որոնց թերաբժեքության մեջ անընդհատ աշխատում էին համոզել նրան: *Սկսվում է ուկրաինական վերնախավի զանգվածային հրաժարումն իր նախնյաց հավատքից և անցումը կաթոլիկության, դրա հետ էլ՝ լեհերեն լեզվին ու մշակույթին:* 1610 թ.-ին «Նրենոս, կամ ողբ Արևելյան Սուրբ Եկեղեցվո» տրակտատում, ուղղափառ հավատքի մշակավոր գործիչ *Մելետի Սմոտրիցկին* ուղղափառ Ռուսիո անունից ողբում է նրա նշանավոր տոհմերի կորուստը. «Որտե՞ղ են հիմա անգին գոհարներն ուղղափառ թագի, ո՞ւր են փառասեղ տներն իշխանական՝ Սլուցկի, Չասլավսկի, Չբարաժսկի, Վիշնևեցկի, Սանհուշկի, Չորտոբիյսկի, Պրոնսկի, Ռուժինսկի, Սոլոմիրեցկի, Հոլովչինսկի, Կորոպինսկի, Կրաշինսկի, Մասալսկի, Հորսկի, Սոկոլինսկի, Լուկոմսկի, Պուզին և բազում այլոք... հեղինակությամբ, հզորությամբ ու քաջությամբ աշխարհին հայտնի ռուսիո ժողովրդի ազնիվ, խիզախ ու քաբակորով, հին ու հզոր տոհմերը»: Հարցն, իհարկե, ճարտասանական է: Հանրահայտ փաստ էր, որ նշված բոլոր ուկրաինացի մեծահարուստ անվանի տոհմերը լեհ-կաթոլիկական ճամբարում էին:

Չուլման տարածված մեխանիզմներից մեկը հասկանալու հարցում մեզ օգնում են լվովյան արքեպիսկոպոս Յան Պորոխիցկու թողած տեղեկությունները, որն հենց ինքը լեհացած ուկրաինացի ազնվական ընտանիքի ներկայացուցիչ էր. «Հենց որ կալվածք ունեցող միայնակ օրիորդ, կամ հարուստ այրի էր հայտնվում, թագավորներն իրենց լեհ շլյախտիչ-փեսացուներին անմիջապես ուղարկում էին այնտեղ և նորապսակներին աջակցում ամեն ինչով: Այսպես, ամուսնանալով ուկրաինացի ազնվական կանանց հետ, նրանք բազմանում էին Ռուսիայում և հռոմեական ուղղակրոն կաթոլիկ ուսմունքը տարածում: Մնացյալը լրացնում էին բարեխիղճ քահանաները, այնպես որ շուտով ռուսիական ամենամեծ տոհմերն էլ հրաժարվեցին հունական հերետիկոսությունից և միացան հռոմեական կոստյուխին»:

*Ուկրաինական ուղղափառ ավատատերերի միայն մի քանի տոհմեր հավատարիմ մնացին իրն հավատքին*, որոնց թվում՝ մասնավորապես նրանք, ովքեր մինչև 1569 թ.-ն էին տիտղոս ստացել, երբ ուկրաինացիները Լիտվական Մեծ իշխանության քաղաքական և մշակութային հզոր թևն էին հանդիսանում: Մյուս կողմից, հին ավանդույթները դեռևս պահպանվում էին սեռականացած ուկրաինացի ազնվականների ընտանիքներում, որոնք բնակվում էին լեհական մշակույթից ու եռուզեռից հեռու ընկած կալվածքներում և սոցիալ-տնտեսական ու քաղաքական առումով այնքան թույլ էին, որ չէին կարող եական ազդեցություն թողնել լեհացման հզոր գործընթացների վրա:

Ինձվար է պատկերացնել, թե ինչ մեծ հարված էր ուկրաինացի ժողովրդի համար իր վերնախավի կորուստը: Ժամանակակից Եվրոպայի հիմք հանդիսացող և հիերարխիկ կառուցվածք ունեցող հասարակություններում վերնախավ չուներող ժողովուրդը նման է անզուլիս մարմնի՝ նշանակում է՝ ուկրաինացիները, ի դեմս իրենց ազնվականության, կորցնում էին մի դասակարգ, որն ի վիճակի էր աշխարհաքաղաքական թոհուրոհում հստակ ու պարզորոշ առաջ քաշել համազգային քաղաքական, սոցիալ-տնտեսական ու հոգևոր խնդիրներ, հոգատար վերաբերմունք դրսևորել եկեղեցու նկատմամբ, բանականությամբ ու խելացի ձևով լուսավորել ազգին, ոգեկոչել նրան՝ աչքի լույսի պես պահպանելու ազգային հոգևոր ժառանգությունը:

Իբր ուկրաինական ազնվականության մեջ լեհացման գործընթացը համատարած բնույթ կրեց, նորաթուխ «շլյախտիչները» ատելությամբ էին վերաբերվում ուղղափառությունը, ուկ-



րահնական ավանդույթներն ու լեզուն պահպանողների նկատմամբ, նրանց համարում էին իրենց անարժան, ցածր խավ և մշտապես ծաղրուծանակի էին ենթարկում: Իսկ «հետամնաց» ազնվական ընտանիքից ելած շնորհալի ու պատվախնդիր երիտասարդներն հաճախ երկընտրանքի առաջ էին կանգնում՝ պահպանել ազգայինն ու ավանդակա՞նը, թե՞ ձգտել դեպի «լուսավոր ու բարձր» իշխող հասարակություն: Դժբախտաբար, նախապատվությունն ավելի հաճախ տրվում էր երկրորդին: Արդյունքում՝ Ուկրաինայի պատմության հաջորդ կարևոր խնդիրը դարձավ ուկրաինական վերնախավի, ավելի ճիշտ՝ այդ խավի բացակայության խնդիրը:

## Ուղղափառության վերածնունդը

Այս ամենով հանդերձ, ուղղափառությունն իր մեջ ուժ գտավ ընդունելու լեհական կաթոլիկության մարտահրավերը: Թշնամու դեմ պայքարելով նրա իսկ մեթոդներով, հին հավատքին հավատարիմ մնացած ուկրաինական ավատատերերի մի փոքր խումբ իրենց տիրույթներում ուղղափառ դարձնեցին ու տպարաններ հիմնեցին: 1568 թ.-ին Յրիհորի/Խորդկիչը Բելոռուսիայի Ջարլուդովոյում գտնվող իր կալվածքում ապաստան տվեց մոսկովյան առաջին տպագրիչ Իվան Ֆյոդորովին, որին Մոսկվայից վտարել էին գրքի տպագրության մեջ իր նոր «սրբապիղծ» տեխնիկան փորձարկելու համար: Տեղեկություններ կան, որ 1570 թ.-ին իր տերության մեջ դպրոց և տպարան է հիմնել նաև իշխան Յուրի Սլուցկին: Շատ օգնեց նաև Մոսկվայից՝ Իվան Անդրեյ Կուրբսկին, որը 1570-ականներին հաստատվեց Վոլինում՝ իրեն նվիրելով ուղղափառության վերածննդին: Սակայն ուղղափառ եկեղեցու զլխավոր ու հանրաճանաչ հովանավորը «Ուկրաինայի անթագակիր արքա» իշխան Կոստյանտին Օստրոժսկին էր, որը Ռեչ Պոսպոլիտայի ամենահարուստ ու ամենահզոր ավատատերերից մեկն էր:

### Կոստյանտին Օստրոժսկին և Օստրոժյան ակադեմիան

1578 թ.-ին, հոգևոր վերածննդի սուրբ գործի համար միջոցներ չխնայելով, Վոլինում գտնվող իր կալվածքում Կոստյանտին Օստրոժսկին տպարան հիմնեց, որը ղեկավարում էր թափառական տպագրիչ Իվան Ֆյոդորովը: 1581 թ.-ին լույս է տեսնում նրա գրահրատարակչական նշանավոր զլուխգործոցը՝ Օստրոժյան Աստվածաշունչը: Դա սլավոներեն լեզվով տպագրված առաջին ամբողջական Աստվածաշունչն էր: Իշխան Օստրոժսկու հովանավորչությամբ Տուրովում և Վոլոդիմիրում դպրոցներ հիմնադրվեցին, իսկ 1580 թ.-ին բացվեց այսպես կոչված՝ Օստրոժյան ակադեմիան:

Իշխանի «մայրաքաղաք» Օստրոգում նոր բացված ակադեմիայի առաջին դասախոսական կազմն ամբողջովին հատուկ այդ նպատակով հրավիրված հույն ուսուցիչներ էին, որոնք աստիճանաբար, առավել շնորհալի աշակերտներից արժանավոր փոխարինողներ կրթեցին: Իր ուսումնական ծրագրերի տարողունակությամբ ակադեմիան ոչնչով չէր զիջում լավագույն ճիզվիտական կոլեգիաներին: Այստեղ ուսուցվում էր երեք լեզու՝ հին հունարեն, լատիներեն և եկեղեցական սլավոներեն, ինչպես նաև՝ յոթ «ազատ գիտություն», որոնք բաժանվում էին այսպես կոչված՝ «տրիվիումի» (եռաճյուղ)՝ քերականություն, ճարտասանություն և դիալեկտիկա (բանավեճ վարելու արվեստ), և «կվարդրիվիումի» (քառաճյուղ)՝ երաժշտություն, թվաբանություն, երկրաչափություն և աստղագիտություն:

Ժամանակի ընթացքում օստրոժյան գիտական կենտրոնն սկսեց դեպ իրեն ձգել բարձր ինտելեկտ ունեցող այնպիսի մարդկանց, որոնցից մի քանիսի անունն ու գործերը հասել են մեզ: Այստեղ նշենք շյախտիչ Գերասիմ Սնտրիցկուն (որը որոշ ժամանակ ակադեմիայի ղեկավարն էր), քահանա Դեմյան Նալիվայկոյին, վանական Վասիլ Սուրաժսկուն (ուսանած իտալական համալսարաններում), անանուն Կոլեր Օստրոժսկուն (այս կեղծանունից բացի, նրա մասին ոչինչ հայտնի չէ): Ակադեմիայի հետ կապ ունեցող օտարերկրացիներից արժեք հիշատակել գրող Կշիշտոֆ Կազիմիրսկուն, աստղագիտության պրոֆեսոր Յան Լյատոշին՝ Կրակովից, և բազմակողմանիորեն զարգացած Կիրիլ Լուկարիսին, որն հետագայում Կոստանդնուպոլսոս պատրիարք դարձավ:

Չենց Օստրոժսկու ակադեմիայով ոգեշնչված, մի ուղղափառ ժամանակակից գրում է. «Եվ կրկին արևի նման փայլեց մեր ուղղափառ հավատքը, գիտուն այրերը դարձան դեպի Տիրոջ եկեղեցին, և ահա բազմանում է տպագիր գիրքը»: Չնայած Օստրոգի համալսարանն իր գո-

յության փաստով իսկ ապացուցեց թերահավատներին, թե ուղղափառ ուկրաինական միտքը հենց սլավոնական լեզվով ինչպիսի գիտական և մշակութային բարձունքներ կարող է նվաճել, սակայն նրան սատարող հիմքը ամուր չէր: Ամեն ինչ կախված էր մի անհատից՝ իշխան Կոստյանտին Օստրոժսկուց: Եվ երբ 1608 թ.-ին իշխանը կնքեց իր մահկանացուն, նրա բոռնուհի Աննան, որ մոլեռանդ կաթոլիկուհի էր, առանց տատանվելու, ակադեմիան անմիջապես հանձնեց ճիզվիտների ձեռքը:

### Միաբանություններ («Բրատսովոներ»)

Բարեբախտաբար, ուղղափառ հավատքի բարձր մշակույթի հովանավորները միայն հին ազնվական տներից սերած հատուկներտ ավատատերերով չէին սահմանափակվում: Թե-



Կոստյանտին Օստրոժսկի

կուզև ազգապահպան վերնախավից զրկված, ուկրաինական հասարակությունն այնուհանդերձ բավականին մեծ ու կենսունակ էր, խորն արմատավորված ավանդույթներով հզոր՝ իր եկեղեցու և յուրօրինակ ու ինքնատիպ մշակույթի պաշտպաններ ծնելու համար: Չենց քաղաքներում, որտեղ ուկրաինացիները հալածանքների ենթարկվող, սակայն սերտորեն համախմբված փոքրամասնություն էին կազմում, ուղղափառության նոր պաշտպաններ ի հայտ եկան: Ազնվագարմ իշխան Օստրոժսկին հարուստ ու հզոր էր, բայց՝ միայնակ: Ի տարբերություն նրա նման միայնակների, քաղաքներում ուղղափառները համախմբվում ու միաբանություններ էին կազմում:

Մտտ պատմաբանների՝ միաբանություններն առաջացել են միջնադարում, եկեղեցիներից աստարելու համար: Նրանց առաջնահերթ խնդիրը եկեղեցիները պահելն էր ու անհրաժեշտ բաներով ապահովելը (մոմեր, սրբապատկերներ, ժամասացության գրքեր և այլն): Հավանաբար ընդօրինակել էին համաքաղաքային կազմակերպչական համակարգը, որ նախատեսվում էր ծառայողների ամենամյա ընտրություններ, պարտադիր ամենամյա հավաքներ,



անդամավճարներ և հասարակական դատեր: Միաբանությունները հարգանք ու հեղինակություն ձեռք բերեցին՝ հոգ տանելով իրենց մահացած անդամների այրիների ու որբերի համար, աջակցելով հիվանդանոցներին և անտոկոս փոխատվություն տրամադրելով միաբանության կարիքավոր անդամներին: XVI դարում *ամենակարևոր ու ամենաազդեցիկ ուղղափառ միաբանությունը* *Լվովի Ոսպենսկի տաճարի միաբանությունն էր: Այն բարի օրինակ էր ծառայում մյուս միաբանությունների համար, որ կազմակերպվում էին Գալիչում, Ռոհատինում, Ստրիյում, Կոմարնիում, Յարոսլավում, Խոլմում, Լուցկում և Կիևում:*

Միաբանությունների սոցիալական կազմին դառնալով, նկատում ենք, որ դրանք, որպես կանոն, սկզբում բաղկացած էին մանր առևտրականներից ու արհեստավորներից: Սակայն աստիճանաբար ազդեցություն ձեռք բերելով և հանրաճանաչ դառնալով, միաբանություններն համալրվում էին նաև հարուստ վաճառականներով (Լվովում դրանք հիմնականում անասունների առևտրով զբաղվողներն էին): Որոշ միաբանություններում գերակշռում էին հասարակության այլ շերտերը: Լուցկում, օրինակ, մեծամասնություն էր կազմում շյախտան, իսկ Կիևում՝ հոգևորականությունը: Սակայն ամենակարևորն այն էր, որ միաբանություններում կարող էին ընդգրկվել բոլոր ուղղափառները՝ անկախ հասարակական դիրքից, մի բան, որ գրեթե անհավանական էր թվում Ռեչ Պոսպոլիտայի մանրակրկիտ շերտավորված հասարակական կարգի պայմաններում: Այս ամենով հանդերձ, *ուղղափառ միաբանությունները մեծ չէին:* Լվովում, օրինակ, միաբանության անդամների թիվը չէր անցնում 30-ից, քանի որ միայն այդքան ուկրաինական ընտանիք իրավունք ուներ պարելու քաղաքում: Համապատասխանաբար՝ Լուցկի միաբանության անդամների թիվը 15-ից չէր անցնում: Բայց դավանակիցների համախմբված այդ փոքր միաբանությունների գործունեությունը չափազանց արդյունավետ էր:

*Միաբանությունների գլխավոր հոգսերից մեկը լուսավորության խնդիրն էր: XVI դարի վերջին Լվովի միաբանությունն հիմնեց իր սեփական դպրոցը: Հույն գիտնական Արսենիյ Ելասոնսկուց բացի, այդ դպրոցի մյուս բոլոր ուսուցիչները ծագումով տեղացիներ էին, որոնց թվում՝ Չիզանիյ Տուստանովսկին, Կիրիլո Ստավրովեցկին, ապագա միտրոպոլիտ Իով Բորեցկին:*

Ուսուցչական գործին ձգտող երիտասարդների (բոլոր ուսուցիչները երիտասարդներ էին. մեծերը, որպես կանոն, ուսուցչություն չէին անում) և հետագայում իրենց գործը շարունակողների առջև շատ խիստ, գրեթե անիրագործելի պայմաններ էին դրված: Այդ մասին իմանում ենք մեզ հասած հետաքրքիր մի կանոնադրությունից, որ կոչվում է *«Դպրոցական կանոններ»:* Այնտեղ ասվում է, որ ուսուցիչը պետք է լինի. *«բարեպաշտ, խելացի, համեստ, զուսպ, ոչ թե՛ հարբեցող, զող, բամբասկոտ ու արծաթասեր»:* Շեշտելով ուսուցչի վրա դրված մեծ պատասխանատվությունը, «կանոնները» խրախուսում էին նրանց *«լավ սովորեցնել և անհնազանդներին պատժել ոչ թե որպես բռնակալ, այլ որպես ուսուցիչ՝ հանուն գիտության»:*

Լվովյան դպրոցը շատ արագ հասավ մեծ հաջողությունների, և այնպիսի հարգանք էր վայելում, որ մյուս միաբանությունները նրան էին դիմում թե՛ խորհուրդների, թե օժանդակության համար: XVII դարի սկզբին նման դպրոցներ էին գործում արդեն ողջ Ուկրաինայով մեկ:

Լվովյան միաբանության մյուս կարևոր ոլորտը, որ հիմնավորվել էր դեռևս մինչև դպրոցներ հիմնելը, *գրքի տպագրությունն էր:* Երբ Լվով եկավ Իվան Ֆյոդորովը, հենց միաբանությունն օժանդակեց նրան՝ տպարան հիմնելու հարցում: 1574 թ.-ին լույս տեսավ նրա առաջին գիրքը՝ *«Գործք առաքելոց»*-ը: Հենց այդ նշանակալից իրադարձությամբ էլ Ուկրաինայում հիմք է դրվում գրահրատարակչությանը: 1582 թ.-ին Ֆյոդորովը Օստրոգից կրկին վերադառնում է Լվով և մի տարի հետո սարսափելի աղքատության մեջ կնքում իր մահկանացուն: Նրա մահից հետո արտասահմանյան պարտատերերը սպառնում են խլել տպարանը, սակայն Լվովի միաբանությունն այն գնում է: Այսպես, *Լվովը դառնում է ուղղափառ գրահրատարակչության կենտրոն:*

Դպրոցների և տպարանների ընդլայնումը կարծես արթնացրեց ու նոր կյանքի կոչեց մինչ այդ պասիվ ու պահպանողական ուկրաինացիներին: Եվրոպական կրթություն ստացած, միևնույն ժամանակ ազգային ավանդույթներով դաստիարակված հարյուրավոր երիտասարդներ, ավարտելով միաբանությունների դպրոցները, որպես շրջիկ ուսուցիչներ, ցրվում էին Ուկրաինայով մեկ՝ աշխատանք փնտրելով գյուղերում ու քաղաքներում: Նրանք ոչ միայն իրենց հետ տանում էին ժամանակի առաջավոր գիտության լույսը, այլև հայրենակիցների մեջ ամրապնդում էին սեփական արժանապատվության զգացումն ու լեհերի կողմից

իրենց վզին փաթաթվող կաթոլիկության դեմ անհաշտ պայքարի ոգին: Այս ամենը նոր ուժով հաստատեց ուկրաինացիների վճռականությունը՝ *մինչև վերջ կանգնելու հանուն հայրենյաց հավատի:* Եվ նման վճռականությունը շուտով իր համեստ, բայց շոշափելի պտուղները տվեց. 1580-ականների վերջերին ուղղափառ ուկրաինացիները Լվովում համախմբվելով միաբանության շուրջը, *հաջողությամբ դիմակայեցին Գրիգորյան օրացույցն իրենց վզին փաթաթելու լեհերի փորձերին:*

Անկասկած, բազում ուկրաինացիների մտավոր ու հոգևոր դրական փոփոխությունները հիմնականում միաբանությունների գործունեության արդյունքն են: Սակայն միաբանություններն էլ իրենց խնդիրներն ունեին: *Մշտական և գլխավոր խնդիր էր, օրինակ՝ նյութական միջոցների սղությունը:* Եվ չնայած նոր միաբանություններն արագ աճում ու տարածվում էին, բայց նրանց միջև մշտական կապ ու փոխօգնություն չհաստատվեց, չստեղծվեց նաև նրանց գործունեության փոխհամաձայնեցման որևէ մարմին, իսկ գործունեությունն էլ հաճախ աչքի էր ընկնում ծայրահեղ անկայունությամբ: Նույնիսկ Լվովում, ամեն ինչ տառացիորեն կախված էր մի քանի նվիրյալներից: Եվ եթե պատահեր, որ մեկը հիասթափվեր, կամ հոգներ, կամ (ինչպես ուսուցիչների հետ էր պատահում) մի այլ տեղ ավելի հուսալի և բարձր վարձատրվող պաշտոն գտներ, միաբանության գործունեությունը դադարում էր: Հաճախ՝ երկար ժամանակով:

Եվ վերջապես, *լուրջ տարածայնություններ կային եկեղեցիների գործերին միաբանությունների խառնվել-չխառնվելու, կամ խառնվելու չափ ու սահմանի վերաբերյալ:* Ինչպես և սպասելի էր, որոշ ակտիվ քաղաքացիների հավակնությունը որևէ հարուստ վանքի եկամուտների նկատմամբ (օրինակ՝ Լվովի եպիսկոպոս Բալաբանի և տեղական միաբանության մուլեզին պայքարը), կամ նույնիսկ Աստվածաշնչի մեկնաբանման հարցերում տարածայնություններ ծխականների ու եպիսկոպոսների միջև, և այլն: Մի խոսքով, *ուղղափառ եկեղեցու բարենորոգմանն ու դիրքերի ամրապնդմանը և՛ բարոյապես, և՛ կազմակերպչական հարցերում նպաստելու փոխարեն, միաբանություններն հաճախ դժվարացնում էին ուղղափառ եկեղեցու առանց այդ էլ հոգաշատ կյանքը:*

## 1596 թ.-ի Բերեստյան ունիան

Քրիստոնեական երկու հզոր՝ կաթոլիկ և ուղղափառ եկեղեցիների վերամիավորման գաղափարը 1054 թ.-ի տրոհման պահից սկսած, չէր լքել երկուսին էլ: Ուկրաինայում այդ գաղափարը կյանքի կոչելու փորձեր ձեռնարկվեցին դեռևս XIII դարում, իսկ 1439 թ.-ին կայացած Յուրենցիայի ժողովում քիչ մնաց իրականություն դառնար: Սակայն այդ, ըստ էության, հրապուրիչ գաղափարը կենսագործելու հարյուրամյակներ ձգվող ուղին լի էր փոխադարձ վեճերով ու կասկածանքներով, տարածայնություններով ու անհանդուրժողականությամբ: *Ուղղափառները մտավախություն ունեին, որ միավորվելու դեպքում կաթոլիկները կձգտեն գերակայության, և այդ կասկածները անհիմն չէին, քանի որ XVI դարի ընթացքում, համոզված իրենց առաջնայնության մեջ, լեհական կաթոլիկները ձգտում էին ուղղափառ ուկրաինացիների հետ միության կնքմանը՝ հուսալով, որ այն կհանգեցներ ուկրաինական ուղղափառության ձուլմանը և լեհական կաթոլիկության ազդեցության հետագա ընդլայնմանը:* 1577 թ.-ին լայն արծազանք գտավ Պյոտր Սկարգայի *«Աստծո եկեղեցու միասնության մասին»* նշանավոր քննախոսությունը: Միևնույն ժամանակ, ճիզվիտներն ակտիվորեն համոզում էին ուկրաինացի մեծահարուստներին՝ պաշտպանել միության գաղափարը: Նույնիսկ իշխան Օստրոսկին հայտարարեց, որ սկզբունքորեն համաձայն է: Իսկ նախանձախնդիր կաթոլիկ թագավոր Սիգիզմունդ Երրորդն իր ողջ հեղինակությունն ու ազդեցությունն ի սպաս դրեց այդ գործին: Բացի կրոնական բուռն ձգտումից, միության կնքմանը նրան մղում էին որոշակի քաղաքական նկատառումներ, քանի որ այն առավել սերտորեն կկապեր Ուկրաինան ու Բելոռուսիան Ռեչ Պոսպոլիտայի հետ և նրանց կհեռացներ հարևան ուղղափառ Մոսկովիայի վտանգավոր ազդեցությունից:

*Ցարմանայի էր, բայց միություն կազմելու անմիջական կոչն արեց ուղղափառ կողմը:* 1590 թ.-ին, Լվովի ուղղափառ եպիսկոպոս Գեդեոն Բալաբանը, միաբանության հետ ունեցած անվերջ տարածայնություններից, առավել ևս՝ այդ «ընտանեկան վեճերին» կոստանդնուպոլսյան հայրապետի անտակտ (նրա կարծիքով) միջամտություններից սարսափելի զայրացած, Բելզում կայացած ուղղափառ եպիսկոպոսների զաղտնի ժողովի ժամանակ հարց



բարձրացրեց Յոննի հետ միութիւն կազմելու մասին: Բալաբանից բացի, մանրակրկիտ ուսումնասիրելուց հետո այդ հարցին անդրադառնալ համաձայնվեցին ևս երեք եպիսկոպոս. Լուցկից՝ Կիրիլո Տերլեցկին, Խուլմից՝ Դիոնիսի Ջբիրույսկին և Տուրովից՝ Լեոնտիյ Պելչիցկին: Ավելի ուշ դավադիրներին միացաւ Կոլոդիմիրի Իպատիյ Պոտին՝ միայն վերջերս ուղղափառ հովիվ ձեռնադրված եռանդուն ավատատերն ու նախկին կալվիմիստը: Յենց ինքն էլ, Կիրիլո Տերլեցկու հետ, գլխավորեցին եպիսկոպոսների դավադրությունը:

Այս եպիսկոպոսներն առաջնորդվում էին ինչպես սեփական շահերով, այնպես էլ եկեղեցու ճակատագրի համար խորո անհանգստությամբ: Նրանք հավատում էին, որ կաթոլիկ եկեղեցուն տիրող կարգուկանոնը կտարածվի նաև ուղղափառների շրջանում և արդյունքում աշխարհիկ մարդկանց ու հոգևորականության շրջանում եպիսկոպոսների հեղինակությունը կբարձրանա: Մտածում էին նաև, որ կաթոլիկ եկեղեցուն միանալով, ուղղափառները Ռեչ Պոսպոլիտայում նրանց հավասար իրավունքներ ձեռք կբերեն, քաղաքացիներն այլևս խտրականության չեն ենթարկվի, իսկ վարչական պաշտոններ բաշխելիս՝ ուղղափառ վերնախավը չի անտեսվի: Ավելին, եթե միութիւնը կայանար, կշահեին նաև իրենք՝ եպիսկոպոսները, քանի որ կաթոլիկ հոգևոր պետերի հետ հավասար կարգավիճակ ստանալով, ազդեցության մեծ ոլորտ ունեցող Սենատի անդամներ կդառնային: Նման գրավիչ հեռանկարներից գայթակղվելով և թագավորական պաշտոնյաների, կաթոլիկ եպիսկոպոսների ու պապի նվիրակի հետ մի քանի գաղտնի ժողովներ անցկացնելուց հետո, 1595 թ.-ի հունիսին չորս ուղղափառ եպիսկոպոսներ համաձայնվեցին իրենց եկեղեցու և Յոննի միջև միութիւն կազմել: Ավանդական ուղղափառ պատարագի ու ծեսերի, ինչպես նաև քահանաների ավանդական իրավունքների (օրինակ՝ ամուսնանալու իրավունքի) պահպանման երաշխիքի պայմանով, նրանք պարտավորվում էին անվերապահորեն ճանաչել Յոննի գերակա հեղինակությունը հավատքի և դոգմաների բոլոր հարցերում: 1595 թ.-ի վերջին Տերլեցկին և Պոտին մեկնեցին Յոնն, որտեղ Կլեմենտ VIII պապը հայտարարեց միության պաշտոնական ընդունումը:

Երբ միության ընդունման լուրը տարածվեց, ուղղափառ համայնքը պայթեց վրդովմունքից: Նույնիսկ համայնքի ամենաազդեցիկ ներկայացուցիչը՝ իշխան Օստրոժսկին, որ սկզբունքորեն դեմ չէր միությանը, խիստ զայրացել էր ոչ թե միությունն ընդունելու, այլ այն պատճառով, որ այն կազմվել էր այդպես գաղտնագողի, նենգաբար և ապաշնորհ ձևով: Չորս եպիսկոպոսներին հղած բաց նամակում Օստրոժսկին նրանց անվանեց «գառան մորթի հագած գայլեր», որոնք դավաճանել էին իրենց համայնքին, և հավատացյալներին բողոքի կոչ արեց: Պաշտոնական բողոք հղելով թագավորին (որն իհարկե անտեսվեց), Օստրոժսկին միաժամանակ հակակաթոլիկական համաձայնության եկալ բողոքականների հետ՝ սպառնալով զինված ապստամբություն բարձրացնել: Ամբողջ Ուկրաինայով ու Բելոռուսիայով մեկ ուղղափառ վերնախավը շտապ տեղական խորհուրդներ (սեյմիկներ) էր գումարում՝ միությունը պախարակելու համար: Բողոքի այդպիսի ահագնացող ընթացքից վախեցած՝ եպիսկոպոսներ Բալաբանն ու Կոպիստենսկին հրաժարվեցին ընկերակիցներից և հայտարարեցին միությանը իրենց պաշտոնական ընդդիմության մասին:

Ընդհարումը կանխելու և վեճերը հարթելու համար 1596 թ.-ին Բերեստ (Բրեստ) քաղաքում եկեղեցական ժողով հրավիրվեց: Ուկրաինան ու Բելոռուսիան հոգևորականության նման մեծ հավաք մինչ այդ չէին տեսել: Միության հակառակորդ կողմը ներկայացնում էին վերոնշյալ երկու եպիսկոպոսները, արտասահմանից ժամանած ուղղափառ հովվապետները, ազնվականությունից ընտրված տասնյակ ներկայացուցիչներ, ավելի քան 200 քահանա և բազում աշխարհիկ մարդիկ: Սրանց անվտանգությունն ապահովելու համար իշխան Օստրոժսկին ժողովի էր եկել իր զինված ջոկատներով: Միության կողմնակիցների խումբը, դրան հակառակ, շատ սակավամարդ էր և բաղկացած էր ընդամենը չորս ուղղափառ եպիսկոպոսներից, մի քանի կաթոլիկ հովվապետներից ու թագավորական պաշտոնյաներից: Բանակցությունների հենց սկզբից պարզ դարձավ, որ կողմերն ընդհանուր լեզու չեն կարողանալու գտնել: Միության կողմնակիցները բացահայտորեն հայտարարեցին, որ ոչ մի փաստարկ կամ սպառնալիք չի ազդի իրենց որոշման վրա: Եվ քանի որ ուղղափառներին չհաջողվեց ոչ համոզել նրանց՝ ետ կանգնելու իրենց որոշումից, ոչ էլ թագավորին ստիպել՝ զրկելու նրանց եպիսկոպոսական աստիճանից, ուկրաինական հասարակությունը բաժանվեց երկու անհավասար մասի: Մի կողմում ուղղափառ ազնվականությունն էր, հոգևորականության մեծ մասը, և վերջապես՝ ժողովուրդը: Մյուս կողմում՝ ուղղափառ եկեղեցու նախկին հովվապետներն իրենց մի բուռ հետևորդներով, գումարած թագավորի հզոր հովանավորությունը: Արդյունքում ստեղծվեց մի իրավիճակ, որտեղ մի կողմում հովվապետն էր՝ առանց եկեղեցու

և հոտի, մյուս կողմում՝ եկեղեցին ու հոտը՝ առանց հովվապետի: Փաստորեն այն, ինչ սկսվեց որպես քրիստոնեական եկեղեցիների միացման փորձ, ավարտվեց առավել մասնատմամբ, քանի որ հիմա երկու եկեղեցու փոխարեն արդեն երեք եկեղեցի էր՝ կաթոլիկ, ուղղափառ և միավորված (ուկրաինական) կամ, ինչպես հետագայում կոչեցին՝ հունա-կաթոլիկական:

### Կրոնական բանավեճ

Բերեստյան ունիայի հետ կապված իրադարձությունները կրոնական բանավեճերի անսխաղեպ ալիք բարձրացրեցին: Սկսվեց մի իսկական բանակրիվ, որտեղ առաջին և սպասվող հարվածը հասցրեց անխոնջ ճիզվիտ Սկարզան՝ իր «Ի պաշտպանություն Բերեստյան ունիայի» ստեղծագործությամբ (1597 թ.-ին): Գիտության, կրթության ու մշակույթի ուղղափառ կենտրոնների պատասխանը երկար սպասեցնել չտվեց. հենց նույն թվականին լեհերեն (1598 թ.-ին՝ ուկրաիներեն) լեզվով լույս տեսավ օստրոգցի ազնվական Մարտին Բրոնսկու «Ապոկրիփսիս» ստեղծագործությունը (խրիստոֆոր Ֆիլալետ կեղծանունով): Այդ բանախոսությունը մերկացնում էր միության կողմնակից եպիսկոպոսների ուխտադրությունը, ապացուցում Բերեստյան ունիան բողոքարկելու ուղղափառների արդարացիությունը: Վերին իշխանությունների նկատմամբ ըլլախոսիչին հատուկ կասկածամտությամբ և բողոքական գաղափարներով տոգորված, Բրոնսկին դեմ էր դուրս գալիս եկեղեցու կյանքին առնչվող բոլոր հարցերի վերաբերյալ բացարձակապես միայնակ որոշումներ ընդունելու իրավունքը ձեռք գցելու եպիսկոպոսների նկրտումներին: Իր սուր երգիծական պամֆլետներում հույն-կաթոլիկներին «ուշադրության» արժանացրեց նաև օստրոգյան խմբի մյուս ներկայացուցիչը՝ անանուն Կղեր Օստրոժսկին:

Ավելի ուշ, 1605 թ.-ին, ուղղափառության այս բուռն բանավեճին գործում մասնակցություն ունեցավ նաև Լվովը: Այստեղ հրատարակված «Պերեստորոհա» («Նախագրուշացում») անստորագիր տրակտատան ամբողջովին բացահայտում էր միության կողմնակից եպիսկոպոսների եսասիրական նկրտումները: Ինչ վերաբերում է ունիական, կամ ինչպես արդեն կոչում էին՝ հունա-կաթոլիկական թևին, ապա նրանցից ուշադրության արժանի միայն մեկը՝ Իպատիյ Պոտին ընդունակ գտնվեց գրչով պաշտպանելու իրենց ձեռնարկը: Օգտվելով ճիզվիտների կողմից գերազանց մշակված փաստարկներից ու հարուստ լեզվաոճական գանձարանից, 1599 թ.-ին նա ուկրաիներեն լեզվով հրատարակեց «Չակա-Ապոկրիփսիս» ստեղծագործությունը, որը Բրոնսկու «Ապոկրիփսիս» կրթոս պատասխանն էր:

Այս երկարատև բանավեճի ընթացքում լայն ճանաչման արժանացավ Իվան Վիչենսկին (մոտ 1550-1620 թ.թ.)՝ իր ժամանակի լավագույն ուղղափառ գրողը: Ծնվել է Գալիչում, բայց կյանքի մեծ մասը որպես մենակյաց վանական անց է կացրել Յունաստանում՝ Աֆոն լեռան վրա: Վիչենսկին ուղղափառ ավանդույթների մոլեռանդ պաշտպանն էր: Իր՝ «Ուղերծ ուղղափառությունն ուրացող եպիսկոպոսներին» և «Չակիրձ պատասխան Պյոտր Սկարզային» արձակ ստեղծագործություններում պարզ, տպավորիչ ու հատուկ լեզվով անգործն խարագանում է ունիական եպիսկոպոսներին: Սակայն, էությանը ազնիվ ու անաչառ այդ նշանավոր եզնավորն ու կրթոս քարոզիչն իր ուղերձներում չի մոռանում նաև հենց ուղղափառներին, պարսավելով նրանց եսասիրությունը, ազնվականության ու հարուստ խավի սերը շքեղ ու շոյալ կյանքի նկատմամբ, եկեղեցու խղճալի վիճակն ու դրա համար պատասխանատու հոգևորականության բարոյական անկումը: Խորապես ու անկեղծորեն մտահոգ իր ժողովրդի ճակատագրով, Վիչենսկին միակն էր, ով ողբում էր գյուղացիության ճորտացման համար և աներկյուղ դատապարտում նրանց շահագործողներին: Նա ուկրաինացի ժողովրդի այս և նման բոլոր հիվանդություններից բուժվելու միայն մի ճանապարհ էր տեսնում՝ ամբողջովին հրաժարվել բոլոր տեսակի նորամուծություններից, այդ թվում այնպիսի «հեթանոսական հնարանքներից», ինչպիսիք են քերականությունը, ճարտասանությունը, դիալեկտիկան և այլ «սատանայական գայթակղություններ», և դառնալ հին ու բարի ուղղափառ հավատքին:

Բանավեճողները գրական հարուստ ժառանգություն չեն թողել: Մի քանի տասնյակ տարի տևած վիճաբանության ընթացքում երկու թշնամի բանակների ներկայացուցիչները միասին, ընդամենը 20-30 ստեղծագործություն թողեցին: Սակայն դրանք մանրամասնությամբ ընթերցվում և բուռն քննարկումների ու վեճերի առարկա էին դառնում ուղղափառության հավատարիմ մնացած սակավաթիվ մեծահարուստների տներում, ոչ հարուստ ուղղափառ ազնվականների հեռավոր բաժնեկալվածքներում և Ուկրաինայով մեկ սփռված միաբանությունների նեղիկ հավաքատեղիներում: Յոգևոր թեմաներով այս բանավեճերի դերն ու նշանակությունը դժվար է գերազնահատել, քանի որ ընդգրկելով ողջ Ուկրաինան, այն ըստ



էութեան գաղափարական առաջին բանավեճն էր, որ հասարակութեանն օգնեց ավելի լավ հասկանալու ինքն իրեն և շրջապատող աշխարհը:

\* \* \*

XVI դարավերջի և XVII դարակզբի կրօնական բանավեճը ջրի երես հանեց հասարակական կյանքի հոգևոր-մշակութային խորը հակասությունները՝ պարզորոշ ցուցադրելով այն մի շարք կարևոր խնդիրները, որոնք հղի էին ապագա բարդություններով: Ամենից առաջ՝ կաթոլիկ Լեհաստանի և ուղղափառ Ուկրաինայի միջև աճող լարվածությունը ոչ միայն գաղափարախոսական ծավալուն հիմնավորում ձեռք բերեց, այլև հասավ ժայռաստիճան անգսպության. Կաթոլիկ Լեհաստանն այլևս ուկրաինացիների հասարակական իդեալը չէր: Բայց ցավն այն էր, որ ստեղծված իրավիճակում բաց հակամարտությունը Ուկրաինային կանգնեցրեց իր ազնվական վերնախավը՝ շլախտան կորցնելու վտանգի առջև:

Ուկրաինական շլախտան դժվարին ընտրության առջև էր կանգնած: Մի կողմում՝ հարազատ, բայց բնական զարգացման պայմաններից զրկված, լճացող ու ծանծրալի սեփական մշակութային ժառանգությունն էր, մյուս կողմում՝ արտաքին փայլով շլացնող ու պայծառ գալիքով գայթակղող լեհ-կաթոլիկական մշակույթը: Եվ զարմանալի չէ, որ մեծամասնությունը կաթոլիկություն էր ընդունում և շատ արագ լեհացվում: Արդյունքում՝ Ուկրաինան կորցնում էր իր վերնախավը: Այս երևույթները դարակազմիկ մշակութային ունեցան նրանց հետագա ողջ պատմության համար:

Ուղղափառների և կաթոլիկների հակամարտության մյուս՝ հեռուն գնացող հետևանքներով հղի «կողմնակի» արդյունքը ուկրաինացիների բաժանվելն էր եկեղեցական երկու ուղղությունների՝ ուղղափառների և հունա-կաթոլիկականների: Սրանով հիմք դրվեց բազում կտրուկ տարբերությունների, որ ժամանակի ընթացքում գնալով խորացան արևելյան և արևմտյան ուկրաինացիների միջև: Այնուամենայնիվ, այդ շրջանը միայն անհաջողություններ չէ, որ «պարզեց» ուկրաինական հասարակությանը. կրօնական բանավեճը մշակութային վերելքի պատճառ հանդիսացավ, իսկ լեհերի հետ թշնամությունը տարավ ավելի խորը ինքնաճանաչման:



## ԿՈՋԱԿԱԿԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆ

Կազմավորման փուլ

Մեծ ապստամբություն

Ավերմունք

Հեթմանշինա

Հասարակություն, տնտեսություն, մշակույթ

Անվանումը ծնունդն էր



# ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՓՈՒԼ

1240 թ.-ի Կիևի անկումից հետո Ուկրաինայի պատմության հիմնական իրադարձությունների ասպարեզ դարձան Գալիչիան և Վոլինը: Սակայն XVI դարավերջին պատմական անցքերի թատերաբեմը կրկին տեղափոխվում է արևելք՝ դեպի Դնեպրի ավազանում ընկած սակավաբնակ և դարեր ի վեր գրեթե անմշակ մնացած հողերը՝ Մերձդնեպրովյե: Ուկրաինա (այսինքն՝ քաղաքակիրթ աշխարհի սահմանային երկիր) կոչվող ընդարձակ տարածքներում նոր սրությամբ բորբոքվեց նստակյաց ժողովրդի և քոչվորների միջև դարավոր պայքարը, որն առավել ահագնացավ քրիստոնեության և մահմեդականության անգիջում դիմակայության պատճառով: Այդ հավերժական թվացող կյանքի ու մահու կռիվը, սակայն, հուզում, ձգում, հրապուրում էր բազում երիտասարդ ու քաջակորով տղամարդկանց՝ արևմուտքի խաղաղ բնակավայրերից, ուր այդ ժամանակ իշխում էր ճորտատիրական իրավունքը, որ նվաստացնում, խեղում ու խեղդում էր մարդուն, դարձնելով ստրուկ: Եվ նրանք, ովքեր սահմանամերձ վտանգներն ու կռվելով մեռնելը, ասել է՝ ազատությունը գերադասում էին ստրուկությունից, աստիճանաբար սովորացնում էին ազատատենչ ուժեղների շարքերը սահմանամերձ գոտիներում:

Այսպես ուկրաինական հասարակության մեջ առաջանում է բոլորովին նոր դաս՝ գաղութաբնակ-կոզակության դասը, որոնց նախնական նպատակը թաթարների հարձակումները դեպի հարավ ետ մղելն էր, այդտեղ մշտական բնակություն հաստատելն ու տնտեսությամբ զբաղվելը: Սակայն, գերազանց տիրապետելով գեներին ու դառնալով քաջամարտիկներ, պարբերաբար հաղթանակներ տանելով թուրք-թաթարական հորդանների դեմ ու ապահովելով ժողովրդի խաղաղ կյանքը, ազատատենչ, քաջ ու հնարամիտ կոզակների պատիվն ու դերն այնպես բարձրացավ հասարակության բոլոր խավերի մեջ, որ ուկրաինացի ժողովուրդն ի դեմս կոզակության տեսնում էր ոչ միայն թուրք-թաթարական հորդանների ու մահմեդականության դեմ մարտնչող ազատամարտիկների, այլև լեհական շլախտայի կողմից իրենց հասցվող ազգային, կրոնական, հասարակական ու տնտեսական ճնշումներից ու նվաստացումներից ազատագրող փրկարարի: Աստիճանաբար առաջատար դեր վաստակելով ուկրաինական հասարակության մեջ, ակտիվորեն մասնակցելով ազգային կյանքի վճռորոշ հարցերի լուծմանը, կոզակությունը մի քանի հարյուրամյակ պատվով կատարեց իր ստանձնած դերը, որ կորցրել էր Ուկրաինայի լեհացած ազնվականությունը:

## Սահմանամերձ բնակչություն

Դարեր շարունակ Ուկրաինայի նստակյաց ժողովուրդը տափաստանային բերրի սևահողերը յուրացնելու փորձեր էր ձեռնարկում: Կիևյան Ռուսիայի դարաշրջանում հողերը բնակեցնելու և քոչվորներին դիմագրավելու նպատակով Կիևից դեպի հարավ ամրությունների մի ողջ համակարգ կառուցվեց: Սակայն թաթար-մոնղոլների անդադար արշավանքները դրանք հողին հավասարեցրին: Լիտվական Մեծ իշխանների կառավարման շրջանում հարավային հողերի յուրացումն ավելի հաջող էր ընթանում և ավարտվեց Աև ծովի ափին, Դնեստրի գետաբերանի մոտ մի շարք ամրոցների կառուցմամբ: Սակայն XV դարավերջին, Դրիմի խանության հզորացման շրջանում, թաթարներն այդ նոր բնակավայրերն էլ ոչնչացրեցին, իսկ Աև ծովի ափերին կառուցված ամրոցները կործանվեցին օսմանյան թուրքերի հարվածներից: XVI դարի կեսերին ուկրաինացիներով բնակեցված տարածքների սահմանները կրկին ետ մղվեցին մինչև տափաստանի հյուսիսային սահմանները նշող ամրությունները, որ ներառ-

նում էին Կամենեց-Պոդոլսկիից սկսած՝ Բարը, Վիննիցան, Բիլա Ցերկվան, Չերկասին և Կանևը, մինչև Կիև: Այդ գծից հարավ արդեն ընկած էր այսպես կոչված՝ «Վայրի դաշտը»:

## Թաթարներ

Չենց թաթարներն էին պատճառը, որ այդ հսկայական տարածքը համարվում էր «Վայրի» ու շատ վտանգավոր: Անընդհատ հարձակումներով նրանք զազանաբար այրում ու ոչնչացնում էին ուկրաինական գյուղերն ու քաղաքները, ծեղերին ու տկարներին սպանում էին, իսկ առողջ հազարավոր երիտասարդների գերության էին քշում: Իզուր չէր, որ Դրիմի Կաֆա նավահանգիստն Ուկրաինայում անվանում էին «Ռուսիական արյուն խմող վանպիր»: Թաթարների համար Ուկրաինայի վրա այդ արշավանքները սովորական տնտեսական անհրաժեշտություն էին, քանի որ առավելապես անասնաբուծության վրա հիմնված իրենց պարզունակ տնտեսությունն ի վիճակի չէր բավարարելու նրանց աճող պահանջները: Միայն ստրուկների հետ փոխանակումով նրանք Օսմանյան կայսրությունից կարող էին ձեռք բերել անհրաժեշտ պատրաստի իրեր ու պերճանքի առարկաներ: Սակայն դժվար թե թաթարական արշավանքների նման արդարացումը մխիթարի ուկրաինացիներին, որոնք ժողովրդական երգերում թաթարին ներկայացնում են որպես սարսափելի տարերային չարիք:

*Չենց այս գիշեր, կեսգիշերին,  
Չավը դեռ չխոսած՝  
Թաթարը մեր լեռներում էր՝  
Քամիներին հեծած:\**

Թաթարական ավերիչ հարձակումներին XVI դարի վերջին և XVII դարի սկզբին ավելի հաճախ ենթարկվում էին Կիևչիցիան ու Բրացլավչիցիան, չնայած չէին խնայում նաև Գալիչիան, Վոլինը և Պոդոլյեն: Այսպես, եթե 1450 թ.-ից մինչև 1586 թ.-ը փաստացի վկայվում է 86 հարձակում, ապա միայն 1600 թ.-ից մինչև 1647 թ.-ը՝ 70 հարձակում: Նման ամեն մի հարձակումից հետո նրանք Դրիմ էին գերեվարում միջին հաշվով 3 հազ. մարդ, իսկ երբեմն գերիների թիվը կարող էր հասնել 30 հազ.-ի:

Այսպես թե այնպես, թաթարական արշավանքներից Ուկրաինան մեծ կորուստներ էր կրում: Միայն Պոդոլյեում, 1578-1583 թ.թ.-ներին յուրաքանչյուր երրորդ գյուղ կամ ավերվել, կամ դատարկվել էր անկոչ հյուրերի ձեռքով:

## Չողերի գաղութացում

Չնայած թաթարական այդ սարսափելի սպառնալիքին, հարուստ ու խոպան սևահողերն անընդհատ հրապուրում էին հողագործներին, առավել ևս՝ պոտենցիալ հողատերերին, որոնք մեծ հարստություն դիպեցին հացահատիկի բույսի հետևանքով: Երբ հացահատիկի առևտուրն աշխուժացավ, լեհ և լեհացած ավատատերերը, օգտագործելով արքունիքում ունեցած իրենց կապերը, ձգտում էին հնարավորին չափ շատ հող ձեռք բերել արևելքում, որից հետո, այդ հողերը յուրացնելու համար նրանք հրապուրում էին գյուղացիներին՝ 10, 20 և նույնիսկ 30 տարվա անվճար հողօգտագործման իրավունքով (սլոբոդաներ): Բացի այդ օրինական վերաբնակեցվածներից, կային և այնպիսիները, որոնք պարզապես փախել էին իրենց տանջող կավածատերերից: Գալիչիանայի և Վոլինի շատ գյուղացիներ գնում էին արևելք՝ բախտ որոնելու: Մեկ-երկու սերունդ հետո այս գյուղացիները, արևմուտքում մնացածների հետ համեմատած, լրիվ այլ կարգի մարդիկ էին դառնում: Այն փաստը, որ նրանք գնում էին բնակվելու սահմանամերձ շրջաններում՝ իրենց կյանքը վտանգի ենթարկելով, արդեն վկայում էր նրանց խիզախության ու անկախության մասին: Չաճախ ստիպված լինելով հողը մշակելիս անգամ պատրաստ պահել լիցքավորված հրացանը՝ թաթարների հարձակմանը դիմագրավելու համար, նրանք արագ յուրացրեցին զինվորական գործը, ինչը բնորոշ չէր արևմտյան հողագործին: Նրանց երեխաները, որ անծանոթ էին ճորտատիրական կարգերին, մեծանում էին այն հաստատ համոզմամբ, որ իրենք ազատ մարդիկ են և ոչ ոքի ոչնչով պարտական չեն: Նրանք այդպիսին մնացին նույնիսկ սլոբոդաների ժամկետն ավարտվելուց հետո, քանի որ, որպես կանոն, հողատուրքը դրամով կամ բնաբահրայով էին վճարում իրենց ավատատերերին, ոչ թե նվաստացուցիչ և ուժասպառ անող կոռով (պանչիցինայով)՝ ինչպես

\* Այստեղ և հետո չափածո թարգմանությունները՝ Դավիթ Բաղդասարյանի:



արևմուտքում: Առավել ևս, որ շնորհիվ ընդարձակ հողատարածքների, հաճախ ունևոր գաղութաբնակը տնօրինում էր մի ամբողջ *լան* (մոտ 40 ակր\*) հողաբաժնի, որ ավելի մեծ էր, քան արևմուտքի շյախտիչներից շատերի բաժնեկալվածքը:

Կիևչիննայի և Բրացլավչիննայի նոր յուրացվող (ավելի ճիշտ՝ կրկին յուրացվող) հողերի մյուս առանձնահատկությունը քաղաքների արագ աճն էր: XVII դարի սկզբին միայն Կիևչիննայում 200 նոր քաղաք կառուցվեց՝ քաղաքների ընդհանուր թիվը հասցնելով 348-ի, որը Ուկրաինայի բոլոր քաղաքների մոտ երրորդ մասն էր կազմում: Իսկ երբեմնի գրեթե անմարդաբնակ Բրացլավչիննայում, դարակեսին արդեն, յուրաքանչյուր 218 քառ. կմ-ին մի քաղաք էր ընկնում: Չնայած XVII դարի կեսերին քաղաքներում ապրում էր սահմանամերձ բնակչության մոտ 60 %-ը, բայց դրանք իրականում քաղաքային կենտրոններ չէին, այլ, ավելի շուտ սահմանամերձ ամրոցներ, որոնց փայտե ցցապատերի ետևում 100-ից ոչ ավելի տներ էին պատսպարվում: Այդ ամրությունների պաշտպանության տակ հիմնականում ապրում էին մոտակայքի հողերը մշակող գյուղացիները: Նման քաղաքները մեծ մասամբ ինքնավարություն չուներին, այլ պատկանում էին ավատատերերին, որոնք և՛ կառուցում, և՛ իրենց ջոկատներով պաշտպանում էին դրանք: *Քանի որ սահմանամերձ հողերի մեծ մասը հարուստ կալվածատերերի ձեռքին էր, միջին և մանր շյախտային քիչ բաժին էր հասել:* Եվ շյախտիչները սկզբում Դնեպրի ափերին հայտնվեցին ոչ թե որպես հողատերեր, այլ հարուստ կալվածքների վարիչներ, վերակացուներ ու դաստակերտների կառավարիչներ: Գիշտ է, ժամանակի հետ նրանք էլ քիչ թե շատ բաժնեհողերի տեր դարձան, բայց ամեն դեպքում, սահմանամերձ շրջաններում նրանք մեծ թիվ չէին կազմում: XVII դարի կեսերին 350-400 հազ. բնակչություն ունեցող Կիևչիննայում միայն 2-2,5 հազարն էին շյախտիչ, այսինքն՝ 1 %-ից էլ պակաս, այն դեպքում, երբ Ռեչ Պոսպոլիտայում շյախտան միջին հաշվով 8-10 % էր կազմում: Այս թվերը վկայում են, որ մանր շյախտան ղեկավարությամբ էր տեղափոխվում այստեղ և սահմանամերձ գոտում բնակություն հաստատելու հեռանկար չէր տեսնում: Այդ հեռանկարը չէին տեսնում նաև հարուստ հողատեր-ավատատերերը, որոնք գերադասում էին ապրել մեծ քաղաքներում՝ Վարշավայում, Կրակովում կամ Լվովում, իսկ իրենց կալվածքները կառավարելու համար վարձում էին հրեաներին: Հետևանքը եղավ այն, որ Կենտրոնական և Արևելյան Ուկրաինայի կալվածատիրական խոշոր տնտեսությունների ձևավորումը ոչ միայն խոչընդոտեց մանր շյախտայի վերաբնակեցմանը, այլև նպաստեց հրեաների հզոր ներգաղթին, որոնց մեծ մասը հաստատվում էր ծաղկում ապրող քաղաքներում, ուր արհեստավորների, առևտրականների ու վաճառուների մեծ պահանջարկ կար: XVII դարի սկզբին արդեն Ուկրաինայում մոտ 120 հազ. հրեա էր ապրում:

Սահմանամերձ գոտու այս կրկին իրացվող շրջանների խայտաբղետ բնակչության սոցիալական բոլոր խավերից կրկին անասելի վեր էին խոյանում հեքիաթային հարստության տեր մի խումբ ավատատերեր, որոնք ներկայացնում էին լեհացած ուկրաինական ազնվական այնպիսի տոհմեր, ինչպես՝ Վիշնևեցկիները, Օստրոժսկիները, Ջբարաժսկիները, Կորեցկիները, Լեհաստանից նոր եկած Ջամոյսկիները, Կոնեցպոլսկիները, Կալինովսկիները, Օստրինսկիները և Պոտոցկիները: XVII դարի սկզբին այդ հողերի մեծ մասը նրանց հսկայական կալվածքներն էին: Բրացլավի վոյեվոդությունում 65 հազ. ազարակներից 60 հազ.-ը պատկանում էր 18 մեծահարուստ ընտանիքի: Ամենահարուստ ավատատեր *Յարեմա (Երեմիա) Վիշնևեցկին*, որ հռչակավոր կոզակ Բայդա Վիշնևեցկուն ծոռ էր գալիս, միայն Կիևչիննայում 7,5 հազ. կալվածք ուներ, ինչպես նաև վերահսկում էր գրեթե ողջ Պոլտավչիննան: Որոշ տվյալներով, նրա տիրույթներում մոտ 230 հազ. գյուղացի էր ապրում: Հավանաբար երբեք, ոչ միայն Ռեչ Պոսպոլիտայում, այլև ամբողջ Եվրոպայում ոչ մի կալվածատեր նման հսկայական տիրույթներ չի ունեցել: Ավելին, այն ժամանակվա Արևմտյան Եվրոպայի շատ ու շատ անկախ դուքս ու իշխաններ իրենց «թագավորությունների» մեծությամբ ու բնակչության քանակով չէին հասնի լեհ-ուկրաինական ավատատերերին: Իգուր չէ, որ նրանց հաճախ «արքայիկներ» էին անվանում: Դա դիպուկ անվանում էր, քանի որ նրանք արքայի պես էլ ապրում էին և տիրակալի նման էին պահում իրենց, ծաղկում ու բարգավաճում էին արևելյան գորգերով ու հովանոցական գեղանկարներով զարդարված հոյակապ պալատներում, արքունական ճոխության մեջ, սեփական գործով շրջապատված, հաշվի չառնելով ոչ թագավորին, ոչ թագավորության օրենքները: Օրինակ՝ ավատատերերից մեկը՝ ոմն Լյաչչ, որ հայտնի էր գյուղացիների նկատմամբ դաժան վերաբերմունքով, շյախտիչների հետ իր կոպիտ վարվե-

ցողության համար 236 անգամ դատապարտվել էր քսորի: Սակայն մյուս հզոր ավատատերերի հովանավորության շնորհիվ, դատավճիռներից ոչ մեկն ի կատար չածվեց, իսկ Լյաչչն այնքան լկտիացավ, որ այդ վճռագրերից իր համար հագուստ կարել տվեց և դրանով ներկայացավ արքունիք: Այս թեկուզև եզակի օրինակը ցույց է տալիս, թե որքան հզոր ու ամբարտավան էին դարձել ավատատերերը, և հակառակը՝ որքան էր թուլացել արքայական իշխանությունը:

## Կոզակներ

Մերձդնեպրյան լայնարձակ հարթավայրերում ձևավորված նոր հասարակության խորհրդրդանիչը դարձավ *կոզակությունը՝ էականորեն աննախադեպ մի դաս, որ սահմանամերձ գոտու ծնունդ էր:* Թուրքական ծագում ունեցող «կոզակ» բառը նշանակում էր փախստական, ազատ, անկախ մարդ, որ բնակվում էր հասարակությունից դուրս, անմարդաբնակ վայրերում: Ավաճանական կոզակներն հայտնվեցին 1480-ական թվականներին, բայց միայն XVI դարի կեսերին՝ ճորտատիրական իրավունքի տարածման հետ, նրանց թիվն արագորեն աճեց: *Հատկապես գյուղացի-փախստականներն էին, որ կազմեցին կոզակության կորիզը, չնայած նրանց մեջ կային և՛ քաղաքաբնակներ, և՛ կարգալույծ տերտերներ, և՛ արկածներ ու դրամ փնտրող ազնվականներ:* Չնայած կոզակության շարքերն համալրում էին նաև լեհեր, բելուռուսներ, ռուսներ, մոլդովացիներ և նույնիսկ թաթարներ, սակայն *Մերձդնեպրովյեի շրջանի կոզակների մեծամասնությունն ուկրաինացիներ էին:* Կոզակության ռուսական տարատեսակը տարածվեց դեպի արևելք՝ Դոն գետի ափերով:

### Նախնական կազմավորումները

Առաջնորդվելով միշտ ազատ լինելու ձգտումով, կոզակները Դնեպրի և նրա հարավային վտակների ափերով անընդհատ ներքև էին շարժվում, հասնելով մինչև Կանև և Չերկասի հեռավոր սահմանամերձ ուղեկալների մոտ: Այս հարուստ, բայց վտանգավոր տարածքներում նրանք այսպես կոչված «ուխող»-ներ էին կազմակերպում, զբաղվելով որսորդությամբ ու ձկնորսությամբ, միևնույն ժամանակ՝ ձիեր ու անասուններ արածացնելով: Հենց այդ՝ դեպի տափաստանի խորքերը սեզոնային երկարատև «ուխողների» ժամանակ էլ ի հայտ եկան համայնական ու կազմակերպված կենսաձևով ապրելու անհրաժեշտության առաջին նշանները: Մեկնելով «Վայրի դաշտ»՝ նրանք առաջնորդ, կամ ինչպես իրենք էին կոչում՝ *օտանան էին ընտրում ամենափորձառու, քաջ և հնարամիտ մարդկանցից*, իսկ թաթարներից ավելի լավ պաշտպանվելու և որսի ու ձկնորսության ժամանակ ավելի արդյունավետ գործելու համար *ջոկատներ (վաստահա) էին կազմում:* Աստիճանաբար տափաստանում արդեն ոչ թե ժամանակավոր ու սեզոնային, այլ մշտական ամրացված ճամբարներ (*Սիչ*) էին ստեղծում՝ մարտական ջոկատներով, որոնք վերածվեցին տարին բոլոր Սիչը պաշտպանող ռազմական կայազորի: Այսպես ձևավորվեց կոզակությունը, իսկ «կոզակություն» անելը դարձավ շատերի մշտական զբաղմունքն ու կենսաձևը:


Սահմանամերձ շրջանների արքայական տանուտերերը լրջորեն անհանգստացան, տեսնելով, թե ինչպես է աճում զինված անկախ կոզակների թիվը, որոնք հաճախ անհարգալից վերաբերմունք էին դրսևորում իշխանության հանդեպ: Իրականում հենց այդ տանուտերերը (որոնք նույնպես ճանաչված ավատատերերի տոհմերից էին) արագ կողմնորոշվեցին, թե ոնց կարելի է օգուտներ կորզել այդ «ազատ» կոզակությունից: Չէ՛ որ նա իր ավարը՝ լինել դա ձկնեղեն, թե մորթեղեն, պետք է քաղաք բերեր վաճառելու: Հենց այդ վաճառքից էլ կարելի էր հարկ գանձել (ի դեպ՝ մեծ մասամբ անօրեն հարկեր): Սակայն առավել կարևոր էր, որ նրանք, ի դեմս կոզակության, տեսան այն իդեալական ուժը, որը կարող էր թաթարական անընդմեջ հարձակումներից պաշտպանել սահմանները, որ տանուտերերի ամենաբարդ ու ծանր պարտականությունն էր: Եվ ահա, 1520 թ.-ին չերկասյան տանուտեր Սենկո Պոլոզովիչը կոզակների ջոկատ հավաքագրեց՝ սահմանային պահազորում ծառայելու համար: Հաջորդ տասնամյակներում ևս, տանուտերեր Եվստաֆիյ Դաշկևիչը, Պրեդալավ Լյանցկորոնսկին և Բերնարդ Պրետովիչը կոզակներին հավաքագրեցին՝ և՛ պաշտպանվելու, և՛ թուրքերի վրա հարձակվելու համար:

*Կոզակներից զինված միավորումներ կազմակերպելու նախաձեռնությունը պատկանում էր չլեհացած ուղղափառ ուկրաինացի ավատատերերին, որոնցից ամենանշանավորը Կանևի*

\* ակր՝ հողային չափ, որ հավասար է 4047 քառ. մ:



տանուտեր **Դմիտրո Վիշնևցկին էր** («Բայդա»): Նրա՝ արկածներով լի առասպելական կյանքում իրականն անիրականից տարբերելը դժվար է: Սակայն ստույգ հայտնի է, որ 1553-54 թվականներին Վիշնևցկին հավաքեց կոզակական անջատ ջոկատները (վատահաները) և Դնեպրի սահանքներից այն կողմ, ռազմավարական նպաստավոր դիրքում գտնվող Փոքր Խորտիցա կղզում մի ամրոց հիմնեց, որ ամուր պատնեշ էր լինելու թաթարական հարձակումների դեմ: Այդպես **Վիշնևցկին հիմնեց Ջապորոժյան Սիչը**, որը դարձավ ուկրաինական կոզակության օրրանը: Շուտով նա իր կոզակների հետ մի շարք արշավներ կազմակերպեց դեպի Դրիմ և նույնիսկ հանդգնեց հարձակվել օսմանյան թուրքերի վրա: Երբ Ռեչ Պոսպոլիտան հրաժարվեց աջակցել նրան՝ մահմեդականների դեմ այդ «խաչակրաց արշավանքին»,



Կոզակական զորքի կառուցվածքը

Վիշնևցկին գնաց Մոսկովիա, որտեղից շարունակեց իր արշավանքները Դրիմի վրա: Սակայն այնտեղ էլ նրան ինչ-որ բան դուր չէկավ և հիասթափված վերադառնալով ուկրաինա՝ սկսեց զբաղվել Մոլդովայի գործերով, ինչը ճակատագրական եղավ նրա համար: Մոլդովացիները դավաճանաբար նրան հանձնեցին թուրքերին, և 1563 թ.-ին Կոստանդնուպոլսում Բայդային մահապատժի ենթարկեցին: Ուկրաինական ժողովրդական շատ երգեր դեռ մինչև հիմա պահպանում են Բայդայի սիրագործությունների հիշատակը:

### Ջապորոժյան Սիչ

Գտնվելով իշխանությունների համար անհասանելի վայրում, Ջապորոժյան Սիչն իր հիմնադրի մահից հետո էլ շարունակում էր ծաղկել: *Յուրաքանչյուր քրիստոնյա տղամարդ, անկախ սոցիալական դիրքից, կարող էր գալ այդ կղզի-ամրոցը, տեղավորվել փայտաշեն ու ծղոտածածկ կոշտ ու կոպիտ մի «կուրենում» (քողտիկ), մնալ այդտեղ ու դառնալ կոզակական եղբայրության անդամ:* Նույն հեշտությամբ էլ կարող էր թողնել ու հեռանալ: Կանանց ու երեխաների չէին ընդունում՝ համարելով ավելորդ բեռ՝ կոզակական թափառ կյանքում: *Ջապորոժցիները ոչ մի օրենք ու հեղինակություն չէին ընդունում՝ բացի իրենց օրենքներից, որ սերնդե-սերունդ փոխանցվում ու կատարելագործվում էին ըստ ավանդույթների ու սովորու-*



Դմիտրո Վիշնևցկի (Բայդա)

թյունների: Բոլորն էլ հավասար իրավունքներ ունեին, բոլորն էլ կարող էին մասնակցել ընդհանուր խորհուրդներին՝ «*ռադաներին*», որոնք սովորաբար շատ բուռն էին ընթանում և հաղթող էր դուրս գալիս ամենաուժեղ ու բարձր գոռացող կողմը: Ճիշտ նույն կերպ էլ ընտրում ու վերընտրում էին կոզակական առաջնորդներին՝ *հեթմանին* կամ *օտամանին*, *յասավուլին*, *գրագրին*, *գունակավորին* ու *դատավորին*: Յուրաքանչյուր *կուրեն* (այդպես կոչվում էր և բնակվելու տեղը, և՛ այնտեղ տեղավորված կոզակական ջոկատը) նույն ձևով իրեն *ավագ* էր ընտրում: Ռազմարշավների ժամանակ ավագը բացարձակ իրավունքներ ուներ, նույնիսկ՝ մահապատժի ենթարկելու իրավունքը, սակայն խաղաղ ժամանակ նրա իշխանությունը շատ սահմանափակ էր: Ջապորոժցիներն ընդամենը 5-6 հազ. հոգի էին: Իրար փոխարինելով, նրանք Սիչում պահում էին մշտական կայագոր, որը կազմված էր նրանց ընդհանուր թվի մոտ տասներորդ մասից: Մյուսները գնում էին ռազմարշավների, կամ զբաղվում էին խաղաղ գործունեությամբ: Սիչի տնտեսությունն հիմնվում էր գլխավորապես ձկնորսության, որսի, անտառային մեղվաբուծության և Դնեպրի գետաբերանում աղ ստանալու վրա: Գտնվելով Ռեչ



Պոսպոլիտայից Սևծովյան ափ ձգվող առևտրական ուղու վրա, Սիչը մեծ տեղ էր հատկացնում նաև առևտրին:

Չնայած եղբայրության ու հավասարության սկզբունքներին, որոնցով առաջնորդվում էին զապորոժցիները, ավագանու և հասարակ կոզակների միջև հետզհետե սոցիալ-տնտեսական տարբերություններ ու հակասություններ էին առաջանում, որոնք ժամանակ առ ժամանակ հանգեցնում էին խռովությունների ու հեղաշրջումների:

### Քաղաքաբնակ ու ցուցակագրված կոզակներ

Սահմանամերձ քաղաքներում նույնպես շատ կոզակներ էին ապրում: Օրինակ՝ 1600 թ.-ին Կանկի բնակչությունը բաղկացած էր 960 քաղաքաբնակ և 1300 կոզակական ընտանիքներից: Կոզակներն այստեղ էլ, ինչպես Սիչում, արհամարհում էին ամեն տեսակի իշխանություն, ընդունելով միայն իրենց ավագների: Գիտակցելով հեռավոր ու անհնազանդ Սիչը ենթարկելու փորձերի անիմաստությունը, լեհական կառավարությունն, այնուամենայնիվ



Կոզակական ավագանի. նկարը՝ Պ. Անդրուսիվի

հույս ուներ, որ քաղաքաբնակ կոզակները կհամաձայնվեն պետական ծառայության, սկզբում՝ թեկուզև մի մասը: Եվ ահա, 1572 թ.-ին Սիզիգունդ Ավգուստ թագավորը վավերացրեց 300 հոգուց բաղկացած կոզակական վճարովի ջոկատի ստեղծումը՝ լեհ շլախտիչ Բադովսկու գլխավորությամբ: Այդ ջոկատը տեղական պաշտոնյաների ենթակայությունից դուրս էր: Եվ չնայած այն արագ կազմալուծվեց, սակայն նրա երևան գալը կարևոր նախադեպ հանդիսացավ. առաջին անգամ լեհական կառավարությունը պաշտոնապես ճանաչեց կոզակների, կամ նրանցից առնվազն 300-ի գոյությունը, որպես առանձին սոցիալական շերտ, որը մյուսների նման ուներ ինքնակառավարման իրավունք:

Կառավարության կողմից վավերացված կոզակական ջոկատ ստեղծելու մյուս՝ ավելի հաջող փորձը տեղի ունեցավ 1578 թ.-ին՝ Ստեֆան Բատորի թագավորի օրոք: Թագավորը 600 կոզակի ռոճիկ սահմանեց և թուլստրեց Տրախտեմիրով քաղաքում ունենալ իրենց հիվանդանոցն ու զինանոցը: Դրա դիմաց կոզակները համաձայնվում էին ենթարկվել թագավորի կողմից նշանակված շլախտիչ-սպային և հրաժարվում էին թաքարների դեմ ինքնազուլս հարձակումներից, որոնք հաճախ խանգարում էին Ռեչ Պոսպոլիտայի վարած արտաքին քաղաքականությանը: Ընդունված կանոնների համաձայն՝ բոլոր 600 կոզակների անունները գրանցվեց հատուկ ցուցակում, այսինքն՝ դարձան **ցուցակագրված կոզակներ**, և հիմա ար-

դեն նրանց պարտականությունը ոչ միայն սահմանների պաշտպանությունն էր, այլև չցուցակագրված կոզակներին վերահսկելը:

Սինչև 1589 թ.-ը ցուցակագրված կոզակների թիվը հասավ 3 հազ.-ի: Դրանք հիմնականում նստակյաց, ընտանիքի տեր, լավ տեղավորված և բավականին հարուստ կոզակներ էին: Օրինակ՝ Տիշկո Վոլովիչ անունով ցուցակագրված կոզակի կտակում ներառված էին Չիիի-րինում գտնվող տունը, ձկների արհեստական լճակներով երկու կալվածք, անտառներ ու արոտավայրեր, 120 փեթակ և ոսկու 3 հազ. ձուլակտոր (որոնցից հազարը մեծ տոկոսով գրավ էր դրված): Այնպես որ, համեմատաբար ունևոր ցուցակագրված կոզակները խիստ տարբերվում էին չցուցակագրված կոզակներից, որոնց ունեցվածքը հազվադեպ էր տարբերվում հասարակ գյուղացու ունեցվածքից: Միայն ինչու 3 հազ. ցուցակագրված և 40-50 հազար չցուցակագրված կոզակների միջև հարաբերությունները հաճախ ծայրահեղ լարվածության էին հասնում: Սակայն այդ տարբերությունը չէր խանգարում ունևոր կոզակների որդիներին՝ բախտ որոնելու գնալ Սիչ, կամ հարստացած չցուցակագրված կոզակներին՝ անցնել ցուցակագրվածների շարքը: Այսպիսով, XVII դարի սկզբին ձևավորվեց կոզակների հստակ սահմանազատված երեք շերտ. ունևոր **ցուցակագրված կոզակներ**՝ որոնք ծառայում էին թագավորին ու կառավարությանը, **զապորոժցիներ**՝ որոնք ապրում էին Ռեչ Պոսպոլիտայի սահմաններից դուրս, և կոզակության ահռելի մեծամասնությունը՝ **չցուցակագրված կոզակներ**, որոնք ապրում էին սահմանամերձ քաղաքներում, վարում էին միանգամայն կոզակական ապրելակերպ, բայց չունեին պաշտոնապես սահմանված կարգավիճակ:

### Պայքար թուրք-թաթարների դեմ

Իրենց կազմավորման նախնական փուլում, չցուցակագրված կոզակները և հատկապես զապորոժցիները ոչ միայն ավատատերերի ու թագավորական պաշտոնյաների, այլև հասարակ բնակչության մեծ մասի կարծիքով, գրեթե ոչնչով չէին տարբերվում ավագակներից և հասարակության բազմաթիվներից: Սակայն XVI դարի վերջին կոզակի բացասակ կերպարը փոխվեց, թեկուզև հասարակ ժողովրդի գիտակցության մեջ: Դա հիմնականում կատարվեց շնորհիվ այն բանի, որ կոզակները հետզհետե ավելի հաճախ և հանդգնորեն էին հարձակվում թաթարների ու նրանց հզոր հովանավորների՝ թուրքերի վրա: Սիայն ուկրաինացիները չէ, որ տուժել էին թուրքերից: XVI դարում ողջ Եվրոպան էր սարսափում օսմանյան թուրքերի հարձակման մտքից: 1529 թ.-ին թուրքերն ավերեցին Յուդեպոլսկան և քիչ մնաց գրավեցին Վիեննան, իսկ Արևելյան Եվրոպայի մեծ մասը թաթարների հարձակումների անմիջական սպառնալիքի տակ էր: Այդ պատճառով էլ, ով հանդգնում էր «բուսուրմաններին» (ուկրաինացիներն այդպես էին կոչում մահմեդականներին, այսինքն՝ «անհավատ») դեմ դուրս գալ, նա ձեռք էր բերում հայրենակիցների բարեհաճությունն ու փառք վաստակում արտասահմանում:

Այնուհայտ էր, որ զապորոժցիներին դուր էր գալիս թուրքերի ու թաթարների վրա հարձակումների հետևանքում ձեռք բերված փառքը, սակայն, ռազմարշավներ կազմակերպելով, նրանք նաև գործնական նպատակներ էին հետապնդում, այն է՝ ետ մղել թաթարներին ուկրաինական բնակավայրերից, իսկ օսմանյան քաղաքներում զավթած ավարի շնորհիվ, բազմապատկել իրենց եկամուտները: Հարձակումներից շատերն իրականացվում էին ծովով: Այդ նպատակով կոզակները նավատորմի էին ստեղծում՝ կազմված 40-80 «ծայերից» (ինչպես որանք անվանվում են այն ժամանակվա հայկական ձեռագրերում - խմբ.), որոնք երկար, նեղ ու ոչ խորը մակույկներ էին ներկայացնում իրենցից. յուրաքանչյուր մակույկում կարող էր տեղավորվել մինչև 60 մարդ: Այդ մակույկներով զգուշորեն ու աննկատ սահելով Դնեպրի գետաբերանի մոտ կառուցված թուրք-թաթարական ամրոցների կողքով, կոզակները հարձակվում էին Սև ծովի ափերին գտնվող թուրքական ու թաթարական ամրությունների վրա: Առաջին անգամ նման հարձակում հիշատակվում է 1538 թ.-ին, նախքան Սիչի հիմնումը, երբ կոզակների նավատորմը կիսով չափ ավերեց թուրքական Օչակով ամրոցը: Այնուհետև կոզակներն ավելի հաճախ էին նման արշավներ կազմակերպում, և նրանց փառքը տարածվում էր աշխարհով մեկ, քանի որ Օսմանյան կայսրությունն այդ ժամանակ ամենահզոր տերությունն էր: Եվ ահա, 1595 թ.-ին ավստրիական Հաբսբուրգները, որ թուրքերի գլխավոր բռնամիտներն էին, Սիչ են ուղարկում դեսպան Էրիխ ֆոն Լյաստային՝ Մոլդովայում թուրքերի դեմ համատեղ գործողությունների դաշինք կնքելու: Եվ նույնիսկ Դոմի պապը շտապեց հարաբերություններ հաստատել զապորոժցիների հետ: Ինչպես տեսնում ենք, Սիչը գործում էր դուրս անկախ պետություն՝ պատերազմներ էր մղում, վարում էր ինքնուրույն արտաքին քա-



ղաքականություն: *Թուրքերի դեմ կոզակների արշավանքներն առավել հզոր թափ ստացան 1600-1620 թ.թ.-ներին: 1606 թ.-ին կոզակներն ավերեցին Վառնան՝ թուրքերի Սևծովյա ամենահզոր ամրոցը, 1608 թ.-ին վերցրեցին Պերեկուպը, 1609 թ.-ին՝ Կիլիան, Իզմայիլն ու Ալքերմանը («Սպիտակ ամրոց»-թրք.): 1614 թ.-ին զապորոժցիներն առաջին անգամ հասան Փոքր Ասիայի ծովափերին ու գրոհեցին Տրապիզոնի վրա: Սակայն զապորոժցիների ամենացնցող արշավանքը 1615 թ.-ին կազմակերպած հանդուզն հարձակումն էր Կոստանդնուպոլսի վրա, երբ Սուլթանի և նրա մայրաքաղաքի 30 հազ.-անոց կայազորի քթի տակ 80 կոզակական նավեր թափանցեցին Կոստանդնուպոլսի նավահանգիստ, վառեցին այն ու անպատիժ փախան, ընդ որում՝ 5 տարի անց նույն գործողությունը նույնությամբ կրկնեցին: Վերջապես 1616 թ.-ին կոզակները գրավեցին ատելի Կաֆան՝ ստրուկների շուկան Դրիմում, և ազատեցին ստրկության դատապարտված հազարավոր մարդկանց: Նկարագրելով կոզակների գործողությունները, XVII դարի թուրք պատմաբան Նայման նշում է. «Հաստատ կարելի է ասել, որ աշխարհում չկան մարդիկ, որ ավելի քիչ անհանգստանային իրենց կյանքի համար և ավելի քիչ վախենային մահից, քան սրանք... Նույնիսկ ռազմական գործի գիտակները պնդում են, որ այդ թշվառները, շնորհիվ իրենց խիզախության և հնարամտության, ծովային մարտերում իրենց հավասարը չունեն ամբողջ աշխարհում»:*

Նույնքան տպավորիչ էին կոզակների սխրագործությունները ցամաքում: Ջայրանալով Լեհաստանի պատճառաբանությունից, թե ի վիճակի չէ հնազանդեցնել կոզակներին, սուլթան Օսման II-ը 160 հազ.-անոց հսկայական զորքով և իր տասնյակ հազարավոր զինվորական վասալներով հարձակվեց Ռեչ Պոսպոլիտայի վրա: 1620 թ.-ին Ցեցորայի տակ լեհերը խայտառակ պարտություն կրեցին: Մեկ տարի անց, 35 հազ.-անոց լեհական զորքը Խոտինի մոտ ճգնում էր կանգնեցնել թուրքերին և անկասկած նույն բախտին կարժանանար, եթե ժամանակին օգնության չհասներ 40 հազ.-անոց կոզակական զորքը՝ հեթման Սահայդաչնու գլխավորությամբ (որին XVI դարի հայ պատմագիր Հովհաննես Կամենացին անվանում էր «զայր ոմն քաջ և պատերազմող») - խմբ.):

Բոլոր այս հաղթանակները վստահություն ներշնչեցին կոզակներին՝ իրենց ուժերի նկատմամբ: Լեհերի հետ բանակցություններում հաճախ հանդուզն էին, իրենց կոչում էին հավատարմ պաշտպաններ, ասպետական եղբայրություն, ժողովրդի բարօրության համար պայքարող մարտիկներ: Ի դեպ՝ նման «ճարտասանության» նպատակը շատ պարզ էր. կոզակությունն էլ էր ուզում ստանալ բոլոր այն իրավունքներն ու արտոնությունները, որ պետության մեջ տրված էին զինվորական դասին: Միաժամանակ, տոգորվելով քրիստոնեության, հայրենիքի ու ժողովրդի փրկչի ասպետական վեհ գաղափարներով, կոզակությունն աստիճանաբար սկսեց լրջորեն զբաղվել հասարակության ներքին կյանքին առնչվող հրատապ խնդիրներով:

## Առաջին ապստամբությունները

Լեհական կառավարությունն ու շլախտան շփոթված ու անվճռական էին արձագանքում կոզակության արագ աճին: Նրանց համար կոզակությունն ընդամենը փախստական ճորտերի խաժամուժ էր, բայց թե երբ նրանք այդպես արագ համախմբվեցին, հզորացան ու դարձան կազմակերպված ուժ, չէին կարողանում ըմբռնել ու թշնամությամբ էին լցվում նրանց նկատմամբ: Թշնամությունը՝ թշնամություն, սակայն հարկ եղած դեպքում նրանք չէին խորշում այդ հզոր ուժը ծառայեցնել իրենց շահերին: Պետական պաշտոնյաները, որ խաղաղ ժամանակ կոչ էին անում անգթորեն ոչնչացնել «այդ քրջոտ ինքնազուլխներին», պատրաստակամությամբ ավելացնում էին ցուցակագրված կոզակների թիվը՝ շռայլորեն բարձր ռոճիկ, մեծ արտոնություններ ու իրավունքներ խոստանալով նրանց, երբ Մոսկովիայի կամ Օսմանյան Թուրքիայի կողմից պատերազմի վտանգ էր սպառնում: Եվ երբ վտանգն անցնում էր, նրանք խոստումներն անկատար թողնելուց բացի, կրկին հալածում էին «այդ քրջոտ ինքնազուլխներին»: Նման անհետևողականությունն ու անորոշությունն ավելի էր խորանում կոզակների նկատմամբ երկակի վերաբերմունքից. մի կողմից՝ սահմանամերձ շրջանների ավատատերերն ու տանուտերերն էին, որոնք ամենօրյա բախումների մեջ էին կոզակների հետ, մյուս կողմից՝ թագավորն ու ազնվականությունը, որոնք կոզակությանը դիտում էին որպես քաջ մարտիկների և միևնույն ժամանակ էժան ռազմական ուժի, որը կարելի էր օգտագործել արտաքին թշնամու դեմ, իսկ հարկավոր պահին՝ նաև հզորացող արևելյան ավատատերերի դեմ: Այդ բոլոր հակասությունների սրացումն ու պոռթկումը լոկ ժամանակի խնդիր էր:

Կոզակների առաջին ապստամբությունը բռնկվեց 1591 թ.-ին: Դեռ այդ թվականին էր, որ ուկրաինացի շլախտիչ և ցուցակագրված կոզակների հեթման Կրիշտոֆ Կոսինսկին գահին ծառայելու համար թագավորից հողեր ստացավ: Դեռ չէր հասցրել տիրություն անել այդ հողերին, երբ բիլացերկյան տանուտեր և հռչակավոր տոհմի լեհացած հետնորդ Յանուշ Օստրոժսկին ինքնակամ տիրացավ դրանց: Գիտակցելով, որ բարձրատոհմիկ ազնվականից դատարանին բողոքելով անհնար է արդարության հասնել, Կոսինսկին վրեժը լուծեց՝ իր կոզակների հետ Օստրոժսկու կալվածքների վրա մի շարք հարձակումներով: Շուտով այս վարակիչ օրինակին հետևեցին Վոլինի, Բրացլավշչինայի և Կիևշչինայի գյուղացիները, կոզակներն ու նույնիսկ զինվորականները՝ իրենց տերերից վրեժ լուծելով անարդար վերաբերմունքի համար: Վախեցած շլախտան վերջապես զորք հավաքեց, որը գլխավորեց և Կոսինսկու 2 հազ.-անոց ջոկատի դեմ մարտի տարավ Օստրոժսկիների տոհմի ավագը՝ Կոստյանտին Կոստյանտինովիչը: Պյատկա գետի մոտ տեղի ունեցած մարտում ապստամբները պարտվեցին, սակայն շատ թեթև պատիժ կրեցին: Ապստամբներին միացած ցուցակագրված կոզակներին ստիպեցին թագավորին մեկ անգամ ևս հավատարմության երդում տալ, իսկ Կոսինսկուն՝ երիցս խոնարհվել հատուկ այդ նպատակով հավաքված Օստրոժսկու տոհմի անդամներին և ներողություն խնդրել: Շատ չանցած, չպարզաբանված պատճառով պատահական վեճի ժամանակ նրան սպանեցին:

Դեռ չէր լռել մի ապստամբության արձագանքը, երբ բռնկվեց նորը, որն ավելի լայնածավալ էր: Այն գլխավորում էր Սևերին Նալիվայկոն, որն ըստ լեհական աղբյուրների՝ «ուշագրավ գեղեցկության և ակնառու ունակությունների տեր մարդ էր... բացի այդ՝ հայտնի հրեա-տանավոր»: Ավատատիրոջ գանահարության հետևանքով մահացած գալիցյան կոշկակարի որդի պատանի Սևերինը, եղբոր՝ Դեմյանի հետ ապստամբ գտավ իշխան Օստրոժսկու օստրոժյան կալվածքում: Դեմյանը քահանա և հայտնի գրող դարձավ, իսկ Սևերինը որոշեց «կոզակությամբ հաց վաստակել»: 1595 թ.-ին, Մոլդովայում թուրքերի վրա կատարած հաջող հարձակումից հետո, 2,5 հազ.-անոց զորքի գլուխն անցած, Նալիվայկոն վերադարձավ Բրացլավշչինա, բայց շուտով ընդհարվեց տեղական շլախտայի հետ: Դարձյալ կոզակներն ընթրստացան ատելի շլախտայի դեմ, և դարձյալ նրանց օգնության եկան գյուղացիները: Ավելին՝ ապստամբներին օգնության շտապեցին նաև զապորոժցիները: Ասում էին, որ նրանց հեռահար նպատակներից էր նաև՝ հաղթանակի դեպքում, Ուկրաինայի նվաճած հողերում հիմնել իրենց՝ կոզակների իշխանությունը:

Այն ժամանակ, երբ զապորոժցիները Հրիհորիյ Լորոդայի և Սատվիյ Շաուլայի գլխավորությամբ գործում էին Կիևշչինայում և Բրացլավշչինայում, Նալիվայկոն հաղթական երթով անցավ ամբողջ Գալիչինայի, Վոլինի և Բելոռուսիայի միջով՝ ապստամբության կոչ անելով գյուղացիներին և սարսափ տարածելով շլախտայի մեջ: Սակայն, վստահ չլինելով լեհական կանոնավոր բանակի դեմ հաղթանակ տանելու մեջ, 1596 թ.-ի գարնանը ապստամբները միացյալ ուժերով ետ քաշվեցին դեպի արևելք՝ հույս տածելով անհաջողության դեպքում պաշտպանություն գտնել Մոսկովիայում: Մինչև մայիս նրանք հաջողությամբ ետ էին մղում լեհերի գրոհները, սակայն մեծ կորուստներ կրելով ոչ միայն կռիվներում, այլև սովի ու հիվանդությունների պատճառով, Նալիվայկոյի հյուծված և ուժասպառ բանակում պատակտում ընկավ: Լորոդային, որը հակված էր լեհերի հետ բանակցությունների միջոցով հաշտության ու խաղաղության հասնելու, մեղադրեցին թշնամու հետ գաղտնի հարաբերությունների մեջ ու սպանեցին: Սակայն շուտով նրա կողմնակիցները (որ մեծ մասամբ ավագներն ու հարուստ կոզակներն էին) Նալիվայկոյին անաղմուկ հանձնեցին լեհերին և ապստամբներին համոզեցին զենքերը վայր դնել: Օգտվելով ապստամբների բանակում տիրող անկարգությունից, լեհերը ներխուժեցին նրանց ճամբարն ու անգթորեն կոտորեցին մեծամասնությունը: Նալիվայկոյին տարան Վարշավա և մահապատժի ենթարկեցին:

## Փոխզիջման որոնումներում

Նալիվայկոյի ջոկատները կոտորելով, լեհերն համարում էին, որ «կոզակության հարցը» լուծեցին, առավել ևս՝ որ կոզակների ներքին խնդիրները գնալով սրվում էին: Քաղաքների սուցակագրված հարուստ կոզակները հիմնականում կողմնակից էին բանակցելու և համապարօնակցելու Ռեչ Պոսպոլիտայի հետ: Որպես հարուստ սեփականատերեր, նրանք շահագրգռված էին հասարակական կայուն կարգավիճակ ունենալու մեջ՝ իրենց ունեցածն հանգիստ վայելելու և ավելի մեծ հարստություն դիզելու համար: Սակայն կոզակության մեծամասնությունը, որ բաղկացած էր զապորոժցիներից և չցուցակագրված կոզակներից, ոչ



միայն սեփականություն չունեին, այլև կրկին ճորտանալու վտանգը դամոկլյան սրի պես կախված էր նրանց գլխին: Այդ պատճառով էլ, իրենց հասարակական կարգավիճակը կաշտնազնեցի և սոցիալական պայմանները բարելավելու հույսը դրել էին միայն վճռական գործողությունների վրա, և մշտական տարածայնությունների մեջ էին հարուստ փոքրամասնության հետ: Լեհերին քաջ հայտնի էին կոզակության տարածայնությունները և, նրանք առաջնորդվում էին դարերի քննությունը բռնած սկզբունքով՝ «բաժանիր, որ տիրես»:

Այս ճակատագրական պահին բախտը կրկին ժպտաց կոզակներին: XVII դարի սկզբին Ռեչ Պոսպոլիտան կրկին անհուսորեն խրվեց երկարատև պատերազմների մեջ և դարձյալ դիմեց կոզակությանը՝ որպես փորձված ռազմական ուժի: 1601 թ.-ին ուկրաինական 2 հազ.-անոց ջոկատը մասնակցեց լեհերի համար դժվարին Լիվոնյան ռազմարշավին, իսկ 1605 և 1609 թվականներին, երբ լեհերն օգտվելով Մոսկովիայում տիրող, այսպես կոչված՝ խառը ժամանակներից, ինտերվենցիա կազմակերպեցին, նրանց հետ էին և զապորոժցիները: Այդ ժամանակներում Սեյմի նիստերում լեհ քաղաքագետների կազմած նախագծերում կամ ընդունած որոշումներում *հազվադեպ էր պատահում, որ հաշվի առնված չլիներ կոզակության ռազմական ներուժը, բայց և՛ խուսափելով բավարարել կոզակների պահանջները՝ ավելացնել ցուցակագրված կոզակների թիվը և ընդլայնել ինքնավարությունը:* Այդ քաղաքական բարդ իրավիճակում ճիշտ կողմնորոշվելու համար կոզակներին տաղանդավոր ու խելացի առաջնորդ էր պետք, որն էլ, բարեբախտաբար, գտնվեց:

### Չեթման Պետրո Սահայդաչնի

Պատմաբաններն ընդհանուր առմամբ համամիտ են այն հարցում, որ մինչև Բոգդան Խմել-նիցկին, կոզակական ամենաակամավոր հեթմանը **Պետրո Կոնոնովիչ Սահայդաչնին** էր: Ծնվել է Գալիչինայի Սամբոր քաղաքում, աղքատ շլախտիչի ընտանիքում: Օստրոգի ակադեմիան ավարտելուց հետո գնում է Ջապորոժյան Սիչ: Այնտեղից 1616 թ.-ին գլխավորում է դեպի Կաֆա (Թեոդոսիա) նշանավոր ծովային արշավանքը, որտեղից վերադառնում է մարտական փառքի լուսապսակով և ընտրվում հեթման:

Նոր հեթմանի քաղաքականության անկյունքարը՝ լեհերի հետ հաշտ լինելն էր: Սահայդաչնին համոզված էր, որ կոզակներն առայժմ Ռեչ Պոսպոլիտայի հետ չափվելու ուժ չունեն: Բակառակը՝ նա կոզակական մեծ ջոկատներ կազմեց, որոնք իր ղեկավարությամբ լեհական բանակի շարքերում մասնակցում էին Մոսկովիայի և Օսմանյան Թուրքիայի դեմ երկարատև ռազմարշավներին: Լինելով խիստ կարգապահության ջատագով, որը՝ «առատորեն հեղում էր անհնազանդների արյունը», Սահայդաչնին կոզակների անջատ ու անհնազանդ ջոկատները շատ արագ վերափոխեց կարգապահ շարային զորքի, որն անվերապահորեն ենթարկվում էր իր հրամանատարներին: Լեհերի հետ բախումներից խուսափելու համար, 1619 թ.-ին համաձայնվեց ցուցակագրված կոզակների թիվը նվազեցնել մինչև 3 հազ., հրաժարվեց ծովային ինքնակամ արշավանքներից և նույնիսկ՝ ճանաչեց կոզակական ավագանու ցուցակը վավերացնելու թագավորի իրավունքը: Սակայն Սահայդաչնու ամենամեծ նվաճումն այն էր, որ նա, հիմնականում միայն իրենց դասի շահերն հետապնդող սոցիալական մեղ շերտից, կոզակությանը վերածեց ողջ ուկրաինական հասարակության առաջատար ներուժի: Չենց Սահայդաչնու հղացած գաղափարն էր՝ կոզակության կոպիտ ու հզոր ռազմական ուժի միավորումը ուկրաինական վերնախավի նուրբ, բայց քաղաքականապես թույլ հոգևոր-մշակութային ուժին: Ավելին, հեթմանը նման միության գաղափարը կյանքի կոչելու բավականին համոզիչ ու ակնառու ձև գտավ. 1620 թ.-ին Սահայդաչնին ամբողջ Ջապորոժյան Կոչի (ռազմական ճամբար) հետ միասին Կիևյան միաբանության մեջ մտավ: Այդ քայլը պետք է պարզորոշ ցուցադրեր, որ գապորոժցիներն այսուհետև մեկընդմիջտ կանգնած են ուկրաինական հասարակության հոգևոր-մշակութային շահերի պաշտպանության դիրքերում և անվերապահ կատարելու են նրա հոգևոր ոլորտի բոլոր պահանջները: Չենց նույն թվականին էլ Սահայդաչնին և ուղղափառ հոգևորականները միասին Կիև են հրավիրում Երուսաղեմի պատրիարք Ֆեոֆանին, որպեսզի նա անձամբ ձեռնադրի նոր միտրոպոլիտին և եպիսկոպոսներին: Լեհերը պատրիարքին լրտես հայտարարեցին և սպառնացին ձերբակալել նրան, սակայն Սահայդաչնին խոստացավ ապահովել իր բարձրաստիճան հյուրի անվտանգությունը: Հանդիսավոր ծիսակատարությունից հետո, հեթմանն իր 3-հազ.-անոց կոզակական պահակազորով պատրիարքին Կիևից ուղեկցեց մինչև թուրքական սահմանը:

Սահայդաչնին այնպիսի մեծ հեղինակություն ու հարգանք էր վայելում, որ երբ 1622 թ.-ին կնքեց իր մահկանացուն, գրեթե ողջ Կիևն էր մասնակցում նրա հուղարկավորությանը:

Կիևյան միաբանության դպրոցի ռեկտոր Կասիյան Սակովիչն այս ցավալի մահվան կապակցությամբ մի հուզիչ ու պերճախոս ներբող գրեց, ուր Սահայդաչնուն կոչում էր **իմաստուն առաջնորդ, ուղղափառության անձնվեր պաշտպան ու հովանավոր**, նրա գործունեությունը կապելով Կիևյան իշխանների ավանդույթների հետ: Ակնհայտ փաստ էր, որ կոզակությունն անվերապահ մտել է ուկրաինական հասարակության կենսահոսքի մեջ:

### Դարձյալ ապստամբություններ

Սահայդաչնու մահից հետո լեհ-ուկրաինական հարաբերություններում կրկին գլուխ բարձրացրեցին խորը տարածայնությունները: Սկզբում թվում էր, թե կարելի է խուսափել ընդհա-



Պետրո Սահայդաչնի

րումներից, քանի որ հեթմանի ամենամտերիմ հետնորդներ Օլիֆեր Չոլուբը և Միխայլո Դորոշնկոն նրա համախոհներն էին և կիսում էին հեթմանի քաղաքական հայացքներն ու խաղաղասիրական ձգտումները: Բայց նրանք ստիպված էին հաշվի նստել նաև կոզակների աճող դժգոհությունների հետ, հատկապես չցուցակագրվածների, որոնց կրկին սպասում էր ճորտի պաշտոնական կարգավիճակը (ինչպես նախատեսում էր կառավարությունը), իսկ իրականում՝ անկարգավիճակ անորոշությունը:

1621 թ.-ին Խոտինի մոտ տեղի ունեցած ճակատամարտից փառքով դուրս եկած 40 հազանոց կոզակական բանակը, որ Ռեչ Պոսպոլիտան փաստորեն փրկել էր Օսմանյան խայտառակ օկուպացիայից, բարձր տրամադրությամբ վերադառնում էր ուկրաինա, և ճորտի կարգավիճակում մնալու դույզն ինչ տրամադրություն ու մտադրություն չունեց, բայց և հույս ուներ համալրելու ցուցակագրված կոզակների շարքերը (ցուցակագրվածների թիվը պետք է լիներ ընդամենը 3000): Նրանց մի մասը կրկին հավաքվեց Ջապորոժյան Սիչում, մինչդեռ



մեծամասնությունը կրկին վերադարձավ իր քաղաքներն ու գյուղերը: Այսպես անորոշության մեջ՝ նրանք միայն հարձակարիքի էին սպասում իրենց դժգոհությունը բարձրաձայն արտահայտելու համար: 1620-ական թվականների կեսերին, ձգտելով նրանց կուտակված գայրույթը տանել այլ հունով, Դորոշենկոն մի շարք ծովային արշավանքներ կազմակերպեց թուրքերի դեմ՝ տեղեկացնելով նրանց, թե՛ «լեհական թագավորը կարող է հաշտվել ձեզ հետ, բայց մենք՝ ոչ»: Կարելի է ասել, ճիշտ ժամանակին դինաստիական երկպառակություն սկսվեց Դրիմում, որում առաջին անգամ ներքաշվեցին կոզակները՝ սատարելով Դրիմի խառնության գահի հավակնորդ այն թեկնածուին, որը խոստանում էր Դրիմն ազատագրել Օսմանյան կայսրության գերիշխանությունից և անկախ հայտարարել:

*Լեհերին սկսում էր խիստ զայրացնել այն, որ կոզակներն համառորեն ձգտում էին դառնալ «պետություն» պետության մեջ»:* Թագավորը սեյմում բողոքում էր, թե՛ «ծայրամասերում տիրող ներքին անարխիան դարձյալ արտաքին բարդություններ է առաջացնում և մեզ ներքաշում է ընդհարումների մեջ մեր հզոր հարևանների հետ: Անտեսելով իրենց պաներին հավատարմությամբ ծառայելու պարտականությունները, նրանք (կոզակները - հեղ.) իրենց կարգերն են հաստատել և սպառնում են անմեղ մարդկանց կյանքին և ունեցվածքին: Բացի այդ՝ ամբողջ Ուկրաինան նրանց է ենթարկվում»: Որոշում ընդունելով կոզակության նկատմամբ «ամուր ձեռքի» քաղաքականություն կիրառել, լեհական կառավարությունը, որպես հատուկ հանձնակատար Ուկրաինա ուղարկեց խիստ, պատերազմներում թրծված զորավար Ստանիսլավ Կոնեցպոլսկուն, որը, միևնույն ժամանակ, մեծ կալվածքներ ուներ Ուկրաինայում: 1625 թ.-ին, 8 հազ. անոց զորքի գլուխ անցած, Կոնեցպոլսկին շարժվեց դեպի Ուկրաինա: Ձապորոժյան Սիչից նրա դեմ դուրս եկավ 6 հազ. անոց կոզակական բանակը՝ Մարկո ժայռոյի գլխավորությամբ: Լեհերի դեմ մի քանի անհաջող մարտեր վարելուց հետո, զապորոժցիները կրկին հեթման ընտրեցին հավասարակշիռ Դորոշենկոյին և հակառակորդի հետ բանակցությունների մեջ մտան, որոնք հանգեցրին փոխզիջման. ցուցակագրվածների թիվն ավելացավ մինչև 6 հազ. մարդ: Հասկանալի է, որ դա ձեռնտու էր կրկին այն նույն՝ «վաստակած» (և հարուստ) կոզակներին, որոնք էլ ընկան այդ ցուցակի մեջ: Կոզակների գերակշռող մասին կրկին սպառնում էր ամենահաս ճորտության չարքաշ ու նվաստացուցիչ լուծը:

Ցուցակագրումն ավարտվելուց հետո Դորոշենկոն սկսեց կատարելագործել 6 հազ. «օրինակական» կոզակների կազմակերպական կառուցվածքը. նրանց բաժանեց 6 զնդի, որոնք մշտապես կցվում էին 6 քաղաքների՝ Կիևին, Կանևին, Կորսունին, Բիլա Ցերկվային, Պերեյասլավին և Չերկասին: Ցուրաբանչուր գունդ բաղկացած էր 100 հոգանոց 10 ջոկատներից, որոնցից յուրաքանչյուրը մշտապես տեղավորվում էր զնդի տարածքում գտնվող փոքր քաղաքներից մեկում: Համապատասխան տարածքի բոլոր կոզակների և քաղաքացիական, և՛ ռազմական իշխանությունը բացարձակապես պատկանում էր կոզակական ավագանուն, որն էլ իր հերթին ենթարկվում էր հեթմանին ու իր գրասենյակին, որոնք ընտրվում էին կոզակների կողմից, բայց վավերացնում էր թագավորը: Այսպիսով՝ ցուցակագրված կոզակները ինքնավարություն ստացան, չնայած՝ լեհերի խիստ հսկողության տակ: Ի տարբերություն նրանց, Ձապորոժյան Սիչը՝ այդ ռազմաշունչ, «անօրեն ու մերժված» կոզակների ամրոցը, չնայած օրենքով ենթարկվում էր հեթմանին, բայց իրականում պահպանում էր իր ինքնավարությունը: Ցուցակագրվածների քանակն ավելացնելով, լեհերն հույս ունեին, որ նրանք արդեն կհսկեն չցուցակագրվածներին: Երբ 1629 թ.-ին հեթման ընտրվեց լեհամետ Չրիցկո Չյոռնին, Ռեչ Պոսպոլիտան, կարծես թե, վերջապես գտավ իդեալական հնազանդ մարդուն: Սակայն, թագավորին ու պետությանը իր հավատարմությունն ու նվիրվածությունը ցուցադրելու առիթները բաց չթողնող հեթմանն իր վարկեցողությամբ համարժեք ատելություն առաջացրեց կոզակների մեջ և 1630 թ.-ի սկզբին զապորոժցիների ջոկատը Չյոռնուն փախցրեց ու տարավ Սիչ, որտեղ նրան դատեցին ու սպանեցին:

Դրանից հետո, զապորոժցիներն ու չցուցակագրված կոզակներն իրենց հեթման ընտրեցին հանդուզն ու խիզախ Տարաս Ֆեդորովիչին, որին կոչում էին Տրյասիլո: Հենց նա էլ առաջնորդեց ապստամբների հսկայական զորքը: Եվ դարձյալ՝ Կոնեցպոլսկին, թագավորական զորքի և ցուցակագրված կոզակական զնդերի գլուխ անցած, դժվարին և ուժասպառ անող ռազմարշավի ելավ կոզակների դեմ: Բայց այս անգամ ռազմական բախտը լքել էր նրան, և 1630 թ.-ի օգոստոսին, Պերեյասլավում ստիպված եղավ «խռովարարների» հետ պայմանագիր կնքել՝ գնալով մեծ զիջումների. ցուցակագրումն ավելանում էր մինչև 8 հազ., Տրյասիլոն անպատիժ էր մնում և բոլոր ապստամբներին ներում էր շնորհվում: Բայց հազարավոր չցուցակագրվածների կարևորագույն խնդիրը, որ ապստամբության էր հանգեցրել, այդպես էլ

մնաց չլուծված:

Կոզակական ազատախմբերից մեկընդմիջտ ազատվելու համար, 1635 թ.-ին Դնեպրի մոտ, Սիչից քիչ վերև, լեհերը ձեռնարկեցին Կոզակ հզոր ամրոցի կառուցումը, որը պետք է խոչընդոտեր կոզակների մուտքը Ռեչ Պոսպոլիտա: Սակայն ամրոցի կառուցման ավարտից մի քանի ամիս առաջ կոզակների ջոկատը Իվան Սուլիմայի գլխավորությամբ, հիմնահատակ ավերեց կառույցն ու ոչնչացրեց նոր ժամանած կայազորը: Ցուցակագրված կոզակները, ձգտելով արժանանալ լեհերի բարեհաճությանը, բռնեցին Սուլիմային և հանձնեցին իշխանություններին. նրան մահապատժի ենթարկեցին: Շուտով՝ 1637 թ.-ի օգոստոսին, լեհերի դեմ ապստամբ կոզակների նոր բանակ ելավ՝ Պավլո Պավլյուկի գլխավորությամբ: Սիչից դեպի հյուսիս շարժվող Պավլյուկի զորքին բազմաթիվ գյուղացիներ էին միանում, ընդ որում՝ ոչ միայն Աջափնյա Դնեպրի, այլև նոր-նոր յուրացվող ձախափնյա շրջաններից: 1637 թ.-ի դեկտեմբերին, լեհական բանակը, Հիիիրինի մոտ գտնվող Կուսնյկում, խորամանկությամբ ստիպելով մարտ ընդունել բաց տարածությունում, ջախջախիչ պարտության մատնեց ապստամբներին: Սակայն ապստամբությունը դրանով չավարտվեց: Այն շարունակվեց Չախափնյակում՝ Յացկո Օստրյանինի և Դիիտրո Հունյայի գլխավորությամբ, մինչև 1638 թ.-ի ամառը:

Իրենց հաղթանակներից թևավորված և վրիժառության ծարավով լցված լեհերն այլևս մտադիր չէին սակարկել կոզակների հետ: Նրանք արդեն իրենց պայմաններն էին թելադրում: Ըստ «օրդինացիայի», այսինքն սեյմի ընդունած նոր օրենքի՝ ցուցակագրվածների թիվը կրկին նվազեցվում էր մինչև 6 հազ., և նույնիսկ նրանք կորցնում էին ինքնակառավարման իրավունքը: Հեթմանի պաշտոնը վերանում էր և դրա փոխարեն թագավորը լեհ ավագ էր նշանակում: Կոզակների գնդապետներն ու յասավուլները պետք է այսուհետև ընտրվեին շլյախստայից: Խիստ սահմանափակվում էր կոզակների բնակավայրերի տարածքը, իսկ ով փորձեր առանց թույլտվության Սիչ փախչել, դատապարտվում էր մահվան: Ցուցակագրումից դուրս մնացած հազարավոր կոզակներ ճորտ հայտարարվեցին: Ի հավելումն այս դաժան օրենքների, ավատատերերը, հատկապես ամենահարուստ հողատեր Յարեմա Վիշնևցկին, երկրում խիստ ահաբեկչություն մտցրեցին՝ առանց խտրության բռնելով, տանջելով ու սպանելով բոլոր նրանց, ով դուրս ինչ կասկածվում էր անհնազանդության մեջ: Լեհական լյտի շլյախտիչները «կոզակական հարցը» յուրովի էին լուծում. «Կոզակները, - ասում էին նրանք, - մեր հասարակության եղունգներն են, նրանք շատ արագ են աճում և հաճախ կտրել է պահանջում»: Եվ իրոք, հաջորդող տասը տարիները, որ լեհ պատմաբանները հաճախ «ոսկե ժամանակ» են անվանում, այնպես կայուն ու խաղաղ ժամանակաշրջան էր, որ թվում էր, թե «կոզակական հարցը» լուծելու միակ արդյունավետ միջոցը նրանց հետ բռնության ու պատժի լեզվով խոսելն է:

Այստեղ կարևոր է դիտարկել այն հանգամանքները, որոնք վերոհիշյալ 45 տարիների ընթացքում Ուկրաինայում բռնկված կոզակական-գյուղացիական 5 խոշոր ապստամբությունների պարտության պատճառ հանդիսացան:

Այդ անհաջողությունների հիմնական պատճառն այն էր, որ չնայած ապստամբություններում կոզակների առաջատար դերին, նրանք մասնակիցներից շատերը գյուղացիներ էին, ինչի հետևանքով դրանցում ակնառու են մի շարք թերություններ, որոնք հատուկ են բոլոր գյուղացիական խռովություններին: Տարերայնորեն պոռթկալով՝ այդ ապստամբությունները ոչ մանրամասն պլանավորված էին, ոչ էլ հեռահար նպատակներ էին հետապնդում: Անարդարությունների համար վրեժ լուծելուց բացի՝ ոչ կոզակները, ոչ գյուղացիները պատկերացում անգամ չուներին, թե ինչ են ուզում: Չնայած իրենց արտակարգ խիզախությանը՝ նրանք ռազմավարության ու մարտավարության մեջ բազմաթիվ սխալներ էին թույլ տալիս և սահմանափակ էին գործողությունների մեջ, քանի որ գյուղացիները չէին ուզում կռվել ոչ իրենց տարածքներից դուրս՝ օտար հողերում, ոչ էլ ցամաքի կամ բերքահավաքի ժամանակ: Գործողությունների չհամաձայնեցվածությունը բացատրվում էր նաև կոզակական միջավայրի սոցիալ-տնտեսական տարբերություններով. կորցնելու բան չուներալով՝ շարքային կոզակները միանգամից գնում էին ապստամբության, մինչդեռ ավագանու ունևոր ներկայացուցիչները սովորաբար գերադասում էին բանակցությունները, զիջումները և նույնիսկ՝ հանձնվելը:

Այնուամենայնիվ՝ չնայած այս բոլոր թերություններին, ամեն մի նոր ապստամբություն վկայում էր ապստամբողների ուժի ու ռազմական փորձի աճի մասին: Ավելանում էր ապստամբների թիվը, կատարելագործվում էր մարտավարությունը: Կոզակությունն ավելի խորն էր համակվում հարստահարվող գյուղացիության և արհամարհվող ուղղափառ հավա-



տի պաշտպանության գաղափարներով: Տասնամյա «ոսկե հանգիստը» խաբուսիկ էր. եթե վերևում լիակատար անդորրն էր տիրում, ապա խորքերում ժայթքելու պատրաստ կրքերն էին եռում:

## Եկեղեցի և մշակույթ

Ինչպես քաղաքական ու սոցիալ-տնտեսական, այնպես էլ եկեղեցական ու հոգևոր-մշակութային առումներով, Ուկրաինայի կենսագործունեության կենտրոնը XVII դարի սկզբին տեղափոխվեց արևելք: Վոլինի և Գալիչիանայի ամբիջական հարևանությունը Լեհաստանի հետ, որտեղ կաթոլիկական Յակոբիտները էր մոլեզնում, իր ամբիջական կործանարար ազդեցությունն էր թողնում Ուկրաինայի արևմտյան շրջանների ուղղափառ մշակույթի կենտրոնների վրա: Ինչպես հիշում ենք, 1608 թ.-ին, երբ մահացավ իշխան Կոստյանտին Օստրոժսկին՝ այդ «ուղղափառության պատվարը», նրա նորադարձ և մոլեռանդ կաթոլիկ թոռնուհին՝ Աննա Խոդակևիչը ճիզվիտներին փոխանցեց Օստրոգի ակադեմիան: Լվովյան միաբանության դպրոցը նույնպես անկում ապրեց, քանի որ լեհական կառավարության և կաթոլիկ եկեղեցու անընդհատ ճնշումների հետևանքով սնանկացած ուղղափառ քաղաքացիներն այլևս չէին կարող հարկ եղածին պես սատարել նրան: Միևնույն ժամանակ, արևելյան վոյեվոդությունները ոչ միայն արագ հարստանում ու զարգանում էին հացահատիկային բուսի հետևանքով, այլև գրեթե անհասանելի էին լեհ-կաթոլիկական ազդեցությանը: Եվ դարձյալ Կիևը, որ արագ հարստանում ու խիտ բնակեցվում էր, վերելք էր ապրում նաև որպես ուկրաինական ուղղափառության կենտրոն:

Ուկրաինայի նոր յուրացված հողերում ուղղափառության վերածննդի շարժիչ ուժ հանդիսացավ Կիև-Պեչերյան մայրավանքը (լավրան): 1610-ական թվականներին, գալիցյան շլախտիչի ժառանգ Ելիսեյ Պլետենեցկին՝ մայրավանքի վանահայրը, իր շուրջն համախմբեց հիմնականում Գալիչիանայից սերած լուսավորյալ հոգևորականներին, որոնց թվում էին՝ Իով Բորեցկին, Տարասիյ Չեմկոն, Չախարի Կոպիստենսկին, Պամվա Բերիմոյան և Լավրենտիյ Չիզանին: Տպագրական հաստոց ձեռք բերելով, Պլետենեցկին ձեռնամուխ եղավ, այն ժամանակների համար հսկայածավալ, իր գրադարատարակչական ծրագրերի իրականացմանը և 15 տարվա ընթացքում լույս ընծայեց մոտ 30 անուն գիրք (հիմնականում՝ հոգևոր թեմաներով), այսինքն՝ ավելի, քան Ուկրաինայում գրատպության հիմնադրման օրից: Այդ օրինակից ոգեշնչված, Կիևի ուղղափառ շլախտիչները, քաղաքաբնակներն ու հոգևորականությունը 1615 թ.-ին Բոգոյավլենսկի եկեղեցուն կից միաբանություն հիմնեցին՝ հարուստ ազնվական Ելիզավետա (Յալշկա) Յուլևիչի՝ հոգևոր կարիքների համար կտակած փողերով: Այդ միաբանության եզակի առանձնահատկությունն այն էր, որ հենց սկզբից սերտ կապեր էր պահպանում գաղորոծիների հետ: Հավանաբար այդ կապերն հաստատվել էին Յոսիպ Կուրցկիչի միջոցով, որը Տերեխտեմիրովի (քաղաք, ուր կոզակական հիվանդանոց, զինանոց ու զանձարան կար) վանքի վանահայրն էր: Մինչև 1610 թ.-ը այդ կապերն այնքան էին ամրապնդվել, որ կոզակները բացահայտորեն հայտարարեցին, թե իրենք ուղղափառությունից չեն հրաժարվում և պաշտպանելու են այն հոգևոր հայրերին, որոնք «չեն դավաճանել մեր հին հավատքին»: Ինչպես գիտենք, 1620 թ.-ին, Սահայդաչնու օրոք, ամբողջ Կոչով դարձել էին Կիևյան միաբանության անդամ և կարևորը՝ ամեն կերպ աջակցեցին նոր հոգևոր առաջնորդներ օծելու արարողությանը: Այդ իրադարձությունը շատ մեծ նշանակություն ուներ: Չէ որ 1596 թ.-ի Բերեստյան ունիայից հետո, երբ ուղղափառ հայրերի մեծ մասը դարձավ ունիական, ուղղափառ համայնքը փաստորեն անհովիվ էր մնացել: Եվ երբ Երուսաղեմի պատրիարք Ֆեոֆանը Կիևյան միտրոպոլիտ օծեց Իով Բորեցկուն և ուն քանի եպիսկոպոս ձեռնադրեց, ուկրաինական եկեղեցին կրկին իր հայրապետներն ունեցավ: Ինչպես և սպասելի էր, կաթոլիկներն ու հույն-կաթոլիկները գայրույթով ընդունեցին այս «անօրինական» ակտը: Լեհական կառավարությունը, որ այդ ժամանակ կոզակների ռազմական օգնության կարիքն ուներ, գերադասեց չմիջամտել ուկրաինացիների եկեղեցական գործերին, իսկ որոշ ժամանակ անց նաև ստիպված եղավ ճանաչել ուղղափառ նոր միաբանությունը:

1620 թ.-ի իրադարձությունները ծայրահեղ սրեցին ուղղափառների և հույն-կաթոլիկների բռնամտությունը: Ի հավելումն դավանաբանական և ծիսական որոշակի անհամաձայնությունների, անլուծելի վեճեր սկսվեցին մի ժամանակ ընդհանուր եկեղեցական տիրույթների համար: Եկեղեցիներն ու վանքերը իրենց պատկան տիրույթներով տնօրինելու իրավունքի հա-

մար վեճերը հաճախ վերածվում էին մանրակրկիտ մշակված ու կազմակերպված ճակատամարտերի, որոնց ընթացքում հարյուրավոր հոգևորականներ էին զոհվում: Իսկ 1623 թ.-ին, Պոլոցկում տեղի հույն-կաթոլիկների արքեպիսկոպոս Յոսաֆաթ Կուցնևիչը, որ ձգտում էր ուղղափառներից երկու եկեղեցի խլել, կատաղած ամբոխի գոհը դարձավ: Այս եղբայրասպան կռիվներից անհանգստացած, մի քանի նշանավոր ուղղափառ հայրեր, հատկապես Պոլոցկի արքեպիսկոպոս Մելետիյ Սմոտրիցկին և Կիևի միաբանության դպրոցի ռեկտոր Կասիյան Սակովիչը, փորձեցին փոխզիջման հասնել, «որը կմիավորեր երկու Ռուսիաները»: 1628 թ.-ին նրանք երկու անգամ՝ Կիևում և Լվովում, ուղղափառներին և հույն-կաթոլիկներին համատեղ խորհրդի կանչեցին, բայց ոչնչի չհասան: Հիասթափվելով ուղղափառների անուղղելի մարտական անհաշտվողական տրամադրվածությունից, նրանք թեքվեցին հույն-կաթոլիկների կողմը և վերջապես միացան նրանց:

Ստեղծված իրավիճակից դուրս գալու այլ ելք գտավ Կիևի միտրոպոլիտ Իով Բորեցկին: Ուկրաինական ուղղափառության համար ոչ մի ապագա չտեսնելով Լեհաստանի գերիշխանության ներքո, 1625 թ.-ին նա դիմում է մոսկովյան ցարին՝ Ուկրաինան իր հովանավորության տակ վերցնելու խնդրանքով: Պետք է ասել, որ նման քայլն անսպասելի չէր: Դեռ 1570-ական թվականներին Լվովի միաբանությունը սերտ կապեր էր հաստատել ուղղափառ Մոսկովիայի հետ, իսկ XVII դարի սկզբին Ուկրաինայի ուղղափառ քահանաներից շատերն էին սպաստան գտնում Մոսկովիայում՝ խուսափելով կաթոլիկների հետապնդումներից ու հալածանքներից: Սակայն Մոսկվան զգուշորեն արձագանքեց այդ խնդրանքին: Չցանկանալով հրահրել Լեհաստանի դժգոհությունը, միայն բարոյական ու դրամական աջակցություն ցույց տվեց: Վերջապես, 1632 թ.-ին ինքը՝ լեհական կառավարությունը որոշեց վերջ դնել ուղղափառների և հույն-կաթոլիկների միջև այդ քայքայիչ երկպառակությանը և փոխզիջումային ելք պարտադրեց. ուղղափառ միջուկները պաշտոնական ճանաչում ստացավ, իսկ վեճի առարկա սեփականությունը կիսվեց երկու եկեղեցիների միջև: Այդ փոխզիջման «ճարտարապետներից» մեկը Կիևի նոր միտրոպոլիտ Պետրո Սոհիլան էր: Պատմաբաններից շատերը նրան համարում են XVII դարի ամենաակնազարկ եկեղեցական գործիչն Ուկրաինայում: Մոլդովական ազնվագարն տոհմի գավակ Սոհիլան, իր շատ հայրենակիցների նման, սկզբնական կրթությունն ստացել էր Լվովի միաբանության դպրոցում: Ուսումնառությունն ավարտելով Փարիզում, նա վերադառնում է Ուկրաինա և հոգևոր ասպարեզում արագորեն մեծ հաջողությունների հասնում: 1627 թ.-ին, 31-ամյա Սոհիլան դառնում է Կիև-Պեչերյան մայրավանքի վանահայրը, իսկ հինգ տարի անց՝ Կիևյան միտրոպոլիտը:

1632 թ.-ից սկսած, երբ ունիականների հետ տասնամյակներ տևած կատաղի պայքարից հետո համեմատական հանգիստ էր տիրում, Սոհիլան ուղղափառ եկեղեցուն և նրա կրթամշակութային հաստատություններում մի շարք վաղուց հասունացած և անհրաժեշտ բարեփոխումներ իրականացրեց: Իր շուրջը հավաքելով մի խումբ լուսավորյալ աստվածաբանների և եկեղեցական շնորհալի գրիչների ու ծաղկողների, որն հետագայում կոչվեց Սոհիլյան կոնցենում, նոր միտրոպոլիտը համակարգեց ուղղափառ ծիսակարգն ու դոգմաները և տպագրության պատրաստեց ուղղափառ առաջին Կատեխիզիսը: Դեռևս Կիև-Պեչերյան մայրավանքի վանահայր եղած ժամանակ նա Մայրավանքի դպրոց էր հիմնել: Միտրոպոլիտ օձվելով, նա այդ դպրոցը միավորեց Միաբանության դպրոցի հետ, հիմք դնելով այսպես կոչված՝ Սոհիլյան կոլեգիայի, որին վիճակված էր հետագայում դառնալու սլավոնական աշխարհի ուղղափառ ուսումնա-դաստիարակչական կարևորագույն կենտրոններից մեկը: Գիզվիտական դպրոցների օրինակով՝ կոլեգիան ձգտում էր դասական կրթություն տալ սաներին: Հատուկ ուշադրություն էր դարձվում լատիներեն ու լեհերեն լեզուներին: Հին հունարենը, որին միաբանության դպրոցներում նախկինում նախապատվություն էր տրվում, երկրորդ պլան մղվեց: Ընդհանրապես, Սոհիլյան կոլեգիայի ամբողջ ծրագիրն արտացոլում էր այդ ժամանակների հատուկ միտումը՝ վերցնել և՛ արևելյան՝ ուղղափառ-սլավոնական, և՛ արևմտյան՝ լատինա-կաթոլիկական հոգևոր ու գիտական ուսմունքների ամենալավն ու առաջավորը և համատեղել: Սակայն, հրապուրված Արևմուտքի մշակութային ժառանգությամբ, միտրոպոլիտ Սոհիլան և իր շրջապատը մոռանում էին, որ լատին հեղինակների փիլիսոփայական տրակտատները, պատմական աշխատություններն ու պոետական ստեղծագործությունները հասանելի և հետաքրքիր են միայն սակավաթիվ կրթված գիտնական-սխոլաստների, իսկ ուկրաինական հասարակությունը լայնորեն վերցրած՝ ոչ կիսականար, ոչ էլ կարծազանքեր այդ ամենին: Այսպես կիևյան հոգևոր վերնախավի և ուկրաինական հասարակության միջև աստիճանաբար մշակութային պատմեշ գոյացավ:



Ուկրաինական վերնախավի «նրբաճաշակ» մշակույթը հետագայում էլ առավելապես եկեղեցական ուղղվածություն ուներ: Գրքերը գրվում և տպագրվում էին միայն, որպեսզի ապացուցեն ուղղափառության ճշմարտացիությունն ու ցույց տան հոգու փրկությանը տանող միակ ճիշտ ուղին: Այդ գրքերի շարքում կային նաև աստվածաբանական այնպիսի բարդ աշխատություններ, ինչպիսիք էին *Ջախարիա Կոպիստենսկու «Պալիմոդիան»* կամ *Կիրիլ Ստավրովեցկու «Աստվածաբանության հայելին»*: Նույնիսկ այն ժամանակվա «բեստելլերներում», այսինքն՝ բոլոր գրաճանաչների համար նախատեսված գրքերում՝ այնպիսի թեմաներ էին շոշափվում, ինչպես՝ սրբերի կյանքը, կամ **Կիև-Պեչերյան** մայրավանքում տեղի ունեցած հրաշքների պատմությունները: Այդ գրքերը մեծ մասամբ գրվում էին ժողովրդին անհա-



*Պարող զապորոժցի. Նկարը՝ Տ. Կալինսկու - XVIII դարավերջ*

սանելի եկեղեցական սլավոներեն բարդ լեզվով, որը դեռևս ծառայում էր որպես Ուկրաինայի հիմնական գրական լեզու: Սակայն գրականություն էր մուտք գործում նաև «հասարակ» լեզուն: Իսկ *Պամվա Բերինդան 30 տարի շարունակ կազմում էր իր «Լեքսիկոնը»*, ուր ձգտում էր գտնել եկեղեցական սլավոներեն բառերի ուկրաիններեն համարժեքները:

Այն ժամանակվա գրական կյանքի նորություններից մեկն էլ դառնում է *պոեզիայի, հատկապես չափածո ներբողների ժողովրդականացումը*: Դրանց լավագույն նմուշներն են Կասիյան Սակովիչի՝ Սահայդաչնու մահվան կապակցությամբ գրված բանաստեղծությունները («*Вірши*»), կամ Սոհիլյան կոլեգիայի ուսանողների երկերը՝ ի պատիվ իրենց հովանավոր Պետրո Սոհիլայի:

Ուսումնական հաստատություններում գրվում և բեմադրվում էին նաև պիեսներ, որոնք հաճախ համեմատված էին լինում ուկրաինական բանավոր ստեղծագործության պատառիկներով: Ընդհանրապես, այնքանով որքանով Սոհիլյան կոլեգիան և միաբանության դպրոցները տարեցտարի ավելացող հարյուրավոր շրջանավարտներ էին տալիս, իսկ արդեն 20-ի հասնող տպարաններն էլ նորանոր գրքեր էին հրատարակում, *գրագիտությունն Ուկրաինայում գնալով ավելի ու ավելի լայն տարածում էր գտնում*:

Եթե կիևյան վերնախավի մշակույթը զարգանում էր եկեղեցական թեմաների ու խնդիրների ուղղվածությամբ և կրում էր Արևմուտքի ազդեցությունը, ապա ժողովրդական մշակույթը շարունակում էր զարգանալ բնական հունով, արտահայտելով սահմանամերձ շրջանի դժվա-

րին պայմանները և հասարակ հողագործի աշխատանքային առօրյան ու հոգեկան տվյալ-տանքները: Ժողովրդական հնագույն երգերում պատմվում էին անհատի խորը ապրումների, բնության և մարդու հարաբերությունների, դաշտային աշխատանքների մասին, օրհնվում էր բնությունը, զովերգվում էին մարդկային բարձր հատկանիշները՝ աշխատասիրությունը, համեստությունն ու ազնվությունը և ծաղրվում էին նրանք, ովքեր զուրկ էին այդ արժանիքներից: *XVI-XVII դարերի ուկրաինական ժողովրդական բանահյուսության բարձրագույն դրսևորում է համարվում վիպերգությունը՝ դումաները*: Դրանք կատարում էին ուկրաինական քափառաշրջիկ աշուղները՝ *կորզարները*, տոնավաճառների ու եկեղեցական տոների ժամանակ, գյուղական հրապարակներում ու կոզակների ճամբարներում: Այդ բանաստեղծական ծավալուն պատմությունները հիմնականում *կոզակական ազատախմբերի բուռն ու անզուսպ կյանքի մասին էին, թուրքի ու թաթարի դեմ նրանց հերոսական պայքարի, և այն մասին, թե հարկ եղած դեպքում ինչ արժանի հակահարված կարող է տալ խիզախ ու հանդուգն կոզակը հպարտ ու ամբարտավան շլյախտային...*

\* \* \*

Սահմանամերձ շրջանների բնակեցման գործընթացը Արևելյան Եվրոպայի մի շարք պետությունների Նոր պատմության սկզբնական շրջանի համար բավական բնորոշ երևույթ էր: Ինչպես Ուկրաինայում՝ Դնեպրի, այնպես էլ Ռուսաստանում՝ Դոնի ափամերձ շրջաններում ի հայտ եկան ազատատենչ կոզակները: Սոցիալական նման խմբեր առաջացան նաև Դոն-գարիայում, Խորվաթիայում և Օսմանյան կայսրության հետ ընդհանուր սահման ունեցող բրիտանական մյուս պետությունների սակավամարդ սահմանամերձ գոտիներում: Սակայն ոչ մի երկրում այդ՝ «ծայրագավառային» նորաստեղծ դասն այնպիսի կարևոր դեր չխաղաց հասարակական կյանքի զարգացման ու առաջընթացի գործում, ինչպիսին վիճակված էր կոզակներին՝ Ուկրաինայում: Եվ դա օրինաչափ էր: Նախ՝ այն ժամանակ գրեթե ողջ Ուկրաինան էր սահմանային գոտի, իսկ ուկրաինական վերնախավի լեհացման հետևանքով կոզակության վրա ծանրացավ հասարակության առաջատար այն դերը, որ մյուս երկրներում պատկանում էր ազնվականությանը: Արդյունքում՝ կոզակը դարձավ ոչ միայն Ուկրաինայի պատմության, այլև ուկրաինացու ազգային գիտակցության կարևոր ու որոշիչ դեմքը, ինչպես ամերիկացիների մոտ՝ կոմբոյը, կամ սկանդինավցիների մոտ՝ վիկինգը:

Կոզակության դերի ու նշանակության աճին զուգընթաց, վերածնվում է նաև եկեղեցական, հոգևոր ու մշակութային կյանքը: Կիևը կրկին դառնում է ուղղափառության կենտրոն: Այս շրջանը, մեծ մասամբ Սոհիլյան կոլեգիայի հետ առնչվող ուկրաինական վերնախավի համար, Իհոր Շևչենկոյի խոսքերով՝ «հոգևոր զարթոնքի և մտավոր զարգացման շրջան էր»: Ուղղափառության վերածնունդը մի կողմից դանդաղեցնում էր լեհացման գործընթացը, մյուս կողմից՝ ուկրաինական մշակույթ էր բերում արևմտյան այնպիսի տարրեր, որոնք հետագայում պետք է զսպեին ռուսականացման ճիգերը:

Այսպիսով, Ուկրաինան պատմական նոր ժամանակաշրջան էր մուտք գործում այնպիսի վտանգավոր գծի վրա, որից այն կողմ իշխող Լեհաստանի հասարակական և մշակութային օտար կառույցներում տարրալուծվել էր: Սակայն հենց այդ վտանգի շոշափելի մոտիկությունն էլ ուկրաինացի ժողովրդի մեջ խթանեց ազգային բնավորության յուրահատուկ հատկանիշների ի հայտ գալը, որոնք այդ ժողովրդին էականորեն տարբերում են հարևան ժողովուրդներից:





## ՄԵԾ ԱՊՍՏԱՍԲՈՒԹՅՈՒՆ

1648 թ.-ի Մեծ ապստամբությունն Ուկրաինայի պատմության մեջ հզոր հեղակործանումներից մեկը հանդիսացավ: Եվրոպայի Նոր պատմության շրջանում այն հավասարը չունի իր հզորությամբ, ծավալով ու ազդեցությամբ:

Սակայն՝ ինչո՞ւ հատկապես Ուկրաինան: Իրեն բնորոշ ո՞ր հատկանիշներն այդ վիթխարի պոռթկման պատճառը դարձան:

Իսկապես, Կիևշինայի, Բրացլավշինայի և Չեռնիգովշինայի նոր յուրացված հողերը, որ ապստամբության թատերաբեմ դարձան, յուրովի բացառիկ էին ոչ միայն Ռեչ Պոսպոլիտայի, այլև ողջ Եվրոպայի համար: Մի կողմից՝ այդ հողերը Եվրոպայի ամենահարուստ ու հզոր ավատատերերի տիրապետության տակ էին, մյուս կողմից՝ այդտեղ բնակվող ազատատենչ ժողովուրդը միշտ պատրաստ էր և ի վիճակի էր վճռական պայքարի դուրս գալու հանուն իր շահերի պաշտպանության: Այլ կերպ ասած՝ նոր գաղութացված Ուկրաինայում Եվրոպայի ամենահարուստ ավատատեր-կեղեքիչները բախվել էին ամենաըմբոստ ու անհնազանդ ժողովրդական զանգվածներին: Ինչպես ասում են՝ մանգաղը քարին էր առել:

Այս իրավիճակը հիմնականում հետևանք էր այն բանի, որ Ուկրաինան սահմանային երկիր լինելով, հաճախ էր հայտնվում սահմանային իրավիճակներում: Այսպես՝ «Վայրի դաշտի» առկայությունը նպաստեց կոզակության ստեղծմանը և ավատատերերին մեծ տիրույթներ ձեռք բերելու հնարավորություն տվեց: Իրավիճակի լարվածությունն ուժեղանում էր Ռեչ Պոսպոլիտայի թագավորական իշխանության թուլության պատճառով: Ի վիճակի չլինելով սեփական ուժերով պաշտպանելու սահմանները, թագավորը ավատատերերին մեծ տարածքներ էր շնորհում, պայմանով, որ նրանք, անհրաժեշտության դեպքում, ինքնուրույն պաշտպանեն դրանք: Այդ նույն պատճառով նա լռությամբ հանդուրժում էր (չնայած՝ որոշակի չափով) կոզակների հզորանալը: Սակայն այդ երկու երևույթների՝ կոզակության և ավատատերերի հզորանալուն զուգընթաց, թագավորական թուլացող կառավարությունը կորցրեց նրանց նկատմամբ վերահսկողությունը և ոչինչ չէր կարողանում ձեռնարկել սահմանամերձ շրջաններում գնալով սրվող հակասությունները հարթելու համար:

## Մեծ ապստամբության նախօրեին

Պարզ է, որ ավատատերերը մեծապես նպաստեցին Ուկրաինայի սահմանամերձ խոպան հողերի գաղութարձակեցման գործին, որն հետագայում, XIX դարի լեհ պատմաբանները բարձրագույն անվանեցին «Ուկրաինայի քաղաքակրթում»: Սակայն պարզ է նաև, որ հատկապես նրանց՝ հարուստ ավատատերերի վրա է ծանրացած պատասխանատվության առյուծի բաժինն այն լարվածության ու անկայունության համար, որն հետագայում ուկրաինական հասարակության հարատև հիվանդությունը դարձավ:

Այն ժամանակներում *Ուկրաինայում մի՛ օրենք և մի՛ իրավունք էր գործում՝ ուժեղի օրենքն ու իրավունքը*: Եվ ամենից առաջ ուժի ու բռնության դիմում էին հենց խոշոր կալվածատերերը, ընդ որում՝ և՛ իրենց հպատակների, և՛ միմյանց նկատմամբ: Եվ քանի որ թագավորական օրենքներն այստեղ գրեթե չէին գործում, սահմանամերձ գոտում իշխում էր եսանդությունն ու անարխիան: Նույնիսկ լեհերն էին ստիպված խոստովանում, որ՝ «Ուկրաինայում թագավորում է անօրենությունը»: Ավատատերերն ուժի իշխանությունը կիրառում էին հատկապես գյուղացիության նկատմամբ: Ինչպես հիշում եք, խոպան հողերի յուրացման սկզբնական շրջանում նրանք գյուղացիներին գայթակղեցին *սլորոդաներով*, այսինքն՝ հո-

ղերը որոշ ժամանակով անպարհակ տրամադրեցին նրանց: Բայց երբ սլորոդայի ժամկետը լրանում էր, ավատատերերը քաղցած գայլերի պես հարձակվում էին գյուղացիության վրա՝ դույզն ինչ դիմադրության փորձերի դեպքում պատասխանելով դաժան բռնությամբ: Եվ գյուղացիական-կոզակական հերթական խռովությունը ճնշելուց հետո ավելի ու ավելի էին կատաղում, հատկապես 1638 թ.-ից հետո, կարծելով, թե վերջին ապստամբության օջախը մարեցին...

Դեռ մինչև վերջերս ազատ գյուղացիներին ստիպում էին հողատիրոջ համար աշխատել շաբաթական 3-4 օր, լրացուցիչ հորինելով նորանոր պարտավորություններ ու ծառայություններ, մոռանալով, որ գյուղացին արդեն թագավորական գանձարանին վճարում էր տան, անասունի ու տնտեսության համար: Սակայն վիճակն ավելի էր ծանրանում, երբ *կալվածատերն իր տիրույթները վարձակալության էր տալիս*, մի երևույթ, որ գնալով ավելի մեծ տարածում էր գտնում: Վարձակալության պայմանն հետևյալն էր. կալվածատերը որոշակիորեն հաստատված գումարի դիմաց վարձակալին էր հանձնում տիրույթը, իսկ վարձակալը կանոնավոր վճարում էր այն և աշխատում հնարավորինս շատ եկամուտ կորզել գյուղացուց: Դրեաներին, որ սեփական հողից զրկված էին և՛ բառացիորեն (նկարագրվող դեպքերից դեռևս 1500 տարի առաջ հռոմեացիները նրանց ցրել էին աշխարհով մեկ), և՛ իրավաբանորեն (Ռեչ Պոսպոլիտայի օրենքով հրեաներին արգելված էր սեփական հողաբաժին ունենալ), առավելապես հողագործական երկրում այլ բան չէր մնում, բացի վարձակալ դառնալը: 1616 թ.-ին լեհական գահին պատկանող ուկրաինական հողերի կեսից ավելին հրեաներն էին վարձակալել: Միայն Օստրոմսկի իշխանները 4 հազ. հրեա վարձակալ ունեին: *Սեփական փողերը 2-3 տարով ներդնելով վարձակալության մեջ, նրանք շահագրգռված էին առավելագույն շահույթ կորզել կարճ ժամանակում*: Այդ պատճառով էլ անխղճորեն շահագործում էին գյուղացիներին և անողոքաբար ուժասպառում հողերը՝ բնավ չանհանգստանալով հետևյալների համար: Դճախ վարձակալը պահանջում էր, որ գյուղացիները կալվածատիրոջ համար աշխատեն ոչ թե 3-4 օր, այլ՝ 6 օր, կամ նույնիսկ ամբողջ շաբաթը, և հողատիրոջ ծառաների օգնությամբ նրանց ուժով դաշտ էր քշում:

*Վարձակալության մյուս ծնր՝ օդի և ծխախոտ արտադրելու և վաճառելու իրավունքի ժամանակավոր մենաշնորհ ձեռք բերելն էր*: Դարկ կա՞ արդյոք ասել, թե ինչ գներով էր գյուղացուց ձեռք բերում իրեն համար այս անհրաժեշտ ապրանքները, կամ դրանից հետո ի՞նչ համակրանք պիտի տածեր գյուղացին հրեա-վարձակալի նկատմամբ: Անգլիացի պատմաբան Նորման Դեյվիսի խոսքերով՝ «Լեհական շլախտայի կողմից ուկրաինական գյուղացիությանը շահագործելուն հրեաների մասնակցությունն էր հատկապես զլխավոր պատճառն այն ահավոր հատուցման, որ ապագայում մեկ անգամ չէ, որ սպասվում էր նրանց»:

Ուկրաինայի սահմանամերձ շրջաններում *դժգոհությունը դանդաղորեն, բայց աներեր անում էր ոչ միայն գյուղացիության, այլև հասարակության մյուս բոլոր ցածր խավերի մեջ*: Կյանքի յուրօրինակ պայմանները ավատատերերի կամայականություններին էր դատապարտել նաև նորաստեղծ քաղաքները: Կիևշինայում և Բրացլավշինայում, ուր բնակչության գրեթե կեսը կազմում էին քաղաքացիները, տոկոսային հարաբերությամբ եռապատիկ ավելին էր, քան Ռեչ Պոսպոլիտայի մյուս վոյեվոդություններում: Սակայն, քաղաքի պաշտոնական կարգավիճակ, իսկ երբեմն էլ՝ Սագոբերուզյան իրավունք ունենալով հանդերձ, նոր բնակավայրերը մեծ մասամբ փոքր ամրոցներ էին, որոնց բնակիչների մեծ մասը, թաթարական ասպատակություններից ամրոցում պատսպարվելով, մոտակա տարածքներում զբաղվում էր գյուղատնտեսությամբ: Ավատատերերը, որոնց հողերի վրա էին, որպես կանոն, կառուցվում նման քաղաքները, հրաժարվում էին այդ քաղաքների բնակիչներին ճանաչել որպես լիիրավ քաղաքացիներ և նրանցից գյուղացիական պարհակ ու տուրք էին պահանջում: Եվ վերջապես, ամենակարող ավատատերերի նկատմամբ քիչ վիրավորանք չէր ամբարվել նաև ուկրաինական մանր շլախտիչների մեջ, որոնց գերակշիռ մասը չէր դավաճանել ուղղափառությանը:

Եվ այսպես, աճում էր ընդհանուր դժգոհությունն ու զայրույթը, բնակչության հիմնական խավերը եռում ու փոքորկվում էին, իսկ բոլոր փականները, որ դեռևս քիչ թե շատ բարեհաջող «գոլորշի էին բաց թողնում», կամաց-կամաց ամուր փակվում էին: Գաղութարձակեցումը ավարտին էր մոտենում, գնալով նվազում էին մշակելու ենթակա հողերը, ուր կարող էին կալվածատերերից փախչել գյուղացիները: Կոզակությունը, որի շարքերը սովորաբար համարվում էին այս ամենից դժգոհ փախստականները, 1638 թ.-ից հետո դաժանաբար ճնշվում էր: Սակայն, ի տարբերություն Ռեչ Պոսպոլիտայի մնացյալ բոլոր շրջանների, այդ թվում և



Արևմտյան Ուկրաինայի գյուղացիների, **Նաղդեպարյան շչինայի** երկրագործներին ծանոթ չէր ճորտության լուծը և չէին էլ ցանկանում ծանոթանալ: Հաշվի չառնելով, թե ավատատերերն իրենց ինչ են համարում, նրանց համոզմամբ իրենք ազատ մարդ էին: Օրինակ, կոզակները համոզված էին, որ իրենք արտոնյալ, գրեթե ազնվական դաս են, որն (իբրև թե) իրենց 1582 թ.-ին շնորհել էր թագավոր Ստեֆան Բատորին: Բազմաթիվ քաղաքաբնակներ հայտարարում էին, որ սահմանված կարգով իրենք և՛ ազատ են, և՛ ինքնավար: Իսկ գյուղացիներին, որոնք տասնամյակներ շարունակ սլոբոդաներում ապրել էին ազատ կյանքով, ինչպես՝ ս կարելի էր համոզել, որ իրենց ճակատագրի տերը իրենք չեն: Ռեչ Պոսպոլիտայի համապատասխան օրենքները ցույց տալով: Բայց չէ՞ որ *սահմանամերձ բնակչության մեծ մասը սրբորեն հավատում էր, որ իրենց ազատության իրավունքն առավել հին ու օրինական է լեհական բոլոր օրենքներից*: Այդ համոզվածությունն էլ իր հերթին ամրապնդում էր նրանց հաստատակամությունը՝ միշտ արժանի հակահարված տալ *«յախերին»*, ինչպես որ նրանք կոչում էին լեհերին: Իսկ այն, որ լյախ-կաթուղիկները նաև հալածում էին ուղղափառներին, առավել ևս՝ կրակի վրա յուղ էր լցնում:

*Բացի այն, որ սահմանամերձ բնակչությունը միշտ պատրաստ էր անհնազանդության ու խռովության, նրանք նաև կատարելապես տիրապետում էին զենքին*: Այդ դարաշրջանի բոլոր եվրոպական պետությունների ժողովրդական ապստամբություններն աչքի էին ընկնում նրանով, որ խռովարարները վատ էին կազմակերպված և զենքին լավ չէին տիրապետում: Այդ տեսակետից Ուկրաինան տարբերվում էր մյուս երկրներից: Օտարերկրացի ճանապարհորդները բազմիցս նշել են, որ սահմանամերձ գոտու վտանգներով լի կյանքը ստիպում էր, որ նույնիսկ հասարակ գյուղացիներն ու քաղաքացիները կատարելապես տիրապետեն հրազենին: Վերջապես, *Ուկրաինայում բռնկվող ցանկացած ապստամբության ողնաշարը դառնում էր զերազանց կազմակերպված ու մարտերում թրծված կոզակությունը*: Եվ նույնիսկ վերջին պարտություններն օգտակար եղան նրանց համար, որովհետև սովորեցին, թե ինչպես պետք է ռազմավարության և մարտավարության բոլոր կանոններով պատերազմել կանոնավոր բանակի դեմ: Եվ որքան ահազանում էր իրենց ուկրաինական սահմանամերձ տիրույթներից հնարավորինս առավել եկամուտներ կորզելու ավատատերերի ընչաքաղցությունը, այնքան ամրանում էր շահագործողների դեմ պայքարելու ուկրաինացիների ոգին, ունակությունն ու պատրաստակամությունը:

Մի փոքրիկ կայծն էլ բավական էր, որ վիթխարի հրդեհ բռնկվեր:

### Բոգդան Խմելնիցկի

*Հազվադեպ է պատահում, որ պատմական դարակազմիկ իրադարձությունների մեջ անհատն այնպիսի դեր ունենա, ինչպիսին ունեցավ Բոգդան Խմելնիցկին 1648 թ.-ի Ուկրաինական Մեծ ապստամբության մեջ*: Իզուր չէ, որ շատ պատմաբաններ նրան համարում են Ուկրաինայի ռազմական և քաղաքական մեծագույն գործիչը, քանի որ, ոչ միայն ուկրաինական, այլև ամբողջ արևելաեվրոպական պատմության ընթացքի փոփոխության մեջ նրա անհատական դերը դժվար է գերազանահատել: Այնինչ, նա պատմության բեմում, այն էլ՝ որպես գլխավոր դերակատար, հայտնվեց կյանքի մայրամուտին և լրիվ պատահաբար:

Խմելնիցկին ծնվել է 1595 թ.-ին. ուկրաինացի մանր շլյախտիչ Միխայլո Խմելնիցկու ընտանիքում, որը ծառայում էր լեհ ավատատիրոջ մոտ: Իր ծառայության դիմաց Միխայլոն ստանում է Սուբոտով ազարակը (խուտոր): Հայրը Բոգդանին ուղարկում է Յարոսլավի ճիզվիտների դպրոցը, որտեղ նա այդ ժամանակների համար լավ կրթություն է ստանում՝ տիրապետելով լեհերենին ու լատիներենին:

1620 թ.-ին ողբերգություն է տեղի ունենում: Ցեցորայի մոտ տեղի ունեցած ճակատամարտում, որտեղ թուրքերը ջախջախիչ հարված հասցրեցին լեհերին, Բոգդանի հայրը զոհվում է, իսկ ինքը գերի է ընկնում: Երկու տարվա գերությունից հետո նրան հաջողվում է վերադառնալ Սուբոտով, դառնալ ցուցակագրված կոզակ, ամուսնանալ և զբաղվել իր տիրույթների ընդարձակմամբ: 1625 և 1638 թ.թ.-ների ապստամբություններին այդ շրջահայաց և արդեն բավականին ունևոր կոզակը չի մասնակցում: 1638 թ.-ին, կառավարության մոտ լավ համբավ ձեռք բերած Խմելնիցկին Չապորոժյան զորքի գրագրի պաշտոն է ստանում: 1646 թ.-ին, կոզակական դեսպանության կազմում մեկնում է Վլադիսլավ IV թագավորի մոտ: 50 տարեկանում Խմելնիցկին դառնում է *Հիհիրինի կոզակական գնդի հարյուրապետ*: Թվում

էր, թե նոր սպասելիքներ դժվար է ակնկալել և այդպես էլ կավարտվի նրա երկրային կյանքը: Սակայն ի՞նչն էր պատճառը, որ նա այդպես կտրուկ փոխեց իր կյանքը, դրա հետ մեկտեղ և ամբողջ երկրի կյանքն ու պատմության ընթացքը: Պատճառն այն օրերի համար շատ սովորական (սովորական՝ պատմաբանների, բայց ոչ ապագա հեթմանի համար) մի դեպք էր, որը վառ օրինակն էր այն բանի, թե Ուկրաինայում ինչ լկտի էին պահում իրենց ամբարտավան ու ատելի ավատատերերը:

Երբ 1646 թ.-ին Բոգդան Խմելնիցկին մեզ արդեն հայտնի պատճառով բացակայում է Սուբոտովից, մի ոմն լեհ շլյախտիչ Դանիել Չապլինսկի անունով, օգտվելով տեղական ավատատերերի հովանավորչությունից, որոշում է տիրանալ Խմելնիցկիների կալվածքին:



Բոգդան Խմելնիցկի

ևս հարձակվում է Սուբոտովի վրա, սպանում է Բոգդանի կրտսեր որդուն և առևանգում Սուբոտովում բնակվող այն կնոջը, որի հետ որոշել էր վերադառնալուն պես ամուսնանալ վերջերս այրիացած հարյուրապետը: Սկզբում օրինապահ Բոգդանն ուզում է արդարության հասնել դատարանի միջոցով, բայց երբ բազմաթիվ օրինական դիմում-բողոքները ոչ մի արդյունք չեն տալիս, նա որոշում է լեհերի դեմ ապստամբություն բարձրացնել և գլխավորել այն: Ասենք, բարձր խափի հարգարժան անդամի արագ կերպափոխվելը մոլեգին խռովարարի, այնքան էլ անսպասելի չէր, ինչպես կարող էր թվալ առաջին հայացքից: Նրան ճանաչողներից շատերը և՛ նախկինում, և՛ երբ նա փառքի գազաթին էր, շատ անգամ են նկատել, որ կոզակների առաջնորդի մեջ կարծես երկու մարդ նստած լիներ: *Այդ թուխ, ցածրիկ ու պնդակազմ «խմելը»*, ինչպես ժողովուրդն էր նրան կոչում, *սովորաբար շատ զուսպ ու հանգիստ մարդ էր: Բարեկիրք, սկզբում նույնիսկ սառնարյուն թվացող մարդը հանկարծ այնպես բուռն ու կրքոտ էր պոռթկում, որ հզոր էներգիա էր հորդում նրանից*: Մի խոսքով՝ խարիզմատիկ առաջնորդի կերպար՝ *անհաղթահարելի հմայքով ու զանգվածների վրա ազդելու անբացա-*



տրելի կախարհանքով: Կյանքի վճռորոշ պահերին նրա խոսքը կախարհիչ էր, զաղափարներն՝ հրապուրիչ ու սարսափազդու, գործելու վճռականությունն ու կամքը՝ անսասան:

Ջանգվածների վրա հանելիցկու կախարհիչ ազդեցությունն առաջին անգամ ակնհայտ դարձավ այն ժամանակ, երբ, հետապնդվելով լեհերից, որոնք իմացել էին նրա մտադրությունների մասին, 1648 թ.-ի հունվարին, մի խումբ համախոհների հետ, հասավ Ջապորոժյան Սիչ: Կարճ ժամանակում նա ձեռք բերեց զապորոժցիների համաձայնությունը, Սիչից վճռեց լեհական կայազորն ու անմիջապես ընտրվեց հեթման: Ապստամբությունն սկսված էր:


Թափ առնող ապստամբությունն սկզբում ուներ նախորդ կոզակական և գյուղացիական անհաջող խռովությունների բոլոր նշանները, ավելին, զարգանում էր կարծես թե միևնույն սցենարով. ավատատիրոջից վիրավորված կոզակական ավազը, վրեժ առնելու ցանկությունից կուրացած, փախչում է Սիչ և համոզում զապորոժցիներին՝ պայքարի ելնել իրենց (և իր) իրավունքների համար: Սակայն հանելիցկու դեպքում, ականավոր կազմակերպչի, գնդապետի ու քաղաքագետի բացառիկ տաղանդը ամեն ինչ փոխեց:

Պարզվում է, դեռևս Սիչ փախչելուց առաջ, մեկ տարուց ավել նա ոչ միայն ծրագրում էր ապստամբությունը, այլև նախապես ապահովում էր կողմնակիցների աջակցությունը: Գիտակցելով, որ լեհերի դեմ կոզակների պայքարի թույլ կողմը հեծելազորի բացակայությունն է, հանելիցկին համարձակ լուծում է գտնում՝ Ռեչ Պոսպոլիտայի հին թշնամի թաթարներին առաջարկելով դաշինք կնքել: Դրանից հարմար պահ դժվար թե այլևս լիներ, քանի որ հենց այն ժամանակ, երբ նրա դեսպանությունը հասավ Դրին, խանի հարաբերությունները լեհերի հետ գերլարված էին: Եվ խանը իր փորձված զորապետ Տուգայ-բեյի գլխավորությամբ 4 հազարանոց հեծելազոր է ուղարկում հանելիցկուն օգնության: Լեհերն էլ, հանելիցկու գործունեության մասին նախազգուշացված լինելով, հզոր զորքով շարժվեցին դեպի հարավ՝ ապստամբությունը սաղմնային վիճակում ճնշելու համար:

### Առաջին հաղթանակները

1648 թ.-ի ապրիլի կեսերին, Սիչի ճանապարհի վրա, ժովտի Վոդիի մոտ, լեհական 6 հազարանոց առաջապահ ջոկատը հանդիպեց 9 հազարանոց կոզակական և թաթարական միացյալ զորքին: Մայիսի 6-ին, տևական ճակատամարտից հետո, երբ լեհերին օգնության ուղարկված ցուցակագրված կոզակների մի քանի հազարանոց խումբն էլ անցավ ապստամբների կողմը, լեհական առաջապահ զորքը ջախջախվեց: Լեհական 20 հազարանոց զորքի զորավարները՝ Սարգին Կալինովսկին և Միկոլայ Պոտոցկին, առնելով իրենց առաջապահի անփառունակ ջախջախման լուրը, տարակուսանքի մեջ ընկան: Իսկ երբ գերի ընկած կոզակը (իրականում՝ հատուկ ուղարկված) «զգուշացրեց» լեհերին, թե ապստամբների բանակը թվաքանակով գերազանցում է իրենց բանակին, վիհատվեցին և նահանջելու ճակատագրական որոշում ընդունեցին՝ ընտրելով ամենաանհարմար տեղանքը (ճանապարհ ցույց տվողը նույնպես հեթմանի լրտեսն էր): Մայիսի 26-ին, Կորսունից ոչ հեռու, ուժասպառ լեհերն ընկան կոզակների դարանը, իսկ կոզակների թիվն այդ ընթացքում հասել էր 15 հազ.-ի՝ չհաշված թաթարական հեծելազորը: Եվ դարձյալ լեհերը գլխովին ջախջախվեցին: Կոզակները ձեռք բերեցին լեհերի 2 զորավար, 80 բարձրաստիճան պաշտոնյա, 127 սպա, 8520 զինվոր և 41 թնդանոթ: Կարծես լեհերի անհաջողությունները քիչ էին, Կորսունի տակ տեղի ունեցած ճակատամարտից 6 օր առաջ մեռնում է Վլադիսլավ IV թագավորը: Այն ժամանակ, երբ ապստամբներն հարավից հորձանքով մոտենում էին Ռեչ Պոսպոլիտային, նա միանգամից կորցրեց իր թագավորին, հրամանատարներին և բանակը:

Կոզակները հաղթանակների լուրն արագ տարածվում էր երկրով մեկ: Լեհերը վիհատված էին, ուկրաինացիները՝ ոգեշնչված: Սկզբում Դնեպրի Աջափնյա, հետո նաև Չախափնյա շրջաններում կոզակները, գյուղացիներն ու քաղաքացիները գնդեր էին կազմում և կամ գնում էին միանալու հեթմանին, կամ՝ սեփական առաջնորդների գլխավորությամբ տեղական ապստամբություններ էին բարձրացնում: Բազմաթիվ կոզակներ ու գյուղացիներ, օգտվելով առիթից, ազատություն տվեցին երկար տարիներ հարստահարիչների հալածանքներից ու նվաստացումներից իրենց մեջ կուտակված վրեժին ու ատելությանը: Այդ սանձազերծված դեպքերի ահասարսուռ պատկերներն են նկարագրված այսպես կոչված՝ «Ականատեսի տարեգրություն»-ում. «... որտեղ մի շլախտիչ, կամ նրա ծառա, տեղական կառավարիչ ու հրեա էին տեսնում - բոլորին կոտորում էին, չխնայելով նրանց կանանց ու երեխաներին, կալվածքները թալանում էին, կոստյուլներն (լեհական կաթոլիկ եկեղեցի) այրում ու ավերում էին, ոչ մեկին չէին խնայում: Դժվար թե լիներ մեկը, որի ձեռքերն այդ արյան մեջ





թաթախված չլինեին, կամ մասնակցած չլինեի այդ թալանին»:

Մի քանի ամսվա ընթացքում ամբողջ լեհական շյախտան, քայոնձներն (լեհ կաթոլիկ քահանաները) ու պաշտոնյաները վերացան Ուկրաինայից: Ընդ որում, այդ ատելի վարչա-կարգի ամենամեծաքանակ ու ամենաանպաշտպան ներկայացուցիչները հրեաները դուրս եկան՝ նրանք էլ հենց ամենածանր կորուստները կրեցին: 1648 թ.-ից մինչև 1656 թ.-ի դեպքերն Ուկրաինայում տասնյակ հազարավոր հրեաների կյանք խլեցին: Քիչ թե շատ ստույգ տեղեկությունների բացակայության պատճառով, զոհերի ճշգրիտ թիվը հնարավոր չէ նշել (Ս. Էթինգերի հաշվարկներով, մինչև ապստամբությունն Ուկրաինայում 50 հազ. հրեա էր ապրում): Այս պատճառով էլ հրեաները մինչև հիմա Բոգդան համելնիցկու ապստամբությունն իրենց պատմության ամենասարսափելի էջերից մեկն են համարում:



Ավագ եղբայրը կռիվ է գնում. նկարը՝ Օ. Սլաստիոնի

Իսկ լեհերն ամենափոքր հնարավորության դեպքում կոտորածին կոտորածով էին պատասխանում: Շյախտիչների կողմից ահաբեկչական մարտավարության կատաղի կողմնակից էր հատկապես Յարեմա Վիշնևեցկին՝ երկրամասի ամենահարուստ ավատատերը: Իր ծախսափնյա տիրույթներում նա մորիլիզացնում է լավ վարժեցրած 6 հազարանոց սեփական զորքը, հավաքում է մահու չափ վախեցած շյախտիչների, քայոնձների ու հրեաների, որոնք ընդունակ էին շարժվելու և երկար ու շրջանցիկ ճանապարհներով շարժվում է դեպի արևմուտք: Եվ ամենուրեք, որտեղով անցնում էր Վիշնևեցկու զորքը, խանձված հող էր թողնում՝ ծածկված դիակներով, չխնայելով ո՛չ կոզակներին, ո՛չ գյուղացիներին, ո՛չ կանանց, ո՛չ երեխաներին: Եվ եթե Լեհաստանը ծափահարում էր Վիշնևեցկու «սխրագործություններին», ապա Ուկրաինայում այնպիսի գայրույթ էին առաջացնում, որ ապստամբներն արդեն լսել անզամ չէին ուզում բանակցություններ վարելու մասին՝ երդվելով կենաց ու մահու կռիվ մղել Վիշնևեցկու դեմ:

Այդ ընթացքում համելնիցկին ամառն ամբողջ անցկացրեց Բիլա Ցերկվայի մոտ, վարժեցնելով ժամանող նորանոր ապստամբներին, ստեղծելով կարգապահ ու կազմակերպված բանակ: Այդ բանակի միջուկը կազմում էին մարտերում թրծված 16 կոզակական զնդերը, որոնց գլխավորում էին հարգված ու հեթանձին անմնացորդ նվիրված նշանավոր գնդապետներ

Ֆիլոն Զալալին, Մաքսիմ Նեստորենկոն և Իվան Գիրյան: Բացի այդ՝ գնդապետի մական ստացան ուկրաինական ազնվականության շնորհալի, փորձառու և տաղանդավոր ներկայացուցիչներ Դանիլո Նեչայը, Իվան Բոհունն ու Միխայլո Կրիչևսկին, ինչպես նաև՝ քաղաքացիներ Մարտին Նեբաբան և Վասիլ Ջուլտարենկոն: Թեթև հեծելազորային օժանդակ մեծ ցուկատը գլխավորում էր Վիշնևեցկու երդվյալ թշնամի և ապստամբության ամենախայտնի առաջնորդներից մեկը՝ Մաքսիմ Կրիվոնիսը: Անընդհատ ժամանող կամավորներից նորանոր զորամասեր էին կազմվում, և ամառվա վերջին ապստամբների թիվը 80-100 հազ.-ի էր հասնում, որից միայն 40 հազարն էր կոզակական կանոնավոր զորքը:

Լեհերն էլ ժամանակն իզուր չէին վատնում: Ապստամբների առաջխաղացումը կանգնեցնելու նպատակով, նրանք սկսեցին ձևականորեն բանակցություններ վարել համելնիցկու հետ, բայց այդ ընթացքում հասցրեցին մորիլիզացնել 32 հազ. շյախտիչների և 8 հազ. գերմանական վարժականների: Լեհական զորքը կենտրոնանում էր Լվովի մոտ: Բանակ զորակոչված շյախտիչներն աշխատում էին, ինչպես ընդունված էր, մեկը մյուսին գերազանցել շքեղ հագուկապով ու պճնամոլությամբ: Դա ժամանակակիցներից մեկին տեղիք է տվել նկատելու, որ լեհերը պատրաստվում են կռվել ոչ թե երկաթով, այլ ոսկով ու արծաթով: Լեհական նոր բանակը գլխավորում էին երեք ավատատեր՝ փափկակենցաղ Դոմինիկ Զասլավսկին, կրթյալ լատինագետ Միկուլայ Օստրորոգն ու 19-ամյա Ալեքսանդր Կոնցեպոլսկին: Խմելնիցկին չհապաղեց նրանց համապատասխան մականուններով ծաղրել, անվանելով՝ «պերինա, լատինա և դիտինա» («փետրաներքնակ, լատին և երեխա»): Սեպտեմբերի 23-ին պատերազմող բանակներն հանդիպեցին Պիլյավցիի մոտ: Ճակատամարտի թե՛ պահին լեհ զորավարների նյարդերը տեղի տվեցին և նրանք ճողոպրեցին: Երբ զորքին հայտնի դարձավ, նա էլ փախուստի դիմեց: Կոզակներն ու դաշնակից թաթարները մի քանի ժամում ջախքախեցին դեռ քիչ առաջ հսկա այդ զորքը:

Պիլյավցիի ճակատամարտում տարած հաղթանակը համելնիցկու առջև բացեց ճանապարհը դեպի արևմուտք: Երբ նա խորանում էր Գալիչինայի և Վոլինի հողերում, գյուղացիները ողջունում էին նրան և միանում ապստամբներից: Լսել էին մույնիսկ, որ Լեհաստանի հարավում կիսանկախ «խոլոպներն» ասել էին. «Եթե Աստված մեզ էլ խղճար ու մի համելնիցկի ուղարկեր, մենք էլ շյախտային ցույց կտայինք, թե ինչ ասել է ճնշել խոլոպներին»: Դոկտեմբերի սկզբին կոզակական-գյուղացիական բանակը պաշարեց Լվովը և հավանաբար հեշտությամբ կզրավեր այն, եթե համելնիցկին, չուզեմալով կործանել այդ գեղեցիկ քաղաքը, չգերադասեր դրա դիմաց վերցնել հարուստ փրկագին: Սեկ ամիս անց, երբ լեհական Չամոստյե ամրոցի պաշարմանն էին պատրաստվում, համելնիցկին լուր ստացավ, որ զահ է բարձրացել Յան Կազիմիրը, ինչն էլ հենց ուզում էր հեթանձը՝ դրանում իր հաշիվներն ուներ: Նոր թագավորը հեթանձին հաշտություն առաջարկեց:

Պատմաբանների համար այդպես էլ հանելուկ է մնացել, թե ինչու համելնիցկին, որն այդ պահին կարող էր հիմնովին կործանել Ռեչ Պոսպոլիտան, որոշեց ընդունել այդ առաջարկությունն ու վերադառնալ Նադոնեպրյանշչինա: Հավանաբար, նա դեռևս հույս ուներ Ռեչ Պոսպոլիտայի քաղաքական համակարգը համապատասխանեցնել կոզակության կարիքներին: Բացի այդ՝ սովն ու ժամտախտը, որ մոլեգնում էր Ուկրաինայում, արդեն տարածվում էր նաև բանակում: Հեթանձի դաշնակից թաթարներն էլ ուզում էին Դրիմ վերադառնալ: Ըստ երևույթին, այս ամենն ի նկատի ունենալով, համելնիցկին անհնարին համարեց նման պայմաններում ծնոանը պատերազմ վարել: Եվ 1649 թ.-ի հունվարի սկզբին նա վերադառնում է Կիև՝ հարթանակած զորքի գլուխն անցած: Ոգևորված ամբոխը ողջունում էր նրան, իսկ ուղղափառ հոգևորականությունն անվանեց նրան «ուկրաինական Մովսես», որն «ազատեց իր մոլորվորը լեհական ստրկությունից»:

### Ծագող բարդություններ

Լույնիսկ համելնիցկու տպավորիչ հաղթանակներից հետո ուկրաինացիների և լեհերի միջև հարաբերությունները մնացին չպարզաբանված: Չնայած հեթանձը չէր ցանկանում կապերը վերջնականապես խզել Ռեչ Պոսպոլիտայի հետ, բայց հաստատ գիտեր մի բան՝ իր ետևից գնացածները ոչ մի պայմանով չեն վերադառնա 1648 թ.-ից առաջվա իրենց կյանքին ու կարգավիճակին: Լեհերն էլ, համաձայնվելով կոզակներին մանր զիջումներ անելուն, համառոտն պնդում էին, որ ամբողջ Ուկրաինան պետք է վերադառնա շյախտայի իշխանության տակ Այս անելանելի թվացող վիճակը պատճառ էր դառնում որոշակի կաղապարի կրկնվելուն. տարեցտարի, անդադար միմյանց դեմ պատերազմելով ու կճռական հաղթանակ



չգրանցելով, հակառակորդները դադարեցնում էին արյունահեղ պատերազմները՝ կնքելով երկուստեք անշահավետ պայմանագրեր, որպեսզի վերադառնան տուն և անմիջապես ռազմական ու դիվանագիտական պատրաստություններ տեսնեն, մինչև հաջորդ պատերազմի սկսվելը:

Այս անգամ, 1649 թ.-ի գարնանը, հարծակվեցին լեհերը: Վոլինի կողմից գալիս էր հիմնական 25 հազ.-անոց զորքը, որ գլխավորում էր անձամբ թագավորը՝ Յան Կազիմիրը: Միաժամանակ, Գալիչինայով գալիս էր Յարեմա Վիշնևեցկու 15 հազ.-անոց զորքը: Բայց համելնիցկին և նրա դաշնակից Իսլամ Գիրեյ-խանը, կիրառելով իրենց սովորական մարտավարական առավելությունները՝ արագությունը և խաբուսիկ զորաշարժերը, 80 հազ.-անոց զորքով կտրեցին Վիշնևեցկու ճանապարհը՝ փակելով նրան Ջբարած ամրոցում: Երբ Վիշնևեցկուն օգնության շտապեց թագավորը, համելնիցկին անսպասելի հարծակվեց Յան Կազիմիրի բանակի վրա և Ջբորովի մոտ շրջապատեց նրան: Սակայն, երբ և՛ Ջբարածի, և՛ Ջբորովի մոտ, թվում էր, հաղթանակը մոտ է, թաթար խանը դավաճանեց հեթմանին: Ըստ երևույթին, վաղուց արդեն վախենալով Ուկրաինայի հզորանալուց, և գայթակղվելով լեհերի առաջարկած կաշառքից, թաթար խանը ետ քաշեց իր զորքն ու համելնիցկուց պահանջեց հաշտություն կնքել լեհերի հետ և գնալ բանակցությունների: Այդ իրավիճակում հեթմանին ոչինչ չէր մնում անելու, բացի համաձայնվելուց: 1649 թ.-ի օգոստոսի 18-ին ստորագրվեց Ջբորովյան խաղաղության համաձայնագիրը, ըստ որի՝ ցուցակագրված կոզակների թիվը հասցվում էր մինչև 40 հազ.-ի, լեհական բանակին ու հրեաներին արգելվում էր գտնվել Կիևչինայի, Բրացլավչինայի և Չեռնիգովչինայի սահմաններում: Այդ երկրամասում բոլոր վարչական պաշտոնները պետք է զբաղեցնեին միմիայն կոզակական ավագանու անդամներն ու ուղղափառ շլյախտան: Կիևյան միտրոպոլիտն էլ իրավունք էր ունենալու տեղ զբաղեցնել լեհական սենատում: Չնայած ասպտամբության բոլոր մասնակիցներին ներում շնորհվեց, սակայն գյուղացիության մեծ մասը պետք է վերադառնար ճորտության կարգավիճակին, իսկ լեհ կալվածատերերը՝ ետ ստանալին իրենց տիրույթները:

Պետք է ենթադրել, որ միայն թաթարների ճնշումն ստիպեց համելնիցկուն խաղաղության նման պայմանագիր կնքել լեհերի հետ, ինչը մեծ դժգոհություն առաջացրեց ողջ Ուկրաինայում: Ընդ որում, լեհերը դժգոհ էին, կարծելով, թե շատ զիջումներ են արել, իսկ կոզակներն էլ համոզված էին, որ շատ քիչ բանի հասան: Արդյունքում՝ երկու կողմն էլ չէր շտապում կյանքի կոչել այդ համաձայնագիրը:

Փոխարենը, Ջբորովյան խաղաղության պայմանագիրը բացահայտեց այն բոլոր ներքին և արտաքին խնդիրները, որոնք պետք է հաշվի առնեի համելնիցկին: Այն, որ գյուղացիների շահերը փաստորեն անտեսվեցին, պատահական վրիպում չէր: Չնայած համելնիցկին, գնդապետների մեծամասնությունը և ցուցակագրված կոզակների շատերն էին ուզում բարելավել գյուղացիների վիճակը, սակայն մտադիր չէին լիովին վերացնել ճորտատիրական կարգերը: Կոզակական ողջ վերնախավի, ներառյալ հեթմանի, համար դա կնշանակեր ոտընծություն այն սոցիալ-տնտեսական համակարգի նկատմամբ, որում իրենք բավականին պատվավոր և եկամտաբեր դիրքեր էին զբաղեցնում: Այսպիսով, արդեն Ջբորովում հակասություններ ի հայտ եկան կոզակական վերնախավի և շարքային կոզակների միջև, շրթայաբար կապակցված ու գնալով խորացող խնդիրներ, որոնք ժամանակի ընթացքում ճակատագրական հետևանքներ կունենան ամբողջ Ուկրաինայի կոզակական կացութաձևի համար:

Մյուս ծանրագույն խնդիրը՝ դրիմյան թաթարների հետ հարաբերություններն էին: Գիտակցելով թաթարների կարևոր դերը իր տարած բոլոր (գուցե՛ն՝ գալիք) հաղթանակներում, համելնիցկին ամեն գնով ձգտում էր պահպանել այդ միությունը: Սակայն ուկրաինացիների համար այդ դաշինքն ատելի էր, քանի որ դաշնակիցներին, օգնության դիմաց, վճարում էին իրենց, այն էլ՝ «եսիրներով»: Այն դեպքում, երբ համելնիցկին հույս ուներ թե թաթարները կօգնան լեհ գերիներով, դրիմյան թաթարները ստրուկների շուկա էին ուղարկում բոլոր նրանց, ով իրենց ձեռքն էր ընկնում, այդ թվում՝ հազարավոր ուկրաինացի գյուղացիների: Բացի այդ, թաթարների քաղաքական հեռահար նպատակն էր նաև՝ որևէ քրիստոնյա երկրի թույլ չտալ հզորանալու: Հենց այդ նպատակով էլ նրանք եկան օգնելու համելնիցկուն լեհերի դեմ պայքարում, միևնույն ժամանակ չցանկանալով հեթմանի կատարյալ հաղթանակը: համելնիցկուն օգտագործելով Լեհաստանը թուլացնելու համար, Դրիմի խանը հույս ուներ կոզակներին օգտագործել նաև Մոսկովիայի վրա իր արշավանքներում: Սակայն համելնիցկին, հուսալով հետագայում ապավինել Մոսկովայի օգնությանը, հրաժարվեց թաթարների հետ գնալ Մոսկովայի վրա, փոխարենն առաջարկելով հարծակվել Մոլդովայի վրա, որ ավելի հարուստ երկիր

էր և միևնույն ժամանակ ավելի հեշտ խոցելի: Եվ 1650 թ.-ին համելնիցկին սկսեց զբաղվել Մոլդովայի գործերով: Նա նույնիսկ հույս էր փայփայում այնտեղ գահ բարձրացնել իր որդի Տիմոշին՝ սերտ դաշինք հաստատելով Մոլդովայի և Ուկրաինայի միջև: Սակայն 1653 թ.-ին, Սուլավայի պաշտպանության ժամանակ Տիմոշը զոհվեց: Նրա մահը վերջ դրեց այդ անհաջող ու թանկ մտած մոլդովական ռազմարշավին:

Այդ ընթացքում, 1651 թ.-ին սկսվեց լեհ-ուկրաինական պատերազմի նոր փուլը: Եվ կրկին՝ պատերազմը սկսեցին լեհերը, կրկին լեհական զորքն անձամբ թագավորն էր առաջնորդում, կրկին վճռորոշ ճակատամարտի համար լեհական ու կոզակական բանակները հանդիպեցին Վոլինում, բայց այս անգամ՝ Բերեստեչկոյի մոտ: Այն ժամանակների համար բանակներն իսկապես իսկայական էին. լեհական բանակն ուներ 150 հազ. զինվոր՝ ներառյալ 20 հազ. գերմանական փորձառու վարձկանները, իսկ ուկրաինացիները կուտակել էին 100 հազ. զինվոր, որին աջակցում էր 50 հազ.-անոց թաթարական հեծելազորը: Ճակատամարտն սկսվեց հունիսի 18-ին, տևեց գրեթե երկու շաբաթ և ավարտվեց համելնիցկու ջախջախիչ պարտությունով: Պատճառը դարձյալ թաթարների սենզությունն էր, որոնք ճակատամարտի բեկումնային պահին ոչ միայն լեհերի կռվի դաշտը, այլև ստորաբար գերեցին համելնիցկուն, որը նրանց մոտ էր գնացել համոզելու, որ վերադառնան, և բաց թողեցին միայն ճակատամարտի ավարտից հետո: ճիշտ է, այդ ծանր պայմաններում գնդապետ Ֆիլոն Ջալալին, որ խիզախ ու վճռական մարդ էր, փորձեց կոզակական զորքի մի մասը դուրս բերել շրջապատումից, բայց լեհերն, օգտվելով կոզակների ճամբարում տիրող խառնաշփոթից, մոտ 30 հազ. մարդ կտորեցին: Այնուամենայնիվ, այս հաղթանակն այնքան ծանր նստեց լեհերի վրա, որ նրանք սպասումներին բանակցություններ առաջարկեցին, որն էլ շուտով սկսվեց Բիլա Ցերկվայի մոտ:

Ինչպես որ սպասելի էր, 1651 թ.-ի սեպտեմբերի 28-ին ստորագրված Բիլացերկվյան խաղաղության պայմանները կոզակների համար այնքան շահավետ չէին, ինչպես Ջբորովյանը: Ցուցակագրված կոզակների թիվը նվազեցվում էր մինչև 20 հազարի, հեթմանի իշխանությունը սահմանափակվում էր Կիևյան վոյեվոդությունով և նրան արգելվում էր արտաքին կապերի մեջ մտնել, հատկապես թաթարների հետ: Հիմա արդեն, երբ կոզակները խուճապի մեջ էին և համելնիցկին չէր կարող հակահարված տալ, թվում էր, թե համաձայնագրի պահանջները կկատարվեն: Հենվելով զինված ուժերի վրա, լեհական շլյախտան սկսեց վերադառնալ Ուկրաինա: Իսկ կոզակներն ու գյուղացիները (բացառությամբ սակավաթիվ ցուցակագրվածների) պետք է վերադառնային նախկին ճորտատիրական ստրկության: Անխուսափելի ճակատագրից փրկվելու համար հազարավոր մարդիկ հեռանում էին դեպի Մոսկովիայի սահմանները, որտեղ նրանց ոչ միայն ընդունում, այլև թույլ էին տալիս ապրել կոզակական ազատ սլոբոդաներով: Այդ, նախկինում սակավաթիվ հողերն այդպես էլ կոչվեցին՝ Սլոբոդայան Ուկրաինա (նրա տարածքը մոտավորապես համընկնում է ներկայիս Խարկովի մարզին):

Սակայն, միայն համելնիցկուն չճանաչողները կարող էին հավատալ, որ նա իրականում կկատարի Բիլացերկվյան նվաստացուցիչ պայմանագրի դրույթները: 1652 թ.-ի ապրիլին, Յիհիրինում գտնվող նրա ոստանում կոզակական ավագանու գաղտնի խորհուրդ գումարվեց, որտեղ որոշվեց նոր զորք հավաքել և լեհերի դեմ ռազմական գործողություններ վերսկսել: Մի բանի շաբաթ հետո համելնիցկու բանակը հարծակվեց լեհերի 30 հազ.-անոց զորքի վրա, որը տեղավորվել էր Բատոհի տակ՝ Պոդոլյեի և Մոլդովայի սահմանի մոտ, և մայիսի 1-ին սարսափելի ջարդ տվեցին: Բերեստեչկոյի մոտ կրած պարտության վրեժը լուծելով, կոզակները կտորեցին գերի ընկած բոլոր լեհերին:

Երբ հաղթանակի լուրը տարածվեց, լեհական շլյախտայի դեմ նոր ապստամբություն պրոքլամաց, և կոզակական զորքերը կրկին գրավեցին այն տարածքի մեծ մասը, որին իրենք վերահսկում էին Բերեստեչկոյի պարտությունից առաջ: Սակայն տարիներ տևած կոտորածների ու ավերածությունների հետևանքներն արդեն զգացնել էին տալիս: Ո՛չ լեհերը, ոչ էլ ուկրաինացիներն արդեն առաջվա նման կռվի նետվելու ցանկությամբ չէին վառվում, ռազմական գործողությունները դանդաղ էին ընթանում, երկուսն էլ նման էին հալից ընկած թռեցքամարտիկների, որոնք հզոր ու վճռական հարված հասցնելու անկարող՝ ծուլորեն թարծրացնում են ձեռքերն ու... փաթաթվում իրար...

### Արտաքին հարաբերություններ

համելնիցկին գիտեր, որ ապստամբության հաջողության համար անհրաժեշտ է դրսից աջակցություն ունենալ: Այդ պատճառով էլ գնալով ավելի մեծ ուշադրություն էր դարձնում



արտաքին քաղաքականության վրա: Ինչպես հիշում ենք, *հեթմանի դիվանագիտական առաջին հաղթանակը՝ Ղրիմի բաթարների հետ դաշինքն էր*: Սակայն այս դաշինքն անհուսալի դուրս եկավ: Բացի այդ՝ անլուծելի էր մնում Բոզդան համելնիցկու գլխավոր խնդիրը՝ Ուկրաինայի և Ռեչ Պոսպոլիտայի հարաբերությունների վերջնական պարզեցումը: Սկզբում հեթմանը պատրաստ չէր լեհերի հետ հարաբերությունները վերջնականապես խզելուն: Թագավորական իշխանությունների հետ՝ ի դեմս տեղական ներկայացուցիչ Ադամ Կիսիլի (ի դեպ՝ այդ մեծահարուստ ուղղափառ ավատատերը նաև ճկուն քաղաքագետ էր), իր հարաբերություններում *հեթմանն սկզբում միայն մի նպատակ էր հետապնդում՝ հասնել ուկրաինական կոզակության ինքնավարության*, որը, իր պատկերացմամբ, պետք է Ռեչ Պոսպոլիտայի առանձին և իրավահավասար մի դասը դառնար: Սակայն պարզվեց, որ այդ նպատակն անհասանելի է լեհերի ամբարտավանության պատճառով. նրանք չէին ցանկանում հասարակական և քաղաքական առումով իրենց հավասար ճանաչել նախկին հպատակներին:

Ժամանակակից մարդու մոտ, որի համար ազգային գերիշխանությունը միանգամայն բնական երևույթ է (չնայած այդ հասկացությունը տարածում գտավ միայն 1789 թ.-ի ֆրանսիական հեղափոխությունից հետո), հարց է առաջանում, թե ինչու և համելնիցկին Ուկրաինան չհայտարարեց անկախ և ինքնիշխան: Ապստամբության ժամանակ իսկապես էլ լուրեր տարածվեցին, թե նա ուզում է վերականգնել «հին ռուսիական իշխանությունը», կամ ստեղծել «կոզակական պետություն»: Նույնիսկ եթե այդ գաղափարները լրջորեն քննարկվում էին, այն ժամանակներում, միևնույն է, դրանք իրականացնելն անհնար էր: Ինչպես ցույց տվեցին անընդմեջ պատերազմները, կոզակները չնայած լեհերին ծանր պարտությունների մատնեցին, սակայն ի վիճակի չէին անընդհատ դիմադրելու Ուկրաինան նվաճելու շլախտայի բազում փորձերին: *Լեհերի նկատմամբ տարած հաղթանակներն ինչ-որ չափով երկար պահելու համար համելնիցկին կարիք ուներ արտաքին հզոր ուժի հարատև ու հուսալի աջակցության: Իսկ նման աջակցության գինն այն ժամանակ մեկն էր՝ ճանաչել սատարող միապետի գերակայությունը*:

Այն ժամանակվա ուկրաինացիների մասսայական գիտակցության մեջ անընդհատ խռովությունների ու ապստամբությունների մղող գլխավոր խնդիրները սոցիալ-տնտեսական բնույթ էին կրում: Իսկ թե դրանք «իրենց», թե՝ «օտար» ղեկավարի ձեռքով կլուծվեին, արդեն երկրորդական էր թվում: Վերջապես, Արևելյան Եվրոպայում գերիշխանությունն այն ժամանակ նույնացվում էր ոչ թե ժողովրդի, այլ՝ թագավորի, «օրինակային», այսինքն՝ համընդհանուր ճանաչման արժանացած միապետի հետ: Ի նկատի ունենալով, որ համելնիցկին ուներ և՛ հեղինակություն, և՛ իշխանություն, բայց չունեւ նման ճանաչում, ամենաշատը, որ նա կարող էր անել Ուկրաինայի համար, դա, ներկա օրինական իշխանությունների փոխարեն նոր՝ համընդհանուր ճանաչում ունեցող միապետ գտնելն էր: *Այստեղ Ուկրաինայի ինքնակառավարման հարցը չէր, այն ուկրաինացիներն արդեն ունեին, այլ՝ գտնել միապետի, որ կկարողանա նոր ձևավորված և ինքնավար հասարակության համար ապահովել օրինակաւնությունն ու հուսալի պաշտպանությունը*:

Խմելնիցկու կարծիքով՝ այդ դերում համապատասխան թեկնածուն թուրք սուլթանն էր: Օսմանյան կայսրության ղեկավարը բավականին հզոր էր, որպեսզի լեհերին հեռու պահեր Ուկրաինայից, և բավականին հեռու՝ որպեսզի ցանկություն ու հնարավորություն ունենար խառնվելու Ուկրաինայի ներքին գործերին: Առանց երկար մտածելու, համելնիցկին սուլթանի հետ դեսպանների փոխանակում արեց և 1651 թ.-ին Բարձր Դուռը Յեթմանին իր Զապորոժյան կոզակների հետ միասին պաշտոնապես իր վասալները հայտարարեց՝ մոտավորապես նույն պայմաններով, ինչ պայմաններով որ Բարձր Դռան հովանավորչությունից օգտվում էին Ղրիմը, Մոլդովան և Վալախիան: Սակայն հեթմանի այդ հրաշալի մտահղացումն այդպես էլ անկատար մնաց նախ՝ «բուսուրմանների» նկատմամբ ուկրաինացիների համընդհանուր տանելության, և երկրորդ՝ հենց Օսմանյան կայսրությունում կատարվող ներքին փոփոխությունների պատճառով:

Ուկրաինայի հովանավորի շատ ավելի հանրաճանաչ թեկնածու էր մոսկովյան ուղղափառ ցարը: Ապստամբության հենց սկզբից Խմելնիցկին խնդրում ու հանդուս էր ցարին՝ հանուն իրենց ընդհանուր ուղղափառ հավատքի, օգնության գալ իրենց: Սակայն Մոսկվան խուսափողաբար և շատ զգուշ էր արձագանքում. դեռ շատ թարմ էին Լեհաստանի հետ պատերազմում կրած սարսափելի կորուստների հիշողությունները: Մոսկովիտները գերադասում էին սպասել, մինչև կոզակներն ու լեհերը ուժասպառ անեն մեկը մյուսին և նոր միայն համապատասխան գործողություններ ձեռնարկեն: Սակայն 1653 թ.-ին, երբ ուկրաինացիները սպառ-

նացին, որ լրջորեն կգերադասեն օսմանյան տարբերակը, Ալեքսեյ Միխայլովիչ ցարը Ջեմսկյան ժողով գումարեց, որտեղ որոշում կայացվեց. «հանուն ուղղափառ հավատքի և Աստծո սուրբ եկեղեցու, պարտ է, որ ցարը ուկրաինացիներին առնի իր վեհ ձեռքի տակ»: Այդ որոշումն ընդունելով, մոսկովիտներն հույս ունեին Լեհաստանից ետ վերցնել զրավված ռուսական որոշ տարածքներ, Ուկրաինան օգտագործել Օսմանյան կայսրության դեմ որպես թախարգել, և, ընդհանրապես ընդլայնել իրենց միջազգային ազդեցության ոլորտը:

## Պերեյասլավյան պայմանագիր

1653 թ.-ի վերջին օրերին մոսկովյան դեսպանությունը՝ բոյար Վասիլի Բուտուրլինի գլխավորությամբ, Կիևի մոտ գտնվող Պերեյասլավում հանդիպեց հեթմանի, նրա գնդապետների և նապորոժյան զորքի գլխավոր շտաբի հետ: 1654 թ.-ի հունվարի 18-ին Խմելնիցկին գումարեց կոզակական ավագանու **ռադա** (խորհուրդ), որտեղ էլ վերջնական որոշում ընդունվեց ցարի «ձեռքի տակ» Ուկրաինայի անցնելու մասին: Նույն օրը ժողովրդին հավաքեցին քաղաքային հրապարակում, որտեղ հեթմանն իր ելույթում խոսեց այն մասին, որ Ուկրաինային օրինական միապետ է հարկավոր: Նա թվեց հնարավոր չորս թեկնածուներին՝ լեհական թագավորին, Ղրիմի խանին, թուրք սուլթանին ու մոսկովյան ցարին, և հայտարարեց, որ ամենահարմարն ուղղափառ ցարն է: Գոհ լինելով, որ ուղղափառ միապետ է ընտրվել, ամբողջ բուռն ցնծությամբ արձագանքեց հեթմանի ճառին: Այնուհետև **Բուտուրլինը, Խմելնիցկին և ռադային հրավիրված կոզակահյուսուցիներն ողջ ավագանին մտան քաղաքային եկեղեցի՝ փոխադրած երդմամբ հաստատելու կայացրած որոշումը**:

Սակայն անսպասելի միջադեպը գործը փակուղի տարավ: Քաջատեղյակ լինելով Լեհաստանում նման գործընթացի իրականացման կարգին, Խմելնիցկին կարծում էր, թե երկուսն էլ պետք է երդվեն, այսինքն՝ ուկրաինացիները հավատարմության երդում տան ցարին, իսկ վերջինս էլ կխոստանա պաշտպանել նրանց լեհերից և հարգել նրանց իրավունքներն ու արտոնությունները: Սակայն **Բուտուրլինը հրաժարվեց իր միապետի անունից երդվել, ասելով, որ ի տարբերություն լեհական թագավորի, ցարն ինքնակալ միապետ է և իր հպատակներին երդում չի տալիս**: Բուտուրլինի մերժումից զայրացած՝ Խմելնիցկին հպարտ դուրս եկավ եկեղեցուց՝ սպառնալով չեղյալ հայտարարել պայմանագիրը: Բայց Բուտուրլինը համառորեն իրենն էր պնդում: Վերջվեբջո, վախենալով ցարի աջակցությունից զրկվելուց, Խմելնիցկին իր համախոհների հետ համաձայնվեց միակողմանի երդում տալ ցարին, մնացյալն համարելով փոքրիկ ձևականություն:

Դրան հաջորդեց այն, որ Ուկրաինայի 117 քաղաքներ ցարական պաշտոնյաներ ուղարկվեցին, որոնց առջև 127 հազ. մարդ Ալեքսեյ Միխայլովիչ ցարին և նրա բոլոր հետնորդներին հավատարմության երդում տվեցին: Սակայն մեր ուշադրությունից չպետք է վրիպի Պերեյասլավի եկեղեցում տեղի ունեցած այն դրամատիկ միջադեպը, որ միանգամայն պարզորոշ լազախայտեց կողմերի քաղաքական դիրքորոշումների տարբերությունը և այն քաղաքական արժեքները, որոնց դավանում էին կողմերը՝ միմյանց հետ պայմանագիր կնքելու պահին: Այնուամենայնիվ, չնայած այդ տարածայնություններին, **Պերեյասլավի պայմանագիրը կնքվեց, որը շրջադարձային կետ հանդիսացավ ոչ միայն Ուկրաինայի և Ռուսաստանի, այլև ողջ Արևելյան Եվրոպայի պատմության մեջ**: Երբեմնի մեկուսի ու հետամնաց Մոսկովիան մի հսկայական քայլ արեց՝ դառնալով մեծ տերություն: Իսկ Ուկրաինայի ճակատագիրն իր բոլոր լավ ու վատով այնուհետև անքակտելիորեն կապված կլինի այդ հսկայական տերության ճակատագրի հետ:

Դեստազայում, ռուսների և ուկրաինացիների միջև երբեմն ծագող տարածայնությունների պատճառով այդ պայմանագիրն հաճախ էր «կրկնախնամ» դառնում գիտնականների համար: Գործը բարդանում է նրանով, որ փաստաթղթի բնագրերը վաղուց կորած են, պահպանվել են միայն ոչ ճիշտ թարգմանություններ ու պատճեններ: Ավելին՝ ռուս հնագրագետ Պյոտր Շաֆրանովը հաստատում է, որ նույնիսկ այդ պատճենները կեղծված են ցարական գրագիրների կողմից:

Ընդհանուր առմամբ, հետազոտողների կողմից առաջարկվում է Պերեյասլավյան պայմանագրի *հինգ հիմնական մեկնաբանություն*:

Իրավունքի պատմության ռուս մասնագետ Վասիլի Սերգեևիչի (մահ. 1910 թ.) կարծիքով՝ Ուկրաինայի և Մոսկովիայի միջև 1654 թ.-ի համաձայնագիրն իրենից ներկայացնում է «անհա-



տական ունի», համաձայն որի՝ երկու կողմերն ունենալու էին ընդհանուր միապետ, սակայն ամեն մեկը պահպանելու էր իր ինքնակառավարումը:

Իրավունքի մի այլ ռուս մասնագետ *Նիկոլայ Դյակոնովը* (մահ. 1919 թ.) հաստատում էր, որ համաձայնվելով «ենթարկվել ցարին» ուկրաինացիներն արդեն իսկ ընդունել էին, որ իրենց հողերն անվերապահորեն դառնում են Մոսկովյան թագավորության անբաժանելի տարածք, և այդ պատճառով էլ «*իրական միություն*» էր:

Այնպիսի նշանավոր պատմաբաններ, ինչպես ռուսաստանցի *Վենեդիկտ Մյակոտինը* (մահ. 1937 թ.-ին՝ վտարանդիության մեջ) և ուկրաինացի *Միխայլո Գրուչևսկին*, համարում էին, որ Պերեյասլավյան համաձայնագիրը *վասալական կախվածության մի ձև էր*, ըստ որի՝ ուժեղ կողմը (այս դեպքում ցարը) համաձայնվում էր պաշտպանել թույլ կողմին (ուկրաինացիներին)՝ առանց նրա ներքին գործերին խառնվելու, իսկ ուկրաինացիները պարտավորվում էին թագավորին հարկեր վճարել, ռազմական օգնություն ցուցաբերել և այլն:

Ուկրաինացի մի այլ պատմաբան՝ *Վյաչեսլավ Լիպինսկին* ավելի հեռու գնաց: Նրա կարծիքով՝ 1654 թ.-ի համաձայնագիրը ոչ այլ ինչ է, եթե ոչ *ժամանակավոր ռազմական դաշինք* Մոսկովիայի և Ուկրաինայի միջև:

Պերեյասլավյան պայմանագրի վերջին մեկնաբանությունը կտրուկ տարբերվում է մնացածներից: 1954 թ.-ին, ԽՍՀՄ-ում ռուս-ուկրաինական դաշինքի 300-ամյակի առթիվ ճոխ տոնակատարության ժամանակ հայտարարվեց (Ճիշտ է, ոչ թե պատմաբանների, այլ խորհրդային Միության Կոմունիստական կուսակցության կողմից), որ Պերեյասլավյան պայմանագիրը *ուկրաինացի և ռուս ժողովուրդների՝ միասնության դարավոր ծգտման բարձրակետն էր*, և այդ երկու ժողովուրդների միավորումը 1648 թ.-ի ապստամբության հիմնական նպատակն էր: Համաձայն խորհրդային պաշտոնական տեսության՝ խմելնիցկու մեծությունը հենց նրանում էր, որ նա պարզ գիտակցում էր, որ «ուկրաինական ժողովրդի փրկությունը հնարավոր է միայն ռուս մեծ ժողովրդի հետ միանալու դեպքում»: Իրականում այս «կուսակցական որոշումը» պարտադիր էր խորհրդային բոլոր գիտնականների համար: Երբ 1960-ականներին խորհրդային գիտնական Միխայլո Բրայչևսկին կասկած հայտնեց այդ «որոշման» վերաբերյալ, երկար տարիներ այդ «կասկածը» աղետաբեր եղավ նրա կարիերայի համար:

## Մեծ ապստամբության վերջաբանը

Պերեյասլավյան պայմանագրի առաջին հետևանքներից մեկը տարածաշրջանում քաղաքական միությունների արմատական փոփոխություններն էին: Ի պատասխան *ցարի հետ խմելնիցկու կնքած պայմանագրի, լեհերն ու թաթարները միավորվեցին: Պատերազմը նոր փուլ մտավ:*

1654 թ.-ի գարնանը մոսկովյան բանակը և նրանց օգնության եկած կոզակների 20 հազարանոց ջոկատը Վասիլ Չուլտարենկոյի ղեկավարությամբ մտան Բելոռուսիա՝ մեծ տարածքներ գրավելով լեհերից: Աշնանը մարտական գործողությունները տեղափոխվեցին Գարավ-Արևմտյան Ուկրաինա: Թաթարները, որ արդեն ոչ մի պարտավորությամբ կապված չէին ուկրաինացիների հետ, անգործն ամայացնում էին երկիրը: Նրանց զազանությունների վկայությունը գտնում ենք, օրինակ, մի լեհ հրամանատարի զեկույցում. «Իմ հաշվարկներով, ճանապարհներին և ամրոցում միայն երեխաների դիերը տասը հազարի էին հասնում: Ես հրամայեցի թաղել նրանց հենց դաշտում, մի գերեզմանում 270-ից ավելի դիակ էր ամփոփվում: Բոլոր սպանվածները մի տարեկան էլ չկային, դրանցից մեծերին գերի էին տարել: Փրկված գյուղացիները խմբերով հավաքվում ու իրենց վիշտն են ողբում»:

Թե ինչ աստիճանի էր հասել ատելությունը միմյանց նկատմամբ, վկայում է մի այսպիսի միջադեպ: 1654 թ.-ի հոկտեմբերին լեհերի գերակշիռ ուժերը շրջապատեցին կոզակական Բուշա ամրոցը, ոչնչացրեցին կայազորի մեծ մասը և ուր-որ է գրավելու էին ամրոցը: Այդ ժամանակ, ամրոցի զոհված պարետ Ջավիսնու այրին պայթեցրեց վառողի նկուղը, հողս ցնդեցնելով և՛ իրեն, և՛ մնացած կայազորին, և՛ հարձակվող լեհերին:

Կատաղի մարտերից հետո ամբողջ Աջափնյակը, որ նույնպես մեծ զոհերի գնով ուտքի էր կանգնել ու արդեն պետք է շոյալորեն վարձահատույց լիներ երկրագործին՝ իր տքնաջան աշխատանքի դիմաց, հերթական անգամ ամբողջովին այրվել ու ավերակների էր վերածվել:

Ավերն ու դժբախտությունները տիրեցին նաև Լեհաստանին: 1655 թ.-ի ամռանը, օգտվելով այն բանից, որ լեհերի հիմնական ուժերը հարավում ու արևելքում պատերազմների մեջ են,

չվեղներն հյուսիսից հարձակվելով, գրավեցին Լեհաստանի մեծ մասը: *Շվեդների, ուկրաինացիների ու մոսկովիտների կողմից բզկյովոյ Ռեչ Պոսպոլիտան փլուզման եզրին էր:* Իզուր չէ, որ լեհ պատմաբաններն այդ շրջանն հաճախ կոչում էին Ջրիեղեղի դարաշրջան: Իսկ խմելնիցկու համար, պատերազմի մեջ չվեղների մուտքը Աստուծո օրհնանքի պես մի բան էր: Հեթմանի առջև ռազմական և դիվանագիտական նոր հեռանկարներ էին բացվում:

Շուտով չվեղական և ուկրաինական դիվանագետներն արդեն քննարկում էին լեհերի դեմ համատեղ արշավանքի հարցերը: Ավելին, չվեղները խմելնիցկուն խոստացան օգնել Կիևյան իշխանությունն ստեղծելու գործում: 1656 թ.-ին, կանխագալով Ռեչ Պոսպոլիտայի անխուսափելի փլուզումը, էլի մի հարևան՝ Տրանսիլվանիայի իշխան Գեորգի II Ռակոցի Անիդորոդսկին նույնպես ցանկություն հայտնեց միանալ հեթմանին: Թիկունքին այդպիսի աջակցություն ունենալով, խմելնիցկին խիստ ու վճռական դիրք բռնեց լեհերի նկատմամբ՝ համառորեն պնդելով, որ իր իշխանության տակ պիտի անցնեն ուկրաինական բոլոր հողերը, ներառյալ Գալիչիան ու Վոլինը:

Սակայն քաղաքական իրիզոնում չվեղների հայտնվելը նոր հնարավորությունների հետ նաև նոր բարդություններ էր ստեղծում հեթմանի համար: Հին հաշիվներ ունենալով Մոսկովիայի հետ և ձգտելով օր առաջ վրեժ լուծել, չվեղները պատերազմ հայտարարեցին մոսկովիտներին: *Խմելնիցկին հայտնվեց բարդ իրավիճակում. իր նոր դաշնակիցը պատերազմում էր իր սյուզերենի հետ:* Մոսկովիտների հետ ուկրաինացիների քաղաքական հակասություններն ի դերն ելան: Կիևում և Ուկրաինայի այլ քաղաքներում մոսկովյան կայազորների ներկայությունը, ուկրաինացիների ֆինանսական գործերին ցարական պաշտոնյաների միջամտությունը խիստ անհանգստացնում էին կոզակներին: Թշնամության խորանալուն նպաստեց նաև մոսկովյան-ուկրաինական զորքերի կողմից վերջերս նվաճված Բելոռուսիայի համար մրցակցությունը, որտեղ ժողովուրդը բացահայտորեն առավելությունը տալիս էր կոզակական, ոչ թե ցարական դրվածքին, և հաճախ հավատարմության երդում էր տալիս ոչ թե ցարին, այլ՝ հեթմանին: «Մի Ռուսիայի՝ մյուսի հետ՝ երրորդ Ռուսիայի համար» այս թաքնուրված պայքարը բացահայտ պատերազմի էր տանում: Մոսկովայից բավական ժամանակ պահանջվեց, մինչև որ կոզակներին վտարեց Բելոռուսիայից:

Սակայն ուկրաինական ավազանու մեծագույն զայրույթն առաջացրեց 1656 թ.-ին Վիլնյուում Լեհաստանի հետ Ռուսաստանի կնքած խաղաղության պայմանագիրը: Համաձայն են արդյոք լեհերի հետ խաղաղությանը, այդ մասին ուկրաինացիներին չհարցրեցին էլ: Ավելին՝ ժամանած ուկրաինական պատվիրակությանը նույնիսկ թույլ չտվեցին մասնակցելու բանակցություններին: Երբ պարզ դարձավ, որ ցարը պատրաստ է զոհել ուկրաինացիների շահերը, հեթմանն ու իր զնդապետները ցարին բացահայտ մեղադրեցին Պերեյասլավյան պայմանագիրը խախտելու և դավաճանության մեջ: Ցարին ուղղված նամակում խմելնիցկին չէր էլ աշխատում զսպել զայրույթը՝ մոսկովիտների վարքը համեմատելով չվեղների հետ, առավելությունը տալով վերջիններին. «Շվեդները պատվախնդիր մարդիկ են. բարեկամություն և դաշինք առաջարկելով՝ նրանք կատարում են իրենց խոստումը: Իսկ ցարը, լեհերի հետ խաղաղություն կնքելով, անգործն վարվեց մեզ հետ, ուզում է մեզ նորից նրանց ձեռքը հանձնել...»: Այս հիասթափությանն հաջորդեցին նորերը: Ուկրաինա-տրանսիլվանյան արշավանքը դեպի Լեհաստան աղետալի ավարտ ունեցավ, և *դժգոհ կոզակությունը, իր բոլոր դժբախտությունների մեջ մեղավոր ճանաչելով հեթմանին, ընթրոտացավ նրա դեմ: Անմխիթար տեղեկությունները սպառեցին արդեն ծանր հիվանդ հեթմանի վերջին ուժերը և 1657 թ.-ի սեպտեմբերի 4-ին Հիհիրինում Բոգդան խմելնիցկին վախճանվեց:*

\* \* \*

Ուկրաինայի պատմության ընթացքի վրա Բոգդան խմելնիցկու ազդեցության դերը դժվար է գերազանահատել: Իզուր չէ, որ և՛ ուկրաինական, և՛ ռուսական ու լեհական պատմաբաններն աներկբա կոզակական հեթմանին դնում են նույն բարձրության վրա իր ժամանակի այնպիսի գործիչների կողքին, ինչպես Օլիվեր Կրոմվելը՝ Անգլիայում, և Վալենտայնը՝ Բոհեմիայում: Խմելնիցկուն և իր ժամանակաշրջանին նվիրված ուսումնասիրություններում հաճախ է շեշտվում սուղ միջոցներով առավելագույնին հասնելու հեթմանի տաղանդը: Փաստորեն, խմելնիցկին ուկրաինական քաղաքական ամբողջական մի օրգանիզմ վերածնեց այնտեղ, որտեղ այն վաղուց էր գոյություն ունեցել: Գյուղացիների ու կոզակների անկառավարելի խռովարար ամբոխից նա կարգապահ, կազմակերպված ու հզոր բանակ ստեղծեց: Իր իսկ



վերնախավի կողմից դավադրաբար խաբված ժողովրդի միջից հայտնաբերեց ու իր շուրջը համախմբեց գործունյա ու տաղանդավոր առաջնորդների:

Այս ամենի հետ մեկտեղ, Բոզդան Խմելնիցկու ամենակարևոր նվաճումը թերևս այն էր, որ այնպիսի մի հասարակության մեջ, որը զուրկ էր ինքնավստահությունից, առավել ևս՝ ինքնության հստակ գիտակցումից, հեթանոս արթնացրեց հպարտության զգացումը, սեփական շահերը պաշտպանելու կամքն ու վճռականությունը: Մինչև Խմելնիցկին, պատկերացնել անգամ հնարավոր չէր այնպիսի պահվածք ու դրսևորում, ինչպիսին տեսնում ենք օրինակ, կոզակական հասարակ հարյուրապետի՝ լեի ազնվականին գրած նամակում. «Իսկ այն, որ Ձերոդ ողորմածությունը վերջերս մեզ գրել էր, թե մենք՝ հասարակ մարդիկս, վայել չէ, որ գրավոր դիմենք վոյեվոդին, ապա մենք հիմա Աստօո ողորմածությամբ հասարակ մարդիկ չենք, այլ Ջապորոժյան Ջորջի ասպետներ ենք... Թող Աստված առողջություն պարգևի մեր տիրոջը՝ Բոզդան Խմելնիցկուն՝ Ջապորոժյան զորաց հեթանոսին: Տեր զնդապետը հիմա մեր վոյեվոդն է, տեր հարյուրապետը՝ տանուտերը, իսկ քաղաքի օտամանը՝ մեր դատավորն է»:

Պարզ է, որ Խմելնիցկին չխուսափեց նաև անհաջողություններից, սխալներից ու վրիպումներից: Դրանք էին և՛ Բերեստեչկոն, և՛ աղետաբեր մոլորական ռազմարշավը, և՛ դեպի Լեհաստան կոզակական-տրանսիլվանյան արշավանքի ծախսողունը, և, վերջապես, դաշնակիցներին ու թշնամիներին Ուկրաինայի ամբողջականությունն ու անբաժանելիությունը ճանաչել տալու անկարողությունը: *Չետագա բոլոր ժամանակներում պատմաբանները, վիպասաններն ու պոետները, իրար հերթ չտալով մեղադրել են հեթանոսին նշված ու չնշված սխալների համար, ընդ որում, հաճախ ոճանք սխալ էին համարում այն, ինչ ուրիշները զովաբանում էին:* Այսպես՝ XIX դարի կեսին, ժամանակակից ուկրաինական պատմագրության հայր Միկոլա Կոստոմարովը Խմելնիցկուն զովաբանում էր Ռուսաստանի հետ կապեր հաստատելու համար և հանդիմանում՝ թուրքերի հետ ունեցած «անդրկուլիայան» հարաբերությունների համար: Իսկ ուկրաինացի մեծագույն բանաստեղծ Տարաս Շևչենկոն, հակառակը՝ նախատում էր Խմելնիցկուն՝ ռուսական կողմնորոշման համար: Այդ շրջանի երրորդ նշանավոր մտավորական Պանտելեյմոն Կուլիշն ավելի խստորեն էր քննադատում, ասելով, թե Խմելնիցկին Ուկրաինայում մահ ու ավերածությունների, անկարգության ու անկայունության, մշակութային ու բարոյական անկման շրջանի սկիզբը դրեց: XX դարում, Միխայլո Գրուշևսկին նույնպես, կասկածում էր, թե՝ զիտե՞ր արդյոք հեթանոսը, թե ինչ է անում, նրան առավելապես ներկայացնելով որպես հանգամանքների գերի:

Այնուամենայնիվ, ուկրաինացի նշանավոր պատմաբաններից շատերը, *Վյաչեսլավ Լիպինսկու* զլխավորությամբ, հանգում են այն հետևության, որ Բոզդան Խմելնիցկին գիտակցաբար և հետևողականորեն փորձում էր Ուկրաինայի ապագա պետականության հիմքերը դնել և որ առանց նրա ջանքերի այդպիսի հիմքերի վերականգնումը նոր ժամանակներում անհնարին կլիներ: Ինչ վերաբերվում է խորհրդային պատմաբաններին, ապա նրանք միաժամուռ փառաբանում էին Խմելնիցկուն, բայց լրիվ այլ պատճառներով: Խորհրդային հեղինակների համար Բոզդան Խմելնիցկին ամենից առաջ ապստամբած զանգվածների առաջնորդն էր, որ իր ժողովրդին ուղղակիորեն բերում էր միավորելու (կամ՝ ինչպես իրենք էին ասում՝ վերամիավորելու) Ռուսաստանի հետ:

*Չետաքրքիր է, որ ուկրաինացի ժողովուրդը, Բոզդան Խմելնիցկուն տրված գիտական գնահատականների բարդություններին ու նրբություններին անտեղյակ, բնազդաբար մշտապես անսահման սեր է տածել դեպի «Բատկո Բոզդանը»: Չեթանոսի ժամանակակիցներից սկսած մինչև մեր օրերը, ուկրաինացիների մեծամասնության գիտակցության մեջ Բոզդան Խմելնիցկին եղել և մնում է այն հերոս-ազատարարը, ով իր երկիրն ու ժողովրդին արթնացրեց դարավոր քնից, հույս ու կորով ներշնչեց և դուրս բերեց ազգային ու սոցիալ-տնտեսական ճնշումներից ու կեղեքումներից ազատագրվելու հերոսական ուղի:*



## ԱՎԵՐՄՈՒՆՔ

Նոր պատմությունը Եվրոպայի շատ երկրներում սկսվում է զանգվածների ապստամբության պարտությամբ: Ուկրաինայում այն սկսվեց ապստամբության հաղթանակով: 1648 թ.-ի Մեծ ապստամբության հաղթանակի արդյունքում գրեթե ողջ երկրից վճռվեց ավատատիրական ընտրախավը, հաստատվեց տեղական իշխանություն: Այս իրադարձությունները և Ուկրաինայի կյանքում տեղի ունեցող փոփոխությունները XVII դարի կեսերին իսկապես դարակազմիկ երևույթ էին: Այնուհանդերձ, շատ խնդիրներ մնացին անլուծելի: Կոզակական ավագանու մեջ սուր տարածայնություններ առաջ եկան այն հարցում՝ մնալ Մոսկվայի «ծեռքի տա՛կ», թե՞ սյուզերեն փնտրել մյուս հարևանների մեջ: Զգացնել տվեցին նաև սոցիալ-տնտեսական ցավոտ խնդիրները՝ Ուկրաինան կղառնա ազատ երկրագործ-կոզակների յուրօրինակ ու եզակի հասարակությո՞ւն, ինչպես որ ուզում էին գյուղացիներն ու շարքային կոզակները, թե՞ կոզակական ավագանին կգրավի շլյախտայի տեղը՝ այդպիսով վերականգնելով հասարակական կարգը, ինչը տիպական էր այն ժամանակների համար:

Խմելնիցկու մահից հետո դեռ տասնամյակներ շարունակ մոլեգին տարածայնություններ էին բորբոքվում այդ խնդիրների վերաբերյալ: Ավերված երկրի համար եկավ հասարակական երկպառակության, օտարերկրյա ինտերվենցիայի, հետագա ավերածությունների ժամանակաշրջան: Ուկրաինական պատմագրության մեջ, այն ողբերգական ներկայացումը, որտեղ ուկրաինացիները շարունակական կորստաբեր ընդհարումներում անիմաստ վատնում էին 1648 թ.-ի ապստամբության արդյունքում ձեռք բերված հզոր ներուժն ու վճռականությունը, հաճախ անվանում են *Ավերմունքի* շրջան (*Руїна*):

Խմելնիցկու մահվանից 20 տարի անց, հեթանոսի բոլոր նվաճումներն ու թշնամու դեմ համախմբված ժողովրդի ձեռք բերած բոլոր հաջողությունները փոշիացան հենց նույն ժողովրդի՝ հանուն որևէ այլ նպատակի համախմբվելու անկարողության պատճառով: Արդյունքում՝ ձեռքից բաց թողնվեցին Խմելնիցկու ապստամբության արգասիք քաղաքական ինքնորոշման բազմախոստում հնարավորությունները:

## Նոր կացութաձև

Երբ Խմելնիցկին մահացավ, Դնեպրի ձախ և աջ ափերի հողերի մեծ մասը կոզակների տիրապետության տակ էր, այսինքն՝ նախկին Կիևյան, Բրացլավյան և Չեռնիգովյան վոյեվոդությունները, մինչդեռ Գալիչիան և Վոլինը դեռևս լեհերի ձեռքին էին: Կոզակների ենթակայության տակ գտնվող մոտ 250 հազ. քառ. կմ տարածքի վրա ապրում էր մոտ 1,2-1,5 մլն մարդ: Ապստամբությունից հետո առաջին տասնամյակներում, Լեհական թագավորությանը նախկինում պատկանող այդ հողերի կեսը դարձավ Ջապորոժյան կոզակության սեփականությունը, որն իր հերթին դրանց մեծ մասը փոխանցեց գյուղացիական ինքնավար համայնքներին, ինչի համար նրանք հեթանոսական գանձարանին հարկ էին վճարում: Այդ հողերից (այսպես կոչված՝ կարգային) ստացված եկամտի մի մասը կոզակական ավագանուն վճարվում էր որպես ռոժիկ: Բացի այդ, բոլոր հողերի 33 %-ը պատկանում էր կոզակների ավագանուն և ուկրաինական շլյախտային, իսկ 17 %-ը ուղղափառ եկեղեցու սեփականությունն էր:

*Իրենց ենթակա հողերի վրա կոզակները շատ արագ հաստատեցին կառավարման իրենց ձևը:* Գողերը բաժանեցին 16 ռազմական շրջանների (օկրուգների), կամ գնդերի՝ կոզակական զորքի գնդերի անուններով: Գնդապետները, որոնք ռազմարշավների ժամանակ այդ 3-5 հազ.-անոց միավորման հրամանատարներն էին, խաղաղ ժամանակ համապատասխան



տարածքների դատական և վարչական իշխանությունն էին անձնավորում: Յուրաքանչյուր գնդի տարածքն իր հերթին բաժանված էր հարյուրյակների, որտեղ ռազմական և վարչական գործառնություններն էին կատարում հարյուրապետները: Գնդերի և հարյուրյակների կառավարման մարմինները տեղավորված էին իրենց անունները կրող համապատասխան տարածքների մեծ քաղաքներում: Այս վարչական սանդղակի ստորին աստիճանին գտնվում էին փոքր քաղաքներն ու գյուղերը, որտեղ իշխանությունը պատկանում էր կոզակական օտամանին: Սկզբում այդ բոլոր պետերն ընտրվում էին համապատասխան միավորումների կոզակների կողմից: Սակայն ժամանակի ընթացքում այդ պաշտոնները դարձան ժառանգական:

Այդ *ռազմա-վարչական բուրգի ամենավերևում կանգնած էր հեթմանը*: Տեսականորեն նա պետք է ենթարկվեր կոզակական գլխավոր խորհրդին, որն իրեն ընտրել էր: Սակայն 1648-1656 թ.թ.-ների ընթացքում կոզակներն այնքան էին շատացել, որ խորհուրդ գումարելը և՛ դժվար էր, և՛ ոչ նպատակահարմար, դրա համար էլ հեթմաններն հազվադեպ էին դիմում խորհրդի օգնությանը. և՛ հանելիցիկին, և՛ նրա հետնորդները գերադասում էին խորհրդի հրավիրել միայն ավագանու ամենաբարձր վերնախավին, ինչի հետևանքով էլ նրա դերն ու ազդեցությունը գնալով մեծացավ: Իրականում հեթմաններն օժտված էին իշխանական ամենալայն լիազորություններով և համարվում էին Ուկրաինայի փաստացի կառավարիչները: Նրանք ոչ միայն կոզակական զորքի հրամանատարն էին, այլև անկախ արտաքին քաղաքականություն էին վարում, համարվում էին կառավարման և դատական համակարգի բարձրագույն ատյանը, տնօրինում էին Չապորոժյան կոզակության գանձարանն ու հողատարածքը: Այս վերջին հանգամանքն առանձնահատուկ հզոր լծակ էր հեթմանի ձեռքին, քանի որ «զապորոժյան» (այսինքն՝ լեհերից բռնագրաված) հողատարածքը, ինչպես արդեն տեսանք, պատկառելի չափերի էր, և միայն հեթմանի ողորմածությամբ էր կարելի այդ տարածքից հողակտոր ստանալ: Հեթմանական գանձարանի տարեկան եկամուտը (չհաշված բռնագրաված հողերից ստացվող եկամուտը) կազմում էր 1 մլն ոսկի՝ ձուլակտորներով, որ ստացվում էր հարկերից, մաքսատուրքերից ու տարիքներից:

Իր վրա դրված կառավարման բազմաթիվ պարտականությունները կատարելու գործում *հեթմանին օգնում էր բարձրագույն ավագանին*, որը գլխավոր շտաբի և նախարարների խորհրդի մի տեսակ խառնածին էր իրենից ներկայացնում: *Դրա ամենաազդեցիկ անդամը գլխավոր գրագիրն էր*, որը սահմանում էր խորհրդի նիստերի օրակարգը, զբաղվում էր պետական կարևոր թղթաբանությամբ և տեղյակ էր արտաքին քաղաքականության բոլոր ընթացիկ հարցերին:

*Հեթմանի գրասենյակի մյուս առանցքային, կարևոր դեմքը գլխավոր գումակապետն էր*, ռազմական նախարարի նմանօրինակ մի պաշտոն, որը պատասխանատու էր 40-60 հազ. կանոնավոր զորքի (ներառյալ իրետագործ) մարտունակության համար: Դատական գործերով զբաղվում էր գլխավոր դատավորը: Իսկ գլխավոր *խորունժիի* (կրտսեր սպա) և երկու գլխավոր *յասավուլների* ծառայությունից հեթմանն օգտվում էր հատուկ հանձնարարությունների դեպքում:

*Ե՛վ հանելիցիկին, և՛ նրա հետնորդները Ուկրաինայի մայրաքաղաքը միշտ էլ համարում էին Կիևը, սակայն հեթմանի և նրա գրասենյակի նստավայրը կոզակական փոքր քաղաք Չիհիրինն էր*, իսկ XVIII դարում՝ Բատուրինը և Գլուխովը: Պաշտոնապես, և՛ կոզակական բանակը, և՛ նրան ենթակա հողերը կոչվում էին *Չապորոժյան կոզակություն*, սակայն մոսկովիտներն այդ հողերը սովորաբար կոչում էին *Մալոռոսիա*, իսկ լեհերը շարունակում էին *Ուկրաինա* անվանել:

## Փոփոխություններ հասարակարգում

Մեծ ապստամբության հենց սկզբից Ուկրաինայում մրցակցում էին *հասարակական կարգի երկու տարբեր ըմբռնումներ*՝ *Էգալիտար (հավասարապաշտական) և էլիտար (ընտրախավ)*: Սկզբում գերակշռում էր առաջին ըմբռնումը: Չէ՞ որ լեհական շյախտային, որպես իշխող դասակարգ, փոխարինեց կոզակությունը, իսկ, ինչպես ընդունված էր, ամեն ոք կարող էր կոզակ դառնալ: 1648-1656 թ.թ.-ների բուռն ժամանակաշրջանում կոզակների շարքերը համալրեցին հազարավոր քաղաքաբնակներ, գյուղացիներ և ուղղափառ շյախտիչներ: Համաձայն 1654 թ.-ի մոսկովյան թերի մարդահամարի՝ արական սեռի չափահաս բնակչության կեսը կազմում էին կոզակները: Գյուղացու կամ քաղաքաբնակի համար, որն ի վիճակի էր իր

սեփական միջոցների հաշվին զինվորական ծառայության անցնել, բարդություն չէր գրվել կոզակական գնդում և այնպիսի արտոնություններ պահանջել, ինչպիսիք էին հողաբաժին ունենալու իրավունքը, հարկերից ազատվելը, կոզակական ավագանի ընտրելու կամ որևէ պաշտոնում իր ընտրվելու իրավունքը: Համապատասխանաբար, այն կոզակը, որն ի վիճակի չէր իր համար ռազմական հանդերձանք ձեռք բերել, կամ ձանձրանում էր կռվելուց, սովորաբար վերադառնում էր գյուղացու կամ քաղաքաբնակի կարգավիճակին: Այսպես թե այնպես, 1648 թ.-ը *հանգեցրեց նրան, որ խավերի միջև տարբերության սահմանները գրեթե ջնջվեցին*, իսկ սոցիալական հավասարության գաղափարները Արևելյան Եվրոպայի համար աննախադեպ լայն տարածում ստացան: *Ապստամբության արդյունքում էապես բարելավվեց նաև հասարակ գյուղացիների վիճակը*, որոնք իհարկե վերապրեցին այդ դաժան պատերազմը: Վե՞նդելով շյախտային, գյուղացիները ետ նվաճեցին իրենց ազատությունը, ցանկացած տեղ տեղափոխվելու և իրենց սեփականությունը տնօրինելու իրավունքը: Հիմա նրանցից ունևորները, կոզակների շարքերն անցնելով, հնարավորություն ունեին հասարակության մեջ բարձր կարգավիճակ ձեռք բերել: Սակայն գյուղացիները չազատվեցին իրենց բոլոր պարտավորություններից: Չբաղցնելով լեհերից ազատագրած հողերը, նրանք պարտավոր էին առաջվա նման որոշակի ծառայություններ մատուցել և վճարումներ կատարել հօգուտ Չապորոժյան կոզակության, ամենից առաջ կոզակական զորքին ապահովելով փոխադրամիջոցներով, սննդով և օթևանով: Չնայած գյուղացիներն հետագայում էլ էին դրամական տուրք և բնաբաիրա վճարում, բայց երջանիկ էին, որ այլևս մեջք չեն ծռելու ատելի հողատերերի համար:

Սակայն քիչ ժամանակ պահանջվեց, որպեսզի հարցականի տակ դրվեին այդ հարկատու և պարհակապարտ դասի առանց այն էլ համեստ նվաճումներն ու ձեռքբերումները: Բանն այն է, որ վերը նշված ըմբռնումներից երկրորդը՝ *ընտրախավը, որ կարծես մնջում էր ավագանու հոգու խորքում, աննկատելի տիրեց նրա հոգուն՝ այնտեղից ամբողջապես դուրս վանելով հավասարապաշտության ոգին*:

Ճիշտն ասած, կոզակական առաջնորդներից շատերը և հատկապես հանելիցիկուն սատարած ուկրաինացի շյախտիչների և ցուցակագրված կոզակների զգալի մասը օրգանական մասնիկն էին այն վերնախավի, որ գոյություն ուներ մինչև 1648 թ.-ը: Նրանց մտքով անգամ չէր անցնում ստեղծել «հավասարների հասարակություն», մի երևույթ, որի մասին Արևելյան Եվրոպայում այն ժամանակ պատկերացում անգամ չուներին: Ուկրաինական վերնախավի համար ապստամբության միակ նպատակը ատելի լեհ շյախտային ու ավատատերերին երկրից ու իշխանությունից վճռելն էր, որոնց տերը, «բնականաբար» ուկրաինական ընտրախավն էր: Իսկ հասարակությունն առանց ընտրախավի՝ անհնարին է և ոչ կենսունակ: Առնչված այսպես էին մտածում նոր վերնախավի ներկայացուցիչները, այսինքն՝ Չապորոժյան կոզակությունը, որտեղ բոլոր կարևոր պաշտոնները գրավել էին ուկրաինացի շյախտիչներն ու հարստացած կոզակները և որտեղ առաջվա պես պատիվ ունեին քիչ թե շատ բարձր ծագում ունեցող, ռազմա-քաղաքական փորձ ձեռք բերած և բավականաչափ հարուստ մարդիկ: Իսկ *բարձր պաշտոններ գրավելուց հետո արդեն, նոր ընտրախավն աշխատում էր հնախավորին չափ արագ ամրապնդել իշխանությունն ու բազմապատկել հարստությունը*: Եվ բնականաբար այնպես էր ստացվում, որ հասարակական հողերը, որ ծառայության բերումով տնօրինում էին հարյուրապետներն ու գնդապետները, աստիճանաբար դառնում էին նրանց սեփական կալվածքները:

Քանի որ հեթմաններն ընտրվում էին ավագներից և մեծ չափով կախում ունեին ավագանու աջակցությունից, ապա նրանք ոչ միայն չէին կանխում նրանց ձեռքում իշխանության ու հարստության կենտրոնացումը, այլև ամեն կերպ նպաստում էին դրան՝ առատորեն հողեր ու պաշտոններ բաժանելով իրենց գործակիցներին: Իսկ նոր ընտրախավի կազմավորվելու հետ ակնհայտորեն դասակարգային տարբերակման խնդիր առաջացավ, ընդ որում՝ *կյանքի նոր «տերերը» գյուղացիներից ու «ազատ» կոզակներից պահանջում էին անվերապա հնազանդություն*: Նրանք էլ իրենց հերթին նման փորձերին պատասխանում էին *անող դժգոհությամբ, իսկ երբեմն էլ՝ բացարձակ դիմակայությամբ*: Այսպես նոր ձևավորված կոզակական հասարակության մեջ աննշան թվացող ճաքը գնալով խորացավ և այնպիսի ճեղքվածքի փոխվեց, որ վերջիվերջո կործանեց հենց այդ նոր ձևավորված հասարակությունը:

Ինչ վերաբերվում է քաղաքներին, ապա դրանք համեմատաբար աննշան դեր էին խաղում ապստամբության պարագայում և նրանց կարգավիճակը մնացել էր անփոփոխ: Տասնյակից ավելի մեծ քաղաքներ, ինչպես Կիևը, Ստարոդուբը, Չեռնիգովը, Պոլտավան, շարունակում



էին օգտվել Մազդեթուրգյան իրավունքից՝ ինքնակառավարումն իրականացնելով ընտրովի քաղաքային վարչության (մագիստրատի) միջոցով: Այդ քաղաքների բնակիչների կախվածությունը գյուղական վայրերում գերիշխող կոզակությունից, զգալիորեն թույլ էր: Փոխարենը՝ մանր գյուղաքաղաքների մեծ մասը գնալով վերածվում էր կոզակական ավազանու «պապենական» կալվածքների, որը, լեհական շլյախտայի նման, արհամարհում և քամահրանքով էր վերաբերվում տեղաբնակներին: Առևտուր անող քաղաքաբնակների վրա սարսափելի հարկեր ու տուրքեր էին դնում, իսկ կոզակները, որ երբեմն նրանց մրցակից էին դառնում, ազատված էին նման հարկերից: Ավազանուց կախվածությունը գնալով աճում էր: Կոզակների կառավարումից դժգոհ, բնակիչները փրկության ելքը փնտրում էին ցարի օգնությանը դիմելով, իրենք էլ սատարում էին ցարին՝ ավազանու հետ բախումների դեպքում:

Ի տարբերություն քաղաքաբնակների, ուղղափառ հոգևորականությունը սերտ հարաբերություններ էր պահպանում կոզակական վերնախավի հետ. չէ որ այդ հոգևորականությունն էր մարմնավորում այն հավատը, հանուն որի պայքարում էին կոզակները: Խմելնիցկին և նրա հետնորդներն առանց հապաղելու հաստատեցին ինչպես վանքապատկան հողերի իրավունքը, այնպես էլ այդ կալվածքների նկատմամբ գյուղացիների պարտավորությունները (այդ թվում՝ աշխատանքային): Փաստորեն, այդ քայլով ի չիք դարձան գյուղացիների հոգսը թեթևացնող այն բոլոր ձեռքբերումները, որոնց համար նրանք քիչ արյուն չէին թափել ապստամբության ժամանակ: Փոխարենը՝ հոգևոր վերնախավին լիովին բավարարում էր առկա իրավիճակը և նա մերժեցման չէր ձգտում Մոսկվայի հետ, հատկապես՝ եկեղեցական գործերում, քանի որ մոսկովիտներին կրոնական-մշակութային առումով իրենից բավական ցածր էր համարում: Մոսկովյան ցարերը դեռ երկար տարիներ պետք է նվիրատվություններով սիրաշահեին ուկրաինական հոգևորականությանը, մինչև որ նա համաձայնվեր փոխել իր վերաբերմունքը Մոսկվայի նկատմամբ:

## Ավերմունքի սկիզբը

Խմելնիցկու մահն անակնկալի բերեց ուկրաինացիներին: Պիշատիչ հարևաններով շրջապատված, ներքին անմիաբանությունից բզկտված, թերի ձևավորված ուկրաինական հասարակությունը կարիք էր զգում հատկապես այնպիսի առաջնորդի, ինչպիսին էր Բոգդան Խմելնիցկին: Նրա հետնորդներից ոչ մեկն այնպիսի ժողովրդական սեր ու հարգանք չէր վայելում, ինչն այդպես շռայլորեն տրված էր երջանկահիշատակ հեթմանին: Յետևաբար և ոչ մեկը չէր կարող նրա նման հասարակության բոլոր խավերի լայն աջակցությունն ակնկալել: Այնպես որ, հեթմանին փոխարինող գտնելը, պարզվեց, այնքան էլ հեշտ չէ: Բոգդան Խմելնիցկին հույս ուներ դառնալ Ուկրաինայում կոզակական կառավարիչների դինաստիայի հիմնադիր և ուզում էր այնպես դասավորել, որ իր որդի Յուրին ժառանգեր հեթմանի պաշտոնը: Սակայն, երբ Բոգդանը մահացավ, ինչպես ավազանին, այնպես էլ ինքը՝ 16-ամյա Յուրին, հանոգվեցին, որ երկրի համար այդ ճակատագրական պահին նա պատրաստ չէ կառավարելու: Այդ պատճառով, 1657 թ.-ին հեթման ընտրվեց Խմելնիցկու ամենամտերիմ ու փորձառու կողմնակիցներից մեկը՝ Ջապորոժյան Կոզակության գլխավոր գրագիր Իվան Վիհովսկին:

## Վիհովսկին և լեհամետ կողմնորոշումը

Կոզակական նոր ընտրախավի մեջ Իվան Վիհովսկին առանձնանում էր և՛ խելքով, և՛ կրթվածությամբ: Սերում էր Կիևաչինայի ուղղափառ ազնվական ընտանիքից, սովորել էր Մոհիլյան կոլեգիայում, այնուհետև ծառայել էր լեհական բանակում և 1648 թ.-ին՝ ժովտի Վոդիի մոտ գերի էր ընկել կոզակներին: Վիհովսկու կրթվածությունն ու մարտական փորձը գնահատելով, Խմելնիցկին ազատել էր նրան: Միանալով կոզակներին, նա կարճ ժամանակում դարձել էր գլխավոր գրագիրը:

Դառնալով հեթման, Վիհովսկին անմիջապես զգացնել տվեց իր բարեհաճությունը բարձր ավազանու նկատմամբ: Նա ձգտում էր ինքնուրույն արտաքին քաղաքականություն վարել և երազում էր ստեղծել ուկրաինական անկախ իշխանություն: Սակայն դրա հետ միասին շատ լավ հասկանում էր, որ Ուկրաինան պատրաստ չէ նման որոշիչ քայլ անելու, և ամբողջապես Մոսկվայից կախման մեջ չընկնելու համար հակակշիռ քայլեր էր հարկավոր: Այդ նպատակով Վիհովսկին ձգտում է առավել սերտ կապեր հաստատել Լեհաստանի հետ: Լեհերի հետ

հարաբերությունների վերականգնմանը ողջունում ու աջակցում էին և՛ կոզակական, և՛ հոգևորական վերնախավերը: Սակայն ժողովրդական զանգվածները կասկածանքով էին վերաբերվում կոզակական վերնախավի և լեհական շլյախտայի համերաշխությանը և դուրս եկան դրա դեմ: Լեհամետ միաբանության ոխերիմ թշնամիներն էին զապորոժցիները՝ Յակով Բարաբաչի գլխավորությամբ, և Պոլտավյան գնդի կոզակները՝ Մարտին Պուշկարի գլխավորությամբ: Վերջինս հեռուն գնացող նպատակներ ուներ. հակալեհական ալիքի վրա նա ցանկանում էր հասնել հեթմանական բարձունքներին:

Այն պահին, երբ Վիհովսկին հույս ուներ ցարի դեմ խաղարկել «լեհական խաղաթուղթը», մոսկովիտները, անմիջապես տեղեկանալով կոզակների ներքին տարաձայնությունների մա-



Իվան Վիհովսկի

սին, սկսեցին զանգվածներին լարել հեթմանի դեմ: 1657 թ.-ի վերջերին արդեն շարքային կոզակների զգալի մասն ըմբոստացավ նրա դեմ, իսկ 1658 թ.-ի հունիսին կոզակական երկու թշնամի բանակներն արյունահեղ ճակատամարտ տվեցին Պոլտավայի մոտ, որից հաղթած դուրս եկավ Վիհովսկին: Պուշկարը՝ 15 հազ. ապստամբների հետ, մարտում զոհվեց, իսկ Բարաբաչին ավելի ուշ բռնեցին և մահապատժի ենթարկեցին: Սակայն հեթմանի հաղթանակը Պոլտոյայան հաղթանակ էր. եղբայրասպան այդ սպանողում 50 հազ. ուկրաինացի զոհվեց:

Գիտակցելով, որ Մոսկվայից տարանջատվելն անխուսափելի է, Վիհովսկին կրկնապատկեց ջանքերը՝ լեհերի հետ հարաբերությունները բարելավելու համար: Այդ գործում նրան մեծ օգնություն ցույց տվեց ուկրաինացի ազնվական Յուրի Նեմիրիչը: Երկար ժամանակ ուսանելով Եվրոպայում, տոգորվել էր ինքնավար ուկրաինական («ռուսիական») իշխանության գաղափարով, որի անկախությունը, Հոլանդիայի և Շվեյցարիայի անկախության հանգույն, կերաշխավորվեր միջազգային պայմանագրերով: Բայց Վիհովսկին, որ պատերազմի էր պատրաստվում Մոսկվայի դեմ, այն իրավիճակում չէր, որ թեկուզ լեհերին ստիպեր ճանա-



չել Ուկրաինայի անկախությունը: 1658 թ.-ին, երկարատև բանակցություններից հետո, ուկրաինացի և լեհ դեսպանները փոխզիջումային համաձայնության եկան, որը հայտնի է որպես *Չադյաչի պայմանագիր*:

Այդ համաձայնությամբ՝ Կիևի, Բրացլավի և Չեռնիգովի վոյեվոդությունները պետք է կազմեին Ռուսիական իշխանությունը, որը Լեհաստանի և Լիտվայի կողքին կդառնար Ռեչ Պոսպոլիտայի երրորդ իրավահավասար անդամը՝ օգտվելով ամենալայն ինքնավարությունից: Իշխանության ղեկավարը՝ հեթմանը, պետք է ենթարկվեր միայն թագավորին և ունենար սեփական բանակ, դատարաններ, պետական գանձարան և դրամահատարան: Առանց հեթմանի թույլտվության՝ Լեհական զորքերին արգելվում էր մուտք գործել իշխանության տարածք: Երաշխավորվում էին կոզակության ավանդական իրավունքները և հեթմանի համձայնությամբ՝ տարեկան հարյուր կոզակ պետք է ազնվականի տիտղոս ստանար: Լեհերը պատրաստ էին կարևոր զիջումներ անել նաև կրոնական հարցերում: Բերեստյան ունիան չեղյալ հայտարարվեց իշխանության տարածքում, իսկ ամբողջ Ռեչ Պոսպոլիտայում ուղղափառները կաթոլիկների հետ հավասար իրավունքներ էին ստանում: Վերջապես, Ուկրաինայում նախատեսվում էր բաց անել երկու համալսարան և՝ «ինչքան որ հարկավոր լինի» դպրոցներ ու տպարաններ:

Պատմաբանները, մանրամասն ընթերցելիս, խորին հարգանքով են լցվում Չադյաչի պայմանագրի նկատմամբ, պատկերացնելով, թե հեռու գնացող ինչ բարեբեր հետևանքներ կունենար այն Ուկրաինայի, Լեհաստանի և Ռուսաստանի հետագա ճակատագրերի վրա, եթե երբևէ ուժի մեջ մտներ: Բայց այդպես չեղավ: Պայմանագիրը դեռ չէր ստորագրվել, երբ մոսկովիտների 150 հազ.-անոց հսկայական բանակը, իշխան Ալեքսեյ Տրուբեցկոյի գլխավորությամբ, ներխուժեց Ուկրաինա: Արագ հավաքելով իր բանակն ու միանալով լեհական ու թաթարական ղաշնակիցների հետ, Վիհովսկին հյուսիս-արևելյան ուղղությամբ շարժվեց հակառակորդին ընդառաջ: 1658 թ.-ի հունիսի 29-ին Կոնոտոպի մոտ, ցարական զորքը իր պատմության մեջ ամենախոշոր պարտություններից մեկը կրեց: Ահա թե ինչպես է նկարագրում դրա հետևանքները ռուս պատմաբան Սերգեյ Մոլոյովը. «Մոսկովյան հեծելազորի սերուցքը... ոչնչացավ մեկ օրում. հաղթողները մոտ 5 հազ. գերի վերցրին: Ալեքսեյ Միխայլովիչը սգո հանդերձով երևաց ժողովրդին, և սարսափը տարածվեց Մոսկվայի վրա... Մայրաքաղաքը սրսփաց վտանգի ահից»: Լուրեր էին շրջում, թե ցարն ուզում է փախչել Վոլգայից այն կողմ, մինչև Յարոսլավ, քանի որ Վիհովսկին ուղիղ Մոսկվա է գալիս...

Սակայն հեթմանը չկարողացավ օգտվել իր փայլուն հաղթանակից: Ուկրաինայում դեռ շարունակում էին մնալ մոսկովյան կայազորները: Ձապարոժցիների հարձակումը Դրիմի վրա՝ հեթմանի ղաշնակից թաթարներին ստիպեց շուտափույթ վերադառնալ: Պոլտավչիցան կրկին ընդվզել էր: Մոսկովիամետ գնդապետներից մի քանիսը մեղադրում էին հեթմանին, թե՛ նա «Ուկրաինան վաճառել է լեհերին»: Դա վերջին հարվածը եղավ: 1659 թ.-ի հոկտեմբերին, ի վիճակի չլինելով պատերազմը Մոսկվայի հետ շարունակել, Վիհովսկին հրաժարվում է հեթմանությունից և փախչում է Լեհաստան:

Այժմ արդեն առավելությունն անցնում է Մոսկվայի կողմը: Գույս տածելով, որ հոր անունը կօգնի վերականգնել ներքին խաղաղությունն ու համախմբվել որդու շուրջը, ավագանին հեթման է ընտրում արդեն 18 տարին բոլորած Յուրի Խմելնիցկուն: Տրուբեցկոյը, որ նոր զորքով վերադարձել էր Ուկրաինա, պահանջում է, որ երիտասարդ հեթմանը ներկայանա իր ճամբարը՝ վերանայելու ցարի հետ հոր կնքած պայմանագիրը: Ենթարկվելով այդ պահանջին, Յուրին թույլ տվեց իր առաջին սխալը՝ հետագա բազում սխալներից: Շփոթության մեջ ընկնելով ոչ միայն ցարական բանակի հզորությունից ու Տրուբեցկոյի սպառնալիքներից, այլև Պերեյասլավյան պայմանագրի այն տեքստից, որ նրան ցույց տվեց մոսկովյան իշխանը (հետագայում միայն պարզ դարձավ, որ դա պայմանագրի կեղծված պատճենն է եղել), Յուրին շտապեց ստորագրել Մոսկվայի հետ պայմանագրի նոր և իր համար չափազանց անշահավետ տարբերակը: Համաձայն 1659 թ.-ի Պերեյասլավյան համաձայնագրի այդ նոր տարբերակի, մոսկովյան կայազորները տեղակայվում էին ոչ միայն Կիևում, այլև Ուկրաինայի բոլոր մեծ քաղաքներում: Բացի դրանից՝ կոզակներին արգելվում էր առանց ցարի թույլտվության պատերազմներ վարել և արտաքին հարաբերություններ հաստատել: Հեթմանների, բարձրագույն ավագանու և գնդապետների ընտրությունը՝ առանց Մոսկվայի հաստատման, համարվում էր անվավեր: Այն բոլոր պայմանները, որոնց համաձայնվեց Յուրին, ինձ տարի առաջ նրա հայրը կհրաժարվեր նույնիսկ քննարկել: Իսկ Մոսկվայում ցնծում էին. Ուկրաինան սանձելու համար փորձերը, կարծես թե, առաջին անգամ արդյունք տվեցին...

1660 թ.-ին, Լեհաստանի և Ռուսաստանի միջև Ուկրաինային տիրելու հակամարտությունը կրկին պատերազմի հանգեցրեց: Վոլինում գտնվող Չուդնովոյի մոտ ցարական բանակն ընկավ լեհերի շրջապատման մեջ: Բայց Յուրին, իր ավագանու հետ մոսկովիտներին օգնության շտապելու փոխարեն, բանակցությունների մեջ մտավ լեհերի հետ: Իսկ երբ մոսկովիտները Չուդնովոյի մոտ սարսափելի պարտություն կրեցին, Յուրին Ուկրաինան Ռեչ Պոսպոլիտայի կազմի մեջ վերադարձնելու համաձայնություն տվեց: Այդ ժամանակ քաղաքական քառսային իրավիճակն Ուկրաինայում հասավ զագաթնակետին: Աջափնյակում, որտեղ ճամբար էին դրել Խմելնիցկու և լեհերի բանակները, հեթմանի իշխանությունն անփոփոխ էր մնացել, իսկ Չախափնյակում, որը գտնվում էր ցարի վերահսկողության տակ, կոզակներն ընդվզեցին Խմելնիցկու դեմ՝ *ճշանակովի (գործադիր) հեթման* ընտրելով Յակով Սոմկոյին: Առցիակական հակասություններից ու քաղաքական երկպառակություններից քայքայված, լեհական ու ցարական բանակների կողմից ասպատակվող Ուկրաինան տրոհվեց երկու մասի, որոնցից ամեն մեկն իր հեթմանն ուներ: Ավերմուքն հասավ իր զագաթնակետին:

Իրավիճակն ուղղելու անկարողությունից հուսահատ, Յուրի Խմելնիցկին 1663 թ.-ի հունվարին հրաժարվում է հեթմանական մականից և հեռանում է մենաստան: Նրա հետնորդ Պավլո Տետերյայի իշխանությունն արդեն սահմանափակվում էր միայն Աջափնյակով: Լեհամետ քաղաքականության համոզված կողմնակից Տետերյան ազնվական ծագում ուներ, լավ կրթություն էր ստացել և Խմելնիցկի-ավագի օրոք մի շարք կարևոր պաշտոններ էր զբաղեցրել: Վիհովսկու պես, նա էլ էր ջանում չչեղվել լեհական կողմնորոշումից: Լեհերի հետ միասին նա ներխուժեց Չախափնյակ, ընդ որում՝ թագավոր Յան Կազիմիրին համոզելով շարունակել արշավանքը մինչև Մոսկվա: Բայց հարձակումը ձախողվեց և Տետերյան լեհերի հետ վերադարձավ Աջափնյակ՝ այստեղ սկսված հակալեհական խռովությունները ճնշելու:

Կրկին հայտնվելով այն վայրերում, որտեղից սկսվել էր 1648 թ.-ի ապստամբությունը, լեհերը վրիժառության ոխով լցված, մահ ու ավեր էին սփռում ամենուր: Լեհ զորավար Ստեֆան Զառնեցկին, զրավելով Մուլեոտովը, որտեղ Բոգդան Խմելնիցկու կառուցած եկեղեցում, կտակի համաձայն, հանգչում էր նրա մարմինը, հրամայեց քանդել գերեզմանն ու հեթմանի ամուսնի ցիրուցան անել:

Ի դեմս Վիհովսկու տեսնելով իր հնարավոր հակառակորդին, Տետերյան լեհերից պահանջեց ձերբակալել նրան և մահապատժի ենթարկել, ինչն անմիջապես կատարվեց: Իսկ Յուրի Խմելնիցկուն վանքի մենախցից ուղիղ լեհական բանտ տարան:

Մի խոսքով, Տետերյան և նրա լեհ ղաշնակիցները այնպիսի բաներ գործեցին, որ Աջափնյակի հեթմանից երես թեքեցին նույնիսկ նրան հավատարիմ մնացած մի բուռ կոզակները: Վերջվերջո, նա էլ ստիպված հրաժարվեց հեթմանի մականից ու փախավ Լեհաստան: Հիմա արդեն բոլորի համար պարզ դարձավ, որ ինչպիսի խելացի քաղաքական փաստարկներ էլ թելվեին հօգուտ լեհերի հետ ղաշինքի, ուկրաինացիների (հատկապես ցածր խավի) և լեհերի միջև ղաշինքը գործնականում անհնարին էր:

### **Ռուրքական այլընտրանք. Դորոշենկո և Յուրի Խմելնիցկի**

Երբ Ուկրաինան բաժանվել էր լեհական և ռուսական ազդեցության ոլորտների, և իրենց ատարբերկյա տերերի ձեռքին ընդամենը խամաճիկ դարձած հեթմանների մրցակցությունը դառնում էր թշնամիների պայքար, կոզակական ավագանու ողջամիտ անդամների մոտ գնալով աճում էր դժգոհությունը թշնամացած խմբերի նկատմամբ և ավելի հաճախակի էին հանում «Մայր Ուկրաինան» խնայելու և երբեմնի փառքը վերադարձնելու կոչերը: Եվ ամենից բարձր ու վճռական հնչում էր 38-ամյա չերկասյան գնդապետ Պետրո Դորոշենկոյի ձայնը: Կնք նա էլ դարձավ Աջափնյա Ուկրաինայի հաջորդ հեթմանը:

Կնք էր ասել, որ Դորոշենկուն հեթմանության հավակնելու բոլոր հիմքերն ուներ: Գնդապետի որդի, հեթմանի թոռ, նա սերտորեն համագործակցել էր Խմելնիցկու հետ, Վիհովսկու և Տետերյայի օրոք էլ կարևոր պաշտոններ էր զբաղեցրել: 1666 թ.-ին, իր ճանապարհից հեռացնելով երկու վտանգավոր մրցակիցներին՝ Վասիլ Դորոշենկոյին և Ստեֆան Օպարային, Դորոշենկուն հեթման դարձավ: Եվ անմիջապես հայտարարեց, որ *նպատակ ունի իր հովանու տակ առնել և Աջափնյա, և Չախափնյա Ուկրաինան*:

Իր գիրքերն ամրապնդելու համար, նոր հեթմանը, ընկերոջ՝ միտրոպոլիտ Յոսիպ Տուկալունու խորհրդով, մի շարք մանրակրկիտ մտածված բարեփոխումներ անցկացրեց: Հուսալով ստանալ ժողովրդի աջակցությունը, Դորոշենկուն սկսեց հաճախակի գլխավոր խորհուրդ կոմսարել և ուշադրության արժանացնել շարքային կոզակության կարծիքը: Եվ որպեսզի չա-



փազանց կախված չլինի ավագանուց, հեթմանը 20 հազ.-անոց վարձկանների (*սերոյուկներ*) գորագունդ է կազմում, որը միայն իրեն էր ենթարկվում: Սակայն ամենահամարձակ և հեռուն գնացող ծրագրերը, որ Դորոշենկոն մտքում կրում էր, արտաքին քաղաքականությանն էին վերաբերվում: Սկզբում, Աջափնյա բոլոր հեթմանների պես, Դորոշենկոն լեհամետ քաղաքականություն էր վարում: Սակայն իր ուղղվածությունն արմատապես փոխեց 1667 թ.-ին, երբ Ռուսաստանն ու Լեհաստանը իրար հետ կնքեցին խաղաղության Անդռուսովյան պայմանագիրը, որտեղ խոսքը մեծ մասամբ վերաբերվում էր Ուկրաինային, սակայն կողմերից ոչ մեկը չբարեհաճեց անգամ ուկրաինացիների կարծիքն իմանալ: Բայց չէ՞ որ, ըստ էության, Լեհաստանն ու Ռուսաստանը Կողակական Ուկրաինան իրար մեջ էին բաժանում. լեհերն ըն-



Պետրո Դորոշենկո

դունում էին ցարի գերիշխանությունը Չախափնյա Ուկրաինայում, մոսկովիտներն էլ համաձայնվեցին Աջափնյա Ուկրաինան կրկին լեհերին վերադարձնելուն: Ինչ վերաբերվում էր Կիևին, ապա մշտապես նրբաբնույթ այդ հարցը լուծեցին հետևյալ կերպ. քաղաքը և երկու տարի կմնա Մոսկովիայի իշխանության տակ, այնուհետև կվերադարձվի լեհերին: Ի դեպ, պայմանագրի այդ կետը Մոսկվան այդպես էլ չկատարեց: Ինչ վերաբերում է Ջապորոժնի ընդարձակ և փաստորեն անմարդաբնակ տարածքներին, ապա Անդռուսովյան պայմանագրով դրանք անցնում էին երկուսի համատեղ վերահսկողության տակ և ծառայում էին որպես բախարգել՝ թաթարական արշավանքների դեմ:

Լեհաստանն ու Ռուսաստանը լիուլի բավարարված էին ձեռք բերված համաձայնագրով, սակայն Ուկրաինայի համար դա քաղաքական անդառնալի աղետ էր:

Եթե ողջ Նադոնեպրյան Ուկրաինան կառավարող Յուրի Խմելնիցկուն և Վիտվսկուն արդեն բավականին դժվար էր պահպանել գործողությունների ազատությունը, ապա ինչպիսի դժվարություններ էին սպասվում նրանց հետնորդներին, որոնք բաժանված էին «աջերի» ու «ձախերի», և ավելի մեծ կախման մեջ էին իրենց արտասահմանյան տերերից: Այժմ, երբ լեհական շյախտան վերադառնում էր Աջափնյա Ուկրաինա, պարզ դարձավ, որ Մոսկվան կոպտորեն խախտել է Ուկրաինան լեհերից պաշտպանելու 1654 թ.-ին ստանձնած պարտավորությունը: Դնեպրի երկու ափերին էլ հիասթափությունն ու զայրույթը տիրեց: Ասում են,

երբ հեթման Դորոշենկոն Անդռուսովյան գործարքի լուրն ստացավ, սրտի նոպա ունեցավ:

Այսպիսով, Անդռուսովից հետո լեհամետ ուղղվածությամբ գնալու մասին արդեն խոսք չի մնել չէր կարող: Դորոշենկոն որոշում է վերադառնալ Բոգդան Խմելնիցկու հին նախագծերից մեկին՝ օգնություն խնդրել Օսմանյան Բարձր Դռնից: Այս անգամ պահը ճիշտ էր ընտրված. Բարձր Դուռը մի շարք գավթողական արշավանքներ էր ծրագրել և մեծ պատրաստակամությամբ արձագանքեց Դորոշենկոյի խնդրանքին: 1667 թ.-ի աշնանը թուրք-կոզակական միացյալ զորքը Գալիչինայում հարձակվեց լեհական զորքի վրա, որի արդյունքում Յան Կազիմիր թագավորը ստիպված եղավ լայն ինքնավարություն շնորհել Աջափնյա Ուկրաինայի հեթման Դորոշենկոյին: Սակայն այդ հաջողությունը չգոհացրեց հեթմանին: Լեհերից մեկընդմիշտ



Յուրի Խմելնիցկի

ապստվելու համար նա Ուկրաինան հանձնեց Բարձր Դռան գերիշխանությանը (հավանաբար հուսալով, թե թուրքական տիրապետությունը կլինի զուտ խորհրդանշական): Աջափնյալում թվացյալ անվտանգությունն ապահովելով, Դորոշենկոն իր զորքով անցավ Չախափ և «գահընկեց» արեց իր հակառակորդին՝ Չախափնյա հեթման Իվան Բոյուխովեցկուն: 1668 թ.-ին Դորոշենկոն հասավ իշխանության գագաթնակետին: Դնեպրով թուրքերի օժանդակության վրա, իր ենթակայության տակ վերցրեց Դնեպրի երկու ափերն էլ և իրեն հայտարարեց ողջ Ուկրաինայի հեթման: Սակայն այդ հաջողությունը, պարզվեց, վաղանցիկ էր: Կեթմանական իշխանության հզորանալուց անհանգստացած, Ուկրաինայի թշնամիներն անցան բազում անգամներ քննություն բռնած մարտավարության՝ հեթմանի դեմ հանել նրա հնարավոր հակառակորդներին և ներսից պայթեցնել այդ կուռ միասնությունը: Թաթարները փորձեցին Դորոշենկոյին փոխարինել ուն Մուխոմիլենկոյով: Դորոշենկոն դեռ չէր հասցրել պատժել այդ հակառակորդին, լեհերը խաղի մեջ մտցրեցին ավելի վտանգավոր մեկին՝ Միխայլո Խանենկոյին, որի օգնությամբ կրկին գրավեցին Աջափնյա Ուկրաինան:

Ելնելով զավթիչներին դիմակայելու, Դորոշենկոն Չախափնյալում իր փոխարեն հեթման նշանակեց Դենյան Մնոհոհրիշնուն: Մոսկվան՝ զգալով հաջողության հասնելու իր հնարավորությունը, շարժվեց դեպի Չախափնյակ և ստիպեց Մնոհոհրիշնուն հրաժարվել Դորոշենկոյից և ճանաչել ցարի իշխանությունը:



Իսկ Դորոշենկոն արդեն դժվարությամբ էր կարողանում պահել Աջափնյակը: 1672 թ.-ին, իր 12 հազ.-անոց ջոկատով նա ստիպված էր միանալ թուրքական 100 հազ.-անոց զորքին, որը ներխուժելով Պոդոլյե, նպատակ ուներ այնտեղից վճռել լեհերին և այն դարձնել թուրքական նահանգ: Ասելի «բուսուրմանների» հետ միասնալն արագորեն նոսրացրեց նրա աջակիցների շարքերը և սասանեց հեթմանի բարձր հեղինակությունը: Վերջին հարվածը նա ստացավ 1675-76 թ.թ.-ներին, երբ մոսկովիտները ձախափնյա կողակների հետ Չիհիրիհի մարոցի համար արյունահեղ կռվի ելան թուրքերի դեմ և Դորոշենկոն ականա հայտնվեց «անհավատների» բանակում, որ կռվում էր ուղղափառ հայրենակիցների դեմ: Իր անելանելի վիճակը գիտակցելով, նա իր հեթմանական մականը հանձնում է Իվան Սամոյլովիչին՝ Չախափնյակի նոր հեթմանին: Ցարը համեմատաբար մեղմ վարվեց «վերջին իսկական կողակի» հետ՝ մերժմոսկովյան քառոր ուղարկելով նրան:

Թուրքերը բավականին արագ ու անսպասելի փոխարինող գտան Դորոշենկոյին: 1677 թ.-ին նրանք Աջափնյակի հեթման են նշանակում Յուրի Խմելնիցկուն, հույս ունենալով օգտագործել նրա հոր փառքը ու ազգանունը: Այդ համելուկային և, հավանաբար հոգեպես անհավասարակշիռ մարդու անցած ուղին առանց այդ էլ արդեն արկածային անհավանական վեպ էր իր իշխեցնում: Հեթմանությունից սկսելով, նա հետո դարձել էր քահանա, վարդապետ, երեք տարի նստել էր լեհական բանտում, ազատվելուց հետո մասնակցել էր թաթարների դեմ արշավանքների, գերվել ու տարվել էր Կոստանդնուպոլիս, որտեղ ևս վեց տարի անցկացրել էր բանտում: Եվ հանկարծ թուրքերը բանտից հանում են այդ դժբախտին, ձեռքը տալիս հեթմանական մականն ու գիտակցելով, որ այդ խամաճիկի տեսքը դժվար թե որևէ մեկին ոգևորի, ի լրումն մեծահռչակ ազգանվան, զարդարում են «Սարմատիայի և Ուկրաինայի իշխան, Չապորոժյան Կողակության տիրակալ» պերճաշուք ու հնչեղ տիտղոսով: Սակայն տիտղոսն էլ չօգնեց, քանի որ ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ հեթմանության ժամանակ խեղճ Յուրին նույն պաշտոնի դուրս եկավ:

1677-1678 թ.թ.-ներին թուրքերի հետ միասին Յուրի Խմելնիցկին մի քանի անգամ փորձ արեց գրավել հոր մայրաքաղաք Չիհիրիհը: Եվ մոսկովիտները, և՛ թուրքերը մեծաթիվ բանակներ էին կենտրոնացրել այդտեղ: Սուլթանը մոտ 200 հազ.-անոց զորք էր բերել, իսկ Մոսկվան՝ 70 հազ.-անոց զորք և ձախափնյա կողակների 50 հազ.-անոց ջոկատ: Չիհիրիհի արշավանքներում ոչնչի չհասնելով, Յուրի Խմելնիցկին փորձեց հարձակում կազմակերպել Աջափնյակի վրա, որն ավարտվեց խղճալի պարտությամբ: Ոչ մի կողմից աջակցություն չստանալով, նա իշխում էր միայն թուրքերի կողմից իրեն հատկացված Պոդոլյեի մի փոքրիկ մասի վրա: Սակայն այստեղ էլ նա կարողացավ ստեղծել այնպիսի անկայուն ու բռնատիրական մի «պետություն», որ վերջիվերջո նրա «բուսուրման» հովանավորների համբերության բաժակն էլ լցվեց և 1681 թ.-ին նրան գլխատեցին: Նույն թվականին թուրքերն ու թաթարները Մոսկվայի հետ կնքեցին Բախչիսարայի խաղաղության պայմանագիրը, որում մասնավորապես ճանաչում էին մեկը մյուսի՝ Ուկրաինայում ունեցած բոլոր տիրույթները: Հինգ տարի անց, Մոսկվան համանման մի պայմանագիր էլ կնքեց Լեհաստանի հետ: Այսպիսով, 1686 թ.-ին ամբողջ Ուկրաինան բաժանված էր հարևան պետությունների միջև:

## Չախափնյակը մոսկովիտների իշխանության տակ

Ռուսաստանին մոտ գտնվելու պատճառով, Չախափնյակը այս ամբողջ ժամանակ Մոսկվայի ազդեցության ոլորտում էր: 1660-1670-ականների քառասյին տարիներին, երբ թուրքական, թաթարական, լեհական ու ռուսական արշավանքներն անեծք էին դարձել երբեմնի ծաղկուն Աջափնյակի գլխին, համեմատաբար հազվադեպ էին հասնում Դնեպրի ձախափնյա շրջանին: Սակայն Չախափնյակն էլ ճաշակեց իրեն բաժին ընկած երկպառակությունները, մահն ու ավերմունքը, որոնց պատճառը ոչ այնքան օտարերկրյա զավթիչներն էին, որքան ժողովրդական գանգվածների անվերջանալի խռովությունները՝ սեփական վերնախավի ու ավագանու դեմ:

Այդ ներքին պայքարը բորբոքվեց Յուրի Խմելնիցկու առաջին հեթմանությունից անմիջապես հետո: Հարուստ քաղքենու ընտանիքից սերած և ավագանիական ընտրախավի բացահայտ կողմնակից Յակով Սոմկոն միացավ դեռ վերջերս իր մրցակից, Նեժնի գնդապետ Վասիլ Ջոլոտարենկոյի հետ՝ վերջինիս հեթման ընտրելու նպատակով, որպեսզի այդպիսով ավագանու համար իշխող դիրք ապահովվեր: Բայց Սոմկո-Ջոլոտարենկո խմբակցության

դեմ դուրս եկավ Իվան Բոյուխովեցկին, որ ստորին խավերից էր սերում և մեծ դեմագոգ էր: Այս վերջին հատկանիշի շնորհիվ նա ընտրվել էր զապորոժցիների օտաման: Ինչպես միշտ, Մոսկվան իրար դեմ զրգռեց այս երկու խմբերին: Այս անգամ ցարի բարեհաճությունը Բոյուխովեցկու կողմն էր, որովհետև ավագանուն կասկածում էր լեհանետ տրամադրվածության մեջ: Եվ դրա համար էլ 1663 թ.-ի հունիսին ցարի ազնվագարմ ներկայացուցիչները հաճույքով էին հետևում, թե ինչ հունով են զարգանում իրադարձություններն այսպես կոչված «Սև ռադայի»՝ կողակական ցածր խավի աղմկարար խառնածողովում, որտեղ ցնցոտիավոր քաղաքականների ու գյուղացիության աջակցությամբ հեթման ընտրեցին Բոյուխովեցկուն, բառացիորեն ուժով ցրելով Սոմկոյի ու Ջոլոտարենկոյի կողմնակիցներին (հետագայում նոր հեթմանը երկուսին էլ մահապատժի ենթարկեց):

## Իվան Բոյուխովեցկի (հեթման՝ 1663-1668 թ.թ.)

Ամբողջովին կախվածության մեջ լինելով Մոսկվայից, Բոյուխովեցկին մեկը մյուսի ետևից գիջումներ էր անում ցարական կառավարությանը: Նա պատրաստակամությամբ հաստատեց 1659 թ.-ի Պերեյասլավյան վերախմբագրված անշահավետ պայմանագիրը, միաժամանակ առաջարկելով իր հաշվին ռուսական կայագործները պահել Ուկրաինայում: 1665 թ.-ին, ցանկություն հայտնելով «կանգնել միապետի պայծառ աչքերի առջև», նա 500 կողակներից բաղկացած պատվո թիկնազորով ուղևորվեց Մոսկվա: Նա հեթմաններից առաջինն էր, որ այցելության գնաց ցարին: Մոսկվան մեծարանքով դիմավորեց նրան. բոյարի տիտղոս շնորհեցին ու բոյարուհու հետ ամուսնացրեցին: Ցարական ընդունելությունից շլացած, Բոյուխովեցկին նոր համաձայնագիր ստորագրեց, որն հերթական անգամ կրճատեց Ուկրաինայի իրավունքներն ու ազատությունները: Ըստ այդ պայմանագրի՝ ուկրաինական գրեթե բոլոր գլխավոր քաղաքներն անցնում էին Մոսկվայի վերահսկողության տակ, ցարական պաշտոնյաներին թույլ էր տրվում ուկրաինական գյուղացիներից ու քաղաքաբնակներից հարկեր հավաքել: Եվ նույնիսկ Կիևի միտրոպոլիտին այսուհետև պետք է Մոսկվան նշանակեր: Ավելին՝ համաձայնագիրը նախատեսում էր, որ հեթմանի ընտրություններն էլ պետք է տեղի ունենային միայն ցարի պաշտոնական ներկայացուցիչների ներկայությամբ և ամեն մի նոր հեթման՝ պաշտոնում հաստատվելու համար, այսուհետև պետք է ներկայանար Մոսկվա:

Սակայն Բոյուխովեցկին քանկ վճարեց Ուկրաինայի շահերն անտեսելու համար՝ հենց որ նրա մոսկովյան բարեկամները զործի անցան: Մոսկովյան կայագործներն իրենց զգացին ուկրաինական քաղաքների տեր ու տնօրենը: Ցարն Ուկրաինայում մարդահամար անցկացրեց և գրագիրները կոպտորեն խառնվում էին մարդկանց անձնական հարցերին, իսկ ամբարտապան հարկահանները այնպիսի նորանոր հարկեր սահմանեցին, որ ժողովուրդը նզովում էր և Մոսկվային, և հատկապես իրենց հեթմանին, որ երկիրը հեղեղել էր այդ ծրիակներով: Նույնիսկ եկեղեցական որոշ բարձրաստիճան պաշտոնյաներ, որ նախկինում ռուսամետ կողմնորոշում ունեին, բացահայտորեն բողոքում էին այս ամենի դեմ: Պարզ չէ, թե դեռ ինչքան կհանդուրժեր ուկրաինացի ժողովուրդը Բոյուխովեցկու և Մոսկվայի այս ծաղրածանակը, եթե 1667 թ.-ին Անդրուսովյան խաղաղության պայմանագիրը չլցներ նրանց համբերության բաժակը:

Չախափնյա ուկրաինացիներին, ինչպես նաև Դնեպրի աջ ափին բնակվող նրանց հայրենակիցներին, ամենից շատ զարմացրեց և վիրավորեց այն, որ ցարը, խոստանալով Ուկրաինան պաշտպանել լեհերից, պարզապես վերցրեց ու երկրի կեսը տվեց այդքան ատելի շլախտային: Եվ 1667-1668 թ.թ.-ներին ամբողջ Չախափնյա Ուկրաինայով ապստամբությունների ալիք անցավ՝ ցարական կայագործների և նրանց ուկրաինացի արբանյակների դեմ: Բոյուխովեցկին, հասկանալով, որ իր ռուսամետ քաղաքականությամբ շատ հեռուն է գնացել, մի շարք ունիվերսալներ (հռչակագրեր) հրատարակեց, որոնցում փոթոթվում է սիրով առ «մայր Ուկրաինան»: Նա նույնիսկ զաղտնի հարաբերություններ է հաստատում Դորոշենկոյի հետ՝ նրան հավանություններ դաշինք առաջարկելով: Բայց արդեն շատ ուշ էր: Հենց որ Դորոշենկոյի զեղերն անցան Դնեպրի ձախ ափը, Բոյուխովեցկուն խոշտանգեց հենց այն տգետ ու կատաղի ամբոխը, որն ընդամենը հինգ տարի առաջ հեթմանական պատվի էր արժանացրել նրան:

## Դեմյան Մնոհոիրիչնի (1668-1672)

Լեհերի ճնշմանը դիմակայելու համար Դորոշենկոն ստիպված էր վերադառնալ Աջափնյակ՝ Չախափնյա Ուկրաինայի հեթման նշանակելով չեռնիգովյան գնդապետ Դեմյան Մնոհոիրիչնուն: «Անզրագետ ու հասարակ մարդ» լինելով՝ Մնոհոիրիչնի կարողանում էր իրեն ենթար-



կեցնել նույնիսկ իր այն հպատակներին, ովքեր «հիացած չէին» իրենով: Երբ նրա օրինական առաջնորդ Դորոշենկոյի աստղը սկսեց դեպի մայրամուտ թեքվել, Մնոհոհրիչնին մոռացավ նույնիսկ մտածել Մոսկվայից անջատվելու մասին և դրա փոխարեն կրկին հավատարմության երդում տվեց ցարին, ինչի դիմաց ցարը նրան Չախափնյա Ուկրաինայի օրինական հեթման ճանաչեց:

Սակայն Մոսկվայի հետ կապերը վերականգնելը դեռևս չէր նշանակում, թե Մնոհոհրիչնին, Բրյուխովեցկու նման, ցարական խամաճիկ դառնալու մտադրություն ունի: Իրեն հատուկ շիտակությամբ Դենյան Մնոհոհրիչնին ռուսներին տեղեկացրեց ուկրաինացիների դժգոհությունների մասին և համառորեն պնդեց Չախափնյա ափից դուրս բերել մոսկովյան զորքերը: Փոխզիջման գնալով՝ ցարը համաձայնվեց թողնել միայն հինգ ամենամեծ քաղաքներում տեղակայված կայազորները: Ինչ վերաբերում է Կիևին, հեթմանը նրբորեն հիշեցրեց, որ Կիևը, ինչպես նաև Ուկրաինայի մյուս քաղաքները, ցարը չի գրավել, այլ Ջապորոժյան Կոզակության կամավոր ցանկության համաձայն «ընդունել է իր բարձր ձեռքի տակ», այդ պատճառով էլ իրավունք չունի այն «զիջել» լեհերին: Չնայած Մոսկվայի հետ խոսելիս Մնոհոհրիչնին սպառնական տոն էր տալիս իր խոսքին, սակայն Մոսկվայի պատասխանները հիմնականում հաշտարար էին: Հավանաբար, Բրյուխովեցկու անփառունակ վախճանը, որի օրոք իրենց շատ բան էին թույլ տալիս, լավ դաս էր եղել մոսկովյան քաղաքագետների համար և նրանք համապատասխան հետևություններ էին արել: Վարպետորեն քողարկելով իր ներկայությունը Դենեպրի ձախ ափում, Մոսկվան նպատակ ուներ բարենպաստ ու շահեկան ձևով ներկայացնել ի հակադրություն լեհերի կոշտ ու կոպիտ քաղաքականության, որոնց անընդմեջ պատժիչ զործողություններն Աջափնյակում միայն ուժեղացնում էին ուկրաինացիների ատելությունն ու դիմադրությունը:

Մասնակիորեն վերադարձնելով իր նախորդի կողմից կորցրած ինքնավարությունը, Մնոհոհրիչնին իր վարձկան-«ընկերախմբի» օգնությամբ ձեռնամուխ եղավ Աջափնյակում կարգուկանոն հաստատելու գործին: Սակայն իր անտակտությունն ու ավագանուն ընդհանրապես հաշվի չառնելու կամակորությունը ճակատագրական եղան հեթմանի համար: Կոզակական վերնախավը նրա դեմ դավադրություն կազմակերպեց, ընդ որում՝ ցարին ուղղված մատուցություններում դավադիրները Մնոհոհրիչնուն մեղադրում էին գաղտնի մտադրությունների մեջ, իբրև թե Դորոշենկոյի հետ գաղտնի մամակագրության մեջ է և ուզում է թուրքերի իշխանության տակ անցնել: Վերջապես, 1673 թ.-ին ավագանին հասավ իր նպատակին: Ճիշտն ասած, ցարն էլ դեմ չէր անհաճո հեթմանից ազատվելուն: Տեսնելով, որ կամակոր հեթմանը կորցնում է աջակցությունը, ցարն հրամայեց բանտարկել նրան, տանջել և Սիբիր քշել:

### Իվան Սամոյլովիչ (1672-1687)

Եթե Բրյուխովեցկու ընտրվելն ավագանու և ժողովրդական զանգվածների միջև ընդհարումների արտացոլումն էր, ապա Մնոհոհրիչնու տապալումը կոզակական վերնախավի՝ ավագանու և հեթմանի միջև ներքին տարածայնությունների վկայությունն էր: Ըստ էության վախենալով, և ոչ մի լավ բան չսպասելով հզոր հեթմանի իշխանությունից, ավագանին երեք ամիս հետաձգում էր Մնոհոհրիչնու հետնորդի ընտրությունները, այդ ընթացքում դիմելով ցարին՝ հեթմանի բացառիկ արտոնությունները սահմանափակելու առաջարկությամբ: Մոսկվան հենց դրան էլ սպասում էր: Երբ 1672 թ.-ին վերջապես հեթման ընտրեցին Սամոյլովիչին, նա արդեն իրավունք չուներ ավագանու անդամներին դատել ու պատժել, ինչպես նաև արտաքին քաղաքական որևէ կապի մեջ մտնել՝ առանց ավագանու ռադայի համաձայնության: Ավելին, նոր հեթմանին անմիջապես պարտադրեցին ցրել այն վարձկան զորամասերը, որոնք ավանդաբար գտնվում էին հեթմանի անմիջական ենթակայության տակ: Հեթմանին ստիպելով ընդունել այդ բոլոր «բարենորոգումները», ավագանին ընդլայնում էր իր առանց այդ էլ հսկայական իշխանությունը՝ հեթմանական իշխանության, այսինքն՝ ուկրաինական ինքնավարության քայքայման գնով:

Սամոյլովիչը հոգևորականի որդի էր: Փայլուն ավարտել էր Սոհիլյան կոլեգիան և մտել Ջապորոժյան Ջորագուդ: Դառնալով հեթման և նախորդների փորձն հաշվի առնելով, նա միշտ ձգտում էր լավ հարաբերություններ պահպանել ավագանու հետ: Նրանց շոյալորեն հողեր էր բաժանում, ամեն կերպ խրախուսելով նրանց էլիտար ձգտումները, ընդհուպ ստեղծելով հեթմանին կից կրտսեր սպաների հատուկ գվարդիա, այսպես կոչված՝ «ЗАЧКОВИХ ВИЙСЬКОВИХ ТОВАРИШІВ» («անվանակարգային ռազմական ընկերություններ»), որտեղ հիմնականում ավագների որդիներն էին, որ հատուկ հանձնարարություններ էին կատարում և

պատրաստվում էին բարձր պաշտոններում փոխարինել իրենց հայրերին: Ստեղծելով այդ գվարդիան, Սամոյլովիչը նպաստեց Չախափնյակում էլ ավագների դինաստիա առաջանալուն:

Արտաքին քաղաքականության մեջ Սամոյլովիչը, մյուս հեթմանների նման, ձգտում էր ընդարձակել իր իշխանությունն ամբողջ Ուկրաինայում: Նա խստացրեց վերահսկողությունը խոտվարար ու անհանգիստ Ջապորոժյեի վրա, իսկ 1676 թ.-ին իր զնդերը խիզախորեն տարավ Աջափնյակ և ռուսական զորքի հետ համատեղ մարտնչեց թուրքերի ու Դորոշենկոյի դեմ: Ըստ երևույթին, Սամոյլովիչի կյանքի ամենաերջանիկ պահն այն օրն էր, երբ Դորոշենկուն հանդիսավոր նրան հանձնեց հեթմանական մականը, որից հետո նա պիտի կոչվեր «Դենեպրի երկու ափերի հեթման»: Սակայն երկու տարի էլ չէր անցել, որ թուրքերը Սամոյլովիչին՝ իր ռուս դաշնակիցների հետ միասին, դուրս մղեցին Աջափնյակից: Այդ հողերը թողնելիս Սամոյլովիչը կազմակերպեց աջափնյա բնակչության զանգվածային տեղափոխումը Դենեպրի ձախ ափը: Այդպիսով, կոզակության նախահայրենիքը փաստորեն դատարկվեց:

Ուկրաինան վերամիավորելու Սամոյլովիչի հույսերին նոր հարված հասցրեց այսպես կոչված՝ «Հավերժական խաղաղության» պայմանագիրը, որ 1686 թ.-ին կնքեցին Ռուսաստանն ու Լեհաստանը: Ըստ այդ դաշնագրի՝ Կիևն ու Ջապորոժյեն «հավերժ» անցնում էին ցարի գերիշխանության տակ, իսկ մնացած Աջափնյակն ու Արևելյան Գալիչիան (Ռուսիական վոյեվոդությունը), չնայած հեթմանի բողոքներին (այդ հողերն օրենքով պատկանում էին ուկրաինացիներին), մնում էին Լեհաստանին: Հուսախաբ, մոսկովյան քաղաքականությունից հիասթափված, Սամոյլովիչը 1687 թ.-ին խիստ դժկամությամբ միացավ թաթարների դեմ մոսկովիտների արշավանքին: Եվ չնայած այդ մեծածավալ արշավանքին 100 հազ.-ից ավելի մոսկովիտ զինվոր և մոտ 50 հազ. կոզակ էր մասնակցում, հարձակումը ապաշնորհ նախապատրաստելու և վատ եղանակների պատճառով, թաթարների հետ պատերազմը, որ տասնյակ հազարավոր կյանքեր արժեցավ մոսկովիտներին և ուկրաինացիներին, լիովին տանուլ տրվեց: Ցարական բանակի հրամանատարները պարտության ամբողջ մեղքը բարդեցին հեթմանի վրա, իսկ կոզակական ավագանու մեջ էլ, այն ավագանու, որին այդքան փայփայում ու ընդառաջում էր Սամոյլովիչը, գտնվեցին թշնամիներ, որոնք հեթմանին մեղադրեցին սպարիցի ճանապարհով հարստանալու մեջ: Այդ բանասարկությունների արդյունքում, հենց նույն՝ 1687 թ.-ին Սամոյլովիչը ոչ միայն պաշտոնաթող արվեց, այլև հայտնվեց Սիբիրում:

## Ուկրաինայի մասնատումը

Մինչև 1648 թ.-ը ուկրաինացիների համար Ռեչ Պոսպոլիտայի կազմի մեջ գտնվելն առընկալ մեկ դրական կողմ ուներ. զրեթե բոլոր ուկրաինացիները գտնվում էին միևնույն «քաղաքական տանիքի տակ»: Սակայն Ավերմուլեքի շրջանում Լեհաստանն ստիպված եղավ խոտվախույզ ուկրաինան բաժանել Ռուսաստանի հետ, և այդ ժամանակից սկսած, 300 տարի պետք եղավ, մինչև որ Ուկրաինայի քաղաքական միասնությունը վերականգնվեց: Բաժանման արդյունքում էական տարբերություններ առաջ եկան ինչպես մոսկովյան և լեհական ազդեցությունների ոլորտների բնակվող ուկրաինացիների միջև, այնպես էլ՝ հենց միևնույն ոլորտի ներսում: XVII դարի վերջին Ուկրաինայում բնակչությունը հասնում էր 4 մլն-ի, և ամեն մի տարածաշրջան ուներ իր տեղական առանձնահատկությունները, ամենից առաջ՝ վարչա-քաղաքական բնույթի:

## Մոսկովիտների իշխանության տակ

### Չախափնյակը (Հեթմանչիհնա)

Չախափնյա տարածքը բնակեցվել էր 1648 թ.-ի ապստամբությունից ոչ շատ առաջ և ապստամբության ժամանակ դեռևս սակավաբնակ էր: Բայց 1648 թ.-ից հետո Չախափնյակում կյանքը կտրականապես փոխվում է: 1700 թ.-ին բնակչությունն այնտեղ արդեն հասնում էր 1,2 մլն-ի: Անկախ և լավ կազմակերպված կոզակական կառավարման համակարգը ստիպանելու և Աջափնյակից փախստականների զանգվածային ներհուսքի շնորհիվ, Չախափնյակը Ուկրաինայի քաղաքական և մշակութային կյանքի կենտրոնի վերածվեց: Ուկրաինայի պատմագրության մեջ այդ տարածաշրջանն հաճախ անվանում են **Հեթմանչիհնա**: Նկա-



տի ունենալով նրա պատմական հատուկ նշանակությունը, մանրամասն կուսումնասիրենք առանձին բաժնով:

### Ձապորոժցիների հողերը

Ողջ Ուկրաինայով մեկ հեթմանական իշխանության և կոզակական կացութաձևի հաստատմանը զուգընթաց, ազատ կոզակության երբեմնի կենտրոն Ձապորոժյան Սիչը կորցնում էր իր առանձնահատուկ դերը: XVII դարի վերջերին Սիչն այլևս քաղաքական, կրոնական ու հասարակական կարևոր իրադարձությունների նախաբեմը չէր, իսկ զապորոժցիներն էլ կամաց-կամաց վերադառնում էին իրենց տեղական գործերին ու հոգսերին:

Հազվադեպ տարիներ էր պատահում, որ Ձապորոժյեն՝ կոզակական եղբայրության «տունը», 10 հազ.-ից ավելի բնակիչ ունենար: Փոխարենը՝ զապորոժցու «տունը» լայնարձակ ու անմարդաբնակ տափաստանն էր, որ ձգվում էր հյուսիսից հարավ՝ Հեթմանշինայից մինչև Ղրիմի խանություն: *Ձապորոժցիների հողերը 1667 թ.-ից օրինականորեն գտնվում էին լեհ-մոսկովյան խնամակալության տակ, իսկ 1686 թ.-ից ամբողջությամբ անցան ցարի իշխանության տակ:* Ինչ վերաբերում է Ձախափնյակի հեթմաններին, ապա նրանք միշտ էլ Սիչն իրենց տարածքն էին համարում, չնայած անձամբ զապորոժցիները միշտ պատրաստ էին հակահարված տալու ոչ միայն հեթմաններին, այլև ցանկացած տերության, որի մտքով կանցներ իր իշխանությունը հաստատել այստեղ: *Ընդհուպ մինչև XVII դարի վերջերը նրանք շարունակում էին հարձակումները թաթարների ու թուրքերի վրա, ինչը սակայն չէր խանգարում, որ ժամանակ առ ժամանակ, առանց որևէ փափկանկատության, նրանց հետ դաշինք կնքեն՝ հեթմանի, թագավորի կամ ցարի դեմ:* Այդ շրջանի տիպիկ զապորոժյան օտանան էր Իվան Սիրկոն, որ թուրքերի ու թաթարների դեմ բազմաթիվ հանդուգն արշավանքների անվեհեր ու հռչակավոր առաջնորդն էր: Միևնույն ժամանակ, զապորոժյան հատուկ անհոգությանը նա քամահարանքով էր վերաբերվում բարձր քաղաքականությանը, դրանով իսկ անտեսելով այն խնդիրները, որ ծառայած էին ուկրաինական ողջ հասարակության առջև:

Մեծ փոփոխությունների ենթարկվեց նաև Ձապորոժյան Սիչի սոցիալ-տնտեսական կյանքը: Ռազմական ավարը կամ զինվորական ծառայության բռնակը զապորոժյան կոզակների եկամտի հիմնական աղբյուրները չէին այլևս: Նրանցից շատերն զբաղվում էին ձկնորսությամբ, որսորդությամբ, մեղվապահությամբ և այլ խաղաղ գործերով: Նրանք արդեն հռչակավոր վարպետ դարբիններ էին, և իրենք էին իրենց համար պատրաստում «ծայ» մակույկները, որոնցով Սև ծովն ակոսում էին լայնքով ու երկայնքով: Ձապորոժցիները գործնական մասնակցություն էին բերում Հյուսիսի ու Հարավի միջև աշխույժ առևտրին:

Ձապորոժյեն չորջանցեց նաև շերտավորումը հարուստների ու աղքատների՝ այստեղից բխող բոլոր հետևանքներով: Ձապորոժյան ավազանուց ոմանք մեծ կալվածքներ ստացան Հեթմանշինայում և նույնիսկ Սիչին հարևան հողերում: Այնուամենայնիվ, եթե դեռևս որևէ տեղ պահպանվել էին կոզակական եղբայրության ոգին ու հին սովորությունները, ապա դա հենց Սիչն էր: Եվ առաջվա պես, Սիչը մնում էր հրապուրիչ ու հյուրասեր բոլոր նրանց համար, ում չէր գոհացնում կյանքը Հյուսիսում և ում համար ազատությունն ամենաթանկն էր: Իսկ զապորոժցիները մշտապես վայելում էին ուկրաինացիների համաժողովրդական սերն ու հարգանքը և հատկապես՝ հասարակության ստորին խավերում:

### Սլոբոդյան Ուկրաինա


Պոլտավայից արևելք, այժմյան Խարկովի շրջակա լայնարձակ տարածքը ձևականորեն մշտապես եղել է մոսկովյան սահմաններում: Բայց երկար ժամանակ գործնականում անբնակ այդ տարածքը անպաշտպան էր թաթարական արշավանքների դեմ: Սիսա թե ինչու ցարական կառավարությունը հոժարությամբ թույլ տվեց այդ տարածքներում բնակություն հաստատել Ուկրաինայից փախստականներին, որոնք հոգնել էին չղաղարող երկպառակություններից ու գոտություններից: XVII դարի կեսերին ոչ միայն բնակվելու թույլտվություն, այլև ինքնավարություն շնորհվեց նորաբնակներին, որոնք իրենց ինքնակառավարվող հասարակությունը հիմնեցին կոզակականի օրինակով: Դարավերջին արդեն այդ տարածաշրջանի արական սեռի բնակչությունը 86 հազ. էր, որից 22 հազ.-ը ծառայության էր անցել կոզակական զնդերում: Հարևան Ձախափնյակի նման, Սլոբոդյան Ուկրաինան բաժանված էր զնդերի, որոնք իրենց անվանումն ստացել էին 5 զլխավոր քաղաքների անուններից՝ Խարկովյան, Սումիի, Օխտիրկայի, Օստրոգյան և Իզյումյան: Ի տարբերություն ձախափնյակցիների, Սլոբոդյան զնդապետները ցմահ էին ընտրվում: Սակայն Մոսկվան ուշադիր հետևում էր, որ

իր սահմաններում բնակվող կոզակները միացյալ հեթման չընտրեն և դրանով չստեղծեն այնպիսի հզոր ու միասնական քաղաքական մարմին, ինչպիսին ստեղծել էին Ռեչ Պոսպոլիտայում: Դրա փոխարեն ցարն անձամբ էր վոյեվոդա նշանակում, որի ոստանը Բելգորոդում էր: Նրա պարտականությունն էր հետևել կոզակների գործողություններին և թույլ չտալ, որ չափ ու սահմանից դուրս գան: Կոզակների 5 զնդապետներից յուրաքանչյուրն ուղղակիորեն ենթարկվում էր վոյեվոդային և առանձին էր շփվում նրա հետ, ոչ մի ընդհանուր գործ չունենալով մյուս չորս զնդապետների հետ: Այդպիսով, չնայած Սլոբոդյան Ուկրաինայի բնակչությունը մշտապես աճում էր, սակայն ի վիճակի չէր ինքնուրույն քաղաքական դեր խաղալ:

### Լեհաստանի իշխանության տակ

#### Աջափնյակ

Կիևշինյայի, Բրացլավշինյայի, Վոլինի և Պոդոլյեի աջափնյա տարածքները բոլորից շատ տուժեցին և Մեծ ապստամբության, և Ավերնունքի շրջանում, ենթարկվելով լեհերի, թուրքերի, մոսկովիտների և թաթարների անդադար ներխուժումներին: 1670-ական թ.թ.-ների



Լվովը XVII դարի սկզբին

վերջերին, Հիհիրինի համար մղված ավերիչ մարտերից և Սամոյլովիչի կազմակերպած դանձվածային տեղահանությունից հետո, ողջ Աջափնյակը գրեթե դատարկվեց: Սակայն 1680-ականների սկզբին, երբ մարտերը նոր էին հանդարտվում, լեհերը, ժամանակ չկորցնելով, սկսեցին կազմակերպել երկրամասի նոր բնակեցումը: Գիտակցելով, որ այդ նպատակն արագ իրականացնելու լավագույն միջոցը կոզակներին թույլ տալն էր վերադառնալու իրենց լքված հողերը, 1685 թ.-ին Ռեչ Պոսպոլիտան Աջափնյակում պաշտոնապես վերականգնեց կոզակությունը՝ վերջինիս բնորոշ ինքնակառավարման ձևերով: Բայց փաստացի, նորաբնակ-կոզակներն այդ տեղերում կրկին հայտնվել էին մի քանի տարի առաջ:

Այդպիսով, երկրամասը կրկին բնակեցվեց ուկրաինացի կոզակներով ու գյուղացիներով, որոնցից շատերը հարազատ վայրերն էին վերադարձել Ձախափնյակից: Գաղութաբնակների տեղաշարժը կազմակերպում և զլխավորում էին կոզակ զնդապետներ Մեմեն Պալիյը, Մամիլյո Սամուսը և Ձախար Իսկրան: Ֆաստովի, Բոգուսլավի, Կորսունի և Բրացլավի մոտ ուղղակի վարչական միավորներ առաջացան: Լեհերն առաջվա պես կոզակներին մասնակից էին դարձնում իրենց պատերազմներին: Օրինակ՝ 1683 թ.-ին Վիեննայի պատերի



տակ թուրքերի դեմ տարած նշանավոր հաղթանակում իրենց արժեքավոր ներդրումն ունեցան Յան III Սոբեսկի թագավորի բանակին զինվորագրված 5 հազ. կոզակները: Նկատենք, որ դա տեղի ունեցավ կոզակությունը վերականգնելու լեհական սեյմի պաշտոնական վավերացումից երկու տարի առաջ: Իսկ հաղթանակից մեկ տարի հետո՝ 1684 թ.-ին, կոզակության թիվը կրկնապատկվել ու դարձել էր 10 հազ.: Նոր-նոր էր կոզակությունն ու գյուղացիությունը բնակեցնում Աջափնյակը, երբ այնտեղ սկսեց վերադառնալ նաև լեհական շլախտան: «Չավերժական» հակամարտության պատմությունը, որ մեկ անգամ արդեն պայթել էր Մեծ ապստամբության տեսքով, նոր շրջան էր թևակոխում...

### Արևմտաուկրաինական հողեր

Գալիչինան և Վոլինը, որոնք պաշտոնապես կոչվում էին Ռուսիական և Բելգյան վոյեվոդություններ, վաղուց արդեն խիտ բնակեցված շրջաններ էին, որտեղ խոր արմատներ էր ձգել լեհական շլախտան: Գեռու գտնվելով Ռեչ Պոսպոլիտայի հարավային սահմաններից, այդ շրջանները չէին առնչվել «սահմանամերձ» այնպիսի երևույթի հետ, ինչպիսին կոզակությունն էր: Գյուղացիներին շլախտայից պաշտպանող չկար, դրա համար էլ հարստահարողների ճնշումն այդ կողմերում առանձնապես դաժան էր ու սարսափելի: Միևնույն ժամանակ, այդ տարածքներում, ինչպես ոչ մի ուրիշ տեղ Ուկրաինայում, զգացվում էր մերձավոր Լեհաստանի մշակութային ազդեցությունը, և ինչպես ոչ մի ուրիշ տեղ, այստեղ խոր արմատներ էր ձգել հունա-կաթոլիկական եկեղեցին: Անդառնալիորեն լեհացած տեղական ազնվականությունը շահագրգռության նշույլ անգամ չէր ցուցաբերում ուկրաինացիների քաղաքական պահանջախնդրության նկատմամբ: Եվ նույնիսկ այն ժամանակ, երբ ապստամբած զանգվածները Բոգդան Խմելնիցկու գլխավորությամբ հասան մինչև Գալիչինայի խորքերը (իսկ Խմելնիցկին, ինչպես և մյուս հեթանոսները, հավակնում էր արևմտյան բոլոր այն տարածքներին, որտեղ խոսում էին ուկրաիներեն), լեհերը արևմտաուկրաինական հողերում կարգուկանոն հաստատելու համար անհանգստանալու խնդիր չուներին, ավելին՝ հաճախ այդ տարածքներն օգտագործում էին որպես ռազմաբեմ՝ կոզակների դեմ պատժիչ գործողությունների համար:

Ուկրաինայի արևմտյան տարածքների մի մասն էլ այդ ժամանակ գտնվում էր հարևան մյուս երկրների տիրապետության տակ: 1672 թ.-ից Պոդոլյեի մեծ մասը գրավել էին Օսմանյան թուրքերը և միայն 1699 թ.-ին այն կրկին զիջեցին լեհերին, սակայն Գոլուսիային Բուկովինան դրանից հետո էլ մնաց թուրքերին: Իսկ Կարպատների արևմտյան լանջերի ուկրաինացի բնակչությունը, ինչպես դարեր առաջ, մնում էր Դուևգարիայի (մաջարների) իշխանության տակ:

### Մշակութային կյանք

Չնայած Մեծ ապստամբության և Ավերմունքի շրջանի մահ ու արհավիրքին, Ուկրաինայում հոգևոր մշակույթը ոչ միայն զարգացում էր ապրում, այլև գնալով ընդգրկում էր հասարակության ավելի լայն շերտեր: Սիրիացի արաբ-քրիստոնյա Պոդոս (Պավլո) Չալեպցին, Ուկրաինայով դեպի Մոսկվա ճանապարհորդելիս, 1655 թ.-ին վկայում է. «Ուկրաինայում նույնիսկ գյուղացիները կարդալ-գրել գիտեին... գյուղական քահանաներն իրենց պարտքն էին համարում հավաքել որբերին և ուսում տալ, որ փողոցներում պարսպ չթափանան»: Գյուղական շատ համայնքներ իրենց համար ուսուցիչներ էին վարձում միաբանական դպրոցների շրջանավարտներից, իսկ Կիև-Մոհիլյան կոլեգիայի թափառաշրջիկ շրջանավարտները («բակալյարներ»), հաճախ հարուստների տներում ուսուցիչ-դաստիարակ էին վարձվում: Այս կոլեգիան, որին 1701 թ.-ին ակադեմիայի կարգավիճակ շնորհվեց, և նրա մասնաճյուղերը Վիննիցայում (Պոդոլյե) ու Դոնչայում (Վոլին), նույնիսկ ամենաձանր ժամանակներում շարունակում էին բանականության ու հոգու լույսը տարածել ժողովրդի մեջ: Պետրո Մոհիլայի բարեփոխումներից անցել էր 40 տարի, ակադեմիայում հիմնավորապես ձևավորվել էր ուսուցման հստակ սահմանված 12-ամյա ծրագիրը: Այն ուսանողները, ում հաջողվում էր հաղթահարել ուսման այդ երկար ու դժվարին ճանապարհի բոլոր աստիճանները, ազատորեն տիրապետում էր լատիներեն, հին հունարեն և եկեղեցա-սլավոներեն լեզուներին, պոետական վարպետությանն ու ճարտասանական արվեստին և, վերջապես, վերին աստիճանում՝ փիլիսոփայությանն ու աստվածաբանությանը: Բացի այդ՝ դասավանդում էին նաև աստղագիտու-

թյուն, աշխարհագրություն և մաթեմատիկա, ինչն այդ գիտությունների նկատմամբ աճող հետաքրքրության վկայությունն էր:

Ակադեմիայի ուսանողների մեծամասնությունը հարուստ քաղաքաբնակների կամ կոզակական ավազանու անդամների որդիներն էին, չնայած հաճախ կարելի էր հանդիպել նաև հասարակ կոզակների և նույնիսկ գյուղացիների երեխաների: Ուկրաինայում չէին հրաժարվել նաև երիտասարդությանը արևմտաեվրոպական համալսարաններում կրթության տալու վաղեմի սովորույթից, և նույնիսկ Մոսկովիայի իշխանության տակ անցնելով, ծախսափնյա ուկրաինացիները հնարը գտնում էին սերտ կապեր պահպանելու եվրոպական, և հատկապես լեհական, մշակույթի հետ: Օտարերկրացիների հետ հարաբերություններում ուկրաինացիները, աշխարհագրություն և մաթեմատիկա, ինչն այդ գիտությունների նկատմամբ աճող հետաքրքրության վկայությունն էր:



Կիև-Մոհիլյան ակադեմիայի ուսանողները  
Ի. Շչիրսկու փորագրանկարը - 1701 թ.

նացիների բացարտությունը նկատում է նաև Պոդոս Չալեպցին, նշելով, որ ինքն ու իր ուղեկիցները Ուկրաինայում հանդիպել են ամենասիրալիք ընդունելության՝ ոչ մի տեղ ու երբեք իրենց «օտար» չզգալով, այն դեպքում, երբ Մոսկովիայում եղած ժամանակ ոչ մի տեղ չի տեսել «խնդրություն ու ազատություն», և իրեն այնպես է զգացել, «կարծես թե սրտի վրա կապանք էին դրել»:

Կիևի ակադեմիայի շուրջն էր համախմբվել ողջ ուղղափառ աշխարհին քաջ հայտնի գիտության ու մշակույթի գործիչների սերունդը: Դասախոսների թվում էին եկեղեցական ակադեմիայի գործիչ ու գրող Լազար Բարանովիչը, գերմանական ծագումով լայնախոհ գիտնական Ինոկենտի Գիզելը, կրքոտ բանավիճող Իոանիկի Գայատովսկին: Այս հեղինակների շատ ստեղծագործություններ բավականին լայն տարածում գտան: Հատկապես հանրաճանաչ դարձավ Գիզելի «Սինոպսիսը», որ նվիրված էր Ուկրաինայի և Ռուսաստանի հնագույն պատմությանը և ոչ միայն ուղղափառության, այլև մոսկովյան ինքնակալության ոգով էր տոգորված: «Սինոպսիսը» լույս տեսավ 1674 թ.-ին և հետագա 150 տարիների ընթացքում 12 հրատարակություն ունեցավ: Կիևի գիտնականները, որ մեծ մասամբ հոգևոր դասին էին պատ-



կանում, կենսական բոլոր կարևորագույն խնդիրները դիտարկում էին եկեղեցու տեսանկյունից: Նրանց գրքերում գերիշխում են հակակաթոլիկական և հակաունիական թեմաները, իսկ քաղաքական նախընտրելի գաղափարը՝ քրիստոնյա ժողովուրդների համախմբումն էր «անիծյալ բուսուրմանների» դեմ պայքարելու համար, ինչն արտահայտվում է Քալստովսկու, Բարանովիչի և մյուսների ստեղծագործություններում:

Գրում էին պաճուճված բարոկկո ոճով, գործածելով հին ու քարացած եկեղեցա-սլավոնական լեզուն, որն անասելի հեռու էր այն ժամանակաշրջանի ուկրաիններեն խոսակցական լեզվից: «Հասարակ» լեզուն համարվում էր անհարմար գիտական պարապմունքների համար և անթույլատրելի՝ գիտական աշխատություններում: Սակայն հենց նույն՝ XVII դարի երկրորդ կեսով են մոտավորապես թվագրված աշխարհիկ գրականության մի քանի հուշարձաններ, որոնց հեղինակները լայնորեն գործածել են տեղական բարբառները՝ խոսելով առավել կոնկրետ թեմաների շուրջ: Օրինակ՝ արդեն հիշատակված «Ականատեսի տարեգրությունը», որը վերագրվում է կղզակական ավագանու անդամ ոմն Ռոման Ռակուշկա-Ռոմանովսկու, պատմում է 1648-1657 թ.թ.-ների իրադարձությունների մասին: Ընդհանրապես XVII դարավերջին Ուկրաինայում գիրքն արդեն հազվագյուտ բան էր: *Չնայած պատերազմական ժամանակներին հատուկ խառնակությանն ու արհավիրքներին, երկրում շարունակում էին գործել 13 տպարան, որոնցից 9-ը՝ ուկրաինական, 3-ը՝ լեհական և մեկը՝ հրեական: Ամենից շատ գրքեր տպագրվում էին Կիևում, Նովոգորոդ-Սիվերսկիում և Չեռնիգովում: Օրինակ՝ Նովոգորոդ-Սիվերսկիում տպագրված 20 գրքերից 15-ի հեղինակներն ուկրաինացիներ էին, իսկ տարրական դպրոցների համար տպագրված դասագրքերի տպաքանակը միայն 1679 թ.-ին կազմում էր 6 հազ. օրինակ:*

## Փոփոխություններ եկեղեցական կյանքում

Սկզբում կարող էր թվալ, թե 1648 թ.-ի ապստամբությունն օգտակար կլինի ուղղափառ եկեղեցու համար: Բոգդան Խմելնիցկին անձամբ սիրում էր կրկնել, որ ապստամբության զլխավոր նպատակն ուղղափառությունը պաշտպանելն է: Ե՛վ ինքը, և՛ իր հետնորդները եկեղեցուն շռայլորեն հողեր ու արտոնություններ էին շնորհում: Սակայն, չնայած Ուկրաինայի ամբողջ վարելահողերի 17 %-ն արդեն եկեղեցուն էր պատկանում և նա տնտեսապես բավականին հզոր ուժ էր ներկայացնում, քաղաքական նշանակությունն աստիճանաբար անկում էր ապրում:

Առաջին հեթանոսների օրոք կիևյան միտրոպոլիտները (ինչպես օրինակ՝ Սիլվեստր Կոսիվն ու Դիոնիսի Բալաբանը) օգտվում էին գործողությունների գրեթե լիակատար ազատությունից: Կղզակական վերնախավը չէր խառնվում եկեղեցու գործերին. եկեղեցական գյուղացիությունն ու հոգևորականությունը կարծես թե ուկրաինական հասարակության ինքնավար մի հատվածը լինեին: Նույնիսկ ցարերի ու լեհական թագավորների հետ (որոնց հպատակների մեջ առաջվա պես շատ ուղղափառներ կային) հարաբերություններում կիևյան միտրոպոլիտները վարվում էին այնպես, ինչպես որ հարկ էին համարում, ըստ էության վարելով ինքնուրույն քաղաքականություն: Սակայն, 1658 թ.-ին, այն հարցը, թե ում հոգևոր իրավասության տակ էր անցնում ուկրաինական ուղղափառ եկեղեցին, անսպասելիորեն քաղաքական գործուն նշանակություն ձեռք բերեց, երբ միտրոպոլիտ Բալաբանը որոշեց հետևել Վիհովսկուն և լեհերի կողմն անցնել: *Մոսկվան չէր կարող հաշտվել այն մտքի հետ, որ իր ուկրաինացի ուղղափառ հպատակների հոգևոր հովվի աթոռանիստը թշնամի Լեհաստանի տարածքում է:* Այդ պատճառով էլ ցարը Չեռնիգովի արքեպիսկոպոս Լազար Բարանովիչին նշանակեց Չախափնյակի «ժամանակավոր» միտրոպոլիտ: Այդպիսով, ուղղափառ նվիրապետության, ինչպես և ուկրաինական ողջ հասարակության մեջ, պառակտում առաջացավ: Դեռ ավելին՝ *մոսկովիտների ճնշման տակ ուկրաինական եկեղեցին դուրս եկավ Կոստանդնուպոլսի պատրիարքի անմիջական իրավասությունից, անցնելով մոսկովյան պատրիարքի իրավասությանը:*

Չախափնյակի ուկրաինական հոգևորականությունն սկզբում ուժեղ հակառակվում էր մոսկովյան ենթակայությանն անցնելուն, քանի որ մոսկովյան եկեղեցին «ցածր» էր համարվում ուկրաինականից, ամենից առաջ՝ մշակութային առումով: Սակայն մի քանի տասնամյակ տևած զգույշ, պատշաճ ու համոզիչ հորդորներից հետո, վերջիվերջո համաձայնվեցին Մոսկվայի բերած փաստարկների հետ և **1686 թ.-ին նորընտիր միտրոպոլիտ, իշխան Գեղենո**

*Սկյատոպոլկ-Չեսովերտինսկին համաձայնվեց մոսկովյան պատրիարքության իրավասությանը ենթարկել իր եկեղեցին:* Հեթանոս Սամոյլովիչը, կղզակական ավագանին, ամբողջ հոգևոր դասն ու միաբանությունները միաձայն պաշտպանեցին այդ որոշումը:

Այդ ընթացքում Աջափնյակում լեհերն ամենայն դաժանությամբ ճնշում էին գործադրում ուղղափառ եկեղեցու վրա, իսկ երբ Լվովի, Լուցկի և Պերեմիշլի կարևոր թեմերը հույն-կաթոլիկություն ընդունեցին, ուղղափառ եկեղեցին ամբողջ Աջափնյա Ուկրաինայում սկսեց անկում ապրել:

\* \* \*

Ավերմունքի շրջանում ճակատագիրը ցավալիորեն երես էր թեքել Ուկրաինայի նորաստեղծ կղզակական պետությունից: Խմելնիցկու օրոք կղզակությունը հզոր, մարտնչող ուժ էր: Ընդամենը 20 տարի անց, այդ հզոր կղզակական Ուկրաինան, ներքին գծադրություններից և օտարերկրյա ներխուժումներից, բաժանումներից ու կոտորածներից քայքայված, վերածվել էր բզկտված ու խեղճ մի գոհի: Այդ շրջանի անհաջողությունների և պարտությունների պատճառները երեքն էին.

1. Կղզակական հասարակության հետագա զարգացման էլիտար (ընտրական) և էգալիտար (հավասարական) միտումների վերաբերյալ ներքին տարաձայնություններն ու հակասությունները:

2. Դեռ չձևավորված կղզակական հասարակության վրա Արևելյան Եվրոպայի երեք հզոր տերությունների՝ Մոսկովիայի, Լեհաստանի և Օսմանյան Թուրքիայի կողմից գործադրված անդունդն էր ճնշումները:

3. Ուկրաինական հասարակության առջև ծառայած քաղաքական նպատակների հստակ պատկերացման, ինչպես նաև հասարակության բոլոր խավերի արդյունավետ կառավարման համապատասխան հաստատությունների բացակայությունը:

Ահա թե ինչու Ավերմունքի շրջանում Կղզակական Ուկրաինան կարողացավ պահպանել 1648 թ.-ի հսկայական նվաճումների մի չնչին մասը միայն:





## ՆԵՌՄԱՆՇՉԻՆԱ

Երբ ավերմունքի քառասյին շրջանն ավարտվեց, քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքի կենտրոն դարձավ Չախափնյայկի Յեթմանշչինան: Ուկրաինայի պատմության կարևոր իրադարձությունների կենտրոնն ամենահեռավոր արևմուտքից վերջնականապես տեղափոխվեց ամենահեռավոր արևելք: Յեթմանշչինան ինքնավար, բայց ոչ անկախ քաղաքական միավոր էր: Ամեն դեպքում, այն ուկրաինացիներին ինքնակառավարման ավելի մեծ հնարավորություններ էր ընձեռում, քան նրանք ունեին սկսած Գալիցիա-Վոլինյան իշխանության ժամանակներից:

Որպես Ռուսական կայսրության մի մասը՝ Յեթմանշչինան գոյատևում էր ուկրաինացիներից շատերի համար բավականին նոր քաղաքական միջավայրում: Հիմա արդեն ուկրաինացիները գործ չունեին խնքավորումների բաժանված լեհական շլախտայի փլուզվող կայսրության հետ, որը դեռևս Ռեչ Պոսպոլիտա հպարտ անունն էր կրում: Այսուհետև, երբ վերջնականապես խաչ էր քաշված լեհական կամ թուրքական այլընտրանքի վրա, ուկրաինացիներին պայքար էր սպասվում հզորացող Ռուսաստանի դաժան տիրակալների հետ:

Ռուսական ցարերը, որ լի էին կայսրությունում ամբողջ իշխանությունն իրենց ձեռքում կենտրոնացնելու վճռականությամբ, ըստ էության չէին կարող հաշտվել ուկրաինացիների (կամ այլ որևէ մեկի) ինքնակառավարման գաղափարի հետ: Նման իրադրությունը լիովին համապատասխանում էր բացարձակ միապետության այն սկզբունքներին ու գործողություններին, որ XVIII դարասկզբից իրականացվում էր ողջ Եվրոպայով մեկ: Իզուր չէ, որ միապետության եռանդուն պաշտպաններ Պետրոս Առաջինն ու Եկատերինա Երկրորդը՝ Ռուսաստանի երկու ամենանշանավոր տիրակալները, ինքնակալությունն համարում էին կառավարման ոչ միայն ամենագործուն ու նպատակահարմար, այլև ամենալուսավոր միջոցը: Սակայն այս ելակետն ամբողջովին հակառակ էր Յեթմանշչինայում գործող ինքնավարությանը, որ բացառապես հիմնված էր ուկրաինական յուրօրինակ ավանդույթների ու կենցաղավարության վրա: Այսպիսով՝ XVIII դարի Ուկրաինայի քաղաքական կյանքի հիմնական խնդիրը դառնում է կենտրոնամետ կայսերական Ռուսաստանի պայքարը ինքնավարության ձգտող Ուկրաինայի դեմ. պայքար՝ երկարատև ու ողբերգական:

## Կոզակական վարչակարգ

XVII դարի վերջին, երբ լեհերը ետ նվաճեցին Աջափնյա Ուկրաինան և ինքնավարություն հաստատեցին Չապորոժյեում, հեթմանների անմիջական կառավարման տակ մնաց խմել-միցկու երբեմնի կառավարման տակ եղած տարածքի մոտ երրորդ մասը (ներկա Ուկրաինայի վեցերորդ մասը): Դնեպրի ձախ ափին գտնվող այս տարածքը ուկրաինացիներն անվանեցին **Յեթմանշչինա**, իսկ մոսկովիտները՝ **Մալոռոսիա**: Նրա կազմի մեջ մտնում էին 10 գունդ՝ Ստարոդոբյան, Չեռնիգոլյան, Նեժինյան, Պրիլուկյան, Կիևյան, Հադյաչյան, Պերեյասլավյան, Լուբեչյան, Սիրոգորոյան և Պոլտավյան: Յեթմանի պաշտոնական նստավայրն ու Յեթմանշչինայի վարչական կենտրոնը XVIII դարասկզբին գտնվում էր Բատուրիինում, որն էլ համարվում էր մայրաքաղաքը: Յեթմանշչինան համեմատաբար խիտ բնակեցված և զարգացած երկրամաս էր: Նրա կազմի մեջ մտնում էին 11 մեծ քաղաք, 126 փոքր քաղաք և մոտ 1800 գյուղ: 1700 թ.-ին այստեղ ապրում էր մոտ 1,2 մլն մարդ, այսինքն՝ այն ժամանակվա Ուկրաինայի բնակչության քառորդ մասը:

1648 թ.-ից Յեթմանշչինայի կոզակական կառավարման համակարգում գրեթե ոչինչ էր

փոխվել, պարզապես զգալիորեն ուռճացել էր հեթմանական դիվանատունը: Դիվանատան աշխատակիցները, որ հիմնականում Կիևի ակադեմիայի շրջանավարտներ էին, մասամբ արդեն ինչեցնում էին Եվրոպական բյուրոկրատներին: Ինչ վերաբերում է հեթմաններին, ապա նրանք առաջվա նման պետականը սեփականից չէին տարբերում, այդ պատճառով էլ ֆինանսական հարցերում աներևակայելի քառս էր տիրում: Դրա դեմ պայքարելու համար հեթմանական դիվանատունը համարվեց գլխավոր գանձապետի երկու լրացուցիչ հաստիքով (Генеральні підскарбії), սակայն նրանք էլ ի վիճակի չէին լուծելու Յեթմանշչինայի ֆինանսական գլխավոր խնդիրը, մասնավորապես՝ անշեղորեն նվազում էին գանձարանի եկամուտները՝ կոզակական վերնախավի կողմից հասարակական հողերը «անշեղորեն սեփականաշնորհելու» պատճառով: Ակնհայտ էր, որ հեթմանները չէին ցանկանում, կամ չէին կարողանում կանխել այդ պետությունը քայքայող ու սնանկացնող ավերիչ երևույթը, որի պատճառով արագորեն նվազում էին հասարակական և կարգային տիրույթների տարածքները:

Սակայն կոզակական վարչակարգի կայունությունն ամենևին չէր նշանակում, թե Յեթմանշչինայի սոցիալ-տնտեսական կառուցվածքում փոփոխություններ չկան: Փոփոխություններ տեղի էին ունենում և այն էլ՝ նշանակալից փոփոխություններ:

*Արդեն XVII դարի վերջին ավագանին շարքային կոզակներին ոչ միայն դուրս մղեց բարձր պաշտոններից (փաստորեն դրանք դարձնելով ժառանգական), այլև՝ ամբողջովին զրկեց կարևորագույն որոշումներ կայացնելու մասնակցելու իրավունքից:* Եվ որքան շարքային կոզակը ցած էր իջնում սոցիալական սանդուղքով, այնքան նրա նյութա-տնտեսական խնդիրները բազմանում էին: XVII դարի և XVIII դարի սկզբի գրեթե չդադարող պատերազմների պատճառով շատ ու շատ կոզակներ սնանկացան, հատկապես նրանք, ովքեր պատերազմների ժամանակ իրենք էին հոգում իրենց ռազմական հանդերձանքի խնդիրը: Ինչպես և սպասելի էր, մարտունակ կոզակների թվի նվազումը անմիջականորեն ազդեց հեթմանական զորարանակի վրա, առաջին հերթին՝ թվաքանակի առումով. 1730 թ.-ին այն բաղկացած էր ընդամենը 20 հազ. մարդուց: Դրանից բացի, *հնացել էր նաև կոզակների հանդերձանքը, իսկ ռազմավարությունն ու մարտավարությունը շատ էին ետ մնացել ժամանակից:* Այնպես որ, *արդեն XVIII դարասկզբին Յեթմանշչինայի բանակն ընդամենը հեռավոր ստվերն էր կոզակական երբեմնի ահեղ զորքի:*

*Փոխվեց նաև ղեկավարման ոճը:* Եթե Բոգդան Խմելնիցկու սերնդի կոզակական առաջնորդներին հատուկ էին քաղաքական կանխատեսումները, քաջությունն ու գործողությունների վճռականությունը, ապա Ավերմունքի շրջանում ծնված առաջնորդները համեստ, սահմանափակ ու գործնական նպատակներ էին հետապնդում: Նրանք ամենից առաջ աշխատում էին հարմարվել քաղաքական ներկա իրավիճակին, և որպես օրենք, չէին էլ մտածում որևէ բան փոփոխելու մասին, այլ՝ հիմնականում երկու հոգս ունեին. պատշաճ հարաբերություններ պահպանել ցարի հետ, և որպես նոր ծնունդ առնող կոզակական ընտրախավի անդամ՝ շարքային կոզակության ու գյուղացիության հաշվին ամրապնդել սեփական իրավունքներն ու սոցիալ-տնտեսական արտոնությունները:

## Բեկումնային պահ

Կոզակական Ուկրաինայի վրա խնամակալությունն հաստատելու առաջին իսկ օրվանից մոսկովյան ցարերը ձգտում էին ձևական սուվերենից հնարավորինս արագ դառնալ այս երկրի լիիրավ տերերը: Իր կողմից, կոզակական վերնախավը, որ Ավերմունքի շրջանում լրիվ հիասթափվել էր թուրքերի ու լեհերի վարած քաղաքականությունից, այլևս չէին փորձում կասկածի տակ առնել Մոսկվայի հետ կապերն ամրապնդելու անհրաժեշտությունը: Այնուամենայնիվ, *կոզակական հեթմանները ձգտում էին պահպանել թեկուզև այն քիչ իրավունքները, որոնք ամրագրված էին 1654 թ.-ի Պերեյասլավյան պայմանագրով:* Իրենց անվերապահ չեզոքությունը ցուցադրելով Մոսկվային, հույս ունեին ցարերին համոզել, որ Ուկրաինայի ինքնավարությունը չի վտանգում կայսրության կայունությունը:

### Իվան Մազեպա (1687-1708)

Մոսկվայի հետ Յեթմանշչինայի հարաբերությունները վճռորոշ փուլ մտան Մազեպայի հեթմանության ժամանակաշրջանում: Նա *Ուկրաինայի ամենաականավոր և ամենահակա-*



սական քաղաքական գործիչներից մեկն էր:

Մազեպան ծնվել է 1639 թ.-ին Աջափնյակում, ուկրաինացի ազնվականի ընտանիքում, որ ամենաբարձր հեղինակությունն էր վայելում Չապորոժյան Կոզակության շրջանում: Նա գերագանց կրթություն էր ստացել՝ սկզբում Կիև-Մոհիլյան կոլեգիայում, այնուհետև Վարշավայի ծիզվիտական կոլեգիայում: Հետո ծառայել էր լեհական թագավորի արքունիքում և, որպես պալատական, շատ էր ճանապարհորդել Արևմտյան Եվրոպայում, իսկ ավելի ուշ թագավորի դեսպանորդի պարտականություններ էր կատարում Կոզակական Ուկրաինայում:

1669 թ.-ին, վերադառնալով Աջափնյա Ուկրաինա, Մազեպան ծառայության է անցնում հեթանոս Պետրո Դորոշենկոյի մոտ: Սակայն նրա հենց առաջին դիվանագիտական առաքելու-



Իվան Մազեպա

Նկարը պատկերված է արդի 10 հրիվնա արժողության թղթադրամի վրա

թյունն այստեղ ավարտվում է նրանով, որ գերի է ընկնում զապորոժցիներին, որոնք նրան հանձնում են Չախափնյակի հեթանոս Սամոյլովիչին: Մազեպային մահացու վտանգ էր սպառնում, սակայն լինելով ճկուն դիվանագետ, այդ աղետալի վիճակից դուրս է գալիս հաղթանակով: Իր անբասիր վարվեցողությանը և դիվանագիտական մեծ փորձով շահելով Սամոյլովիչի համակրանքը, նա դառնում է ծախափնյա հեթանոսի հավատարմատարը և սերտ կապեր է հաստատում ցարական բարձրաստիճան ղեկավարների հետ: Եվ երբ 1687 թ.-ին Սամոյլովիչին ազատում են պաշտոնից, ռուս մեծամեծների աջակցությամբ նրան փոխարինելու է գալիս ոչ այլ ոք, քան Մազեպան:

Իր 21-ամյա հեթանոսության ողջ ընթացքում Մազեպան Չախափնյա Ուկրաինայի հեթանոսներին բնորոշ քաղաքականություն էր վարում: Իր նախորդներից ավելի մեծ հետևողականությամբ նա ամրապնդում է ավագների դիրքը՝ հողաբաժինների հազարից ավել ընծայագրեր շնորհելով նրանց: Հի մոռանում նաև իր անձնական շահի մասին: Ցարերի ճոխ նվերների, և

իր սեփական բարեկեցության համար անդադար հոգացության շնորհիվ, Մազեպան շուտով դառնում է 20 հազ. կալվածքների տեր, այսինքն՝ Եվրոպայի ամենահարուստ ավատատերերից մեկը: Մինևույն ժամանակ, ինչպես նման մարդկանցից շատերը, լինելով խելացի և կրթված անձնավորություն, իր հարստության մեծ մասը նվիրաբերում էր եկեղեցու և մշակույթի կարիքների համար: Լինելով ուղղափառության եռանդուն պաշտպան, Մազեպան ողջ հեթանոսների համար մեկ բազում եկեղեցիներ կառուցեց, այնպիսի գեղեցիկ ու վերամբարձ ոճով, որն հետագայում կոչվեց կոզակական կամ մազեպայական բարոկկո: Նրա միջոցներով Կիև-Մոհիլյան ակադեմիան հարստացավ նոր մասնաշենքերով, իսկ ուսանողների թիվը հասավ 2 հազ.-ի: Բացի դրանից, նա շատ դպրոցներ ու տպարաններ հիմնեց, որ «ուկրաինացի երիտասարդությունը իր հնարավորությունների լրիվ չափով օգտվի լուսավորության բարիքներից»: Իզուր չէ, որ կիևյան ուսանողությունն ու հոգևորականությունը նրա պատվին ներդրում էին հորինում: Իսկ ինչ վերաբերում է հասարակ կոզակներին ու գյուղացիությանը, ապա նրանք դժվար թե նույնն անեին, նույնիսկ եթե լատիներենին էլ տիրապետեին: Ինչն այն է, որ Մազեպան, ինչպես ոչ այլ ոք, մեծ թափ հաղորդեց ավագների էլիտարիզմին, և հեթանոսները գնալով ավելի շատ շարքային կոզակների ու սկզբունքային եզալիտալիտ-զապորոժցիների շարք էր դնում: 1692 թ.-ին Ուկրաինան արդեն սոցիալական պայթյունավտանգ իրավիճակում էր, երբ գրագիր Պետրո Իվանենկո-Պետրիկը, որ կոզակների մեջ լայն կապեր ուներ, փախավ Միչ և սկսեց խռովություն սերմանել հեթանոսի դեմ: Հայտարարելով, որ եկել է ժամանակը՝ դուրս գալու ավագանու դեմ, որը «ծծում է ժողովրդի արյունը» և «պետք է ազատել Հայրենիքը Մոսկվայի իշխանությունից», Պետրիկը աջակցության խոստում ստացավ թաթարներից և պայքարի ելավ հանուն «անկախ ուկրաինական իշխանության»: Սակայն, երբ թաթարներն օգնելու փոխարեն սկսեցին թալանել ժողովրդին, Պետրիկը նկատմամբ ժողովրդի համակրանքն անմիջապես մարեց և խռովությունը ճնշվեց:

### Կարաբերությունները Մոսկվայի հետ

Գերու «կարգավիճակից» զարմանալիորեն հեթանոսի աստիճանի հասնելը, անհազ ու նեղգ ավագանուն իր ձեռքում ամուր պահելը, նոր հեթանոսի օրոք Ուկրաինայի տնտեսական վերելքի ու մշակույթի ծաղկման շրջան թևակոխելը... այսքանն արդեն լիուլի բավական էր, որ Իվան Մազեպայի անունը դարեր փառաբանվեր: Սակայն Մազեպա-քաղաքագետի մեծագույն արվեստը նրա հայտարարած հնուտ ճարտարությունն էր, որով կարողանում էր կարգավորել և՛ իր, և՛ համաուկրաինական շահերը՝ միևնույն ժամանակ լավ հարաբերություններ պահպանելով Ռուսաստանի հետ: Երբ 1689 թ.-ին գահ բարձրացավ երիտասարդ, եռանդուն ու գործունյա Պետրոս Առաջինը, Մազեպան հերթական անգամ ի հայտ բերեց աշխարհի հզորներին հիացնելու իր գերբնական ու անկրկնելի շնորհքը: Հեթանոս ամենակտիվ օգնությունն է բերում երիտասարդ ցարին՝ հեռուն գնացող նրա ծրագրերից առաջինի իրագործման գործում՝ թուրք սուլթանի ձեռքից խլել Ազովի ծով դուրս գալու բանալին: Ազովյան առջավանքի գազաթնակետը հանդիսացավ թուրք-թաթարներից 1696 թ.-ին Ազով ամրոցի գրավումը: Ծեր հեթանոսը նաև մշտապես խելացի խորհուրդներ էր տալիս դեռ քաղաքականության մեջ չթևավորված իր երիտասարդ սուլթաններին արտաքին քաղաքականության վերաբերյալ, հատկապես՝ լեհերի հետ կապված հարցերում: Այդպես նրանց մեջ սերտ բարեկամություն է հաստատվում: Ինչպես սրախոսում էին կոզակական գնդապետները՝ «ցարն ավելի շուտ հրեշտակներին չի հավատա, քան Մազեպային», իսկ ռուս պաշտոնյաներն հայտարարում էին, թե՛ «ցարի համար դեռևս չէր եղել այնպիսի օգտակար ու շահավետ հեթանոս, ինչպիսին Իվան Ստեպանովիչ Մազեպան է»:

Հատկապես Պետրոս Առաջինի հետ ունեցած սերտ կապերի շնորհիվ էր, որ Մազեպան կարողացավ անմիջապես օգուտ քաղել կոզակական մեծ ապստամբությունից, որը 1702 թ.-ին բռնկվեց լեհերին պատկանող Աջափնյա Ուկրաինայում: Այս տարածքը կրկին բնակեցնելուց հետո լեհական շյախտան փորձեց այնտեղից վռնել կոզակներին: Աջափնյա կոզակությունն ապստամբեց. այն գլխավորում էր Սեմեն Պալիլը (սարսափած լեհ պաշտոնյաները ստեղծացնում էին, որ նա պատրաստվում է «խմելիցկու հետքերով գնալ»): Ապստամբների թիվն հասել էր 12 հազ.-ի, երբ նրանց միացան կոզակական նոր ուժեր՝ Սամիլյո Սամուսի, Եսաթար Իսկրայի, Անդրիյ Աբազինի գլխավորությամբ: Շուտով ապստամբները վերցրեցին Եստիլով, Բերդիչև և Բիլա Ցերկվա քաղաքները: Լեհական շյախտան խուճապահար փախավ դեպի արևմուտք, և այդ վիճակն արդեն իսկապես հիշեցնում էր 1648 թ.-ը: Սակայն 1703 թ.-ին լեհերը կարողացան վերադարձնել ապստամբների կողմից գրավված տարածք-



ների մեծ մասը, իսկ զնդապետ Պալիդը պաշարված մնաց իր «մայրաքաղաք» Ֆաստովում: Դենց այդ ժամանակ Լեհաստան ներխուժեց Պետրոս Առաջինի երզվյալ թշնամին՝ Շվեդիայի թագավոր Կառլոս XII-ը: Օգտվելով քաղաքական խառնաշփոթից, Մազեպան համոզում է թագավորին՝ թույլ տալ իրեն գրավելու Աջափնյա Ուկրաինան: **Այսպես կրկին միացան Ուկրաինայի Դնեպրյան երկու ափերը:** Բացի այդ, որպեսզի իր անունն անաղարտ պահի հանրահայտ Պալիյի հնարավոր ուղեծրություններից, Մազեպան Պետրոս Առաջինի համաձայնությամբ ձերբակալեց նրան և ուղարկեց Սիբիր:


Թվում էր, որ հեթանոսի բարեկամությունը ցարի հետ երկկողմանի շահավետ է, իսկ այդ բարեկամությունը պահպանելու Մազեպայի հմուտությունը կասկած չէր առաջացնում:

Այդուհանդերձ, **XVIII դարասկզբին նրանց հարաբերություններում որոշակի լարվածություն առաջացավ:** 1700 թ.-ին սկսված Դյուսիսային պատերազմը, որի նպատակը Բալթիկայի ափերը դուրս գալն էր, տևեց 21 տարի: Այդ երկուստեք հյուծիչ պատերազմում Պետրոսի գլխավոր հակառակորդը նրա տարեկից, Շվեդիայի 18-ամյա թագավոր Կառլոս XII-ն էր՝ տաղանդավոր զորավար և անտաղանդ քաղաքագետ: Պատերազմի սկզբնական շրջանում նա Պետրոսին մի շարք կործանիչ հարվածներ հասցրեց, սակայն Պետրոսը՝ այդ թունդ «արևմտամետը», կարողացավ այդ պարտություններից դաս քաղել և սկսեց արդիականացնել և բանակը, և՛ երկրի քաղաքական ու սոցիալ-տնտեսական համակարգը: Իր բոլոր հպատակներից խստորեն պահանջում էր անվերապահ ենթարկվել կենտրոնական իշխանությանը, նրա աստիճանավորները վերահսկում էին կյանքի բոլոր բնագավառները, իսկ տեղական բոլոր ավանդույթները հայտարարվում էին «հնացած» և վերացվում ու փոփոխվում էին: Նման պայմաններում վտանգի տակ հայտնվեց նաև Դեքմանշչինայի ինքնավարությունը, որի անձեռնմխելիությունը ուկրաինացիներին դեռևս 1654 թ.-ին խոստացել էր Պետրոսի հայրը: Դիմա, երբ երկիրը պատերազմի մեջ էր, ցարն ուկրաինացիներին չլսված պահանջներ ներկայացրեց: **Կոզակները, իրենց ողջ պատմության ընթացքում առաջին անգամ, պետք է պատերազմեին բացառապես սուվերենի շահերի համար:** Իրենց դարավոր թշնամիներից՝ լեհերից, թաթարներից ու թուրքերից իրենց սեփական տունն ու հողը պաշտպանելու փոխարեն, պետք է կռվեին շվեդների դեմ հեռավոր Լիվոնիայում, Լիտվայում և Կենտրոնական Լեհաստանում: Այդ պատերազմների ընթացքում ցավալիորեն պարզ դարձավ, որ կոզակները չեն կարողանում կռվել եվրոպական կանոնավոր բանակների դեմ: Տարեցտարի նրանց ջոկատները տուն էին վերադառնում՝ հյուսիսային հողերում թողնելով իրենց ռազմիկների 50, 60, երբեմն մինչև 70 %-ը: Կոզակները նաև բարոյապես ընկճվեցին, երբ 1705 թ.-ին Պետրոս Առաջինը, ձգտելով ավելի լավ համաձայնեցնել իր զորքերի գործողությունները, կոզակական գնդերի վրա ռուս և գերմանացի իրամանատարներ նշանակեց: Օտարերկրյա սպաները քամահրանքով էին վերաբերվում կոզակներին, կռվում հաճախ նրանց օգտագործելով միայն որպես թնդանոթի միս: Լուրեր տարածվեցին, որ ցարը մտադիր է կոզակական զորքը վերափոխել: Ավագանին, որի դիրքն ու կեցությունն ուղղակիորեն կախված էր զբաղեցրած զինվորական պաշտոններից, խիստ անհանգստացավ:

Դժգոհություն առաջացավ նաև գյուղացիների ու քաղաքաբնակների շրջանում: Նրանք բողոքում էին «պատերազմական դրությունից», քանի որ ուկրաինական քաղաքներում ու գյուղերում տեղակայված ռուսական զորքերը դաժան ճնշումների էին ենթարկում հենց բնակիչներին: Մազեպան գրում էր ցարին, որ ամեն կողմից բողոքներ է ստանում ռուսական զորքերի անկարգությունների մասին, և որ ինքն էլ է արդեն սկսում հավատալ այն լուրերին, որ Պետրոսը պատրաստվում է իրեն էլ փոխարինել օտարերկրյա զենքերով կամ իր ռուս ֆավորիտներից մեկով:

Դժգոհությունը, որ վերջնականապես ստիպեց Մազեպային նոր հովանավոր փնտրել, կապված էր ուկրաինան լեհերից պաշտպանելու խնդրի հետ: Երբ Կառլոս XII-ի լեհ դաշնակից Ստանիսլավ Լեշչինսկու բանակի կողմից Ուկրաինան զավթելու իրական վտանգի սպառնալիք ներկայացավ, **Մազեպան Պետրոսից օգնություն խնդրեց: Սակայն ցարը, որ այդ ժամանակ շվեդների նոր հարձակմանն էր սպասում, պատասխանել էր. «Ես նույնիսկ տաք զինվոր չեմ կարող տալ: Պաշտպանվիր, ոնց ուզում ես»:**

Ատելի լեհերից Ուկրաինան պաշտպանելու ցարական խոստումը խախտելով, խոստում, որը 1654 թ.-ի համաձայնության հիմքերի հիմքն էր, Պետրոսը փաստորեն հեթանոսին ազատեց իր իսկ պարտավորություններից: 1708 թ.-ի հոկտեմբերի 28-ին, երբ Կառլոս XII-ը ուղիղ Մոսկվա տանող ճանապարհից շեղվեց և զորքը շրջեց Ուկրաինայի վրա, **Մազեպան, ամենից առաջ մտածելով իր երկիրը ավերումից ու ամայացումից պաշտպանելու մասին, շվեդների**



Ուկրաինական հողերը Ռուսական կայսրության կազմում և XVIII դարի սկզբին



**Կողմն անցավ:** Նրան հետևեցին շատ անվանի ավագներ և 3 հազ. կոզակ: Հաջորդ գարնանը շվեդների հետ միության դաշնագիր ստորագրվեց, որում ամրագրվեցին ուկրաինացիների կողմից առաջադրված պայմանները: Ձորքով ու պարենով օգնելու դիմաց Կառլոս XII-ը խոստանում էր պաշտպանել Ուկրաինան և ցարի հետ խաղաղություն չկնքել, մինչև որ Հեթման-չինան լիովին չազատվեր Մոսկվայի իշխանությունից և վերականգներ իր նախկին իրավունքները: Պետրոս Առաջինը, իմանալով այդ մասին, «մեծ զարմանք» ապրեց «նոր Գուդա» Մազեպայի արարքից: Մազեպայի՝ շվեդների կողմն անցնելուց մի քանի օր անց, Ուկրաինայում ռուսական զորքի գորավար, իշխան **Մեծշիկովը հարձակվեց հեթմանական մայրաքաղաք Բատուրիին վրա և կոտորեց նրա ամբողջ բնակչությանը՝ 6 հազ. մարդ, չխնայելով անգամ կանանց ու երեխաներին:** Բատուրիում տեղի ունեցած սոսկալի ողբերգության լուրն առնելով, և տեսնելով ամբողջ Ուկրաինայում ռուսական զորքի սկսած ահաբեկությունների ալիքը (բանտ ու մահապատիժ էր սպառնում բոլոր նրանց, ով դուրս չէր ելնել կկասկածվեր «խռովարարների» հետ կապի մեջ), հեթմանի հնարավոր կողմնակիցներից շատերի պլանները փոխվեցին: Այդ նույն ժամանակ Պետրոս Առաջինը հրամայեց Մազեպայի ետևից չգնացած ավագներին՝ իրենց միջից նոր հեթման ընտրել, և **1708 թ.-ի նոյեմբերի 11-ին նոր հեթման դարձավ Իվան Սկորոպադսկին:**

Այսպես թե այնպես, ուկրաինացիներից շատերը Մազեպայի ետևից չգնացին: Բատուրիին ահավոր ողբերգությունը սարսափեցրել էր նրանց: Ռուսներն առաջվա պես Ուկրաինայում էին և ահ ու սարսափ էին տարածում: Բայց և բողոքական-շվեդներն էլ առանձնապես համակրանք չէին վայելում: Մի խոսքով՝ ուկրաինացի բնակչության մեծ մասը զերադասում էր առաջիմ ոչնչի չխանձվել և սպասել դեպքերի զարգացմանը: **Չարմանալի էր, բայց միակ խոշոր ուժը, որն անմիջապես ու անվերապահ անցավ Մազեպայի կողմը՝ գապորոժցիներն էին.** աստելի էլիտարիստ Մազեպային համեմատելով առավել աստելի ցարի հետ, նրան համարում էին չարիքի փոքրագույնը: **Եվ նրանք, իրենց այդ որոշման համար, շատ թանկ վճարեցին:** 1709 թ.-ի մայիսին ռուսական զորքերն ավերեցին Սիչը, իսկ ցարը մշտական գործող հրաման արձակեց՝ ամեն մի գապորոժցու, հենց բռնած տեղում, մահապատիժ ենթարկել:

1708-1709 թ.թ.-ների աշնան, ծնունդն ու գարնան ողջ ընթացքում հակառակորդների գորքերը զորաշարժերով խուսանավում էին հանդիպելուց՝ ձգտելով ռազմավարական շահավետ դիրքեր գրավել և ուկրաինացի բնակչության աջակցությունը շահել: Վերջապես, 1709 թ.-ի հունիսի 28-ին, Պոլտավայի մոտ, նրանք հանդիպեցին: **Պոլտավայի ճակատամարտը, որ եվրոպայի պատմության բախտորոշ ճակատամարտերից մեկն էր, ավարտվեց Պետրոս Առաջինի հաղթանակով:** Արդյունքում՝ Հյուսիսային Եվրոպան իրեն ենթարկեցնելու Շվեդիայի փորձերը ձախողվեցին, իսկ Ռուսաստանը, ելք ստանալով դեպի Բալթիկ ծով, սկսեց հզորանալ և Եվրոպայի մեծագույն կայսրություններից մեկը դառնալ: **Ինչ վերաբերում է Ուկրաինային, ապա Պոլտավայի ճակատամարտը վերջ դրեց Ռուսաստանի հետ կապերը խզելու նրանց փորձերին:** Այսուհետ **Ռուսական հզորացող կայսրության կողմից Հեթմանչինայի վերջնական կլանումն ընդամենը ժամանակի հարց էր դառնում:** Հատկապես որ, Անգլիայի կողմից Իռլանդիայի հպատակեցումը Պետրոսը հարմար օրինակ էր համարում՝ Ուկրաինայի հանդեպ իր ծրագրերի համար:

Պարտությունից հետո, ռուսական հեծելազորի հետապնդումներից մազապուրծ, Մազեպան և Կառլոս XII-ը ապաստան գտան Մոլդովայում, որն այն ժամանակ Օսմանյան թուրքիայի մի մասն էր: Այստեղ, Բենդերի քաղաքից ոչ հեռու, 1709 թ.-ի սեպտեմբերի 21-ին, կյանքի մայրամուտին իրեն պարուրած դժբախտություններից վշտահար, 70-ամյա Իվան Մազեպան կնքեց իր մահկանացուն:

### Պիլիպ Օռլիկ (1710-1742)

Մազեպայի ետևից Բենդերի գնացին ավագանու մոտ 50 ակնառու ներկայացուցիչներ, 500 կոզակ՝ Հեթմանչինայից և ավելի քան 4 հազ. գապորոժցի: Այս «մազեպայականները», ինչպես հաճախ նրանց անվանում են պատմաբանները, **Ուկրաինայի առաջին քաղաքական վտարանդիներն էին:** 1710 թ.-ին նրանք իրենց՝ տարագիրների հեթման են ընտրում Պիլիպ Օռլիկին, որ Մազեպայի օրոք գլխավոր գրագիրն էր, այսինքն՝ արտգործնախարարը: Չգտելով աջակցություն ձեռք բերել Հայրենիքում, նա նույնիսկ սահմանադրության նախագիծ է կազմում («Pacta et constitutiones», կամ այսպես կոչված՝ Բենդերյան սահմանադրություն), որում, իր իշխանության գալու դեպքում, պարտավորվում էր սահմանափակել հեթմանի բացառիկ իրավունքները, նվազեցնել սոցիալ-տնտեսական շահագործումը, պահպանել գապո-

րոժցիների հատուկ կարգավիճակը և պայքարել Ռուսաստանից Ուկրաինայի քաղաքական ու եկեղեցական տարանջատման համար: Կառլոս XII-ի աջակցությամբ Օռլիկը Դրիմի թաթարների և Օսմանյան Բարձր Դուռնի հետ դաշինք է կնքում և 1711 թ.-ի սկզբին զապորոժցիների ու թաթարների համատեղ արշավանք է ձեռնարկում Ուկրաինայում ռուսական դիրքերի վրա: Սկզբում հաջողություններն ուղեկցում են Օռլիկին, բայց հետո նրա զորքը քախքախվում է: Հետագա մի քանի տարիներին Օռլիկն իր մի խումբ կողմնակիցների հետ նվորական մի մայրաքաղաքից մյուսն էր անցնում՝ աջակցություն գտնելու հույսով: Վերջի-վերջո հեթմանն ապաստան է գտնում Օսմանյան կայսրությունում, սակայն շարունակում է Ուկրաինայի ծանր ու դժվարին ճակատագրի մասին հրովարտակներով ռմբակոծել ֆրանսիական, լեհական, շվեդական ու թուրքական քաղաքական գործիչներին, և իր Հրիհորիյ որդու հետ միասին «Մոսկվայի լծից» հայրենիքն ազատագրելու ծրագրեր է կազմում:

## Ուկրաինական ինքնավարության անկումը

Մազեպայի պլանների տապալվելուց հետո ուկրաինացիներն ստիպված էին անցնել պաշտպանության: Այնուամենայնիվ, Ռուսական կայսրության կողմից Հեթմանչինան կլանելու գործընթացը երկար տևեց: XVIII դարի ռուսական ոչ բոլոր ղեկավարներն էին Պետրոս Առաջինի պես երդվյալ կենտրոնամետ: Ցարական կառավարությունը, թուրքերի հետ իր անվերջանալի պատերազմներում մշտապես «մալոռուսների» աջակցության կարիքն էր զգում, այդ պատճառով էլ նրբորեն խուսափում էր Ուկրաինայի հետ բաց հակամարտություններից, գերադասելով իր նպատակին, այսինքն՝ ինքնավարությունը սահմանափակելուն, հասնել դանդաղորեն, բայց հաստատուն քայլերով:

Այդ նպատակին հասնելու համար, ռուսական ցարերն օգտագործում էին կայսրություն ստեղծելու բոլոր սովորական մեթոդները, իսկ ամենից առաջ՝ գլխավորը. «բաժանիր և տիրիր»: Ուկրաինայի պարագայում դա հիմնականում նշանակում էր՝ **բորժոքիր և խրախուսիր հակասությունը հեթմանի և ավագանու միջև:** Եիշտ է՝ նույն միջոցով կարելի էր նաև ավագանուն սանձած պահել, այսինքն՝ ահաբեկելով, թե անհնազանդության դեպքում նրա դեմ կլարի հասարակ ժողովրդին, գյուղացիությանը: Ուկրաինական վարչակազմի յուրաքանչյուր վրիպում, ավագանու դեմ «տկլորների» յուրաքանչյուր բողոք կենտրոնական իշխանության համար առիթ էր ծառայում՝ Ուկրաինայում, համառուսաստանյանի օրինակով, վարչական «բարեփոխումներ» մտցնելու համար: Եվ այս բոլոր նորամուծությունները մշտապես ուղեկցվում էին բարեպաշտ հայտարարություններով առ այն, որ դրանց հիմքում բացարձակապես «թագավորի հայրական հոգատարությունն է հպատակների բարեկեցության համար»:

Ուկրաինայում տարվող ռուսական կենտրոնամետ քաղաքականությունը երեք հիմնական նպատակ էր հետապնդում.

1. **Մծրողջովին իրեն ենթարկել ինչպես ուկրաինական վերնախավին, այնպես էլ ողջ բնակչությանը,**

2. **Ուկրաինայի վարչական, տնտեսական ու մշակութային ողջ համակարգը վերակառուցել Ռուսաստանյանի օրինակով,**

3. **Ուկրաինայի մարդկային և տնտեսական պաշարներից քանել առավելագույնը:** Դարկ է նշել, որ այդ առումով Ուկրաինան բացառություն չէր, քանի որ ցարական կառավարությունը նույն քաղաքականությունն էր վարում և՛ կայսրությանը միացված մյուս երկրներում, և՛ հենց Ռուսաստանում:

### Իվան Սկորոպադսկի (1708-1722)

Չնայած Սկորոպադսկին մազեպայական դավադրության մասնակից էր եղել և պաշտպանում էր Ինքնավար Ուկրաինայի գաղափարը, սակայն Պետրոս Առաջինի կարծիքով՝ նա արդեն շատ ծեր էր և անվտանգ: Դրա համար էլ համաձայնվեց, որ Ուկրաինայի նոր հեթման ընտրվի Սկորոպադսկին, և չսխալվեց: Նոր հեթմանը քիչ էր ընդդիմանում ցարի «բարեկրթություններին», և թե անգամ փորձեր ընդդիմանալ՝ կրկին չէր կարողանա, քանի որ նրա ընտրվելուց անմիջապես հետո, **1708 թ.-ին, ցարը Սկորոպադսկուն վերահսկելու նշանակեց փոխարքա Իզմայլովին՝ ռուսական երկու գնդով և գաղտնի հրահանգով. անմիջապես ծնորակել հեթմանին իր ավագանու հետ միասին, եթե նրանց գործողությունները կասկած**



**հարուցեն:** Մոտավորապես այդ ժամանակ էլ Պետրոս Առաջինը հաստատում է 1654 թ.-ի պայմանագիրը, բայց շատ ընդհանուր գծերով: Ուկրաինացիների «հատուկ» իրավունքները հաստատելու Սկորոպադսկու խնդրանքը սակայն, ցարը կտրուկ մերժում է, ասելով. «Ուկրաինացիներն առանց այդ էլ ավելի շատ ազատություն ունեն, քան աշխարհի որևէ այլ ժողովուրդ»: «Իրավունքների հավասարեցումը» երկար սպասեցնել չտվեց: Դեմանի նստավայրը Բատուրինից տեղափոխվեց Գուլիսով՝ Ռուսաստանին ավելի մոտ: Կոզակական զորքը ռուս զլխավոր հրամանատար ստացավ: Գնդերի շրջանային կառավարիչներ՝ նույնպես ռուսներ կամ օտարերկրացիներ նշանակվեցին: Ռուսական նորաթուխ վերնախավը, և ամենից առաջ՝ Մենշիկովը՝ ցարի սիրելին, Բատուրինի դահիճը, Ուկրաինայում առաջին անգամ հսկայական հողային տիրույթներ ստացավ: Խստորեն **վերահսկվում էր նույնիսկ գրահրատարակությունը, որպեսզի «մալոռոս գրքերը չհակասեն վելիկոռուս գրքերին»:**

Ուկրաինական պաշարների շահագործումը տարբեր ձևեր էր ընդունում: 1709 թ.-ից մինչև 1722 թ.-ը Ուկրաինան պարտավոր էր իր հողերի վրա տեղակայված 10 ռուսական զունդ կերակրել: Մինչդեռ տասնյակ հազարավոր կոզակներ ուղարկվում էին հյուսիս՝ Լադոգայի ջրանցքը փորելու, ցարի նոր մայրաքաղաք Սանկտ-Պետերբուրգը կառուցելու: Նրանցից շատ-շատերը չդիմացան անծանոթ հյուսիսի խիստ կլիմային ու շահագործման դաժան պայմաններին և մահացան: **1719 թ.-ին ուկրաինացիներին արգելվեց ինքնուրույն ցորեն արտահանել Արևմուտք: Դրա փոխարեն նրանք այդ ցորենը պետք է տանեին Ռիգայի ու Արխանգելսկի ռուսական նավահանգիստները և վաճառեին պետության կողմից հաստատված գներով:** Ի լրումն այդ ամենի, ռուս վաճառականների համար արտոնյալ պայմաններ էին ստեղծվում՝ Դեմանշինայում առևտուր անելու համար, իսկ ուկրաինացիները պարտավոր էին հսկայական մաքսատուրքեր վճարել՝ ապրանքը հյուսիս տանելու և վաճառելու համար: Սակայն ուկրաինացիներին հասցված ամենամեծ ներստերը հարվածը 1722 թ.-ին հիմնադրված **Մալոռոսական կոլեգիան էր: Մոսկվայի կողմից նշանակվող վեց պաշտոնյաներից բաղկացած այդ կառավարական մարմինը, մշտապես հաստատվելով Ուկրաինայում, հեթմանի հետ պիտի կիսեր վերին գործադիր իշխանությունը:** Դա արդեն չափազանց էր նույնիսկ գերհամբերատար Սկորոպադսկու համար: Նա ուղևորվեց Սանկտ-Պետերբուրգ՝ ցարին խնդրելու վերանայել իր որոշումը: Պետրոս Առաջինը կտրականապես հրաժարվեց: Օեր հեթմանը, դատարկածեռն վերադառնալով Գուլիսով, շատ շուտով մահացավ:

### Պավլո Պոլուբոտոկ (1722-1724)

Սկորոպադսկու մահից հետո ավագանին դիմեց ցարին՝ նոր հեթման ընտրելու թույլտվության խնդրանքով: Այդ ընթացքում նրանք **նշանակովի հեթման են ընտրում Չեռնիգովի գնդապետ Պավլո Պոլուբոտոկին, որը հարգված և պատվախնդիր մարդ էր:** Պոլուբոտոկն անմիջապես վճռական միջոցներ է ձեռնարկում՝ Մալոռոսական կոլեգիայից ազատվելու համար, և կրկին դիմում է ցարին՝ նոր հեթման ընտրելու խնդրանքով: Նրա համառությունից խիստ զայրացած, Պետրոս Առաջինը պատասխանում է, թե բոլոր հեթմանները դավաճան դուրս եկան, և որ ոչ մի ընտրություն չի լինելու, քանի դեռ չի գտնվել այնպիսի թեկնածու, որին կարելի լինի հավատալ: Բայց Պոլուբոտոկը վախկոտներից չէր և համառորեն ձգտում էր հասնել իր նպատակին: Քանի դեռ Պետրոս Առաջինը պատերազմի մեջ էր Պարսկաստանում, Պոլուբոտոկը հասավ նրան, որ կայսերական Սենատը Մալոռոսական կոլեգիային կարգադրեց **ոչինչ չձեռնարկել առանց հեթմանի գիտության և առանց ուկրաինական վարչակազմի հետ համաձայնեցնելու:** Իսկ քանի որ կոլեգիան հիմնել էին իբրև վարչակազմի, հատկապես կաշառառու դատական համակարգի դեմ ուկրաինացիների բողոքները քննարկելու նպատակով, Պոլուբոտոկը հայտարարում է, որ այդ բոլորն ինքը կպարզի, և իսկապես էլ, սկսում է պարզել: Խորհրդակցականության սկզբունքով վերակազմավորում է դատարանները, պայքարում է կաշառակերների դեմ, տեսուչներ է նշանակում՝ իր հրամանների ու կարգադրությունների կատարումը տեղերում ստուգելու համար: Գյուղացիների բողոքները քչացնելու համար, նշանակովի հեթմանն ամեն կերպ համոզում է ավագներին, որ գոնե այդպես բացարձակ չթալանեն մարդկանց:

**Գործերն առանց վերևների միջամտության կարգավորելու եռանդուն հեթմանի նորամուծությունները սաստիկ զայրացրին ցարին:** 1723 թ.-ին նշանակովի հեթմանին ու նրա համախոհներին հրամայվում է ներկայանալ մայրաքաղաք և բացատրություն տալ, թե ինչու են «խանգարում» կոլեգիայի աշխատանքին: Կոլեգիայի նախագահ Վեյլամինովը, զգալով, որ Պոլուբոտոկից ազատվելու հարմար պահ է եկել, մի քանի ուկրաինացիների համոզեց նրա

վրա մատնագրեր գրել, ամբաստանել ու զրպարտել, և խնդրել, որ Ուկրաինայում էլ համակայսերական կարգեր հաստատվեն: Այս մատնագրերին ի պատասխան, նշանակովի հեթմանն Ուկրաինա է ուղարկում իր գործակալին՝ հանրագրերի կամպանիա կազմակերպելու, որը կվկայեր, թե ժողովրդի ճնշող մեծամասնությունն ինքնավարության կողմնակից է: Վերջնականապես մոլեգնած ցարը բանտ է նետում և՛ Պոլուբոտոկին, և՛ բոլոր նրանց, ովքեր ստո-



Պավլո Պոլուբոտոկ

րագրել էին այդ հանրագրերը: Միայն 1725 թ.-ին Պետրոս Առաջինի մահը փրկեց այդ մարդկանց Սիբիր քարտվելուց: 1725 թ.-ին ուկրաինական ավագանու մեծ մասը տուն վերադարձավ, առանց իր նշանակովի հեթմանի. Պավլո Պոլուբոտոկը Պետրոս Առաջինի մահվանից մի քանի ամիս առաջ իր մահկանացուն էր կնքել Պետրոպավլովյան ամրոցի զնդանում:

### Դանիլո Ապոստոլ (1727-1734)

Պոլուբոտոկից ազատվելով, Մալոռոսական կոլեգիան Դեմանշինայում ազատ գործելու հնարավորություն ստացավ: Դեռևս 1722 թ.-ին այն Ուկրաինայում ուղղակի հարկահանություն մտցրեց, որը ծանր հարված էր բնակչության համար: 1724 թ.-ին Վեյլամինովը հանդիսավոր գեկուցում է նոր հարկահանությամբ ստացված 600 %-ով ավել եկամուտների մասին: Սակայն Վեյլամինովի զլխապառույտ հաջողությունը իր իսկ պարտության պատճառ դարձավ: Կա պահանջեց, որ նոր հարկադրույթներով վճարեն նաև Աջափնյակի ռուս նորաթուխ կավածատերերը: Եվ այդ ժամանակ ի պաշտպանություն ուկրաինական ինքնավարության հանդես եկավ, մինչ այդ նրա երկվյալ թշնամին՝ իշխան Մենշիկովը: Ռուսաստանի ամենաազդեցիկ քաղաքական գործիչը, որ ողջ Դեմանշինայով մեկ լայնածավալ կալվածքներ ուներ, Մալոռոսական կոլեգիային խստագույն ու անաչառ քննադատության ենթարկեց: Այլ ազդեցիկ քաղաքական գործիչներ ևս ուկրաինացիների և նրանց ինքնավարության նկատ-



մամբ իրենց զայրույթը փոխարինեցին գթասրտությամբ և բարյացակամությամբ: Բանն այն է, որ 1726 թ.-ին Ռուսաստանի քաղաքական հորիզոնում թուրքերի հետ նոր պատերազմի ուրվականն էր նշմարվում, և այդ պայմաններում ուկրաինացիներին իրենց դեմ լարելը առնվազն թեթևամտություն կլիներ: Այդպիսով, Սենչիկովի ազդեցությունը, ռազմավարական նկատառումների հետ միասին, բերեց նրան, որ 1727 թ.-ին կայսերական սենատն արձակեց առաջին Մալոռոսական կոլեգիան և դեկրետ հրապարակեց, որ՝ «հանուն տեղական բնակչության հանգստության ու բարօրության, հարկ է ընտրել արժանավոր ու ամենվեր հեթման»:

1727 թ.-ի հոկտեմբերին հեթման է ընտրվում Միրզորոզի 70-ամյա զնդապետ **Դանիլո Ապոստոլը**: Այս իրադարձության առիթով համընդհանուր ուրախությանը փոքր ինչ ստվերում



Դանիլո Ապոստոլ

էր այն փաստը, որ կայսերական կառավարությունն այս անգամ ոչ միայն հրաժարվեց հաստատել 1654 թ.-ի Պերեյասլավի պայմանագրի բոլոր հոդվածները, այլև նոր սահմանափակումներ էր պարտադրում հեթմանին: Այսուհետ, ռուսական փոխարքան պետք է վերահսկեր հեթմանի արտաքին քաղաքական բոլոր կապերը, ռուսական ֆելդմարշալը՝ նրա ռազմական կարգադրությունները, իսկ ցարն իրավունք էր ստանում Չեթմանչինայում հողեր նվիրել իր ցանկությունները: Միակ միփթարությունն այն էր, որ **Չեթմանչինան դուրս էր գալիս Սենատի ենթակայությունից և հանձնվում էր արտաքին գործոց նախարարության իրավասությանը**:

Նոր հեթմանը, հասկանալով, որ քաղաքական նախկին արտոնությունները վերականգնելու բոլոր փորձերը դատապարտված են, իր ողջ գործունեությունը կենտրոնացրեց երկրի սոցիալ-տնտեսական խնդիրների վրա: Նա շարունակեց դատական համակարգի բարեփոխումները, զանձատուն հիմնեց, որը Չեթմանչինայի ողջ պատմության մեջ առաջին անգամ տարեկան բյուջեի հաշվարկ կատարեց: Քանի որ հասարակական և կարգային հողերի պաշարը զգալիորեն նվազել էր, 1729-1731 թ.թ.-ներին մանրակրկիտ վերստուգում անցկացվեց և կորցրած հողերի մեծ մասը վերականգնվեց: Ապոստոլը հատկապես համառորեն պայքա-

րեց ուկրաինացիների առևտրային շահերի համար: Հասավ այն բանին, որ վերացվեցին կայսրության աստիճանավորների կողմից Ուկրաինայի վաճառականների վրա դրված բազմաթիվ անօրինական հարկերը, որ վերջիններիս անհավասար պայմանների մեջ էին դնում իրենց ռուս մրցակիցների հետ:

Զբաղվելով մեծ մասամբ ներքին գործերով, հեթմանը կամաց-կամաց հասավ նաև մի քանի քաղաքական հաղթանակների: Ետ նվաճելով գլխավոր դիվանատունը ձևավորելու և զնդապետներ նշանակելու իրավունքը, Ապոստոլը խիստ կրճատեց իր վարչակարգի ռուս և օտարազգի անդամների թիվը: Կիևը, որ երկար ժամանակ գտնվում էր ռուս նահանգապետի տնօրինության տակ, նույնպես անցավ հեթմանի իրավասության տակ: Եվ նույնիսկ զապորոժցիներին, որոնք 1708 թ.-ից համարվում էին Ղրիմի թաթարական տարածքն աքսորվածներ, 1734 թ.-ի գարնանը, բազում դրամատիկ իրադարձությունների և դիվանագիտական մեծ ճիգերի գնով, ռուսական կայսրության հպատակների պաշտոնական կարգավիճակ շնորհվեց, ինչը կրկին կայսրության մեջ Չեթմանչինայի դիրքերի ամրապնդման վկայությունն էր: Բայց իր այդ վերջին հաղթանակի օրվան Ապոստոլը չարժանացավ. նույն թվի հունվարին հեթմանն արդեն չկար:

### «Չեթմանական դիվանատան վարչություն» (1734-1750)

Այդ՝ նոր «կոլեգիայի» նմանվող հաստատությունը հորինվել էր նոր կայսրուհի Աննա Իոանովնայի շրջապատում, որպեսզի Դանիլո Ապոստոլի մահվանից հետո ուկրաինացիներին բույլ չտրվեր նոր հեթման ընտրելու: Ինչ արած. Սանկտ-Պետերբուրգում կայսրերի արագ փոփոխվելուն համահունչ փոփոխվում էր նաև Ուկրաինայի նկատմամբ կայսերական քաղաքականությունը:

Չեթմանչինան կառավարելու համար ստեղծված այդ՝ «Չեթմանական դիվանատան վարչությունը» կազմված էր ուկրաինացի 3 ավագներից և 3 ռուս մեծատոհմիկ պաշտոնյաներից՝ Իշխան Շախովսկու գլխավորությամբ: Ձևացնելով, թե իր կոլեգիան ժամանակավոր է ստեղծվում, Շախովսկին իրականում գաղտնի հրահանգ ուներ՝ ամեն կերպ և ամենուր լուրեր տարածել, որ չափից դուրս հարկերը, և ընդհանրապես՝ նախընթաց կառավարման բոլոր թերություններն ու մեղքերը միայն հեթմանից են գալիս, և որ Չեթմանչինայի վերացումով ուկրաինացիներն անմիջապես ավելի լավ կապրեն: Շախովսկու գաղտնի առաքելության մեջ մտնում էին նույնիսկ այնպիսի բաներ, ինչպես՝ լեհական, բելուսական և աջափնյա շլյախտայի հետ ուկրաինական ավագանու ներկայացուցիչների ամուսնությունների խաթարումը, և միևնույն ժամանակ ռուսական ազնվականության հետ այդ նույն ավագանու ամուսնական կապերի ամեն կերպ խրախուսումը:

Իշխան Շախովսկուն փոխարինած Իշխան Բարյատինսկին նույնպես դիմում էր ցանկացած միջոցի՝ ուկրաինացիներին իրենց ինքնուրույնությունից զրկելու համար: Այսպես, օրինակ՝ 1734 թ.-ին նա ձերբակալեց Կիևի ամբողջ քաղաքային վարչակազմը և բռնագրավեց նրա իրավունքների հին հրովարտակները, հուսալով, որ դրանց բովանդակությունը շուտով կմոռացվի, իսկ եթե հիշվի էլ, միևնույնն է, կիևցիներն առանց փաստաթղթերի ոչինչ չեն կարողանա ապացուցել... Չենց այդ նույն թվականին կայսերական Սենատը երկու անգամ հրաժարվեց Կիևի քաղաքազլխի («պոսադնիկ») պաշտոնում հաստատել ուկրաինացի թեկնածուին և միայն այն ժամանակ համաձայնվեց, երբ ապացուցվեց, որ քաղաքում ոչ մի այնպիսի ռուս չկա, որ ի վիճակի լինի հավակնելու նման բարձր պաշտոնի:

Աննա Իոանովնայի և նրա հզոր ֆավորիտի՝ գերմանացի Էռեստ Բիրոնի օրոք, Չեթմանչինայի վերնախավը վերջնականապես վիատվեց, դարձավ մոլեռանդ ճակատագրապաշտների մի անկամ ու ցրված բանակ և վերջնականապես հրաժարվելով քաղաքականությունից՝ գլխովին մխրճվեց առօրյա կյանքի մեջ: Նման տրամադրություններին ու ապրելակերպին մեծապես նպաստում էր ռուսների վարած՝ «խոսքի և գործի» տխրահռչակ քաղաքականությունը, երբ ոչ միայն «գործի», այլև իշխանությունների հասցեին հնչած անգամ մի փոքրիկ բննադատական «խոսքի» համար մարդիկ շատ հեշտությամբ ընկնում էին ամենակարող Գաղտնի դիվանատան ճանկը, որտեղ անասելի տանջանքներից հետո կամ մահապատիժ էին տալիս, կամ աքսորում էին Սիբիր: Ավելին՝ «խոսքի և գործի» սկզբունքը պահանջում էր մատնել ոչ միայն մոտ ընկերներին, այլև ընտանիքի անդամներին, այնպես որ վախն ու փոխադարձ անվստահությունը դարձել էր սովորական կենսաձև:

Կայսրուհի Աննայի ֆավորիտի Իշխանության շրջանում, որ ժողովուրդը կոչեց Բիրոնովչինա, շատ ծանր էր նաև գյուղացիների ու շարքային կոզակների վիճակը: Դժբախտ



ճակատագրի պես նրանց գլխին փլվեց 1735-1739 թ.թ.-ների ռուս-թուրքական պատերազմը, որի ընթացքում Չախսափնյա Ուկրաինան կայսերական բանակի գլխավոր ռազմաբեմն էր: Պատերազմի չորս տարիների ընթացքում տասնյակ հազարավոր գյուղացիներ ու կղզակներ զորակոչվեցին բանակ, իսկ ուկրաինացիների զոհերի թիվն հասավ 35 հազ.-ի, ինչը 1,2 մլն բնակչության պարագայում հիրավի մեծ թիվ էր: Միևնույն ժամանակ՝ 1737-38 թ.թ.-ներին Ուկրաինան ստիպված էր իր միջոցներով 50-ից մինչև 75 ռուսական զուռնի պահել, ինչը Չեթմանշինայի վրա 1,5 մլն ռուբլի նստեց: Այդ գումարը տասնապատիկ գերազանցում էր նրա տարեկան բյուջեն: Հարյուրամյա կղզակա-լեհա-ռուսա-թուրք-թաթարական պատերազմներից հազիվ քիչ թե շատ ոտքի կանգնած, Ուկրաինան կրկին դարձավ ավերիչ պատերազմի թատերաբեմ: 1740 թ.-ի շեմին երկիրը լրիվ արյունաքամ էր եղել: Նույնիսկ պատերազմին մասնակցած ռուս սպաները Ուկրաինայից միայն այրված հողի տպավորություններն էին տարել իրենց հետ, իսկ ուկրաինական ավազանին, դեռ մի քանի տասնամյակ, պիտի դժգոհի, որ պատերազմի կորուստներից ու ավերներից հետո, երկիրը ոտքի չի կանգնում:

Համենայն դեպս՝ «Չեթմանական դիվանատան վարչության» կառավարման ժամանակաշրջանի որպես միակ «պետական նվաճում», նշենք 1728 թ.-ին ստեղծված օրենքներն համակարգող հատուկ հանձնաժողովի գործունեությունը, որին հանձնարարված էր կարգավորել Ուկրաինայում տիրող իրավական քաոսը: Բանն այն է, որ մինչ այդ Ուկրաինայում իրավունքի նորմերը ձևականորեն շարունակում էին հիմնվել XVI դարի Լիտվական Ստատուտի վրա: Եվ ահա, 1744 թ.-ին, հանձնաժողովի 18 անդամները հրապարակեցին իրենց 16-ամյա աշխատանքի արդյունքը՝ նոր օրենսգիրքը, որ կոչվում էր «Մալոռուսական ժողովրդի դատավարական օրենքներ»:

### Կիրիլո Ռոզումովսկի (1750-1764)

XVIII դարում Ուկրաինայի ճակատագիրը, ճիշտն ասած, կախված էր ոչ այնքան ռուսական կայսրուհիներից, որքան նրանց ֆավորիտներից: Եվ եթե Աննա Իոանովնայի սիրելյան, գերմանացի Բիրոնը քիչ բան արեց ուկրաինացիների համար, ապա նույնը չի կարելի ասել հաջորդ կայսրուհու՝ Ելիզավետա Պետրովնայի փաստացի ամուսնու մասին:

Օլեկսա Ռոզումովսկին, որ երիտասարդ ու սիրունատես մի կղզակ էր Չեթմանշինայից, փոխադարձ սիրով կապված էր ապագա կայսրուհու հետ դեռ այն ժամանակներից, երբ արքունական երգչախմբում սովորական մի երգիչ էր: Ի պատիվ իրեն պետք է ասել, որ նա միշտ խուսափում էր քաղաքականությունից, բայց մինչև կյանքի վերջը վառ սիրով սիրում էր իր հայրենիքը: Հնարավոր է, որ այդ սերը փոխանցվել էր նաև իր տիկնոջը, հատկապես այն բանից հետո, երբ 1744 թ.-ին նրան մեծ խանդավառությամբ ու հիացմունքով ընդունեցին Կիևում: Օգտվելով առիթից՝ ավազանին հերթական անգամ հեթման ընտրելու խնդրանքով դիմեց կայսրուհուն, և Ելիզավետան տվեց իր համաձայնությունը: Սակայն «ընտրություններն» ամեն անգամ հետաձգվում էին, քանի որ Ելիզավետայի թեկնածուն ոչ այլ ոք էր, քան Օլեկսա Ռոզումովսկու փոքր եղբայրը՝ Կիրիլոն, որն ընդամենը 16 տարեկան էր և դեռ պետք է «խելք հավաքեր», որ Ուկրաինայի հեթման դառնար: Եվ պատանուն ուղարկում են Արևմուտք՝ ուսումնառության, իսկ վերադառնալուս պես նշանակում են Կայսերական Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ: Իսկ այդ ընթացքում ռուսական զորքը դուրս բերվեց Չեթմանշինայից, և բոլոր «կոլեգիաներն» ու «դիվանատները», որ Ուկրաինայի վզին էին փաթաթել նախկին կառավարության օրոք, աստիճանաբար վերացվեցին: 1750 թ.-ին, Գլուխովում, 22-ամյա Կիրիլոյին մեծ շուքով հանձնում են հեթմանական մականը:

**Կիրիլո Ռոզումովսկու հեթմանության ժամանակաշրջանը Չեթմանշինայի ինքնավարության ոսկե աշունն էր:** Եվ չնայած երիտասարդ հեթմանը ժամանակի մեծ մասն անց էր կացնում Սանկտ-Պետերբուրգում՝ ակտիվ մասնակցելով պալատական ինտրիգներին, սակայն երբեք չէր մոռանում իր Չախսափնյակի մասին: Գիտակցելով, որ Չեթմանշինայում բավականին բարդ հասարակություն է ձևավորվել և ավազանին կոճվարանա կատարել և՛ դատական, և՛ ռազմական, և՛ վարչական գործառնությունները, որոշում է ստեղծել դատա-վարչական առանձին համակարգ: Երկար նախապատրաստություններից հետո, 1763 թ.-ին ամբողջ Չեթմանշինան բաժանվեց 20 գավառի («*побити*») և յուրաքանչյուր գավառական դատարան իր վարույթն ընդունեց տեղական բոլոր՝ քրեական, քաղաքացիական և գույքային գործերը: Դատավորները, որպես կանոն, ընտրվում էին տեղական ազնվականներից: Քաղաքացիներն, առաջվա պես, ամեն մի մեծ քաղաքում ունեին իրենց սեփական դատավորները:

Բացի այդ, Ռոզումովսկուն հաջողվեց Կիևն ու գապորոժցիներին կրկին վերցնել հեթմա-

նական իշխանության տակ: Նույնիսկ զապորոժյան զորքն արդիականացնելու որոշ միջոցներ է ձեռնարկում՝ կարգավորում է զորաշարերը, հանդերձավորում համազգեստով, կատարելագործում հրետանին: Ռոզումովսկու ծրագրերի մեջ էին մտնում նաև Մագեպայի նախկին մայրաքաղաք Բատուրիումն համալսարան հիմնելը, բոլոր կղզակների երեխաներին պարտադիր տարրական կրթության տալը: Սակայն քաղաքական հետագա իրադարձությունները բույլ չտվեցին հեթմանին իրագործելու դրանք: Բայց և այնպես՝ նրա օրոք Եվրոպայի շունչը դիպավ նաև Գլուխովին: Չեթմանշինայի մայրաքաղաքը գեղեցկացավ անգլիական զբոսայգիներով շրջապատված նրբազեղ պալատներով, թատրոնում իրար էին հաջորդում իտալական օպերային թատերախմբերի ելույթները, իսկ բազմաթիվ սրճարանները լեփ-լեցուն



Կիրիլո Ռոզումովսկի (վերջին հեթմանը)

էին փարիզյան վերջին նորաձևությամբ պճնված տեղական ազնվականությամբ... Եվ քանի որ հեթմանը, համենայն դեպս, իր մայրաքաղաքի այս հրաշալիքներից գերադասում էր կայսերական մայրաքաղաքի արժանիքները՝ իր մշտական ներկայությամբ ու «բժախնդիր» հոգատարությամբ չանհանգստացնելով իր ավազանուն, ապա Գլուխովի, և ընդհանրապես Չեթմանշինայի ողջ վերնախավը իրեն արտասովոր թեթև ու ազատ էր զգում: Վերջապես իրականացել էր վերնախավի բաղձալի, դեռևս XVII դարի վերջերից թաքուն երազանքը՝ դառնալ «խսկական» ազնվական: Եվ այդ նախկին զորական սպաներն հիմա ազնվական կամ շյախտիչ էին անվանում իրենց:

Ելիզավետա կայսրուհին բավականին ներողամտորեն ու մեծահոգաբար էր հետևում երիտասարդ հեթմանի նախաձեռնած փոփոխություններին, բայց այնքան ժամանակ, քանի դեռ ոգևորված հեթմանը չէր անցել որոշակի սահմանները:

Կիրիլոյի խնդրագրերը կայսրուհուն՝ թույլ տալ դիվանագիտական հարաբերություններ հաստատել Եվրոպական արքունիքների հետ, կամ ուկրաինական զորքին ազատել Ուկրաին-



նայի շահերին չառնչվող պատերազմներին մասնակցելուց, միանշանակ ու կտրուկ մերժվում էին: Ավելին՝ ուկրաինական ինքնավարության համար հույժ բարեհաջող այդ ժամանակաշրջանում անգամ, *կայսերական կառավարությունը չիրաժարվեց իր կենտրոնամետ նպատակներից և շարունակում էր կամաց-կամաց իրականացնել*: Այսպես օրինակ՝ 1754 թ.-ին Չեթմանշչինայի բյուջեն դրվեց Սանկտ-Պետերբուրգի վերահսկողության տակ, իսկ Ռուսաստանի և Ուկրաինայի միջև մաքսային սահմանները վերացվեցին: Իսկ երբ Ռոզումովսկին աշխատեց վերականգնել Չեթմանշչինայի հողերն հեթմանի հայեցողությամբ բաժանելու իրավունքը, նրան պատասխանեցին, որ կայսրությունում հող նվիրելու իրավունք ունի միայն կայսրուհին: Կարճ ասած՝ բոլոր նման դեպքերում *պարզորոշ հասկացնել էին տալիս, որ գոյություն ունեն որոշակի սահմաններ, որոնցից այն կողմ ուկրաինացիներին երբեք թույլ չի տրվելու որևէ խնդիր ինքնուրույն լուծել*:

Երբ 1762 թ.-ին իշխանության եկավ Եկատերինա Երկրորդը, Կիրիլ Ռոզումովսկին վերադարձավ Գլուխով՝ այս անգամ արդեն երկար ժամանակով: Ամեն դեպքում, նրան առայժմ չէին խանգարում իր գործերով զբաղվել: 1763 թ.-ին նա ավագանու կարևոր խորհուրդ գումարեց: Առիթը դատական բարեփոխումների քննարկումն էր: Սակայն խոսակցությունն արագորեն տեղափոխվեց այլ հարթության վրա. վերանում էին Չեթմանշչինայի նախկին արտոնությունները, անցյալի փառքը խավարն էր պատում... Վերջիվերջո պատգամավորներն այնքան զայրացան ու բորբոքվեցին, որ նոր կայսրուհուն խիստ արտահայտություններով հարուստ հանրագիր ուղարկեցին, որով *պահանջում էին վերականգնել խլված իրավունքներն ու Չախափնյակի ազնվականության պառլամենտ գումարել՝ լեհական սեյմի նմանությամբ*: Չանրագիրը համակված էր հեթմանի և ավագանու այն խորը համոզվածությամբ, որ իրենց երկիրը տնտեսա-քաղաքական մի առանձին միավոր է և որ Ռուսաստանի հետ կապված է միմիայն՝ ի դեմս միապետի: Ամերիկացի պատմաբան Ջեյմս Կոգուտի կարծիքով՝ Սազեպայի ժամանակներից ի վեր, ինքնավարության ազատական հայացքներն հրապարակավ այնպիսի կտրուկ ձևով չէին արտահայտվել, ինչպես Գլուխովի հանրագրում: Չանրագրից անմիջապես հետո Եկատերինան ստանում է Ռոզումովսկու համարձակ առաջարկությունը՝ *հեթմանությունը ճանաչել իր ընտանիքի ժառանգական իրավունքը*: Այլ կերպ ասած՝ *ուկրաինացիները կայսրուհուց իրենց ինքնավարության հաստատուն երաշխիք էին խնդրում*:

Սակայն ուկրաինական վերնախավը սխալվեց իր հաշիվների մեջ: Եիշտ այդ ժամանակ, Ուկրաինայի ինքնավարության վերաբերյալ կծու հարձակումներ պարունակող Տեպլովի (Ռոզումովսկու նախկին ուսուցչի) տեղեկագրի ազդեցության տակ, *Եկատերինա Երկրորդը որոշում է ընդհանրապես այն վերացնել*: Նա *Ռոզումովսկուն կանչեց Սանկտ-Պետերբուրգ և պահանջեց նրա իրաժարականը*: Չեթմանը փորձեց դեռևս ձգձգել և փոխզիջման տարբերակներ գտնել, բայց շուտով ստիպված եղավ ենթարկվել և 1764 թ.-ի նոյեմբերի 10-ին իրաժարվեց հեթմանությունից:

### **Չեթմանշչինայի լուծարումը**

*Եկատերինա Երկրորդն Ուկրաինայում ավարտեց Պետրոս Առաջինի սկսած գործը*: Այդ գերմանուհի արքայադուստրը, որ Ռոմանովների դինաստիայի մեջ մտավ Պետրոս Երրորդի հետ ամուսնանալու շնորհիվ և գահին հայտնվեց պալատական հեղաշրջման գնով (որը նրա ամուսնուն կյանք արժեցավ), պարզվեց, որ ռուսականացման և կենտրոնամետության երդվյալ կողմնակից է: Լուսավորյալ միապետության դարաշրջանի շատ տիրակալների նման, Եկատերինան դուրս ինչ չէր կասկածում, թե առավել խելացի ու արդյունավետ է այն իշխանությունը, որը հիմնված է միապետության սկզբունքների վրա և ծանրաբեռնված չէ այնպիսի ավատատիրական վերապրուկով, ինչպիսին առանձին հողերի հատուկ կարգավիճակն է: Այստեղից էլ գալիս էր նրա անհանդուրժողական վերաբերմունքը ոչ միայն ուկրաինական, այլ և լիվոնյան, և՛ ֆիննական, և ընդհանրապես ցանկացած ինքնավարության նկատմամբ: Բոլոր այս նահանգները ռուսականացնելու խնդիրը նրան ոչ միայն պարզ էր թվում, այլև հեշտ իրագործելի. միայն պետք է այնտեղ,- ասում էր նա,- խելացի նահանգապետների նշանակել: Եվ նա գտավ այդպիսի նահանգապետ՝ ռուս ականավոր զորավար ու քաղաքական գործիչ Պյոտր Ռումյանցևին և նրա առջև հստակ խնդիր դրեց՝ *Չախափնյա Ուկրաինայի բնակչության հիշողությունից ցանկացած ձևով ջնջել Չեթմանշչինան ու հեթմանությունը*:

Ռումյանցևին օգնելու համար ձևավորվեց *Երկրորդ Մալոռոսական կոլեգիան*, որ բաղկացած էր 4 ռուս պաշտոնյաներից և ավագանու 4 վստահված անձանցից: Գաղտնի

իրահանման ամփոփագրերում Եկատերինան Ռումյանցևին նախագրուշացնում էր, որ զգուշորեն գործի, այնպես, որ տեղական բնակչության մեջ ատելություն չառաջանա կայսերական վարչակազմի նկատմամբ: Նորանշանակ գեներալ-նահանգապետը պետք է աստիճանաբար հող նախապատրաստեր ուկրաինական ինքնավարությունը վերացնելու համար, մշտապես շեշտելով և կրկնելով, որ հասարակ ժողովրդի վիճակի վատթարացումն ամենից առաջ հետամնաց «մալոռոսական սովորությունների» արգասիք է: Ավագանու հետ հարաբերություններում նահանգապետը պետք է մտրակի ու մեղրաբլիթի քաղաքականություն վարեր. խստորեն պատժելով ինքնավարության միտումների ցանկացած դրսևորում, ամեն կերպ խրախուսել նրանց, ովքեր «չեն վարակվել անկախության հիվանդությամբ», շռայլորեն խոստանալով նրանց բարձր պաշտոններ տեղական կառավարությունում և կայսերական վարչությունում, ռուսական ազնվականությանը հավասար կարգավիճակ և լրիվ ազատություն՝ գյուղացիների նկատմամբ:

*Ռումյանցևն արդարացրեց կայսրուհու սպասումները*: Սկզբում խուսափում էր կտրուկ փոփոխություններից՝ ձգտելով նվաճել ենթակաների բարյացակամությունը: Նա իր գրասենյակում աշխատանքի ընդունեց շատ ուկրաինացիների, փոստային ծառայություն հիմնեց և մանրակրկիտ ուսումնասիրեց երկրամասի սոցիալական ու տնտեսական պայմանները: Բայց ամեն ինչ չէ, որ հարթ էր ընթանում: 1767 թ.-ին, երբ Եկատերինան, երազելով ողջ աշխարհին ցուցադրել իր վարչակարգի «լուսավորյալ» բնույթը, հիմնադրեց նոր օրենսգիրք կազմելու նշանավոր Չանձնաժողովը, ուր ընդգրկված էին պատգամավորներ բոլոր խավերից (բացի գյուղացիությունից) ու երկրամասերից: Ռումյանցևին և անձամբ կայսրուհուն մեծագույն վրդովմունք պատճառեց այն, որ ուկրաինացի մի շարք պատգամավորներ՝ Գրիհորիյ Պոլետիկայի գլխավորությամբ, օգտվեցին առիթից, խնդրելով վերականգնել հեթմանությունն ու վերադարձնել Ուկրաինայի նախկին իրավունքներն ու ազատությունը: Մյուս «ձայրամասերի» պատգամավորների կողմից նույնպես հնչեցին լարվածություն առաջացնող նման խնդրանքներ: Կայսրուհին, թուրքերի հետ մոտալուտ պատերազմը պատճառ բռնելով, Չանձնաժողովի նիստը «հետաձգեց լավ ժամանակների»:

1768-1775 թ.թ.-ների ռուս-թուրքական պատերազմից հետո միայն Ռումյանցևը վճռական քայլերի դիմեց: Առաջին հարվածն ուղղված էր Չապորոժյան Սիչի դեմ. **1775 թ.-ին ռուսական զորքերն անսպասելի շրջվեցին դեպի Սիչ, և հիմնահատակ ավերեցին այն**: Իսկ 1781 թ.-ին հերթը հասավ Չեթմանշչինային: Այդ ժամանակ համակայսերական վարչական վերակազմավորում էր անցկացվել, որի արդյունքում Չախափնյակի ավանդական կոզակական 10 գնդերը լուծարվել էին, իսկ դրանց փոխարեն, ռուսական նահանգների հանգույն, ձևավորվել էին երեք նահանգ՝ Կիևի, Չեռնիգովի և Նովոգորոդ-Սիվերսկիի: Այսպես նախկին Չեթմանշչինայի տարածքում կիրարկվեց 1775 թ.-ի նոյեմբերի 7-ի Եկատերինայի հրամանը՝ համաձայն որի, Վ. Օ. Կոյուչևսկու բառերով ասած՝ «ամբողջ կայսրությունը բաժանված էր 50 նույնանման նահանգի... բացարձակապես ըստ բնակչության քանակի, առանց հաշվի առնելու տարածությունն ու պատմական նախկին բաժանումը, կենցաղային կապերն ու բնակչության յուրահատկությունները»: Կայսերական բյուրոկրատիայի համապատասխան ճյուղավորումները («նահանգային հաստատությունները») փոխարինեցին ուկրաինական վարչական, դատական և ֆինանսական մարմիններին: Այնուհետև ցրեցին նշանավոր կոզակական զորագնդերը: 1783 թ.-ին նրանց փոխարինեցին կանոնավոր զորամասերով, որոնց կազմում վեցամյա ժամկետով զորակոչվում էին գյուղացիները (ընդ որում՝ ոչ միայն ուկրաինացի): Այդպես *ուկրաինական-կոզակական բանակը դադարեց գոյություն ունենալուց*:

Պալատակ կառավարական քարոզչության հավաստիացումների՝ Չախափնյակում համակայսերական կարգերի հաստատումը ոչ թե թեթևացրեց, այլ ավելի ծանրացրեց տեղի գյուղացիության վիճակը: **1783 թ.-ին ուկրաինացի գյուղացին զրկվեց իր կալվածատիրոջից հետամալու իրավունքից**, իրավունք, որը ռուս գյուղացիները չունեին անհիշելի ժամանակներից: Այլ խոսքով ասած՝ Չախափնյակի գյուղացիությունն այսուհետ պաշտոնապես ճորտ էր հայտարարվում:

Փոխարենը, այս բոլոր փոփոխությունների արդյունքում ուկրաինական վերնախավը միայն շահեց: Գյուղացիությունը վերջապես ամբողջովին հայտնվեց նրա իշխանության տակ, իսկ ինքը իրավունքներով հավասարվեց ռուս ազնվականությանը և Եկատերինայի 1788 թ.-ի «Ազնվականության շնորհագրով» ազատվում էր պետական և զինվորական պարտադիր ծառայությունից: Ահա թե ինչու Չեթմանշչինայի նախկին վերնախավը ցավ չսպրեց ինքնավարության վերացումից: Կարելի է միայն բողոքի հատուկեմտ դեպքեր նշել, օրինակ՝



Հեթմանշինան վերականգնելու հարցում Պրուսիայի համաձայնությունը ձեռք բերելու վասիլ Կապինսոի գաղտնի փորձը 1791 թ.-ին: Սակայն Կապինսոի նման առանձին անհատներ արդեն ի գորու չէին կանխելու Ռուսական կայսրությանը Կողակական Ուկրաինայի «կոչ գնալը»:

## Կայսերական էքսպանսիա

XV դարից սկսած Արևելյան Եվրոպայի, և մասնավորապես Ուկրաինայի, պատմության գերակշռող գործոնը դառնում է Մոսկվայի գավթամոլությունը: Փաստերն ավելի խոսում են. եթե 1462 թ.-ին Մոսկովյան նորաստեղծ պետությունն զբաղեցնում էր ընդամենը 24 հազ. քառ. կմ, ապա 1914 թ.-ին Ռուսական կայսրության տարածքն արդեն 23,8 մլն քառ. կմ էր կազմում, այսինքն՝ երկրագնդի ողջ մայրցամաքի վեցերորդ մասը: Պատմաբանների հաշվարկներով՝ կայսրությունը միջին հաշվով օրական աճում էր 80 քառ. կմ-ով:

XVIII դարավերջին Ռուսական կայսրությունն իր ողջ ուշադրությունը սևեռեց Հարավը նվաճելու վրա: Նրա գլխավոր նպատակները դարձան Մերձսևծովյան լայնարձակ տափաստանները, որ Դրիմի թաթարների իշխանության տակ էին, ինչպես նաև Թուրքիայի կողմից վերահսկվող ծովային ուղիները՝ որ բանալին էին դեպի Միջերկրածովյան երկրներն ու համաշխարհային առևտուրը:

**Քանի դեռ նշված ծրագրերի իրականացման համար կայսրությունը ուկրաինացիների օգնության կարիքն էր զգում, թույլ էր տալիս, որ պահպանեն իրենց ինքնավարությունը (Հեթմանշինան):** Բայց երբ Ռուսաստանը 1774 թ.-ին Թուրքիայի հետ կնքեց Քյուլուկ-Կայնարջի խաղաղության պայմանագիրը, որով անրագրվեցին եկատերինյան կայսրության ռազմական հաջողություններն և ճանաչվեց նրա ներկայությունը Սև ծովում, ինչպես նաև գերիշխանությունը Դրիմի խանության վրա, պարզ դարձավ, որ Հեթմանշինան դատապարտված է: Նույն ճակատագիրն էր սպասում նաև այն բոլոր տարածքներին, որ ընկած էին Ռուսաստանի և Սև ծովի միջև:


### Ջապորոժյան Միջի ավերումը

1734 թ.-ին կրկին Ռուսաստանի իշխանության տակ անցնելուց հետո, զապորոժցիները ետ ստացան իրենց նախկին հողերը: Հին Միջից (որ 1709 թ.-ին Պետրոս Մեծն ավերեց) ոչ հեռու նրանք հոր Միջ հիմնեցին: Սակայն կայսերական կառավարությունը մի առանձին ուրախություն չէր ապրում այդ վերադարձից:

Մի կողմից՝ զապորոժցիներն իհարկե անփոխարինելի էին թուրքերի դեմ կռիվներում, եկատերինյան այդ առումով չէր դադարում նրանց զովաբանել և մեղալներ չէր խնայում, իսկ մյուս կողմից՝ այդ զապորոժցիները մշտական գլխացավանք էին կայսրուհու համար: Միջը չէր ճանաչում ճորտատիրությունը, ինչքան ասես անմշակ հող ուներ նոր եկվորների համար: Եվ որտեղ էլ որ մի խռովություն էր բռնկվում տեղերի դեմ, կոզակներն անմիջապես այնտեղ էին. 1768 թ.-ին Աջափնյակում բռնկված Հայդամաչինայի արյունալի ապստամբության առաջին ջութակն էին, իսկ 1772 թ.-ին՝ մոլեզմած թագուհուց թաքցնում էին ոչ պակաս արյունալի ուրալյան Պուգաչովշինայի բազմաթիվ մասնակիցների:

Հենց իրենց՝ զապորոժցիների մեջ էլ բռնություններն ու սոցիալական ընդհարումները սովորական էին դարձել: Ջապորոժյան հողերի արագ բնակեցումը (1770 թ.-ին այստեղ արդեն 200 հազ. մարդ էր բնակվում՝ հիմնականում կոզակներ) խթանում է հողագործության, անասնապահության և առևտրի զարգացումը: Տնտեսական ամբողջ գործունեությունը վերահսկում էին զապորոժյան ավագները: Ջապորոժյան կոշի վերջին օտանման Պետրո Կալնիշևսկին 14 հազ. գլուխ անասուն ուներ: Նրա ավագներն իրենց հարստությամբ քիչ էին ետ մնում օտանմանից: Ջապորոժյանը, ինչպես և Հեթմանշինայում, գնալով խորանում էր սոցիալական և ունեցվածքային անդունդը կոզակական ավագանու և ընչազուրկների միջև, և աղքատներն հաճախ էին զինված դուրս գալիս հարուստների դեմ: 1768 թ.-ին զապորոժյան ավագանին քիչ մնաց զոհ գնար կոզակական ջարդ ու ավերին. վանականի հագուստով ծաղկած, նրանք փախան Միջից և հազիվ փրկություն գտան մոտակա ռուսական կայսրությունում: Եվ միայն կայսերական զորքի միջամտությունն օգնեց վերահաստատելու կարգուկանոնը:

Միջում մշտական ընդհարումները, Մերձսևծովյան տարածքը գաղութացնելու կառավարա-



Ռուսական էքսպանսիայի XVIII դարի վերջին



կան փորձերին զապորոժցիների համառ դիմադրությունը՝ այդ ամենը համոզում էին եկատերինային այն բանում, որ խնդիրն արմատական լուծում է պահանջում: Թուրքերի հետ պատերազմն ավարտվել էր հաղթանակով, թաթարական վտանգը վերացել էր, և հիմա արդեն կայսրուհուն ոչինչ չէր խանգարում՝ ավերելու Սիչը երկրորդ անգամ:

1775 թ.-ի հունիսի 4-ին, երբ զապորոժցիների մեծ մասը դեռևս գտնվում էր թուրքական ճակատում, հենց այնտեղից վերադարձող ռուսական բանակը՝ գեներալ Տեկելի գլխավորությամբ շրջապատեց Սիչը, գրավեց ու հողին հավասարեցրեց այն: **Կալնիշևսկուն և ավագանուն, չնայած նրանց ռուսամետությանը, ձերբակալեցին և աքսորեցին Սոլովկի:** 5 հազ. հոգուց բաղկացած կղզակների մեծ ջոկատն ապաստան գտավ Թուրքիայի տարածքում՝ Դանուբի գետաբերանից ոչ հեռու: Չապորոժյան հողերի մոտ կեսը բաժանեցին ռուս մեծատոհմիկ ազնվականներին, մնացածը տրամադրեցին գերմանացի ու սերբ գաղութաբնակներին: **Վերացնելով Սիչը, Եկատերինան ձգտում էր ջնջել այն նույնիսկ ժողովրդի հիշողությունից, հայտարարելով, որ «զապորոժցի» կամ «զապորոժյան կղզակ» արտահայտություններն արտասանելը կդիտվի որպես մեծ վիրավորանք «Ձերդ կայսերական մեծությանը»:**

Չապորոժյան Սիչի պատմությունն իր վերջաբանն ունի: Այն 5 հազ. զապորոժցիները, որ անցան թուրքական սահմանից այն կողմ, սուլթանից թույլտվություն ստացան բնակություն հաստատել Դանուբի գետաբերանի մոտ: Ի հակակշիռ նրանց՝ 1784 թ.-ին ռուսական կառավարությունը նախկին զապորոժցիների մնացորդներին վերաբնակեցնում է Բուզի և Դնեստրի միջագետքում: **1792 թ.-ին «Բուզի կղզակներին» վերանվանում են «Սևծովյան» և տեղափոխում են Կուրան:** 1828 թ.-ին, Դանուբի կղզակների մի մասը՝ Յոսիպ Չլադկիի գլխավորությամբ, վերադառնում է Ռուսական կայսրություն և շուտով միանում իրենց ազգակից Կուրանի կղզակներին: **1864-1921 թ.թ.-ներին նրանք հայտնի էին Կուրանի կղզակներ անունով, որոնք զապորոժցիների ուղիղ հետնորդներն են:**

### Ղրիմի խանության նվաճումը

1686 թ.-ի անհաջող արշավանքից հետո, Ռուսական կայսրությունը գրեթե 100 տարի ձգտում էր նվաճել Ղրիմը: 1734-1739 թ.թ.-ների պատերազմի ժամանակ ռուսական և ուկրաինական զորքերը մտան Ղրիմ, բայց համաճարակներն ու սննդամթերքի պակասությունն ստիպեցին նրանց վերադառնալ: Սակայն 1774 թ.-ին նրանք վերադարձան Ղրիմ, գրավեցին ամբողջ թերակղզին և թուրք սուլթանին Քյուչուկ-Կայնարջի պայմանագրով ստիպեցին հրաժարվել Ղրիմի խանության սյուզերենությունից: Այդ խանությանը, սակայն, հաշված տարիներ էին մնացել. **1783 թ.-ին, Ղեթմանշինայի հետ միաժամանակ, այն դադարեց գոյություն ունենալուց:**

Դժվար է գերազանահատել այս իրադարձության նշանակությունն Ուկրաինայի, ինչպես նաև ամբողջ Արևելյան Եվրոպայի պատմության համար: Ղրիմի խանությունը թուրք քոչվորների վերջին ամրոցն էր Եվրոպայում, և դեռ ոչ շատ վաղուց՝ 1769 թ.-ին, տասնյակ հազարավոր թաթարներ վերջին անգամ ասպատակեցին Ուկրաինան: **Մեծ տափաստանի գլխին հազարավոր տարիներով կախված ավերի ու ավարի վտանգը մեկընդմիջտ վերացավ:** Եվ տափաստանը իլու հնազանդ ենթարկվեց նստակյաց երկրագործի խաղաղ ու բարեբեր գութանին:

### Ռեչ Պոսպոլիտայի մասնատումը

Նույնիսկ երբեմնի հզոր Ռեչ Պոսպոլիտան, որ այդ ժամանակներում 11 մլն բնակչություն ուներ և 733 հազ. քառ. կմ տարածք էր ընդգրկում, պաշտպանված չէր ռուսական էքսպանսիայից: «Ոսկե արտոնություններն» այդ երկիրը հասցրեցին շլախտայական սանձազերծ անչափավորության և այն գործնականում անկառավարելի դարձավ: Գրեթե ամբողջ XVIII դարը Ռեչ Պոսպոլիտան ապրեց բացարձակ անարխիայի պայմաններում, որ խրախուսվում էր և՛ տեղական ավատատերերի, և՛ արտասահմանյան տերությունների կողմից (երկուսին էլ դա ձեռնտու էր): Եվ, իհարկե, հարևան Ռուսաստանը, քաղաքական առավելագույն օգուտ քաղելով Ռեչ Պոսպոլիտայի ուղղափառների և ուղղափառության ավանդական պաշտպանի դերից, մեծ հաջողությամբ խափանում էր լեհերի՝ իրենց երկրում բարենորոգումների ու պետական իշխանության աշխուժացման, բոլոր պլանները:

Վերջապես, Ռեչ Պոսպոլիտայի ագրեսիվ հարևանները՝ Ռուսաստանը, Պրուսիան և Ավստրիան, որոշեցին բացահայտ օգտվել նրա ողբալի վիճակից: **1772, 1793 և 1795 թ.թ.-ների երեք բաժանումների արդյունքում լեհ-լիտվական պետությունը վերացավ Եվրոպայի քարտեզից:** Նախկին Ռեչ Պոսպոլիտայի առյուծի բաժինը՝ 62 % տարածությունն ու բնակչության

45 %-ը բաժին ընկավ Ռուսաստանին, տարածության 18 %-ն ու բնակչության 32 %-ը միացվեց Ավստրիային և համապատասխանաբար՝ 20 և 23 %-ը՝ Պրուսիային:

*Արևելյան Եվրոպայի բոլոր այդ արմատական փոփոխությունները ամենամանիջական ձևով ազդեցին Ուկրաինայի վրա. 1772 թ.-ին Գալիչիանայի և Բուկովինայի ուկրաինացիներն ընկան Ավստրիայի իշխանության տակ, իսկ Աջափնյա Ուկրաինան 1795 թ.-ին մտավ Ռուսական կայսրության կազմի մեջ: Այդ պահից Ուկրաինայի պատմությունը նոր փուլ թևակոխեց:*

\* \* \*

Ղեթմանշինան գրեթե ամբողջ մի դար եղավ Ուկրաինայի քաղաքական կյանքի կենտրոնը: Զնայած մոսկովյան, այնուհետև պետերբուրգյան ցարերը ոչ միայն վերահսկում էին նրա արտաքին կապերն ու ռազմարշավները, այլև մշտապես խառնվում էին ներքին գործերին, սակայն հեթանակական վարչակազմը, դատարանները, ֆինանսները, բանակը, սոցիալ-տնտեսական քաղաքականությունը՝ այս ամենը ձևավորվում, կազմակերպվում, իրագործվում ու պահպանվում էին հենց ուկրաինացիների կողմից:

Ինքնակառավարումը նպաստեց ուկրաինական ազնվական նոր վերնախավի ձևավորվելուն: Նոր ազնվականությունը նվիրված էր հին սովորույթներին ու հպարտանում էր նրանցով: Նույնիսկ Ղեթմանշինայի մայրամուտին կղզակական ավագանու ներկայացուցիչները, որոնք պատգամավոր էին ուղարկվել կայսերական օրենսդիր Յանձնաժողով, խորապես համոզված էին իրենց օրենքների և սովորույթների առավելության մեջ, և այդ դիրքերից բացորոշ մերժեցին եկատերինյան բարեփոխումները: Այսպիսով, Ղեթմանշինայի նշանակությունը՝ որպես ուկրաինական ինքնավարության պատմական նախադեպ, իսկապես դժվար է գերազանահատել՝ ընդհուպ մինչև XX դարի սկիզբը, երբ ուկրաինական ժողովրդի ինքնորոշման հարցը սրությամբ կրվի:

Ղեթմանշինայի լուծարումից ավելի քան մեկ դար հետո, Տարաս Շևչենկոն գրում էր.

*Յնում ունեինք հեթմանշինա,  
- Այն էլ ետ չի դառնա:  
Մենք մեր տերն էինք մի ժամանակ,  
Էլ ազատ չենք հիմա:  
Բայց փառքը մեր կղզակության  
Չավերժ չենք մոռանա...*

Ղեթմանշինան ոչ միայն չմոռացվեց, այլև օգնեց Ուկրաինայի պատմության նոր դարաշրջան սկսելուն: Ուկրաինացի շատ մտավորականներ, որոնք արթնացրեցին ու ձևավորեցին XX դարասկզբի ազգային ինքնագիտակցությունը, կղզակական ավագանու հետնորդների ժառանգներն էին: Ղեթմանշինան Ուկրաինայի պատմության կարևորագույն և ուսանելի, առասպելական էջերից մեկն է, որը ոգևորիչ օրինակ է նաև ժամանակակից ուկրաինացիների համար՝ իրենց պետականությունն ամրապնդելու և երկիրը անառիկ պահելու գործում:





# ՆԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ, ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ՄՇԱԿՈՒՅԹ

Եվ այսպես, կոզակական «հավասարների հասարակություն» ստեղծելու փորձը չստացվեց: XVIII դարում Չախափնյա Ուկրաինայի սոցիալական կառուցվածքը համապատասխանեցվեց այդ ժամանակ հարևան արևմտաեվրոպական երկրներում ձևավորված կառույցների: Դեթմանը շինարարությունը ազնվական վերնախավի հայտնվելուն զուգընթաց, գյուղացիները կրկին դարձան ճորտեր, իսկ կոզակներն իրենց կարգավիճակով հավասարվեցին գյուղացիներին: Ինչ վերաբերում է Աջափնյակին, ապա այնտեղ լեհական շյախտան պարզապես վերականգնեց իր նախկին իշխանությունն ու վերադարձրեց հին կարգերը: Ուկրաինայի այն մասում, որ մտնում էր Ռուսական կայսրության կազմի մեջ, սոցիալ-տնտեսական ճնշումը որոշ չափով թեթևացել էր շնորհիվ այն բանի, որ բացվել էր Դրիմի թաթարներից ու զապորոժցիներից կայսերական կառավարության խլած Մերձսևծովյան անծայրածիր արգավանդ հողերի գաղութաբնակեցումը:

1768 թ.-ին լեհական շյախտայի դեմ արյունալի գյուղացիական ապստամբություն բռնկվեց Աջափնյակում, որտեղ սոցիալական բախումներն ավելի էին սրվում կրոնական խտրականության հետևանքով: Բայց ապստամբությունը տապալվեց և շյախտան վերականգնեց իր լիիրավ իշխանությունը: Թվում էր, թե ոչինչ չի կարող սասանել դարերով անփոփոխ այդ կարգերը:

Փոխարենը, XVIII դարի կեսերին նկատելի աշխուժացում ապրեց մշակույթը, հատկապես Դեթմանը շինարարությունը: Ինչևէ, արդեն դարավերջին Ուկրաինան, թե՛ տարածքային, թե՛ սոցիալ-տնտեսական ու մշակութային առումներով, դառնում է լրիվ գավառական երկիր:

## Տնտեսությունը

Դեթմանը շինարարական բնակչության գոյության հիմնական աղբյուրը շարունակում էր մնալ գյուղատնտեսությունը: Իսկ առևտուրն ու գործվածքեղենի արտադրությունը ետ էր մնում նույնիսկ Ռուսաստանի հարևան շրջանների հետ համեմատած: Եվրոպայի մյուս բացարձակ միապետների պես, ռուսական ցարերն էլ գավառների հետ վարվում էին այնպես, որ երկրամասերի տնտեսական զարգացումը խթանելով, միաժամանակ թույլ չէին տալիս նրանց՝ տնտեսական առումով գերազանցելու տերության կենտրոնին, տվյալ դեպքում՝ հենց Ռուսաստանին: Նման քաղաքականության հետևանքները XVIII դարում խիստ ազդեցին Ուկրաինայի տնտեսության զարգացման վրա:

### Գյուղատնտեսությունն ու նրա հետ կապված գործունեությունը

Ուկրաինայի գյուղատնտեսության մեջ կարևորագույն փոփոխությունները կապված էին դեպի հարավային շրջաններ տարածքների ընդարձակվելու հետ: Սակայն, *չնայած նոր հողերի հսկայական քանակին և հիանալի որակին, բերքատվության էական բարձրացում տեղի չունեցավ:* Պատճառը՝ գյուղատնտեսական գործիքների և տնտեսավարման մեթոդների հնացածությունն էր: Առաջվա պես կիրառելով ցանքաշրջանառության ավերիչ էքստենսիվ (ոչ արդյունավետ) եռադաշտ համակարգը, գաղութաբնակները գերադասում էին շրայլորեն նորանոր հողեր յուրացնել, քան թե արդեն յուրացված հողերը բարեբեր դարձնել ու առավել արդյունավետ (ինտենսիվ) օգտագործել: Յորենի միջին բերքատվությունը 3-4 անգամ էր

միայն գերազանցում ցանված սերմի քանակին, ինչը նույնիսկ այն ժամանակվա եվրոպական չափանիշներով, սարսափելի քիչ էր: Գյուղացիների ճորտացումն էլ ավելի էր խտրացնում հետամնացությունը. *ծրի աշխատուժի առատության պատճառով հողատերերն իրենց չէին ծանրաբեռնում նորարարություն կիրառելու հոգսերով:*

Միաժամանակ, ճորտատիրական իրավունքն այն ձևով, ինչպես որ կիրառվում էր Ուկրաինայում, արգելակում էր բնակչության մասնագիտացմանն ու արհեստավարժ դառնալուն: Ռուսաստանի հյուսիսում, որտեղ հողը սակավաբեր էր, կալվածատերերը խրախուսում էին գյուղացիներին, որ բահրան վճարեն տարբեր արհեստներով ու գործունեությամբ (որպես օրենք՝ քաղաքներում) վաստակած դրամով: Իսկ բերքառատ Ուկրաինայում հողատերը գերադասում էր վարձն ստանալ կոռի տեսքով: Այստեղից էլ, ի դեպ, ինչն արժե ընդգծել, *ուկրաինացի հողագործն ավելի շատ էր կապված գյուղի ու դաշտի ավանդական կենսակերպին, քան ռուս հողագործը:*

Չնայած Ուկրաինայում գյուղատնտեսության ընդհանուր պահպանողականությանը, որոշ փոփոխություններ, այնուամենայնիվ, տեղի էին ունենում: XVIII դարավերջին, օրինակ, *արձատարվեց կարտոֆիլի ու եգիպտացորենի մշակությունը:* Նախկինի հետ համեմատած, կալվածատերերն ավելի հաճախ էին ներդրումներ կատարում գյուղատնտեսության հետ կապված արտադրություններում, որը մեծ եկամուտ էր բերում: *Շատացավ ջրաղացների քիվը*, որոնք ոչ միայն կալվածատիրոջ աղուն էին աղում, այլև, համապատասխան վարձի դիմաց, նաև՝ գյուղացիների: Միայն Չախափնյակում, 1782 թ.-ին 3300 ջրաղաց և 12 հազ. հողմաղաց կար: Սակայն ազնվական ձեռներեցների ամենաեկամտաբեր կողմնակի զբաղմունքներից մեկը *ցորենի օղու (горілки) արտադրությունն էր*, որից ստացվող եկամուտը շատ կալվածատերերի ամբողջ եկամտի կեսն էր կազմում: Չարմանալի չէ, որ 1750 թ.-ին Դեթմանը շինարարի ամեն մի գնդի տարածքում միջին հաշվով 50 օղեգործարան կար: Կային նաև հողատերեր, որոնք զբաղվում էին *ուկրաինական հայտնի եգների, ոչխարների ու ձիերի կրծմամբ:* Օրինակ՝ Կիրիլ Ռոզումովսկին 5 հազ. ձիու բաղկացած երամակ ուներ, որոնցից 800-ը ցեղական էին: Առաջվա նման պահպանվում էին նաև ավանդական այնպիսի գործունեություններ, ինչպիսին օրինակ՝ *մեղվապահությունն էր*. Աջափնյակի որոշ մեղվանոցներում մինչև 15 հազ. փեթակ էր հաշվվում:

## Առևտուրը

Չնայած Ուկրաինայում առևտրի զարգացմանն առաջվա պես խոչընդոտում էին վատ ճանապարհները, դրամի սակավությունը, բարձր վարկային տոկոսները (տարեկան՝ 20-50 %), այնուամենայնիվ զարգացումն առկա էր: Դրա *գլխավոր խթանը գյուղարտադրանքի աճն էր* (նաև հակառակը՝ առևտուրը խթանում էր պահանջարկը): Տեղափոխման հետ կապված բարդությունները ստիպում էին մարդկանց եկեղեցական օրացույցով սահմանված համապատասխան տոն օրերին հավաքվել որոշակի քաղաքներում ու գյուղերում՝ առք ու վաճառքի համար: Նեժին, Ռոմնի, Կիև, Պերեյասլավ, Պոլտավա, Խարկով և այլ մեծ քաղաքներում կազմակերպվող հսկայական տոնավաճառները շաբաթներ էին շարունակվում, որտեղ ինչ սիրտը ուզեր, կարող էիր գտնել: *Առևտրատնտեսական առումով Չախափնյակն ավելի շարժունակ էր, քան Աջափնյակը:* Այնտեղ արդեն մոտ 400 տոնավաճառ էր գործում, չհաշված այն 700 տեղական շուկաները, որտեղ մանր առևտուր էր արվում:

Մանր առևտրի մյուս տեսակը, որ առավել տարածված էր կոզակների ու գյուղացիության մեջ, *աղի ու ձկան առևտուրն էր:* Բեռնասայլ ու եգների լծասարք գնելու կարողություն ունեցողները մեծ խմբերով վտանգաշատ ճամփորդության էին ելնում դեպի Սև ծով: Այնտեղից աղն ու ձուկը բեռնելով, նրանք վաճառում էին ամբողջ Ուկրաինայով մեկ: Շատ հաճախ, նման առևտրականները, որ *չունակներ* էին կոչվում, աստիճանաբար բավականին գումար էին կուտակում, որ հետո մեծ գործեր նախաձեռնեին: Այս օրինակը ցույց է տալիս, որ բարտեռային համակարգը, այսինքն՝ պարզ ապրանքափոխանակությունը, Ուկրաինայում նույնպես կամաց-կամաց փոխարինվում էր դրամական տնտեսությամբ:

Արտաքին առևտուրը չէր զարգանում այնքան ժամանակ, մինչև XVIII դարավերջին չհիմնադրվեցին Սևծովյան նավահանգստային քաղաքները: Ինչպես և սպասելի էր, արտահանման բուլլատրվում էին հիմնականում գյուղատնտեսական արտադրության մթերքները: Դրանից դեռ շատ առաջ էլ ուկրաինացի վաճառականները լայն կապեր ունեին բալթյան նավահանգիստների ու արևմտյան շուկաների հետ, բայց կայսերական քաղաքականությունը հասցրեց նրան, որ ամբողջ այդ առևտուրը տեղափոխվեց հյուսիս: **1714 թ.-ից Պետրոս Առա-**



զինն ստիպում էր ուկրաինացի վաճառականներին ցորենը տեղափոխել ռուսական մավահանգիստները՝ Արխանգելսկ, Ռիգա, Սանկտ-Պետերբուրգ, իսկ 1719 թ.-ին ուկրաինական ցորենն Արևմուտք արտահանելն ամբողջովին արգելվեց: Լեհ-ուկրաինական սահմանի վրա խիստ մաքսատուրքեր սահմանեցին նույնիսկ ներմուծվող ապրանքների վրա, որպեսզի դժվարացնեն դրանց մրցակցությունը վերջերս հիմնադրված ռուսական մանուֆակտուրաների արտադրանքի հետ: Դրա հետ մեկտեղ, ինչպես հիշում ենք, Չախափնյակ ապրանք բերող ռուս վաճառականներն արտոնություններ ունեին, մինչդեռ ուկրաինացիները Ռուսաստան տարվող պատրաստի ապրանքի համար պետք է նրա արժեքի 10-40 %-ի չափով տուրք մուծեին: Ռուս վաճառականները չհապաղեցին օգտվել դրանից և սկսեցին ներթափանցել ուկրաինական առևտրի մեջ այնպես, որ մինչև 1754 թ.-ին Չախափնյակի և Ռուսաստանի միջև առևտրային արգելքների վերացումը, մեծածախ առևտուրն ամբողջովին արդեն նրանց ձեռքում էր:

### Մանուֆակտուրաներ

Ուկրաինայում արդյունաբերությունն ավելի դանդաղ էր զարգանում, քան Ռուսաստանում, և պատճառները մի քանիսն էին: Մի կողմից՝ հողագործությանը զբաղվելու շահավետ պայմաններն ուկրաինացիների ուշադրությունն ու եռանդը շեղում էին արտադրության այլ ոլորտներից: Մյուս կողմից՝ կայսերական քաղաքագետներն առաջ էին մղում Ռուսաստանի արդյունաբերական զարգացումը, ուկրաինան դիտելով որպես հումքի աղբյուր: Պատահական չէ, որ մախաստալինյան շրջանի խորհրդային պատմաբանները Ռուսաստանի և Ուկրաինայի տնտեսական փոխադարձ կապերը դիտում էին որպես գաղութային տիպի տնտեսական հարաբերությունների օրինակ:

Այդ ամենը սակայն, չէր նշանակում, թե Ուկրաինայում լրիվ բացակայում էր մանուֆակտուրային արտադրությունը: Այն, թեկուզև փոքր չափերով, համեմայն դեպս զարգանում էր և բավական լայն տարածում էր գտել: Ե՛վ Չախափնյակի ավազանին, և՛ Աջափնյակի ավատատերերը ապակեհալման և ապակեփչման բազմաթիվ արտադրամասեր էին հիմնել, որոնցից յուրաքանչյուրում 15-20 մարդ էր աշխատում: Վանքերում զբաղվում էին քղթի արտադրությամբ: Քաղաքներում այնպիսի արհեստավորներ, ինչպես դարբինները, ատաղձագործները, ապակի փչող վարպետները, ներկարարները, դերձակներն ու կաշեգործները, հաճախ 400-600 մարդ էր հաշվվում: Որոշ գյուղերում, հատկապես Յյուսիսային Չեթմանշչինայում, որտեղ հողերն այնքան էլ բերրի չէին, բացարձակապես զբաղվում էին ջուլիակությամբ կամ փայտամշակմամբ:

Ի տարբերություն Արևմտյան Եվրոպայի, որտեղ, որպես կանոն, մանուֆակտուրային ձեռնարկությունները հիմնվում էին միանգամից արդյունաբերական խոշոր կենտրոններում, Ուկրաինայում և Ռուսաստանում դրանք հիմնվում էին գյուղերում, որտեղ ապրում էին ձեռներեցկավածատերերը: Մյուս տարբերությունը՝ մանուֆակտուրաների զարգացման գործում կառավարության առաջատար դերն էր: Օրինակ՝ Սլոբոդյան Ուկրաինայում հազարավոր աշխատատեղեր ունեցող հսկայական տեքստիլ ֆաբրիկաներ հիմնեց հենց կայսերական կառավարությունը: Այդ մանուֆակտուրաների համար բանվորներ հավաքագրում էին ճորտերից, որոնք ճորտ էլ շարունակում էին մնալ և տերերի կողմն ու բահրան «մարում էին» ֆաբրիկայում աշխատելով:

## Սոցիալական փոփոխություններ Չեթմանշչինայում

### Նոր ընտրախալ

XVIII դարասկզբին Չեթմանշչինայի նոր ձևավորված ընտրախալն արդեն հասել էր սոցիալական բուրգի գագաթնակետին և այնտեղ իրեն լավ էր զգում: Կոզակական եղբայրության ու ընկերության ոգին նրանց այլևս չէր հուզում: Ընդ որում՝ արևելաեվրոպական ոչ մի հասարակություն մինչ այդ չէր ունեցել քաղաքական և սոցիալ-տնտեսական կյանքը կառավարելու այլ միջոց, բացի այն, որի ժամանակ երկիրն արտաքին թշնամուց պաշտպանելու և ներքին կարգուկանոնը պահպանելու ողջ պատասխանատվությունն ազնվականությունը վերցնում էր իր վրա, փոխարենն օգտվելով հողերի ու գյուղացիների վրա ունեցած անսահմանափակ իշխանությունից: Եվ համապատասխանաբար, ինչքան կյանքը Չախափնյակում բնական հունի մեջ էր մտնում, այնքան իր հետ բերում էր հասարակական այնպիսի հարաբերություն-

ներ, որ գոյություն ունեին բոլոր հարևան երկրներում և որտեղ ընտրախալը իշխող դիրք էր զբաղեցնում:

Չավասարության նկատմամբ ընտրականության հաղթանակի ամենավառ դրսևորումը Չեթմանշչինայում ստեղծված այսպես կոչված՝ «անվանակարգային ռազմական ընկերությունն» էր («ЗНАЧКОВОГО ВІЙСЬКОВОГО ТОВАРИСТВА»): Նրա, ինչպես հիմա կասեինք՝ անվանակարգային ցուցակներում կոզակական ավագանու ընտանիքների հասուն տղամարդկանց անուններն էին, որոնք դեռևս ոչ մի պաշտոն չէին զբաղեցրել, բայց տեղեր ի հայտ գալու դեպքում կարող էին հավակնել այս կամ այն «դեկավար» պաշտոնի: 1760-ական թվականներին «ցուցակային» ստորակարգությունն արդեն բավականին բարդ էր և ներառում էր 1300



Չախափնյա Ուկրաինայի քաղաքաբնակները. շլախտուհի և կոզակ գնդապետ - XVIII դարավերջ

անուն, չհաշված այն 800 անձանց, ովքեր արդեն պաշտոններ էին զբաղեցնում: Այսպիսով՝ դժվար չէ հաշվարկել, որ XVIII դարի կեսերին Չեթմանշչինայում միլիոնանոց արական բնակչության միայն 2100 հասուն տղամարդիկ էին կազմում «հասարակության սերուցքը»: Այդ թիվը մի քանի անգամ աճեց, երբ 1785 թ.-ին կայսերական կառավարությունը որոշեց ռուս ազնվականությանը հավասար իրավունքներ շնորհել ուկրաինական ազնվականությանը: Սանկտ-Պետերբուրգում այնքան էլ զուլիս չէին հանում հեթմանական անվանակարգային ցուցակների մանրամասնություններից, այնպես որ հազարավոր ուկրաինացի մանր ժառանգողներ ու հարուստ կոզակներ առանց մեծ դժվարությունների կարողացան, շատերը՝ կեղծ փաստաթղթերով, ազնվականի կարգավիճակ ձեռք գցել:

Ազնվականի տիտղոսն իրավունք էր տալիս «հավերժ» ժառանգական օգտագործման համար հսկայական հողային տարածքներ ստանալ, որ հեթմաններն ու ցարերը աջ ու ձախ բաժանում էին իրենց բազմանդամ և նվիրյալ ավագանուն: Վատագույն դեպքում՝ սպասելով «նվիրածին», կարելի էր բավարարվել «զոդացածով», այսինքն՝ պարզապես սեփականել այն հասարակական, պետական հողերը, որոնք կառավարելու համար նշանակված էին ի



պաշտոններ... Այսպես թե այնպես, արդեն 1735 թ.-ին Հեթմանշինայի բոլոր վարելահողերի 35 %-ը դարձավ նոր ընտրախաղի մասնավոր սեփականությունը, իսկ ծառայությունը հնարավորություն էր տալիս ամբողջովին վերահսկել (եթե չասենք՝ օգտագործել սեփական նպատակների համար) և 11 %-ը: Այսպիսով, *երկրամասի 1 %-ից պակաս բնակիչները տիրում էին ամբողջ հողի գրեթե կեսին:*

Ինչպես եվրոպայում, այնպես էլ այստեղ, *հարստությունը ընտրախաղի մեջ հավասարաչափ չէր բաշխված:* Որոշ ընտանիքներ, հատկապես նրանք, որոնց անդամները հեթմաններ, գեղապետներ կամ գլխավոր ավագանու անդամներ էին դարձել, իրենց ազդեցության ու կապերի շնորհիվ հսկայական լատիֆունդիաներ էին ստանում: Օրինակ՝ Մագեպան ուներ 19654 կալվածք, Սկորոպադսկին՝ 18882, Ապոստոլը՝ 9103: Սակայն, ավագանու միջին ներկայացուցիչը բավական միջին չափի էլ ունեցվածքի տեր էր, նույնիսկ՝ ռուս միջին կալվածատիրոջ հետ համեմատած: Ուկրաինացի ազնվականի կալվածքը, որ սովորաբար միակն էր՝ ներգրավում էր 30 գյուղացու, իսկ ռուս ազնվականինը՝ միջին հաշվով երեք անգամ ավելի էր: Այս թվերը վկայում են, որ *Հեթմանշինայում կալվածատերերն ավելի շատ էին, քան Ռուսաստանում, իսկ ճորտ գյուղացիները՝ ավելի քիչ:*

Եվ այս բոլոր բազմաթիվ կալվածատերերը, նախկին ավագանին, որ հիմա գերադասում էր իրեն շլախտա կոչել, խոշոր թե մանր, հարուստ թե աղքատ՝ զագանաբար շահագործում էին և գյուղացիությանը, և՛ կոզակներին: *Նոր շլախտան գյուղացիությունից պահանջում էր այն, ինչ որ հինը՝ ձնագնդի պես աճող բահրա, ուժասպառ անող կոռ, սպասավորի աշխատանք, իսկ աղքատացած բազմաթիվ կոզակներից գնում կամ ուժով խլում էր հողը՝ ձգտելով նրա վրա էլ դնել նույն պարտավորությունները, ինչ որ գյուղացիների:*

Ավագանու և հասարակ ժողովրդի միջև անհաշտ հակասությունը (անտագոնիզմ) հղի էր հեռուն գնացող քաղաքական հետևանքներով, քանի որ ցարական կառավարությանը հնարավորություն էր տալիս ուկրաինացիներին հանել իրար դեմ: Դեռևս XVII դարում Մոսկվան ակտիվորեն աստարում էր ուկրաինացիների գանգվածային ելույթները ավագանու դեմ, երբ ավագանին ցարերի իշխանությունից հրաժարվելու փորձեր էր ձեռնարկում: Փոխարենը, XVIII դարում, երբ սանձել էր ավագանու անջատողական պոռթկումները, ցարերը օգնում էին ավագանուն՝ շահագործելու գյուղացիությանը, և այդ միապետական «օգնությունը» աստիճանաբար կենսական կարևոր անհրաժեշտություն էր դառնում ուկրաինացի կալվածատիրոջ համար: Եվ չնայած նրանցից ոմանք առաջվա պես տենչում էին Հեթմանշինայի «սովորույթներն» ու «ազատությունները», բայց կյանքն ստիպում էր նրանց ցուցադրել հավատարմություն ռուսական ինքնակալներին:

**1785 թ.-ի «Ազնվականներին շնորհված արտոնությունների հրովարտակը», որտեղ եկատերինա երկրորդը ուկրաինական ընտրախաղի բոլոր իրավունքներով հավասարեցրեց ռուսական ազնվականությանը, առավել ամրապնդեց նոր շլախտայի կայսերամետ կողմնորոշումը:** Այդուհետ ցանկացած մանր շլախտիչ հզորացող կայսրությունում կարող էր գլխապետույտ հաջողությունների հասնել՝ նրա նվաճած հսկայական տարածքների վրա: Համեմատաբար կիրթ, վարչարարական փորձ ունեցող ուկրաինացի ազնվականները բարձր պաշտոնների հասան ոչ միայն նախկին Հեթմանշինայի կայսերական վարչակազմում, այլև՝ Ղրիմում, Աջափնյակում, հեռավոր Վրաստանում, մի խոսքով՝ Ռուսական կայսրության նոր նվաճած բոլոր տարածքներում:

XVIII դարի վերջին ուկրաինացիներն արդեն մի շարք կառավարական բարձր պաշտոններ էին զբաղեցնում նաև Սանկտ-Պետերբուրգում: Դեռ 1770-1780-ական թվականներին Բեզբորոդկոների, Ջավադովսկիների, Կոչուբեյների և Տրոշինսկիների գերդաստանները կայսրությանը նախարարներ և նույնիսկ կանցլերներ էին տալիս, որոնք էլ օգնում էին իրենց շատ հայրենակիցներին՝ մայրաքաղաքում բարձր պաշտոններ զբաղեցնելու գործում: *Կայսերական ծառայությունը բազմաթիվ արտոնություններ ու անհատական հնարավորություններ էր ընձեռում, և ի միջի այլոց, նաև դրանով է բացատրվում, թե ինչու Հեթմանշինայի վերացումը այդպիսի թույլ դիմադրության հանդիպեց ուկրաինական վերնախաղի կողմից: Ծառայության մեջ առաջ էր գնում նա, ով ժամանակակից կրթություն էր ստանում և շփվում էր «կայսերական» մշակույթի հետ:* Այնպես որ, նախկին ավագները կոզակական ճոխ համազգեստը ստիպված փոխարինեցին եվրոպական կամզոլներով ու ֆրակներով, մայրենի ուկրաիներենը՝ ռուսերենով ու ֆրանսերենով: Եվ միայն ամենամուղղելի ռոմանտիկներն էին ողբում Հեթմանշինայի կորուստը՝ կարոտաբաղձ հիշելով փառքը կոզակական:

### Կոզակության անկումը

1648 թ.-ի ապստամբությունից հետո կոզակությունը մեծ արտոնություններից էր օգտվում՝ զինվորական ծառայության համար հողեր ստանալով և հարկերից ազատվելով: Կոզակներին ինքնավարություն էր տրված, կարող էին զբաղվել առևտրով և օդի թորել՝ արտոնություն, որ նախկինում բացարձակապես շլախտան ուներ: Այսպիսով, եթե ունեցվածքի առումով կոզակներից շատերը գյուղացիներից չէին տարբերվում, ապա իրավունքներ ունեին մտավորապես այնքան, ինչքան նախկինում ուներ իրենց իսկ ջանքերով վճարված լեհական շլախտան: *Մի բանով էին միայն տարբերվում՝ իրավունք չունեին գյուղացուն ստիպելու, որ իրենց համար աշխատի.* այդ իրավունքից առաջվա պես օգտվում էին միայն կալվածա-



Չախափնյա Ուկրաինայի գյուղացիները - XVIII դարավերջ

տերերը: Սակայն, չնայած այդ բոլոր արտոնություններին, XVII դարի վերջից շարքային կոզակության վիճակը գնալով ավելի էր վատանում: Կոզակական խորհուրդներ վաղուց արդեն էին գումարվում, իսկ ավագանին համարվում էր միայն ընտրովի, իրականում գնալով մեծացնում էր իր իշխանությունը շարքային հասարակ կոզակների վրա: Դրան գումարվում էին նաև տնտեսական խնդիրները: Եվ ինչպես կարող էին նման խնդիրներ չառաջանալ, երբ կոզակը և զինվոր էր, և՛ մաճկալ: Եվ եթե մինչև 1648 թ.-ը նման երկվությունը կոզակի համար մեծ բան չէր (պատերազմները կարճ էին տևում, ռազմավարը՝ շատ էր, լեհական թագավորներն էլ շոայլորեն վճարում էին «վերադիր ծախսերը»), ապա հիմա՝ ցարերի օրոք, կարող էիր միամիտ տեղը կորչել 20 տարի տևող Դյուսիսային պատերազմում, կամ էլ՝ ճահիճներում ու ջրանցքների վրա աշխատանքներում: Բացի այդ՝ *երկար ու հալումաշ անող պատերազմ մեկնելու համար կոզակը պետք է իր հաշվին հանդերձավորվեր: Երբ չկար՝ պարտք էր անում ու հանդերձավորվում: Իսկ հետո պարտատեր-ավագները պարտքի դիմաց կոզակի հողն էին ձեռքից առնում, և ապրիր՝ ոնց ուզում ես, ամենից հաճախ՝ քո իսկ սեփական հողի վրա որպես վարձակալ՝ կալվածատեր-ավագի համար հասարակ գյուղացու պես բատրա-*



կություն անելով... Ասում են. «Չամբերի, կոզակ, օտաման կղառնաս», բայց հասարակ կոզակի համար օտաման դառնալը գնալով դժվարանում էր, ճիշտն ասած՝ արդեն անհնարին էր: Կոզակներն էլ արդեն նման պայմաններին չէին դիմանում, գնալով ավելի ու ավելի էին քչանում. եթե 1650 թ.-ին կոզակները 50 հազ. էին, ապա 1669 թ.-ին՝ 30 հազ., իսկ 1730 թ.-ին մնացել էին միայն 20 հազ.:

Այստեղ արդեն՝ կոզակական զորքի թվաքանակի նվազումից անհանգստացան ցարերը: Որպեսզի որևէ կերպ պահպանի կոզակությունը, ցարական կառավարությունը 1723 թ.-ի, և ապա՝ 1728 թ.-ի հրամանագրերով արգելեց կոզակական հողերի վաճառքը, նախընտրելով պայքարել հետևանքների դեմ, քան թե վերացնել պատճառները: Վերջապես, Չեթմանշչինայի տեղական իշխանությունները փորձեցին խորքային բարեփոխումներ անցկացնել և 1735 թ.-ին կոզակներին բաժանեցին երկու կարգի. նրանք, ովքեր հարուստ էին (ուրեմն՝ ավելի մարտունակ), որ կոչվում էին «ընտրովի», առաջվա պես պետք է կռվեին, իսկ նրանք, որ շատ աղքատ էին ու չէին կարող պատերազմի հանդերձանք գնել՝ «օգնականները» («помощники»), պարտավոր էին, քանի դեռ «ընտրովի»-ները կռվում էին, նրանց ապահովել պարենով, կատարել նրանց հանձնարարությունները և նույնիսկ նրանց հողը մշակել: Բացի այդ, «օգնականը», ի տարբերություն «ընտրովի»-ների, ենթակա էր հարկման (ճիշտ է, այդ հարկը գյուղացու հարկից կրկնակի քիչ էր): Այդպես աղքատ կոզակները փաստորեն դարձան հարուստների ու ավագանու ծառաները:

Այս բարեփոխումներով հանդերձ, կոզակության հիմնական մասի վիճակը շարունակում էր վատթարանալ: Չնայած 1764 թ.-ի մատյաններում նշված էին 175 հազ. «ընտրովի» կոզակ (և 198 հազ. էլ՝ «օգնական»), իրականում մարտունակ վիճակում կար ընդամենը 10 հազ. կոզակ: Գնալով նվազում էր պարտքերից ազատ կոզակական տնտեսությունների թիվը: XVIII դարավերջին աղքատ կոզակների մեծ մասը փաստորեն վերածվեց պետական գյուղացիության, իսկ նրանց նախկին բոլոր ազատություններն ու իրավունքները սեփականեցին մի խումբ հարուստներն ու ավագանին, որոնք էլ կերպափոխվեցին կալվածատեր-ազնվականության: Տնտեսական ծանր բեռի տակ կթած, շահագործվելով իր իսկ նախկին ավագանու կողմից, կորցրած իր մարտական հմտությունները, ինչպես նաև, հարավում ցամաքային սահմանի վերանալու պատճառով՝ իր ռազմավարական նշանակությունը, կոզակությունը Ուկրաինայում դադարեց գոյություն ունենալուց:

### Գյուղացիության կրկնական ճորտացումը

Նկարագրվող ժամանակաշրջանում Արևելյան Եվրոպայում չճորտացված գյուղացին հազվադեպ երևույթ էր: Նման գյուղացիների նշանակալից մասը, որ հրաշքով էր ազատ մնացել, ապրում էր ուկրաինական Ձախափնյակում, սակայն նրանց վիճակը գնալով վատթարանում էր:

Գյուղացիական ազատությունների բարձրակետը 1648 թ.-ի ապստամբությունն էր, չնայած հենց Բոգդան Խմելնիցկին ինքը թույլատրեց, որ եկեղեցին վանքապատկան հողերում գյուղացիներից հողատուրք վերցնի՝ դրանով իսկ հին կարգերը վերադարձնելու առաջին քայլն անելով: Բայց իսկական արհավիրքը վրա հասավ XVIII դարում, երբ բոլոր ազատ, ինքնակառավարվող «ռազմական բնակավայրերը»՝ Չեթմանշչինայի համայնքային հողային ֆոնդից աստիճանաբար անցան ավագանու անդամ մասնավոր հողատերերի ձեռքը:

Սկզբում նոր կալվածատերերը համեստ վարձավճար էին հավաքում գյուղացիներից, կամ այնպիսի թեթև աշխատանքներ էին պարտավորեցնում, ինչպես վառելափայտի փոխադրումն էր կամ խոտի մթերումը: Մազեպայի ժամանակ աշխատապարհակն հասավ մինչև շաբաթական 2 օրվա. իհարկե, ավելի վատ է քան լրիվ ազատությունը, բայց ավելի լավ է, քան 4-6-օրյա կոռը, որ գործում էր Լեհաստանում և Ռուսաստանում: Սակայն, ընդամենը մի սերունդ հետո Ձախափնյակում կոռի միջին տևողությունը հասավ շաբաթ մինչև 3, իսկ որոշ տեղերում՝ նաև 4-5 օրվա: Բացի այդ՝ պատերազմների ժամանակ գյուղացիները պարտավոր էին կայսերական զորքին ապահովել պարենով ու օթևանով, ճանապարհները պահել կարգին վիճակում, կամուրջներ կառուցել և այլ օժանդակ աշխատանքներ կատարել: Իսկ երբ ուկրաինացի բազմաչարչար գյուղացիներն օգնության աղերս էին հղում համառուսական միապետներին, կարեկցանքի չէին արժանանում, քանի որ գյուղացիների վիճակն հենց Ռուսաստանում շատ ավելի վատ էր, և այն ամենը, ինչ կարող էին անել կայսրության ղեկավարները, դա՛ բոլոր ճորտերի «իրավունքների հավասարեցումն» էր, իհարկե՝ ոչ թե Ռուսաստանում ճորտերի վիճակը բարելավելով, այլ Ուկրաինայում նրանց ավելի շատ շահագործելով:

Չամենայն դեպս, քանի դեռ գյուղացին իրավունք ուներ տեղից-տեղ փոխադրվելու, նա կարող էր գնալ ավելի «բարի» կալվածատիրոջ մոտ, այլ գյուղ տեղափոխվել, կամ վատագույն դեպքում՝ գնալ ուր աչքն է կտրում՝ լայնարձակ տափաստան... Բայց ավագանին, կայսրության աջակցությամբ, հետզհետե սահմանափակում էր գյուղացիների տեղափոխվելու իրավունքը: 1727 թ.-ի օրենքով՝ կալվածատիրոջից հեռացող գյուղացին կորցնում էր նախկին տեղում իրեն պատկանող ողջ գույքի նկատմամբ իր իրավունքը: 1760 թ.-ից սկսած՝ տիրոջից հեռանալ ցանկացող գյուղացուց պահանջվում էր նախապես իր իսկ տիրոջից գրավոր համաձայնություն ձեռք բերել:

Քանի որ իրականում տիրոջից հեռանալու օրինական ճանապարհները փակվում էին, իր վիճակից դժգոհ գյուղացուն մի ճանապարհ էր մնում՝ անօրինական փախուստ: Չեթմանշչինայից հազարավոր փախստականների նախընտրելի վայրը դարձավ զապորոժյան տափաստանը, ինչը մի ավելորդ անգամ առիթ տվեց եկատերինա երկրորդին՝ իրականացնելու Սիչը վերացնելու իր մտահղացումը: Վերջապես, 1783 թ.-ին, կայսրուհին վերջակետ դրեց գյուղացիության կրկնական ճորտացման գործընթացին. այսուհետև ցանկացած իրավիճակում գյուղացուն արգելվում էր հեռանալ կալվածատիրոջից: Այսպիսով, ուկրաինացի հողագործը, որ 1648 թ.-ին իր իսկ արյան գնով էր նվաճել իր «ազատությունը», դրանից կարողացավ օգտվել ընդամենը 135 տարի...:

### Քաղաքների և քաղաքացիների վիճակը

Իր ընդգծված գյուղական կացութաձևով հողագործական Չեթմանշչինայում քաղաքացին բացարձակ իրավագուրկ էր: Կոզակական վարչակազմը (բացառությամբ Մազեպայի և Ապոստոլի) լավագույն դեպքում անտեսում էր Չեթմանշչինայում նման հասարակական դասի գոյությունը, ծայրահեղ դեպքում՝ բացահայտորեն սահմանափակում էր իրավունքները: Չասենք արդեն այն մասին, որ քաղաքացին իր քաղաքից դուրս իրավունք չուներ հավակնելու վարչական պաշտոնի, իսկ քաղաքային ինքնավարությունը ոչ մի վարչական և դատավարական իրավունք չուներ քաղաքում բնակվող ավագանու, կոզակության ու գյուղացիության բազմաթիվ ներկայացուցիչների վրա: Բոլոր նրանք ենթարկվում էին միայն կոզակական իշխանություններին: Ավելին՝ շատ դեպքերում քաղաքաբնակների մեծ մասը հենց կոզակական կամ գյուղացիական դասերից էլաձմերն էին, որ չէին ենթարկվում քաղաքի կարգերին ու օրենքներին: Իսկ երբեմն էլ ավագանին ընդհանրապես վերացնում էր քաղաքների ինքնավարությունը՝ հատկապես փոքր և թույլ քաղաքների, վերցնելով իր անմիջական իրավասության տակ: Արդյունքում, 60 տարվա ընթացքում՝ 1723-1783 թ.թ., Չեթմանշչինայում քաղաքների թիվը նվազեց՝ 200-ից հասնելով 122-ի:

Քաղաքացիների իրավազրկությունը բերում էր տնտեսապես անշահավետ իրավիճակի: Կոզակներն ազատված էին բոլոր տեսակի հարկերից և ազատ առևտուր էին անում քաղաքներում՝ ոչ մի կոպեկ չվճարելով քաղաքային գանձատանը: Միևնույն ժամանակ՝ քաղաքը պահելու ամբողջ հոգսը քաղաքացիների ուսերին էր ծանրացած և նրանք իրենց վաճառած ապրանքի համար մեծ հարկեր էին վճարում: Այդ պատճառով, իրենց քաղաքներում նրանք ավելի քիչ խանութներ ու կրպակներ ունեին, քան կոզակները, ռուսական կայսրի ծառայողներն ու նույնիսկ վանականները: Նման պայմաններում Ձախափնյակի քաղաքներից շատերն ընդամենը 3-5 հազ. բնակիչ ունեին (տես՝ աղյ. 2-ը):

Աղյուսակ 2  
Ձախափնյա Ուկրաինայի սոցիալական կառուցվածքը (1795 թ.)

Սոցիալական կարգավիճակը	Քանակը (հազ. մարդ)	%-ը՝ բնակչության ընդհանուր թվի նկատմամբ
Շյախտա	36	1,6
Չոգևորականություն	15	0,7
Քաղաքացիներ	92	4,0
Կոզակներ	920	40,0
Գյուղացիներ	1240	53,7
Ընդամենը	2303	100



Սակայն համընդհանուր լծացման պայմաններում կային նաև բարեկեցության օազիսներ: Կիևը, օրինակ, այդ ժամանակներում էլ չէր կորցրել իր նշանակությունը որպես վարչական, ռազմական, առևտրական և մշակութային կենտրոն, ինչի շնորհիվ նրա բնակչությունը, որ 1723 թ.-ին կազմում էր 11 հազ. մարդ, 1780-ականներին արդեն հասել էր գրեթե 43 հազ.-ի: Ծաղկում էին ապրում նաև Ուկրաինայի հյուսիսում՝ Ռուսաստանի առևտրական կենտրոններին մոտ գտնվող Ստարոդուբ, Նեժին և այլ քաղաքները: Այդ քաղաքներում զարգացող տնտեսական գործունեության վերաբերյալ պատկերացում կազմելուն կօգնեն Նեժինի վիճակագրական տվյալները. 1786 թ.-ին Նեժինում կային 387 խանութ, 6 սրճարան, 29 դարբնոց, 73 զինետուն («швейц») 124 խորտկարան (кормы), աղյուսի 8 արտադրամաս, շաքարի 2 գործարան և 15 հողմաղաց:

Ընդհանուր առմամբ, սակայն, ամբողջ XVIII դարի ընթացքում ուկրաինական քաղաքների տնտեսական զարգացումը դանդաղ էր ընթանում: Փոխարենը՝ հարավի նախկինում անբնակ տափաստաններում տնտեսական բում էր սկսվում:


## Հարավի հայտնաբերումը

Արևելյան սլավոնների հարատև տեղաշարժը դեպի հարավ՝ դեպի Մերձսևծովյան սևահողային հարուստ շրջանները, Ուկրաինայի պատմության մշտական գործոնն էր: Եվ ահա, XVIII դարավերջին, հիմնականում կայսերական կառավարության ջանքերի շնորհիվ, նպատակը մեկընդմիջտ իրականություն դարձավ: Այսուհետև Ուկրաինայի հարավային երրորդ մասը հասանելի դարձավ տնտեսական զարգացման համար: Նման հսկայական հողատարածքների յուրացումը կարելի է համեմատել միայն ամերիկյան Արևմուտքի գաղութաբնակեցման հետ: **Եվ հարավի յուրացման այս գործընթացում ուկրաինական հասարակության շահերն ու ռուսական կայսերական զավթատենչ նպատակները լիովին համընկան:**

Մերձսևծովյան շրջանների գաղութաբնակեցումն սկսվել էր դեռևս մինչև Սիչի ավերումն ու Ղրիմի խանության նվաճումը: Ավատատիրական ճորտացման անտանելի պայմանների հետևանքով Հեթմանշինայից ու Լեհաստանին ենթակա Աջափնյակից փախստական գյուղացիների թիվը գնալով ավելանում էր, և եթե 1740 թ.-ին գապորոժյան տարածքներում արական սեռի բնակչությունը կազմում էր 11 հազ. մարդ, ապա 1775 թ.-ին այն աճեց գրեթե տասն անգամ և արդեն անցնում էր 100 հազ.-ից: Բացի այդ՝ *ցարական կառավարությունն ամեն կերպ խրախուսում էր այդ հողերի գաղութաբնակեցումը օտարերկրացիներով:* 1752 թ.-ին, անտեսելով գապորոժիների բողոքները, կոզակական հողերի արևմտյան մասը տրվեց այն մի քանի հազար սերբերին, որոնք Հաբսբուրգների կայսրությունից փախել էին կաթոլիկների հալածանքներից: Այդ գաղութը անվանեցին Նոր Մերքիա: Մեկ տարի անց, Սիչից դեպի արևելք հիմնվեց մի նոր գաղութ՝ Սլավյանոսերբիա: Եկատերինա Երկրորդի օրոք Հարավում շոայլորեն մեծ հողաբաժիններ շնորհվեց նաև գերմանացի նորաբնակներին: *Միաժամանակ, այստեղ արագորեն աճում էր ռուսական վարչական և ռազմական ներկայությունը, իսկ գապորոժիների դիմադրությունը միայն արագացրեց Սիչի կործանումը 1775 թ.-ին:* Զապորոժիներին վերաբնակեցնելուց և Ղրիմի խանությունը նվաճելուց հետո սկսվեց 1780-ական թվականների Հարավի մեծ գաղութաբնակեցումը:

Որպեսզի ազնվականներին խրախուսի բնակվելու նոր հողերում, կայսերական կառավարությունը հոգ տարավ նրանց տարատեսակ արտոնություններ շնորհելու մասին: Ազնվականները (հիմնականում՝ ռուս զինվորականներ ու պաշտոնյաներ) 4 հազ.-ական ակր հողաբաժին էին ստանում, պայմանով, որ ամեն հողաբաժնի վրա գյուղացիական 25 տնտեսություն բնակեցնեն: Բայց՝ հողերը շատ էին, իսկ գյուղացիները՝ քիչ: Եվ գյուղացիներ «որսալու» համար ազնվականները զիջումներ էին անում: Սովորական դարձած շաքաթական 4-5-օրյա կոռի փոխարեն, նոր եկող գյուղացիները՝ 160 ակր հողակտոր ստանալու դիմաց, պարտավոր էին շաքաթ միայն 2 օր աշխատել տիրոջ համար: Նոր հավաքագրվող գյուղացիների մեծ մասը Աջափնյա Ուկրաինայից էին, բայց նոր հողեր էին տեղափոխվում նաև հնահավատ ռուսներ, գերմանացիներ ու մոլդովացիներ: *Այդ ամբողջ տարածքը, չնայած բազում վերակազմավորումների ու վերանվանումների, հայտնի էր որպես Նովոռոսիա:* 1796 թ.-ին երկրամասի միայն արական սեռի բնակչության թիվը հասել էր 554 հազ.-ի, որոնց 80 %-ը կազմում էին ռուսներն ու ուկրաինացիները:

Տափաստանի յուրացումից ավելի արագ աճում էին Մերձսևծովյան քաղաքները: Հունա-





կան հին գաղթօջախների ու թուրքական ամրոցների տեղերում առաջացան Օլեքսանդրովսկը, Խերսոնը, Միկոլայևը, Օդեսան: Այդ քաղաքները բնակեցնում էին տարբեր ազգերի մարդիկ՝ ռուսներ, հույներ, հայեր, հրեաներ: *Ծաղկում էր առևտուրը, որի հիմնական ճյուղը հացահատիկն էր:* Դարեր շարունակ Ուկրաինան ցորենի հարուստ բերք էր ստանում, բայց հարմար էլք չունեցող դեպի համաշխարհային շուկա: *Վերջապես, երբ Մերձսևծովյան նավահանգիստները համաշխարհային շուկա դուրս գալու հնարավորություն ընձեռեցին, հողագործներն ու վաճառականներն անմիջապես օգտվեցին դրանից: 1778-1787 թ.թ.-ներին Նովոռոսիայի բերքատվությունը բարձրացավ 500 %-ով, իսկ Մերձսևծովյան նավահանգիստներում, և հատկապես Օդեսայում, արտաքին առևտրի ծավալը 1764-1793 թ.թ.-ներին հասավ 2200 %-ի: Հողատերերը, որոնք առաջ հացահատիկն աճեցնում էին միայն սեփական կարիքներն հոգալու համար, հիմա արտադրում էին վաճառքի համար: **Ուկրաինան դադարեց Եվրոպայի սոսկ տափաստանային սահմանամերձ երկիր լինելուց, և դարձավ մայրամաքի գլխավոր շտեմարանը:***

## Ժողովրդագրական և տարածքային վիճակագրություն

XVIII դարավերջին Եվրոպայի բնակչության թիվը կտրուկ աճեց: Ուկրաինան այդ ժամանակ 10 մլն բնակչություն ուներ, իսկ տարածքով՝ երկրորդն էր Եվրոպայում (Ռուսաստանից հետո): Սակայն սեփական պետություն չունենալով և օտարերկրյա տիրապետությունների իշխանության տակ գտնվելով, քաղաքական առումով ուկրաինացիներն աչքի չէին ընկնում (ուկրաինացիների տարաբնակեցման մասին տվյալները տես՝ աղյ. 3-ում):

Աղյուսակ 3  
Ուկրաինացիներով բնակեցված տարածքները XVIII դարավերջին

Տարածքը	Մակերեսը, հազ. քառ. կմ	Բնակչությունը, հազ. մարդ (մոտավորապես)
<b>Չեթմանչինա կամ Մալոռոսիա</b> (Ռուսական կայսրություն)	92	2300
<b>Սլոբոդյան Ուկրաինա</b> (Ռուսական կայսրություն)	70	1000
<b>Հարավային Ուկրաինա</b> (Ռուսական կայսրություն)	185	1000
<b>Աջափնյա Ուկրաինա</b> (Ռեչ Պոսպոլիտա)	170	3400
<b>Արևելյան Գալիչինա</b> (Ռեչ Պոսպոլիտա)	55	1800
<b>Անդրկարպատներ</b> (Հաբսբուրգների կայսրություն)	13	250
<b>Բուկովինա</b> (Մինչև 1772 թ. Օսմանյան կայսրություն)	5	150
<b>Ընդամենը</b>	<b>585</b>	<b>10000</b>

*Ուկրաինայի տարբեր շրջաններում բնակչության խտությունը տարբեր էր: Ամենախիտ բնակեցված շրջանը Արևելյան Գալիչինան էր (35 մարդ՝ 1 քառ. կմ-ի վրա), դրանից հետո գալիս էին՝ Չախափնյակը (25 մարդ), Աջափնյակը (20 մարդ), և վերջապես՝ Հարավային Ուկրաինայի վերջերս գավաթված տափաստանային տարածքները (5 մարդ՝ 1 քառ. կմ-ի վրա): Համեմատության համար ասենք, որ այն ժամանակ Արևմտյան Եվրոպայի բնակչության միջին խտությունը 1 քառ. կմ-ի վրա կազմում էր 50 մարդ:*

*Ուկրաինայի տարբեր շրջաններ միմյանցից տարբերվում էին նաև բնակչության էթնիկ կազմով: Այսպես, Չախափնյակում ուկրաինացիները կազմում էին բնակչության 95 %-ը,*

*Աջափնյակում՝ մոտ 90 %-ը, Արևելյան Գալիչինայում՝ մոտ 75 %-ը, Հարավային Ուկրաինայում՝ մոտ 65 %-ը: Նշանակալից չափերի էր հասնում նաև բնակչության տեղաշարժը, որ հիմնականում տեղի էր ունենում Չախափից դեպի Աջ փնյա և հատկապես՝ դեպի Հարավ:*

## Աջափնյակը Լեհաստանի իշխանության ներքո

Եթե Չախափնյակում Չեթմանչինան իր ինքնավարությունն աստիճանաբար կորցնելով հանդերձ մի դարից ավել որոշակիորեն մնում էր որպես ուկրաինական քաղաքական, մշակութային ու սոցիալ-տնտեսական կառույց, որին ղեկավարում էր իր իսկ վերնախավը, ապա ուկրաինացիների գրեթե 50 %-ը, որ Լեհաստանի իշխանության տակ էր գտնվում, այդպիսի ինքնավարության մասին կարող էր միայն երազել: Այդ ուկրաինացիների հսկայական մեծամասնությունը գյուղացիներ էին: *Նրանք չունեին ոչ իրենց վերնախավը (որն այդ ժամանակ գրեթե ամբողջովին լեհացել էր), ոչ իրենց սեփական քաղաքական հաստատությունները, և լրիվ անպաշտպան էին սոցիալ-տնտեսական դաժան ճնշման ու կրոնական խտրականության պայմաններում:* Արևմտյան Ուկրաինայի նախկինում պայծառ ջահի պես լուսավորող մշակութային օջախներն հիմա հազիվ մնալու էին: Աջափնյակին սարսափելի ճակատագիր էր բաժին ընկել: Սկզբում թվում էր, թե հատկապես այդ տարածաշրջանը՝ կղզակների օրոնը, 1648 թ.-ի ապստամբության առաջին հաղթանակների ասպարեզը, պետք է դառնա նոր կրթական հասարակարգի կորիզը: Բայց *Ավերմունքի շրջանի ամայացնող պատերազմների այն վերածեցին անբնակ անապատի:* Եվ չնայած 1667 թ.-ին Լեհաստանն օրինակաբար կրկին իրեն վերադարձրեց այդ երկրամասը (Անդուսովյան պայմանագրով), սակայն Ռեչ Պոսպոլիտան շլախտայական իր կարգերն Աջափնյակում փաստացի վերականգնեց միայն 1713 թ.-ին:

Աջափնյա Ուկրաինան կրկին բաժանելով 4 ավանդական վոյեվոդությունների՝ Վոլինի, Պոդոլյեի, Բրացլավի և Կիևյան (չնայած Կիևն արդեն Ռուսական կայսրության կազմի մեջ էր), լեհական կառավարությունն սկսեց «չեզոք» հողերի հսկայական տարածքներ վաճառել ու նվիրել մի քանի ավատատերերի ընտանիքներին: Դրանց մեջ աչքի էին ընկնում Լյուբոմիրսկիները, Պոտոցկիները, Չորտոբիյսկիները, Բրանիցկիները, Սանգուշկիներն ու Ռևուցկիները: *XVIII դարի կեսերին, մոտ 40 ավատատիրական ընտանիք տիրում էր Աջափնյակի ողջ տարածքի 80 %-ին, ընդ որում՝ շատ «նոր» կալվածատերեր «հին», այսինքն՝ 1648 թ.-ին վնդված, տերերի ուղիղ հետնորդներն էին:* Ճիշտ ինչպես մեկ դար առաջ, ավատատերերը գյուղացիներին դեպի նոր հողերն էին հրապուրում, գալթակելով՝ հողաբաժինները 15-20 տարով առանց պարիսկի նրանց տրամադրելով: Եվ կրկին՝ Գալիչինայից, Չախափնյակից, երբեմն նույնիսկ Կենտրոնական Լեհաստանից եկած գյուղացիները մեծ ոգևորությամբ ձեռնամուխ էին լինում ամայացած ու վայրիացած հողերը վերականգնելուն: Եվ կրկին կյանքն այնտեղ բնական հունի մեջ էր մտնում, և կրկին ավարտվում էր «սլոբոդայի» ժամկետը, և, ինչպես որ հեշտ էր կանխատեսել, շլախտան կրկին գյուղացուն էր մատուցում իր դաժան «չոր հաշիվը»: XVIII դարի վերջերին Ուկրաինայի հյուսիս-արևմտյան հողերի մեծ մասի վրա գյուղացիներն արդեն ճորտացված էին և շաբաթական 4-5 օր ծրի աշխատում էին կալվածատիրոջ համար: Հարավի համեմատաբար քիչ բնակեցված շրջաններում պայմանները քիչ թե շատ բարենպաստ էին, տերերն այստեղ գերադասում էին բահրան, ոչ թե կոռը:

*Եթե գյուղը բավական արագ էր վերականգնվում, ապա քաղաքների վերականգնումը դանդաղ էր ընթանում, քանի որ ավերածություններից բացի, քաղաքացու ճանապարհին կանգնած էր նրա վաղեմի թշնամին՝ շլախտան: Կրկին ամուր հիմնավորվելով իրենց ճոխ կալվածքներում, ամեն ինչով ապահովված ավատատերերը քաղաքի կարիքը համարյա չէին զգում, դեռ ավելին՝ շարունակում էին ամեն կերպ խոչընդոտել քաղաքների զարգացմանը: Նրանք հրավիրում և իրենց կողմն էին գրավում լավագույն վարպետների ու արհեստավորների, որոնք մրցակցում էին քաղաքային վարպետների հետ: Նրանք հասան այն բանին, որ քաղաքում արգելվեց զբաղվել այնպիսի շահավետ գործունեությամբ, ինչպիսին ջուլիակությունն էր, այլուրի, տնկաղի (պոտաշի) և հատկապես օղու («горілки») արտադրությունը: Ի դեպ՝ քաղաքներից շատերն էլ միայն անունով էին քաղաք, քանի որ ավատատերերի սեփականությունն էին, իսկ բնակիչների 80 %-ը շրջակա հողերը մշակող գյուղացիներն էին:*

*Բայց չնայած այդ բոլոր դժվարություններին, որոշ քաղաքներ, ինչպես՝ Լուցկն ու Դուբնոն՝ Վոլինում, Կամենեց-Պոդոլսկին ու Բարը՝ Պոդոլյեում, Բերդիչևն ու Ումանը՝ Կիևյան և Բրաց-*



լավի վոյեվոդություններում, կարողացան զգալիորեն աճել, ընդ որում՝ հիմնականում տեղական և արտաքին առևտրի շնորհիվ: Առևտուրը մեծ մասամբ իրականացնում էին իրեաները, որոնք արագորեն հարմարվում էին քաղաքային կյանքի պայմաններին: Աջափնյակն հիմնականում զբաղվում էր հացահատիկի և անասունների առևտրով: Սովորաբար, անասունը բշում ու հացահատիկը տեղափոխում էին Արևմուտք կամ բալթյան նավահանգիստներ՝ ցամաքային ճանապարհներով, սակայն XVIII դարի վերջերին լեհական ավատատերերն աստիճանաբար կողմնորոշվեցին դեպի սևծովյան նավահանգիստները:

Աջափնյակում արարվող գրեթե ողջ արժեքները կուտակվում էին լեհական «արքայիկների» սնդուկներում: Նրանց հարստության ու խելահեղության մասին առասպելներ էին պատմվում: Միայն Լյուբոմիրսկիների ընտանիքը տիրում էր 31 փոքր քաղաքների և 738 գյուղերի: Պոտոցկիների տոհմի մի ներկայացուցիչ 120 հազ. ճորտ ուներ, իսկ նրա շքախմբում մշտապես 400 շլախիչ կար: Մեծահարուստների խելահեղ վատնողության օրինակ կարող է ծառայել նրանց մի ճաշկերույթի նկարագրությունը, որի ընթացքում կերել են 60 ցլիկ, 300 հորթ, 50 ոչխար, 150 խոզ և մոտ 20 հազ. թռչուն, դրա հետ խմելով 32 000 լ հունգարական գինի՝ չհաշված դրանից ավելի մեծ քանակությամբ այլ ըմպելիքները: Եվ այս ամենը՝ ուկրաինական գյուղացիության հաշվին, առավել և՛՝ նրանց աչքի առաջ... Հավանորեն, 1648 թ.-ի ապստամբությունից շլախտան իր համար հետևություն չէր արել և դասեր չէր քաղել:

Դասեր չառնելու մյուս ակնառու օրինակն էլ այն էր, թե լեհերն ինչ փութաջանությամբ կրկին ձեռք գարկեցին Աջափնյակում ուղղափառությունը «արմատախիլ անելու» նախկին քաղաքականությանը: Հույն-կաթոլիկ հոգևոր պետերն ուղղափառ հոգևոր դասի դեմ իրենց կազմակերպած մշտական կամպանիաների ժամանակ անպատկառորեն հենվում էին լեհական բանակի ու կառավարության աջակցության վրա: Հավատի համար «մարտնչող ծառաների» նման եռանդուն գործունեության արդյունքը եղավ այն, որ 1760-ական թվականներին ամբողջ Կիևյան և Պոդոլյան վոյեվոդություններում մնացել էր մոտ 20 ուղղափառ ծխական համայնք: Զրկվելով իրենց եկեղեցիներից, ուղղափառների հավատո պատվարը մնում էին վանքերն ու մենաստանները: 1761 թ.-ին Մելիխսեդեկ Ջնաչկո-Յավորսկին, որ Ստորոնինսկո-Տրոիցկի վանքի երիտասարդ ու եռանդուն վանահայրն էր և Աջափնյակի ուղղափառների հանրաժանաչ առաջնորդը, ձեռնամուխ եղավ կաթոլիկական և հույն-կաթոլիկական ճնշման դեմ դիմադրության կազմակերպմանը: Նրա կարևորագույն քայլն այն էր, որ դիմեց եկատերինա Երկրորդին՝ Լեհաստանի ուղղափառներին օգնության ձեռք մեկնելու խնդրանքով: Աջափնյա Ուկրաինայի կրոնական խնդիրներում ուղղափառ Ռուսաստանի ներգրավումով, գործը նոր ուղղվածություն և սպառնալի երանգ ստացավ:

### Հայրամաչինա

Այդ ընթացքում կոզակությունն Աջափնյակում պաշտոնապես դադարել էր գոյություն ունեցալուց, բացառությամբ այն փոքրաթիվ կոզակների, որ ծառայության էին մտել լեհական ավատատերերի մոտ: Այդ պատճառով էլ, ի տարբերություն 1648 թ.-ի, չկար այն ուժը, որ օգներ գյուղացիությանը պայքարի ելնելու շլախտայի դեմ և գլխավորեր այդ պայքարը: Այնուամենայնիվ, չնայած տարերային, բայց լայնածավալ մի շարժում շուտով ընդգրկեց ողջ Աջափնյակը:

Այդ շարժման մասնակիցներին անվանում էին **հայրամակներ**՝ թուրքերեն բառով (ինչպես և «կոզակ» բառը), որ նշանակում է «շրջմուխիկ», «ավազակ»: Լեհերն այն սկսեցին գործածել մոտավորապես XVIII դարի սկզբներից, հասցեագրելով փախստական գյուղացիներին, որոնք քաքնվում էին խորն անտառներում և ժամանակ առ ժամանակ դուրս էին գալիս քալանելու շլախտայի կալվածքները: Եվրոպայի Նոր պատմության վաղ շրջանում հասարակությունից վտարված այդպիսի մարդիկ, որ ապրում էին հարուստներին քալանելով և հաճախ օգտվում էին ժողովրդական զանգվածների աջակցությունից, տարածված երևույթ էին: Այն վերլուծելիս, անգլիացի պատմաբան Էրիկ Գոբսոլդը գործածում է «սոցիալական քալան» տերմինը: Պատմաբանի կարծիքով, այդ, ինչպես ինքն է ասում՝ «սոցիալական ավազակները», ղեկավարվում էին սովորական ավազակային-քալանչիական բնազդներով, և, հարուստներին ունեզրկելու միջոցով՝ ճնշված հայրենակիցների վրեժը լուծելու կիսաանշահախնդիր ձգտումներով: Այդքան աղոտ ու անորոշ տեսլապաշտական երգանքներից բացի, «սոցիալական ավազակները» հստակ ընդգծված այլ գաղափարախոսություն չունեին, ինչպես որ չունեին սոցիալ-տնտեսական կառուցվածքի որևէ ծրագիր, որը երկընտրանքային լիներ գոյություն ունեցողին: «Սոցիալական քալանին» է. Գոբսոլդի տված սահմանումն ընդ-

հանուր առմամբ կիրառելի է նաև **հայրամակների** դեպքում:

**Հայրամակները, որոնք սկզբում շլախտայի թեթև գայրույթն էին միայն առաջացնում, աստիճանաբար դարձան նրա գոյության գլխավոր սպառնալիքը:** Հայրամակների թվի արագ աճի պատճառներից մեկը հանդիսացավ «սլոբոդա»-ների 15-20-ամյա ժամկետի ավարտը: Այդքան տարիներ ազատ ապրելուց հետո, գյուղացիները չէին ցանկանում մի ոչ գեղեցիկ օր՝ ճորտ արքանալ, և գերադասում էին հայրամակ դառնալ: Առավել և՛՝ լեհական թույլ բանակը մեծ խոչընդոտ չէր հայրամակների ազատ ու անպատիժ ապրելու համար: Շլախտան դժկամությամբ էր միջոցներ տրամադրում բանակ պահելու համար, այնպես որ բանակի կազմը կրճատվեց, հասնելով 18 հազ.-ի, որից միայն 4 հազ.-ն էր կցված Աջափնյակին և դա



Հայրամակները դատավճիռ են կայացնում. նկարը՝ Օ. Սլաստիոնի

յատ քիչ էր կարգուկանոն պահպանելու համար: Սակայն **հայրամակների աճող ուժին նպաստող ամենակարևոր պատճառը Զապորոժյեի հարևանությունն էր, որտեղից նրանք ստանում էին և՛ հանդերձանք, և՛ նորակոչիկներ, և ինչն ամենազլխավորն էր՝ փորձառու և հեղինակավոր առաջնորդներ:**

Հայրամակներից եկող վտանգը շլախտայի համար առավել զգալի էր դառնում պատերազմների ու խռովությունների ժամանակ: 1734 թ.-ին, երբ երկու թշնամի խմբակցություն միմյանց հոշոտում էին նոր թագավոր ընտրելու համար և կռվի մեջ ներքաշեցին նաև Ռուսաստանին, իշխան Եժի Լյուբոմիրսկու արքունական զորքի հարյուրապետ Վեռլանը բանակից փախավ և ապստամբեց կալվածատերերի դեմ: Ամենուր կեղծ լուրեր տարածելով, իբր



ռուսական կայսրուհին է անձամբ հովանավորում իրեն, Վեռլանը հայդամակներից ու գյուղացիներից կազմված 1000 հոգիանոց զորք հավաքեց և կոզակական գնդերի սնանությամբ կազմավորելով, ահաբեկում էր Բրացլավշինան, Վոլինն ու Գալիչիան, մինչև որ լեհական զորքերը ստիպեցին նրան մոլորվական տափաստանները փախչել: Ոգևորվելով Վեռլանի անպատեխությունից, հայդամակների մեջ նոր առաջնորդներ ի հայտ եկան: Այս անգամ շլախտան, որոշելով, որ սեպը սեպով են հանում, կաշառեց զապորոժցի Սավա Չալիին, որ հայդամակների պարագլուխներից մեկն էր, որպեսզի իր նախկին ընկերներին որսա: Եվ պետք է ասել, որ մի քանի տարի դա հաջողվում էր նրան, մինչև որ 1741 թ.-ի Ճննդյան տոներին զապորոժցիների ձեռքով պատվեց: 1750 թ.-ին հայդամակների խռովությունները նոր քափով բռնկվեցին: Միայն Բրացլավշինայում թալանվեց 27 քաղաք և 111 գյուղ: Եվ միայն բանակը համարելու եկած ուժերի շնորհիվ հաջողվեց հանգցնել ապստամբության այդ օջախը, որ սպառնում էր վերածվել մեծ հրդեհի:

«Սոցիալական թալանը» լայնորեն տարածվեց նաև Արևմտյան Ուկրաինայում, հատկապես Կարպատներում: Տեղական հայդամակները, որոնց «Օպրիշոկ» (ապստամբ) էին անվանում, սովորաբար 30-40 հոգիանոց խմբեր էին կազմում և հարձակվում շլախտիչների, հարուստ վաճառականների և հրեա վարձակալների վրա: «Օպրիշոկ»-ներից ամենանշանավորը Օլեկսա Դովբուշն էր, որը առասպելական Ռոբին Գոդի նման, թալանը բաժանում էր աղբառներին, ինչով հսկայական ժողովրդականություն ձեռք բերեց հուցովների՝ Կարպատյան լեռնաբնակների, միջավայրում: Այն բանից հետո, երբ 1745 թ.-ին Դովբուշն սպանվեց իր սիրուհու ամուսնու ձեռքով, նրան փոխարինելու եկան նոր պարագլուխներ՝ Վասիլ Բայուրակն ու Իվան Բոյչուկը: Վերջինս, մի շարք անհաջողություններ կրելով Գալիչիայում, փախավ Ջապորոժյան Սիչ, որտեղից փորձեց, թեկուզև անհաջող, կոզակական նոր զորայուն տանել դեպի արևմուտք: Օպրիշոկներին մեկընդմիջտ վերացնելու լեհական իշխանությունների բազմաթիվ փորձերն անհաջողության էին մատնվում: Օպրիշոկները տեսան Ռեչ Պոսպոլիտայի անկումը և շարունակեցին գործել Կարպատներում այնքան ժամանակ, մինչև որ 1772 թ.-ին այդ տարածքները միացվեցին Ավստրիական կայսրությանը:

### Կոլիվշինա

1768 թ.-ը համընդհանուր խառնաշփոթի ժամանակաշրջան էր Ռեչ Պոսպոլիտայի համար: Շլախտային չափազանց զայրացնում էր այն, որ Ռուսաստանի կայսրուհի Եկատերինա Երկրորդը մշտապես խառնվում էր Լեհաստանի ներքին գործերին: Սկզբում նա հասավ այն բանին, որ լեհական թագավոր ընտրվեց իր սիրեկանը՝ Ստանիսլավ Պոնյատովսկին: Այնուհետև ստիպեց լեհերին՝ երաշխավորել ուղղափառների կրոնական ազատությունները: Ռուսների խարդավանքներից ու բանաբուկություններից զայրացած, լեհական շլախտան 1768 թ.-ի փետրվարին ստեղծեց այսպես կոչված՝ Բարի կոնֆեդերացիան (համադաշնություն՝ շլախտայի զինված միություն, որ պայքարում էր իր դասակարգային իրավունքների և Լեհաստանի անկախության համար) և հարձակվեց լեհական հողերում տեղաբաշխված ռուսական զորքի վրա: Ռեչ Պոսպոլիտայի ուղղափառների համար տագնապալի ժամանակներ սկսվեցին: Նրանցից շատերը համոզված էին, որ իրենց չի ներվի ռուսների աջակցությունը: Մյուսներն էլ որոշեցին կանխել սպասվող բռնություններն ու առաջինը հարձակվել շլախտայի վրա:

1768 թ.-ի մայիսին, Մոտրոնինսկի վանքից դեպի հյուսիս՝ Աջափնյակի բնակեցված վայրերը շարժվեց 70 հայդամակներից բաղկացած մի զորայուն՝ Չախափնյակի զապորոժցի Սաքսիմ Չալիզնյակի գլխավորությամբ, որոնք գյուղացիներին ապստամբության էին կոչում: Նրանք ժողովրդի մեջ գրություններ էին տարածում, ուր գրված էր, որ եկել է ստրկության շրթաններից ազատվելու ժամանակը և վրեժ լուծելու այն տանջամքների, նվաստացումների ու անմարդկային ճնշումների համար, որոնց «արժանանում են» շլախտայի կողմից: Գաշված օրերում ջոկատն համարվեց գյուղացիներով ու այդ կողմերը փախած հայդամակներով: Քաղաք քաղաքի ետևից հանձնվում էին հայդամակներին՝ Ֆաստովը, Չերկասին, Կորսունը, Բոգուսլավը, Լիսյանկան: Գոնիսի սկզբին 2 հազ.-ից ավելի հայդամակներ շրջապատեցին Ումանը՝ լավ ամրացված մի քաղաք, որի պատերի ետևում պաշտպանություն էին գտել հազարավոր շլախտիչներ, կաթոլիկ և հույն-կաթոլիկ հոգևորականներ, հրեա վարձակալներ: Ումանի բախտը որոշեց ավատատեր Ստեֆան Պոտոցկու կոզակական պահակախմբի հարյուրապետ Իվան Գոնտան՝ իր ամբողջ ջոկատով անցնելով ապստամբների կողմը: Երբ քաղաքն ընկավ, սկսվեց անողոր սպանողը, որի ժամանակ դաժան կոտորածի զոհ դար-

ձան հազարավոր տղամարդիկ, կանայք ու երեխաներ:

Գոնիսի վերջերին արդեն ամբողջովին ապստամբների ձեռքում էին Կիևյան և Բրացլավյան վոյեվոդությունները, ինչպես նաև Պոդոլյեի ու Վոլինի մի մասը: Միայն լեհական ու ռուսական զորքերի ներկայությունն էր խանգարում, որ ապստամբներին միանա նաև արևմտաուկրաինական մյուս տարածքների բնակչությունը: Սակայն հենց այդ ճակատագրական պահին ռուսները դարձան ապստամբության պարտության պատճառը: Անսպասելիորեն, ռուսական զորքերի հրամանատար գեներալ Սիխայիլ Կրեչետնիկովը հրաման ստացավ կայսրուհուց՝ օգնել լեհերին ապստամբների դեմ պայքարում. Եկատերինա Երկրորդը վախեցել էր, թե ապստամբությունը կտարածվի նաև Չախափնյակում: 1768 թ.-ի հուլիսի 6-ի երեկոյան, Կրեչետնիկովն իր մոտ ճաշկերույթի է հրավիրում «բանից անտեղյակ» Չալիզնյակին, Գոնտային և հայդամակների մյուս պարագլուխներին, ձերբակալում նրանց և նրանց հետ եկած բոլոր հայդամակներին, որոնք չհասցրեցին անգամ ուշքի գալ: Գոնտային և նրա 800 հայդամակներին հանձնեցին լեհերին, որոնք Ումանի հարյուրապետին տանջելուց հետո մահապատժի ենթարկեցին: Չալիզնյակին և մնացած հայդամակներին աքսորեցին Սիբիր: Պետազայում մի քանի տարի շարունակ լեհ վոյեվոդա Յուզեֆ Ստեմպկովսկին ուկրաինացի գյուղացիներից վրեժ էր լուծում 1768 թ.-ի ապստամբության համար և Կորնյայում գտնվող իր նստավայրում հազարավոր մարդկանց տանջամահ արեց: Այսպիսի անփառունակ ավարտ ունեցավ լեհական ավատատերերի դեմ ուկրաինական գյուղացիության վերջին ընդվզումը:

## Մշակութային կյանք

Ուկրաինայի մշակույթի պատմության մեջ XVIII դարն արտասովոր շրջան էր, որ եղավ գյուղանության և արտասովոր ու վերամբարձ բարոկկո ոճով ստեղծված արվեստի սքանչելի ծաղկման վկան: Միևնույն ժամանակ՝ այնպիսի պայմաններ էին ստեղծվում, որ ուկրաինական մշակույթը զրկվում էր իր յուրօրինակ հատկանիշներից և սկսում էր հարմարվել ռուսական կայսերական ձևերին ու ոճերին:

### Եկեղեցին


Ուկրաինայում դարեր շարունակ ուղղափառ եկեղեցին էր հանդես գալիս որպես մշակութային կյանքի կենտրոն ու շարժիչ ուժ: Լեհական կաթոլիկության հետ պայքարում՝ հատկապես այն դարձավ ուկրաինական ինքնագոյության մարմնավորումը: Սակայն հիմա, բոլոր ուղղափառների, այդ թվում ուկրաինացիների, պաշտպանի դերում Ուկրաինայի պատմության մախարեմ ելավ Ռուսական կայսրությունը, և եկեղեցին, որպես ուկրաինացիների հոգևոր ապավեն, միանգամից մղվեց երկրորդ պլան: Դա տեղի ունեցավ մոտավորապես այն նույն ժամանակ, երբ ուկրաինական եկեղեցին դադարեց մի ամբողջություն լինելուց:

Ուկրաինական եկեղեցու կյանքումը կայսերական հոգևոր դասակարգի կողմից, տեղի էր ունենում Գեթմանշինայի ինքնավարության վերացման գործընթացին զուգահեռ: 1686 թ.-ին ռուսական պատրիարքության իրավասության տակ անցնելուց հետո, որոշ ժամանակ ուկրաինական եկեղեցին ծաղկում ապրեց: Նրա դարոցները լավագույնն էին կայսրությունում: Կրթական կրթություն ստացած ուկրաինացի հոգևորականներին հաճախ էին իրենց կողմը կապում ռուսները: Վերջապես՝ Սագեպայի հովանավորչության շնորհիվ, ամրապնդվեց եկեղեցու տնտեսական հիմքը: Բայց միաժամանակ տեղի էին ունենում իրադարձություններ, որոնք ոչ մի լավ բան չէին խոստանում: Արդեն 1686 թ.-ին, Չեռնիգովյան թեմը Կիևյան միտրոպոլիտի իրավասությունից միանգամից անցավ Մոսկվայի ուղղակի ենթակայության տակ: Երբ յանցած, նույնը կատարվեց նաև Պերեյասլավի թեմի հետ:

Կիևյան միտրոպոլիտի հեղինակությունը գնալով ընկավ 1690-1710 թ.թ.-ների ընթացքում, երբ ուղղափառության այնպիսի հնագույն ամրոցներ, ինչպիսիք էին՝ Լվովի, Պերեմիշլի և Լուբլի թեմերը, վերջիվերջո տեղի տալով լեհերի ճնշումներին, մեկը մյուսի ետևից դարձան ռուս-կաթոլիկական: Սակայն ամենացավոտ հարվածը ողջ ուղղափառ եկեղեցուն հասցվեց 1721 թ.-ին, երբ Պետրոս Առաջինը լուծարեց Մոսկովյան պատրիարքությունը և հիմնեց Ռուսական Սինոդը՝ բյուրոկրատական մի հաստատություն, որ կազմված էր կառավարական պաշտոնյաներից ու եկեղեցական հովվապետներից և վարում էր եկեղեցու բոլոր գործերը: Դա՛ վաստորեն, ուղղափառ եկեղեցին և՛ Ռուսաստանում, և՛ Ուկրաինայում պետության բյուրոկրատական հավելուկի վերածեց: Այս բոլոր վերափոխությունների մեջ ներգրավված էին



նաև ուկրաինացիները. եկեղեցու գործերով Պետրոս Առաքինի ամենամոտ խորհրդական **Ֆեոֆան Պրոկոպովիչը** խրախուսում էր այս ամենը, իսկ **Ստեֆան Յավորսկին**, որ կայսրության հոգևոր առաջատար մտածողներից ու գործիչներից մեկն էր, դրա դեմ էր համոզե գալիս: Հարթարշավող բյուրոկրատական կենտրոնամետության համար ուկրաինական եկեղեցու ոչ միայն ինքնավարությունը, այլև ինքնագոյությունը վերջնականապես քայքայելն ու ոչնչացնելը միայն ժամանակի խնդիր էր: **1722 թ.-ին Սինոդը Կիևի նոր միտրոպոլիտ նշանակեց Վառլամ Վոնյատովիչին, առաջին անգամ խախտելով հին ավանդույթը**, համաձայն որի՝ միտրոպոլիտ ոչ թե նշանակվում էր, այլ՝ ընտրվում էկեղեցական հոգևոր պետերի ժողո-



Եկեղեցի Չախափնյա Ուկրաինայում - XVIII դարավերջի փորագրանկար

վում: Բայց արդեն 1730 թ.-ին, այդ միտրոպոլիտին արքային հեռավոր հյուսիս, քանի որ նա համառորեն ընդդիմանում էր նորամտություններին: Ուստի հոգևոր գործիչներից շատերը, որ երկար ժամանակ կասկածանքով էին վերաբերվում ուկրաինացիներին՝ համարելով, որ նրանք «վարակված են» լատինական անհավատությամբ, հիմա արդեն հնարավորություն ստացան նրանց միջից հանել այդ «հերետիկոսական շեղումները»: Սինոդը ստիպում էր ուկրաինացիներին, ինչ որ անում են՝ եկեղեցի են կառուցում, սրբապատկերներ են նկարում, թե գրքեր են գրում, բոլորն անեն միայն **համառուսական սկզբունքով ու օրինակով**: 1786 թ.-ին եկեղեցական բոլոր հողերը հանձնվեցին պետությանը և եկեղեցին տնտեսապես ամբողջովին կախվածության մեջ ընկավ կառավարությունից: **XVIII դարավերջին Ուկրաինայի հոգևոր պետերի մեծ մասը կամ ռուսներ էին, կամ ռուսամետներ**: Վերանում էին ուկրաինական եկեղեցու դարավոր սովորույթներն ու բնորոշ գծերը, նրա առանձնահատուկ, առավել «արևմտյան» կողմնորոշումը: Այժմ այն ուղղակի դառնում էր կայսերական մշակույթի տարածման ու սփռման ևս մեկ միջոց:

## Կրթությունը

Դեքանաչիհնայում կրթության մակարդակը բարձր էր, համեմայն դեպս՝ Ռուսաստանի համեմատությամբ: Տաս գնդերից յոթից հավաքած տվյալների համաձայն՝ 1740-ական թվականներին այստեղ գործում էին 866 տարրական դպրոց, ուր երեք տարում գրել-կարդալ էին սովորեցնում: Ի դեպ՝ ուսուցման նման համակարգով Չախափնյակը խստորեն տարբերվում էր նաև Աջափնյակից, ուր դպրոցների մեծ մասը ճիզվիտների վերահսկողության տակ էր, իսկ լեհական տարրական ուսուցումը ուկրաինական գյուղացիության համար գործնականում անհասանելի էր: Այդ էր նաև պատճառներից մեկը, որ Աջափնյակը Ուկրաինայի մշակութային կյանքում աննշան դեր էր կատարում:

Միջնակարգ կրթության առումով, Չախափնյակը կարող էր պարծենալ մի քանի կոլեգիաներով, մասնավորապես՝ Չեռնիգովի, Պերեյասլավի և Խարկովի: Երկրամասում բարձրագույն կրթության հիմնական օջախը **Կիև-Մոհիլյան ակադեմիան** էր, որն իր կարգավիճակն ստացել էր դեռևս 1701 թ.-ին: Մագեպայի կողմից շռայլորեն ֆինանսավորվելով, այն դարձավ ուղղափառ աշխարհի լավագույն բարձրագույն դպրոցներից մեկը: Պոլտավայի ճակատամարտին նախորդող տասնամյակում այդտեղ տարեկան 2 հազ. ուսանող էր սովորում: Այնտեղ գիտության այնպիսի պայծառ աստղեր էին դասավանդում, ինչպես՝ **Յոսաֆաթ Կրոկովսկին**, **Ստեֆան Յավորսկին**, **Ֆեոֆան Պրոկոպովիչը**: Նրանք, ովքեր կարողանում էին հաղթահարել ակադեմիայի ուսուցման 12-ամյա խստագույն ծրագիրը, այնպիսի մեծ հարգանք էին վայելում ամբողջ կայսրությունում, որ կայսրերն անգամ հաճույքով էին երաշխավորում ակադեմիայի դասախոսներին ու շրջանավարտներին՝ հոգևոր և կառավարական բարձր պաշտոնների համար:

Սակայն ցարական կառավարության հետ Կիևյան ակադեմիայի հարաբերությունները միշտ չէ, որ բարեկամական էին: Մագեպայի հետ տեղի ունեցած պատմությունից հետո, ցարական կառավարության բռնությունների հետևանքով ուսանողների թիվը հասավ համարյա 200-ի: 1740-ականներին, երբ ակադեմիան ղեկավարում էր Ռաֆայել Չարորովսկին, այստեղ արդեն 1000-ից ավել ուսանող էր սովորում և ակադեմիան իր վերջին ծաղկման շրջանն էր ապրում: Ակադեմիայի ինչպես ծաղկման, այնպես էլ հետագա անկման պատճառները մեծ մասամբ արմատավորված էին հենց ակադեմիայում: *Սերտ կապերի մեջ լինելով եկեղեցու հետ և համալրված հոգևորականության ներկայացուցիչներով, ակադեմիան, նախկինի պես, չեչուր դնում էր հումանիտար առարկաների դասավանդման վրա, ինչպես օրինակ՝ փիլիսոփայության, աստվածաբանության, ճարտասանության, տրամաբանության և այլն: Ուսուցման մեթոդատիկ մեթոդներն հնացել էին, իսկ Արևմուտքից ներթափանցող առաջադեմ գիտական ուղղությունները դանդաղ էին ներդրվում և քիչ արդյունավետ էին: Եկեղեցական ուղղվածությունն ու ավանդապաշտությունն աստիճանաբար վանում էին երիտասարդությանը, որն արդեն ձգտում էր եվրոպական ժամանակակից կրթություն ստանալ: 1790 թ.-ին ակադեմիայի 426 ուսանողների 90 %-ը հոգևոր ոլորտի պաշտոնյաների զավակներ էին: Վերջիվերջո, այդ մշանավոր ուսումնական հաստատությունը վերածվեց սովորական հոգևոր ծեմարանի:*

Իսկ այդ ընթացքում, **առաջադեմ ժամանակակից գիտության ծարավ ուկրաինացի երիտասարդները հաճույքով ընդունվում էին ռուսական բարձրագույն հաստատություններ**, որ սկսած 1750 թ.-ից բացվում էին Ռուսաստանում, օրինակ՝ Մոսկվայի համալսարանը կամ Իմպերական ակադեմիան: Գիտակցելով, որ ուկրաինական բարձրագույն դպրոցն հնացել է, հեքման Ռոզումովսկին և ավագանին դիմեցին կայսերական կառավարությանը՝ խնդրելով բոլոր տալ իրենց Բատուրիցում համալսարան հիմնելու, բայց մերժում ստացան: Այսպիսով, XVIII դարի ընթացքում կրթության բնագավառում էլ 1800-ի փոփոխություններ տեղի ունեցան: **կայսրության առաջատար ուսումնական հաստատություններն արդեն գտնվում էին ոչ թե Ուկրաինայում, այլ՝ Ռուսաստանում:**

## Մշակութային նվաճումներ

Ստավորապես XVII դարի կեսից մինչև XVIII դարավերջը, ուկրաինացիների հոգևոր-գիտարվեստական ստեղծագործությունն այսպես թե այնպես պայմանավորված էր բարոկկո ոճի զարգացմամբ: Այդ ոճի հայտնվելը սերտորեն կապված է ցնցող իրադարձություններով հարուստ զարմանալի ժամանակշրջանի հետ, և հենց ինքն էլ օգնեց խորությամբ ըմբռնել և արտահայտել դարաշրջանի ոգին: Բավարարելով բարձր ազնվականության ճաշակը, բախկվում ընդգծում էր վեհությունն ու ճոխությունը, կյանքը ներկայացնում էր որպես իրապույտ թատերական գործողություն, իսկ ճոխ դեկորացիաներով խաղացվող տաղանդավոր



ներկայացուցն էր փոխարկվել կենդանի կյանքի. ձևը գերադասում էր բովանդակությունից, բարդությունը՝ պարզությունից, համադրումը՝ նորությունից:

Ըստ երևույթին, համադրումը գերադասելն էլ հենց առանձնապես գրավիչ դարձրեց բարոկկոն ուկրաինացիների համար, քանի որ գտնվելով արևելյան ուղղափառության և արևմտյան լատինականացված մշակույթների միջնամասում, բնականաբար մղվում էին դեպի համադրական (սինթետիկ) մտածողություն, որն էլ համադրական ոճ էր թելադրում: Բարոկկոն նոր գաղափարներ չբերեց Ուկրաինա, այն ավելի շուտ ոճին հատուկ նոր ձևեր առաջադրեց, ինչպես՝ տարիմաստությունը (պարադոքսը), հակադրությունը (կոնտրաստը), այլաբանությունը (ալեգորիան), չափազանցությունը (հիպերբոլան): Եվ այդ ձևերը կրթված ու զարգացած ընտրախավին օգնում էին դուրսընթացել մատուցել, պարզորոշ մեկնել և խորությամբ ու մանրագնիմ ուսումնասիրել հին ու մնայուն ճշմարտությունները:

Ի դեպ՝ այդ ընտրախավի ներկայացուցիչներից շատերը «ուկրաինացի» չէին, այն իմաստով, որ չէին հետաքրքրվում տեղական կամ ազգային խնդիրներով: Նրանք մտածում էին կամ համընդհանուր ուղղափառության, կամ համակայսերական չափանիշներով: XX դարում արվեստի ու մշակույթի որոշ պատմաբաններ հետին թվով այսպեսուհի այսպես կան մտավորականությանը՝ անհիմն, անպտուղ ու կյանքից կտրված լինելու համար: Բայց ինչ էլ որ լինե, բարոկկոն ուկրաինական արվեստ ու մշակույթ վերադարձրեց դիմամիզմը, շքեղության ու կատարելության ձգտումը, Արևմուտքի հետ երկխոսության հակումը: Կանցնի ոչ քիչ ժամանակ, մինչև որ Ուկրաինան կրկին կկարողանա ապրել արվեստով ու գրականությանը հարուստ եռուն կյանքով, ինչպես որ ապրում էր բարոկկոյի դարաշրջանում:

### Գրականություն և արվեստ

Բարոկկո ոճի բոլոր այդ բնորոշ հատկանիշներն արտահայտվեցին այսպես կոչված՝ «չվող թռչունների» ստեղծագործություններում: Այդպես կոչվեցին բոլոր այն ուկրաինացիները, որոնք կրթություն ստացան լեհական ու արևմտաեվրոպական համալսարաններում, վերադարձան Կիև և դասավանդում էին ակադեմիայում: Պետրոս Առաջինը բարձր էր գնահատում «եվրոպական կրթությունը», և նրանց հոգածությանն էր վստահում Ռուսաստանի եկեղեցական ու մշակութային-լուսավորչական կարևորագույն հաստատությունները: Նրանց մեջ մեծ ճանաչում ձեռք բերեցին հատկապես **Ֆեոֆան Պրոկոպովիչը, Ստեֆան Յավորսկին, Դմիտրո Տուպտալոն, Միսենո Պուլոցկին** և էլի, զուցեն ոչ այդքան հայտնի, շատ ու շատ այլ գործիչներ: Ամեն դեպքում, 1700-1762 թվականներն ընկած ժամանակում ավելի քան 70 ուկրաինացի ու բելոռուս Ռուսական կայսրության եկեղեցական բարձրակարգ պաշտոններ էին զբաղեցնում: Եվ չնայած կայսրությունում, բնականաբար, ռուսները շատ ավելի էին, բայց այդ նույն ժամանակ կարողացան նման պաշտոնների առաջադրել ընդամենը 47 հոգու:

Իրենց ասպարեզում ամենաբարձր դիրքերի հասնելով հյուսիսում, և կյանքի մեծ մասն այնտեղ անցկացնելով հանդերձ, «չվող թռչուններն» համեմայն դեպս կարողացան որոշ բան անել նաև իրենց կիևյան տարիների ընթացքում: Օրինակ՝ Պրոկոպովիչը դեռ այն ժամանակ, երբ Կիևյան ակադեմիայում բանաստեղծական արվեստ էր դասավանդում, գրեց իր նշանավոր «Վոլոդիմիր» պատմական դրաման (1705 թ.), ուր գովերգում էր Ռուսիայի մկրտությունը: Չեռաքրքիրն այն է, որ այդ հայրենասիրական ստեղծագործությունը, որտեղ Կիևն անվանվում է «երկրորդ Երուսաղեմ», Պրոկոպովիչը ծոնում է միաժամանակ Պետրոսին և Մագեպային, իսկ Կիևի նկատմամբ սերն ամենևին չխանգարեց «Վոլոդիմիրի» հեղինակին՝ դառնալու գլխավոր գաղափարախոսը պետրոսյան բարեփոխումների, որ ուղղված էին հասարակության կենտրոնամետությանն ու աշխարհականացմանը: Ստեֆան Յավորսկին, որ Կիևի ակադեմիայի ռեկտորն էր և ուկրաիններեն, լեհերեն ու լատիներեն լեզուներով գրված նրբագեղ ու պերճաշուք բանաստեղծությունների հեղինակ, 1721 թ.-ին ռուսական եկեղեցում բարձրագույն պաշտոն զբաղեցրեց: Այդեն Ռուսաստանում, նա գրեց «Մավատի քար» կրակոտ տրակտատը՝ բողոքականության դեմ:

Կիևյան ակադեմիան նաև այլ կարգի գրողներ տվեց: Դրանք ոչ քահանաներ էին, ոչ էլ ակադեմիայի դասախոսներ, այլ այն շրջանավարտներն ու թերավարտ ուսանողները, որոնք կոզակական խորունկների (ստորին սպայական կոչում) ու գրագիրների կարիերան գերադասում էին հոգևոր կածաններից: Իրենց պրոֆեսորներից որոշ բաներ սովորելով, նրանք սակայն չվարակվեցին դեպի աստվածաբանական վեճերը, գովասանական ճառերն ու գունագեղ ներբողներն ունեցած նրանց սիրով: Ամենամոտ պատմության ու իրենց ժամանակի խնդիրներով մտահոգ, նրանք դառնում էին կոզակության տարեգիրներ:

Ամենահետաքրքիր տարեգրության հեղինակը **Սամիլո Վելիչկոն** էր: 1720 թ.-ին ավարտած նրա քառահատոր **«Ասը լեհերի դեմ Զինովի Բոգդան համելնիցկու կոզակական պատերազմի մասին»** տարեգրությունն ընդգրկում է 1648-1700 թ.թ.-ների իրադարձությունները: Իր աշխատության առաջաբանում այդ գիտուն կոզակն հարց է տալիս. «Մարմնականից զատ ի՞նչն է առավել հաճելի ու բաղձալի մարդու բնասխնդիր բնությանը, սիրելի իմ ընթերցող, եթե ոչ գիրք կարդալն ու նախնայաց վարքին ու գործոց հասու լինելը»: Այնուհետև Վելիչկոն բացատրում է, թե ո՞նց եղավ, որ Ուկրաինայի ավերմունքի տարիներն իր մեջ հետաքրքրություն արթնացրեցին իր երկրի անցյալի համրեպ. «Եվ երբ բազում բնակավայրերում դեգերելով, սեփական աչքերով տեսա մարդկային անհամար չոր ու անթաղ ոսկորներ՝ լոկ երկնքով ծածկված, ինքս ինձ հարց տվեցի, թե ովքե՞ր են եղել այս տարաբախտները: Նայեցի, նայեցի մեռելոց անթաղ ու անտեր մասուցներին, սիրտս ու հոգիս անհուն ցավով լցվեցավ. այս բարիքներով լեցուն դրախտային երկիր Ուկրաինա-Մալոռոսիան Աստված ինչպե՞ս ամայության մատնեց, իսկ բնակիչներին՝ մեր փառավոր նախնայաց, անհիշատակ կորստյան: Եվ երբ սկսեցի տարեց մարդկանց մանրամասն հարցեր տալ, թե ո՞նց է այդպես ստացվել, ի՞նչն է պատճառը և ո՞վ է մեղավոր, ամեն ոք մի բան էր ասում, և նրանց պատմածներից այդպես էլ ի գորու չեղա հասու լինել, թե ի՞նչ պատճառով է իմ հայրենյաց երկիրն ամայացել ու ավերակվել»:»

Միևնույն ժամրի մի այլ նշանավոր գործ ստեղծեց **Յրիհորի Յրաբյանկոն**: Նրա տարեգրությունը կոչվում էր **«Չապորոժյան հեթման Բոգդան համելնիցկու դաժան և արյունահեղ պատերազմը լեհերի դեմ»**, և ինչպես հեղինակն է ուղղակի նշում՝ նպատակ ունի ընթերցողին ապացուցել, որ ուկրաինացիները ոչնչով չեն զիջում մյուս ազգերին: Վերլուծության ենթարկելով ոչ վաղ անցյալը, Յրաբյանկոն, ինչպես և Վելիչկոն, վճռականորեն պաշտպանում էր Ուկրաինայում սոցիալ-տնտեսական և քաղաքական իշխանությունը պահպանելու ավագանու բուռն ու համառ ձգտումները:

**Դեթմանչիհան աստիճանաբար վերացնելու գործընթացը նույնպես իր արձագանքը գտավ գրականության մեջ**: 1762 թ.-ին դիվանատան թարգմանիչ Սեմեն Դիվովիչը մի երկառաշունչ բանավիճային պոեմ գրեց՝ «Վելիկոռոսիայի զրույցը Մալոռոսիայի հետ» խորագրով, որտեղ պաշտպանում էր Ուկրաինայի ինքնավարության իրավունքը: Այդ ոգով էր ստեղծագործում նաև **Յրիհորի Պուլեսիկան**: Կոզակական վերնախավի հոգեբանության վերաբերյալ վառ պատկերացում են տալիս Միլոլիս հասնենկոյի, Յակով Մարկովիչի և Պիլիպ Օնոլիի օրագրերն ու զրառումները:

**XVIII դարում բարձր մակարդակի հասավ նաև ուկրաինական արվեստը**: Ուկրաինացիները, որոնց մեծ մասն աշխատում էր Ռուսաստանում, առանձնակի հաջողությունների հասան երաժշտության մեջ: **Երգահաններ Դմիտրո Բորտնյանսկին, Մաքսիմ Բերեզովսկին և Արտեմ Վեդելը** ռուս-ուկրաինական եկեղեցական երգչախմբային երգի հիմնադիրները եղան: Իրենց ստեղծագործությունների ոգեշնչման աղբյուրն ուկրաինական ժողովրդական մեղեդիներն էին: Մեծ ճանաչման արժանացան զեղանկարիչ **Դմիտրո Լևիցկին** և ճարտարապետ **Իվան Յրիհորովիչ-Բարսկին**: Դեռևս դարասկզբին, հեթման Մագեպայի առատածեռության շնորհիվ, ամբողջ Ուկրաինայով մեկ բազմաթիվ եկեղեցիներ կառուցվեցին այսպես կոչված՝ «կոզակական բարոկկո» ոճով, որ առավել զուսպ, միևնույն ժամանակ՝ ավելի պերճաշուք էին, քան այն ժամանակվա բարոկկո ոճի արևմտաեվրոպական ճարտարապետության նմուշներն էին: Ուշ բարոկկո ոճի զուլխործոցներ Ուկրաինայում ստեղծվեցին XVIII դարի երկրորդ կեսին, որոնցից էին Կիև-Պեչերյան մայրավանքի Ուսպենսկի տաճարը, Կիևի Անդրիևյան եկեղեցին և Լվովի սբ. Յուրի տաճարը: Միաժամանակ, ամենուրեք տարածվում էր ժողովրդական թատրոնը՝ **վերտեպը (տիկնիկարկղ)**, իսկ տոն օրերին, եկեղեցուց դուրս գալիս, մարդիկ կանգ էին առնում հրապարակներում՝ ունկնդրելու թափառական **կորզարներին (ուկրաինական աշուղ, զուսան)** ու **բանդուրիստներին (փանդիռահարներին)**:

### Յրիհորի Սկովորոդա (1722-1794)

Անկասկած, այդ ժամանակաշրջանի ամենատաղանդավոր և յուրօրինակ ուկրաինացի մտավորականը **Յրիհորի Սկովորոդան** էր: Չախափնյակցի աղքատ կոզակի որդի Սկովորոդան 12 տարեկանում ընդունվում է Կիև-Մոհիլյան ակադեմիա: Նա երկար և տարատեսակ ուսուցում ստացավ՝ մեկ ակադեմիայում, մեկ Արևմուտքում, և ինչպես առասպելն է վկայում՝

<sup>5</sup> Իմ ուկրաիներենից թարգմանությունը՝ Ռայիսա Դարագոլայանի:



դասախոսություններն ընդմիջում էր Կենտրոնական Եվրոպայով մեկ ճանապարհորդելով՝ «որպեսզի մարդկանց լավ ճանաչի»: Տիրապետելով լատիներեն, հին հունարեն, լեհերեն, գերմաներեն և հին սլավոնական լեզուներին, նա գերազանց գիտեր հին ու նոր փիլիսոփաների աշխատությունները: 1751-1769 թ.թ.-ներին Սկովորոդան ընդմիջումներով բարոյագիտություն է դասավանդում Պերեյասլավի և Խարկովի կոլեգիաներում, սակայն իր արտասովոր փիլիսոփայական հայացքների ու մանկավարժական մեթոդների պատճառով արժանանում է հոգևոր հայրերի թշնամությանն ու հալածանքներին: Ստիպված լինելով թողնել մանկավարժությունը, նա թափառական փիլիսոփայի կյանք է վարում:

Սկովորոդային «ուկրաինական Սոկրատես» են անվանում: Ուղքով անցնելով հայրենի Ձախափնյակն ու Սլոբոդյան Ուկրաինան, հանդիպելով ամենատարբեր մարդկանց, նա բոլորի հետ զրույցի էր բռնվում, ծանոթանում կյանքի վերաբերյալ նրանց հայացքներին: Փիլիսոփան իր զրույցները վարում էր և՛ տոնավաճառներում, և՛ ճանապարհին, և՛ գյուղական այգում հանգստանալիս: *Ամենից շատ նրան զբաղեցնում էր մարդկային երջանկության հարցը*. մարդիկ ինչպե՞ս են այն ընկալում, ինչպե՞ս են ձգտում երջանկության, և ինչո՞ւմ է իսկապես կայանում մարդու երջանկությունը: Սկովորոդայի կարծիքով՝ երջանկության բանալին ինքնաճանաչումն է և նախանշված ճանապարհին հետևելն ու դրանով ընթանալը: Երջանիկ լինելու համար մարդուն հարկավոր չէ ո՛չ հարստություն, ո՛չ փառք, գլխավորը՝ «աշխարհից» և աշխարհիկ հոգսերից ազատ լինելն է: Նման համոզմունքները փիլիսոփային բերեցին ավագանու և հոգևորականության բացահայտ քննադատությանը՝ այն բանի համար, որ նրանք գյուղացիներին կեղեքում ու հարստահարում էին:

Սկովորոդայի ստեղծագործական ժառանգությունը շատ բազմազան է. դրանում և՛ բանաստեղծություններ են, և՛ առակներ, և՛ զեղագիտության ու պոետիկայի դասագրքեր, և՛ փիլիսոփայական տրակտատներ: Համահունչ ապրելով այն ամենի հետ, ինչն ինքն այդպես ակտիվորեն քարոզում էր, թափառական փիլիսոփան վայելում էր հասարակ ժողովրդի սերն ու հարգանքը, իսկ նրա շատ մտքեր ու ասացվածքներ տեղ գտան ժողովրդական երգերում ու դրամաներում (կողակական ժողովրդական երգեր): Սկովորոդան կտակել էր, որ իր տապանաքարին գրվի. «Աշխարհն ինձ որսում էր, բայց չբռնեց»:

\* \* \*

XVIII հարյուրամյակի հետ ավարտվում էր նաև բուռն ու բազմակողմանի մշակութային դարաշրջանը: Պետրոս Առաջինի նվաճումների արդյունքում Ռուսաստանն ստացավ երկար սպասված «պատուհանը՝ դեպի Եվրոպա»՝ Բալթիկայում, իսկ Ուկրաինայի դերը՝ որպես մշակութային կենարար ազդեցությունների միջնորդի, աստիճանաբար կորցնում էր իմաստը: Փոխարենը՝ կայսրության սահմանների ընդլայնումը կտրուկ հարվածեց Արևմտքի հետ Ուկրաինայի սերտ կապերին: Այսուհետև Ռուսաստանը՝ առավելագույնս օգտագործելով և՛ դեպի Եվրոպա իր պատուհանը, և՛ իր միապետների «արևմտամետ» կողմնորոշումը, և՛ ոչ վերջին հերթին՝ Ուկրաինայից «լուսավոր մտքի հոսքը» դեպի կայսրության կենտրոն, մշակութային առումով առաջ է անցնում Ուկրաինայից:

Մեկուսացված, ավանդապահության հակումով «Մալոռուսիան» կամաց-կամաց գլորվում է դեպի զավառականության ճահիճը: Քաղաքական ինքնավարությունը կորցնելուց հետո, նրան սկսում է սպառնալ նաև մշակութային յուրօրինակության կորուստը:



## ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈՒ

Ուկրաինան Ռուսական և Ավստրիական կայսրությունների կազմում

Ազգային ինքնագիտակցության զարթոնք

Կայսերական բարեփոխումներ

Սոցիալ-տնտեսական փոփոխություններ

Մտավորականության գործունեությունը

Արևելյան Գալիչինա. ուկրաինության պատվար





# ՌԻԿՐԱԻՆԱՆ ՌՈՒՄԱԿԱՆ ԵՎ ԱՎՍՏՐԻԱԿԱՆ ԿԱՅՄՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ

Մոտ 150 տարի, XVIII դարի վերջից մինչև XX դարի սկիզբը, ուկրաինացիներն ապրում էին երկու տարբեր կայսրություններում. նրանց 80 %-ը Ռոմանովների հպատակության տակ էին, մնացածը՝ Հաբսբուրգների:\*

Բոլոր կայսրությունների պես, Ռուսական ու Ավստրիական կայսրություններն էլ իրենցից ներկայացնում էին մեծ տարածքային կոնգլոմերատներ (խառնակույտ), ուր բնակվում էին էթնիկական և մշակութային առումով շատ տարբեր ժողովուրդներ: Սակայն կայսրները, որոնց ձեռքում էր գերկենտրոնացված ահռելի իշխանությունը, ամենևին հակված չէին հաշվի առնելու իրենց հպատակների սովորությունները, ցանկությունները կամ ինչ-որ զատորոշիչ առանձնահատկություններ: Նրանցից պահանջվում էր միայն բացարձակ հնազանդություն և հավատարմություն իշխող դինաստիային, հատկանիշներ, որ կայսրությունում համարվում էին ոչ միայն քաղաքական պարտականություններ, այլ նաև կրոնական ու բարոյական առաքինություններ: Փոխարենը՝ կայսրություններն իրենց հպատակներին խոստանում էին անվտանգություն, կայունություն և կարգուկանոն: Եվ պետք է ասել, որ բնակչության մեծ մասը նման կարգերը ոչ միայն խելացի էր համարում, այլև գերադասելի:

Կայսրության անծայրածիր տարածքներում սփռված հպատակներին կայսրները կառավարում էին բանակի և բյուրոկրատիայի օգնությամբ: Բանակը պաշտպանում, իսկ պատեհ առիթի դեպքում՝ ընդլայնում էր կայսրության սահմանները, նաև՝ ներքին կարգուկանոնն էր պահպանում: Իսկ բյուրոկրատիան հավաքում էր հարկերը (որոնց մեծ մասը ծախսվում էր հենց իրեն ու բանակին պահելու համար), նաև՝ ձգտում էր այնպիսի հասարակություն ձևավորել, որը լավագույն ձևով կժառանգի կայսրության շահերին:

Ավատատերերը, որ XVIII դարում իշխում էին Ուկրաինայում, լինելու դա լեհական շլյախտան, թե կոզակական ավագանին, համարում էին, որ կառավարությունն ինչքան քիչ խառնվի հասարակության գործերին, այնքան ավելի լավ կլինի և՛ հասարակության, և՛ կառավարության համար: Ի տարբերություն նրանց, XIX դարի կայսերական բյուրոկրատները համոզված էին, թե ինչքան շատ օրենքներ, հրամաններ ու կարգադրություններ փաթաթեն հասարակության վզին, այնքան ավելի լավ կլինի և՛ հասարակության, և՛ իրենց համար: Եվ չնայած տեղական վերնախավն առաջվա պես պահպանում էր իր դերն ու նշանակությունը, սակայն կարևորագույն որոշումները, որ երբեմն ամբողջովին փոխում էին ուկրաինացիների կացութաձևը, ավելի հաճախ կայացվում էին ոչ թե տեղերում, այլ կայսրությունների հեռավոր մայրաքաղաքների նախարարություններում:

## Ռուսական կայսրություն

Ռուսական կայսրությունն աշխարհում երբևէ գոյություն ունեցած ամենամեծ կայսրություններից մեկն էր: Եվրոպական մյուս երկրներից այն տարբերվում էր ոչ միայն ահռելի չափե-

\* XVIII և XIX դարերում Ռուսական կայսրությունում ուկրաինացիներին անվանում էին մալոռուսներ, իսկ Ավստրիական կայսրությունում բնակվող ուկրաինացիներն իրենց առաջվա պես կոչում էին ռուսիներ:

րով, այլև իր քաղաքական կառուցվածքով: Տիրակալ-կայսրն այնպիսի անսահմանափակ իշխանություն ուներ, որի նմանը Եվրոպայում և ոչ մի միապետ չուներ: Նաև՝ Եվրոպական այդ միապետներից և ոչ մեկը չուներ այնպիսի բռնապետական բյուրոկրատիա, այնքան դաժան ոստիկանություն և այնքան իրավազուրկ ժողովուրդ, ինչպիսիք որ ուներ ռուսական ցարը:

XVIII դարում Պետրոս Առաջինի և Եկատերինա Երկրորդի բարենորոգումների արդյունքում կայսրությունն այլևս այն նախկին պարզունակ ու կիսաասիական Մոսկովյան իշխանությունը չէր: Այն կարող էր պարծենալ իր ժամանակակից հզոր բանակով, եվրոպական օրինակով կրթված իր բյուրոկրատիայով և արևմտյան մշակույթն ու վարվելաձևն ընդօրինակած ազնվական ընտրախավով: Բայց այս բոլոր բարեփոխումները չստիպեցին ռուսական կայսրերին՝ հրաժարվելու ինքնակալությունից՝ մոսկովյան այդ հնագույն քաղաքական դոկտրինայի հիմնական կանխադրույթից, ըստ որի՝ *ցարը բացարձակ իշխանություն ունի իր բոլոր հպատակների և նրանց կյանքի բոլոր ոլորտների վրա:*

Ճիշտ է, XIX դարի հենց սկզբին սահմանադրության հույս առկայօժեց, և թվում էր, թե երիտասարդ, ժողովրդականության ձգտող Ալեքսանդր Առաջինը լրջորեն պատրաստվում է տրամաբանական ավարտին հասցնել իր տատիկի՝ Եկատերինա Երկրորդի օրենսդրական բարեփոխումները. հատկապես սահմանադրությունը կարող էր միապետական ինքնակալության փոխարեն վերջնականապես օրենքի իշխանություն հաստատել: Բայց շուտով պարզվեց, որ այդ «լուսավորյալ միապետն» էլ սահմանադրության գաղափարը լրջորեն չի ընկալել: Սակայն բարեփոխումների ծարավն արդեն թափանցել էր կայսերական ազատամիտների սրտերը և 1825 թ.-ի դեկտեմբերին, Ալեքսանդր Առաջինի մահից անմիջապես հետո, մի խումբ ազնվականներ փորձեցին հեղաշրջում անել՝ սահմանադրական կարգեր հաստատելու նպատակով: Եվ չնայած այսպես կոչված՝ *«դեկաբրիստների ապստամբությունը» լրիվ ձախողվեց*, սակայն նոր կայսր Նիկոլայ Առաջինը ցնցված էր միապետության հիմքերին նետված մարտահրավերից և որոշեց դաժան վերահսկողություն սահմանել հպատակների վրա: Ուրպես զինվորական, Նիկոլայը փորձեց ողջ հասարակությանը վարժեցնել իր սիրելի բանակի կարգապահությանը: Այդ նպատակով նա ավելի ընդլայնեց բյուրոկրատական կառույցը և 1826 թ.-ին *հիմնեց կայսերական դիվանատան տխրահռչակ Երրորդ բաժանումը՝ Ռուսաստանում առաջին գաղտնի ծառայությունը*: Հենց ինքն էլ ստեղծեց *ժանդարնական կորպուսը*, այսինքն՝ կանոնավոր ոստիկանական ծառայությունը, ինչպես նաև հրամայեց խստացնել գրաքննությունը: Այդ ամենը հանգեցրեց նրան, որ Նիկոլայ Առաջինի երկարամյա իշխանության ժամանակաշրջանը Վասիլի Կյուլեսկին անվանեց *«Ռուսաստանի պատմության ամենաբյուրոկրատական դարաշրջան»*:

## Կայսերական ներկայությունն Ուկրաինայում

Ռուսական կայսրության կողմնակիցները, բացի հսկայական լայնարձակ տարածքներից, այլ փաստարկներ էլ էին բերում միապետության, որոնց թվում նաև՝ խայտաճամուկ էթնիկ կազմը: Այդ փաստարկն առավել պարզ շարադրել է իշխան *Օլեքսանդր Բեզբրոդկոն*՝ կայսրությանը ծառայող ականավոր ուկրաինացիներից մեկը: Ի դեպ՝ հարկ է հատուկ ընդգծել, որ նա ամբողջ կյանքում երբեք չի թաքցրել իր բոցաշունչ սերը հարազատ Ուկրաինայի նկատմամբ: Այնուամենայնիվ, հենց Բեզբրոդկոն էր առաջինը, որ դեռևս XVIII դարի վերջին էր գաղտնի գրության մեջ նշում էր. «Եթե հաշվի առնենք կայսրության հսկայական տարածքը, բազմաթիվ ազգերն իրենց բազմազան սովորություններով ու ավանդույթներով և մի շարք այլ կարևոր չափանիշներ, ինքնակալությունը Ռուսաստանում կառավարման միակ հնարավոր և հարմար ձևն է»: Նման կարծիքներով ու պատկերացումներով առաջնորդվելով, *պաշտոնյաներն այնպես էին կառավարում երկիրը, ասես այն բնակեցնում էր մեն ու միակ մի մոզովուրդ՝ ռուսները, զիտակցաբար աշխատելով չնկատել մնացած ազգերի բազմաթիվ ստանձնահատկություններն ու սովորույթները*: Եվ քանի որ ուկրաինացիները լեզվի և մշակույթի առումով շատ մոտ են կանգնած ռուսներին, ապա իշխանությունների համար դժվարություն չէր ներկայացնում այնպիսի պահվածք ընդունել, իբրև թե՝ «Ուկրաինան՝ դա մույն Ռուսաստանն է»: *Եվ եթե որևէ մեկը համարձակվեր հարցնել (իրականում՝ դժվար թե նման մեկը գտնվեր), թե ի՞նչ իրավունքով է Ռուսաստանը ստանձնել Ուկրաինայի մեծ մասի կառավարումը, ապա պատասխանն իր ոգով նման կլիներ 1793 թ.-ին Եկատերինա Երկրորդի պատվին հատած մեղալի մակագրությանը. «Ես վերադարձրել եմ այն, ինչ խլել էին մեզանից»*: Կայսրությունում այն համընդհանուր համոզմունքն էր տիրում, թե Ուկրաինան մշտա-



պես եղել է Ռուսաստանի անկապտելի մասը և միայն պատմական տարրօրինակ մի պատահականությամբ որոշ ժամանակ նրանից անջատված է եղել: Եվ կայսրության ցանկացած պաշտոնյա համոզված կասեր, որ գոյություն ունեցող տարբերություններն այդ ժամանակավոր բաժանման հետևանքներն են: Եվ հիմա, «վերամիավորվելով» ռուսների հետ, ուկրաինացիները (կամ «մալուռուները») պետք է արագ վերացնեն իրենց այդ գատորոշիչ գծերն ու դառնան «ճշմարիտ ռուսներ»: **Հենց այդ «բնական» գործընթացի խթանմանն էլ ուղղված էր կայսրության քաղաքականությունը՝ ընդհուպ մինչև իր վերջնական փլուզումը:**


Ուկրաինայում կայսրության համատարած և անմիջական ներկայության ակներև փաստը բանակն էր: Ողջ երկրով մեկ սփռված էին նրա ամրություններն ու կայազորները, հրամանատարները բնակչության վրա ծանր պարտավորություններ էին դնում, որոնցից սակայն ամենածանրը իսկական ծառայության զորակոչն էր, որ Ուկրաինայում հաստատվեց 1797 թ.-ից: Ռուսական բանակի զինվորների ծառայության ժամկետը 25 տարի էր, սակայն հաճախակի տեղի ունեցող պատերազմներն ու անմարդկային մուշտրան (խստավարժեցում) քառորդարյա ծառայության ժամկետը լրանալուց դեռ շատ առաջ խեղճերին զերեզման էին քշում: Իզուր չէ, որ զորակոչը հավասարազոր էր մահապատժի դատապարտելուն, այդ պատճառով էլ զինակազմի կազմում հաճախ կալանիքներով էին ծառայության վայր հասցնում, իսկ կալվածատերերը զինվորության էին հանձնում անհնազանդ կամ «մեղք գործած» գյուղացիներին՝ որպես պատիժ:

Նիկոլայի ժամանակ կառավարման ամբողջ համակարգի լայնածավալ ռազմականացումն սկսվել էր դեռևս Ալեքսանդրի և նրա խավարամիտ ու մուլեռանդ սոլդաֆոն նախարար Ալեքսեյ Արակչևեի օրոք, որը 1816-1821 թ.թ.-ներին ամենուր սկսեց ժողովրդի համար ատելի զինվորական բնակավայրեր հիմնել: Ռազմական ճամբարների օրինակով կառուցվող նման բնակավայրերում ապրում էին 500 հազ. զինվոր՝ իրենց ընտանիքներով, և այդպիսի ընտանիքներում ամբողջ կյանքի ընթացքը՝ սկսած ամուսնության թույլտվությունից և վերջացրած երեխաների քանակով, ճշգրիտ և մանրամասն հրահանգավորված էր: Ուկրաինայում գոյություն ուներ մոտ 20 նման բնակավայր, բայց մինչև 1857 թ.-ը դրանցից շատերը վերացվեցին, քանի որ այդ «սոցիալական փորձարկման» հեղինակների սպասածի լրիվ հակառակ արդյունքը ստացվեց: Այս օրինակը, թեկուզև ծայրահեղ, խոսում է այն մասին, որ քաղաքացիական կյանքը զինվորական կարգապահության ենթարկելը երկար ժամանակ ցարական բյուրոկրատիայի երազանքն ու իդեալը մնաց:

Ուկրաինայում կայսերական վարչական կառույցների ներդրման գործընթացը, որ սկսվել էր դեռևս 1770-ական թվականներին, իր վերջնական ավարտին հասցվեց միայն XIX դարի 30-ական թվականներին: Այդ ժամանակ ամբողջ «Մալուռուսիան» բաժանված էր 9 նահանգի, ընդ որում՝ ամեն մի ավանդական շրջան երեք նահանգի էր բաժանվել: Չախափնյակը բաժանվել էր Չեռնիգովի, Պոլտավայի և Խարկովի նահանգների: Այստեղ դեռևս հիշում ու պահպանում էին կղզակության, Հեթմանշինյայի ու ավագանու ավանդույթները: Կիևի, Կոլիսի և Պոդոլյեի նահանգները զբաղեցնում էին Աջափնյակը, որ վերջերս էր ազատագրվել լեհերից: Լեհական շլյախտան առաջվա պես իր ձեռքում էր պահում գյուղական ամբողջ սոցիալտնտեսական կյանքը, իսկ քաղաքներում ու ավաններում հիմնականում իրեաներն էին ապրում: Վերջապես՝ ոչ շատ վաղուց յուրացված հարավը, որ գապորոժցիների ու Դրիմի թաթարների պապենական բնակավայրն էր, բաժանվել էր Եկատերինոսլավի, Խերսոնի ու Տավրիայի նահանգների: Յուրաքանչյուր նահանգ բաժանված էր գավառների (պովիտ), որոնք էլ իրենց հերթին ներառում էին գյուղերն ու գավառական կենտրոնները:

Նահանգային և գավառական պաշտոնյաների ստորակարգությունն ամբողջ կայսրությունում միատեսակ էր: Նահանգապետին նշանակում էր ցարը, իսկ նահանգապետն իր համար պաշտոնյաներ էր ընտրում, որոնցից ամեն մեկը պատասխանատու էր իր ղեկավարած բնագավառի համար (հասարակական կարգի, ֆինանսների, կրթության և այլն): Սովորաբար վարչական վերին օղակներն զբաղեցնում էին արիեստավարժ բյուրոկրատները: Դատավորներն ու ազնվականության պարագլուխներն ընտրվում էին տեղական ազնվականների կողմից՝ իրենց միջավայրից: Ստորին օղակներում աշխատելու համար արիեստավարժ մասնագետները պարզապես չէին բավարարում, այդ պատճառով էլ շատ պատահական բախտախնդիրներ էին զբաղեցնում այդ տեղերը:

Ուկրաինական հնագույն քաղաքների համար, որ վաղուց օգտվում էին ինքնակառավարման Մագդեբուրգյան իրավունքից, մոր բյուրոկրատական համակարգ մտցնելը հիմնականում բացասական հետևանքներ ունեցավ: 1835 թ.-ին Կիևը քաղաքներից վերջինն էր, որ



Ուկրաինական տարածքները XIX դարի առաջին կեսին



պաշտոնապես կորցրեց իր հատուկ՝ «մագդեորդյան» կարգավիճակը: Այսուհետև ուկրաինական բոլոր քաղաքները նահանգային իշխանությունների ենթակայության տակ էին անցնում: Վարչական ամենաստորին մակարդակում՝ գյուղերում, կարգուկանոնի համար պատասխանատու էին կալվածատերերը:

XIX դարում, Ուկրաինայում ամենօրյա կառավարումն իրականացնող վարչության անդամները սոցիալական ծագումով հիմնականում բյուրոկրատացված ազնվականներն էին: Բարձրագույն, հատկապես նահանգապետերի, պաշտոններն ավելի հաճախ բաժին էին ընկնում ազդեցիկ ազնվական ընտանիքների ներկայացուցիչներին, իսկ միջին օղակների կառավարիչները համապատասխանաբար միջին և ցածր խավի ազնվականության ներկայացուցիչներն էին: Գործավարների և գրագիրների համեստ պաշտոնները քաղաքաբնակների ու քահանաների որդիների բաժինն էին: Գյուղացիները գրեթե երբեք նույնիսկ անճշան պաշտոններ չէին ստանում:

*Ուկրաինայում բյուրոկրատիայի էթնիկ կազմը փոփոխվում էր կախված տարածաշրջանից:* Չախսափնյակում, որտեղ հին կոզակական ավազանու ժառանգները ազնվականներին հավասար իրավունքներ էին ստացել, բարձր պաշտոնյաների շարքում հանդիպում էին այնպիսի հայտնի ուկրաինական ազգանուններ, ինչպես՝ Միլորադովիչ, Միկլաշևսկի, Կոչուբեյ, Չավադովսկի, Կապիստ, Պոլետիկա և այլն: Աջափնյակում գերակշռում էին լեհերն ու ռուսները: Գարավում, ուր բնակություն էին հաստատել կայսրության տարբեր շրջաններից եկած մարդիկ, պաշտոնյաների կազմն էլ էր բազմազան, չնայած այստեղ էլ մեծ մասը ռուսներ էին: Գետաբերդին այն էր, որ պաշտոնյաների շարքերն համալրած ոչ-ռուսները, որպես կանոն, ոչ միայն արագ «ռուսացվում» էին, այլև հաճախ մտածում ու գործում էին որպես «առավել ռուս», քան իրենք ռուսները:

Կայսերական բյուրոկրատիան կազմակերպված էր զինվորականի սմանությամբ. ուներ համազգեստներ և աստիճանակարգեր: Ցածր աստիճանում գտնվող հաճույանում ու շողոքորթում էր իրենից վեր կանգնածին, միևնույն ժամանակ արհամարհում ու ստորացնում էր իրենից ցածր գտնվողին: Մարդու իրավունքները պաշտպանող սահմանադրություն չունենալու պատճառով, ցանկացած պաշտոնյա ոչ միայն օրինականորեն կարող էր խառնվել մարդկանց անձնական գործերին, այլև հաճախ այդ բանն անում էր հատուկ բավականությամբ: Բարեբախտաբար, Ռուսական կայսրությունը համեմատաբար աղքատ էր և կարող էր իրեն թույլ տալ ամեն 10 հազ. բնակչի հաշվով ընդամենը 12 պաշտոնյա պահել (Արևմուտքում՝ բնակչության նույն թվաքանակի դեպքում պաշտոնյաների թիվը 3-4 անգամ ավելի էր), այն էլ՝ այնքան ցածր ռոճիկով, որ պաշտոնյաներն ստիպված էին լինում «պակասը լրացնել» կաշառքով: Կաշառակերության վրա, հատկապես տեղական մասշտաբի, կառավարությունը մատների արանքով էր նայում. քանի դեռ պաշտոնյաները գանձարանը ճշտապահորեն ապահովում էին պահանջվող գումարով, դեկավարներին քիչ էր հուզում, թե նրանք ինչքան են հավելյալ գումար «գափում» ժողովրդից: Ռուսաստանում ժողովուրդը դարերով վարժվել էր այդ կարգերին, իսկ Ուկրաինայի համար դա նորություն էր: Գավանաբար դրանով է բացատրվում այն փաստը, որ հատկապես ուկրաինացի Գոգոլն իր հանրահայտ «Ռեզորը» կոմեդիայում (1836 թ.) ստեղծեց կայսերական բյուրոկրատիայի այդքան փայլուն երգիծական կերպարը:

Մինչև Նիկոլայ Առաջինի (1825-1855 թ.թ.) կառավարելը, քաղաքացիների «բարեհուսության» հսկողությունն իրականացվում էր դեպից-դեպ և հիմնականում զուտ տեղեկատվական նպատակով: Մինչև 1826 թ.-ին երրորդ բաժանմունքի հիմնումը, Ռուսաստանում քաղաքական ռեպրեսիաներով զբաղվող հատուկ կառույցներ գոյություն չուներին: Իսկ հիմա դրանք հայտնվեցին, և չնայած «օխրանկայի» մշտական աշխատակիցների հաստիքն սկզբնական շրջանում շատ քիչ էր, բայց երրորդ բաժանմունքի գաղտնի գործակալներն ամենուր էին՝ տոնավաճառներում ու կաբակներում, համալսարաններում և այլ հասարակական վայրերում ու հավաքներում նրանք աչալուրջ հետամուտ էին «կասկածելի» ամենավոր խոսքին ու վարմունքին: Չնայած Ռուսաստանում, որպես հնարավոր ընդդիմությունը ճնշելու միջոց, գրաքննությունը միշտ էլ կար, բայց Նիկոլայ Առաջինի օրոք այն աննախադեպ խստացվեց: Գատուկ կոմիտեները աչալուրջ հետևում էին այն ամենին, ինչ որ տպագրվում էր երկրում: Իզուր չէ, որ Տարաս Շևչենկոն դառն հուժկոն էր գրում էր. «Մոլորվացուց մինչև ֆիննը, բոլոր լեզուներով լռում են, քանի որ ապրում են բարվոք կյանքով»:

Բայց որքան էլ կայսրը ձգտում էր Ռուսաստանը վերածել «ոստիկանապետության»՝ զինվորական կանոններով ու խստագույն կարգապահությամբ, դա նրան չհաջողվեց: Տասնամ-

ակներ շարունակ մայրաքաղաքը հրահանգների ու շրջաբերականների հեղեղ էր թափում հսկայական տարածքներով մեկ սփռված ալարկոտ ու կոռումպացված տեղական պաշտոնյաների գլխին: Վերևից եկող բոլոր պահանջները կատարելը պաշտոնյաների համար ոչ մի իմաստ չունեց, հատկապես՝ որ ցանկության դեպքում նույնիսկ հնարավոր չէր այդ լայնատարած տնտեսությունն ամբողջովին վերահսկել: Դամենայն դեպս, ցանկացած հիմնարկում ամեն մի «բծախնդիր» պաշտոնյայի կողքին «բարեհոգի» մեկին էլ կարելի էր գտնել, հատկապես, որ որոշակի կաշառքի առկայությամբ հազվադեպ «բծախնդիր» կգտնվեր, որ չդառնար «բարեհոգի» ու խստագույն դատավճիռը «ներողամտորեն» չդարձներ «եզակի կարգապահություն», կամ՝ «թեթևակի խախտում»:

Այնուամենայնիվ, Ռուսական կայսրությունը ոչ միայն հոծ «ոստիկանական» չէր, այլև՝ հասարակության համար բացարձակապես փակ չէր: Արտասահման մեկնելու համար գործնականում ոչ մի արգելք չկար, եթե իհարկե մարդը հնարավորություն և ժամանակ ուներ: Կատավարող վերնախավը, նրանց ընտանիքի անդամներն ու ընդոծիմները ժամանակ առ ժամանակ լինում էին Արևմուտքում և հնարավորություն էին ունենում այնտեղի կարգերն համեմատել հայրենական կարգերի հետ, որը նույնպես կողմնակիորեն օգնում էր թեթևացնելու լավից դուրս խստությունները:

### Մայրոռական մենթալիտետը

Կայսերական վեհությունն ու հզորությունը, փայլուն հաջողությունների հասնելու հնարավորությունը, աշխարհի ամենահզոր տերություններից մեկի ազնվականության թվին պատկանելու հպարտության զգացումը՝ այս բոլորը միասին վերցրած, ոստիկանական ցանկացած հսկողությունից ավելի լավ էր ապահովում ուկրաինական նախկին ավազանու չեզոքությունը և նրա հավատարմությունը տիրակալ-կայսրին: Ուկրաինան նրանց համար դարձել էր միայն սրտանց սիրելի «փոքր հայրենիք»՝ մեծ հայրենիքի՝ Ռուսական կայսրության օրգանական մի մասնիկը, հետևաբար ուկրաինացիներն էլ՝ ռուս ժողովրդի մի «ցեղը»: Ուկրաինայի քաղաքական ինքնուրույնությունը՝ որպես տեսական պատկերացում, միայն հեզմանք էր առաջացնում «մալոռոս» ազնվականների մոտ, իսկ որպես պրակտիկ գործունեության պահանջ՝ բացարձակ թշնամություն: Որպես «մալոռոսական» մտածելակերպի տիպիկ օրինակ արժե մեջբերել Վիկտոր Կոչուբեյի (ուկրաինացի, որ 1830-ականների սկզբին նախաարևների խորհրդի նախագահն էր) դատողությունները. «Չնայած ծնունդով ես խոխուլ (ուկրաինացի) եմ, բայց ե՛մ սկզբունքներով, և՛ իմ կարողությամբ ու սովորություններով առավել ռուս եմ, քան որևէ մեկը: Իմ կոչումն ու զբաղեցրած պաշտոնը բարձր են պահում ինձ ամեն տեսակի մանր նկատառումներից. ես ձեր (ուկրաինացիների - հեղ.) նահանգների գործերին նայում եմ՝ մեր ողջ երկրի ընդհանուր շահերից ելնելով: Չափազանց մանր ակնկալիքներն ինձ չեն հետաքրքրում»:

Մայրոռական մենթալիտետն անխնա քննադատության ենթարկվեց XX դարի ազգայնական դպրոցի ուկրաինացի պատմաբանների կողմից: Նույնիսկ ուկրաինական վերնախավի այնպիսի հետևողական պաշտպանը, ինչպիսին Վյաչեսլավ Լիպինսկին էր, 1920-ական թվականներին նկատում է, որ՝ «անլիարժեքության դրսևորումները», ինչպիսին «մալոռոսականն է»՝ «պետականություն չունեցող» ժողովուրդների հատկանշական հիվանդությունն է: Լիպինսկին փորձում էր ապացուցել, որ «մալոռոսը» հոգեբանորեն հարմարվելով կայսերական կաղապարին, աստիճանաբար կորցրել էր ուկրաինական ազգային տության լավագույն գծերը, ձեռք բերելով վատագույնը՝ ռուսականը: Եթե այդպես է, ուրեմն XIX դարի ուկրաինական հասարակության զարգացած մասի ներկայացուցիչներին այս կամ այն չափով հատուկ է եղել վերը նկարագրված մտածելակերպը, իսկ որպես ուկրաինական «անջատողականության» առավել կատաղի թշնամիներ, հաճախ հանդես են եկել հենց իրենք՝ ուկրաինացիները:

### Քաղաքական իրադարձություններ

XIX դարասկզբին Ռուսական կայսրությունը, բարեբախտաբար արդեն ամուր ու հզոր կառույց էր դարձել. ցարական ռեժիմի համար դաժան փորձությունների ժամանակներ էին մտնում:



## Նապոլեոնի ներխուժումը

1812 թ.-ին, Նապոլեոնի 640 հազ.-անոց «ռազմական մեծ մեքենայի» ներխուժումը Ռուսաստան, հզոր ու ցավազին հարված էր կայսրության համար: Հանձնայն դեպ, սկզբում այդպես էլ թվում էր: Բայց, ինչպես գիտենք, Ռուսաստանը ոչ միայն կարողացավ մի քանի ամսում ոտքի կանգնել առաջին ցնցումից, այլև ուժեղ հակահարված տալով, զավթիչներին ետ շարտեց մինչև Փարիզ... Միայն թե, ինչպես միշտ, ռուս ժողովուրդն այդ հաղթանակն անհամեմատ մեծ կորուստների գնով ձեռք բերեց:

Ինչ վերաբերում է Ուկրաինային, ապա այս անգամ նա քիչ տուժեց (չնայած քիչ էլ չափեց): Ենթադրելով, Նապոլեոնի բանակի մի մասը մտավ Վոլին և քիչ վնաս չպատճառեց: Պետք է ասել, որ ուկրաինացիները մեծ մասամբ ջերմորեն արծագանքեցին ցարի կոչին՝ «կրծքով պաշտպանել հայրենիքը»: Չախափնյակի կողակությունն անմիջապես կամավորների մի քանի գունդ կարողացավ հանել: Այն, թե ինչ հաճույքով էին ուկրաինացիներն համալրում այդ զնդերը, վկայում էր, որ դեռ չեն մոռացվել կոզակական հին սովորույթները:

Սակայն լուրեր էին պտտվում նաև, թե կոզակական ավագանու որոշ հետնորդներ բաժակ են բարձրացնում Նապոլեոնի ողջության համար և գրեթե բարձրաձայն հույս հայտնում, որ ֆրանսիական կայսրը կտապալի ռուսական կայսրին: Այդ լուրերը կարելի է համարել ճշմարտանման, եթե ի նկատի ունենանք ոչ վաղ անցյալի նման դեպքերը (վերևում արդեն հիշատակել ենք 1791 թ.-ին Վասիլի Կապնիստի գաղտնի առաքելությունը Պրուսիա): Ամեն դեպքում, ինչպես էլ եղած լինի, հակակայսերական ելույթները բացառություններ էին: Ուկրաինացիների հսկայական մեծամասնությունը հավատարմորեն և կատաղի կռվում էին Նապոլեոնի դեմ՝ հանուն ռուսական ցարի:

## Ղեկարրիստների ապստամբությունը

Եվրոպայում «նապոլեոնյան» երկարատև պատերազմներին Ռուսաստանի մասնակցությունն անսպասելի հետևանքների հանգեցրեց: Ցարական շատ սպաներ, իրենց լավագույն տարիներն անցկացնելով Եվրոպայի մարտադաշտերում, և կրելով Արևմուտքի արժեքների ու քաղաքական կառույցների բարերար ազդեցությունը, դարձել էին դրանց ջատագույնները: Հաղթանակած տուն վերադառնալով, նրանք հույսեր էին փայփայում, թե իրենց երիտասարդ և բավականին ազատական բվացող Ալեքսանդր Առաջին ցարը Ռուսաստանում բարեփոխումներ կմտցնի Եվրոպականի նմանությամբ: Փոխարենն այդ անկանխատեսելի կայսրն իրեն մոտեցրեց հետադիմականներին՝ Արալչեկի գլխավորությամբ, և նրանց հանձնարարեց երկրի կառավարումը: Իրադարձությունների նման կտրուկ շրջադարձը խորն հիասթափություն առաջացրեց Բոնապարտին հաղթած երիտասարդների շրջանում: Եվ ահա, մի խումբ քաջարի սպաներ, որոնց մեծ մասը ազնվական նշանավոր տոհմերից էին, սկսում են ստեղծել գաղտնի ընկերություններ՝ միապետությունը տապալելու և սահմանադրական կարգեր հաստատելու նպատակով:

Առաջին այդպիսի ընկերությունը՝ «Փրկության միությունը», հիմնադրվեց 1816 թ.-ին Պետերբուրգում: Ժամանակի ընթացքում, երբ համախոհ դավադիրների շարքերը խտացան, նրանք բաժանվեցին երկու տարբեր, բայց սերտ համագործակցող խմբերի: Առաջին խումբը, այսպես կոչված՝ Հյուսիսային ընկերությունը, մնաց Պետերբուրգում: Նրա մասնակիցների մեծ մասը ազնվականներ էին, որ շարունակում էին քննարկել ու զարգացնել հանրապետական գաղափարներ, բայց ուժեղ ղեկավարություն չունենալու պատճառով նրանց գործունեությունը հիմնականում գրույցներով էլ սահմանափակվում էր: Իսկ Հարավային ընկերությունը, որի կենտրոնը Ուկրաինայի հարավում գտնվող Տուլչինում էր, ուր ծառայում էր ընկերության առաջնորդ զնդապետ Պավել Պետտելը, որ հզոր կամքի և փայլուն ընդունակությունների տեր մարդ էր, առավել արդյունավետ էր գործում: Բացի այդ, Պետտելին հաջողվեց իր կողմը գրավել դավադիրների մեկ այլ խմբի՝ այսպես կոչված «Միացյալ սլավոնների ընկերությանը»: Այս խմբի հիմնադիրների ու ղեկավարների մեջ երկու ուկրաինացի կային՝ Բորիսով եղբայրները՝ Պոլտավայից: Այնուհետև, Ուկրաինայում գործող լեհ հեղափոխականների խումբը նույնպես միացավ Պետտելի ընկերությանը: Հարավային ընկերությունը, որ Պետտելն հիմնել էր ընդամենը երեսուն դավադիր սպաների հետ, արդեն մոտ 160 անդամ ուներ:

Պետտելի ծրագիրը, որ մշակված էր «Ռուսաց ճշմարտություն» խորագրով փաստաթղթում, առավել արմատական էր, քան հյուսիսային սահմանադրականների ծրագիրը: Այն նախատեսում էր ամեն տեսակի սոցիալական ու քաղաքական անհավասարության վերացում, երկ-

րի գյուղատնտեսության արդիականացում, հեղափոխական վերնախավի իշխանություն, կառավարման խստագույն կենտրոնացում: Չնայած Պետտելը գործում էր Ուկրաինայում, սակայն կայսրության ոչ-ռուս ժողովուրդների նկատմամբ բացարձակապես հետաքրքրություն չէր դրսևորում: Ավելին, նա պնդում էր, որ բացառությամբ զարգացած մշակույթ ունեցող լեհերի, կայսրության մնացած փոքրամասնությունները պետք է ռուսացվեն: Մասնավորապես, ուկրաինացիներին նա «զրկում» էր նույնիսկ «առանձին ազգություն» կոչվելու իրավունքից, պնդելով, որ «Մալոռոսիան» երբեք անկախ չի եղել և չի կարող լինել: «Ուկրաինական հարցի» վերաբերյալ նման տեսակետը կպահպանեն նաև ռուս հեղափոխականների զալիք սերունդները:

«Միացյալ սլավոնների ընկերության» անդամները, սակայն, կողմ լինելով կայսրության ինդերատիվ սկզբունքներով վերականգնվող մանր, չէին կիսում Պետտելի կենտրոնամետ լուրն հակումները: Բայց այստեղ ևս՝ ենթադրյալ ֆեդերացիայի սուբյեկտների թվում Ուկրաինան չկար, և դա այն դեպքում, երբ ընկերության ղեկավար կազմում ուկրաինացիներ էլ կային: Բայց կան նաև վկայություններ 1819 թ.-ից Ուկրաինայում գործող, Պետտելի հետ կապ ունեցող, «Մալոռոսական գաղտնի ընկերության» մասին, որը կապ է պահպանել «Միացյալ սլավոնների ընկերության» և լեհական «Տեմպլարի» հեղափոխական կազմակերպության հետ: Այդ ընկերության նախագահը Ուկրաինայի անկախության կրքոտ կողմնակից, գավառական ազնվականության առաջնորդ Վասիլ Լուկաչևիչն էր՝ «Ինքնավարության ջատագույն կատխիսիզիս»-ի հեղինակը:

Սակայն տեսությունը տեսություն է, գործը՝ գործ: Եթե Հարավային և Հյուսիսային ընկերությունների գործունեությունը դիտարկենք քաղաքական դավադրություններ կազմակերպելու սրվեստի տեսանկյունից, ապա երկուսին էլ պետք է որակենք ոչ միայն որպես իդեալիստներ, այլև՝ դիլետանտներ: Միաժամանակ՝ Ալեքսանդր Առաջինի անսպասելի մահը դավադիրներին անակնկալի բերեց: Հյուսիսային ընկերության խորապես ցնցված առաջնորդները 1825 թ.-ի դեկտեմբերի 14-ին Պետերբուրգի Սենատի հրապարակ հանեցին մի քանի հազար զինվորների, որոնք հրաժարվում էին նոր ցարին՝ Նիկոլայ Առաջինին, հավատարմության երդում տալուց, և փորձում էին հասնել նրա հրաժարականին: Հենց նույն օրը ապստամբությունը ճնշվեց և նրա բոլոր մասնակիցները ձերբակալվեցին:

«Հարավցիներն» էլ հաջողության չհասան: Քանի որ դավաճան Մայբորոդայի մատնությամբ Պետտելին ձերբակալել էին մայրաքաղաքի ապստամբության նախորդ օրը, ընկերության ղեկավարությունն անցավ Բեստուժև-Ռյունինի և Մուրավյով-Ապոստոլ եղբայրների անվճռական ձեռքը: Չնայած նրանք իրենց մոտավորապես հազար զինվորների հանդեպին միանալ ապստամբներին, սակայն ավելի մեծ աջակցություն ոչ զինվորների, ոչ տեղի բնակչության կողմից չստացան: Կիևի հարավային շրջաններում մի շարք աննպատակ թափառումներից հետո, ապստամբած ջոկատները ջախջախվեցին ցարին հավատարիմ զորքի կողմից:

Այսպիսով, Ռուսական կայսրության պատմության մեջ առաջին հեղափոխական շարժումն անվառունակ վախճան ունեցավ:

## 1830 թ.-ի լեհական ապստամբությունը

Դեկտեմբերյան հեղափոխությունից ընդամենը 5 տարի անց, Ուկրաինան վերածվեց նոր ապստամբության մարտադաշտի: 1830 թ.-ի նոյեմբերին, երիտասարդ լեհ սպաների գաղտնի ընկերությունը, ոգևորված հենց նույն թվականին Ֆրանսիայում ու Բելգիայում բռնկված հեղափոխություններից, Վարշավայում հակակայսերական ապստամբություն բարձրացրեց: Իսկայն, առաջին հաջողությունից հետո ապստամբներն ամբողջ ուժն ու եռանդը ծախսեցին ներքին հակասությունների վրա: 1831 թ.-ի սկզբին, հուսալով լայնամասշտաբ գործողություններ ծավալել Աջափնյա Ուկրաինայում, ուր լեհ ազնվականությունը խոր արմատներ էր հիշել, ապստամբները շարժվեցին դեպի Վոլին: Սակայն, բնակչության կողմից լայն աջակցություն չստանալով, լեհ շլախադիների 5 հազարանոց ջոկատը ռուսական բանակի ճնշման տակ նահանջեց Արևելյան Գալիչինա, բայց գնեքը վայր չդրեց:

Այնուայտ էր, որ առանց ժողովրդի՝ այսինքն ուկրաինացի գյուղացիության աջակցության, ապստամբությունը կմարի: Հենց այդ ժամանակ էլ ի հայտ եկավ ցարական ինքնակալության ինչնամ տակ տառապող բոլոր ռուսներին և ուկրաինացիներին ուղղված լեհ ապստամբների նշանավոր կոչը՝ «Հանուն մեր և ձեր ազատության»: Սակայն, որպեսզի ուկրաինացի գյուղացին համոզվեր, որ պետք է օգնել լեհ «պաներին», գոնե կոչից ավել ինչ-որ բան էր պետք:



Բայց այս դեպքում էլ լեհական շլախտայի մեծամասնությունը զայրույթով մերժեց ապրտամբներից մի քանիսի հորդորները՝ կոչն ընկալել բառացի և գյուղացիությանն իսկապես խոստանալ՝ հաղթանակի դեպքում վերացնել ճորտատիրական կարգերը, եթե նրանք աջակցեն ապստամբությանը: Արդյունքում՝ Աջափնյակի ուկրաինացի գյուղացիները մեծ մասամբ չեզոք դիրք գրավեցին, իսկ մի քանիսը նույնիսկ առիթից օգտվելով, վրեժ լուծեցին իրենց լեհ կալվածատերերից: Ի դեպ՝ հենց Լեհաստանում, 1830-1831 թ.թ.-ներին շատ գյուղացիներ հրաժարվեցին ապստամբներին օգնելուց, դրանով իսկ ակնառու կերպով ցույց տալով, որ տնտեսական գաղափարները մնում են առավել մոտ ու հասկանալի, քան պատմության հորիզոնում թույլ առկայծող ազգային գաղափարը, և որ նույնիսկ լեհերի մոտ ազգային գիտակցությունն ու ազգային համերաշխությունը դեռ շատ հեռու են զանգվածային ընկալումից:

1831 թ.-ի կեսերին ապստամբությունը ճնշվեց: Բայց այդ ժամանակից սկսած, լեհական գաղտնի ընկերությունների ու ցարի դեմ գաղտնի դավադրությունների գոյությունը չդադարեց ոչ մի օր: Դետաբրքիր է նաև նշել, որ *չնայած դավադրությունների ցանցերը հյուսվում էին և ապստամբությունների օջախները բռնկվում էին մեծ մասամբ ուկրաինացի հողի վրա, սակայն այդ ամենը ուկրաինացիներին կարծես թե չէր վերաբերվում: Ի՞նչ է վկայում այս փաստը: Ըստ երևույթին այն, թե որքան անորոշ ու անուշ էին դարձել ուկրաինա և ուկրաինացի քաղաքական հասկացությունները Ռուսական կայսրությունում XIX դարի սկզբներին:*

## Բարեփոխումներ Ռուսական կայսրությունում

1830 թ.-ի լեհական ապստամբությունից հետո կայսերական կառավարությունը որոշում ընդունեց միավորել նախկինում Ռեչ Պոսպոլիտայի կազմի մեջ մտնող այսպես կոչված՝ արևմտյան նահանգները, այսինքն՝ Աջափնյա Ուկրաինան, Բելոռուսիան և Լիտվան: Ինչպես 1780-ական թվականներին իր ինքնության հատկանիշներից զրկեցին Չախափնյակը, այդպես էլ հիմա՝ 1830-ական թվականներին, նույն գործընթացն ու միջոցառումները պատրաստվում էին կիրառել Աջափնյակում: Բայց XIX դարում նմանատիպ գործողություններն առավել խորն ու համակարգված բնույթ էին կրում. նպատակն հիմա ոչ միայն կառավարման ու վարչարարության միօրինակություն հաստատելն էր, այլև՝ Աջափնյակը «ճշմարիտ ռուսական երկիր» դարձնելը: *Եվ ռուսականացման մեխանիզմներն սկսեցին գործել ամբողջ թափով:*

Չնայած կայսերական քաղաքականության առաջնահերթ խնդիրն Աջափնյա Ուկրաինայում լեհական ազդեցությունների սահմանափակումն էր, բայց այն խոր հետք թողեց նաև ուկրաինացի-գյուղացիության և հրեա-քաղաքաբնակների վրա: 1831 թ.-ի նոյեմբերին Նիկոլայ Առաջինը Կիևում հատուկ հանձնաժողով ստեղծեց, որը զբաղվելու էր արևմտյան նահանգների գործերով: Հանձնաժողովի նախագահ նշանակված Կիևորդ Կոչուբեյը ցարից հստակ հրահանգ էր ստացել՝ «Արևմտյան նահանգներում կյանքը բոլոր ոլորտներում համապատասխանեցնել վելիկոռուսական նահանգների կյանքին»: Մի քանի ամսվա ընթացքում լեհական բոլոր դպրոցները փակվեցին (ուկրաինական դպրոցներ գրեթե չկային), և կրթական ողջ համակարգը վերակազմավորվեց համակայսերականի օրինակով: Ռուսաց լեզուն դարձավ ուսուցման միակ լեզուն: Փակեցին նաև Կրեմենեցի նշանավոր լեհական լիցեյը: Դրա փոխարեն Կիևում բացվեց սբ. Կուլոդիմիրի համալսարանը: Համալսարանի բացման կապակցությամբ, ժողովրդական լուսավորության նախարար Սերգեյ Ուվարովի ողջունի ուղերձում պարզորոշ նշվում էր նպատակը՝ «*ռուսական ազգայնության և ռուսական լուսավորության տարածումն ու արմատավորումը Արևմտյան Ռուսիայի լեհացված հողերում:*»

Աջափնյակում նոր ռեժիմի իսկական մարմնավորումը եղավ գեներալ Դմիտրի Բիբիկովը, որ 1837-1852 թ.թ.-ներին Կիևյան, Պոդոլյան և Կոլիմյան նահանգների գեներալ-նահանգապետն էր: Այս բռի սուլդաֆոնի կառավարման շրջանում, որի ամեն մի խոսքը մի «դազանակի հարված էր», Կիևը դարձավ ռուսական մշակույթի հաստատուն պատվար և ցարական բանակի անառիկ ամրոց: Բիբիկովը երկար-բարակ դատողությունների հակում չուներ և հենվում էր միայն բանակային կոպիտ ուժի վրա: Նա գրչի մի հարվածով 60 հազ. լեհ շլախտիչների զրկեց ազնվականական հրովարտակներից, շատերին էլ արքայից Սիբիր: Շլախտայից բռնագրաված մոտ 3 հազ. կալվածք վերածվեցին ռազմական բնակավայրերի: Բոլոր պաշտոններում լեհ պաշտոնյաները փոխարինվեցին ռուսներով: 1840 թ.-ին *Լիտվական Ստա-*

*տուտի* (օրենսգիրք, որը հիմնված էր միջնադարյան Արևմուտքում գործող օրենքների վրա) լուծարումը, դրանից ոչ շատ առաջ Մազդեբուրգյան իրավունքի վերացման հետ միասին, Ռուսաստանի իշխանության տակ գտնվող Ուկրաինայում ազդարարեցին կառավարման արևմտաեվրոպական համակարգի ավարտը:

Բիբիկովի որոշ քայլեր ուղղակի վերաբերում էին ուկրաինացի ժողովրդական զանգվածներին: 1839 թ.-ին նա շարունակեց հույն-կաթոլիկներին դեպի ուղղափառություն դարձի բեռնելու (ավելի ճիշտ՝ վերադարձնելու) եկատերիմա երկրորդի սկսած գործունեությունը: Կոլիմի, Պոդոլյեի նահանգներում, ինչպես նաև Բելոռուսիայում, հույն-կաթոլիկ եկեղեցին, որ երկար պետ ընդունում էր Հռոմի Պապին, այդ ժամանակ հասցրել էր խորն արմատներ ձգել և մոտ 2 մլն հավատացյալ ուներ: Իր նահանգապետության օրոք կաշառքի, զանգվածային դատաստանների ու տեղահանությունների միջոցով Բիբիկովը հասավ նրան, որ *Ռուսական կայսրությունում հույն-կաթոլիկությունը փաստորեն վերացվեց:* Միայն Խուլմուն և նրա շրջակայքում բնակվող հույն-կաթոլիկների մի փոքրիկ հատվածի հաջողվեց հավատարիմ մնալ իրենց եկեղեցուն:

Բիբիկովն անշուշտ չէր էլ մտածում ուկրաինացի ժողովրդի գոյության, կամ նրա համար օգտակար որևէ բան անելու մասին: Սակայն նրա իրականացրած քաղաքական միջոցառումներից մի քանիսն ուղղակի օգտակար եղան ուկրաինացիների համար: Այսպես՝ Կիևի սբ. Կուլոդիմիրի համալսարանը, որ հիմնադրվեց ի հակակշիռ լեհական մշակութային ազդեցության, կարևոր դեր խաղաց ուկրաինական մշակույթի զարթոնքի գործընթացում: Նիշտ նույն կերպ՝ գեներալ-նահանգապետի հրամանով 1843 թ.-ին ստեղծված Հնագիտական հանձնաժողովը, որի զխավոր նպատակն էր հին փաստաթղթեր ու գրավոր աղբյուրներ հայտնաբերելով և ուսումնասիրելով ապացուցել, որ Ուկրաինան «անհիշելի ժամանակներից» «իսկական ռուսական» երկիր է եղել, ըստ էության դարձավ *ուկրաինական արխիվային կուրբերի առաջին համակարգված ժողովը:* Իսկ այդ հանձնաժողովում աշխատող ուկրաինացի հայրենասերները, հազվագյուտ հնարավորություն ստացան ուսումնասիրելու և տողովելու իրենց երկրի պատմության հենց այն շրջանի ոգով, երբ ընդհանուր քիչ աղերսներ կային Մոսկովյան պետության պատմության հետ:

Գյուղացիության նկատմամբ Բիբիկովի վարած քաղաքականությունը նույնպես շատ անապասելի պտուղներ տվեց: Հույս ունենալով արժանանալ ուկրաինական գյուղացիության բարեհաճությանը և միևնույն ժամանակ՝ նրանց ավելի շատ լարել լեհ «պաների» դեմ, գեներալ-նահանգապետը 1847 թ.-ին հրապարակեց «Գույքային կանոնները», որոնցում ճշգրիտ ու մանրամասն նշվում էր՝ թե կոռի սահմաններում գյուղացին ինչ աշխատանք պետք է կատարի և ինչ աշխատանք պարտավոր չէ կատարել կալվածատիրոջ համար, և թե ինչպիսին է անձնական օգտագործման համար գյուղացուն հասանելիք հողաբաժինը: Բացի այդ, սրբեկվում էր կալվածատիրոջ կողմից սահմանված մասնավոր հարկադրումները և սահմանափակվում գյուղացիների անձնական կյանքին միջամտելու կալվածատիրոջ իրավունքները: Սակայն Բիբիկովի հետնորդները, ռուսական բյուրոկրատիային բնորոշ ձևերով ու միջոցներով այդ «կանոններում» այնքան շտկումներ ու հավելումներ մտցրեցին, որ այն կոսպորտեղ պարզապես անհնարին դարձավ: Կալվածատերերն անպատիժ շարունակեցին վարել առաջվա պես, իսկ զայրացած գյուղացիությունը, կառավարությանը շնորհակալություն հայտնելու փոխարեն, մի շարք խռովություններով պատասխանեց այս «նորամուծումներին»: Կարճ ասած՝ ցարական ռեժիմը, թվում էր, թե խստորեն վերահսկում է հասարակությանը, սակայն կայսերական իշխանությունները երբեք չէին կարող վստահ լինել ոչ իրենց վարած քաղաքականության մոտակա արդյունքների մեջ, ոչ էլ այն հեռահար հետեվանքների մեջ, դեպի ուր դրանք կտանեն կայսրությունն ամբողջությամբ:

## Ավստրիական կայսրություն

Ինչպես արդեն ասվել է, այն ժամանակների Ավստրիան իրենից ներկայացնում էր ոչ թե մասնակալից հասկացողությամբ մի երկիր, այլ բարդ կառուցվածք ունեցող կայսրություն: XIX դարի Ավստրիան՝ դա տասնմեկ մեծ ժողովուրդների և անհաշիվ էթնիկ փոքր խմբավորումների մի խառնամբոխ էր, որ զբաղեցնում էր Արևելյան Եվրոպայի մեծ մասը և 1800 թ.-ին կազմում էր եվրոպական բնակչության մեկ յոթերորդը:

Թանի որ Հաբսբուրգների կայսրության մեջ ոչ մի ազգ կամ ժողովուրդ բացարձակ մեծա-



մասնություն չէր կազմում, ապա ոչ մի ազգային մշակույթ էլ այնպիսի որոշիչ դեր չէր խաղում, ինչպես ռուսական մշակույթը ցարական կայսրությունում: Եվ **չնայած բանակում** և պաշտոնյաների միջավայրում գերիշխում էր գերմաներենը, որը կայսրության ամենաազդեցիկ ազգի լեզուն էր, սակայն դա տարօրինակ կերպով զուգակցվում էր բնակչության աչքի զարնող էթնիկական բազմազանության հետ:

Իր գերիշխանությունը տարածելով նորանոր հպատակների վրա, Չարսուրգների դինաստիան ամենևին չէր ձգտում (համեմայն դեպս՝ սկզբում) փոփոխության ենթարկել կառավարման ավանդական ձևերը բոլոր այն թագավորություններում, դքսություններում, գավառներում ու քաղաքներում, որոնք ինքը գրավում էր: Չարսուրգներն այդպես էին վարվում ոչ միայն այն պատճառով, որ չէին ցանկանում դիմադրություն հրահրել, այլև՝ կառավարման միասնականացումն իրականացնելու համար կենտրոնամետ ուժեղ մարմիններ չունենալու պատճառով: Մինչև XVIII դարի կեսերը նրանց կայսրությունն անկայուն, թույլ կազմակերպված մի խառնամբոխ էր, որ ներքին գծտությունների ու երկպառակությունների կամ արտաքին միջամտությունների պատճառով, հաճախ ճգնաժամային ու խառնակ ժամանակներ էր ապրում:

Վերջապես, 1740 թ.-ին կայսրուհի Մարիա Թերեզիան, զգալով, որ կայսրության գոյությունը հարցականի տակ է, հաղթահարելով տեղական ազնվականության բուռն դիմադրությունը, մի շարք բարեփոխումներ ձեռնարկեց: Նա զորացրեց կենտրոնական իշխանության մարմիններն ու տեղերում հիմնեց նրան ենթակա վարչական կառույցներ, ինչի արդյունքում զգալիորեն մեծացավ բյուրոկրատական մարմինը: Հիմնվեց նաև մշտապես գործող կենտրոնական ռազմական գերատեսչությունը: Սակայն, շրջահայաց քաղաքական գործիչ լինելով, Մարիա Թերեզիան չէր ձգտում իր տիրապետության տակ գտնվող բոլոր տարածքներում լիակատար միօրինակության: Օրինակ՝ անհնազանդ հունգարներից անվերապահ հնազանդություն չէր պահանջում, այլ գերադասում էր զնալ փոխզիջումների:

Առավել եռանդուն բարենորոգիչ դուրս եկավ Մարիա Թերեզիայի որդին՝ Իոսիֆ Երկրորդը: Համակված լինելով այն ժամանակների համար մոդայիկ «լուսավորչալ միապետության» գաղափարով, նա հաստատապես որոշեց աշխարհին զարմացնել օրինակելի կառավարմամբ, ինչը մասնակիորեն նրան հաջողվեց: Անգլիացի մի պատմաբանի արտահայտությամբ, Իոսիֆ Երկրորդի ժամանակ կայսրությունը՝ «լուսավորչալ էր այնքանով, որքանով որ կայսրն իր պարտքն էր համարում հպատակների բարեկեցությանը նպաստելը, իսկ «միապետություն» էր այնքանով, որքանով որ միայն իրեն էր հայտնի, թե ինչու՞ն է կայսրում այդ բարեկեցությունը և ինչպես է պետք հասնել դրան»:

Իոսիֆ Երկրորդի բարենորոգչական նպատակներից էին նաև՝ գյուղացիների վիճակի բարելավումը, փակուղի մտած տնտեսության աշխուժացումը, վարչական կառույցների իրապես արդյունավետ գործունեության խթանումը, համակայսերական կրթական համակարգի կատարելագործումը և այլն: Որպես բացարձակ միապետականության կողմնակից, Իոսիֆ Երկրորդը ջանում էր վերացնել առանձին տարածքների հատուկ իրավունքներն ու արտոնությունները, որոնք բարդացնում էին բարեփոխումների գործընթացը: Հասկանալի է, որ «լուսավորչալ միապետի» ոչ բոլոր բարեփոխումներն էին իրականանալի՝ բարդ ու դժվարին պայմաններում գտնվող նրա կայսրությունում, ինչն էլ պատվախնդիր նորարարին դառն ավստոսանք ու մեծ ցավ պատճառեց: Այնուամենայնիվ՝ Իոսիֆ Երկրորդի կառավարման շրջանը մի յուրատեսակ բարձրակետ էր Ավստրիական կայսրության պատմության մեջ, երբ այն կամք ու կարողություն դրսևորեց ամրանալու և բարեփոխվելու:

Նշված բարեփոխումները մեծ նշանակություն ունեցան նաև ուկրաինացիների համար՝ չէ՞ որ դրանք համընկան Գալիչիան և Ավստրիական կայսրության կազմի մեջ ներառելու ժամանակի հետ: Այդպիսով՝ ուկրաինացիները կայսրության հպատակներ դարձան նրա «ոսկե» ժամանակներում, կամ, ամեն դեպքում այն շրջանում, որը կայսրությունն ինքն էր համարում «ոսկե ժամանակաշրջան»:

## Ուկրաինացիները Չարսուրգների իշխանության տակ

Ավստրիական կայսրության հպատակ ուկրաինացիներից շատերն ապրում էին Գալիչիայում, այսինքն՝ նախկին Ռեչ Պոսպոլիտայի հարավ-արևելյան մասում, որի առաջին տրոհման ժամանակ՝ 1772 թ.-ին, այդ հողերն անցան Չարսուրգներին: Ռեչ Պոսպոլիտայի հետ

միաժամանակ սկսում է փլուզվել մեկ այլ՝ երբեմնի հզոր Օսմանյան կայսրությունը, որից էլ վիճման, երկու տարի անց, ուկրաինական տարածքի ևս մի մաս պոկեց՝ Բուկովինան: Վերջապես, Լեհաստանի երրորդ և վերջին բաժանման արդյունքում, 1795 թ.-ին Չարսուրգներն ստացան նաև հին լեհական հողերը, ներառյալ Կրակովը: Բուկով այդ նոր հողերը Չարսուրգները միավորեցին մեկ նահանգի մեջ՝ Գալիցիայի (ուկրաիներեն՝ Գալիչինա): Բայց եթե Արևելյան Գալիչիան մեծ մասամբ բնակեցված էր ուկրաինացիներով, ապա Արևմուտքյանը՝ առավելապես լեհերով, և այդ երկու ժողովուրդների միավորումը մեկ նահանգի մեջ՝ հող էր ամենամանկանխատեսելի հետևանքներով:

Չարսուրգների անուղղակի վերահսկողության տակ էր գտնվում ուկրաինացիներով բնակեցված ևս մի տարածք: Խոսքը Կարպատյան լեռների արևմտյան լանջերի՝ Անդրկարպատների մասին է, որ միջնադարից սկսած Չունգարական թագավորության մի մասն էր: XIX դարում Անդրկարպատները շարունակում էր մնալ Ավստրիական կայսրության հունգարական մասում, և այդ պատճառով մեկուսացված էր ուկրաինական մյուս տարածքներից:

## Գյուղացիները

Չարսուրգների կայսրությունում ուկրաինացիների կյանքի պայմանները կարելի է բնորոշել միայն մի՝ բառով՝ աղքատություն: Լեռնային ռելիեֆը, փոքր հողաբաժինները բարդացնում էին հողագործությունը, իսկ լեհական շլախտայի անասելի լուծը լրիվ ուժասպառ էր անում հողագործին: Ծանր էր նաև գալիցյան փոքր ու կեղտոտ քաղաքների բնակչության կյանքը, որն ավելի ծանրացավ, երբ Լեհաստանի բաժանումների հետևանքով այդ քաղաքները կտրվեցին Ուկրաինայի ավանդական շուկաներից: Ջարմանալի չէ, որ Գալիչինան համարվում էր կայսրության ամենաաղքատ ու հետամնաց ծայրամասը:

Արևմտյան ուկրաինացիների մեծ մասը ճորտ գյուղացիներ էին, որոնց կյանքն ամենօրյա դաժան տառապանք էր: Աղքատիկ հողաբաժիններից օգտվելու իրավունքի դիմաց նրանք ստրուտավոր էին շաբաթական 5-6 օր աշխատել կալվածատիրոջ համար: Բացի այդ, շլախտան նրանց օգտագործում էր նաև որպես տնային ծառաներ, և դեռ բնաբահրա էր պահանջում: Պատմաբանների հաշվարկներով՝ գյուղացու խղճուկ եկամտի կեսը կամ առնվազն երրորդ մասը տիրոջ գրպանն էր մտնում: Բայց հողատերերին այդ էլ էր քիչ թվում, և նրանք ժամանակ առ ժամանակ հասարակական կամ գյուղացիական նոր հողաբաժիններ էին էլում, ամեն անգամ փոքրացնելով «բաժինը»: Այսպես՝ եթե 1819 թ.-ին Արևելյան Կալիչինայում գյուղացու միջին հողաբաժինը 14 ակր էր, ապա 1848 թ.-ին՝ արդեն 9,6, իսկ միջին կալվածքի չափերն այդ ընթացքում 1051-ից հասել էր 1400 ակրի: Կարճ ասած՝ դա հենց այն հասարակությունն էր, որտեղ հարուստն անշեղորեն հարստանում էր, աղքատն՝ անշեղորեն աղքատանում:

Այդ պայմաններում ոչ միայն ապրելը, այլև կենդանի մնալն էլ շատ դժվար էր: 3,5 հազ. հեռավոր ու խուլ, հետամնաց գյուղեր, գրեթե անանցանելի ճանապարհներ, տնտեսությունը վարելու պարզունակ մեթոդներ՝ ահա թե ինչ էր իրենից ներկայացնում Արևելյան Գալիչիան: Զարմանալի չէ, որ որպես կանոն այստեղ երեք անգամ պակաս բերք էին ստանում, քան Մեխիայում կամ Ավստրիայում, իսկ գյուղացու օրաբաժինը, որ կարտոֆիլ էր ու կաղամբ, արևմտաեվրոպացու օրաբաժին կեսի չափ էր: Սովի տարիներին, իսկ դա հաճախ էր պատահում, հյուծված գյուղացիներից շատերը պարզապես մեռնում էին: 1830-1850 թ.թ.-ներին Արևելյան Գալիչինայում մահացությունը գերազանցում էր ծնելիությանը: Օրինաչափ էր ուրեմն, որ արևմտաուկրաինական գյուղացու կյանքի միջին տևողությունը շատ ցածր էր՝ 30-40 տարի:

Ինչպես ընդունված է ասել՝ «վիշտը գինու մեջ են խեղդում»: Իր թվառ գոյությունը «թեթևացնելու» համար գյուղացին պանդուկ էր մտնում, որտեղ նրան կրկին թալանում էին. սովոր արտադրելու մենաշնորհով օժտված լեհ կալվածատերերը, ինչպես նաև պանդուկատները («չինկարները»), որոնք հիմնականում իրեաներ էին: Ավելին՝ որոշ կալվածատերեր իրենց ճորտերի համար նույնիսկ սահմանում էին խմիչք օգտագործելու պարտադիր եղանակը, որպեսզի իրենց արտադրանքը լրիվ սպառվի: Իհարկե, ոչ մի շլախտիչի մտքով անցած չէր անցնում, թեկուզև իր շահույթի ավելացման կամ հուսալիության ապահովման համար, թեթևացնել գյուղացու կյանքը: Նման գաղափարը միայն զարմանք կառաջացներ լեհ ժողովրդին՝ մոտ, քանի որ գյուղացուն նրանք համարում էին մարդկային գոյության մի տարրին տեսակ, որ ընդունակ չէ անգամ կատարելագործվելու:



## Յոգևորականությունը

Պարզ է, որ ոչ բոլոր արևմտյան ուկրաինացիներն էին գյուղացիներ: Բայց եթե փորձենք այդ հասարակության մեջ որևէ կարգի ընտրախավ փնտրել, ապա ավելի լավը չգտնելու, ստիպված պետք է կանգ առնենք հույն-կաթոլիկ հոգևորականության վրա:

Գյուղացիության միջավայրում հոգևորականությունն ընտրախավի դեր էր կատարում, քանի որ իսկական ընտրախավը՝ ուկրաինական ազնվականությունը, դեռևս XVI-XVII դարերում հրաժարվել էր իր ժողովրդից, լեհացել էր ու կաթոլիկություն ընդունել: Եվ այդ ազնվական դինաստիաների փոխարեն Արևմտյան Ուկրաինայում հայտնվում էին տեղական հոգևորականության «դինաստիաները»: Ընտրիվ այն բանի, որ ի տարբերություն հոգևոր պետերի, ծխական քահանաներին թույլատրվում էր ամուսնանալ և ընտանիք կազմել, առաջ եկան քահանաների «դինաստիաներ», որոնք հաճախ սերնդե-սերունդ կապված էին մնում իրենց միջավայրին: XIX դարում Արևելյան Գալիչինայում արդեն մոտ 2-2,5 հազ. ման ընտանիք կար: Նրանք հաճախակի հավաքույթներ էին կազմակերպում, երկար ժամանակով իրար հյուր էին գնում, ամուսնացնում էին իրենց երեխաներին և մեծ ձևով ստեղծում էին միմյանց հետ սերտորեն կապված ժառանգական կաստաներ՝ խմբակային համերաշխության բարձր զգացումներով:

Իրենց հավատակից և ծխի անդամ գյուղացիների մոտ հոգևորականությունը մեծ հարգանք էր վայելում, չնայած իրենց տնտեսական մակարդակով ու բարեկրթությամբ քիչ էին տարբերվում նրանցից, հատկապես՝ մինչև ավստրիացիների գալը: Ինչևէ, գյուղական համայնքը, որպես կանոն, ամենամեծ հողաբաժինը քահանային էր հատկացնում, և դեռ՝ կանոնավոր վարձատրում էր կնուների, հարսանիքի ու թաղման արարողությունների ժամանակ: Բայց քահանայի կարին ու որբերը աշխատում ու ապրում էին բոլոր գյուղացիների նման: Իսկ որդուն հոգևոր կրթության տալու, կամ դստեր համար կարգին օժիտ պատրաստելու ծախսերը հաճախ սնանկացնում էին գյուղի հոգևոր հովիվներին:

Մինչդեռ, աստվածաբանական կրթությունը XVIII դարի վերջին և XIX դարի սկզբին Արևելյան Գալիչինայում այնքան ցածր մակարդակի էր հասել, որ քահանաներից շատերը դժվարությամբ էին եկեղեցական սլավոներենով կարդում պատարագի տեքստերը, աշխարհայացքով էլ նրանք քիչ էին տարբերվում գյուղացիներից: Լեռ շլախտիչները, որ մինչև Զաբուրդների գալն իրենց լիակատար տեր էին զգում, կոպտորեն անարգում ու քամահրում էին հույն-կաթոլիկ քահանաներին և հաճախ ստիպում էին գյուղացիներին հավասար ձրի աշխատել իրենց կալվածքներում: Սակայն ի հեծուկս լեհերի, դա նաև դրական ազդեցություն ունեցավ, քանի որ քահանաների հետ գյուղացիության անձնական ու հոգևոր կապերն այնպես ամրապնդվեցին, որ լեռ քայնծները երազել անգամ չէին կարող: Գույն-կաթոլիկ քահանաները գյուղացիության համար ուսուցիչ ու խորհրդատու էին ոչ միայն հոգևոր, այլ շատ հաճախ նաև աշխարհիկ գործերում, դրանով իսկ ավելի զայրացնելով լեհերին, որոնք ատելությամբ ու արհամարհանքով նետում էին, թե ուկրաինացին՝ «կամ ճորտ է, կամ տերտեր»:

Այս ասացվածքն իսկապես էլ հեռու չէր ճշմարտությունից: Չէ որ գրեթե ամբողջ XIX դարի ընթացքում արևմտաուկրաինական հասարակությունը բաղկացած էր ընդամենը երկու խավից՝ գյուղացիական զանգվածից և քահանաների ոչ մեծ կաստայից: Արևմտյան ուկրաինացիները ոչ միայն իրենց ազնվականությունը չունեին, այլև քաղաքացի ավելի քիչ ունեին, քան Ռուսական կայսրության ուկրաինացիները: Այս ամենը որոշ պատմաբանների հիմք տվեց ասելու, որ XIX դարի արևմտաուկրաինական հասարակությունը՝ «սոցիալական անլիարժեք հասարակություն էր»:

Այս հիմնավորումները չի կարելի բավական լուրջ չընդունել: Իսկապես, ազնվականության բացակայությունն այն ժամանակ փակում էր քաղաքական իշխանություն տանող ճանապարհը, իսկ առանց քաղաքների էլ՝ չէին զարգանում առևտուրն ու արդյունաբերությունը: Պարզ է, որ խոսքը վերաբերում է ուկրաինական ազգային քաղաքականության, արդյունաբերության ու առևտրի ձևավորման հնարավորություններին, քանի որ և՛ ազնվականություն, և՛ քաղաքային խավեր Գալիչինայում կային և յուրովի զարգանում էին: XVIII դարի վերջին լեռ շլախտիչները 95 հազ. էին, այսինքն մարզի ամբողջ բնակչության մոտ 4 %-ը: Քաղաքաբնակները 300 հազ. էին, կամ բնակչության 10 %-ը (հիմնականում՝ ոչ հարուստ հրեա արհեստավորներ էին, խանութպաններ և մի խումբ հարուստ վաճառականներ): Բացի այդ՝ Զաբուրդների իշխանությունն հաստատվելուց հետո, մի նոր սոցիալական խումբ հայտնվեց՝ պաշտոնյաները: Նրանք շատ չէին, ազգությամբ՝ չեխեր և ավստրիացիներ էին, բայց բոլորն էլ խոսում էին գերմաներեն: Զաբուրդները խրախուսում էին նաև կայսրության

կենտրոնից տասնյակ հազարավոր գերմանախոս գաղութաբնակների ներգաղթը, հուսալով, որ նրանք կկարողանան հետամնաց մարզում ներդնել տնտեսավարման ժամանակակից մեթոդներ և աշխուժացնել գյուղացիական տնտեսությունը: Այսպիսով՝ Գալիչինայի հասարակությունը ոչ միայն բազմազգ էր, այլև հստակ բաժանված էր որոշակի սոցիալ-էթնիկական խմբերի, որոնցից յուրաքանչյուրը զբաղեցնում էր իր առանձին ու փակ ոլորտը՝ հասարակական, տնտեսական և մշակութային կյանքում:

## Զաբուրդների բարեփոխումները և արևմտյան ուկրաինացիները

Չնայած XVIII դարավերջի Զաբուրդների բարեփոխումները համակայսերական էին, սակայն ազդեցությունը հատկապես ուժեղ էր զգացվում Գալիչինայում, քանի որ ծայրահեղ սոցիալական հասած նահանգին այդ բարեփոխումներն օդի պես անհրաժեշտ էին: Իոսիֆ Երկրորդն այդ նահանգը դիտում էր որպես մի փորձադաշտ, որտեղ կարելի է հասարակությունը վերակառուցելու տարբեր փորձարկումներ իրականացնել, հատկապես՝ արտադրողականությունը բարձրացնելու ուղղությամբ: Վիեննայի կառավարությունն հասկանում էր, որ այդ զլխավոր նպատակին հասնելու ճանապարհին նախապես երկու խնդիր պետք է լուծվեր. նախ՝ վերացնել շլախտայական հնացած կարգերը՝ այն փոխարինելով խիստ կենտրոնածիք բյուրոկրատական համակարգով, և երկրորդ՝ վերջ տալով շլախտային անզուսպ կամապետություններին, բարձրացնել հասարակության մյուս շերտերի սոցիալ-տնտեսական մակարդակը:

Գալիչինայի վարչական վերակառուցումն իրականացվեց արագ և արդյունավետ: Մինչև 1786 թ.-ը լեռական օրենքները փոխարինվեցին ավստրիական օրենքներով, իսկ շլախտական «սեյմիկները» ցրեցին: Որպեսզի այդ հարվածը հին վերնախավը ծանր չտանի և կատարվածն հարցերում ձայն ունենա, Վիեննան հիմնեց Դասերի Ասամբլեա (ժողով), որ կազմված էր շլախտիչներից ու հոգևորականներից: Սակայն այդ մարմինը իրականում ինքնուրույն որոշումներ ընդունելու իրավունք չուներ, այլ կարող էր միայն խնդրագրերով դիմել միապետին: Իրականում ամբողջ իշխանությունը կենտրոնացված էր կայսերական բյուրոկրատիայի ձեռքում: Նահանգը բաժանվեց 18 շրջանի (Բուկովինան միացնելով, դարձավ 19 շրջան), որոնք զլխավորում էին Վիեննայի կողմից նշանակվող պաշտոնյաներն՝ իրենց գերմանալեզու գրասենյակներով: Բյուրոկրատական աստիճանակարգի վերևում կանգնած էր նահանգապետը, որին նշանակում էր անձամբ կայսրը: Նահանգապետն իր վարչակազմով տեղավորված էին Լվովում, կամ ինչպես ավստրիացիներն էին կոչում՝ Լեմբերգում, որը նահանգի վարչական և դատական կենտրոնն էր:

## Իոսիֆ Երկրորդի բարենորոգումները

Պահ բարձրացած խոշոր բարենորոգչի կարևորագույն բարեփոխումները գյուղացիության խնդիրներին էին վերաբերում: 1780-ական թվականների հենց սկզբում արդեն կայսրն հաստատեց, որ, առանց ուկրաինական տանջված գյուղացիության վիճակը թեթևացնելու, Գալիչինայում հասարակական կյանքը տեղաշարժել հնարավոր չէ: Եվ 1781 թ.-ից Իոսիֆ Երկրորդը քաղաքական մի շարք համարձակ քայլերի դիմեց՝ ուղղված ճորտատիրական կարգերի վերացմանը: Ամենից առաջ հողատերերին արգելվեց տարեկան 156 օրից ավել կող ու ընդար պահանջել գյուղացուց, իսկ ամենաաղքատ գյուղացիների համար՝ դրանից էլ քիչ: Կատրոն արգելվում էր լրացուցիչ պարհակը՝ հօգուտ հողատիրոջ: Օրինականացվում էին սեփական հողաբաժինը մշակելու գյուղացու իրավունքները, ինչպես նաև՝ ամուսնանալ առանց հողատիրոջ թույլտվության կամ միջամտության, տեղափոխվել այլ հողաբաժիններ, և հատկավոր պահին՝ տիրոջ դեմ բողոքով դիմել դատարան:

Դրանք մեծ նշանակություն ունեցող փոփոխություններ էին: Այսուհետև Գալիչինայի գյուղացին «օրենքից դուրս» չէր, և կարող էր, թող որ ոչ լիիրավ, բայց՝ այնուամենայնիվ, կայսրության քաղաքացի զգալ իրեն: Հասկանալի է, որ այս ամենը չէր նշանակում, թե նա հասարակում է հասարակության մյուս խավերին: Նա շատ ու շատ առումներով դեռևս կախյալ մեջ էր կալվածատիրոջից և ենթարկվում էր նրան, բայց արդեն նրա «ապրանքը» չէր, այլ կալվածատիրական հողակտորի ժառանգական իրավատերը, և հողագործի հետ հողատիր-



րոջ հարաբերությունները պարզորոշ ու ճշգրիտ իրավաբանական հիմքերի վրա էին դրվում: **Իսկ եթե հիշենք, որ հենց նույն օրերին, Իոսիֆ Երկրորդի «գործընկերը»՝ Եկատերինա Երկրորդն ընդհակառակը՝ ծորտացնում էր Չախախնյակի գյուղացուն, որ դրանից դեռևս 150 տարի առաջ իրավաբանորեն ազատ մարդ էր, ավելորդ կլինի հարցնել, թե՞ ո՞վ էր իսկական «լուսավորյալ» բարենորոգիչը:**

Կայսրության նոր քաղաքականությունը մեծ առավելություններ բերեց նաև հույն-կաթոլիկ եկեղեցուն: Չենց սկզբից Մարիա Թերեզիան և Իոսիֆ Երկրորդը կաթոլիկների և հույն-կաթոլիկների հետ իրենց հարաբերություններում հենվում էին հավասարության սկզբունքի վրա: Տասնամյակներ շարունակ լեհական ռեժիմի անթաքույց խտրականությունից հետո, հույն-կաթոլիկ եկեղեցին վերջապես կարողացավ ազատ շունչ քաշել: Կայսրության նոր օրենքներով՝ երկու եկեղեցիների ծխական քահանաները հավասար իրավունքներով էին օժտվում և լեհ կալվածատերն արդեն չէր կարող խամցվել իր տիրույթներում նոր քահանայի նշանակման գործերին: Ավելին, կառավարությունը բոլոր հոգևորականներին, այդ թվում և հույն-կաթոլիկ քահանաներին, համեստ ռոժիկ նշանակեց, ինչն անմիջապես բարձրացրեց նրանց տնտեսական կարգավիճակը: Այս բոլոր միջոցառումների պատկն **հանդիսացավ 1808 թ.-ին, 400-ամյա ընդմիջումից հետո, Գալիչինայի միտրոպոլիտության վերականգնումը:** Այսպիսով, հույն-կաթոլիկ եկեղեցին՝ այդ միակ հոգևոր-գաղափարական մարմինը, որին Գալիչինայի գյուղացիությունը կարող էր «իրենը» համարել, XIX դար էր մուտք գործում բարեփոխված, թարմ ուժերով և վերածննդի հույսերով:

Չուսալու համար մի կարևոր պատճառ էլ կար՝ Մարիա Թերեզիայի սկսած բարեփոխումները կրթության բնագավառում: 1774 թ.-ին կայսրուհին Վիեննայում հիմնեց հույն-կաթոլիկ սեմինարիա՝ այսպես կոչված՝ **Քարթառում**, որտեղ արևմտաուկրաինացի ուսանողները ոչ միայն աստվածաբանական համակարգված կրթություն էին ստանում, այլև հաղորդակցվում էին արևմտյան մշակույթի հետ: **1783 թ.-ին մի ավելի մեծ սեմինարիա բացվեց Լվովում:** Ինչպես միշտ, Իոսիֆ Երկրորդը մի քայլ առաջ անցավ մորից և **1784 թ.-ին հիմնեց Ուկրաինայում առաջին՝ Լվովի համալսարանը**, որպեսզի հետագայում իր բարեփոխումներն իրականացնող զարգացած պաշտոնյաներն ու հոգևորականները տեղում կրթություն ստանան: Չամալսարանի չորս ֆակուլտետներում 250 ուսանող էր սովորում, հիմնականում լեհեր, բայց ուկրաինացիներ էլ կային: Ժամանակի ընթացքում նրանց համար նույնիսկ կազմակերպեցին հատուկ ֆակուլտետ՝ **«Ստուդիում ռուսենում»** («ռուսին»-բառից, որով իրենց կոչում էին արևմտյան ուկրաինացիները), քանի որ նրանցից շատերը չէին հասկանում գերմաներենն ու լատիներենը, որոնցով մյուս ֆակուլտետներում դասախոսություններ էին կարդում: **«Ստուդիում ռուսենումում» պարապմունքներն անց էին կացվում արհեստական վերամբարձ լեզվով՝ «յազիչիեով», որ եկեղեցական սլավոներենի և ուկրաիներենի տեղական բարբառի խառնուրդ էր:**

Լեհերի ժամանակ Արևելյան Գալիչինայում տարրական կրթություն գոյություն չուներ: Չատուկենտ գյուղական միադաս դպրոցներում կիսագրագետ դպիրներն հազիվ երեխաներին գրաճանաչ էին դարձնում ու ծանոթացնում էին Սուրբ զրքին: Իրավիճակը շտկելու համար, **1774 թ.-ին արդեն ավատրիացիներն իրենց ուսուցման համակարգն են մտցնում**, որը բաղկացած էր երեք տեսակի դպրոցներից. մայրենի լեզվով ուսուցանվող **միադասարան թեմական, եռադասարան՝** գերմաներեն կամ լեհերեն լեզուներով, և **քառադասարան** դպրոցներ, որտեղ երեխաներին պատրաստում էին գիմնազիա կամ համալսարան ընդունվելու մակարդակով: Կաթոլիկ վանքերին կից ճիզվիտական կամ նման դպրոցները, որտեղ կրթություն էին ստանում լեհական ազնվականների երեխաները, վերացվեցին:

Ինչևէ, Իոսիֆ Երկրորդի բարեփոխումների հոյակապ մտահղացումները մեծ մասամբ կյանքի չկոչվեցին: Դրանցից շատերը, որ ծնվել էին վիեննական անաղմուկ կաբինետներում, ոչ միայն Գալիչինայում, այլև մյուս նահանգներում ևս անհաղթահարելի արգելքների էին հանդիպում: Այսպես օրինակ, չարդարացավ գյուղացիների վիճակը բարելավելու շնորհիվ գյուղատնտեսության արդյունավետության անհապաղ բարձրացման հետ կապված կայսեր սպասելիքները: Շուտով պարզ դարձավ, որ Գալիչինայի տնտեսական խնդիրները միայն գյուղացիության վիճակի հետ չէ, որ կապված են: Ի տարբերություն Ուկրաինայի այն հատվածի, որ Ռուսական կայսրության կազմի մեջ մտավ, Արևելյան Գալիչինան չուներ ո՞չ խոպան հողեր, որ կարելի լիներ յուրացնել, ո՞չ ելք դեպի ծով, ինչը կնպաստեր առևտրի զարգացմանը: Իսկ ի տարբերություն Արևմտյան Եվրոպայի, ուր գյուղացիները զանազանաբար դիմում էին դեպի քաղաքները, որտեղ աշխատավոր ձեռքերի խիստ կարիք էր գազգվում,

Գալիչինայի նույնիսկ այն բնակավայրերը, որ կարելի էր արդեն քաղաք համարել (նման մոտ 60 քաղաք էր արդեն կազմավորվել), տնտեսական խորը լճացում էին ապրում: Կարճ ասած, այդ տարածաշրջանում տնտեսական զարգացման հնարավորություններն ու հեռանկարը խիստ սահմանափակ էին: Ավելին՝ Վիեննայի վարած տնտեսական քաղաքականությունն առավել էր սրում իրավիճակը, քանի որ կայսրության նպատակը հիմնականում արևելյան շրջաններում գյուղատնտեսական ուղղվածությունը պահպանելն էր, իսկ արդյունաբերության զարգացումը նախատեսվում էր արևմտյան շրջաններում, ամենից առաջ՝ Ավստրիայում և Զեխիայում: Նման քաղաքականության պայմաններում Գալիչինան դատապարտված էր մնալու որպես հումքի աղբյուր և պատրաստի արտադրանքի իրացման շուկա, այսինքն՝ փաստորեն, որպես կայսրության առավել զարգացած արևմտյան նահանգների ներկայեստական գաղութ:

Բարեփոխումները կասեցնում էր նաև շլյախտան, աշխատելով ամեն կերպ վնասել ու խաթարել նորարարական ամեն քայլ ու գաղափար: Կայսերական կառավարությանը կասկածելի դաշնակից էր նաև կաթոլիկ եկեղեցին, որ զայրացած էր իր հողերի բռնագրավումով և կրթության համակարգում իր դերի նվազեցումով: Վերջապես, աճող դիմակայությունը փոփոխությունների դեմ, որոնք, այս ամենի հետ մեկտեղ բերում էին նաև ամբողջ կայսրության կենտրոնացված ու «գերմանացված» կացութաձևին, իր գազաթնակետին հասավ, երբ ապստամբեց Չունգարիան: Չիասթափված ու վհատված Իոսիֆ Երկրորդը ստիպված էր հրաժարվել բարեփոխումների իր այդքան գեղեցիկ շատ մտահղացումներից: Նա մահացավ 1790 թ.-ին, իրենից հետո թողնելով մի դառնակսկիծ տապանագիր. **«Աստ հանգչի Իոսիֆ Երկրորդ արքան, որի բոլոր ջանքերը զուր անցան»:**

Բարենորոգումների ետընթաց շարժումը, որ դեռ իր կյանքի վերջին սկսեց Իոսիֆ Երկրորդը, շարունակեցին նրա հետևորդները, հատկապես պահպանողական Ֆրանց Առաջինը: Ամենից առաջ վերացվեցին գյուղացիների կյանքի մի շարք բարեփոխումները և փաստորեն կրկին վերականգնվեց ճորտատիրությունը: Սակայն եկեղեցու, կրթության և իրավունքի վերաբերյալ փոփոխությունները հիմնականում մնացին ուժի մեջ: Առանց Իոսիֆ Երկրորդի այդ «լուսավորյալ» միջոցառումների, դժվար կլինեք պատկերացնել կայսրության հետագա ազատականացումը XIX դարի վերջին:

### Ռուտենիություն\*

Մարիա Թերեզիայի և Իոսիֆ Երկրորդի բարեփոխումները, իրենց սահմանափակությամբ ու ոչ լիարժեքությամբ հանդերձ, համենայն դեպս բարելավեցին կայսրության ամենամեղված ժողովուրդներից մեկի՝ արևմտյան ուկրաինացիների վիճակը: Ընդ որում՝ բարեփոխումներն առնչվեցին ոչ միայն կյանքի նյութական պայմաններին, այլև հայացքներին ու տրամադրություններին: Ինչպես և սպասելի էր, բարեփոխումներն ուկրաինացիների մոտ խորին երախտագիտության զգացում ծնեցին Չաբսբուրգների նկատմամբ՝ ընդհանրապես և Իոսիֆ Երկրորդի նկատմամբ՝ մասնավորապես, և ժողովրդի հավատարմությունն այդ դիմատիային այն աստիճանի հասավ, որ ասելիք էր դարձել. **կայսրությունում ուկրաինացիների նույնիսկ անվանում էին «Արևելքի տիրոջներ»:**

Ստրկամտության աստիճանի հասնող հավատարմությունն իր բացասական հետևանքներն ունեցավ, քանի որ սնում էր այսպես կոչված՝ «ռուտենիությանը»՝ տրամադրությունների ու հոգեբանության մի խառնակ ամբողջություն, որոնք իշխում էին արևմտաուկրաինական «վերնախավի» միջավայրում ընդհուպ մինչև 1830-ական թվականները: «Ռուտենցիներին», որոնց թվում հիմնականում քահանաներ էին, բնորոշ էր ծայրահեղ գավառականությունը, որոնք «ազգ» նույնացնում էին բացառապես Գալիչինայի, հույն-կաթոլիկության և քահանայական կաստայի հետ:

Վիեննայում իշխող նոր պահպանողականությունն ուժեղացրեց արևմտաուկրաինական վերնախավին բնորոշ կասկածամտությունը՝ նորամուծությունների նկատմամբ: Ամեն ինչում նմանակելով շլյախտային, ընդօրինակելով նրա բոլոր բարքերն ու սովորությունները (մինչև անգամ լեզուն), «ռուտենցիներն» իրենց միջավայրում կեղծ ազնվականություն էին արմատավորում, ինչն արտահայտվում էր գյուղացիներին ու «խոզարածների լեզուն» արհամարհելով: Այն բանից հետո, երբ Չաբսբուրգները բարձրացրեցին հոգևորականության կարգավիճակը, հույն-կաթոլիկ քահանաների և գյուղացիության սերտ կապը, որոնց միջավայրում

\* Ռուտենիա - Արևմտյան Ուկրաինայի անվանումն է Չաբսբուրգների կայսրությունում:



նրանք ապրում էին, հիշողություն դարձավ: Հոգևոր դասն արդեն միայն **Վիեննայի** կողմն էր նայում, ստրկաբար ընդունելով կայսրների և՛ գայրույթը, և՛ ողորմածությունը՝ **երբեք** և ոչ մի դեպքում պահանջներ չներկայացնելով: «Ռուտենիական» **հոգեբանությունն** օգնում էր **հնազանդ պահել արևմտաուկրաինացիների մի քանի սերունդ, ստիպելով նրանց հաշտվել նվաստացումների և հետամնացության հետ, խոչընդոտում էր գոյություն ունեցող իրավիճակը փոփոխելուն ուղղված ցանկացած նախաձեռնություն: Այսպիսով, ոչ միայն Ռուսական, այլև Ավստրիական կայսրությունում ուկրաինական վերնախավի շատ ներկայացուցիչներ օգնում էին սանձահարել իրենց հայրենակիցներին:**

\* \* \*

Կայսրությունների կազմում ապրելու ընթացքում ուկրաինացիներն **իրենց հասարակական, քաղաքական ու տնտեսական կյանքը** «կանոնակարգելու» այնպիսի դաժան, համապարփակ ու անպատկառ ձևերի բախվեցին, ինչպիսիք մինչ **այդ երբեք** չէին տեսել:

Ամենահաս բյուրոկրատիայի օգնությամբ պետությունը **թափանցում էր ամենուր, որտեղ ապրում էին ուկրաինացիները:** Իսկ այդ ամենագետ, ամեն բան հոգացող ու ամենքին խնամք տանող պետության մշտական ներկայությունը հանգստացնող **զգացողություն էր** ծնում, թե ինչ որ տեղ՝ հեռավոր ու հիասքանչ մայրաքաղաքում, ամենակարող միապետ-**կայսրը** անձնական բարեհաճությամբ կարգավորում է ուկրաինացիների կյանքը: Եվ **ինչքան** այդ զգացողությունը տիրում էր ուկրաինական վերնախավին, այնքան նրա **քաղաքական** նվիրվածությունը Ուկրաինային աստիճանաբար մարում էր: Վերջիվերջո՝ ուկրաինական հողերը **նրա** համար դարձան կայսրության՝ լինի դա ռուսական թե **ավստրիական**, ընդամենը մի մասնիկը միայն: Նույն կերպ նվազում-թուլանում էր նաև ուկրաինական ինքնության զգացումը, որ այնքան հզոր էր XVII-XVIII դարերի Կոզակական Ուկրաինայում:

Կայսերական ժամանակաշրջանի մյուս առանձնահատկությունն էլ այն էր, որ **ուկրաինական հասարակությունը** երկփեղկվեց՝ դառնալով «ուկրաինա-**ռուսական»** և «**ուկրաինա-ավստրիական»:** Ինչևէ՛ Արևմտյան և Արևելյան Ուկրաինայի մեջ առաջացած տարբերությունները սկսել էին խորանալ դրանից առաջ, դեռ 1654 թ.-ից, երբ Մոսկվան իր **իշխանությունը** տարածեց Չախափնյակի վրա, իսկ Աջափնյակը մնաց Ռեչ Պոսպոլիտայի **կազմում:** Այդ ժամանակներից ուկրաինացիներն սկսեցին ապրել երկու միանգամայն **տարբեր քաղաքական համակարգերում:** Բայց Ռեչ Պոսպոլիտայում նրա գոյության վերջին շրջանում արևմտյան ուկրաինացիների քաղաքական, մշակութային և սոցիալ-տնտեսական նշանակությունն այնքան ընկավ, որ գրեթե աննշան դարձավ: Փոխարենը, **ինչպես կտեսնենք, Ավստրիական կայսրությունում XIX դարում նրանց վիճակն արմատապես կփոխվի և արևմտյան ուկրաինացիները դարձյալ առաջնային դեր կխաղան ողջ Ուկրաինայի ժողովրդի պատմության մեջ:** Ամեն դեպքում, այսուհետև Ուկրաինայի նոր պատմությունը կընթանա երկու զուգահեռ ուղիներով, որոնցից մեկը հարթում էին արևմտյան ուկրաինացիները՝ Ավստրիական կայսրության կազմում, մյուսը՝ արևելյան ուկրաինացիները՝ Ռուսական կայսրությունում:



## ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԹՈՆՔ

XIX դարը, թերևս, իր հավասարը չուներ համապարփակ, բազմազան ու հրապուրիչ նոր գաղափարների ծագման ու ծաղկման առումով: Եիշտ է, դեռևս Վերածննդի շրջանում սկսվեց իրաժարումն այն միջնադարյան համոզումներից, թե արար աշխարհում Աստծո կամքն է իշխում, ուրեմն և՛ ճանաչել այն հնարավոր չէ որևէ այլ ճանապարհով, բացի այդ կամքը ճանաչելուց: Բայց XIX դարում, Վերածննդի մտածողների կողմից ցանկած կասկածները ծլարձակեցին, և արդեն զարգացած եվրոպացիներին ոչինչ չէր խանգարում վերջնականապես համոզվելու, որ մարդկային բանականությունը կատարելապես ի վիճակի է և՛ ճանաչել, և՛ փոխել մարդկային կյանքը: Այդ համոզումնքն էլ հենց գաղափարների ու գաղափարախոսությունների աննախադեպ ծաղկմանը հանգեցրեց: Ավելին, **գաղափարախոսությունը, այսինքն՝ հայացքների այն համակարգը, որն հավակնում է բացատրել անցյալն ու ներկան և նշել դեպի լավագույն ապագան տանող ուղիները, այդ ժամանակ դառնում է պատմության գլխավոր շարժիչ ուժը:**

Այս բոլոր աշխարհայեցական նորամուծություններն արտակարգ սրությամբ դրսևորվեցին Արևելյան Եվրոպայում, Երկրագնդի այդ հատվածում քաղաքական փոփոխությունների առաջապահ դիրքեր մղելով սոցիալական հատուկ մի խումբ, որը մասնագիտանում էր գաղափարների հիմնավորման և տարածման մեջ, ինչպես նաև՝ զինվորագրելու զանգվածներին՝ ծառայելու այս կամ այն գաղափարախոսությանը: Այդպիսի մարդկանց, որ ինչ-որ չափով հիշեցնում էին արևմտյան ինտելեկտուալներին, Արևելյան Եվրոպայում կոչեցին **մտավորականներ:**

Կենց ազգային գաղափարախոսությունն էլ դարձավ մեկը նրանցից, որոնց օգնությամբ մտավորականներին հաջողվեց առավել տպավորիչ ձևով գրավել զանգվածներին: Ինչպես հետո կտեսնենք, հենց ազգային ըմբռնումն էլ լիովին անսպասելի դարձավ ոչ միայն հասարակությանը հասկանալու, այլև նրա վարքն ուղղորդելու բանալին: Դրա հաստատումն Ուկրաինայում, ինչպես նաև ողջ աշխարհում, անսխալ վկայում է, թե գալիս է այն դարաշրջանը, որ մենք կոչում ենք ժամանակակից. **ազգ հասկացության հետ եկան գաղափարներ և խնդիրներ, որոնք խիստ այժմեական են և հիմա էլ ուղեկցում են մեզ:**

### Ազգ հասկացությունը

Այսօր ազգի գաղափարն այնքան տարածված է, որ մեզ համար դժվար է ըմբռնել, թե որքան աղոտ էին պատկերացումներն ազգերի մասին XIX դարակազրիմ՝ իրենց դանդաղ, աստիճանաբար ձևավորման փուլում ոչ միայն Արևելյան Եվրոպայում, այլև Երկրագնդի շատ այլ տարածաշրջաններում: Ասվածից չի հետևում, թե մինչ այդ ժողովուրդները ոչ մի տարբերություն չէին նկատում իրենց միջև: Մարդիկ միշտ էլ հոգեպես կապված են եղել հայրենի երկրին, նրա լեզվին, ավանդույթներին ու սովորություններին: **Բայց մինչև որոշակի ժամանակ այդ բոլոր էքնիկ առանձնահատկությունները չէին դառնում այն գլխավոր չափավոր, որոնցով մարդն իրեն նույնացնում էր մարդկանց այս կամ այն խմբին:** Իրավական և սոցիալ-տնտեսական տարբերությունները՝ ավատատիրական հասարակության խավերի միջև, այսինքն՝ ժողովրդի ներսում գոյություն ունեցող տարբերությունները, համարվում էին առավել կարևոր, քան ազգերի միջև եղած տարբերությունները: Այլ կերպ ասած՝ ուկրաին-



նացի, ռուս կամ լեհ ազնվականը շատ ավելի ընդհանրություն էր զգում այլ երկրի ազնվականի հետ, քան իր սեփական երկրի գյուղացու կամ քաղաքաբնակի հետ: Եվ միայն XIX դարում է սկսում ձևավորվել ընդհանրության նոր ըմբռնում, որ հիմնվում էր լեզվի և մշակույթի ընդհանրության վրա: **Ուկրաինայում, ինչպես նաև այլ երկրներում ծագած և աստիճանաբար տարածվող էթնիկ հարազատության վրա հիմնված ազգային գիտակցության գաղափարը դառնում է Նոր պատմության հիմնական բեմաներից մեկը:**

XVIII դարի եվրոպական հասարակության ընդերքում աննկատ հասունանալով, ազգի գաղափարն առաջին անգամ իրեն դրսևորեց ֆրանսիական Մեծ հեղափոխության բովում, որն ազդարարեց ավատատիրական հասարակարգի փլուզումն ու նոր քաղաքական, սոցիալ-տնտեսական համակարգի ծնունդը, ուր ժողովրդական զանգվածներն սկսում են առավել ակտիվ դեր խաղալ: Այդ գաղափարի ազդեցությամբ, գնալով ավելի ու ավելի շատ եվրոպացիներ սկսեցին ընկալել «անհատի իրավունք» ըմբռնումը, և աստիճանաբար եկան այն համոզման, որ գերիշխանության կրողը ժողովուրդն է, ոչ թե նրա ղեկավարները: Եվ ժողովուրդը, հասարակ ժողովուրդը, վերջապես սկսեց իր արժանի տեղն զբաղեցնել մարդկանց գիտակցության մեջ. ժողովրդի խոսքը, սովորություններն ու ավանդույթներն սկսեցին ամենից բարձր դասվել, և այս հատկանշական տարրերի միացումից ժամանակի ընթացքում ծնվեց ազգային ընդհանրության զգացումը, ազգային ինքնագիտակցությունը:

Գերմանացի փիլիսոփա **Յոհան Գերդերը** իր աշխատություններում **հանդիչ** կերպով հիմնավորում է ազգային լեզուների և բանահյուսության կարևորությունը: Կայսերական «անկյանք ու անդեն» համակարգերի, արքունիքներում ու բարձր հասարակության սալոններում տիրող օտարերկրյա լեզուներով ու նորաձևությամբ «արհեստական» հափշտակվածությանն ի հակակշիռ՝ Գերդերն իր ողջ ուշադրությունը կենտրոնացրել էր գյուղացիության էթնիկական յուրօրինակ մշակույթի վրա: Հայտնի պատմաբան **Յանս Կոնը** գրում է. «Գերդերն առաջինն էր, ով հայտարարեց, որ մարդկային քաղաքակրթությունն առկա է ոչ թե համապարփակ ու բոլորի համար ընդհանուր, այլ ազգային-ինքնօրինակ **դրսևորումներում, ընդ որում՝** ամեն անգամ անկրկնելի, իսկ յուրօրինակությունը նրա լեզվի և ոգու մեջ է: Մարդն իր բնույթով ու պատմությամբ՝ ամենից առաջ որևէ ազգային ընդհանրության անդամն է և միայն որպես այդպիսին կարող է հանդես գալ որպես ստեղծագործող»:

Կայսրությունների ճնշման տակ գտնվող Արևելյան Եվրոպայի մտավորականության շրջանում Գերդերի հայացքներն առանձնահատուկ ջերմ արձագանք գտան: Եվ հատկապես մտավորականությունն էր, որ զարգացնելով ու տարածելով ազգի գաղափարը, այն դարձրեց արևելաեվրոպական ժողովուրդների սեփականությունը:

Այնուամենայնիվ, այդ ժողովուրդներից յուրաքանչյուրն ազգային գիտակցության հասնելու իր ուրույն ճանապարհն անցավ՝ հաճախ շատ բաներում մյուսներից տարբեր: Եվ սակայն, ժամանակակից գիտնականները խոսում են Արևելյան Եվրոպայում **ազգային շարժումների զարգացման երեք հիմնական փուլերի գոյության մասին**, որոնցից յուրաքանչյուրում մի շարք նույնանման գծեր են ի հայտ բերում:

Առաջին, այսպես կոչված **«հայրենաբաղձության»** փուլում գիտնականների մի ոչ մեծ խումբ հնագույն իրեր, պատմական փաստաթղթեր ու բանահյուսության պատմաիկներ է հավաքում, որպեսզի թեկուզև հիշողություն պահպանի իր ժողովրդի մասին, որն, իրենց կարծիքով, կուլ գնալով կայսրությունների մշակույթներին, շուտով կանհետանա աշխարհի երեսից:

Երկրորդը՝ **«մշակութային»** կամ **«վերածննդի»** փուլն է, որ սովորաբար ուղեկցվում է ազգային լեզվի նկատմամբ անսպասելի և բուռն հետաքրքրությամբ, այն ավելի լայնորեն կիրառելով գրականության ու կրթության բնագավառներում:

Վերջապես, երրորդ փուլը՝ **քաղաքական**. ի հայտ են գալիս ազգային-քաղաքական կազմակերպություններ և առջադրվում են ազգային կողմնորոշվածություն ունեցող պահանջներ, որ այս կամ այն չափով ներառում են նաև քաղաքական ինքնորոշման պահանջ: Ինչպես կհամոզվենք, այդ **ընդհանուր կաղապարին միանգամայն համընկնում է ուկրաինական ազգային ինքնագիտակցության աստիճանական զարգացումը:**

## Մտավորականություն

Դժվար է համակողմանիորեն ըմբռնել, թե ինչպես էր ընթանում ուկրաինացիների գիտակցության մեջ գնալով ավելի խորը թափանցող նոր գաղափարների զարգացումն ու տարա-

ծումը, առանց հասկանալու այն դերը, որ այդ գործընթացում խաղացին «նոր մարդիկ», կամ՝ մտավորականությունը (ինչպես արդեն ասել ենք, այդ անվանումը մտավորապես է համապատասխանում «ինտելեկտուալ» արևմտյան հասկացությանը): Ի հայտ գալով սկզբում Ռուսաստանում, ապա նաև ամբողջ Արևելյան Եվրոպայում, «մտավորականություն» բառը լայն իմաստով վերաբերում էր այն համեմատաբար քիչ թվով մարդկանց, որոնց հաջողվում էր բարձրագույն կրթություն ստանալ: Առավել նեղ, բայց պատմականորեն ավելի ծանրակշիռ իմաստով՝ **մտավորական էին անվանում նրանց, ովքեր գաղափարական հանդուժմաններից ելնելով, իրենց նվիրում էին ժողովրդական զանգվածների, այսինքն՝ գյուղացիության սոցիալական, քաղաքական ու մշակութային վիճակի բարելավմանը:**

Մտավորականության «նորարարությունը» միանգամից մի քանի կերպ արտահայտվեց: Ի տարբերություն իր բոլոր ժամանակակից և նախորդած սոցիալական խմբերի, մտավորականությունը հասարակական կյանքը դիտում էր ոչ թե որոշակի իրավունքների, արտոնությունների ու պարտականությունների տեսանկյունից, այլ այս կամ այն գաղափարախոսության ասիժաններում: Մտավորականն իր ժամանակի հասարակությանը չէր նայում ազնվականի, քաղաքաբնակի կամ գյուղացու հայացքով, ո՛չ, նա համոզված էր, իր մտահորիզոնը շատ ավելի լայն է, որ ինքը տեսնում է հասարակությանն ամբողջովին և հասկանում է նրա բոլոր անդամների շահն ու կարիքը: **Ժամանակի ընթացքում մտավորականի գրեթե պարտադիր հատկանիշ դարձավ գոյություն ունեցող հասարակարգը բնադատելը**, այնպես, որ նրանցից շատերը գլխովին նվիրվեցին այդ կարգերը (ստատուս քվոն) փոխելու պայքարին՝ ընդ որում՝ ամեն գնով և միջոցների մեջ խտրություն չդնելով:

Ռուսական կայսրությունում, ինչպես և ամբողջ Արևելյան Եվրոպայում, մտավորականության ի հայտ գալը երևույթ էր, որի մշանակությունը դժվար է գերազանահատել: Դա հատկապես վերաբերում էր այնպիսի հասարակություններին, ինչպիսին ուկրաինականն էր, որոնք կորցրել էին իրենց ազնվական վերնախավին, որ կայսերական մշակույթի զոհն էր դարձել և կամավոր ծառայության էր անցել կայսրությանը: Այսուհետ հենց մտավորականությունը պետք է ապահովեր ուկրաինացիների մշակութային, իսկ ժամանակի ընթացքում՝ նաև քաղաքական, կառավարումը՝ նրա պատմության ամբողջ նոր և նորագույն ժամանակաշրջանների ընթացքում: Ինչպես և սպասելի էր, մտավորականությունը ձևավորվեց ամենից առաջ քաղաքներում, և հատկապես՝ համալսարանական քաղաքներում: **Այսպես՝ ուկրաինական մտավորականության առաջին կենտրոնը դարձավ Խարկովը՝ առաջին ուկրաինական համալսարանական քաղաքը Ռուսական կայսրությունում:**

**Խարկովի համալսարանը հիմնադրվել է 1805 թ.-ին** և նրա ստեղծման պատմությունը շատ ուշագրավ է, քանի որ կտրուկ տարբերվում է ուկրաինական մյուս քաղաքների համալսարանների հիմնադրման պատմությունից, որ սովորաբար ստեղծվում էին կայսերական իշխանությունների նախաձեռնությամբ՝ բարձրորակ «կայսրության ծառաներ» պատրաստելու նպատակով: **Խարկովում համալսարան հիմնելու նախաձեռնությունը հայրենասիրությամբ ստորգրված տեղաբնակ ազնվականներիցն էր՝ անխոնջ Վասիլի Կարազիմի գլխավորությամբ**, որին հաջողվեց Ալեքսանդր Առաջինից թույլտվություն ձեռք բերել, ինչպես նաև անհրաժեշտ միջոցներ հայթայթել: Եվ միայն **1834 թ.-ին, սբ. Վոլոդիմիրի համալսարանը բացվելուց հետո, Ռուկրաինայի մտավորականության կենտրոնը Խարկովից տեղափոխվեց Կիև:**

Ուկրաինական մտավորականության առաջին սերունդը մեծավ մասամբ ազնվական ծագում ուներ, որն էլ իր հերթին սերում էր կոզակական ավագանուց: Սակայն ուկրաինական առաջին մտավորականների մեջ չկային հարուստ ու ազդեցիկ ազնվականներ, որոնք կապեր ունեին Պետերբուրգում և հեշտությամբ կարող էին բարձր պաշտոններ գրավել կայսերական բյուրոկրատական կառույցում: Ընդհակառակը, որպես կանոն՝ որանք սնանկացած ազնվականներ էին, որոնց անկում ապրող կալվածքները գոյության միջոցներ էլին ապահովում և նրանք ստիպված էին մտավոր աշխատանքով վաստակել իրենց հանապազօրյա հացը: Բացի այդ, մտավորականության առաջին սերնդի մի փոքր մաս էլ կազմում էին քահանաների, քաղաքաբնակների ու կոզակների որդիները: Մինչև 1861 թ.-ը գյուղացիական միջավայրից սերած մտավորականները բացառություն էին: Ուկրաինայում, ինչպես նաև Արևելյան Եվրոպայում ընդհանրապես, մտավորականության ընդհանուր թիվը բավական փոքր էր: Խարկովի համալսարանն, իր հիմնադրման օրից մինչև 1861 թ.-ը, ավարտել էին 2800 հոգի, իսկ Կիևի նոր և համեմատաբար մեծ համալսարանի շրջանավարտների թիվը հասել էր 1500-ի: Մակայն բարձրագույն կրթություն ստացածների այդ նեղ միջավայրում էլ, շատ քչերն էին հետաքրքրություն ցուցաբերում ուկրաինական շատ ավելի կարևոր գործերի նկատմամբ:



Այսպիսով՝ նրանք, ովքեր ուկրաինացիների մեջ արթնացրեցին ազգային ինքնագիտակցության զգացումը, ուկրաինացի բնակչության չնչին տոկոսն էին կազմում:

Մտավորականությունը միավորվում էր, այսպես կոչված, խմբակներում. մշտական փոքր խմբեր, որոնց անդամները ժամանակ առ ժամանակ փիլիսոփայական և գաղափարախոսական տարբեր թեմաներ էին քննարկում: Խմբակներն հաճախ որևէ ամսագրի շուրջն էին հավաքվում, որն իր համախոհներին ամբիոն էր տրամադրում: Պետք է ասել, որ մտավորականների կապերն ու շփումները՝ իրենց խմբակներից և ընդհանրապես՝ կրթված հասարակությունից դուրս, խիստ սահմանափակ էին: Նրանք չէին ճանաչում հասարակության մյուս խավերին՝ հատկապես գյուղացիությանը, որի բարօրության համար պայքարն էլ, ըստ էության, դարձրել էին իրենց գործունեության ու կյանքի նպատակը: Գրեթե ամբողջ XIX դարում, ուկրաինական, ինչպես և ռուսական մտավորականությունն իրենից ներկայացնում էր հասարակության մի աննշան մասը, հաճախ՝ ինտելեկտուալ անհաշտ վեճերի պատճառով տրոհված, կառավարության դեմ տրամադրված, ժողովրդական զանգվածներից կտրված և ամբողջովին կլանված մի գործունեությամբ, որը բացի իրենից՝ ոչ մեկին չէր հետաքրքրում: Եվ սակայն՝ **երբ հասարակության մեջ հասունացան համապատասխան պայմանները, այդ անպետք ու անհասկանալի թվացող գործերն ու ճառերն ավելի մեծ ազդեցություն գործեցին, քան կարող էր հուսալ և պատկերացնել նույնիսկ ինքը՝ մտավորականությունը:**

## Ազգային նույնականության «կառուցողական մասերը»

Չնայած նորաթուխ մտավորականությունը սերում էր կրթված ազնվականության ու պաշտոնյաների միջավայրից, սակայն իրեն յուրային չէր զգում կայսերական վերնախավի շրջապատում, որոնց քիչ էին հետաքրքրում ազատամիտ գաղափարներն ու դատողությունները: Եվ որքան շատ էր մտավորականությունն օտարվում «վերևներից», այնքան ավելի բուռն կարոտով էր հայացքն ուղղում երկար ժամանակ արհամարհված «ներքևներին», խոնարհվում սեփական ժողովրդի մոռացված ակունքներին: Այդ նախընտրությունն ավելի էր ամրապնդվում արևմուտքի գաղափարների ազդեցությամբ: Չերդերի տեսություններում արևելաեվրոպական մտավորականները պատրաստակամությամբ կենդանի ու գործնական իմաստ էին տեսնում: Գերմանացի փիլիսոփայի՝ երկրագործի մշակույթով հափշտակվածությունը համընկավ այն ժամանակ մոդայիկ ռոմանտիզմի ոգուն, որը մի շարք առումներով ինտելեկտուալ խռովություն էր XVIII դարի Լուսավորչության դեմ: Վերջինս՝ իր նպատակահարմարության, համապարփակության, միօրինակության ու կարգունակունքի պաշտամունքով, ինչպես հաքսրուրգյան, այնպես էլ ռուսական կայսրություններն արարողների գաղափարական ոգեշնչող էր: Իսկ ռոմանտիզմը, որով հրապուրված էր արևելաեվրոպական մտավորականությունը, այդ ամենին հակադրում էր զգայականության ու անմիջականության, յուրօրինակության և վաղնջականի պաշտամունքը:

Ուշադրությունը հրավիրելով տարբեր ժողովուրդների անկրկնելի գծերին՝ «իրենց բնական վիճակում և կենսոլորտում», **Չերդերի և ռոմանտիկների գաղափարները ազգային յուրօրինակության հասկացության սկիզբը դրեցին և դրանով իսկ ապահովեցին այն միջոցները, որոնց օգնությամբ ամեն ազգի ներկայացուցիչ սկսեց արդեն իր համարձակությամբ ու պատասխանատվությամբ սահմանել իր ազգին բնորոշ առանձնահատկությունները:**

Իր այդ որոնումներում, ուկրաինական, ինչպես և արևելաեվրոպական ցանկացած մտավորականություն, ուշադրությունը գլխավորապես կենտրոնացրեց իր էթնոսի այնպիսի անկրկնելի գծերին, որոնք էին՝ **պատմությունը, բանահյուսությունը, լեզուն ու գրականությունը:** Պարզ է, որ սկսելով այդ առարկաների ուսումնասիրությունը, մտավորականները ուկրաինական ազգային ինքնության ընդհանուր ըմբռնում ստեղծելու ինչ-որ չափով մշակված, նախօրոք մտածված ծրագիր չունեին: Եթե նրանց հարցնեին, թե ինչու են հին ձեռագրեր հավաքում, կիսամոռացված ժողովրդական երգեր ձայնագրում, գյուղական բառ ու բանին նմանակում և այլ տարօրինակ «խեցիկներում» զբաղվում, նրանցից շատերն հավանաբար բարեհոգաբար կխոստովանեին, որ դա «պարապ վախտի խաղալիք է», ոչ միայն ամենդ, այլև կարի արժանի ու երազային, պայմանավորված տեղային հայրենասիրությամբ, անհետացող ու անկրկնելի հայրենի աշխարհի հանդեպ կաթոզին սիրով... մի ժամանց: Այդուհանդերձ, այդ սիրողական վարժանքների արդյունքը գերազանցեց բոլոր սպասումները.

համենայն դեպս, **առաջացավ «նվիրյալների» մի ընտրյալ խավ, որ այսուհետև, ինչպես իրենց թվում էր, հաստատ գիտեն, թե ինչու են է հատկապես ուկրաինական մշակույթի «հատուկ ոգին»:** Եվ հատկապես նրանց **այդ համոզվածությունն է, որ ժամանակին կդառնա ուկրաինական ազգային ինքնագիտակցության հիմքը:**

Ազգային ինքնագիտակցություն տանող ուղին սալարկված էր գրքերով, որոնցից ամեն մեկն ուկրաինայի, նրա պատմության ու մշակույթի վերաբերյալ մինչ այդ անհայտ հասկացությունների ու տեղեկությունների մի յուրօրինակ ծով էր, միևնույն ժամանակ՝ գիտելիքների տարփողման միջոց՝ գրագետ ուկրաինացիների միջավայրում: Նման գրքերի ստեղծման ընթացքում **մտավորականությունը զարգացնում ու կատարելագործում էր ուկրաիներեն լեզուն, որ համայն ուկրաինացիներին համախմբելու միջոց է և հոգևոր եղբայրության զգացում է ծնում:** Այստեղից էլ՝ այն բացառիկ դերը, որ ուկրաինական ազգի ձևավորման վաղ շրջանում խաղում է գրականությունը:

## Ազգի պատմության վերակերտումը

Ազգային գիտակցության զարթոնքի ու զարգացման գործընթացում մեծ ներդրում էր նաև ազգի պատմության ուսումնասիրությունը: Այն ժամանակ, հոգևոր ընդհանրություն զգալու համար, մարդիկ անպայման ուզում էին համոզված լինել, որ իրենք նաև մի ընդհանուր պատմական ճակատագիր են ունեցել: Ավելին՝ **այդ ճակատագիրը պետք է արտասովոր ու փառահեղ եղած լիներ, որպեսզի նաև հպարտության զգացում ծներ նրանց մեջ:** Մարդուն ընտրել է ինչ-որ բանով հպարտանալը, և նա հաճույթով իրեն նույնացնում է ազգի հետ, որն ինչքան հին է, այնքան լավ է. բազմադարյա պատմությանը հաղորդակից լինելը ներշնչում է անընդհատականության զգացում և հավատ, որ ազգի (և իրեն այդ ազգի մասնիկը տեսնող անհատի) տխուր ներկան ընդամենը մի անցողիկ միջադեպ է: Չին ու փառահեղ անցյալն օգտակար է նաև որպես փաստարկ՝ բազմաթիվ կասկածամիտների հետ վեճի բռնվելիս, որոնք, ասենք թե՛ հայտարարում են, որ այս կամ այն ազգը երբեք գոյություն չի ունեցել, որ դա նոր ու արհեստական գոյացություն է, այն ժամանակ, երբ ազգայնական տրամադրություններով տոգորված հեղինակները գերադասում են խոսել վերակերտման, վերածննդի մասին: Իրականում հենց դրանով էլ զբաղվել են ազգերի առաջին պատմիչները, և զարմանալի չէ, որ հենց նրանք էլ դարձան ազգարարման գործընթացի առաջամարտիկները՝ ինչպես Ուկրաինայում, այնպես էլ մյուս երկրներում:

Արդեն XVIII դարի վերջերին **Չախափնյակի ազնվական մտավորականությունը մեծ հետաքրքրություն է հանդես բերում Ուկրաինայի պատմության, հատկապես՝ Կոզակության պատմության նկատմամբ:** Արդյունքում՝ նախկին կոզակական ավագանու անդամներից մի քանիսի ժառանգները պատմական աշխատությունների հեղինակներ դարձան: Ցարական մատայությունից պաշտոնաթող լինելուց հետո, այդ մարդիկ ամբողջովին նվիրվում էին պատմական նյութեր հավաքելուն ու հրատարակելուն: Այդ կրքոտ հնախույզներից ու տեղի հայրենասերներից շատերը սաստիկ կգարմանային, եթե իմանային, թե ինչ փարթամ ընծյուղներ են տալու իրենց փայփայած ու սիրով սնուցած տնկիները:

Այդ սիրողական մակարդակի պատմաբանների մեջ (նրանք բոլորն էլ գրել են ռուսերեն) առավել ուշադրության են արժանի **Վասիլ Ռուբանը** («Մալոռոսական համառոտ տարեգրություն», 1777 թ.), **Օպանաս Շաֆոնսկին** («Չեռնիգոլյան փոխարքայության տեղագրական նկարագրություն», 1786 թ.), ինչպես նաև երիտասարդ և խիստ հայրենասեր **Յակով Մարկովիչը** («Գրառումներ Մալոռոսիայի մասին», 1798 թ.): Նրանց աշխատությունների լույս աշխարհ գալը մեծագույն հաճությամբ ընդունեց ուկրաինական ազնվականությունը:

Սակայն սիրող-պատմաբանների մեջ կային նաև մարդիկ, որ լուրջ դրդապատճառներ ունեին դրանով զբաղվելու: Բանն այն է, որ մոտավորապես 1800 թ.-ից Կայսերական զինամիջազիտական գրասենյակն սկսում է կասկածանքով վերաբերվել ավագանու հետնորդների ազնվականական իրավունքին: Կայսերական բարձրաստիճան մի պաշտոնյայի խոսքերով. «Մալոռոսիայում իսկական ազնվականություն երբեք չի եղել»: Դրան ի պատասխան, ուկրաինական վերնախավի մեջ բողոքի ու զայրույթի ալիք բարձրացավ, իսկ մի քանի ներկայացուցիչներ, ինչպես օրինակ՝ Ռոման Մարկովիչը, Տիմոֆի Կալինսկին, Վասիլ Չեռնիչը, Անդրիան Չեպան, Վասիլ Պոլետիկան և Ֆեդիր Տուրմանսկին սկսեցին պատմական փաստաթղթեր հավաքել և, 1801 թ.-ից մինչև 1808 թ.-ը ներառյալ, մի շարք ուրվագծեր կազմեցին, որոնցում հիմնավորում էին իրենց նախնիների բարձր կարգավիճակն ու վառ պատկերներով նկարագրում նրանց փառավոր գործերը: Այն բանից հետո, երբ 1830-ականներին ազնվա-



կանական վեճերը լուծվեցին հօգուտ ուկրաինացի պահանջատերերի մեծ մասի, նրանցից մի քանիսը չկորցրեցին հետաքրքրությունը իրենց պատմության նկատմամբ և օժանդակեցին առավել մանրակրկիտ ուսումնասիրությանը:

Քանի որ անդրանիկ պատմաբանները մասնագիտական կրթություն չունեին, նրանց հավաքած նյութերի շատանալուն զուգընթաց խիստ զգացվում էր դրանք համադրելու և ամբողջացնելու գիտական աշխատանքի կարիքը: Այդ կարիքին արծազանքեց Դմիտրի Բանտիշ-Կամենսկին, պատմաբան Նիկոլայ Բանտիշ-Կամենսկու որդին:

Դ. Ն. Բանտիշ-Կամենսկին ծնվել է Մոսկվայում, որտեղ էլ փայլուն կրթություն է ստացել լավագույն դասախոսների (Ա. Մերզլյակով և այլք) մոտ՝ իր հոր ընկերոջ՝ սենատոր Տեպլովի տանը: 1816 թ.-ին, հրաժարվելով դիվանագիտական կարիերայից, Բանտիշ-Կամենսկին, որ այդ ժամանակ արդեն մի քանի պատմագիտական և կենսագրական աշխատությունների հեղինակ էր, գնում է Պոլտավա, ուր ծառայության է մտնում մալոռուսական զեներալ-նահանգապետ, իշխան Ռեպինի մոտ. պաշտոնապես՝ գրասենյակի կառավարիչ, իրականում՝ գլխավորապես տրեյդի իր «Մալոռուսիայի պատմության» քառահատոր աշխատության վրա, որն ավարտեց ու տպագրեց 1822 թ.-ին: Բանտիշ-Կամենսկու մանրակրկիտ փաստագրված աշխատությունն անմիջապես բացառիկ հանրաճանաչության արժանացավ: Ուկրաինական վերնախավին այն գրավում էր ոչ միայն իր անվերապահ արհեստավարժությամբ, այլև Ուկրաինայի անցյալի պատմության յուրահատուկ մեկնաբանությամբ: Որպես ցարական ազնիվ ու բարեխիղճ պաշտոնյա, Բանտիշ-Կամենսկին հաստատում էր, որ չնայած իր յուրօրինակ ու հերոսական պատմությանը, ուկրաինացիներն, անկասկած, ռուս ժողովրդի մի ճյուղն են, և դրա համար էլ «Մալոռուսիայի պատմության» գազաթնակետը հանդիսացավ «Մեծին» («Վելիկոռուսիային») վերամիավորվելը: Նման մոտեցումը կրկնակի ձեռնադրեց ուկրաինացի ազնվականներին. կարելի էր ուզածի չափ հպարտանալ և սեփական՝ ուկրաինական («մալոռուսական»), և Ռուսական հզոր կայսրության ու ռուս մեծ ժողովրդի հետ իր միասնությամբ՝ չմոռանալով մի ավելորդ անգամ ընդգծել նաև իր անձնական անմնացորդ նվիրվածությունը տիրակալ-կայսրին:

Բանտիշ-Կամենսկու չորսհատորյակի լրիվ հակապատկերն էր ներկայացնում, մտավորապես այդ ժամանակներում հայտնի դարձած, այսպես կոչված՝ «Ռուսաց պատմությունը» («Исторія Русів»): Բազում մարդկանց մտածողության վրա խորապես ազդած այդ աշխատությունը գաղտնիության քողով է պարուրված: Հայտնի չեն այդ գործի ստեղծման տեղն ու ժամանակը: Պատմաբանները կարող են միայն ենթադրել, որ այն լույս աշխարհ է եկել մոտավորապես XIX դարի առաջին տասնամյակում Չախափնյակում, հավանաբար Նովոգորոդ-Սիվերսկու մոտակայքում: Տասնամյակներ շարունակ «Ռուսաց պատմությունը» լայնորեն, բայց և խիստ գաղտնի, ձեռագիր վիճակում տարածվում էր ծախափնյա ազնվականության շրջանում և միայն 1846 թ.-ին տպագրվեց: Ամենամանրակրկիտ, գրեթե դետեկտիվ հետաքննություններն անգամ այդպես էլ մինչև այսօր չեն կարողացել ճշտորեն պարզել, թե ով է «Ռուսաց պատմության» հեղինակը: Այնուամենայնիվ, այսօրվա դրությամբ, ազնվական մտավորականության «կասկածելի» ներկայացուցիչների օղակը սեղմվել է մինչև մի քանի անուն, որոնց թվում են Հրիտորի Պոլետիկան ու իր որդի Վասիլը, ինչպես նաև՝ Օպանաս Լորոսկիչն ու Օլեքսանդր Բեզբրոդկոն:

Ինչո՞ւ է հեղինակն այդպես խնամքով ու ջանադիր քողարկվել: Հավանաբար դա կապված է ստեղծագործության վրդովված, վտանգավոր երանգներ պարունակող գրելաձևի հետ: «Ռուսաց պատմությունը», որն ավելի շատ կարելի է քաղաքական տրակտատ համարել, քան պատմական հետազոտություն, ամենից առաջ անվերապահորեն կոզակական անցյալի քառագույնություն է և լուսազարդում: Եվ չնայած հեղինակը հանդես չի գալիս հանուն Ուկրաինայի լրիվ անկախության, բայց անառարկելիորեն ուկրաինացիներին գատում է ռուսներից՝ որպես առանձին ժողովուրդ, նրանց համար պահանջելով որոշակի աստիճանի ինքնավարություն: Հեղինակի սիրելի հերոսների թվում ոչ միայն Խմելնիցկին է, այլև խռովարար Պոլուբոտոկը, որ չի վախենում վիճել Պետրոս Առաջինի հետ: Հեղինակն ապացուցում է, որ ոչ թե Ռուսաստանը, այլ Ուկրաինան է հանդիսանում Կիևյան Ռուսիայի ուղղակի ժառանգորդը: Հեղինակը նկարահանյալի ոխերիմ թշնամի համարում է լեհերին, բայց երբեմն, կարծես ակամա, սպրդում են նաև հակառուսական մտքեր: Մի տեղ նա նույնիսկ ազատասեր ուկրաինացի ժողովրդին հակադրում է «բնածին» ստրկամիտ «մոսկովյան» ժողովրդի հետ:

Սակայն այս ամենը չի նշանակում, թե ազգային հպարտության զգացումով ներծծված «Ռուսաց պատմությունը» նեղ էթնոկենտրոնություն է քարոզում: Հեղինակն հավաստում է,

որ ճշմարտությունն ու արդարությունը ցանկացած քաղաքական համակարգի անկյունաքարերն են, իսկ կյանքը, ազատությունը ու սեփականությունը պաշտպանելը՝ բոլոր մարդկանց անկապտելի իրավունքը: Նա նույնիսկ ընդունում է իր ժամանակի համար արմատական այն միտքը, որ ոչ մի կառավարություն չի կարող երկար գոյատևել, եթե այն հենվում է բռնության ու ստրկության վրա: Այսպիսով, «Ռուսաց պատմության» ազդեցությունը հիմնականում հանգում է երկու տեսակետի. մի կողմից՝ կոզակության այդ վառ (չնայած ոչ լրիվ ճշմարիտ) պատմությունը զորացրեց հետաքրքրությունն Ուկրաինայի անցյալի նկատմամբ, իսկ մյուս կողմից՝ հարց հարուցեց ժամանակակից քաղաքական համակարգում Ուկրաինայի տեղի վերաբերյալ: Այդ ստեղծագործության ի հայտ գալու հետ Ուկրաինայի պատմության ուսումնասիրությունը սկսում է ձեռք բերել գաղափարական ու քաղաքական նշանակություն:

### Բանախյուսությանը հրապուրվելը

Նկարագրվող ժամանակաշրջանում ուկրաինացի երիտասարդ ազնվական մտավորականների մյուս հրապուրանքը բանախյուսությունն էր: Գյուղացիական սովորությունների, ավանդույթների, երգերի նկատմամբ հետաքրքրությունն իսկապես անմասնադեպ չափերի էր հասնում. չէ՞ որ առաջներում լուսավորյալ վերնախավը մշտապես շեշտում էր, որ իր մշակույթի և այսպես կոչված՝ «զանգվածային մշակույթի» միջև անանց անդունդ կա: Այս դեպքում էլ, անշուշտ, չի կարելի անտեսել հերոդերյան գաղափարների ազդեցությունը. աստիճանաբար ներթափանցելով Ուկրաինա, դրանք մտավորականության մեջ մեծ հետաքրքրություն են արթնացնում դեպի սեփական ժողովրդի կյանքն ու կենցաղը:

Ըստ Հերդերի՝ բնականությունը ամենայն կենդանի, ստեղծագործական մշակույթի հիմնական նախադրյալն է՝ այն դեպքում, երբ XVIII դարավերջի Եվրոպայում ամենուրեք իշխում է ապագային նմանակման ոգին: Դրանով է ամբողջապես ներծծված արքունական վերնախավը, որ հաճույքով ու պատրաստակամ յուրացնում է օտարի լեզուն, արժեքները, ձևերն ու սովորությունները, և այդ հեղձուկ մթնոլորտում կործանվում է ժողովրդական յուրօրինակության յուրաքանչյուր դրսևորում: Հերդերի կարծիքով, այդ հեղձուկից դուրս գալու համար անհրաժեշտ է դեմ մեծել «բարձրակարգ մշակույթը», հասարակ ժողովրդի ավանդակներ, կենարար մշակույթի մեջ փնտրել ոգեշնչման ու ինքնարտահայտման անբիծ ակունքները: Եվ չուտով արևելաեվրոպական ողջ մտավորականությունը դատողություններ էր անում ու կոտում էր այն մասին, թե ժողովրդական երգերը որքան ավելի գեղեցիկ են ամենանրբաշակ բարոկկո ոճի երաժշտությունից, գեղջկական նահապետական բարբերը՝ արքունական ծեփծեփումներից հմայիչ, իսկ հնագույն ասացվածքները՝ օտարալեզու հաստափոր հատորներից իմաստուն:

XIX դարի առաջին տասնամյակներին երիտասարդ մտավորականներից շատերը շրջում էին գյուղերում, հավաքում ու հետո հրատարակում էին ժողովրդական իմաստության գուհարները: Ահա, օրինակ, թե ուսանողական տարիների (1830-ական թ.թ.-ների) մասին ինչ է պատմում ուկրաինացի պատմաբան Մ. Կոստոմարովը. «Շուտով համոզվեցի, որ պատմությունը պետք է ուսումնասիրել ոչ միայն մեռած տարեգրությունների ու գրառումների միջոցով, այլ նաև կենդանի ժողովրդի հետ առնչվելով... Այդ նպատակով ես սկսեցի ազգագրական էքսկուրսիաներ կատարել Խարկովից դեպի հարևան գյուղերը, պանդուկներն ու միկիտանները, որոնք այդ ժամանակ իսկական ժողովրդական ակունքներ էին: Ես լսում էի նրանց պատմածներն ու խոսակցությունները, գրի էի առնում բառերն ու արտահայտությունները, հատնվում էի գրույցներին, հարցուփորձ էի անում ժողովրդի անցուդարձից՝ լավ ու վատից, սպիրտախոցի ու կենցաղից, գրի էի առնում ինձ հաղորդածներն ու ստիպում էի ինձ՝ նրանց հետ երգեր երգել: Այդ ամենի համար ես փող չէի ափսոսում, և եթե ուղիղ ձեռքերն էլ չէի տալիս, ապա ուտեցնում-խմեցնում էի իմ գրուցակիցներին»:

Քանի որ ուկրաինացիներն հիմնականում գյուղացի ժողովուրդ էին, հարուստ ու կենդանի բանախյուսությունը նրանց առավել գրավիչ գծերից մեկն էր: Հերդերն ինքը այնքան հիացած էր դրա գեղեցկությամբ, որ հայտարարեց. «Ուկրաինան երկրորդ Գունաստան կդառնա: Կգա օրը, և զարմացած աշխարհի առջև կհանձնեն նրա սքանչելի երկինքը, նրա ժողովրդի կենսափոփոց ոգին, բնածին երաժշտականությունը, նրա բարբեր հողը»: Լեռ մեծագույն բանաստեղծ Ադամ Միցկևիչը խոստովանում էր, որ ուկրաինացիները՝ «ամենապոետիկ ու երաժշտական ժողովուրդն են սլավոնների մեջ»: Դրա համար էլ զարմանալի չէ, որ ուկրաինական Չախափնյակի գրեթե ամբողջ մտավորականությունն զբաղված էր «ազգագրական հետազոտություններով»:



Ուկրաինական բանահյուսությամբ առաջին խանդավառվածներից մեկը **իշխան Նիկոլայ Ցերտեվև**ն էր: Ծագումով վրացի, մշակույթով՝ ռուս, Ցերտեվևը մեծացել էր Ուկրաինայում և սիրահարվել նրա ժողովրդին: 1819 թ.-ին Պետերբուրգում լույս տեսավ նրա՝ «**Մալոռուսական հին երգերի ժողովածու**»-ն, որի ներածականում, խոսելով երգերի մասին, Ցերտեվևը նշում է, թե երգերն այն զուլալ ակունքներն են, որոնցով կարելի է դատել «**ժողովրդի համ-ճարի ու ոգու մասին**», անցյալի բարքերի մասին, առանձնապես ընդգծելով, որ «**մալոռուսները**» մշտապես տարբերվել են իրենց բարոյական մաքրությամբ: 1827 թ.-ին, «**Մալոռուսական ժողովրդական երգեր**» խորագրով ուկրաինական ազգագրության վերաբերյալ լիակատար ու համակարգված ուսումնասիրություն հրատարակեց **Միխայլո Մաքսիմովիչը**: Ես



Միկոլա Կոստոմարով

ծագումով ուկրաինական կոզակական ընտանիքից էր, Մոսկվայի համալսարանի պրոֆեսոր էր, իսկ 1834 թ.-ին դարձավ Կիևի սբ. Վոլոդիմիրի համալսարանի առաջին ռեկտորը: Մոսկվայի համալսարանի մեկ այլ ուկրաինացի պրոֆեսոր՝ **Օսիպ Բոդյանսկին**, 1837 թ.-ին մագիստրոսական թեզ պաշտպանեց՝ «**Սլավոնական ցեղերի ժողովրդական պոեզիայի մասին**» խորագրով, որ հիմնված էր ուկրաինական և ռուսական ժողովրդական երգերի համեմատական ուսումնասիրության վրա: **Ռոմանտիկին հատուկ չափազանցումներով նա ռուսական «հյուսիսի» երգերը, որ իրեն թվում էին ամբողջովին թախծուտ ու հեզ, հակադրում էր ուկրաինական «հարավի» ժողովրդական երգերին՝ իրենց կենսախիճը մեղեդիներով ու դրամատիզմով հարուստ ելևէջումներով**: Բոդյանսկին կարծում էր (դա էլ է բնորոշ ռոմանտիկներին), թե ինչպես հարավի բնությունն է տարբերվում հյուսիսի բնությունից, ճիշտ այդպես էլ պետք է միմյանցից տարբերվեն այդ շրջաններում ապրող ժողովուրդները:

Բացի այն, որ բանահյուսությամբ հրապուրվելը հնարավորություն ընձեռեց մտավորակա-նությանը՝ տարբերակել ուկրաինացիներին հարևան ժողովուրդներից, այն շատ կարևոր խորհրդածությունների տեղիք էլ տվեց. **ուսումնասիրելով գյուղի ամենօրյա կյանքն ու անցուդարձը, մտավորականները, բացի գեղեցիկ «բարբերից», ականատես եղան նաև գյուղացիության անողոր շահագործմանը**: Ճիշտ է, սկզբում նրանք չափազանց շատ էին տարված համընդհանուր ճշմարտությունների և ուկրաինական ժողովրդի յուրօրինակության նշանների երազային որոնումներով, որպեսզի դեռ ինչ-որ ընդհանրացումներ ու հետևություններ անեին գյուղացիության ներկա վիճակի վերաբերյալ: Բայց, հետզհետե, որքան խորությամբ էին ընկալում ու ճանաչում այդ կյանքը, այնքան նրանց մեջ ավելի էր արմատավորվում այն միտքը, որ չի կարելի գյուղացիության դժբախտությունների միայն անտարբեր ականատեսն ու վկան լինել, այլ պարտավոր են նաև նրանց օգնելու քայլեր ձեռնարկել:

**Լեզուն՝ կապող օղակ**

Պերդերի ուսմունքի համաձայն՝ լեզուն ազգի կարևորագույն բաղադրիչն է. «Ազգը մայրենի լեզվից ավելի թանկ ի՞նչ ունի: Լեզվի մեջ են մարմնավորված նրա մտքի բոլոր գանձերը, նրա ավանդույթները, պատմությունը, կրոնը, նրա կյանքի հիմքերը, սիրտն ու հոգին: Ժողովրդին գրկել լեզվից՝ նշանակում է գրկել նրան միակ հավերժական բարիքից»: Սակայն պարզվում է, որ ազգային ինքնագիտակցության զարգացման գործում լեզվի դերն ավելի մեծ է, քան ներկայացրել է գերմանացի փիլիսոփան: Լեզուն առավել ճշգրիտ ձևով է նշում ազգի «բնական» սահմանները, ինչպես նաև տարբերակում է «բնիկին»՝ «եկվորից» և միացնում է աշխարհագրական տարբեր շրջանների ու հասարակության տարբեր շերտերի ներկայացուցիչներին, եթե իհարկե խոսքի մեջ եղած բոլոր տարբերություններով հանդերձ, նրանք իրենց լեզուն ընդունում են որպես միասնական և ընդհանուր: Ժամանակակից սոցիոլոգներն ապացուցում են, որ **լեզուն ոչ միայն հաղորդակցման միջոց է, այլև աշխարհն ընկալելու և արտահայտվելու ազգին յուրահատուկ անկրկնելի համակարգ**: Ահա թե ինչու, նույն լեզվով խոսող մարդիկ հաճախ ի վիճակի են իրար հասկանալ նաև ավելի խորը, «անասելի», ենթագիտակցական մակարդակով:

Պաշվի առնելով լեզվի այդքան կարևոր, կենտրոնական դերը ազգի ձևավորման գործում, հեշտ է գլխի ընկնել, որ ուկրաինական մտավորականության համար էլ՝ միայն ժամանակի հարց էր՝ տեղական «բարբառը» (հասարակ ժողովրդի խոսակցական լեզուն) բոլոր ուկրաինացիների ինքնարտահայտման հիմնական միջոցի փոխակերպելը: Չէ՞ որ միայն այդպես կարելի էր ամուր կապ հաստատել վերնախավի և ժողովրդական լայն զանգվածների միջև և ընդհանուր ազգային նույնականության հիմքերը դնել:

Սակայն նման նպատակն սկզբում անհասանելի էր թվում: Ուկրաինացի ազնվականները խոսում էին այնպիսի հեղինակավոր ու զարգացած լեզուներով, ինչպիսիք էին ֆրանսերենն ու գերմաներենը: Արագ զարգանալով, այդ լեզուների կողքին հայտնվեց ռուսերենը, որին նրանք նույնպես հրաշալի տիրապետում էին: Այդ լեզուների համեմատությամբ, ուկրաինական անկիրթ գյուղացիության խոսակցական լեզուն թվում էր կոպիտ, սահմանափակ, որով, թերևս, կարելի էր խոսել միայն իրենց գյուղացիների հետ՝ նույնքան կոպիտ ու հասարակ փորձերից (տուն, կալվածք, տնտեսություն): Այդ պատճառով էլ, կրթված մարդկանց մոտ այնպիսի կարծիք ձևավորվեց. քանի որ գյուղացիները ի վիճակի չեն որևէ կարևոր բան անելու, իսկ եթե նույնիսկ կարողանային, ապա նրանց կոշտուկոպիտ լեզուն թույլ չէր տա մինչև վերջ հասկանալի արտահայտվել, ուրեմն իմաստ չունի գյուղական բարբառը բարձրացնել գրական լեզվի աստիճանի: Ավելին՝ այդ բարբառն այնքան մոտ էր ռուսերենին, որ ուկրաինացի շատ մտավորականների առիթ էր տալիս այն համարել ռուսերենի բարբառներից մեկը, և այդ հիմքով՝ ռուսերենից զատ, ուկրաինական լեզվի հարց չդնել:

Սակայն, չնայած այդ բոլոր տարակարծություններին ու խոչընդոտող հանգամանքներին, ուկրաինացի որոշ մտավորականներ շարունակեցին «բարբառը» կատարելագործելու և սրբալից լեզվի կարգավիճակին հասցնելու տքնաջան փորձերը: Բայց սկզբում նույնիսկ կոպիտ էին տարակուսանքով վերաբերվում իրենց ձեռնարկումների հեռանկարին, և դրանք պետք էին որպես հետաքրքրաշարժ ու ծիծաղելի գրական փորձեր: Դրա վառ օրինակն է **Իվան Կոտլյարսկու «Էնեականը»**, որ գյուղացիների ու քաղաքաբնակների լեզվով գրված գրական առաջին ստեղծագործությունն է: Ի դեպ՝ հենց այդ ստեղծագործությունն էր, որ 1798 թ.-ին հրատարակվելով, սկիզբ դրեց և՛ ուկրաինական գրական լեզվին, և՛ ուկրաինական նոր գրականությանը:



Հետաքրքիրն այն է, որ «Էնեականը» տրավեստի\* ժանրով գրված բուռնական\*\* պոեմ է, որի հիմքում ընկած է հռոմեացի հանճարեղ բանաստեղծ Վերգիլիոսի «Էնեական» պոեմը, որի հերոսներին Կոտլյարևսկին կոզակական տարագ է «հագցնում»: Ուկրաինական պոեմում անտիկ աստվածներն ու հերոսներն այդպես ներկայանում են անհոգ ու անզուսպ կոզակների և գյուղական խոշոր ու պնդակազմ աղջիկների կերպարանքով՝ իրար հետ բացատրվելով գյուղական բարբառով, ընդ որում՝ խիստ եռանդուն ու հյութեղ արտահայտություններով: Կոտլյարևսկին ինքը, որ ցարական պաշտոնյա էր և կոզակական ավագի որդի, սիրում էր գյուղացիների հետ զրուցել, զրի էր առնում նրանց դատողություններն ու սովորույթները, ուշադրությամբ ականջ էր դնում նրանց երգերին ու խոսակցություններին: Սկզբում նա



Իվան Կոտլյարևսկի

իր առաջին այդ փորձարարությունն ընդհանրապես չէր մտածում տպագրել, և միայն ընկերների հորդորներին զիջելով տպագրեց «Էնեականը», որը, ի գարմանք իրեն, բուռն ընդունություն գտավ ծախսափնյա ազնվականության մոտ: Բայց դրանից հետո էլ հեղինակը չէր մտածում, որ իր ստեղծագործությունը և՛ լեզվական, և՛ գրական առումներով, շրջադարձային երևույթ է հայրենի գրականության մեջ: Նրան առաջվա պես թվում էր, որ ուկրաիններեն լեզուն (որն ինքը շատ սիրում էր և շարունակում էր այդ լեզվով ստեղծագործել) պիտանի է միայն կոմիկական էֆեկտների համար: Կոտլյարևսկին այդպես էլ մինչև վերջ կասկածում էր, թե այդ լեզուն կարող է դառնալ «լուրջ» գրականության լեզու:

\* Տրավեստ - լուրջ գեղարվեստական երկի վերամշակումը կոմիկական ձևով:

\*\* Բուռնական - սեփեթ կոմիկ պատկերում՝ գրականության մեջ և բեմի վրա՝ բովանդակության և լեզվի հակադրությամբ:

«Մալոռոսական բարբառի քերականության» (1818 թ.) հեղինակ Օլեքսի Դավլովսկին, թևուզել փորձեց կատարելագործել և համակարգել ուկրաիններեն լեզուն, սակայն, Կոտլյարևսկու պես, նման փորձարարությունները լուրջ չէր համարում և այդ լեզուն դիտում էր որպես ուսաց լեզվի բարբառներից մեկը: Սակայն Դավլովսկու աշխատությունը, ինչպես նաև՝ 1823 թ.-ին Իվան Վոյցեխովիչի հրատարակած ուկրաիններեն լեզվի փոքրիկ բառարանը, օրինակիվորեն խթան հանդիսացան ուկրաիններեն լեզվի ինքնուրույն զարգացման համար:

### Գրականություն. ուկրաինական ազգային մշակույթի հարստացումը

Ուկրաիններեն լեզվի կենսականության վճռորոշ ցուցանիշ հանդիսացավ նրանով ստեղծվող գրականության որակն ու բազմազանությունը: Կոտլյարևսկին «ուկրաինական նոր գրականության հայր» տիտղոսին արժանացավ ոչ միայն, որ ուկրաիններեն «բարբառն» առաջինը ներդրեց գրականության մեջ, այլև այն բանի համար, որ նրա «Էնեական» անտարակույս, օժտված է մնայուն գեղարվեստական արժանիքներով: Եհիշտ է, այդ իսկապես դասական «նմանակումը» բազում անտաղանդ նմանակումներ ծնեց, որոնք խանգարեցին այլ ժանրերի զարգացմանը: Ինչ-որ պահ նույնիսկ թվաց, թե գրավոր ուկրաիններեն գրականությունն ընդմիշտ դատապարտված է միայն տեղական բարբերը ծաղրող վայ-ժողովրդական ծաղրերգություններ ծնելու:

Գրականության մեջ ուկրաինացիների ինքնադրստորման հնարավորություններն ընդլայնելու գործում մեծ վաստակ ունեն այսպես կոչված՝ խարկովյան ռոմանտիկները: Այդ գրողներից շատերն ապրում էին Սլոբոդյան Ուկրաինայում և կապված էին խարկովի նորաստեղծ համալսարանի հետ: XIX դարի 20-30-ական թվականներին ուկրաինական մշակույթի զարգացման էստաֆետն ընդունեց հենց այդ՝ Ուկրաինայի ամենաարևելյան երկնիկ հատվածը:

Շատ ավանդության՝ ուկրաինական արձակն ստեղծվել է գրագի արդյունքում. կոզակական նշանավոր տոհմի ժառանգ Գրիհորի Կվիտկա-Օսնովյանենկոն և հոգևորականի որդի, խարկովի համալսարանի ռեկտոր Պետրո Յուլակ-Արտեմովսկին գրագ են գալիս ուկրաիններեն գրական լեզվի ապագայի վրա: Վերջինս շատ էր սիրում ուկրաիններեն լեզուն և նույնիսկ այդ լեզվով գրական փորձեր էր անում, սակայն խիստ թերահավատ էր նրա գրական ապագայի հանդեպ. «Այն մտքից, թե հավանաբար կգա մի ժամանակ, երբ ընդմիշտ կկորչեն ոչ միայն մալոռոսական հինավուրց բարբերն ու սովորույթները, այլև ինքը՝ լեզուն կմիախառնվի հզոր և իշխող ռուսերենի մեծ գետին՝ ոչ մի հուշ չթողնելով իր գոյության մասին, այնպես եմ հուսահատվում, որ պահ է լինում՝ ուզում եմ հրաժարվել ամեն ինչից և թաքնվել հասարակ գյուղացու խաղաղ անկյունում, որպեսզի լսեմ մարող մայրենի լեզվի վերջին շշուկը, որ մեռնում է ամեն օր»: Բանի որ ուկրաինացի ազնվականները գերադասում էին ռուսերեն լեզուն, իսկ ուկրաիններեն խոսում էին միայն գյուղացիները, Յուլակ-Արտեմովսկին գտնում էր, որ այդ լեզվով անհնար է որևէ լուրջ բան գրել: Բայց Կվիտկա-Օսնովյանենկոն նրա հետ չի համաձայնվում և որոշում է հակառակն ապացուցել: Արդյունքը լինում է այն, որ 1834 թ.-ին լույս աշխարհ են գալիս «Գրիհորի Օսնովյանենկոյի մալոռոսական պատումները»: Այդ տխուր, սարգունակ պատմվածքներն ընթերցող հասարակությունը շատ լավ ընդունեց, իսկ խորաթափանց Օսիպ Բոդյանսկին այն հայտարարեց ուկրաինական արձակի սկիզբը:

Խարկովյան ռոմանտիկներից ևս մեկը՝ Լևկո Բորովիկովսկին սկզբնավորեց բալլադը, ինչով ընդլայնեց ուկրաիններեն լեզվով գրականության ժանրային դաշտը: Կոզակական ուկրաինան խարկովյան բոլոր գրողների պաշտելի թեման էր, որ նրանք պատկերում էին ռոմանտիզմին հատուկ ձևերով, ձգտելով, ինչպես այն ժամանակներում ասում էին՝ «որսալ սխառտեղ անցյալի տխրաբախիժ արծազանքը»: Այդ իմաստով վառ օրինակ է Ամվրոսի Մուկիմսկու ուկրաինական բանաստեղծությունների ու բարձրամտությունների ժողովածուն, որի առաջաբանում հեղինակն իրեն համեմատում է «վերջին փանդիռահարի» հետ, որը մեղմ երգում է «անցյալի երգը»՝ «մահացող լեզվով»:

Խարկովյան շատ գրողներ ևս իրենց ավանդը բերեցին ուկրաինական պոեզիայի ու արձակի զարգացման գործում: Որքան էլ տարօրինակ թվա, բայց նրանց գործունեության ոգին ուսու բանասեր Իզմայիլ Սրեզնևսկին էր: Սակայն ուկրաինության այդ «նորադարձ ասպետի» ներդրումն ավելի շատ կազմակերպչական էր, քան գրական: Նրա «Ձապորոժյան ժամանակները» և «Ուկրաինական անթուղոհի» պատմա-բանասիրական բազմախտոր ժողովածուները՝ ուկրաինացի գրողների համար մշտական ամբիոնի բացակայության լուրջ խնդիր լուծելու մի փորձ էր: Եհիշտ է, որոշ ժամանակ հրատարակվում էին «Ուկրաինական բանբեր» և



«Ուկրաինական անսագիր» պարբերականները, բայց այնտեղ գետեղվող նյութերի մեծ մասը ռուսերեն լեզվով էին, իսկ նյութերն էլ՝ հիմնականում տեղական լուրեր էին, ճանփորդական նոթեր, ազգագրական դիտողություններ և գրական առանձին ստեղծագործություններ: Ամսագրերը քիչ ընթերցողներ ունեին, ընդամենը մի քանի հարյուր մարդ:

Ընթերցողների ավելի մեծ ու լուսավորյալ լսարան գտնելու հույսով, ուկրաինացի գրողներն իրենց ստեղծագործություններն հաճախ գետեղում էին պետերբուրգյան կամ մոսկովյան հրատարակություններում: Շատ ամսագրեր, ընդ որում՝ հատկապես պահպանողական ուղղվածություն ունեցողները, հաճույքով էին տպագրում ուկրաինական բանաստեղծություններն ու պատմվածքները, նույնիսկ ուկրաիներեն լեզվով գրվածները: Բանն այն է, որ **XIX դարի 20-30-ականների ռուս ռոմանտիկ գրողների շրջանում մի տեսակ ոգևորություն էր տիրում ամենայն ուկրաինականի նկատմամբ:** Ուկրաինացիների հերոսական ու բուռն պատմությունը, հարուստ բանահյուսությունը ոգեշնչում էին նրանց՝ ստեղծելու «վայրի սահմանային գոտու» տարօրինակ ու արտասովոր հերոսների կերպարներ: Ընդունելով հանդերձ Ուկրաինայի առանձնահատկությունն ու յուրօրինակությունը, նրանք սակայն Ուկրաինան դիտում էին որպես Ռուսաստանի անքակտելի մաս, և աջակցելով «գավառական» գրականության զարգացմանը, ձգտում էին հարստացնել ու ընդլայնել «համառուսականը»: Գետաքրքիր է, որ **Ուկրաինայի նկատմամբ միանգամայն նմանատիպ վերաբերմունք էին դրսևորում նաև լեհ գրողները, որոնցից էին Անտոնի Մալչևսկին, Բոգդան Ջալեսկին, Սևերին Գոչչինսկին, որ լեհական ռոմանտիկ գրականության մեջ, այսպես կոչված՝ ուկրաինական դպրոցն էին ներկայացնում:** Նրանք էլ իրենց կողմից էին Ուկրաինան և ուկրաինական համարում պատմա-մշակութային ժառանգության անքակտելի մաս, բայց, բնական է՝ Լեհաստանի:


Այսպիսով, չնայած ուկրաինական գրականության զարգացման և պատմության, լեզվի ու բանահյուսության ուսումնասիրությունների մեջ որոշակի առաջընթացի, XIX դարասկզբի մտավորականությունը շարունակում էր Ուկրաինայի մասին խոսել «մարգային, գավառական» մտածողության ելակետից, քանի որ դեռևս չէր հավատում, թե ուկրաինական մշակույթը կարող է երբևէ հասնել այն աստիճանի, որ ուկրաինացիների կյանքի բոլոր ոլորտներում ամբողջովին փոխարինի ռուսական մշակույթին: Ուկրաինացի գրականագետները, ոչ պակաս, քան իրենց պետերբուրգյան ու մոսկովյան գործընկերները համոզված էին, թե արմատավորելով ու զարգացնելով ուկրաինականը՝ ընդամենն հարստացնում են Ռուսաստանի մշակութային ժառանգությունը: Նրանցից և ոչ մեկը չկարողացավ որևէ հստակ արդյունք կանխատեսել: Այդ մասին շատ լավ է ասել մեր ժամանակի գրականագետ Յուրի Լուցկին. «Եթե Ուկրաինայի պատմության և բանահյուսության այդ բոլոր վաղ շրջանի ուսումնասիրություններն ընդունենք որպես ուկրաինական ազգային գիտակցության առաջին փայլատակումներ, ապա այդտեղից պետք է հետևություն անենք, որ հենց դրանք էլ ամուր հիմք հանդիսացան, որովհետև նոր ձևավորվող ազգն ի՞նչ ավելի մեծ պահանջ կարող է ունենալ, քան իր պատմական արմատներն ու մշակութային ինքնօրինակությունը գտնելու պահանջը: Ուկրաինացիները որոշ ժամանակ հենց դրանով էլ զբաղված էին»:

## Տարաս Շևչենկո

XIX դարասկզբին ուկրաինական մտավորականության միջավայրում մի յուրահատուկ իրավիճակ ստեղծվեց: Ինչպես արդեն համոզվեցինք, Ռուսաստանի և ողջ Արևելյան Եվրոպայի ճակատագրերում շատ բան կանխորոշած հոգևոր ու գաղափարական հոսանքները չշրջանցեցին նաև Ուկրաինան: Ֆրանսիական հեղափոխության ծնած հանրապետության արմատական գաղափարներին այստեղ ծանոթացան դեկաբրիստների և Միացյալ սլավոնների ընկերության ուկրաինացի անդամների միջոցով: Ազգային մշակույթին ստեղծագործական կարևորագույն դեր հատկացնելու Դեկաբրի փիլիսոփայական ընկալումը ոգևորել էր խարկովյան ռոմանտիկներին: Իրավիճակի յուրահատկությունն այն էր, որ նշված հոսանքներն Ուկրաինայում, որպես կանոն, չէին միախառնվում և չէին հատվում: Քաղաքական արմատականները մնում էին ապագային և իրենց քաղաքական ծրագրերում Ուկրաինային որևէ տեղ չէին հատկացնում: Իսկ ուկրաինական ազգային մշակույթը տարփողողները ապաքաղաքական էին, «ցարին ու հայրենիքին» նվիրված պահպանողականներ, որ ստատուս-վոյի փոփոխության չէին ձգտում: Այսպիսի երկվությունը դժվարացնում էր գաղափարախո-

սական երկու միտումների զարգացումը, և ժամանակի ընթացքում դարձավ ուկրաինական մտավորականության հարատև հիվանդությունը: Այս ամենը սակայն, 1820-ականների սերնդին այնքան էլ չէր հուզում: Բայց հաջորդ՝ 1840-ականներին ձևավորված սերնդի համար ազգային մշակույթի և քաղաքական գաղափարախոսության միավորումը առաջնահերթ խնդիր կդառնա:

«40-ականների սերունդը», որ պատմաբան **Միկոլա Կոստոմարովի, գրող Պանտելեյմոն Կուլիչի և բանաստեղծ Տարաս Շևչենկոյի** նման նշանավոր ներկայացուցիչներ ուներ, արդեն կապված էր հիմնականում ոչ թե խարկովի, այլ՝ Կիևի հետ, որտեղ 1834 թ.-ին նոր համալսարան էր բացվել: Այս սերնդի ներկայացուցիչները ինչպես Չախափնյա, այնպես էլ Աջափնյա Ուկրաինայի ծնունդ էին և իրենց սոցիալական ծագումով էլ ավելի բազմազան, քան նրանց



Տարաս Շևչենկոն արտրից վեռադառնալուց հետո

ազնվական նախորդները: Եվ վերջապես, այդ սերունդը բացահայտ և փայլուն առաջնորդ ուներ՝ **Տարաս Շևչենկոն:**

Շևչենկոյի կերպարը վեր է խոյանում ոչ միայն «40-ականների երիտասարդության» մեջ: Կարելի է նույնիսկ ասել, որ **Ուկրաինայի ամբողջ նոր և նորագույն պատմությունը երկրորդ նման անհատ չունի, որն իր հայրենակիցների վրա այնպիսի հզոր ազդեցություն գործած լինի, ինչպիսի ազդեցություն որ թողել է բանաստեղծ Տարաս Շևչենկոն:** XIX դարի Արևելյան Եվրոպայում ազգերի զարգացման վրա պոետների թողած նման հզոր ազդեցությունն ինչ-որ արտասովոր երևույթ էր: Մշակույթը գործելու այն միակ ասպարեզն էր, որտեղ պետականությունից զրկված սլավոնները կարող էին դրսևորել իրենց արտակարգ ընդունակություններն ու տաղանդը. ահա թե ինչու, «ազգի արթնամալու» գործում հաճախ գլխավոր դերը խաղում էին գրականության մարդիկ ու գիտնականները: Այնուամենայնիվ, սլավոնների մեջ էլ դժվար



է գտնել նման անհատ, որի կյանքն ու պոեզիան այդպես խորությամբ իրենց մեջ մարմնավորեին ազգային ոգին:

Շէքենկոյի կենսագրությունը հենց իր հայրենակիցների համար ազգի ողբերգական ծակատարի խորհրդանշող դարձավ: Նա ծնվել է 1814 թ.-ին Աջափնյակի Մորիսի գյուղում, ճորտ գյուղացու ընտանիքում: Որք է մեծացել, ծառա է մտել կավածատիրոջ մոտ, որն էլ նրան տարել է Պետերբուրգ: Այստեղ տաղանդավոր պատանի նկարիչը գրավում է մայրաքաղաքի արվեստագետների միջավայրի մի քանի ներկայացուցիչների ուշադրությունը, որոնք 1838 թ.-ին փրկագնով ազատեցին նրան ճորտությունից: Որպես արդեն ազատ մարդ, Շէքենկոն ընդունվում է Արվեստների կայսերական Ակադեմիան, որտեղ էլ առաջնակարգ կրթություն է ստանում: Ռուս և ուկրաինացի բազում նկարիչների ու գրողների հետ շփումները լայնացրեցին հանճարեղ պատանու մտահորիզոնը և շուտով նա բանաստեղծորեն ինքնարտահայտվելու կարիք զգաց:

1840 թ.-ին «Կորգար» խորագրով լույս տեսավ Շէքենկոյի ուկրաինական բանաստեղծությունների առաջին ժողովածուն: Առաջին իսկ գիրքը երևան հանեց երիտասարդ պոետի հետաքրքրությունը պատմական խնդիրների նկատմամբ, իսկ իր անկեղծությամբ, երաժշտականությամբ, պոետական հորիզոնն ու բուն տաղանդով բազմաթիվ երկրպագուներ գտավ և արժանացավ ռուս և ուկրաինացի քննադատների միահամուռ հավանությանը:

Մեկնաբանելով, թե «Կորգարի» հայտնվելն ինչու այդպիսի բացառիկ դեր խաղաց ուկրաինական գրականության զարգացման գործում, Յուրի Լուցկին նշում է, թե՛ «այդ ստեղծագործություններում ուկրաիներեն լեզուն առաջին անգամ գրական կատարելության է հասնում», Շէքենկոն հաղթահարեց միապաղաղությունն ու սահմանափակությունն այն դերի, որ մինչ այդ խաղում էր ուկրաինական գրականությունը: Նա հերքեց այնպիսի քննադատների հայացքներ, ինչպես Վիսարիոն Բելինսկին, որն համարում էր, թե ուկրաինացի «մուժիկի» լեզուն ի գորու չէ բարդ մտքեր ու հույզեր արտահայտելու: Ուկրաիներեն լեզվի համար նվաստացուցիչ նման կարծիքներին Շէքենկոն պատասխանում էր.

*Տար մուշտակ է, մենակ ափսոս՝  
Իմ հագով չի կարված,  
Իսկ խելամիտ ձեր խոսքերը՝  
Սաղախնով են լցված:*

Շէքենկոյի գեղարվեստական նվաճումները կասկածի տակ դրեցին Գոգոլի և նման այլ՝ ծագումով ուկրաինացի, գրողների օրինակը, որոնք համարում էին, թե գրական հաջողություն ու փառք նվաճելու ձգտող տաղանդավոր ուկրաինացին պետք է ռուս գրող դառնա:

Շէքենկոյի լեզուն՝ դա ուկրաինական մի քանի բարբառների արտահայտչական ներուժի, գյուղական և քաղաքային խոսակցական լեզվի, եկեղեցական սլավոներեն լեզվի բառապաշարի ու ձևի մի համարձակ համադրություն է: Ահա թե ինչու է Մեծ Կորգարի խոսքը ձեռք բերում զարմանալի ճկունություն և հանճարեղ խորություն: Իր ստեղծագործություններում Տարաս Շէքենկոն հանճարեղ ձևով ցույց տվեց իր հայրենակիցներին, որ իրենց լեզուն ի վիճակի է ամբողջ խորությամբ և փայլուն ձևով արտահայտելու մարդկային հոգու և մտքի տվայտանքները, ընդ որում՝ այդ «ռամիկ» լեզվի արտահայտչամիջոցներն առանձնանում են իրենց պարզությամբ, նրբությամբ ու վեհությամբ: Ուրեմն և՛ ուկրաինացիներին պետք չէ կախման մեջ լինել գրական առումով հրաշալի, բայց՝ օտար ռուսաց լեզվից, քանի որ իրենք՝ ուկրաինացիները, բոլոր հնարավորություններն ունեն յուրովի իմաստավորելու իրենց կյանքի ու զոյության կարևորագույն խնդիրները: Այսպես Շէքենկոյի պոեզիան ըստ էության դարձավ ուկրաինայի՝ գրական և հոգևոր անկախության առաջին հռչակագիրը:

Սակայն պարզ է, որ և Շէքենկոյի հետաքրքրությունները, և նրա պոեզիայի ազդեցությունը գրական շրջանակներից շատ էին դուրս եկել: Նախկին ճորտը երբեք չէր մոռանում իր «թշվառ եղբայրներին»: Նա աստվածաշնչյան մարգարեի պես որոտածայն դատապարտում էր ճորտատեր-կեղեքիչներին: Շէքենկոն, ի տարբերություն իր ժամանակի շատ մտավորականների, չէր հավատում աստիճանական բարեփոխումների մեղմ ծրագրերին և իր բանաստեղծություններում բացահայտ կոչ էր անում՝ սոցիալական արդարության հարցերը լուծել արմատական վերափոխման՝ հեղափոխության ճանապարհով: Այդպիսին է, օրինակ, նրա բանաստեղծական հայտնի «կտակն» իր հայրենակիցներին.

*Ինձ թաղեցեք, ու վեր կացեք,  
Կապանքները կտրեք,  
Եվ թշնամու պիղծ արյունով  
Ազատությունը ցողեք:  
Եվ ինձ ձեր մեծ ընտանիքում,  
Ընտանիքում ազատ ու նոր,  
Չմոռանաք հիշատակել  
Բարի խոսքով ամոք:*

Պոետի զայրույթն ու վրդովմունքը՝ ժողովրդի հարստահարման ու կեղեքման դեմ, իր բանաստեղծություններում սերտ միախուլվում է Ուկրաինայի, այդ՝ «մեր՝ ոչ մեր երկրի»,- ինչպես ասում է բանաստեղծը, ազգային նվաստացման դառն կսկիծի ու տխրության հետ: Լինելով ցարական ինքնակալության անհաշտ թշնամին, նա Ուկրաինայի քաղաքական ինքնորոշման կոչ էր անում շատ ավելի վաղ, քան այդ գաղափարին կհանգեին մյուս՝ առավել չափավոր ուկրաինացի մտավորականները: Ամեն դեպքում, հենց այսպիսին է բանաստեղծի սիրելի թեմայի՝ Ուկրաինայի պատմության մեկնաբանման ուղղվածությունը: Նա երկակի վերաբերմունք է դրսևորում Խմելնիցկու նկատմամբ: Շէքենկոյի համար այդ հեթանոս և «հանճարեղ խռովարար է», և՛ Ռուսաստանի հետ Ուկրաինայի համար ծակատարական՝ անկախության կորուստն արժեցած, միության մեղավորը: Կորգարի խիստ հանդիմանության արժանացան նաև Մոսկվայի հետ համագործակցած կոզակական բոլոր առաջնորդները: Միայն Պոլուբոտոկն արժանացավ նրա գովասանքին, այն բանի համար, որ համարձակվել էր վիճել անձամբ Պետրոս Առաջինի հետ, որի նկատմամբ իր հակակրոնքը Շէքենկոն երբեք չէր թաքցնում՝ նրան կոչելով՝ «բռնակալ» ու «դահիճ», անմասն չթողնելով նաև նրա՝ «փառավոր գործերի շարունակող» Եկատերինա Երկրորդին: Այդ երկու բռնապետներին գովերգող Պուշկինի հետ ուղիղ բանավիճելով, Շէքենկոյի քնարական հերոսը, կանգնած Պետրոսի հուշարձանի՝ «Պղնձե հեծյալի» դեմ, կարդալով լատիներեն մակագրությունը՝ «Պետրոս Առաջինին՝ Եկատերինա Երկրորդից», այսպես է դատում.

*Հիմա արդեն գիտեմ,  
Այս Առաջինն է, որ խաչ հանեց  
Մեր Մայր Ուկրաինան,  
Իսկ Երկրորդը՝ հոգին հանեց  
Մեր խեղճ որբևայրու.  
Դահիճ, դահիճ, մարդակերներ:*

Սակայն Շէքենկոյի ազգայնականությունը ազգայնամոլության չէր տանում: Ուկրաինայի ազատության ձգտումը նա դիտարկում էր որպես արդարության համար հանրնդհանուր պայքարի մի մասնիկ: Բանաստեղծի համակրանքը ողջ աշխարհի ճնշված ժողովուրդների կողմն էր, ինչի վառ վկայությունն են նրա «Կովկաս» և «Չերետիկոս» պոեմները (վերջինը նվիրված է նշանավոր չեխ նահատակ Յան Գուսին):

Շէքենկոյի բանաստեղծությունների ամենազանդ ու խռովարար գաղափարներն ու մտփվները պատճառ հանդիսացան, որ Ռուսական կայսրությունում մինչև 1905 թ.-ը նրա ստեղծագործությունների մեծ մասը չտպագրվեց: Նրա պոեզիան ժամանակակիցների համար ոչ միայն գեղագիտական, այլև բարոյագիտական օրինակ էր: «Շէքենկոյի մուսան,- գրում է Լուստոմարովը,- միշտ մնաց մաքուր, ազնվաբարո, սիրում էր ժողովրդին, միշտ նրա տառապանքների վշտակիցը մնաց և երբեք չմեղանչեց ճշմարտության ու բարոյականության դեմ: Նա պատռեց այն ծածկույթները, որ մեզանից թաքցնում էին ժողովրդի կյանքը, իսկ այն տեսնելը և՛ սարսափելի էր, և՛ քաղցր, և՛ ցավալի, և՛ արբեցնող»:

Այդպես պոետն ստիպեց ազգայնական գիտակից մտավորականությանը ժողովրդի մեջ տեսնելու ոչ միայն «հովվերգական» պարզությունն ու բարբերի նահապետականությունը, այլև կարեկցանքի արժանի դժբախտությունների ցավն ու ամենօրյա տառապանքը: Շէքենկոն կոզակության պատմության մեջ էլ, ի տարբերություն իր նախորդների, ոչ այնքան ռոմանտիկ հերոսներ էր փնտրում, որքան ողբերգական անցյալից ուսանելի դասեր էր քաղում՝ համուն լավագույն ապագայի: Այդ առաջին ազգային մեծագույն բանաստեղծի տեսակետից՝ Ուկրաինան Ռուսական կայսրության միայն տարաշխարհիկ մի նահանգ չէր. նրա համար



*Ուկրաինան միակ, անմասն ու անկրկնելի Հայրենիքն էր, որը կարող է, և պետք է լինի Ազատ ու Անկախ:*

### **Կիրիլ-Մեֆոդյան ընկերություն**

1847 թ.-ի մարտի 3-ին Կիևի համալսարանի ուսանող Օլեքսիյ Պետրովը ցարական իշխանություններին տեղեկություններ հաղորդեց գաղտնի ընկերության մասին, որի գոյությունն, իբրև թե պատահաբար, հայտնաբերել էր: Ամփոփապես բոլոր նրանց, ում անունն այդ մատուցության մեջ կար, ոստիկանությունը ձերբակալեց և ուղարկեց Պետերբուրգ: Այնտեղ նրանց խստորեն հարցաքննեցին ու պարզեցին, որ **Կիրիլ-Մեֆոդյան ընկերությունն** իսկապես ինչ-որ ժամանակի ընթացքում գոյատևել է Կիևում: *Պա Ուկրաինայի նոր պատմության մեջ ուկրաինական առաջին գաղափարական կազմակերպությունն էր: Բայց շուտով պարզ դարձավ, որ մեծ դավադրության վտանգը չափազանցված էր: Խոսքն ընդամենը ընկերության մեկ տասնյակ անդամների և մի քանի տասնյակ համակիրների մասին էր, որոնք ուկրաինացի երիտասարդ մտավորականներ էին: 30-ամյա պատմաբան Միկոլա Կոստոմարովն իր ձերբակալությունից քիչ առաջ էր ամբիոն ստացել Կիևի համալսարանում: Նրա մտերիմ, 22-ամյա Կասիյ Բիլոզերսկին, որ ընկերության կազմավորման ժամանակ ուսանող էր, ավարտելուց հետո, մինչև ձերբակալությունը, ապրում էր Պոլտավայում և դասավանդում էր կաղետական կորպուսում: Բարձրակարգ կրթություն ստացած Միկոլա Յուլակը (1843 թ.-ին ավարտել էր Գերպտի /Տարտուխ/ համալսարանը) ծառայում էր Կիևի գեներալ-նահանգապետի գրասենյակում՝ Հնագրագիտական հանձնաժողովի թարգմանչի պաշտոնում: Այս երեքը «դավադիրների միջուկն» էին կազմում: Երկու այլ նշանավոր գործիչներ և արդեն հայտնի գրողներ Պանտելեյմոն Կուլիշն ու Տարաս Շևչենկոն անուղղակիորեն էին կապի մեջ Կիրիլ-Մեֆոդյան ընկերության անդամների հետ, բայց այդ կապն օգտագործվեց որպես առիթ՝ նրանց ձերբակալելու համար: Պարզվեց, որ ընկերությունը ոչ միայն մեծ չէ, այլև շատ ակտիվ էլ չէ: Իր գոյության 14 ամիսների ընթացքում այն ընդամենը մի քանի անգամ էր հավաքվել քաղաքական-փիլիսոփայական բանավեճերի առիթով (դրանցից մեկին էլ հենց մասնակցել էր մատնիչ Պետրովը) և ընդամենը մի քանի ծրագրային փաստաթուղթ էր պատրաստել, որոնց մեջ հատուկ ուշադրության արժանին Կոստոմարովի «Գիրք ծննդոց ուկրաինական ժողովրդի» ստեղծագործությունն է, որ տիպիկ ռոմանտիկ ստեղծագործություն է, ծնված լեհական գրականության ազդեցությամբ, և ամբողջովին ներծծված սլավոնամետ իդեալիզմով և քրիստոնեական ճարտասանությամբ: «Գիրք ծննդոց...»-ի հեղինակը կոչ է անում՝ ամբողջ հասարակությունը վերակառուցել արդարության, հավասարության, ազատության և եղբայրության սկզբունքներին համապատասխան: Մասնավորապես, առաջարկում է վերացնել ճորտատիրական կարգերն ու դասակարգային տարբերությունները, ժողովրդին կրթության հնարավորություն տալ և այլն: Ազգային հարցը, որ ակնհայտորեն Կիրիլ-Մեֆոդյանների ուշադրության կենտրոնում էր, լուծվում էր պանսլավիզմի լայն համատեքստում: Փաստաթուղթը «բոլոր սլավոնական ազգերի» մշակույթի ազատ զարգացման պահանջ էր դնում: Ավելին՝ առաջարկում էր կազմավորել սլավոնների ֆեդերացիա՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների նմանությամբ՝ բոլոր ժողովրդավարական պատշաճ ինստիտուտներով և Կիև մայրաքաղաքով:*

Կոստոմարովի և նրա համախոհների կարծիքով՝ իրենց ժամանակակից ուկրաինական հասարակությունը բոլոր սլավոնական հասարակություններից ամենանվաստացված և հարստահարվածն է, միևնույն ժամանակ՝ «ամենաիրավահավասարը», քանի որ սեփական վերնախավ չունի: Ահա թե ինչու էր Կիրիլ-Մեֆոդյանների ծրագրում Ուկրաինային որոշիչ դեր հատկացվում. հատկապես նա՝ պետք է գլխավորեր սլավոնական ժողովուրդների շարժումը՝ դեպի իրավահավասար ֆեդերացիա: «Գիրք ծննդոցի...» հեղինակը կեղծ-աստվածաշնչյան ոգով նկարագրում է իր երկրի ապագա «վերածնունդը».

*գերեզմանից հանելով՝ նա ծայն կտա սլավոն-եղբայրներին և կելենն սլավոնները, և Ուկրաինան կդառնա ազատ հանրապետություն սլավոնական անխախտ միության մեջ... Եվ այն ժամանակ բոլոր ժողովուրդները քարտեզի վրա կմատնանչեն այն տեղը, որտեղ Ուկրաինան է, և կբարբառեն. «Քարը, որ մերժեցին շինարարները, անկունաքարը դարձավ...»:*

Ուկրաինայի ապագան ֆեդերացիայի կազմում տեսնելու այդ մարգարեությունը չնայած հիմնվում էր նրա պատմության արտակարգ իդեալականացման վրա, բայց և միաժամանակ բացառում էր նրա լիակատար անկախության գաղափարը: Ըստ երևույթին, Կիրիլ-Մեֆոդյան ընկերության անդամներից մեծ մասը (բացի Շևչենկոյից ու էլի մի քանիսից) կասկածում

էին իրենց ճակատագիրը բացարձակ ինքնուրույն տնօրինելու իրենց «երազկոտ ու փափկասիրտ» հայրենակիցների ընդունակության վրա:

Համաձայն լինելով ընդհանուր սկզբունքների հարցում՝ թե ինչ պետք է անել, Կիրիլ-Մեֆոդյանները սակայն տարածայնության մեջ էին՝ թե որն է կարևորը և ինչից պետք է սկսել: **Կոստոմարովի կարծիքով՝ ամենակարևորը համայն սլավոնների եղբայրությունն ու ապագա միասնությունն էր: Շևչենկոն ուկրաինացիների ազգային ու սոցիալական ազատագրման կրքոտ կոչ էր անում: Կուլիշը կարևորում էր ուկրաինական մշակույթի զարգացման առաջնահերթությունը:** Ընդ որում՝ միության անդամների մեծամասնությունն էվոլյուցիոն հայացքների կողմնակից էր, համարելով, որ նպատակին հասնելու լավագույն միջոցները՝ ժողովրդին լուսավորելն է, քարոզչությունն ու իշխանություններին «բարոյական օրինակ» ծառայելը: Շևչենկոն ու Յուլակը, որ ապացուցում էին, թե միայն հեղափոխության միջոցով կարելի է հասնել ակնկալվող փոփոխություններին, փոքրամասնություն կազմեցին: Ինչևէ՝ Կիրիլ-Մեֆոդյանների այս տարածայնությունները պետք չէ չափազանցնել, քանի որ նրանց բոլորին անկասկած միավորում էին ընդհանուր արժեքներն ու գաղափարները, իսկ ամենից ավելի՝ Ուկրաինայի սոցիալ-տնտեսական, մշակութային ու քաղաքական կյանքը բարելավելու բուն ցանկությունը:

Չնայած Կիրիլ-Մեֆոդյան ընկերության համեմատաբար անմեղ գործունեությանը, ցարական կառավարությունը որոշեց պատժել կազմակերպիչներին՝ «որպես օրինակ այլոց»: Սակայն պատժի չափերը որոշելիս «անհատական մոտեցում» ցույց տրվեց: Կոստոմարովը, Կուլիշն ու ընկերության մյուս «չափավոր հայացքների տեր» անդամները համեմատաբար մեղմ պատիժ կրեցին. ժամանակավորապես աքսորվեցին, որպես կանոն՝ Ռուսաստանի նահանգական քաղաքները, ինչից հետո նրանց թույլատրվեց վերադառնալ իրենց գործունեությանը: Յուլակը երեք տարով բանտարկվեց Շլիսելբուրգյան ամրոցում (ճիշտ է, Կոստոմարովն էլ գրեթե մեկ տարի անցկացրեց «Պետրոպոլիսում»): **Ամենից խիստ վարվեցին Շևչենկոյի հետ, որին ցարն ու կառավարությունը համարեցին ամենավտանգավոր դավադիրը:** Նրան տասը տարով, որպես շարքային, ծառայության ուղարկեցին Օրենբուրգ: Նիկոլայ Առաջինն իր ձեռքով դատավճռի տակ ավելացրեց. «... խստիվ արգելել գրելն ու նկարելը»: **Ֆիզիկական ու բարոյական անմարդկային տառապանքներից հետո, 1861 թ.-ին, համարեղ բանաստեղծը կյանքից հեռացավ:**

Կիրիլ-Մեֆոդյան ընկերության նշանակությունը շատ կարևոր երևույթ էր Ուկրաինայի հետագա ողջ պատմության համար: Ամենից առաջ՝ դա մտավորականության առաջին՝ թող որ չիրականացած, փորձն էր ազգային զարգացումը «մշակութայինից» դեպի քաղաքականը տանելու առումով: Երկրորդը՝ որ այդ փորձը ցարական կառավարության (որը դեռևս «ուկրաինասիրության» խաղաթուղթն էր ձգտում խաղարկել՝ «արևմտյան նահանգներում լեհական բռնությունների» դեմ) ուշադրությունը դարձրեց «ուկրաինամետության» հնարավոր վտանգի վրա: Կիրիլ-Մեֆոդյանների հետ հաշվեհարդարը պաշտոնական շրջանների քաղաքականության հակաուկրաինական կտրուկ շրջադարձի ազդանշան հանդիսացավ և ազդարարեց սկիզբն այն երկար ու ծիգ պայքարի, որ ծավալվեց կայսերական վարչակազմի և ուկրաինական մտավորականության միջև:

## **Ազգային ինքնագիտակցության վերելքը Արևմտյան Ուկրաինայում**

Նկարագրվող ժամանակաշրջանում Ուկրաինայի մտավորականության մշակութային գործունեությունն հիմնականում ծավալվում էր Չախսափնյակում (նախկին Հեթմանշինայի տարածքում) և Սլբոդոյան Ուկրաինայում:

Ռուսական կայսրության ինչպես արևմտյան, այնպես էլ հարավ-արևմտյան նահանգներում, այսպես կոչված՝ «տեղական» մշակույթով քիչ էին ոգեշնչվում: Ճիշտ է, Աջափնյակում (եհական շլախտայի որոշ հետնորդներ, ինչպես՝ **Տիմոկ Պադուրան, Միխայլ Չայկովսկին, Թորիյան Դոլենգա-Խոդակովսկին**, «կոզակական» ռոմանտիկ կերպարն էին փայփայում և նրազում էին այնպիսի ժամանակների մասին, երբ ուկրաինացի գյուղացիները, շլախտիցներին ներելով բոլոր վիրավորանքները, կօգնեն Աջափնյա Ուկրաինան միացնելու վերա-



ծնված Ռեչ Պոսպոլիտային: Նման ռոմանտիկ տեսլականը ուկրաինական պատմական շրջաններում լիովին համընկնում էր լեհական մշակույթի գերիշխող իրավիճակի հետ: Ինչ վերաբերում է Մերձսևծովյան նոր յուրացված շրջաններին, ապա այնտեղ ուկրաինամետոլոգիան նշաններ անգամ չէին երևում:

Արևմտյան ուկրաինայում, որ Ավստրիական կայսրության կազմում էր գտնվում, ուկրաինական մշակութային շարժումն ընդամենը տարանջատ դրվագների տեսքով էր հանդես գալիս, իսկ այնպիսի հետամնաց շրջաններում, ինչպես՝ Բուկովինան (որտեղ գերիշխում էր ռուսիական մշակույթը) և Անդրկարպատները (որտեղ էլ հունգարական մշակութային ու լեզվական տարրն էր գերակշռում), այդ մշակույթի նշույն անգամ չկար: Եվ միայն Արևելյան Գալիչինայում էր, որ ուկրաինամետոլոգիան աստիճանաբար ազգային ամուր (չնայած՝ ավելի թույլ, քան Չախափնյակում) հիմքերի վրա էր դրվում:

### Արևմտաուկրաինական մտավորականությունը

Խոսել XIX դարասկզբի արևմտաուկրաինական մտավորականության մասին՝ նշանակում է խոսել հոգևորականության մասին: Նկատի ունենալով, որ հոգևորականությունն արևմտաուկրաինական հասարակության միակ խավն էր, որ կարող էր օգտվել բարձրագույն կրթության առավելություններից, հենց բարձրագույն կրթությունը արևմտյան ուկրաինացիների համար այդ ժամանակ փաստորեն դառնում է աստվածաբանական ուսումնառության հոմանիշը: Այսպես՝ 1840-ական թվականների սկզբին Լվովի համալսարանի մոտ 400 ուկրաինացի ուսանողներից 295-ը աստվածաբանություն էին ուսանում, իսկ գրեթե բոլոր մնացածները՝ փիլիսոփայություն, որը նույնպես աստվածաբանական դասընթացի մեջ էր մտնում: Արևելյան Գալիչինայում 1837-1850 թ.թ.-ների ընթացքում ուկրաիններեն լեզվով լույս տեսած 43 գրքերից 40-ի հեղինակները հոգևորականներ էին:

Աշխարհիկ մտավորականները՝ ուսուցիչներ, իրավաբաններ, գիտնականներ, գրողներ և պաշտոնյաներ, արևմտաուկրաինական հասարակության մեջ քիչ թե շատ նշանակալից դեր սկսեցին խաղալ միայն XIX դարի կեսերից: Ինչ վերաբերում է հոգևորականներին, ապա նրանցից քչերին միայն կարելի էր մտավորական կոչել բառիս լայն իմաստով: Շատերն ապրում էին խուլ գյուղերում ու աղքատության մեջ, և իրենց կրթական մակարդակով ու մտահորիզոնով հազիվ էին տարբերվում գյուղացիներից: Հոգևորականներից միայն նրանք, որ ապրում էին եկեղեցու վարչական այնպիսի կենտրոններում, ինչպես Լվովն ու Պերեմիշլը՝ իրենց գաղափարներով, տպարաններով, ու բարձրագույն ուսումնական հաստատություններով, հնարավորություն ունեին մասնակից լինելու մշակութային կյանքին:

Բայց նույնիսկ այնտեղ, որտեղ քիչ թե շատ բարենպաստ պայմաններ գոյություն ունեին մտավոր զարգացման համար, արևմտաուկրաինական հոգևորականության բնածին պահպանողականությունը, նրա ստրկական հավատարմությունը հարստությանը, արգելափակում էին մտքի ազատությունը: Կրթված ուկրաինացիների այդ մի բուռ ներկայացուցիչները մեծ մասամբ սահմանափակ գավառացիներ էին, որ ծայրահեղ կասկածամտությամբ էին վերաբերվում ոչ միայն նոր գաղափարներին, այլև եվրոպական հասարակության մեջ այն ժամանակ քննարկվող նոր թեմաներին, գերադասելով բանավիճել ծեծված հարցերի շուրջ՝ այրուբենի (կիրիլիցա, թե՛ լատինիցա), օրացույցի (հուլյան, թե՛ գրիգորյան) և եկեղեցական ծեսերի: Ահա այստեղ էր, որ նրանք առատորեն վատնում էին իրենց մտավոր էներգիան՝ անգործն խարազանելով միմյանց: Իսկ այն մի քանի մտավորականներին, որոնք ծարավ էին արևմուտքից եկող հովերին՝ ծանոթանալու նոր ու մոդայիկ արմատական գաղափարների հետ, իսկ երբեմն էլ՝ ուղղակի գբաղվել հեղափոխական գործունեությամբ, նման եզակի հնարավորություն ընձեռում էր միայն լեհական մշակույթը: Ահա թե ինչու, օրինակ, 1830-ական թվականներին, որոշակի թվով ուկրաինացի պատանի սեմինարիստներ մասնակցում էին լեհական հեղափոխական խմբակների, որոնք պայքարում էին հանուն Ռեչ Պոսպոլիտայի վերածննդի, իսկ ուկրաինացիներին դիտում էին որպես լեհական ազգի մոռացված ու հետամնաց մի ճյուղ:

Լեհական հեղինակավոր մշակույթի հմայքն ու կախարդանքը մեծ էր նաև եկեղեցական մտավորականության լիովին պահպանողական մասի մեջ: Հենց որ արևմտաուկրաինական վերնախավի իրավական, նյութական ու կրթական մակարդակը մի փոքր բարձրանում էր, անմիջապես սկսվում էր նրա լեհացումը: Եվ ամեն մի ուկրաինացի, որքան բարձր էր ելնում սոցիալական սանդուղքով, այնքան ավելի էր ամաչում իր մայրենի «գեղջկական» լեզվից: Այսպես աստիճանաբար ամբողջ հոգևորականությունն ու մտավորականությունը իր միջա-

վայրում անցնում էր լեհերենին, ուկրաիններն «պահելով» գյուղացիների հետ շփվելու համար: Երկրորդ ասած՝ այն «լեզվությունը», որը XIX դարասկզբին Արևմտյան ուկրաինայում աշխատում էին գործածել որպես գրական լեզու (եկեղեցական սլավոնական լեզվի և տեղական բարբառի արհեստական ու անշնորհ մի խառնուրդ՝ գերհագեցած լատիներեն, լեհերեն ու գերմաներեն արտահայտություններով), նախապես դատապարտված էր, և արդեն 1809 թ.-ին Լվովի համալսարանում փակվեց «Ստուդիում ռուսենումը», այսինքն՝ այն ֆակուլտետը, որտեղ աշխատում էին այդ լեզվով դասավանդել: Հասկանալի է, որ ֆակուլտետը վերացնելու «մեղավորները» ոչ լեհերն էին, և ոչ էլ ավստրիացիները, այլ հենց այդ չարաբաստիկ ֆակուլտետի ուկրաինացի ուսանողները, որոնք խտրականություն էին համարում այն հանգամանքը որ իրենց չեն սովորեցրել գերմաներեն լեզուն, այն դեպքում, երբ բոլոր կարևոր առարկաները դասավանդվում էին հենց այդ լեզվով:

Այնուամենայնիվ, եթե այդ բոլոր հեղինակավոր «գերմաներեն գիտելիքներին» տիրապետելու ուկրաինացիների ծգտումը նրանց հեռացնում էր մայրենի լեզվից, ապա այդ գիտելիքներին տիրապետելուն զուգընթաց, նրանք կրկին վերադառնում էին հարազատ մշակույթին՝ դառնալով նրա համոզված ու կրակոտ պաշտպանները: Օրինակ՝ ուկրաինացի ուսանողները Լվովում կամ Վիեննայում գերմանացի պրոֆեսորներից չէին կարող չիմանալ հենց նույն հարցերի և նրա այն գաղափարների մասին, որ ստեղծագործ անհատի համար շատ կարևոր են հայրենի երկիրն ու մայրենի լեզուն: Բացի այդ, կայսրության համալսարանական քաղաքներում, եվրոպական կրթություն ստանալու ծարավ ուկրաինացիները կապեր էին հաստատում հենց այդ՝ լեհական կամ չեխական առաջավոր մտավորականության ներկայացուցիչների հետ, որ նույնպես սլավոններ էին, որոնք սակայն չէին ստրկանում իշխող մշակույթին, այլ համարձակորեն զարգացնում էին իրենց ազգային լեզուները՝ ազգային ինքնագիտակցության առումով անասելի հետ թողնելով հարստության կայսրության մյուս սլավոն ժողովուրդներին: Հարևանների հաջողությունները հույս էին ներշնչում փոքր, բայց արագ աճող արևմտաուկրաինական մտավորականությանը: Հաղթահարելով տեղական պահպանողական միջավայրի դիմադրությունը, նրանք աստիճանաբար յուրացնում էին հասարակական մտքի նոր ուղղություններ ու գաղափարներ, և զարգացնում էին ազգ հասկացությունն ընդհանրապես և ուկրաինական ազգ հասկացությունը՝ մասնավորապես:

### Ազգային գիտակցության զարթոնքը Արևմտյան ուկրաինայում

Ազգային խնդրին մշակութային տեսանկյունից մոտենալու նկատմամբ աճող հետաքրքրության առաջին նշաններն ի հայտ են գալիս XIX դարասկզբին, հույն-կաթոլիկ թեմի կենտրոն Պերեմիշլ հնագույն քաղաքում, որտեղ գործում էր հոգևոր ճեմարանը և հարուստ գրադարաններ կային: Պերեմիշլի հոգևորականությունն աչքի էր ընկնում իր կրթվածությամբ: Տասնամյակներ շարունակ ուկրաինայի պատմական տարածքների այդ ամենաարևմտյան կետը ավստրիական ուկրաինացիների համար ազգային ինքնագիտակցության զարգացման գործում գրեթե նույն դերն ուներ, ինչ ռուսական ուկրաինացիների համար մոտավորապես նույն ժամանակներում կատարում էր նրա ամենաարևելյան մասը՝ Խարկովչին: Ընդ որում, Խարկ է հատուկ նշել, որ գրական համեստ ընդունակություններ դրսևորող պերեմիշլյան կղերներն ստեղծագործական ազդակներ էին ստանում հատկապես խարկովյան ռոմանտիկներից: Պերեմիշլյան խմբակի ամենանշանավոր ներկայացուցիչը եկեղեցու բարձրաստիճան հովվապետ Իվան Մոհիլնիցկին էր՝ թեմի տարրական կրթության գործերի տնօրեն: 1816 թ.-ին, եպիսկոպոս Սիխայր Լևիցկու աջակցությամբ, Մոհիլնիցկին կազմակերպեց այսպես կոչված՝ «Կոերական ընկերությունը», որի առաջնային նպատակը՝ ուկրաինացի գյուղացիության համար Սուրբ գիրքը մայրենի լեզվով հանրամատչելի դարձնելն էր: Դա այն ժամանակների արևմտաուկրաինական վերնախավի լեհամետ տրամադրվածությանն հակընդդեմ իրադարձություն էր: Ըստ երևույթին, Մոհիլնիցկին և իր համախոհները հերթերի և խարկովյան ռոմանտիկների ազդեցությունից բացի, առաջնորդվում էին նաև ավելի «երկրային» նկատառումներով. չէ՞ որ ուկրաիններն լեզվով եկեղեցական տեքստեր չունենալով և ստիպված լեհերենից օգտվելով, արևմտաուկրաինական գյուղացիներն աստիճանաբար կարող էին հույն-կաթոլիկությունից հեշտությամբ անցնել հռոմեական կաթոլիկության: Մոհիլնիցկու ընկերության գործունեության իրական արդյունքները շատ համեստ էին, և ավարտվեցին մի քանի աղոթագիրք ու այբբենարան հրատարակելով, իսկ ընկերությունը շուտով կազմալուծվեց: Ամեն դեպքում, արևմուտքում և արևելքում ուկրաինական մտա-



վորականության ինքնակազմակերպման առաջին փորձերի մեջ այս, թող որ համեստ, փորձն էլ չպետք է աննկատ մնար, քանի որ ուշադրություն էր հրավիրում լեզվական հարցի վրա, որ արևմտաուկրաինական մտավորականության համար մնում էր գլխավորը նաև գալիք տասնամյակների ընթացքում: Ինչևէ, Սոհիլնիցկու փորձը՝ կատարելագործել տեղական բարբառը՝ առատորեն համեմելով եկեղեցական սլավոներենով, հանգեցրեց մի արհեստական խառնածոնի առաջացմանը, որը գրեթե չնպաստեց հերքելու այն դատողություններն ու կարծիքը, թե գրականություն ստեղծելու համար ուկրաիններեն լեզուն պիտանի չէ:

Բացի պերենիշյան խմբակից, 1820-ական թվականներին Արևելյան Գալիչինայում էլի մի քանի անհատ-բանահավաքներ պատմական նյութեր ու բանահյուսական նմուշներ էին հավաքում: Դրանց թվում նշենք պատմաբաններ Միխայլո Դարասկիչին և Դենիս Զուբրիցկուն, ինչպես նաև լեզվաբան ու ազգագրագետներ Յոսիպ Լևիցկուն և Յոսիպ Լոզինսկուն: Սակայն Արևմտյան Ուկրաինայում ազգային ինքնագիտակցության զարգացման վրա նրանց աշխատությունների ազդեցությունը սահմանափակ էր, քանի որ դրանք բոլորն էլ գրված էին լատիներեն, գերմաներեն կամ լեհերեն լեզուներով:

### «Ռուսիական երրորդություն»

1830-ականներին ազգային ինքնագիտակցության բարձրացմանն ուղղված գործունեության կենտրոնը տեղափոխվեց Լվով: Այստեղ արդեն առաջնությունն անցնում է երազային հովերով տարված և Զերդերի գաղափարներով ոգեշնչված երիտասարդ սեմինարիստներին: Նրանց առաջնորդը 21-ամյա Մարկիան Շաշկիչն էր, որ պոետական ու կազմակերպչական անուրանալի տաղանդ ուներ, իսկ նրա նպատակամղվածությունն ու կրթոս ոգևորությունը փոխանցվում էին շրջապատողներին: Իր ամենամոտ համախոհների՝ բարձրագույն կրթություն ունեցող Իվան Վահիլևիչի և եռանդուն ու վճռական Յակիվ Դոլովացկու հետ Շաշկիչը ստեղծագործական մի եռյակ հիմնեց, որ հայտնի դարձավ «Ռուսիական երրորդություն» անունով: 1832 թ.-ին նրանց շուրջն համախմբվեցին ուսանողներ, որ իրենց առջև մի շատ բարդ ու դժվար լուծելի նպատակ էին դրել. տեղական բարբառը բարձրացնել գրական լեզվի աստիճանին՝ հեռու պահելով եկեղեցական սլավոներենի և օտար լեզուների «միջնորդություններից»: Այդ խնդրի լուծումը նրանք համարում էին այն միակ պայմանը, որի դեպքում գյուղացիությունը հնարավորություն կունենար կրթվելու և կյանքը բարելավելու, իսկ դարերով ճնշված ու կաշկանդված ուկրաինական յուրօրինակ մշակույթը՝ վերջապես ինքնարտահայտվելու ելք կգտներ:

Պարզունակ, անմշակ գյուղական բարբառով, առավել ևս՝ կիրիլյան պարզեցված գրով գրականության գաղափարն անգամ, հույն-կաթոլիկ հովվապետներին թվում էր անասելի համարձակ, եթե ոչ խելացնոր: Շաշկիչին և նրա ընկերներին պարզորոշ հասկացրեցին, որ եկեղեցու աջակցության վրա հույս չդնեն: Փոխարենը, ջերմորեն սատարեցին Ռուսական կայսրության նրանց համախոհները: «Ռուսիական երրորդությունը» շատ արագ ընդհանուր լեզու գտավ այնպիսի ուկրաինամետ մտավորականների հետ, որպիսիք էին Իզմայիլ Սրեբնևսկին, Միխայլո Մաքսիմովիչը և Օսիպ Բոդյանսկին: «Ռուսիական երրորդությանը» ոգեշնչում էր նաև Արևմուտքի բարեկամների՝ ծաղկում ապրող չեխական ազգային շարժման գործիչների օրինակը: Գալիչինայի վարչությունում ծառայող չեխ Կարել Զապի օգնությամբ երիտասարդ լվովցիները և ամենից առաջ՝ Դոլովացկին, նամակագրական աշխույժ կապ հաստատեցին այնպիսի «ազգային գործիչների» և կրակոտ սլավոնամետների հետ, ինչպիսիք սլովակներ Յան Կոլարն ու Պավել Շաֆարիկը, սլովենացի Բարտոլոմեյ Կոպիտարն ու չեխ Կարել Գավլիչեկն էին:

«Ռուսիական երրորդության» գործունեության փաստացի արդյունքը «Դնեստրյան ջրահարս» ավանախն էր: Այն պարունակում էր տեղական բարբառով գրված ժողովրդական երգեր, ինչպես նաև բանաստեղծություններ ու պատմական թեմաներով հոգվածներ: Դոլովացի-կաթոլիկ եկեղեցին պախարակեց այն՝ որպես «անպարկեշտ, եթե ոչ կործանարար», իսկ Լվովի ոստիկանության գերմանացի պետն այսպես արձագանքեց. «Մենք այստեղ արդեն բավականին հոգսեր ունենք մի ժողովրդի հետ (լեհերի - հեղ.), իսկ այս խելագարներն ուզում են հարություն տալ մի ուրիշ՝ վաղուց մեռած ու թաղված ռուսիական ժողովրդին»: Տեղական գրաքննիչը՝ հույն-կաթոլիկ բահանա Վենեդիկտ Լևիցկին, արգելեց Լվովում ավանախնի հրատարակումը, և Շաշկիչն ու իր ընկերները միայն 1837 թ.-ին, հեռու Բուդապեշտում կարողացան այն լույս ընծայել, ընդ որում՝ Լվով ուղարկված գրեթե բոլոր 900 օրինակն էլ բռնագրավվեց ոստիկանության կողմից: Միայն հատուկեմտ օրինակներ հասան թերահա-

վատ ընթերցողներին: Նման վերաբերմունքից ու արձագանքից ցնցված, եկեղեցական իշխանություններից հալածված, տաղանդավոր ու դյուրագգաց Շաշկիչը երիտասարդ տարիքում կնքեց իր մահկանացուն, իսկ Վահիլևիչը շուտով անցավ լեի մտավորականության ճանապարհը: Միայն Դոլովացկին հետևողականորեն ու աննահանջ շարունակեց աշխատել «Ռուսիական երրորդության» սկզբնական նպատակների իրագործման ուղղությամբ:

Չնայած, որպես պարբերական հրատարակություն մտահղացված «Դնեստրյան ջրահարսը» հենց սկզբից տապալվեց, սակայն նրա օրինակը համեմայն դեպս ցույց տվեց, որ արևմտաուկրաինական գյուղացու լեզուն էլ կարող է գրական լեզվի հիմք ծառայել: Ավանախնի հեղինակներն ու կազմողները ուշադրություն հրավիրեցին հասարակ ժողովրդի և նրա «անեղծ» մշակույթի վրա: «Դնեստրյան ջրահարսի» ազդեցության տակ սկսվեց արևմտաուկրաինական մտավորականության դանդաղ, բայց անշեղորեն վերակողմնորոշվելու գործընթացը՝ դեպի սեփական ժողովուրդը: Եվ արդեն հեռու չէր այն ժամը, երբ հենց այդ ժողովրդի ծոցից պիտի դուրս գար նոր սերնդի մտավորականության մեծ մասը:

\* \* \*

Ազգային վերածննդի գաղափարն այդպես դանդաղորեն ու դժվարությամբ էր իր ճանապարհն հարթում Ուկրաինայում: XIX դարի կեսերին այդ գաղափարը դեռևս դուրս չէր եկել մտավորականության բավական նեղ շրջանակներից, և նրանք էին միայն, որ դիմակայելով խավարամիտների հալածանքներին ու ջրնկրվելով կայսերական վարչակազմերի մեքենայություններից, անշեղորեն որոնում էին այն հարցի պատասխանը, թե վերջապես՝ ո՞րն է ուկրաինական ազգի ելությունը: Ազգային ինքնագիտակցության երկար ճանապարհի նախնական, այսպես կոչված «մշակութային» փուլից մինչև քաղաքական ինքնորոշման փուլը դեռ բարդ ու բազմաթիվ արգելքներ պետք է հաղթահարվեին: Առավելապես գյուղացիական, գավառական ու ավանդապաշտական ուկրաինական հասարակության մեջ չկար սոցիալական որևէ խումբ, բացի մտավորականությունից, որ ի վիճակի լիներ ընկալելու ազգային ինքնագիտակցության նորահայտ գաղափարները: Դեռ ավելին, համոզվելով ու ապացուցելով, որ ուկրաինացիները հատուկ, առանձին մի ազգ են, իսկ ուկրաիններեն լեզուն կարող է դառնալ ինքնուրույն գրական լեզու, մտավորականներն հաճախ էին հանդիպում հենց իրենց կրթված հայրենակիցների կասկածամտությանն ու չարախոսությանը, որոնց համար հեղինակավոր և առավել զարգացած, հատկապես՝ լեհական ու ռուսական, մշակույթների ծգոյությունը թվում էր իսկապես անհաղթահարելի: Սակայն «ազգային գործիչները» չէին հանձնարում, քանի որ, մի կողմից՝ այդ բոլոր հարցերը հաջողությամբ լուծելու օրինակները տեսնում էին արևմտասլավոնական մտավորականության մոտ, իսկ մյուս կողմից՝ համարում էին, որ իրենց գործունեությունն անհրաժեշտ է իրենց իսկ իդեալականացրած «հասարակ ժողովրդին»:

Ավածին անհրաժեշտ է հավելել, որ ազգային ինքնագիտակցության տարածման գործընթացն հենց սկզբից միատեսակ չէր ընթանում Արևելյան Ուկրաինայում և Արևմտյանում: Զախափնյակում այդ ժամանակ կոզակական ավանդույթներն ու դարավոր ինքնակառավարման մասին հիշողությունը դեռևս ամուր էին, իսկ մտավորականությունն էլ այնտեղ ավելի մեծաքանակ ու զարգացած էր, քան Աջափնյակինը, այդ պատճառով էլ ազգային ինքնահիմաստավորման սկիզբը բավականին խոստումնալից էր: Սակայն այդ ինքնահիմաստավորումն հենց որ անցավ որոշակի՝ «թուլատրելի» սահմանները, ի դեմս ցարական կառավարության, կոպտորեն դեմ առավ անողոք ու անհաղթելի թշնամուն, որի վառ ապացույցը կիրիլ-Սեֆոդյանների նկատմամբ հաշվեհարդարն էր:

Արևելյան Գալիչինայում ազգային շարժման հաջողություններն ավելի համեստ էին, իսկ նրա գլխավոր թշնամին հույն-կաթոլիկ եկեղեցու պահպանողական վերնախավն էր: Ողբերգական լուրջ դեպքեր այստեղ գրեթե տեղի չունեցան, իսկ «ազգային գործիչները» դանդաղորեն, բայց հաստատ քայլերով առաջ էին գնում: Եվս մի կարևոր հանգամանք. չնայած կնդիրների ու դժվարությունների էական տարբերությանը, արևմտյան և արևելյան ուկրաինացիներն սկսում են միմյանց նկատմամբ փոխադարձ հետաքրքրություն հանդես բերել, այն էլ՝ ամբողջ հարյուրամյակներ անց, որոնց ընթացքում նրանց միջև գործնականում ոչ մի կապ չէր եղել: Այսպես սաստիճանաբար սկսվեց ազգային միաձուլման գործընթացը:





### ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈՒՆՈՒՄՆԵՐ

XIX դարի կեսերին ողջ Եվրոպայում տիրում էր պահպանողականությունը, սակայն ոչ մի տեղ այնպես պարզորոշ ու բացահայտ ձևով հանդես չէր գալիս, ինչպես Ավստրիայում և Ռուսաստանում՝ երկու կայսրություն, ուր բռնապետության ճիրաններում ճգնված մյուս ազգերի հետ միասին կենում էին նաև ուկրաինացիները: Այդ կայսրությունների հպատակների կեցությունն ու գիտակցությունը սահմանվում էին հավակնոտության, հնազանդության, հասարակական կարգի ու ավանդականության սկզբունքներով: Փոփոխությունների մասին մտածելն անգամ խիստ կասկածանքի ու գաղտնի հսկողության տակ էր:


Սակայն, ո՛չ Հաբսբուրգները, ո՛չ Ռոմանովները ի գորու չէին կասեցնելու Արևմտքից փչող գաղափարական նոր հոլմերը, ինչպես որ չէին կարող զսպել հասարակական նոր ուժերի առաջացումը, կամ կանխարգելել համաեվրոպական օրինակով անշեղորեն զարգացող նոր տնտեսական հարաբերությունների ներթափանցումը: Որքան հզորանում էին ներքին ու արտաքին ճնշումները կայսերական հաստաբետ բաստիոնների վրա, այդքան ավելի էին իշխանություններն սկսում գիտակցել, որ հին կարգերն անհողորդ չեն կարող մնալ: Այդ՝ ճգնաժամային իրավիճակից ծնված գիտակցությունն էլ սկիզբ դրեց մեծ բարեփոխումների դարաշրջանին՝ սկզբում Ավստրիայում, այնուհետև նաև Ռուսաստանում: Եվ քանի որ երկու կայսրություններում էլ ուկրաինացիներն ամենաիրավագուրկ ազգերից մեկն էին, բարեփոխումները չէին կարող նրանց վրա հսկայական ազդեցություն չգործել:

### Փոփոխություններ Ավստրիական կայսրությունում

Դեռևս 1848 թ.-ի սկզբին, Հաբսբուրգների իշխող դինաստիան վստահորեն էր նայում ապագային: Պատճառներից մեկն այն էր, որ կայսրությանը վերջերս հաջողվել էր կարգավորել իրավիճակն ամենաանհանգիստ նահանգներում, և դրանցից մեկն էլ Գալիչիանն էր:

Տասնամյակներ շարունակ լեհական շլախտայի և մտավորականության գաղտնի ընկերությունները «դավադրություն էին նյութում»՝ նպատակ ունենալով վերականգնել Ռեչ Պոսպոլիտան: Հանդես գալով հանուն համընդհանուր քաղաքական ազատությունների, լեհ հեղափոխականներն անկեղծորեն հավատում էին, թե կայսրությունների կողմից տրոհված Լեհաստանի բոլոր բնակիչները՝ անկախ իրենց սոցիալական կարգավիճակից ու ազգային պատկանելությունից, պաշտպանում են վերականգնման գաղափարը: Ուկրաինացի սեմինարիստները, որոնք 1830-ական թվականներին հաճույքով էին համալրում լեհական գաղտնի կազմակերպությունների շարքերը, ավելի էին ամրապնդում նրանց այդ վստահությունը: Բայց՝ «առանձին ուկրաինական ազգի» հարցը չհապաղեց ծագել նաև այդ խմբակներում, որոնք մեծ մասամբ ուկրաինացիներն ամմիջապես լքեցին, երբ իրենց «ազգային հարցի» վերաբերյալ ստացան լեհերի բացասական պատասխանը:

1846 թ.-ին լեհ հեղափոխականների այդ հաստատ համոզվածությանը, թե իրենց նպատակների իրագործմանը լայնորեն կաջակցեն բոլոր ժողովուրդները, ևս մի կործանիչ հարված հասցվեց: Տեղեկանալով շլախտայի կողմից նախապատրաստվող հեղափոխության մասին, Ավստրիական կառավարությունն Արևմտյան Գալիչիայի գյուղացիներին հանձնեց, թե իրենց կալվածատերերը երազում են գյուղացիությանը անսամծ շահագործելու նախկին իրավունքների վերականգնման մասին: Եվ կատարած լեհ գյուղացիներն հենց իրենք դուրս եկան իրենց շլախտայի դեմ ու կալվածատերերից շատերին կոտորեցին, դրանով իսկ կանխելով տասնամյակներով նախապատրաստվող շլախտիչների խռովությունը:



Արևմտաուկրաինական տարածքները Ավստրո-Հունգարական կայսրության կազմում XIX դարի վերջին

Մ․ Թվինյանի քարտեզի վրա



## 1848 թ.-ի Գալիչինայի ապստամբությունը

1848 թ.-ի զարմանը ողջ եվրոպայով մեկ հեղափոխությունների ալիք բարձրացավ: Հարսբուրգների խաբուսիկ երջանկությունը կրկին ենթարկվեց դաժան փորձությունների:

Այս անգամ արդեն բազմազգ պահպանողական կայսրության ապստամբած **ժողովուրդները** չբավարարվեցին քաղաքական և սոցիալ-տնտեսական բարեփոխումների պահանջով: Օրակարգում՝ հատկապես Կենտրոնական և Արևելյան Եվրոպայում, ազգային ինքնորոշման հարցերն էին դրված: Իսկ Հարսբուրգների գերմանացի, և հատկապես իտալացի հպատակները պահանջ դրեցին վերամիավորվելու կայսրության սահմաններից դուրս ապրող իրենց եղբայրների հետ, որոնց մեջ էլ էր արդեն արթնացել ազգային ոգին: Հունգարները պատերազմ հայտարարեցին հանուն անկախության: Իրենց պետության վերականգնման համար կրկին ոտքի ելան լեհերը: Սկսվել էր **«ժողովուրդների գարունը»**, ամբողջ եվրոպական քաղաքականության մեջ ազգային հարցը դառնում էր ամենահիմնականն ու առաջնայինը:

Այդ բուռն իրադարձությունների ազդեցությամբ կայսրության բոլոր ժողովուրդներն սկսում են ձևակերպել իրենց ազգային մասնավոր պահանջները: Մի անասելի քառս առաջացավ: Կայսրությունն հայտնվեց փլուզման եզրին:

Վիեննայում տիրող անկարգությունների, ատելի իշխան Մետերնիխի **հրաժարականի** մասին և այն մասին, որ մահու չափ սարսափած Ֆերդինանդ Առաջին կայսրը քաղաքական ազատականացում և սոցիալական բարեփոխումներ է խոստացել, Լվովում տեղեկացան 1848 թ.-ի մարտի 19-ին: Լեհերն աշխուժացան: Լվովից հանրազիր ուղարկեցին կայսրին՝ Գալիչինայի լեհերի ավելի շատ ազատականացման և քաղաքական իրավունքներն առավել ընդլայնելու պահանջով: Այն մասին, թե նահանգում նաև ուկրաինացիներ են ապրում, փաստաթղթում չէր էլ հիշատակվում:

Ապրիլի 13-ին Լվովում ստեղծված լեհական **«ժողովրդական ռադան»** բնակչությանը կազմակերպում է ի պաշտպանություն հանրագրում նշված պահանջների: Շուտով տեղական «ռադաների» մի ամբողջ ցանց է առաջանում, և լեհական թերթ է սկսում լույս տեսնել:

Սակայն, ի խորին զարմանք և հիասթափություն լեհերի՝ ուկրաինացիները, որոնց նրանք ազգ էլ չէին համարում, հրաժարվում են մասնակցել լեհական «համաժողովրդական» միջոցառումներին: Փոխարենը՝ ձևավորում են իրենց սեփական ներկայացուցչական մարմինը՝ **«Գլխավոր ռուսական ռադան»**, և նույնպես՝ տեղական բաժանմունքներով ու իրենց թերթով:

Հարսբուրգների բախտը բերեց: Վերջերս Գալիչինայի նահանգապետ նշանակված կոմս **Ֆրանց Ստադիոնը** շատ խելացի ու ձեռներեց անձնավորություն էր: Առաջնորդվելով «բաժանիր, որ տիրես» կայսերական հնագույն սկզբունքով, նա ուկրաինացիներին ու լեհերին վարպետորեն զժտեցնում էր միմյանց հետ և երկուսին էլ պահում էր կայսրության ենթակայության տակ: Այդ նահանգում քաղաքական իշխանության բանալին նրա ձեռքում էր մնալու, ով կթափանցեր այդտեղ բնակվող երկու ժողովուրդների միջև եղած իրական տարածայնությունների ռուբան մեջ: Եվ կոմսը թափանցում էր այդ ռուբան մինչև խորքերը...

Ուկրաինական տեսակետից՝ 1848 թ.-ի հեղափոխության բոլոր պատճառներն հանգում էին երկու հիմնական և իրար հետ սերտորեն միահյուսված հարցերի լուծմանը: **Առաջինը՝ սոցիալ-տնտեսական, այսինքն՝ գյուղացիության ավանդական և հարակա խնդիրն էր, հատկապես՝ դեռևս գոյատևող ավատատիրական պարիակները, որ անտանելի բեռի պես ծանրացած էին Արևմտյան Ուկրաինայի գյուղական բնակչության ուսերին: Երկրորդ հարցը կապված էր նոր ազգային գաղափարի հետ:** Մինչև հիմա Գալիչինայի բնակչությունը բաժանված էր գյուղացիների ու ազնվականների, հունա- և հռոմեական կաթոլիկների: Այսուհետ նրանք միմյանց ընկալում էին որպես առանձին և յուրահատուկ ազգային-մշակութային համություններ, առաջ էին քաշում իրարամերձ ազգային պահանջներ, և դրա հետ մեկտեղ՝ ստիպված էին ինչ-որ կերպ համագոյակցել միևնույն նահանգում:

## Գյուղացիական խնդիրը

1848 թ.-ից դեռ շատ տարիներ առաջ և՛ իրատես ու ողջամիտ պաշտոնյաները, և՛ ազատական մտավորականությունը, և նույնիսկ որոշ կալվածատերեր գերազանց հասկանում էին, որ գյուղացիության նկատմամբ շլայխտայի ավատատիրական իրավունքներն անհուսալիորեն հնացել են: Սկսած 1780-ականներից, դեռևս Իոսիֆ Երկրորդի օրոք, այդ ուղղությամբ նշանակալից փոփոխություններ անցկացվեցին. գյուղացին իրավունք ստացավ իր շահերը պաշտպանել դատարանում և անձնական օգտագործման անօտարելի հողաբաժին ստացավ, որը կալվածատիրոջ հողերի հետ ոչ մի կապ չուներ: Այդուհանդերձ, մի քանի հետա-

մնաց նահանգներում, այդ թվում և Գալիչինայում, գյուղացի-կալվածատեր ավատատիրական հարաբերությունների գլխավոր բնորոշիչը՝ կոռն ու բեգարը, առաջվա նման պահպանվում էր. իր հողը մշակելու դիմաց գյուղացին պարտավոր էր (շաբաթական սովորաբար 2-3 օր) աշխատել կալվածատիրոջ հողի վրա: Գալիչինայի գյուղացիության զայրույթի ու դժգոհության արմատներն հենց այդտեղից էին գալիս:

1848 թ.-ի հեղափոխությունն ու այն ճգնաժամային իրավիճակը, որ Արևմտյան և Կենտրոնական Եվրոպայում տեղի ունեցող իրադարձությունների արդյունքում առաջացավ Գալիչինայում, վերջապես հնարավորություն տվեցին մեկընդմիջտ ազատվել ճորտատիրական իրավունքի այդ վերջին մնացուկներից: Լեհ հայրենասերները, որոնց մեծ մասը շլայխտիչներ էին, նույնպես կարողացան 1848 թ.-ի դեպքերից դասեր քաղել և հիմա ակտիվորեն աշխատում էին շահել գյուղացիության համակրանքը՝ Գալիչինայում իրենց դիրքերն ամրապնդելու համար, և ամեն կերպ համոզում էին իրենց ընկերներին՝ կամավոր հրաժարվել գյուղացիության համար ատելի «կոռն ու բեգար»-ից: Եվ չնայած կալվածատերերի մեծ մասը չէր շտապում արձագանքել հայրենասերների բարեհոգի հորդորներին, խորաթափանց կոմս Ստադիոնը լրջորեն անհանգստացավ դեպքերի նման շրջադարձից: Նա հորդորում է Վիեննային՝ «կոռն ու բեգարը» վերացնելու գործում կանխել լեհերին և այդպիսով խլել նրանցից նախաձեռնությունը՝ կայսրության համար այդ օրիասական պահին նրա հանդեպ շնորհակալության և հավատարմության զգացմունքներ արթնացնելով Գալիչինայի գյուղացիության հոգում: Կոմսի փաստարկներն համոզեցին կայսրին և **1848 թ.-ի ապրիլի 23-ին Ֆերդինանդ Առաջինը պատմական մանիֆեստ հրապարակեց, համաձայն որի «կոռն ու բեգարը» Գալիչինայում վերացվում էր:** Այդ մանիֆեստը մոտ հինգ ամսով կանխեց համանման հրամանը, որով «կոռն ու բեգարը» արգելվում էր արդեն ողջ կայսրությունում:

Դրանից հետո դեպքերը զարգացան Գալիչինայի իմաստուն նահանգապետի ծրագրով: Ուկրաինացի գյուղացիները ցնծությամբ ողջունեցին մանիֆեստն ու հավատարմության երդում տվեցին «կեսարին» (չնայած պարզ էր, որ մանիֆեստով բոլոր խնդիրները չէին լուծվում): Լեհ կալվածատերերին հանգստացնելու համար էլ՝ կորցրած աշխատուժի դիմաց նրանց փոխհատուցում խոստացան (այդ վճարումների մոտ երկու երրորդը հետագայում կրկին գյուղացիների վրա դրվեց): Գյուղացիներն ստացան վարելահողի 70 %-ը, կալվածատերերը՝ միայն 30 %-ը: Սակայն անորոշ էր մնում շատ ցավալի մի հարց. ո՞ւմ են պատկանելու նախկինում համայնական սեփականություն համարվող անտառներն ու արոտավայրերը: Ժամանակի ընթացքում դրանք կանցնեն կալվածատերերին և գյուղացիները կրկին ամբողջովին կախման մեջ կընկնեն նրանցից այնպիսի կենսական հարցերում, ինչպես վատելափայտն է ու արոտավայրը: Վերջապես՝ այն վարելահողը, որ բոլոր բարեփոխումների արդյունքում հասավ գյուղացուն, իրենից ընդամենը մի խոճուկ հողակտոր էր ներկայացնում. 70 %-ով դրանք 14 ակրից էլ պակաս իողատարածքներ էին: Նման հողակտոր ունեցող միջին ընտանիքը հազիվ էր կարողանում ծայրը ծայրին հասցնել:

Պատկանալի է, որ այս ամենը չի նշանակում, թե հողատուրքի վերացումը արևմտաուկրաինական գյուղացու կյանքում քիչ փոփոխություն մտցրեց: Ընդհակառակը՝ այդ բարեփոխման ազդեցությունն իսկապես իսկապես էր, քանի որ այն գյուղացու և հողատիրոջ միջև եղած օրինական վերջին կապն էլ կտրեց: Հիմա գյուղացին դառնում էր իր հողի լիիրավ տերը, ուրեմն և՛ իր ճակատագրի: *Դեռ երբեք Գալիչինայի կախյալ ու ծեծկված գյուղացին հետաքրքրություն չէր ցուցաբերել քաղաքական, կրթական և նույնիսկ մշակութային հարցերի նկատմամբ, որոնցով սկսեց հետաքրքրվել 1848 թ.-ից հետո:* Այսուհետև և դեռ երկար ժամանակ արևմտաուկրաինական սեփականատեր-գյուղացին դառնում է քաղաքական գործոն, որի հետ հաշվի չենտեղ՝ արդեն չի կարելի:

## Ազգային հարցը

1848 թ.-ին արևմտաուկրաինական հասարակության կրթված մի չնչին խավը հիմնականում բաղկացած էր հոգևորականներից և նոր ձևավորված մտավորականությունից: Եվրոպայի հեղափոխությունը՝ ազդակ հանդիսացավ այդ մարդկանց համար, որպես առանձին ազգ պաշտոնապես ինքնորոշվելու և առաջին անգամ հնարավորություն ընձեռեց ինքնուրույն ձևավորելու ազգային կառույցները. ընդ որում՝ հեղափոխությունը, որքան էլ տարօրինակ է, գործում էր հարսբուրգյան նահանգապետ կոմս Ստադիոնի ձեռքով, որը բացահայտ հովանավորում էր արևմտաուկրաինական վեհերոտ վերնախավին 1848 թ.-ի բոլոր իրադարձություններում՝ նրանց օգտագործելով որպես իսկակալի շատ ավելի մարտականորեն



տրամադրված լեհերի դեմ:

Ավստրիական նահանգապետի և նրա հետնորդների վարած նման քաղաքականությունը հանգեցրեց նրան, որ լեհերը դեռ երկար ժամանակ պիտի մեղադրեին Յաքսբուրգներին այն բանում, որ նրանք, իբրև թե՝ «հորինեցին ռուսիններին» (այսինքն՝ ուկրաինացիներին), որ «ռուսինները» ոչ թե «ազգերի գարնան» օրինական ծնունդ են, այլ ընդամենը **ավստրիական մեքենայությունների կողմնակի արդյունք...** Այսպես թե այնպես, **ավստրիացիներից շոյված և լեհերից վիրավորված ուկրաինացիներն առաջին անգամ համարձակվում են քաղաքական ասպարեզ մտնել:**

Ապրիլի 19-ին, կոմս Ստադիոնի դրոմամբ, Լվովի հույն-կաթոլիկ հոգևորականությունը, եպիսկոպոս *Յախիմովիչի* գլխավորությամբ խնդրագրով դիմեց կայսրին: Ի տարբերություն դրանից քիչ առաջ Ֆերդինանդ Առաջինին լեհերի ուղարկած փաստաթղթի, ուկրաինացիների դիմումը գրված էր հավատարիմ հպատակի երկչուտ տոնով: Այն սկսվում էր պատմական լեզուներով, ուր մանրամասն բացատրվում էր, թե ինչու են է կայսրում Արևելյան Գալիչիայի ուկրաինացիների ազգային առանձնահատկությունը: **Յեղիմակները ճոխ լեզվով մանրամասն նկարագրում էին միջնադարյան Գալիցյան իշխանության անցյալ փառքն ու համբավը, լեհերի կողմից հետազայում ստրկացումը, հատկապես նշելով այն փաստը, որ երկրամասի բնակչությունը «պատկանում է ռուսիական (այսինքն՝ ուկրաինական - հեղ.) մեծ ազգին, որ 15 մլն է կազմում (որոնցից 2,5 մլն-ն ապրում է Գալիչիայում), և բոլորը խոսում են նույն լեզվով»:** Այդպիսի նախաբանից հետո հեղինակներն անցնում էին բուն խնդրանքին՝ ուկրաիններն լեզուն մտցնել դպրոցներում և վարչական հիմնարկներում, վարչական պաշտոններ ստանձնելու հնարավորությունը ընձեռել ուկրաինացիներին, հույն-կաթոլիկ հոգևորականների իրավունքները փաստացի հավասարեցնել հռոմեական-կաթոլիկ հոգևորականների իրավունքներին:

Ընդամենը երկու շաբաթ անց, **1848 թ.-ի մայիսի 2-ին, Լվովում կազմավորվեց «Գլխավոր ռուսիական ռադան»՝ ժամանակակից տիպի ուկրաինական առաջին քաղաքական կազմակերպությունը:** Այն գլխավորում էր եպիսկոպոս Յախիմովիչը: Ռադան ընդամենը 66 անդամ ուներ, որոնցից կեսը կազմում էր հոգևորականությունը՝ ներառյալ աստվածաբան-ուսանողներին, մյուս կեսը՝ աշխարհիկ մտավորականությունը: Առաջիկա շաբաթների ընթացքում ամբողջ Արևելյան Գալիչիայում հիմնադրվեցին Գլխավորին ենթարկվող 50 տեղական և 13 տարածաշրջանային «ռադա»-ներ, ընդ որում՝ կազմակերպիչները գլխավորապես տեղական հոգևորականներն էին: Իսկ մայիսի 15-ին տեղի ունեցավ ևս մի աննախադեպ իրադարձություն. սկսեց լույս տեսնել **«Ձորյա Գալիցկա» ուկրաինական առաջին շաբաթաթերթը:** Միաժամանակ կարգավորվում էին շփումները *Բուկովինայի և Անդրկարպատների ուկրաինացիների հետ:*

Արևելյան Գալիչիայի ուկրաինացիների քաղաքական ակտիվության վերելքն անշեղորեն տանում էր ուկրաինա-լեհական հակամարտության շիկացման: Ինչպես Արևմտյան, այնպես էլ Արևելյան Գալիչիան, լեհական պետության վերականգնման ծրագրերի անկյունաքարն էր հանդիսանում, այդ պատճառով էլ ուկրաինացիների ավստրիամետ շարժման աշխուժացումը ահռելի վտանգ էր ներկայացնում լեհերի համար: Վերջիններիս այլ բան չէր մնում, քան փորձել չեզոքացնել «Գլխավոր ռուսիական ռադան»՝ ի հեճուկս նրա ստեղծելով լեհամետ «ուկրաինական» կազմակերպություն: Մայիսի 23-ին Լվովում հավաքվեցին ծագումով ուկրաինացի մի խումբ լեհացած ազնվականներ ու մտավորականներ՝ նրանցից, ովքեր վաղուց իրենց համարում էին «լեհական ազգի ռուսիններ» («gente rutheni natione poloni»), և ստեղծեցին «Ռուսիական ժողով»: Դրան կից տպագրվեց ուկրաինական թերթ՝ լատինական տառատեսակով՝ «Ruskyi Dnevnyk» վերտառությամբ, որի գլխավոր խմբագրի պաշտոնով լեհերին հաջողվեց հրապուրել անձամբ Իվան Վահիլևիչին՝ «Ռուսիական երրորդության» հիմնադիր անդամներից մեկին: Սակայն նրանց հաջողությունները դրանով էլ սահմանափակվեցին: Նրանց ստեղծած «ուկրաինական» մարմինները վտարվեցին ուկրաինական ահռելի մեծամասնության կողմից, այնպես որ, պարզվեց, «ժողովը»՝ վաղանցիկ մի կազմակերպություն էր, նրա թերթը՝ օրատես երևույթ, իսկ այդ ամբողջ պատմությունը միայն էլ ավելի բարդացրեց լեհ-ուկրաինական հարաբերությունները:

### Պրահայի կոնգրեսը

Բաց ընդհարումն հատուկանում էր, և հակառակի պես այն սկսվեց հունիսի սկզբին Պրահայում բացված հենց այն *Սլավոնական կոնգրեսի* ժամանակ, որը, չէիս կազմակերպիչների

մտահղացմամբ, պետք է վերածվեր սլավոնական համերաշխության հանդիսավոր մեծարման, և սկիզբ դներ բոլոր սլավոնների միավորմանը՝ հանուն նրանց ընդհանուր նպատակների: Ինչպես և սպասելի էր, Լվովից Պրահա ժամանեցին պատգամավորներ բոլոր երեք՝ «Գլխավոր ռուսիական ռադա», լեհական «Ժողովրդական ռադա» և «Ռուսիական ժողով» սլավոնական կազմակերպություններից, որոնք, ի գարմանս չեխերի, անմիջապես անցան բուռն ու անվերջանալի վիճաբանության, թե՛ իրենցից ո՞վ ավելի շատ իրավունք ունի Գալիչիան ներկայացնելու, և ինչպիսի՞ն պետք է լինեն երկու սլավոն ժողովուրդների միջև փոխհարաբերությունները Գալիչիայում: Բայց իսկական փոթորիկը պայթեց այն բանից հետո, երբ ուկրաինացիները պահանջեցին Գալիչիայի բաժանումը երկու առանձին վարչական միավորի՝ ուկրաինական ու լեհական, և հանդիպեցին լեհերի կատաղի դիմադրությանը:

Քանի որ լեհերի և ուկրաինացիների փոխադարձ հայիոյանքները խոչընդոտում էին կոնգրեսի աշխատանքին, ուստի չեխերը միջամտեցին և օգնեցին խնդիրը լուծել փոխզիջման ճանապարհով. ուկրաինացիներին առաջարկվեց հրաժարվել Գալիչիան բաժանելու պահանջից, իսկ լեհերը դրա փոխարեն համաձայնվեցին նրանց ճանաչել որպես առանձին ազգ՝ իրենց լեզուն օգտագործելու հավասար հնարավորություններով և ցանկացած՝ ընդհուպ մինչև վարչական, դաշտոն գրադեցնելու իրավունքով:

Սակայն այդքան դժվարությամբ ձեռք բերված համաձայնությունն այդպես էլ կյանքի կոչվեց, քանի որ դրանից մի քանի օր անց, ավստրիական զորքերը գնդակոծեցին Պրահան, իսկ կոնգրեսի մասնակիցները դատարկաձեռն վերադարձան տուն: Պրահայի կոնգրեսի որոշումները փաստորեն կորցրեցին իրենց իմաստը: Այսպես ընդհատվեց նորագույն պատմության մեջ ուկրաինացիների առաջին ելույթը միջազգային քաղաքական ասպարեզում:

### Ուկրաինացիները կայսերական խորհրդարանում

Պրահայի կոնգրեսի աշխատանքի ժամանակ Գալիչիայում սկսվեցին *ռայխստագի*՝ կայսերական նորաստեղծ խորհրդարանի ստորին պալատի, ընտրությունները: Ուկրաինացիների համար, հատկապես գյուղացիության, ընտրություն կոչվածը նոր ու անհասկանալի մի բան էր: Հակառակ նրանց՝ լեհերը, որ քաղաքական փորձառություն ունեին, ընտրություններում շոշափելի առավելություն ստացան: Երբեմն սուտ լուրեր տարածելով, երբեմն՝ ուղղակի սպառնալիքներով ուկրաինացի շատ գյուղացիների լեհերը նույնիսկ ընտրական քվեատուփերին մոտ չթողեցին: Իսկ ովքեր էլ որ համենայն դեպս մասնակցեցին, նախընտրում էին իրենց ծայրը տալ եղբայր-գյուղացուն, թեկուզ անգրագետ, քան քաղաքի մտավորականներին կամ հոգևորականներին, որոնց երաշխավորում էր «Գլխավոր ռուսիական ռադան»: Արդյունքում՝ Գալիչիային հատկացված 100 պատգամավորական տեղերից ուկրաինացիներն ստացան միայն 25-ը, ընդ որում՝ դրանցից 15-ը գյուղացի էին, 8-ը՝ քահանա և միայն 2-ը՝ քաղաքի մտավորականության ներկայացուցիչ:

1848 թ.-ի երկրորդ կեսին Վիեննայում, այնուհետև Կրոմերժում խորհրդարանական քննարկումներ տեղի ունեցան, որոնց ընթացքում *ուկրաինական պատգամավորների ելույթներն հատկապես երկու հարցի վերաբերյալ էին՝ «կոռ ու բեզարի» վերացման դիմաց կալվածատիրոջը փոխհատուցելու, և Գալիչիան բաժանելու ուկրաինացիների առաջարկության:*

Առաջին հարցն, իհարկե, ավելի շատ հուզում էր գյուղացի պատգամավորներին, որոնք ոչ մի կերպ չէին համաձայնվում փոխհատուցման գաղափարի հետ: Յենց այդ թեման էլ դարձավ *Ուկրաինայի պատմության մեջ առաջին գյուղացի պատգամավորի՝ Իվան Կապուչչակի խորհրդարանական ելույթի նյութը:* Նա սուր ու պատկերավոր արտահայտություններով ներկայացնելով գյուղացու դարավոր տանջանքը, նվաստացումներն ու տառապանքը կալվածատիրոջ ձեռքին, այսպես ավարտեց իր ելույթը. «Ուրեմն՝ այս բոլոր անմարդկային ճնշումների ու նեղությունների համար մենք դեռ պիտի վճարե՞նք... մահակների ու մտրակների թողած անջնջելի սպիները թող լինեն մեր փոխհատուցումը»: Ու թեև հռետորին հաջողվեց ոչ միայն պատմության մեջ մտնել, այլև պատգամավորների բուռն ծափերին արժանանալ, բայց և այնպես փոխհատուցումների մասին առաջարկն ընդունվեց՝ չնայած ծայրերի նվազագույն առավելությամբ: Հիասթափված գյուղացի պատգամավորները կորցրեցին հետաքրքրությունը քննարկումների հետագա ընթացքի նկատմամբ:

Գալիչիայի ոչ-գյուղացի պատգամավորների համար սակայն, կարևորը նոր էր սկսվում, քանի որ Գալիչիայի՝ ուկրաինական ու լեհական մասերի բաժանման առաջարկությունը, որ նրանց խոսքերով՝ «մեր ժողովրդի կյանքի ու մահու խնդիրն է», նույնպես օրակարգում էր: Ի նպաստ այդ առաջարկության, նրանք Գալիչիայի ուկրաինացի բնակչության ստորագրահա-



վաք կազմակերպեցին և 15 հազ. ստորագրություններ կայացրեցին **խորհրդարանին**: Չնայած հետագայում այդ թիվն հասավ 200 հազ.-ի, սակայն մի քանի ամիս **տևած** խորհրդարանական բանավեճերն այստեղ էլ իզուր անցան. ուկրաինացի պատգամավորներին **չհաջողվեց** համոզել մեծամասնությանը:

Այդ ընթացքում կայսերական կառավարությունը, հեղափոխական **ցնցումներից ու շքի գալով**, աստիճանաբար սկսեց իր ձեռքն հավաքել կառավարման կորցրած **լծակները**: Դեկտեմբերին ավստրիական գահ բարձրացավ 18-ամյա Ֆրանց Իոսիֆը և դրանից շատ չանցած՝ խորհրդարանը լուծարվեց:

### **Ուկրաինացիների գործունեությունն Արևելյան Գալիչիայում**

Փոխարենը՝ ուկրաինացիներին հաջողվեց տեղային մակարդակով **գրեց ինչ-որ քանի հասցե**: Չեխական «Մատիցա» մշակութային կազմակերպության համգույն, 1848 թ.-ի **հուլիսին** Լվովում ստեղծվեց **«Գալիչիայի ռուսիական մատիցան»**, որի հիմնական նպատակը **ընթերցող** լայն հասարակության համար էժանագին գրքեր հրատարակելն էր՝ կրոնի, **սովորույթների**, արհեստների, գյուղատնտեսության, երեխաների դաստիարակության և այլնի վերաբերյալ: Բացի այդ՝ «Գալիչիայի ռուսիական մատիցան» ձգտում էր դպրոցների **ուսուցման** ծրագրում ներդնել ուկրաիններեն լեզուն:

1848 թ.-ի **հոկտեմբերի 19-ին** «Գլխավոր ռուսիական ռադան» **ուկրաինացի գիտնականների ու մանկավարժների համագումար** հրավիրեց, որտեղ **քննարկվեցին** ուկրաինացիների ընդհանուր մշակութային պահանջները, ինչպես նաև ուկրաիններեն լեզվի կարգավորման հարցերը: Ներկայացան ընդամենը 100 մասնակից, որոնց երկու երրորդից ավելին **հոգևորականներ** էին, մնացածը՝ քաղաքային մտավորականությունն էր: Ինչպես և սպասելի էր, ուկրաինական մշակույթի վիճակի վերաբերյալ համագումարի **եզրակացությունները** միաբարական չէին: Կրթված ուկրաինացիների երկու երրորդը լրիվ լեհացվածներն էին, **իսկ** ուկրաինացի գյուղացիներից շատերը՝ անգրագետ էին: Խնդիրը **բարդանում** էր նաև նրանով, որ ուկրաիններեն լեզուն գրական ընդհանուր հիմք չուներ: Երկար **քննարկումներից** հետո, համագումարն համեմայն դեպս միաձայն հանձնարարեց **գործածության մեջ թողնել կիրիլիցան և ոչ թե լատիներեն այբուբենը** (երկուսն էլ հին սլավոնական էին): Շատ մասնակիցներ դեմ էին, որ **գրական լեզվի հիմք ընդունվի խոսակցական լեզուն**: Սակայն, քննարկումներից հետո, չնայած մեծ վերապահումներով, հաջողվեց **ընդունել** և այդ առաջարկությունը:

Յեղն այդ ժամանակներում էլ Լվովում սկսվեց **ժողովրդական Տան** կառուցումը, որ պետք է ծառայեր որպես ազգային մշակույթի կենտրոն՝ թանգարանով, գրադարանով և հրատարակչությամբ: Վերջապես **Լվովի համալսարանում բացվեց նաև ուկրաիններեն լեզվի և գրականության ամբիոն**, որի առաջին վարիչը դարձավ **Յակիվ Յուլիանովիչը**:

Զցանկանալով լեհական սպաների հրամանատարության տակ ծառայել **գալիցյան ազգային** գվարդիայում, 1848 թ.-ին ուկրաինացիները, ի նշան Չաբսբուրգներին առանձնահատուկ մվիրվածության, Վիեննայից թույլտվություն ստացան կազմավորելու իրենց սեփական գործառնները: Սակայն, 1400 **«ռուսին հրաձիգները»** դեռ չէին հասցրել յուրացնել սվիին ու գորաշարի խորիմաստությունը, որ նրանց նետեցին պատժելու ապստամբած մաջարներին:

### **Բուկովինան և Անդրկարպատները**

1848 թ.-ը արևմտաուկրաինական մյուս տարածքներում ևս նշանավորվեց ակտիվության աճով՝ չնայած համեմատաբար փոքր չափերի, քան Գալիչիայում:

Փոքրիկ Բուկովինայում տեղի ունեցան մի քանի քիչ թե շատ նշանակալից իրադարձություններ: Խիզախ ու աներկյուղ **Լուկյան Կոբիլցայի** ղեկավարությամբ գյուղացիները մի քանի անգամ ապստամբեցին ռումինական կալվածատերերի դեմ: Կայսերական խորհրդարանում ուկրաինացի 5 պատգամավոր ընտրվեց: Վերջապես, 1849 թ.-ին **Բուկովինան անջատվեց Գալիչիայից և դարձավ առանձին, այսպես կոչված՝ Թագավորական նահանգ**:

Անդրկարպատներում, հունգարացիների ուժեղ ճնշման տակ, ուկրաինացիների աննշան քաղաքական ակտիվությունը կապված էր հիմնականում շնորհիվ ու եռանդուն **Ադոլֆ Դորրյանսկու** գործունեության հետ: Երբ հունգարացիներն ապստամբեցին Չաբսբուրգների դեմ, նրանք, ինչպես Գալիչիայում՝ լեհերը, հույս էին դնում նաև այն ժողովուրդների օժանդակության վրա, որոնց հենց իրենք դարձրել էին: Սակայն Անդրկարպատներում նույնությամբ կրկնվեց Գալիչիայի սցենարը, այն տարբերությամբ միայն, որ «Գլխավոր ռուսիական ռադային» այստեղ փոխարինում էր մի հոգի՝ Դորրյանսկին, որ իր հայրենակիցներին համո-

զեց չենթարկվել հունգարների հորդորներին և հավատարմության երդում տալ կայսրությանը: Ամեն ինչից զատ, **Դորրյանսկին համոզված էր, որ Անդրկարպատների սլավոն բնակչությունը Գալիչիայի ուկրաինացիների հետ նույն էթնիկ ընտանիքին է պատկանում, այդ պատճառով հետամուտ էր, որ «Գլխավոր ռուսիական ռադան» Լվովում իր նպատակներից մեկն էլ հայտնարարի՝ Գալիչիային Անդրկարպատների միացումը**:

Այս ամենը, սակայն, չէր խանգարում Դորրյանսկուն և նրա համախոհների ոչ մեծ խմբին, կայուն համակրանք տածել Ռուսաստանի նկատմամբ: Անդրկարպատներում ռուսական զորքի հայտնվելը, որ գնում էր «ատելի մաջարներին» պատժելու, առավել մեծացրեց ցարականի նկատմամբ Դորրյանսկու հիացումը: Յետագայում այդ ռուսամետ մղումները մեծ խառնաշփոթի կհանգեցնեն ուկրաինական հողերի այդ ամենամեկուսացված տարածքի բուն բնակչության ազգային նույնականության հարցերում:

### **1848 թ.-ի նշանակությունը**

Արևմտաուկրաինական տարածքներում հեղափոխական բոլոր իրադարձություններն ամփոփվում են 277 օրվա շրջանակում: Յեղափոխությունն ուկրաինացիներին հնարավորություն ընձեռեց իրենց պատմության մեջ առաջին անգամ դրսևորվել որպես ժամանակակից եվրոպական ազգ, չնայած այդ առաջին փորձն այնքան էլ հաջող չէր:

Ուկրաինացիների համար 1848 թ.-ի կարևորագույն նվաճումներն, անտարակույս, հանդիսացան «կոռ ու բեգարի» վերացումը և սահմանադրական կառավարում մտցնելը: Բայց այդ նվաճումները բացառապես ուկրաինացիներինը չէին, քանի որ հաբսբուրգյան ռեժիմի ժամանակավոր թուլանալու շնորհիվ համանման գիշումների հասան նաև կայսրության այլ ժողովուրդներ:

Եթե խոսենք հատկապես ուկրաինացիների հաջողությունների մասին, ապա դրանց մեջ ամենակարևորները պետք է ընդունենք այն բոլորը, ինչ կապված է «Գլխավոր ռուսիական ռադայի» գործունեության հետ: Չաշվի առնելով նախընթաց շրջանում ուկրաինացիների քաղաքական գրեթե լրիվ անգործությունն ու բացարձակ անփորձությունը, Ռադայի երևան գալը, որ կարողացավ հստակորեն դրված քաղաքական նպատակների իրագործման ուղղությամբ համախմբել հայրենակիցներին, բացարձակ տպավորիչ էր: Քաղաքական այդ կառույցի շուրջը մշակութային-լուսավորչական հաստատությունների մի ամբողջ ցանց գոյացավ, որն այդուհետ անընդհատ աջակցելու էր ազգային կրթության ու մշակույթի զարգացմանը: Այսպիսով, Արևելյան Գալիչիայում ուկրաինացիների ազգային շարժման կազմակերպչական կենտրոն ստեղծելու դժվարին գործում առաջին վճռական քայլն արվեց:

Սակայն 1848 թ.-ը բացահայտեց նաև այդ շարժման թերությունները: Գլխավոր խնդիրը, թերևս, արևմտաուկրաինական հասարակության իսկապես քաղաքական առաջնորդների բացակայությունն էր: Արևմտյան ուկրաինացիների բոլոր քաղաքական շահերն ու ձգտումները մինչև այժմ փաստորեն ուղղորդում ու որոշում էր ազգային շարժման բոլոր առաջատար ու ղեկավար դիրքերին տիրացած հոգևորականությունը: Չույսն ամբողջովին դնելով Չաբսբուրգների հովանավորության վրա, «Գլխավոր ռուսիական ռադան» ղեկավարող հոգևորականները ուկրաինացիների վզին փաթաթեցին իշխող դինաստիային անվերապահ աջակցելու դիրքորոշումը, ինչի արդյունքում 1848 թ.-ին ուկրաինացիներն հայտնվեցին միապետության կողմնակիցների բանակում՝ ընդդեմ լեհական և հունգարական հեղափոխականների, որոնք ազատական-ժողովրդավարական կարգերի կողմնակից էին (չնայած միևնույն ժամանակ կապերը չէին խզում կալվածատեր-ազնվականների հետ): Չակակայսերական ուժերը նույնացնելով ատելի կալվածատերերի հետ և լսելով ու ենթարկվելով պահպանողական հոգևորականությանը, ուկրաինացիներն հաճախ զենք էին դառնում Չաբսբուրգների ձեռքին: Բայց «Գլխավոր ռուսիական ռադայի» հոգևորականները նույնիսկ կայսերական կառավարությանն իրենց հավատարիմ ծառայությունից չկարողացան քիչ թե շատ էական քաղաքական օգուտ քաղել՝ շարունակելով ապավինել կայսեր ողորմածությանը: Երկու քաղաքականությունն անմխիթար հետևանքների հանգեցրեց:

Այնուամենայնիվ, **արևմտյան ուկրաինացիների պատմության մեջ 1848 թ.-ը հստակորեն շրջադարձային եղավ**: Այն վերջ դրեց ուկրաինացիների դարավոր անտարբերությանը, անգործությանն ու մեկուսացվածությանը: Այսուհետ արևմտյան ուկրաինացիները երկաբառու ու համառ պայքարի ասպարեզ են մտնում՝ հանուն իրենց ազգային և սոցիալական ազատագրման:



## Փոփոխություններ Ռուսական կայսրությունում

XIX դարի կեսերին ցնցող հարված իջավ Ռուսական կայսրության վրա՝ հզորությամբ հարևան և նման այն հարվածին, որ կրել էր Հաբսբուրգների կայսրությունը: Եվ ճիշտ այնպես, ինչպես Ավստրիայում, Ռուսաստանում էլ այդ հարվածի արդյունքը եղավ այն, որ կասկածի տակ դրվեց կայսրության գառաձայլ համակարգի կենսունակությունը:

Այդպիսի դաժան փորձություն Նիկոլայ Առաջինի ռեժիմի համար, ռեժիմ, որ նա էր այդպես հաստատակամորեն ստեղծել և այդպես խնամքով ու ջանադիր պահպանում էր տասնամյակներ շարունակ, նրա իշխանության վերջում դարձավ *1854-1855 թ.թ.-ների Ղրիմի պատերազմը*: Այն սկսվեց որպես մեծ տերությունների համար բնորոշ բախում, որտեղ Ռուսաստանի դեմ դուրս եկավ Անգլիայի, Ֆրանսիայի, Սարդինիայի և Օսմանյան կայսրությունների դաշինքը: Ռուսաստանը վաղուց էր ձգտում ընդլայնել ազդեցության ոլորտը Բալկաններում և տիրանալ Բոսֆորին ու միջերկրածովյան առևտրական ուղիներին՝ սևծովյան նավահանգիստներով հացահատիկի արտահանումն աշխուժացնելու նպատակով, իսկ դաշնակիցները փորձում էին խանգարել Ռուսաստանի այդ վաղեմի նպատակների իրագործմանը:

Այն բանից հետո, երբ դաշնակիցները ներխուժեցին Ղրիմ, ռազմական գործողությունների քառերաբեմը տեղափոխվեց այդ թերակղզին: Այդ պատճառով էլ *պատերազմի ազդեցությունն Ուկրաինայի վրա առավել մեծ էր, քան Ռուսական կայսրության մյուս տարածքների վրա*: Ուկրաինայի նահանգները ծառայում էին որպես ռուսական բանակի մատակարարման ամենիջական աղբյուր, ուկրաինացի բնակչությունը զորակոչվեց և՛ առաջավոր զին, և՛ սահմանները պաշտպանելու, և՛ ամրություններ կառուցելու համար: Ուկրաինայում տիրող անհանգիստ վիճակի օրինակ է, այսպես կոչված՝ Կիևյան կոզակության 1855 թ.-ի պատմությունը: Այդ թվականին ցարական կառավարությունը հայտարարություն արեց կամավոր աշխարհագրորդ ստեղծելու մասին: Ուկրաինացի գյուղացիությունն այն ընկալեց որպես կոզակության վերածնունդ, որն իրենց գիտակցության մեջ զուգորդվում էր ճորտատիրական իրավունքից ազատվելու հետ: Հազարավոր գյուղացիներ, հրաժարվելով կալվածատերերի համար աշխատելուց, գնացին «կոզակ գրվելու»: Ճգնաժամային իրավիճակ ստեղծվեց Կիևի նահանգում, որտեղ 400-ից ավելի գյուղերից 180 հազ. գյուղացի իրենց «կոզակ» հայտարարեցին և պահանջեցին վերացնել այդ ասելի ճորտատիրությունը: Կարգուկանոնը վերականգնվեց բանակի օգնությամբ: Այս միջադեպը պարզորոշ բացահայտեց կայսրությունը քայքայող ներքին հիվանդություններից մեկին: Կայսրության գառաձայնությունն ու թուլությունն առավել ակնառու դարձավ առաջավոր զծում, որտեղ, չնայած Սևաստոպոլի հերոսական պաշտպանությանը, *ռուսական զորքերը վերջիվերջո խայտառակ պարտություն կրեցին*: Այդ պարտությունը ոչ միայն Ռուսաստանի միջազգային վարկը զցեց, այլև վկայեց նրա սարսափելի հետամնացությունը՝ *համեմատած Արևմուտքի արդիականացած ու զարգացած արդյունաբերություն ունեցող երկրների հետ*: Ռուսաստանի հետամնացությունն ակնառու էր ամեն ինչում. ռուսական հրացաններն իրենց հեռահարությամբ երկու անգամ զիջում էին անգլիական ու ֆրանսիական հրացաններին, հաղորդակցության ու մատակարարման համակարգերը պակաս արդյունավետ էին, քան դաշնակիցներինը, չնայած վերջիններս հազարավոր վերստ հեռու էին իրենց ռազմական բազաներից, հրամանատարությունը՝ բացառությամբ երկու-երեք տաղանդավոր զորավարների, բացահայտ անիրազեկություն էր դրսևորում: Ցարական բանակի զինվորները, որ մեծ մասամբ ճորտ գյուղացիներից էին, չնայած խիզախորեն էին կռվում, բայց ռազմական հմտություն չունեին և նախաձեռնություն չէին դրսևորում: Նիկոլայ Առաջինի մահվան իսկական պատճառն, ըստ երևույթին, 1855 թ.-ի խայտառակ պարտությունն էր: Նրա որդի Ալեքսանդր Երկրորդը գահ է բարձրանում՝ աներկբա գիտակցելով շուտափույթ բարեփոխումների անհրաժեշտությունը:

### Ճորտերի ազատագրումը

Նույն թվականին, մոսկովյան ազնվականության առջև արտասանած ճառում, նոր ցարն հայտարարեց. «Ավելի լավ է ճորտատիրության իրավունքը վերացնել վերևից, քան սպասել մինչև գյուղացիներն այն կվերացնեն ներքևից»: Նույնիսկ Նիկոլայ Առաջինն էր ակնարկում, որ վաղ թե ուշ հարկ կլինի ճորտատիրությունը վերացնել: Իսկ արմատական և ազատական ազնվական մտավորականությունը տասնամյակներ շարունակ հանդես էր գալիս «խայտառակ ստրկության» դեմ: Այնուամենայնիվ, միայն Ալեքսանդր Երկրորդի հայտարարությունից հետո պարզ դարձավ, որ պատմական որոշումն ընդունված է և *բարեփոխումներն անխուսա*

փելի են:

Ինչպես ամեն մի պատմական որոշում, Ալեքսանդր Երկրորդի բարեփոխումներն ու դրա պատճառներն էլ առ այսօր պատմաբանների վեճի առարկան են: Արևմուտքի որոշ գիտնականներ համոզված են, որ առաջնայինը տնտեսական գործոնն էր, և ամենից առաջ՝ սևծովյան նավահանգիստները բացելն ու ռուս կալվածատերերին համաշխարհային առևտրի ոլորտում ակտիվորեն ընդգրկելը, որն էլ բացահայտեց ճորտական աշխատանքի թերությունները: Այդ գիտնականները հենվում են վիճակագրության վրա, համաձայն որի՝ ռուսական ճորտ գյուղացու աշխատանքի արտադրողականությունը 1860 թ.-ին մոտավորապես հավասար էր 1750 թ.-ին անգլիացի ֆերմերի, կամ՝ 1800 թ.-ին Կենտրոնական Եվրոպայի գյուղացու աշխատանքի արտադրողականությանը: Մի խոսքով, ճորտի աշխատանքը չնայած էժան էր, բայց արտադրանքն այնքան ցածրորակ էր, որ տնտեսապես իրեն չէր արդարացնում: Միևնույն ժամանակ, աննախադեպ մրցակցության ու սեփական անտնտեսավարության պատճառով շատ կալվածատերեր պարտքերի մեջ էին խրվել: 1848 թ.-ին Ուկրաինայում կալվածատերերի երկու երրորդից ավելին այնքան շատ պարտքեր ունեին, որ իրենց գյուղացիներին չէին կարողանում ապահովել սերմացուով ու ապրուստով, իսկ բերքատվությունը բարձրացնելու ճանապարհներ փնտրելու մասին խոսք անգամ լինել չէր կարող: Այնպես որ, ճորտատիրությունն սկսել էր անկում ապրել շատ ավելի վաղ, քան կառավարությունը կսկսեր իր բարեփոխումները: Այդ է վկայում նաև հետևյալ փաստը. եթե 1811 թ.-ին Ռուսական կայսրության բոլոր գյուղացիների 58 %-ն էր ճորտ, ապա 1860 թ.-ին նրանց տոկոսն իջավ մինչև 44 -ի:

Սակայն, մի շարք գիտնականներ էլ համարում են, որ չնայած տնտեսական գործոնների առկայությանը, Ալեքսանդր Երկրորդի բարեփոխումների համար կային նաև այլ՝ գուցեև առավել կարևոր պատճառներ: Այսպես՝ խորհրդային պատմաբաններն համառորեն պնդում էին, որ գյուղացիական խռովությունները «հեղափոխական իրավիճակի» հասցրեցին, ինչից էլ վախենալով, ցարը ստիպված բարեփոխումների համաձայնվեց: Նրանց տվյալներով, 1856-1860 թ.թ.-ների ընթացքում, միայն Ուկրաինայում 276 գյուղացիական խռովություն է բռնկվել, որոնց մասնակցել է մոտ 160 հազ. գյուղացի: Ամերիկացի պատմաբան Ալֆրեդ Ռիբերն ապացուցում է, որ բարեփոխումների գլխավոր պատճառը՝ ցարական բանակն արդիականացնելու ցանկությունն էր: Անգլիացի Բեռնարդ Պեյրզը հայտարարում է, թե ցարին ամենից շատ անհանգստացնում էր Ռուսաստանի ետ մնալն Արևմուտքից: Վերջապես, որոշ պատմաբաններ էլ հակված են չափազանցնելու ազատական մտավորականության դերը, իբրև թե՝ այնպիսի բուռն վեճեր են ծավալել մամուլում, ստեղծել են այնպիսի վառ ու պատկերավոր վեպեր ու բանաստեղծություններ (Շևչենկոյի ստեղծագործությունների համադրյուն), որ ընթերցող լայն հասարակությունը ճորտատիրական իրավունքը միահամուռ բարոյական հալածանքի ենթարկեց...

Ամեն դեպքում, այդ հարցի բոլոր ուսումնասիրողները մի կետում համաձայն են միմյանց հետ. բարեփոխումների վճռական շարժառիթը Ղրիմի պատերազմում կրած պարտությունն էր, որ ցնցում առաջացրեց ամբողջ կայսերական «խթերլիշեննի»<sup>\*</sup> մոտ և նրան ստիպեց ընդունել անհապաղ վերափոխումների անհրաժեշտությունը:

Գիտակցելով, թե ճորտերի ազատագրումն ինչ ներքին վտանգ է պարունակում, Ալեքսանդր Երկրորդը գործում էր զգույշ և անշտապ: 1857 թ.-ին նա հիմնեց *գաղտնի հանձնաժողով* (հետագայում վերանվանվեց Գլխավոր), որ բաղկացած էր ինչպես պահպանողական, այնպես էլ ազատական հայացքների տեր պետական ու հասարակական առաջատար գործիչներից: *Հանձնաժողովը պետք է քննարկեր գյուղացիների ազատագրման հարցը և իրագործման որոշակի ուղիներ առաջարկեր*: Պետերբուրգյան այդ հանձնաժողովում ուկրաինացիներն աչքի ընկնող տեղեր էին զբաղեցնում: Նրանցից մեկը՝ *Հրիհորիյ Հալսահանը*, ճորտատիրական կարգերի երդվյալ թշնամի էր և Տարաս Շևչենկոյի մոտ ընկերը: Իսկ մյուսը, Մ. Պ. Պոգոբնը՝ հարուստ, ազդեցիկ և անսկզբունք մի կալվածատեր էր՝ Պոլտավայի նահանգից, որ անում էր ամեն ինչ՝ բարեփոխումներին խանգարելու համար:

Տեղերում տրամադրություններն ուսումնասիրելու համար, կառավարությունն ամեն նահանգում ստեղծեց ազնվականների կոմիտեներ և հանձնաժողովներ: Ուկրաինայում այդ մարմինների աշխատանքին մասնակցեցին 323 ազնվական՝ ներկայացնելով կալվածատիրական շահերի ողջ բազմազանությունը այնպիսի տարբեր տարածաշրջաններում, ինչպիսի

<sup>\*</sup> խթերլիշեննի - ղեկավարող և արտոնություններ ունեցող պաշտոնյաներ:



սիք էին Սլոբոդյան և Յարավային Ուկրաինան, Չախափնյակն ու Աջափնյակը: Ինչ վերաբերում է գյուղացիներին, ապա նրանց կարծիքն, ինչպես ընդունված էր, չէին էլ հարցնում:

Իհարկե, կալվածատերերից շատերը, մեղմ ասած, ցնծությամբ չընդունեցին գյուղացիների գալիքը ազատագրումը: Միևնույն ժամանակ նրանք հասկանում էին, որ դա հասունացած և անհրաժեշտ քայլ է: Այդ պատճառով էլ, հենց սկզբից խնդիրը ոչ այնքան բարեփոխումների անհրաժեշտությանն էր դեմ անում, որքան՝ նրա իրագործման եղանակներին ու ժամկետներին: Կալվածատերերին ամեն կերպ հանգստացնելով, ցարական կառավարությունն ամեն հարմար առիթով հայտարարում էր, որ միապետության գլխավոր հենարանի՝ ազնվականության շահերը նրա համար ամեն ինչից բարձր են: Ինչ վերաբերում է ազատագրման բուն ընթացակարգին, ապա այն երկու խնդրի լուծում էր պահանջում՝ գյուղացու անձնական կարգավիճակի, և նրան հողով ապահովելու: Եվ չնայած որոշվեց գյուղացիներին ազատ հայտարարել, բայց նրանց ազատության «աստիճանի» վերաբերյալ վեճերը դեռ երկար էին շարունակվում: Շուտ կալվածատերերի ու պաշտոնյաների սարսափեցնում էր այն միտքը, որ միլիոնավոր մուծիկներ ազատ են լինելու գնալ՝ ուր աչքը կտրում է, և անել՝ ինչ խելքների միջի: Պարզ չէր նաև գյուղացու հողատիրության հարցը: Գյուղացուն ազատագրել հողով, թե՛ առանց հողի: Եվ եթե հողով, ապա ի՞նչ պայմաններով:

Հսկայական կայսրության տարբեր մասերում հողատիրության տարբեր ձևեր ու ավանդույթներ էին կազմավորվել: Այդ իսկ պատճառով զարմանալի չէ, որ ազնվականների համար դժվար էր գյուղացիներին հողահատկացման համակայսերական միատեսակ ձևերի ու միջոցների հարցում ընդհանուր հայտարարի գալ: Ռուսաստանի նվազ բերքատու հյուսիսային նահանգներում, որտեղ կալվածատիրոջ հիմնական եկամտի աղբյուրը բահրան էր, կալվածատերերն իրենք էին խրախուսում իրենց գյուղացիներին՝ քաղաքում աշխատանք փնտրելու, որպեսզի կալվածատիրոջը իրենց պարտքը դրամով վճարեն, փոխանակ հողը մշակեն, որից մեծ եկամուտ չէին սպասում: Բնական է, որ այդ հողերի կալվածատերերը, առանց ավստասանքի պատրաստ էին շռայլորեն հողաբաժին հատկացնել գյուղացուն, փոխարենը՝ դրան համարժեք էլ դրամական փոխհատուցում պահանջելով: Իսկ հարուստ սևահողային նահանգներում, այդ թվում և Ուկրաինայում, լրիվ հակառակ պատկերն էր: Այստեղ կալվածատերն իր հողերի բերքատվությունից ուղիղ եկամուտ ուներ, խստորեն կիրառում էր իր «կոռն ու բեգարը», և ոչ մի կերպ չէր ցանկանում հրաժարվել իր հսկայական եկամտաբեր հողատարածքներից:

Ինչևէ, նույնիսկ Ուկրաինայի տարբեր տարածաշրջաններում մոտեցումները տարբեր էին: Չախափնյակում, հատկապես Պոլտավայի նահանգում, կալվածատերերն համաձայնվեցին գյուղացիներին տրամադրել միայն տնամերձ հողամասերը: Միայն վերջերս յուրացված հարավային նահանգներում, որտեղ աշխատուժի պակաս էր զգացվում, հսկայական լատիֆունդիաների տերերը պահանջում էին ճորտատիրական կարգերը պահպանել զոնե ևս տասը տարի: Աջափնյակում՝ լեռնազանգեղանի ընդհանրապես չէին ցանկանում գյուղացիներին հող տալ: Սակայն, չնայած բազում բացահայտ ու լռելյայն խոչընդոտներին, ամռանը ցարի խնամակալությամբ, Գլխավոր հանձնաժողովը շարունակում էր մշակել իր ծրագրերը:

**Վերջապես, 1861 թ.-ի փետրվարի 19-ին, Ալեքսանդր Երկրորդը մանիֆեստ հրապարակեց, որով Ռուսական կայսրությունում վերացվում էր ճորտատիրական իրավունքը:** Սակայն, նույն օրն իսկ հաստատված «Դրույթները», որ սահմանում էին ճորտատիրական կախումից ազատված գյուղացու իրավունքները, իրենց ողջ դարակազմիկ պատմական նշանակությամբ հանդերձ, այնքան բարդ ու խճճված էին, որ նույնիսկ իրենց՝ գյուղացիների մեջ չէին կարող ճշմարիտ ազատության տպավորություն ստեղծել. այդքան երկար սպասված ազատագրումը գործնականում և՛ հեռու էր, և՛ կիսատ:

Իրականում, գյուղացիներն ազատվում էին միայն կալվածատիրոջից անձնական կախվածությունից, սակայն ամենևին չէին դառնում ազատ, լիիրավ քաղաքացի: Նախ՝ իրենց ազատության փոխարեն նրանք կալվածատիրոջը պարտավոր էին ապահովել այսպես կոչված՝ փրկագնման վճարներով: Նրանց դատավարությունն առաջվա պես տարվում էր ոչ այնպես, ինչպես մյուս խավերինը, այլ՝ հատուկ դատարաններում, որոնք չնչին մեղքի համար անզան կարող էին գյուղացուն դատապարտել մարմնական կտտամքների: Գյուղացիական համայնքներին ինքնավարության իրավունք տալով հանդերձ, բարեփոխումները միևնույն ժամանակ պահպանում էր նրանց գործունեության վերահսկողությունը կառավարական պաշտոնյաների կողմից, որ սովորաբար նշանակվում էին տեղի ազնվականներից: Գյուղացին, որ ցանկանում էր հեռանալ իր գյուղից, նախ պետք է տեղական վարչությունից անձնա-

գիր ձեռք բերեր: Եթե գյուղացին պետական տուրքերը չէր վճարել, տեղական գյուղապետները պետք է ցանկացած միջոցներով նրան ստիպեին վճարել:

Բայց ավելի շատ գյուղացիներին հիասթափեցնում էին այն դժվարություններն ու արգելքները, որ ծառանում էին նրանց դեմ հողատիրության իրենց իրավունքն իրագործելիս: Ըստ օրենքի, կալվածատերը, որպես կանոն, պարտավոր էր իր ունեցվածքի կեսը պահել սեփական օգտագործման համար, իսկ մյուս կեսը բաժանել նախկին ճորտերին: Բայց ամբողջ դժվարությունն այն էր, որ գյուղացին ինքը պիտի վճարեր իր հողաբաժնի համար: Քանի որ գյուղացիները փող քիչ ունեին, կամ ընդհանրապես չուներին, կառավարությունը նախատեսում էր պետական բաժնետոմսերի տեսքով կալվածատերերին վճարել հողի արժեքի 80 %-ը, իսկ գյուղացիներն իրենց հերթին պարտավորվում էին ամբողջ փոխատվությունը՝ տոկոսներով, վերադարձնել կառավարությանը 49 տարվա ընթացքում: Հողաբաժնի արժեքի մնացած մասը գյուղացին պարտավոր էր վճարել անմիջապես կալվածատիրոջը՝ կամ դրամով, կամ՝ փոխադարձ համաձայնությամբ, որոշ ժամանակ նրա համար աշխատելով (վերջինս, իհարկե, ավելի հավանական էր): Նրանց, ովքեր ի վիճակի չէին նույնիսկ այդ պայմանները կատարելու, առաջարկվում էր 2,5 ակր չափի փոքրիկ «ընձա» հողակտոր: Իսկ կալվածատերերի սպասավոր գյուղացիները, որոնք ճորտատիրական իրավունքի շրջանում հողատարածք չուներին (Ուկրաինայում մոտ 440 հազ. հոգի էին), լրիվ ազատություն էին ստանում՝ առանց որևէ փոխհատուցման, բայց և՛ առանց հողաբաժին ստանալու:

Հողաբաժանման ժամանակ հաշվի էին առնվում նաև տեղական առանձնահատկությունները: Վարելահողերը բաժանվում էին երեք կարգի՝ սևահող, ոչ սևահող, տափաստանային հողեր: Վերջին երկու կարգին պատկանող հողատարածքներում գյուղացիական հողաբաժինները, որպես կանոն, ավելի մեծ էին, քան սևահողային շրջաններում, այդ թվում և Ուկրաինայում, որտեղ հողը ավելի լավն էր:

Ընդհանուր առմամբ, բարեփոխումներից հետո գյուղացիներն ավելի քիչ հող ունեին, քան նրանից առաջ. Ռուսաստանում նրանք կորցրեցին իրենց նախկին հողաբաժինների 10 %-ը, Չախափնյա և Յարավային Ուկրաինայում՝ մոտ 30 %-ը: Համապատասխանաբար՝ եթե կայսրությունում գյուղացիական հողաբաժինը միջին հաշվով մի ընտանիքի համար կազմում էր 27 ակր, ապա Չախափնյա և Յարավային Ուկրաինայում՝ ընդամենը 18 ակր էր:

Դրան հակառակ՝ բարեփոխումներից ամենից շատ շահեցին ուկրաինացի կալվածատերերը: Բանակցությունների և հողերի վերաբաժանման ժամանակ, բազում ու տարատեսակ խարբույթուններով նրանք «սեփականաշնորհում» էին անտառներ, մարգագետիններ ու բնական ջրամբարներ, որ նախկինում համարվում էին հանրային սեփականություն: Իրենց միշտ պահում էին ամենաբերքատու հողերը, իսկ վատ հողերը վաճառում էին բարձրացրած գներով: Հաճախ, հողերի վերաբաժանում կատարելու պատրվակով, արդեն բնակություն հաստատած ընտանիքներին ստիպում էին տեղափոխվել՝ ավելորդ ծախսերի տակ զցելով առանց այդ էլ աղքատ գյուղացիներին: Պարզ է, որ նման խարդավանքների դիմում էին կայսրության բոլոր կալվածատերերը, բայց ոչ մի տեղ նրանք այնպես կտրի ու դաժան չէին գործում, ինչպես Ուկրաինայում, որտեղ հողի համար պայքարը բացառիկ սուր էր ու անողոք: Այս ամենի արդյունքում, ուկրաինացի գյուղացիներն ավելի շատ տուժեցին բարեփոխումներից, քան նրանց ռուս եղբայրները:

Բացառություն էր կազմում Աջափնյակը: Լուրջ կասկածներ ունենալով այդ տարածաշրջանի լեռն-կալվածատերերի հավատարիմ հպատակության վրա (1863 թ.-ի լեռնական ապստամբությունը եկավ հաստատելու այդ կասկածների հիմնավորությունը), ցարական կառավարությունը չէր պաշտպանում նրանց շահերը, այլ՝ հակառակը, ամեն պատեհ առիթով աշխատում էր պաշտպանել տեղական ուկրաինացի գյուղացիներին: Ըստ երևույթին, դրանով է բացատրվում այն հանգամանքը, որ վերջիններս 18 %-ով ավել հող ստացան, քան ունեին մինչև 1861 թ.-ը: Բայց և՛ հողի վճարն էր համապատասխանաբար ավելի, այնպես որ՝ շահելով հողաբաժնի չափերի մեջ, գյուղացին կորցնում էր գումարի առումով:

Ուկրաինայում բարեփոխումների մյուս առանձնահատկությունը թելադրվում էր հողատիրության այստեղ ընդունված ձևերով: Ռուսաստանում, որտեղ գյուղացիության 95 %-ն ապրում էր համայնքներով, համայնական էր նաև պատասխանատվությունը նոր ձեռք բերված հողերի նկատմամբ, իսկ վճարի համար հողալը համայնքի պարտականությունն էր: Իսկ Ուկրաինայում համայնքային հողատիրությունը հազվադեպ երևույթ էր: Աջափնյակի գյուղացիության մոտ 85 %-ը և Չախափնյակի գրեթե 70 %-ը մենատնտեսներ էին: Այդ պատճառով էլ ուկրաինական գյուղական ընտանիքների մեծ մասը անհատական իրավունքով էին հողը



ծեռք բերում և պարտքը մարելու անձնական պատասխանատվություն էին կրում: Այդպես ավելի էր մեծանում ուկրաինացի գյուղացու՝ առանց այդ էլ ամուր կապվածությունը անձնական սեփականության հետ, ինչն էլ տարբերում էր նրան Ռուսաստանի գյուղացուց:

Հիշենք, որ մինչև 1861 թ.-ն էլ ոչ բոլոր գյուղացիներն էին **ճորտեր**: **Նրանց գրեթե** կեսը պետական գյուղացիությունն էր, որոնք էլ իրենց հերթին բաժանվում էին **ավելի քան երեսուն** կարգի: Դրանց թվում էին նաև մոտ 1 մլն ուկրաինական նախկին **կոզակները**: Սովորաբար նրանք կալվածատերերի գյուղացիներից լավ էին ապրում: Ծիշտ է, նրանք մեծ գլխահարկ էին վճարում պետությանը (որը, փաստորեն, նրանց կալվածատերն էր), **բայց փոխարենը՝** կարող էին առանց որևէ թույլտվության տեղափոխվել ուր որ ուզեին, **իրենց տրամադրության** տակ ավելի շատ հող ունեին և կալվածատերն էլ գլխներին չէր իշխում (փոխարենը՝ հաճախ էին նրանց արյունը պղտորում անկուշտ պաշտոնյաները): 1861 թ.-ի բարեփոխումներով և 1866 թ.-ի օրենքով պետական գյուղացիներն ավելի արագ և **շահավետ** պայմաններով էին ազատություն ստանում, քան կալվածատիրոջ գյուղացիները: Ազատության հետ միասին նրանք մեծ հողաբաժիններ էին ստանում, բայց վճարում էին ավելի **քիչ, քան նախկին ճորտերը**: Սակայն Աջափնյակում պետական գյուղացիների վիճակն ընդհանուր առմամբ **գրեթե** չփոխվեց:

Մի խոսքով՝ **գյուղացիները, հատկապես նախկին ճորտերը, հիասթափված էին բարեփոխումներից**: *Նրանք հույս ունեին, թե ազատություն ծեռք բերելով, հողերն անմիջապես իրենց կտրամադրվեն, այնինչ՝ հողաբաժինը կրճատվեց, իսկ գյուղացիներն ընկան ֆինանսական ծանր պարտքերի տակ: Գյուղերով խռովությունների ալիք անցավ:* Տարբեր տարածաշրջաններում դրանց հզորությունը տարբեր էր: Չախափնյակում և Հարավային Ուկրաինայում՝ խռովություններն համեմատաբար քիչ էին: Բայց Աջափնյակում, ուր **հայդամակների մասին** հիշողությունները դեռ կենդանի էին և սոցիալ-տնտեսական հակասություններին սրություն էր հաղորդում ուկրաինական ուղղափառ գյուղացիության և լեհ կաթոլիկ ազնվականության միջև կրոնական և էթնիկական թշնամությունը, ամենուրեք տեղային բնույթի խռովություններ էին բռնկվում: Սակայն իշխանություններն արագ վերականգնում էին կարգուկանոնն ու գյուղացիները վերադառնում էին իրենց հանապազօրյա հացը վաստակելուն, բայց արդեն՝ խիստ փոփոխված պայմաններում:

### Այլ բարեփոխումներ

Ճորտատիրական իրավունքի վերացումն առաջ բերեց և այլ բարեփոխումներ: *Անհապաղ կատարելագործման կարիք էր զգում տեղական վարչակարգը: Հասարակությունը փոխվել էր, երեկվա ճորտերը քաղաքացիական իրավունքներ էին ստացել, և կտրուկ աճել էին պահանջները տեղական վարչություններից: Սակայն կայսերական կառավարությունն այդ պահանջները բավարարելու ոչ միջոցներ ուներ, ոչ մարդիկ: Ահա թե ինչու, 1864 թ.-ի հունվարի 1-ի հրամանագրով կոչ էր արվում տեղերի բնակիչներին՝ անհանգստանալու ու զավառներում իրենցից մարդիկ ընտրել՝ «տեղական կարիքներն հոգալու և վերահսկելու համար»:* Իսկ նման «կարիքները» քիչ չէին: Դրանց մեջ էին մտնում՝ կրթությունը, առողջապահությունը, փոստային կապը, ճանապարհների վերահսկողությունը, սննդամթերքի պահեստավորումը՝ սովի դեպքերի համար, վիճակագրություն վարելը և այլն: Այդ բոլոր ծառայությունները ֆինանսավորելու համար, տեղական, կամ՝ *զեմստվոյական* հաստատություններին թույլատրվում էր բնակչության վրա տեղական հարկեր դնել: Ցարական սովորական հաստատություններից, ուր բոլոր պաշտոնյաները վերևից էին նշանակվում, *զեմստվոները* էականորեն տարբերվում էին նրանով, որ ընտրովի էին: Ընտրողները բաժանվում էին երեք կարգի՝ խոշոր հողատերեր, քաղաքաբնակներ և գյուղացիներ: Ընտրողի ազդեցության աստիճանը ուղղակիորեն կախված էր նրա սեփական հողերի քանակից: Այդ պատճառով էլ, բնական է, որ *զեմստվոներում* մեծ մասամբ ազնվականներն էին ընտրվում: Ուկրաինայում սովորաբար նրանք *զեմստվոյի* բոլոր անդամների ավելի քան 70 %-ն էին կազմում, այն դեպքում, երբ գյուղացիներն հազվադեպ էին 10 %-ից ավելի լինում: *Չնայած զեմստվոները բառիս լայն իմաստով ներկայացուցչական օրգաններ չէին, բայց շատ կարևոր դեր էին խաղում, որովհետև ոչ միայն խթանում էին գյուղում կյանքի ընդհանուր մակարդակի բարձրացմանը, այլև տեղային բնակչությանը վարժեցնում էին որոշակի ինքնակառավարման:* Ուկրաինայում *զեմստվոներ* կազմավորվեցին միայն Չախափնյակում և Հարավում: Աջափնյակում *զեմստվոներ* հիմնելուն խանգարեց լեհական շլախտայի ապստամբությունը, և մինչև 1911 թ.-ը այնտեղ նման կառավարում չհաստատվեց: Ներկայացնելով տեղական շա-

հերը, *զեմստվոներն* ավելի նրբազգաց էին ուկրաինացիների մշակութային ակնկալիքների ու երազանքների նկատմամբ, քան կայսերական բյուրոկրատիան: Օրինակ՝ XIX դարի երկրորդ կեսին Պոլտավայի մարզում հատկապես *զեմստվոներում* ի հայտ եկան ուկրաինամետ ձգտումները, և հատկապես *զեմստվոյական գործունեության* ընթացքում իրենց մշակութային-լուսավորչական և քաղաքական առաջին դասերն առան Ուկրաինայի ազգային շարժման ապագա առաջնորդներից շատերը:

*Առավել սուր էր զգացվում դատավարական համակարգի կատարելագործման անհրաժեշտությունը:* Այստեղ խնդիրն հիմնականում այն էր, որ Ռուսաստանում թույլ էր զարգացած հարգանքն օրենքի նկատմամբ: Իրավաբանական որոշումների համար պատասխանատվության մեծ բաժինն այստեղ կայսերական պաշտոնյաների վրա էր դրված, որոնց համար, ինչպես հայտնի է՝ «օրենքը՝ ոնց որ միջանիվ», արդարադատությունը՝ պետական կամայականությունների մի բնագավառ, դատարանները՝ նրա գործիքները, իսկ մարդու իրավունքները՝ երկրորդ, եթե ոչ քսաներկուերորդ տեղում էին: *Բոլոր դատավարությունները տեղի էին ունենում փակ դռների ետևում, դատավորները մեծ մասամբ կաշառվում էին, արդար որոշումները՝ հազվադեպ երևույթ էին, որոշում կայացնելիս, դրդապատճառները հիմնականում, որպես կանոն, սոցիալական էին. ցածր խավերին դաժան պատիժ էին սահմանում:*

1864 թ.-ի դատական բարեփոխումը իրավիճակն հիմնավորապես փոխեց: *Դատավարությունը դարձավ կառավարման անկախ ոլորտ, որը փակ էր բյուրոկրատական միջնորդությունների համար:* Այսուհետև բաց դատավարություն էր ընթանում, ընդ որում՝ մտցվեց նաև կողմերի վիճաբանությունը: Այդ բարեփոխման արդյունքներից մեկը Ռուսաստանում փաստաբանական դասի առաջանալն էր:

*Կարևոր փոփոխություններ էին տեղի ունենում նաև ռուսական հասարակության կյանքի մյուս ոլորտներում:* Այսպես, օրինակ՝ *կրթության բնագավառի* 1860 թ.-ի բարեփոխումները ցածր խավերի համար ճանապարհ բացեցին դեպի կրթության բոլոր աստիճանները՝ ներառյալ բարձրագույն կրթությունը: Համալսարանները, որ բավականին ինքնավարություն էին ստացել, կարող էին ընդլայնել և կատարելագործել ուսուցման ծրագրերը: Միաժամանակ՝ *խիստ մեղմացվեց գրաքննությունը:* Ծիշտ է, այդ «մեղմացումը» չտարածվեց «քայքայիչ գաղափարների» վրա, բայց թե ո՞ր գաղափարները կարելի է քայքայել համարել, շատ առաձգական էր ու խճճված: 1874 թ.-ին կրճատվեցին *զինվորական ծառայության ժամկետներն ու վերացվեցին առավել խիստ ու դաժան կանոնները.* այսուհետև զինապարտության օրենքը տարածվում էր հասարակության բոլոր խավերի վրա, նախկին 25 տարվա փոխարեն՝ արդեն ծառայելու էին 6 տարի, միաժամանակ մտցվում էին զինծառայությունից ազատվելու մի շարք կանոններ:

### Բարեփոխումների նշանակությունը

Հասկանալի է, որ «մեծ բարեփոխումները» ոչ մի հեղափոխություն էլ չարեցին ուկրաինացիների, ինչպես և՛ Ռուսական կայսրության մնացած բոլոր հպատակների կյանքում: Բայց և այնպես, կյանքը Ռուսաստանում և Ուկրաինայում հիմնավորապես փոխվեց: Արևմուտքի գիտնականները գլխավոր փոփոխությունների շարքում, բացի գյուղացիների ազատագրումից, հաճախ առանձնացնում են տեղական կառավարման *զեմստվոյական* համակարգի կարգափոխումը և օրենքի ու իրավունքի դերի բարձրացումը: Խորհրդային գիտնականների կարծիքով՝ 1860-ականների բարեփոխումները Ռուսաստանում ավատատիրական կարգերից՝ բուրժուական, կապիտալիստական կարգերին անցնելու ժամանակաշրջանի սկիզբը դրեցին: Սակայն, չնայած այդ բարեփոխումների ակնառու և լուրջ թերություններին, բոլոր գիտնականներն համակարծիք են նրանում, որ առանց այդ բարեփոխումների՝ կայսրության սոցիալ-տնտեսական հետագա արդիականացումն անհնարին կլիներ:

Ուկրաինայի համար բարեփոխումների նշանակությունն առավել ևս հսկայական էր, քանի որ մինչև 1861 թ.-ը ճորտ գյուղացիներն այստեղ կազմում էին բնակչության մոտ 42 %-ը, այն դեպքում, երբ ամբողջ կայսրությունում միջին հաշվով ընդամենը 35 % էին: Նաև այն, որ *ազգային առանձնահատկություններն ու տեղական շահերն ըմբռնելու, իմաստավորելու և արտահայտելու ուկրաինացիների հնարավորություններն ընդլայնվում էին այնքանով, որքանով բարելավվում էր կրթության, իրավական պաշտպանության և տեղական ինքնակառավարման որակը:* Այսուհետև ամենատարբեր գաղափարախոսությունները, այդ թվում՝ ազգային ինքնագիտակցության գաղափարախոսությունը, կարող էին տարածվել առավել հեշտ ու անարգել:



Ավստրիական կայսրության 1848 թ.-ի, և Ռուսաստանի 1860-ականների բարեփոխումներն ու փոփոխություններն ընդհանուր շատ հատկանիշներ ունեին: Երկու կայսրությունների համար էլ այդ միջոցառումները պարտադրված էին, Ավստրիայի համար թերևս ավելի, քան Ռուսաստանի համար: Միևնույն ժամանակ՝ և՛ այստեղ, և՛ այնտեղ, բարեփոխումներն իրագործվեցին «վերևից», և դրա շնորհիվ երկու կայսերական ռեժիմներն էլ կարողացան պահպանել քաղաքական իշխանությունը: Բարեփոխումները շատ խորը, սակայն՝ ոչ երբեք հեղափոխական բնույթ էին կրում, քանի որ հին ռեժիմի շատ հիմքերի նույնիսկ չդիպան: Սակայն դրանք ակնհայտորեն արագացրեցին նոր ժամանակաշրջանի գալուստը՝ երբ ժողովուրդը և նրաներկայացուցիչներն առավել շոշափելի ազդեցություն կգործեն քաղաքական, սոցիալ-տնտեսական ու մշակութային կյանքի ողջ ընթացքի վրա: Եվ կարելի է ասել, որ շնորհիվ XIX դարի կեսերին տեղի ունեցած վերափոխումների, և՛ Ավստրիական, և՛ Ռուսական կայսրությունների ժողովուրդները համարձակորեն քայլեցին դեպի նորագույն դարաշրջան:

Չակնաչափում համար, թե ինչ ազդեցություն ունեցան կայսերական բարեփոխումներն ուկրաինացիների վրա, անհրաժեշտ է նաև ի նկատի ունենալ Ավստրիայում և Ռուսաստանում կատարված փոփոխությունների միջև եղած տարբերությունները: Ավստրիական կայսրությունում բնակվող ուկրաինացիների առջև 1848 թ.-ի հեղափոխությունը երկու կտրական հարց դրեց՝ գյուղացիության սոցիալ-տնտեսական վիճակը, և հոգևորական-մտավորականության ազգային ծագումները: Արտակարգ կարևոր էր այն հանգամանքը, որ Արևմտյան Ուկրաինայում այդ երկու հարցերը միահյուսվել էին, քանի որ երկու դեպքում էլ ուկրաինացիների հիմնական հակառակորդը լեհերն էին: Նրանք խանգարում էին ուկրաինացիների ազգային ինքնորոշմանը, և հենց նրանք՝ շլյախտիչներն էին շահագործում ուկրաինացի գյուղացիներին: Ահա թե ինչու էր արևմտյան ուկրաինացիների համար ազգային հարցը հենց սկզբից կապված այնպիսի հանապազօրյա խնդիրների հետ, ինչպիսիք են՝ կրթությունը, տեղական ինքնակառավարումը և սոցիալական պաշտպանվածությունը: Ժամանակի ընթացքում, ազգային և սոցիալական խնդիրների միջև հենց այդ ուղիղ կապի գոյությունն էլ կօգնի գյուղացիությանը՝ այնպիսի խորությամբ և իմաստավորված ընկալելու ազգային գաղափարը, ինչ խորությամբ որ այն արդեն կար մտավորականության գիտակցության մեջ: Բացի այդ, Դաբաբուրգների ընդունած սահմանադրական կառավարման շնորհիվ (չնայած բազում թերություններին ու սահմանափակումներին) ուկրաինացիներն հնարավորություն են ձեռք բերում իրենց ազգային և սոցիալ-տնտեսական շահերը ներկայացնել ու պաշտպանել խորհրդարանում, և այդ նույն գյուղացիները դառնում են ընտրողներ, իսկ մի քանիսը՝ նույնիսկ՝ պատգամավորներ: Եվ չնայած որ ամենախուլ և հետամնաց գավառների ուկրաինացի բնակչությունը դեռևս գտնվում էր սոցիալ-տնտեսական նվաստացուցիչ պայմաններում, սակայն վատ հնարավորություններ չստացավ քաղաքական, կազմակերպչական և մշակութային գործունեության համար:

Իսկ ահա Ռուսական կայսրությունում բնակվող ուկրաինացիները նման հնարավորություններ չունեին: Այդ պատճառով էլ 1860-ականների խորը բարեփոխումները քիչ նպաստեցին ուկրաինական ազգային շարժման զարգացմանը: Միևնույն ժամանակ, ազգային հարցը Ռուսաստանում այնպես սերտորեն չէր կապված սոցիալ-տնտեսական խնդիրների հետ, ինչպես Ավստրիայում: Ռուսական կայսրությունում ռուս ժողովուրդը գերակա էր մյուս բոլոր ժողովուրդների նկատմամբ և՛ ժողովրդագրական, և՛ մշակութային առումներով: Ռուսաստանը, ամեն դեպքում՝ մինչև 1861 թ.-ը, տեսակետների ու գաղափարների ազատակամություն չէր ընդունում, քանի որ ցարիզմն ամենայն ջանադրությամբ ու հետևողականորեն արմատախիլ էր անում ցանկացած նոր գաղափար: Ռուսական միապետները լսել անգամ չէին ուզում սահմանադրական կառավարման մասին, որն ամեն ինչից զատ, ազգային և տեղական ինքնարտահայտման լայն հնարավորություններ էր ընձեռում: Հասարակական կազմակերպությունները Ռուսաստանում դեռևս սաղմնային վիճակում էին: Վերջապես՝ ազգային հիմքի վրա համախմբվելու «այլազգիների» ցանկացած փորձ խեղդամահ էր արվում դեռ չծնված: Այդ ամենը հանգեցնում էր նրան, որ գյուղացիների սոցիալ-տնտեսական վիճակի և մտավորականության ազգային երազանքների միջև ոչ մի ակնառու կապ գոյություն չուներ: Ահա թե ինչու՝ ուկրաինացիների ազգային ինքնագիտակցության աճը Ռուսական կայսրությունում զգալիորեն արգելակված էր:



## ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

XIX դարի գրեթե ողջ ընթացքում, եվրոպացիների, ուրեմն և՛ ուկրաինացիների, ուշադրության կենտրոնում հաստատուն տեղ էին գրավում նոր գաղափարները, քաղաքական հեղաշրջումներն ու սոցիալական բարեփոխումները: Միաժամանակ տեղի էին ունենում ավելի քիչ տեսանելի, բայց առավել խորքային փոփոխություններ, որոնք միայն հետագայում ճանաչում գտան որպես արդյունաբերական հեղափոխություն:

Քարե դարից սկսած, երբ մարդը սովորեց հողը մշակել, մարդկությունն առավել արմատական փոփոխություններ չէր տեսել կյանքի բոլոր բնագավառներում, քան այն բոլորը, ինչ իր հետ բերեց մեքենայի հայտնությունը: Սակայն Ուկրաինայում այդ փոփոխությունները հասկանալու և իմաստավորելու համար բավական ժամանակ ունեին, քանի որ արդյունաբերականացումն այստեղ դանդաղ էր ընթանում և ուկրաինացիների ճնշող մեծամասնությունն այդ ամբողջ ընթացքում մնում էին այն, ինչ էին դարեր շարունակ, այսինքն՝ հողագործ:

Սակայն XIX դարի վերջին, երբ արդյունաբերական հեղափոխությունը վերջապես հասավ նաև Ուկրաինայի որոշ տարածաշրջաններ, այն շրթայական ռեակցիա առաջացրեց և արագ թափով ընդգրկեց բնակչության լայն զանգվածներին: Արդյունքում՝ անսպասելի հակադրություն է առաջանում արտադրության երկու համակարգերի՝ սոցիալական կազմակերպման և հասարակական արժեքների միջև: Առաջինը կապված է արագորեն արդիականացող քաղաքի, պրոլետարիատի և մեքենայացման առաջընթացի հետ, երկրորդը՝ ավանդական գյուղի, գյուղացիության ու ձեռքի աշխատանքի հետ: Այդ հակադրությունից առաջացող վեճերը, հակասություններն ու երկընտրանքը դեռ շատ դեպքերում որոշիչ դեր կունենան Ուկրաինայի պատմության ոչ միայն XIX դարի, այլև XX դարի մի քանի տասնամյակի ընթացքում:

### «Բարեփոխված» գյուղը

Չնայած 1861 թ.-ի բարեփոխումները գյուղացուն ազատագրեց կալվածատիրոջից, սակայն գյուղի տնտեսական վիճակն ամենևին չբարելավվեց: Գյուղացիների «բարեփոխված» կյանքի ամենաչոր վիճակագրությունն անգամ նման է լացուկոժի: Դրա մեղավորները մասամբ «բարեփոխումների ճարտարապետներն» էին, որ անուղղելի սխալ էին գործել, օրինակ, այն դեպքում, երբ հույս էին ունեցել որևէ օգուտ քաղել (եթե ոչ՝ «ժողովրդի համար», ապա զոնե՝ «պետության համար»)՝ գյուղացուն հատկացվող ճչացող սակավ հողի դիմաց անասելի ծանր հողահարկ դնելով նրա վրա: Բայց չէ՞ որ *գյուղացիներն իրենց հողաբաժնի համար՝ հողահարկից բացի, ստիպված էին վճարել նաև գլխահարկ և մի շարք «կողմնակի» հարկեր կամ մաքսատուրքեր՝ շաքարի, թեյի, ծխախոտի, բամբակի, մետաղյա իրերի և, ամենակարևորը՝ օղու համար*: Գյուղացիների աղքատանալու պատճառներն ուսումնասիրող պետական հատուկ հանձնաժողովի զեկույցի համաձայն, նրանց հարկային վճարումների (հաշվի առնելով հողի դիմաց փոխհատուցումը) գումարը տասնապատիկ գերազանցում էր ազնվականների վճարումները: *Նույնիսկ այն բանից հետո, երբ 1886 թ.-ին կայսրությունը վերացրեց գլխահարկը, իսկ 1905 թ.-ին՝ փոխհատուցումները, գյուղացիների խղճուկ փողերի մեծ մասը շարունակում էին լափել անուղղակի հարկերը*:

Իր ֆինանսական պարտավորությունները կատարելու համար գյուղացին ստիպված էր



լինում պարտք վերցնել հարուստ հարևանից, եթե նման հարևան ունենա, իսկ երբեմն էլ (հատկապես Աջափնյակում)՝ վաշխառու հրեայից: Բայց քանի որ տոկոսներն հաճախ անցնում էին 150-ից, որպես կանոն, պարտքի օղակն ավելի ամուր էր սեղմում գյուղացու պարանոցը: Պարտքերից ազատվելու համար, ոմանք փորձում էին իրենց մթերքից որոշ բաներ վաճառել, բայց գյուղական մանր տնտեսությունը՝ քիչ պահանջարկի, հեռավոր շուկաների ու ցածր գների պայմաններում, փաստորեն ոչ մի եկամուտ չէր բերում: Վերջիվերջո մի ելք էր մնում՝ նորից վարձու աշխատանքի մտնել կալվածատիրոջ կամ հարուստ հարևանի մոտ, ինչն էլ որ անում էին աղքատ գյուղացիները, ընդ որում՝ շատ ցածր վճարով:

*Պարզ է, որ բնակչության 90 %-ի մոտ դրամի խրոնիկ բացակայությունը ոչ մի կերպ չէր խթանում Ուկրաինայի տնտեսական զարգացմանը:* Գյուղացիների մեծ մասը ոչ կարողանում էր նոր հողակտորներ գնել՝ արտադրությունը մեծացնելու համար, ոչ էլ գյուղատնտեսական նոր գործիքներ՝ արտադրողականությունը բարձրացնելու համար (էլ չենք խոսում մեքենաների մասին): Եվ Չախափնյակում, և՛ Աջափնյակում գյուղացիների կեսից ավելին ձիեր չունեին, ինչպես նաև՝ քիչ թե շատ ժամանակակից մետաղյա գործիքներ: Փայտե գութանին լծված մաճկալն այստեղ սովորական երևույթ էր: *Դրամի բացակայությունը թուլացնում էր Ուկրաինայի ներքին շուկան և խոչընդոտում էր առևտրի, արդյունաբերության ու քաղաքների զարգացմանը*, ինչն էլ ավելի էր երկրամասը վերածում կայսերական տնտեսության լճացած ճահճի:

Սակայն գյուղացին համոզված էր, թե իր բոլոր հոգս ու ցավերի պատճառը ոչ թե փողի բացակայությունն է, այլ՝ վարելահողի պակասությունը: Վերջիվերջո՝ կարելի է և առանց փողի ապրել, բայց առանց հողի՝... ո՞նց կլինի... 1861 թ.-ի փոքրիկ հողաբաժինները (իսկ դրանք Ուկրաինայում, հիշում եք, ավելի փոքր էին, քան կայսրության մյուս նահանգներում) հազիվ էին բավարարում դրանց տերերի ծայրահեղ համեստ կարիքները: Իսկ բնակչության բնական աճը (XIX դարակեսին Ռուսական կայսրությունը, ինչպես և Եվրոպայի շատ երկրներ, ժողովրդագրական հզոր աճ էր ապրում) սաստկացնում էր գյուղացիության աղետալի վիճակը: 1861 թ.-ից մինչև 1897 թ.-ը կայսրության բնակչությունը 73 մլն-ից հասավ 125 մլն-ի, իսկ 1917 թ.-ին հասավ 170 մլն-ի: Մասնավորապես Ուկրաինայում, մոտ 40 տարվա ընթացքում, բնակչությունն աճեց 72 %-ով:

Քանի որ ուկրաինացիների մեծամասնությունն ապրում էր գյուղերում, հատկապես այստեղ էր ամենից շատ զգացվում բնակչության աճը: 1890 թ.-ին, և Չախափնյակում, և՛ Աջափնյակում 1 ակր վարելահողին կրկնակի ավել բնակչություն էր ընկնում, քան 1860 թ.-ին: Այդպիսով, այդ տարածաշրջանները դարձան Եվրոպայի ամենախիտ բնակեցվածները (այդ ժամանակ Անգլիայում 1 ակր վարելահողի վրա բնակչության թիվը երկու անգամ պակաս էր, քան Ուկրաինայում): Ի՞նչն էր նման սրընթաց թռիչքի պատճառը: Ամենից առաջ՝ բժշկական ապաստարկման բարելավումը, ինչին նպաստում էին գեմստիզները, մանկական մահացության խիստ նվազումը (չնայած, այս ամենով հանդերձ, Ռուսական կայսրությունում յուրաքանչյուր հազար մարդու հաշվով, մահացությունը կրկնակի անգամ ավելի բարձր էր մնում, քան Արևմտյան Եվրոպայում):

*Երկու փոխկապակցված խնդիրների՝ գերբնակեցվածության և վարելահողերի անբավարարության, հետևանքները չհապաղեցին երևան գալ՝ հողի գնաճի տեսքով:* Որոշ տարածաշրջաններում, առավելապես հարավային տափաստաններում, 1861 թ.-ի համեմատ, 1900 թ.-ին 3-4 անգամ գնաճ էր գրանցվել: Իսկ դա վերջնականապես փակում էր «արատավոր շրջանը», քանի որ գյուղացու համար բացարձակ անմատչելի էր դարձնում նոր հողակտորի ձեռք բերումը, որը նրա համար կենսական անհրաժեշտություն էր:

*Գերբնակեցվածության մյուս հետևանքը դարձավ գործազրկությունը:* Հաշվարկված է, որ 1890-ական թվականներին Ուկրաինայում իրական աշխատուժը հասնում էր գրեթե 10,7 մլն-ի, որից 2,3 մլն-ը պահանջվում էր գյուղատնտեսության մեջ, իսկ 1,1 մլն-ը՝ տնտեսության մյուս ճյուղերում: Այսինքն՝ բնակչության 7,3 մլն-ը, կամ աշխատուժի 68 %-ը գործազուրկ էր կամ մասնակի զբաղված, որոնք փաստորեն կիսաբազոց գոյություն էին քարշ տալիս: Չարմանալի չէ, որ Ուկրաինան իր կենսամակարդակով շատ էր ետ ընկել Արևմուտքից: Այսպես օրինակ՝ 1900 թ.-ի ընթացքում, միջին հաշվով՝ դանիացին կերել էր 2166 ֆունտ հաց, գերմանացին՝ 1119, հունգարացին՝ 1264, իսկ ուկրաինացին՝ ընդամենը 867 ֆունտ, և դա այն դեպքում, երբ Ուկրաինայում՝ «Եվրոպայի շտեմարանում», հացը ոչ միայն գյուղացու հիմնական արտադրանքն էր, այլև՝ սննդամթերքը...

## Գաղթ դեպի Արևելք

Հայրենիքում երբևէ բավականաչափ հող ունենալուց հույսը կտրած գյուղացիները պատաստ էին գնալ ցանկացած հեռաստան, որտեղ որ բավական հող կխոստանային: Տանը մնալու դեպքում նրանց սպասում էր միայն կալվածատիրոջ անծայրածիր հողերը ծրի մշակելը, փոխարենը՝ օգտվելով իր հողակտորը նույնպես անվճար մշակելու իրավունքից, իրավունք, որն ամբողջովին հիշեցնում էր ճորտատիրականը: Ահա թե ինչու էին գյուղացիներին իրապուրում հեքիաթային լայնարձակ տարածությունները, որտեղ կար՝ «չա՛տ վարելահող, և ոչ մի պան»:

Ընդ որում՝ ի տարբերություն արևմտաուկրաինական գյուղացիների, որոնք հող ու աշխատանք գտնելու համար ճանապարհ էին ընկնում նույնիսկ օվկիանոսից այն կողմ, Ռուսական կայսրության գյուղացիներին հարկ չկար դուրս գալ նրա սահմաններից: Ընդամենը հարկավոր էր ուղղություն վերցնել դեպի Արևելք, չնայած այդ դեպքում նրանք երբեմն հաղթահարում էին այնքան տարածություն, որքան որ ընկած էր Արևելյան Եվրոպայի և Ամերիկայի միջև: Խաղաղ օվկիանոսին մոտ, Ամուրի ավազանում, ազատ հողերը հենց ուկրաինացի հողագործին էին սպասում:

*1896-1906 թ.թ.-ների ընթացքում, Անդրսիբիրյան երկաթուղու կառուցումից հետո, Հեռավոր Արևելքում վերաբնակվեցին մոտ 1,6 մլն ուկրաինացի:* Հեռավորարևելյան հողերն իրացնելու դաժան պայմանները շատերին ստիպեցին տուն վերադառնալ: Բայց չնայած դրան, 1914 թ.-ին Հեռավոր Արևելքում մշտական բնակություն էին հաստատել արդեն մոտ 2 մլն ուկրաինացի: Ավելին՝ այստեղ երկու անգամ ավելի ուկրաինացիներ էին վերաբնակվել, քան ռուսներ: Եվ հենց այն ժամանակ, երբ Հաբսբուրգների երեկվա հպատակ արևմտյան ուկրաինացիները մշակում էին Արևմտյան Կանադայի ընդարձակ տափաստանները, Ռուսական կայսրության ուկրաինացիները հերկում էին Խաղաղ օվկիանոսի ափերը հակառակ կողմից՝ խորհրդանշական մի պատկեր, որ ցույց է տալիս, թե ինչի է պատրաստ ուկրաինացին, միայն թե մի քիչ բարիք ստանա «մայր հողից»...

## Գյուղացիության շերտավորումը

Չնայած գյուղացիների անուրախ և անհույս գոյությանը, նրանցից մի քանիսը, ինչպես սովորաբար լինում է, կարողանում էին մյուսներից ավելի լավ աշխատել ու տնտեսությամբ զբաղվել: Համապատասխանաբար, բարեփոխումներից հետո առավել ակնառու է դառնում նրանց միջև տարբերություններն՝ ըստ ունեցվածքի: Ըստ էության, հետառֆորմյան ուկրաինական (ի դեպ, նաև՝ ռուսական) գյուղի սոցիալական կառուցվածքն ընդամենն արտացոլում էր համամարդկային այն առանձնահատկությունը, որ նկատելի է Օլդոս Հաքսլին իր նշանավոր աֆորիզմում. «Մարդիկ սովորություն ունեն բաժանվելու երեք խմբի՝ բարձր, միջին և ցածր»:

Միշտ այդ անվիճելի ճշմարտությանը համապատասխան, *հետառֆորմյան գյուղն արագ բաժանվեց սոցիալական երեք խմբի:* Առաջին խումբը կազմում էին համեմատաբար *հարուստ գյուղացիները, կամ «կուլակները»* (ուկրաիներեն՝ «կուրկուլներ»): Երկրորդը՝ *միջին կարողության տեր գյուղացիները՝ «միջակները»:* Եվ վերջապես՝ *ամենաաղքատ գյուղացիները՝ «չբավորները»:*

Առաջին խմբին կարելի է դասել հետառֆորմյան գյուղի բնակիչների 15-20 %-ին: «Կուլակ» բառն անմիջապես մարդու գիտակցության մեջ առաջ է բերում դաժան, գծուծ մուժիկի մի կերպար, որ անխղճորեն շահագործում է իր իսկ համագյուղացիներին: Իրականում, իհարկե, նաև շահագործումը կար, բայց միայն որպես կուլակի իրական կերպարի բաղադրիչներից մեկը (հաճախակի, բայց՝ ոչ պարտադիր): Մյուս՝ պարտադիր, բաղադրիչներն էին՝ բափ ու քրտինք մտած լարված աշխատանքը, նախաձեռնությունը և մի քիչ հաջողությունը: Այս բոլորը միասին վերցրած, օգնում էր գյուղացիների այդ 15-20 %-ին հարստանալ, այն դեպքում, երբ մյուսներն անշեղորեն աղքատանում էին: Այնուհետև նրանք միմյանց միջև ամուսնական կապեր էին հաստատում, դրանով իսկ ավելացնելով ու սերնդե-սերունդ պահպանելով ընտանեկան բարիքը: «Միջին կուլակն» ուներ 65-75 ակր հող, մի քանի ձի, բավականին գյուղատնտեսական տեխնիկա: Բատրակներ վարձելով, նա բերք էր աճեցնում նաև վաճառքի համար: Ահա այդ հաջողակ գյուղացիներին էր, որ մի ամբողջ դար նշավալում ու խարազանում էին Լենինն ու Լենինյանները (խորհրդային գիտության, գրականության ու արվեստի մեջ կուլակի կերպարն անվերապահ բացասական էր)՝ նրանց դիտարկելով որպես գյուղական բուրժուազիա և արմատում-շահագործողներ: Փոխարենը՝ Արևմուտքի գիտնա-



կանները հակված չեն չափազանցելու կուլակների և մնացած գյուղացիների միջև եղած սոցիալ-տնտեսական տարբերությունները: Թող որ նրանք իսկապես էլ շահագործում էին համագյուղացիներին, իսկ նրանք էլ ատում ու նախանձում էին սրանց, բայց և՛ իրենց սեփական աչքում, և՛ նախանձողների աչքում կուլակները միշտ էլ գյուղացի էին մնում, այլ ոչ թե կալվածատեր, կամ, ասենք՝ քաղաքաբնակ: Եվ գյուղի «չքավորն» էլ, իրականում երազում էր ոչ թե «վերացնել կուլակությունը՝ որպես դասակարգ», այլ դառնալ այդ «դասակարգի» ներկայացուցիչներից մեկը:

Երկրորդ խումբը՝ «միջակները», առաջին խմբից բավականին շատ էին, կազմելով ամբողջ գյուղական բնակչության մոտ 30 %-ը: «Միջին միջակն» ուներ 8-25 ակր հող, որը լիովին



Գյուղացի ուկրաինուհիներն աշխատելիս, XIX դարավերջ

բավարարում էր ընտանիքը պահելուն: Հաճախ «միջակն» ունենում էր մի քանի ձի և մի քանի գլուխ անասուն: Ի տարբերություն կուլակների, միջակներն հազվադեպ կարող էին իրենց թույլ տալ գյուղատնտեսական տեխնիկա գնել: Իսկ ընդհանուր առմամբ, գյուղական «միջին դասակարգի» այս ներկայացուցիչներն էլ պատկանելի, աշխատավոր մարդիկ էին: Գյուղական բնակչության այս տեսակն հատկապես տարածված էր Չախսփնյակում, որտեղ նախազարդ ճերմակ խրճիթներն հենց իրենց տեսքով ասես պատմում էին իր անկախությանը և ունեցվածքով հպարտ տիրոջ մասին:

Եվ, իհարկե, բոլորից շատ «չքավոր» գյուղացիներն էին՝ գյուղական բնակչության կեսը: Նրանք կամ ընդհանրապես հող չուներին, կամ ընդամենը ինչ-որ մի քանի ակր, որն ակնհայտորեն բավարար չէր գոյությունը պահպանելու համար: Որպեսզի սովից չմեռնի, չքավորն ստիպված աշխատանքի էր վարձվում հարուստ հարևանի կամ կալվածատիրոջ մոտ, կամ էլ ժամանակավորապես լքում էր իր բնակավայրը՝ սեզոնային աշխատանք գտնելու համար: Մարդիկ աղքատանում էին տարբեր պատճառներով (մանապես և՛ հարստանում): Հաճախ այնպիսի դժբախտություններ, ինչպես հիվանդությունը, կերակրողի ամժամանակ մահը կամ տարերային աղետը ստիպում էին ընտանիքին վաճառել իր հողը, և այդպիսով երկար ժամանակով (հաճախ՝ ընդմիշտ) զրկվում էր տնտեսական միակ հուսալի հենարանից: Բայց լինում էր և այնպես, որ մարդիկ չէին կարողանում ծայրը ծայրին հասցնել անշնորհք ու անփույթ տնտեսվարության, ակրկոտության ու հարբեցողության պատճառով: Այսպես թե այնպես,

լքավորների՝ առանց այդ էլ մեծ քանակը դանդաղորեն, բայց անընդհատ աճում էր, իսկ դա նշանակում էր, որ գյուղական խաղաղ լճափոսում ատելության ու անհանգստության որդեր էին բազմանում: Ահա թե ինչու, ի դեպ, շատ հեղափոխականներ համարում էին, որ Ռուսական կայսրությունը կարելի է պայթեցնել հատկապես և միայն գյուղից:

### Ազնվականության անկումը

Ոչ շռայլ հողաբաժինները, ոչ կառավարության ֆինանսական աջակցությունը, ոչ էլ 1801 թ.-ից հետո պահպանված մի շարք առավելություններն ու արտոնություններն արդեն չէին կարողանում գսպել ազնվականության կտրուկ անկումը: Պատճառն այն էր, որ ազնվականներին շատերն էլ զորու չէին իրենց կալվածքները դարձնել շահավետ առևտրական ձեռնարկություններ: Նրանցից յուրաքանչյուրի փոխարեն, լավ տնտեսատերը՝ ունենալով նման պատկառելի հարստություն, այն չէր մխիթ դատարկ ու անմիտ բաների վրա, ցոփ ու շվայտ կյանք չէր վարի, այլ՝ կներդներ գյուղատնտեսական նոր տեխնիկա ձեռք բերելու վրա, ազատված ճորտերի փոխարեն նոր աշխատողներ կվարձեր, կարգուկանոն կհաստատեր և նախաձեռնություն ու աշխատասիրություն հանդես բերելով (ի դեպ՝ ռուս ազնվականի մտածողությամբ՝ այս բոլորը՝ «գերմանական» հատկանիշներ ու որակներ էին), և Աստծո օգնությամբ կբազմապատկեր իր եկամուտը... Բայց փոխարենը՝ ազնվականները գերադասում էին խրվել պարտքերի մեջ: 1877 թ.-ին ռուսական ազնվականության մոտ 75 %-ը մեծ պարտքերի տակ էր: Այդ պատճառով էլ, նրանք ստիպված վաճառում էին իրենց կալվածքները և լավ է, որ գնորդն էլ հենց գյուղում էր՝ պատվախնդիր ու նախաձեռնող գյուղացի-կուլակը: Այդպիսով 1862-1914 թ.թ.-ների ընթացքում Ուկրաինայում ազնվական կալվածատերերի քանակը կրճատվեց 53 %-ով: Բացառություն էր կազմում Աջափնյակը, որտեղ լայնարձակ կալվածքներն առաջվա պես պատկանում էին հեքիաթային հարստության տեր լեհ ավատատերերին, որոնք կարողացան նաև նոր՝ կալվածատերերից շատերի համար դժվար, ժամանակներում պահպանել իրենց դեմքն ու դիրքը:

Ուկրաինայում, ինչպես և ողջ կայսրությունում, ազնվական ընտրախափի ավանդույթները, և ընդհանրապես նրա գոյությունն արագորեն մոռացության էր մատնվում: Վաճառելով կալվածքները, ազնվականները մեկընդմիշտ տեղափոխվում էին քաղաք, դառնալով սովորական պաշտոնյա, զինվորական, մտավորական: Ծիշտ է, դեռ առաջվա պես սոցիալական մեծ առավելություններ ունեին և մինչև 1917 թ.-ը վարելահողերի մեծ մասը դեռ նրանց ձեռքում էր, սակայն, այն բանից հետո, երբ կալվածատերը կորցրեց իր անսահման իշխանությունը գյուղացիության վրա և հողերն էլ աստիճանաբար սկսեցին անցնել նոր տերերին, ազնվականության՝ որպես դասակարգի, գոյության օրերն արդեն հաշված էին:

### Առևտրական գյուղական տնտեսություն

Ցարօրինակ է, բայց որքան էլ ուկրաինական գյուղն աղքատանում էր ու լճացում ապրում, այնուամենայնիվ նրա դերը՝ որպես «եվրոպայի շտեմարան», շարունակում էր աճել: Դա տեղի էր ունենում շնորհիվ այն բանի, որ հակառակ ընդհանուր միտումներին, հասարակության այլ խավի ձեռներեցների հետ միասին ազնվականության մի մասին հաջողվեց իրենց կալվածքները դարձնել հսկայական գյուղատնտեսական ձեռնարկություններ, որոնք արտադրանք էին մատակարարում կայսերական ու արտասահմանյան շուկաներին: Այդ իրավիճակի անբնականությունը չէր վրիպել ֆինանսների կայսերական նախարար Վիշնեգրադսկու հայացքից. «Պակաս կուտե՞ք, բայց կարտահանե՞ք»:

Այնուամենայնիվ, սննդամթերքի արտահանումը բավականին սահմանափակ, տարածաշրջանային բնույթ էր կրում: Նրանում մասնակցություն ունեին միայն մի քանի նահանգներ և բնակչության համեմատաբար քիչ տոկոսը: Դեռևս XIX դարի սկզբներին հացահատիկի հիմնական արտահանողի դերը պատկանում էր մերձսևծովյան տափաստաններն ընդգրկող նահանգներին, որտեղ շատ էին նոր յուրացվող հողատարածքներն ու մոտակա նավահանգիստները: Ծորտերի ազատագրումից դեռ շատ առաջ, տափաստանային շրջանների կալվածատերերը, ակտիվորեն մեծացնելով ցանքատարածքները, արդեն օգտագործում էին վարձու աշխատանքն ու կապիտալ ներդրումներ էին անում գյուղատնտեսական տեխնիկա ձեռք բերելու համար: 1861 թ.-ից հետո, երբ ազատ ու շարժունակ աշխատուժը կտրուկ շատացավ, իսկ հաղորդակցությունը լավացավ, Ուկրաինան՝ ընդհանրապես, և տափաստանային շրջանները՝ մասնավորապես, սննդամթերքի արտադրությունն ավելի արագ էին մեծացնում, քան կայսրության մյուս շրջանները: XX դարասկզբին ցորենի արտահանման 90 %-ը







մթերքը հոսում էր դեպի հյուսիս, իսկ ռուսական քաղաքների պատրաստի ապրանքատեսակները հեղեղում էին Ուկրաինայի ներքին շուկան, Ուկրաինայի տնտեսությունն աստիճանաբար կորցնում էր իր ինքնուրույնությունն ու ինքնաբավությունը՝ ավելի ու ավելի ծուլվելով կայսերական համակարգին:

Երկաթուղիների սրընթաց աճն ավելի ու ավելի շատ ածուխ ու մետաղ էր պահանջում: Կառավարությանն հայտնի էր, որ Զարավ-Արևելյան Ուկրաինայում, և հատկապես Դոնի ավազանում, ածխի ու երկաթի հարուստ հանքավայրեր կան: Ընդդիմ հանգամանքների անսպասելի զուգադիպման, այդ հանքավայրերը շահագործման համար մատչելի դարձան: 1870-1900 թ.թ.-ներին, հատկապես «ածխատեղի» 90-ականներին, *Ուկրաինայի հարավ-արևելյան երկու տարածաշրջանները՝ Դոնբասի ու Կրիվոյ Ռոզի, դարձան կայսրության, գուցեն՝ աշխարհի, ամենաարագ զարգացող արդյունաբերական շրջանները:* Այդ ժամանակ եվրոպայի բարձր զարգացած երկրներում ներդրված կապիտալները սկսել էին քիչ եկամուտներ բերել, այդ պատճառով էլ Արևմտեքի կապիտալն ուղղվեց դեպի Ռուսաստան և Ուկրաինա, որտեղ ածխի ու երկաթի հանքավայրերի շահագործումը քիչ տոկոսներ չէր խոստանում (հաշվի առնելով ածխի ու երկաթի վիթխարի տեղական պահանջարկը), ինչպես նաև՝ կառավարության մեծ աջակցության դեպքում, գործնականում բացառվում էր հնարավոր վնասի վտանգը:

Սկսվող բուժի նշաններն ամենից առաջ ի հայտ եկան Դոնբասի ածխարդյունաբերության մեջ: 1870-թ.-ից մինչև 1900 թ.-ը ածխի արդյունահանումն աճեց ավելի քան 1000 %-ով: Այդ ժամանակ կայսրության ածխի գրեթե 70 %-ը Դոնբասն էր տալիս: Ածխահանքերի ավելանալու հետ բնականաբար ավելանում էր նաև բանվորների քանակը: 1885 թ.-ին այստեղ 32 հազ. բանվոր էր աշխատում, 1900 թ.-ին՝ 82 հազ., իսկ 1913 թ.-ին՝ 168 հազ.: Բնագավառը վերահսկում էին մոտ 20 բաժնետիրական համատեղ ընկերություններ: 1900 թ.-ին բաժնետոմսերի 94 %-ը պատկանում էր ֆրանսիական ու բելգիական ներդրողներին, որ հանքահորերի զարգացման գործում միլիոնների ներդրումներ էին կատարել: Այդ բաժնետիրական ընկերություններն ստեղծեցին սինդիկատներ՝ փաստորեն տիրելով ածխի արդյունահանման ու վաճառքի մենաշնորհին: Այդպես կապիտալիզմը՝ իր լիակատար զարգացած ձևերով, հայտնվեց Ուկրաինայում:

Ածխի բուժից հետո հաջորդ տասնամյակում, այսինքն 1880-ական թվականներին, սկսվեց երկաթահանքերի մեծածավալ շահագործումը: Կրիվոյ Ռոզի ավազանի մետաղագործության զարգացումն ավելի տպավորիչ էր, քան Դոնբասում ածխարդյունաբերության զարգացումը: 1885 թ.-ին, Կրիվոյ Ռոզը Դոնեցկի հանքահորերի հետ կապող երկաթգծի շինարարության ավարտի հետ, արդեն ամեն ինչ պատրաստ էր մետաղագործական բուժն սկսվելու համար: Նոր ծլարձակող մետաղագործության ուղորտում կապիտալ ներդրումները խրախուսելու համար կառավարությունը ձեռնարկատերերին այնպիսի ձեռնտու պայմաններ առաջարկեց, որոնցից հրաժարվելն հիմարություն կլիներ. մետաղագործական արտադրանքի մեծ մասի համար խիստ բարձր պետական գներ էր երաշխավորվում: Եվ արևմտյան բաժնետերերը (առջևում կրկին ֆրանսիացիներն էին) պատրաստակամությամբ արձագանքեցին. մինչև 1914 թ.-ը նրանք ավելի քան 180 մլն ռուբլու ներդրումներ կատարեցին աշխարհի ամենահզոր ու ժամանակակից մետաղագործական գործարանների կառուցման համար: Այդ ձեռնարկություններից մի քանիսն այնպես արագ աճեցին, որ դարձան բազմամարդ քաղաքներ: Այդպիսին էր օրինակ՝ Յուզովկան՝ այդպես կոչվելով բրիտանացի կապիտալիստ Ջոն Գյուզի (ժառանգով՝ Ուելսի նահանգից) անունով, որն այդտեղ մետաղագործական ձեռնարկություն էր հիմնել (դա ներկայիս Դոնեցկն է՝ Ուկրաինայի կարևորագույն արդյունաբերական կենտրոններից մեկը):

Ուկրաինայում պրոլետարիատն աճում էր ոչ թե օրերով, այլ ժամերով: Դեռ 1870-ական թվականներին, ամբողջ Կրիվոյ Ռոզի ավազանում 13 հազ. բանվոր կար, իսկ 1917 թ.-ին նրանց թիվն հասել էր արդեն 137 հազ.-ի: Ուկրաինայի մետաղագործական արդյունաբերության վիթխարի աճը պարզ երևում է հատկապես Ուրալի հետ համեմատելիս. եթե 1870 թ.-ից մինչև 1900 թ.-ը Ուրալի մետաղագործական հին գործարանները միայն չորս անգամ ավելացրեցին արտադրանքի թողարկումը, ապա ուկրաինական նոր գործարաններն այդ նույն ժամանակում ավելացրեցին 158 անգամ:

Այդուհանդերձ, խոսելով այդ ժամանակներում Ուկրաինայի արդյունաբերության զարգացման մասին, չպետք է մոռանալ, որ այստեղ ծաղկում էին միայն բազային, արդյունահանող ծյուղերը, որոնք հուճք էին մատակարարում, բայց ոչ երբեք ուրիշ բաներ: Զատկապես ակ-

նառու էր պատրաստի ապրանքների արտադրության մեջ ետ մնալը: Մեռյալ կետից քիչ թե շատ տեղաշարժ նկատվեց գյուղատնտեսական մեքենաների (որոնց պահանջարկն այստեղ մեծ էր) և ավելի քիչ՝ գնացքաբարշերի (լոկոմոտիվների) արտադրության մեջ: Պատրաստի ապրանքների ճնշող մեծամասնությունն Ուկրաինան ներմուծում էր Ռուսաստանից և դրա համար էլ ամբողջովին կախման մեջ էր նրանից: Այսպես՝ 1913 թ.-ին Ռուսական կայսրությունում հուճքի արդյունահանման 70 %-ը բաժին էր ընկնում Ուկրաինային, սակայն արտադրական հզորությունների միայն 15 %-ն ուներ պատրաստի ապրանքների արտադրության ուղղվածություն: Այսպիսով, իր արդյունաբերական տպավորիչ ու ցնցող առաջընթացով հանդերձ, Ուկրաինայի արդյունաբերականացումը չփոխեց նրա տնտեսության միակողմանի ու չհաշվեկշռված բնույթը:

### Գաղութային շահագործման խնդիրը

Զարավային Ուկրաինայի բուժն արդյունաբերականացումը որքանով էր հարկավոր և օգտակար ամբողջ Ուկրաինային: Այս հարցը հաճախ են տվել, և մինչև հիմա էլ շարունակում են տալ պատմաբանները: Օրինակ՝ 60-ական թվականների խորհրդային գիտնականներն րնդիանուր առմամբ դրական էին գնահատում այդ բուժն արդյունաբերականացումը ուկրաինացի ժողովրդի կյանքում: Այդ տրամաբանությամբ՝ հենց որ Զարավի ու Գյուսիսի միջև հաղորդակցության ուղիների զարգացման ու բարելավման և հուճքի ու արտադրանքի փոխանման որակական թռիչքի հետևանքով Ռուսաստանի և Ուկրաինայի տնտեսությունները վերջնականապես ու անդառնալիորեն սերտաճեցին, ապա այն հանգեցրեց «համառուսական շուկայի» ստեղծմանը՝ ծավալուն, արդյունավետ ու տպավորիչ տնտեսական մի ամբողջություն, որը երկու երկրների համար էլ օգտակար էր: Այնպիսի ուկրաինացի պատմաբաններ, ինչպես օրինակ՝ Իվան Գուրժիլը, ըստ էության համարում էին, որ տնտեսական նոր համատեքստում Ուկրաինան իրեն նույնիսկ ավելի լավ էր զգում, քան Ռուսաստանը, քանի որ ոչ միայն ելք ունեցավ դեպի այդ ընդարձակ շուկան, այլև արդյունաբերականացման արագ տեմպերի շնորհիվ հետևողականորեն ընդլայնեց այդ շուկայում իր գործունեության սահմանները: Խորհրդային գիտնականները զայրույթով հերքում էին ցանկացած ակնարկ այն մասին, որ ուկրաինական ծայրամասի հետ տնտեսական կապերն ամենից առաջ ձեռնդրում էին Ռուսաստանի տնտեսական կենտրոնին: Եվ իհարկե, գլխավոր փաստարկն այն էր, որ Ուկրաինայի տնտեսական աճի տեմպերը հենց կայսերական կենտրոնն էր խթանում:

Սակայն միշտ չէ, որ խորհրդային պատմաբաններն այդ տեսանկյունից են մայել հարցին: 1920-ական թվականներին՝ նախքան ստալինյան համատարած համախտության հաստատումը, այնպիսի առաջատար գիտնականներ, ինչպես Սիխայիլ Պոկրովսկին՝ Ռուսաստանում և Մատվիլ Յալոբոկին՝ Ուկրաինայում, միանշանակ ու պարզորոշ հայտարարում էին, որ Ուկրաինայի արդյունաբերականացումը ոչ թե խանգարում, այլ օգնում էր Ռուսաստանին՝ շահագործելու իր այդ «ծայրամասային երկիրը»: 1914 թ.-ին, անձամբ Լենինն իր շվեյցարական ելույթներից մեկում (ի դեպ՝ այն տեղ չի գտել նրա երկրի խորհրդային ժողովածուներում) հայտարարում է, որ *Ուկրաինան Ռուսաստանի համար դարձավ այն, ինչ Անգլիայի համար Իռլանդիան էր, որը անխնա շահագործվում էր՝ փոխարենը ոչինչ չստանալով:*

Ինչպե՞ս ուրեմն համակերպել Ուկրաինայի շահագործման փաստը նրա արդյունաբերական զարգացման հետ: Ուկրաինայում աշխատող ռուս տնտեսագետ, կոմունիստ Սիխայիլ Վոլոբուկը 1928 թ.-ին այսպես էր բացատրում: Ուկրաինան «ասիական» տեսակի գաղութ էր՝ աղքատ, սեփական արդյունաբերություն չունեցող, որի պաշարները՝ նրան շահագործող կայսրությունը պարզապես դուրս է տանում: *Ուկրաինան ավելի շատ «եվրոպական» տեսակի գաղութների թվին էր պատկանում, այսինքն՝ զարգացած արդյունաբերություն ունեցող երկիր, որի ոչ այնքան պաշարներն էին դուրս հանում, որքան կապիտալն ու հնարավոր շահույթը:* Եվ նման իրավիճակի գլխավոր մեղավորը, Վոլոբուկի կարծիքով, ռուսական կառավարությունն էր, ոչ թե արևմտյան կապիտալիստները: Կապիտալը դուրս քաշելու մեխանիզմը շատ պարզ էր. գնազույցման կայսերական քաղաքականությունն արհեստականորեն ստեղծում էր մի վիճակ, երբ ռուսական պատրաստի ապրանքների գները արտակարգ բարձր էին, իսկ ուկրաինական հուճքինը՝ արտակարգ ցածր: Արդյունքում՝ Ռուսաստանի պատրաստի ապրանք արտադրողներն ավելի շատ եկամուտ ունեին, քան Ուկրաինայի ածուխ ու երկաթահանք արդյունահանող ընկերությունները, և կապիտալը կուտակվում էր Գյուսիսում, ոչ թե Զարավում: Այսպես Ուկրաինայի տնտեսությունը (որը դեռ շարունակում էր, Վոլոբուկի կարծիքով, մնալ յուրօրինակ և անկախ մի ամբողջություն) զրկվում էր



հնարավոր եկամուտներից և հարկադրվում էր ծառայելու կայսրության ռուսական կենտրոնի տնտեսական շահերի սպասարկմանը:

### **Քաղաքների զարգացումը**

XIX դարի ընթացքում մեծ փոփոխություններ տեղի ունեցան Ուկրաինայի հիմնական քաղաքների աճի տեմպերում և տարածքային տեղաբաշխման մեջ:

Մինչև 1861 թ.-ը քաղաքները բավականին դանդաղ էին զարգանում, եթե չհաշվենք սեծովյան ծաղկող նավահանգիստները՝ Օդեսան և մի քանի այլ քաղաքներ: Չախափնյակում, որ հռչակված էր իր տոնավաճառներով, առևտրի զարգացումը նպաստեց այնպիսի քաղաքների բնակչության որոշակի աճին, ինչպիսիք էին՝ *Խարկովը*, *Պոլտավան*, *Սումին* ու *Ռոմնին*: Քիչ ավելի արագ աճում էր Աջափնյակի քաղաքային բնակչությունը՝ հիմնականում շնորհիվ իրեն արհեստավորների ու առևտրականների հոսքին դեպի այնպիսի քաղաքներ, ինչպիսիք էին Բիլա Ցերկվան, Բերդիչևն ու Ժիտոմիրը: Քաղաքաբնակները կազմում էին Ուկրաինայի բնակչության ընդամենը 10 %-ը, ընդ որում՝ մեծամասնությունն ապրում էր այն քաղաքներում, որտեղ բնակիչների թիվը չէր անցնում 20 հազ.-ից: Միայն Օդեսան էր որ 100 հազ.-ից ավելի բնակիչ ուներ:

Սակայն XIX դարի երկրորդ կեսին արմատական փոփոխություն տեղի ունեցավ: 1870-1900 թ.թ.-ներին քաղաքային բնակչության թվի կտրուկ աճ տեղի ունեցավ, և հատկապես՝ մեծ քաղաքներում: XX դարասկզբին Ուկրաինայում արդեն չորս խոշոր ու ժամանակակից քաղաք կար. Օդեսան՝ ծաղկող առևտրա-արդյունաբերական կենտրոն՝ ավելի քան 400 հազ. բնակչով, Կիևը՝ ներքին առևտրի, մեքենաշինության, վարչական կառավարման և մշակութային կյանքի կենտրոն՝ 250 հազ. բնակչով, Խարկովը՝ Չախափնյակի առևտրի ու արդյունաբերության կենտրոնը՝ 175 հազ. բնակչով, Եկատերինոսլավը՝ Հարավի արդյունաբերական կենտրոնը, որի բնակչության թիվը մի քանի տասնամյակում 19 հազ.-ից հասավ 115 հազ.-ի:

Քաղաքների աճին նշանակալի չափով նպաստում էին 1861 թ.-ից հետո գյուղացիության աշխույժ տեղաշարժերը, առևտրի ու արդյունաբերության ընդլայնումն ու հատկապես երկաթուղիների կառուցումը, որ հնարավորություն տվեց տնտեսական գործունեություն ծավալել մի քանի հարմար տեղաբաշխված արդյունաբերական կենտրոններում: Մեծ քաղաքների զարգացմանը զուգընթաց, փոքր քաղաքները անկում ապրեցին՝ աստիճանաբար վերածվելով քայքայված ու հետամնաց բնակավայրերի, քանի որ ակտիվ քաղաքացիներից շատերը գերադասում էին ապրել այն ժամանակների «մեզապոլիսներում», ուր նրանց համար բազմազան հնարավորություններ էին բացվում:

Այդ ամենը սակայն, ամենևին չէր նշանակում, թե Ուկրաինան արագորեն ուրբանիզացվում է. այստեղ աճում էր ոչ միայն քաղաքային, այլև գյուղական բնակչության թիվը: 1900 թ.-ին քաղաքներում բնակվում էր Ուկրաինայի բնակչության ընդամենը 13 %-ը, որ ավելի քիչ էր, քան Ռուսաստանում (15 %), չխոսելով արդեն Արևմտյան Եվրոպայի մասին: Անգլիայում, օրինակ, այդ ժամանակ արդեն քաղաքաբնակները կազմում էին ամբողջ բնակչության 72 %-ը:

### **Պրոլետարիատի առաջացումը**

Տնտեսական արագ զարգացումը նշանակալից սոցիալական փոփոխությունների հանգեցրեց: Դրանցից ամենակարևորը, ըստ երևույթին դարձավ նոր, չնայած սակավաթիվ խավի՝ պրոլետարիատի առաջացումը:

Արդյունաբերական բանվորները, կամ պրոլետարները, ի տարբերություն գյուղացիների, արտադրության միջոցներ չունեին: Նրանք վաճառում էին ոչ թե իրենց աշխատանքի արդյունքը, այլ՝ սեփական աշխատուժը: Որպես կանոն, այդ մարդիկ ավելի զարգացած ու կրթված էին, քան գյուղացիները, քանի որ նրանց վիճակվել էր աշխատել մեծ ու բարդ արտադրություններում: Խմբային հոգեբանությունն ու համերաշխության զգացումը նրանց մոտ զարգանում էին ավելի արագ, քան գյուղացիների մոտ, քանի որ նրանք կազմավորվել էին բազմահազարանոց կոլեկտիվներում: Եվ ամենակարևորն այն էր, որ բարդ, մասնագիտացված և փոխադարձ կախվածությամբ աշխատանքային գործունեությունը բանվորների մեջ դաստիարակել էր կազմակերպելու և ինքնակազմակերպվելու ընդունակություն, ինչը գյուղացիությանը հասու չէր:

Եթե Ռուսաստանում դեռ XVIII դարից ճորտ գյուղացիները հաճախ «կցվում էին» գործարաններին ու ֆաբրիկաներին, ապա Ուկրաինայում բանվորները քիչ թե շատ նկատելի թվով հայտնվում են միայն XIX դարի կեսերից: Սկզբում նրանցից շատերը գործի էին անցնում

սննդի արդյունաբերության մեջ, հատկապես Աջափնյակի շաքարի գործարաններում: Բայց նրանք դեռ բառի բուն իմաստով պրոլետարներ չէին, այլ մեծ մասամբ սեզոնային աշխատողներ, որ տարվա որոշակի շրջանում կրկին վերադառնում էին իրենց գյուղերն ու մշակում իրենց հողը: Այդ կիսագյուղացիական և կիսապրոլետարական տեսակն ընդհանրապես բնորոշ էր Ռուսական կայսրության համար, իսկ Ուկրաինայի համար՝ հատկապես:

Սակայն ծանր արդյունաբերության մեջ, հատկապես Դոնբասում և Կրիվբասում արդեն կազմավորվում էր իսկական պրոլետարիատը: Հատկապես այստեղ էր ամենամեծ տոկոսը ոչ միայն մշտական, այլև ի ծնե պրոլետարների, որոնց հայրերն ու պապերն էլ էին աշխատել գործարաններում ու հանքահորերում: Սակայն, նույնիսկ նման պրոլետարներից շատերը դեռ պահպանել էին կապը հողի հետ:



*Լուգանսկի պողպատածուլարանի բանվորներ, XIX դարավերջ*

1897 թ.-ին Ուկրաինայում արդյունաբերական բանվորների ընդհանուր թիվը հասել էր արդեն 425 հազ.-ի: Նրանց գրեթե կեսը կենտրոնացված էր Եկատերինոսլավյան նահանգի ծանր արդյունաբերության մեջ: 1863 թ.-ից մինչև 1897 թ.-ը պրոլետարների թիվը երկրամասում աճել էր 400 %-ով, սակայն իսկական պրոլետարիատը ամբողջ բանվորական ուժի միայն 7 %-ն էր կազմում՝ մի փոքրիկ կղզյակ՝ գյուղացիական օվկիանոսում:

Աշխատանքային պայմաններն Ուկրաինայի, ինչպես և ողջ Ռուսական կայսրության արդյունաբերության մեջ, ըստ եվրոպական չափանիշների, պարզապես սարսափելի էին: Նույնիսկ 1890 թ.-ին ընդունված օրենքներով սահմանված որոշ բարելավումներից հետո, գործարաններում ու ֆաբրիկաներում 10; 12 և 15 ժամյա աշխատանքային հերթափոխները առաջվա պես սովորական բան էին: Ընդ որում՝ ոչ անվտանգության տեխնիկա, ոչ բժշկական օգնություն գոյություն չուներ: Իսկ միջին աշխատավարձը (որի մեծ մասը գնում էր սննդի և խոճուկ կացարանի վարձի վրա) կազմում էր Արևմտյան Եվրոպայի համանման բանվորի աշխատավարձի մի չնչին մասը: Եվ զարմանալի չէ, որ նման պայմաններում հաճախակի էին դառնում գործադուլներն ու լուրջ տարածայնությունները բանվորների ու գործատուների միջև:

### **Սոցիալական այլ փոփոխություններ**

Համեմատաբար նոր ձևավորված ևս մեկ խավ՝ մտավորականությունը, նույնպես որոշակի կերպափոխումներ կրեց: Արդյունաբերության զարգացումը, ներհասարակական փոփոխու-



թյունները, օրենքների արդիականացումը, զեմստվոների ձևավորումն ու զարգացումը՝ այս ամենը բարձրացնում էր կրթված մարդկանց պահանջարկը, ինչին կառավարությունն արագ արձագանքեց՝ մեծ թվով մասնագիտական-տեխնիկական ուսումնական հաստատություններ հիմնելով: Ուկրաինայում ուսանողության թիվը 1865 թ.-ի 1,2 հազ.-ից, 1890-ականների կեսերին հասել էր 4 հազ.-ի: 1897 թ.-ին Ուկրաինայում բարձրագույն կրթությամբ արդեն 24 հազ. մարդ կար: Փոփոխվեց նաև մտավորականության մեծ մասի սոցիալական ծագումը: Եթե XIX դարի սկզբին մտավորականների ճնշող մեծամասնությունը ազնվականներ էին, ապա 1900 թ.-ին մտավորականության միայն 20-25 %-ն էր ազնվական կամ հասարակության այլ հարուստ խավերից, մնացածը հասարակ քաղաքացիների, հոգևորականների ու տարատոհմիկ մտավորականների զավակներ էին: Իսկ գյուղացիների ու բանվորների երեխաներն առաջվա նման հազվադեպ էին հայտնվում համալսարաններում, և դրա գլխավոր պատճառը թեկուզև միջնակարգ կրթություն ստանալու հնարավորության պակասն էր, եթե չասենք անհնարինությունը:

Այդ ընթացքում բացվում են նաև կանանց բարձրագույն ուսումնական հաստատություններ, այնպես որ նրանք էլ են դառնում մտավորականության լիիրավ անդամներ: Արագորեն աճում էր ինժեներների ու իրավաբանների, բժիշկների և ուսուցիչների թիվը, որոնք արդեն շատ քիչ էին հիշեցնում ժողովրդից կտրված XIX դարասկզբի երագող-ազնվականներին: Դեմվելով սոցիալական լայն ու ամուր հիմքերի վրա, մտավորականությունն աստիճանաբար դառնում էր իր ժողովրդի, հետևաբար և իր երկրի արդիականացման առաջամարտիկը:

Բայց և այնպես, Ռուսական կայսրության հասարակությունը, ուկրաինականը՝ մասնավորապես, Արևմտյան Եվրոպայի հետ համեմատած, առողջ ու բնական զարգացում չէր ապրում, քանի որ ռուսական և ուկրաինական բուրժուազիան դեռևս քանակապես այնքան փոքր էր և որակապես թերզարգացած, որ գրեթե ոչ մի դեր չէր խաղում հասարակական-քաղաքական հիմնական գործընթացներում: Ինչ վերաբերում է Ուկրաինային, ապա այստեղ բուրժուազիայի զարգացման համար անհրաժեշտ կապիտալը պարզապես չէր բավարարում: Կառավարությունն այնպիսի քաղաքականություն էր վարում, որ կապիտալը հոսում էր Զյուսիս, ներքին առևտուրը (հատկապես տոնավաճառները) գերազանցապես կենտրոնանում էր ռուս վաճառականների ձեռքում, իսկ խոշոր արդյունաբերությունը, ինչպես տեսանք, գրեթե ամբողջովին պատկանում էր արտասահմանցիներին:

Իհարկե շատ հարուստ մարդիկ էլ կային Ուկրաինայում, որոշ հաշվարկներով՝ 100 հազ.-ից ոչ պակաս, սակայն նրանցից շատերի եկամուտը ոչ թե գործարաններից, ֆաբրիկաներից ու առևտրական կազմակերպություններից էր ստացվում, այլ սեփական կալվածքներից: Ուկրաինացիները քիչ էին նաև մանր բուրժուազիայի՝ արհեստավորների ու խանութպանների շարքերում: Ինչպես մեծ, այնպես էլ փոքր բիզնեսը գրեթե ամբողջովին կենտրոնացած էր ռուսների ու հրեաների ձեռքում:

### **Ուկրաինայի արդիականացումը և ուկրաինացիների հետամնացությունը**

Ուկրաինայի արդիականացումը զարմանալի տարօրինակություններով էր ընթանում: Որպես «Եվրոպայի շտեմարան» Ուկրաինայի դերի աճի հետ աճում էր նաև ուկրաինական գյուղի աղքատությունը: Չնայած Եվրոպայում նմանը չունեցող արդյունաբերական աճին, Ուկրաինան շարունակում էր մնալ հետամնաց և հիմնականում գյուղատնտեսական երկիր: Բայց, թերևս, ամենամասնառու տարօրինակությունն այն էր, որ բնակչության հսկայական մեծամասնությունը կազմող ուկրաինացիները համարյա չէին մասնակցում իրենց երկրի դարակազմիկ փոփոխություններին:

Անհավանակա՞ն է թվում: Սակայն վիճակագրությունն անհավանականը դարձնում է ակրն-հայտ: Այն ժամանակվա բարձր որակավորում ունեցող բանվորների՝ հանքափորների ու մետաղագործների 25 և 30 %-ը՝ համապատասխանաբար, կազմում էին ուկրաինացիները, իսկ հաստատուն մեծամասնությունը ռուսներ էին: Նույնիսկ Աջափնյակի շաքարի գործարաններում ուկրաինացիներին հավասար ռուսներ էին աշխատում:

Նույն բանը տեսնում ենք մտավորականության մեջ: 1897 թ.-ին իրավաբանների 16 %-ն էր ուկրաինացի, ուսուցիչների՝ 25 %-ը, իսկ ստեղծագործող մտավորականության միայն 10 %-ը: Մտավոր աշխատանքով զբաղված 127 հազ. մարդկանց միայն երրորդ մասն էր ուկրաինացի: 1917 թ.-ին Կիևի համալսարանի ուսանողության միայն 11 %-ն էր ծագումով ուկրաինացի:

Ապշեցուցիչ էր ուկրաինացիների բացակայությունը քաղաքներում: Ղարերի սահմանագծում

քաղաքային բնակչության երրորդ մասն էր ուկրաինացի, մնացածը հիմնականում հրեաներ ու ռուսներ էին: Որպես կանոն՝ ինչքան մեծ էր քաղաքը, այնքան քիչ ուկրաինացի էր ապրում այնտեղ: 1897 թ.-ին Օդեսայի բնակչության 5,6 %-ն էր ուկրաինացի, իսկ 1920 թ.-ին ընդամենը 2,9 %-ը: 1874 թ.-ին Կիևի բնակչության 60 %-ը ուկրաիններեն համարում էր մայրենի լեզու, 1897 թ.-ին՝ 22 %-ը, իսկ 1917 թ.-ին՝ ընդամենը 16 %-ը: Այսպիսով՝ Ուկրաինայի արդիականացումը շատ քիչ էր առնչվում ուկրաինացիների հետ:

Ի՞նչն էր պատճառը, որ այդքան շատ ոչ-ուկրաինացիներ հայտնվեցին հատկապես այն շրջաններում, որտեղ առավել էր զգացվում արդիականացումը: Պրոլետարիատի մեջ ռուսների թվական գերազանցությունը բացատրվում է ամենից առաջ նրանով, որ Ռուսաստանում, ի տարբերություն Ուկրաինայի, արդյունաբերությունը գոյություն ուներ դեռևս XVIII դարում: Եվ երբ արդյունաբերական անսպասելի բուսն ընդգրկեց Դոնբասի ու Կրիվբասի շրջանները՝ առաջ բերելով որակյալ աշխատուժի մեծ անհրաժեշտություն, ռուս պրոլետարներին այստեղ գրկաբաց ընդունեցին: Զյուսիսից աշխատուժի զանվածային ներհոսքին նպաստեց նաև այն հանգամանքը, որ ճիշտ այդ ժամանակ Ռուսաստանի արդյունաբերությունը լճացում էր ապրում, իսկ Ուկրաինայում հանքափորների ու մետաղագործների աշխատավարձը միջին հաշվով մոտ 50 %-ով գերազանցում էր Ռուսաստանում բանվորների վարձատրությանը:

Քաղաքներում ռուսների քանակն հետևողականորեն աճում էր դեռևս Ռուսաստանին Ուկրաինայի միանալու ժամանակներից: Պաշտոնյաներն ու զինվորները երկար ժամանակով էին մնում այն քաղաքներում, որոնք վարչական ու զինվորական կենտրոնների դեր էին կատարում: Առևտրա-արդյունաբերական կենտրոններում ոչ-ուկրաինացիների թիվը նույնպես աճում էր առևտրի ու արդյունաբերության զարգացմանը համահունչ: 1832 թ.-ին, օրինակ, վաճառականների մոտ 50 %-ը և գործարանների ու ֆաբրիկաների սեփականատերերի 45 %-ը ռուսներ էին. վերը նշված պատճառներով, նրանց մոտ ավելի շատ միջոցներ գտնվեցին առևտրական գործունեության մեջ ներդնելու համար, քան ուկրաինացիների մոտ: Դրա հետ միասին՝ շատ ու շատ ռուս գյուղացիներ, ի վիճակի չլինելով գոյատևել իրենց սակավաբեր հողերի վրա, ստիպված էին գոյության այլ աղբյուրներ փնտրել քաղաքներում: Զյուսիսից եկած անհաջողակ հողագործներն հաճախ Ուկրաինայում դառնում էին հաջողակ առևտրականներ՝ հատկապես Չախափնյակում և Գարավում, ուր առևտրի համար բազում հնարավորություններ կային, և ոչ մի վտանգավոր մրցակցություն՝ տեղի բնակչության կողմից:

Մեծ ու փոքր քաղաքների ոչ-ուկրաինացի բնակչության մի այլ բավականին սովոր էթնիկ խումբ էին կազմում հրեաները: Նկարագրվող ժամանակաշրջանում Աջափնյա Ուկրաինայում (ուր բնակվում էր Ռուսական կայսրության հրեաների մեծ մասը) տնտեսական ակտիվ կյանքի կենտրոնը լեհ ավատատերերի կալվածքներից աստիճանաբար տեղափոխվում է քաղաքները, իսկ 1860-ականների բարեփոխումները հանգեցնում են նաև քաղաքներում հրեաների ապրելու որոշ արգելքների վերացմանը: Արդյունքում՝ այդ տարածաշրջանում փոքրիկ շատ բնակավայրեր դարձան բացարձակապես հրեական, իսկ XIX դարավերջին հրեաների թիվն աճեց նաև խոշոր քաղաքներում: Այդ ժամանակ արդեն Օդեսան, որ աշխարհում հրեական մշակույթի խոշորագույն կենտրոններից մեկն էր, նաև տոկոսային հարաբերությամբ ավելի քան կիսով չափ դարձավ հրեական քաղաք: 1863 թ.-ին Կիևը հրեա ազգության 3 հազ. բնակիչ ուներ, իսկ 1910 թ.-ին՝ 50 հազ.: Այդուհանդերձ, կրթված հրեաները, որպես կանոն, ռուսերեն էին խոսում և, ճիշտն ասած՝ Ուկրաինայի քաղաքներում նպաստում էին ոչ այնքան հրեական, որքան որ ռուսական մշակույթի զարգացմանը:

Չատկապես մեծ քաղաքներն էին հրապուրում մտավորականներից շատերին, որպես կրթության ու մշակույթի կենտրոններ: Ունենալով կրթություն և բարձրակարգ աշխատանք ստանալու լավագույն հնարավորությունները (եթե իհարկե չհաշվենք հրեաներին վերաբերող պաշտոնական սահմանափակումները, որոնցով հրեաների միայն չնչին տոկոսն իրավունք ուներ ընդունվելու զինմագիտներն ու համալսարանները և աշխատելու պետական հիմնարկներում), ոչ-ուկրաինացի քաղաքացիները գերակշռում էին նաև մտավորականության մեջ: Իրականում ուկրաինացի մտավորականները մեծ մասամբ բնակվում էին գյուղերում ու ավաններում և ծառայում էին գեմստվոներում որպես բժիշկ, գյուղատնտես, վիճակագիր, ուսուցիչ: Եվ միայն ուկրաինացիներից քչերն էին պատկանում մտավոր ընտրախավին, զբաղվելով բուն ուկրաինական համալսարանական գիտության, գրականության և ժուռնալիստիկայի զարգացմամբ:

Եվ համենայն դեպս՝ ուկրաինացիներն ինչո՞ւ էին այդպես դժկամությամբ մերվում քաղա-



քային միջավայրին ու մասնակցում իրենց երկրի արդիականացման գործընթացին: Այդ խնդիրն հետազոտողներից շատերը զուտ հոգեբանական բացատրություն էին փնտրում. կամ միտումնավոր ուկրաինասիրություն (հողի նկատմամբ արմատացած անսահման սերը թույլ չէր տալիս ուկրաինացի գյուղացուն թողնել հողագործությունը), կամ ուկրաինատյացների միտումնավոր կարծիքն իբրև թե ուկրաինացիներն իրենց էությանը են ալարկոտ ու պահպանողական: Սակայն երկուսից ոչ մեկն էլ հաստատելու բավականաչափ հիմքեր չի տալիս ուկրաինայի պատմությունը: Կիևյան Ռուսիայի ժամանակներում, ընդհակառակը՝ հենց ուկրաինացիների նախնիներն էին, որ իրենց ժամանակի համար արտակարգ բազմամարդ քաղաքներ էին հիմնում և մեծ մասամբ առևտրով էին զբաղվում: Հեռու չզննանք, դեռ XVII դարում էլ, ուկրաինական բնակչության 20 %-ը քաղաքային միջավայրում էր ապրում: Իսկ XVIII դարասկզբին ոչ թե ռուսները, այլ հենց ուկրաինացիներն էին գերակշռում կայսրության մտավոր ընտրախափում:

*Ուկրաինայում ուրբանիզացիայի և արդիականացման գործընթացներում ուկրաինացիների համեմատաբար թույլ մասնակցությունը բացատրելուն օգնում են XVIII-XIX դարերում պայտեղ գոյություն ունեցող քաղաքական և սոցիալ-տնտեսական պայմանները:* Քանի որ մեծ ու փոքր քաղաքները կայսրության վարչական կենտրոններ էին, նրանցում, որպես կանոն, գերակշռում էին ռուսները, նրանց լեզուն և մշակույթը: Միաժամանակ, քաղաքների ուկրաինացի բնակչությունը մեծ մասամբ ծուլվել էր, իսկ որոշ դեպքերում էլ՝ դուրս էր մղվել քաղաքներից: Բոհդան Կրավչենկոն արդարացիորեն նկատում է, որ ճորտատիրական կարգերի ժամանակ գյուղաբնակ ուկրաինացիների քաղաք չտեղափոխվելու պատճառը կոռի գերակայությունն էր բահրայի նկատմամբ: Ի տարբերություն ռուս գյուղացիների, որոնց հենց իրենց կալվածատերերն էին հաճախ ստիպում փող վաստակելու համար գնալ քաղաք, ուկրաինացի գյուղացիներին իրենց բերրի հողերին «կապում էր» ոչ այնքան «անսահման սերը», որքան այն օգուտը, որ նրանցից քամում էին իրենց տերերը: Իսկ դա էլ իր հերթին սահմանափակում էր ուկրաինացի գյուղացու ոչ միայն տեղաշարժը, այլև ձեռք բերելու այն փորձն ու մասնագիտական հմտությունները, որ անհրաժեշտ էին քաղաքային միջավայրին համակերպվելու համար, և որոնք, ի տարբերություն ուկրաինացիների, հասցրել էին ձեռք բերել ռուսներն ու հրեաները:

Ահա թե ինչու, երբ սկսվեց արդյունաբերականացումն ու ուրբանիզացիան, ուկրաինացիները պատրաստ չէին ոչ մեկին, ոչ մյուսին: Եվ այն ժամանակ, երբ ռուսներն հարյուրավոր մղոններ ծամփա էին կտրում՝ ուկրաինայի Հարավի գործարաններն հասնելու համար, ուկրաինացի գյուղացիները, և նույնիսկ նրանք, ում գյուղը գտնվում էր հենց գործարանային նորակառույցների կողքին, նախընտրում էին անցնել հենց նույն հարյուրավոր, իսկ երբեմն էլ՝ հազարավոր մղոնները դեպի Արևելք՝ հող գտնելու համար: Քիչ ժամանակ կանցնի և այդ երևույթի սոցիալական, մշակութային ու քաղաքական ծանր հետևանքներն ամենաամօքական ձևով կազդեն ուկրաինայի պատմության ընթացքի վրա:

## Ուկրաինայի ազգային փոքրամասնությունները

Ուկրաինայի սոցիալ-տնտեսական արդիականացման կարևորագույն հետևանքներից մեկը, այսպիսով, եղավ բնակչության էթնիկ կազմի փոփոխությունը: Քանի դեռ այդ երկրի տնտեսությունը գրեթե լրիվ երկրագործական էր, ուկրաինացիները կազմում էին ազգաբնակչության ճնշող մեծամասնությունը: Այսպես՝ 1800 թ.-ին ուկրաինացիներն ամբողջ ուկրաինայում 90 % էին կազմում, իսկ Չախաֆնյակում այդ թիվն հասնում էր 95 %-ի: Սակայն, XIX դարի ընթացքում նկատելի փոփոխություն տեղի ունեցավ. ուկրաինացիների քանակն իջավ մինչև 80 %, այն դեպքում, երբ ռուսների, հրեաների և մյուս փոքրամասնությունների տոկոսը կտրուկ բարձրացավ, ինչն զգալիորեն կապված էր արդյունաբերության և առևտրի զարգացման արագ տեմպերի հետ, որում հիմնականում ներգրավվեցին ոչ թե ուկրաինացիները, այլ փոքրամասնությունների ներկայացուցիչները:

### Ռուսներ

1654 թ.-ի Պերեյասլավյան համաձայնության ժամանակից սկսած, ռուսների հաճախ կարելի էր հանդիպել ուկրաինայում, բայց՝ դեռևս քիչ թվով: XVIII-XIX դարերի ընթացքում ռուսների ամենամեծաթիվ խավը, թերևս, քաղաքային կայազորների զինվորականներն էին.

ամեն դեպքում, ուկրաինացիները միևնույն՝ «մոսկալ» բառով կոչում էին և՛ ռուսներին, և՛ զինվորներին: Եթե իկ ռուսների առավել մանր ենթախմբերի մեջ էին ազնվականները, որոնց կալվածքներ էին հասել ուկրաինական Հարավում, ցարական պաշտոնյաները, ինչպես նաև (հատկապես Չախաֆնյակում) վաճառականները: XVIII դարավերջին և XIX դարասկզբին, երբ Հարավում նոր հողեր տրամադրվեցին մշակության համար, ռուս վերաբնակների մշտական, չնայած ոչ մեծ մի հոսք հեղեղեց այդ շրջանները: Դրանք մեծ մասամբ հմահավատներ էին, աղանդավորներ և այլ կրոնական այլադավաններ: Եվ միայն XIX դարավերջին, այսինքն՝ արդյունաբերականացման ժամանակաշրջանում սկսվեց ռուս բնակչության զանգվածային հոսքը Ուկրաինա, հատկապես՝ Հարավի արդյունաբերական և առևտրական կենտրոնները: Ռուսների քանակն ավելանում էր նաև կամավոր ռուսացման հաշվին, որ տարածված էր ամենից առաջ ուկրաինացի ազնվականների մեջ: Այդպիսով, ինչպես արդեն ասվեց, 1897 թ.-ին ռուսները կազմեցին Ուկրաինայի բնակչության 11,7 %-ը:

Համոզված իրենց մշակութային գերազանցության մեջ, ինչպես նաև՝ որ Ուկրաինան «բուն ռուսական երկիր է», ռուսները, որպես կանոն, իրենց ներդրումն չէին տալիս սովորելու ուկրաիններին լեզուն, և հարգանք ու հետաքրքրություն չէին դրսևորում ուկրաինական սովորությունների ու ավանդույթների նկատմամբ: Դրա փոխարեն ձգտում էին ռուսականացնել ուկրաինական կյանքի բոլոր ոլորտները, ինչը նրանց, ճիշտն ասած, մեծ քաղաքներում համեմայն դեպս, հաջողվեց: Միևնույն ժամանակ, ռուսների հետ ուկրաինացի գյուղացիների հարաբերություններում որևէ կտրուկ հակամարտություն չէր դրսևորվում, համ էլ ուկրաինական գյուղի շփումներն ու առնչությունները Ռուսաստանից գաղթածների հետ, որոնք նախընտրում էին տեղավորվել քաղաքներում ու գործարանային ավաններում, վերին աստիճանի սահմանափակ էին: Ուկրաինացիներն հասկանում էին նաև, որ ռուս գյուղացին ու բանվորը նույնչափ անողոր շահագործման են ենթարկվում, ինչպես և իրենք: Վերջապես՝ ընդհանուր ուղղափառ հավատն ու լեզուների նմանությունը ոչ ուրիին էին դարձնում երկու ժողովուրդների միջև եղած տարբերությունների հաղթահարումը:

Այս ամենը սակայն չէր նշանակում, թե ուկրաինացի գյուղացին իրեն ամենևին չէր տարբերում հյուսիսցիներից: Ռուս մորուքավոր մուժիկին նրանք կոչում էին «կացապ» («կակ ցապ», այսինքն՝ «նոխազի պես»), իսկ ռուսներն էլ, որպես պատասխան «հաճոյախսություն», ուկրաինացիներին կոչում էին «խոխուլ» (ակնարկելով կոզակի սափրած զլխի վրա թողնվող մազափունջը): Սակայն այդ «փոխադարձ սիրալիրությունը» ոչ մի կերպ չէր համապատասխանում այն բարդ ու ծայրաստիճան լարված զգացումներին, որ տածում էին ուկրաինացի մտավորականները Ռուսաստանի մշակութային գերակայության նկատմամբ:

### Լեհեր

Լեհերն ուկրաինայում ապրում էին ավելի վաղ ժամանակներից, քան ռուսները: XVI-XVII դարերում լեհերը մասնակցում էին ուկրաինական սահմանային գոտու յուրացմանը, և չնայած 1648 թ.-ի ապստամբությունը նրանց քշեց Չախաֆնյակից, սակայն նրանք պահպանեցին Դնեպրի աջափնյա տարածաշրջանները վերահսկելու իրավունքը: Եվ նույնիսկ այն քանից հետո, երբ 1795 թ.-ին Աջափնյակը մտավ Ռուսական կայսրության մեջ, նրանք Աջափնյակը դիտում էին որպես Լեհաստանի անջակտելի մասը: Այն, որ լեհերը շարունակում էին նշանակալից ազդեցություն գործել Աջափնյակի ամբողջ կյանքի վրա, ամենևին չէր խոսում այնտեղ լեհ բնակչության թվային գերակշռության մասին: XIX դարի կեսերին լեհերի թիվն հասնում էր ընդամենը 500 հազ.-ի. 1795 թ.-ին նրանք կազմում էին ուկրաինայի բնակչության 10 %-ը, 1909 թ.-ին՝ 6,4 %-ը: Իրականում լեհերի գերազանցությունն ապահովվում էր ընտրախափի հարստությամբ ու ազդեցությամբ: 1850 թ.-ին մոտ 5 հազ. լեհ կալվածատեր տնօրինում էին Աջափնյակի հողերի 90 %-ը և ունեին 1,2 մլն ճորտ: Եթե նկատի ունենանք նաև այն, որ Դնեպրի աջափնյա տարածաշրջանում էր բնակվում ուկրաինայի ազնվականության 60 %-ը, ապա Աջափնյակը կարելի է դիտել որպես հին կարգերի պատվար: Նույնիսկ գյուղացիության ազատագրումը չսասանեց հեքիաթային հարստության տեր այնպիսի ավատատերերի դիրքերը, ինչպիսիք էին՝ Պոտոցկիները, Չորտոքիյսկիները, Բրանիցկիներն ու Ջասլավսկիները: Այդ տոհմերից յուրաքանչյուրը հարյուր հազարավոր ակր հողերի էր տիրում: Ունեցած հսկայական հարստությունը նրանց հնարավորություն տվեց ճորտի աշխատանքը հեշտությամբ փոխարինել վարձու աշխատանքով և լայնորեն կիրառել գյուղատնտեսական տեխնիկան:

Սակայն լեհական շլախտայի ճնշող մեծամասնությանը ապրանքային հողագործության



անցնելը մեծ բարդությունների առաջ կանգնեցրեց: XIX դարավերջին նրանցից շատերը վաճառեցին իրենց կալվածքներն ու տեղափոխվեցին քաղաք, որտեղ դարձան պաշտոնյաներ, վաճառականներ ու ազատ մասնագիտությունների մարդիկ: Այնուամենայնիվ, նույնիսկ 1904 թ.-ին Աջափնյակում մասնավոր հողատիրությունների 46 %-ը և արդյունաբերական արտադրության 54 %-ը մնում էր լեհերի ձեռքին:

Լեհ կալվածատերերի և ուկրաինացի գյուղացիության հարաբերությունները մշտապես լարված էին մնում: Այդ լարվածությունը որոշ չափով թուլացրեց ճորտատիրական իրավունքի վերացումը: Սակայն հետո, երբ 1863 թ.-ի լեհական ապստամբության ժամանակ խռովարարներից ոմանք, ձգտելով իրենց կողմը գրավել գյուղացիությանը, տարածեցին այսպես կոչված՝ «ուկրաինացիները», ուր հայտարարվում էր, թե այդ իրենք, և ոչ թե ցարն է գյուղացիներին ազատություն շնորհել, այդ ջանքերի արդյունքն աննշան եղավ: Գյուղացիներից շատ քչերը միացան իրենց լեհ «պաներին», փոխարենը՝ մոտ 300 հազ. ուկրաինացի համալրեցին հակալեհական աշխարհագրի շարքերը:

Լեհ ազնվականներ կային, որոնք միանգամայն անկեղծորեն էին հետաքրքրվում Ուկրաինայով: Ամեն դեպքում, նրանց հետաքրքրությունը քաղաքական կամ տնտեսական նպատակներ չէր հետապնդում: Վերջիվերջո՝ այստեղ դարերով իրենց նախնիներն էին ապրել: Եվ ահա՝ XIX դարի կեսերին որոշ լեհ շլախտիչների մոտ բուռն հակում առաջացավ դեպի ամենայն ուկրաինականը: Այսպես օրինակ՝ *Տիմկո Պարուրան* իր ստեղծագործություններում օգտագործում էր ուկրաինական ժողովրդական պոեզիան, իսկ Աջափնյակի լեհ գրողների «ուկրաինական դպրոցի» ներկայացուցիչները, որոնց թվում էր և նշանավոր *Յուլիոշ Ալովակցկին*, հաճախ էին գրում ուկրաինական թեմաներով: Ինչպես հետագայում կտեսնենք, շատ ու շատ լեհ կամ լեհացած ազնվականներ անհամեմատ մեծ դեր ունեցան ուկրաինական ազգային շարժման մեջ: Այս ամենը սակայն չվերացրեց լեհ կալվածատերերի և ուկրաինացի գյուղացիության միջև գոյություն ունեցող տարածայնություններն ու շահերի խիստ անհամապատասխանությունը, և երկու ժողովուրդների ավանդական հարաբերություններում ընդհանուր առմամբ էական որևէ փոփոխություն տեղի չունեցավ:

### Հրեաներ

Մյուս հիմնական էթնիկ փոքրամասնություններից հրեաներն Ուկրաինայում ապրում էին վաղուց ի վեր՝ դեռևս Կիևյան Ռուսիայի ժամանակներից: Իսկ զանգվածային բնակեցումը ուկրաինական հողերում սկսվեց միայն XVI դարում՝ լեհական շլախտայի հովանավորությամբ, և շարունակվեց XVII դարում:

Սակայն Ուկրաինայի այդ հնագույն բնակիչները ռուսական ցարերի համար համեմատաբար նոր ու արտասովոր հպատակներ էին: Չէ՞ որ Աջափնյակը, որտեղ ապրում էին գրեթե բոլոր ուկրաինական հրեաները, Ռուսական կայսրության կազմի մեջ մտավ միայն 1795 թ.-ին: Եվ ցարական քաղաքականությունն էլ, այդ նոր հպատակների նկատմամբ սովորական չէր: Ռուս վաճառականներին հրեաների մրցակցությունից պաշտպանելու համար, ցարական կառավարությունն արգելեց հրեաներին բնակվելու բուն Ռուսաստանի հողի վրա: Այսպես կոչված՝ «նստակեցության գիծը» սահմանափակում էր հրեաների բնակության գոտին կայսրության նոր նվաճած արևմտյան ծայրամասերով՝ Լիտվա, Բելոռուսիա և Աջափնյա Ուկրաինայի մեծ մասը: «Նստակեցության գիծն» աննշան փոփոխություններով գոյատևեց մինչև 1917 թ.-ը:

Ամբողջ XIX դարի ընթացքում, հատկապես երկրորդ կեսին, հրեա բնակչության թիվը կտրուկ աճեց: Եթե Ռուսական կայսրության բնակիչների ընդհանուր թիվը 1820-1880 թվականներին ավելացավ 87 %-ով, ապա հրեաների թիվն աճեց 150 %-ով: Աջափնյակում համապատասխան թվերն ավելի բարձր էին: 1844-1913 թ.թ.-ների ընթացքում բնակչության թիվն ավելացել էր 265 %-ով, հրեաներինը՝ 844 %-ով: Հրեա ազգաբնակչության նման ակնառու աճն ամենից առաջ բացատրվում էր նրանով, որ նախ՝ հրեական կրոնն օրինում ու քաջալերում էր բազմազավակությունը, երկրորդ՝ հրեաներն ավելի քիչ էին տուժում պատերազմներից, սովից ու համաճարակներից, և վերջապես՝ մանկական ցածր մահացությունը, որ արդյունք էր հրեաների համայնքների կուռ միասնության, փոխօգնության, սեփական բժիշկների բավարար առկայության և այլն: XIX դարավերջին Ռուսական կայսրությունում բնակվում էր 5,2 մլն հրեա, որոնցից ավելի քան 2 մլն-ը՝ Ուկրաինայում: Այդպիսով՝ եթե ամբողջ կայսրությունում նրանք կազմում էին բնակչության 4 %-ը, ապա Ուկրաինայում՝ 8 %-ը, իսկ Աջափնյակում՝ 12,6 %-ը:

Հրեաները վաղուց ի վեր ապրում էին քաղաքներում, իսկ Ռուսական կայսրությունում նրանց ընդհանրապես արգելված էր գյուղերում բնակություն հաստատելը: Եվ զարմանալի չէ, որ հրեաները կազմում էին Ուկրաինայի քաղաքային բնակչության 33 %-ը, իսկ Աջափնյակի գյուղաքաղաքներում այդ թիվն հասնում էր 70-80 %-ի: Հրեական բնակավայրերն էլ համահավասար, փակ, ավանդապաշտ համայնքով մի բովանդակ աշխարհ էր, առանձնահատուկ ու ինքնաբավ, ուր իշխում էր հրեական խիստ հետևողական հավատը, մշակույթն ու լեզուն (*իդիշ*), մեծ ազդեցությամբ էին օժտված հոգևորականները (*ռաբբիները*), ինքնակառավարումն իրականացնում էին ընտրովի մարմինները (*կազալներ*), իսկ «արտաքին» աշխարհի հետ շփումները սահմանափակվում էին միայն տնտեսական կարիքները հոգալով: Նման բնակավայրերի գերբնակվածությունն ու աղքատությունը ասելիք էր դարձել, նրանց աղքատիկ տնտեսությունը պարզապես չէր կարող կերակրել այդ բազմամարդ համայնքը: Այդ բնակավայրերում, ուր վաստակելու հնարավորությունները խիստ սահմանափակ էին, իսկ մրցակցությունը՝ շատ բարձր, գոյությունը պահպանելու համար պահանջվում էր արտակարգ աշխատասիրություն, վարպետություն, և հնարամտություն:

Ուկրաինայի հրեա բնակչության մոտ երեք քառորդը արիեստներով ու մանր առևտրով էր իր հացը վաստակում: Այդ՝ ամենևին ոչ ունևոր խանութպաններն ու պանդոկապանները, դերձակները, կոշկակարներն ու ոսկերիչները կազմում էին հրեաների «միջին դասը»: Ոչ որակյալ բանվորները, որ հազիվ էին կարողանում իրենց զուլվեր պահել պատահական վաստակով, կամ պարզապես աղքատ, ողորմությամբ ապրողները կազմում էին աշխատունակ հրեաների մոտ 20 %-ը: Հրեա բնակչության մնացած 5 %-ը՝ նրանց վերնախավը, իր հերթին բաժանվում էր երկու ենթախմբի. մի կողմից՝ ռաբբիններն ու այլ՝ գերապատիվ «դպիրներն» էին, որ հսկայական ազդեցություն ունեին հրեական ողջ համայնքի վրա, մյուս կողմից՝ հարուստ կապիտալիստները, որոնց 1872 թ.-ին պատկանում էր Ուկրաինայի օղու արտադրության 90 %-ը, սղոցարանների 56 %-ը, ծխախոտի արտադրության 48 %-ը և շաքարի արտադրության 33 %-ը: Կրթություն ստանալու հնարավորությունների ընդլայնման հետ՝ շատ հրեաներ աշխարհական դարձան կամ «ռուսացան», համալրելով մտավորականների շարքերը՝ հատկապես բժիշկների ու իրավաբանների: Իսկ արդյունաբերության զարգացման հետ՝ շատ հրեաներ (որոշ տվյալներով՝ 38 %-ը) աշխատանք գտան գործարաններում ու ֆաբրիկաներում:

Սակայն փոփոխությունների հետ նաև նոր դժվարություններ առաջացան՝ ի լրումն այն բոլորի, որոնց բախվում էին հրեաները Ռուսական կայսրությունում: Հրեա բնակչության արագ աճի հետ աճեց նաև տնտեսական մրցակցությունը ոչ-հրեաների հետ: Մի քանի ձեռնարկատերերի ու վաճառատների կեղեքիչ գործունեությունը, առավել ևս՝ կառավարության ուժեղացող հրետայաց քաղաքականությունն ու հետադիմական խմբավորումների ջարդարական քարոզչությունը՝ այս ամենը միասին XIX դարավերջին նպաստեցին հրեաների նկատմամբ թշնամության խորացմանը, որն իսկապես ջարդարության վերածվեց 1881 և 1903-1905 թ.թ.-ների: Հարյուրավոր մարդիկ զոհվեցին, համայնքները միլիոնների վնաս կրեցին: Ջարդերի մեծ մասի կազմակերպիչներն այսպես կոչված՝ «Ռուս ժողովրդի միության» և տխրահռչակ «սև հարյուրյակայինների» ազգայնամուլներն էին: Կառավարությունը եթե չէր էլ օժանդակում ջարդարարներին, ապա հազվադեպ էր նաև խոչընդոտում: Այդ ջարդերն ու ավերածությունները հեռուն գնացող հետևանքներ ունեցան: Դրանք սրեցին հրեաների անպաշտպանվածության առանց այդ էլ երբեք չթացող զգացումը և մղեցին Ռուսական կայսրությունից զանգվածային արտագաղթին: 1914 թ.-ին արդեն 1,2 մլն «ռուսական» հրեաներ վերաբնակվել էին ԱՄՆ-ում:

Ընդհանրապես ասած, հրեաների և ուկրաինացիների հարաբերություններն էլ բարեկամական չէին և դժվար թե երբևէ լինեին: Երկու ժողովուրդ դարեր շարունակ գոյատևում էին կառուցվածքով հակամարտ, չնայած փոխադարձ կախվածության մեջ գտնվող միջավայրում: Հրեայի համար ուկրաինացին խեղճ ու հետամնաց գյուղի մարմնավորումն էր, իսկ հրեան ուկրաինացու համար՝ օտար, շահագործող քաղաքի մարմնավորումը, որ մթերքն իրենից էժան գնում ու ապրանքն իրեն եռապատիկ թանկ էր վաճառում: Ուկրաինացի գյուղացին ռուս պաշտոնյայից վախենում էր, լեհ կալվածատիրոջը՝ ատում, իսկ հրեան, ով հաճախ գոյությունը պահպանելու այլ միջոց չէր ունենում, ստիպված էր լինում գործել որպես մեկ այս, մեկ այն կողմի ներկայացուցիչ կամ միջնորդ: Կրոնի ու մշակույթի առումով էլ հրեան և ուկրաինացին ընդհանուր քիչ բան ունեին, և դա ավելի էր խորացնում նրանց միջև եղած տարբերությունները:



Այդ փուլում ավելի լավ չէր հարաբերությունները նաև երկու ժողովուրդների մտավորականության միջև: Հրեա մտավորականությունն ազգային կողմնորոշման տեսակետից իրեն համար միայն երկու հնարավորություն էր տեսնում՝ ծուլվել իշխող ռուսական մշակույթին, կամ ձգտել ստեղծելու սեփական ազգային ինստիտուտներ: Հրեաներին անհեռանկարային էր թվում առավել սերտ կապեր հաստատելն ուկրաինացիների հետ, որոնք մշակույթի, տնտեսական ու քաղաքական առումներով այնքան էլ շատ բան չէին կարող առաջարկել իրենց: Իր կողմից, ուկրաինական մտավորականությունը դատապարտում էր հրեաների հակվածությունը. դարեր շարունակ ուկրաինացիների միջավայրում ապրող հրեաներն իրենց նույնացնում էին ոչ թե ուկրաինացիների, այլ՝ ավելի ուժեղ ռուսների հետ: Այնուամենայնիվ, եղան նաև փոխըմբռնման, և նույնիսկ համագործակցության փորձեր. նշենք թեկուզև *Միխայլո Դրահոմանովի* փոխհարաբերությունները *Արոն Լիբերմանի* հետ, կամ՝ մի կողմից՝ *Սիմոն Պետլուրայի* և մյուս սոցիալիստների և մյուս կողմից՝ նշանավոր սիոնիստ *Վլադիմիր ժարտինսկու* հարաբերությունները: Սակայն այդ փորձերը շատ քիչ ազդեցություն ունեցան իրարաբնույթությունների և երկու ժողովուրդների փոխհարաբերությունների ընդհանուր ընթացքի վրա, որոնք շարունակում էին գոյատևել որպես մոտ հարևաններ, բայց միաժամանակ՝ միմյանցից զրեթե լրիվ կտրված: *Եվ երկու կողմից էլ շատերը հակված էին իրենց մեջ պահելու հին վիրավորանքները, փոխանակ փնտրելու և գտնելու ընդհանուր հետաքրքրություններ ու շահեր, և դրանց հիմքի վրա հասնել լիովին հնարավոր և հույժ անհրաժեշտ փոխըմբռնման:*

\* \* \*

XIX դարավերջին Արևելյան Ուկրաինայի սոցիալ-տնտեսական զարգացումը բնորոշում են երեք հիմնական գծերը. գյուղական շրջանների մեծ մասի լճացումը, Կրիվոյ Ռոզի և Դոնբասի արագ արդյունաբերականացումը և ոչ-ուկրաինացիների ստվարացող ներկայությունը: Ինչպես համոզվեցինք, արդյունաբերության զարգացմանն ու քաղաքների աճին սերտորեն մասնակցում էին հատկապես ոչ-ուկրաինացիները, ամենից առաջ՝ ռուսներն ու հրեաները:

Իսկ ուկրաինացիները: Նրանք հիմնականում մնում են գյուղերում: Այսպես առաջանում է սոցիալ-տնտեսական երկու բևեռ՝ լճացած, հետամնաց գյուղ, որի հետ հիմա առավել, քան երբևէ, նույնացնում են ուկրաինացիներին, և հարածուն, արագ վերափոխվող ուկրաինական հասարակություն, որում սակայն, որքան էլ տարօրինակ թվա, որոշիչ դեր են խաղում ոչ-ուկրաինացիները: Մեկ դար առաջ ծագած այդ որոշիչ տարբերությունն ինչ-որ չափով գոյություն ունի մինչև այսօր:



## ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

XIX դարասկզբին ցարական կառավարությունը դեռևս ի վիճակի էր առաջնորդի դերում հանդես գալու, նոր գաղափարներ կյանքի կոչելու և երկրի հետագա զարգացման ուղիները նշելու: Սակայն դարավերջին կայսերական ընտրախավը սպառեց իր հնարավորությունները, կորցրեց իր ուժերի նկատմամբ վստահությունն ու հասարակության մեջ տեղի ունեցող փոփոխություններին համարժեք արծագանքելու կարողությունը: Հասարակությունը էլ իր հերթին այդ անկարողությանը արծագանքեց նրանով, որ առաջ բերեց առավել աշխույժ ու ստեղծագործ ոգով նոր խավեր ու խմբավորումներ: Խոսքն ամենից առաջ մտավորականության մասին է, որն իր վրա վերցրեց հասարակության առաջնորդող դերը, հատկապես այն կարևոր փոփոխություններից հետո, որ արդյունք էին 1860-1890-ական թվականների բարեփոխումների: Բախվելով կառավարության պահպանողական, նույնիսկ հետադիմական դիրքորոշմանը, մտավորականությունը հասարակության վերակառուցման վերաբերմամբ պարզապես գաղափարներ առաջադրելուց աստիճանաբար անցավ այդ գաղափարները կյանքի կոչելու ունակ կազմակերպական կառույցներ ստեղծելուն, անհրաժեշտության դեպքում՝ նույնիսկ հեղափոխական մեթոդներով:

Ռուսական Ուկրաինայում մտավորականությունը միաժամանակ պայքարում էր և՛ ազգային խնդիրը լուծելու, և՛ սոցիալական արդարության համար: Դա ուժից վեր աշխատանք էր: Համեմատաբար սակավաթիվ ու ավելի մեկուսացած, քան ռուսականը, ուկրաինական մտավորականությունը լուրջ ղեկավարություն էր կրում կապ հաստատելու համար անգրագետ ու անտարբեր զանգվածների հետ, որոնց վրա հետո պիտի հենվեր: Նրա առջև ծառայած երկակի նպատակը կրկնակի ավել ղեկավարություններ էր ծնում և առավել դաժան ճնշումների տեղիք էր տալիս: Մշտական երկընտրանքը՝ որի՞ն առավելություն տալ՝ ազգային՞, թե՞ սոցիալական խնդիրների լուծմանը, շփոթություն ու պառակտում էր առաջացնում ուկրաինական մտավորականության շարքերում: Այնուամենայնիվ, չնայելով ցավազին կորուստներին ու անհաջողություններին, ուկրաինական շարժումն հզորանում էր, և XX դարասկզբին արդեն զրեթե պատրաստ էր իր ավանդական նեղ սոցիալական բազայի սահմաններից դուրս գալու:

### Ուկրաինասերներ

Ուկրաինական շարժումը, որ 1847 թ.-ին Կիրիլ-Մեֆոդյան ընկերության ջախջախումից ծանր կորուստներ կրեց, 1855 թ.-ին, գերպահպանողական Նիկոլայ Առաջինի մահից հետո, կրկին գլուխ բարձրացրեց: Աքսորից վերադարձած Միկոլայ Կոստոմարովը, Վասիլ Բիլոզյորսկին և Տարաս Շևչենկոն Պանտելեյմոն Կուլիչի հետ հավաքվեցին Պետերբուրգում: Այդ ուկրաինասեր-վետերանները (նրանցից մի քանիսն արդեն որոշակի հասարակական դիրքի էին հասել, օրինակ՝ Կոստոմարովը պատմության հայտնի պրոֆեսոր էր), իրենց շուրջն համախմբելով տասնյակից ավել երիտասարդ ուկրաինացիների, կայսրության մայրաքաղաքում հիմնեցին *«Հրոմադա»*\* խմբակը: Ուկրաինական մտավորականության նման խմբակները, որ հիմնվեցին նաև այլ տեղերում, մինչև դարավերջ ազգային շարժման իսկական դպրոց դարձան շատ գործիչների համար:

\* *Հրոմադա* (ուկր.) - Համայնք



«Յրոմադայի» հիմնական հոգսը ուկրաինացիների, հատկապես գյուղացիության վիճակի բարելավումն էր: Բոլոր գործիչները, բացի Շևչենկոյից, համամիտ էին այն բանում, որ իրենց կազմակերպությունը պետք է լինի ապաքաղաքական և կենտրոնաճառ ժողովրդական զանգվածների լուսավորության գործին: Կոստոմարովն ու Կուլիշը համառորեն պնդում էին, որ պետք է սահմանափակվել բացարձակապես մշակույթի բնագավառով, և խուսափում էին արմատականության ցանկացած դրսևորումից, որը կարող էր իշխանությունների դժգոհությունն առաջացնել:

Իրենց գաղափարները ժողովրդականացնելու համար պետերբուրգյան «Յրոմադան» իշխանություններից մեծ դժվարությամբ թույլտվություն ստացավ Ռուսական կայսրությունում առաջին ուկրաինական «Օսնովա» («Հիմք») ամսագրի հրատարակության համար, որն սկսեց լույս տեսնել 1861 թ.-ից: Ամսագրի հրատարակման համար միջոցներ տրամադրեցին երկու բարգավաճող ուկրաինացի՝ Վասիլ Տարնավսկին և Յրիհորիյ Յալախանը: «Օսնովան» իր ընդամենը 22-ամյա գոյության ընթացքում ամբողջ կայսրությունով մեկ ցրված ուկրաինական մտավորականությանը համախմբելու, նրա ազգային ինքնագիտակցությունը խթանելու միջոց ծառայեց:

Մայրաքաղաքի ռուս մտավորականությունը բարյացակամորեն ու ընթրումով մոտեցավ ուկրաինացիների գործունեության աշխուժացմանը: Ռուսական ամսագրերն ուկրաիներեն լեզվով հոդվածներ էին տպագրում և ընդհանրապես աջակցում էին ուկրաինական մշակույթի զարգացմանը: Հրապարակային ընթերցումներին, ռուս գրականության այնպիսի տիտանների կողքին, ինչպիսիք էին Տուրգենևն ու Դոստոևսկին, հայտնվում էր Շևչենկուն: Մտու՛մ են, որ ժողովուրդը Շևչենկոյին ավելի ջերմ էր ընդունում, քան Դոստոևսկուն: Տուրգենևը ռուսերեն թարգմանեց մարդու հոգին տակնուվրա անող, ուկրաինայի ճորտերի կյանքը պատկերող *Մարկո Վոլչոկի* պատմվածքները, որոնք ռուս ընթերցող հասարակության վրա այնպիսի տպավորություն թողեցին, ինչպես Յարիեթ Բիչեր-Սթոուի «Քեռի Թոմասի խրճիթը»՝ աներիկացիների վրա: Ե՛վ ռուս, և՛ ուկրաինացի մտավորականների նպատակը նույնն էր՝ ժողովրդին ծառայելը:

Միևնույն ժամանակ, Կիևում, խանդավառված երիտասարդների մի խումբ (հիմնականում ռուսոդներ), որ նույնպես ուկրաինության ջատագովներ էին, հիմնեցին իրենց «Յրոմադան»: Մի քանի հարյուր անդամ ունեցող այդ խումբը հիմնականում կենտրոնացավ անգրագետ գյուղացիների համար կիրակնօրյա դպրոցների ցանց ստեղծելու վրա: 1859-1862 թ.թ.-ներին Կիևի նահանգում հարյուրավոր աշակերտներ ունեցող մի շարք նման դպրոցներ էին գործում: Սակայն, հեռանկարի առումով, կիևյան «Յրոմադայի» կարևոր առանձնահատկությունն այն էր, որ այստեղ համախմբվել էին ուկրաինական մտավորականության նոր տեսակի ներկայացուցիչներ:

1860-ականների սկզբում Աջափնյակի լեռ կամ լեռացած շլախտայի միջավայրից ռուսոդների մի փոքրիկ խումբ առանձնացավ, որոնք, գիտակցելով գյուղացիության դարավոր շահագործման անարդարացիությունը, որոշեցին ավելի մերձենալ այն ժողովրդին, ում միջավայրում իրենք ապրում էին: *Վոլոդիմիր Անտոնովիչի գլխավորած այդ խմբին, որ խոսում էր ուկրաիներեն և կրում էր ուկրաինական հագուստ ու պահպանում ուկրաինական ավանդույթները, կոչեցին խլոպումաններ:*

1863 թ.-ի լեռական ապստամբության նախօրեին խլոպումանները բացահայտորեն կապերը խզեցին լեռական հասարակության հետ, իրենց հայտարարեցին ուկրաինացիներ և համալրելով Կիևի «Յրոմադայի» շարքերը՝ լծվեցին գյուղացիության լուսավորության գործին: Դրա հիմնական դրոպապատճառը պարտքի զգացումն էր ժողովրդի հանդեպ, որն արտահայտված էր մոսկովյան թերթերից մեկում տպագրված նրանց «բաց նամակ»-ում. «Մենք՝ որպես անհատներ, որ օգտվում ենք բարձրագույն կրթության ընձեռած առավելություններից, պարտավոր ենք մեր ողջ ուժերը ներդնել մեր ժողովրդի լուսավորության գործում, ընթրնել նրա կարիքներն ու աշխատել բավարարել դրանք: Դարգ ասած՝ ժողովուրդն իր ներքին կատարելագործման ճանապարհով պետք է հասնի այն մակարդակին, որին որ ինքն արժանի է»:

Դավաճանության մեջ լեռերի մեղադրանքին ի պատասխան, Անտոնովիչը, որ լեռացած ուկրաինական ազնվական հին տոհմի գավակ էր, «Օսնովա»-ում հրապարակեց իր հայտնի «Իմ խոստովանանքը», որում մատնանշում էր, թե Աջափնյակի ազնվականությունն իր առջև երկու ճանապարհ ունի՝ կամ «վերադառնալ» ուկրաինայի ժողովրդի գիրկն ու ի բարօրություն նրա՝ անձնվեր աշխատանքով ձգտել քավելու բազմադարյա շահագործման մեղքը,

կամ՝ ընդմիշտ մնալ որպես զազրելի պորտաբույծ-հացկատակ և վաղ թե ուշ, իր կամքից անկախ, հեռանալ Լեհաստան: Ընտրելով առաջինը, Անտոնովիչը դարձավ ուկրաինայի հայտնի պատմաբան, համոզված *Մարողնիկ*, ուկրաինական շարժման նշանավոր գործիչ: Այդ շարժման մեջ մեծ ավանդ ներդրեցին նաև նրա գաղափարակից գործընկերներ՝ *Տադեյ Ռիսկին, Պավլո Ժտոեցկին, Բորիս Պոզնանսկին և Կոստյանտին Միխայչուկը:*

*Կիևցիների օրինակով ոգեշնչված՝ Պոլտավայի, Չեռնիգովի, Խարկովի և Օդեսայի ուկրաինացի մտավորականները նույնպես հիմնեցին իրենց հրոմադաները և ընդլայնեցին կիրակնօրյա դպրոցների ցանցը, որոնց թիվն ուկրաինայում արդեն հարյուրի էր հասնում: Հրոմադաների անդամները խորանում էին ուկրաինայի ազգագրության, պատմության ու բանասիրության ավանդական բնագավառների ուսումնասիրության մեջ: Խլոպումանների օրինակով նրանք էլ էին գյուղական հագուստներ հագնում, հետևում ժողովրդական ավանդույթներին, գյուղացիների հետ շփվում էին պանդկներում, սնվում նրանց պես, երգում նրանց երգերն ու իրենց ընտանիքում խոսում ուկրաիներեն լեզվով: Նրանք կոզակության իսկական պաշտամունք ստեղծեցին, հաճախ կոզակական տարագ էին կրում: Ընդ որում՝ իդեալականացնում էին ոչ թե հեթանոսներին ու ավագներին, այլ ազատատենչ զապորոժցիներին ու հայդամակներին, որոնք, իրենց կարծիքով, ուկրաինական զանգվածների ձգտումների մարմնավորումն էին: XIX դարի երկրորդ կեսին ռոմանտիզմի, ապաքաղաքական մարդունիկության, իդեալիզմի և ամենայն ուկրաինականի պաշտամունքի այդ միախառնումն էլ սկսեց կոչվել *ուկրաինասիրություն*, իսկ նրա հետևորդներին անվանում էին *ուկրաինասերներ* (ուկրաինոֆիլներ):*

Սակայն ուկրաինասերների զուսպ ու անվտանգ գործունեությունն անգամ անհանգստացնում էր իշխանություններին: 1863 թ.-ին, երբ լեռական ապստամբությունն հասավ իր գագաթնակետին և համարժեքորեն անեց կասկածամտությունն ու անվստահությունը ամենայն ոչ-ռուսականի նկատմամբ, կառավարությունը, և նույնիսկ ռուս մտավորականությունը եկան այն եզրակացության, *թե ուկրաինական շարժումը Ռուսաստանի համար մահացու վտանգի սպառնալիք է և շուտ եկան ուկրաինասերների դեմ:* Կիրակնօրյա դպրոցները ցարական պաշտոնյաներին թվացին գյուղացիության միջավայրում ուկրաինական անջատողական քարոզության շարագույժ օջախներ, արտաքինից անմեղ թվացող ասեղնագործ վերնաշապիկ հագնելն ու ժողովրդական երգեր երգելը գնահատվեց որպես քայքայիչ գործունեություն: Ռազմական նախարար Դմիտրի Միլյուտինը՝ կասկածամտության մոլուցքի մեջ, ցարին նախագուշացնում էր ուկրաինական անկախ պետություն ստեղծելու խլոպումանների մտադրության մասին:

Ռուսական մամուլի մի մասը, գերհայրենասիրական «Հարավ-Արևմտյան Ռուսաստանի բանբեր» «Կիևցի» և «Մոսկովյան տեղեկագրեր» թերթերի գլխավորությամբ, դաժան պայքար ծավալեց ուկրաինասերների դեմ, որոնք՝ «խարխլում էին Ռուսական պետության հիմքերը»: Շուտով նաև ռուս մտավորականության մեծ մասը, որ դեռ վերջերս բարյացական ու մեծահոգի վերաբերմունք էր դրսևորում ուկրաինասերների նկատմամբ՝ որպես զավառական զեղեցկությամբ խանդավառված անմեղ ու անվտանգ արարածների, սկսեց ի դեմս նրանց տեսնել կայսրությանն սպառնացող «իրական» վտանգը: Եթե ռուսներից շատերն ուկրաինական շարժումը դիտում էին որպես «լեռական խարդավանք», որի նպատակն իրենց ձեռքից Աջափնյակը խլելն էր, ապա լեռերն ուկրաինասերներին համարում էին Մոսկովյաի մեթենայությունների արգասիք, որը ձգտում է այդ տարածաշրջանում սասանել լեռերի դիրքերը:

Իրենց հերթին ուկրաինացիները շտապեցին երկու կողմին էլ հավաստիացնել, որ իրենք չեզոք են: Անտոնովիչն ու կիևյան «Յրոմադայի» մոտ 20 անդամ բաց մամակ հրապարակեցին, որով ռուս հասարակությանը ձգտում էին համոզել, որ իրենց «նպատակը միայն ժողովրդին լուսավորելն է», և «անջատողականության մասին բոլոր խոսակցություններն ընդամենը շարամիտ կատակ է, քանի որ ոչ միայն չենք ցանկանում, այլև մեզ համար օգտակար չէ»: Սակայն այդ ջանքերը ոչինչ չտվեցին: *1863 թ.-ի հուլիսին ներքին գործոց նախարար Պյոտր Վալուևը զաղտնի շրջաբերականով արգելեց ուկրաիներեն լեզվով գիտական, հոգևոր և մանկավարժական գրականություն հրատարակել:* «Մալոռոսական բարբառով» կարելի էր հրատարակել միայն «Բանահյուսական նրբագեղ պատառիկներ»: Վալուևը (ռուսացած ուկրաինացիների կարծիքը վկայակոչելով) հավատացնում էր, թե *ուկրաիներեն լեզու «չի եղել, չկա, և չի կարող լինել»:* Դրանից քիչ անց լուծարվեցին հրոմադաները, դադարեցվեց «Օսնովայի» հրատարակությունը, իսկ ուկրաինացի գործիչներից շատերը հայտնվեցին կայսրության հեռավոր անկյուններում:



Գրեթե մի ողջ տասնամյակ ուկրաինասերները լռեցին: 1870-**ականներին**, երբ փոխադարձ ատելությունը որոշ չափով հանդարտվեց, իսկ գրաքննությունը թուլացավ, կիևցիները քիչ-քիչ վերականգնեցին իրենց գործունեությունը: Անտոնովիչը (արդեն Կիևի համալսարանի պրոֆեսոր) և իր գործընկերները, որոնք համալրվել էին այնպիսի տաղանդավոր հետևորդներով, ինչպես՝ Միխայլո Դրահոմանովը, Օլեքսանդր Ռուսովը, Միկոլա Ջիրբերն ու Սերիյ Պողոլինսկին ստեղծեցին «Չին հրոմադա» գաղտնի կազմակերպությունը (մոտ 70 հոգի), այդպես անվանելով նրա փորձառու, տարիներով իմաստնացած անդամներին **ճոր** ստեղծվող ուսանողական հրոմադաներից տարբերակելու համար: Ուկրաինասերների գործունեությունն առաջվա պես ապաքաղաքական էր:

Այն հատկապես աշխուժացավ 1873 թ.-ին, երբ Կիևում բացվեց Ռուսական աշխարհագրական ընկերության բաժանմունքը: Ուկրաինասերները զանգվածաբար ընդգրկվեցին այդ կիսապաշտոնական կազմակերպության մեջ և գործնականում այնտեղ տեղ ու տնօրեն դարձան: Նրա տակ քողարկվելով էլ սկսեցին հրապարակել իրենց **հետաքրքրող արխիվային նյութերը**, հիմնադրեցին ուկրաինական գրադարան ու թանգարան: 1875 թ.-ին «Չին հրոմադան» ձեռք բերեց «Կիևյան հեռագրատուն» ռուսական թերթի իրավունք և այն ծառայեցնում էր իր նպատակներին: Սակայն **ուկրաինական հրատարակությունների արգելքը լուրջ խոչընդոտ էր ուկրաինական մշակույթի զարգացման ճանապարհին**: Փորձելով այն շրջանցել, որոշ ուկրաինասերներ (Կուլիշ, Կոնիսկի, Դրահոմանով և այլոք) կապ հաստատեցին Գալիչինայի ուկրաինացիների հետ և օգտագործեցին նրանց ուկրաինալեզու մամուլը, հատկապես «Պրավդա» ամսագիրը՝ արտահայտելու համար Ռուսաստանում արգելված տեսակետները: 1873 թ.-ին, նրանց համակրող ազնվականուհի **Լիզավետա Սկորոպադսկա-Միլոբորովիչի** և շաքարի հարուստ գործարանատեր **Վասիլ Միմիրենկոյի** օժանդակությամբ, ուկրաինասերները Լվովում հիմնեցին «Տ. Գ. Շևչենկոյի անվան գրական ընկերությունը», որը մի քանի տասնամյակ հետո արդեն այլ անվամբ՝ «Տ. Գ. Շևչենկոյի անվան գիտական ընկերություն», դարձավ **ոչ պաշտոնական ուկրաինական գիտությունների ակադեմիա**:

Սակայն ուկրաինասերների նկատմամբ կասկածանքների ճոր ալիքի հորդունը միայն ժամանակի հարց էր: Ինչպես հաճախ էր պատահում, ուկրաինացիների ռիսերին թշնամիներն հենց իրենց միջավայրից էին հայտնվում: 1875 թ.-ին, Ռուսական աշխարհագրական ընկերության Դարավ-Արևմտյան բաժանմունքի անդամ, հարուստ և պահպանողական հայացքների տեր Միխայլո Յուզեֆովիչը մի ամբողջ զեկույց ուղարկեց Պետերբուրգ, որով «մերկացնում էր» ուկրաինասերներին այն բանում, թե նրանք բաժանմունքը վերածել են քայքայիչ կազմակերպության, որը քարոզչություն է տանում գյուղացիության մեջ և ձգտում է Ուկրաինայի անկախությանը: Իր մատուցությունը վերջում «զարդարում էր» հայտարարությամբ, թե ուկրաինասերներն հակառուսական քարոզչություն են ընդլայնում Գալիչինայում, իսկ նրանց շարժումը ավստրո-գերմանական բանսարկություն է: Կառավարության արձագանքը դժվար չէր կանխատեսել:

### 1876 թ.-ի էմսի հրամանագիրը

Անհանգստացած Ալեքսանդր Երկրորդի կարգադրությամբ ստեղծված հատուկ հանձնաժողովն (որի մեջ էր նաև Յուզեֆովիչը) առաջարկեց **ամբողջովին արգելել ուկրաիներեն գրքերի հրատարակումն ու արտասահմանից ներկրելը, թատերական ներկայացումներում ուկրաիներեն լեզուն օգտագործելը** (նույնիսկ բեմից հնչող ուկրաինական երգերի բառերը պետք է թարգմանվեին այլ լեզուներով), փակել «Կիևի հեռագրատուն» թերթը և դադարեցնել Գալիչինայում հրատարակվող ռուսամետ «Խոսք» («Սլովո») թերթի ֆինանսավորումը: Լուսավորության նախարարության **հանձնարարվեց տարրական դպրոցներից հանել ուկրաիներեն լեզվի գործածությունը, դպրոցական գրադարաններից վերացնել ուկրաինական կամ ուկրաինամետ գրականությունը, ուկրաինասիրության մեջ կասկածվող ուսուցիչներին փոխարինել ռուս ուսուցիչներով**: Բացի այդ, հանձնաժողովն առաջարկում էր փակել Ռուսական աշխարհագրական ընկերության Դարավ-Արևմտյան բաժանմունքը և աքսորել ուկրաինացի մի շարք գործիչների, առաջին հերթին՝ **Դրահոմանովին և Պավլո Չուրինսկուն**: Ուկրաինական շարժումը խեղդելու միջոցները իհիմա շատ ավելի խորը մտածված, համակարգված ու դաժան էին: Ալեքսանդր Երկրորդը, որ հանգստանում էր գերմանական էմս առողջարանային քաղաքում, ընդունեց հանձնաժողովի բոլոր առաջարկությունները և **1876 թ.-ի մայիսի 18-ին համապատասխան հրամանագիր ստորագրեց**:

Այս փաստաթուղթը ոչ միայն պարզապես խոչընդոտեց ուկրաինացիների գործունեու-

յանը, այլև հարցականի տակ դրեց ողջ ուկրաինական շարժման սկզբունքները: Չնայած 1863 թ.-ի ցավալի փորձին, ուկրաինասերները դեռևս հավատում էին, որ եթե պահպանեց չափավոր հայացքներն ու քաղաքականության մեջ չմտնեն, կկարողանան խուսափել կառավարության ճնշումներից: Կուլիշը նույնիսկ ուկրաինական շարժման զուտ մշակութային բնույթը հիմնավորող մի ամբողջ տեսություն մշակեց, համաձայն որի՝ ռուսներն օժտված էին պետություն ստեղծելու և կառավարելու արտակարգ զարգացած ծիրքերով, ինչ որ չունեին ուկրաինացիները, որի վկայությունը նրանց տխուր պատմությունն է: Դրա համար էլ ուկրաինացիներին, իբրև թե առավել շահավետ է Ռուսական կայսրության կազմի մեջ մնալը՝ օգտվելով նրա ուժից, անվտանգությունից ու հեղինակությունից: Ընդ որում՝ համարում էր



Պավլո Չուրինսկի. «Դեռ չի մահացել Ուկրաինան» օրհներգի հեղինակը

նաև, որ ուկրաինացիներն իրենց հիասքանչ բանախյուսությամբ ռուսներից շատ ավելի օժտված են: Այստեղից պարզ տրամաբանությամբ հետևում էր, որ ուկրաինացիներին ձեռնառու է քաղաքականությունը թողնել ռուսներին և ամբողջովին կենտրոնանալ մշակութային գործունեության վրա: Սակայն **էմսի հրամանագիրը հիմնովին ցրեց Կուլիշի այն հույսերը, թե ռուսական քաղաքականության և ուկրաինական մշակույթի միջև «ապրիլ և թույլ տուր ուրիշներն էլ ապրեն» սկզբունքով հարաբերություններ կհաստատվեն**, և վերջիվերջո հանգեցրեց ուկրաինական «մշակութաբանական ելքային» առավել անհրապական հայացքների:

Ուկրաինական շարժման «հիմնադիր հայրերից» ևս մեկը՝ Միկոլա Կոստոմարովը, 1876 թ.-ից հետո բացահայտ պարտվողական դիրքորոշում որդեգրեց: Այն մարդը, որ գրում էր. «*Թող ոչ ռուսները, ոչ էլ լեհերը չհուսան, թե իրենք տերն են այն հողերի, որտեղ բնակվում են ուկրաինացիները*», հիմա խորհուրդ էր տալիս իր գործընկերներին՝ **հլու-հնազանդ հետևել ցարական քաղաքականությանը: Ուկրաինասերների մյուս ակնառու առաջնորդները՝ Անտոնովիչն**



ու ժխտեցկին, փոխզիջման ուղին ընտրեցին: Շարունակելով նվիրված մնալ ուկրաինական յուրատիպ մշակույթի գաղափարին, նրանք ամեն կերպ շեշտում էին, թե դա չի նշանակում խուսափել ռուսական կայսրության և մշակույթի բարերար ազդեցությունից: Նրանք իսկապես էլ հավատում էին, որ կարելի է պահպանել նվիրվածությունը և «փոքր» ուկրաինական հայրենիքին, և՛ առավել «մեծ» ռուսական հասարակությանը, որն իր մեջ ներառում է ռուսներին, ուկրաինացիներին ու բելոռուսներին: Մնացածները, այնպիսիք, ինչպես **Բորիս Գրին-չենկոն** ու **Օլեքսանդր Կոնիսկին**, ոչ մի բան հաշվի չառնելով, իրենց համարում էին միանշանակ ուկրաինացի և աշխատում էին նվազագույնի հասցնել Ռուսաստանի հետ ուկրաինայի կապերը: Սակայն նրանք էլ ստեղծված իրավիճակում գործողությունների իրագործելի ծրագիր չունեին: Այս ամենի հետևանքը եղավ այն, որ *ցարական հալածանքների ու վախի ազդեցության տակ ուկրաինասերների միջև էական տարածայնություններ ծագեցին՝ նպատակների ու շարժման մարտավարության և նույնիսկ սեփական ազգային էությունը բնորոշելու վերաբերյալ*, ինչն ավելի էր բարդացնում նրանց առանց այդ էլ բարդ վիճակը:

**Դրահոմանովը և ուկրաինական սոցիալիզմի ծագումը**


Նոր գաղափարներն օդի պես անհրաժեշտ էին, և դա հատկապես սուր էին զգում կիևյան «Գրոմադայի» երիտասարդ անդամները: Իր հայրենակիցների ու համախոհների մտավոր ու գաղափարախոսական հորիզոններն ընդլայնելու խնդրի լուծմանը գրեթե միայնակ ձեռնամուխ եղավ **Միխայլո Դրահոմանովը**: Չնայած այն հանգամանքին, որ նրա հայացքները համընդհանուր ընդունելություն չգտան ուկրաինական մտավորականության շրջանում, սակայն ուկրաինական շարժման երիտասարդ մասնակիցներից շատերի համար դարձան ուղեցույց՝ դուրս գալու ավագների ապաքաղաքական մշակութաբանական շրջանակներից և **ուկրաինական հարցը խորացնել քաղաքական, ազգային և սոցիալ-տնտեսական բովանդակությամբ**:

Դրահոմանովը ծնվել է 1841 թ.-ին, Պոլտավայի մոտ գտնվող Դադյաչ քաղաքում, մանր կալվածատեր ազնվականի ընտանիքում, որը սերում էր Դեթմանշչինայի կոզակական ավազանուց: Ընտանիքում պահպանվում էին ազգային ավանդույթները, սակայն ինչ-որ չափով մնում էին Դրահոմանովի հոր՝ կրթված ու բազմազիտակ մի բացառիկ անձնավորության, կոսմոպոլիտ-ազատական գաղափարների ազդեցության ստվերում: *Կիևի համալսարան ընդունվելու պահին Դրահոմանովը համոզված ժողովրդավար էր՝ տոգորված ժողովրդին ծառայելու վճռականությամբ*: Դետազայում դարձավ անգրագետ գյուղացիության համար կիրակնօրյա դպրոցներ բացելու գործը կազմակերպող առաջատար գործիչներից մեկը: Դատկապես գյուղացիության շրջանում աշխատելիս Դրահոմանովը համոզվեց, որ տարրական ուսուցման ուկրաինալեզու դասագրքեր են անհրաժեշտ, և սկսեց հետաքրքրվել ուկրաինական գործերով, ինչն էլ վերջիվերջո նրան բերեց կիևյան «Գրոմադա»: Այսպիսով՝ ուկրաինական շարժման մեջ նա ներգրավվեց ոչ թե Ուկրաինայի վերաբերյալ ռոմանտիկ պատկերացումների ազդեցության տակ, այլ որպես համոզված պրագմատիկ, որը ձգտում է գործնականում օգտակար լինել իր ժողովրդին:

Դրահոմանովը ձգտում էր, որ քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային առումներով, Ուկրաինան հասնի Եվրոպայի զարգացած երկրների մակարդակին: Ընդ որում՝ համարում էր, որ դրան հասնել հնարավոր է միայն այն դեպքում, եթե ուկրաինական շարժումը հիմնվի ավելի լայն սոցիալական բազայի վրա և առաջ քաշի մարդկանց համար առավել իրական, մոտ ու հասկանալի խնդիրներ: Նրա կարծիքով՝ ուկրաինացիները (իր խոսքերով՝ սեփական վերնախավ չունեցող, ճնշված ու հարստահարված աշխատավորական զանգվածների մեջ այդ՝ «ավերելական ժողովուրդը») գերազանցապես ի վիճակի են ընկալելու քաղաքական այն ծրագրերը, որոնցում համատեղվում են ազգային և սոցիալ-տնտեսական խնդիրները: Դրանից ելնելով էլ նա հայտարարում էր, որ **Ուկրաինայում իսկական ժողովրդրդավարը պետք է լինի ուկրաինացի հայրենասեր, իսկ ուկրաինացի իսկական հայրենասերը՝ ժողովրդավար**:

Լինելով համոզված ֆեդերալիստ, Դրահոմանովը դեմ էր ուկրաինական անջատողականությանը: Սակայն վախենալով անհատի իրավունքի սահմանափակումներից, որ գրեթե անխուսափելի է ցանկացած կենտրոնացած հզոր պետության մեջ, նա համարում էր, որ Ռուսական կայսրությունը պետք է վերակազմավորվի ինքնավար տարածաշրջանների ազատ համադաշնության (պարտադիր չէ՝ էթնիկական սկզբունքով), որ հիմնականում կգործի տեղական ինքնակառավարման միջոցով: Դաճախ ուկրաինացիներին, հատկապես Գալիչինայի,

ռուսական մշակույթի լավագույն նվաճումներին ծանոթանալու կոչ անելով, Դրահոմանովը միևնույն ժամանակ չէր ընդունում Պուլկինի գաղափարները, թե՛ «սլավոնական գետերը բոլոր, կլցվեն ծովը ռուսական»: Իր «Կորցրած ժամանակ» հայտնի հոդվածում Դրահոմանովը նշում է, որ **ռուսական գերիշխանության տակ ուկրաինացիներն ավելի շատ կորցրել, քան ձեռք են բերել**: Նա որոշակիորեն պնդում էր, որ ուկրաինացիներն առաջին հերթին պետք է նվիրված լինեն Ուկրաինային, և ոչ թե «ողջ Ռուսիային»: **«Կրթված ուկրաինացիները, որպես կանոն, ամբողջ աշխարհում աշխատում են բոլորի համար, բացի Ուկրաինայից ու նրա ժողովրդից... Նրանք պետք է իրենք իրենց երդվեն, որ ուկրաինական գործը չեն լքի: Նրանք պետք է գիտակցեն, որ Ուկրաինան լքող յուրաքանչյուր ոք, Ուկրաինայի նպատակների հա-**



Միխայլո Դրահոմանով

*մար չծախսված ամեն մի կոպեկ, ուկրաիններեն չարտասանված ամեն մի բառ ուկրաինական ժողովրդի հարստությունը վատնել է մշանակում, և ներկա պայմաններում ամեն մի մտան վատնում անդամուլի կորուստ է»:*

Դրահոմանովի ճակատագիրն իր գաղափարներին անդավաճան նվիրված մարդու ճակատագիր էր: 1875-1876 թ.թ.-ների ճնշումների ժամանակ նա չհրաժարվեց իր հայացքներից և գերադասեց վտարանդիությունը: Կիևից հեռանալուց առաջ նա «Հին հրոմադայի» հետ համաձայնության եկավ, վերջինիս ֆինանսական աջակցությամբ, արտասահմանում ամսագիր հրատարակել՝ նվիրված ուկրաինական հարցին: **Այսպես լույս աշխարհ եկավ ուկրաինական առաջին քաղաքական ամսագիրը՝ «Գրոմադան», որ 1870-ականների վերջից մինչև 1880-ականներն ընդհատումներով լույս էր տեսնում ժնևում**, ուր հանգրվան գտավ Դրահոմանովին միացած ուկրաինական քաղաքական գործիչների սակավաթիվ խումբը: Սակայն ազգային խնդիրներին զուգահեռ, Դրահոմանովն ավելի ու ավելի հաճախակի էր սոցիալիստական



արմատական հայացքներ քարոզում: Արդյունքը եղավ այն, որ 1885 թ.-ին նրա և կիևյան առավել պահպանողական ուկրաինասերների միջև խզում առաջացավ, որի հետևանքով ընդհատվեց ամսագրի լույս ընծայումը:

Սակայն, եթե Դրահոմանովի կապերն արևելյան ուկրաինացիների հետ թուլանում էին, ապա Գալիչինայի ուկրաինացիների հետ, ընդհակառակը՝ ամրապնդվում էին: Դրահոմանովն 1870-ականներին արդեն եղել էր Գալիչինայում և Անդրկարպատներում, և այն ժամանակներից սկսած պարբերաբար անեն կերպ ձգտում էր արևմտյան ուկրաինացիներին բարեկամացնել իրենց արևելյան եղբայրների հետ: Ժամանակի ընթացքում Դրահոմանովի գաղափարներն ամուր արմատներ ձգեցին Գալիչինայի սակավաթիվ, սակայն նվիրյալ երիտասարդների շրջանում և **արդյունքում ձևավորվեց ուկրաինական առաջին սոցիալիստական կուսակցությունը:**

Դրահոմանովը սոցիալիզմով համակված միակ ուկրաինական գործիչը չէր: Ուկրաինացիների մեջ սոցիալիզմի գաղափարները տարածելու գործում մեծ դեր խաղացին նաև դեռևս կիևյան «Հրոմադայից» նրա մտերիմներ *Միկոլա Չիբերը* (ուկրաինա-չվեյցարական ծագումով տնտեսագետ) և *Սերիյ Պոդոլինսկին* (հարուստ հողատիրոջ որդի): Չիբերը Ռուսաստանում մարքսիզմի առաջին քարոզիչներից մեկն էր՝ սկսած 1871 թ.-ից: Եռանդուն և գործունյա Պոդոլինսկին կապեր էր հաստատել Մարքսի ու Էնգելսի հետ, Եվրոպայում սերտորեն համագործակցում էր Դրահոմանովի հետ և օգնում էր Արևելյան ու Արևմտյան Ուկրաինայում սոցիալիստական խմբակներ ստեղծելու գործում:

## Ռուսական հեղափոխական շարժումն Ուկրաինայում

1870-ական թվականներին ակնհայտ դարձավ, որ չնայած ճորտատիրական կարգերը վերացան, բայց գյուղացիության տնտեսական վիճակը չբարելավվեց և, ի հեճուկս մյուս բարեփոխումների, կայսերական ռեժիմը մնում է անդրդվելի: Ռուսական հասարակությունն հիասթափություն էր ապրում: Մտավորականության մեջ այն արտահայտվում էր արմատականության վերելքով և հանուն հին կարգերի կործանման՝ ամեն հնարավոր քայլի դիմելու ձգտումով ու պատրաստականությամբ: Պատմության թատերաբեմը պատրաստ էր նոր գործող անձանց՝ հեղափոխականների հանդես գալուն:

XIX դարավերջին, գրեթե բոլոր հեղափոխականների օրրանի՝ մտավորականության, սոցիալական կազմում լուրջ փոփոխություններ տեղի ունեցան: Լուսավորության համակարգի հետռեֆորմյան ազատականացումը հանգեցրեց նրան, որ ազնվական դասն արդեն ճնշող մեծամասնություն չէր կազմում համալսարանական ուսանողության շրջանում, ուրեմն և՛ մտավորականության: Համալսարաններում աճում էր քաղաքացիների, հոգևորականների, մանր պաշտոնյաների, կոզակների և նույնիսկ գյուղացիների երեխաների թիվը: 1895 թ.-ին Ուկրաինայի երեք՝ Կիևի, Խարկովի և Նովոռոսիայի (Օդեսայի), համալսարաններում ուսանողների գրեթե կեսը նրանք էին կազմում: Նոր՝ տարատոհմիկ, մտավորականության մեջ արտադասակարգայնության գծեր ի հայտ եկան, ինչը որոշ չափով թուլացրեց մտավորականության կտրվածությունը ժողովրդական զանգվածներից:

Չնայած այս ամենին, XIX դարավերջին մտավորականությունն հասարակության չնչին մասն էր կազմում միայն: 1895 թ.-ին Ուկրաինայում ընդամենը 5 հազ. համալսարանական ուսանող կար: Պարզ է, որ հեղափոխականները մտավորականության մեջ մի փոքր խումբ էին կազմում: Օրինակ՝ 1881 թ.-ին (Ռուսաստանում XIX դարի հեղափոխական գործունեության գագաթնակետին) կայսրության մոտ 100 մլն-անոց բնակչության առկայությամբ, ընդամենը հազարից պակաս հակապետական գործունեության դեպքեր են եղել: Եվ վերջապես՝ հեղափոխական շարժումը բացարձակ ապագային էր: Չգտելով ցարիզմի դեմ պայքարելու համար ստեղծել միացյալ, «համառուսաստանյան» ուժեր, հեղափոխականներն սկզբում չէին էլ հետաքրքրվում ազգային խնդիրներով, իսկ ժամանակի ընթացքում սկսեցին դրանք դիտել որպես հեղափոխական պայքարի գլխավոր խոչընդոտ:

### Նարոդնիկներ

1860-ական թվականներից սկսած կայսրությունում արմատական երիտասարդությանը սովորաբար անվանում էին «**Նարոդնիկներ**»: «Նարոդնիկներ» նշանակում էր *մարդիկ, որոնք իրենց նույնացնում էին ժողովրդի հետ, ինչն էլ այն ժամանակվա պայմաններում նշանակում*

*էր՝ գյուղացիության հետ:* Բանականության տեսակետից դժվար է ըմբռնել գյուղացիության հետ նույնանալու, նրան իդեալականացնելու էությունը: Որոշ չափով այն հիմնվում էր երիտասարդ իդեալիստ-ուսանողների մեղքի զգացողության վրա, որ նրանց մեջ առաջացավ, երբ համեմատության մեջ դրեցին իրենց արտոնյալ դրությունը գյուղացիության ծանր ճակատագրի հետ: Այդ իդեալականացումը մեղքը քավելու ենթագիտակցական ձգտման արդյունք էր: Մտավորականներին թվում էր, թե հենց գյուղացիների ապրելակերպը՝ իրենց ծանր ու արդար աշխատանքով, բարոյական մաքրություն է դաստիարակում: Գյուղացիական հասարակության հատկապես գովեստի արժանի ձեռքբերումը մտավորականությունն համարում էր գյուղացիական համայնքը, որն իբրև թե գյուղացիությանը պահպանում էր բնական եսա-



*Չունակները ճանապարհին. նկարը՝ Կ. Տրուտովսկու*

սիրությունից և սոցիալիզմին նրա բնական հակվածության վկայությունն էր: Սակայն, եթե գյուղացիության իդեալականացումը հատուկ էր ոչ միայն նարոդնիկներին (դրանով աչքի էին ընկնում նաև ուկրաինական խլոպոմաններն ու մտավորական այլ խմբավորումներ), ապա միանգամայն բացառիկ էր հեղափոխություն անելու նրանց վճռականությունը, որի արդյունքում նոր և արդար հասարակարգ կհաստատվեր: Հեղափոխական առաջին նարոդնիկական խումբը կազմավորվեց 1871 թ.-ին Պետերբուրգում, **Միխայլո Չայկովսկու** կողմից, որից անմիջապես հետո նման խմբավորումներ առաջացան կայսրությունով մեկ: Ուկրաինայում մոտ 100 հոգուց բաղկացած նման խմբավորում ստեղծվեց 1873 թ.-ին Օդեսայում՝ **Ֆեդիր Վոլխովսկու** կողմից: Նրանց թվում էր և գյուղացիության ծոցից ելած ուսանող **Անդրիյ ժելյարովը**, որն հետագայում դարձավ կայսրության ականավոր հեղափոխական գործիչներից մեկը: Շուտով Կիևում առաջացավ նաև անարխիստական թեքումով մի փոքրիկ խմբակ, որ կոչվեց «**Կիևյան կոմունա**»: Այստեղ ևս ընդգրկվեցին մարդիկ, որոնք հետագայում նշանավոր հեղափոխականներ դարձան. **Վերա Ջասուլիչ, Վոլոդիմիր Դերոհորի-Մոկրիկիչ, Յակով Ստեֆանովիչ:**

Հեղափոխական խմբավորումները բազմանում էին և նրանց մեջ թունդ վիճաբանություններ էին ընթանում՝ նպատակին հասնելու առավել գործուն միջոցների վերաբերյալ: Մոտեցումներից մեկը, որ սովորաբար կապվում է ռուս ականավոր նարոդնիկ Պյոտր Լավրովի անվան հետ, այն էր, որ հարկավոր է լուսավորության և քարոզի միջոցով ժողովրդական լայն զանգվածներին աստիճանաբար նախապատրաստել հեղափոխությանը: Մյուս ուղղութ-



յունը, որ սկզբում քիչ տարածում ունեւր, կապված է պայծառ ու հմայիչ անհատականութեան՝ ռուս անարխիստ **Միխայիլ Բակունինի** անվան հետ, որը հեղափոխականներին կոչ էր անում ահաբեկչական գործողությունների շարք իրականացնել, որոնք զանգվածներին կնդելին տարերային ապստամբության: 1874 թ.-ին, թվաց, թե Լավրովի տեսակետը հաղթել է, երբ Պոլովոյեում բռնկված ահաբեկող սովից հետո մոտ 3000 նարոդնիկ, թողնելով ուսումնառությունը համալսարաններում, գյուղացու պես հագնված, ցրվեցին գյուղերում՝ ժողովրդի հետ կապ հաստատելու և նրան մեծ հեղափոխությանը նախապատրաստելու համար: Սակայն այդ՝ «ուխտագնացությունն առ ժողովուրդ», ինչպես այն ժամանակ անվանեցին **շարժումը**, լիակատար անհաջողության մատնվեց: Գյուղացիները պարզապես լուրջ չընդունեցին այդ տարօրինակ քաղաքացիներին, որոնք շատ անհաջող, երբեմն ծիծաղելիության աստիճանի լրջորեն ձգտում էին նմանվել իրենց: Հաճախ գյուղացիները նույնիսկ օգնում էին ժանդարմներին՝ հետապնդելու այդ ձախողակ հեղափոխականներին:

Ուկրաինայում «ուխտագնացությունն առ ժողովուրդ» հիմնականում ծավալվեց Կիևի նահանգի Զիհիրիին գավառում: Նարոդնիկներն հատկապես այդ տեղերն ընտրեցին այն պարզ պատճառով, որ մի դար առաջ այն եղել էր հայդամակների արյունալի ապստամբության կենտրոն. նրանք հույս ունեին, թե այստեղ դեռ չի մարել խռովարարության ոգին: Չնայած շարժումն ամբողջովին ձախողվեց, սակայն ունեցավ իր ուշագրավ շարունակությունն այդ շրջանում, երբ 1877 թ.-ին Ստեֆանովիչն ու իր կիևյան անարխիստական խումբը փորձեցին օգտագործել ցարի նկատմամբ գյուղացիության հավատը՝ «ցարական մանիֆեստներ» կեղծելով, որոնք գյուղացիությանը կոչ էին անում «գաղտնի ջոկատներ» ստեղծել և ապստամբել տեղական կալվածատերերի ու պաշտոնյաների դեմ: «Զիհիրիյան դավադրությունը» բացահայտվեց, և պարզվեց, որ նրան մոտ 1000 գյուղացի էր մասնակցում:

Նարոդնիկներն իրենց ուշադրությունը մեծ մասամբ բևեռել էին գյուղացիության վրա, բայց նրանցից մի քանիսն արդեն հայացքներն ուղղել էին դեպի սովորացող բանվորությունը: **1875 թ.-ին Եվին Զապավսկին Օդեսայում կազմակերպեց «Բանվորների հարավ-ռուսական միություն»** գաղտնի կազմակերպությունը, որ կայսրությունում առաջիններից մեկն էր: Նրա օրինակով Ռուսաստանի հյուսիսում էլ հետագայում ստեղծվեցին նման խմբավորումներ, սակայն նրանց ազդեցությունը վաղանցիկ էր և կարճ կյանք ունեցան:

Երբ քարոզչական մոտեցումը ձախողվեց, արմատական նարոդնիկների մի մասը դիմեց Բակունինի գաղափարներին, որոշելով, որ միայն ահաբեկչությունն ու բռնությունը կարող են հեղափոխության տանել: 1878 թ.-ին կիևյան անարխիստական խմբի նախկին անդամ Վերա Զասուլիչը կրակեց Սանկտ-Պետերբուրգի գինվորական պարետ, գեներալ Տրեպովի վրա: Շուտով ի հայտ եկավ նարոդնիկական մի կազմակերպությունից անջատված տխրահռչակ «Նարոդնայա վոլյան» («Ժողովրդի ազատություն»), որն իր գործունեության գլխավոր միջոցը դարձրեց ահաբեկչությունը: Լավ կազմակերպված ու քողարկված «Նարոդնայա վոլյան» (նրա առաջնորդներից էր նաև ժեյնբովը) քաղաքական սպանությունների գործունեություն ծավալեց, որի գագաթնակետը եղավ **1881 թ.-ին Ալեքսանդր երկրորդի սպանությունը**: Սակայն ցարի սպանությունը հեղափոխության տանելու փոխարեն հանգեցրեց բռնությունների համընդհանուր դատապարտմանը, վարկաբեկեց ահաբեկիչներին և համոզեց կառավարությանը հակազդեցության դիմելու անհրաժեշտության մեջ: Ուշագրավ է, որ 1879-1881 թ.թ.-ների ահաբեկչական գործողությունների ժամանակ հատկապես ակտիվ էին Ուկրաինայի նարոդնիկները: Կիևում և այլ տեղերում նրանք սպանեցին մի քանի պետական կարևոր պաշտոնյաների: Նարոդնիկներից ոմանք նույնիսկ պնդում էին, թե քաղաքական ահաբեկչությունը «հարավցիների»՝ ժեյնբովի, Դմիտրո Լիզնոբի և Միկոլա Կիբալչիչի հայտնագործությունն է:

### **Ռուս հեղափոխականները և ուկրաինական հարցը**

Չնայած նարոդնիկների ուշադրության կենտրոնում սոցիալական հեղափոխությունն էր, սակայն դրան նախապատրաստվելու ընթացքում նրանք չէին կարող անուշադրության մատնել «տեղական պայմանները», այսինքն՝ կայսրության տարբեր ժողովուրդների ազգային առանձնահատկությունները: Նարոդնիկության առաջատար գաղափարախոս Լավրովն համարում էր, որ ազգայնականությունը համաշխարհային պատմության անցած փուլ է, և մեծապես կասկածում էր, թե այն կարող է ինչ-որ չափով օժանդակել համամարդկային առաջընթացին: Ուկրաինական ծագում ունեցող հեղափոխականներից շատերը համամիտ էին նրա հետ, հաստատելով, թե որքան էլ ցավալի լինի, բայց երևի ավելի լավ է, որ նոր՝ համաշ-

խարհային սոցիալիստական հասարակության ձևավորման ընթացքում ազգային տարբերությունները վերանան: Բայց առայժմ, ասում էին նրանք, ազգային առանձնահատկություններն համեմայն դեպս պետք է ի նկատի ունենալ:

Ազգային առանձնահատկություններն հաշվի առնելու անհրաժեշտության կապակցությամբ ակնառու օրինակ էր նարոդնիկների առջև ծառայող գյուղացիական համայնքների հետ կապված խնդիրները: Ռուսաստանում գյուղացիական համայնքային հողատիրությունը հեղափոխականներն համարում էին համոզիչ վկայությունն այն բանի, որ ռուսները սոցիալիզմի նկատմամբ բնածին հակում ունեն: Դրանից հետևություն էին անում, որ Ռուսաստանն ի վիճակի է, շրջանցելով զարգացման կապիտալիստական փուլը, անմիջապես անցնել սոցիալիզմի՝ ավելի արագ, քան Եվրոպան: Սակայն իրավիճակն Ուկրաինայում այդ տեսությանը չէր համընկնում: Ուկրաինական գյուղում տարածված երևույթ էր մասնավոր հողատիրությունը, և որոշ նարոդնիկներ հուսահատությամբ էին խոսում համայնքի նկատմամբ ուկրաինացիների «բնածին զգվանքի» մասին: Ուկրաինայում որոշ հեղափոխականներ, օրինակ՝ Կանենց-Պողոսկիի խմբակից Մ. Ստարոդոբրսկին, պարզապես խոստովանում էին, որ «Մալոռոսիայում իրավիճակն այլ է: Մեր մարդիկ բուրժուական են, քանի որ ներծծված են մասնավոր-սեփականատիրական բնագոյներով»: Դեռ ավելին, Ստարոդոբրսկու կարծիքով՝ մասնավոր սեփականության նկատմամբ ուկրաինացիների հակումը կարող է նշանակել, որ «Ռուսաստանում սոցիալիստական գաղափարների տարածման ճանապարհին Մալոռոսիան կարող է խոչընդոտ հանդիսանալ»:

Չնայած տարակարծություններին, **Նարոդնիկներն ու ուկրաինասերները, հատկապես երիտասարդ սերունդը, շատ նմանություններ ունեին**, ամենից առաջ՝ հետաքրքրությունը գյուղացիության նկատմամբ: Ազգագրական նյութեր հավաքելիս, ուկրաինասերները գյուղերում շատ հաճախ բարեկամական հարաբերություններ էին հաստատում այդտեղ հեղափոխական գաղափարներ տարածող նարոդնիկների հետ: Շատերն համատեղում էին այդ զբաղմունքները: Կազմակերպչական համագործակցության բավական շատ դեպքեր են հայտնի «երիտասարդ» իրոմադաների և հեղափոխական խմբավորումների միջև: Իսկ «հին» իրոմադաները, որոնց անդամները վաղուց գլխավին խրվել էին ուկրաիններեն լեզվի բառարանա-կազմության մեջ, իրենց երիտասարդ գործընկերների այդ գործունեությունը չէին քաջալերում, ինչն ուկրաինասերների երկու սերունդների միջև լուրջ բախումների տեղիք էր տալիս:

**Հեղափոխական շարժումը ոչ միայն տարածայնություններ էր առաջացնում ուկրաինասերների մեջ, այլև զգալիորեն նոսրացնում էր նրանց շարքերը**: Նրա շարժունակությունը, հերոսական ռոմանտիզմն ու համապարփակությունը գնալով ավելի ու ավելի շատ ուկրաինացի երիտասարդների էր գրավում: Մտնելով հեղափոխականների շարքերը, նրանք ազգային հարցի նկատմամբ կանխակարծությամբ էին համակվում և կապերը խզում էին ուկրաինական շարժման հետ: Լավագույն դեպքում, սոցիալական արմատականության այդ ուկրաինացի երիտասարդ նորահավատները առաջնակարգությունը տալիս էին հեղափոխությանը, հետո նոր՝ պատրաստ էին զբաղվելու ազգային հարցերով:

Այսպիսով՝ **հեղափոխական նարոդնիկությունն իր շարքերը գնալով համալրում էր առավել տաղանդավոր ու եռանդուն ուկրաինացի երիտասարդներով, ինչը կործանարար ձևով քուլացնում էր ուկրաինական շարժումը**:

### **Մարքսիզմ**

Ցարի հանդեպ գյուղացիների կույր հավատից շփոթված ու սրտնեղած, հիասթափված այն քանից, որ միջակ գյուղացին ավելի շատ ձգտում է կուլակ դառնալ, քան իր գյուղում պայքարել սոցիալական հավասարության համար, արմատականներից շատերը տարակուսեցին գյուղացիության հեղափոխական ունակությունների վրա: Արդյունքում՝ գնալով ավելի շատ արմատականներ հեղափոխություն իրականացնելու հույսը կապեցին նոր դասակարգի՝ պրոլետարիատի մասնակցության հետ:

Այդ գաղափարների հիմնական աղբյուրը **մարքսիզմն էր**: Նարոդնիկների մշուշապատ իդեալիզմի հետ համեմատած՝ մարքսիստական տնտեսական մատերիալիզմը թվում էր սոցիալական զարգացման վերլուծության գիտականորեն արժանահավատ եղանակ: Այն **հասարակությունը պարզորոշ բաժանում էր շահագործողների ու շահագործվողների, և հնարավորություն էր տալիս ըմբռնելու «դասակարգային պայքարի» և հեղափոխության անհրաժեշտությունը**: Բացի այդ, թվում էր, թե այն ի վիճակի է բացատրելու սոցիալական հարաբերությունները՝ մարդկության ամբողջ պատմության ժամանակաշրջանի և երկրագնդի ցանկացած



մասում:

Մարքսիզմի հրապուրիչ կողմերից մեկն էլ այն էր, որ ժամանակակից էր ու կյանքի հետ սերտորեն կապված: Խոսելով այն մասին, որ արդեն մոտ է կապիտալիստների ու պրոլետարիատի դիմակայությունը, Մարքսը կանխագուշակում էր, որ մեծագույն հեղափոխությունն աշխարհում տեղի կունենա մոտ ապագայում: Հաղթելով այդ տիտանական պայքարում, պրոլետարիատը կսկսի սոցիալիզմ կառուցել: Այսպիսով՝ մարքսիզմը արմատականորեն ոչ միայն նոր լավատեսություն էր ներշնչում, այլև ստիպում էր հավատալ, որ հենց իրենք կդառնան այդ դարակազմիկ իրադարձությունների մասնակիցն ու շարժիչ ուժը:

Մարքսիստական գաղափարներն Ուկրաինայում բավական վաղ հայտնվեցին, երբ Զիբերը, որին Մարքսը բարձր էր գնահատում, 1871 թ.-ին իր գործընկերներին և ուսանողներին առաջին անգամ ծանոթացրեց այդ գաղափարներին: Խորհրդային հետազոտողները պնդում էին, թե Զիբերին չհաջողվեց մարքսիզմի նկատմամբ հետաքրքրություն առաջացնել այն պատճառով, որ նրա ուշադրության կենտրոնում մարքսիզմի տնտեսական բովանդակությունն էր, և ոչ թե հեղափոխական եությունը: Եվ բացի այդ՝ արդյունաբերությունն Ուկրաինայում դեռ լայն թափ չէր ստացել և պրոլետարիատը շատ փոքրաթիվ էր:

Սովորաբար, մարքսիզմի հետ ռուսական մտավորականությանը ծանոթացնելու պատիվը վերագրվում է **Գեորգի Պլեխանովին**՝ նախկին նարոդնիկին, որ մարքսիզմի գաղափարներին առաջին անգամ ծանոթացավ Եվեյցարիայում, վտարանդիության ժամանակ: Նա ժնկում **1883 թ.-ին ստեղծեց ռուսական առաջին մարքսիստական խումբը՝ «Աշխատանքի ազատագրումը»**, որն զբաղվում էր Մարքսի գործերը թարգմանելով, հրատարակելով և Ռուսաստանում գաղտնի տարածելով:

Ուկրաինայում մարքսիստական առաջին կայուն խումբը՝ **«Սոցիալ-դեմոկրատների ռուսական խումբ» անվանմամբ, հիմնադրվեց Կիևում՝ 1893 թ.-ին, որ շատ բաներում պարտական էր Յուվենալի Մելնիկովին**՝ ռուս բանվոր, որ արհեստագիտական դպրոց ստեղծեց և զբաղվում էր նաև մարքսիստական գաղափարների տարածմամբ: Մարքսիստական խմբեր ստեղծվեցին նաև Խարկովում, Օդեսայում և Եկատերինոսլավում: Այդ խմբերում շատ քիչ ուկրաինացիներ կային և հիմնականում բաղկացած էին ռուսներից, հրեաներից ու լեհերից: Նման ազգային կազմ ունենալը լրիվ հասկանալի է, եթե ի նկատի ունենանք, որ սոցիալ-դեմոկրատներն իրենց ուշադրությունը կենտրոնացրել էին հիմնականում ոչ-ուկրաինացի պրոլետարիատի վրա, որի հետ ուկրաինական մտավորականությունը գրեթե կապ չուներ, քանի որ նրա ուշադրության կենտրոնում էլ գյուղացիությունն էր:

Ռուսաստանում սոցիալ-դեմոկրատական շարժումը դանդաղ էր զարգանում: 1898 թ.-ին Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության (ՌՄԴԿ) անդամներից շատերը ձերբակալվեցին: 1903 թ.-ին, կուսակցությունը վերականգնելու համար՝ ստիպված արտասահմանում համագումար հրավիրվեց: Սակայն, համագումարը կուսակցության մեջ համերաշխություն հաստատելու փոխարեն, պառակտում առաջացրեց նրա շարքերում, ինչը հսկայական նշանակություն ունեցավ Ռուսաստանի և Ուկրաինայի համար: Մեծամասնությունը (կամ «բոլշևիկները»)՝ **Վլադիմիր Ուլյանովի (Լենինի)** գլխավորությամբ, կանգնած էր արհեստավարժ հեղափոխականների կարգապահ ու կուռ կազմակերպություն ստեղծելու դիրքերում, որը պրոլետարիատի առաջատար դերը կստանձներ: **Լենինի ու բոլշևիկների երևան գալը պատմական հեռանկարի առումով վիթխարի նշանակություն ունեցող իրադարձություն էր, որը սակայն, այս ժամանակ աննկատ մնաց Ռուսաստանի ժողովրդի կողմից:** Ինչ վերաբերում է ցարական ոստիկանությանը, ապա գերազանց տեղեկացված լինելով սոցիալ-դեմոկրատների գործունեության վերաբերյալ, համարում էր, թե մարքսիզմի նման բարդ ու ոչ ճկուն տեսության վրա հիմնված ցանկացած շարժում՝ կայսրության մեջ հաջողության հասնել չի կարող:

### Ոչ-ուկրաինական մյուս կուսակցություններն Ուկրաինայում

Սոցիալ-դեմոկրատների հզորանալը նրանց գաղափարական հակառակորդներին՝ նարոդնիկներին, ստիպեց ակտիվանալ: 1901 թ.-ին նրանք ստեղծեցին սոցիալիստ-հեղափոխականների կուսակցություն (*Խեռներ*), որի գաղափարախոսությունը հին նարոդնիկական սկզբունքների ու մարքսիստական նոր գաղափարների խառնուրդ էր, իսկ գործելու կերպը առաջվա պես ենթադրում էր քաղաքական սպանությունները: Արմատականների ակտիվությունը վերջիվերջո ստիպեց նաև ազատականներին, որ կենտրոնացել էին զեմստվոներում և սահմանադրական կարգերի կողմնակից էին, ստեղծել իրենց կուսակցությունը: 1904 թ.-ին

նրանք ստեղծեցին **«Ազատագրության միությունը»**, որն հետագայում վերածվեց **սահմանադրական-դեմոկրատական կուսակցության (կադետներ)**: Հակամիապետական գաղտնի կազմակերպությունների աճից անհանգստացած, կառավարությունն աշխատում էր հավասարակշռել քաղաքական դաշտը՝ օժանդակելով **«Ռուս ժողովրդի միություն»** միապետական կուսակցության նման գերազգայնական կուսակցությունների ու խմբերի ստեղծմանը: Այդ ծայրահեղ աջ խմբավորումները, որ վայելում էին նաև ուղղափառ հոգևորականության հզոր հովանավորությունը, ժողովրդի մեջ **«սև հարյուրյակ»** անվանումն ստացան և մասնագիտացան Ուկրաինայում հրեաներին հալածելու և հակաուկրաինականություն քարոզելու մեջ: Իրենց քաղաքական կազմակերպություններն ստեղծեցին նաև ազգային փոքրամասնությունները: Լեհերին ներկայացնում էր **Լեհական սոցիալիստական կուսակցությունը**, հրեաներին (իսկ նրանք քաղաքականապես առավել ակտիվ ու կազմակերպված էին)՝ **«Պոալեյ Ցիոն»** ազգայնական կազմակերպությունն ու մարքսիստական **«Բունդը»**:

Չի կարելի ասել, թե Ուկրաինայում ռուսական կուսակցությունները բաղկացած էին բացարձակապես ռուսներից: Կադետների ու Խեռների կուսակցությունների մեջ քիչ չէին նաև ռուսացած և նույնիսկ ազգայնորեն գիտակից ուկրաինացիները, որոնք կարծում էին, թե այդ ճանապարհով առավել արդյունավետ կարելի է պայքարել ցարիզմի դեմ: Շատ «մալոռուսներ» մասնակցում էին նույնիսկ ծայրահեղ ազգայնական, հակաուկրաինական կազմակերպությունների գործունեությանը՝ ռուսների հետ մրցելով ցարի նկատմամբ իրենց օրինապահությունն ու նրա թշնամիների նկատմամբ ատելությունը ցուցադրելու մեջ:

Ռուսական և ոչ-ուկրաինական կուսակցությունների վերաբերմունքը ուկրաինական շարժման նկատմամբ միանշանակ չէր: Սոցիալիստ-հեղափոխականները, որպես ապակենտրոնացած կողմնակիցներ, եթե չէին էլ խրախուսում ուկրաինացիների ծգտումները, զոնե ըմբռնումով էին մոտենում նրանց: Լեհական սոցիալիստները, և հատկապես սիոնիստներն ու «Բունդը», որոնք ուկրաինացիների հետ համատեղ ծգտում էին ինքնավարության և մշակութային իրավունքների պաշտպանության, հաճախ համագործակցում էին ուկրաինական խմբերի հետ: Միևնույն ժամանակ մարքսիստները, հատկապես բոլշևիկները, երբ ընդհանրապես հազվադեպ անդրադառնում էին ազգային հարցին, միշտ չէ, որ կարողանում էին քաբքնել իրենց «սոցիալիզմը» ուկրաինական «առաջատորական» միտումների նկատմամբ:

## Ուկրաինական քաղաքական կուսակցությունները

1880-1900-ական թվականների քաղաքական վերելքը, որ ընդգրկել էր ռուսներին և կայսրության մյուս ժողովուրդներին, չչրջանցեց նաև ուկրաինացիներին: Նրանց ակտիվությունը մի կողմից պատասխան էր 1880-ականների ճնշումներին ու հալածանքներին, մյուս կողմից՝ պայամանավորված էր հարաճուն ու թարմ գաղափարներ ունեցող ռուս արմատականների ոգեշնչող օրինակով: Եվս մեկ կարևոր խթան հանդիսացավ ուկրաինացի գործիչների նոր սերնդի երևան գալը, որոնք հաստատուն կանգնած էին իրենց ազգային «Ես»-ի դիրքերում, հպարտությամբ էին իրենց անվանում «գիտակից ուկրաինացիներ» և մարտականորեն էին հանդես գալիս իրենց ժողովրդի ազգային իրավունքների, քաղաքական ազատության և սոցիալական արդարության պաշտպանության դիրքերից:

Այդ «նոր» ուկրաինացիների սերունդը հիմնականում ձևավորվում էր գիմնագիական ու համալսարանական միջավայրում, որտեղ անձնական կապեր էին հաստատվում և ծավալվում ու զարգանում էին գաղափարներ, որոնք ցարիզմին հակադրվելու և նրա դեմ պայքարի ուղիներ էին նախանշում: Երիտասարդների ուղին դեպի ուկրաինական շարժում՝ քաջ հայտնի ու պարզ էր: Սկզբում երիտասարդը գիմնագիայում ընկնում էր «քայքայիչ» գաղափարների ազդեցության տակ, որտեղ ազատամիտ ուսուցիչը կամ ավագ ընկերները նրան ծանոթացնում էին արգելված գրականության հետ և ներգրավում էին երկխոսությունների ու քանակիծային գաղտնի խմբակներում: Արդեն համալսարանում նա ընդունվում էր ուսանողական հրոմադայի մեջ, որոնցից մի քանիսը, օրինակ՝ Կիևում և Պետերբուրգում, հարյուրավոր անդամներ ունեին: Ներգրավվելով հրոմադայում, ուսանողն հայտնվում էր գաղափարական բանավեճերի միջավայրում, ծանոթանում էր նշանավոր գործիչների հետ և հաճախ մասնակցում էր գաղտնի գործունեության (հաճախ դա հակացարական գրականության հրատարակումն ու տարածումն էր):



Ուսանողության արձատյակն առաջինը խորանում էր կառավարության հետ բախումների ընթացքում: Օրինակ՝ 1901 թ.-ին կառավարությունը Կիևի համալսարանի 183 ակտիվ ուսանողների բռնությամբ ուղարկեց զինվորական ծառայության: Դա հանգեցրեց ուսանողական հանրաշխության գանգվածային գործադուլների և ուսանողության նոր վտարումների, որից հետո նրանցից շատերը վերջնականապես կանգնեցին հեղափոխական պայքարի ուղու վրա: Պարզ է, որ ուսանողության հիմնական մասն ընդհանրապես չէր մասնակցում քաղաքական գործունեությանը, կամ՝ թողնում էր ուսումնառությունից հետո: Այնուամենայնիվ՝ գրեթե բոլոր ուկրաինական քաղաքական առաջնորդները ժամանակին հայտնի էին որպես ուսանողական ակտիվիստներ և ուսանողական հրոմադաների անդամներ էին, որոնք փաստորեն ուկրաինական քաղաքական կազմակերպությունների նախահիմքն ու կորիզն էին կազմում:

Այդ երիտասարդ «գիտակից» ուկրաինացիների կազմակերպչական անդրանիկ ելույթը տեղի ունեցավ 1891 թ.-ին, երբ մի խումբ ուսանողներ՝ Իվան Լիպայի, Բորիս Զիրինցենկոյի և Միկոլա Միխնովսկու գլխավորությամբ, հավաքվեցին Տարաս Շևչենկոյի գերեզմանի մոտ և հիմնեցին «Տարասականների եղբայրություն»: Անհանգստանալով, որ ուկրաինացի լավագույն երիտասարդությունը դիմում է դեպի ռուսական հեղափոխական կազմակերպությունները, եղբայրության գործիչները որոշեցին ուկրաինական շարժումը վերածել ռուսական արձատյակնառության և ընդհանրապես ռուսական մշակույթի լուրջ երկրնորայնի: Նրանք կապեր հաստատեցին Կիևի, Օդեսայի, Պոլտավայի ու Չեռնիգովի ուսանողական խմբերի հետ, օժանդակեցին կազմակերպել դասախոսություններ, թատերական ներկայացումներ ու տոնակատարություններ՝ ի պատիվ Տ. Շևչենկոյի: Այդ խմբերի որոշ անդամներ միացան հրատարակչական ընկերությանը, որ մոտ 80 անդամ ուներ, հիմնականում՝ տարրական դպրոցների ուսուցիչներ, որոնք զբաղվում էին գյուղացիության և ուսանողության մեջ ուկրաինական գրականություն տարածելով: Լիպան և նրա ընկերները նաև կոչ արեցին ուկրաինացի գրողներին՝ իրենց ստեղծագործություններում հետևել եվրոպական, և ոչ թե ռուսական օրինակներին:

Սակայն եղբայրության ամենաուշագրավ նվաճումը Լվովի «Պրավդա» ամսագրում հրատարակած «Երիտասարդ ուկրաինացիների հավատո հանգանակ» նշանավոր և տպավորիչ փաստաթուղթն էր, որ տողորված էր ազգային գաղափարների մարտնչական ոգով և սուր քննադատություն էր պարունակում ուկրաինացիների նկատմամբ՝ ռուսական մշակույթից նրանց հոգևոր և մտավոր կախվածության համար: Զեղինակները վստահորեն հայտարարում էին, որ իրենք լինելու են այն, ինչ երբեք չի եղել ավագ սերունդը՝ ճշմարիտ ուկրաինացի մտավորականներ: Որպես իրենց «աներկբա ուկրաինության ապացույց»՝ նրանք պարտավորվում էին խոսել միայն ուկրաիներեն, իրենց երեխաներին դաստիարակել «ուկրաինական ոգով», պահանջել դպրոցներում ուկրաիներեն լեզվի դասավանդում և ցանկացած պարագայում պաշտպանել ուկրաինական հարցը: Նրանց քաղաքական նպատակը՝ ֆեդերատիվ-ժողովրդավարական Ռուսաստանի կազմում ուկրաինացիներին որպես առանձին ազգ ճանաչելն էր: Սակայն, չնայած այդ համարձակ հայտարարություններին ու մշակութային տեղագրին գործունեությանը, եղբայրությանը գործնականում չհաջողվեց որևէ եական արդյունքի հասնել և շուտով այն տարրալուծվեց ուկրաինական քաղաքական այլ խմբավորումների մեջ:

Ընդհանուր դժգոհության խուլ խլրտումը, երիտասարդների ղեկավարությամբ նոր խմբերի առաջացումը, հրոմադաների քանակական աճը՝ այս բոլորը միասին վերջիվերջո ստիպեցին 1880-ականներից լուծված սերնդին ևս շարք վերադառնալ: 1897 թ.-ին, Անտոնովիչի և Կոնիսկու նախաձեռնությամբ ստեղծվեց մի գաղտնի կազմակերպություն, որի խնդիրը կայությունը բոլոր ուկրաինական հասարակական ուժերի համախմբումն էր: Նոր կազմակերպությունը մոտ 20 հրոմադաների, ուսանողական բազմաթիվ խմբերի ու առանձին անհատների մի հսկայական միավորում էր: Այն կոչվեց «Ուկրաինական անկուսակցական համընդհանուր կազմակերպություն» (ՌԻՄԿ), որի կենտրոնը գտնվում էր Կիևում: Ոստիկանության տվյալներով՝ կազմակերպության ակտիվը կազմում էր մոտ 450 մարդ, որոնցից մոտ 100-ը ապրում էին Կիևում: ՌԻՄԿ-ի առաջին միջոցառումը, սովորականի նման, եղավ փորձ՝ տպագրել «Ուղերձ ուկրաինացիներին»: Կիևում հիմնվեցին հրատարակչություն և գրախանութ: ՌԻՄԿ-ն կազմակերպում էր նաև Տ. Շևչենկոյի և ուկրաինական այլ նշանավոր գրողների հորեյանական միջոցառումներ, որ նպաստում էին ուկրաինացիների բարոյական ոգու բարձրացմանը: Այդ առումով հատկապես նշանակալից եղան Իվան Կոտլյարևսկու (1903 թ.)

և Միկոլա Լիսենկոյի (1904 թ.) հորեյանները, որոնց մասնակցում էին հազարավոր ուկրաինացի մտավորականներ, այդ թվում և Արևմտյան Ուկրաինայից: Դայրենասիրական գործունեության պատճառով ոստիկանության հետապնդումներից տուժած մարդկանց օգնելու համար՝ ՌԻՄԿ-ն հատուկ հիմնադրամ ստեղծեց: Սակայն, եթե ՌԻՄԿ-ի ի հայտ գալն ապացույց էր այն բանի, որ ավագ սերունդը գիտակցում էր համազգային կազմակերպվածության անհրաժեշտությունը, ապա նրանց գործունեության բնույթը ցույց տվեց, որ առաջվա պես չեն ցանկանում լուսավորչական գործունեությունից անցնել քաղաքականության: Այսպիսով՝ XIX դարավերջին, երբ նույնիսկ ազգային փոքրամասնություններն (հրեաներն ու լեհերը) էին արդեն իրենց քաղաքական կուսակցություններն ստեղծել, ուկրաինացիները դեռ չէին որոշել այդ քայլին դիմել:

### Զեղափոխական ուկրաինական կուսակցություն (ՅՈՒԿ)

Եվ դարձյալ հենց Խարկովում ստեղծվեց ուսանողների մի խումբ, որն իր վրա վերցրեց կուսակցություն հիմնելու նախաձեռնությունը: Այդ խմբի մեջ էին Լ. Մացիկիչը, Յուրի Կոլլարոբ, Օ. Կովալենկոն և հին ուկրաինասերների որդիներ Դմիտրո Անտոնովիչը, Միխայլո Ռուսովը և Գ. Պոզնանսկին: 1900 թ.-ի հունվարին նրանք հիմնեցին Զեղափոխական ուկրաինական կուսակցությունը (ՅՈՒԿ), որը լավ կազմակերպված ընդհատակյա խումբ էր: Արևելյան Ուկրաինայի այդ առաջին քաղաքական կուսակցության նպատակը՝ հանուն սոցիալական ազատագրման և ազգային իրավունքների պայքարի, հասարակության տարբեր սերունդների ու շերտերի միավորումն էր: Խարկովցիների նախաձեռնությունը սատարելու հատուկ պատրաստակամությամբ հանդես եկավ ուսանողությունը: 1902 թ.-ի սկզբին արդեն ՅՈՒԿ-ի վեց խումբ էր գործում՝ Կիևում, Խարկովում, Պոլտավայում, Լուբնիում, Պրիլուկիում և Եկատերինոսլավում, որոնց գործունեությունը համաձայնեցնում և ուղղորդում էր Կենտրոնական կոմիտեն: Կուսակցությանը միացան նաև գիմնազիականների ու համալսարանականների մի շարք փոքրիկ խմբավորումներ: Լվովում (Գալիչիմա) և Չեռնովցիում (Բուկովինա) ստեղծվեցին կուսակցության արտասահմանյան բյուրոներ, որոնք հրատարակչական գործունեություն էին իրականացնում: ՅՈՒԿ-ը հրատարակում էր «Դասուլ» («Կոչ») ամսագիրը և «Սելյանին» («Գյուղացի») թերթը, որոնք գաղտնաբար բերվում էին Ռուսական կայսրություն և տարածվում գյուղացիության շրջանում:

Շուտով կուսակցությունը դժվարությունների հանդիպեց, ամենից առաջ՝ գաղափարական: Այն հատուկ ծրագիր չուներ: Ամենասկզբից խնդիր առաջացավ. ո՞ր հարցերն են առաջնային՝ ազգային, թե՞ սոցիալ-տնտեսական: Սկզբում, երբ կուսակցությունը «Ինքնուրույն Ուկրաինա» խորագրով փաստաթուղթ հրատարակեց, որի հեղինակը կրակոտ ազգայնական Միկոլա Միխնովսկին էր, թվաց թե կուսակցության գործունեությունը մեծ մասամբ նվիրված է լինելու ազգային խնդիրներին: Սակայն, ժամանակի ընթացքում, երբ անհրաժեշտություն առաջացավ կուսակցության ազդեցության ոլորտն ընդլայնելու «գիտակից ուկրաինացիներին» շրջանից դուրս՝ գյուղացիության համակրանքը շահելու նպատակով, ՅՈՒԿ-ը շեշտադրումը տեղափոխեց սոցիալ-տնտեսական հարցերի վրա: Բացի այդ, նրա շատ անդամներ ավելի ու ավելի էին տարվում մարքսիստական գաղափարներով, ինչն աստիճանաբար կուսակցությունը վերածեց սոցիալ-դեմոկրատական կազմակերպության:

Այս ամենը ուժեղացնում էր լարվածությունը ՅՈՒԿ-ի անդամների միջև հարաբերություններում: Մեծամասնությունը՝ Միկոլա Պորշի, Կոլոդիմիր Կիցնիչենկոյի և Սիմոն Պետլյուրայի գլխավորությամբ, պնդում էին, թե կազմակերպությունը պետք է լինի ազգային կուսակցություն՝ բաղկացած ուկրաինացիներից, բայց ազգային կանխադրությունները միակցելով մարքսիզմի հետ: Մյուսները (որոնց տեսակետներն առավել պարզորոշ արտահայտում էր Մարյան Սելենսկին) համարում էին, որ ՅՈՒԿ-ը պետք է համահարթեցնի իր ազգային դեմքը և դառնա Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության ինքնուրույն մի բաժանմունքը, որը կներկայացնի Ուկրաինայի բոլոր բանվորներին՝ անկախ նրանց ազգությունից:

Այստեղ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել ներկուսակցական խմբավորումների բնույթին: Արձատյակն մտավորականությունը անողոր քայքայ էր մղում ցարական ինքնակալության դեմ, ինչն ըստ էության բարենպաստ չէր կարող լինել հանդուրժողականության մթնոլորտ առաջանալու համար, որում հնարավոր էր նաև այնպիսի սկզբունքներ մշակելու հնարավորությունը, ինչպես փոխզիջման արվեստն ու որոշումներ ընդունելիս մեծամասնության իրավունքն էր, որ վաղուց հայտնի էին Արևմուտքում: Այդ պատճառով էլ ներկուսակ-



ցական խմբավորումները գործնականում բնորոշ էին հեղափոխական շարժման բոլոր ուղղություններին: Եթե հեղափոխականների որևէ խումբ չէր համաձայնվում մի այլ խմբի հետ, այն սովորաբար երբեք չէր նահանջում իր դիրքերից և մոլեռանդորեն մեղադրում էր իր գաղափարական հակառակորդին: Լավագույն դեպքում՝ հիմարության մեջ, ծայրահեղ դեպքում՝ հետադիմության: Այնուհետև, համոզված իր ճշմարտացիության մեջ, այդ խումբը խզում էր կապերն իր կազմակերպության հետ և իր սեփականն էր ստեղծում: Հաճախ ատելությունը նախկին գործընկերների նկատմամբ նույնքան խորն էր լինում, որքան ցարական ռեժիմի նկատմամբ:

Այն, որ ուկրաինացիներն այս առումով բացառություն չէին, վկայում են ՀՌԿ-ում տեղի ունեցած պառակտումները: 1902 թ.-ին, Միխնովսկու արմատական ազգայնական գաղափարների ազդեցության տակ գտնվող կուսակցության սակավաթիվ մի խումբ անջատվեց և ստեղծեց մի փոքրիկ կուսակցություն՝ «**ժողովրդական ուկրաինական կուսակցությունը**»: Երկու տարի անց, Մելենսկու գաղափարակիցները, որ բավականին զգալի փոքրամասնություն էին կազմում, թողեցին կուսակցությունն ու միացան ռուս սոցիալ-դեմոկրատներին: Մելենսկու խմբավորումը, որ կոչվում էր «**Սպիկա**» («Միություն») և հենվում էր ռուսական կազմակերպության աջակցության վրա, Ուկրաինայում մարքսիստական առաջատար կուսակցության հավակնություն ուներ: Այն, ինչ մնաց ՀՌԿ-ից, վերանվանվեց *Ուկրաինական սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցություն (ՌՄԴԲԿ)*՝ շարունակելով իր ծրագրում միավորել ազգային կանխադրույթներն ու մարքսիզմը:

Ուշագրավ էր ՀՌԿ-ի գործունեության ելակետը մյուս ոչ-ուկրաինական մարքսիստական կուսակցությունների հետ հարաբերություններում: Ռուսական սոցիալ-դեմոկրատների հետ շփումներն հաստատեցին նրանց ուկրաինացի գործընկերների վաղուցվա կասկածները, թե ռուս հեղափոխականներն իրենց կենտրոնամետ հակումներով գրեթե չեն տարբերվում ցարական կառավարությունից: Ժամանակ առ ժամանակ, երբ ՀՌԿ-ը փորձում էր համագործակցել ՌՄԴԲԿ-ի հետ, նրանց միջև բռնկվում էին անպտուղ երկխոսություններ, քանի որ վերջինս հրաժարվում էր՝ ուժերը համախմբելու դեպքում, ուկրաինական կազմակերպությանը ինքնավարություն երաշխավորել: ՀՌԿ-ի հարաբերությունները Լեհական սոցիալիստական կուսակցության, և հատկապես հրեական Բուևդի հետ, ընդհակառակը՝ պարզապես հիանալի էին: Այն հատկապես ակնառու երևում էր, երբ ՀՌԿ-ը անողոք քննադատում էր հրեաների նկատմամբ խտրականությունը Ռուսաստանում, իսկ Բուևդն աջակցում էր ուկրաինացիներին ինքնավարության ձգտման մեջ՝ ՌՄԴԲԿ-ի հետ միանալու դեպքում:

### **Չափավորները**

ՀՌԿ-ը ոչ միայն նոր կուսակցություններ ծնեց, այլև ՌԻԱՀԿ-ի մեջ միավորված ուկրաինացի չափավորներին ստիպեց այնպիսի քայլերի դիմել, որոնցից նրանք երկար ժամանակ խուսափում էին: 1904 թ.-ին՝ *Եվինեն Չիկալենկոյի* կոչով, ՌԻԱՀԿ համագումարը որոշում ընդունեց կազմակերպությունը վերափոխել ազատական կուսակցության, որի նպատակների մեջ մտնում էին սահմանադրական կարգերի հաստատումը, սոցիալական բարեփոխումների իրագործումը և Ռուսաստանի ֆեդերատիվ հանրապետության կազմում ուկրաինացիների ազգային իրավունքների լիիրավ ապահովումը: Մեծ մասամբ այդ որոշումն ընդունվեց այն մտավախությունից, թե երիտասարդ արմատական-սոցիալիստները կգլխավորեն ազգային շարժումն ու կտանան այնպիսի ուղիով, որով կդժվարանան հետևել պատկառելի պրոֆեսորները, կառավարական պաշտոնյաներն ու զենստվոյական գործիչները: Հասկանալի է, որ այստեղ էլ գաղափարական հակասություններ ու խմբակային պառակտումներ առաջացան, սակայն 1905 թ.-ին ազատականները, որ միանգամից երկու կուսակցություն էին ստեղծել արմատական (ծախ միտումներով) և դեմոկրատական (առավել չափավոր), միավորվեցին, վերանվանվելով «**Ուկրաինական դեմոկրատական-արմատական կուսակցություն**» (ՌԴՂԿ): Սակայն նոր անվանումով էլ այն ըստ էության մնում էր ազատական կուսակցություն՝ հար և նման ռուսական կաղետներին:

Այսպիսով, 1905 թ.-ին ուկրաինական շարժումը նշանակալիորեն աճեց: Առաջացան տարբեր կուսակցություններ, որոնք Ուկրաինայում ազգային, քաղաքական ու սոցիալ-տնտեսական խնդիրները լուծելու դեղատոմսերի մի ամբողջ հավաքածու էին առաջարկում: Սակայն այդ բոլոր կուսակցություններն էլ առաջվա պես հիմնականում բաղկացած էին մտավորականներից և նրանց մեջ միասնություն չկար: Բացի այդ, քանի որ գրեթե ողջ ուկրաինական մտավորականությունն այս կամ այն չափով հակված էր ծախ հայացքներին, ուկրաինա-

կան քաղաքական լուսապատկերում բացակայում էր պահպանողականությունը, ինչն ստիպում էր դրա կողմնակիցներին միավորվել ռուս պահպանողականների հետ: Այնուամենայնիվ, չնայած բոլոր այս թերություններին, պարզ էր, որ *ուկրաինական շարժումը վերջապես դուրս է եկել մշակութայնության սահմաններից և նոր՝ քաղաքական զարգացման փուլ է մտել:*

### **1905 թ.-ի հեղափոխությունը**

Ռուսական առաջին հեղափոխությունն սկսվեց «*արյունոտ կիրակիով*»՝ հունվարի 9-ին (22-ին), երբ ռուսականությունը զնդակահարեց բանվորների խաղաղ ցույցը, որը գլխավորում էր ուկրաինացի հոգևորական *Գեորգի Գապունը*: Այդ օրը մոտ 130 մարդ զոհվեց և հարյուրավորներ վիրավորվեցին: Երբ այդ իրադարձության պատճառած առաջին ցնցումներն հանդարտվեցին և կայսրությունով մեկ գայրույթի ալիք անցավ, բավական կտրուկ փոխվեցին մինչ այդ ցարին հավատարիմ բանվորների ու գյուղացիների տրամադրությունները: «*Հոր և բարերարի*» կերպարը ծաք տվեց, և բոլորի համար պարզ դարձավ իշխանությունների անհավատալի ապաշնորհությունը: *Կառավարության հարուցած համընդհանուր գայրույթն արագորեն փոխակերպվեց հեղափոխականների նկատմամբ համակրանքի, և րոտքների պատրաստակամություն ծնեց:*

Գարնանն ու ամռանը կայսրությունում գործադուլների ալիք բարձրացավ: Գործադուլային շարժման բարձրակետում (1905 թ.-ի հոկտեմբեր) համընդհանուր գործադուլին 2 մլն աշխատավոր մասնակցեց (120 հազ.-ը՝ Ուկրաինայում): Միաժամանակ գյուղերում արագորեն տարածվում էին գյուղացիական խռովությունները, որ սովորաբար հանգում էին կալվածքներն այրելուն ու թալանելուն: Հուզումներն ընդգրկեցին նույնիսկ բանակը, ուր մի շարք ապստամբություններ տեղի ունեցան, որոնցից ամենահայտնին Օդեսայի նավահանգստում կայանած «*Պոտյոմկին*» զրահանավի խռովությունն էր: Հրաժարվելով ափին գտնվող գործադուլավորների վրա կրակ բացելուց, «Պոտյոմկինի» անձնակազմը, որ հիմնականում ուկրաինացիներից էր բաղկացած և որոնց գլխավորում էր խարկովի նահանգի ծնունդ *Օպանաս Մատյուշենկոն*, ապստամբեց և զավթեց զրահանավը: Ապստամբներին միացած մի քանի սպաների թվում էր նաև ՀՌԿ-ի անդամ *Օ. Կովալենկոն*:

Գնալով հզորացող հեղափոխական շարժումն ստիպեց Նիկոլայ երկրորդին գնալ զիջումների, որոնց զազաթնակետը եղավ *1905 թ.-ի հոկտեմբերի 17-ի Մանիֆեստը*, որով ցարն իր հպատակներին քաղաքացիական լիակատար իրավունքներ էր շնորհում և խոստանում էր *Պումա* (խորհրդարան) գումարել: Թվում էր, թե ուր որ է կայսրությունը կվերափոխվի սահմանադրական միապետության:

### **Չեղափոխության ազդեցությունն Ուկրաինայի վրա**

Չեղափոխությունն ուկրաինական շարժմանը երկու արմատական փոփոխություն բերեց. *վերջապես վերացրեց ուկրաիններն տպագիր խոսքի ատելի սահմանափակումները*, որ գոյություն ունեին 1876 թ.-ից, և *թույլ տվեց ուկրաինացիներին միավորվել հասարակական լեզու կազմակերպությունների մեջ*: Արդյունքը տպավորիչ էր, արագ ու ծավալուն. եթե 1905 թ.-ի նոյեմբերին ուկրաինական միայն մեկ թերթ էր հրատարակվում, ապա 1906 թ.-ի սկզբին դրանց թիվն հասավ 17-ի: Հրատարակչությունների թիվը 2-ից հասավ 17-ի, որոնցից 13-ը գտնվում էին Կիևում: Գրեթե ամեն քաղաքում ուկրաինական ակումբներ հայտնվեցին: Բազմաճում էր «*Պրոսվիտա*»-ների քանակը՝ մշակութային-լուսավորական կազմակերպություններ, որ ստեղծվում էին ըստ գալիցյանների պատկերի ու նմանության: Արևելյան Ուկրաինայում առաջին «Պրոսվիտան» ստեղծվեց 1905 թ.-ի վերջին՝ Եկատերինոսլավում. 1907 թ.-ի կեսերին արդեն նման կազմակերպություններ գործում էին Ուկրաինայի 35 քաղաքներում, ընդ որում՝ նրանցից յուրաքանչյուրն իր բազմաթիվ բաժանմունքներն ուներ հարակից գյուղերում, և նույնիսկ Չեռավոր Արևելքի ուկրաինացի վտարանդիների միջավայրում: Սակայն նույնիսկ հեղափոխության բուռն վերելքի շրջանում *կառավարությունն ամեն կերպ սահմանափակում էր «Պրոսվիտաների» աճն ու միմյանց հետ կապերը*: Ահա թե ինչպես էր դա րացատրվում փաստաթղթերից մեկում. «Հաշվի առնելով, որ «Պրոսվիտաների» գործունեության բնույթը և այն միջոցները, որոնցով նրանք մտադիր են ազդել ժողովրդի վրա, ներկայիս անկարգությունների պայմաններում խիստ վտանգավոր են... և ի նկատի ունենալով, որ Մալոռոսիան հանդիսանում է Վելիկոռուսական կայսրության մի մասը, այդ իսկ պատճառով մալոռոսների ազգային-քաղաքական գիտակցության զարթոնքը ներկայումս անհանդուր-



ժելի է... նահանգի վարչակազմը որոշեց «Պրոսվիտա» ուկրաինական ընկերության գրանցումը մերժել»:

*Ընդլայնվում էր կոոպերատիվ շարժումը, որ սովորաբար գլխավորում էին ուկրաինացի գործիչները:* Աճեց կոոպերատիվների քանակը. Կիևի նահանգում 1904 թ.-ին կար 3 կոոպերատիվ, մինչդեռ 1907 թ.-ին դրանց թիվն հասավ 193-ի, Պոդոլյեում 1905 թ.-ի 18-ից 1908 թ.-ին հասավ 200-ի, Խարկովի նահանգում՝ 1905 թ.-ի 2-ից 1907 թ.-ին հասավ 50-ի: Միանգամայն պարզ էր, որ սահմանափակումների վերացումը ուկրաինական շարժման մեջ առավել մեծ ներուժ հայտնաբերեց, քան կարելի էր սպասել:

Կայսրության շատ քաղաքական կուսակցությունների նման, ուկրաինական կուսակցություններին ևս հեղափոխությունը անակնկալի բերեց, սակայն նրանք տենդորեն փորձեցին այդ հզոր ցնցումը ծառայեցնել իրենց շահերին: Իր եռանդով աչքի ընկավ՝ «Սպիլկան», որ ՌՄԴԲԿ-ի մենչևիկյան կողմնորոշում ունեցող ուկրաինական բաժանմունքն էր: Այն բավական հաջող գյուղացիական ելույթներ էր կազմակերպում և դրանց հաշվին համալրում էր իր շարքերը: ՀՌԿ-ի ժառանգորդ «ուկրաինական սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցությունը» այնքան էլ հաջող չէր ընդլայնում իր ազդեցությունը: Նրա կողմնակիցների հայտարարությունները, թե ՌՄԴԲԿ-ն արդեն 3 հազ. անդամ ունի, ավելի շուտ՝ չափազանցված էր: Նրա գործունեության մեջ ուշադրության արժանի (որպես բարի կամքի դստերում Բուենդի նկատմամբ) մի դրվագ էր Պոլտավայում և Լուբնիում մի քանի *դրուժինա* ստեղծելը՝ հրեական համայնքներին սատարելու և ջարդերից պաշտպանելու համար: Ուկրաինական ազատականները (ՌԴԱԿ) մտավորականության շրջանակի սահմաններից դուրս գալու համար այնքան էլ չէին մտահոգվում: Սակայն, 1906 թ.-ի գարնանը Դումայի ընտրությունների ժամանակ նրանց վարկանիշը բավական բարձրացավ:

Հեղափոխության բեկումնային պահը դարձավ 1906 թ.-ի սկիզբը, երբ ցարական կառավարության զիջումները հեղափոխական ճամբարում պառակտում առաջացրեցին: Ազատականները, սահմանադրական կառավարման խոստումով բավարարված, որոշեցին մասնակցել Դումայի ընտրություններին: Սակայն արմատականները, համառորեն պնդելով հեղափոխության խորացման և սոցիալական բարեփոխումների իրականացման անհրաժեշտության վրա, ընտրությունները բոյկոտեցին: Արդյունքում՝ ուկրաինական ուժեղագույն կուսակցությունները՝ «Սպիլկան» և ՌՄԴԲԿ-ն թեկնածուներ չառաջադրեցին և *Դումա մտավ միայն ազատականների մի փոքրիկ խումբ:* Սակայն բավականին ուկրաինացի թեկնածուներ Դումա եկան ռուսական կուսակցությունների ցուցակներով: Առաջին Դումայի 497 անդամներից Ուկրաինայի պատգամավորության մեջ կային 63 ուկրաինացի, 22 ռուս, 5 լեհ, 4 հրեա և 1 գերմանացի: Երբ Դուման գումարվեց, ուկրաինացիներն արագորեն խորհրդարանական խմբավորում կազմակերպեցին (40 հոգուց ավելի)՝ իրենց պահանջները ձևակերպելու և պաշտպանելու համար:

*Ուկրաինայի դումայական խմբավորման գլխավոր և առաջնահերթ խնդիրը Ուկրաինայի համար առավել լայն ինքնավարություն կորզելն էր:* Անսպասելի էր, բայց նրանց այդ ջանքերն ակտիվորեն պաշտպանեց ուկրաինական գյուղացիությունը: Ավելի մասնավոր, բայց ոչ քիչ ժողովրդական բնույթ ուներ դպրոցների, հատկապես՝ տարրական դպրոցների ուկրաինացման պահանջը: Սակայն կառավարությունը, որ հեղափոխական ցնցումից աստիճանաբար ուշքի էր գալիս, ընդդիմանում էր այդ պահանջին: Նա համոզված էր, որ ինքնավարության առումով զիջումները միայն ուկրաինացիների անկախանալու ակտիվորեն կգրգռեն: Ներքին գործոց նախարար Դուրնովոն տեղեկացնում էր Նիկոլայ Երկրորդին. «Կարելի է սպասել, որ այդ նահանգի (Պոլտավայի - հեղ.) գյուղացիները, հեղափոխական քարոզչության ազդեցության տակ, ինքնավարության սկզբունքի հիման վրա՝ Ռուսաստանից Ուկրաինայի անկախանալու վերաբերյալ բանաձև կընդունեն»:

*Խորհրդարանական կառավարման առաջին փորձը, Նիկոլայ Երկրորդի համար այնքան տհաճ էր, որ նա, օգտվելով իր իրավունքից, ցրեց Առաջին Դուման, որ գոյատևեց ընդամենը 72 օր:* Միայն ընտրական իրավունքի դաժան սահմանափակումներ մտցնելուց հետո, որ բավական նվազեցրեց պատվիրակների քանակը՝ հօգուտ առավել պահպանողական հարուստ խավի, III և IV Դումաներում ցարն ստացավ իրեն զոհացնող մեծամասնությունը: Հասկանալի է, որ ուկրաինական կուսակցությունները՝ բոլորն էլ ձախ կողմնորոշման, չընդգրկվեցին այդ դումաների կազմում և ուկրաինական խնդիրները դրանցում ամբողջովին անտեսվեցին:

## Հետհեղափոխական հակազդեցություն

1907 թ.-ին, հենվելով Դումայի պահպանողական մեծամասնության աջակցության վրա, կառավարությունը պատրաստ էր վճռական հակահարձակման: Հայտարարվեց արտակարգ դրություն, բոլոր ցույցերը խստորեն արգելվեցին: Կայսրությունով մեկ մոլեգնում էին զինվորական դատարանները, հեղափոխականներն ու խռովարար գյուղացիները հարյուրներով մահվան էին դատապարտվում: Քաղաքական կուսակցություններն ընդհատակ անցան, նրանց առավել հայտնի գործիչները՝ ներառյալ ՀՌԿ-ի հին ակտիվ անդամներից շատերը, փախան արտասահման: Իրար ետևից փակվեցին ուկրաինական ակումբները: Թույլատրվեց միայն մի քանի գիտական ընկերությունների և «Պրոսվիտայի» գործունեությունը, որ սահմանափակվեց սիրողական ներկայացումների բեմադրությամբ: Ուկրաինական մամուլը, որ 1905 թ.-ին հայտնվեց իր տարաբնույթ բազմազանությամբ, գործնականում վերացավ, իսկ լուսավորության ուկրաինացման վերաբերյալ խոսակցություններն իշխանությունների բացահայտ ծաղրանքին էին արժանանում:

*Կառավարության հակաուկրաինական քաղաքականությունը Ռուսաստանի հասարակության որոշակի շրջանակներ հաճույքով պաշտպանեցին:* Ռուսաստանի ազատականների հայտնի առաջնորդ Պյոտր Ստրուվեն 1908 թ.-ին մի ամբողջ շարք հոդվածներով հեղեղեց ռուսական մամուլը՝ ի պաշտպանություն «Մեծ Ռուսաստանի», որոնց մեջ ուկրաինական շարժումը խստորեն դատապարտվում էր «հայրենասիրության պակասի» պատճառով: Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին, երբ ռուսական ազգայնականությունը հասավ կույր ազգայնամոլության, շատ ռուսներ ուկրաինական գործիչներին դիտում էին որպես «դավաճանական անջատողականության» կրողների, կամ, այն ժամանակվա ուկրաինա-տյագների սիրած բառով ասած՝ որպես «մազեպայականների»: Անդադար լուրեր էին տարածվում ու քարոզվում, իբրև թե ուկրաինական շարժման առաջնորդները նյութական աջակցություն են ստանում ավստրիացիներից ու գերմանացիներից:

Ուկրաինայում ռուսական որոշ թերթեր, ինչպես «Նոր ժամանակն» ու «Կիևցին», բառացիորեն մասնագիտացել էին հակաուկրաինական տրամադրություններ բորբոքելու գործում: 1908 թ.-ին Կիևում հիմնադրվեց ռուս ազգայնականների ակումբը, որի նպատակն էր. «Հասարակական ու մշակութային պատերազմ մղել ուկրաինական շարժման դեմ և պաշտպանել Ռուսական պետության հիմքերն Ուկրաինայում»:

*Սակայն ուկրաինացիներն ունեին նաև կողմնակիցներ:* 1911 թ.-ին Մոսկվայում հրավիրված զեմստվոյական գործիչների համառուսաստանյան համագումարում՝ ի պաշտպանություն տարրական դպրոցներում ուկրաիններեն լեզվի դասավանդման, վճռական ելույթներ ունեցան Խարկովի և Պոլտավայի զեմստվոյների ներկայացուցիչները: Ուկրաինայի զեմստվոյներում ընդհանրապես տարածված էր ուկրաինական մշակույթի գործիչներին աջակցելն ու մշակույթը պահպանելը: Ակադեմիական աշխարհում ի պաշտպանություն ուկրաինական շարժման, ելույթներ էին ունենում ռուսական այնպիսի հայտնի գործիչներ, ինչպես ռուսասերներ Ալեքսեյ Շախմատովն ու Ֆյոդոր Կորշը, լեզվագետ Իվան Բոդունևը՝ *կուրտենեն:* Ուկրաինական ինքնավարության պահանջը անվերապահ պաշտպանում էր նշանավոր սիոնիստ *Վլադիմիր ժարտինսկին*՝ Օդեսայից: Սակայն, ուկրաինական շարժման նկատմամբ այդ բարյացակամները հավաղեպ բացառություններ էին ռուսական հասարակության և կառավարության հանդնդհանուր թշնամության ֆոնի վրա՝ առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին:

## Մշակույթի զարգացումը

1861-1914 թ.թ.-ները Ուկրաինայի մշակույթի պատմության առավել արգասավոր ու ստեղծագործական ժամանակաշրջան էր: Հիմնականում այդ ժամանակ տեղի ունեցող սոցիալական, քաղաքական ու տնտեսական լուրջ փոփոխությունների շնորհիվ ստեղծագործական այնպիսի հզոր ներուժ առաջացավ, որ չնայած կառավարության ճնշումներին, հաջողություններ տպավորիչ էին: Ստեղծագործական էներգիայի հզոր պոռթկումը համակայսերական երևույթ էր: Այդ շրջանը հաճախ անվանում են ռուսական մշակույթի արծաթե դար: Մանկ-Պետերբուրգում և Մոսկվայում ծնված այդ ազդակն անկասկած պետք է արտահայտվեր նաև Ուկրաինայում: Այն ամենը, ինչ այդ ժամանակ ի հայտ եկավ Ռուսաստանի և Ուկրաինայի գիտության, գրականության և արվեստի բնագավառներում, լրիվ համազոր է



եվրոպական համապատասխան բնագավառների նվաճումներին: Սակայն Ուկրաինայում, ինչպես և Ռուսական ողջ կայսրությունում, մշակութային վերելքն իր հակադիր կողմն էլ ուներ. եթե հասարակության սակավաթիվ մի շերտն օգտվում էր արագ կատարելագործվող կրթության ընձեռած հնարավորություններից և մշակույթի առումով ետ չէր մնում եվրոպայից, ապա երկրի բնակչության ճնշող մեծամասնությունն անգրագետ էր և մնում էր առաջընթացից դուրս, ճամփեգրին կանգնած: Այլ կերպ ասած, մտավորականության բարձրակարգ մշակույթը զարգանում էր՝ կտրված զանգվածների ժողովրդական մշակույթից, որտեղ փոփոխությունները գրեթե աննկատ էին:

### Կրթությունը

Եթե XVIII դարում գրագիտության ընդհանուր մակարդակը, հատկապես Չախափնյակում, ուկրաինացիների հայարտության առարկան էր, ապա XIX դարում դարձավ նրանց լրջագույն թերություններից մեկը: Այդ սարսափելի անկման չափերը պարզորոշ ցուցադրում է հետևյալ փաստը. **եթե 1768 թ.-ին Չեռնիգովի նահանգի երեք խոշորագույն գավառներում 746 բնակչին մեկ տարրական դպրոց էր ընկնում, ապա 1876 թ.-ին այդ թիվն արդեն հասնում էր 6750-ի:** Նման անկման գլխավոր պատճառը Ուկրաինայում ճորտատիրական իրավունքի տարածումն էր. կառավարության մի մասն ու ազնվականների մեծամասնությունը համոզված էին, որ ճորտերը կրթության կարիք չունեն: XIX դարասկզբին գրեթե բոլոր տարրական դպրոցները ծխական էին և գոյատևում էին աղքատ գյուղացիության նվիրատվություններով:

*Իրավիճակը փոքր-ինչ բարելավվեց գյուղացիության ազատագրումից հետո (1861 թ.), հատկապես 1870-ական թվականներին, երբ համընդհանուր լուսավորության հոգան իրենց վրա վերցրեցին զենստվոները:* Չենստվոների դպրոցական կոմիտեները, որոնցում բավական հաճախ ընդգրկվում էին առաջավոր հայացքների տեր մարդիկ, ապահովում էին դպրոցների բյուջեի 85 %-ը, ընդլայնում էին դպրոցական նոր շինությունների կառուցումը, հոգ էին տանում դասավանդման մակարդակի բարձրացման համար և եկեղեցական տեքստերն անգիր սերտելու սովորության փոխարեն դպրոցական ծրագրերում ներառում էին այնպիսի առարկաներ, ինչպես՝ մաթեմատիկան, պատմությունը, աշխարհագրությունը:

*Նկատելիորեն բարձրացավ ուսուցիչների մակարդակը, որոնցից շատերը համալսարանական իդեալիստ-չրջանավարտներ էին:* Այդուհանդերձ լուրջ խնդիրներ դեռ շատ էին մնում: Ուսումնառությունը պարտադիր չէր, և գյուղացիության մոտ երկու երրորդը երեխաներին ոչ թե դպրոց, այլ դաշտ էր ուղարկում՝ աշխատելու: *Չնայած զենստվոների, ուսուցիչների և ակադեմիկոսների մանկավարժների բազմաթիվ դիմումներին, կառավարությունն հրաժարվում էր թույլ տալ տարրական դպրոցներում ուկրաիներեն լեզվի կիրառումը, այդպիսով ուկրաինացի աշակերտներին դնելով բացառիկ անբարենպաստ վիճակի մեջ:* Վերջիվերջո, Աջափնյակում, որտեղ մինչև 1911 թ.-ը զենստվոներ չկային, լուսավորության բարելավումը պարզապես անշտը էր և կրթության մակարդակն այստեղ՝ Ռուսաստանի եվրոպական մասում, ամենացածրն էր: Իհարկե գրագիտության մակարդակն *Ուկրաինայում ամեն տեղ նույնը չէր:* XIX և XX դարերի սահմանագծում գյուղացիության միջավայրում այն միջին հաշվով կազմում էր 20 %, քաղաքներում հասնում էր 50 %-ի, իսկ Կիևի և Խարկովի բանվորների միջավայրում՝ 60 %-ի:

*Դրական շոշափելի տեղաշարժեր եղան միջնակարգ կրթության բնագավառում, որի համակարգն հիմնականում կազմում էին գիմնազիաները:* Գիմնազիաների երկու տեսակ գոյություն ուներ. ուսուցման յոթնամյա ժամկետով և չորսից-հինգամյա (այսպես կոչված՝ գիմնազիաներ): Գիմնազիաները դասական հունանիտար կրթություն էին տալիս, ուր պարտադիր դասավանդվում էին հունարեն ու լատիներեն լեզուներ, տրամաբանություն, ժամանակակից եվրոպական լեզուներ: Բացի այդ, միջնակարգ կրթության համակարգը ներառում էր նաև ռեալական ուսումնարաններ, ուր շեշտը դրվում էր ճշգրիտ և բնական գիտությունների դասավանդման վրա: *1870 թ.-ին պաշտոնապես թույլատրվեց բաց անել օրիորդաց գիմնազիաներ, որոնց վերջին դասարաններում կարելի էր ուսուցչի կոչում ստանալ:* Գրեթե բոլոր նահանգական, նույնիսկ գավառական կենտրոններում գործում էին գիմնազիաներ կամ ռեալական ուսումնարաններ. 1890 թ.-ին դրանց թիվն Ուկրաինայում հասնում էր 129-ի: Սակայն նման աճի պայմաններում անգամ՝ նրանց պահանջարկը չէր բավարարվում: Օրինակ՝ Կիևի նահանգում 560 հազ. բնակչին մեկ գիմնազիա էր ընկնում:

*1865 թ.-ին Ուկրաինայի երկու՝ Կիևի և Խարկովի համալսարանների թվին ավելացավ ևս մեկը՝ Նովոռոսիայի (Օդեսայի) համալսարանը:* Եթե 1865 թ.-ին Ուկրաինայում 1200 ուսանող

կար, ապա 1890-ականներին՝ 4000-ից ավելի: Չզալի փոփոխություն տեղի ունեցավ նաև ուսանողության սոցիալական կազմում. եթե 1865 թ.-ին 71 %-ից ավելին ազնվականների երեխաներ էին, ապա 1890-ականներին՝ 60 %-ից ավելին քահանաների, քաղաքաբնակների ու վաճառականների երեխաներ էին: 1878 թ.-ին վերջապես, համալսարաններում ուսանելու իրավունք ստացավ նաև իզական սեռը:

XIX դարի վերջին տասնամյակներում բավական բարձր համարում ունեցող Ուկրաինայի համալսարանների կյանքում հսկայական դեր խաղացին ոչ միայն ուսումնական, այլև քաղաքական խնդիրները, որ հաճախ փոխկապակցված էին արտահայտվում: Կառավարությունը, անհանգստացած այն բանից, որ համալսարանները վերածվում են արմատականների գործունեության բարենպաստ միջավայրի, 1884 թ.-ին խիստ սահմանափակեց նրանց ինքնավարությունը, իսկ ուսանողական բողոքի ցույցերն ավելի սրեցին իրավիճակը: 1905 թ.-ից հետո ուկրաինացի ուսանողները համալսարաններում ուկրաինագիտական առարկաներ մտցնելու գործունեություն ծավալեցին: 1908 թ.-ին նրանք որոշակի հաջողությունների հասան. Օդեսայում և Խարկովում ուկրաիներեն լեզվի և պատմության դասընթացներ մտցվեցին: Միևնույն ժամանակ Կիևի համալսարանի ղեկավարությունը, որ հայտնի էր իր պահպանողականությամբ, համառորեն հրաժարվում էր ընդառաջել ուկրաինացի ուսանողների պահանջներին: Իսկ երբ կայսրությունում ծավալվեց հետհեղափոխական հալածանքները, Խարկովում և Օդեսայում ուկրաիներենի դասընթացները վերացվեցին:

### Գիտական նվաճումներ

Ռուսական կայսրության մտավորականությունը, ոգևորված մի կողմից XIX դարասկզբի գիտական փայլուն հայտնագործություններով, մյուս կողմից՝ հրաժարված ռոմանտիզմի հուզականությունից ու իդեալիզմի մշուշոտ բնագանցությունից, դարավերջին դարձավ դեպի պոզիտիվիզմը, որ խոստանում էր իրական և արժանահավատ տեղեկություններ տալ ֆիզիկական և սոցիալական երևույթների բնույթի մասին: Այդ ուղղության զարգացումը լսթանվում էր հենց բուհական գիտության կազմակերպման համակարգով, ուր հիմնական շեշտը դրվում էր գործնական, լաբորատոր հետազոտությունների վրա, ինչը միավորում էր դասախոսների և ուսանողների ջանքերը՝ գիտական խնդիրներ լուծելու համար: Դա ակնառու արտահայտվում էր հատկապես բնական և ճշգրիտ գիտություններում՝ քիմիա, ֆիզիկա, մաթեմատիկա, երկրաբանություն, բուսաբանություն և կենսաբանություն: Այդ գիտությունների հեղինակության աճի պատճառներից մեկն էլ (ի տարբերություն հունանիտար և սոցիալական առարկաների) նրանց գաղափարական չեզոքությունն էր, որ հետազոտողներին հեռու էր պահում կառավարության հետ սնանատիպ հակասություններից:

Ուկրաինայում այդ ժամանակ գործում էին համառուսական, նույնիսկ եվրոպական ճանաչում գտած մի շարք հռչակավոր գիտնականներ: Դրանք էին՝ տեսական ֆիզիկայի կիևյան դպրոցի հիմնադիր *Մ. Ումովը*, Խարկովցի մաթեմատիկոս *Ա. Լյապունովը*, *Մ. Բեկետովը*՝ քիմիկոս-նորարար Խարկովի համալսարանից, սաղմնաբան *Օ. Կովալևսկին*, որի աշխատանքներով հիացած էր Չառլզ Դարվինը, *Ի. Մեչնիկովը*, որը *Մ. Չամալիայի* հետ համատեղ *1886 թ.-ին Օդեսայում հիմնեցին կայսրությունում առաջին մանրէաբանության լաբորատորիան:*

*Չնայած Ուկրաինայի առաջատար գիտնականների թվում կային և ուկրաինացիներ, սակայն բացարձակ մեծամասնություն կազմում էին ռուսները:* Դա որոշ չափով բացատրվում է նրանով, որ համալսարանական քաղաքներում ռուսները գերակշիռ մաս էին կազմում և բարձրագույն կրթություն ստանալու նրանց հնարավորություններն ավելի մեծ էին:

*Ուկրաինացիները, սակայն, առավել նշանակալի հաջողությունների հասան հունանիտար գիտությունների բնագավառում:* Ուկրաինայի (որպես ինքնուրույն միավոր, և ոչ թե Ռուսաստանի մաս) անցյալն ուսումնասիրող պատմաբանների մեջ ամենահայտնին տաղանդավոր, եռանդուն և բազմակողմանի զարգացած գիտնական *Վոլոդիմիր Անտոնովիչն էր:* Նրա բազմաթիվ փառաբանված աշակերտներից մեկը *Միխայլո Չուռլասկին էր:* Ուկրաինայի մյուս հայտնի պատմաբաններից հարկ է նշել *Օլեքսանդր Լազարևսկուն*, *Ալեքսանդր Եֆիմենկոյին* (ծագումով ռուս) և *Դմիտրո Բահալիին:* Նույնիսկ այնպիսի ռուս պատմաբաններ Ուկրաինայում, ինչպես Գեմադի Կարպովն ու Միխայիլ Վլադիմիրսկի-Բուդանովը, իրենց աշխատանքներում մեծ տեղ էին հատկացրել իրենց ապրած երկրի պատմությանը, չնայած (ինչպես և սպասելի էր) նրանց մեկնաբանությունները խստորեն տարբերվում էին իրենց ուկրաինացի գործընկերների մոտեցումներից: Գիտության այլ բնագավառների ուկրաինացի նշանավոր



գիտնականների թվին են պատկանում իրավագետ *Օլեքսանդր Կիստյակիվսկին*, տնտեսագետներ *Միկոլա Բուհեն* և *Միխայլո Տուհան-Բարանովսկին*, արևելագետ *Ազաթանգեղ Կրիմսկին* և լեզվաբան *Օլեքսանդր Պոտեբնյան*:

*Ուկրաինայի գիտնականների գործունեությանը մեծապես նպաստում էին բազմաթիվ գիտական ընկերությունները, համեմատողվները, ամսագրերը, ինչպես նաև 1861 թ.-ից հետո հիմնված գրադարաններն ու արխիվները*: «Հին ակտերի տեսակավորման ժամանակավոր հանձնաժողովը», որ գոյատևեց 1843-1917 թ.թ.-ներին (անվանումը փոփոխվում էր) և տասը տարուց ավելի գլխավորում էր անխոնջ Վ. Անտոնովիչը, *Ուկրաինայի անցյալին վերաբերվող փաստաթղթերի տասնյակ հատորներ հրատարակեց*: 1873 թ.-ից *Ուկրաինայի պատմության ուսումնասիրությանը սկսեց զբաղվել «Նեստոր-Տարեգրի պատմական ընկերությունը»*, իսկ 1882 թ.-ին «Հին հրոմագայի» ուկրաինասերները հիմնադրեցին ուկրաինագիտության մեջ մասնագիտացած «*Կիևյան հնություններ*» ռուսալեզու ամսագիրը: 1905 թ.-ի *հեղափոխությունից հետո սկսեց գործել «Կիևյան գիտական ընկերությունը»*, որ բացորոշ հայտարարեց իր մտադրության մասին՝ գիտության տարբեր բնագավառներում հետազոտություններ ծավալել՝ հիմնվելով ուկրաիներեն լեզվի վրա (կիրառելով ուկրաիներեն լեզուն): Ընկերության անդամների թիվը արագ աճում էր: 1907 թ.-ին այն բաղկացած էր 54 հոգուց, 1912 թ.-ին՝ 98, իսկ 1916 թ.-ին ընկերությունն արդեն 161 անդամ ուներ: Միաժամանակ՝ կառավարությանը դեռևս հաջողվում էր սահմանափակել ուկրաիներեն լեզվով գրականության հրատարակումը: Արդյունքում՝ 1913 թ.-ին Ուկրաինայում լույս տեսած 5283 անուն գրքերից միայն 176-ն էին ուկրաիներեն լեզվով:

### Գրականության զարգացումը

Որքան էլ զարմանալի է, սակայն, չնայած ուկրաինական մշակույթի նկատմամբ 1876-1905 թ.թ.-ների հալածանքներին, իսկ գուցե ի հեճուկս դրանց՝ *ուկրաինական գրականությանը հաջողվեց ոչ միայն վերապրել, այլև ծաղկում ապրել*: Համալսարանների շրջանավարտների աճին զուգընթաց, աճում էր և հեղինակների, և ընթերցողների թիվը: Դրան զուգարած, Գալիչինայի մամուլը ցարական գրաքննությունը շրջանցելու բոլոր հնարավորություններն ընձեռնում էր ուկրաինացի գրողներին: Թե ուկրաինական գրական շարժումը որքան հեռու էր գնացել XIX դարասկզբի մի խումբ գրողների և նույնքան էլ սակավաթիվ ընթերցողների նեղ շրջանակներից, փայլուն կերպով վկայում է, մասնավորապես, 1903 թ.-ին Պոլտավայում Կոտլյարսկու հուշարձանի բացման տոնակատարությունը, որին ակտիվորեն մասնակցում էին տասնյակ ուկրաինացի գրողներ ու հազարավոր մտավորականներ և Արևելյան, և Արևմտյան Ուկրաինայից:

Ուկրաինական գրականության բուռն զարգացմանը նպաստեց նաև գրական նոր ոճերի յուրացումը: Ռոմանտիզմը, որի հզոր ազդեցության տակ էր XIX դարասկզբին ուկրաինական մշակույթը, իր բարձր ուշադրությամբ դեպի ժողովրդի ազգային անկրկնելի յուրահատկությունը, մեծ սիրով դեպի ժողովրդական բանասիրությունը, ազգային լեզվով ու պատմությամբ իր հրապուրվածությամբ՝ դարավերջին արդեն սպառել էր իրեն: Ֆրանսիացի մտածողների (Օգյուստ Կոնտի նման) սոցիալական ուսույթի գաղափարները, որոնք ազդեցության տակ, ոգևորված ռուսական քննադատական գրականությամբ (օրինակ՝ Նիկոլայ Զեռնիշևսկի) և տեսնելով գյուղի ու ֆաբրիկայի ծայրահեղ աղքատ կյանքը, կայսրության գրողներն եկան այն համոզման, որ «արվեստն» հանուն արվեստի» կարգախոսն իր իմաստը կորցրել է: Արվեստը սոցիալական անարդարությունն ու չարիքը բացահայտելու ծառայեցնելու անհրաժեշտությունից դրդված, հույսով՝ թե դա կօգնի ժողովրդի կյանքը բարելավելու, գրողները դիմեցին գրական նոր ուղղությանը՝ ռեալիզմին:

Ուկրաինական ռեալիզմը, որ դեռևս իր մեջ ռոմանտիզմի տարրեր էր պարունակում (ամենից առաջ՝ գյուղի և գյուղացիության կյանքի վրա կենտրոնացվածությունը), վերջիվերջո, համենայն դեպս, դուրս եկավ ազգագրության նեղ շրջանակներից և խորացավ կյանքի սոցիալական ու հոգեբանական երևույթների ուսումնասիրման մեջ: *Սառիմ ռեալիստ գրողներից մեկը Իվան Նեչույ-Լևիցկին էր*, որ նկարագրում էր ճորտատիրական իրավունքի վերացումից հետո գյուղական կյանքում սկսված և ընթացող փոփոխությունները: Նեչույ-Լևիցկու ստեղծագործություններն հաճախ անհուսության զգացում էին ծնում, դառն հիասթափություն ու զարմանք էին առաջացնում կյանքի նկատմամբ, որը փոխանակ բարեփոխվելու, ավելի էր վատանում: Նրա «*Կայդաշի ընտանիքը*» վիպակի հերոսներից մեկը հարցնում է, թե ինչու է «Աստծո Աշխարհն այսքան ուրախ ու գեղեցիկ, իսկ մարդու կյանքն այսքան նողկալի»:

Գյուղի բացառիկ աղքատության, տգիտության ու նախապաշարունակների, բարոյական անկման պատճառը գրողն համարում էր հարուստների ու աղքատների միջև առաջացած անչափելի անհավասարությունը, որը «մոսկովիտների» ռեժիմի արդյունքն էր:

*Գյուղացիության կյանքի առավել խորն ըմբռնումով էին տոգորված Պանաս Միրնու (Ռուչենկո) ստեղծագործությունները*: Ի տարբերություն Նեչույ-Լևիցկու, նա չէր սահմանափակվում սոցիալական անհավասարության նկարագրություններով, այլ աշխատում էր վերլուծության ենթարկել հասարակության մեջ անհավասարության ազդեցությունն անհատի հոգեբանության վրա: «*Մի՞թե եզները բառաչում են, երբ մուրքը լիքն է*» վիպակում նա մանրամասնորեն վերլուծում և ընթերցողին ցույց է տալիս, թե ինչպես է չարը չարիք ծնում: Գլխավոր հերոսը՝ գյուղացի Զիպկան, որ ագնիվ ու օրինավոր մարդ է, բայց՝ անհնազանդ, այնքան հաճախ է բախվում անարդարությունների, ճնշումների ու խաբեության, որ հրաժարվում է ավանդական արժեքներից ու դառնում դաժան խռովարար, որի բարոյական նիհիլիզմն արտահայտվում է իր մի նախադասությամբ՝ «Եթե կարողանայի, ես կկործանեի ողջ աշխարհը... որպեսզի տեղն առաջանար նորն ու լավը»: Ռեալիզմի ևս մեկ նշանավոր ներկայացուցիչ էր *Անատոլ Սվիդնիցկին*, որի «*Լյուբոբացիները*» վեպը նվիրված է ուկրաինացի քահանայական ընտանիքի մի քանի սերունդների վրա օտար մշակույթի (հատկապես լեհական և ռուսական) ազդեցությանը:

Շատ ավելի դժվար է բնորոշել այդ ժամանակվա բազմաթիվ պոետներին: *Ամենասքանչելի պոետներից մեկը Ստեպան Ռուդանսկին էր*՝ արտակարգ տաղանդավոր, որ հռչակված էր իր սուր ու ասուլթային բանաստեղծություններով: Ականավոր բանաստեղծներ էին *Լեոնիդ Զլիբովը*, որ հանրաճանաչ առակների հեղինակ էր, և *Պավլո Գրաբովսկին*, որի հակացարական ստեղծագործությունները նրան աքսորի մատնեցին Սիբիր, ուր և անցկացրեց կյանքի մեծ մասը (նա թարգմանություններ էր կատարել նաև հայերենից, օրինակ՝ Ռ. Պատկանյանի «Արաքսի արտասուքը» - խմբ.):

Դարերի սահմանագծում գրողների նոր սերնդի ի հայտ գալու հետ մեկտեղ ավելի հաճախակի են դառնում ռեալիզմին հատուկ հասարակության օգտապաշտական քննադատության կոպիտ շրջանակներից դուրս գալու և անձնական ապրումներն արտահայտելու ուղղված գեղարվեստական վերլուծության նորագույն մեթոդներ ներդնելու նրանց փորձերը: Այդ միտումն առավել վառ արտահայտվեց այն ժամանակվա Արևելյան Ուկրաինայի գրականության երկու առաջատար դեմքերի՝ արձակագիր *Միխայլո Կոցյուբինսկու* և բանաստեղծուհի *Լեսյա Ուկրաինկայի* ստեղծագործություններում: Կոցյուբինսկու «*Սորգանի քողը*» («*Fata Morgana*») վիպակը շոշափում է գյուղում սոցիալական պայքարի ավանդական թեման: Սակայն այդ թեմայի բացահայտումը ներկայացվում է լրիվ նորարարական եղանակով: Բառերն օգտագործելով ճիշտ այնպես, ինչպես իմպրեսիոնիստները ներկերն են օգտագործում, նա ստեղծում է լարվածության ու տագնապալի սպասման զգացում, որն իր հերոսների մոտ կուտակվում, աճում ու հասնում է մինչև վախի, սարսափի, ստեղծության ու խուճապի աստիճանի: Նրա «*Սոռազված նախնիների սովերները*» վիպակն ընթերցողին տեղափոխում է հուցուլական գյուղաշխարհ, որ միաժամանակ և՛ իրական է, և՛ առասպելական՝ անընդհատ անցում կատարելով գիտակցականից ենթագիտակցականը:

*Լարիսա Կոսաչ-Վվիտկան* (գրական կեղծանունը՝ *Լեսյա Ուկրաինկա*) ծնվել է ուկրաինական ամենազարգացած ու կիրթ ընտանիքներից մեկում: Նրա մայրը հայտնի գրող *Օլենա Պիլկան* էր, քեռին՝ նշանավոր *Միխայլո Դրահոմանովը*, ազգականները՝ երգահան Միկոլա Լիսենկոն և դրամատուրգ Միխայլո Ստարիցկին: *Լեսյա Ուկրաինկան փայլուն կրթություն է ստացել, այդ թվում և՛ եվրոպական, ուկրաիներենից ու ռուսերենից բացի տիրապետել է ֆրանսերեն, իսպաներեն, անգլերեն, գերմաներեն, հունարեն ու լատիներեն լեզուներին, լինելով միաժամանակ խորապես դժբախտ, դաժանորեն տառապելով ծանր հիվանդությունից, որ ամեն պահ թունավորում էր նրա կյանքը*: Այդ իսկ պատճառով, առավել քան զարմանալի է Լեսյա Ուկրաինկայի խորախոր ու անսահման նուրբ պոեզիան՝ լեցուն ոգեշունչ կենսական էներգիայով ու լավատեսությամբ, օրինակ այն, ինչ արտահայտում է նրա «*Անհուտորեն կիռսան*» («*Contra spem spero*») բանաստեղծությունը: Բանաստեղծուհու վաղ շրջանի պոետական քնարական ժողովածուներում (ինչպես՝ «*Երգի թևերին*» և «*Խոտեր ու նրագներ*») դեռևս զգացվում է Տարաս Շևչենկոյի ազդեցությունը: Սակայն բանաստեղծուհին հետագայում դիմում է նոր եղանակների, որոնք ընդգրկում են ոչ միայն ուկրաինական, այլև համամարդկային խնդիրները: Դրանք արտահայտվեցին այն ժամանակ, երբ նա անդրադարձավ Հին Գունաստանի, Պաղեստինի, Եգիպտոսի, հեղափոխական Ֆրանսիայի ու միջ-



նադարյան Գերմանիայի թեմաներին, ինչպես նաև այնպիսի «հավերժական» թեմաների պոետական հետազոտություններում, ինչպիսիք են՝ սիրո հակասականությունը, ազատության և իշխանության բախումը, հասարակության ու պոետի հարաբերությունները: Նրա «Անտառի երգը» դրամատիկ պոեմը գեղարվեստական հզոր ուժով է ներկայացնում վեհ իդեալի և գետնաքարշ իրականության բախումը:

Գյուղական կյանքը նկարագրելու կողմնորոշվածությունից ռեալիզմի հեռանալու օրինակ է նաև միջհեղափոխական շրջանի ամենահայտնի գրող ու դրամատուրգ **Վոլոդիմիր Վիննիչենկոյի** ստեղծագործությունը: Վաղ շրջանի նատուրալիստական ստեղծագործություններ



Լենյա Ուկրաինկա



Վոլոդիմիր Վիննիչենկո

րում («Չբավորներ», «Գեղեցկություն և ուժ») Վիննիչենկոն նկարագրում է զավառաբնականների ու վարձու աշխատողների (բատրակների) կյանքը՝ գյուղական մեռնող ավանդույթների ու քայքայվող բարոյականության լույսի տակ: Ավելի նորարարական էին ուկրաինական գրականության համար արտասովոր այնպիսի կերպարներ ստեղծելու նրա փորձերը, ինչպես օրինակ՝ հոգեբանական բարդ իրավիճակներում հայտնվող հեղափոխականը («Ձինա» վեպը): Սակայն Վիննիչենկոյի սիրած թեման անպատկառ եսասերի կերպարն էր (առավել վաղ օրինակ է՝ «Կծատ Սեֆիստոֆելի հուշագրությունները»), որը, ցանկանալով մինչև վերջ ազնիվ մնալ ինքն իր առջև, պատրաստ է ցանկացած ոճրագործության, միայն թե իր գործողությունները համապատասխանեն իր զգացումներին, համոզմունքներին ու ցանկություններին:

Եթե հիշյալ գրողների թվին ավելացնենք նաև արևմտաուկրաինական գրողներ **Վասիլ Ստեֆանիկի**, **Օլիա Կոբիլյանսկու** և անզուգական **Իվան Ֆրանկոյի** անունները, լրիվ պարզ կդառնա, որ ուկրաինական գրականությունը, նույնիսկ եվրոպական չափանիշներով, ներկայանում էր տաղանդների տպավորիչ համաստեղությամբ: Այսպիսով, **XIX-XX դարերի սահմանագծում ուկրաինական գրականությունը, որը դեռ մի սերունդ առաջ պայքարում էր գոյության իրավունքի համար, իր արժանի տեղն զբաղեցրեց սլավոն ժողովուրդների գրականության մեջ:**

### Թատրոն

Նկարագրվող շրջանում ուկրաինական մշակույթի զարգացման հատկապես կարևոր ու հանրամատչելի բնագավառը թատրոնն էր: Սկզբնական շրջանում այն բավական տուրք

տվեց ազգագրությանը, խաղի ու երգի բավական հրապուրիչ տեսարան ներկայացնելով իրենից: Նրա զարգացմանը նպաստող որոշիչ գործոն հանդիսացավ ուկրաինացիներին արված ցարական կառավարության ոչ շատ զիջումներից մեկը, երբ **1881 թ.-ին թույլատրվեց ուկրաիններեն լեզվով ներկայացումներ բեմադրել:** Շնորհիվ դրա՝ թատրոնը դարձավ ուկրաինական մշակույթի քիչ թե շատ ազատ զարգացող միակ բնագավառը, ինչի հետևանքով դարձավ ստեղծագործական էներգիայի ու տաղանդների կենտրոնատեղի: Թատրոնի ազդեցությունը դուրս էր գալիս մաքուր արվեստի շրջանակներից: Շատ ուկրաինացիների համար մայրենի լեզվով լավ ներկայացված բեմադրությունն հաճախ ազգային հպարտության և ինքնագիտակցության առաջին կայծն էր դառնում:

**1881 թ.-ին, կառավարության թույլտվությունից զրեթե անմիջապես հետո Ելիզավետգրադում Մարկո Կրոպիվնիցկին հիմնադրեց ուկրաինական առաջին պրոֆեսիոնալ թատրոնը:** Մեկ տարի անց նրա թատերախմբում 100-ից ավել դերասան կար: 1890-ականներին արդեն առնվազն 5 պրոֆեսիոնալ թատրոն էր գործում, որոնցից յուրաքանչյուրն իր խաղացանկում 20-30 պիես ուներ, և մեծ հաջողությամբ ելույթներ էին ունենում ամբողջ կայսրությունում: Գիրավի, ուկրաինական թատրոնը 1860 թ.-ից սկսած, երբ կարող էր բեմադրել ընդամենը մի քանի հայրենական պիեսներ (սովորաբար դրանք Ի. Կոտլյարսկու «Նատալկա Պոլտավկա», Տ. Շևչենկոյի «Նազար Ստոդոլյա» և Ի. Գուլակ-Արտեմովսկու «Ձապորոժցին Դանուբից անդին» գործերն էին), մեծ ճանապարհ էր անցել:

Թատրոնի այդպիսի արագ զարգացման մեջ իրենց վաստակն ունեին մի խումբ այնպիսի տաղանդավոր, եռանդուն ու ձեռներեց գործիչներ, ինչպիսիք էին՝ **Ստարիցկին, Կրոպիվնիցկին և Տորիլիչեների հայտնի ընտանիքը**, որի անդամները ելույթ էին ունենում Իվան Կարպենկո-Կառի, Միկոլա Սադովսկի և Պանաս Սակսահանսկի թեմական կեղծանուններով: Տորիլիչեներից յուրաքանչյուրը ոչ միայն սեփական թատերախմբում ստեղծեց, այլև միաժամանակ նշանավոր դերասան էր ու ռեժիսոր, իսկ Կարպենկո-Կառին՝ նաև դրամատուրգ: Այն ժամանակվա ուկրաինական թատրոնի իսկական աստղը անզուգական **Մարիա Ջանկովեցկան** էր:

\* \* \*

XIX դարավերջը սոցիալ-տնտեսական, գաղափարախոսական և մշակույթի առումով հարաճուն փոփոխությունների շրջան էր: Ավանդական կարգերը բոլոր մակարդակներում ճաքեր էին տալիս և ամենուրեք նոր ուղիների փնտրտուք էր նկատվում: Դա հատկապես արտահայտվում էր գաղափարախոսության մեջ մտավորականության աճող հետաքրքրություններով:

Ուկրաինայում այդ ժամանակ ձևավորվել էր երկու հիմնական գաղափարախոսական ուղղություն՝ *ազգային-ազատագրական և սոցիալիստական*: Ինչքան արագ էին դրանք արժատավորվում հասարակական գիտակցության մեջ, այնքան սրությամբ էր ծառանում դրանց փոխհարաբերությունների հարցը: Ուկրաինացի շատ գործիչներ հասկանում էին, որ առանց սոցիալական խնդիրների անդրադառնալու, ազգային հարցը դժվար թե դուրս գա մշակութային գործունեության նեղ շրջանակներից: Միևնույն ժամանակ ուկրաինացի շատ սոցիալիստներ իրենց հաշիվ էին տալիս, որ ազգային երանգ չունեցող սոցիալիզմը ուկրաինայում կմնա որպես զանգվածների հետ կապ չունեցող և հիմնականում ոչ-ուկրաինացիներից կազմված մակերեսային ընթացուղի: Երկու գաղափարախոսություններին բավարարող զուգակցություն գտնելու փորձերը, որ բնորոշ էր ԶՈՒԿ-ին, երկուստեք ընդունելի արդյունքներ չտվեցին և ուկրաինական հասարակությունը XX դար մտավ այդ խնդիրը չլուծված:





## ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳԱԽԶԻՆԱ, ՌԻԿՐԱԽՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԱՐ

Ի՞նչ օգուտ կարող են բերել տնտեսապես և սոցիալապես չզարգացած, մշակույթով՝ հետամնաց և քաղաքականապես՝ թույլ հասարակությանը իրավական բարեփոխումները, և ավելի որոշակի ասած՝ ի՞նչ ազդեցություն գործեցին Չաբսբուրգների իշխանության տակ ապրող ուկրաինացիների վրա XIX դարի սահմանադրական բարեփոխումները: XIX դարի վերջին արևմտյան ուկրաինացիներն\* արդեն մեծ նվաճումներ ունեին՝ շնորհիվ սահմանադրության ընծեռած նոր հնարավորությունների: Ընդ որում՝ նրանք նաև պարզորոշ գիտակցում էին, որ օրենքներն ու սահմանադրությունները միայն որոշակի և ամենևին ոչ բավարար սահմաններում են երաշխավորում սոցիալ-տնտեսական և ազգային արդարությունը: Սակայն, ընդհանուր առմամբ, 1848 թ.-ի և հատկապես 1867 թ.-ի ավստրիական սահմանադրությունների արդյունքները դրական էին և նպաստեցին արևմտաուկրաինական հասարակության քաղաքական ակտիվության ու կազմակերպական աճի աննախադեպ վերելքին: Ակտիվության այդ պոռթկումն այնքան ուժեղ էր, որ Գալիչինայի նախկինում ծայրահեղ հետամնաց ու անտարբեր ուկրաինացիներին ուկրաինական ազգային շարժման նախաբեմ հանեց: Բայց եթե նոր սահմանադրական կարգերը պարզապես հնարավորություններ էին տալիս հասարակական գործունեության համար, ապա լեհերի հետ սուր մրցակցությունը խթանում էր այն: Եվ որքան ուկրաինական ու լեհական համայնքներն ուժեղանում էին, այնքան խորանում էին նրանց միջև հակադրություններն ու հակամարտությունները:

### Սոցիալ-տնտեսական ոլորտը

1848 թ.-ից հետո Գալիչինան, այնպես ինչպես և Անդրկարպատներն ու Բուկովինան, մնում էին Եվրոպայի ամենաաղքատ տարածաշրջանները, ինչը որոշ պատմաբանների առիթ տվեց նրանց անվանելու «տնտեսական անհեթեթությունների մառան»: Այդ նահանգների տնտեսական հիմնական թերություններից մեկը՝ արտահաման համար պիտանի այնպիսի արտադրանքի բացակայությունն էր, ինչպիսիք էին ցորենը կամ շաքարի ճակնդեղը, որոնք, օրինակ, նպաստում էին Ռուսական Ուկրաինայի տնտեսական վերելքին: Արդյունաբերության զարգացման ճանապարհին, թեև ոչ մեծ չափի, անհաղթահարելի խոչընդոտ էր այնպիսի արդյունաբերականացված նահանգների կողմից մրցակցությունը, ինչպիսիք էին Բոհեմիան, Ստորին Ավստրիան և Մորավիան, որոնք շատ հեշտ ի չիք էին դարձնում Գալիչինայի արդյունաբերականացման թույլ փորձերը: Վիեննայի քաղաքականությունը միայն վատթարացնում էր իրավիճակը: Կայսերական կառավարությունը գործնականում ոչ միայն չէր մտահոգվում Գալիչինայում իրավիճակը բարելավելու մասին, այլև բացահայտորեն նախապատվությունը տալիս էր արևմտյան նահանգներին՝ սահմանելով չհաշվեկշռված տարիֆներ: Արևմտյան ուկրաինացիներով բնակեցված Չաբսբուրգների տարածքներն ավելի մեծ չափով էին ներ-

\* XIX դարի վերջին և XX դարի սկզբին ազգայնապես գիտակից արևմտյան ուկրաինացիներն սկսեցին իրենց «ուկրաինացիներ» անվանել, ինչպես ավելի վաղ իրենց անվանում էին արևելյան ուկրաինացի մտավորականները: Ավանդական «ռուսին» անվանումից հրաժարվելը բացատրվում էր երկու հիմնական պատճառով. «ռուսին» բառը շատ մոտ էր «ռուս» բառին և, որ Ռուսական կայսրության իրենց հայրենակիցների անվանումն օգտագործելով, արևմտյան ուկրաինացիները շեշտում էին նրանց հետ իրենց միասնականությունը:

քին գաղութ, քան Արևելյան Ուկրաինան Ռուսական կայսրությունում: Բացի դրանից, նահանգի հողատերերի վերնախավը չէր շտապում տնտեսական փոփոխություններ իրականացնել՝ վախենալով, որ տարածաշրջանի, հատկապես՝ արդյունաբերության, զարգացումը կզրկի իրեն մեծաթիվ և էժան աշխատուժից: Այսպիսով Գալիչինան, Բուկովինան և Դունգարիայի կողմից գրավված Անդրկարպատները մնում էին կայսրությունում փոքր կապիտալ, չնչին ներքին առևտուր, ուրբանիզացիայի ցածր մակարդակ, համարյա աննշան արդյունաբերություն, չափից դուրս ցածր աշխատավարձ և կայսրության ամենամեծ հավելյալ աշխատուժն ունեցող գյուղատնտեսական շրջանները: Իրավիճակի բարելավման հազիվ նկատելի նշաններ հայտնվեցին միայն XIX դարի վերջին տասնամյակներին:

Այն, որ Վիեննան քամահրանքով էր վերաբերվում Գալիչինային, չպետք է կարծիք ստեղծի, թե այն կայսրության բոլորովին աննշան մասն էր: 1910 թ.-ին այստեղ ապրում էր Չաբսբուրգների հպատակների 15 %-ը: Արևմտյան ուկրաինացիներով բնակեցված տարածքը մեկն էր այն քչերից, որտեղ բնակչության աճ էր նկատվում: Գալիչինայի բնակչության թիվը 1849 թ.-ի 5,2 մլն-ից 1910 թ.-ին հասել էր համարյա 8 մլն-ի: Այնուամենայնիվ, դժվար է ասել, թե դա նվաճում էր, քանի որ գյուղական բնակչության խտության աճը (1 քառ. կմ-ի վրա 1780 թ.-ին 32 մարդ էր, իսկ 1910 թ.-ին՝ 102 մարդ) միայն խորացնում էր սոցիալ-տնտեսական խնդիրները:

Մեծ փոփոխություններ տեղի ունեցան նաև Գալիչինայի թքնիկ կազմում, չնայած դրանք այնքան էլ աղետալի չէին, ինչպես թվում է առաջին հայացքից: Եթե 1849 թ.-ին ուկրաինացիները կազմում էին նահանգի բնակչության կեսը, ապա 1910 թ.-ին ավելի քան 58 %-ը գրանցվել էին որպես լեհեր և միայն 40 %-ը՝ որպես ուկրաինացիներ: Նույնիսկ Արևելյան Գալիչինայում ուկրաինացիների թվակազմը նվազել էր մինչև 62 %-ը: Որոշ չափով այդ փոփոխությունները կարելի է բացատրել նահանգի արևմուտքից դեպի արևելյան շրջանները լեհերի հոսքով և բնակչության, հատկապես՝ գերմանացիների, լեհացումով: Սակայն հիմնական պատճառը հարկ է համարել հրեաների աճը. 1831 թ.-ից մինչև 1910 թ.-ը նրանց տեսակարար կշիռը կրկնապատկվեց՝ 6 %-ից հասնելով 12 %-ի: Նրանք հակված էին իրենց նույնացնելու լեհերի հետ՝ թեկուզև լեզվի առումով:

Այնուամենայնիվ, նահանգը բնակեցնող ազգերի զբաղվածության կառուցվածքում փոփոխություններն աննշան էին: *Ուկրաինացիները մնացել էին հիմնականում որպես հողագործ ժողովուրդ: 1900 թ.-ին նրանց մոտ 95 %-ը գյուղատնտեսությամբ էր զբաղվում, մոտ 1%-ն աշխատում էր արդյունաբերությունում և ընդամենը 0,2 %-ն առևտուր էր անում: Ուկրաինական մտավորականությունը, ներառյալ հոգևորականությունը, փոքրաթիվ էր՝ 12-15 հազ. մարդ (Վուդդիմիր Նավրոցկու հաշվարկներով՝ հոգևորականության հետ միասին՝ մոտ 5 հազ. մարդ, իսկ լեհականը՝ առանց հոգևորականության՝ 38 հազ.): Դանձմատության համար ներկայացնեք նրանց մրցակից լեհերի զբաղվածության պատկերը. լեհերի 80 %-ը զբաղվում էր գյուղատնտեսությամբ, 6,5 %-ն աշխատում էր արդյունաբերությունում, իսկ 2 %-ն առևտուր էր անում: 1914 թ.-ին Գալիչինայում լեհերն զբաղեցնում էին ավելի քան 300 կառավարական բարձր պաշտոններ, իսկ ուկրաինացիները՝ միայն 25: Այսպիսով, չնայած Չաբսբուրգների բարեփոխումներին, դարեր շարունակ հանգիստ չտվող սոցիալ-տնտեսական խնդիրների հաղթահարման առումով, ուկրաինացիները շատ քիչ բանի հասան:*

### Գյուղացիության ճակատագիրը

Ինչպես և 1861 թ.-ին Ռուսաստանում, 1848 թ.-ի Չաբսբուրգյան կայսրության ճորտերի ազատագրումը՝ բարձրացնելով նրանց իրավական կարգավիճակն ու քաղաքական իրավունքները, չթեթևացրեց տնտեսական վիճակը: Խնդրի էությունը գների աճի և եկամուտների նվազման մեջ էր: Գյուղացիների վրա ծանրացած հիմնական բեռը 1848 թ.-ին ստացած հողերի պարտքն էր: Սկզբում Վիեննայի կառավարությունը խոստացավ գյուղացիներին հանձնված հողերի արժեքը մարել իր գումարների հաշվին, սակայն 1853 թ.-ին, երբ վերականգնվեցին նախահեղափոխական կարգերը, այդ ծախսերի մեծ մասը փոխադրեց գյուղացիների վրա: Ի հավելումն դրա՝ գյուղացիները հարկադրվում էին մի շարք ուղղակի և անուղղակի հարկերի՝ դպրոցների պահպանման, ճանապարհների և այլն:

Սակայն գյուղացիներին ամենից շատ զայրացնում էր այսպես կոչված *սերվիտուտների* խնդիրը: Գորտությունից ազատվելու պայմանների համաձայն հողատերերին էր վերապահվում սերվիտուտներին՝ անտառներին ու արոտավայրերին, տիրելու իրավունքը, այն դեպքում, երբ նախկինում դրանցից կարող էին օգտվել նաև գյուղացիները: Դա նշանակում էր, որ հիմա գյուղացին պետք է կալվածատիրոջ կողմից սահմանված ցանկացած գումարը



վճարեր, որպեսզի ունենար վառելիքայտ, շինանյութ և կամ անասնակեր: Սովորաբար, այդ գումարը այնքան մեծ էր լինում, որ թվում էր, թե մինչ 1848 թ.-ն ընկած ժամանակաշրջանի իրավական ճորտատիրությունը փոխարինել են տնտեսական ճորտատիրությամբ: Չգտելով թուլացնել կալվածատերերի այդ ճնշումը՝ հազարավոր գյուղացիներ սերվիտուտների խնդրով դիմում էին դատարան: Ի վն Ֆրանկոյի վկայությամբ՝ սերվիտուտների վերաբերյալ 1848 թ.-ից մինչև 1881 թ.-ը դատարանների կողմից քննված 32 հազ. գործերից, 30 հազ.-ը շահել էին կալվածատերերը: Այդպիսի ելքը կասկած անգամ չէր հարուցում, թե ում օգտին է գործում Չաբսբուրգների համակարգը:

Չողի գների աճի հետ փոքրանում էին գյուղացիների հողաբաժինների չափերը, համապատասխանաբար՝ արագ նվազում նրանց եկամուտները: 1859 թ.-ին Արևելյան Գալիչիայի գյուղացիական միջին հողաբաժինը 12 ակր (8 հա) էր, 1880 թ.-ին՝ արդեն 7 ակր (2,8 հա), իսկ 1902 թ.-ին՝ 6 ակր (2,4 հա): Այլ կերպ ասած՝ այն գյուղացիների տեսակարար կշիռը, որոնց կարելի էր համարել աղքատներ (այսինքն՝ 12 ակրից պակաս հող ունեցողները) 1859 թ.-ի 66 %-ից աճեց մինչև 1902 թ.-ի 80 %-ը: Գյուղացիական հողաբաժինների փոքրանալու հիմնական պատճառը՝ հողատիրոջ գավակների միջև հողը բաժանելն էր. սովորաբար, միջին գյուղացիական ընտանիքն ունենում էր 3-4 երեխա: Գյուղացիական հողաբաժինների փոքրանալու հետ գնալով մեծանում էին խոշոր կալվածքները, քանի որ դրանց սեփականատերերը գնում էին այն գյուղացիների հողերը, որոնք այլևս չէին կարող ապրել իրենց փոքրիկ հողաբաժինների չնչին եկամուտներով: Այսպիսով, *Արևելյան Գալիչիայում մի երկրամաս էր, որտեղ վարելահողերի մոտ 40 %-ը պատկանում էր 2,4 հազ. խոշոր հողատերերին, իսկ մշակվող հողերի 60 %-ը հարյուր հազարավոր փոքրիկ գյուղացիական հողաբաժինների էր բաժանված:*

Տխուր էին հեռանկարներն այն գյուղացիների համար, ովքեր փորձում էին եկամտի նոր աղբյուր գտնել: Խոշոր կալվածատերերի մոտ որպես բատրակ վարձվելու դեպքում՝ նրանց սպասվում էր կայսրությունում ամենացածր աշխատավարձը, ինչը կազմում էր Ավստրիայում սահմանված աշխատավարձի մոտավորապես քառորդ մասը: Իսկ եթե հուսահատված դիմում էին վաշխառու-պարտատերերին (դրանք հիմնականում գյուղերում պանդոկներ, կամ՝ դեռ բանկեր չուներող քաղաքներում փոքր խանութներ ունեցող հրեաներ էին), ապա ֆինանսական անդունդը գլորվելու վտանգի էին ենթարկվում: Տարեկան 150-250 %-ը (ևս մեկ պատճառ, ինչի հետևանքով դրանք կուտակվում էր վաշխառուների մոտ, ոչ թե ներդրվում արդյունաբերության մեջ) ուժից վեր բերել էր վերածում այն փոքրիկ գումարը, որը գյուղացին վաշխառուից պարտք էր վերցնում՝ մինչև մյուս բերքահավաքը գոյատևելու համար: Չաճախ միամիտ գյուղացիները մեծ պարտքերի տակ էին ընկնում իրենց անզուգույն պատճառով. վաշխառուները հաճախակի նրանց ապրանք կամ խմիչք տալիս էին ապառիկ, իսկ հետո, թողնելով որ պարտքը կուտակվի, մեծ հաշիվ էին ներկայացնում նրանց: Եթե գյուղացիները չէին կարողանում վճարել իրենց պարտքերը, պարտատերերը վերցնում էին նրանց հողերը կամ՝ աճուրդով վաճառում դրանք:

Չնայած գյուղացիներն առանձնապես հակված չէին հարբեցողությանը, սակայն նրանց անելանելի ու ճնշված վիճակը նպաստում էր ալկոհոլիզմի սպառնալից աճին: Դրան էին դրդում նաև ոգելից խմիչքների մեծաշնորհն ունեցող խոշոր հողատերերը և խմիչք վաճառող պանդոկատերերը: Գյուղացուն խմելուն տրամադրելու միջոցներից մեկը պարտքի երկարացումն էր, մյուսը՝ բատրակներին աշխատավարձը կտրոններով վճարելը, որոնք կարելի էր իրացնել միայն պանդոկներում ու զինետներում: 1900 թ.-ին Արևելյան Գալիչիայում յուրաքանչյուր 220 բնակչին մեկ պանդոկ էր հասնում (սակայն միայն մեկ տարրական դպրոց՝ յուրաքանչյուր 1500 բնակչին):

Արևմտյան Ուկրաինայում առողջապահությունը նույնպես կայսրության ամենից շատ անուշադրության մատնվածներից էր: Եթե Ավստրիայի 295 բնակչին հասնում էր մեկ հիվանդանոց, ապա Գալիչիայում այդ հարաբերակցությունը հավասար էր 1200:1: Երեխաների կեսից ավելին չէր ապրում նույնիսկ մինչև 5 տարեկան, ինչը, սովորաբար, համաճարակների ու թերսնման հետևանք էր: Սակայն ամենահավոր այն էր, որ ամեն տարի քաղցից մահանում էր մոտ 50 հազ. մարդ: Լեհ զրոյ Ստանիսլավ Շչեպանովսկին «Գալիչիայի դժբախտությունները» իր հայտնի գրքում հաստատում էր, որ Գալիչիայի բնակչի աշխատանքի արտադրողականությունը կազմում էր միջին եվրոպացու աշխատանքի արտադրողականության ընդամենը քառորդ մասը, իսկ սպառած սննդամթերքը՝ կեսը: Չարմանալի չէ, որ դարավերջին արևմտաուկրաինացի տղամարդու կյանքի տևողությունը վեց տարով պակաս էր՝

քան չեխերի մոտ և 13 տարով պակաս՝ քան անգլիացիների մոտ:

Լինելով նստակյաց և հողագործ ժողովուրդ, ուկրաինացի գյուղացիները խիստ կապված էին հայրենի հողին, և միայն բացառիկ ծանր հանգամանքները կարող էին ստիպել նրանց լքելու այն: XIX դարի վերջին միանգամայն ակնհայտ դարձավ, որ եկել են հենց այդպիսի ժամանակները, և շատ գյուղացիներ դեմ առան արտագաղթելու անխուսափելիությանը: *Ռուսական Ուկրաինայի իրենց եղբայրների պես, արևմտյան ուկրաինացիներն ստիպված էին երկրագնդի կեսն անցնել՝ լավ կյանք փնտրելով:* Սակայն, ի տարբերություն արևելյան ուկրաինացիների, որոնք գաղթում էին դեպի արևելք՝ Խաղաղ օվկիանոսի ափերը, արևմտյան ուկրաինացիները գնում էին դեպի արևմուտք և, անցնելով Ատլանտյան օվկիանոսը, հասնում՝ *Բրազիլիա, Կանադա և, ավելի հաճախ՝ Միացյալ Նահանգներ:*

### Քաղաքներն ու առևտուրը

Գալիչիայի բնակչության միայն մոտ 10 %-ն էր ապրում քաղաքներում: Ինչպես և հարկ էր սպասել, քաղաքային կենտրոններում ուկրաինացիների տեսակարար կշիռը չափազանց փոքր էր. 1900 թ.-ին նահանգի քաղաքների բնակչության 75 %-ից ավելին խոսում էր լեհերեն, 14 %-ը՝ ուկրաիներեն, մնացածը՝ գերմաներեն: Նույնիսկ Արևելյան Գալիչիայում ուկրաինացիները քաղաքային բնակչության ընդամենը 25-30 %-ն էին կազմում, այսինքն՝ այնքան, ինչքան լեհերը: Այդ նույն ժամանակ, նահանգի արևելյան շրջանների քաղաքային բնակչիների 40-45 %-ը հրեաներ էին. որոշ քաղաքներում, ինչպես օրինակ՝ Բորոդուն, մինչև 70 %-ը հրեաներ էին: Քաղաքներում բնակչության աճը միատեսակ չէր: Եթե Արևելյան Գալիչիայի մշակութային, վարչական և տնտեսական կենտրոն Լվովում բնակչությունը 1857 թ.-ի 70 հազ.-ից 1910 թ.-ին հասել էր ավելի քան 200 հազ.-ի, ապա քաղաքների մեծ մասում այն շատ ավելի դանդաղ էր աճում:

Ինչպես և ամենուրեք, քաղաքների տնտեսական հիմնական գործառույթներն առևտուրն ու առևտրական գործունեությունն էին: *Իսկ Արևմտյան Ուկրաինայում առևտրի մասին խոսելը նշանակում էր խոսել հրեաների մասին, քանի որ նրանք լիովին տիրում էին տնտեսության այդ բնագավառին:* Չատկապես նրանք էին գյուղի և քաղաքի միջև առևտրական միջնորդ հանդիսանում: Մանր առևտրական-հրեաները անուշադրության մատնված հեռավոր գյուղեր էին հասցնում ժամանակակից ապրանքներ (լուցկի և կերոսին), իսկ հրեա վաճառականները գյուղացիներից գնում էին բերքը՝ քաղաքներում վաճառելու համար: Իսկ քաղաքների գրեթե բոլոր խանութներն ու կրպակները, որտեղից գյուղացիները գնում էին պատրաստի արտադրանք (կոշիկ, հագուստ, մետաղյա իրեր, որոնք, ի դեպ, արտադրում էին հրեա-արիեստավորները), նույնպես պատկանում էին հրեաներին: Եթե գյուղացու կանխիկ գումարը չէր բավականացնում անհրաժեշտ գնումներն անելու համար, ապա հրեա-վաճառականն առաջարկում էր ապառիկ վաճառք: Կարճ ասած՝ հատկապես հրեաներն էին գյուղացիների մերթաշունդում դրամական հարաբերություններից մեջ, որոնք կենտրոնը քաղաքներին:

Իրենց ծառայությունների դիմաց հրեա-վաճառականները ձգտում էին առավելագույն եկամուտը կորզել: Շատերին այս եկամուտը թվում էր ոչ միայն անչափ շատ, այլև անարդար: Օրինակ՝ հետազոտելով Անդրկարպատների ուկրաինացիների և հրեաների միջև տնտեսական փոխհարաբերությունները, իռլանդական ծագում ունեցող հունգար տնտեսագետ Էդմունդ Էգանը կառավարությանը զեկուցեց, որ եթե վարչակարգը, քաղաքապետություններն (մագիստրատներ) ու հողատերերն են պատասխանատու գյուղացիների ծանր վիճակի համար, քայլ և *հիմնական մեղքը ընկած է հրեաների՝ վաշխառուների, վաճառականների ու պանդոկատերի վրա, որոնք «գրկում են ռուսիաներին և՛ փողից, և՛ սեփականությունից»:* Եվ չնայած հրեա վաճառականներից շատերի կեղծքիչ գործունեությունը գյուղացիների մոտ զայրույթ ու ատելություն էին առաջացնում, սակայն նրանք գիտակցում էին, որ առանց հրեաների ոչ մի տնտեսական գործունեություն հնարավոր չէ: Չրեաների հետ ուկրաինացի գյուղացիության հարաբերությունների մասին այս տեսակետը բավական պարզորոշ արտահայտված էր Չաբսբուրգյան ոստիկանության գաղտնի զեկուցագրի մեջ, որը Վիեննա էր ուղարկվել 1890 թ.-ին. «*Քացի իր հանապազօրյա մի կտոր հացից, գյուղացին իր կյանքի ամեն քայլափոխին կախված է հրեանից: Նա գյուղացու համար և՛ պատվիրատու է, և՛ խորհրդատու, և՛ միջնորդ, և՛ վստահված անձ՝ բառի ամենալայն իմաստով: Եվ եթե մենք նույնիսկ ցանկանալիք վռնդել նրանց, ապա գյուղացիներն առաջինը կլինեին, որ կպահանջեին նրանց վերադարձը: Չնայած հրեաները լիովին օգուտ են քաղում իրենց այդ դիրքից՝ տոկոսով պարտքեր տրամադրելով ոչ միայն գյուղացիներին, այլև հողատերականու-*



**բյանը վերահսկելով, սակայն ռասայական թշնամության իմաստով հակահրեականության մասին խոսելը սխալ կլիներ»:**

Այդուհանդերձ, հարկ է նշել, որ հրեաների մեծամասնությունը ապրում էին բավականին աղքատիկ պայմաններում և գոյատևում միջոցներ փնտրելու մեջ մեծ ընտրություն չունեին: XIX դարի վերջին նրանց զբաղվածության պատկերը հետևյալն էր՝ 15 %-ը վարձակալներ ու պանդոկատեր էին, 35 %-ը՝ վաճառականներ, 30 %-ը՝ արհեստավորներ և 20 %-ը՝ խառը մասնագիտությունների ներկայացուցիչներ: Հրեա առևտրականների մեծամասնությունը մանր վաճառականներ էին, սակայն աննշան փոքրամասնություն կազմող շատ հարուստ և ազդեցիկ մասի ձեռքում էր, փաստորեն, Գալիչիանայի ամբողջ խոշոր առևտուրը:

### **Արդյունաբերություն**

Նկատի ունենալով արևմտյան արդյունաբերական նահանգների կողմից մրցակցությունը, կառավարության անբարենպաստ քաղաքականությունը և ներքին շուկայի սահմանափակությունը՝ Գալիչիանայի արդյունաբերության զարգացման համար մեծ հնարավորություններ չկային: Բացի այդ, չէր բավականացնում կապիտալը: Մինչ 1890-ական թվականները այստեղ չկային առևտրական բանկեր, հրեական կապիտալը շրջանառվում էր առևտրի և վաշխառության մեջ, իսկ հարուստ լեհերը գերադասում էին իրենց փողերը ներդնել հողերի մեջ: Ինչքան էլ տարօրինակ թվա, բայց՝ 1852 թ.-ին սկսած երկաթուղիների կառուցումն ավելի շուտ խոչընդոտում, քան թե նպաստում էր Գալիչիանայի արդյունաբերական զարգացմանը:

Մինչև երկաթուղիների հայտնվելը, ապակեփչման, մանածագործական և կաշեգործական տեղական արդյունաբերությունն արտաքին մրցակցությունից պաշտպանված էր հենց նահանգի համեմատաբար մեկուսացվածության շնորհիվ: Սակայն երբ երկաթուղով այստեղ հոսեցին արևմտյան ապրանքները, տեղական ձեռնարկություններից շատերն ուղղակի վերացան: Մնացածներից շատերն արհեստագործական բնույթ ունեին. հիմնականում դրանք կարի կամ կոշիկի հրեական արհեստանոցներ էին: *Խոշոր ձեռնարկություններն հիմնականում զբաղվում էին անտառահատման, փայտամթերման ու փայտամշակման աշխատանքներով* (դրանց զարգացմանն էին նպաստում անտառային մեծ տարածություններն ու շինանյութի խիստ պահանջն Արևմուտքում), և բացի այդ՝ *մասնագիտանում էին ակոհոլի արտադրության մեջ:*

Այնուամենայնիվ, 1890-ական թվականներին առաջխաղացման նշաններ երևացին: Նախորդ տասնամյակներին հիմնվել էին 3 բանկ, որոնք հսկայական արդյունաբերական նախագծերի ֆինանսավորման աղբյուրը դարձան: Լեհ ավատատերերը, այնպիսիներն ինչպես օրինակ՝ Անջեյ Լյուբոմիրսկին, հասան նրան, որ Վիեննայի կառավարությունից արդյունաբերական զարգացման աջակցություն ստացան, իսկ 1901 թ.-ին ստեղծվեց գործարանատերերի միությունը: *1870-1880-ական թվականներին Դրոգոբիչի և Բորիսլավի շրջաններում արագ թափով զարգանում էր նավթի արդյունահանությունը*, որը հիմնականում ֆինանսավորվում էր ավստրիական և անգլիական կապիտալով: Մինչև առաջին համաշխարհային պատերազմը Գալիչիանայից արդյունահանած նավթամթերքները կազմում էին համաշխարհային արդյունահանության 5 %-ը:

*Դանդաղ, բայց հաստատուն աճում էր պրուլետարիատը*. 1902թ.-ին նահանգում կային 230 հազ. մշտական և սեզոնային բանվորներ, որոնցից 18 %-ն ուկրաինացիներ էին, 24 %-ը՝ հրեաներ, իսկ մնացածը՝ լեհեր: Ինչպես և Ռուսական Ուկրաինայում, այս շատ «երիտասարդ» շերտը սերտ կապեր էր պահպանում գյուղի հետ, և շատ ուկրաինացի ու լեհ բանվորներ, տարվա մի մասն արդյունաբերությունում աշխատելուց հետո վերադառնում էին գյուղ՝ հողագործությամբ զբաղվելու համար: Այնուամենայնիվ, այս փոփոխություններն աստիճանաբար էին կատարվում և համեմատաբար՝ փոքր մասշտաբներով, այդ պատճառով էլ արևմտաուկրաինական տարածաշրջանը տնտեսական առումով զգալիորեն ետ էր կայսրության մյուս նահանգներից:

## **Նոր քաղաքական կարգ**

Ընշելով 1848 թ.-ի ապստամբությունը և քաջալերվելով, Հաբսբուրգները փորձեցին վերացնել հեղափոխական բարեփոխումները և վերականգնել կայսրի միապետական իշխանությունը: Նրանք լուծարեցին խորհրդարանն ու չեղյալ համարեցին սահմանադրությունը.

սկսվեց բացարձակ միապետական (նեոաբսոլյուտիստական) կառավարման հեղձուցիչ տասնամյակը: Գալիչիանայում, որտեղ ուկրաինական հոգևորականությունը վերադարձավ խիստ եկեղեցական գործերին, 1851 թ.-ին «Գլխավոր Ռուսիական Ռադան» ինքնալուծարվեց: Ուկրաինացիների ոչ շատ նախածեռնություններից մեկը, որ 1850-ականների միջինից որոշ չափով հանեց և աշխուժացրեց նրանց, Լվովում «Ռուսիական ժողովրդական Տան» շենքի կանգնեցումն էր, մշակութային կենտրոն, որ կառուցվեց հասարակական նվիրատվությունների հաշվին: Չնայած այդ իրադարձությանը, համընդհանուր անտարբերությունն ու չեզոքությունը եկել էին փոխարինելու 1848 թ.-ի ակտիվությանն ու շարժումությանը: Սրանից հետո այդ առիթով մոտավորապես այսպես էին արտահայտվել. *«Որքան բարձրանում են ժողովրդական Տան պատերը, այնքան պակասում է մշակութային գործունեությունը»:*

Համեմայն դեպս, կարևոր փոփոխությունները, որոնք կարծես թե չէին էլ նախանշվում, շատ մոտ էին: 1849 թ.-ին Գալիչիանայի փոխարքա նշանակվեց լեհ հարուստ կալվածատեր և Ֆրանց Իոսիֆ կայսեր մերձավոր կոմս *Ազենոր Գոլուխովսկին*: Այդ նշանակման մեջ երկու կարևոր տեսանկյուն կար. նախ՝ նոր փոխարքան, Վիեննայի ինքնակալության ոգուն համապատասխան, շատ մեծ արտոնություններ ստացավ՝ ներառյալ նահանգում օրենքի և տնտեսական, կրթական ու կրոնական գործերի վերահսկումը, և երկրորդ՝ Գոլուխովսկին նոր տեսակի քաղաքական գործիչ լինելով համարում էր, որ լեհերի վիճակի բարելավմանը ավելի շատ օգուտ կբերի ոչ թե հերոսական՝ բայց անարդյունավետ ապստամբությունները, այլ՝ թեկուզ ոչ մեծ, բայց որոշակի և իրական նպատակներին հասնելը:

25 տարվա ընթացքում Գոլուխովսկին երեք անգամ նշանակվելով Գալիչիանայի փոխարքա և երկու անգամ՝ Վիեննայի նախարար, վճռական դեր խաղաց նահանգում նոր քաղաքական կարգի ձևավորման գործում:

### **Լեհական ազդեցությունների աճը**

Ցուցադրաբար ընդգծելով իր հավատարմությունը Հաբսբուրգներին և ուկրաինացիների նկատմամբ բարեհաճ վերաբերվելու պատրաստակամությունը, նոր փոխարքան, սակայն, ծածուկ վարում էր իր քաղաքականությունը. նա անշեղորեն ու հետևողականորեն ընդլայնում էր լեհական ազդեցությունը նահանգի կառավարությունում: Նրա խորհրդով Վիեննան հրաժարվեց Գալիչիանա լեհական և ուկրաինական մասերի բաժանելու ծրագրերից: Նրա զեկույցներում՝ Ռուսաստանի հանդեպ ուկրաինացիների չափազանցված համակրանքի վերաբերյալ ներկայացված հավաստիացումները սասանեցին ցարական կառավարության վստահությունը «Արևելքի տիրուցիների» նկատմամբ: *Իր ազդեցության մեծացման հետ Գոլուխովսկին ավելի ու ավելի բացահայտ էր վարում իր լեհամետ և հակաուկրաինական քաղաքականությունը*: Ստադրվելով վերացնել ուկրաինացիների ներկայությունը Լվովյան համալսարանում՝ նա ստիպեց Հոլովացկուն հեռանալ ուկրաինական գրականության պրոֆեսորի պաշտոնից: Համոզված լինելով ուկրաինացիների լեհացման անիրաժեշտության մեջ՝ նա նույնիսկ փորձեց հույն-կաթոլիկական եկեղեցուն պարտադրել հռոմեական օրացույցի ընդունումը, իսկ 1859 թ.-ին՝ ուկրաինական հրատարակություններում օգտագործել լատինական այբուբենը: Սակայն այստեղ նա արդեն շատ հեռուն գնաց: *Գոլուխովսկու նախագծերից վրդովված՝ ուկրաինական մտավորականությունը դուրս եկավ իր թմբիրից*: Այս խնդրի շուրջ բուն վիճաբանությունները հանգեցրին փոխարքայի դեմ իսկական «այբբենական պատերազմի» և նա ստիպված գնաց զիջումների: Չնայած դրան, Գոլուխովսկին շարունակում էր առջե գնալ այլ ճակատներով՝ գերմանացի պաշտոնյաներին հետևողականորեն փոխարինելով լեհերով և ընդլայնելով լեհերնի գործունեությունը դպրոցներում: Այսպիսով Գալիչիանայում լեհական ազդեցությունների կտրուկ աճի հիմքը դրեց:

1859 թ.-ին Հաբսբուրգների կայսրությունը ևս մեկ բեկումնային կետի մոտեցավ՝ երբ Իտալիայում դաժան պարտություն կրեց ֆրանսիացիներից ու սարդինացիներից: Բոլորովին թուլանալով, Հաբսբուրգները ստիպված եղան ներքին զիջումների գնալ: Արդյունքում՝ անցյալի գիրկն անցավ բացարձակ միապետական վարչակարգը և *վերականգնվեց սահմանադրական խորհրդարանական կառավարումը*, այժմ արդեն մշտապես: *Վիեննայում սկսեց գործել կենտրոնական խորհրդարանը, իսկ նահանգներում՝ տեղական սեյմերը*: Մինչև 1873 թ.-ը կենտրոնական խորհրդարանի պատգամավորներն ընտրվում էին նահանգային սեյմերից:

Չգտելով իր համար ապահովել բարձր խավերի աջակցությունը, Վիեննան նրանց համար չափավետ ընտրական համակարգ ստեղծեց: Նահանգային սեյմերի անդամներն ընտրվում



էին ըստ չորս ընտրախավերի՝ կուրիաների. խոշոր կալվածատերերի, առևտրական պալատների, քաղաքաբնակների և գյուղական համայնքների, որոնցից յուրաքանչյուրը որոշակի թվով պատգամավորների իրավունք ուներ: Գալիցյան սեյմի 150 պատգամավորներից 44-ն ընտրված էին խոշոր կալվածատերերից, 3-ը՝ առևտրական պալատներից, 28-ը՝ քաղաքաբնակներից և 74-ը՝ գյուղական համայնքներից (կարող էին նաև կալվածատերեր ընտրվել): Թե որքան քիչ էր գյուղացիական ներկայացուցչությունը, կարելի է տեսնել բուն ընտրական համակարգից. կալվածատերերի ընտրախավից մեկ պատգամավոր ընտրելու համար անհրաժեշտ էր 52 ձայն, իսկ գյուղական համայնքի ընտրախավից ընտրելու համար՝ 8764 ձայն: Ուկրաինացիները, որպես գերազանցապես գյուղացիական ժողովուրդ, շատ անշահավետ իրադրությունում էին հայտնվում: Գալիցյան սեյմի ընտրություններում ուկրաինացի պատգամավորների թիվը սովորաբար սահմանափակվում էր առավելագույնը 15 %-ով: Համապատասխանաբար՝ անհամեմատ քիչ էր նրանց ներկայացուցչությունը Վիեննայի խորհրդարանում: Պարզ է, որ *Գալիչինայում խորհրդարանական համակարգը բոլոր առավելությունները տալիս էր լեհական շլախտային:*

Սակայն լեհերը հեռու չէին նրանից, որ առավել շատի հասնեին: 1867 թ.-ին կրկնվեց հին, ծանոթ գործընթացը: Պրուսիայի հետ պատերազմում պարտություն կրելով՝ Հաբսբուրգները ստիպված եղան մի շարք զիջումներ անել հունգարներին՝ կայսրության ամենահզոր ժողովրդին: Արդյունքը եղավ ավստրո-հունգարական փոխզիջումը, համաձայն որի՝ հունգարների անմիջական ենթակայության տակ էր անցնում կայսրության համարյա կեսը՝ ներառյալ Անդրկարպատները: Հաբսբուրգների կայսրությունը վերածվեց Ավստրո-Հունգարական կայսրության: Հունգարների հաջողությունը լեհերին մղեց պահանջելու Գալիչինայի լիակատար վերահսկումը: Պաշտոնապես Վիեննան ընդառաջ չգնաց այդ պահանջներին, սակայն ըստ էության զնաց լեհերի հետ ոչ պաշտոնական փոխզիջման. լեհերի աջակցությունը ստանալու դիմաց Հաբսբուրգները խոստանում էին Գալիչինայում չմիջամտել լեհերի գործերին: Արդյունքում՝ *Գալիչինան վերածվել էր լեհական «պետության» պետության մեջ:*

Գալիչինայում լեհերի ազդեցության անսպասելի վերելքը նրանց ավելի շատ հնարավորություններ տվեց, քան երաշխավորում էին սեյմի լեհերի մեծամասնությունը: Մինչև 1916 թ.-ը միայն լեհերն էին զբաղեցնում փոխարքայի պաշտոնը: Երբ 1871 թ.-ից կենտրոնական կառավարությունն սկսեց Գալիչինայի հարցերով մոխարար նշանակել, նա միշտ լեհ էր լինում: Կառավարական մարմինն արագ ազատվում էր գերմանացիներից և դառնում լեհական: Կրթությունը նույնպես ամբողջությամբ լեհերի ձեռքին էր, և 1869 թ.-ին կրթության և գործավարության պաշտոնական լեզուն նահանգում դարձավ լեհերենը: Սոցիալ-տնտեսական և մշակութային տեսակետից լեհերն զգալիորեն ուժեղ էին ուկրաինացիներից: Նրանց վերնախավը տիրում էր հողերի մեծ մասին, մտավորականությունն ավելի մեծաթիվ էր, կրթված, և ուներ ավելի զարգացած մասնագիտական կառուցվածք, քաղաքային բնակչության մեջ լեհերի տեսակարար կշիռն ավելի արագ էր աճում և վերջապես՝ նույնիսկ մինչև 1867 թ.-ը մշակույթի բնագավառում նրանց նվաճումները շատ տպավորիչ էին: Ուստի գարնանալի չէ, որ լեհերը *Գալիչինայում հույս ունեին լիակատար իշխանության հասնել:*

### **Լեհերի նպատակները Գալիչինայում**

Իսկ ի՞նչ էին պատրաստվում անել լեհերը՝ հասնելով իշխանության: 1868-1914 թ.թ.-ների լեհերի քաղաքականությունը հասկանալու համար հարկ է իրադրությանը նայել լեհերի աչքերով, համարվել նրանց հույսերով ու ձգտումներով: Լեհերը, ավելի ճիշտ՝ նրանց շլախտան և մտավորականությունը (լեհ գյուղացիներն էլ ուկրաինացի գյուղացիների պես քաղաքականապես միամիտ էին), հուսակորույս ժողովուրդ էին: XVIII դարի վերջին նրանց զրկեցին պետականությունից, իսկ երբ 1830 և 1863 թ.թ.-ներին ոտքի կանգնեցին վերականգնելու այն, դաժան պարտություն կրեցին: Հնարավոր է, որ ուկրաինացիներին նրանք թվում էին ամբարտաճան և անզսպելի մրցակիցներ, սակայն լեհերից շատերին տեսիլքի պես հետապնդում էր գերմանացիների և ռուսների հանդեպ ունեցած իրենց թուլության ու անօգնականության զգացումը: 1863 թ.-ի աղետից հետո լեհերի մտածելակերպում կարևոր առաջընթաց տեղի ունեցավ, որի էությունն առավել պարզ արտահայտել է Գոլուխովսկին: Հրաժարվելով հեղափոխական գործունեությունից՝ որպես անարդյունավետ միջոցի, լեհ առաջնորդներն ընտրեցին «հասարակական աշխատանքի» քաղաքականությունը. որոշակի (պարզապես առօրյա) գործունեություն, որն ուղղված կլինի լեհական հասարակության արդիականացման ճանապարհով նրա դիրքերի ամրապնդմանը: Գալիչինայում ստեղծված պայմանները

քացառապես բարենպաստ էին հատկապես այդպիսի մոտեցման համար: Արդյունքում՝ այդ նահանգը լեհերը սկսեցին դիտարկել որպես յուրօրինակ «Պլեննոնտի», այսինքն՝ մի հեռակետի, որից կարելի էր սկսել լեհ ժողովրդի վերածննդի գործընթացը:

Իսկ ինչպիսի՞ն էր լինելու ուկրաինացիների՝ Հաբսբուրգներին նվիրված այս «Արևելքի տիրուցիների» ճակատագիրը: Վիեննայի դիրքորոշումն այս հարցում իր արտացոլումն է գտել ավստրիական քաղաքագետներից մեկի լկտի հայտարարությունում. «*Կարո՞ղ են արդյոք գոյությունը պահպանել ռուսինները և թե ինչքա՞ն ժամանակ՝ այս խնդիրը թողնվում է գալիցյան սեյմի հայեցողությանը:*» Այլ կերպ ասած՝ ուկրաինացիները հանձնված էին լեհերի ողորմածությանը: Հաշվի առնելով այն ծրագրերի բնույթը, որոնք լեհերը (նրանցից շատերը իսկական ժողովրդավարներ էին) կազմել էին Գալիչինայի վերաբերյալ, կարելի է հասկանալ, թե ինչու էր նրանց վերաբերմունքը ուկրաինացիների ազգային ձգտումների նկատմամբ բացասական: Առավել անհաշտ էին տրամադրված Արևելյան Գալիչինայի գերպահպանողական լեհ կալվածատերերը՝ «պողոպանները», որոնք դուրս էին գալիս ուկրաինացիների դեմ ոչ միայն քաղաքական, այլև՝ սոցիալ-տնտեսական պատճառներով. ուկրաինացիների իրավունքների ճանաչումը նրանց համար հավասարազոր էր գյուղացիների պահանջների աճին: Այսպիսով, *լեհական շլախտայի և ուկրաինական գյուղացիության միջև հին սոցիալական հակասություններին ավելացավ նորը՝ ազգային շահերի առավել պայթյունավտանգ բախումը:* Այս զուգակցությունը Գալիչինայում լեհ-ուկրաինական դիմակայությանը առանձնա-հատուկ սրություն էր հաղորդում:

Սկզբում լեհերի վերաբերմունքն ուկրաինացիների նկատմամբ (հատկապես պահպանողական «պողոպանների») կողմից ցայտուն արտահայտվող) հանգում էր նրան, որ ուկրաինացիներին ընդհանրապես չպետք է ճանաչել որպես առանձին ազգ և ապացուցել, որ նրանք ընդամենը լեհերի մի տարատեսակն են: Սրանով էլ բացատրվում է լեհ առաջնորդներից մեկի հայտարարությունը. «*Ոչ մի ռուսին գոյություն չունի, կա միայն Լեհաստան և Մոսկովչինա:*» Երբ 1848 թ.-ին ուկրաինացիների գործունեության ակտիվացման շնորհիվ կասկածի տակ դրվեց նման մոտեցումը, մշակվեց մի նոր գործելակերպ, որն առավել ավարտուն տեսքով արտահայտել է Գոլուխովսկին: Այն հանգում էր *Վիեննայում ուկրաինացիներին վարկաբեկելուն, նրանց ազգային և սոցիալական զարգացմանը ամեն կերպ խոչընդոտելուն և նրանց արագ լեհացմանը:*

Հատուկ վճռակառնությամբ այս քաղաքականությունն էր տարվում լուսավորության ոլորտում: 1867 թ.-ից հետո լեհերենը գերմաներենին փոխարինեց Լվովյան համալսարանում և բոլոր մասնագիտական ու տեխնիկական ուսումնական հաստատություններում: Ամենաանպատկառ ձևով լեհացման ենթարկվեցին զիննագիտները. 1914 թ.-ին նահանգում կային 96 լեհական և միայն 6 ուկրաինական զիննագիտ, այսինքն՝ մեկական դպրոց յուրաքանչյուր 42 հազ. լեհերի և 520 հազ. ուկրաինացիների համար: Տարրական դպրոցներում լեհական դասարանների թիվը երեք անգամ ավելի էր, քան ուկրաինականը:

Ուկրաինացիների նկատմամբ խտրականությունն առկա էր բոլոր մակարդակներում: Օրինակ, 1907 թ.-ին լեհական մշակութային հաստատությունները տասնապատիկ ավելի ֆինանսական աջակցություն էին ստացել, քան ուկրաինականը: Եթե լինում էին կապիտալ ներդրումներ, ապա դրանք ամենից առաջ ուղարկվում էին նահանգի արևմտյան՝ լեհական մասը: Ամեն քայլափոխի ուկրաինացիները բախվում էին իշխանությունների ոչ միայն անտարբերությանը, այլև ակտիվ դիմադրությանը: Նրանց հարկադրում էին սուր ու համառ պայքար մղել յուրաքանչյուր հաստատության, յուրաքանչյուր պաշտոնի, յուրաքանչյուր տեղի, նույնիսկ՝ յուրաքանչյուր ուկրաիններն ասված բառի համար:

Այս ամենաթափանց, հաճախ մանր բաների հանգեցնող դիմակայությունը սաստկանում էր լեհական և ուկրաինական առաջնորդների մտածելակերպի շատ խորը տարբերությունների պատճառով: Ինչպես գրում էր Իվան Լիսյակ-Ռուդնիցկին. «յուրաքանչյուր կրթված ուկրաինացի ընդամենը մեկ-երկու սերունդ է հեռացել ծխական քահանայի տնից կամ գյուղական հյուղակից»։ Կիրթ ուկրաինացիների և լեհերի աշխարհայացքների միակ ընդհանուր գիծը՝ նույն Ռուդնիցկու խոսքերով, այն էր, որ «երկու հասարակություններն էլ իրենց բախումներն ընկալում էին որպես լեհական շլախտայի և ուկրաինական կոզակների միջև XVII դարի մեծ պատերազմներին նման ինչ-որ բանի»:



## Ուկրաինացիների հակազդեցությունը

Եթե 1848 թ.-ը Գալիչինայի ուկրաինացիների համար եղավ վերելքի զագաթնակետը, ապա 1860-ական թվականներն ակնհայտորեն դարձան նրա անկման շրջանը: Վիեննայի կողմից լեհերին արված զիջումները ցնցեցին ու վիատեցրին ուկրաինացիներին: 1848 թ.-ի հեղափոխության ժամանակ նրանք դիմակայում էին լեհերին որպես քաղաքականապես հավասարներ, իսկ հիմա նրանք ամբողջությամբ լեհերի ենթակայության տակ էին: Սերնդեսերունդ նրանք հավատացել էին, որ Չաբսբուրգների նկատմամբ իրենց ամերեր նվիրվածությունը կապահովի նրանց աջակցությունը, սակայն 1867 թ.-ին նրանք դառնորեն հասկացան, որ այդ հավատը սխալմունք էր: Գալիչինայի նոր քաղաքական իրավիճակը ցույց տվեց, որ ազգային շարժումը գլխավորող ուկրաինական հոգևորականության (սովորաբար նրանց անվանում էին «հին ռուսիներ») առաջ ուրվագծվում են շատ մտայն հեռանկարներ: Վիեննան անհուսալի դուրս եկավ. վերջին պատերազմական ու քաղաքական պարտությունների հետևանքով նրա հզորությունն ու հեղինակությունը զգալիորեն խամրել էին: Իսկ լեհերն ուժեղ էին, քան երբեք: Ուկրաինացի առաջնորդներն իրենց իսկ ժողովրդի մեջ տեսնում էին միայն աղքատ, ծեծված ու անգրագետ գյուղական զանգվածների: Իրենց ուժերի նկատմամբ հավատը կորցնելով՝ նրանք փնտրում էին աջակցության նոր աղբյուրներ:

### Ռուսաստանը

1860-ականներին կրթված շատ ուկրաինացիների հետաքրքրություններն ու ակնկալիքները սկեռվել էին Ռուսաստանի վրա: Դրանում ոչ մի գարնանալի բան չկար, քանի որ ժամանակներն այնպիսին էին, որ շատ սլավոնական ժողովուրդներ (չեխերը, սերբերը, բուլղարները), որոնք գերմանացիների կամ թուրքերի լծի տակ էին, հույսով լի հայացքով նայում էին եղբայր-սլավոններին՝ ռուսներին, որոնցից օգնություն էին սպասում: *Սեփական նպատակներին հետևանուտ, Ռուսաստանը խրախուսում էր սլավոնասեր միտումները՝ «բարեկամ» ժողովուրդների հետ մշակութային կապեր հաստատելով և նրանց դրամով օժանդակելով:* Առաջիններից և առավել ակտիվ մշակութային ռուս քարոզիչներից մեկը պահպանողական հայտնի պատմաբան Միխայիլ Պոգոդինն էր, որը 1835 թ.-ին այցելեց Լվով և կապեր հաստատեց ուկրաինական մտավորականության հետ: Չնայած այն ժամանակ նրա ռուսամետ հորդորները զգալի ազդեցություն չունեցան, սակայն 1860-ականների իրադրությունում դրանք սկսեցին օգուտ բերել:

Գալիչինայում ռուսասիրության առաջին նոր հետևորդը դարձավ պատմաբան Դենիս Չուրիցկին՝ սակավաթիվ ուկրաինական ազնվականներից մեկը: Ամխոնց Պոգոդինի հետ նա կարողացավ իր կողմը գրավել կրթված մի քանի այլ ուկրաինացիների, այդ թվում՝ հայտնի Յակիվ Չոլովացկուն՝ «Ռուսիական երրորդության» անդամներից մեկին: Այդուհանդերձ, *Գալիչինայում դեպի ռուսասիրություն վճռական շրջադարձը տեղի ունեցավ 1860-ական թվականների վերջին*, երբ նրա գաղափարներն ընդունվեցին Լվովի հույն-կաթոլիկական հոգևորականության այսպես կոչված՝ Սվյատոյուրսկի թեմի կողմից: Այդ ժամանակից ռուսասիրությունն արագ տարածվեց հոգևորականության մեծամասնության մեջ, և մինչև XIX դարի վերջը քահանաները փաստորեն մնացին նրա հիմնական սոցիալական բազան: Համակելով արևմտաուկրաինական վերնախավի զգալի մասին, ռուսասիրության միտումները սկսեցին կարևոր դեր խաղալ Արևելյան Գալիչինայի, Բուկովինայի և Անդրկարպատների մշակութային և քաղաքական կյանքում:

Ռուսասիրությունը ձգողական ուժ ուներ «հին ռուսիների» համար ոչ միայն սլավոնասիրության տարփոքման կամ Չաբսբուրգներից հիասթափվելու պատճառով, այլ՝ որ 1848 թ.-ի շատ վետերաններ նրանում տեսնում էին՝ *Ռուսաստանի աջակցության շնորհիվ լեհերի հետ պայքարում չպարտվելու միակ հնարավորությունը:* Ոչ նվազ կարևոր դեր էին խաղում նաև սոցիալ-հոգեբանական կարգի շարժառիթները: Նույնիսկ անիրազեկ մարդու համար էր պարզ, որ ուկրաինական բարձրագույն հոգևորականությունը տառապում էր էթնիկական և սոցիալական անլիարժեքության զուգակցությամբ: Ինչպես և ցանկացած ընտրախավ, նա նույնպես հավակնում էր ճանաչում և որոշակի հեղինակություն ձեռք բերել: Սակայն լեհ շլախտիչներն առիթը բաց չէին թողնում ընդօժեցելու հույն-կաթոլիկ քահանաների նկատմամբ իրենց սոցիալական գերազանցությունը: Հասկանալի է, իհարկե, որ ուկրաինական հասարակության գյուղացիական բնույթն ինքնիրեն չէր կարող նպաստել քահանաների հեղինակության բարձրացմանը, իսկ 1860-ական թվականների անհաջողություններից հետո ուկրա-

ինությունն ավելի քիչ գրավիչ դարձավ: Այդ պատճառով էլ՝ *հզոր ռուս ցարի, մեծաթիվ ռուս ժողովրդի և նրա ծաղկող մշակութային հետ նույնացվելու հնարավորությունը համապատասխանում էր հոգևորականության որոշ ծածուկ պահանջներին:* Դրան ավելանում էին նաև զուտ գործնական նկատառումները. հաշվի առնելով Ավստրիայի թուլություններն ու Ռուսաստանի հզորությունը, չէր բացառվում այն բանի հնարավորությունը, որ ռուսները վաղ թե ուշ տիրելու էին Գալիչինային, այդ պատճառով էլ կրթված շատ ուկրաինացիներ ողջամիտ էին համարում հնարավորինս շուտ դրան նախապատրաստվել («ռուսական սայլին նստել»):

Ուկրաինացիների ռուսասիրությունը տարբերվում էր չեխերի և մյուս սլավոնների ռուսասիրությունից նրանով, որ այս դեպքում՝ ռուսների և ուկրաինացիների նմանության և նույնիսկ նույնացման հիմնավորումների մեջ նա շատ հեռուն էր գնացել: Նրա այնպիսի առաջատար կողմնակիցների կարծիքով, ինչպիսիք էին Բոդան Դիդիցկին, Իվան Նաունովիչը, Միխայիլ Կաչկովսկին և նաև Անդրկարպատներից՝ Ադոլֆ Դոբրյանսկին, ուկրաինացիները եռմիասնական ռուս ժողովրդի մի մասն էին, որի մյուս երկու բաղադրիչ մասերը վելիկո-ուսներն ու բելոռուսներն էին: Առաջին անգամ այս տեսակետներն իրենց արտացոլումը գտան ռուսական կառավարության կողմից գաղտնի ֆինանսավորվող հին ռուսիների «խոսք» լրագրում տպագրված հայտարարությունում. «Մենք այլևս չենք կարող չինական պատով մեկուսացնել մեզ մեր եղբայրներից և ժխտել լեզվական, գրական, կրոնական և էթնիկական կապերը, որոնք կապում են մեզ ամբողջ ռուսական աշխարհի հետ: Մենք այլևս 1848 թ.-ի ռուսիները չենք. մենք իսկական ռուսներ ենք»:

Լիովին հեռանալով 1848 թ.-ի դիրքերից, *հին ռուսիները ցույց էին տալիս իրենց անկարողությունը ոչ միայն մշակութային, այլ նաև քաղաքական բնագավառում:* Այս դիրքորոշման լուրջումն արտացոլում էր այն ժամանակվա հայտնի սրախոսությունը. *«Եթե պիտի խեղդվենք, ապա ավելի լավ է խեղդվենք ռուսական ժովում, քան լեհական ծածուկում»:* Այսպիսի մոտեցման մի հետևանք էր նաև այն, որ հույսներն ամբողջովին դնելով ռուսական աջակցության վրա, հին ռուսիները հրաժարվեցին ուկրաինական ժողովրդական զանգվածների մեջ կազմակերպչական աշխատանքներ տանելուց: Նրանք իրենց քաղաքականությանը պասիվ ու անտարբեր բնույթ տվեցին:

Սակայն հին ռուսիները Չաբսբուրգների հետ կապերը բացեիբաց խզելու քաջություն չունեին: Ռուսաստանի հետ մշակութային կապերն ամրապնդելով հանդերձ, նրանք շրջափայտորեն հայտարարում էին («խոսք»-ի վերոնշյալ հոդվածում), թե. «Մենք միշտ եղել ենք և կլինենք ամերկայաբարեկամ հավատարիմ մեր օգոստափառ սլավոնական միապետին և Չաբսբուրգների փառավոր դինաստիային»: Նրանցից ոմանք, հատկապես բարձրագույն հոգևորականությունը, խուսանավելով ավելի հեռուն գնացին, պնդելով, թե իրենք ոչ ռուսներ են, ոչ ուկրաինացիներ, այլ առանձին գալիցյան ժողովուրդ: Այս խառնաշփոթ ինքնըմբռնումը, այնպես ինչպես և տեղական առանձնահատկությունների նկատմամբ չափից մեծ ուշադրությունը, ուժի առաջ ստորաքարշությունն ու քծնանքը, հզոր Ռուսական կայսրության հետ նույնացվելու փորձերը և միաժամանակ տարածաշրջանային ուրույնությունը պահպանելու ձգտումը, իհարկե, ուկրաինական պատմության մեջ նոր չէր: Ըստ էության, դա Արևելյան Ուկրաինայում տարածված «մալոռոսական» մտածելակերպի արևմտաուկրաինական տարբերակն էր:

*Ռուսասիրության ազդեցությունն ուկրաինացիների վրա առավել բացահայտ էր նկատվում լեզվական ոլորտում:* Հանդես գալով վերնախավի դիրքերից, հին ռուսիներն անշեղորեն հրաժարվում էին որպես ուկրաինական գրական լեզվի հիմք ընդունել տեղական բարբառը, այն համարելով «խոզարածների ու չորանների լեզու»: Նրանք ուզում էին, որ իրենց լեզուն ճանաչված գրական ավանդույթ ու հեղինակություն ունենար: Արդյունքում՝ նրանց հրատապակությունները հրապարակվում էին եկեղեցական սլավոնական լեզվով՝ լեհական, ռուսական և ուկրաինական բառերի խառնուրդով:

Դնարավոր է, որ այս անհաջող, արիեստական խառնուրդը, կամ, ինչպես անվանում էին՝ *«լեզվությունը»*, կարող էր և հեղինակություն վայելել, սակայն այն նաև քիչ հասկանալի էր, հատկապես՝ գյուղացիների համար: Նույնիսկ կրթված այն ուկրաինացիները, որոնք գրում էին այդ լեզվով (յուրաքանչյուրն օգտվելով իր անհամակարգ կանոններից), հազվադեպ էին նրանից օգտվում խոսելիս՝ գերադասելով լեհերենը: Այն հարցին, թե ինչու՞ հատկապես լեհերենը, հին ռուսիները պատասխանում էին. «Մալոռոսներն գյուղացիների լեզուն է, իսկ ռուսներն մենք չգիտենք, այդ պատճառով էլ ստիպված ենք խոսել լեհերի քաղաքակիրթ լեզվով»: Ռուսասեր հին ռուսիների լեզվաբանական հնարաբանությունները «Ռուսիական



երրորդության» և 1848 թ.-ին երևան եկած տեղական բարբառի բացահայտ կողմնակիցների գրական սկզբունքներից հրաժարում էին նշանակում: *Ռուսաստանը տեղական բարբառի այնպիսի եռանդուն հակառակորդներ դուրս եկան, որ նույնիսկ ողջունեցին 1876 թ.-ի՝ Ռուսաստանում ուկրաինական հրապարակումների արգելքը:* Հենց լեզվական հարցն էր, որ հիմք հանդիսացավ ուկրաինացի ուսանողների մեջ գալիցյան ռուսասերների առաջին ընդդիմության սաղմնավորման համար:

Երիտասարդ սերնդին դժվար էր հակամարտության մեջ մտնել ավագ սերնդի հետ, որն արդեն հասել էր կայուն հասարակական դիրքի ու ազդեցության: *Ռուսասերները գերակշռում և իշխում էին համարյա բոլոր ուկրաինական հաստատություններում:* Նրանց ձեռքին էր համարյա ամբողջ մամուլը, ներառյալ՝ ամենախոշոր «խոսք» լրագիրը, «Գալիցիա-ռուսիական մատիցա» և «Ժողովրդական Տուն» հրատարակչությունները, լավ ֆինանսավորվող Ստավրոպոլիսյան ինստիտուտը: Ի հավելումն այս ամենի, *1870 թ.-ին ռուսասերները հիմնեցին «Ռուսիական Ռադա» քաղաքական կազմակերպությունը*, որն ըստ նրանց հայտարարության, 1848 թ.-ի «Գլխավոր Ռուսիական Ռադայի» անմիջական շարունակողն էր և հավակնում էր ստանձնել Գալիչինայի բոլոր ուկրաինացիների միակ ներկայացուցչի դերը: *Այսպիսով, նույնիսկ սեփական ընտրախաղի միջավայրում ուկրաինական շարժումը հզոր ու վճռական հակառակորդ ուներ:*

### Ժողովրդականներ

Մինչև 1848 թ.-ի հեղափոխությունը, հենց երիտասարդությունը՝ «Ռուսիական երրորդության» գլխավորությամբ, հանդես եկավ տեղական լեզվի գործածման օգտին, և չնայած ավագ սերնդի դիմադրությանը, նա էլ 1860-ականներին ոտքի կանգնեց պաշտպանելու խոսակցական լեզուն: Հին ռուսիկների նման, երիտասարդ արևմտյան ուկրաինացիներից շատերն իրենց հայացքն հանեցին դեպի արևելք: Ի դեպ, եթե ավագ սերունդը բռնում էր ցարին, ապա երիտասարդությունը ոգեշնչվում էր *Շևչենկոյի օրինակով: Նա ոչ միայն հիանում էր ժողովրդական լեզվի գեղեցկությամբ, եռանդով և ուժով, որ բացահայտել էր Շևչենկոն, այլև՝ կիսում էր նրա և արևմտյան շատ ուկրաինացիների՝ գյուղացիական, այսինքն՝ ժողովրդական կողմնորոշվածությունը:* Այստեղից էլ և «*ժողովրդականներ*» անվանումը, որ սովորաբար կիրառվում է արևմտաուկրաինացի նարոդնիկների նկատմամբ:

*Ռուսասերներին ու ժողովրդականներին միմյանցից բաժանող տարիքային և գաղափարախոսական տարբերություններից բացի, կար նաև սոցիալականը:* Ռուսասերների թվին էին պատկանում լավ վարձատրվող եկեղեցական ու աշխարհիկ պաշտոնյաները և այլ «կարգին քաղաքացիներ», իսկ ժողովրդականները՝ հիմնականում ուսանողներ էին, երիտասարդ հոգևորականներ և ծնունդ առնող աշխարհիկ մտավորականությունը: Այնուամենայնիվ, հարկ չկա չափազանցելու այն տարբերությունները, որոնք բաժանում էին կրթված սակավաթիվ արևմտյան ուկրաինացիների մեջ դեռևս նոր ձևավորվող այս երկու ճամբարները: *Սկզբում տարակարծություններն համարյա առաջանում էին բացառապես լեզվական և գրականագիտական խնդիրների շուրջ:* Մյուս ոլորտներում արժեքներն (ինչպես և ծագման, հաճախ՝ հոգևորականությունից) ընդհանուր էին և տարածայնություններին նայում էին որպես մի ընտանիքի ավագների և կրտսերների միջև հակասությունների:

*Սակայն արտաքին ազդեցություններն աստիճանաբար խորացնում էին երկու խմբակցությունների միջև գոյություն ունեցող տարածայնությունը:* Եթե ռուսասերները խորամուխ էին լինում պահպանողական ռուս սլավոնասերների ստեղծագործություններում, ապա ժողովրդականներն հափշտակությամբ կարողում էին Շևչենկոյի, Կուլիշի և Կոստոմարովի ստեղծագործությունները, ինչը նրանց ավելի ու ավելի էր մոտեցնում կիևյան ուկրաինասերներին: 1863 և 1876 թ.թ.-ների հակաուկրաինական միջոցառումներից հետո, արևելաուկրաինական գրողներն սկսեցին հատկապես շատ տպագրվել գալիցյան ժողովրդականների ամսագրերում: Այս կապերն ավելի ամրապնդվեցին, երբ Անտոնովիչը, Կոնիսկին ու Կուլիշն այցելեցին Գալիչինա և ներգրավվեցին (լավ էր, թե՛ վատ՝ ո՞վ գիտի) արևմտաուկրաինական քաղաքական կյանքում: Արևելյան ուկրաինացիների ազատամիտ գաղափարախոսության ազդեցության տակ որոշ չափով ընդլայնվեցին եկեղեցու հետ կապված արևմտյան, գավառական ուկրաինացիների մտահորիզոնները: Այս փոխադարձ կապերի ամրապնդման սկզբնական փուլում ժողովրդավարական և աշխարհիկ միտումները նույնիսկ գերակշռում էին: Սակայն ժողովրդականների վրա արևելյան ուկրաինացիների ազդեցությունն իր սահմաններն ուներ: Երբ 1870-ական թվականների վերջին, աքսորում ապրող Դրահոմանովը փորձեց նրանց իր

աշխարհաքաղաքական, սոցիալիստական և հակակղերական հավատին բերել, նրանք վճռաբար մերժեցին նրա «անաստված անիշխանականությունը»: Ժողովրդականներից շատերը երիտասարդ գյուղական քահանաներ էին, որոնք ձգտում էին ընդլայնել գյուղացիության հետ իրենց շփումները: Այդ պատճառով էլ ժողովրդականները սովորաբար չէին ցանկանում (չէին էլ կարող) դուրս գալ համապատասխան աշխարհընկալման սահմաններից:

*Ժողովրդականների միջավայրում հասունացող միաբանությունը հիմնվում էր նախ և առաջ ուկրաինացիներին որպես առանձին ժողովուրդ ճանաչելու վրա, ժողովուրդ, որն զբաղեցնում էր Կովկասից մինչև Կարպատներն ընկած տարածքը և որի ինքնարտահայտման լավագույն միջոցը նրա մայրենի լեզուն էր:* Նրանք համարում էին, որ ազգային ինքնության ճանաչման և զարգացման ամենարդյունավետ միջոցը՝ ուկրաիներեն լեզվի արմատավորումը, տարածումն ու տարփողումն է: Այդ պատճառով էլ ազգային հարցը նրանց համար սահմանափակվում էր լեզվի և գրականության բնագավառով: Այսպիսի նեղ մոտեցումը դժվարացնում էր սոցիալական խնդիրներին անդրադառնալու, կառավարությանը քննադատելու և, ընդհանրապես, քաղաքականությամբ զբաղվելու հնարավորությունները: Այս առումով, ժողովրդականները հանդիսանում էին Ռուսական կայսրության ուկրաինասերների արևմտաուկրաինական տարբերակը: Նմանությունը խորանում էր նաև նրանով, որ ժողովրդականները, ինչպես և ուկրաինասերները, օտարերկրյա աջակցություն չունեին (ի տարբերություն ռուսասերների): Քանի որ նրանք հիմնվում էին «սեփական ժողովրդի» վրա՝ նրանք (թեկուզև՝ տեսականորեն) ավելի ժողովրդավարական էին, քան նրանց ռուսասեր հակառակորդները:

*Համարյա բոլոր ուկրաինական հաստատությունները, ներառյալ մամուլը, ռուսասերների ձեռքին էին և անմատչելի էին ժողովրդականների համար:* Միակ ելքը մնում էր նոր հաստատություններ ստեղծելը: Քանի որ ռուսասեր նվիրապետությունը արգելել էր բեմական դպրոցների սաներին մտնել ժողովրդականների խմբերի մեջ, նրանք հիմնեցին մի քանի գաղտնի խմբակներ, որոնցից առանձնանում էր 1861 թ.-ին Լվովում ստեղծված «Երիտասարդ Ռուսիան»: Այդ խմբակների գործունեությունը հիմնականում հանգում էր ամսագրերի հրատարակմանը, և 1860-ական թվականներին բազմազան ամսագրեր հայտնվեցին: Դրանցից էին. «Երեկոյթները» (1862)՝ որը ժողովրդականացնում էր Շևչենկոյին և կրում էր Պետերբուրգի «Օսնովա» ամսագրի խիստ ազդեցությունը, «Նպատակը» (1863-1865)՝ որ զբաղվում էր աշխարհիկ մտավորականության գիտելիքների ընդլայնմամբ, «Դաշտը» (1865) և «Ջրահարսը» ամսագրերը կենտրոնացել էին գրականության վրա, «Պրավդան» (1867-1880)՝ ուր հաճախ էին հրապարակվում արևելաուկրաինացի հեղինակների գործերը և որը ծառայում էր որպես մի նյութատեսակ համաուկրաինական ֆրում: Բացառությամբ «Պրավդա» ամսագրի, բոլոր այս հրատարակությունները խմբագրվում էին ոչ փորձառու երիտասարդ էնտուզիաստների կողմից և չունենալով լայն ընթերցողական լսարան ու ֆինանսական միջոցներ, արագ վերանում էին:

*Միաժամանակ, շատ ժողովրդականներ աշխատում էին ուկրաինական քերականության ու բառարաններ կազմելու վրա:* Նրանց գործունեության ևս մեկ ոլորտ էր ուկրաինական թատրոնը: Հիմնադրվելով 1864 թ.-ին Լվովում, այն դարձավ, ինչպես և Ռուսական Ուկրաինայի, ազգային ինքնագիտակցության զարթոնքի ամենից արդյունավետ միջոցը: 1868 թ.-ին Լվովի մոտ 60 ուսանողներից բաղկացած խումբը՝ Անատոլի Վախնյանի գլխավորությամբ, ստեղծեց «*Լուսավորություն*» ընկերությունը, որը զբաղվում էր «ժողովրդի ուսումնասիրությամբ և լուսավորությամբ»: Իսկ 1873 թ.-ին արևելյան ուկրաինացիների ֆինանսական և քարոյական աջակցության շնորհիվ, Լվովում հիմնվեց վերը հիշատակված՝ «*S. Շևչենկոյի անվան ընկերությունը*»:

*Չնայած գրական և մշակութային գործունեության այս պոթենցիալին, շուտով ժողովրդականները համոզվեցին, որ իրենց կապը ժողովրդի հետ շատ թույլ է:* Դրա ընթացումը և մի շարք այլ գործոններ ստիպեցին նրանց վերախմբավորել իրենց տեսակետները:

1876 թ.-ի Էմիլ Իրամանգրից հետո ավելի փորձառու արևելյան ուկրաինացիների հետ շփումները կտրուկ շատացան: Գալիչինայի ուկրաինացիների քաղաքական անգործության դրամատիկական վկայությունը դարձավ 1879 թ.-ը, երբ ռուսասերների գլխավորությամբ նրանք կարողացան մահանգային սեյմի ընդամենը 3 տեղ նվաճել: 1880 թ.-ի շեմին առաջնորդների նոր սերունդ հայտնվեց, որոնք հիմնականում աշխարհիկ մտավորականությունից էին, նրանց թվում այնպիսի պրոֆեսորներ և իրավաբաններ կային, ինչպիսիք էին *Յուլիան Ռոմանչուկը, Օլեքսանդր Օհոնովսկին և Բարվինսկի եղբայրները:*

Այս բոլոր իրադարձությունների ազդեցության տակ ժողովրդականները կարողացան



ուշադրություն ցուցաբերել Դրահոմանովի կոչերից հենց մեկի նկատմամբ. «Լեհերը ձեզ դուրս մղեցին գալիցյան սեյմից, ռուսասերները վնասեցին ձեզ ձեր հաստատություններից... մենք կոչ ենք անում հրաժարվել փոխզիջումների և փոխադարձ մեղադրանքների քաղաքականությունից և դրա փոխարեն գնալ ժողովրդի մեջ և կազմակերպել ժողովրդին ու կազմակերպվել»: Իսկ ինչ վերաբերում է ռուսասերներին, Դրահոմանովը խորհուրդ էր տալիս նրանց հետ խզել ամեն տեսակի կապերը: Ժողովրդականները հետևեցին այս խորհրդին: Նրանք դուրս եկան ռուսասիրական բոլոր կազմակերպություններից և ուսանողական խմբակներից: 1880 թ.-ին նրանք ընթերցող լայն շրջանների համար նախատեսված մի լրագիր հիմնադրեցին՝ «Գործ», այդ ամվանումով ընդգծելով ռուսասերների «խոսք» լրագրի հետ հակադրությունը: Նույն տարում նրանք առաջին անգամ հրավիրեցին ուկրաինական վիչե՝ ուկրաինական հասարակության իրավիճակի և կարիքների քննարկման նպատակով: Այդ հավաքին մասնակցեցին մոտ 2 հազ. մարդ, այդ թվում շատ գյուղացիներ: 1885 թ.-ին հիմնվեց առաջին ներկայացուցչական մարմինը՝ «ժողովրդական Ռադան»:

### Արմատականներ

Նույնիսկ ժողովրդականների ակտիվության նոր վերելքը թվում էր անբավարար՝ ուկրաինական հասարակության մեջ նրանց կառուցողական և առաջադիմական դերն ապահովելու համար: Իսկ ռուսասերները համարվում էին այնքան անհուսալիորեն հետադիմական, որ նույնիսկ արժանի չէին քննադատության: Համենայն դեպս, այդպիսին էին Դրահոմանովի տեսակետները: Որպես արևելաուկրաինական մտավորականության ընտրախափ մերկայացուցիչ, ժնկյան վտարանդին ապշել էր Գալիչինայի բնակիչների մշակութային ցածր մակարդակից, գավառականությունից ու մանրախնդրությունից: Նրան հատկապես անհանգրստացնում էր ուկրաինացիների կյանքում հոգևորականության իշխող դերն ու, նրա կարծիքով, բացասական ազդեցությունը (Արևելյան Ուկրաինայում, որտեղ հոգևորականությունը հիմնականում ռուսացված էր, նրա ազդեցությունն ուկրաինական շարժման վրա անշան էր): Այս համոզված սոցիալիստին զայրացնում էր քարոզների ժամանակ քահանաների կողմից բազմաթիվ անգամ կրկնվող այն փաստարկը, թե գյուղացիների աղքատության պատճառը հիմնականում նրանց հարբեցողությունն ու ծուլությունն է: Համարելով, որ արևմտյան ուկրաինացիների ավագ սերունդը (որոնց թվին էր 1870-1880 թ.թ.-ներին դասում նաև ժողովրդականներին) շատ է ընկղմվել հետադիմականության մեջ, որպեսզի կյանքի վերակոչվի, Դրահոմանովը կենտրոնանում է գալիցյան ուսանողների հետ շփումների կարգավորման վրա:

Գալիցյան ուսանողական «Ընկեր» ամսագրում տպագրված մի շարք ակնարկ-ուղերձներում Դրահոմանովը կոչ էր անում երիտասարդությանը՝ մի կողմ նետել ավագ սերնդի հայացքներն ու ընդլայնել իրենց մտահորիզոնը՝ ծանոթանալով եվրոպական և ռուսական մշակույթի ու գիտության լավագույն նվաճումներին և նվիրվել ճնշված զանգվածներին ծառայելուն՝ ոչ միայն խոսքով, այլև գործով: Նրա կոչերն արձագանք գտան մի խումբ արևմտաուկրաինական երիտասարդների սրտերում, նրանց ներշնչելով այն կայծը, որը կարելի է մտավոր հեղափոխություն անվանել, և որն այդ խմբի անդամներին մղեց ուկրաինացիների շահերը պաշտպանելու երրորդ՝ սոցիալապես ավելի հարմար ուղին փնտրելու:

Դրահոմանովի առաջին հետևորդներն էին հայտ եկան ուկրաինացի ուսանողների վիեննական «Սիչ» խմբակում: 1870-ական թվականների վերջին, նրա գաղափարների կողմնակիցներ դարձան Լվովի ևս երկու ուսանողական խումբ՝ ռուսասիրական «Ակադեմիական խմբակի» և ուկրաինասիրական «Բարեկամ վաշխառուի»: Իրենց աջակցությունն առաջարկեցին նաև նահանգի գիմնազիականների մի քանի փոքր խմբեր: Սակայն դրահոմանովյան գաղափարներով համակված առավել երևելի դեմքերը հասարակ գյուղացու ընտանիքից դուրս եկած երկու տաղանդավոր, ռեանդուն ու անձնավեր ուսանողներ էին՝ Իվան Ֆրանկոն, որը հետագայում դարձավ լավագույն ուկրաինական գրողներից մեկը, և Միխայլո Պավլիկը: Հենց նրանք էլ գլխավորելու էին արևմտաուկրաինական սահմանափակ, պահպանողական, նեղմիտ դեկավարության դեմ մտավոր և գաղափարական ապստամբությունը, այսինքն անելու էին այն, ինչին կոչ էր անում նրանց ժնկյան ուսուցիչը:

Ըստ մտավորականության վաղեմի ավանդույթի՝ մտավոր փոփոխությունների առաջին ավետաբերը դարձավ ամսագիրը: 1876 թ.-ին Պավլիկն ու Ֆրանկոն դարձան ուսանողական ռուսասիրական «Ընկեր» ամսագրի խմբագիրները: Նրանք անմիջապես մի կողմ գցեցին «լեզվությունը», անցան ուկրաինական ժողովրդական լեզվին և ռուսասերների դեմ հարձա-

կում ծավալեցին: Ծուռով իրենց քննադատությունը տարածեցին նաև ժողովրդականների վրա՝ նրանց խարազանելով սոցիալական պահպանողականության ու միջակ գրական արտադրանքի համար: Սուր քննադատությունից, արմատականությունից և հակակղերականությունից շփոթված ու ապշահար՝ գալիցյան ուկրաինացիները սկսեցին հրաժարվել բաժանորդագրությունից (ընթերցողների թիվը 500-ից նվազեց մինչև 260-ը), և Դրահոմանովը ամսագրի ֆինանսական աջակցության քայլեր ձեռնարկեց: Պավլիկն սկսեց օգնել նաև սոցիալիստ-հեղափոխականներին: 1878 թ.-ին, ի ուրախություն գալիցիա-ուկրաինական «խթբըլիչնեթի», նրան և Ֆրանկոյին դատի են տալիս՝ «բայթայիչ գործունեության» համար:

Զնայած Ֆրանկոն միայն թեթև պատիժ ստացավ, բայց որոշվեց աքսորել նրան և նա ստիպված էր օգնություն խնդրել լեհ սոցիալիստներից: Միաժամանակ ի հայտ եկան սոցիալիզմի առավել երիտասարդ հետևորդներ, այնպիսիք, ինչպիսիք էին Վյաչեսլավ Բուդզինովսկին, Միկոլա Հանկևիչը, Ստանիսլավ Կոզլովսկին և Կիրիլո Տրիլյովսկին: Արդյունքում, 1880-ական թվականներին արևմտյան ուկրաինացիների շրջանում ձևավորվեց ոչ մեծ, բայց ակտիվ ձախ հոսանքը: 1890 թ.-ին այդ երիտասարդությունը՝ «վետերաններ» Ֆրանկոյի և Պավլիկի հետ միասին, պատրաստ էր ուկրաինական քաղաքական առաջին կուսակցությունը ստեղծելուն: Նրա երևան գալը (այն տաս տարով կանխեց ՀՌԿ-ի կազմավորումը) հայտանիշն էր այն բանի, որ արևմտյան ուկրաինացիների հասարակական-քաղաքական զարգացման նոր ու հարածուն շրջան է սկսվում:

## Կազմակերպչական վերելք

Նորագույն ժամանակներում Գալիչինայի ուկրաինացիներն իրավամբ վաստակել էին կազմակերպչական հատկությունների և հասարակական կարգապահության բարձր մակարդակ ունեցող մարդկանց համբավ՝ հատկապես արևելքի իրենց եղբայրների հետ համեմատած: Այդ հատկությունները զարգացնելու պատճառներից մեկն այն էր, որ դրանք կիրառելու հնարավորությունը կար: Զնայած լեհերի համեմատությամբ իրենց անիրավահավասար դրությանը, 1861 թ.-ից հետո Ավստրիայի ուկրաինացիներն ապրում էին սահմանադրական միապետության պայմաններում, որը նրանց խոսքի և հասարակական գործունեության անհամեմատ մեծ ազատություն էր տալիս, քան դա հնարավոր էր Ռուսական կայսրությունում:

XIX դարի վերջին և XX դարի սկզբին Արևելյան Գալիչինայում տեղի ունեցող կազմակերպչական գործունեության վերելքին նպաստում էին էլի մի շարք գործոններ: Ուկրաինացիներն անմիջականորեն իրենց առջև ունեին հասարակական կարգապահության այնպիսի օրինակներ, ինչպես գերմանացիներն ու չեխերն էին: Ե՛լ ավելի անմիջականորեն էր լեհերի ազդեցությունը, որոնք վարում էին «հասարակական աշխատանքի» քաղաքականություն, որը հանգեցնում էր տնտեսական և մշակութային պաշարներն ակտիվացնելու և զարգացնելու ճանապարհով հասարակության ամրապնդմանը: Եթե արևմտյան ուկրաինացիները պատրաստվում էին մրցել լեհերի հետ, ապա միանգամայն ակնհայտ էր, որ նրանք պետք է նման մարտավարություն որդեգրեին: Այստեղից էլ ժողովրդականների նշանաբանը՝ «Հենվիր սեփական ուժերիդ վրա»: Վերջապես, 1880-ական թվականներին ուկրաինացիների շրջանում հասարակական գործչի նոր տեսակ առաջ եկավ: Հիմնականում դրանք դասախոսներ և իրավաբաններ էին, մարդիկ, որոնք ժողովրդի բարօրության գործին անմնացորդ տրվելն ու իդեալիստական անձնավորությունը զուգակցում էին պրագմատիզմին, ժամանակակից հասարակության պահանջների և գյուղացիներին դրանց համապատասխանելուն նախապատրաստելու անհրաժեշտության ըմբռնողությամբ:

### Մշակույթի, լուսավորության ու տնտեսության նվաճումները

Այս նոր ուղղության ավետաբերը դարձավ «Լուսավորություն» ընկերությունը, որը 1868 թ.-ին հիմնել էին ժողովրդականները: Նվիրվելով գյուղացիության մշակութային և կրթական մակարդակի բարձրացմանը, առաջին հերթին՝ նրա գրագիտությանը, լվովյան այս ընկերությունը, հենվելով գյուղական ուսուցիչների և ծխական քահանաների օգնության վրա, Արևելյան Գալիչինայով մեկ աստիճանաբար ստեղծեց գրադարանների և ընթերցասրահների մի ամբողջ ցանց: Գյուղացիներին այդ կերպ հրապուրում էին կարդալու թերթերը (հաճախ մի գրագետ գյուղացի բարձրաձայն կարդում էր իր անգրագետ համագյուղացիների մի



ամբողջ խմբի համար) և մասնակից էին դարձնում քաղաքական և սոցիալական հարցերի քննարկումներին: Ընթերցարահների ժողովրդականությունն աճեց շնորհիվ այն բանի, որ ժամանակի ընթացքում *Նրանց կից սկսեցին գործել երգչախմբեր, թատերական խմբակներ, մարմնամարզական ընկերություններ ու կոոպերատիվներ*: Դարավերջին գյուղի ժամանցի ու հասարակական կյանքի այդ նոր կենտրոններն արդեն մրցում էին նույնիսկ եկեղեցու և պանդոկների հետ: Արդյունքում դրանք զգալիորեն օժանդակեցին գյուղացիության քաղաքական և ազգային գիտակցության վերելքին:

Շնորհիվ այնպիսի անձնավոր առաջնորդների գործունեության, ինչպիսիք էին *Անատոլ Վախնյանինը* և *Օլեքսանդր Օհոնովսկին*, «Լուսավորությունը» 1914 թ.-ին ուներ 77 տեղական բաժանմունք, մոտ 3 հազ. ընթերցարահ և գրադարան, ավելի քան 36 հազ. անդամ լվովյան բաժանմունքի կազմում և գյուղական ընթերցարահների մոտ 200 հազ. ընթերցող: Քիչ բան չէր արվում նաև գյուղական երիտասարդությանը կազմակերպելու համար: Որպես օրինակ վերցնելով իրեն գերազանց դրսևորած չեխերի կազմակերպվածությունը, *1894 թ.-ին ուկրաինացիները կազմակերպեցին «Բագե»* և *«Սիչ» մարմնամարզական ու հրշեջ ընկերությունները*: Առանձնակի ակտիվություն հանդես բերեցին արմատականները, ամենից առաջ՝ *Կիրիլո Տրիլյովսկին*:

Այդ երիտասարդական խմբերը պատանիներին տալիս էին ոչ միայն շքերթներին իրենց ցուցադրելու հնարավորություն, այլև՝ *Նրանց մեջ մշակում էին ունակություն կարգապահության նկատմամբ, «արմունկի զգացում» ընկերական զգացում, հարևանի զգացում, պատվաստում էին հայրենասիրություն ու ձգտում գիտելիքների նկատմամբ*: 1914 թ.-ին նրանք ունեին 974 տեղական բաժանմունք և ավելի քան 33 հազ. անդամ: Կազմակերպվածության այսպիսի վերելքը վկայում էր 1860-ականների վաղաճակի ամսագրերից ու անձն, ամորֆ ուսանողական խմբերից 1890 և 1900-ական թվականների սկզբին բնորոշ հետևողական լայնածավալ կազմակերպչական աշխատանքին անցնելու ժողովրդականների ունակությունը: Ժողովրդականների հետ մրցակցելով, ռուսասերները 1874 թ.-ին հիմնեցին *Կաչկովսկու անվան ընկերությունը*, սակայն անդամների թվով այն զգալիորեն զիջում էր իրենց մրցակիցներին:

Թեկուզև որոշ ուշացումով, բայց գալիցյան առաջնորդները հասկացան, որ գյուղացիների մշակութային պահանջումներին հետ միասին հարկ է անհանգստանալ նաև նրանց *տնտեսական կարիքների* համար: Հաշվի առնելով նրանց սոցիալական դրությունն ու մտածելակերպը, կարելի էր չկասկածել, որ նրանց համար ընդունելի չէ տնտեսական խնդիրները հաղթահարելու հեղափոխական մոտեցումը, որն այնքան տարածված էր Ռուսական կայսրությունում: Դրա փոխարեն *Նրանք գերադասում էին փոխօգնության սկզբունքը*, որն իրականացվելու էր գյուղացիների դրությունը կոոպերատիվների ստեղծման միջոցով բարելավելով: Գյուղացիական զանգվածների՝ իրենց իսկ բարօրության համար, կազմակերպման առաջին փորձը՝ 1870-ական թվականներին հոգևորականության մախաձեռությամբ գյուղերում հարբեցողության դեմ ծավալված միջոցառումը դարձավ: Ձանգվածային հավաքույթները և այնտեղ ամբողջ համայնքների կողմից տրվող երդումները նպաստեցին ակտիվի օգտագործումը քչացնելուն և դարձան եկեղեցու առավել որոշակի ու շոշափելի սոցիալական ձեռքբերումներից մեկը:

Սակայն *տնտեսական բարելավումներին ուղղված գործունեության միջուկը աշխարհիկ մտավորականությունն էր*: «Լուսավորությունն» առաջինը սկսեց կազմակերպել կոոպերատիվ խանութներ, կրպակներ, պահեստներ և վարկային միություններ: Բայց նա չէր կարող բավարար չափով առաջնակարգ օգնություն ցուցաբերել և ստեղծել ճյուղային մասնագիտացված կոոպերատիվներ: Այս գործն իր վրա վերցրեց *Վասիլ Նահիրին*՝ արևմտաուկրաինական կոոպերատիվ շարժման ռահվիրան, որը 10 տարի Շվեյցարիայում ուսումնասիրել էր կոոպերատիվների կազմակերպման հմտությունը: 1883 թ.-ին նա հիմնեց «*Ժողովրդական առևտուր*» սպառողական կոոպերատիվը, որի նպատակը մթերքի մեծածախ առքն ու վաճառքն էր, միջնորդներին դուրս մղելը և գյուղացիական խնայողությունների՝ գյուղացու համար շահեկան կուտակումը: Իր կազմակերպության միջոցով Նահիրինն ուկրաինացիներին առևտրական գործունեության մեջ ներգրավելու հույս ուներ:

Իրար ետևից երևան եկան այլ կոոպերատիվներ: 1899 թ.-ին *Եվհեն Օլեսնիցկու* գլխավորությամբ հիմնվեց «*Գյուղատեր*» կոոպերատիվը, որը գյուղացիներին ծանոթացնում էր տնտեսվարման ժամանակակից մեթոդներին: 1913 թ.-ի շեմին այն ուներ ավելի քան 32 հազ. անդամ: Էլ ավելի լայնածավալ կոոպերատիվներ էին վարկային միություններն ու ընկերու-

յունները: Նրանցից մի քանիսն ստեղծվել էին դեռ 1873 թ.-ին, սակայն ամուր ոտքի կանգնեցին միայն 1894 թ.-ին, երբ ստեղծվեց «*Հավատ*» ընկերությունը: 10 %-ով վարկեր տալով, այս ընկերությունները՝ որոնք հարյուրավոր էին, դրամական շուկայից արագ դուրս մղեցին *վաշխառուներից շատերին*: 1895 թ.-ին Լվովում հիմնվեց ևս մեկ կարևոր տնտեսական հաստատություն՝ «*Դնիստեր*» ապահովագրական միությունը: 1907 թ.-ի շեմին այն ուներ 213 հազ. հաճախորդ: Կոոպերատիվների աճը բերեց 1904 թ.-ին «*Ուկրաինական կոոպերատիվների կենտրոնական միության*» ստեղծմանը, որն ուներ մոտ 550 մասնաճյուղ, հիմնականում՝ վարկային միություններ, և 180 հազ. սեփական անդամներ: 1909 թ.-ին, «Լուսավորության» հիմնադրման 40-ամյակին, *կոոպերացիաների գործիչները համագումար հրավիրեցին*, որը հավաքեց 768 պատվիրակ, հիմնականում՝ երիտասարդ աշխարհիկ մտավորականության ներկայացուցիչներ, *ազգի հետագա զարգացման ուղիները մատնանշելու նպատակով*: Համագումարում տիրող անսովոր լավատեսության արտացոլումը եղան շատ պատվիրակների կարծիքներն այն մասին, որ ուկրաինացիները վերջապես իրենց ճակատագրի տերը կդառնան:

Կոոպերատիվ շարժման և «Լուսավորության» գործունեության շատ կարևոր մոտեցում էր՝ *գյուղացիության և մտավորականության միջև սերտ, ներդաշնակ փոխհարաբերությունների զարգացումը*, հենց այն, ինչին չկարողացավ հասնել ռուսական Ուկրաինայի մտավորականությունը: Դրան զգալիորեն նպաստեց այն, որ ստվարացող մտավորականության զգալի մասը հենց գյուղացիական ծագում ուներ: Ժողովրդականների հաջողությունները զանգվածներին համախմբելու գործում ապահովեցին նրանց վերջնական հաղթանակը ռուսասերների նկատմամբ, որոնց անդամակցությունը կոոպերատիվներում կազմում էր ուկրաինասերների թվակազմի ընդամենը հինգերորդ մասը: Վերջապես, կոոպերատիվների աճը շատ լուրջ ազդեցություն ունեցավ հրեական համայնքի վրա. *ալկոհոլի առևտրի բոյկոտելը, վարկային միությունների և սպառողական կոոպերատիվների ստեղծումը զգալի հարված հասցրեցին հրեա պանդոկատերին, վաշխառուներին և խանութայիններին*, ինչը սրեց ուկրաինացիների և հրեաների միջև լարվածությունը և նպաստեց վերջինների արտագաղթի աճին:

### Մշակութային կյանքը քաղաքներում

Գյուղացիության մեջ կազմակերպչական նվաճումներով քաջալերված՝ *մտավորականությունը ձգտում էր իր դիրքերն ամրապնդել նաև քաղաքային առավել բարդ և զանազանալիկ միջավայրում*: Նրա հիմնական մտահոգության առարկան կրթությունն էր, *հատկապես՝ միջնակարգ և համալսարանական*: Ինչպես և հարկ էր սպասել, կրթական բոլոր ոլորտներում ուկրաինացիները սակավաթիվ էին: Օրինակ՝ տարրական կրթական ոլորտում նրանք երկու անգամ քիչ դպրոցական շենքեր և ուսուցիչներ ունեին, քան լեհերը: Անհամամասնություններն ավելի շատ էին գիմնագիական և համալսարանական մակարդակների վրա, որտեղ լեհերն անում էին իրենցից կախված ամեն ինչ՝ ուկրաինական կրթված ընտրախափի աճը կանխելու համար: Այսպես օրինակ, 1897 թ.-ին նահանգի միջնակարգ դպրոցների 14 հազ. աշակերտների 80 %-ը լեհեր էին և ընդամենը 16 %-ն էին ուկրաինացի (1854 թ.-ին՝ քանի դեռ լեհերը չէին սահմանել վերահսկողություն կրթական ոլորտի վրա, այս հարաբերակցությունը համարյա նույնն էր): Գիմնագիաներից 30-ը լեհերինն էր և միայն երկուսը՝ ուկրաինացիներինը: Լվովյան համալսարանում ուկրաինացիները, որ հիմնականում կենտրոնացած էին աստվածաբանական և իրավաբանական ֆակուլտետներում, կազմում էին 1700 ուսանողների մոտ 30 %-ը: 1911 թ.-ին՝ մոտ 80 պրոֆեսորներից և դասախոսներից միայն ութն էին ուկրաինացի: Այսպիսով, որպեսզի բարձրացնեին իրենց մշակութային մակարդակը, ուկրաինացիները պետք է հասնեին նրան, որ բարձրագույն կրթությունն ավելի մատչելի դառնար:

Քանի որ գիմնագիա բացելու համար հարկավոր էր ստանալ կառավարության համաձայնությունը, լեհերն ու ուկրաինացիները դրա համար քաղաքական կատաղի պայքար էին մղում: Մինչև 1914 թ.-ը ուկրաինացիներին հաջողվեց հասնել նրան, որ *պետության կողմից ֆինանսավորվող չորս գիմնագիա բացեցին*: Այդ նույն ժամանակ լեհերը մի քանի անգամ ավելի շատ միջնակարգ և մասնագիտական դպրոցներ ստացան: Գիտակցելով, որ այդ բնագավառում կառավարության վրա հույս դնելն իմաստ չունի, ուկրաինացիներն օգնության համար դիմեցին իրենց համայնքին և *մասնավոր միջոցներով և ուր գիմնագիա հիմնեցին*: Առկողմներին՝ հատկապես գյուղից եկածներին, օգնելու նպատակով *գիմնագիաներին ու համալսարանին կից բազմաթիվ հանրակացարաններ կառուցեցին, որոնք մասնավոր միջոցներով էին պահվում*:



Ավելի մեծ վճռականությամբ լեհերը համակված էին նրանով, որ պահպանեն բարձրագույն կրթության «լեհական» բնույթը: Ճիշտ է, ժամանակ առ ժամանակ նրանք ստիպված էին լինում որոշ զիջումներ անել: Օրինակ՝ 1894 թ.-ին նրանք դժկամորեն, Վիեննայի ճնշման տակ միայն, համաձայնվեցին ուկրաինացիների համար Լվովի համալսարանում ևս մեկ պրոֆեսորական (պատմության գծով) պաշտոնի տեղ բացել, չպատկերացնելով անգամ, որ այդ մեկ նշանակումը, իր հետևանքների շնորհիվ, ավելի շատին կարծեսար: Քանի որ Գալիչինայում համապատասխան որակի մասնագետ չգտնվեց, **Նոր պաշտոնի համար Կիևից հրավիրեցին Անտոնովիչի 28-ամյա աշակերտ Միխայլո Գրուշևսկուն: Նրա՝ Լվով գալուց հետո ուկրաինական գիտության նոր դարաշրջան սկսվեց:**



Իվան Ֆրանկո

Այս ականավոր ուկրաինացի պատմաբանը շուտով սկսեց հրատարակել իր մեծածավալ «Ուկրաինա-Ռուսիայի պատմությունը»՝ նպատակ դնելով ուկրաինական պետականության գաղափարի գիտական հիմնավորում տալը: Համարյա միայնակ՝ Գրուշևսկին «Շեչենկոյի անվան գիտական ընկերությունը» վերափոխեց գիտությունների իսկական ակադեմիայի: Այն արագորեն միավորեց Արևելյան և Արևմտյան Ուկրաինայի համարյա բոլոր առաջատար գիտնականներին, ինչպես նաև՝ շատ եվրոպական գիտնականների: 1913 թ.-ին մոտ, բազմաթիվ այլ աշխատանքներից բացի, հրատարակվեց նաև իր «Գրառումների» 120 հատորը, որոնք գիտական մեծ համբավ ունեին: Նրա հիմնալի գրադարանը և բազմաթիվ մասնաբաժիններն ամուր հենարան էին տաղանդավոր գիտնականների նոր սերնդի զարգացման համար:

Տպավորիչ հաջողություններ էին ձեռք բերվել գրականության մեջ. ամենից առաջ դրանք կապված էին այն ժամանակվա ուկրաինացի առաջատար գրողներից մեկի՝ **Իվան Ֆրանկոյի** հետ: Իր ստեղծագործություններում իրականության հստակ, գրեթե լուսանկարչական ընկալումը միավորելով մարդկային լավագույն հատկանիշների նկատմամբ իդեալիստական

հավատի հետ՝ **Ֆրանկոն ստեղծագործում էր աներևակայելի բազմազան ժանրերով՝ վեպեր, վիպակներ, հոգեբանական և սոցիալական ակնարկներ, երգիծանք, պոեզիա, քատերագրություն, և բազում թեմաների լայն ընդգրկումով:** Գյուղացիության ծանր կյանքի սովորական պատմություններից բացի, իր «*Boa Constrictor*» և «*Բորիսլավը ծիծաղում է*» վիպակներում վերակենդանացնում է նավթարդյունահանության բանվորների կյանքի անհաջողություններն ու դժբախտությունները: Նրա ստեղծագործություններում կարելի է գտնել բանտային անտանելի կյանքի և երեխաների մասին հոգեբանական խորաթափանց, նուրբ ու ջերմությամբ լի պատկերների նկարագրությունները: Աստիճանական անկում ապրող ազնվականության և ծաղկող ու բարգավաճող մտավորականության մասին ակնարկներում նկատվում է հասարակագիտական խոր գիտելիքները: **Ֆրանկոն նաև փայլուն գիտնական էր, համարձակ բանավիճող, հայտնի քաղաքական գործիչ,** որին հաճախ չէր հասկանում և չէր ընդունում իր իսկ հասարակությունը:

Արևմտաուկրաինական մյուս գրողներից առանձնանում էին նաև **Վասիլ Ստեֆանիկն** ու **Օլեհ Կորիլյանսկան:** Առաջինը հայտնի դարձավ գյուղի կյանքում տեղի ունեցող մարդկային ողբերգությունների մասին կարծ, սակայն խիստ բովանդակալից ակնարկներով: Կորիլյանսկայի ստեղծագործություններում արտացոլվում էր հավերժական ձգտումը «դեպի գեղեցիկը» և «ոգու վեհությունն ու նրբությունը»: Արվեստի բնագավառում համընդհանուր ճանաչում էին գտել հայտնի նկարիչներ՝ **Օլեքսանդր Նովակիվսկու** և **Իվան Տրուշի,** ինչպես նաև նրանց աշակերտների աշխատանքները: Նրանք բոլորն օգտվում էին նոր միտրոպոլիտ **Անդրիյ Շեպտիցկու** աջակցությունից և նրա դրամական օժանդակության շնորհիվ հաճախ գնում էին արտասահման՝ կատարելագործելու իրենց վարպետությունը: Աշխարհառջակ երգչուհի **Սոլոմիա Կրուշչևիցկան** հանդիսատեսին ցնցում էր իր վարպետությամբ, իսկ Պուլչինիի «Տիկին Բատտերֆլայի» նրա հանձարեղ կատարումը քիչ չնպաստեց այդ օպերայի հաջողությանը:

Գալիցյան ուկրաինացիների մշակույթի վերելքի ևս մեկ վկայություն է արագ բարգավաճող մամուլը: **Օլեքսանդր Բարվինսկու** հմուտ ղեկավարման շնորհիվ, 1880 թ.-ին ժողովրդականների հիմնած «Գործ» թերթը վերջ դրեց ռուսասիրական մամուլի գերիշխանությանը և ամենաազդեցիկ ու ամենակարգավոր ուկրաինական թերթը դարձավ: Ետ մնալ չցանկանալով, արմատականներն ու ժողովրդականների գաղափարական մյուս մրցակիցները նույնպես ստեղծեցին իրենց հրատարակչությունները և տարբեր լուսավորչական կազմակերպություններ, մասնագիտական միություններ, կրոնական ու երիտասարդական խմբեր: 1913 թ.-ին արևմտյան ուկրաինացիներն ունեին արդեն 80 հրատարակչություն, որոնցից 66-ը Գալիչինայում էր, իսկ մնացածը՝ Բուկովինայում և Անդրկարպատներում:

### Քաղաքական կուսակցություններ

Գաղափարախոսության զարգացման, կազմակերպչական ենթակառուցվածքի աճի և խորհրդարանական համակարգում գնալով անհետաձգելի դարձող միասնական մասնակցության անհրաժեշտության հետ՝ հող ստեղծվեց քաղաքական կուսակցությունների առաջացման համար, որոնք պետք է գային փոխարինելու ժողովրդականների և ռուսասիրների թույլ խմբավորումներին: Ի տարբերություն ռուսական Ուկրաինայի արմատականորեն տրամադրված ոչ մեծ ընդհատակյա կուսակցությունների, Գալիչինայի կուսակցությունները զարգանում էին բացեիբաց և օրինականորեն: Ձգտելով ընտրողների հնարավորինս շատ ծայր ապահովել, նրանք ընդհանուր առմամբ հավատարիմ էին մնում չափավոր վարվեցողության կանոններին: Արևելյան և արևմտյան կուսակցությունների ևս մեկ տարբերությունը ազգային հարցի վերաբերյալ մոտեցումների մեջ էր: Եթե առաջիններն ազգային հարցը սոցիալտնտեսական խնդիրների հետ կապելու փնտրտուքի պատճառով, բառացիորեն՝ հոգեվարքի մեջ էին գտնվում, երկրորդները՝ նույնիսկ նրանցից ամենամոլի սոցիալիստները, **պարզ հասկացնել էին տալիս, որ համայն ուկրաինական ազգի անդամներ են, լեհերի հետ սավա-սարություն էին պահանջում և իրենց գերագույն նպատակը պետական անկախությունն էին հռչակում:** Անկախության պահանջը ինչ-որ անսպասելի բան չէր. Հաբսբուրգների կայսրության մյուս ժողովուրդներն արդեն վաղուց էին նման ձգտումների մասին հայտարարել: Հաշվի առնելով իրենց շահերը պաշտպանելու ուկրաինացիների մարտական տրամադրվածության աճը, այդպիսի պահանջների առաջաշունչ ընդամենը ժամանակի հարց էր: Եվ ահա, **1896 թ.-ին երիտասարդ արմատական Յուլիան Բաչինսկին առաջին անգամ՝ իր «Ukraina Irredenta» («Չմիավորված Ուկրաինա») գրքում, հանդես եկավ միացյալ անկախ պետու-**



**թյունում ուկրաինացիների միավորման բացահայտ կոչով**, ինչը ազգայնապես գիտակից ուկրաինացիների վրա ցնցող ազդեցություն ունեցավ:

Ինչպես արդեն նշվել է, առաջինն օրինակաճորեն քաղաքական կազմակերպության մեջ միավորվեցին արմատականները, ինչը նրանց հիմք էր տալիս համարվելու ուկրաինական առաջին քաղաքական կուսակցությունը: Հետևելով Դրահոմանովի գաղափարներին, Ֆրանկոյի և Պավլիկի գլխավորությամբ նրանք տարածում էին «գիտական սոցիալիզմի» գաղափարները, հույն-կաթոլիկ հոգևորականության սոցիալական պահպանողականության պատճառով՝ նրա նկատմամբ բնադատական դիրք էին գրավել և հանդես էին գալիս լեհ բանվորների և գյուղացիների հետ համագործակցության օգտին: 1895 թ.-ին նրանք «ազգայնացրին» իրենց ծրագիրը՝ հայտարարելով, որ հեռու ապագայում սոցիալիզմը լավագույն ձևով կարելի է իրականացնել անկախ պետությունում, իսկ մոտ ապագայում՝ Ավստրո-Հունգարական կայսրության լիովին ինքնավար նահանգում: Սակայն, արմատականներին գյուղին մոտ չթողնող հոգևորականության բշնամության, ուկրաինական փոքրաթիվ պրոլետարիատի, լեհ սոցիալիստների կախվածության և անջատողականության պատճառով՝ այս գործունյա նորարարական կուսակցությունը գալիցյան հասարակության մեջ լայն աջակցություն չգտավ:

1899 թ.-ին վերածնված ժողովրդականները՝ **Եվին Լևիցկու** և **Վոլոդիմիր Օխրիմովիչի** գլխավորությամբ (նրանց միացան Հրուշակին և Ֆրանկոն՝ հեռանալով իրար դեմ բշնամացող արմատականներից), ստեղծեցին «Ազգային-դեմոկրատական կուսակցությունը»: Իրենց ծրագիրը ձևակերպելով այնպես, որ իրենց կողմը կարողանան գրավել և՛ դժգոհ արմատականներին, և՛ հուսախաբ ռուսասերներին, ազգային-դեմոկրատները նույնպես իրենց մարտավարական խնդիրը՝ ազգային անկախությունը հռչակեցին: Մոտակա նպատակը նրանք համարում էին ինքնավարությունը՝ Հաբսբուրգների հավատարիմ հպատակության պահպանումով: Մյուս բոլոր հարաբերություններում կուսակցությունը ազատամիտ գաղափարների կողմնակից էր՝ խույս տալով հակասական սոցիալական խնդիրներից: Ոչ ծայրահեղ կողմնորոշումը և այնպիսի ժողովրդական կազմակերպության աջակցությունը, ինչպիսին էր «Լուսավորություն»-ը, շուտով ազգային-դեմոկրատներին Գալիչինայի ուկրաինական ամենամեծ կուսակցությունը դարձրեցին:

Գաղափարախոսական ոլորտի երկու հակադիր բևեռներում երկու նոր կուսակցություն հայտնվեցին: 1899 թ.-ին՝ մարքսիստներ **Միկոլա Հանկևիչ** և **Սեմեն Վիտիկը** հիմնեցին ուկրաինացի աշխատավորների շահերը ներկայացնող «Սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը»: Նույն տարում հոգևորականության առանձին ներկայացուցիչներ հիմնեցին «Կաթոլիկ ռուսինական միությունը»: Սակայն այս երկու կուսակցությունն էլ զգալի հաջողությունների չհասան, քանի որ առաջինի սոցիալական բազան շատ էր նեղ, իսկ երկրորդն իր պահպանողականությամբ քիչ էր հրապուրում երիտասարդ ուկրաինասեր հոգևորականությանը, որոնք տարված էին ազգային-դեմոկրատների բացահայտ ազգայնական կոչերով:

Զգտելով ստանալ գյուղացիների աջակցությունը, բոլոր կուսակցություններն էլ **վիչեններ** էին կազմակերպում՝ *ժողովրդական հավաքույթներ*, որտեղ *քննարկվում էին ժողովրդին հուզող խնդիրները*: Դրանցում հաճախ մասնակցում էին գյուղացիների մեծ զանգվածներ: Օրինակ՝ 1905-1906 թ.թ.-ների ընտրական կամպանիայի ժամանակ, ազգային-դեմոկրատների հրավիրած վիչեին հավաքվել էին մոտ 20 հազ. մարդ, ինչը գյուղացիների աճող քաղաքական գիտակցության պերճախոս վկայությունն էր:

*Ուկրաինասերների կազմակերպվածության աճին և քաղաքականապես ուժեղանալուն զուգընթաց, ռուսասերների ազդեցությունն ի չիք էր դառնում*: Ուկրաինական մտավորականության կրտսեր սերնդի և նույնիսկ կիսագրագետ գյուղացիների համար՝ «լեզվությունը» շատ անբնական էր, ռուսների հետ նույնացումը՝ չափից դուրս հնարովի, ռուսասերների սոցիալական պահպանողականությունը՝ չափազանց հետադիմական, իսկ արտասահմանյան աջակցությունից նրանց կախվածությունը՝ շատ ստորացուցիչ: Կազմակերպչական բնագավառում ուկրաինասերների հետ ռուսասերների մրցակցության փորձերն աննշան արդյունք ունեցան. 1914 թ.-ին Կաչկովսկու անվան նրանց ընկերությունն ուներ 300 ընթերցասրահ, այն դեպքում, երբ «Լուսավորություն» ուներ 3 հազ.-ը, եթե «Ուկրաինական կոոպերատիվների կենտրոնական միության» մեջ մտնում էր ավելի քան 900 կազմակերպություն, ապա համանման ռուսասիրական միության մեջ՝ ընդամենը 106: Քաղաքական ասպարեզում գործերն այնքան էլ լավ չէին դասավորվում: 1913 թ.-ին գալիցյան սեյմում ուկրաինասերներից ընտրվեցին 30 պատգամավոր, իսկ ռուսասերներից՝ ընդամենը մեկ:

*Հուսալով կանգնեցնել իր անկման ընթացքը, 1900 թ.-ին ռուսասերների կրտսեր և ավելի*

*ազդեցիվ սերունդն ընդունեց «Նոր կուրս»՝ ուղղված Ռուսաստանի հետ լիովին նույնացվելուն*: Նրանք հիմնեցին Ռուսական ազգային կուսակցությունը, որի համար ցարական կառավարությունից ստացվող դրամական օժանդակությունն էլ ավելի աճեց, և գալիցյան ուկրաինացիներին ուղղափառության հավատքին բերելու քարոզչություն էին անում: Ուկրաինացիների մեջ երկպառակություն սերմանելու և պահպանողականությունը պահպանելուն օժանդակելու նպատակով՝ Գալիչինայի լեհական ազնվականությունը սկսեց աջակցել ռուսասերներին: Արդյունքում՝ *ռուսասերների ճամբարը փրկվեց լրիվ քայքայումից, և հիմնականում՝ հատկապես ցարիզմի և լեհ կալվածատերերի աջակցության շնորհիվ*:

### **Արևելյան Գալիչինան՝ ուկրաինության պատվար**

1907 թ.-ին հայտնի լեհ-իրեական ազատական **Վլիսլեմ Ֆելդմանը** գրում էր. «XX դարը մոխրից հառնող շատ ժողովուրդներ է տեսել, սակայն քչերը կյանքի վերակոչվեցին այնքան սրընթաց և ջերմեռանդորեն, ինչպես Ավստրիայի ուկրաինացիները... նրանց անսպասելի և բուռն վերելքը՝ իրենց ուժերի նկատմամբ հավատի և նպատակների հասնելու հաստատականությունը արդյունք էր»: Հնայած Ֆելդմանը չէր համարում, որ արևմտյան ուկրաինացիները հաղթահարել էին իրենց բոլոր դժվարությունները (նրանք մնացել էին կայսրության ամենաաղքատ ու քաղաքականապես առավել իրավագուրկ ժողովուրդներից մեկը), սակայն, նա համենայն դեպս պարզորեն ընդգծում էր այն փաստը, որ նրանք արդեն ոտքի են կանգնում և հզորանում: Ուկրաինական կազմակերպությունների ծաղկումը ցույց տվեց, որ արևմտյան ուկրաինացիները վերջապես գործերն իրենց ձեռքն են վերցրել, և որ նրանց ազգային շարժումը սոցիալական լայն բազա ունեցող բազմակողմանի բացառիկ երևույթ է: Ի վերջո, պարզ էր, որ՝ **հենց որ պետական անկախության հասնելու հնարավորություն ընձեռնվեր, արևմտյան ուկրաինացիները պատրաստ կլինեին օգտվել դրանից**:

Գալիչինայում ազգային շարժման ծաղկումը մեծ ազդեցություն ունեցավ արևմտյան և արևելյան ուկրաինացիների փոխհարաբերությունների վրա: Հատկապես արևելյան ուկրաինացիները, ամենից առաջ՝ Անտոնովիչը, Կոնիսկին, Կուլիչը և ավելի ուշ՝ Դրահոմանովն ու Հրուշակին, առաջինը հասկացան և **զնահատեցին Գալիչինայի՝ որպես «Պյեմոնտ», այսինքն՝ ազգային վերելքի հենակետ հանդիսանալու հնարավորությունները**: Դեռ 1860 թ.-ի սկզբներից նրանք համագործակցում էին գալիցյան հրատարակչությունների հետ և ֆինանսական օգնություն էին ցուցաբերում արևմտաուկրաինական մշակութային հաստատություններին: Այդ հրատարակչությունների ու կազմակերպությունների բարգավաճման հետ աճում էր նաև նրանցում արևելյան ուկրաինացիների մասնակցությունը:

XX դարի սկզբին ոչ քիչ արևելյան ուկրաինացիներ գալիցյան մամուլի բաժանորդներ ու թղթակիցներ էին, երկու տարածաշրջանների գիտնականներն ու գրականագետները հաճախ համագործակցում էին «Շևչենկոյի անվան գիտական ընկերության» շրջանակներում, ռուսական Ուկրաինայի ուսանողները հաճախակի Գալիչինա էին գալիս՝ ուկրաինագիտության ամառային դասընթացների, իսկ արևելաուկրաինական քաղաքական վտարանդիները, հատկապես 1905 թ.-ից հետո, ապաստան էին գտնում և իրենց ղեկավար կայաններն էին հիմնում Լվովում: Հետևելով արևմտաուկրաինացիների կյանքին, Ռուսական կայսրության ուկրաինական հալածված մտավորականությունը տեսնում էր, որ Գալիչինայում իրականություն է դառնում այն, ինչի մասին նա կարող էր միայն երազել: Միաժամանակ, **Գալիչինայի ուկրաինացիների վրա բարենպաստ ազդեցություն էր գործում արևելքից եկող առաջնակարգ մտավորականների հոսքը**, իսկ կարևորը՝ նրանց ոգեշնչում էր այն զգացումը, որ **իրենք ոչ թե մեկուսացած, ընդամենը 4 մլն-անոց ժողովուրդ են, այլ՝ 25 մլն-անոց ազգի անդամներ**: Այսպիսով՝ **ավստրիական սահմանադրությամբ երաշխավորված իրավունքների, ի դեմս լեհերի հետ մրցակցության՝ կազմակերպվելու անհրաժեշտության, և արևելյան ուկրաինացիների բարոյական ու մտավոր աջակցության շնորհիվ՝ փոքր, աղքատ և հետամնաց Գալիչինան դարձավ Ուկրաինայի ազգային շարժման պատվարը**:

## **Լեհ-ուկրաինական դիմակայությունը**

Ուկրաինացիների և լեհերի քաղաքական ու ազգային զարգացման արագացման հետ, նրանց՝ առանց այդ էլ բարդ փոխհարաբերություններն ավելի վատթարացան: Երկու ժողովրդի համար էլ կենսական շահ հանդիսացող (թեկուզև՝ նրանց առաջնորդների պնդմամբ)



համարյա ցանկացած հարցով նրանք ընդհարվում էին. եթե լեհերը աներկբա պաշտպանում էին Գալիչինայի անբաժանելիության տեսակետը՝ նրանում տեսնելով իրենց ապագա պետության վերածննդի բազա, ապա ուկրաինացիները՝ նահանգի արևելյան մասում սեփական պետականության հիմքերը դնելու նպատակ ունենալով, պահանջում էին նրա բաժանումը: Եթե Արևելյան Գալիչինայում լեհերը հասարակության բարձր խավերն էին, ապա ուկրաինացիները՝ ցածր խավերը: Ուկրաինացիները փոփոխություններ ու բարենորոգումներ էին պահանջում, իսկ լեհ առաջնորդներից շատերը պնդում էին ստատուս-քվոյի պահպանումը: Ի վերջո, լեհերին կարելի էր անվանել «ունևորներ», իսկ ուկրաինացիներին՝ «չբավորներ», որոնք այլևս չէին ուզում համակերպվել իրենց վիճակի հետ:

*Երկու ժողովուրդների կազմակերպվածության վերելքը տանում էր նրան, որ քաղաքականության ու բախումների մեջ ներգրավվում էին ավելի ու ավելի շատ մարդիկ:* Ի տարբերություն 1848 թ.-ի, լեհերն այլևս չէին նույնացվում ազնվականության ոչ մեծ խմբի հետ, իսկ ուկրաինացիներն էլ՝ մի բուն քահանաների ու մտավորականների հետ: XX դարասկզբին, երբ երկու կողմն էլ ակտիվացրել էին իրենց հասարակություններին, *լեհ-ուկրաինական տարածայնություններն անցան երկու ազգային ընտրախավերի միջև դիմակայության սահմանները և վերածվեցին երկու ժողովուրդների միջև սպառնալից ծավալների հասնող հակամարտության:*

Իհարկե, նաև փոխգիշտան հասնելու փորձեր էին ձեռնարկվում: Ուկրաինացի և լեհ սոցիալիստները, ինչպես օրինակ՝ Իվան Ֆրանկոն և Ֆելիքս Դաշինսկին, երկու կողմի ազգայնամուլությունն էլ պախարակում էին և երկու ազգերի բանվորներին ու գյուղացիներին հանուն ընդհանուր շահերի համագործակցության կոչ էին անում: Արևելյան ուկրաինացիները, ինչպես օրինակ՝ Անտոնովիչն ու Կուլիշը, երկյուղելով, որ հակամարտությունը կարող է գրկել նրանց Գալիչինայի իրենց ապաստանից, փորձում էին հակառակորդ կողմերի միջև միջնորդների դեր ստանձնել: Ժամանակ առ ժամանակ Վիեննան փորձում էր կարգավորել տարածայնությունները՝ հուսալով իր արևելյան ծայրամասերում թուլացնելու լարվածությունը: Փոխգիշտան հասնելու փորձերից անենամեծ ճանաչումն ստացավ 1890թ.-ին սկսված այսպես կոչված՝ «քաղաքական խաղաղության նոր դարաշրջանը»: Մի կողմից՝ Յուլիան Ռոմանչուկի և Օլեքսանդր Բարվիկսկու գլխավորած ժողովրդականների, և մյուս կողմից՝ գալիցյան կառավարությանը ներկայացնող գեներալ-նահանգապետ Կազիմիր Բադենիի միջև կայացրած համաձայնության արդյունքում ուկրաինացիներին որոշ զիջումներ արվեցին (հիմնականում՝ մշակույթի և կրթության ոլորտներում)՝ նրանց կողմից քաղաքական ստատուս-քվոն ճանաչելու դիմաց: Սակայն երբ պարզվեց, որ այդ զիջումները սահմանափակվում էին մի քանի նոր գիմնագիտների բացումով, իսկ նահանգային կառավարությունը շարունակում էր ընտրություններում իր աճապարտությունները, համաձայնությունը չեղյալ հայտարարվեց և երկու կողմերը վերսկսեցին քաղաքական պատերազմը: Փոխհամաձայնության գալու հետագա փորձերը (օրինակ՝ 1908 թ.-ին) նույն վախճանն էին ունենում:

Առաջին համաշխարհային պատերազմին նախորդող տասնամյակներում *լեհ-ուկրաինական հակամարտությունը ծավալվում էր երեք հիմնական խնդիրների շուրջ՝ գյուղացիական հարցի, համալսարանական ուսուցման և ընտրական բարեփոխումների պահանջների:* Գյուղացիական հարցը, որ սրվում էր գյուղատնտեսական աշխատավորների բացառիկ ցածր աշխատավարձերի պատճառով, առավել հրատապ էր ու արդիական: Դարասկզբին շատ գյուղացիներ իրենց դժբախտություններից ազատվելու միակ ելքն արդեն արտագաղթի մեջ չէին ուզում տեսնել: 1902 թ.-ին, բերքահավաքի եռուն շրջանում, արմատականների և, քիչ ուշացումով՝ ազգային-դեմոկրատների կոչով, ռուսասերներից քննադատվող գյուղացիները զանգվածային բոյկոտ ծավալեցին, որն Արևելյան Գալիչինայի խոշոր կալվածքների ավելի քան 100 հազ. գյուղատնտեսական աշխատավորների էր ներգրավել: Մեծաթիվ տեղական կոմիտեներն օգնում էին ուղղորդելու գործադուլավորների գործողությունները և պահպանելու նրանց շրջապատում կարգապահությունն ու հանգստությունը:

Գյուղացիական համերաշխության այս անսպասելի ցույցից ցնցված կալվածատերերը շտապեցին դիմել կառավարությանը՝ «կարգուկանոնը վերականգնելու» կոչով: Սակայն, չնայած հարյուրավոր ձեռքակալություններին՝ գործադուլն ավելի կատաղի բնույթ ստացավ: Այդ ժամանակ կալվածատերերը դարձան դեպի լեհական հասարակության այն կարծիքը, ըստ որի՝ գործադուլն իրականում լեհերին իրենց ժառանգական հողերից դուրս մղելու ուկրաինացիների փորձն է: Այսպիսով, խնդիրը, որ կարող էր միավորել ուկրաինացի և լեհ գյուղացիներին, բավականին հաջող կերպով օգտագործվեց նրանց միջև ազգային

թշնամությունը խորացնելու համար: Վերջիվերջո գործադուլն ավարտվեց գյուղացիների հարթանակով: Կալվածատերերը ստիպված էին բարձրացնել աշխատավարձերը և այլ զիջումների գնալ: Ավելի լայն իմաստով՝ գործադուլի նշանակությունը կայանում էր նրանում, որ այն նպաստեց գյուղացիության ակտիվացմանը և քաղաքական պայքարի մեջ նրանց ներգրավմանը:

Չնայած ոչ այդքան ծավալուն, բայց ավելի սաստիկ էին Լվովյան համալսարանի բախումները: 1848 թ.-ից հետո Վիեննան պատրաստվում էր համալսարանը դարձնել երկլեզու, սակայն երբ իրադրության տեր դարձան լեհերը, նրանք արագորեն սկսեցին այն լեհացնել: Աստիճանաբար նեղանում էր ուկրաիներենի գործածության շրջանակը, նույնիսկ պրոֆեսորներն էին պակասում, իսկ համալսարանի «լեհական բնույթի» մասին մատնանշումն ավելի հասնալ էր կրկնվում: 1890-ական թվականների ընթացքում, ձգտելով վերջ դնել այդ միտումնալիությունը, ուկրաինացի ուսանողները բողոքի մի շարք միջոցառումներ կազմակերպեցին: Երբ նրանց գործողություններն անտեսվեցին, ուսանողներն առաջ քաշեցին առանձին ուկրաինական համալսարան հիմնելու պահանջները: Այդ գաղափարը համակեց ուկրաինական հասարակությանը, այդ թվում՝ գյուղացիությանը, և ի նպաստ ուսանողական պահանջների՝ հրապարակային բազմամարդ ցույցեր անցկացվեցին: Միաժամանակ, գալիցյան սեյմում և Վիեննայի խորհրդարանում ուկրաինացի պատգամավորները մշտապես և բուռն կերպով պահանջում էին կառավարական լուծում տալ այդ խնդրին:

Այնուամենայնիվ, լեհերը չէին հրաժարվում իրենց քաղաքականությունից, և XX դարի առաջին տասնամյակում իրավիճակը Լվովյան համալսարանում դարձավ ուղղակի սարսափելի: Մահակներով զինված ուկրաինացի և լեհ ուսանողական խմբերը կատաղի ծեծկռուք էին սարքում հենց համալսարանի լսարաններում. 1901 թ.-ին ուկրաինացի ուսանողները զանգվածաբար լքում էին համալսարանը, 1907 թ.-ին նրանք ցույցեր անցկացրեցին համալսարանական իշխանությունների դեմ, իսկ 1910 թ.-ին կատաղի ընդհարման ժամանակ սպանվեց ուկրաինացի ուսանող Ադամ Կոցկոն: Այդ ժամանակ արդեն Վիեննան հասկացավ, որ հարկավոր է գործել, և 1912 թ.-ին խոստացավ հաջորդ հինգ տարիների ընթացքում առանձին ուկրաինական համալսարան հիմնել: Սակայն պատերազմն ուկրաինացիներին հնարավորություն չտվեց օգտվելու այդ բազմամյա պայքարի արգասիքներից:

*Ուկրաինացի առաջնորդների կարծիքով, ավելի մեծ նշանակություն ուներ ընտրական համակարգի խնդիրը:* Եթե ուկրաինացիներին հաջողվեր ավելի մեծ ներկայացուցչություն ունենալ գալիցյան սեյմում և Վիեննայի խորհրդարանում, ապա նրանք որոշակիորեն ավելի լայն հնարավորություններ կստանային՝ իրենց ճակատագիրը բարելավելու համար: Կուրիաների համակարգը զգալիորեն սահմանափակում էր ընտրությունների վրա ուկրաինացի ընտրողների ազեցությունը, իսկ լեհերի կողմից վերահսկվող նահանգային սեյմը հռչակված էր ընտրությունների արդյունքների իր կոպիտ աճապարտությամբ: Այդ նենգություններն իրականացվում էին անձնատարեր ձևերով. *կեղծվում էին ընտրողների ցուցակները, անսպասելիորեն փոխում էին քվեարկությունն անցկացնելու տեղն ու ժամը, գողանում էին քվեաթիթիկներով արկղերը (հինգ դժվար չէր, քանի որ ձայները հաշվողների մեջ ուկրաինացիներ չկային), հաճախ անձնաանճան, չնչին առիթներով ուկրաինացի թեկնածուներին բանտ էին գցում՝ ընտրություններին մասնակցելու հնարավորություն չտալու համար:* Ընտրական ընթացակարգում տեղի ունեցող չարաշահումներն իրենց զագաթնակետին հասան 1895 և 1897 թ.թ.-ների «արյունալի ընտրությունների» ժամանակ՝ «երկաթե նահանգապետ» անունը կրող Բադենիի կառավարման ժամանակաշրջանում: *Երբ գյուղացիներն սկսեցին բողոքել քվեաթիթիկների չցունձան և այլ նենգափոխումների դեմ, Բադենին նրանց դեմ հանեց ոստիկանությունը, ինչը ողբերգական արդյունք ունեցավ. 10 մարդ սպանվեց, 30-ը ծանր վնասվածքներ ստացան և ավելի քան 800 մարդ ձերբակալվեց:*

Բայց և այնպես, այս ոլորտում նույնպես բարելավումներ եղան: Սկզբում Վիեննան, իսկ այնուհետև՝ 1907 թ.-ին, լեհ առաջնորդներից մի մասի համառ դիմադրությունից հետո, նաև՝ Գալիչինան հրաժարվեցին կուրիաների համակարգից և մտցվեց համընդհանուր քվեարկությունը: Չնայած նահանգի կառավարությունը շարունակում էր կեղծել ընտրությունների արդյունքները, այդ ժամանակից ուկրաինացիների ներկայացուցչությունը և՛ գալիցյան սեյմում, և՛ Վիեննայի խորհրդարանում անշեղորեն աճում էր: 1879 թ.-ին Վիեննայի խորհրդարանում կար 3 ուկրաինացի պատգամավոր, իսկ 1907 թ.-ի ընտրություններից հետո՝ 27, գալիցյան սեյմում 1901 թ.-ին կար 13, իսկ 1913 թ.-ին՝ 32 ուկրաինացի: Այնուամենայնիվ, ուկրաինացիների ներկայացուցչությունը դեռևս զգալիորեն քիչ էր, և որոշ չափով՝ գալիցյան նահանգա-



պետերի ընտրական նենգությունների պատճառով:

Ի նշան այդ չարաշահուների դեմ բողոքի, **1908 թ.-ի ապրիլի 12-ին, ուկրաինացի ուսանող Միրոսլավ Միչինսկին սպանեց նահանգապետ Անջել Պոտոցկուն:** Այս միջադեպը վկայում էր, թե ինչ վտանգավոր կետի էին հասել լեհ-ուկրաինական հարաբերությունները: Սակայն, կային նաև լարվածության ուժեղացման ավելի խորը պատճառներ: Լեհերի շրջապատում իր ազդեցությունը էր ընդլայնում Ռոման Դոմվսկու գլխավորած գերազայնական Լեհական ազգային-դեմոկրատական կուսակցությունը: Ուկրաինացի ազգային-դեմոկրատների նման, լեհերն էլ կազմակերպությունների ցանցը ծավալեցին գյուղացիության շրջանում և մեծ ժողովրդականություն ձեռք բերեցին քաղաքային միջին խավերի, մտավորականության և ուսանողների շրջանում: Նրանց հիմնական հոգսը՝ լեհերի հետ Արևելյան Գալիչիայի ուկրաինացիների մրցակցության աճն էր: Այդ վտանգի կանխագագացումը արձագանքվել է լեհ հայտնի պատմաբան և սոցիոլոգ Ֆրանցիշեկ Բուլսկի խոսքերում. **«Մեր ապագան Արևելյան Գալիչիայում չի կարելի լուսավոր անվանել: Անգլիացիների ճակատագիրն Իռլանդիայում և գերմանացիներինը՝ Չեխիայում մեզ համար վատ նախանշաններ են»:** Այդ պատճառով էլ Գալիչիայի լեհ ազգայնականների հիմնական նպատակը՝ նահանգի արևելյան մասում լեհական «պետությունը՝ պետության մեջ» պահպանելը դարձավ: Դա նշանակում էր, որ այժմ ուկրաինացիներին դիմակայում է ոչ թե արևելագալիցյան կալվածատերերի՝ «պողոպանների» մի խումբ, այլ համառորեն ոչ մի զիջման չգնացող լեհական լայնածավալ շարժումը:

Սեփական ազգային-դեմոկրատների կողմից ղեկավարվող ուկրաինացիների պատասխան գործողությունները նվազ մարտական չէին: Նրանք եռանդուն շարունակում էին իրենց կազմակերպչական գործունեությունը, խորհրդարանում և սեյմում յուրաքանչյուր հարմար առիթի դեպքում ելույթ էին ունենում լեհերի դեմ և հաճախ լայնածավալ միջոցառումներ էին անցկացնում՝ իրենց հզորացող ուժը ցույց տալու համար: 1914 թ.-ի հունիսի 28-ին Լվովում՝ զանգվածային հավաքույթի ժամանակ, երբ, բարյացակամորեն տրամադրված մեծ լսարանի և պաշտոնյաներով լեցուն ամբիոնի առաջ իրենց մարզվածությունն էին ցուցադրում «Սիչ» և «Բազե» մարմնամարզական ընկերությունների հազարավոր անդամներ, աճապարանքով ամբիոն բարձրացավ ցրիչը և **հայտնեց Սարաևոյում՝ Գաբրիելովի թագաժառանգ Ֆրանց Ֆերդինանդի սպանության լուրը: Եվրոպան թշնամացող ազգայնականների սանձազերծած սարսափելի պատերազմի նախաշեմին էր:**

## Բուկովինան և Անդրկարպատները

Եթե արևմտյան ուկրաինացիների 80 %-ն ապրում էր Գալիչիայում, ապա մնացած 20 %-ն ապրում էր երկու ոչ մեծ տարածաշրջաններում՝ Բուկովինայում և Անդրկարպատներում: Որոշ առումներով, այստեղի ուկրաինացիների կյանքը չէր տարբերվում Գալիչիայի իրենց եղբայրների կյանքից: Բուկովինայի և Անդրկարպատների ուկրաինացիների գերակշռող մասը գյուղացիներ էին, հողատեր ունեւոր ընտրախավը կազմված էր ոչ-ուկրաինացիներից՝ ռումինացիներից (Բուկովինայում) և հունգարներից (Անդրկարպատներում): Շատ քիչ ուկրաինացիներ ապրում էին ոչ մեծ «քնած» քաղաքներում, որտեղ գերակշռում էին գերմանացիներն ու հրեաները, արդյունաբերություն փաստորեն չկար: Ինչպես Գալիչիան, Բուկովինան և Անդրկարպատները նույնպես Ավստրիայի ներքին գաղութներն էին, սակայն շատ առումներով իրադրությունն այստեղ նկատելիորեն տարբերվում էր նրանից, ինչը գերակշռում էր Գալիչիայում:

Բուկովինայում, որը 1861 թ.-ին բաժանեցին Գալիչիայից և առանձին նահանգ դարձրին, մոտ 300 հազ. ուկրաինացի էր ապրում (ընդհանուր բնակչության 40 %-ը), որոնք հիմնականում կենտրոնացված էին հյուսիսային բլրաշատ շրջաններում: Բնակչության մնացած մասը կազմում էին ռումինացիները (34 %), հրեաները (13 %), գերմանացիները (8 %) և այլ փոքրամասնություններ: **Բուկովինյան գյուղացիները՝ մյուս արևմտաուկրաինացիների համեմատությամբ, բոլորից լավ էին ապահովված հողերով՝** ամենից առաջ այն պատճառով, որ Վիեննայում ռումինական խոշոր հողատերերն այնպիսի ազդեցություն չունեին, ինչպես լեհերը կամ հունգարները: **Քանի որ Վիեննայի քաղաքականությունը հանգում էր ուկրաինացիներին որպես ռումինացիների հակակշիռ օգտագործելուն, ապա առաջինները նույնիսկ օգտվում էին քաղաքական որոշ արտոնություններից:** XIX դարի վերջին այն իր արտացոլումը գտավ լավ կազմակերպված դպրոցական համակարգի, Չեռնովցիի համալսարանում կրթություն

ստանալու կարելիության և համեմատաբար բարենպաստ քաղաքական հնարավորությունների մեջ: Սակայն ուկրաինացիների ազգային և քաղաքական զարգացման ճանապարհին կային նաև խոչընդոտներ: Բուկովինացիները, ինչպես և ռումինացիները, ուղղափառ էին, իսկ եկեղեցական նվիրապետությունը հիմնականում վերահսկում էին ռումինացիները: Այդ պատճառով, ի տարբերություն Գալիչիայի, Բուկովինայում եկեղեցին ուկրաինացիների ազգային ինքնագիտակցության զարգացման գործում մեծ դեր չէր խաղում և **ազգաշինության գործընթացն այս տարածաշրջանում զգալիորեն ուշանում էր:**

Իսկ երբ 1870-80-ական թվականներին այդ գործընթացն իսկապես սկսվեց, **նրա վրա մեծ ազդեցություն գործեցին Գալիչիայի մոտիկությունն ու գալիցյան մտավորականության ներհուսքը:** 1869 թ.-ին Չեռնովցիում հիմնվեց մշակութային-լուսավորական «Ռուսիական գրույց» ընկերությունը: Մեկ տարի անց առաջացավ «Ռուսիական Ռադան»՝ քաղաքական խումբ, որի նպատակն ընտրություններում ուկրաինացիների ներկայացուցչությունն էր: Սկզբում այստեղ իշխում էին ռուսասերները, չնայած նրանք երբեք Բուկովինայում մեծ ուժ չեն հանդիսացել: 1880-ական թվականների մոտ Բուկովինայի ուկրաինացիներին գլխավորել սկսեցին ուկրաինասերները՝ Գալիչիայի բնակիչ **Ստեպան Սմալ-Ստոցկին** (Չեռնովցիի համալսարանի ուկրաիններեն լեզվի և գրականության պրոֆեսոր) և **Միկոլա Վասիլկոն** (հարուստ տեղացի կալվածատեր): Շուտով այստեղ հայտնվեցին գալիցյան ազգային-դեմոկրատների, արմատականների և սոցիալ-դեմոկրատների բաժանմունքները: «Ռուսիական գրույց» ընկերությունը, որ գործում էր հար և նման «Լուսավորությանը», 1914 թ.-ի շեմին արդեն ավելի քան 13 հազ. անդամ ուներ: Միաժամանակ, 1911 թ.-ին մյուս ազգությունների հետ ծեռք էր բերվել համաձայնություն, ըստ որի՝ նահանգային սեյմի 63 տեղերից 17-ը երաշխավորվում էր ուկրաինացիներին: Վիեննայի խորհրդարանում Բուկովինայի ուկրաինացիները միշտ պահպանում էին ավանդական դարձած 5 պատվավոր տեղը: Այսպիսով, **Բուկովինայում Վիեննայի առավել հավասարակշռված քաղաքականության շնորհիվ քաղաքական փոխզիջումն այստեղ ավելի արդյունավետ էր, իսկ ազգային լարվածությունը՝ ոչ այնքան սուր, ինչպես Գալիչիայում:**

Անդրկարպատներում, ի տարբերություն Բուկովինայի, **փոխզիջման մասին խոսք անգամ լինել չէր կարող:** Գունգարները լիակատար տեր-տնօրեն էին այս տարածաշրջանում՝ հատկապես 1867 թ.-ից հետո. հունգար ազնվականությունն անխնա կերպով շահագործում էր գյուղացիներին, իսկ հունգար ազգայնականներն ամեն կերպ ճնշում էին տեղական հայրենասիրությունը: Այդ պատճառով էլ, բոլոր առումներով, Անդրկարպատների համարյա 400 հազ. ուկրաինացի, որ կազմում էին երկրամասի բնակչության մոտ 70 %-ը, մյուս արևմտաուկրաինացիների համեմատությամբ, գտնվում էին ամենաանբարենպաստ պայմաններում:

Անդրկարպատների ազգային զարգացումը նույնպես լուրջ անհաջողություններ ունեցավ: 1848 թ.-ից անմիջապես հետո, **Ադոլֆ Պրոբյանսկու և Օլեքսանդր Դուխոնովիչի** գլխավորությամբ նրանք մի շարք ազդեցիկ վարչական պաշտոններ ստացան և հասան նրան, որ մայրենի լեզվով ուսուցվող մի քանի դպրոց հիմնվեց: Սակայն ռուսասիրության ակնքը, որ պայմանավորված էր կեղեքիչ-հունգարներին սանձելու համար՝ ռուսական զորամիավորումների գալով, մեկուսացրեց սակավաթիվ մտավորականությանը և հույն-կաթոլիկ հոգևորականությանը՝ նրանց և գյուղացիության միջև մշակութային անջրպետ առաջացնելով: 1867 թ.-ից հետո, երբ թափ առավ հունգարացման (մաջարացման) գործընթացը, ժողովրդի մեջ հենարան չունեցող կրթված մարդկանց մեծ մասը տեղի տվեց ճնշմանը և ծուլվեց հունգարներին, դառնալով այսպես կոչված «մաջարոններ»: Գույն-կաթոլիկ եկեղեցին, որն իր եպիսկոպոսություններն ուներ Պոլյաշևում և Մուկաչովում, ոչ միայն չկարողացավ կանխել այդ գործընթացը, այլև՝ նպաստեց դրան: Միաժամանակ, քանի որ Անդրկարպատները Գալիչիայից բաժանված էր խիստ վերահսկվող ավստրո-հունգարական սահմանով, ուկրաինասիրական զաղափարամտությունն այստեղ այնպիսի տարածում չէր գտել, ինչպես Բուկովինայում: XIX դարի վերջին տասնամյակներին այս տարածաշրջանում մեկը մյուսի ետևից անհետանում էին սլավոնական հրատարակչությունները, տեղական բարբառով դասավանդվող 1874 թ.-ի 479 դպրոցներից 1907 թ.-ին ոչ մեկը չէր մնացել, իսկ «Սբ. Վասիլիի անվան ընկերությունը», որ հոգ էր տանում ուկրաինացիների մշակույթի զարգացմանը, մահաներծ վիճակում էր: Եվ միայն մի խումբ երիտասարդ ժողովրդականներ, ինչպիսիք էին **Յուրի ժաուկովիչն ու Ավգուստին Վոլոշինը**, փորձում էին դիմադրել հունգարացմանը:



Երբ XX դարի սկզբներին Ռուսական կայսրության ուկրաինացիներն ընկնում էին Գալիչինա, նրանց մշտապես զարմացնում էր այն առաջընթացը, որին հասել էին իրենց արևմտյան եղբայրները: Կհևում դեռևս արգելվում էր ուկրաիններեն լեզվով գրքերի հրատարակումը, իսկ Լվովում գործում էին ուկրաինական գիտական ընկերություններ, դպրոցներ, մասսայական կազմակերպություններ և կոոպերատիվներ, թերթեր, քաղաքական կուսակցություններ և խորհրդարանական ներկայացուցչություններ: Ռուսական Ուկրաինայում, առաջվա պես ոչ մեծ քաղաքային «հրոմադաներում» կենտրոնացված ուկրաինական մտավորականությունը փորձում էր կյանքի կոչել իր մշուշապատ, միայն իրազեկ մասի համար հասկանալի նախագծերը, իսկ Գալիչինայի և Բուկովինայի ուկրաինական մտավորականությունը (մեծամասնությունը բուլղոսկին վերջերս էր հանել գյուղացիական հագուստը) անմիջականորեն աշխատում էր գյուղացիության հետ «Լուսավորությունում», կոոպերատիվներում և քաղաքական կազմակերպություններում: Հավանաբար արևմտաուկրաինացիների գործունեության առավել ոգեշնչող արգասիքն այն էր, որ նա ցույց տվեց, որ ազգային զարգացման գործում ուկրաինացիների ձգտումներն ու հույսերը իդեալիստ-մտավորականության սոսկ երազանքներ չէին, այլ այն, ինչ կարելի էր կյանքի կոչել:

Գալիչինայի և Բուկովինայի ուկրաինացիների ձեռքբերումների մասին պատկերացումները սակայն չպետք է չափազանցնել: Չնայած իրենց բոլոր ջանքերին՝ արևմտյան ուկրաինացիները դեռևս խրված էին աղքատության մեջ, գյուղացիների անգրագիտությունը տարածված երևույթ էր, իսկ նրանց մեծ մասի ազգային ինքնագիտակցության մակարդակը զրոյական էր: Միևնույն ժամանակ, կրթված սակավաթիվ ընտրախավը պառակտվում էր՝ ուկրաինական հասարակության զարգացման ուղիներ ընտրելու հարցում ուկրաինասերների և ռուսասերների միջև, ազատականների, պահպանողականների ու արմատականների միջև տեղի ունեցող սուր տարաձայնությունների պատճառով: Այնուամենայնիվ, առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին արևմտյան ուկրաինացիների մոտ ակնհայտ էր լավատեսության զգացումը:



## ՈՒԿՐԱԻՆԱՆ XX ԴԱՐՈՒՄ

Պատերազմ և հեղափոխություն

Ուկրաինական հեղափոխություն

Խորհրդային Ուկրաինա. նորարարական  
20-ականները

Խորհրդային Ուկրաինա. դրամատիկական  
30-ականները

Արևմտյան Ուկրաինան համաշխարհային երկու  
պատերազմների միջև

Ուկրաինան երկրորդ համաշխարհային  
պատերազմում

Վերականգնում

Չնհալ

Լճացում և բարեփոխումների փորձեր

Արտագաղթ

Ուկրաինական սփյուռք

Նոր դարաշրջան





## ՊԱՏԵՐԱԶՄ ԵՎ ՆԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Առաջին աշխարհամարտը եվրոպայի համար նորագույն միջոցներով զանգվածային ռազմական գործողություններ վարելու սարսափելի մի փորձ էր, իսկական մարդկային սպանողանոց: Այդ պատերազմի վիթխարի մասշտաբների մասին վկայում են վիճակագրական տվյալները. աստիճանաբար պատերազմի մեջ ներքաշված 34 երկրներ զորակոչեցին 65 մլն զինվոր, որոնցից 10 մլն-ը զոհվեց, իսկ 20 մլն-ը վիրավոր ու հաշմանդամ դարձան: Գրեթե նույնչափ կորուստ կրեց քաղաքացիական բնակչությունը: Պատերազմը սոսկ զանգվածային չէր, այն դարձավ համապարփակ՝ իր շահերին ծառայեցնելով պատերազմող կողմերի ողջ տնտեսությունը: Ուժերի աննախադեպ լարումը և՛ ռազմաճակատում, և՛ թիկունքում, կորուստների և ավերածությունների աճը ոչ միայն բացահայտեցին, այլև բազմապատկեցին եվրոպայում կայսերական կարգերի իրենց դարձն ապրած հին ու խարխուլ էությունը: Հետևյալները չհապաղեցին ի հայտ գալ: Կենտրոնական տերությունների բլուկ կազմած Գերմանիայի, Օտտոմանյան և Ավստրո-Հունգարական կայսրությունների համար, և Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի ու ԱՄՆ-ի հետ միասին Անտանտի կազմի մեջ մտնող Ռուսական կայսրության համար պատերազմը վերջիվերջո դարձավ ինքնակործանման միջոց:

Պատերազմի ծանրությանը չդիմանալով, առաջինը փլուզվեց Ռուսական կայսրությունը: Բնական է, որ կայսրության հոգեվարքի ջղաձգումներն ուղեկցվում էին ցարիզմի վաղեմի թշնամի տարաբնույթ ռուսական կուսակցությունների շեշտակի աշխուժացմամբ, որոնք օգտվելով իրավիճակից, ձգտում էին ապակողմնորոշված հասարակության վզին փաթաթել սոցիալ-տնտեսական և քաղաքական նոր կառուցվածքի սեփական տարրերակները: Սակայն առավել անսպասելի էր այն, որ կայսրության ոչ-ռուս ժողովուրդները, որոնք թվում էր, թե վաղուց հաշտվել ու հնազանդվել էին իրենց ճակատագրին, հանկարծ հայտարարեցին սեփական ապագան ինքնուրույն տնօրինելու ցանկության մասին: Այս տեսանկյունից չի կարելի ճշմարիտ համարել այն համընդհանուր կարծիքը, թե 1917 թ.-ի հեղափոխությունը դասակարգերի տիտանական բախում էր, հատկապես երբ խոսքը վերաբերում է Ուկրաինային. այստեղ բռնկվեց ուկրաինական հեղափոխություն, որ իր էությամբ և՛ ազգային էր, և՛ սոցիալ-տնտեսական:

նորմալադմ

### Ուկրաինացիներն առաջին համաշխարհային պատերազմում

Ուկրաինացիներն անմիջապես զգացին պատերազմի ողջ ծանրությունն ու ավերիչ ներգործությունը, քանի որ ստիպված էին կռվելու երկու հակառակորդ կողմերում էլ: Պատերազմի ողջ ընթացքում Գալիչիան Արևելյան ռազմաճակատում տեղի ունեցող խոշորագույն, արյունահեղ ճակատամարտերի ասպարեզ էր: Նրա բնակչությունն անասելի տառապանք ու կորուստներ կրեց ոչ միայն մարտական գործողությունների ավերածություններից, այլև ինչպես ռուսական, այնպես էլ ավստրիական ռազմական վարչակազմերի դաժանություններից:

Պատերազմը ոչ միայն ֆիզիկական տառապանք պատճառեց, այլև ավելի վատթարացրեց սեփական պետականություն չունեցող ուկրաինացիների առանց այդ էլ դժվարին վիճակը: Ուկրաինացիները զանգվածաբար (ռուսական բանակում՝ 3,5 մլն, ավստրիական բանակում՝ 250 հազ.) մարտնչում ու զոհվում էին հանուն կայսրությունների, որոնք ոչ միայն անտեսում ու արհամարհում էին նրանց ազգային շահերը, այլև ամեն կերպ, ինչպես օրինակ՝ Ռուսաստանը, ձգտում էին խեղդել նրանց ազգային շարժումները: Ամենասարսափելին այն էր, որ կռվելով հակառակորդ բանակներում, ուկրաինացիներն ստիպված էին սպանել մեկը

մյուսին: Այդ պատերազմում միայն մեկ դրական հանգամանք կարելի է գտնել. այն սպառում էր պատերազմող կայսրությունների ուժերը և այդպիսով քաղաքական նոր հնարավորություններ էր ստեղծում նրանց ճնշված ու կեղեքված հպատակների համար: Սակայն, առնվազն սկզբնական շրջանում, այդ հնարավորությունները խիստ երևութական էին:

Ավստրիայում ուկրաինացիները բավական արագ արձագանքեցին ռազմական գործողությունների սկսվելուն: Արդեն 1914 թ.-ի օգոստոսի 3-ին ուկրաինական կուսակցությունները Լվովում հիմնեցին «*Загальну Українську Раду*» («Ուկրաինական Ընդհանուր Ռադա»), որը գլխավորում էր համընդհանուր հարգանք վայելող, խորհրդարանի պատգամավոր Կոստ Լևիցկին: Այդ միջոցառման գլխավոր նպատակը ուկրաինացիներին մեկ միասնական ներկայացուցչական մարմնում միավորելն էր: Հայտարարելով, թե՛ «Ավստրո-Հունգարական միապետության հաղթանակը մահ մեր հաղթանակն է լինելու, և որքան հիմնավոր լինի Ռու-



Ուկրաինան համաշխարհային առաջին պատերազմին



սաստանի պարտությունը, այնքան շուտ կհնչի ժամն ազատության Ուկրաինայի», Ռադան կոչ էր անում ուկրաինացիներին՝ մարտնչել հանուն սահմանադրական Ավստրիայի (իրենց լավագույն բարեկամի)՝ ընդդեմ միապետական Ռուսաստանի (իրենց դիտարկումը թշնամու): Այնուհետև Ռադան համաուկրաինական զինվորական միավորումներ ստեղծելու կոչ արեց, որին արագ արձագանքեց ազգային բարձր գիտակցություն ունեցող ավելի քան 28 հազ. ուկրաինացի, որոնց մեծ մասը «Січ», «Сокира» և «Пласт» երիտասարդական կազմակերպությունների անդամներ էին: Ուկրաինական ազգային մեծ զինուժ կազմավորվելու հեռանկարից անհանգստացած, Վիեննայում լեհական ազդեցիկ ուժերն հասան այն բանին, որ այդ զինուժը սահմանափակվի 2,5 հազ. կամավորներով: Վերջիվերջո, ստեղծվեց միայն մեկ զորամաս՝ «Ուկրաինական լեգեոնը», որ հետագայում ստացավ «Միջի ուկրաինական հրաձիգներ» անվանումը: Այն դարձավ նորագույն ժամանակների առաջին ուկրաինական կանոնավոր զորամասը: Հարսբուրգների բանակ զորակոչված մնացած ուկրաինացիները հաշվառման վերցվեցին ավստրիական կանոնավոր զորամասերում:

Ցարական Ռուսաստանից վտարանդի ուկրաինացի սոցիալիստները նույնպես անմասն չմնացին քաղաքական անցումն արժին: Վոլոդիմիր Դորոշենկոյի, Անդրիյ ժուկի, Մարյան Մելենսկու, Օլեքսանդր Սկորոպիս-Յոլտուխովսկու և Միկոլա Ջալիզնյակի գլխավորությամբ Լվովում ստեղծվեց քաղաքական մի կազմակերպություն, որը կոչվեց «Ուկրաինայի ազատագրման միություն»՝ ՌՒԱՄ («Союз визволення України»): Այս կազմակերպության պատմական կարևոր և յուրօրինակ առանձնահատկությունը պետք է համարել այն, որ առաջին անգամ աներկբա և միանշանակ հայտարարվեց ուկրաինական անկախ պետություն ստեղծելու նպատակը: Եվ հանուն այդ նպատակի իրականացման, ՌՒԱՄ-ը բացառապես զենաց համագործակցության Գերմանիայի և Ավստրիայի հետ՝ ընդդեմ Ռուսաստանի:

Սակայն, դեռ չհասցրած դուրզն ինչ լուրջ գործեր ձեռնարկել, այդ կազմակերպություններն ստիպված եղան պարզապես փախչել Վիեննա. 1914 թ.-ի սեպտեմբերի սկզբներին ռուսական զորքերը ճեղքեցին ավստրիական պաշտպանությունն ու գրավեցին Արևելյան Գալիչինայի մեծ մասը: Ավստրիացիների պարտությունն ամենատխտոր հետևանքներն ունեցավ գալիցյան ուկրաինացիների համար: Եզնելով արդարացում գտնել իրենց ռազմական անհաջողությունների համար, ավստրո-հունգարական հրամանատարությունն հանկարծ արտակարգ ուշադիր գտնվեց տեղական լեհ կառավարիչների տեսակետների նկատմամբ, որոնք «չարիքի արմատ» համարում էին «ուկրաինացիների դավաճանությունը», որոնք կասկածվում էին ռուսների նկատմամբ թաքուն համակրանքի և նույնիսկ՝ նրանց հետ համագործակցելու մեջ: Հետևանքն այն եղավ, որ նահանջող ավստրիական, հատկապես՝ հունգարական զորքերը, նախանձելի փութաբանությամբ զանգվածային ահաբեկչություն սկսեցին ուկրաինացիների նկատմամբ: Սկզբում ռուսասերներին, այնուհետև՝ ընդհանրապես ուկրաինացիներին, հարյուրներով ձերբակալում և առանց դատ ու դատաստանի մահապատժի էին ենթարկում: Հազարավոր ուկրաինացիների բռնությունն Ավստրիա՝ համակենտրոնացման ճամբարներ, որոնց մեջ առավել անարգ անուն էր վաստակել Թալերհոֆը: Այդտեղ, անմարդկային պայմաններում 30 հազ.-ից ավելի ուկրաինացի հայրենասերներ ու ռուսասերներ էին իրենց դժբախտ գոյությունը քարշ տալիս՝ դատապարտված դանդաղ մահվան՝ սովի ու հիվանդությունների ճիրաններում: Միայն 1917 թ.-ին, երբ Վիեննայի խորհրդարանում խայտառակ աղմուկ բարձրացավ՝ ավստրիական հպատակների հետ նման ձևով վարվելու փաստերին տեղեկանալու պատճառով, այդ, և նմանատիպ ճամբարները լուծարվեցին:

Պակաս ողբերգական չէր նաև ռուսական օկուպացիայում հայտնված գալիցյան ուկրաինացիների ճակատագիրը: Ցարական իշխանությունն անմիջապես ու միանշանակ հասկացնել տվեց, որ ինքն Արևելյան Գալիչինան ամենևին չի համարում նոր, կամ առավել ևս ժամանակավոր ձեռքբերում: Ավելին, այդ տարածքն արդեն հիշատակվում էր որպես «հին ռուսական երկիր», որը վերջապես «մեկընդմիջտ վերամիավորվեց մայր-Ռուսաստանին»: Այնուհետև ծավալվեց Գալիչինայի «ռուսական տության» առասպելի մարմնավորման եռանդուն գործընթացը: Երկրամասի գեներալ-նահանգապետ Նշանակվեց կոմս Գեորգի Բորիսկին՝ Գալիչինայի վերամիավորման վաղեմի ջատագովի, հայտնի ռուս պահպանողականի եղբայրը: Նա անմիջապես խիստ հալածական գործունեություն ծավալեց ուկրաինական շարժման, կամ, ինչպես ցարական պաշտոնյաներն էին արտահայտվում՝ «մազեպայականության» դեմ: Նրան մեծ հաճույքով աջակցում էին ռուսասերները, որոնց առաջնորդներ Վլադիմիր Դուդիկևիչը, Սիմեոն Բանդաշուկն ու Յուլիան Յավորսկին, որ վաղուց Ռուսաստան էին փախել, հիմա վերադարձել էին ռուսական հաղթանակած բանակի հետ: Ռուսասերները

բացահայտում և մատնում էին ուկրաինացի գործիչներին (ինչպես մի քանի շաբաթ առաջ ուկրաինասերներն էին բացահայտում և ավստրիացիներին մատնում ռուսասերներին), որոնց արտրում էին Ռուսաստանի խորքերը:

Եվ այսպես՝ ռուսները հալածում էին ուկրաինասերներին, ավստրիացիները՝ ռուսասերներին, իսկ գաղափարախոսական անհաշտ վեճերով պառակտված ուկրաինացիների աննախանձելի վիճակն ավելի էր վատթարանում մշտապես երրորդ ուժի օգնությամբ դիմելու պատճառով:

Ցարական իշխանությունների կարգադրությամբ փակվեցին ուկրաինական բոլոր մշակութային հաստատությունները, կոոպերատիվները, պարբերական հրատարակությունները: Կրթության բնագավառում, ուկրաիներեն լեզուն սահմանափակելուն զուգընթաց, ռուսաց լեզուն արմատավորելու փորձեր էին արվում: Առանձնակի փութաբանությամբ հալածվում էր հունա-կաթոլիկական եկեղեցին՝ արևմտյան ուկրաինացիների ինքնության խորհրդանիշը: Հարյուրավոր հոգևորականներ տեղահանվեցին Ռուսաստան, նրանց տեղն զբաղեցրեցին ուղղափառ «հայրերը», որոնք բոլոր միջոցներով գյուղացիներին մղում էին դավաճաբանության: Ձերբակալվեց և Սուզդալ քաղաքում միտրոպոլիտ Անդրիյ Շեպտիկին, որ ժամանակին հրաժարվել էր փախչելով փրկվելուց: Պատերազմի ողջ ընթացքում նրա քաղաքացիական կեցվածքը, որ բարձր արժանապատվության ու անվեհերության օրինակ էր ժողովրդի համար, մեծապես խթանեց միտրոպոլիտի հանրաճանաչությանը:

Սակայն ռուսները չհասցրեցին անբողջությամբ իրականացնել իրենց ծրագրերը: 1915 թ.-ի մայիսին ավստրիական զորքերն անցան հակահարձակման և Արևելյան Գալիչինայի մեծ մասը կրկին անցավ Հարսբուրգների գերիշխանության տակ: Ցարական զորքերը նահանջելիս պատանդ վերցրեցին մի քանի հարյուր ուկրաինացի գործիչների, հազարավոր փախստականների տարիանեցին, այդ թվում՝ և ռուսասերներին, որոնց դերն այդ պահից սկսած ավարտվեց ուկրաինական ժողովրդի քաղաքական կյանքում:

Ռուսների պահվածքը Արևելյան Գալիչինայում, որ հայտնի ազատական Պավել Միլյուկովը բնորոշեց որպես «եվրոպական սկանդալ», ընդամենը Ռուսական կայսրությունում ուկրաինական շարժման նկատմամբ ցարական կառավարության վարած քաղաքականության տրամաբանական շարունակությունն էր: Պատերազմն սկսվելուն պես ուկրաինական բոլոր կազմակերպություններն ու մամուլը հետապնդման ու հալածանքի ենթարկվեցին: Երբ բոլորի կողմից ուկրաինական շարժման առաջնորդ ճանաչված Միխայլո Հրուշևսկին 1916 թ.-ին վերադարձավ Կիև, նրան ձերբակալեցին և քսոթեցին Ռուսաստանի հյուսիս: Ռուսաստանի արտաքին գործոց նախարար Սերգեյ Սազոնովն անթաքույց բավականությամբ ասում էր. «Հիմա ուկրաինական շարժումից մեկընդմիջտ ազատվելու ամենահարմար պահն է»: Սակայն 1915 թ.-ի ռազմական աղետալի անհաջողություններից հետո ցարական կառավարությունը որոշ չափով կորցրեց ինքնավստահությունն ու մեղմացավ: Ուկրաինական կոոպերատիվները, գրախանութները, գիտական հիմնարկներն ու որոշ թերթեր շատ զգուշորեն, կամաց-կամաց վերսկսեցին իրենց գործունեությունը Ռուսական կայսրությունում: Աշխուժացավ «Товариство українських поступовців» (Ուկրաինական անաջադիմական ընկերություն՝ ՌՒԱԸ) կիսագաղտնի կազմակերպությունը: Լինելով ուկրաինական շարժման յուրօրինակ ուղղորդող կենտրոն, կազմակերպությունը վերսկսեց Ուկրաինայի ինքնավարության և սահմանադրական կարգի գաղափարների տարփողումը:

Միևնույն ժամանակ ռազմաճակատի ավստրիական կողմում՝ Վիեննայում, արևմտաուկրաինացի քաղաքական գործիչները վերականգնեցին իրենց ներկայացուցչական մարմինը՝ «Загальну Українську Раду»: Անվերջ ձգվող պատերազմը բաժնում էր Ավստրո-Հունգարիայի հյուսիսը, կայսրությունը թուլանում էր, իսկ կայսրությունում բնակվող ժողովուրդների, այդ թվում և ուկրաինացիների պահանջները զնալով ավելի համարձակ էին դառնում: Այսպես օրինակ՝ Ռադան հռչակեց իր նպատակը՝ ուկրաինայի այն մասի անկախությունը, որը գտնվում էր Ռուսական կայսրության իշխանության տակ (ավստրիացիների նվաճելու դեպքում), և Արևելյան Գալիչինայի ու Բուկովինայի համար՝ լայն ինքնավարություն: Սակայն 1916 թ.-ին, երբ Վիեննան Գալիչինայում լեհերին բավականին մեծ իրավունքներ ու հնարավորություններ խոստացավ, Ռադան, ի նշան բողոքի, կազմալուծվեց: Հետագայում արևմտյան ուկրաինացիների շահերը ներկայացնում էր Ուկրաինական խորհրդարանական ակումբը Վիեննայում՝ Եվինեն Պետրուշևիչի գլխավորությամբ:

Ավստրիայի ու Գերմանիայի նյութական աջակցությամբ, Վիեննայում իր գործունեությունն էր շարունակում ՌՒԱՄ-ում միավորված Արևելյան Ուկրաինայի վտարանդիների խումբը:



Եվրոպական մի շարք մայրաքաղաքներում իր ներկայացուցիչներն ունենալով, ՌԿԱՄ-ը ձգտում էր տարփոփել Ուկրաինայի անկախության գաղափարը: Այստեղ նրանք մեծ հաջողությունների չհասան, սակայն տարբեր համակենտրոնացման ճամբարներում պահվող մոտ 50 հազ. ուկրաինացի ռազմագերիների շրջանում տարվող անխոնջ աշխատանքն իր պտուղները տվեց. այն ոչ միայն նպաստեց նրանց ազգային ինքնագիտակցության աճին, այլև ձևավորվեցին այսպես կոչված՝ «Մոխրագույն ժուլպանավորների» և «Կապույտ ժուլպանավորների»\* դիվիզիաներ, որոնք հետագայում պայքարեցին հանուն Ուկրաինայի: Եվ այսպես, որքան ձգձգվում էր պատերազմը, այնքան ակնառու էր դառնում, որ **ուկրաինացիները, ինչպես նաև մյուս ժողովուրդները, ոչ թե շահագրգռված են կայսրությունների ճակատագրով, որոնց իշխանության տակ տառապել են դարերով, այլ հակառակը՝ գնալով ավելի վճռական պայքար են մղում՝ հանուն իրենց սեփական շահերի:**

1917 թ.-ին պատերազմող կողմերն հասան իրենց հնարավորությունների սահմանագծին: Սակայն Ռուսաստանում լարվածությունն ավելի էր սրված, քանի որ պատերազմական ժամանակի բեռն ավելի էր ծանրանում Նիկոլայ Երկրորդի դանդաղաշարժ, կոռուպցիայի և հետամնաց ռեժիմի թուլության ու սխալների պատճառով: Պատերազմող բոլոր երկրների մեջ ամենածանր կորուստները բաժին ընկան Ռուսաստանին՝ **ավելի քան 8 մլն մարդ՝ սպանված, վիրավոր ու գերի:** Շատ հաճախ, մեծաթիվ կորուստները ցարի նշանակած հրամանատարների ապաշնորհության ու կոպիտ սխալների հետևանք էին: Մթնոլորտը շիկանում էր նաև այն պատճառով, որ ռուսական բյուրոկրատիայի և արդյունաբերողների անձեռնհասության ու անասելի կաշառակերության հետևանքով հարյուր հազարավոր զինվորներ պատերազմ էին մեկնում առանց համազգեստի, զենքի ու զինամթերքի: Պատերազմական անտանելի ծանր վիճակից ու կառավարության մշտական անհաջողություններից դժգոհությունը գնալով սաստկանում էր, վիճակը դառնում էր ճգնաժամային: Աշխատունակ տղամարդկանց գրեթե կեսին պատերազմ զորակոչելու հետևանքով խիստ անկույտ ապրեց սննդարդյունաբերությունն ու առաջին անհրաժեշտության ապրանքների արտադրությունը: Գները կտրուկ աճեցին: Սովը դարձավ սովորական երևույթ՝ հատկապես քաղաքային բանվորների շրջանում, բազմապատկվեցին աղետներն ու դժբախտությունները: Ժողովրդի մեջ հիասթափությունն էր աճում:

## Ռուսական հեղափոխությունները

1917 թ.-ը երկու հեղափոխություն ծնեց: Առաջին՝ **փետրվարյան հեղափոխության շուրջում ոչ այնքան պաստամբությունն էր, որքան խարխլված ինքնակալության կործանումը:** Այն սկսվեց մարտի 8-ին (հին տոմարով՝ փետրվարի 23-ին), մի աննշան իրադարձությամբ, որ արտակարգ հետևանքներ չէր կանխատեսում. բանվորները գործադուլ արեցին պարենի պակասի պատճառով: Գործադուլը ցրելու նպատակով ուղարկված ցարական զորքը կրակելու հրաման ստանալով, անցավ գործադուլավորների կողմը: Նրանց օրինակին հետևեց Պետրոգրադի կայազորի մեծ մասը: Քաղաքի փողոցները լցվեցին գործադուլավորների պահանջներին սատարող մարդկանցով: Մի քանի օրվա ընթացքում պարզ դարձավ, որ ցարական իշխանությունը գրեթե ամբողջապես կորցրել է ժողովրդի աջակցությունը: Երբ ողջ կայսրությունն հեղեղվեց ցույցերով, Նիկոլայ Երկրորդը հրաժարվեց գահից, նրա նախարարներն ու պաշտոնյաները ցրվեցին, ժողովրդին ատելի կանոնները թաքցվեց: Մինչև մարտի 12-ը ցարական ռեժիմը կազմալուծվեց:

Ցարիզմի անպասելի հեշտ կործանումն իր հերթին այլ կարգի անսպասելի դժվարություններ ծնեց: Պարզվեց, որ այնպիսի մի նոր ձևի իշխանություն ստեղծելը, որ բավարարի բոլորին, արտակարգ դժվար գործ է: Քաղաքական իշխանության միանգամից երկու հավակնորդ հայտնվեցին: Նրանցից մեկը **ժամանակավոր կառավարությունն էր, որ ձևավորվել էր Պուժայի ազատական պատգամավորներից** և ձգտում էր կարգի պահպանի դեր ստանձնել, մինչև որ Ռուսաստանում ձևավորվի նոր, մշտական կառավարություն: Ժամանակավոր կառավարությունը ճանաչվեց և՛ Ռուսաստանում, և՛ արտասահմանում, սակայն իրականում գործող իշխանության լծակներին գրեթե չէր տիրապետում, որովհետև չունեի կարգավորված վարչական մարմին և ոստիկանություն: Բացի այդ, նրա ուսերին էր ծանրացած ժողո-

\* **ժուլպան** (ուկր.) - բաճկոն, վերնագոգեստ:

վրդի համար անընդունելի, ատելի պատերազմի ծանր բեռը: Ժամանակավոր կառավարության հակառակորդը՝ իշխանության համար պայքարում, հենց սկզբից **աշխատավորական և զինվորական պատգամավորների Պետրոգրադյան խորհուրդն** էր: Այդ խորհուրդը, ուր սկզբում բուլշևիկները փոքրամասնություն էին և գերակշռում էին սոցիալիստները, յուրօրինակ մի օրենսդիր մարմին էր, որ միավորում էր արմատական մտավորականությանը, բանվորներին ու զինվորներին: Նման խորհուրդներ արագորեն ստեղծվում էին ամբողջ երկրով մեկ: Նրանց նպատակն էր «խորացնել» հեղափոխությունը՝ ամբողջովին սոցիալիստական հիմունքներով առաջնորդվող հասարակություն ստեղծելու ճանապարհով:

Իշխանության այդ երկու հավակնորդների մշտական դիմակայությունը, նրանց միջև եղած հակասություններն ու բախումները էլ ավելի խառնաշփոթ ու անարխիա էին սերմանում, և իշխանության հարցը նախկին կայսրությունում բաց էր մնում:

Խռովություններն ու անկարգություններն հեղափոխական Ռուսաստանում արագորեն ընդգրկեցին կյանքի բոլոր բնագավառները: Հեղափոխությամբ հաստատված փոփոխությունների ամհրաժեշտությունը շատերի համար, հատկապես խորհուրդների, դարձավ նախկինում ընդունված կարգերն ու հասարակական ինստիտուտները կործանելու մոլեգին ձգտումներն արդարացնելու միջոց: Օրինակ՝ մարտի 14-ին հրապարակվեց Պետրոգրադյան խորհրդի տիրահռչակ N1 հրամանը (ժամանակավոր կառավարությունը չկարողացավ այն կասեցնել), համաձայն որի՝ զորամասերում ստեղծվում էին ժողովրդավարական ճանապարհով ընտրվող զինվորական կոմիտեներ՝ օժտված կենսական բոլոր խնդիրներին անդրադառնալու հսկայական լիազորություններով: Սպաների իշխանությունն ուժի մեջ էր միայն մարտական իրավիճակներում: Այդ հրամանը վերջնականապես զցցեց առանց այդ էլ երևութական կարգապահությունը և վերջիվերջո հասցրեց բանակի լրիվ քայքայմանը: Ամռանը, երբ բարոյալքված, արմատական բարեփոխումների տեսլականով ներշնչված միլիոնավոր զինված մարտիկներ լքեցին ռազմաճակատն ու վերադարձան տուն, հասարակական տարրական կարգուկանոնն անգամ վերջնականապես վերացավ:

Դիտարկելով այն քառային ժամանակներում քաղաքական իշխանությունը վերականգնելու և կարգավորելու թույլ փորձերը, պետք է մշտապես ի նկատի ունենալ, որ նրանք ովքեր համարձակություն ունեցան այդ անելու, գտնվում էին այն շինարարների վիճակում, որոնք փորձում են տներ կառուցել այնտեղ, որտեղ մշտապես փլուզվում են շինությունների հիմքերը:

## Հեղափոխությունն Ուկրաինայում

Ցարիզմի տապալման լուրը Կիև հասավ 1917 թ.-ի մարտի 13-ին: Մի քանի օրվա ընթացքում քաղաքային գլխավոր հաստատությունների ու կազմակերպությունների ներկայացուցիչները ձևավորեցին Գործադիր կոմիտե, որն ստանձնեց ժամանակավոր կառավարության տեղական մարմնի դերը: Գործնականում միաժամանակ ձախ արմատական ուժերն համախմբվեցին աշխատավորների ու զինվորների պատգամավորական Կիևյան խորհուրդում: Սակայն, ի տարբերություն Պետրոգրադի, **Կիևում պատմության բեռ բարձրացավ երրորդ գործող անձը. ուկրաինացիներն ստեղծեցին սեփական կազմակերպությունը՝ «Կենտրոնական Ռադան»:** Հիմնադիրները դարձան ՌԿԱՄ-ից չափավոր ազատականները՝ **Եվհեն Զիկալենկոյի, Սերհիյ Եֆրեմովի և Դմիտրո Դորոշենկոյի** գլխավորությամբ, և սոցիալ-դեմոկրատները՝ **Վոլոդիմիր Վիննիչենկոյի և Սիմոն Պետլյուրայի** գլխավորությամբ: Մի քանի շաբաթ անց, Կենտրոնական Ռադայի կազմի մեջ մտավ նաև գնալով արժեվորվող «Укравіська партія соціалістів-революціонерів», որը ներկայացնում էին Միկոլա Կովալսկին, Պավլո խրիստյունկն ու Միկիտա Շապովալը: **Կենտրոնական Ռադայի նախագահ ընտրվեց արքայից վերադարձած Միխայլո Գրուշևսկին**, որ լայն ճանաչում ուներ և մեծ հարգանք էր վայելում: Այսպիսով, ի տարբերություն Կիևում ռուսների, որ բաժանվեցին չափավորների՝ Գործադիր կոմիտեում և արմատականների՝ խորհրդում, գաղափարախոսական բոլոր ուղղություններին հարող ուկրաինացիները միավորվեցին ներկայացուցչական մեկ մարմնում:

Շատերի համար միանգամայն անսպասելիորեն Կենտրոնական Ռադան անմիջական և անչեղորեն աճող աջակցության արժանացավ: Պետրոգրադում և Կիևում, ի պատիվ Ռադայի ստեղծման, տեղի ունեցան ուկրաինացիների հասարակական հսկայական ցույցեր: Ապրիլի 19-ին Կիևում բացվեց **Ուկրաինական ազգային կոնգրեսը**, որին մասնակցում էին 900 պատգամավոր՝ ամբողջ Ուկրաինայից, նախկին կայսրության ուկրաինական համայնքներից,



տնտեսական, լուսավորական, զինվորական և բարեգործական տարբեր կազմակերպություններից: Կոնգրեսում Կենտրոնական Ռադայի անդամ ընտրվեց 150 ներկայացուցիչ (արդեն զուտ ձևակերպում), Գրուշևսկուն հաստատեցին Ռադայի նախագահ:

1917 թ.-ի մայիսի 18-ին **Ուկրաինական զինվորական համագումարը**, ուր 700-ից ավելի պատգամավոր էր ներկայացել, իր ներկայացուցիչներին էլ հանձնարարեց ներգրավվել Ռադայի կազմում: Մոտ մեկ ամիս անց, նմանատիպ որոշում ընդունեց նաև **Ուկրաինական գյուղացիական համագումարն** իր հազար պատվիրակով: Շատ չանցած, Կենտրոնական Ռադային իր աջակցությունն հանդիսավոր հայտարարեց **աշխատավորների պատգամավորների համագումարը**: Վստահության նման դրսևորումներից ոգեշնչված, Ռադան արդեն իրեն



Սիմոն Պետլյուրա

դիտում էր ոչ թե որպես ուկրաինացի մի խումբ հայրենասերների ներկայացուցիչ, այլ որպես համաուկրաինական խորհրդարան:

Բնորոշելով Կենտրոնական Ռադայի կողմնակիցներից շատերի սոցիալական ծագումը, որոնք անվերապահ շահագրգռված էին նրա գոյությամբ, կարելի է, մարքսիստների լեզվով ասած, այն կոչել մանրբուրժուական: Այստեղ կարելի էր գտնել մտավորականների և, այսպես կոչված՝ կիսամտավորականների (գյուղական ուսուցիչներ և հոգևորականներ, մանր պաշտոնյաներ ու զենսավորների ծառայողներ), կրտսեր սպաների ու հարստացած գյուղացիների: Այս մարդիկ, որ մեծ մասամբ կապված էին գյուղի հետ, առաջնորդվում էին ոչ միայն մտավորականության համար ավանդական դարձած՝ ազգային մշակույթը պահպանելու և զարգացնելու մտահոգությամբ ու հոգսերով, այլ նաև (ոչ վերջին տեղում) շատ գործնական նկատառումներով: Իրենց, այսպես կոչված՝ տնական կառավարությունն ավելի նրբազգաց կարծազանքեր իրենց կարիքներին: Նման ձևով ուկրաինական գյուղացիությունը համարում էր, որ Կենտրոնական Ռադան ավելի գործուն, քան հեռավոր Պետրոգրադի իշխանությունը, կլուծի հողի հարցը, իսկ ուկրաինացի զինվորները հույս էին փայփայում, թե Ռադան առավել արագ, քան ռուսական կառավարությունը, նրանց կազատի պատերազմի ծանր բեռից:

Սակայն Ուկրաինայում կային նաև սոցիալական և էթնիկ խմբեր, որոնք չէին ընդունում Կենտրոնական Ռադան: Ոչ միայն ռուս պահպանողականները, այլև չափավորները, վախենում էին թե ուկրաինացիների քաղաքական ինքնագիտակցության աճը կհանգեցնի «միասնական ու անբաժանելի Ռուսաստանի» տրոհմանը: Ռուս արմատականներն էլ, իրենց հերթին, ուկրաինական ազգային շարժման մեջ «բանվոր դասակարգի միասնությանը» սպառնացող վտանգ էին տեսնում: Վերջապես, հրեաները, որ ավելի շատ կապված էին ռուսական մշակույթի հետ և գործուն մասնակցություն էին բերել ռուսական սոցիալիստական կուսակցություններին, նույնպես խեթ էին նայում Կենտրոնական Ռադային: Այսպիսով, ոչ մեծաքանակ, բայց ռազմավարական կարևոր կետերում կենտրոնացած քաղաքային փոքրամասնությունը խիստ անհանգստացած էր Կենտրոնական Ռադայի անսպասելի հայտնությամբ:

Այդ ընթացքում զնալով ավելի երևութական էր դառնում ժամանակավոր կառավարության գործունեությունը: Դրանից օգտվելով, Կենտրոնական Ռադան որոշեց ամրապնդել իր դիրքերը: **Յունիսի 23-ին Ռադան հրապարակեց իր Առաջին ունիվերսալը**, որում ասվում էր. «Թող Ուկրաինան ազատ լինի: Զբաժանվելով Ռուսաստանից և կապերը չխզելով Ռուսական պետության հետ, թող ուկրաինական ժողովուրդն իր հողի վրա իրավունք ունենա ինքը տնօրինելու իր կյանքը»: Դրանից հետո, շատ չանցած Կենտրոնական Ռադան հայտարարեց **«Գլխավոր Քարտուղարություն»** ստեղծելու մասին, որը գործելու էր որպես կառավարության գործադիր մարմին: Վոլոդիմիր Վիննիչենկոյի ղեկավարությամբ, և ութ նախարարություններից բաղկացած այդ մարմինն իր վրա վերցրեց Ուկրաինան կառավարելու պատասխանատվությունը: Նախարարների մեծ մասը սոցիալ-դեմոկրատներ էին:

Այս գործողությունները վրդովեցնում ու զայրացնում էին Ուկրաինայում՝ ռուսներին, Պետրոգրադում՝ ժամանակավոր կառավարությանը: Վերջինս հուլիսի կեսերին Ալեքսանդր Կերենսկու զխավորությամբ պատգամավորական խումբ ուղարկեց Կիև՝ բանակցություններ վարելու համար: Սակայն Գալիչինայում իրենց հարձակման աղետաբեր ծախսողունից թուլացած ռուսները, չնայած մեծ վերապահումներով, սակայն ստիպված էին հաշտվել և ընդունել Գլխավոր Քարտուղարության կառավարման իրավունքը ուկրաինական հիմք՝ Կիևի, Պոլտավայի, Պոդոլյեի, Վոլինի և Զեմբիգովի նահանգներում: Դրանով Կենտրոնական Ռադան փաստորեն հասնում էր իր ազդեցության և իշխանության բարձրագույն կետին:

Ռուսական և հրեական կուսակցությունները, չնայած դժկամությամբ, բայց և այնպես համաձայնվեցին անդամակցել Կենտրոնական Ռադային՝ Ուկրաինայում իրենց ժողովուրդներին մշակութային լայն ինքնավարություն տալու խոստման դիմաց: Կենտրոնական Ռադան այդ պահին 822 տեղ ուներ, որոնցից մոտ մեկ քառորդը պատկանում էր ռուսական, լեհական, հրեական և ոչ-ուկրաինական մյուս կուսակցություններին: Գաղափարախոսության տեսակետից՝ ձախ ուժերի կողմնորոշում ուներ: Թեկուզև բավականին պայմանական, սակայն համաձայնության գալով ժամանակավոր կառավարության և ազգային փոքրամասնությունների հետ, Կենտրոնական Ռադան վերջապես հնարավորություն ստացավ զբաղվելու Ուկրաինան կառավարելու գործով:

**Սակայն շատ շուտով ի հայտ եկավ երկիրը կառավարելու Կենտրոնական Ռադայի անկարողությունը**: Երբ ժամանակավոր կառավարությունը փորձեց վերանայել ուկրաինական ինքնավարության մասին համաձայնագիրը, Կենտրոնական Ռադան զլխովին խրվեց իր իրավասության սահմանները ճշգրտելու անվերջանալի վեճերի մեջ, միևնույն ժամանակ անուշադրության մատնելով ժամօրալի ու անկարևոր թվացող, սակայն շատ ավելի արդի ու առօրյա խնդիրները, ինչպիսիք էին օրենքի ու կարգուկանոնի հաստատումն ու ամրապնդումը, քաղաքների մատակարարման պահովումն ու երկաթուղու անխաթար աշխատանքը: Ռադան անընդունակ գտնվեց լուծելու նաև հողի վերաբաժանման ցավոտ խնդիրը: Եվ որպես հետևանք, **ուկրաինացիների կողմից սկզբում ցուցաբերված կուռ միասնությունն արագորեն տրոհվեց**: Սրվեցին քաղաքական-գաղափարախոսական տարաձայնությունները Կենտրոնական Ռադայում մեծամասնություն կազմող սոցիալ-դեմոկրատների և բազմաքանակ սոցիալիստ-հեղափոխականների միջև: Խրվելով անպտուղ վեճերի ու երկպառակությունների մեջ, Կենտրոնական Ռադայի անդամները, որոնց իշխանությունն արդեն փաստորեն սահմանափակվում էր Կիևի մատույցներով ու մի քանի մեծ քաղաքներով, կորցրեցին կապը գյուղի հետ, ուրեմն և՛ ժողովրդական զանգվածների, կապ, որը մի կարծ ժամանակով հաստատվեց՝ շնորհիվ տարբեր համագումարների, որ տեղի էին ունենում Կիևում: Նահանգները մնացին բախտի քմահաճույքին:

Պակաս կործանարար չէր ուկրաինացի քաղաքական գործիչների գաղափարախոսական



սահմանափակությունն ու փորձի պակասը, որոնցից շատերը 20-30 տարեկան երիտասարդներ էին: Հեղափոխական ճոռոն ու դատարկ կարգախոսներով տարված, նրանք ծագում էին ամբողջովին ծերբազատվել հին կարգերից: Այդ իմաստով հատկանշական է նրանց դիրքորոշումը ռազմական հարցերում: 1917 թ.-ի ամռանը, 300 հազ. ուկրաինացի զինվոր տարերայնորեն համախմբվեցին համաուկրաինական միավորումներում և հավատարմության երդում տվեցին Կենտրոնական Ռադային: Ռադային անսպասելի ծառայություն մատուցեց զեներալ **Պավլո Սկորոպադսկին**, որը նրա տրամադրության տակ դրեց, ռուսական բարոյալքված զորամասերի հետ համեմատած՝ գերազանց վարժեցված և լավ զինված 40 հազ.-անոց ուկրաինական զորաբանակը: Սակայն այդ բարի կամքի դրսևորումը մերժվեց երկու պատճառով. նախ՝ Կենտրոնական Ռադայի գաղափարախոսներն համարում էին, թե հեղափոխությանը կանոնավոր բանակ պետք չէ, և երկրորդը՝ որպես խոշոր հողատեր, Սկորոպադսկին նրանց վստահությունը չէր վայելում: Նույն վերաբերմունքն էր նաև պաշտոնյաների նկատմամբ. նրանք դիտվում էին որպես հին, հակաժողովրդական «բուրժուական» պետության մարմնացում, իսկ Կինդիչենկոն՝ կառավարության ղեկավարը, պաշտոնյաներին ընդհանրապես համարում էր «ամենամոռկալի ու վտանգավոր մարդիկ»:

Սակայն շատ շուտով պարզ դարձավ, որ առանց բանակի և ղեկավար մարմնի հնարավոր չէ երկիր կառավարել: Ուկրաինայում սկիզբ առավ անիշխանությունն ու քաոսը: Կիճակը վատթարացավ հունիսին, երբ ռուսական բանակը Գալիչիանայում կազմալուծվեց և Ուկրաինան, որ Հարավ-Արևմտյան և Ռուսիական ճակատների ամմիջական թիկունքն էր, բառացիորեն հեղեղվեց միլիոնավոր զինված, ազդեցիկ, կատաղի ու չարացած զինվորներով: Կենտրոնական Ռադայի անդամներից մեկի խոսքերով, նրանց՝ Ուկրաինայով անցնելու հետևանքները «ավելի վատ էին, քան թաթարական հորդանների», և այդ ամենն հաղթահարելու անկարողությունն առավել տեսանելի բացահայտեց Կենտրոնական Ռադայի անզորությունը:

## Բոլշևիկյան հեղաշրջումն ու Կենտրոնական Ռադան

Եթե Փետրվարյան հեղափոխությունն ըստ էության իշխանության փլուզման արդյունք էր, ապա երկրորդ՝ Հոկտեմբերյան կոչվող հեղափոխությունն ավարտվեց իշխանության բռնազավթմամբ: Հեղաշրջումն իրականացրեցին **Լենինն ու բոլշևիկները**՝ խմբակցություն, որն այդ իրադարձությունից ընդամենը վեց ամիս առաջ ուշադրության էլ չէր արժանանում որպես Ռուսաստանում իշխանության հավակնորդ:

1917 թ.-ի սկզբին, երբ սոցիալիստական մյուս կուսակցությունները հարյուր հազարավոր անդամներ ունեին, Ռուսաստանում բոլշևիկյան կուսակցության շարքերում, որ բաղկացած էր հիմնականում ռուս և հրեա մտավորականներից ու բանվորներից, հազիվ 24 հազ. մարդ էր հաշվվում: Փոխարենը՝ բոլշևիկներին բնորոշ էին հատկանիշներ, որ այն քաոսային ժամանակներում առավել կարևոր էին, քան կուսակցության բազմանդամությունը: *Նրանք խիստ կարգապահ, իրենց գործին անմնացորդ նվիրված, արհեստավարժ հեղափոխականներ էին Լենինի գլխավորությամբ, համծինս որի ունեին հեղափոխական մարտավարության արվեստին հանձարեղ կերպով տիրապետող մի առաջնորդ: Լենինի խիզախությունը, ղեկավարի նրա ընդունակությունները, ինչպես նաև զանգվածներին «խաղաղություն, հող և հաց» տալու խոստումները նպաստեցին նրա կուսակցության ազդեցության արագ աճին:* 1917 թ.-ի աշնանը բոլշևիկների շարքերում արդեն 350 հազ. անդամ կար: Մյուս սոցիալիստական կուսակցություններից խլելով Խորհուրդների վրա վերահսկողությունը և առաջ քաշելով «Ամբողջ իշխանությունը Խորհուրդներին» կարգախոսը, **բոլշևիկները նոյեմբերի 7-ին (հին տոմարով՝ հոկտեմբերի 25-ին) տապալեցին վերջնականապես խժժված ժամանակավոր կառավարությանը** և բանվորների ու զինվորների պատգամավորական Խորհրդի անունից հայտարարեցին իշխանության գալու իրենց հավակնության մասին:

Բոլշևիկները, որ Ռուսաստանում հիմնականում կենտրոնացած էին արդյունաբերական կենտրոններում, չափազանց թույլ էին Ուկրաինայում, ուր նույնիսկ 1918 թ.-ին ընդամենը 4-5 հազ. էին՝ հիմնականում Դոնեցկի արդյունաբերական շրջանում: Ուկրաինայի 2 մլն աշխատավորների մեջ բոլշևիկների կողմնակիցներն աննշան թիվ էին կազմում: Համեմատության համար նշենք, որ այդ ժամանակ ուկրաինական միայն սոցիալիստ-հեղափոխականներն ավելի քան 300 հազ. անդամ ունեին: Ավելին՝ քանի որ բոլշևիկներն իրենց ծրագրային դրույթներում հենվում էին առավելապես պրոլետարիատի վրա, որոնց թվում շատ քիչ ուկրաինացիներ կային, նրանց գործունեությունը Ուկրաինայի բնակչության մեծամասնության կողմից չէր խրախուսվում: Ուկրաինայի արդյունաբերական պրոլետարիատը մեծ մասամբ բաղկացած էր ռուսներից ու հրեաներից, որոնք էլ կազմում էին բոլշևիկյան կուսակցության 75 %-ը: Եվ այսպես, 1920-ական թվականների խորհրդային պատմաբան Նիկոլայ Պոպովի խոսքերով ասած՝ «**Ուկրաինայում բոլշևիկները... ռուսական կամ ռուսականացած պրոլետարիատի կուսակցություն էին**»:

Ինչպես Ուկրաինայի ռուսների մեծ մասը, **բոլշևիկները նույնպես ուկրաինական շարժման հակառակորդների թվին էին պատկանում**: Որպես մարքսիստներ՝ նրանք համարում էին, որ այդ շարժումը քայքայում է բանվոր դասակարգի միասնությունը. որպես ազգային իշխող



Միկոլա Սկրիպնիկ

փոքրամասնություն՝ նրանք վախենում էին կրավորական մեծամասնության աճող ակտիվությունից ու կազմակերպվածությունից, և վերջապես, որպես քաղաքացիներ՝ նրանք վերկից էին նայում գյուղացիության վրա հենվող շարժմանը: Բոլշևիկյան պարագլուխներից մեկը՝ **Խորհստիան Ռակովսկին** վերապահունով էր ընդունում ուկրաինական ազգի գոյության փաստը: Այն, որ նման տեսակետը գերիշխում էր բոլշևիկյան կուսակցության մեջ, հաստատվում է նշանավոր փոքրաթիվ բոլշևիկ-ուկրաինացիներից մեկի՝ **Միկոլա Սկրիպնիկի** նկատողության մեջ. «Մեր կուսակցության անդամներից շատերի համար Ուկրաինան որպես ազգային միավոր երբեք գոյություն չի ունեցել»: Ուկրաինայում բոլշևիկյան ազդեցիկ առաջնորդներից մեկը՝ Գեորգի Պյատակովը, աներկբա հայտարարում էր, որ՝ «կուսակցությունը պետք է միանգամայն հրաժարվի ազգերի ինքնորոշման իրավունքից»: Այլ առիթով նա ասում էր. «Մենք չպետք է սատարենք ուկրաինացիներին, քանի որ նրանց շարժումը հակասում է պրոլետարիատի շահերին: Ռուսաստանի գոյությունն անհնար է առանց ուկրաինական շաքարի, արդյունաբերության, ածխի, հացահատիկի և այլն»:

Սակայն Լենինը բավական նուրբ քաղաքագետ էր, որպեսզի բոլշևիկների մարտավարու-



թյունը տաներ նման ուղղագիծ մոտեցումներով: Չնայած որոշ ուշացումով, բայց նա հասկացավ, որ ազգայնականությունը հզոր ուժ է, որը կարող է օգտագործել իր կուսակցությունը: Դրանից ելնելով, նա բավական խորամանկ մոտեցում դրսևորեց, համաձայն որի՝ բոլշևիկները ոչ միայն պետք է ճանաչեին, այլ նույնիսկ աջակցեին ճնշված ժողովուրդների մշակութային զարգացման և ինքնորոշման իրավունքին, սակայն մինչև այն պահը (այստեղ հետևվում է արտակարգ կարևոր վերապահում), քանի դեռ այն համընկնում է պրոլետարական հեղափոխության նպատակների ու խնդիրների հետ: Այսպես օրինակ՝ եթե ուկրաինական ազգային շարժումը ուկրաինական աշխատավորներին տանում էր ռուսներից անջատման, ուրեմն, ըստ Լենինի, այդ շարժումը «բուրժուական ազգայնականության մարմնացումն է, որի դեմ պետք է անողոր պայքար մղել»: Այլ խոսքով՝ **ուկրաինացիների ազգային շահերը տեսականորեն ընդունվում էին, սակայն իրականում՝ անտեսվում:**

Այդ մոտեցումը բոլշևիկներին հսկայական առավելություն էր ընձեռում՝ հնարավորություն տալով ցուցադրել իրենց համակարանը ուկրաինացիների ձգտումներին՝ դրանով իսկ նրանց կողմից աջակցություն ակնկալելով, և միաժամանակ հավատարիմ մնալ սոցիալիստական հեղափոխության գաղափարներին: Լենինի այդ գաղափարների ազդեցությունը նրա ուկրաինացի գործընկերների վրա ակնառու դարձավ 1917 թ.-ին, երբ բոլշևիկյան տասը պատգամավոր դարձան Կենտրոնական Ռադայի անդամ:

Ռուսաստանում բոլշևիկների կողմից իշխանությունը զավթելուց հետո, օրակարգում կրկին հարց դրվեց, թե ո՞վ պետք է կառավարի Ուկրաինայում: Կենտրոնական Ռադան և Կիևում բանակային հրամանատարության Շտաբի շուրջը համախմբված ժամանակավոր կառավարության կողմնակիցներին տապալելու բավականին ուժ չունենալով, բոլշևիկները որոշեցին բարյացակամ վերաբերմունք դրսևորել ուկրաինացիների նկատմամբ, միաժամանակ նպատակ դնելով երկրորդ մրցակցի հախից գալ: Նոյեմբերի 10-ին մարտեր սկսվեցին Կիևում, մոտավորապես 6 հազ. զինվոր ունեցող բոլշևիկների և Շտաբի 10 հազ.-անոց զորքի միջև: Վճռական պահին Կենտրոնական Ռադան բոլշևիկներին 8 հազ.-անոց ջոկատ տրամադրեց, որի արդյունքում բոլշևիկները հակառակորդին Կիևից վտարեցին:

Սակայն դրանից հետո, ի զարմանս և ի սարսափ բոլշևիկների, Կենտրոնական Ռադան իրեն բարձրագույն իշխանություն հայտարարեց 9 նահանգներում, որտեղ ուկրաինացիները մեծամասնություն էին կազմում: Իրավաբանորեն դա վավերացվեց նոյեմբերի 22-ին՝ Երրորդ Ունիվերսալի կողմից, որն հայտարարեց Ուկրաինայի Ինքնավար հանրապետություն հաստատելու մասին: Դեռևս չհամարձակվելով կապերը լրիվ խզել Ռուսաստանի հետ, Կենտրոնական Ռադան ընդգծում էր, որ իր նպատակներից մեկը՝ նախկին Ռուսական կայսրությունում «ազատ և հավասար ազգերի ֆեդերացիա» ստեղծելն է: Հույս ունենալով, որ համընդհանուր անարխիստի պայմաններում Կենտրոնական Ռադան իրավիճակը կայունացնող ուժ կհանդիսանա, **ուկրաինական կառավարության իշխանությունը ճանաչեցին ուկրաինական և ոչ-ուկրաինական կուսակցությունները, Խորհուրդներից շատերը և նույնիսկ բոլշևիկները** (վերջիններս՝ մեծ տհաճությամբ և իհարկե՝ ժամանակավորապես):

Սակայն շատ արագ պարզվեց, որ Կենտրոնական Ռադայի և բոլշևիկների միջև ընդհարումն անխուսափելի է: Կենտրոնական Ռադան ամենևին էլ չխրախուսեց Պետրոգրադում բոլշևիկների կողմից իշխանությունը զավթելու ուժային մեթոդների կիրառումը, Լենինն էլ իր հերթին մեղադրում էր ուկրաինացիներին, որ կոզակական զորագնդերին թույլ են տալիս իրենց տարածքով անցնել հարավ, որտեղ ռուսական հակաբոլշևիկյան շարժում էր կազմավորվում: Այդ ընթացքում բոլշևիկներն ուկրաինայում մի շարք քաղաքական խոշոր ծախսողումներ կրեցին:

Դեկտեմբերին կայացած Համառուսական Հիմնադիր ժողովում (որն հետագայում բոլշևիկները ցրեցին) **ուկրաինական կուսակցություններն ստացան պատգամավորների ծայրերի 70 %-ից ավելին, այն դեպքում, երբ բոլշևիկներն ստիպված էին բավարարվել միայն 10 %-ով:** Առավել վիատեցնող էին Խորհուրդների Համաուկրաինական համագումարի աշխատանքներին նրանց մասնակցության արդյունքները, որը նրանք կազմակերպել էին դեկտեմբերի 17-ին Կիևում, որտեղ հույս ունեին հաստատել իրենց լրիվ վերահսկողությունը: **Գյուղերից ժամանած ուկրաինական կուսակցությունների 2 հազ. պատգամավորը ցրեցին բոլշևիկների բոլոր հույսերը, որոնք ներկայացել էին մոտ 100 պատգամավորով:** Անհաջողությունից կատաղած բոլշևիկյան ֆրակցիան լքեց համագումարը՝ այն ճանաչելով ոչ իրավագոր և գնաց Խարկով, որտեղ Կենտրոնական Ռադային հայտարարեց «ժողովրդի թշնամի» և **հռակեց Ուկրաինական Խորհրդային հանրապետության ստեղծումը:** Միաժամանակ սկսվեց բոլշևիկյան զորքերի շարժը դեպի Ուկրաինա:

## Բոլշևիկների ներխուժումն Ուկրաինա

Բոլշևիկյան 12 հազ.-անոց զորքը՝ տաղանդավոր հրամանատար Վլադիմիր Անտոնով-Օվսինկոյի, և իր դաժանությամբ հռչակված նրա զինակից Միխայիլ Մուրավյովի գլխավորությամբ, հյուսիս-արևելքից շարժվեց Ուկրաինայի վրա: Ուկրաինայի ռազմական նախարար Միոն Պետլյուրան կարող էր տարբեր տեղերում ցրված 15 հազ. զինյալ դուրս բերել նրանց դեմ: Դրանք գյուղացիական աշխարհագրայիններից կազմված «ազատ կոզակների» («вільного козацтва») ջոկատներն էին, գալիցյան նախկին ռազմագերիներից բաղկացած «սիջան հրաձիգները» («сичові стрільці»), ճակատային ոչ մեծ միավորումներ և կիևյան հարյուրավոր զիննազիականներ, որ առանց ռազմական պատրաստության, դպրոցական մտարանից հայտնվել էին ռազմաճակատում:



1918 թ.-ի Գերմանա-ավստրիական ինտերվենցիան



Այստեղ կարող է հարց ծագել, թե ի՞նչ եղան ուկրաինական զորամասերի այն 300 հազ. զինվորները, որոնք ամռանը Կենտրոնական Ռադային աջակցություն խոստացան: Նրանցից շատերը վերադարձել էին իրենց գյուղերը՝ «չեզոք» դիրք գրավելով, ինչպես, ի միջի այլոց, նաև շատերը նրանցից, որ դեռևս «զենքի տակ էին»: Մի մասն անցան բուլշևիկների կողմը: Ուկրաինացի զինվորներից շատերի մասն ամհուսալիությունը, որ առավել վառ էր աչքի զարմուն Կենտրոնական Ռադային հավատարիմ մնացած քչերի հերոսական ջանքերի ֆոնի վրա, մեծ մասամբ բուլշևիկյան քարոզիչների տպավորիչ գործունեության արդյունք էր: Ինչպես նշել է Ռիչարդ Փայսիսը՝ «Քաղաքացիական պատերազմի առաջին ամիսներին բնակչության մեծամասնությունը շփոթության մեջ էր, ապակողմնորոշված, չգիտեր՝ ո՞ւմ կողմն անցնի: Լավ քարոզիչը մի քանի հարյուր զինվոր արժեք, նա միայնակ կարող էր քայքայել հակառակորդի կուռ շարքերն ու այդպիսով վճռական ազդեցություն գործել ռազմական ընդհարումների ելքի վրա»: Իսկ բուլշևիկները չէին խնայում ո՛չ մարդկանց, ո՛չ էլ փողը՝ թափանցելու համար ուկրաինական զորամասերը, որտեղ զինվորների մեծ մասը քաղաքականապես ծայրաստիճան միամիտ գյուղացիներ էին, և համոզել նրանց, որ պետք էր կամ չեզոք մնան, կամ բուլշևիկների կողմն անցնեն: Արդյունքում՝ արդեն դեկտեմբերին նրանց զորքն հասել էր 40 հազ.-ի: Ի շահ բուլշևիկների էր ևս մի համգամանք, որ նրանք իրենց կողմնակիցների միջոցով կարողացան Կենտրոնական Ռադայի քիչուներում, Ուկրաինայի համարյա բոլոր խոշոր քաղաքներում խռովություններ կազմակերպել: Ամենավտանգավորը 1918 թ.-ի հունվարի 29-ին կազմակերպած Կիևի ապստամբությունն էր, երբ ռուս բանվորները գրավեցին «Արսենալ» գործարանն ու մի քանի օր, քանի դեռ խռովությունը չէր ճնշվել, կաշկանդեցին Կենտրոնական Ռադայի ռազմական ուժերը: Միաժամանակ, Կիևից հյուսիս-արևելք ընկած Կրուտի անվանումով մի փոքր երկաթուղային կայարանի մոտերքում սկսվեց Մուրավյովի զորքի հետ Պետլյուրայի զինուժի վերջնական ճակատամարտը: Մի քանի օր տևած լարված մարտերից հետո ուկրաինական զորքն ստիպված եղավ նահանջել, որի ժամանակ Կրուտիի մոտ շրջապատման մեջ ընկավ 300 զիննազիականներից կազմված զորամիավորումը: Անփորձ պատանիները համառ դիմադրություն ցույց տվեցին, սակայն մինչև վերջին երիտասարդը բաճախորեն սրայտողտող արվեց մուրավյովցիների կողմից: **Նահատակվելով, սակայն զենքը վար չդնելով, այդ հերոս պատանիներն իրենց անունն հավերժացրեցին ուկրաինական ազգային փառքի տաճարում:**

Այդ ընթացքում Կենտրոնական Ռադան Կիևում, զորուզիչներ միստեր գումարելով, հրապարակեց օրենք՝ հողային արժատական բարեփոխումների մասին, որով խոշոր հողատարածքներն ազգայնացվում էին: Իր Չորրորդ Ունիվերսալով (չնայած այդ կարևորագույն փաստաթուղթը թվագրված է հունվարի 22-ով, բայց փաստորեն ընդունվեց լույս 25-ի գիշերը) Ռադան հայտարարում էր Ուկրաինական ժողովրդական Դանրապետության վիակատար խզումը բուլշևիկյան Ռուսաստանից և Ուկրաինան հռչակում էր ինքնուրույն և անկախ պետություն:

### Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը

Անխուսափելի պարտության դատապարտված Կենտրոնական Ռադային մի ելք էր միայն մնում՝ դիմել դրսի օգնությանը: Դիմնականում հակվածությունը դեպի Ամտանտն էր և հենց սկզբից համառորեն ձգտում էր նրա կողմից ճանաչվելուն, առաջին հերթին՝ Ֆրանսիայի: Սակայն Ֆրանսիայի դիրքորոշումը, որն իր պարտքն էր համարում «միասնական, անբաժանելի Ռուսաստանի» վերականգնումը, բավական երկդիմի էր մնում: 1917 թ.-ին, երբ Լենինը նախկին կայսրության բոլոր ժողովուրդների անունից Բրեստ-Լիտովսկում հաշտության բանակցություններ սկսեց Կենտրոնական տերությունների հետ, իրավիճակը փոխվեց, արտաքին քաղաքական մի շարք հեռանկարներ ի հայտ եկան: Քանի որ Կենտրոնական Ռադան հնարավոր չէր համարում վստահել բուլշևիկներին՝ բանակցություններում ներկայացնելու Ուկրաինայի շահերը, այնտեղ ուղարկեց իր պատվիրակությանը: 1918 թ.-ի փետրվարի 9-ին, Մուրավյովի զորքի կողմից Կիևը գրավելու և Կենտրոնական Ռադայի փախուստի մասին լուրերը Բրեստ-Լիտովսկի հասնելուց մի ժամ առաջ Ռադայի պատվիրակությունն արդեն ստորագրել էր **հաշտության պայմանագիրը Կենտրոնական տերությունների հետ:** Այդ պայմանագրի հիմնական էությունն այն էր, որ Կենտրոնական տերությունները ճանաչում էին Ուկրաինայի անկախությունն ու պարտավորվում էին սննդամթերքի մեծաքանակ առաքումների դիմաց ռազմական օգնություն ցույց տալ Կենտրոնական Ռադային:

Պայմանագիրն ստորագրելուց մի քանի օր անց, գերմանացիներն ու ավստրիացիներն իրենց 450 հազ.-անոց հսկայական բանակը մտցրեցին Ուկրաինայի տարածք՝ նախօրոք

քաժանելով ազդեցության ոլորտները: Բուլշևիկները, որ սնապարծորեն հայտարարում էին, թե իրենք «խորհրդային իշխանությունն հյուսիսից բերեցին իրենց սվինների ծայրին», և Կիևում հայտնվելու կարճատև ընթացքում իսկական ահաբեկչական իշխանություն հաստատեցին, ընդամենը երեք շաբաթ անց, ստիպված եղան աճապարանքով փախչել: Սակայն դա ամենևին չի նշանակում, թե Կենտրոնական Ռադան մարտի 2-ին, երբ գերմանացիների հետ վերադարձավ, ցնծալի ընդունելության արժանացավ: Ուկրաինայի բնակչության գրեթե բոլոր շերտերը հիասթափված էին նրա քաղաքականությունից: Ոչ-ուկրաինացիները խուճապի մեջ էին Ռուսաստանի հետ կապերն ամբողջովին խզելու պատճառով, աղքատ գյուղացիությունն այդպես էլ չստացավ իր երազած հողաբաժինը, հարուստ գյուղացիներն ու խոշոր հողատերերը զայրացած էին խոշոր հողերը ազգայնացնելու պատճառով, և իհարկե, բոլորը միասին պարսավում էին Կենտրոնական Ռադային՝ գերմանացիներին բերելու համար, որոնք իրենց բացարձակապես հյուր չէին զգում այստեղ: Գերմանացիներն էլ իրենց հերթին էին դժգոհում, շփվելով Կենտրոնական Ռադայում մեծամասնություն կազմող երազկոտ-երիտասարդների հետ, որոնք անընդունակ էին որևէ գործնական քայլի: Նրանք շատ արագ համոզվեցին, որ Ռադան պարզապես կառավարման անհրաժեշտ համակարգ չունի՝ այն միլիոնավոր տոննա մթերքը հայթայթելու համար, որի կարիքը սաստիկ զգում էին Գերմանիայի և Ավստրիայի սովախար քաղաքները: Սոցիալիստական կուսակցությունների ներքին երկպառակությունները, Կենտրոնական Ռադան ծվատող վեճերն ու ճգնաժամը վերջնականապես համոզեցին գերմանացիներին, որ «երիտասարդ ուկրաինացի ուտոպիստները» պարզապես ի վիճակի չեն երկիրը կառավարելու: Այդ իսկ պատճառով, ապրիլի 28-ին, երբ Կենտրոնական Ռադան ձեռնամուխ եղավ ուկրաինական պետության սահմանադրության մշակմանը, նիստերի դահլիճ մտավ գերմանական ջոկատն ու ժողովը ցրեց: Դաջորդ օրը, նույնիսկ չփորձելով պաշտպանվել, Կենտրոնական Ռադան ընկավ:

\* \* \*

Գործունեության այն մեկ տարվա ընթացքում, երբ քաղաքական գլխավոր գործունի դերն Ուկրաինայում ստանձնեց Կենտրոնական Ռադան, նա նշանակալից հաջողությունների հասավ, բայց և կործանիչ անհաջողություններ կրեց: Նկատի ունենալով հեղափոխության նախօրյակին ուկրաինական մտավորականության ճնշված վիճակը, թուլությունն ու անփորձությունը, Կենտրոնական Ռադայի ստեղծումն ու գնալով աճող ազդեցությունը (թեկուզև կարճատև), կարելի է մեծ ձեռքբերում համարել: Իր գործունեությամբ Ռադան միանշանակ ցրեց ուկրաինական ազգի հենց գոյությանն առնչվող շարունակական և բավական լայն տարածում գտած բոլոր կասկածներն ու տարակույսները, **ուկրաինական հարցը դարձնելով հեղափոխական ժամանակների կարևորագույն խնդիրներից մեկը:** Կենտրոնական Ռադան ժամանակավոր կառավարության հետ հարաբերություններում զուտ քաղաքական տեսանկյունից շատ ավելիին հասավ, քան պարզ ինքնահաստատումն էր:

Բացի այդ, նրան հաջողվեց հաղթահարել նաև ուկրաինական բուլշևիկներին, որոնք օգնության համար ստիպված էին դիմել Ռուսաստանին: Զգտելով հաստատել ժողովրդավարական խորհրդարանական կարգեր, Կենտրոնական Ռադան, չնայած մշտապես փոփոխվող իրավիճակներին, հավատարիմ մնաց այդ գաղափարին: Նման հավատարմության տպավորիչ օրինակ էր հրեական փոքրամասնությանը լայն ինքնավարություն շնորհելը, չնայած որ հրեական քաղաքական առաջնորդները դաժան քննադատության էին ենթարկում ուկրաինական կառավարությանը: Սակայն Կենտրոնական Ռադայի ամենաիտեալար նվաճումը երևի այն էր, որ անհողողող պաշտպանելով Ուկրաինայի ինքնավարության պահանջը, այն լրջորեն խարխիլեց «միասնական, անբաժանելի Ռուսաստանի» նախկինում անխախտ սկզբունքը, ստիպելով ժամանակավոր կառավարությանը, հետագայում նաև բուլշևիկներին՝ հրաժարվել (համենայն դեպս՝ տեսականորեն) ռուսական քաղաքական մտածողության այդ վերացական գաղափարից:

Սակայն Կենտրոնական Ռադայի գործունեության մեջ ամենատպավորիչը նրա անկումն էր: Նրա անհաջողությունների գլխավոր պատճառներից կարելի է առանձնացնել պետականության երկու կարևոր հեռարանների բացակայությունը՝ մարտունակ բանակ և կառավարման գործուն մարմին: Վերջինիս բացակայության պատճառով Կենտրոնական Ռադան ի գորու չէր կապ պահպանել նահանգների ու գյուղի հետ, որտեղ կենտրոնացած էր նրա հնարավոր կողմնակիցների մեծամասնությունը: Պակաս կործանարար չէր նաև գործնական քաղաքականու-



թյան հարցերում փոխըմբռնման բացակայությունը: Այդ թերությունն առանձնակի ուժեղ արտահայտվեց Վիննիչենկոյի և Պետլյուրայի միջև եղած տարածայնություններում, երկու նախարարների, որոնք կարևորագույն պաշտոններ էին զբաղեցնում կառավարությունում: Վիննիչենկոն սոցիալական առավել արմատական քաղաքականության կողմնակից էր, որն իր կարծիքով, բոլշևիկներին կզրկեր աջակցությունից և զանգվածների մեջ լուրջ փոփոխությունների հավատ կսերմաներ: Պետլյուրան իր հերթին համարում էր, որ առավել հրատապ է ազգային պետականության հիմնական ինստիտուտների ստեղծումը: Եվ վերջապես, Կենտրոնական Ռադայի կործանման անմիջական պատճառը գերմանացիների պահանջները բավարարելու անկարողությունն էր:

Վերջիվերջո, ինչպես նշում է Ջոն Ռեշետարը, Կենտրոնական Ռադայի կործանումը պայմանավորված էր ուկրաինական ազգային շարժման տհասությամբ: Իրականությունն այն էր, որ Կենտրոնական Ռադան ստիպված էր պետականության կառուցումն սկսել այն ժամանակ, երբ դեռևս չէր ավարտվել ուկրաինական ազգի ձևավորման գործընթացը:

Ցարական ռեժիմի պատժիչ բնույթը և ուկրաինական հասարակության սոցիալ-տնտեսական առանձնահատկությունները բերեցին նրան, որ Ուկրաինայում գրագետ մարդկանց մեծամասնությունը կամ ռուսներ էին, կամ ռուսացածներ: Ուկրաինական շարժումը դեռ չէր թափանցել քաղաքները և արդյունաբերության, հաղորդակցման միջոցների ու որակյալ անձնակազմի այդ կարևոր կենտրոնները մնում էին որպես մարտնչող, հակաուկրաինական դիրքեր գրավող ռուսների կամ ռուսացած փոքրամասնության բաստիոններ: Արդյունքում՝ որակյալ կադրերի սուր պակաս զգացվեց, որոնք անհրաժեշտ էին ուկրաինական նորաստեղծ պետության բանակն ու կառավարման համակարգը կազմավորելու համար: Եղածներն էլ երիտասարդ էին ու անփորձ. Վիննիչենկոն 38 տարեկան էր, Պետլյուրան՝ 35, Կովալևսկին (ուկրաինական սոցիալիստ-հեղափոխականների խոշորագույն կուսակցության առաջնորդը) 25 տարեկան էր, Միկուլա Շրահան (որ Զրուչևսկուն փոխարինեց Կենտրոնական Ռադայի նախագահի պաշտոնում)՝ 22 տարեկան: Մարդկային և նյութական պաշարների այս անբավարարությունը տեսնելով, Կենտրոնական Ռադայի անդամ Սերիյ Եֆրեմովը կոչ էր անում ձեռնպահ մնալ իշխանությունը վերցնելուց, մատնանշելով, որ ժողովրդական զանգվածներն հրաշքի են սպասում, իսկ ուկրաինական կառավարությունը չի արդարացնի նրանց սպասումները: Եվ հաշվի առնելով այդ անհաղթահարելի թվացող դժվարությունները, կարելի է հասկանալ, թե ինչու Վիննիչենկոն, ամփոփելով Կենտրոնական Ռադայի գործունեության արդյունքները, գրում էր. «Իսկապես մենք նման էինք աստվածներին... որոնք ճգնում էին ոչնչից նոր աշխարհ ստեղծել»:



## ՈՒԿՐԱԻՆԱԿԱՆ ՆԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Բոլշևիկյան հեղաշրջումից հետո հեղափոխությունը վերածեց քաղաքացիական պատերազմի: Ցնդեց 1917 թ.-ի անհիմն ոգևորությունը, համերաշխության ու միասնության զգացումը, լռեցին զանգվածային ցույցերը, բուռն ժողովներն ու հավաքները, մարեցին տաք վեճերը: Հետագա երեք տարիների ընթացքում, ներքաշվելով դաժան ու անողոք կռիվների մեջ, որոնք ուղեկցվում էին լայնածավալ ահաբեկչությամբ ու զազանություններով, Ուկրաինայում և նախկին ողջ կայսրությունում իշխանությանը տիրելու բազմաթիվ հավակնորդները որոշում էին, թե ով և ինչպես է կառավարելու երկիրը:

Ռուսաստանում բոլշևիկների իշխանության գալն ուկրաինացիներից շատերի համար ոչ միայն հետհեղափոխական շրջանի նոր՝ բռնություններով լի փուլը նշանավորեց, այլև արմատապես փոխեց նրանց քաղաքական մտածողությունը: *Հյուսիսում բոլշևիկյան ռեժիմի բռնապետական տիրույնն ուկրաինական առաջնորդներից շատերին ստիպեց անխուսափելիորեն հրաժարվել Ռուսաստանի հետ ֆեդերալ-ինքնավար կապերի ավանդական ձգտումներից:* Այդ պատճառով էլ նրանց գլխավոր նպատակը դարձավ անկախությունը: Սակայն ուկրաինացիների շրջանում, ինչպես և նախկին կայսրության շատ ժողովուրդների մոտ, աճում էին հակասությունները՝ այս կամ այն նպատակին հասնելու ուղիների և մեթոդների վերաբերյալ: Ի լրումն այս ամենի, քաղաքացիական պատերազմին մասնակցած գրեթե բոլոր կողմերը ձգտում էին վերահսկողություն սահմանել Ուկրաինայի նկատմամբ՝ նրա ռազմավարական բարենպաստ դիրքի և բնական հարուստ պաշարների պատճառով: Գերմանական օկուպացիայի հետևանքով առաջացած հարաբերական դադարից հետո, Ուկրաինան դարձավ քաղաքացիական պատերազմի առավել խառնակ, քառսային իրադարձությունների ասպարեզ:

## Հեթմանություն

1918 թ.-ի գարնան շեմին Ուկրաինայի բնակչության մեծ մասն արդեն մինչև կոկորդ կուշտ էր հեղափոխություններից ու քառսային ժողովներից: Միանգամայն օրինաչափ էր, որ նման տրամադրություններն էին գերիշխում և հողատերերի ու հարուստ գյուղացիների, և մանր ձեռնարկատերերի ու կալվածատերերի, և բարձրակարգ պաշտոնյաների մեջ, որոնք կազմում էին Ուկրաինայի բնակչության մոտ 20 %-ը: Գերմանացիներն ու ավստրիացիները նույնպես չափազորգիռ էին կարգուկանոնի վերականգնմամբ, որպեսզի արագացնեին սննդամթերքի արտահանումը: Հենց այդ պատճառով էլ նրանք *ապրիլի 24-26-ին գաղտնի պայմանավորվեցին Կենտրոնական Ռադան փոխարինել ուկրաինական պահպանողական կառավարությանը՝ հեթման Պավլո Սկորոպադսկու գլխավորությամբ* (այդ տիտղոսը պետք է խորհրդանշեր վերադարձը կոզակական հեթմանության ավանդույթներին):

Սկորոպադսկին, որ ուկրաինական խոշոր հողատերերից մեկն էր, կոզակական ավագանու հին տոհմի հետնորդ, ցարական ժամանակներում հասարակական հիերարխիայում բարձրակարգ տեղ էր զբաղեցնում, պատկանում էր բարձրագույն հրամակազմին և Նիկոլայ Երկրորդի համհարզն էր: Այդուհանդերձ, հեղափոխության ժամանակ նա իր դիվիզիան բերեց ծառայելու ուկրաինական զործին, իսկ երբ Կենտրոնական Ռադան հրաժարվեց նրա ծառայությունից, ընտրվեց «ազատ կոզակություն» գեղջկական աշխարհագրի պատվավոր հրամանատար: Անսպասելիորեն իր ուկրաինական արմատներին վերադարձած այդ ռուսացած «մալոռոսական» ազնվականի իշխանության գալը նշանակում էր հեղափոխության նոր



փուլի սկիզբն Ուկրաինայում, որի բնորոշ առանձնահատկությունը օրինականությունն ու կարգուկանոնը վերականգնելու փորձն էր և Կենտրոնական Ռադայի մի քանի «սոցիալիստական փորձարկումների» հետևանքները վերացնելը:

Ապրիլի 29-ին Կիևում հրավիրված Գողատերերի միության համագումարում, որին 6500 պատվիրակ էր մասնակցում ողջ Ուկրաինայից, *Սկորոպադսկուն մեծ ոգևորությամբ հեթման հռչակեցին, կոչ անելով նրան՝ «երկիրը փրկել անօրենությունից ու քաոսից»:* Նույն օրն իսկ իր կողմնակիցների հետ նա հռչակեց «Ուկրաինական պետության» ստեղծումը (ի հակադրություն Կենտրոնական Ռադայի «Ուկրաինական ժողովրդական Զանրապետության»): Նոր պետության հիմքում դրվեց միապետական, հանրապետական, և որ առավել ուշագրավ էր՝



Պավլո Սկորոպադսկի

իշխանապետական սկզբունքների արտասովոր մի համակցություն: Բնակչությանը երաշխավորվում էին ընդունված քաղաքացիական իրավունքներ, հատկապես շեշտվում էր մասնավոր սեփականության սրբազան սկզբունքը:

Վերացնելով Կենտրոնական Ռադայի այնպիսի նորամուծությունները, ինչպես՝ խոշոր կալվածքների ազգայնացումն ու ազգային-մշակութային ինքնավարությունը, հեթմանը միաժամանակ *սահմանեց քաղաքացիների առանձին կարգ՝ կոզակներ* (դրանք փաստորեն ունևոր գյուղացիներն էին): Ընդ որում, նա հույս ուներ, որ նրանք կդառնան իր վարչակարգի սոցիալական հիմքը: Առավել տպավորիչ էին հենց հեթմանի լայն լիազորությունները. նա անձամբ էր օրենքներ սահմանելու, կառավարություն նշանակելու, արտաքին քաղաքականություն վարելու, զինվորական զորքերը տնօրինելու և լինելու էր պետության գերագույն դատավորը: Սակայն, այդ գրեթե անսահման իրավունքների նկատմամբ հավակնությունը չէր կարող քողարկել այն փաստը, որ այդ իշխանությունն Ուկրաինայում փաստորեն պատկանում էր հենց գերմանացիներին:

Միանգամայն բնական է, որ ուկրաինական գործիչների, մեծ մասամբ՝ սոցիալիստների և Կենտրոնական Ռադայի անդամների վերաբերմունքը հեթմանի նկատմամբ խիստ բացասական էր: Այդ պատճառով էլ, երբ նրանցից մի քանիսը հրավիրվեցին հեթմանի կառավարությունում աշխատելու, գրեթե բոլորն էլ հրաժարվեցին: Հետևանքն այն եղավ, որ աշխատակազմ ձևավորելիս, հեթմանն ստիպված էր հրավիրել ուկրաինական շարժման հետ կապ չունեցող մարդկանց, ինչով էլ մեղադրանքների տեղիք տվեց, թե հեթմանի կառավարությունում ոչ մի «իսկական» ուկրաինացի չկա: Բայց եթե *Ֆեդիր Լիզոհուրի* (հարուստ հողատեր) վարչապետությամբ նոր ձևավորված նախարարների խորհրդում միայն մեկ ուկրաինական նշանավոր գործիչ կար՝ *Դմիտրո Դորոշենկոն* (արտաքին գործոց նախարար), և ուրեմն ազգային-հայրենասերների առումով աղքատ էր, փոխարենը հարուստ էր արտակարգ հմուտ կառավարիչներով:

*Ընդամենը մի քանի ամսվա ընթացքում Ուկրաինայում գործունյա վարչական մարմին ձևավորվեց:* Նահանգներում Կենտրոնական Ռադայի կողմից նշանակվածները փոխարինվեցին փորձառու կառավարիչներով: Կենտրոնական վարչությունում պաշտոններ զբաղեցրեցին միայն արհեստավարժ մասնագետները, որոնք մեծ մասամբ ռուսներ էին կամ ռուսացած ուկրաինացիներ: Ճիշտ է, որոշակի դժվարություններ ծագեցին մարտունակ բանակ կազմավորելու ժամանակ, քանի որ գերմանացիները դեմ էին ռազմական հզոր ուժի ստեղծմանը, որը կվտանգեր նրանց լիիրավ իշխանությունը: Բավականին արագ ամբողջ թափով սկսեց գործել ոստիկանությունը (մի տեղ լավ, մի տեղ վատ), որում (ինչպես և բանակում) քավական մեծ թվով ցարական սպաներ ներգրավվեցին:

Եթե Կենտրոնական Ռադան զուտ ձևական դիվանագիտական հարաբերություններ էր պահպանում միայն Գերմանիայի, Ավստրիայի և Օտտոմանյան կայսրության հետ, ապա հեթմանը դեսպանություններ փոխանակեց 10-12 պետությունների հետ: Արտաքին քաղաքականության մեջ հեթմանական պետության զխավոր հոգսը՝ խորհրդային Ռուսաստանի հետ խաղաղություն հաստատելու բանակցություններն էին (պայմանագիրը կնքվեց 1918 թ.-ի հունիսի 12-ին) և Արևելյան Գալիչիանն ու Խոլմշչինան վերամիավորելու խնդրի շուրջ Ավստրո-Հունգարիայի հետ անպտուղ վեճերը:

*Հատկապես տպավորիչ էին կառավարության հաջողությունները լուսավորության բնագավառում և գիտության զարգացման համար բարենպաստ պայմաններ ստեղծելու գործում:* Ցարական կրթության մասսայականացման նպատակով տպագրության պատրաստվեց մի քանի միլիոն ուկրաինական դասագիրք, ուկրաիններեն լեզուն սկսեց դասավանդվել դպրոցների մեծ մասում: Հիմնադրվեցին մոտ 150 ուկրաինական գիմնազիա, որոնցից շատերը՝ գյուղական վայրերում: Հոկտեմբերին Կամենեց-Պոդոլսկիում գործել սկսեց ուկրաինական նոր համալսարանը: Բացվեց ազգային արխիվ և գրադարան, որ միլիոնից ավելի հատորներ էին պարունակում: Այս գործունեության պսակը դարձավ 1918 թ.-ի նոյեմբերի 24-ին հիմնադրված *Ուկրաինայի գիտությունների Ակադեմիան:* Այսպիսով, իր գոյության ընդամենը մի քանի ամսվա ընթացքում հեթմանական պետությունը մշակույթի բնագավառում այնպիսի նվաճումներ արձանագրեց, ինչը կարող էին միայն երազել ուկրաինական մտավորականության բազում սերունդներ:

Սակայն, *եթե Սկորոպադսկու վարչակարգը կարող էր պարծենալ և՛ կառավարման վարպետությամբ, և՛ իրական նվաճումներով, այնուամենայնիվ քաղաքական մի շարք լուրջ վրիպումներ ծանրացած էին նրա վրա:* Դրանք մեծ մասամբ պայմանավորված էին այն շրջապատով, որն իր համար ընտրել էր հեթմանը: Նախ և առաջ, նրան վարկաբեկում էր կախվածությունը գերմանացիներից, որոնք բացահայտ ձգտում էին թալանել Ուկրաինայի տնտեսությունը: Երկրորդը՝ հեթմանը սերտորեն կապված էր ունևոր դասակարգերի հետ, որոնք բացահայտ ձգտում էին ի չիք դարձնել հեղափոխության բերած փոփոխությունները: Օրինակ՝ Սկորոպադսկուն մեղադրում էին այնպիսի ծայրաստիճան հակաժողովրդական միջոցառումների համար, ինչպիսիք «պատժիչ արշավանքներն» էին, որ կազմակերպում էին կալվածատերերը՝ գերմանական զորքի օժանդակությամբ պատժելու այն գյուղացիներին, որոնք մեկ տարի առաջ հանդգնել էին մասնակցել հողային բռնազավթմանը: Երրորդը՝ ուկրաինացիներից շատերին զայրացում էր այն, որ Սկորոպադսկին հենվում էր հիմնականում ռուսների վրա: Նրա կառավարելու ընթացքում, Ուկրաինան, Ռուսաստանի համեմատ այդ անդորրության օազիսը, ոչ միայն նախկին ցարական ընտրանու բազմաթիվ անդամների ապաստան էր դարձել, այլև մի կենտրոն, որտեղից փորձեր էին արվում վերականգնելու «միասնական, անբաժանելի Ռուսաստանը»: Պաշտոնյաները, որոնք չէին թաքցնում ուկրաինական պետա-



կանության նկատմամբ իրենց հակակրանքը, լրիվ ռուսներ էին, վարչության անդամների մեծ մասը ռուսական կադետական կուսակցության անդամ էին:

*Սկորոպադսկուն պարզորոշ ընդդիմություն ձևավորվեց նրա կառավարման հենց սկզբից:* Մայիսի կեսերին կայացան ուկրաինական կուսակցությունների մի շարք անլեգալ համագումարներ, որոնցում կառավարությունից իրենց դժգոհությունը հայտնեցին տարբեր մասնագիտական և հասարակական մի շարք խմբավորումների ներկայացուցիչներ՝ երկաթուղայիններ ու հեռագրիչներ, բանվորներ ու գյուղացիներ և այլն: Ընդդիմության համաձայնեցնող և ուղղորդող կենտրոն դարձավ «*Ուկրաինական ազգային-պետական միությունը*» («Укравинський національно-державний союз»), որը գլխավորում էր Վիննիչենկոն: Հակահեթմանական դիրք գրավեց նաև մի այլ ազդեցիկ կազմակերպություն՝ «*Համաուկրաինական զեմստվոյական միությունը*» («Всеукраїнський земський союз»): *Պետլյուրայի գլխավորությամբ:* Սկզբնական շրջանում այդ խմբավորումները հարաբերություններ էին պահպանում Սկորոպադսկու հետ, հուսալով նրա քաղաքականությունը դարձնել առավել ազատական՝ ուղղված ազգային պահանջներին ու կարիքներին, սակայն աստիճանաբար պատրաստվեցին ապստամբելու նրա դեմ: Ուկրաինացի գյուղացիներն հատուկ հրավերի չէին սպասում կառավարության դեմ ապստամբելու համար, որն հիմնավորապես բռնագրավել էր նրանց բերքը, հողը վերադարձրել հարուստ կալվածատերերին և պատժիչ ջոկատներ էր ուղարկել նրանց գյուղերը: Այդ պատճառով էլ *գյուղացիական տարերային ու դաժան խռովությունների ալիքն արագորեն հեղեղեց ողջ Ուկրաինան:* Դյուրությանը զինված գյուղացիական ջոկատները, որպես կանոն, անարխիստական մտածողություն ունեցող տեղական պարագլուխների առաջնորդությամբ, որ կոզակական ավանդական սովորույթով կոչվում էին օտաման կամ բատկա, գերմանացիների դեմ պարտիզանական մարտեր էին մղում՝ անակնկալ հարձակումներով ու բախումներով: Երբեմն այդ դիմակայություններն հսկայական չափերի էին հասնում: Կիևի նահանգի Զվենիգորոդի և Տարաշչանսկի գավառներում, օրինակ, հրետանային երկու մարտկոցով ու 200 զնդացրով զինված գյուղացիների 30-40 հազ.-անոց ուժերը գերմանացիներից 6 հազ. զոհ խլեցին: Սակայն խռովությունները հաջողություն չէին բերում: Օգոստոսի սկզբին, երբ բոլշևիկները փորձեցին համընդհանուր ապստամբություն բարձրացնել, այն ճնշվեց երկու օրվա ընթացքում, քանի որ ժողովուրդը չաջակցեց նրանց:

Աշնան սկզբներին պարզ դարձավ, որ համաշխարհային պատերազմում Կենտրոնական պետությունները պարտության չեմին են: Այդ տեսնելով, հեթմանը հարկադրված զիջումների զնաց: Սակայն ուկրաինացի նշանավոր գործիչներին իր գրասենյակում աշխատելու հրավերի վերջին փորձն էլ տապալվեց: Աջակցության անհույս փնտրտուքի մեջ Սկորոպադսկին ծայրահեղ քայլի դիմեց. 1918 թ.-ի նոյեմբերի 14-ին նոր կառավարություն ձևավորեց՝ ամբողջովին կազմված ռուս միապետականներից, և ապագա ոչ-բոլշևիկյան Ռուսաստանի հետ ուկրաինայի միավորման վավերագիր հրապարակեց, հուսալով արժանանալ հակաբոլշևիկյան ռուսական թևի և հաղթանակող Անտանտի աջակցությանը: Հենց նույն օրն ընդդիմությունը ձևավորեց իր կառավարությունը՝ *Դիրեկտորիան*, և հեթմանի դեմ բացահայտ ապստամբության կոչ արեց:

Դիրեկտորիայի կողմից բարձրացված *ապստամբությունը անտառային հրդեհի պես արագ տարածվեց:* Գյուղացիական բազմաքանակ ջոկատները, իրենց խելահեղ օտամանների առաջնորդությամբ կուտակվում էին Կիևից արևմուտք գտնվող Բիլա Ցերկվայի շրջանում, որտեղ Սկորոպադսկու հակառակորդների յուրօրինակ շտաբն էր: Շուտով այդ միևնույն նպատակի շուրջ համախմբված, բայց անկարգապահ ու անկազմակերպ միավորումներում 60 հազ. մարդ էր հաշվվում: Առավել զգալի դարձավ հեթմանական լավագույն միավորումների՝ «սիչյան հրաձիգների»՝ հրամանատար Եվհեն Կոնովալեցի և շտաբի պետ Անդրիյ Մելնիկի գլխավորությամբ, և «Մոխրագույն ժուպանավորների դիվիզիայի», Դիրեկտորիայի կողմն անցնելը, որի հետևանքով ապստամբների կանոնավոր բանակը հասավ 40 հազ. մարդու: Նոյեմբերի 21-ին խռովարարները շրջապատեցին Կիևը: *Երկար բանակցություններից հետո, որի նպատակը գերմանական զորամասերի անվտանգ դուրս բերումն էր, դեկտեմբերի 14-ին վերջիններս լքեցին քաղաքը՝ իրենց հետ տանելով Սկորոպադսկուն:* Այդ նույն օրը *Դիրեկտորիայի ուժերը հաղթական մտան Կիև և հանդիսավոր հայտարարեցին Ուկրաինական ժողովրդական Հանրապետության վերականգնումը:*

Հեթմանության շրջանը, երբ նրա ազդեցությունը սահմանափակ էր, իսկ իշխանությունն իրականում պատկանում էր գերմանացիներին, ութ ամսից էլ քիչ տևեց: Սկզբում հեթմանությունը որոշակի աջակցություն ստանում էր, քանի որ խոստացավ վերականգնել օրինականու-

թյունն ու կարգուկանոնը՝ այն ամենագլխավորը, ինչին ձգտում էր ժողովուրդը, սակայն դրանից հետո անխուսափելիորեն գնաց դեպի կործանում, որովհետև հեթմանական վարչակարգը չկարողացավ լուծել երկու կարևոր խնդիր, որ առաջադրել էր հեղափոխությունն Ուկրաինայում՝ սոցիալ-տնտեսական և ազգային խնդիրները: *Սկորոպադսկու ճակատագրական սխալը՝ հին սոցիալ-տնտեսական կառուցվածքը վերականգնելու ճանապարհով կայունության հասնելու որոշումն էր:* Կառավարությունն անհետևողական ազգային քաղաքականություն էր վարում: Անառարկելի հաջողությունների հասնելով լուսավորության ու մշակույթի ուկրաինացման բնագավառում, այն, համենայն դեպս, ազգային գործիչների կողմից բնորոշվում էր որպես «*ձևով ազգային, իսկ բովանդակությամբ՝ մոսկովյան*»:

Սակայն, ինչպես նշում է ուկրաինական պահպանողականության գաղափարախոս Վյաչեսլավ Լիպինսկին՝ հեթմանության իմաստն ու նշանակությունը շատ ավելի լայնածավալ էր: Հեթմանությունն Ուկրաինայի ռուսացած վերնախավի նշանակալի մասին ոչ միայն ներշնչեց ազգային պետականության գաղափարը, այլև մասնակիորեն նույնիսկ մասնակից դարձրեց այդ գաղափարի իրականացման գործին: Դա էլ իր հերթին նպաստեց նրա տարածմանը մտավորականության նեղ շրջանակներից դուրս, «երկրագործների» առավել լայն, տնտեսապես կայուն շերտերում, այսինքն հողագործ գյուղացիության և հողատերերի շրջանում: Լիպինսկու խոսքերով՝ եթե Սկորոպադսկին կարողանար դիմանալ, ի վիճակի կլիներ ուկրաինական պետականության գաղափարով հրապուրել ավելի ու ավելի շատ արտադրողների և այդպիսով խլել այդ հրաշք գաղափարի մեծաշնորհը «գաղափարական աղանդի» ձեռքից, ինչպես որ նա անվանում էր ուկրաինական ազգային մտավորականությանը:

## Անարխիա

1919 թ.-ին համընդհանուր քաոսն ընդգրկեց ողջ Ուկրաինան: Իսկապես, *եվրոպական նորագույն պատմության մեջ չկա մի երկիր, որ ապրած լինի այնպիսի անսահման անարխիա, այնպիսի դաժան քաղաքացիական պատերազմ ու անիշխանություն, ինչպես այդ օրերին ապրեց Ուկրաինան:* Նրա տարածքում միաժամանակ վեց բանակ էր գործում, որոնք պատկանում էին տարբեր ուժերի. ուկրաինական, բոլշևիկյան, սպիտակ, Անտանտի, լեհական և անարխիստների: *Մեկ տարուց էլ պակաս ժամանակում Կիևն հինգ անգամ ձեռքից-ձեռք անցավ:* Քաղաքներն ու ամբողջ շրջաններ իրարից կտրված էին բազմաթիվ ռազմաճակատներով: Գրեթե լրիվ խզված էր կապն արտաքին աշխարհի հետ: Սովահար քաղաքներն ամայացել էին, բնակիչները ցրվել էին գյուղերը՝ սնունդ հայթայթելու: Գյուղերը, բառիս բուն իմաստով, պատնեշվել էին անկոչ հյուրերից: Կիևին տիրած բազմաթիվ կառավարություններ բոլոր ջանքերն ուղղում էին նույնքան բազմաթիվ թշնամիներից պաշտպանվելուն: Ավելի դյուրին էր Ուկրաինան գրավելը, քան կառավարելը:

Գյուղացին, որ արտաքին աշխարհից անջրպետված գյուղերից հետևում էր գեղադիտակի արագությանը իրար հաջորդող իշխանություններին, սրտի խորքում միայն անիծում էր և քաղաքացիներին, և՛ նրանց իշխանություններին: Նրա միակ հոգսը իր հողը պահելն էր, հնարավորության դեպքում՝ մեծացնելը: Գյուղացին կատարել ցանկացած կառավարության, որը կբավարարեր նրա այդ ցանկությունը: Բայց հենց որ այդ կառավարությունն ի վիճակի չէր լինում արդարացնել նրա սպասումները, առավել ևս՝ երբ հավակնում էր նրա հողին ու հացին, նա անհապաղ ապստամբում էր: Գյուղացին հաստատ գիտեր, որ հին կարգերին վերադարձ չկա, սակայն պարզ պատկերացում չուներ, թե ինչ կարգերով կարելի է այն փոխարինել: Արդյունքում՝ քաղաքացիական ողջ պատերազմի ընթացքում շատ դժվար էր գյուղացիության դիրքորոշումը կանխատեսելը:

Այդ դիրքորոշումն առավել ևս կարևորվում էր նրանով, որ հարյուրամյակների ընթացքում գյուղացին առաջին անգամ պայքարի ոչ միայն ցանկություն, այլև կարողություն ի հայտ բերեց: Հեթմանի օրոք կոզակական անարխիստական ռոմանտիզմի ոգով տոգորված հարյուրավոր օտամաններ ու պարտիզանական բանդաներ հայտնվեցին: Մեկը անբարդասում էր ազգայնական կոչերը, մյուսը՝ բոլշևիկյան, շատերը մշտապես ճամբարից-ճամբար էին ցատկում, և բոլորը՝ միայն իրենց գյուղի ու շրջանի շահերն էին պաշտպանում: Եթե «դասակարգային թշնամուն» թալանելու, կամ հրեաների հետ հին հաշիվները մաքրելու առիթ էր ներկայանում, ուրեմն՝ ավելի լավ: Հին չինական զորավարների պես, *օտամանները ոչ մեկի իշխանությունը չէին ընդունում և համարում էին, որ օրենքն հենց իրենք են:*



Հարավի տափաստաններում, ուր մեծ մասամբ կենտրոնացած էր հարուստ և ինքնուրույն գյուղացիությունը, գտնվում էր երկու առավել հզոր պարտիզանական պարագլուխների նստավայրը: Նրանցից մեկը *Մատվեյ Գրիհորևն* էր, ցարական բանակի նախկին սպա, իսկական ավազակ, որն իր շուրջն էր հավաքել մոտ 12 հազ. մարդ: Խերսոնի շրջանում և սերտ կապեր էր հաստատել ուկրաինական ծախս-արմատական ուժերի հետ: Երկրորդ լեգենդար *Նեստոր Մախնոն* էր՝ ռուսացած ուկրաինացի զեղջուկ և թունդ անարխիստ: 1919 թ.-ի կեսերին Դուլյայ-Պոլե փոքրիկ քաղաքի շրջանում կենտրոնացած նրա ջոկատներում 35-50 հազ.



*Նեստոր Մախնոն իր ջոկատայինների հետ*

մարդ էր հաշվվում, և հաճախ հենց նրանք էին ուկրաինայի հարավում որոշում պայքարի ելքը: Եվ այսպես՝ այն ժամանակ, երբ կանոնավոր բանակները կռվում էին քաղաքներ ու երկաթուղիներ գրավելու համար, իսկ պարտիզանները վերահսկում էին գյուղերը, ուկրաինայում ճանաչված միակ իշխանությունը զենքի իշխանությունն էր:

## Դիրեկտորիա

Սկրոպադսկուն վտարելով, Դիրեկտորիան հաղթանակած ապստամբների կոմիտեից սկսեց վերափոխվել վերականգնված ուկրաինական ժողովրդական Հանրապետության կառավարության: Ժամանակավորապես իրեն վերապահելով բարձրագույն գործադիր իշխանության պարտականությունները, Դիրեկտորիան կառավարություն ձևավորեց՝ *Վոլոդիմիր Չեխովսկու* գլխավորությամբ: Նոր կառավարության կազմը բավական պարզ ցույց տվեց, որ նրանում առաջատար դերն ստանձնելու են նոր սերնդի երիտասարդ քաղաքական գործիչները և ոչ թե Գրուշևսկու նման «նահապետները»:

1918 թ.-ի դեկտեմբերի 26-ին Դիրեկտորիան *հրապարակեց Դեկլարացիա*, որում հայտարարվում էր հեղափոխականության և կարգուկանոնի համակշռված վարքով ընթանալու մասին: Սակայն հեղափոխությունն էլի մնում էր առաջին տեղում: Փաստաթղթի առաջնակարգ կետերից մեկը պետական, եկեղեցական և խոշոր կալվածատիրական հողերը սեփականազրկելու խոստումն էր՝ հողը գյուղացիներին վերաբաժանելու նպատակով: Նվազ կարևոր չէր նաև կառավարության պարտավորությունը՝ գործել որպես բանվորների, գյուղացիների և «աշխատավոր մտավորականության» ներկայացուցիչ, և մտադրությունը՝ կալվածատերերին և արդյունաբերական բուրժուազիային զրկել ընտրական իրավունքից: Այդ նպատակով

կառավարությունն հրավիրում էր աշխատավորական պատգամավորների համագումար, որը պետք է գործեր որպես պետության ներկայացուցչական և օրենսդրական մարմին:

Սակայն նոր կառավարությունը նշված նպատակներից շատ քչերը հասցրեց իրագործել, նախքան ներքին և արտաքին բազմաթիվ անլուծելի խնդիրների բեռն տակ ճգնվելը: Ներքին քաղաքականության կարևորագույն խնդիրը, որ ուկրաինական քաղաքական կուսակցությունների մեջ պատակտում գցեց, *իշխանության ձևի ընտրության հարցն էր*. չափավոր սոցիալիստները խորհրդարանական ժողովրդավարության կողմնակից էին. ծախս արմատականները ձգտում էին խորհուրդների համակարգի ուկրաինական տարբերակին: Չափս արմատականները՝ Վիննիչենկոյի գլխավորությամբ, համառորեն պնդում էին, թե սոցիալական վերափոխումները պակաս կարևոր չեն ազգային ազատագրական խնդրից, այդ պատճառով էլ, խորհրդային համակարգը հիմք ընդունելու դեպքում բուլշևիկներին կարելի է զրկել իրենց գլխավոր հաղթաթղթից: Ավելի չափավոր ազգայնականները, որոնց հարում էր Պետլյուրան, պնդում էին, որ հենց սոցիալիստական փորձարկումներով տարվելը, և որպես արդյունք՝ բանակաշինության և պետական այլ ինստիտուտների կազմավորման հարցերի անտեսումը կենտրոնական Ռադայի տապալման պատճառ դարձան. հետևաբար, այդ սխալը չարժե կրկնել: Այսպիսով՝ *ուկրաինական մտավորականների վաղեմի երկրնորանքը՝ ինչն ընդունել որպես անկյունաքար՝ սոցիալական հեղափոխությունը, թե՛ ազգային ազատագրությունը, կրկին կռվախնձոր դարձավ և թշնամություն ու խառնաշփոթ սերմանեց նրա շարքերում:*

*Խմբավորումների միջև ընդհարումներ եղան նաև արտաքին քաղաքականության բնագավառում:* 1918 թ.-ի դեկտեմբերին Անտանտի ուժերը, գլխավորապես ֆրանսիացիները, Օդեսայում և սևծովյան այլ նավահանգիստներում 60 հազ.-անոց դեսանտ իջեցրեցին: Իրադարձությունների նման անսպասելի զարգացումը համաշխարհային պատերազմում հաղթած արևմտյան տերությունների որոշման հետևանք էր, որով ձգտում էին կասեցնել բուլշևիզմի տարածումը: Նրանց նպատակը անմիջական ռազմական օգնություն ցույց տալն էր իսկաբուլշևիկյան սպիտակ ուժերին, որոնք Դոնում նախապատրաստվում էին ռազմարշավի՝ հանուն «միասնական, անբաժանելի Ռուսաստանի» վերականգնման: Միաժամանակ, հյուսիսում գնալով ավելի պարզորոշ էին դառնում կրկին Ուկրաինա ներխուժելու բուլշևիկների պլանները: Հասկանալի է, որ Դիրեկտորիան ի վիճակի չէր միաժամանակ երկու ճակատում դիմադրություն ցույց տալ: Անհրաժեշտ էր որոշել, թե անկոչ հյուրերից ո՞ր մեկի հետ է պետք համաձայնության գալ: Ինչպես և սպասելի էր, Վիննիչենկոն և նրա ծախս արմատական կողմնակիցները հակված էին Մոսկվայի հետ միավորվելու, այն դեպքում, երբ չափավորներն ու բանակը պնդում էին համաձայնություն կնքել Անտանտի հետ: Սակայն այդ գործյան հանգույցը մի հարվածով կտրեցին բուլշևիկները. մինչ նրանց ներկայացուցիչները Դիրեկտորիայի հետ բանակցություններ էին վարում, նրանց գործերն հարձակվեցին Խարկովի վրա:

## Բուլշևիկների երկրորդ արշավանքը Ուկրաինայի վրա

Բուլշևիկների մոտենալու հետ Դիրեկտորիան իրեն դրսևորեց ճիշտ այնպես, ինչպես կենտրոնական Ռադան մեկ տարի առաջ: Կիևի անկմանը նախորդող վերջին դաժան ու հուսահատ օրերին, Դիրեկտորիան որոշեց ցուցադրել Ուկրաինայի, թեկուզև խորհրդանշական անկախությունը: 1919 թ.-ի հունվարի 22-ին Գալիչիանայում տոնվեց Ուկրաինական ժողովրդական Հանրապետության (ՈՒԺՀ) միավորումը («з'яву») նորաստեղծ Արևմտաուկրաինական ժողովրդական Հանրապետության (ԱՈՒԺՀ) հետ, իրականացնելով այն, ինչ դարեր շարունակ երազում էին Ուկրաինայի մտավորականության սերունդները և՛ արևելքում, և՛ արևմուտքում: Սակայն, քանի որ երկու հանրապետությունների կառավարություններն էլ հուսահատ պայքար էին մղում զոյատևելու համար, նրանց ապագան բավականին մռայլ էր: Ավելին, երկու կառավարություններն էլ մնում էին տարանջատ՝ իրենց բանակով, ուստիկանությամբ ու վարչակազմով: Միավորումն իրականացել էր միայն թղթի վրա:

Ուկրաինայի զինված ուժերի վիճակը, ինչպես որ մեկ տարի առաջ, նույնպես անբավարար էր: Բառացիորեն բուլշևիկների՝ երկրորդ անգամ Ուկրաինա ներխուժելու նախօրյակին, զինվորների խմբերը, որ մասնակցել էին հեթանոս վտարմանը, ցրվեցին իրենց տները՝ միամտորեն ենթադրելով, թե մեծագույն վտանգը բարեհաջող վերացված է, բուլտրովին չմտախոգվելով Դիրեկտորիայի ճակատագրով: Ուկրաինայի կառավարության քաղաքականությունը, որտեղ ակնառու երևում էր խորհուրդներին կողմնակից լինելու միտումները, առաջվանից էլ ավելի շատ էին նպաստում զինվորներին իրենց կողմը գրավելու գործում բուլշևիկյան քարոզիչների հաջողությանը: Հետևանքը եղավ այն, որ Դիրեկտորիայի մի քանի ամիս առաջվա



100 հազ.-անոց բանակը հասավ 25 հազ.-ի: Այդ ուժերի մեծ մասն առաջվա նման օտամաններն էին՝ իրենց ջոկատներով, որոնց նկատմամբ գլխավոր հրամանատար Պետլյուրան դժվարությամբ էր բավականին պայմանական հսկողություն իրականացնում: Ռազմաճակատում իրավիճակի հետագա վարտարացումը բերեց նրան, որ փետրվարի 2-ին Դիրեկտորիան թողեց Կիևը և տեղափոխվեց արևմուտք՝ Վիննիցա: Գարնանը, ռազմական մի շարք պարտություններից հետո դժվարությամբ կարողացավ մի փոքրիկ տարածք պահել Կամենեց-Պոդոլսկիի շրջանում:

Եվ կրկին ուկրաինական կառավարությունը հույսը դրեց օտար տերության վրա, որի՝ այն ժամանակ դեռ անհաղթ համարվող զորքը կենտրոնացած էր Օդեսայում: *Չգտելով շահել ֆրանսիացիների բարեհաճությունը, Դիրեկտորիան ազատվեց խորհրդայնամետ արմատական տարրերից:* Փետրվարի կեսերին հրաժարական տվեց Վիննիչենկոն, Չեխիվսկու գլխավորած սոցիալիստներին փոխարինեցին Սերիլյ Օստապենկոյի գլխավորած չափավոր ազատականները: Պետլյուրան այդ ժամանակ կառավարության ամենաազդեցիկ մարդը դարձավ: Շուտով պարզվեց, որ *ֆրանսիացիները, իրենց դաշնակից սպիտակգվարդիականների ազդեցությամբ, որոնք բոլշևիկներին հավասար առում էին ուկրաինական «անջատողականներին», ոչ պատրաստվում են Դիրեկտորիային օգնություն առաջարկել, ոչ էլ նույնիսկ ծանաչել:* Ապրիլի սկզբին այդ խնդիրն ընդհանրապես իմաստը կորցրեց, քանի որ հենց վերջերս բոլշևիկները կողմն անցած նախկին պետլյուրական օտաման Զիրիորկի ուժերի ճնշման տակ ֆրանսիացիները լքեցին Ուկրաինան այնպես անսպասելի, ինչպես որ հայտնվել էին:

*Ռազմական պարտությունների և դիվանագիտական անհաջողությունների հետևանքով ուկրաինացիների տարածայնություններն ու երկպառակությունը հասավ գագաթնակետին:* Երկու գլխավոր քաղաքական կուսակցություններից՝ սոցիալ-դեմոկրատներից և սոցիալիստ-հեղափոխականներից, իրենց առանձին կուսակցություն հայտարարելով առանձնացան ոչ մեծ, բայց շատ ազդեցիկ խմբեր: Խորհրդային ժրագիրն ընդունելով, նրանք բոլշևիկների կողմն անցան: Նրանց միացան այնպիսի հզոր օտամաններ, ինչպիսիք էին Անհելը, Ջելենին, Սոկոլովսկին, Տյուտյունսկին ու Զիրիորկը: Սոցիալ-դեմոկրատներից ծախսերն անջատվեցին 1919 թ.-ի հունվարին: Մոտավորապես հենց այդ ժամանակ սոցիալիստ-հեղափոխականներից առանձնացան մոտ 5 հազ., այսպես կոչված՝ բորոտրիստներ (պայքարողներ), կոչելով իրենց թերթի անվանումով՝ «Բորոտրա» («Պայքար»):

## Ջարդերը

1919 թ.-ին Ուկրաինայում տիրող անարխիայի վատթարագույն դրսևորումներից մեկը ջարդարության ալիքն էր: Հրեաների նկատմամբ արմատացած ատելությունը հեղափոխության ժամանակ հակաբոլշևիկյան ուժերի մոտ բորբոքում էին լայն տարածում գտած այն կարծիքով, թե բոլոր հրեաները համակրում են բոլշևիկներին: Սակայն հրեաները մեծ մասամբ ընդհանրապես հեռու էին քաղաքականությունից, իսկ մարքսիստների թվին պատկանող հրեաները սովորաբար մենշևիկներ էին: Միաժամանակ, չի կարելի ժխտել այն փաստը, որ հրեաներն անհամեմատ շատ էին բոլշևիկյան դեկավարությունում, պարենջոկատների հրամանատարների մեջ, և հատկապես՝ բոլորի կողմից ատելի Չեկայում (ЧК - Чрезвычайная комиссия - Արտակարգ հանձնաժողով):

Պատմաբանների հաշվումներով, Ուկրաինայում 1919-1920 թ.թ.-ների ջարդերի ընթացքում 35-50 հազ. հրեա է զոհվել: Ռուսաստանի հարավում և Ուկրաինայում քաղաքացիական պատերազմի պատմության մասնագետ Պիտեր Քենեզը նշում է, որ՝ «մինչ Գիտելի գալը, նորագույն ժամանակներում հրեաների զանգվածային ամենամեծ ջարդերը տեղի են ունեցել Ուկրաինայում՝ քաղաքացիական պատերազմի ժամանակ: Հրեաների կոտորածի համար պատասխանատվություն են կրում դեպքերի բոլոր մասնակիցները, նույնիսկ բոլշևիկները: Սակայն գոհերի ամենամեծ քանակը ծանրացած է Կամավորական (սպիտակների) բանակի վրա: Սպիտակների կազմակերպած ջարդերը տարբերվում էին նրանց հակառակորդների գործած զանգվածային սպանություններից. դրանք առավել կարգավորված, մանրակրկիտ մշակված ու կազմակերպված, այլ կերպ սասած՝ առավել ժամանակակից էին... Մնացած ջարդերը գյուղացիների ձեռքի գործն էր: Ընդ որում՝ Կամավորական բանակի կազմակերպած ջարդերին մասնակցում էին երեք տարբեր ուժեր՝ գյուղացիները, կոզակները և ռուս սպաները... Այդ վայրագությունների արտասովոր արյունալի բնույթը կարելի է բացատրել նրանով, որ մարդասպանների այդ երեք տեսակը լրացնում էին մեկը մյուսին»:

Չնայած ջարդերի մեծագույն պատասխանատվությունը կրում է Կամավորական բանակը, որ 1919 թ.-ի ամռանը դեպի Ուկրաինա էր շարժվում Դոնից, մի շարք ջարդեր էլ կազմակերպեցին Դիրեկտորիայի ուժերը (հատկապես օտամանների ոչ կանոնավոր ջոկատները): Խոշոր ջարդեր տեղի ունեցան Պրոսկուրովում, ժիտոմիրում, Չերկասիում, Ռիվնեում, Ֆաստովում, Կորոստենում և Բախմաչում: Դրանցից առավել վայրագ ու դաժան էր 1919 թ.-ի փետրվարին օտաման Սեմենենկոյի կազմակերպած Պրոսկուրովի կոտորածը, որի ժամանակ մի քանի հազար հրեա զոհվեց:

Ընդհանուր առմամբ, ուկրաինացիների կողմից կատարված ջարդարարությունը սպիտակների կազմակերպած ջարդերից տարբերվում էր երկու առանձնահատկությամբ: Նախ՝ հակառակ ռուսների կողմից նախապես մտածված, մանրակրկիտ նախապատրաստված գործողությունների, դրանք պահի տակ ծնված բռնությունների ինքնակամ բռնկումներ էին՝ բարոյալքված, հաճախ՝ հարբած աշխարհագրոյինների կողմից: Երկրորդը՝ դրանք տեղի էին ունենում հակառակ բարձրագույն հրամանատարության արգելող հրամանների: Ի տարբերություն սպիտակգվարդիական զենեարալների, ուկրաինացի սոցիալիստները, հատկապես սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը, որի անդամն էր և Պետլյուրան, հրեական գործիչների հետ ավանդաբար եկող բարեկամական հարաբերություններ ունեին: Եվ պատահական չէր, որ Դիրեկտորիան վերականգնեց հրեաների ազգային-մշակութային ինքնավարությունը, երկրի կառավարմանը մասնակցելու հրավիրեց ակնառու հրեա գործիչների (օրինակ՝ Առնոլդ Մարգոլինին ու Սոլոմոն Գուդելմանին), զգալի դրամական միջոցներ հատկացրեց կոտորածներից տուժածների համար և նույնիսկ բանակցություններ էր վարում սիոնիստների նշանավոր առաջնորդ Վլադիմիր ժաբոտինսկու հետ՝ հրեական միլիցիայի ջոկատներն իր բանակի կազմում ներառելու վերաբերյալ:

Սակայն ինչքան էլ հրեաների հետ հարաբերություններում բարի մտադրություններով առաջնորդվեց Պետլյուրան, նա ի վիճակի չէր զսպելու օտամաններին (ռազմա-դաշտային դատարանները, Սեմենենկոյի և մի քանի այլ պարտիզանական առաջնորդների մահապատիժը իրավիճակը չբարելավեցին), և նրանց ահավոր ոճիրները սովորաբար կապվում են նրա կառավարման հետ: Միևնույն ժամանակ, շատ հրեաների՝ մեծ մասամբ ռուսացածների համար, շատ ավելի հեշտ էր ջարդերի մեղքը բարդել հատկապես Պետլյուրայի և ուկրաինացիների վրա, քան թե՝ Դենիկինի և նրա զենեարալների:

## Բոլշևիկները

1918 թ.-ի սկզբին գերմանացիների կողմից վճռված, կազմալուծված ու ցրված ուկրաինական բոլշևիկները գրեթե մի տարի պատրաստվում էին վերադառնալու: Նրանց առջև ծառայած կարևորագույն խնդիրներից մեկը կազմակերպչական խնդիրն էր՝ Ուկրաինայում ազդեցությունն ընդլայնելու նպատակով առանձին բոլշևիկյան կուսակցություն՝ ստեղծել, թե՛ դառնալ ռուսաստանյան կուսակցության «տարածաշրջանային» հատվածը (ինչը համառորեն պնդում էր Լենինն ու ինչը պահանջում էր ռուսական կենտրոնամետ ավանդույթը): Ապրիլին Տազանոզում կայացած կուսակցական գաղտնի խորհրդակցությունում, որտեղ մեծամասնություն էր կազմում այսպես կոչված Կիևյան ֆրակցիան՝ ուկրաինացի Սկրիպնիկի գլխավորությամբ (որ ավելի հակված էր ազգային խնդիրներին), ձայների մեծամասնությամբ որոշում կայացվեց ստեղծել ուկրաինական առանձին կազմակերպություն: Սակայն հուլիսին Մոսկվայում կայացած ուկրաինական բոլշևիկների համագումարում, որը հայտարարեց Ուկրաինայի կոմունիստական (բոլշևիկների) կուսակցություն՝ ՌԿ(բ)Կ, ստեղծելու մասին, հաղթեց նկատերինուսլավյան ֆրակցիան, որը խիստ կենտրոնամետ գծի կողմնակից էր և բացարձակապես բաղկացած էր ռուսներից: Տազանոզի խորհրդակցության որոշումը չեղյալ համարվեց, ՌԿ(բ)Կ-ն հայտարարվեց ռուսական կոմունիստական կուսակցության բաղկացուցիչ մասը՝ որի կենտրոնը Մոսկվան էր:

Չեթմանական վարչակարգի անկումը, գերմանացիների հեռանալն ու Դիրեկտորիայի ստեղծումը բոլշևիկների մեջ նոր վեճերի պատճառ դարձավ: Մի ֆրակցիան՝ Դմիտրի Մանուիլսկու և Վլադիմիր Ջատոնսկու գլխավորությամբ, գտնում էր, որ Ուկրաինայում բոլշևիկները դեռևս շատ թույլ են (1918 թ.-ի հուլիսին ընդամենը 4364 հոգի էին) և անհրաժեշտ էր համարում խաղաղ հարաբերություններ հաստատել Դիրեկտորիայի հետ, որպեսզի ժամանակ շահեն կուսակցությունն ամրապնդելու համար: Մյուս ֆրակցիան՝ Պյատակովի և Անտոնով-




Օվսիենկոյի գլխավորությամբ, Լենինի հեղինակությունը շահարկելով, համառորեն պնդում էին անհապաղ ներխուժել Ուկրաինա և Դիրեկտորիային հնարավորություն չտալ ուժեր կուտակելու: Երկար տատանվելուց հետո, 1918 թ.-ի նոյեմբերի 20-ին Մոսկվան թույլատրեց կազմավորել նոր ուկրաինական խորհրդային կառավարություն: Սկզբում այն գլխավորում էր Պյատակովը, բայց շուտով նրան փոխարինեց ռուսացած ռումինական բուլղարացի հրիստիան Ռակովսկին: Գրեթե բոլոր կարևոր պաշտոնները կառավարությունում զբաղեցրեցին ռուսները: *Դեկտեմբերին բուլշևիկներն արդեն պատրաստ էին նվաճելու Ուկրաինան:*

Մարտական գործողությունների սկզբում բուլշևիկների ուժերը՝ Անտոնով-Օվսիենկոյի հրամանատարությամբ, կազմված էին ընդամենը Կարմիր բանակի մի քանի ստորաբաժանումներից և տարբեր տեղերում ցրված ոչ կանոնավոր ջոկատներից: Սակայն Ուկրաինայում խորանալուն զուգընթաց, տեղական պարտիզանական կազմավորումները մեկը մյուսի ետևից լքում էին Դիրեկտորիան և միանում էին զավթիչներին: 1919 թ.-ի հունվարի 3-ին բուլշևիկներին անձնատուր եղավ Խարկովը, իսկ փետրվարի 5-ին նրանք մտան Կիև: Այդ պահին նրանց բանակում մոտ 25 հազ. մարդ էր հաշվվում: Հետագա մի քանի շաբաթում նրանց թիվն ավելի քան կրկնապատկվեց, երբ նրանց միացան պարտիզանական գլխավոր պարագլուխները՝ Զրիհորևն ու Մախնոն: Նրանց աջակցությամբ բուլշևիկներն հունիսին արդեն կարողացան վերահսկողություն հաստատել գրեթե ողջ Ուկրաինայում:

Իր երկրորդ գալու ժամանակ խորհրդային իշխանությունն Ուկրաինայում դիմացավ մոտ յոթ ամիս: Այդ ընթացքում նա կարողացավ ամբողջովին դրսևորել իր ունակությունները և այնքան ճակատագրական սխալներ թույլ տվեց, որքան մյուս իշխանությունները, որոնք նույնպես ձգտում էին մնալ Ուկրաինայում: Նոր կառավարությունը, որ գրեթե ամբողջովին բաղկացած էր ռուսներից, հրեաներից և այլ ոչ-ուկրաինացիներից, աշխատում էր այստեղ վարել նույն քաղաքականությունը, որ փորձարկվել էր Ռուսաստանում, հաշվի չառնելով՝ թե այն համապատասխանում է տեղական պայմաններին, թե՛ ոչ: Նրա ռուսական կողմնորոշումն հատկապես աչքի ընկավ հացի համար «խաչակրաց արշավանքի» ժամանակ, ինչպես այն կոչեց Լենինը: Քանի որ 1919 թ.-ին ռուսական քաղաքները սննդամթերքի սուր կարիք էին զգում, Մոսկվայից և Պետրոգրադից մոտ 3 հազ. բանվոր ուղարկվեց Ուկրաինա՝ միակ առաջադրանքով՝ բռնագործելու հացը՝ անհրաժեշտության դեպքում ուժ գործադրելով, ճիշտ այնպես, ինչպես մեկ տարի առաջ վարվում էին գերմանացիները: Սակայն բուլշևիկներն ավելի էին խորացնում նրանց սխալները: Նրանք պատերազմ հայտարարեցին մասնավոր սեփականության «բուրժուական» սկզբունքին՝ արմատավորելով կոլտնտեսությունները: Ինչպես և սպասելի էր, այդ գործողությունները կատաղության հասցրեցին ոչ միայն կուլակներին, այլև միջակ գյուղացիությանը:

Ռակովսկու կառավարությունը կարողացավ իրենից վանել նաև ուկրաինական ծախ մտավորականությանը՝ առաջին հերթին բորոտրիստներին, հրաժարվելով կառավարման ոլորտում ուկրաիններեն լեզուն գործածելուց և անտես առնելով ազգային կրթության ու մշակույթի պահանջները: Քննադատության և հակադրվելու աճին բուլշևիկները պատասխանեցին նրանով, որ կապից արձակեցին բոլորին ատելի Չեկան՝ լատիշ Մարտին Լացիսի գլխավորությամբ, որի կամայականությունները հալածանքների ու «դասակարգային թշնամուն» վերացնելու գործում սահմաններ չէր ճանաչում: Միանգամայն կանխատեսելի հետևանքներն սպասեցնել չտվեցին. ընդամենը մի քանի ամիս կռվելով բուլշևիկների բանակում, գյուղացիական ջոկատները՝ բորոտրիստների և սոցիալ-դեմոկրատների գլխավորությամբ, սվիինները շրջեցին նրանց դեմ: Հատկապես զգալի եղավ մարտ ամսին Զրիհորևի և Մախնոյի հեռանալը: Ամռան շեմին արդեն գրեթե ամբողջ ուկրաինական գյուղերը հակաբուլշևիկյան ապստամբության բողբեր մեջ էին:

Այդ պահին Ուկրաինա ներխուժեց ևս մի զավթիչ: Հունիսին Դոնի կողմից սկսվեց գեներալ Դենիկինի սպիտակ գվարդիայի հարձակումը, որ մի ամիս անց գրեթե ամբողջովին գրավեց Չախափնյա Ուկրաինան: Այդ ընթացքում Աջափնյակից էր արշավում Պետլյուրայի վերակազմավորված բանակը: Երբ բուլշևիկներն արդեն ի գորու չէին դիմադրելու, ուկրաինական խորհրդային կառավարությունը, Լենինի հրամանով, 1919 թ.-ի օգոստոսի կեսերին լուծարվեց, իսկ կառավարության անդամները վերադարձան Մոսկվա: Նախկին կառավարության անդամներից մեկը՝ Մանուիլսկին, խոսելով երկու տարվա մեջ բուլշևիկների այդ երկրորդ տապալման մասին Ուկրաինայում, ընկճված ու հուսահատ նկատում է. «Ամեն զարնան մենք հերթական քատերախումբն ենք պատրաստում դեպի Ուկրաինա, որն իր հերթական շրջագայությունից հետո, աշնանը վերադառնում է Մոսկվա»:





## Պայքարն Արևմուտքում

Ռուսական կայսրության կործանումից մոտ 20 ամիս անց, 1918 թ.-ի հոկտեմբերին, համաշխարհային պատերազմում ջախջախիչ պարտություն կրելով, *փլուզվել սկսեց Ավստրո-Յունգարական կայսրությունը*: Հաբսբուրգների իշխանության տակ գտնվող ժողովուրդները, այդ թվում և *արևմտյան ուկրաինացիները, ինքնուրույն անկախ պետություն ստեղծելու գործին ձեռնամուխ եղան*՝ նախքան իրենց տիրակալները գլխի կրճկեն, որ վերջի սկիզբն է մոտենում: Երբ արևմտյան ուկրաինացիները փորձեցին Արևելյան Գալիչիանայում կործանված կայսրության փլատակների վրա իրենց անկախ պետականությունն ստեղծել, հանդիպեցին դաժան դիմադրության և հայտնվեցին նույն իրավիճակում, ինչ վիճակում որ գտնվում էին նրանց հայրենակիցներն արևելքում: Սակայն մնացած բոլոր առումներով նրանց գործունեությունն զգալիորեն տարբերվում էր արևելաուկրաինականից:

Ինչպես և սպասելի էր, *լեհերը նույնպես պահանջներ ներկայացրեցին Արևելյան Գալիչիանայի նկատմամբ*: Արդյունքում, ի տարբերություն արևելքի իրադարձությունների, երկու ժողովուրդների միջև բախում առաջացավ տարածքների համար և ոչ թե տարբեր կուսակցությունների, կառավարությունների ու գաղափարախոսությունների ուժասպառ անող պայքար՝ հանուն «մարդկանց սրտի ու մտքի»:

Հավանաբար, շնորհիվ այն բանի, որ *լեհերն ու ուկրաինացիները*, ավստրիական սահմանադրական կարգերի դպրոցն անցնելով, սովորել էին հարգել ու զնահատել կարգուկանոնը, մասնակցել կառավարման գործին, կայսրության կործանումը չէր ուղեկցվում այնպիսի սոցիալ-տնտեսական տեղաշարժերով, քաոսով, անկարգություններով ու դաժանություններով, ինչպես որ այն տեղի էր ունենում արևելքում: Արևելյան Գալիչիանայում և ուկրաինացիների, և *լեհերի* համար խնդիրները պարզորոշ դրված էին ըստ առաջնահերթության. առաջին տեղում ազգային խնդիրներն էին, սոցիալ-տնտեսականները մնում էին հեռանկարում: Լեհ-ուկրաինական բախումը դաժան էր, բայց՝ կարգավորված. այն վճռվում էր գլխավորապես կանոնավոր բանակների ուժերով, որոնք մարտնչում էին ռազմաճակատներում և խաղաղ բնակչությունն զգալիորեն քիչ կորուստներ էր կրում: Ըստ էության, դա ամրության ու դիմացկունության փորձություն էր 3,5 մլն ուկրաինացիների և 18 մլն *լեհերի* համար, որոնք միաժամանակ պայքարում էին նաև չեխերի, գերմանացիների ու լիտվացիների դեմ, որոնք էլ իրենց հերթին չէին ցանկանում տարրալուծվել լեհական պետության մեջ:

Երբ պարզ դարձավ Ավստրիայի կործանման անխուսափելիությունը, 1918 թ.-ի հոկտեմբերի 18-ին Արևելյան Գալիչիանայից և Բուկովինայից պատգամավորները, կուսակցությունների առաջնորդներն ու եկեղեցու հոգևոր պետերը ձևավորեցին Ուկրաինայի Ժողովրդական Ռադան (*Українська Народна Рада*), որը պետք է գործեր որպես ուկրաինացիների ներկայացուցչական մարմին: Նրանք հայտարարեցին նաև, որ մտադիր են միավորել արևմտաուկրաինական բոլոր տարածքներն ու առայժմ սովորական փոխհարաբերություններ պահպանել այն ամենի հետ, ինչ որ կմնա Հաբսբուրգների կայսրությունից: Լեհերն այդ ժամանակ նույնպես պատրաստվում էին տիրանալ Լվովին և Արևելյան Գալիչիանային:

Ժողովրդական Ռադայի օրինական ու կարգապահ, իրենց կարծիքով՝ դանդաղ գործողություններից դժգոհ, «սիջյան հրաձիգների» երիտասարդ սպաների մի խումբ՝ կապիտան Դմիտրո Վիտովսկու գլխավորությամբ, որոշեց գործն իր ձեռքը վերցնել: Հոկտեմբերի 31-ի երեկոյան նրանք հապճեպ հավաքեցին Լվովի և շրջակայքի ավստրիական ստորաբաժանումներում ծառայող ուկրաինացի մարտունակ զինվորներին և քաղաքն առան իրենց հսկողության տակ: Նոյեմբերի 1-ի առավոտյան քաղաքացիներն արթնացան ու տեսան խորհրդարանի շենքի վրա ծածանվող ուկրաինական դրոշը, իմացան, որ քաղաքի բոլոր կարևոր հաստատություններն ուկրաինացիների ձեռքն է, և ամենուրեք փակցված պլակատների վրա կարդացին, որ այսուհետև իրենք ուկրաինական պետության քաղաքացիներ են: Նման դեպքեր տեղի ունեցան նաև Արևելյան Գալիչիանայի այլ բնակավայրերում:

Ուկրաինայի բնակչությունը խանդավառությամբ ընդունեց նոյեմբերի 1-ի իրադարձությունը: Հրեաներն ընդունում էին ուկրաինացիների անկախությունը, կամ էլ չեզոք էին մնում: Փոխարենը՝ անսպասելի ցնցումից խելքի գալով, Լվովում *լեհերն* սկսեցին ակտիվ դիմադրություն ցույց տալ: Դաժան մարտեր սկսվեցին ուկրաինական զորքի և *լեհերի* զինվորական ուժերի միջև բառացիորեն յուրաքանչյուր շենքի համար: Հյուսիս-արևմուտքում, Արևելյան Գալիչիանայի և բուն լեհական տարածաշրջանի սահմանում, *լեհերը* գրավեցին գլխավոր երկաթուղային հանգույց Պերեմիշլը: Այդ ընթացքում ռուսիական զորքերը գրավեցին Բուկո-

վինայի մեծ մասը, Անդրկարպատները մնաց հունգարացիների ձեռքում: Այնուամենայնիվ, Արևելյան Գալիչիանայի մեծ մասը դեռ մնում էր ուկրաինացիներին, որոնք համառորեն շարունակում էին ստեղծել իրենց պետությունը: Նոյեմբերի 9-ին, ուկրաինական բոլոր կուսակցությունները, պայմանավորվելով համագործակցել կառավարություն ձևավորելու գործում, նշանակեցին նախարարների ժամանակավոր խորհուրդ («Генеральный секретариат»)՝ փորձառու պատգամավոր *Կոստ Լևիցկու* գլխավորությամբ: Չորս օր հետո պաշտոնապես հռչակվեց նոր պետություն՝ *Արևմտաուկրաինական Ժողովրդական Հանրապետությունը (ԱՌԺՀ)*:

Դեռևս չկազմավորված նորաստեղծ պետությունը խորտակիչ հարված ստացավ 1918 թ.-ի նոյեմբերի 22-ին, երբ 1400 ուկրաինացի զինվոր, որ մեծ մասամբ 200 հազ.-անոց քաղաքում դժվարությամբ կողմնորոշվող գեղջուկ պատանիներ էին, չկարողացան ճնշել համալրում ստացած *լեհերի* ապստամբությունը, և ստիպված եղան թողնել Լվովը: 1919 թ.-ի հունվարին կառավարության նոր նստավայր դարձավ Ստանիսլավը, որտեղ էլ ձեռնարկվեցին կառավարության աշխատանքը կարգավորելու և մարտունակ բանակ ստեղծելու առաջին լուրջ քայլերը:

Իր ութամսյա գոյության ընթացքում ԱՌԺՀ-ն 4 մլն բնակչություն ունեցող պետություն էր, որից 3 մլն-ը ուկրաինացիներ էին: Կառավարության ժամանակավոր մարմինը բավական արագ փոխարինվեց լրիվ կազմավորված և գործուն պետական համակարգով: *Նոյեմբերի 22-26-ին ուկրաինացիների վերահսկողության տակ գտնվող տարածքներում անցկացվեցին Ուկրաինական Ժողովրդական Ռադայի ընտրությունները* (ընտրվեց 150 պատգամավոր), որն էլ դարձավ ներկայացուցչական և օրենսդրական գլխավոր մարմինը: Ժողովրդական Ռադան կազմված էր առավելապես միջակ գյուղացիությունից, պատկառելի թիվ էին կազմում հոգևոր դասի ներկայացուցիչները և իհարկե՝ մտավորականությունը, որ համենայն դեպս փոքրամասնություն էր կազմում: Գաղափարախոսական առումով, պատգամավորների ճնշող մեծամասնությունը, նույնիսկ սոցիալիստները, հակված էին դեպի ազգային ազատականությունը: Եթնիկական առումով Ռադան զրեթե ամբողջովին կազմված էր ուկրաինացիներից, բանի որ *լեհերն* ընդհանրապես բոյկոտեցին ընտրությունները, իսկ գերմանացիներն ու իրեաները չմասնակցեցին՝ խուսափելով *լեհ-ուկրաինական* հակամարտության մեջ ներքաշվելուց: *Ռադայի նախագահը՝ Եվին Պետրուշևիչը*, որ իրավաբան էր և *Վիննայի խորհրդարանի նախկին անդամ*, միաժամանակ հանդիսանում էր և *հանրապետության նախագահը*:

Ի տարբերություն արևելաուկրաինական կառավարությունների, *ԱՌԺՀ-ն շատ արագ կարգավորեց տեղական կառավարման մարմինների աշխատանքը*: Որպես հիմք վերցվեց ավստրիական մոդելը՝ գալիցիացիները արմատական փորձարկումների կողմնակից չէին, ինչը սովորական բան էր արևելքում: Վարչակազմը համալրվեց ուկրաինացիներով, բայց և հաճախ՝ լեհական արիեստավարժ մասնագետներով: Չնայած կատաղի մարտեր մղելու անհրաժեշտությանը, արևմտաուկրաինական պետությանը հաջողվեց կայունություն և կարգուկանոն հաստատել իր տարածքում: Իսկապես, արևելաեվրոպական նորաստեղծ պետություններից շատ քչերին հաջողվեց այդպես վարպետորեն, արագ և արդյունավետ կարգավորել վարչական համակարգը (չխոսելով արդեն արևելաուկրաինական կառավարությունների մասին): Դա իրավամբ գալիցիացիների հասարակական կազմակերպվածություն դրսևորելու կարողության արդյունք էր, որ բավական բարձր մակարդակի էր հասցվել նախապատերազմական տասնամյակների ընթացքում:

Ժողովրդական Ռադայի օրենսդրական կարևորագույն քայլերից էին բոլոր քաղաքացիների ընտրելու լիարժեք իրավունքի երաշխիքը և ազգային փոքրամասնություններին լայն իրավունքներով ապահովելը, մինչև իսկ՝ արձան քաղիք խորհրդարանում տեղերի 30 %-ի հատկացումը: Այդ միջոցառումները դրական արձագանք գտան հատկապես հրեա բնակչության շրջանում. Լվով վերադարձած *լեհերի* կազմակերպած եռօրյա ջարդերից հետո հրեաները սկսեցին թեքվել ուկրաինացիների կողմը: Արևմտաուկրաինական բանակում ստեղծվեց 1000 հոգուց բաղկացած հրեական առանձին ստորաբաժանում: Վճռականորեն և առանց քաշքշուկի լուծվեց հողի կարևորագույն հարցը. խոշոր մասնավոր հողատարածքները, որ մեծ մասամբ պատկանում էին *լեհերին*, բռնագրավվեց և վերաբաժանվեց սակավահող և հողազուրկ գյուղացիներին: Հենց սկզբից *պարզ էր և այն, որ ԱՌԺՀ-ն կմիավորվի արևելաուկրաինական պետության հետ*: 1919 թ.-ի հունվարի 22-ին, ինչպես արդեն գիտենք, այդ իրադարձությունը տեղի ունեցավ:

Հավանաբար, արևմտաուկրաինական պետության *ամենատպավորիչ ձեռքբերումը*



**Ուկրաինական Գալիցյան բանակի ստեղծումը** էր: Եվ դարձյալ, ի տարբերություն արևելյան ուկրաինացիների, գալիցիացիները բավական արագ հասկացան, որ իրենց անհրաժեշտ է ունենալ ուժեղ, մարտունակ կանոնավոր բանակ: Քանի որ ավստրիական բանակում ծառայող ուկրաինացի զինվորների մեծ մասն իտալական ռազմաճակատում էին և դեռ տուն չէին վերադարձել, ուստի վարժեցված մարտիկների լուրջ պակաս էր զգացվում: Բայց և այնպես, ընդհանուր զորահավաքը հիմնալի արդյունք տվեց. զարմանք բանակում արդեն 100 հազ.-ից ավել մարդ կար, որոնցից 40 հազարն անհրաժեշտ ռազմական պատրաստություն էին անցել: Բայց կային նաև լուրջ խնդիրներ, կապված սպայական կազմի և զինվորական հանդերձանքի հետ: Արևմտաուկրաինական բնակչության սոցիալ-տնտեսական հետամնացության պատճառով ավստրիական բանակում ուկրաինացի սպաների թիվը արտակարգ քիչ էր: 1000 սպայից ընդամենը երկուսն էին ուկրաինացի (լեհերը՝ 1000-ից 27-ն էին): Ավելին՝ ուկրաինացիներից շատերը կրտսեր սպայական կազմում էին: Այդ իսկ պատճառով ԱՌԺԳ-ն օգնության կարգով դիմեց արևելյան ուկրաինացիներին, ինչպես օրինակ՝ ցարական բանակի գեներալ Սիխայլո Օմելյանովիչ-Պավլենկոյին և նախկին սպաներին՝ հրավիրելով բարձրագույն հրամանատարական և շտաբային պաշտոնների: Միջին կորպուսը մասնակիորեն համալրվեց ավստրիացի և գերմանացի սպաներով, որոնք համաշխարհային պատերազմի ավարտից հետո պարապ էին մնացել: Սակայն սպաների մեծ մասը գալիցիացիներ էին, և, որ հատկապես կարևոր է նշել, այդ քառասյին և սոցիալական լարված ժամանակներում նրանց և զինվորների միջև պարզ ընկերական հարաբերություններ էին հաստատվել, և պատճառը երկի այն էր, որ երկու կողմն էլ գեղջկական ծագում ունեին: Ձենքն ու զինամթերքը, հանդերձասպասքը (ամուսնիցիան) հիմնականում վերցված էին ավստրիական բանակի պահուստից, ծան ձեռք էր բերվել Գալիչինայով տուն վերադարձող նախկին օկուպացիոն բանակի գերմանական և ավստրիական զորքերի զինվորներին զինաթափելու ճանապարհով:

### **Լեհ-ուկրաինական պատերազմը**

Այս հակամարտությունը կարելի է բաժանել երեք փուլի: *Առաջին փուլում, որ շարունակվեց մինչև 1919 թ.-ի փետրվարը, դա պատերազմ էր ուկրաինական մեծամասնության և լեհական փոքրամասնության միջև Արևելյան Գալիչինայում:* Արագ և արգասավոր կազմակերպված զորահավաքը ուկրաինացիներին նշանակալից առավելություն տվեց և լեհերին ստիպեց պաշտպանվել: Սակայն լեհերը, մարտերում իրենց արդյունավետ մարտավարության, հմուտ ղեկավարության և համառության շնորհիվ, կարողացան ի չիք դարձնել ուկրաինական հրամանատարության դանդաղաշարժ և հնարամտությունից զուրկ հարձակողական գործողությունները:

*Երկրորդ փուլում՝ 1919 թ.-ի մարտից մինչև մայիս ամիսը ներառյալ, պատերազմն առավել ծավալուն բնույթ կրեց և մղվում էր արդեն Լեհաստանի զորքերի և գալիցյան ուկրաինացիների միջև:* Լեհաստանից պատկանելի օգնություն ստանալով, լեհերը թվային գերակշռության հասան: Այդ շրջանի վճռորոշ իրադարձությունը գեներալ Յոզեֆ Գալերի բանակն ուկրաինացիների դեմ շրջելն էր: Ֆրանսիայում լեհ ռազմագերիներից կազմավորված այդ 60 հազարանոց միավորումը գերազանց հանդերձավորված էր և հրամանատարները հիմնականում ֆրանսիացիներ էին: Չնայած այդ բանակը ֆրանսիացիները Լեհաստան էին ուղարկել բոլշևիկների դեմ կռվելու համար, սակայն լեհերն այն ուղղեցին ուկրաինացիների դեմ, պատճառաբանելով, թե բոլոր ուկրաինացիներն էլ բոլշևիկ են կամ բոլշևիկներին համակրող: Իսկ ապրիլ-մայիսին լեհերը ճեղքեցին Լվովի պաշարումը և Գալիչինայի բարոյալքված բանակը հետ շարտեցին մինչև Զբրուչ գետը:

*Յունիսի 8-ին, երբ ուկրաինական զորքը, նորանշանակ հրամանատար գեներալ Ալեքսանդր Գրեկովի գլխավորությամբ անսպասելի հակահարձակման անցավ, սկսվեց այդ պատերազմի ավարտական փուլը:* Ժողովելով նյութական պաշարի, ֆիզիկական ու հոգևոր ուժերի վերջին մնացորդները, գալիցիացիները Չոռոկովի շրջանում գրոհեցին լեհական գերակշիռ ուժերի վրա: Այդ հարձակումը հնարավորություն տվեց ուկրաինացիներին գրեթե մինչև Լվով հասնել, սակայն հաղթական ավարտին չհասավ ոչ այնքան լեհերի՝ գնալով սաստկացող դիմադրության պատճառով, որքան ռազմամթերքի ու հանդերձանքի պակասության հետևանքով: Գրեկովի ջոկատները, որ ամեն մի զինվորին 5-10 փամփուշտ էր մնացել և ոչ մի երկրից նյութատեխնիկական օժանդակության հույս չունեին, ստիպված էին նահանջել, վերջակետ դնելով Գալիցյան բանակի ամենափառավոր էջին: *Յուլիսի կեսերին լեհերը կրկին գրավեցին գրեթե ողջ Արևելյան Գալիչինան,* իսկ արևմտաուկրաինական բանակը կրկին

կենտրոնացավ Զբրուչի մոտ:

Այս աղետալի իրավիճակում քաղաքացիական ղեկավարությունը (հունիսի 9-ին, որպեսզի կառավարությունն ավելի արդյունավետ աշխատի, Պետրուշկիչին ղիկատարական լիազորություններ էին ընձեռնվել) բանակին առաջարկեց անցնել ռումինական սահմանը՝ ազատագրելի կարգավիճակով: Նման ելքը բանակին չէր գոհացնում, նա պնդում էր պայքարել հանուն ուկրաինական պետականության և մտադիր էր, անցնելով Արևելյան Ուկրաինա, Պետլուրայի հետ միասին պայքարել բոլշևիկների դեմ: *1919 թ.-ի հուլիսի 16-ին, լեհական իրենականության տակ, Գալիցյան բանակը և հազարավոր քաղաքացիներ Զբրուչ գետով անցան Արևելյան Ուկրաինա:* Արևելյան Գալիչինայի համար զինված պայքարը, որ մոտ 15 հազ. ուկրաինացու և 10 հազ. լեհի կյանք արժեցավ, ավարտվեց:

### **ԱՌԺԳ-ի դիվանագիտական գործունեությունը**

Զինված հակամարտության ողջ ընթացքում, և նույնիսկ նրա ավարտից հետո, *արևմտաուկրաինական կառավարությանը* էր լքում *միջազգային ճանաչման հասնելու հույսը:* Նրա ավատատեությունը հիմնվում էր այն փաստի վրա, որ հաղթանակած Անտանտն ընդունեց պրեզիդենտ Վիլսոնի նշանավոր «14 կետը», որոնցից մեկը երաշխավորում էր բոլոր ժողովուրդների ազգային ինքնորոշման իրավունքը: Բայց եթե Անտանտի քաղաքական ընդհանուր սկզբունքները համընկնում էին Ուկրաինայի շահերին, ապա նրա առաջատար անդամի՝ Ֆրանսիայի քաղաքական շահերը գերադասությունը տալիս էին լեհերին: Զգտելով խոչընդոտել հզոր Գերմանիայի վերականգնմանը, ֆրանսիացիները մտադիր էին այդ հնարավորությունը բացառել՝ Եվրոպայի արևելքում լեհական ուժեղ պետություն ստեղծելով: Եվ եթե այդպիսի Լեհաստանին անհրաժեշտ էր կուլ տալ Արևելյան Գալիչինան, ուրեմն հարկ էր թույլ տալ նրան այդ բանն անելու:

Չնայած արևմտյան և արևելյան ուկրաինացիները Փարիզի խաղաղության կոնֆերանսին (որ հրավիրվեց 1919 թ.-ի հունվարին՝ Եվրոպայի քաղաքական քարտեզը վերածնելու նպատակով) ներկայացել էին միասնական պատվիրակությամբ, բայց գալիցիացիներն իրենց նպատակներն իրականացնելու համար գործում էին ինքնուրույն: Արևմտյան ուկրաինացիները ձգտում էին, որ Անտանտը ճանաչի իրենց պետականության իրավունքը և օգնի կարգավորելու հարաբերությունները լեհերի հետ: Սակայն ուկրաինական երկու պատվիրակություններն էլ Փարիզի կոնֆերանսում բարյացակամության չհանդիպեցին: Միայն Անգլիան էր, որ դեմ լինելով Ֆրանսիայի լեհական պլաններին և շահագրգռված՝ գալիցյան նավթով, որոշ ժամանակ աջակցում էր ուկրաինացիներին, սակայն ընտրություններում Լոյդ Ջորջի վարչակազմի պարտությունից հետո ուկրաինացիներն այդ հույսից էլ զրկվեցին: Միևնույն ժամանակ՝ լեհերը, որոնց հաջողվեց ծայրահեղ ազգայնականների առաջնորդ և թունդ ուկրաինատյայց Ռոման Դոնվսկու լարված ջանքերի շնորհիվ սերտ կապեր հաստատել արևմտյան տերությունների հետ, ամեն ինչ արեցին՝ արևմտյան ուկրաինացիներին վարկաբեկելու համար:

Լեհերն ապացուցում էին, որ ուկրաինացիներն ինքնակառավարման համար չափազանց հետամնաց են, որ նրանք ոչ այլ ինչ են, քան «գերմանացիների հնարանք», և վերջապես, որ նրանք ազգովին բոլշևիկյան ոգով են տոգորված: Պետք է նկատել, որ լեհական քարոզչությունն հասավ իր նպատակին, քանի որ Եվրոպացիները գրեթե ոչինչ չգիտեին Ուկրաինայի և ուկրաինացիների մասին: Այդ պատճառով էլ զարմանալի չէ, որ *1919 թ.-ի հունիսի 25-ին Անտանտի դեսպանների խորհուրդը ճանաչեց ողջ Արևելյան Գալիչինան օկուպացնելու Լեհաստանի իրավունքը՝* «քաղաքային բնակչությանը բոլշևիկյան հրոսակախմբերի սպառնալիքից պաշտպանելու համար»: *Սակայն խորհուրդը չհամաձայնեց Արևելյան Գալիչինան ամբողջովին և անվերապահորեն Լեհաստանի կազմի մեջ մտցնելուն:* Միայն իրավունք տրվեց այդ տարածքը կառավարելու՝ պայմանով, որ ապահովի բնակչության իրավունքն ու բավարար ինքնավարության երաշխիք տա: Արևելյան Գալիչինայի ճակատագրի վերջնական որոշումը մնում էր ապագային:

Եթե մի հետադարձ հայացքով քննենք պատմական հանգամանքները, ապա պարզ կդառնա, որ ուկրաինացիների անհաջողությունները՝ իրենց նպատակների իրագործման ճանապարհին, անակնկալ չէին: Արևելյան Գալիչինայում, որտեղ ուկրաինացիներն առավել լավ էին կազմակերպված և ազգային ինքնագիտակցությունն առավել բարձր էր, խնդիրը միայն ու միայն թվական ցուցանիշների մեջ էր. 3.5 մլն ուկրաինացիները դժվար թե կարողանային դիմագրավել տնտեսապես ու քաղաքականապես առավել զարգացած և թվով 6 անգամ



ավել լեհերին: Պայքարն սկսելիս, գալիցիացիներն հույսը դրել էին երկու ուժերի օժանդակության վրա՝ Արևելյան Ուկրաինայի, որտեղից ռազմական և նյութատեխնիկական օգնության էին սպասում և որը պետք է հավասարակշռեր լեհերի թվային առավելությունը, և Անտանտի, որ բարձրաձայն տարփողում էր ինքնորոշման սկզբունքն հարգելու մասին. նրանցից սպասում էին, որ առնվազն կճանաչեն իրենց իրավունքները:

Սակայն եղավ այնպես, որ Արևմուտքը, ուսնահարելով իր սկզբունքները, գերադասեց Լեհաստանին, իսկ արևելյան ուկրաինացիները չկարողացան նույնիսկ սեփական պետությունը պահել՝ չխոսելով արդեն գալիցիացիներին օգնելու մասին: Այսպիսով, *Գալիչինայի ուկրաինացիները, որ պարզորոշ ցուցադրեցին ինքնակառավարման իրենց կարողությունը, իրենցից անկախ պատճառներով չկարողացան պահպանել իրենց պետականությունը*: Սա իհարկե չի նշանակում, թե նրանց բոլոր գործողություններն անթերի էին. *ղեկավարության դանդաղությունը, մտածված ռազմավարության բացակայությունն ու Արևմուտքի հետ ուշացած դիվանագիտությունը շատ բաներում պայմանավորեցին նրանց անհաջողությունը*: Սակայն հազիվ թե արժե կասկածել, որ եթե չլիներ լեհերի ճնշող գերազանցությունը, Արևմտաուկրաինական ժողովրդական Յանրապետությունը կկարողանար իր արժանի տեղը գրավել արևելաեվրոպական նորաստեղծ պետությունների շարքում:

## Հանգուցալուծում

*Գալիցիացիների նահանջը դեպի Արևելյան Ուկրաինա և միավորումը Դիրեկտորիայի ուժերի հետ, ուկրաինական ազգային շարժման պատմության մեջ արտակարգ կարևոր իրադարձություն հանդիսացավ*: Առաջին անգամ կայացավ Արևելյան և Արևմտյան Ուկրաինայի եղբայրական կապերի գաղափարը սերնդե-սերունդ փայլախայած ազգային-ազատագրական պայքարի մարտիկների զանգվածային հանդիպումը: Հիմա արդեն՝ ուկրաինական հեղափոխության ավարտական փուլում, հնարավորություն ստեղծվեց ստուգել համատեղ գործելու իրենց ունակությունները:

Չնայած այն խախուտ վիճակին, որում հայտնվել էին թշնամիներով շրջապատված երկու կառավարություններն ու բանակները, հույս կար, որ միավորվելով, նրանք միաձուլվելու ազդեցիկ ուժ կկազմեն: Ռազմական առումով՝ ուկրաինացիները երբեք այդքան ուժեղ չէին եղել: Գալիցյան բանակն ուներ 50 հազ. զինվոր: Հավանաբար, Ուկրաինայում կռվող բոլոր՝ ուկրաինական, բուլշևիկյան ու սպիտակգվարդիական բանակների մեջ, այն ամենակարգապահ ու պատրաստված բանակն էր: Դիրեկտորիայի 35 հազ. -անոց բանակը նույնպես բավականին ուժեղացել էր՝ շնորհիվ վերջերս վերակազմավորման և մի քանի տաղանդավոր հրամանատարներով համալրման: Բացի այդ, Դիրեկտորիայի զորքին էին միացել նաև օտանաններ Ձելենիի և Անհելի ջոկատները՝ մոտ 15 հազ. մարդ: Այսպիսով, *ուկրաինացիներն իրենց տրամադրության տակ ունեին մարտերում կոփված ու բազմափորձ 100 հազ. -անոց բանակ, ինչը չէր կարելի անտեսել ու հաշվի չնստել նման հզոր հակառակորդի հետ*:

*Բավական կատարելագործվել էր նաև Դիրեկտորիայի վարչակազմը՝ առաջին հերթին շնորհիվ գալիցյան բարեխիղճ ու բանիմաց պաշտոնյաների ներհոսքի*: Դիրեկտորիայի վերահսկողության տակ գտնվող տարածքում առաջին անգամ կայունության, օրինականության ու կարգուկանոնին մոտ իրավիճակ հաստատվեց: Վարչակազմի արդյունավետ գործունեության շնորհիվ և բուլշևիկների նկատմամբ գյուղացիների զնալով աճող հիասթափության պատճառով, Աջափնյակում Դիրեկտորիայի կազմակերպած զորահավաքն հաջող էր ընթանում: Սակայն զինամթերքի ու պարենի պակասն ստիպում էր Պետլյուրային նորակոչիկներից շատերին տուն ուղարկել:

Հանգամանքների նման խոստումնալից դասավորության պայմաններում ուկրաինացիները, եթե ցանկանում էին օգտագործել հազիվ հայտնված բարենպաստ հնարավորությունները, երկու կարևոր պայման պետք է պահպանեին: Նրանց անհրաժեշտ էր նախ՝ երկու կառավարությունների միջև հաստատել համակշռված, բարյացակամ հարաբերություններ, և երկրորդ՝ Անտանտին համոզել իրենց զենք ու զինամթերքով օգնելու անհրաժեշտության մեջ:

Սակայն շատ շուտով պարզ դարձավ, որ *ուկրաինական երկու կառավարությունների միջև տարակարծություններն այնքան խորն են, որ նրանք պարզապես ի վիճակի չեն հարթահարելու դրանք*: Ամենից առաջ պարզ չէր հարաբերակցությունը Պետլյուրայի Դիրեկտորիայի և Պետրուշևիչի դիկտատուրայի միջև: Տեսականորեն Դիրեկտորիան համաուկրաինական կա-

ռավարությունն էր և այդ պատճառով հավակնում էր բարձրագույն իշխանության, սակայն իրականում այդ դերը կատարում էր արևմտաուկրաինական կառավարությունը, որն ուներ ավելի հզոր բանակ և գործունյա վարչակազմ, հետևաբար հակված չէր վարելու այնպիսի քաղաքականություն, որն անընդունելի էր համարում: Բացի այդ, նրանք տարբեր էին նաև գաղափարախոսական առումով: Եթե Դիրեկտորիան կազմավորվել էր առավելապես ծախ կուսակցությունների ներկայացուցիչներից, ապա արևմտաուկրաինական կառավարության հիմքը կազմում էին աներկբա պահպանողական հակումներով ազատականները: Արդյունքում՝ արևելյան ուկրաինացիները գալիցիացիներին մեղադրում էին «հետադիմականության» մեջ, վերջիններս էլ այդ հաճոյախոսությանը պատասխանում էին հաճոյախոսությամբ, նրանց մեծարելով «կիսաբուլշևիկներ»: Լավ կազմակերպված, ազգային բարձր գիտակցություն ունեցող գալիցիացիները թափանցիկ քամահրանքով էին վերաբերվում իրենց արևելյան եղբայրների կազմակերպչական անզորությանը, անհիմն, հանպատրաստի գործողություններին ու սոցիալական արմատականությանը: Վերջիններս էլ իրենց հերթին գալիցիացիներին համարում էին զավառական ձևապաշտներ՝ անկարող համապարփակ ըմբռնելու Ուկրաինայում ընթացող իրադարձությունները: Ամփոփելով, կարելի է վստահորեն ասել, որ *արևելյան և արևմտյան ուկրաինացիների՝ դարեր շարունակ միանգամայն տարբեր միջավայրերում ապրած կյանքի ընթացքում կուտակված մշակութային, քաղաքական, հոգեբանական բոլոր զգալի տարբերությունները միանգամից դուրս էին հորդել հիմա*:

Այդ տարբերությունների հետևանքներն առավել ցայտուն դրսևորվեցին 1919 թ.-ի օգոստոսի սկզբին բուլշևիկների դեմ ուկրաինացիների համատեղ հարձակման ժամանակ: Սկիզբն հաջող էր: Չնայած հակառակորդի համառ դիմադրությանը, ուկրաինացիներն ամսվա վերջին Աջափնյակի մեծ մասը գրավեցին: Սակայն բուլշևիկների նահանջի գլխավոր պատճառը ոչ թե ուկրաինացիների գրոհներն էին, այլ սպիտակների հարձակումը: Սիբիրից Մոսկվային էին սպառնում ծովակալ Կոլչակի բանակները: Բալթիկայում Պետրոգրադի վրա գրոհի էր պատրաստվում գեներալ Նիկոլայ Յուդենիչը: Առավել մեծ վտանգ էին ներկայացնում Դոնից մարտի ձգտող Դենիկինի բանակները: 1919 թ.-ի ամառվա վերջին թվում էր, թե բուլշևիկյան ռեժիմի կործանումն անխուսափելի է:

Օգոստոսի 30-ին Գալիցյան բանակի զորամասերը մտան բուլշևիկների կողմից բուլորովին վերջերս լքված Կիև: Դիրեկտորիան պատրաստվում էր հաջորդ օրը հաղթականորեն մտնել քաղաք: Սակայն հենց նույն օրը Կիև մտան դենիկինյան բանակի առաջապահ զորամասերը՝ բախվելով գալիցիացիներին: Շփոթվելով, չիմանալով ինչպես վարվել սպիտակների հետ (արևմտաուկրաինական կառավարությունն հաճախ հայտարարում էր, որ ինքը Դենիկինի հետ կիսելու բան չունի), գալիցիացիները նահանջեցին՝ ի դժբախտություն Պետլյուրայի և արևելյան ուկրաինացիների, որոնք քարոզչական և քաղաքական նկատառումներից ելնելով, բուռն ձգտում ունեին քաղաքը գրավելու: Հաջորդ օրը, երբ վերջապես Պետլյուրային հաջողվեց գալիցիացիներին համոզել սպիտակների դեմ զնալու, քաղաքը վերադարձնելու համար պայքարելն արդեն ուշ էր: Ուկրաինական բանակները, միայնցից դժգոհ, որ ներքաշվել են սպիտակների հետ անցանկալի կռվի մեջ, սկսեցին նահանջել արևմուտք: Այդ միջադեպով փաստորեն ավարտվեց ուկրաինական պետականության համար պայքարը: Այն ամենը, ինչ տեղի ունեցավ հետագայում, կարելի է համարել մի խճճված ու ողբերգական վերջաբան:

## Սպիտակները

Սպիտակները, հետադիմական գեներալների գլխավորությամբ, որոնք լի էին հասարակական հին կարգն ու «միասնական, անբաժանելի Ռուսաստանը» վերականգնելու վճռականությամբ, «սոցիալիստական բախտախնդիր» Պետլյուրային և արևելաուկրաինական «անջատողական դավաճաններին» վերաբերվում էին նույն ատելությամբ, ինչ բուլշևիկներին: (Նրանք, սակայն, ոչինչ չունեին գալիցիացիների դեմ, համարելով նրանց օտարերկրացիներ): Ուկրաինական հարցի վերաբերյալ սպիտակների դիրքորոշումն ուղղակի և անսթևեթ արտահայտել է նրանց գլխավոր գաղափարախոս Վասիլի Շուլզինը, երբ դենիկինյանները գրավեցին Կիևը. «Հարավ-Արևմտյան երկրամասը (Շուլզինը խուսափում էր «Ուկրաինա» բառն արտասանելուց) կարող է լինել միայն ու միայն ռուսական... մենք այն չենք տա ոչ իրավաճան ուկրաինացիներին, ոչ էլ դահիճ հրեաներին (հավանաբար խոսքը վերաբերվում էր Զեկայում ծառայող բազմաթիվ հրեաներին)»:

Պաշվի առնելով այդ, որ նման տրամադրություններն իշխող էին սպիտակների շրջանում, վարմանալի չէ, որ հաջողություններից ոգեշնչված Դենիկինը լսել անգամ չուզեց Պետլյու-



րայի՝ բազմիցս արած առաջարկությունը՝ բոլշևիկների դեմ համատեղ պայքարի վերաբերյալ: Սա Դեմոկրատիկ կուսակցության մեկը դարձավ, քանի որ նա ոչ միայն զրկվեց ուկրաինացիների հսկայական բանակի աջակցությունից, այլև, հրամայելով գրոհել ուկրաինացիների վրա, նա ըստ էության ջուր էր լցնում բոլշևիկների ջրաղացին: Այդ ինքնակործան կուսությունը, որն առավել բացահայտ արտահայտվում էր սպիտակների սոցիալական ոչ ճկուն քաղաքականության մեջ, 1919 թ.-ի աշնանը Դեմոկրատիկ պարտության կարևոր պատճառներից մեկն էր: Սպիտակները ձգտում էին Դիրեկտորիայի ուժերը ջլատել նաև այլ միջոցներով, օրինակ՝ Անտանտում իրենց հովանավորներին համոզում էին Փարիզի խաղաղության կոնգրեսում մերժել ուկրաինացիներին, և ինչն առավել կարևոր էր՝ նյութական օգնություն ցույց չտալ նրանց:

1919 թ.-ի աշնանը ուկրաինացիների վիճակն իսկապես ողբերգական դարձավ: Մի կողմից սպիտակներն էին նեղում, մյուս կողմից բոլշևիկներն էին պատրաստվում հարվածի, իսկ թիկունքում էլ հանգիստ չէին տալիս ագրեսիվ լեհերն ու բընամաբար տրամադրված ռուսի-նացիները: Անընդհատ սեղմվող այդ «մահվան քառանկյունը» հոկտեմբերին իսկական դժոխքի վերածվեց, երբ սովից ուժասպառ ու տանջահար, անապաստան, անհանդերձանք ու անսնունդ մնացած ուկրաինական բանակներին տիֆի համաճարակը հարվածեց: Ընդամենը մի քանի շաբաթում զորքի մեծ մասը կամ մեռած էր, կամ մեռնում էր, կամ հիվանդությունից լրիվ ուժասպառ էր եղել: Դեռ այդ ժամանակ կազմավորվեց Գալիցյան փառավոր բանակը: Հոկտեմբերի վերջերին բանակն ընդամենը մոտ 4 հազ. մարտունակ զինվոր ուներ: Պետլյուրայի բանակում հազիվ 3 հազ. մարդ էր մնացել: Կենդանի մնացածները փրկվում էին՝ ով ինչպես կարող էր:

1919 թ.-ի նոյեմբերի 6-ին գալիցիացիների հրամանատար Միրոն Տառնավսկին իր մարդկանցով անցավ սպիտակների հրամանատարության տակ՝ պայմանավորվելով, որ իրենց չեն ընտրի ուկրաինացիների դեմ կռվելու և ուժերը վերականգնելու հնարավորություն կտան: Այդ ընթացքում Պետլյուրայի իր կողմնակիցների հետ անցավ Վիեննա, որտեղ ստեղծեցին վտարանդի կառավարություն: Պետլյուրան և Դիրեկտորիան ապաստան գտան Լեհաստանում, իսկ նրանց զորքը վերածվեց բոլշևիկների թիկունքում գործող պարտիզանական ջոկատների:

Եվ այսպես, ուկրաինական պայքարն Առաջին աշխարհամարտում անհուսալի ավարտ ունեցավ. ուկրաինական երկու կառավարությունների ու բանակների մնացորդները հայտնվեցին բընամական ճամբարներում:

**Պետլյուրայի դաշինքը Լեհաստանի հետ**

Այնուամենայնիվ, հանուն անկախության ուկրաինացիների պայքարի հոգեվարքը երկարած գեղում փորձեր եղան: 1920 թ.-ի ապրիլի 21-ին, հրաժարվելով Արևելյան Գալիչիայի նկատմամբ բոլոր հավակնություններից (ինչով գալիցիացիների գայրույթը հարուցեց), Պետլյուրան բոլշևիկների դեմ դաշինք կնքեց Լեհաստանի հետ, պայմանավորվելով համատեղ գործողություններ իրականացնել ուկրաինայում: Այդ անսպասելի համաձայնագրին գնալու Լեհաստանի գլխավոր դրդապատճառը Ռուսաստանի հետ սահմանում՝ Արևելյան ուկրաինայում բախարգել պետություն ստեղծելն էր: Լեհերն հույս ունեին, որ Պետլյուրայի վերակազմավորված բանակի հայտնվելն ուկրաինայում կապահովի հակաբոլշևիկյան տրամադրություններ ունեցող ուկրաինական գյուղացիության աջակցությունն իրենց հարձակմանը: Սովորական պես, գործերն սկզբում հաջող էին ընթանում. 1920 թ.-ի մայիսի 6-ին, դաշնակիցների բանակը, որ կազմված էր 65 հազ. լեհերից և 15 հազ. ուկրաինացիներից, գրավեց Կիևը:

Սակայն ուկրաինական գյուղացիության աջակցության սպասվող ճողփյունը չհետևեց: Պետլյուրայի անհատական համակրանքն ու ժողովրդակալությունը գյուղացիության շրջանում բավարար չէին նրա դաշնակիցների՝ Լեհական «պաների» նկատմամբ դարավոր բընամանքը հաղթահարելու համար: Հունիսին բոլշևիկներն հակահարձակման անցան, որին հետևեց լեհ-խորհրդային խաղաղության դաշինքի կնքումը և Պետլյուրայի հետ դաշինքից լեհերի հրաժարումը: Արևելաուկրաինական բանակը, որն արդեն հասել էր 35 հազ.-ի, մինչև 1920 թ.-ի նոյեմբերը միայնակ կռվում էր բոլշևիկների դեմ, մինչև որ ստիպված եղավ թողնել Վոլինի իր փոքրիկ հենակետն ու անցնել Լեհաստան, որտեղ էլ ներկայվեց: Եթե հաշվի չառնենք մեկ տարի անց դեպի խորհրդային ուկրաինա ձեռնարկված պարտիզանական մի քանի անհաջող արշավները, ուկրաինայի անկախության համար մղված պատերազմը վերջնականապես ավարտվեց:

1919 թ.-ի ամռան վերջին ուկրաինայում երկրորդ անգամ անհաջողության մատնվելով, բոլշևիկներն ստիպված էին վերանայել իրենց վարած քաղաքականությունը: Ուկրաինայի յուրահատկություններն անտեսող գործընկերների նկատմամբ սուր քննադատությամբ հանդես եկան կուսակցության ուկրաինացի անդամները՝ Յուրի Լապչինսկու գլխավորությամբ: Նրանք ապացուցում էին, որ՝ «Ռուսաստանում մեկուկես տարվա ընթացքում մշակված խորհրդային կենսածնի պատրաստի կաղապարները չի կարելի կիրառել ուկրաինայում»: Եթե կուսակցության ոչ բոլոր շարքային անդամները, ապա ղեկավարությունը դժկամորեն խստովանեց, որ հացահատիկի բռնագրավումը գյուղացիության մեջ խիստ դժգոհություն առաջացրեց, և որ ուկրաինայում կատարած իր նախկին գործողություններում թերագնահատել է ազգային գործունի նշանակությունը: Այդ դիրքորոշումը վերանայելու և ինքնաքննադատության գործում մեծ դեր խաղաց Լենինը՝ պնդելով, թե՝ «Ուկրաինայում ազգային հարցի կարևորությունը հաշվի չառնելը, ինչու է հաճախ մեղանշում են վելիկոռուսները (փոքր ինչ պակաս՝ հրեաները), նշանակում է լրջագույն և խիստ վտանգավոր սխալ գործել... մենք պետք է առանձնակի վճռականությամբ պայքարենք ռուս կոմունիստների միջավայրում վելիկոռուսական իմպերիալիզմի և ազգայնամոլության (երբեմն՝ չզիտակցված) մնացուկների դեմ»:

Լենինյան ցուցումները սակայն ամենևին չէին հանգեցնում ոչ ուկրաինացիների անկախության պահանջներին, ոչ ազգային-ազատագրական շարժման գործիչների՝ պետական անկախության ձգտմանը, ոչ ուկրաինացի բոլշևիկների շատերի՝ կազմակերպական անկախության հակումներին ընդառաջելուն: **Բոլշևիկների գլխավոր նպատակը ուկրաինայում խորհրդային իշխանությանը փոքր-ինչ «ուկրաինական երանգավորում» տալն էր:** Դեռ հրա համար էլ 1919 թ.-ի փետրվարի 21-ին ուկրաինական խորհրդային երրորդ իշխանության կազմավորումն ուղեկցվում էր հայրենասիրական ճառերով՝ թե. «Կրկին մոխիրներից կհառնի ազատ ու անկախ ուկրաինական խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը»: Հաջորդ դեկտեմբերը հռչակում էր ուկրաինայի կոմունիստական կուսակցության գլխավոր նպատակներից մեկը՝ «Ուկրաինական խորհրդային Սոցիալիստական Հանրապետության անկախության և ամբողջականության պաշտպանությունը»: Ուկրաինացի կոմունիստներից մի քանիսը կառավարությունում բարձր պաշտոնների (իհարկե, ոչ պատասխանատու) նշանակվեցին, կուսակցական գործիչներին ցուցում տրվեց՝ հնարավորինս գործածել ուկրաիններեն լեզուն և հարգանք դրսևորել ուկրաինական մշակույթի նկատմամբ:

Գյուղացիությանը հանդարտեցնելու նպատակով բոլշևիկները ժամանակավորապես հրաժարվեցին կոմունաներ ստեղծելու և համայնացնելու փորձերից, ինչը ուկրաինայում ավելի մեծ ու հզոր դիմադրության էր հանդիպում, քան Ռուսաստանում: Բոլշևիկները չնայած չարունակում էին հացահատիկի բռնագրավումը, սակայն բացատրում էին նրանով, որ հացն հիմա տրամադրվում է բանակին, և ոչ թե Ռուսաստանին: Առաջվանից էլ ավելի մեծ ուշադրություն էր դարձվում գյուղացիության հարուստ, միջակ և աղքատ շերտերի միջև բախումները խորացնելու մարտավարությանը: Գիտակցելով, որ 500 հազարանոց կուլակությանն հնարավոր չէ հաղթել, բոլշևիկները ձգտում էին իրենց կողմը գրավել միջակներին՝ խստատևալով ձեռք չտալ նրանց հողերին: Դետագա զարգացում ապրեց նաև «քրավոր գյուղացիության կոմիտեներ» ստեղծելու կուսակցության հին քաղաքականությունը, որի նպատակը գյուղում կուլակների ազդեցությունը չեզոքացնելն էր:

Չնայած այս բոլոր ծեծելումներին, **բոլշևիկներն ուկրաինայում կատարյալ հաղթանակի հասան միայն ռազմական ճանապարհով:** 1919 թ.-ի աշնանը Կարմիր բանակը 1,5 մլն էր հաշվվում, 1920 թ.-ի գարնանն արդեն 3,5 մլն զինվոր ուներ, որոնց մարտի էին տանում ուժով ծառայության վերցված նախկին ցարական բանակի 50 հազ. սպա: Երբ 1919 թ.-ի դեկտեմբերին բոլշևիկներն ուկրաինա վերադարձան, նրանց հաղթանակն արդեն կասկած չէր հարուցում: Բայց և այնպես, նույնիսկ 1920 թ.-ի նոյեմբերին, սպիտակների և ուկրաինական բանակների մնացորդներն արտաքսելուց հետո էլ, ուկրաինական գյուղի վրա բոլշևիկների վերահսկողությունը խիստ պայմանական էր: Գյուղացիության մեծամասնությունը, հատկապես կուլակները, մնում էին կոմունիզմի անհաշտ բընամիներ և շարունակում էին չնայած անկազմակերպ, սակայն համառ ու անզիջում պարտիզանական պայքարը բոլշևիկների դեմ:

Մոտ 100 ջոկատներում միավորված հակաբոլշևիկյան ապստամբների քանակն անցնում էր 40 հազ.-ից: Հարավում, ժողովրդական լայն զանգվածների վրա հենվելով, նշանավոր Մախնոն դիմացավ մինչև 1921 թ.-ի օգոստոսը: Կիևի շրջանում գործում էին 1-2 հազ. հոգուց



բաղկացած խոշոր, լավ զինված ջոկատներ՝ Յուրի Տյուտյունիկի նման պետությունական լավագույն օտանանների գլխավորությամբ, որոնք կապ էին պահպանում Լեհաստանում վտարանդի ուկրաինական կառավարության հետ: 1921 թ.-ի ավարտին, նրանց դեմ հանելով մոտ 50 հազ. հոգի, որոնց մեծ մասը Չեկայի մարտիկներ էին, բոլշևիկներին հաջողվեց պարտիզանական շարժման ողնաշարը կտրել: Միայն դրանից հետո բոլշևիկները կարող էին վստահաբար հայտարարել, որ Ուկրաինան ոչ միայն նվաճել են, այլև ենթարկել են իրենց:

\* \* \*

Առաջին աշխարհամարտից հետո կայսրությունների կործանման և հեղափոխական ցնցումների պատմությունն անխուսափելի հարց է ծնում՝ ինչո՞ւ այն ժամանակ, երբ Արևելյան Եվրոպայի գրեթե բոլոր ժողովուրդները, ներառյալ ցարիզմի ճնշման տակ գտնվող նույնիսկ այնպիսի ոչ մեծ ազգերը, ինչպես՝ ֆինները, էստոնացիները, լատիշներն ու լիտվացիները, կարողացան անկախություն ձեռք բերել, իսկ 30 մլն-ամոց ուկրաինացի ժողովուրդը չկարողացավ: Այդ հարցն ավելի հիմնավոր է նրանով, որ ուկրաինացիները երկի բոլորից երկար են պայքարել հանուն անկախության և շատ ավելի մեծ զին են վճարել դրա համար, քան արևելաեվրոպական որևէ այլ ժողովուրդ:

Ուկրաինացիների պարտության հիմնական պատճառները դիտարկելիս, հարկավոր է տարբերակել նախ՝ ներքին և արտաքին գործոնները, ապա՝ Արևելյան և Արևմտյան Ուկրաինայի իրավիճակների տարբերությունը: Ներքին գործոնների մասին խոսելիս, հիշենք ուկրաինացիների (հատկապես արևելյան ուկրաինացիների) հիմնական երկրներում քրեական շարժման առաջատար դիրքերը գրավեց մտավորականությունը: Սակայն մտավորականները բնակչության ընդամենը 2-3 %-ն էին կազմում, և նրանց էլ ամենշան մասն էր միայն մասնակցում ազատագրական պայքարին: Մտավորականների շատ ներկայացուցիչներ սերտորեն կապված էին ինչպես ուկրաինական, այնպես էլ ռուսական մշակույթի հետ և նրանց համար զուտ հոգեբանորեն երբեմն արտակարգ դժվար էր միանգամից կապերը խզել Ռուսաստանի հետ: Այստեղից հետևում էին և՛ անկախության հարցում անվճռականությունը, և՛ ֆեդերալիզմի ու ինքնավարության բացահայտ հակումը: Վերջապես, նույնիսկ հեղափոխության և քաղաքացիական պատերազմի ժամանակներում ուկրաինական մտավորականներից շատերն անորոշության մեջ էին, թե ի՞նչն է առաջնային՝ սոցիալական բարեփոխումները, թե՞ ազգային ազատագրումը: Արդյունքում՝ հեղափոխությունն Արևելյան Ուկրաինայում իրադարձությունների հորձանուտը նետեց գաղափարապես հասուն ու հայրենասեր, սակայն անփորձ մտավորականությանը՝ ստիպելով նրան գործել, նախքան ինքը կհասկանար, թե ինչի՞ է ձգտում հասնել, և ինչպե՞ս պետք է հասնել:

Անկախության պայքարի գլուխ անցնելով, ուկրաինական մտավորականությունը հույսեր էր կապում գյուղացիության օժանդակության հետ: Սակայն հնարավոր կողմնակիցների այդ հսկայական ներուժը սպասումները չարդարացրեց: Անգրագետ, ծեծված ու խեղճ, քաղաքականապես տհաս գեղջուկը գիտեր, թե ինչի դեմ է պայքարում, բայց պարզորոշ չէր գիտակցում՝ թե հանուն ինչի: Փոխարենը շատ լավ հասկանում էր, որ ինքն աշխատավոր է, որին շահագործում են: Դրա վրա էին հիմնվում բոլշևիկյան քարոզչության սկզբնական հաջողությունները: Ազգային պետականության առավել բարդ գաղափարը նա դժվարությամբ էր ընկալում, և քաղաքացիական պատերազմի վերջում միայն գյուղացիության քիչ թե շատ գրագետ մասը որոշակիորեն հակվեց դեպի ազգային ինքնորոշման գաղափարը: Բայց այդ ընթացքում անկախության հասնելու լավագույն հնարավորություններն արդեն ձեռքից բաց էին թողնված:

Նույնիսկ, երբ գյուղացիները գնում էին կռվելու հանուն անկախության, նրանց կազմակերպելն արտակարգ դժվար էր: Ի տարբերություն բանվորների, որոնք չնայած քիչ էին, բայց կենտրոնացած էին մի քանի խոշոր քաղաքներում և այդ պատճառով էլ հեշտ ավար էին դառնում բոլշևիկներին, գյուղացիությունը սփռված էր հազարավոր գյուղերով մեկ: Նրանց համոզելն ու հանուն ընդհանուր նպատակի համախմբելը շատ դժվար գործ էր անփորձ մտավորականների համար: Եվ եթե մտավորականության ու գյուղացիության կողմից ազգային շարժ-

ման աջակցելու դեպքում անգամ հաջողության հասնելը հարց էր, ապա քաղաքներում այդ աջակցության բացակայությունը (դա հավասարապես վերաբերում է և Գալիչինային) որոշիչ գործոն հանդիսացավ: Ուկրաինական բանակները, որոնք չէին կարող հույս դնել բանվորների, քաղաքային բուրժուազիայի, ծառայողների, սպաների և տեխնիկական մտավորականության օգնության վրա, մեծ դժվարությամբ էին դիմանում քաղաքներում՝ հաղորդակցության, տրանսպորտի և կառավարման այդ կարևորագույն կենտրոններում: Այսպիսով՝ ուկրաինական շարժման սոցիալական հիմքի թերզարգացածությունը 1917-1921 թ.թ.-ներին նրա ռազմավարական թերությունը դարձավ, որ մեծապես ազդեց պայքարի ելքի վրա:

Սակայն ուկրաինական ազգային-ազատագրական շարժման պարտության մեջ համեմայն դեպս որոշիչ դեր ունեցավ արտաքին գործոնը: Օրինակ՝ գալիցյան ուկրաինացիների համար, որոնց ազգային շարժման ավելի թույլ չէր, քան անկախություն ձեռք բերած արևելաեվրոպական մյուս ժողովուրդներինը, բախտորոշ նշանակություն ունեցավ ոչ թե ներքին թուլությունը, այլ լեհերի գերազանցող հզորությունը: Արևելյան Ուկրաինայի վերաբերյալ նույնը կարելի է ասել բոլշևիկյան Ռուսաստանի մասին. հատկապես նա, և ոչ թե ուկրաինացի թույլ բոլշևիկները, փակեց Ուկրաինայի անկախության ճանապարհը: 1920 թ.-ի վերջերին Կարմիր բանակի հրամանատար Լև Տրոցկին պարզորոշ խոստովանում էր, որ՝ «խորհրդային իշխանությունն Ուկրաինայում պահպանվեց (և դժվարությամբ դիմացավ) գլխավորապես Մոսկվայի, վելիկոռուսական կոմունիստների և ռուսական Կարմիր բանակի հզորության շնորհիվ»:

Լենինի կուսակցությունն իր հաջողության համար պարտական է ոչ միայն փայլուն ղեկավարությանն ու հիմնալի կազմակերպությանը, այլ՝ նաև այն հանգամանքին, որ իր տրամադրության տակ էին Ռուսաստանի ֆինանսական, արդյունաբերական, վարչական և մարդկային անսպառ պաշարները: Բոլշևիկներն հենվում էին ուկրաինական քաղաքների ռուս և ռուսացած բանվորների աջակցության վրա, ինչը նրանց հնարավորություն էր տալիս կողմնակիցներին մոբիլիզացնել հարկավոր պահին և հարկավոր տեղում: Բացի այդ, արևելյան ուկրաինացիներն ունեին ևս մի անհաշտ թշնամի՝ սպիտակները: Նման հակառակորդների հաղթելու համար շատ ավելի հզոր ուժեր էին պահանջվում, քան այն ուժերը, որ կարող էին ունենալ առաջին քայլերն անող ազգային շարժումները:

Եվ քանակով, և՛ հզորությամբ իրենց գերազանցող թշնամիների հետ երես առ երես հայտնվելով, ոչ արևմտյան, ոչ արևելյան ուկրաինացիները չարժանացան Անտանտի հաղթող տերությունների ոչ ճանաչմանը, ոչ օգնությանը: Ինչո՞ւ Անտանտը, որ ռազմական և դիվանագիտական միջոցներով մեծ հոժարությամբ օգնում էր սպիտակավարոհականներին կամ արևելաեվրոպական նորաստեղծ պետություններին, երես դարձրեց ուկրաինացիներից: Պատճառները քիչ չէին. Ուկրաինայում տիրող իրավիճակն անտեսելը, լեհերի ու սպիտակների կողմից եռանդուն և բավական ազդեցիկ ու գործուն հակաուկրաինական քարոզչությունը: Որոշակի դեր ունեցավ նաև այն հանգամանքը, որ և՛ Կենտրոնական Ռադան, և՛ հեթանոսությունը չափազանց սերտ համագործակցության մեջ էին Անտանտի ոխերին թշնամու՝ Գերմանիայի հետ, իսկ Դիրենկոտիան զուգակցվում էր ձախ («բոլշևիկյան») գաղափարամիտության հետ: Եվ վերջապես՝ Ուկրաինայում տիրող աներևակայելի բառսը զգալիորեն խոչընդոտում էր սեփական ազգային կառավարության բնականոն աշխատանքը կարգավորելուն:

Այդ ամենով հանդերձ, հեղափոխության ու քաղաքացիական պատերազմի հետևանքով Ուկրաինան ոչ միայն կորուստներ, այլև որոշակի ձեռքբերումներ ունեցավ: Ազգային ինքնագիտակցությունը, որ նախկինում բնորոշ էր միայն մտավորականության որոշ մասին, թափանցեց արդեն ուկրաինացի բնակչության բոլոր խավերի մեջ: Մի կողմից՝ գյուղացիությունը, որն արդեն ցույց էր տվել կառավարություններ տապալելու և իր շահերի համար պայքարելու ընդունակությունն ու կարողությունը, նաև վստահություն և սեփական արժանապատվության զգացում ձեռք բերեց: Դիմա արդեն նա կարող էր ավելի լուրջ ուշադրություն ու հարգանք պահանջել իր լեզվի և մշակույթի նկատմամբ: Մյուս կողմից՝ ուկրաինական կառավարությունների հայտնվելը գյուղացիությանը սովորեցրեց իրենց ուկրաինացի զգալ: Դրանով իսկ, ընդամենը չորս տարվա ընթացքում ազգի ձևավորման գործընթացը վիթխարի առաջընթաց ապրեց: Դատկապես այս իմաստով 1917-1921 թ.թ.-ների վերելքը ոչ միայն սոցիալական, այլև ազգային հեղափոխություն էր:

Եթե հանուն ազգային ինքնորոշման պայքարը ուկրաինական հեղափոխությանն օժտեց ինքնահատուկ գծերով, ապա սոցիալ-տնտեսական բարեփոխումները նրան կապեցին ռու-



սական հեղափոխության հետ: Ինչպես ամենուր նախկին ցարական կառավարությունում, այստեղ ևս հին կյանքն անցյալ դարձավ և հողի մեծ մասը բաժանվեց գյուղացիներին: Եվ եթե անկախության երազանքն այդպես էլ մնաց որպես երազ, ապա շատ ուկրաինացիներ կարող էին բավարարվել նրանով, որ համենայն դեպս դատարկածեռն չմնացին: Այսուհետև ամեն բան կախված էր նրանից, թե խորհրդային կառավարությունը հնարավորություն կտա՞ ուկրաինացիներին համախմբվելու և հեղափոխության նվաճումները զարգացնելու:



## ԽՈՐՆՐԴԱՅԻՆ ՈՒԿՐԱԻՆԱ, ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ 20-ԱԿԱՆՆԵՐԸ

Ռազմական արյունահեղ կոտորածների ու քաղաքացիական խռովությունների յոթ տարիները բոլշևիկներին բաժին հասած նախկին ռուսական կայսրության ողջ տարածքը համատարած ավերակների վերածեցին: Գլխավորապես քաղաքացիական պատերազմի շրջանում ռազմական գործողությունները, համաճարակներն ու մահապատիժները, հաշվեհարդարներն ու զնդակահարությունները միայն Ուկրաինայում 1,5 մլն մարդկային կյանք խլեցին: Սովն ու սառնամանիքը, ահն ու անգործությունը հարյուր հազարավոր քաղաքացիների տեղահան արեցին ու քշեցին գյուղերը: Արդյունաբերությունն ու ապրանքարտադրությունը գործնականում կանգ առավ: Վերջնականապես ուժասպառված հասարակությունն ակնհայտորեն պատրաստ չէր այն սոցիալական արմատական փոփոխություններին, որին ձգտում էին բոլշևիկները:

Իր հերթին՝ բոլշևիկները չնայած հաղթել էին, սակայն չէին փոքրամասնություն էին կազմում բնակչության հսկայական ծովում, որը նաև մեծ մասամբ թշնամաբար էր տրամադրված նրանց նկատմամբ, և այդ իսկ պատճառով չէին կարող գործել իրենց մտադրություններին համապատասխան: Լենինի մահը 1924 թ.-ին ճգնաժամի առջև կանգնեցրեց ղեկավարությանը, որն ավելի սաստկացավ կոմունիզմի կառուցման ուղիների ու մեթոդների շուրջ կոմունիստական կուսակցության մեջ ծագած կատաղի ու անգիջում վեճերի ու քննարկումների պատճառով: 1920-ական թվականների ընթացքում իրավիճակն ու հանգամանքները կուսակցությանն ստիպում էին նպատակին հասնելու համար գործել շրջահայաց ու ճկուն: Եթե առանձին անհատներ ու խմբեր բացահայտ հակախորհրդային դիրքորոշում չէին դրսևորում, նրանց գործերին զրեթե չէին խառնվում:

Խորհրդային իշխանության մեղմությունն ու չափավորությունն այդ ժամանակաշրջանում բարերար ազդեցություն ունեցավ ուկրաինացիների վրա երկու առումով. նախ՝ գյուղացիության նկատմամբ դրսևորած գիջումների շնորհիվ, որին խորհուրդները գնացին իրենց վարած քաղաքականության մեջ, և երկրորդ՝ ոչ-ռուս ժողովուրդների շրջանում լայն աջակցության արժանանալու իշխանության փորձերի շնորհիվ: Արդյունքում՝ 1920-ական թվականներն ուկրաինացիների համար դարձան հոգևոր վերելքի, ազգային ինքնագիտակցության իսկական, ինչ-որ տեղ նույնիսկ անսպասելի վերածննդի ժամանակաշրջան, որը կարելի է համարել խորհրդային իշխանության օրոք ուկրաինացի ժողովրդի ոսկեդար:

### Ռազմական կոմունիզմ և ՆԵՊ (ՆՏՔ)

Տնտեսության քայքայումը մեծ մասամբ քաղաքացիական պատերազմի շրջանում բոլշևիկների վարած քաղաքականության հետևանք էր: Զգտելով անմիջապես սոցիալիստական տնտեսական հասարակարգ հաստատել և միաժամանակ մթերք հայթայթել Կարմիր բանակի և ռուսական սովահար քաղաքների համար, բոլշևիկները տնտեսական դաժան միջոցների մի ողջ համակարգ ներդրեցին, որ պատմության մեջ մնաց «ռազմական կոմունիզմ» անվանումով: Այդ քաղաքականությունը ներառում էր *խոշոր կալվածքների, կապիտալի և արդյունաբերության ազգայնացումը, համընդհանուր աշխատապարհակի կիրարկումը, մթերքի ու սպիրանքի համահավասար բաշխումը և վերջապես, ամենաատելի միջոցը՝ պարենմասնատրումը՝ գյուղացիներից հացահատիկի բռնագավթումը:*




Կառավարական պաշտոնյաները, զինված ջոկատների ուղեկցությամբ, մորեխների պես հարձակվում էին գյուղերի վրա և գյուղացիներից խլում հացահատիկը: Գյուղացուն թույլատրվում էր իր համար պահել միայն ամիսը 30 ֆունտ ցորեն: Իրեն օժանդակելու համար կուսակցությունն ստեղծել էր *չունևոր գյուղացիներից կազմված կոմիտեներ*, որոնց անդամներն առավելություն ունեին հողը բաժանելիս, ազատվում էին պարենմասնատրումից և ստանում էին «ձեռք բերած ավարի» 10-25 %-ը: Որպես պատասխան՝ գյուղացիների մեծամասնությունը նվազագույնի հասցրեցին գյուղմթերքների արտադրությունը: Դա համընկավ Ռուսաստանի հարավի և Ուկրաինայի հսկայական տարածքներում սկսված աննախադեպ երաշտի հետ: Արդյունքը եղավ 1921-1922 թ.թ.-ների սովը, որ հարյուր հազարավոր կյանքեր խլեց Ուկրաինայում, և ավելի շատ՝ Պոլովոժյեում: Ի տարբերություն 10 տարի հետո տեղի ունեցած իրադարձությունների, այս անգամ խորհրդային կառավարությունն ընդունեց սովի փաստը և սովյալներին օգնելու ներքին ու միջազգային լայն կամպանիա ծավալեց:

Տնտեսական իրավիճակի աղետալի վատթարացումը ժողովրդի մեջ մեծ հիասթափություն ու դժգոհություն առաջացրեց բոլշևիկներից, ինչն արտահայտվեց 1921 թ.-ին Ռուսաստանն ու Ուկրաինան ընդգրկած ռազմական խռովություններով, զանգվածային զործարկւներով և գյուղացիական ապստամբություններով: Չնայած Կարմիր բանակն ու Չեկան անողոքաբար պատժեցին ապստամբներին, Լենինն ստիպված եղավ խոստովանել ռազմական կոմունիզմի քաղաքական սնանկությունն ու գնալ զիջումների, հատկապես գյուղացիության վերաբերմամբ:

Լենինն հերթական անգամ մարտավարական արտասովոր ունակություններ դրսևորեց, *ինչեց լենինյան նշանավոր «տանգոն»*: ղեպի սոցիալիզմ տանող ճանապարհին մի քայլ ետ անել՝ երկու քայլ առաջ անելու համար: 1921 թ.-ի մարտի 21-ին ՌԿ(բ)Կ X համագումարում նրան մեծ դժվարությամբ հաջողվեց կուսակիցներին համոզել *նոր տնտեսական քաղաքականության* (ռուսերեն հապավումով՝ ՆԷՊ) անցնել, և այն էլ միայն Կրոնշտադտի վտանգավոր խռովությունից հետո (տեղի ունեցավ համագումարի ժամանակ) և ցույց տվեց, թե բոլշևիկների մինչև հիմա վարած քաղաքականությունն ինչքան հակաժողովրդական է: *Նոր տնտեսական քաղաքականությունը փոխզիջում էր, սոցիալիզմի սկզբունքներից ժամանակավոր նահանջ և կիրառվում էր քաղաքացիական պատերազմի հետևանքով քայքայված երկիրը ոտքի կանգնեցնելու նպատակով*: Այդ քաղաքականության մեխը գյուղացիությանը հանդարտեցնելն էր և շահագրգռելը, որ ընդլայնի սննդամթերքի արտադրությունը: Կառավարությունը պարենմասնատրումը փոխարինեց պարենհարկով, որ համեմատաբար թեթևացնում էր գյուղացիության վիճակը: Պարենհարկը հացահատիկով վճարելուց հետո գյուղացին իրավունք էր ստանում ավելցուկը վաճառել շուկայական գներով: Չքավոր գյուղացիներն ընդհանրապես ազատվում էին հարկից: Ստիպված եղան իրաժարվել նաև կոլտնտեսություններ ստեղծելու քաղաքականությունից: 1918 թ.-ին Կենտրոնական Ռադայի կողմից ազգայնացված հողերի մեծ մասը վերաբաժանվեց չքավոր գյուղացիությանը:

Տնտեսության մյուս ճյուղերը խթանելու նպատակով մեղմացվեց ներքին շուկայի վերահսկողությունը, մանր ձեռնարկությունները վերադարձվեցին նախկին տերերին, և նույնիսկ թույլատրվեց արտասահմանյան կապիտալի ներդրումը երկրի տնտեսության մեջ: Այս ամենով հանդերձ Լենինն ամենևին էլ չէր պատրաստվում կապիտալիզմի հետ հավերժական փոխզիջման գնալ և իրաժարվել սոցիալական տնտեսություն կառուցելու իր երազանքից: Կառավարությունն իր իրավասության տակ պահեց տնտեսության «իշխող բարձունքների» վերահսկողությունը՝ ծանր արդյունաբերությունը, բանկերը, տրանսպորտը և արտաքին առևտուրը:

ՆԷՊ-ը մեծ հաջողություն բերեց: Իրենց ապրանքի բարձր գնողունակությունը երաշխավորված տեսնելով, Ուկրաինայի 5 մլն գյուղացիական տնտեսություններ արագորեն բարձրացրեցին արտադրողականությունը: 1927 թ.-ի շենին մշակովի հողատարածքներն արդեն 10 %-ով ավելի շատ էին, քան 1913 թ.-ին: Միաժամանակ, պետության թույլտվությամբ գարգացող մանր ձեռնարկատերերի (մեկամանների) կողմից լայն սպառման ապրանքների արտադրությունը հասավ նախապատերազմական մակարդակին: Ետ էր մնում միայն ծանր արդյունաբերությունը, որ տնտեսության պետական սեկտորում էր: Ժամանակն հոսում էր, քաղաքացիական պատերազմի մղծավանջային հիշողություններն անցյալ էին դառնում ու մոռացվում, կյանքը կամաց-կամաց բարեկեցիկ հունի մեջ էր մտնում և գյուղացիությունն հաշտվում էր բոլշևիկյան ռեժիմի հետ, որին նախկինում վերաբերվում էր մեծագույն անվստահությամբ:



Խորհրդային Ուկրաինայի միջկապտեղանկյան ցորենի շրջան



## Խորհրդային Միության ստեղծումը

Լենինն ու բոլշևիկները, որքան էլ դանդաղ գնային դեպի ազգային հարցի կարևորության ընդունումը, իշխանության գալով, ստիպված էին լրջորեն զբաղվել դրանով: Մի կողմից՝ դեռևս քաղաքացիական պատերազմի օրերին նրանք առաջ քաշեցին ազգային ինքնորոշման իրավունքի նշանաբանը՝ «ընդհուպ առանձնանալն ու անկախ պետություն ստեղծելը», դրանով ձեռք բերելով քաղաքական մեծ շահաբաժիններ (դիվիդենդներ): Մյուս կողմից՝ նրանք ամեն կերպ ձգտում էին խեղդել ազգային շարժումները՝ հավատացնելով, թե դրանք գլխավորում են «բուրժուական տարրերը», որոնք չեն կարող, և չեն պաշտպանելու բանվոր դասակարգի շահերը: Սակայն «բուրժուական ազգայնամուլների» պարտությունից հետո, բոլշևիկները (որոնց վիճակը դեռևս բավարար կայուն չէր) ստիպված էին համաձայնության գալու ուղիներ փնտրել ոչ-ռուսական այն կառավարությունների հետ, որոնց իրենք էին բերել իշխանության:

Չնայած Մոսկվային ենթարկվող կոմունիստական կուսակցությունը լիովին վերահսկում էր ուկրաինական խորհրդային կառավարությանը, բայց դա չէր նշանակում, թե նա կարող էր լրիվ իր կամքը թելադրել: Նման հնարավորության դեմ խոսող նախադեպերը չափազանց ակնհայտ էին: Բրեստ-Լիտովսկում բոլշևիկյան Ռուսաստանը ճանաչեց Կենտրոնական Ռադան և իր Գլխավոր Քարտուղարությանը՝ որպես անկախ պետության ինքնուրույն կառավարություն: Այդքան հեռուն գնալով, այսինքն՝ ճանաչելով ուկրաինական «բուրժուական» կառավարության անկախությունն ու ինքնիշխանությունը, բոլշևիկները չէին կարող չսատարել ուկրաինական արդեն խորհրդային կառավարությանը: Չեռևաբար հարկ էր այդ կառավարությանը վերաբերվել (ամենվազն տեսականորեն), որպես անկախ իշխանություն ունեցողի: Այդ իսկ պատճառով, պատահական չէր, որ մինչև 1923 թ.-ը խորհրդային Ուկրաինայի կառավարությունն ինքնուրույն դիվանագիտական գործունեություն էր ծավալում (48 համաձայնագիր էր կնքել), արտաքին առևտուր էր իրականացնում և նույնիսկ ուկրաինական բանակ կազմավորելու առաջին քայլերն էր կատարում:

Այս ամենից բացի, ուկրաինական բոլշևիկների շրջանում կային շատ ազդեցիկ խմբավորումներ, որոնք պաշտպանում էին ուկրաինական խորհրդային պետականության գաղափարը: Այդ խմբավորումներում հիմնականում բորոտրիստներն էին և ուկրաինական (պայքարողները և ուկրաինական կոմունիստները), որոնք 1919 թ.-ին անջատվել էին ուկրաինական էսեններից ու սոցիալ-դեմոկրատական կուսակցությունից և միացել էին բոլշևիկներին: Այդ երկու խմբավորումներից առավել մեծաքանակն ու ազդեցիկը բորոտրիստներն էին՝ Օլեքսանդր Շուսկու, Վասիլ Բլաշկիտնու և Միկոլա Շինկարի գլխավորությամբ: Բնույթով նարոդնիկական կուսակցություն լինելով, նրանք առավել սերտ կապերի մեջ էին ուկրաինական գյուղի և գյուղացիության հետ, քան բոլշևիկները: 1919 թ.-ի ամռան վերջին, երբ խորհրդային իշխանությունը Ուկրաինայում երկրորդ անգամ ձախողվեց, բորոտրիստները նույնիսկ փորձ արեցին բոլշևիկներից խլել Ուկրաինայում կոմունիստական հեղափոխության առաջնորդի դերը: Վերանվանվելով Ուկրաինայի Կոմունիստական (բորոտրիստների) կուսակցություն, 1920 թ.-ի սկզբին նրանք դիմեցին Կոմունիստական Ինտերնացիոնալին՝ խնդրելով իրենց զրանցել որպես առանձին կազմակերպություն: Սակայն Մոսկվայի վերահսկողության տակ գործող Կոմիտեերը պատասխանեց մերժումով և բորոտրիստներն ստիպված եղան ինքնալուծարվել: Այնուամենայնիվ, քանի որ բոլշևիկներն ուկրաինալեզու կադրերի խիստ պակաս էին զգուս, իրենց կուսակցության շարքերն ընդունեցին մոտ 4 հազ. բորոտրիստների և նրանցից մի մասին նույնիսկ բարձր պաշտոններ տվեցին խորհրդային Ուկրաինայի կառավարությունում, ինչը հնարավորություն տվեց ազգային գիտակցությանը օժտված շատ ծախների խորհրդային ռեժիմի շրջանակներում շարունակելու պայքարը հանուն ուկրաինական պետականության:

Նույն ուղիով անցան նաև մի քանի հարյուր ուկրաիններ: Նրանք նույնպես փորձեցին օգտվել բոլշևիկյան մի քանի հաղթաթղթերից: Կոչվելով Ուկրաինական կոմունիստական կուսակցություն, նրանք փորձեցին, և նույնպես անարդյունք, ընդունվել Կոմիտեերնի մեջ: 1925 թ.-ին նրանք նույնպես ստիպված եղան ինքնալուծարվել և նրանցից շատերը, ներառյալ այնպիսի առաջնորդներ, ինչպիսիք էին Միխայլո Տկաչենկոն և Յուրի Մազուրենկոն, ընդունվեցին բոլշևիկյան կուսակցության մեջ՝ առաջնորդվելով նույն դրդապատճառներով, ինչ բորոտրիստները՝ կուսակցության ուկրաինական քաղաքականության վրա ներսից ազդելու նպատակով:

Ի տարբերություն բոլշևիկյան կուսակցության այդ «նորադարձ» անդամների, որոնք ստիպված էին «ճշգրտել» իրենց համոզումները, կային նաև կուսակցության ուկրաինացի հին անդամներ, որոնք անկեղծորեն ձգտում էին կոմունիզմի հաղթանակին: Նրանք համարում էին, որ այդ նպատակին հասնելու լավագույն միջոցը կլիներ բոլշևիզմի «ուկրաինացումը», ինչն այդ գաղափարը բնակչության համար կդարձներ առավել զրավիչ ու հասկանալի: Դա առաջին հերթին ենթադրում էր, որ խորհրդային կառավարությունը պետք է լինի նաև ուկրաինական կառավարություն: Այդ խմբի ամենահայտնի ներկայացուցիչը Միկոլա Սկրիպնիկն էր՝ Լենինի մտերիմ զինակիցը, ուկրաինական խորհրդային բոլոր երեք կառավարությունների առաջատար դեմքերից մեկը: Վերջապես՝ կային նաև մի քանի ոչ-ուկրաինական ծագումով բոլշևիկներ, որոնք շահագրգռված էին Ուկրաինայի անկախությանը: Նրանցից մեկը խրիստիան Ռակովսկին էր, ուկրաինական խորհրդային կառավարության գլուխը: 1919 թ.-ին նա դեռևս մեծ քամահրանքով էր վերաբերվում ուկրաինական ազգային ձգտումներին, բայց արդեն 1922 թ.-ին, հասկանալով, որ ինչքան շատ լիազորություններ ունենա ուկրաինական կառավարությունը, անձամբ ինքն այնքան մեծ իշխանություն կունենա, դարձավ թունդ հակակենտրոնամետ և ուկրաինական ինքնավարության պաշտպան:

Չիշատակված տեսակետները, հայացքներն ու մտտեցումները հատուկ չէին միայն խորհրդայնամետ ուկրաինացիներին: **Դրանք լայն տարածում էին գտել նաև Կովկասի և Միջին Ասիայի նորաստեղծ խորհրդային կառավարություններում:** Նույնիսկ Մոսկվան էր համամիտ, որ քաղաքացիական պատերազմի ժամանակ կնքված բոլոր նախկին ռազմական դաշինքներն ու ժամանակավոր համաձայնագրերը, որոնք ձևական բնույթ էին կրում (գործնականում բոլորին միավորող ուժը կուսակցությունն ու Կարմիր բանակն էին), արդեն չեն համապատասխանում ժամանակի պահանջներին: Այդ պատճառով էլ 1922 թ.-ի վերջին ամիսներին Մոսկվայում համընդհանուր բանավեճ սկսվեց՝ Ռուսաստանի, Ուկրաինայի, Բելոռուսիայի և անդրկովկասյան հանրապետությունների միջև փոխհարաբերությունների բնույթի և ավելի հաստատուն կապեր մշակելու վերաբերյալ:

Մահացու հիվանդ Լենինը չկարողացավ գործուն մասնակցություն ունենալ այդ հուլիս կարևոր բանավեճին: Այդ պատճառով բանավեճի ընթացքում վճռորոշ դեր ստանձնեց **Իոսիֆ Ստալինը**, որ այդ ժամանակ ազգային գործերի կոմիսարն էր և կուսակցության Կենտկոմի գլխավոր քարտուղարը: Չնայած իր վրացական ծագմանը, նա համոզված կենտրոնամետ էր և հակաազգայնական: Չենվելով կուսակցության ռուս մեծաթիվ անդամների աջակցության վրա, նա առաջ քաշեց «ինքնավարացման» տեսությունը, ըստ որի՝ բոլոր ոչ-ռուսական հանրապետությունները պետք է միավորվեն միասնական Ռուսական խորհրդային պետության մեջ: Ոչ-ռուս ժողովուրդներին առաջարկվում էր Ռուսական հանրապետության մեջ մշակութային ինքնավարություն: Այդ առաջարկությունները ոչ-ռուս բոլշևիկների անասելի զայրույթն առաջացրեցին: Սկրիպնիկն ու մյուս ուկրաինացիներն այն բնորոշեցին որպես վատ բողարկված ռուսական ազգայնամուլություն (շովինիզմ): Ի նշան բողոքի, Վրաստանի կոմկուսի Կենտկոմը լրիվ կազմով հրաժարական տվեց: Միջինասիական բոլշևիկների ներկայացուցիչ Սուլթան Գալիևը կուսակցությանը մեղադրեց «կարմիր իմպերիալիզմին» զորավիզ լինելու մեջ:

Այդ պահին բանավեճին միջամտեց Լենինը: Նա գերազանց հասկանում էր, որ եթե խորհրդային Ռուսաստանը կլանի մյուս հանրապետություններին, ապա նա ոչ միայն կկորցնի առանց այդ էլ բավականին թույլ աջակցությունը, որ այդ հանրապետություններում ունեին բոլշևիկները, այլև խորհրդային համակարգի մասին ժայռատիճան աննպաստ կարծիք կստեղծվի զաղութացված ժողովուրդների մեջ ամբողջ աշխարհում: Եվ եթե ռուսական ազգայնականությունն ու կենտրոնամետությունը վտանգ էին սպառնում համաշխարհային հեղափոխության գործին, ապա Լենինը «մեծապետական շովինիզմին» մահացու պայքար» հայտարարեց: **Դրանից ելնելով, նա բոլոր խորհրդային հանրապետություններին առաջարկեց «հավասարների միության» մեջ մտնել:**

Այդ միության կամավորությունը, ըստ Լենինի, երաշխավորվում էր դրանից դուրս գալու յուրաքանչյուր հանրապետության իրավունքով: Այդ կետն ընդգծվում էր նաև 1924 թ.-ի Սահմանադրության մեջ: Կառավարության լիազորություններն այնպես էին բաշխվում, որ դրանց որոշակի մասը բացարձակապես մնում էր հանրապետությունների տնօրինությանը: Մյուս մասը պետք է մնար հանրապետական և միութենական մարմինների համատեղ կառավարմանը: Վերջապես, լիազորությունների մի որոշ մասն էլ մնում էր բացարձակապես միութենական կառավարության տնօրինությանը: Այսպիսով՝ ուկրաինական խորհրդային կառավարու-



թյան բացարձակ իրավասության տակ, առնվազն՝ տեսականորեն, մնում էին հանրապետության տարածքում գյուղատնտեսության և արդարադատության, կրթության, ներքին գործերի, առողջապահության և սոցիալական ապահովության բնագավառները: Միութենական կառավարության հետ համատեղ պետք է վարեին պարենային քաղաքականության, աշխատանքային պաշարների, ֆինանսական, հսկողության և ժողովրդական տնտեսության բնագավառների գործերը: Արտաքին քաղաքականությունը, բանակն ու նավատորմը, կապն ու տրանսպորտը, արտաքին առևտուրը մնում էին Մոսկվայում գտնվող միութենական կառավարության բացարձակ իրավասությանը:

Այնուամենայնիվ, Լենինի պահանջով այս ուրվագծում մի շատ էական վերապահում հավելվեց: *Միությունից դուրս գալու իրավունքը՝ հանրապետությունների անկախության իրավունքի այդ անկյունաքարը, ուժի մեջ կարող էր մտնել միայն կոմունիստական կուսակցության համաձայնության դեպքում:* Քանի որ կուսակցությունը մնում էր խիստ կենտրոնացված և փաստորեն Մոսկվայում հաստատված ռուսական կազմակերպություն, *մասն համաձայնության հնարավորությունը փաստացի բացառվում էր:* Այսպիսով, լենինյան ծրագիրը թույլ էր տալիս ստեղծել ֆեդերալ կառույց (կամ՝ ոմանց կարծիքով, նրա ճակատային մասը)՝ այդ ձևով խաղաղեցնելով ազգայնականներին և միաժամանակ քաղաքական լիիրավ վերահսկողությունը պահելով կենտրոնի ձեռքում:

Չնայած ոչ-ռուսները, հատկապես ուկրաինացիները, լուրջ առարկություններ ունեին լենինյան ծրագրի դեմ, բայց այն բացահայտորեն գերադասելի էր այն ամենից, ինչ առաջարկում էր Ստալինը: Այդ պատճառով էլ, *1922 թ.-ի դեկտեմբերի 30-ին այդ ծրագիրը հավանության արժանացավ Ռուսական, Բելոռուսական, Ուկրաինական հանրապետությունների և Անդրկովկասյան ֆեդերացիայի կողմից, որով էլ հիմք դրվեց Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությանը:*

Խորհրդային Միության կազմում Ուկրաինան երկրորդն էր իր տարածքով (ամենամեծը Ռուսաստանի հանրապետությունն էր): Նրա տարածքն ընդգրկում էր 450 հազ. քառ. կմ, իսկ բնակչությունն ավելի քան 26 մլն մարդ էր: Մայրաքաղաք ընտրվեց Խարկովը, քանի որ այն Կիևի նման սերտ կապեր չուներ նախկին ազգային կառավարությունների հետ: Սկզբում հանրապետությունը բաղկացած էր 12 նահանգից: 1925 թ.-ին վարչական վերաբաժանման արդյունքում ստեղծվեց 41 շրջան, իսկ 1939 թ.-ին վերակազմավորվեց 15 մարզերի: Հինգ միլիոնանոց ոչ-ուկրաինական բնակչության մեծ մասն ապրում էր այդ նպատակով հատուկ ստեղծված 12 վարչական շրջաններում (այսպես կոչված՝ ազգային շրջաններ):

*ԽՍՀՄ-ի կեղծ-ֆեդերալ ձևի բացատրության տարբեր տեսակետներ կան:* Արևմտյան որոշ տեսաբաններ գտնում են, որ դա ընդամենը ծայրագավառների ոչ-ռուս ժողովուրդների վրա կենտրոնի գերիշխանությունը վերահաստատելու խնամքով շղարշված ձև է: Այլոք ֆեդերալ կառույցն համարում են հաղթած, բայց դեռևս թույլ Խորհրդային վարչակարգի փոքրիկ զիջումը ազգային ինքնագիտակցության ծաղկում ապրող ոչ-ռուս ժողովուրդներին: Խորհրդային հեղինակները ֆեդերալ համակարգը դիտում էին որպես հաջողակ մի փորձ՝ ստեղծելու նոր, լավագույն մի կառույց, որի ներսում տարբեր ժողովուրդներ կկարողանան համերաշխ ու սիրով ապրել և ազատ ու ներդաշնակ զարգանալ:

Սակայն *ԽՍՀՄ կառուցվածքը տարբեր ժողովուրդներին իրենց գործերն իրենց հայեցողությամբ կարգավորելու հնարավորություն չէր ընձեռում:* Ուկրաինային վերաբերող բոլոր վերջնական որոշումներն առաջվա պես ընդունվում էին Մոսկվայում և ոչ երբեք Խարկովում: Ի դեպ՝ հենց *Միություն ստեղծելու մասին ուկրաինացիների կարծիքը ոչ ոք չէր հարցրել:* Ռուսաստանի և Ուկրաինայի միջև փոխհարաբերությունների բնույթի վերաբերյալ որոշումն ընդունվել էր փոքրաթիվ և իր կազմով ըստ էության ռուսական կուսակցության կողմից:

Այս ամենով հանդերձ, ճիշտ չէր լինի անվերապահ ասել, թե ֆեդերատիվ համակարգը ուկրաինացիներին և մյուս ոչ-ռուս ժողովուրդներին ոչ մի լավ բան չբերեց: Ցարիզմի շրջանում ուկրաինացիների լեզուն, մշակույթը, ազգային ինքնությունը դաժան հալածանքների էին ենթարկվում:

Հենց «Ուկրաինա» աշխարհագրական հասկացությունը որոշակի ընդգծված սահմաններ չուներ և փոխարինվում էր այնպիսի անորոշ տերմիններով, ինչպես ասենք՝ «Հարավ-Արևելյան երկրամաս», կամ «Մալոռուսիա»: Հակառակը՝ Խորհուրդների ժամանակ *Ուկրաինայի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը դարձավ հստակ սահմանված ազգային և տարածքային ամբողջություն՝ սեփական վարչակազմով ու կառավարման կենտրոնով:* Այսպիսով, վերջապես ուկրաինացիներն ունեցան իրենց ազգային ինքնությանը համահունչ

վարչատարածքային սահմաններ, այսինքն այն, ինչից զրկված էին XVIII դարի կոզակական **Հեթմանության** ժամանակներից ի վեր:

## Ուկրաինացում

Չնայած քաղաքացիական պատերազմի օրերին բուլշևիկների կողմից շոյալվող ազգերի ինքնորոշման սկզբունքը հարգելու խոստումներին, չնայած ազգային խորհրդային հանրապետությունների ստեղծմանն ու Խորհրդային Միության ցուցադրական ֆեդերատիվ բնույթին, կոմունիստական կուսակցությունն իր կառավարման առաջին տարիներին նկատելիորեն զգում էր ոչ-ռուս ժողովուրդների կողմից աջակցության պակասը: Այն դեռևս մնում էր քաղաքներում հիմնավորված, հիմնականում ռուսական փոքրիկ մի կազմակերպություն, որ անվստահ էր զգում իրեն գյուղացիության շրջանում, որն ամեն վայրկյան պատրաստ էր երես թեքել նրանից, և ոչ-ռուս ժողովուրդների, որոնց չեզոքությունը նրանց նկատմամբ խիստ կաակածելի էր: Առանձնապես Ուկրաինան էր համարվում «Խորհրդային իշխանության խուլ օղակը», ինչպես բացառապես խոստովանում էր ինքը՝ Ստալինը: Այդ իսկ պատճառով, *գյուղացիությանը ՆԷՊ-ով զսպելուց և խաղաղեցնելուց հետո, կուսակցությունն սկսեց ուղիներ փնտրել՝ ոչ-ռուս ժողովուրդների կողմից ճանաչման և աջակցության արժանանալու համար:*

1923 թ.-ին, կուսակցության XII համագումարում, ղեկավարությունը հիմք դրեց «արմատավորման» քաղաքականությանը: Այն կոչ էր անում ջանք խնայել, որպեսզի կուսակցության մեջ և պետական մարմիններում ներգրավվեն ոչ-ռուս ժողովուրդների ներկայացուցիչներ, որպեսզի խորհրդային ծառայողները սովորեն և զործածեն տեղական լեզուները, որպեսզի պետությունն աջակցի տարբեր ժողովուրդների մշակութային և սոցիալական զարգացմանը: Այդ քաղաքականության ուկրաինական տարբերակը կոչվեց **ուկրաինացում:**

Բայց մինչև ուկրաինացումն սկսելը, հարկ էր Ուկրաինայի կուսակցական ղեկավարության կազմում որոշ փոփոխություններ մտցնել, որն այդ ժամանակ բաղկացած էր գլխավորապես Մոսկվայի ուղարկված խորհրդային պաշտոնյաներից ու տեղական իրեաներից: Նրանք մեծ մասամբ ոչ միայն ըմբռնումով չմտածեցան ուկրաինացման անհրաժեշտությանը, այլ ավելին՝ նույնիսկ ցանկություն չդրսևորեցին կյանքի կոչելու այն: Ընդ որում՝ նրանցից շատերը բացահայտորեն ցուցադրում էին իրենց առավելությունը «տեղացիների» նկատմամբ: Օրինակ՝ Ուկրաինայի քարծրաստիժան պաշտոնյաներից մեկը՝ Դմիտրի Լեբեդը, ճիշտ այն ռուսներից էր, որոնք չէին թաքցնում իրենց անբարյացակամությունը ուկրաինական մշակույթի, սովորույթների, և ընդհանրապես ուկրաինացման նկատմամբ: Նա պաշտպանում էր այսպես կոչված՝ «երկու մշակույթների պայքարի տեսությունը», ըստ որի՝ ռուսական մշակույթն Ուկրաինայում, որպես զարգացող պրոլետարիատի ու քաղաքի առաջադիմական մշակույթ, անխուսափելիորեն պետք է հաղթի ուկրաինական մշակույթին, որ կապված է հետամնաց գյուղացիության ու գյուղի հետ, այդ իսկ պատճառով կոմունիստները պարտավոր են աջակցել ու նպաստել այդ «բնականոն գործընթացին»:

Չնայած Լեբեդն ու իր գաղափարները շատ հովանավորներ ունեին Մոսկվայում, սակայն դրանք անհարիր էին ժամանակի պահանջներին և ստիպված էին նրան և ոչ-ուկրաինացի կուսակցական նշանավոր շատ գործիչների Ուկրաինայից ետ կանչել: Նրանց տեղերն զբաղեցրին առավել հնազանդ ու կարգապահ դրածոներ Մոսկվայից, ինչպես օրինակ՝ **Լազար Կազանովիչը**՝ ուկրաինացի իրեա, որ գլխավորում էր Ուկրաինայի կուսակցական մարմինը և պատրաստ էր հնազանդորեն կենսագործել ուկրաինացման կուսակցության կառույցը, ինչպես նաև ուկրաինացիներ, որոնք անկեղծորեն շահագրգռված էին այդ քաղաքականության հաջողությամբ: Դրանց թվին էին պատկանում ուկրաինական խորհրդային կառավարության ղեկավար Ռակովսկուն փոխարինած **Վլադ Զուբարը**, լուսավորության ժողովրդական կոմիսար **Օլեքսանդր Շունսկին**, նախկին բորոտքիստ, ամենահաս իմ բուլշևիկ **Միկոլա Ակրիպինիկը**, որ դարձել էր արդարադատության ժողովրդական կոմիսար: «Ռուսական բյուրոկրատ և ազգայնամուլ» (ինչպես նրանց կոչում էր Լենինը) գործիչներից ազատվելուց հետո միայն Խորհրդային Ուկրաինայի կառավարությունը կարողացավ ձեռնամուխ լինել նոր քաղաքականության իրականացմանը:

*Ուկրաինացման առաջնահերթ միջոցը ուկրաիներեն լեզուն լայնորեն ներդնել էր՝ ամենից առաջ կուսակցական և պետական մարմիններում:* Դրա անհրաժեշտությունը շատ ակնհայտ



եր: 1922 թ.-ին Ուկրաինայի Կոմկուսի՝ ուկրաիներեն լեզուն կանոնավոր գործածող մեկ անդամին յոթ ռուսալեզու էր ընկնում, իսկ պետական մարմիններում այդ հարաբերակցությունը կազմում էր մեկը՝ երեքին: 1923 թ.-ի օգոստոսին, այդ աղաղակող անհամապատասխանությունը վերացնելու նպատակով, հրապարակվեց մի հրահանգ, որը պարտավորեցնում էր կուսակցական և պետական գործիչներին՝ հաճախել ուկրաիներեն լեզվի հատուկ դասընթացներին: Ովքեր հաջողությամբ չավարտեին այդ դասընթացները, նրանց սպառնում էր աշխատանքից հեռացումը: 1925 թ.-ի շեմին բոլոր պետական հիմնարկներում ծառայողները պարտավոր էին գործավարությունը տանել ուկրաիներեն լեզվով: Իսկ 1927 թ.-ին Կազանովիչն հայտարարեց, որ կուսակցական ամբողջ գրագրությունը տարվելու է միայն ուկրաիներենով: Չնայած կուսակցական և պետական մարմիններում աշխատող բազմաթիվ պաշտոնյաներ խանդավառված չէին այս նորամուծություններով, սակայն նոր քաղաքականությունը տպավորիչ արդյունքներ տվեց: Եթե 1922 թ.-ին պետական մարմիններում գործավարության միայն 20 %-ն էր տարվում ուկրաիներենով, ապա 1927 թ.-ի շեմին այդ ցուցանիշն հասավ 70 %-ի:

*Միաժամանակ, հանրապետության կուսակցական և պետական կառույցներում աճեց ուկրաիներենի թիվը:* Եթե 1923 թ.-ին պետական ծառայողների 35 և կուսակցության անդամների 23 %-ն էին միայն ուկրաիներեն, ապա 1927 թ.-ի շեմին նրանց տեսակարար կշիռն աճեց, հասնելով համապատասխանաբար՝ 54 և 52 %-ի: Այդուհանդերձ, ուկրաիներենը, որպես սկսնակ նորավարժներ, համարվում էին կուսակցական և պետական մարմինների հիմնականում ստորին օղակները: 1920-ական թվականների վերջին նրանք ՈւԿ(Բ)Կ Կենտկոմում ընդամենը 25 %-ն էին կազմում:

*Ուկրաիներենը թափանցում էր խորհրդային Ուկրաինայի կյանքի բոլոր ոլորտները:* Հատկապես մեծ ազդեցություն գործեց ժողովրդական կրթության բնագավառի վրա: Հակառակ ցարական ռեժիմի, խորհրդային իշխանությունը մեծ ուշադրություն էր դարձնում կրթությանը և նրա նվաճումներն այդ ոլորտում իսկապես տպավորիչ էին: Կրթության նկատմամբ հոր-հուրդների հատուկ հոգատարությունը կարելի է բացատրել մի քանի համագամանքներով: Քանի որ խորհրդային հասարակությունը պետք է ծառայեր որպես «նոր աշխարհի» տիպար, ապա բնականաբար պետք է կրթված լիներ: Բացի այդ՝ միայն կրթված ու զարգացած բնակչությունը կարող էր բարձրացնել պետության արտադրողական ուժն ու հզորությունը: Վերջապես, կրթության համակարգը գերազանց միջոց էր գալիք սերունդներին խորհրդային գաղափարների ոգով դաստիարակելու համար: *Խորհրդային իշխանության գործունեությունն հատկապես արգասաբեր եղավ անգրագիտության վերացման գործում:* Հեղափոխության ժամանակ քաղաքային բնակչության միայն 40 %-ն էր գրագետ, իսկ 10 տարի անց՝ արդեն 70 %-ը: Գյուղում, այդ նույն ժամանակ, գրագետների տեսակարար կշիռը 15 %-ից հասավ 50 %-ի: Քանի որ անգրագիտության վերացումն իրականացվում էր ուկրաիներեն լեզվով, ապա գրագիտության աճը նշանակում էր նաև ուկրաիներենի ազդեցության ծավալումը գյուղական երիտասարդության շրջանում:

*Կրթության համակարգի ուկրաիներենի ոգեշնչումը ու կազմակերպիչը Սկրիպնիկն էր, որ 1927-1933 թ.թ.-ներին ղեկավարում էր լուսավորության ժողկոմատը:* Նրա անձնուրաց աշխատանքի շնորհիվ արդեն 1929 թ.-ին, որ ուկրաիներենի բարձրակետն էր, հանրակրթական դպրոցների 80 %-ից ավելին, ՊՏՈՒ-ների (պրոֆտեխնիկական ուսումնարան) 50 %-ը և բուհերի 30 %-ը ուսուցումը տանում էին ուկրաիներեն լեզվով: Ուկրաիներենի 97 %-ից ավելին ուկրաիներեն լեզվով էր կրթություն ստանում: Ռուսական և հրեական ազգային փոքրամասնություններն հնարավորություն ունեին կրթվելու ռուսերեն լեզվով, սակայն ենթադրվում էր, որ որոշ առարկաներ դասավանդվելու են ուկրաիներեն: Հեղափոխության նախօրյակին, երբ ուկրաիներենի դպրոցներ փաստորեն չկային, ուկրաիներենը միայն կերպարներին այն, ինչ որ Սկրիպնիկն ընդամենը տասը տարի անց իրականություն դարձրեց:

Ուկրաիներենի հաջողություններն առավել տպավորիչ էին ընթացքում ծագող դժվարությունների ֆոնի վրա, հատկապես այնպիսի, ինչպես օրինակ՝ բարձրորակ ուսուցիչների պակասն էր: Ուկրաիներենի համար 100 հազ. ուսուցիչ կարիք էր զգացվում, բայց իրականում միայն 45 հազ.-ը կար: Այդ խնդիրը լուծելու բուռն փնտրումների մեջ Սկրիպնիկը նույնիսկ փորձեց մի քանի հազար ուսուցիչ հրավիրել Գալիչիայից, սակայն խորհուրդները, զգուշանալով բարձր զարգացած ազգային ինքնագիտակցություն ունեցող գալիցիացիների ներկայությունից, համաձայնություն չտվեցին: Մեծ հոգս էր ուկրաիներեն լեզվով դասագրքերի ու ձեռնարկների պակասը: Վերջապես, ուկրաիներենի ճանապարհին, հատկապես բուհական

մակարդակով, խոչընդոտում էր այն, որ ինստիտուտների ռուսալեզու դասախոսական կազմի մեծ մասը չէր ցանկանում «գեղջկական» լեզվով դասավանդել: Նման վերաբերմունքի բնորոշ օրինակ է Օդեսայից պրոֆեսոր Տոլստոյի հայտարարությունը՝ «Ուկրաիներեն լեզվով դասավանդելու անցած բոլոր ընկերներին ես համարում եմ ուրացողներ»: Այդուհանդերձ, շուտով բուհերում էլ գերակշիռ մաս կազմեցին ուկրաիներեն ուսանողները: Ուկրաիներենի հաջողությունները կրթության բնագավառում ազգային լավատեսության համընդհանուր տրամադրություն առաջացրեցին, ինչը դիպուկ նկատել է նշել է գրող *Բորիս Անտոնենկո-Ղավիղովիչը*. «միլիոնների երթը ուկրաիներենի դպրոց» նա համարել է *«արշալույսը մեծ վերածննդի»:*

*Վերածննդի ոգով էր շնչում և ուկրաիներենի մամուլը,* որ ցարական ռեժիմի օրոք դաժան հետապնդումների քիթախ էր, իսկ ուկրաիներենի խորհրդայնացման առաջին տարիներին էլ մի լավ օրի չէր: 1922 թ.-ին այստեղ հրատարակվող գրքերի միայն 27 %-ն էր ուկրաիներեն լեզվով, իսկ թերթերն ու ամսագրերը 10 %-ից էլ քիչ էին կազմում: 1927 թ.-ի շեմին արդեն գրականության 50 %-ից ավելին ուկրաիներեն էր, իսկ 1933 թ.-ի շեմին՝ հանրապետությունում լույս տեսնող 426 անուն թերթերից 373-ը տպագրվում էր բնիկ ժողովրդի մայրենի լեզվով:

Մեծ մասամբ Սկրիպնիկի համար բողոքների շնորհիվ, թե Կարմիր բանակը հանրապետությունում ռուսացման միջոց է հանդիսանում, *պահեստային խոշոր ստորաբաժիններում և հրամկազմի դպրոցներում նույնպես մտցվեց ուկրաիներենը:* Ավելին, ծրագրեր էին հղանում բանակը տարածքային կազմավորումների սկզբունքով վերակառուցելու վերաբերյալ: Որքան էլ տարօրինակ է՝ այդ ծրագրերին հավանություն տվեցին Կարմիր բանակի այնպիսի նշանավոր ոչ-ուկրաիներենի հրամանատարներ, ինչպիսիք էին Միխայիլ Ֆրունզեն և Յոնա Յակիրը:

*Ուկրաիներենի ձեռքբերումները հաստատուն և տևական դարձնելու համար անհրաժեշտ էր քաղաքներում հաղթահարել ռուսական մշակույթի մենաշնորհը:* 1920-ականներին կատարվող սոցիալ-տնտեսական տեղաշարժերը ուկրաիներենի վստահություն էին ներշնչում, որ այդ նպատակը միանգամայն հասանելի է: 1928 թ.-ին, երբ խորհուրդները երկրի արդյունաբերականացմանը լայն թափ հաղորդելու ուղղություն որդեգրեցին, քաղաքներում աշխատող մեծ պահանջարկ առաջացավ: Միաժամանակ, գյուղերում տարվող համայնացման քաղաքականությունը նպաստեց նրան, որ շատ գյուղացիներ հողը լքեցին: Արդյունքում՝ *ուկրաիներենի գյուղացիները զանգվածաբար լքեցին քաղաքները, ամբողջովին փոխելով պրոլետարիատի էթնիկ կազմը, ուրեմն և, ամբողջությամբ վերցրած, քաղաքային բնակչության կազմը:* Այսպես՝ եթե 1923 թ.-ին, արդյունաբերական այնպիսի կարևոր կենտրոններում, ինչպիսիք էին Խարկովը, Լուգանսկը և Դնեպրոպետրովսկը, ուկրաիներենը կազմում էին բնակչության համապատասխանաբար 38; 7 և 16 %-ը, ապա տասը տարի անց նրանց տեսակարար կշիռը բարձրացավ, հասնելով համապատասխանաբար 50; 31 և 48 %-ի: *1930-ական թվականների կեսերին ուկրաիներենը մեծամասնություն էին կազմում գրեթե բոլոր խոշոր քաղաքներում և հիմա, ուկրաիներենի շնորհիվ, նրանք գերադասում էին մնալ ուկրաիներենով, և ոչ թե ռուսերով, ինչպես լինում էր նախկինում:* Թվում էր, թե ուկրաիներենը, ինչպես և Արևելյան Եվրոպայում աճեցուց, գեղջկական մեծամասնության լեզուն ու մշակույթը գերակայության կիսանեն քաղաքային բնակչության նկատմամբ:

Ուկրաիներենի քաղաքականության հաջողություններն (ի դեպ՝ ոչ այնպիսի, ինչպիսիք սպասում էին Սկրիպնիկն ու նրա համախոհները) առաջին հերթին պայմանավորված էին նրանով, որ այն իրագործվում էր արդիականացման համապարփակ գործընթացում: Իհարկե, հայրենասիրությունն ու ավանդույթներին նվիրվածությունը չէին զլխավոր պատճառները, որ ուկրաիներենի հնարավորություն ընձեռեցին նման հասարակական կարգավիճակ տալու մայրենի լեզվին. ուկրաիներենը որևէ այլ լեզվից ավելի լավ հնարավորություններ էր տալիս կրթություն ստանալու, թերթերի ու ամսագրերի լրատվությունից օգտվելու, պետական կառույցների հետ գործեր վարելու և պարզապես այս կամ այն աշխատանքը կատարելու համար: *Ուկրաիներենի շնորհիվ ուկրաիներեն լեզուն դադարեց սակավաթիվ մտավորականների երազային սենյակ գաղափարը, կամ էլ հետամնաց գյուղացիության բնորոշ արտահայտչամիջոցը լինելուց:* Այդ լեզուն հիմա դառնում էր արդիականացման և արդյունաբերականացման ուղիով ընթացող հասարակության ինքնարտահայտման ու հաղորդակցման զլխավոր միջոցը:



## Ազգային կոմունիզմ

Կոմունիզմի տարատեսակների առկայության շնորհիվ, որոնք հասունացան այնպիսի երկրներում, ինչպես օրինակ՝ նախկին Զարավալավիան, կամ՝ Զինաստանը, ներկայումս ճանաչում է գտել այն գաղափարը, որ յուրաքանչյուր ժողովուրդ կարող է դեպի կոմունիզմ գնալ «իր ուղիով»: Դժվար չէ նկատել, որ հատկապես ուկրաինական, ինչպես նաև վրացական և միջինասիական բուլղարները նպաստեցին խորհրդային իշխանության հաստատմանը 1917-1920 թ.թ.-ներին, առաջինը կանգնելով այդ ուղու վրա՝ ծնելով ազգային կոմունիզմ երևույթը: Այդ ուղղության կողմնակիցներն իսկական կոմունիստներ էին, որոնք անկեղծորեն համարում էին, թե մարդկության փրկության միակ ճշմարիտ ուղին մարքսիզմ-լենինիզմն է: Բայց դրա հետ մեկտեղ նրանք համարում էին, որ կոմունիզմը լավագույն արդյունքների կարող է հասնել միայն այն դեպքում, եթե հարմարեցվի տեղական-ազգային յուրահատուկ պայմաններին: Նման տեսակետը ենթադրում էր, որ ռուսական ուղին միակը չէ, և մյուս ժողովուրդների ընտրած ուղիները ոչ պակաս ճշմարիտ են: Այլ կերպ ասած՝ խոսքը նոր հասարակարգ կառուցելու գործում ազգային գաղափարների օգտագործման, «ազգային դեմքով» կոմունիզմ արարելու մասին էր:

Քանի որ Արևելյան Ասիայում ուկրաինական ազգային շարժումը պատմականորեն սերտ կապեր ուներ սոցիալիստական ավանդույթների հետ, ազգային կոմունիզմի գաղափարները բավական հեշտությամբ կողմնակիցներ գտան բուլղարական ճամբարի շատ ուկրաինացիների շրջանում: Դեռևս 1918 թ.-ի սկզբին, երկու կոմունիստ՝ Վասիլ Շախարայը (ուկրաինայի արտաքին գործոց առաջին ժողովուրդ) և Սերգեյ Մազլախը (հրեական ծագումով հին բուլղար), կուսակցությանը խիստ քննադատության ենթարկեցին ազգային շարժումների, և հատկապես ուկրաինականի նկատմամբ վարած նրա երեսպաշտ քաղաքականության համար: Բացահայտորեն ի նկատի ունենալով ռուսական ազգայնականությունը, որով բառացիորեն ներծծված էր կուսակցությունը, նրանք իրենց՝ «Յեղափոխությունն ուկրաինայում» և «ուկրաինայում տիրող ներկա իրավիճակի մասին» գրքույկներում ընդգծում էին, որ՝ «քանի դեռ ազգային հարցը մնում է չլուծված, քանի դեռ մի ազգը պետք է դեկավարի, իսկ մյուսը ստիպված պետք է ենթարկվի նրան, այն, ինչ մենք հիմա ունենք, չի կարելի սոցիալիզմ անվանել»:

Մեկ տարի անց, ՌԿԿ(բ)Կ-ում ազգային կոմունիստական հայացքներն իրենց կրկին զգացնել տվեցին, այս անգամ այսպես կոչված՝ ֆեդերալիստական ընդդիմության տեսքով, Յուրի Լասչինսկու գլխավորությամբ: Այդ խմբավորումը պահանջում էր ուկրաինական խորհրդային պետության լիարժեք անկախությունը, որը պետք է ունենար լիակատար իշխանություն, այդ թվում՝ ռազմական և տնտեսական բնագավառներում, ինչպես նաև անհրաժեշտ էր համարում անկախ կենտրոնական կուսակցական մարմնի գոյությունը, որը չէր ենթարկվելու ռուսական կոմկուսին: Երբ Մոսկվան հրաժարվեց նույնիսկ քննարկել այդ պահանջները, Լասչինսկին և իր կողմնակիցները, որպես բողոքի նշան, դուրս եկան կուսակցությունից, ինչը խայտառակ աղմուկ բարձրացրեց այդ ազնվաբարո ընտանիքում:

Երբ ուկրաինացիներն քաղաքականությունը բավականին ծավալվեց ու հզորացավ, ազգային կոմունիստական միտումները կրկին աշխուժացան՝ կապված նրանց ամենափայլուն ներկայացուցիչների անունների հետ:

### «Խվիյովիզմ»

«Ռուսական ուղուց» հրաժարվելու ամենանկեղծ ու անզուսպ կոչի հեղինակը Միկոլա Խվիյովիցն էր: 1920-ականների ուկրաինական մշակույթի վերածննդի այդ ակամավոր ներկայացուցիչը սերում էր Արևելյան Ասիայի ռուս մանր կալվածք ունեցող ազնվական ընտանիքից (նրա իսկական ազգանունը Ֆիտիլ էր): Լինելով համոզված համազգայնական, նա բուլղարներին հարեց քաղաքացիական պատերազմի օրերին, հուսալով օգտակար լինել նրանց՝ համընդհանուր և արդար կոմունիստական հասարակարգ կառուցելու գործում: Քաղաքացիական պատերազմից հետո Խվիյովիցը դարձավ ուկրաինական խորհրդային ամենաճանաչված գրողներից մեկը, գրողների ավանգարդիստական «Ванитте» կազմակերպության հիմնադիրը և ուկրաինա-ռուսական հարաբերությունների մշտական քննադատը՝ հատկապես մշակույթի բնագավառում:

Գալիք կոմունիզմի մաքրամաքոր երազանքներով տարված Խվիյովիցը դառն հիասթափություն ապրեց՝ բախվելով ազգային հարցում բուլղարների անշահախնդիր ու արդարա-

միտ տեսության և իրական գործողությունների աղաղակող հակասությանը, ինչպես նաև կուսակցական բյուրոկրատների ռուսական ազգայնամոլությանը, որ իրենց կանխակարծությունը քաղցնում էին, իր խոսքերով ասած՝ «Մարքսի մորուքով»: Չգտելով հեղափոխությունը փրկել ռուսական կործանարար ազգայնականությունից, Խվիյովիցը որոշեց ցուցադրել նրա իրական դեմքը: Իր համոզիչ փաստարկները ներկայացնելով գրաքննադատության ձևով, նա մատնանշում էր այն, որ «ռուս գրականությունն իր պասիվ-հոռետեսական ոգով սպառել է իրեն ու կանգ առել ճամփաբաժանում», և այդ պատճառով խորհուրդ էր տալիս ուկրաինացիներին՝ սահմանազատվել նրանից. «Քանի որ յուրաքանչյուրը պետք է գտնի զարգացման իր ուղին, մեր առջև ծառայած հարցը հետևյալն է՝ համաշխարհային ո՞ր գրականությունն ընտրել որպես ուղենիշ: Ամեն դեպքում՝ ոչ երբեք ռուսականը: Դա միանգամայն պարզ է... Իման այն է, որ ռուս գրականությունը դարերով ճնշել ու տիրել է մեզ՝ մղելով դեպի ստրկական նմանակության: Մեր երիտասարդ արվեստի համար ներշնչանքի աղբյուրը ռուս գրականության մեջ փնտրելը հավասարազոր է աճը դադարեցնելուն: Մենք կողմնորոշվում ենք դեպի Արևմտյան Եվրոպայի արվեստը, նրա ոճը, նրա աշխարհընկալումը»:

Ընդգծելով, որ ուկրաինացիները լիովին ընդունակ են ինքնուրույն սոցիալիստական արվեստ ստեղծելու, Խվիյովիցը պնդում էր, որ «երիտասարդ ուկրաինացի ազգը, ուկրաինական պրոլետարիատն ու իր մտավորականությունը հեղափոխական-սոցիալիստական վեհ գաղափարների կրողներ են, դրա համար էլ նրանք չպետք է կողմնորոշվեն դեպի համամիութենական քաղցեմիություն, դեպի նրա մոսկովյան շչակները»: Սեփական ուղիով գնալու ուկրաինացիներին ուղղված կրքոտ կոչն իր փայլուն արտացոլումը գտավ նրա «Геть вид Москви!» («Գեռու Մոսկվայից») նշանաբանում:

Չնայած Խվիյովիցի գաղափարներն ուղղված էին հիմնականում երիտասարդ գրողներին և հանգում էին գրական նոր կերպարներ փնտրելուն, սակայն քաղաքական լուրջ ենթատեքստ ունեին: Ընդ որում, պետք է նկատի ունենալ նաև, որ նման հակառուսական պոռթկումները ոչ այնքան ուկրաինական ազգայնականության դրսևորումներ էին, որքան հեղափոխական համազգայնականության: Խվիյովիցը խորապես համոզված էր, որ համաշխարհային հեղափոխությունը երբեք հաջողություն չի ունենա, եթե դառնա որևէ ազգի (տվյալ դեպքում՝ ռուսների) մենաշնորհը:

### «Շումսկիզմ»

Խվիյովիցի հայացքների վտանգավորությունը խորհրդային ռեժիմի համար սաստկանում էր նրանով, որ դրանք աջակցություն էին գտնում ոչ միայն գրական շրջանակներում, այլև հենց ուկրաինայի կոմունիստական կուսակցության, առաջին հերթին նախկին բորոտքիստների միջավայրում, որոնց առաջնորդը լուսավորության ժողկոմ Օլեքսանդր Շումսկին էր: Ես ոչ միայն հրաժարվեց դատապարտել Խվիյովիցի տեսակետները, ինչը պահանջում էին կուսակցության մոսկվայանետ կողմնակիցները, այլև անձամբ հանդես եկավ Մոսկվային քննադատող ելույթով:

Բորոտքիստներն ազգային հարցի վերաբերյալ կուսակցության դիրքորոշումը ոչ անկեղծ համարելու իրենց պատճառներն ունեին: Երբ Շումսկին և իր համախոհները միացան բուլղարներին, նրանց կառավարությունում բավականին բարձր պաշտոններ հանձնարարվեցին այն առումով, որ կառավարմանը «ուկրաինական երանգ» տրվի: Սակայն բուլղարների հաղթանակից անմիջապես հետո, բոլոր բորոտքիստներին կամ պաշտոնանկ արեցին, կամ ընդհանրապես կուսակցությունից վտարեցին: Ուկրաինացիներն սկզբնական շրջանում, երբ անհրաժեշտ էր կրկին պատրանք ստեղծել, իբր ուկրաինացի ուկրաինացիներն են կառավարում, Մոսկվայի հրամանով, դեռևս կուսակցության շարքերում մնացած բորոտքիստները և նրանցից առավել նշանավորը՝ Շումսկին, կրկին առաջին պլան մղվեցին: Հենց այդ ժամանակ էր, որ լուսավորության ժողկոմը որոշեց բացահայտել Մոսկվայի մեքենայությունները:

Խվիյովիցի նման դատապարտելով ռուսական ազգայնամոլությունը, Շումսկին քննադատություն ծավալեց բուլղարական սրբազնագույն սկզբունքի՝ կենտրոնամետության դեմ: 1926 թ.-ի սկզբին, Ստալինին գրած նամակում, նա ուշադրություն էր հրավիրում ուկրաինական ազգային վերածննդի վրա և ապացուցում էր, որ եթե այդ լայնածավալ ու դինամիկ շարժումը կառավարվի հատկապես ուկրաինական կոմունիստների կողմից, ապա այն միայն կծառայի կուսակցության շահերին: Հակառակ դեպքում, նշում էր նա, ազգային ինքնագիտակցության աճին զուգընթաց, այն ուկրաինացիները, որոնք երբեք առանձնակի հարգանք չեն տածել բուլղարների նկատմամբ, կարող են ապստամբել իրենց համար օտար ռեժիմի



դեմ և տապալել այն: Իրադարձությունների ծավալման նման տարբերակից խուսափելու համար Շումսկին առաջարկում էր ուկրաինացի կոմունիստներ *Յրիհորոյի Յրիհնոյին* և *Վլաս Չուբարին* նշանակել կառավարության ղեկավարի և ՌԻԿ(Բ)Կ ԿԿ գլխավոր քարտուղարի պաշտոններում՝ նախապես ետ կանչելով Մոսկվայի ոչ-ուկրաինացի դրածոներին, **ինչպես** օրինակ՝ էմմանուիլ Կվիրինգին (լատիշ) և Լազար Կազանովիչին (ռուսացած **հրեա**): Այս առաջարկությունները, որ ներկայացված էին որպես կոմունիզմի դիրքերն ամրապնդելու միջոց, այլ բան չէին, քան Ուկրաինայի քաղաքական ղեկավարությունը Ուկրաինայում, և ոչ թե Մոսկվայում ընտրելու ճանապարհ:

Շումսկու հայացքներն իսկական իրարանցում առաջացրեցին ինչպես խորհրդային Միության, այնպես էլ արտասահմանյան կոմունիստների շրջանում: Ստալինը նշում էր, **թե՛ «ընկեր** Շումսկին իրեն հաշիվ չի տալիս, որ Ուկրաինայում, ուր կոմունիստների տեղական **կադրերը** թույլ են, նման տրամադրությունները, որոշակի դրսևորումների դեպքում, **կարող են** պայքարի բնույթ կրել «Մոսկվայի» դեմ՝ ամբողջությամբ, իսկ ընդհանրապես՝ ռուս ժողովրդի, ռուսական մշակույթի և նրա մեծագույն նվաճման՝ լենինիզմի դեմ»:

Եթե Շումսկու գաղափարները խստորեն դատապարտվեցին կուսակցության խարկովի և Մոսկվայի հավատարիմ հպատակների կողմից, ապա Գալիչինայում գործող *Արևմտյան Ուկրաինայի Կոմունիստական կուսակցության (ԱՌԿԿ)* շարքերում դրանք համակրանքի ու աջակցության արժանացան: Արևմտաուկրաինական կոմունիստների առաջնորդ **Կառլո Մաքսիմովիչը** Շումսկու փաստարկներն օգտագործեց ուկրաինացիների նկատմամբ Մոսկվայի վարվեցողության դեմ Կոմունիստական Ինտերնացիոնալի կոնգրեսում ելույթ ունենալու համար: «Շումսկու գործի» նկատմամբ հետաքրքրություն դրսևորեցին նույնիսկ արևմտաեվրոպական որոշ սոցիալիստներ: Գերմանացի սոցիալ-դեմոկրատ Էմիլ Շտրաուսն, օրինակ, հայտարարեց, որ. «Եվրոպական սոցիալիզմը բոլոր հիմքերն ունի բարոյապես սատարելու ուկրաինական ժողովրդի պայքարը՝ հանուն ազատության: Մաքսի ժամանակներից սկսած, սոցիալիզմի լավագույն ավանդույթներից մեկը սոցիալական և ազգային ճնշման ցանկացած ձևի դեմ պայքարին օժանդակելն է եղել»:

### «Վոլոբուևչինա»

1928 թ.-ի կեսերին ուկրաինական կոմունիստների շարքերում նոր «թեքում» առաջացավ, որի «հեղինակը» ռուսական ծագումով երիտասարդ ուկրաինական տնտեսագետ *Միխայիլ Վոլոբուև* էր: Ինչպես իսկիցից գրականության և Շումսկին՝ քաղաքականության մեջ, **Վոլոբուևը մտադրվել էր բոլշևիկների տեսական և իրական գործունեության անհամապատասխանությունը ցույց տալ տնտեսության բնագավառում:** ՌԻԿ(Բ)Կ-ի «Ուկրաինայի բոլշևիկ» պաշտոնական-տեսական անագրում տպագրած իր երկու հոդվածներում Վոլոբուևն ապացուցում էր, որ խորհրդային իշխանության օրոք, ինչպես ցարական կարգերի ժամանակ, **Ուկրաինան մնում է Ռուսաստանի տնտեսական գաղութի կարգավիճակում:** Իր փաստարկները նա հաստատում էր վիճակագրական տվյալների մանրագնի վերլուծությամբ, ինչից հետևում էր, որ ի վնաս որպես ծայրամաս մնացած Ուկրաինայի, ծանր արդյունաբերությունն առաջվա նման տեղաբաշխվում է ռուսական կենտրոնում: Բացի այդ, Վոլոբուևը եզրակացնում էր, որ ԽՍՀՄ տնտեսությունը ոչ թե մի սերտ ամբողջություն է, այլ **իրենից** ներկայացնում է տնտեսական տարասեռ բաղկացուցիչների մի զուգորդություն, որոնցից մեկն Ուկրաինան է: Այդ բաղկացուցիչներից յուրաքանչյուրը ոչ միայն կարող է ինքնուրույն գոյատևել, այլև միանալ համաշխարհային տնտեսությանը՝ առանց ռուսական տնտեսության միջոցորդության:

Տվյալ փուլում կոմունիստական կուսակցությունը դեռևս ի վիճակի էր գնալ այնպիսի գիջողությունների, ինչպես ուկրաինացումն էր: Նա կարող էր նույնիսկ ընդունել իր որոշ մեղքերը՝ ինչպես օրինակ՝ իր շարքերում ռուսական ազգայնամոլության առկայությունը: Սակայն նա ոչ մի կերպ չէր կարող թույլ տալ իսկիցիչի, Շումսկու և Վոլոբուևի տեսակետների տարածմանը, քանի որ դրանք ցանկացած տարբերակով տանում էին դեպի Ուկրաինայում իր իշխող դիրքերը խարխուլելուն: Նույնիսկ ուկրաինացման Սկրիպնիկի պես համոզված կողմնակիցը նման «ազգայնական թեքումները» մահացու վտանգ էր համարում կուսակցության համար և պայքարում էր նրա կողմնակիցների դեմ:

Չարմանալի չէ, որ նշված «թեքումների» ի հայտ գալուց անմիջապես հետո, դրա հեղինակը դաժան ճնշումների թիրախ էր դառնում, նրան ստիպում էին հրաժարվել իր տեսակետներից և խոստովանել «իր գործած բազմազան մեղքերն ու զղջալ»: Բոլոր երեքն էլ պաշտ-

պանվելու մի քանի փորձից հետո՝ «զղջացին»: 1928 թ.-ի վերջին իսկիցիցից վերադարձավ իր գրական գործունեությանը, Շումսկուն ուղարկեցին Ռուսաստան՝ ինչ-որ երկրորդական կուսակցական աշխատանքի, իսկ Վոլոբուևը մոռացության տրվեց: 1930-ականների ստալինյան «գտումների» ժամանակ նրանց «մեղքերն» համեմայն դեպս մտաբերվեցին, և կոմունիստ-ազգայնականներից շատերն իրենց անցյալի համար կյանքով վարձահատույց եղան:

Ազգային կոմունիստական միտումների ի հայտ գալու պատճառները ճիշտ հասկանալու համար, այս ամենից գատ, այն պետք է դիտարկել կուսակցության ներսում ընթացող իրադարձությունների հետ կապակցված: Լենինի մահից հետո, բոլշևիկյան վերնախավում կատարող պայքար ծավալվեց իշխանության համար: Ներկուսակցական վերահսկողությունն ու կարգապահությունը թուլացավ, ինչի հետևանքով ի հայտ եկան բազմազան ֆրակցիաներ ու գաղափարախոսական հոսանքներ: Սակայն հարաբերական հանդուրժողության և բազմակարծության, գաղափարական բաց մրցակցության այդ շրջանը մոտենում էր իր անակնկալ ու դաժան ավարտին:

## Մշակույթի վերելքը

1920-ական թվականները ուկրաինական մշակույթի աննախադեպ ու չտեսնված վերելքի, լարված որոնումների ու գյուտերի, իսկական նորարարության ժամանակներ եղան: Որոշ հեղինակներ այդ շրջանն համարում էին մշակութային հեղափոխության կամ վերածնունդի շրջան: Ստեղծագործական էներգիայի նման բազմերանգ ճողվյունն հնարավոր եղավ շնորհիվ այն բանի, որ գլխավորապես իր քաղաքական իշխող դիրքերն ամրապնդելով մտահոգ կոմունիստական կուսակցությունը դեռևս ի վիճակի չէր ամբողջովին մեռաշնորհելու նաև մշակույթի բնագավառը: Միաժամանակ, լուսավորության տարածումն ուկրաիններեն լեզվով, մշակույթի համար այնպիսի հիմք ստեղծեց, ինչից երկար ժամանակ զրկված էին Արևելյան Ուկրաինայում: Վերջապես, շնորհիվ այն բանի, որ ուկրաինացման այնպիսի կարևոր լծակը, ինչպիսին լուսավորության ժողովրդական կոմիսարիատն էր, գտնվում էր նվիրյալ հայրենասերներ Յրիհնոյի, Շումսկու և Սկրիպնիկի ձեռքերում, ուկրաինական մշակույթը կարող էր հույս դնել պետության հոգածության վրա:

Այնուամենայնիվ, այս լայնածավալ վերածննդի նախապատճառը հեղափոխությունն էր: Չնայած ավագ սերնդի մտավորականության մեծ մասի արտագաղթը զգալի կորուստ էր ազգային մշակույթի համար, սակայն մտավոր ուժի պակասը ավելցուկով հատուցվեց ստեղծագործ անհատների մի ողջ աստղաբույլի հայտնությամբ: Այդ շնորհալիներից շատերը քաղաքական շրջանակներից դուրս էին և հավատում էին «մաքուր արվեստին» ծառայելու հնարավորությանը: Մյուսները՝ հիմնականում բորոտիստներն ու ազգային կոմունիստները, կրակոտ երազող-հեղափոխականներ էին: Երբ խորտակվեց անկախ պետականության հույսը, նրանցից շատերը մշակութային գործունեության ու ստեղծագործության մեջ իրենց ժողովրդի ազգային ինքնության արտահայտչամիջոցի երկընտրանքը տեսան:

Հեղափոխությունը մշակույթին նոր ոգի, հին աշխարհի նախապաշարումներից ու խառնաշփոթից ձեռքազատվելու զգացում ներարկեց: Ուկրաինական մշակույթի առջև նոր, հաճախ ցավազին հարցեր ծառայեցին՝ ի՞նչ ուղղությամբ զարգանալ, դեպի ո՞ր իդեալները կողմնորոշվել: Սեփական առաքելության գիտակցությամբ և իրենց տաղանդը ներդնելու ուրոտի ընդլայնումով ոգևորված, գրողները, գիտնականներն ու արվեստի գործիչները խանդավառությամբ լծվեցին մշակույթի նոր հորիզոններ նվաճելու գործին:

### Գրականություն

Նորության ու թարմության այս տրամադրություններն առանձնակի ուժով արտահայտվեցին գրականության մեջ: Մաքսիստ գրողները գտնում էին, որ հեղափոխությունն իրեն պետք է դրսևորի ոչ միայն քաղաքական կամ սոցիալական, այլև գրականության ոլորտում: Դրանից ելնելով, հին «բուրժուական» արվեստն իր տեղը պետք է գիջի նոր՝ պրոլետարական արվեստին: Այդուհանդերձ՝ վերապահում էր արվում, որ՝ «պրոլետարական արվեստը համաշխարհային առումով կմիավորվի, եթե միայն ազգային ուղիներով ընթանա»:

Պրոլետարական մշակույթ ստեղծելու ձգտումը Ռուսաստանում ծնեց «Պրոլետկուլտ» («Պրոլետարական կուլտուրա») գրական կազմակերպությունը, որ հիմնվում էր երկու արմատական սկզբունքի վրա. պրոլետարական մշակույթ կարելի է ստեղծել՝ դեմ նետելով անց-



յալի պատկերացումներն ու ավանդույթները, և երկրորդը՝ անհրաժեշտ է այդ գործընթացին մասնակից դարձնել ժողովրդական լայն զանգվածներին: Շատերի պատկերացումներում «Պրոլետկուլտը» նույնացվում էր ռուսական քաղաքային մշակույթի հետ, այդ պատճառով էլ ուկրաինացիների մեջ մեծ հեղինակություն չէր վայելում: Սակայն նրա զաղափարները լրջորեն ազդեցին Ուկրաինայում այսպես կոչված՝ զանգվածային գրական կազմակերպությունների առաջացման ու զարգացման վրա:

1922 թ.-ին ստեղծվեց նման առաջին կազմակերպությունը՝ **«ԼԵՄԻ»** (**«Գուբան»**)՝ **Սերիյ Պիլիպենկոյի** գլխավորությամբ: Հայտարարելով, որ ժողովրդական զանգվածները (Ուկրաինայի համար դա նշանակում էր գյուղացիությունը) ի վիճակի են ստեղծելու իրենց հարկավոր գրականության տեսակը, կազմակերպությունը գրական խմբակների մի ամբողջ ցանց ստեղծեց, ուր շատ շուտով ներգրավվեցին 200 գրող և հազարավոր սկսնակներ ու գրասերներ: «Պլուզի» գործիչներից մեկն իր կազմակերպության հավատամքն այսպես ձևակերպեց. «Մեր ժամանակի խնդիրն արվեստի բնագավառում՝ այն պատվանդանից իջեցնելն է, յուրաքանչյուրին մոտ ու հասկանալի դարձնելը»: Մեկ տարի անց, **Վասիլ Էլլան-Քլակիտնու** գլխավորությամբ ևս մի գրական խմբավորում՝ ստեղծվեց՝ **«Դաբլ»** (**«Կոփում»**) անվանմամբ, որի նպատակը նույնպես Ուկրաինայում պրոլետարական մշակույթ ստեղծելն էր: Այդուհանդերձ՝ «Հարտի» անդամները բավականին զգուշավոր էին վերաբերվում «զանգվածայնության» գաղափարին, վախենալով, թե այն կտանի դեպի արվեստի մակարդակի անկում:

Մարքսիստամետ կազմակերպություններին զուգընթաց առաջացան նաև «ոչ-պրոլետարական» գրողների ու արվեստագետների ոչ մեծ խմբավորումներ, որոնք իրենց չէին կապում որևէ որոշակի գաղափարախոսության հետ: Դրանք օրինակ՝ *սիմվոլիստներն էին*, որոնց մեջ իր տաղանդով առանձնանում էր **Պավլո Տիչինան**, *ֆուտուրիստները՝ Միխայլ Սեմենկոյի* գլխավորությամբ, *նորդասականները՝* նշանավոր **Մաքսիմ Բիլսկու** և **Միկոլա Ջերոլի** առաջատարությամբ: Մեծ մասամբ նրանք կողմնակից էին սիմվոլիստներից մեկի՝ Յուրի Մեծենկոյի արտահայտած մի գաղափարի, ըստ որի՝ «ստեղծագործ անհատականությունը կարող է արարել միայն զանգվածներից վեր բարձրանալով, սակայն անկախության հետ մեկտեղ պահպանելով այդ զանգվածների հետ ազգային ընդհանրության զգացումը»: Քանի որ գրական բոլոր խմբերն ու կազմակերպություններն ունեին իրենց տպագիր օրգանները, որոնց էջերում տարփողվում էին նրանց հայացքներն ու քննադատվում ընդդիմախոսների գաղափարները, ուստի *գրական վեճերն ու երկխոսությունները շատ տարածված երևույթ դարձան:*

1925 թ.-ին, երբ մահացավ Բլակիտնին, «Հարտը» կազմալուծվեց: Միևնույն թվին նրա նախկին անդամների մեծ մասը՝ Խվիլյովիյի գլխավորությամբ (թատերագիր **Միկոլա Կուլիշ**, բանաստեղծներ **Պավլո Տիչինա** և **Միկոլա Բաժան**, արձակագիրներ **Պետրո Պանչ**, **Յուրի Յանովսկի**, **Իվան Սենչենկո**) ստեղծեցին **«Վասպիտե»** (Васпите - հապավում՝ «Віснью академію пролетарської літератури»)՝ գրողների էլիտար կազմակերպությունը: Անհանգստանալով, որ «Պլուզի» սերմանած լուսավորության» և «զանգվածայնության» ոգին ուկրաինական մշակույթը կտանի հետագա զավառայնացման ճանապարհով, Խվիլյովիյն ու իր ընկերները կարևորագույն խնդիր էին համարում *ազգային գրականությունը գրական-գեղարվեստական և գեղագիտական բարձր մակարդակի հասցնելը:* Նրանք կոչ էին անում՝ կողմնորոշվել դեպի Եվրոպա, դեպի համաշխարհային գրականության ավանդական համաձայնողական հոգևոր արժեքները, դեպի Ուկրաինայի մշակութային անկախացումը Մոսկվայից: Խվիլյովիյի կողմից այս գաղափարների ակտիվ տարփողումը լուրջ բանավեճերի տեղիք բերեց, որ սովորաբար կոչվում է **«1925-1927 թ.թ.-ների գրական բանավեճ»**, սակայն դրանցում տարձրացված հարցերը զուտ գրական խնդիրների շրջանակից դուրս, շատ հեռուն էին տանում:

«Վասպիտեի» դիրքորոշումը, որ բնութագրվեց որպես «ազգային բուրժուական գաղափարախոսություն», հարձակումների թիրախ դարձավ ոչ միայն Պիլիպենկոյի և «Պլուզի» մյուս ընդդիմադիր անդամների համար, այլև հալածանքի առարկա՝ Ուկրաինայի կոմունիստ դեկավարներից շատերի համար: Նույնիսկ Ստալինը ուշադրություն հրավիրեց Խվիլյովիյի հայացքների վտանգավորության վրա: 1927 թ.-ին, *գրականության մեջ «ազգայնական» գաղափարների տարածումը թույլ չտալու նպատակով, ստեղծվեց խորհրդայնամետ գրական կազմակերպություն՝ «Պրոլետգրողների Համաուկրաինական միություն»* («Всеукраїнська спілка пролетарських письменників» ВУСПП), զգալի չափով խստացավ կուսակցական վերահսկողությունը գրական ստեղծագործության նկատմամբ:

Նորարարական գրական-գեղարվեստական միջավայրը նպաստեց բարձրակարգ ստեղ-

ծագործությունների ի հայտ գալուն: Այդ շրջանում, օրինակ, ստեղծագործական վերելք ապրեցին ուկրաինական հռչակավոր երկու բանաստեղծ՝ **Պավլո Տիչինան** և **Մաքսիմ Բիլսկին**: Արդեն 1918 թ.-ին՝ *«Արևային կլարնետներ»* բանաստեղծական առաջին ժողովածուի հրատարակումից անմիջապես հետո, **Տիչինան փայլուն քնարերգուի ճանաչման արժանացավ: Նրա հաջորդ ժողովածուները՝ *«Սոնետների և ութնյակների փոխարեն»* (1920) և *«Ուկրաինայից փչող քամին»* (1924) բառին տիրապետելու վարպետության, ժողովրդական երգի չափն ու մեղեդայնությունը փոխանցելու կարողության, հայրենի երկրի գեղեցկությունները վեր հանելու այնպիսի հրաշալի օրինակներ էին, որ առանց այլևայլության կարելի է ասել, թե դրանք ուկրաինական պոեզիայի զարգացման իսկական ուղենիշ դարձան: Տիչինայի լրիվ հակապատկերն էր XIX դարի հայտնի ուկրաինասերի որդի Մաքսիմ Բիլսկին: Նրա բանաստեղծական ժողովածուները՝ *«Աշնանային արշալույսներին»* (1918), *«Կապույտ հեռուն»* (1922), *«Տասներեքերորդ գարուն»* (1926) կարելի է համարել խստապահանջ, փիլիսոփայական պոեզիայի նմուշներ, որոնց արմատները տանում են դեպի բանմտյան դասական ավանդույթները: Այդ ժամանակահատվածում ստեղծագործող անհատականությունների շարքում հարկ է նշել **Միկոլա Ջերոլին**, **Պավլո Ֆիլիպովիչին**, **Միխայլո Դրայ-Խմարային**, **Եվինե Պլուժնիկին**, **Վոլոդիմիր Սոսյուրային**, **Միկոլա Բաժանին**, **Տոդոս Օսմաչկային**:**

Արձակում գլխավոր թեմաներից մեկը հասարակության և առանձին անհատների կյանքի ու նրանց ներաշխարհի վրա հեղափոխության ու քաղաքացիական պատերազմի թողած ազդեցության թեման էր: **Խվիլյովիյի «Կապույտ էտյուդներ»** (1923) ստեղծագործության մեջ, որ գրված է բառի ու խոսքի հրաշալի զգացողությամբ, ուր միահյուսվում են նուրբ երազային ու կոպիտ իրականությունը, հեղափոխությունը գրեթե պաշտամունքի է հասնում, իսկ *«Աշուն»* և *«Ես»* (1924) ստեղծագործություններում զգացվում է հակասական վերաբերմունքը հեղափոխության նկատմամբ, կորսված պատրանքներն ու աճող հիասթափությունը: Մեծ վարպետությամբ են կերտված օտար ուժերի դեմ վճռական պայքարի ելած գյուղացիության ճշմարիտ կերպարները աղքատ գյուղացու զավակ (ի միջի այլոց, ուկրաինացի շատ գրողներ գեղջկական աղքատ ընտանիքներից էին սերում) **Հրիհորիյ Կոսինկայի** ստեղծագործություններում, ինչպես օրինակ՝ *«Տարեկանի արտում»* (1926): Հոռետես ու թերահավատ **Վալերիան Պիդմոխիլին** *«Քաղաք»* (1928) վեպում նկարագրում է, թե ինչպես այն ժամանակների քաղաքն ընկած ուկրաինացի գյուղացին մեծ հաջողությունների է հասնում՝ իսկական գեղջկական արժեքներից հրաժարվելու և գյուղացու էության վատ գծերը շահարկելու շնորհիվ: Երգիծանքի վարպետ **Իվան Սենչենկոն** ծաղրում էր անողնաշար հարմարվողներին, որոնց ծնել էր խորհրդային համակարգը (*«Ստորաքար ծառայի գրառումներից»*, 1927): **Յուրի Յանովսկու «Չորս թուր»** (1930) վեպում տրված ապստամբ գյուղացիների վառ նկարագրություններում զապորոժյան կոզակների ազատության ոգու հուշերն են թևածում: Հանրահայտ արձակագիրներից էր **Օստապ Վիշնյան**, որի «անպատկառ» հունորեսկները միլիոնավոր ընթերցողների սեփականությունն էին դարձել:

Թատերագիրների մեջ առավել նշանավորը **Միկոլա Կուլիշն** էր: Նրա երեք հանրահայտ պիեսները՝ *«Ժողովրդական Մալախին»* (1928), *«Մինա Մազայլոն»* (1929) և *«Պաթետիկ սոնատը»* (1930), սենսացիա առաջացրեցին իրենց մոդեռնիստական ձևի և նոր՝ խորհրդային իրականությունը՝ իր ռուսական ազգայնամոլությամբ, «մալոռոսական» աշխարհընկալմամբ, ժամանակավրեպ ուկրաինական ազգայնականությամբ և ուղղապաշտ կոմունիստների հոգևոր տհասությամբ աչքի ընկնող տրագիկոմիկական ոճով ներկայացնելու շնորհիվ: Առաջին երկու պիեսները բեմադրվեցին Լես Կուրբասի «Բերեզիլ» հայտնի թատրոնում: Այդ ներկայացումները չփոթված կուսակցական քրմերն արգելեցին «Պաթետիկ սոնատի» բեմադրությունն Ուկրաինայում, սակայն մեծ հաջողությամբ այն բեմադրվեց Մոսկվայի և Լենինգրադի թատրոններում:

Այն ժամանակ արվեստի դեռևս նոր ոլորտում՝ կինեմատոգրաֆում, համաշխարհային ճանաչման արժանացավ **Օլեքսանդր Դովժենկոն**: Նրա *«Չվեմիհորա»* (1927), *«Արսենալ»* (1929) և *«Հող»* (1930) ֆիլմերը շոշափում էին ուկրաինացիների վրա հեղափոխության և խորհրդային կարգերի ազդեցության թեման:

### Կրթություն և գիտություն

Փորձարարության ու նորարարության ոգին էր իշխում նաև կրթության բնագավառում: Քանի որ խորհրդային իշխանության նպատակը նոր սոցիալ-տնտեսական հասարակարգ կառուցելն էր, ապա այն ամեն կերպ նպաստում էր նոր տիպի դպրոցներ հիմնելու և կրթու-



թյան ու դաստիարակության նոր մեթոդներ մշակելու գործին, որով կարագանար «բուրժուական անցյալից» կտրվելու գործընթացը: Խորհրդային մանկավարժությունը հիմնվում էր ուսուցումը կոմունիստական արժեքների ու գաղափարախոսության ոգով դաստիարակության հետ կապելու անհրաժեշտության վրա: Ըստ այդմ՝ դպրոցներում մտցվում էին ուսուցումն ու աշխատանքային դաստիարակությունը, ընդհանուր և տեխնիկական կրթությունը կապակցող ծրագրեր, արմատավորվում էր պոլիտեխնիկական ուսուցման սկզբունքը: Դասական կրթությունը, հումանիտար առարկաները երկրորդ պլան մղվեցին: Գոգևոր դաստիարակությունն արգելվեց: Մեծ հեղինակություն ձեռք բերեց նշանավոր մանկավարժ **Անտոն Մակարենկոյի** տեսությունը, ըստ որի՝ երեխաների զարգացման ու դաստիարակության մեջ




Օլեքսանդր Դովժենկո

որոշիչ դեր է խաղում ոչ թե ժառանգականությունը, այլ սոցիալական միջավայրը: Չնայած այն ժամանակվա փորձարարություններից մի քանիսի մանկավարժական արժեքը խիստ կասկածելի է, բայց *չի կարելի չնկատել անմախաղեպ հաջողությունները՝ լայն զանգվածներին կրթության հասանելիության առումով*: Տարրական յոթնամյա դպրոցում, ինչպես նաև պրոֆտեխնիկական և միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում ուսուցումն անվճար էր և բանվորների ու գյուղացիների երեխաները կրթություն ստանալու բոլոր հնարավորություններն ունեին: Պատահական չէ, որ միայն 1923-1925 թ.թ.-ներին Ուկրաինայի դպրոցներում աշակերտների թիվը 1,4 մլն-ից հասավ 2,1 մլն-ի: Համապատասխանաբար, 1920-ական թվականների ընթացքում գրագիտության մակարդակը 24 %-ից հասավ 57 %-ի: Եվ սակայն՝ միլիոնավոր մեծահասակներ դեռևս մնում էին անգրագետ, իսկ երեխաների 40 %-ից ավելին տարրական կրթություն անգամ չէին ստանում:

Բավականին փոփոխություններ կրեց նաև բարձրագույն կրթության համակարգը: Համալսարանները վերակազմավորվեցին ժողովրդական կրթության բազմաթիվ ինստիտուտների՝ բժշկական, ֆիզիկական, տեխնիկական, գյուղատնտեսական և մանկավարժական: Այդ ինս-

տիտուտների գլխավոր նպատակը ժողովրդական տնտեսության և լուսավորության բնագավառների մասնագետներ և ղեկավար կադրեր պատրաստելն էր: Չնայած այդ ինստիտուտներից շատերում ուսումնառությունը վճարովի էր, բայց չքավոր գյուղացիների ու բանվորների երեխաները (որ ուսանողության մեծ մասն էին կազմում) ուսման վարձից ազատվում էին: 1920-ական թվականների վերջին Ուկրաինայի բուհերում սովորող 30-40 հազ. ուսանողների մոտ 53 %-ն ուկրաինացի էին, 20 %-ը ռուս և 22 %-ը՝ հրեա: Ուկրաինացիները մեծամասնություն էին կազմում մանկավարժական և գյուղատնտեսական բուհերում, ռուսները՝ տեխնիկական և ճշգրիտ գիտությունների բնագավառում, հրեաները՝ բժշկության և առևտրի բնագավառում:



Միխայլո Գրուշևսկի

1920-ական թվականները դարձան նաև գիտության վերածննդի շրջան, հատկապես ուկրաինագիտության, որն իր նշանակությամբ կարելի է համեմատել գրական վերածնության հետ: Ինչպես արդեն տեսանք, Ուկրաինայի բոլոր ազգային կառավարությունները հասցրեցին ինչ-որ բան անել գիտական հաստատություններ ստեղծելու գործում, մեծ մասամբ շնորհիվ այն բանի, որ ամբողջ XIX դարի ընթացքում հատկապես հումանիտար առարկաները կարևորագույն դեր խաղացին ազգային ինքնագիտակցության զարգացման գործում: Ցանկանալով ցուցադրել իրենց առաջադիմականությունը, բոլշևիկները նույնպես նպաստեցին գիտության զարգացմանը: 1919 թ.-ին նրանք ոչ միայն ճանաչեցին Կիևի գիտությունների Ակադեմիան, որ հիմնադրել էր Սկորոպադսկին, այլև սեփականեցին այն հիմնելու պատիվը: Պետագա մի քանի տարիներին Ակադեմիան և իր բաժանմունքները վերածվեցին հետազոտական կենտրոնների: Քանի դեռ գիտական գաղափարներն իրենցից վտանգ չէին ներկայացնում խորհրդային համակարգի համար, գիտնականներն հնարավորություն ունեին հարթերական ազատության պայմաններում գործել իրենց հետազոտություններում, բացառապես արտահայտել իրենց տեսակետները, ընդլայնել միջազգային կապերը:



Չնայած Ուկրաինայի քիչ թե շատ նշանավոր համարյա բոլոր գիտնականները կոմունիստներ չէին, մի քանիսն էլ նույնիսկ չէին թաքցնում իրենց հակվածությունը ազգային-ազատագրական գաղափարախոսությանը, խորհրդային իշխանությանը այլ բան չէր մնում, բացի թույլ տալուց, որ նրանք կազմեն Ակադեմիայի միջուկը: 1920-ականների կեսերին, ուկրաինացման գործընթացի ժամանակ, ուկրաինական կոմունիստները լուսավորության ժողովուհու միջոցով ակտիվորեն ջանում էին արտասահմանից Ուկրաինա վերադարձնել քաղաքացիական պատերազմի ժամանակ հայրենիքից հեռացած շատ առաջավոր գիտնականների: Արդյունքում՝ 1924 թ.-ին Ուկրաինա վերադարձավ ուկրաինական գիտության նահապետ (և բոլշևիկների քաղաքական ընդդիմախոս) Միխայլո Չուրչևսկին: Կիևում ընտրվելով Ակադեմիայի իսկական անդամ, նա անհապաղ լայնածավալ ու համակարգված հետազոտություններ ծավալեց Ուկրաինայի պատմության բնագավառում: Չուրչևսկու օրինակին հետևեցին եվրոպական երկրներում կամ Արևմտյան Ուկրաինայում բնակություն հաստատած շատ գիտնականներ: Եվ այսպես՝ չնայած Ակադեմիայի հեղինակությունն արագորեն աճում էր, սակայն իշխանությունների աչքում մնում էր որպես «բուրժուական ազգայնական» միտումների պատվար:

**Ակադեմիայի առաջին նախագահը դարձավ անվանի գիտնական Վոլոդիմիր Վերնադսկին:** Սակայն Ակադեմիան իր արագ վերելքի համար ամենից առաջ պարտական էր նրա բազմամյա փոխնախագահ Սերիյ Եֆրեմովի անխոնջ գործունեությանը և գիտքարտուղար Ազաբանգեդ Կրիմսկու: 1924 թ.-ին Ակադեմիան ուներ 37 իսկական անդամ և մոտ 400 գիտաշխատող: Եթե 1923թ.-ին Ակադեմիան ուներ 32 հրատարակված աշխատանք, ապա 1929 թ.-ին դրանց թիվը հասավ 136-ի: Ակադեմիայի երեք բաժանմունքներից՝ պատմաբանասիրական, ֆիզիկա-մաթեմատիկական և սոցիալ-տնտեսական, առաջատար դեր էր խաղում Չուրչևսկու գլխավորած առաջին բաժանմունքը: Այն բաղկացած էր տասնյակ ամբիոններից, հանձնաժողովներից ու կոմիտեներից, որոնք հետևողականորեն ու համակարգված ուսումնասիրում էին Ուկրաինայի ընդհանուր պատմությունը, լեզուն, գրականությունը: Բաժանմունքն հրատարակում էր «Ուկրաինա» ամսագիրը, որն ուկրաինագիտության բնագավառում իր տեսակի մեջ միակ տպագիր օրգանն էր, ուր բաժանմունքի անդամները տպագրում էին իրենց հոդվածաշարերն ու հարյուրավոր մենագրությունները: Չուրչևսկուց բացի, այստեղ նշանավոր դեմքեր էին պատմաբաններ Դմիտրո Բահալին, Միխայլո Սլաբչենկոն, Օլեքսանդր Օհլորիկը, Օսիպ Չերնայգեն, գրականագետներ Սերիյ Եֆրեմովն ու Վլադիմիր Պերետցը, ազգագրագետ Անդրիյ Լորոդան, արվեստաբան Օլենսկի Նովիցկին, արևելագետ Ազաբանգեդ Կրիմսկին:

Սոցիալ-տնտեսական բաժանմունքում, Ուկրաինայում իրավունքի պատմության վերաբերյալ կարևոր աշխատանք հրատարակեց Միկոլա Վասիլենկոն, իսկ Կոնստանտին Վոլինն առաջինն սկսեց հետազոտություններն ու մշակումները Ուկրաինայի տնտեսական աշխարհագրության բնագավառում: Չնայած Ակադեմիայի ֆիզիկա-մաթեմատիկական բաժանմունքը սկզբնական շրջանում այն դերը չուներ, ինչ նրան բաժին ընկավ հետագայում, սակայն այնտեղ նույնպես նշանավոր գիտնականներ էին աշխատում, որոնցից շատերը միջազգային ճանաչման էին արժանացել: Դրանց թվում էին մաթեմատիկոս Դմիտրի Գրավեն, ֆիզիկոս Նիկոլայ Կոչիլովը, քիմիկոսներ Լև Պիսարովսկին և Վոլոդիմիր Կիստյակիվսկին:

Կիևի Ակադեմիան չնայած գլխավոր, բայց միակ գիտական կենտրոնը չէր Ուկրաինայում: Ակադեմիայի երկու անդամ գիտահետազոտական կենտրոններ հիմնեցին Խարկովում (պատմաբան Բահալին), և Օդեսայում (նրա գործընկեր Սլաբչենկոն): Գիտահետազոտական ոչ մեծ հաստատություններ հիմնվեցին նաև այլ քաղաքներում, ինչպես օրինակ՝ Պոլտավայում, Չեռնիգովում և Դնեպրոպետրովսկում:

Խորհրդային կառավարությունը, ձգտելով համակշռել ոչ-մարքսիստ գիտնականների ազդեցությունը հումանիտար և հասարակական գիտությունների բնագավառում, 1929 թ.-ին Խարկովում Մարքսիզմի ինստիտուտ հիմնեց, որի նպատակն էր պատմության, տնտեսագիտության և փիլիսոփայության բնագավառների մասնագետներ պատրաստելը, որոնք իրենց առարկաները կդասավորեին մարքսիստական վարդապետության ոգով, հեղափոխության ու կուսակցության պատմության ուսումնասիրության կազմակերպումը, ռեժիմի գաղափարախոսական ծառայությունը: Ինստիտուտի առաջատար դեմքը գալիցիացի Մատվիյ Յավորսկին էր, որը փորձում էր Ուկրաինայի պատմությունը մեկնաբանել մարքսիստական ոգով, և որը հիմնեց ուկրաինական մարքսիստական պատմական դպրոցը:

## Եկեղեցական կյանք

Ուղղափառ եկեղեցին Ուկրաինայում ցարական ռեժիմի գլխավոր հենարաններից մեկն էր: 1686 թ.-ին, երբ Կիևյան միտրոպոլիտությունն անցավ Մոսկվայի պատրիարքի իշխանության տակ և ստիպված էր ռուսական եկեղեցու կանոններով առաջնորդվել, սկսեց քարոզել հավատարմություն ցարին ու կայսրությանը՝ դրանով իսկ դառնալով նաև ռուսացման գործիք: Եվ չնայած XIX դարավերջին ցածր դասի հոգևորականության շրջանում, հատկապես՝ սենիմարիստների մոտ, ազգային ինքնագիտակցությունը վերելք ապրեց, ուկրաինական մտավորականության վերաբերմունքը եկեղեցու նկատմամբ բավականին սառը մնաց, քանի որ այն համարվում էր սոցիալական պահպանողականության և հակաուկրաինական տրամադրությունների պատվար:

Ուկրաինայում հեղափոխությունն ու դրանից բխող ազգային ինքնադրսևորման ձգտումը զանգվածների մոտ, անշուշտ, իրենց ազդեցությունը պետք է թողնեին նաև եկեղեցու գործունեության վրա: 1917-1918 թ.թ.-ների թեմական ժողովները, զինվորների ու գյուղացիների համագումարները իրար ետևից պահանջներ էին առաջադրում եկեղեցուն՝ կապերը խզել Մոսկվայի հետ և ձևավորվել որպես ինքնուրույն, անկախ (ավտոկեֆալ) եկեղեցի: Այդ գաղափարին համամիտ էին նաև հոգևոր ցածր դասն ու քաղաքային մտավորականությունը: 1918 թ.-ին, այդ նպատակն իրագործելու համար ստեղծվեց «Համաուկրաինական Ուղղափառ եկեղեցու Ռադան» (ՅՈՒԵՌ): Սակայն Կենտրոնական Ռադան, իր ծախս կողմնորոշմով, եկեղեցու հոգսերով քիչ էր հետաքրքրվում: Մոսկվայի հետ եկեղեցական կապերը խզելու գաղափարը միանշանակ պաշտպանեց հեթան Սկորոպատսկու պահպանողական կառավարությունը, հատկապես՝ ի դեմս եկեղեցու և կրոնի գործերով նախարարներ Վասիլ Չինկիվսկու և Օլեքսանդր Լուոնցկու: Սկորոպատսկու անկումից հետո, եկեղեցու անկախության գաղափարին կենդանի հետաքրքրություն ցուցաբերեց նաև Դիրեկտորիան: Սակայն, քանի որ երկու կառավարություններն էլ շատ քիչ իշխեցին, այդ հարցում նրանց ջանքերն արդյունք չտվեցին:

Ինչքան էլ տարօրինակ է, սակայն պայքարն հանուն ուկրաինական անկախ եկեղեցու, իր զագաթնակետին հասավ հատկապես խորհրդային իշխանության օրոք: Քանի որ Ռուսական ուղղափառ եկեղեցին՝ նորընտիր պատրիարք Տիխոնի գլխավորությամբ, Խորհուրդներն համարում էին իրենց գլխավոր ու ամենավարձագավոր կրոնական ընդդիմախոսը, նրանք դեմ չէին կրոնական նոր խմբավորումների ի հայտ գալուն, որոնք կնվազեցնեին իշխող եկեղեցու դերը: Հատկապես դրանով է բացատրվում եկեղեցու ուկրաինացման նկատմամբ սկզբնական շրջանի նրանց հանդուրժողականությունը:

Այդ շարժումը սակայն լուրջ դիմադրության հանդիպեց մի այլ կողմից: Ուկրաինական եկեղեցու անկախացման դեմ վճռականորեն հանդես եկան Մոսկվայի պատրիարք Տիխոնը և Ուկրաինայի գրեթե ողջ ուղղափառ նվիրապետությունը: Օգտվելով եկեղեցուց վտարելու և նզովելու իրավունքից, նրանք բազմիցս խոչընդոտեցին ՅՈՒԵՌ-ի ազդեցությունն ընդլայնելու փորձերը: Նման կտրուկ դիրքորոշումը շատ ու շատ հոգևոր ու աշխարհիկ այրերի ետ էր պահում անկախ եկեղեցի ունենալու պահանջին սատարելուց: Անտեսելով այդ խիստ անբարենպաստ պայմանները, 1921 թ.-ի հոկտեմբերի 21-ին ՅՈՒԵՌ-ի իրավիճակը ժողովում (ներկա էին 500 պատգամավոր, ներառյալ՝ 64 հոգևորականները) կտրուկ քայլեր ձեռնարկվեցին: Անտեսելով կանոնական օրենքներն ու արհամարհելով հովվապետների սպառնալիքները, ՅՈՒԵՌ-ն միտրոպոլիտ ընտրեց իր անդամներից մեկին՝ քահանա Վասիլ Լիպկիվսկուն, որն անմիջապես 4 հոգու եպիսկոպոսի, և մեկ հոգու արքեպիսկոպոսի աստիճաններ շնորհեց: Սրանք էլ իրենց կարգին մի քանի հարյուր քահանա ու սարկավագ ձեռնարկեցին: Այնուհետև ՅՈՒԵՌ-ն հաստատեց Ուկրաինական ավտոկեֆալ ուղղափառ եկեղեցի (ՌՄՈՒԵ) ստեղծելու իր նախկին որոշումը:

Նոր եկեղեցին արագորեն ոտքի կանգնեց: 1924 թ.-ին այն արդեն ուներ 30 եպիսկոպոս, մոտ 1500 քահանա, ավելի քան 1100 ծխական համայնք (Ուկրաինայում ընդամենը կար 9 հազ. համայնք), իրենց միլիոնավոր հավատացյալներով: Նրան միացան ԱՄՆ-ի, Կանադայի և Եվրոպայի ուկրաինական եկեղեցական շատ համայնքներ: Ի տարբերություն ավանդական ուղղափառության, որ հպարտանում էր իր ավանդապատիությամբ, ուկրաինական ավտոկեֆալ եկեղեցին բազմաթիվ նորարարություններ ձեռնարկեց, ինչպես օրինակ՝ եկեղեցական սլավոններենի փոխարեն ժամասացությունները ուկրաիներեն լեզվով վարելն էր: Այն իրաժարվեց ուղղափառ հոգևորականին բնորոշ արտաքին այնպիսի անհրաժեշտությամբ:



յուններից, ինչպիսիք էին՝ փարաջան, երկար մազերն ու մորուքը: Դարերով հաստատված իրողությունից կտրուկ հրաժարումն էր այն, որ հոգևորականությանը թույլատրվեց ամուսնանալ: Ուկրաինական եկեղեցին ժամանակի ոգուն լիովին համապատասխան ինքնավարման ժողովրդավարական սկզբունքներ որդեգրեց: Այն հրաժարվեց պատրիարքության հեղինակության հավակնորդ համակարգից՝ եկեղեցական գործերում գերագույն իշխանությունը հանձնելով եպիսկոպոսներից, քահանաներից ու աշխարհիկ ներկայացուցիչներից ընտրվող խորհրդին: Ընտրության սկզբունքը տարածվում էր նաև եպիսկոպոսության ու ծխական քահանաների վրա: Այս բոլոր բարեփոխումների հիմքում՝ նոր եկեղեցու ձգտումն էր՝ առավելագույնս մերձենալ հավատացյալներին, նրանց ներգրավել եկեղեցու գործունեության մեջ: Թերևս դրանով կարելի է բացատրել ՌԲՄԷ-ի սկզբնական տպավորիչ հաջողությունները:

Սակայն այդ նվաճումները չէին բացառում նոր եկեղեցու գործունեության մեջ բավականին շոշափելի բացթողումները: Որոշակի կանոններից վճռականապես հրաժարվելը, ՌԲՄԷ-ի անօրինական լինելու մասին պատրիարք Տիխոնի մշտական հայտարարությունները, արտասահմանյան ուղղափառ պատրիարքների կողմից չճանաչվելը՝ ուկրաինական եկեղեցու համար ինչ-որ անիրական, օրենքով չսրբագործված եկեղեցու կերպար ստեղծեցին, ինչը սկզբնական շրջանում շատ կողմնակիցների վանեց իրենից: Բացի այդ՝ ՌԲՄԷ-ի գործունեության մեջ ժողովրդավարական սկզբունքների ներդրումը բազմաթիվ վեճերի ու անախորժությունների տեղիք տվեց քահանաների ու ծխականների միջև: Նորակազմ եկեղեցին դեռևս նյութական պատշաճ բազա չուներ: Առավել լուրջ էր «կարդերի հարցը»: Հապճեպորեն, երբեմն պատահական, հոգևոր աստիճան շնորհիլը բերում էր նրան, որ եպիսկոպոսներ ու քահանաներ էին դառնում մարդիկ, որոնք անկարող էին, կամ անպատրաստ էին նման պատասխանատու գործունեության: Շատ հաճախ էլ ՌԲՄԷ-ի քահանաներն անգոր էին գտնվում դիմակայելու իշխանությունների ճնշումներին: Ժամանակի ընթացքում, երբ այդ թերություններն ակնհայտ դարձան, ՌԲՄԷ-ի աճը դանդաղեց: Այս ամենով հանդերձ, Ուկրաինական եկեղեցին դեռևս մնում էր Ռուսական ուղղափառ եկեղեցու (որին աջակցում էին ռուս հոգևորականները, հատկապես՝ վանականները, ռուսական փոքրամասնությունը և ուկրաինական բնակչության պահպանողական տարրերը) գլխավոր ախոյանը և վայելում էր Ուկրաինայում ուղղափառ հավատացյալների ճնշող մեծամասնության բարեհաճությունը:

ՌԲՄԷ-ին առավել շատ դժվարություններ էր պատճառում պետության քաղաքականությունը: Անկախ եկեղեցու արագընթաց հաջողություններից անհանգստացած, խորհրդային իշխանությունը նրան թիրախ ընտրեց՝ իրականացնելու համար իր սիրելի «Բաժանիք, որ տիրես» սկզբունքը: Նա ամեն կերպ աջակցում էր Ուկրաինայում եկեղեցական տարբեր այլադավան խմբավորումների, որոնք վնասում էին ինչպես Ռուսական ուղղափառ եկեղեցուն, այնպես էլ նրա ուկրաինական ախոյանին: 1920-ականների սկզբին պետությունն օժանդակում էր Ռուսական ուղղափառ եկեղեցուց անջատված «առաջադիմական» մի խմբի գործունեությանը, որն իրեն կոչում էր «Քրիստոսի եկեղեցու ակտիվիստներ»: Երբ այդ խումբն անհաջողության մատնվեց Ուկրաինայում, իշխանություններն սկսեցին հովանավորել Թեոֆիլ Բուլդովսկու գլխավորած նորաստեղծ «ժողովական-եպիսկոպոսաց եկեղեցուն»: Հանդես գալով ուկրաինական եկեղեցու անկախության օգտին, խումբն առաջարկում էր այդ նպատակին հասնել կանոնական ճանապարհներով, ընդ որում՝ բացահայտ պետականամետ դիրքորոշում ընդունելով:

Այս բոլոր խորամանկությունները չօգնեցին պետությանը ոչ կազմալուծել ՌԲՄԷ-ն, ոչ իրեն ենթարկել այն: Ընդհակառակը՝ չնայած հիշատակված բոլոր թերություններին, այն շարունակում էր աճել ու զորանալ: Այդ իսկ պատճառով, 1926 թ.-ին իշխանություններն սկսեցին համապարփակ ճնշումներ կիրառել ՌԲՄԷ-ի նկատմամբ՝ ծխական համայնքների վրա մեծ հարկեր դնելով և ամեն կերպ սահմանափակելով քահանաների գործունեությունը: Շատ չանցած, միտրոպոլիտ Լիպկիվսկուն և իր շատ գործընկերների մեղադրեցին ազգայնականության մեջ, ձեռքակալեցին ու լուծարեցին ՌԲՄԷ-ն: Չնայած այդ ավերածություններից հետո եկեղեցին կարողացավ ևս մի քանի տարի գոյատևել, սակայն պարզ դարձավ, որ նրան, ինչպես և որքան խՍՀՄ-ում ընդհանրապես, կրոնին մոռալ ապագա է սպասվում:

\* \* \*

Չեղափոխության և քաղաքացիական պատերազմի հետևանքով ուկրաինացիների մեջ ակտիվորեն աճող ազգային ինքնագիտակցության գործընթացը շարունակվեց նաև 1920-ական թվականներին՝ զգալի չափով շնորհիվ այն բանի, որ կոմունիստական ռեժիմը դեռևս վերջնականապես չէր ամրապնդվել և նրա ազդեցությունը բացարձակ չէր: Կոմունիստական կուսակցությունը քաղաքական ոլորտում հավակնում էր մենաշնորհի, դրա համար էլ ուկրաինացիների ազգային ձգտումները խստորեն խոչընդոտվում էին: Միաժամանակ, չի կարելի անտեսել այն հանգամանքը, որ ուկրաինացիները, թող որ՝ մեծ մասամբ ձևական, բայց՝ պետականության կարգավիճակ էին ձեռք բերել և իրենց զգում էին լիարժեք կայացած պետական ազգ՝ այդ կարգավիճակից բխող բոլոր իրավունքներով ու հնարավորություններով:

Ազգային շարժումը, որ անհաջողության մատնվեց 1917-1920-ական թվականներին, կարողացավ իր ուժերը ներդնել մշակույթի բնագավառում: Շնորհալի ու տաղանդավոր շատ գրողների ու բանաստեղծների, արվեստագետների, նկարիչների ու գիտնականների շնորհիվ, ուկրաինական մշակույթը, որ նախահեղափոխական մտավորականության նեղ շրջանակի հոգածության առարկան էր, դարձավ ժողովրդական լայն զանգվածների խնդիրն ու գործը: **Ուկրաինացուն մշակույթի նվաճումները ոչ միայն դարձրեց ժողովրդական զանգվածների սեփականությունը, այլև նպաստեց, որ ուկրաինական մշակույթը նրանց գիտակցության մեջ զուգորդվի դեպի լուսավորություն տանող ճանապարհի հետ, սոցիալ-տնտեսական բնագավառի արդիականացման և նույնիսկ՝ պետականացման հետ:** Այդ իսկ պատճառով, թվում էր, թե ուր որ է կծնվի ազգային գաղափարախոսության և կոմունիզմի բեղմնավոր մի համակցություն, որն ուկրաինական ժողովրդին հնարավորություն կտա սոցիալ-տնտեսական բնագավառում հասնել իր նպատակներին: Սակայն հետագա իրադարձություններն այդ պատրանքները հողմացրիվ արեցին:





# ԽՈՐՆՐԴԱՅԻՆ ՈՒԿՐԱԻՆԱ. ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ 30-ԱԿԱՆՆԵՐԸ

1920-ականների ավարտին բուլշևիկներն արդեն պատրաստ էին «թևակոխելու» կոմունիստական հասարակարգի կառուցման նոր փուլ: Ստալինի ղեկավարությամբ նրանք «ժամանակավոր նահանջից»՝ ՆԵՊ-ից, միանգամից անցան հասարակության սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքում արմատական այնպիսի լայնածավալ ու բռնի փոփոխություններ իրականացնելուն, որ այն հաճախ անվանում են «երկրորդ հեղափոխություն»: Սակայն 30-ական թվականների արմատական վերափոխումներն ուղեկցվում էին վերադարձով ռուսական քաղաքական կյանքի մի քանի ավանդական տեսակետներին, ամենից առաջ՝ դաժան կենտրոնամետությանն ու միանձնյա կառավարման ռեժիմին: Ուկրաինացիների համար այդ թավալգուր աղետալի ետընթացը՝ կոմունիզմին հասնելու իրենց «յուրահատուկ ճանապարհի» փնտրտուքի ավարտն էր նշանակում: Կրկին, ինչպես ցարիզմի օրոք, Ուկրաինան վերածվեց ինչ-որ մեծ ամբողջի փոքրիկ մասնիկի: Սակայն այս անգամ արդեն, ուկրաինացիներն ստիպված էին սարսփելի բարձր գին վճարել՝ հասնելու համար այնպիսի «նպատակների իրականացմանը» ինչպիսիք իրենց առջև չէին էլ դրել:

## Ստալինն ու ստալինիզմը

1927 թ.-ին Ստալինն հաղթող դուրս եկավ հանուն իշխանության անողոր պայքարում, որը կուսակցության վերնախավում սկսվել էր Լենինի մահից անմիջապես հետո: Ստալինը (Ջուդաշվիլի) ծնվել էր 1879 թ.-ին, աղքատ ընտանիքում և վաղ հասակից ընկել էր բուլշևիկների ազդեցության տակ: Կուսակցության մեջ, մինչև հեղափոխությունը, նրա դերն աննշան էր: Նրան հանձնարարված էր, որպես կուսակցության մեջ սակավաթիվ ազգերի ներկայացուցիչ, ազգային խնդիրների տեսական ուսումնասիրությունը, մի զբաղմունք, որը կուսակցականների մեծ մասի մոտ համարվում էր երկրորդական կարգի անկարևոր գործ: Սակայն այդ նյութերին իրագրել լինելը հետագայում նրան շատ պետք եկավ: Լինելով աչքի չընկնող անհատ (մի քանի գինակիցների հուշերում նա մնացել է որպես աննշան մարդ՝ «գործ բիծ»), նա չէր փայլում գրական, կամ ճարտասանական տաղանդով, ինչը բնորոշ էր բուլշևիկյան շատ առաջնորդների: Այդ պատճառով էլ, հեղափոխության ժամանակ նրան բաժին էր հասել ներկուսակցական կադրային աշխատանք, և որպես գլխավոր քարտուղար, նրան հանձնարարված էր կուսակցական կադրերի ընտրության և առաջխաղացման վերահսկողությունը: Կուսակցական մարմնի վրա ունեցած իշխանության զուգորդումը նուրբ խորամանկության հետ, նրան հնարավորություն տվեցին ազատվել հակառակորդներից և դառնալ կուսակցության անվիճելի «առաջնորդը»՝ շրջապատված իր հրամաններն անվերապահ կատարողներով:

Ինչպես որ Ստալինը կուսակցության մեջ բռնակցական մեծիշխանության ռեժիմ հաստատեց, կուսակցությունն էլ իր հերթին ընդլայնեց վերահսկողությունը հասարակական կյանքի բոլոր ոլորտների վրա: Ստալինին բացահայտ քննադատելը դարձավ անհնարին (հակառակվելու մասին խոսք անգամ չէր կարող լինել), քանի որ ՊԲՎ-ն (Պետական քաղաքական վարչությունը՝ նախկին Չեկան)՝ այդ հզոր պատժիչ մարմինը, գնալով աճում ու ծավալվում էր՝ հետևողականորեն հետապնդելով ու հալածելով, այնուհետև վերջնականապես ոչնչացնելով ցանկացած ընդդիմություն՝ լինել իրական, թվացյալ, թե՛ հնարավոր: Որոշ գիտնականներ այդ անձնական դիկտատուրայի և միաձույլ կազմակերպության ռուս-մարք-

սիստական գործակցությունը դիտում են որպես ստալինիզմ: Ուրիշներն այն անվանում են ստալինիզմ: Խորհրդային գիտնականները երկար ժամանակ այդ երևույթը դիտում էին որպես անհրաժեշտ փուլ՝ սոցիալիզմի կառուցման գործում և փառաբանում էին Ստալինին՝ իր իմաստուն ղեկավարության, պողպատյա կամքի և իրատեսության համար: Իսկ քննադատողներն՝ ընդհակառակը, ընդգծում էին նրա բնավորության այնպիսի գծերը, ինչպես՝ դաժանությունը, մարդկային տառապանքների նկատմամբ բացարձակ անտարբերությունը, հակավածությունը դեպի խելացնորությունը, ինչն ստիպում էր նրան ամենուրեք դավադրություն, դավաճանություն ու թշնամիներ փնտրել: Նիկոլաս Ռյագանովի խոսքերով՝ Ստալինի (ինչպես նաև Իվան Ահեդի, որով նա հիացած էր) խելագարությունն իր օրենքներն ու մեթոդներն ուներ:

Ըստ ամենայնի՝ բուլշևիկների մեջ Ստալինն առանձնանում էր գյուղացիների նկատմամբ իր թշնամական վերաբերմունքով՝ նրանց համարելով անուղղելի պահպանողական և հեղափոխական «բարեփոխումների» գլխավոր խոչընդոտ: Նրա հարողի՝ Նիկիտա Խրուշչևի խոսքերով՝ «Ստալինի համար գյուղացիները թափփուկներ էին»: Ծագումով ռուս չլինելով հանդերձ, Ստալինը ռուսական շովինիզմի ջատագովը դարձավ՝ համարելով այն խորհրդային կայսրության ամրապնդման միջոց: Ուկրաինացիները մեծ մասամբ գեղջուկ ազգ էին, որ ազգային ինքնագիտակցության վերելք էին ապրում, և հատկապես այդ էր պատճառը, որ Ստալինի նպատակների իրականացման ճանապարհին երկակի թիրախ պետք է դառնային:

## «Մեծ բեկումն»

1920-ականների կեսերին, խորհրդային Ուկրաինայում հայտնված մարդը կցնցվեք, տեսնելով այն հսկայական փոփոխությունները, որ իրականացրել էր խորհրդային իշխանությունը: Նորանուծություններն առնչվում էին ամեն ինչին՝ գաղափարախոսությանը, պետական կառուցվածքին, տնտեսական համակարգին, իրավակարգին, կրթությանն ու մշակույթին: Սակայն քիչ չէր լինի նաև նրա զարմանքը, թե հասարակության կյանքում ինչքան շատ բան էր մնացել հնից: Ուկրաինան առաջվա պես մնացել էր հողագործական երկիր, ուր գյուղացին աշխատում էր նախկինի պես, նույն հողեր կյանքն էր, որում գերակշռում էին եկեղեցին ու ավանդական արժեքները: Փաստորեն դա մի հասարակություն էր, որտեղ գոյատևում և դժվարությամբ համակերպվում էին մշակույթի երկու տեսակ: Քաղաքն ընթանում էր Խորհուրդների ճանապարհով: Գյուղերում, ուր կենտրոնացած էր բնակչության գերակշիռ մասը, փոփոխություններ գրեթե չէին նկատվում: Գյուղացիության բռնած դիրքի մեջ բուլշևիկ հեղափոխականների համար ամենաանտանելին այն էր, որ նրանք մեծ ցանկություն չէին դրսևորում կիսելու նրանց «կոմունիստական դրախտի» երազանքները: Վասնզ և այլն, որ այնպիսի հեղափոխության հաղթանակին, խորհրդային Միությունը կարող է մնալ առաջվա պես հետամնաց, ըստ էության հողագործական երկիր: Դետալաբար՝ կուսակցության ուսերին դժվարին ու անշնորհակալ մի առաքելություն էր բարդվում՝ պրոլետարական դիկտատուրա հաստատել գյուղական հասարակության մեջ:

Ստալինն այդ իրավիճակն համարում էր ոչ միայն ծանր, այլև պարզապես վտանգավոր: Նոր ռեժիմի ոխերին թշնամին կուլակն էր, որ ՆԵՊ-ի շրջանում տնտեսապես ամրապնդվել ու կայունացել էր: Առավել չարազուշակ էր ինտերվենցիայի վտանգը, որին, Ստալինի կարծիքով, երիտասարդ սոցիալիստական երկրի նկատմամբ պատրաստվում էին կապիտալիստական երկրները: Նման նկատառումները կուսակցության անդամների մեջ ամրապնդում էին ակտիվ գործողությունների դիմելու անհրաժեշտության գիտակցումը՝ հեղափոխության նվաճումները պաշտպանելու և նրա ռազմավարական նպատակներն իրականացնելու համար:

Մեծ տեսաբան չլինելով, Ստալինը սակայն կարողացավ այդ ճգնաժամային պահին բավականին հրապուրիչ ծրագիր առաջարկել: Որպես անհրազործելի գաղափար մերժելով իր հակառակորդ Լև Տրոցկու առաջարկը՝ հարատև հեղափոխության վերաբերյալ (այսինքն՝ համաշխարհային հեղափոխության գնալու), Ստալինը կոչ արեց կուսակցությանը՝ կենտրոնանալ «մեկ առանձին վերջրած երկրում» սոցիալիզմ կառուցելու վրա: Այլ կերպ ասած՝ ոչ մի բանի առաջ կանգ չառնելով, ինչքան հնարավոր է արագ կառուցել իսկական սոցիալիստական համակարգ, ԽՍՀՄ-ը դարձնել ժամանակակից արդյունաբերական երկիր: Արագորեն իրականացնելով այդ արմատական փոփոխությունները, Խորհրդային Միությունը ոչ միայն կկարողանար դիմագրավել շրջապատող կապիտալիստական երկրներին, այլև ուսանելի ու



ակնհայտ օրինակ դառնալ այն բանի, որ կոմունիզմը առաջադիմության ամենաստույգ ճանապարհն է: Քանի որ քիչ էր հավանական, թե այդ ծրագրի իրականացմանը զորավիգ կլինի բնակչության մեծամասնությունը կազմող գյուղացիությունը (125 գյուղացուց միայն մեկն էր կոմունիստ), Ստալինը կոչ էր անում գնալ «հեղափոխության՝ վերևից», այսինքն՝ ժողովրդի վզին փաթաթել կուսակցության և կառավարության կողմից ձեռնարկվելիք փոփոխությունները:

### Առաջին հնգամյա պլանը

Հսկայական բարեփոխումների նախնական տարբերակը, որ կոչվեց առաջին հնգամյա պլան, կուսակցության կողմից ընդունվեց 1928 թ.-ին: Այդ ծրագրի գլխավոր խնդիրն էր «հասնել և անցնել» կապիտալիզմին՝ տնտեսապես: Հիմնական շեշտը դրվում էր ծանր արդյունաբերության զարգացման վրա: Այստեղ շշմեցուցիչ ծավալի խնդիրներ էին առաջադրվում. արդյունաբերական արտադրության աճն ապահովել 250 %-ով, ընդ որում՝ միայն ծանր արդյունաբերության արտադրական ծավալները ենթադրվում էր ավելացնել 330 %-ով: Պլանի մյուս կարևոր բաղադրիչը գյուղացիական տնտեսությունների համայնացումն էր՝ գյուղերում խոշոր կոլեկտիվ (համայնքային) տնտեսությունների ստեղծումը: Սկզբնական շրջանում ենթադրվում էր կոլտնտեսություններ հիմնել 20 % մենատնտեսությունների հիմքի վրա: Գյուղատնտեսական արտադրանքի աճը պլանավորվում էր 150 %: Հետագայում խնդիր դրվեց ամբողջովին համայնացնելու, այնպես, որ վերանա մասնավոր սեփականատիրության «բուրժուական վնասակար» ազդեցությունը:

Ըստ էության, պլանը ենթադրում էր գյուղի և քաղաքի աշխատունակ բնակչության ճնշող մեծամասնությանն աստիճանաբար վերածել պետական հիմնարկ-ձեռնարկությունների բանվորական ուժի: Նման համակարգը պետությանը ոչ միայն տնտեսական բացարձակ իշխանություն էր տալիս քաղաքացիների վրա, այլև ամրապնդում էր նրա քաղաքական գերիշխանությունը մասնակիորեն անկախ գյուղացիության վրա: Ստալինը կանխատեսում էր այդ պլանների դեմ որոշակի դժգոհությունների և նույնիսկ դիմադրության երևան գալը՝ հատկապես գյուղացիության կողմից, որը զրկվելու էր հողի սեփականությունից: Նման կարգի սոցիալական հնարավոր «գլխացավանքների» մասին նախագուշացումներին ցինիկաբար պատասխանում էր առածով. «մինչև ձուն չկտրես, ձվածեղ չես պատրաստի»:

### Արդյունաբերականացում

Արդյունաբերության զարգացման տեսանկյունից, առաջին հնգամյա պլանը բարենպաստ էր Ուկրաինայի համար: Նրան բաժին էր հասնում ընդհանուր կապիտալ ներդրումների 20 %-ը, 1500 արդյունաբերական նոր ձեռնարկություններից 400-ը նախատեսված էր կառուցել Ուկրաինայում: Դրանցից մի քանիսն իսկապես վիթխարի կառույցներ էին: 1932 թ.-ին 10 հազ. բանվորների ջանքերով կառուցված Դնեպրոպետրովսկի ՀԷԿ-ը Եվրոպայի ամենախոշոր հիդրոէլեկտրակայանն էր: Նույն շարքին են դասվում Ջապրոժյեի մետաղագործական կոմբինատը և Խարկովի տրակտորի գործարանը: Դոնեցկի և Կրիվոյ Ռոզի ավազանում այնքան նոր գործարաններ էին կառուցվում, որ այդ ամբողջ տարածքը վեր էր ածվել մի հսկայական շինհրապարակի:

Երկրորդ և երրորդ հնգամյա պլաններն արդեն անհամեմատ քիչ կապիտալ ներդրումներ էին նախատեսում հանրապետության արդյունաբերության ոլորտին, եթե ի նկատի ունենանք նրա դերը ԽՍՀՄ տնտեսության մեջ: Պատճառաբանելով, թե պատերազմի դեպքում Ուկրաինայի արդյունաբերական կենտրոնները հեշտ խոցելի թիրախ կլինեն գավառների համար, Մոսկվան որոշում կայացրեց արդյունաբերական խոշոր բազա ստեղծել Ուրալում: Դրանից ելնելով, երկրորդ հնգամյա պլանով (1932-1937 թ.թ.) նախատեսված 4500 գործարաններից միայն 1000-ն էր բաժին հասել Ուկրաինային: Հաջորդ հնգամյակում կապիտալ ներդրումների ընդհանուր ծրագրում Ուկրաինայի բաժնի նվազումն ավելի ակնհայտ էր. 3000 նոր կառուցվող ձեռնարկություններից մոտ 600-ն էին կառուցվում նրա տարածքում: Եվ սակայն, 10 տարուց էլ պակաս ժամանակում 1000 նոր գործարանի շահագործումով Ուկրաինան արդեն դասվեց զարգացած արդյունաբերություն ունեցող երկրների շարքում:

Պատմության մեջ դեռևս երբեք ոչ մի հասարակություն այդքան կարճ ժամանակում տնտեսական նման լայնածավալ բարենորոգումներ էր իրականացրել: Եթե XIX դարի արդյունաբերական հեղաշրջման ընթացքում Ուկրաինայում մի քանի դյուժին արդյունաբերական ձեռնարկություն կառուցելու համար տասնամյակներ պահանջվեցին, ապա 1930-ական թվականներին Խորհուրդներն այստեղ տարեկան հարյուրավոր գործարաններ կառուցեցին:

Սակայն նման նվաճումների հնարավոր էր հասնել համայն աշխատավորության ուժերի անհավատալի լարումով միայն: Համապատասխանաբար՝ հարկավոր էր կապիտալիստական աշխարհի հետ համաշխարհային տնտեսական գոտեմարտի, տիտանական պայքարի մթնոլորտ ստեղծել, որի հաղթական ելքը կախված էր յուրաքանչյուր անհատի ճիգ ու ջանքերից: Այս մտածողությանն ու գործելակերպին ուղղություն տվեց Ստալինը՝ 1931 թ.-ի իր նշանավոր ճառով. «Արդյունաբերականացման տեմպերը դանդաղեցնել՝ կնշանակի ետ մնալ: Իսկ ետ մնացողներին խփում են: Մենք առաջատար երկրներից ետ ենք մնացել 50-100 տարով: Այդ տարածությունը մենք պետք է հաղթահարենք տասը տարում: Կամ մենք կանենք այդ, կամ մեզ կճխլեն»: Սա դիմում էր՝ խորհրդային քաղաքացիների խորհրդային հայրենասիրությանը (և ռուսական ազգայնամոլությանը)՝ ցույց տալու աշխարհին, որ իրենց երկրի համակարգը լավագույնն է:

Ժողովրդական լայն զանգվածների խանդավառությունը բարձրացնելու համար բազմաթիվ ու բազմազան մեթոդներ էին կիրառվում: Տնտեսական բառապաշարում հաստատուն տեղ գրավեց ռազմական տերմինաբանությունը՝ «ճեղքում տրակտորաշինության ճակատում», «հարվածային բրիգադների աշխատանքային հաղթանակներ», «գրոհ դեպի նոր բարձունքները» և այլն: Բարձր արտադրողականության հասած բանվորներին «Սոցիալիստական աշխատանքի հերոսի» կոչում էր շնորհվում: Պլանները ժամկետից շուտ կատարելու մրցություն ծավալվեց գործարանների, քաղաքների և նույնիսկ ամբողջ հանրապետությունների միջև: Այդ մեթոդների կիրառումը որոշակի հաջողություններ գրանցեց: Աշխատավորներից շատերը, հատկապես կոմերիտիության և կուսակցության անդամները, անկեղծորեն հրճվում ու հպարտանում էին ձեռք բերած հաջողություններով և իրենց ողջ ուժերը պատրաստակամությամբ ներդնում էին կուսակցության առաջադրած խնդիրներն անվերապահ կատարելու մեջ: Նրանց համար, ովքեր հատուկ խանդավառությամբ չէին վերաբերվում երկրում կատարվող գործընթացներին, հարկադիր աշխատանքի պարտադրելու միջոցների մի ողջ հավաքածու էր գործում: Չհիմնավորված ուշացումները, անհարգելի բացակայությունը կամ գործալքությունը, պարտականությունների կատարմանը քամահարանքով մոտենալը դարձան քրեորեն պատժելի հանցագործություններ, որոնց համար կարելի էր զրկվել պարենային քարտից (ինչը կարող էր հասցնել սովամահության), բնակարանից, կամ ավարտվել սիբիրյան ճամբարներ քարտվելով:

Այն, որ զանգվածային լրատվամիջոցները պլանները ժամանակին կատարելու անդադար կոչեր էին անում աշխատավորներին, դեռևս չէր նշանակում, թե արդյունաբերականացումը ծավալվում է պլանավորմանը համապատասխան: Արդեն 1930 թ.-ին միանգամայն պարզ դարձավ, որ վերակառուցման կատարի տեմպերը հաճախ ուղեկցվում են աներևակայելի անկարգություններով, կազմակերպական անձարակությամբ և անտեղի վատնումներով: Նոր կառուցված գործարանները սարքավորումների բացակայությամբ պատճառով պարտապարտ էին մատնվում: Պատահում էր, որ նորակառույց արտադրամասերում սխալ նախագծերի պատճառով հնարավոր չէր լինում մեխանիզմներ տեղադրել: Այն դեպքում, երբ մի ֆաբրիկայում անգետ ու անփորձ աշխատողները փչացնում էին նոր սարքավորումները, մի այլ գործարանում որակյալ բանվորները պարապ ժամանակ էին վատնում՝ անհրաժեշտ մեքենաներ ու հաստոցներ չուներնալու պատճառով: Ընդ որում՝ դեռևս լուրջ խնդիր էր մնում արտադրվող ապրանքների ցածր որակը:

Ուկրաինայի կոմունիստ ղեկավարությունն արդյունաբերության զարգացումը քննադատելու իր առանձնահատուկ պատճառներն ուներ: Առաջին հնգամյակից հետո պլաններ կազմելիս, նրա մասնակցության աստիճանը գրոյական էր, ինչի մասին վկայում էր Ուկրաինայում կապիտալ ներդրումների մշտական նվազեցումը: Ուկրաինացիներն իրենք էլ դժվար թե գոհ լինեին իրենց հանրապետությունում արդյունաբերության զարգացման բնույթից: Մոսկովյան պլանավորողները հույս էր կիսաֆաբրիկատներ արտադրողի դեր էին հատկացրել Ուկրաինային, մինչդեռ ռուսական արդյունաբերությանը մենաշնորհված էր պատրաստի արտադրանքի արտադրությունը, առաջին հերթին՝ սպառման ապրանքների, որոնք կրկին վերադարձվում էին Ուկրաինայի շուկա: 1932 թ.-ին ուկրաինացի մի քանի տնտեսագետներ դեռևս աներկյուղ նշում էին, որ Ռուսաստանի և Ուկրաինայի միջև «գաղութային» փոխհարաբերությունները դեռ չեն վերացել: Եվ վերջապես՝ Ուկրաինայում արդյունաբերական ձեռնարկությունների հենց աշխարհագրական ոչ համամասն տեղաբաշխումը լուրջ վտանգներ էր պարունակում: Եթե ավանդական արդյունաբերական կենտրոնները (օրինակ՝ Դոնբասը) շարունակում էին արագ ու արդյունավետ զարգանալ, ապա խիտ բնակեցված Աջափնյակը



մնում էր որպես տնտեսապես լճացած շրջան:

Այս բոլոր թերություններով համդերձ, առաջին հնգամյակների նվաճումները տպավորիչ էին: 1940 թ.-ի շեմին, 1913 թ.-ի համեմատությամբ, Ուկրաինայի արդյունաբերական ներուժն աճեց յոթն անգամ (Ռուսաստանում՝ ինն անգամ): Աճեց նաև աշխատանքի արտադրողականությունը, չնայած իրական աշխատավարձը նվազեց: Արդյունքում՝ ԽՍՀՄ-ը աշխարհի խոշորագույն արդյունաբերական տերությունների շարքում հինգերորդից բարձրացավ երկրորդ տեղը, իսկ Ուկրաինան (որն արտադրության մակարդակով գրեթե հավասար էր Ֆրանսիային) դարձավ արդյունաբերական առավել զարգացած երկրներից մեկը Եվրոպայում:

### Ուրբանիզացիա (քաղաքաբնակեցում)

1930-ական թվականներին արդյունաբերության արագ աճն հանգեցրեց հանրապետության բնակչության ոչ միայն զբաղվածության կառուցվածքի փոփոխության, այլև տեղաբաշխման ու կացութաձևի կտրուկ փոփոխությունների:

Չարյուրամյակներ շարունակ Ուկրաինայի պատմական զարգացման գլխավոր խնդիրներից մեկը ուկրաինական գյուղի և ոչ-ուկրաինական քաղաքի միջև հակասություններն էին: Առաջին հնգամյակների ընթացքում, երբ միլիոնավոր ուկրաինացիներ դիմեցին դեպի քաղաքները՝ արդյունաբերական ձեռնարկություններում աշխատելու, քաղաքի ու գյուղի փոխհարաբերությունների ոճը սկսեց փոխվել:

Կարող է հարց ծագել, թե ինչու ուկրաինացիները, որ 1890-ական թվականների արդյունաբերականացման առաջին փուլի տարիներին զանգվածային մասնակցություն չբերեցին երկրի արդյունաբերականացման գործընթացին, հանկարծ այդպես տեղափոխվեցին արձագանքեցին 1930-ականներին: ԽՍՀՄ-ում արդյունաբերականացման թափն այնքան հզոր ու անպարփակ էր, որ աշխատուժի աննախադեպ պակաս զգացվեց: Արդյունքում՝ ռուս բանվորների ավանդական ներհոսքը դադարեց և Ուկրաինայի նոր ձեռնարկություններն ստիպված աշխատել սկսեցին տեղական ուժերով: Բացի այդ, գյուղի թշվառ վիճակն ուկրաինական գյուղացիությանը ստիպում էր լքել պապական տունն ու բույնը և աշխատանք փնտրել քաղաքում, քանի որ դեպի արևելք շարժվելու և նոր հողեր յուրացնելու հնարավորություն արդեն չուներին, ինչպես որ վարվում էին 1890-ականներին: Գյուղից դեպի քաղաք մարդկանց անդառնալի հոսքը, որ այդ ժամանակ կտրուկ աճեց, չէր կարող չբերել այն կենսաձևի նշանակալի փոփոխությունների, որ հազարամյակներ շարունակ բնորոշ էր եղել ուկրաինացիներին:

Քաղաքներն աճում էին անհավանական տեմպերով: Եթե 1926-1939 թ.թ.-ներին Ուկրաինայի ընդհանուր բնակչության թիվն աճեց 4 անգամ, ապա քաղաքային բնակչության թիվը կրկնապատկվեց: Այդ շրջանի սկզբում Ուկրաինայի բնակչության հինգից միայն մեկն էր քաղաքաբնակ, երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրեին՝ երեքից մեկը: Ուրբանիզացիայի այդ շրջանում նույնպես ուկրաինացիները բավական մեծ բաժին ունեին: 1920 թ.-ին քաղաքային բնակչության միայն 32 %-ն էր ուկրաինացի, որոնք էլ գլխավորապես կենտրոնացած էին ոչ մեծ քաղաքներում: 1939 թ.-ի շեմին քաղաքաբնակների մեջ ուկրաինացիների տեսակարար կշիռն հասավ 58 %-ի, ընդ որում՝ մեծ մասամբ արդյունաբերական խոշոր կենտրոններում: Այդ, 4-ից երևում է, որ ուկրաինացիների ամենամեծ հոսքը հենց դեպի այդ կենտրոններն է: Ուկրաինացիների թիվն աճեց նաև պրովետարիատի շարքերում: Եթե 1926-ին բանվորների մեջ ուկրաինացիների թիվն ընդամենը 6 % էր կազմում, ապա 1939 թ.-ին ուկրաինական ողջ բնակչության գրեթե 30 %-ին կարելի էր պրովետարներ համարել:

Չարգացող արդյունաբերական կենտրոնների մեծ մասը տեղաբաշխված էր ոչ թե Աջափնյակում, ուր հիմնականում ուկրաինացիներ էին բնակվում, այլ՝ Դոնբասում ու Չարավում,

Սոյուսակ 4

Ուկրաինացիների տեսակարար կշիռը արդյունաբերական կենտրոններում 1923-1933 թ.թ.-ներին (%-ներով)

Քաղաք	Ուկրաինացիները 1923 թ.-ին	Ուկրաինացիները 1933 թ.-ին
Խարկով	38	50
Զապորոժյե	28	56
Դնեպրոպետրովսկ	16	48

որտեղ մեծ քանակությամբ ռուսական ու հրեական ազգային փոքրամասնություններ էին կենտրոնացած: Չեռնոգայում, երբ կառավարությունը ռուսացման կուրս որդեգրեց, այդ համագամանքը բավական կարևոր նշանակություն ձեռք բերեց: Ճիշտ է, սկզբում ուկրաինացիների ներհոսքն այնքան հզոր էր, որ ռուսական մշակույթն ի վիճակի չէր գրանց ծուլել, և քաղաքներում ռուսների ավանդական դարձած առավելությունը լրջորեն վտանգվեց:

Նոր բնակիչների հսկայական ներհոսքը բավական բարդացրեց կենսապայմաններն ու կտրուկ աճեց բնակարանային ճգնաժամը քաղաքներում: Նորեկները, որոնց մեծ մասն ընտանիքը թողել էր գյուղում, ստիպված էին լինում տարիներ շարունակ ապրելու բանվորական լեփեցուն հանրակացարաններում: Իսկ ընտանիքով եկածներն էլ, հաճախ այլ ելք չունենալով, տեղավորվում էին արվարձանների աղքատիկ խրճիթներում: Սննդամթերք ստանում էին սահմանափակ քանակությամբ և միայն քարտերով: Բանվորների մեծ մասին միայն մի բան էր հաշտեցնում կյանքի նոր պայմանների հետ. չնայած սարսափելի դժվարություններին, այն, համեմայն դեպս, ավելի թեթև ու տանելի էր, քան գյուղում:

### Չամայնացում

Քաղաքների հետ համեմատած, գյուղերում վերափոխումներն առավել ընդգրկում ու դրամատիկ էին: Այստեղ «երկրորդ հեղափոխությունն» ուղեկցվում էր այնպիսի դաժանությամբ ու սարսափներով, որ այն չէր կարելի այլ կերպ անվանել, քան՝ պատերազմ գյուղացիության դեմ, որ սանձազերծել էր կոմունիստական ռեժիմը: Չափազանցություն չի լինի, եթե ասենք, որ համայնացումն իր կործանարար հետևանքներով Ուկրաինայի պատմության ամենաողբերգական էջերից մեկն էր:

Բոլշևիկները միշտ էլ համարել են, որ գյուղատնտեսության բնագավառում կոլեկտիվ տնտեսությունը ժամանակի ընթացքում անպայման փոխարինելու է մանր մենատնտեսությանը: Նրանք հասկանում էին, որ գյուղացիությանը տարհանոգելը, նման տեսակետների ոգով վերադաստիարակելը շատ բարդ ու դժվար կլինի և դրա համար երկար ժամանակ կպահանջվի, հատկապես՝ ՆԵՊ-ի ժամանակ հոգուտ նրանց արված զիջումներից հետո: Գյուղացիությունը փաստորեն մերժել է կոլեկտիվ և պետական տնտեսությունները, որոնցում ամբողջ ԽՍՀՄ-ում զբաղված էր գյուղատնտեսության բնագավառի աշխատողների ընդամենը 3 %-ը: Դրանից ելնելով, բոլշևիկներն առաջին հնգամյա պլանը կազմելիս, հույս ունեին լավագույն դեպքում համայնացնել գյուղացիական տնտեսությունների 20 %-ը միայն (Ուկրաինայում ծրագրել էին 30 %-ը): Խորհրդային ղեկավարությունը, կենտրոնանալով արդյունաբերականացման վրա, դատելով ամեն ինչից, չէր հանդգնում իր ուսերին վերցնել նաև գյուղատնտեսության բնագավառում արմատական փոփոխություններ իրականացնելու ծանր բեռը: Սակայն շուտով պարզ դարձավ, որ արդյունաբերականացումն այն տեսքով, ինչպես որ իրականացնում են Խորհրդային ղեկավարությունը, միաժամանակ պահանջում էր նաև համընդհանուր համայնացում ծավալել: Չավանաբար, Ստալինն այդ հետևությանը հանգեց 1927-1928 թ.թ.-ների հացամթերման ճգնաժամի ընթացքում: Արդյունաբերական շուկայի խորհրդային տարբերակը ենթադրում էր, որ պետությունը գյուղացիներից հացահատիկը կգնի ցածր գներով, ինչը թույլ կտար սննդամթերքով ապահովել քաղաքային բանվորական ուժին, և հացահատիկն արտահանելու ճանապարհով ֆինանսներ հայթայթել՝ արդյունաբերականացումը թափով առաջ տանելու համար: Սակայն պետության առաջարկած գինը շուկայականից ութ անգամ ցածր էր, և գյուղացիները, չափազանց ցածր համարելով այն, հացահատիկի մատակարարումը դադարեցրեցին: Ստալինը, զայրացած գյուղացիների «ըմբռնումով» չնոտենալուց, ինչը բնորոշեց որպես *սարսուռ*, որոշեց, որ առաջին հնգամյա պլանը կատարելու լավագույն միջոցը կլինի գյուղացիության վրա և քաղաքական, և՛ տնտեսական լիակատար վերահսկողություն սահմանելը: Արդյունքում՝ առանց որևէ նախապատրաստության, հրամայեց անմիջապես ծավալել «համընդհանուր համայնացումը»:

### Կուլակության վերացումը

Գիտակցելով, որ համայնացման ամենավճռական ու բացահայտ դիմադրությունն սպասելի է ունևոր գյուղացիության կողմից, Ստալինը կոչ արեց «կուլակությունը վերացնել որպես դասակարգ»: Գյուղացիության բարգավաճող մասին աղքատ զանգվածներին հակադրելու մարտավարության հիմքում դրված էր «բաժանիք, որ տիրեց» դասական սկզբունքը: Սակայն կուլակին ոչ-կուլակից տարանջատելն այնքան էլ հեշտ չէր: Պաշտոնապես կուլակ էր համարվում նա, ով միջին գյուղացուց շատ հողաբաժին ուներ և դրա հետ մեկտեղ վարձու



աշխատուժ էր օգտագործում: Հաշվումները ցույց տվեցին, որ այդ կարգին է պատկանում գյուղացիության մոտ 5 %-ը: Սակայն պետության կողմից ստեղծված «արնախում ու շահագործող կուլակի» կերպարը հազվադեպ էր համապատասխանում իրականությանը:

Սովորաբար ունևոր գյուղացին 4-6 հա հող ուներ, տնտեսության մեջ՝ մի քանի ձի, կով, ոչխար: Նրա ունեցվածքի արժեքը դժվար գերազանցեր 600-800 ԱՄՆ դոլարը՝ 80-ականների վերջի գներով: *Քանի որ կուլակային շատ տնտեսություններ քայքայվել ու ավերվել էին քաղաքացիական պատերազմի ժամանակ, հիմա հաճախ կուլակ էին դառնում նախկին չքավորները՝ անասելի ծանր ու տքմաջան աշխատանքի շնորհիվ հասնելով բարեկեցության:* Երբ գալիս էր կուլակներին «ներկացնելու» պահը (դրանով զբաղվում էին հատուկ ստեղծ-



Կուլակի հարցաքննություն, 1929 թ.

ված «եռյակները», որի կազմի մեջ մտնում էին ՊԲՎ-ի ներկայացուցիչը, կոլտնտեսության նախագահը և տեղական կուլբոջի քարտուղարը), մեծ դեր էին խաղում անձնական հակակրանքն ու նախանձը, հաճախ էլ հաշվի էր առնվում այն հանգամանքը, որ այս կամ այն գյուղացին չէր ցանկանում կոլտնտեսություն մտնել: Այդ պատճառով էլ կուլակների կարգին դասվեցին շատ միջակ ու չքավոր գյուղացիներ, որոնց համար նույնիսկ հատուկ տերմին հորինեցին՝ «ենթակուլակներ»:

Իրականում ի՞նչ էր նշանակում «կուլակներին որպես դասակարգ վերացնելը»: *Այն կուլակներին, որոնք համառ դիմադրություն էին ցույց տալիս, զնդակահարում էին կամ զանգվածաբար արքրում Սիբիրի ու Հյուսիսի հարկադիր աշխատանքային ճամբարները: Մնացածներին պարզապես թալանում էին՝ անբողջ ունեցվածքը բռնագրավելով (ներառյալ անձնական իրերը) և թողնում էին բախտի քմահաճույքին: Կուլակաթափությունն իր զագաթնակետին հասավ 1929-30 թ.թ.-ների ծնունդը, որին բնորոշ էր գյուղացիների զանգվածային տեղահանությունը:* Նրանց հարյուրներով ու հազարներով, ընտանիքների հետ միասին, հանում էին տներից, լցնում էին ապրանքատար վագոններն ու քշում հազարավոր կիլոմետրերով հեռու Հյուսիս և նետում անմարդաբնակ մի վայր՝ հաճախ անսնունդ ու անապաստան: *1930-ական թվականների սկզբին խորհրդային ռեժիմի կողմից ունեզրկված 1 մլն-ից ավելի ուկրաինացի գյուղացիներից, մոտ 850 հազ.-ը արքրվեց Հեռավոր հյուսիս, որտեղ նրանցից շատերը՝ հատկապես երեխաները, կտորվեցին սովից ու ցրտից: Աքսորված գյուղացիների*

մի մասը, հատկապես երիտասարդները, արքրից փախան, և նրանց հետ միասին, ում հաջողվել էր խուսափել արքրից, անլեզակ (թաքնված կուլակներին արգելվում էր աշխատանքի վերցնել գործարաններում) համալրեցին քաղաքային բանվորների շարքերը: *Եվ այսպես, առավել աշխատունակ և արտադրանք տվող գյուղացիության մեծ մասը վերացվեց. «Նրանցից ոչ մեկը որևէ բանում մեղավոր չէր, - գրում է խորհրդային հեղինակներից մեկը, - պարզապես նրանք պատկանում էին մի դասակարգի, որը մեղավոր էր ամեն ինչում»:*

Իր նպատակներն իրականացնելու համար ռեժիմն օգնականների կարիք էր զգում, սակայն գյուղերում կոմունիստների խիստ պակաս էր զգացվում: Սկզբում իշխանությունները հույս էին կապում չքավոր գյուղացիներից ընտրվող վերականգնված կոմիտեների հետ, մտածելով, թե նրանք ոչինչ չեն կորցնում թե կուլակաթափության, թե համայնացման ժամանակ: Սակայն շուտով պարզվեց, որ գյուղացու աղքատ լինելը դեռևս չի նշանակում, թե նա պատրաստ է կործանելու առավել հաջողակ հարևանի տնտեսությունը: Այդ պատճառով էլ կառավարությունը քաղաքներից հազարավոր բանվորների, որոնք կուսակցության անդամներ ու կոմերիտականներ էին (շատ հաճախ՝ ռուսներ ու հրեաներ), գործուղեց Ուկրաինայի գյուղերը:

1929 թ.-ի աշնանը ուկրաինական գյուղեր գործուղվեց 15 հազ. բանվոր, 1930 թ.-ի հունվարին՝ ևս 47 հազ.: Միաժամանակ *Ուկրաինա ժամանեցին այսպես կոչված՝ «քսանհինգհազարականները»՝ մեծ մասամբ Ռուսաստանի բանվորներից, որոնք մոլեռանդորեն նվիրված էին ցանկացած գնով սոցիալիզմ կառուցելու գաղափարին:* Նրանք տեղերում զլխավորեցին կուլակաթափության գործընթացը, դարձան նորաստեղծ կոլտնտեսությունների ղեկավարներ: *Ուկրաինային միանգամայն օտար այդ մարդիկ իրենց առջև դրված խնդիրն իրագործում էին՝ չխորշելով ոչ մի տեսակ դաժանությունից:*

### Գյուղատնտեսության վերափոխումը. առաջին փուլ

Ջախջախելով կուլակությանը, Ստալինը միաժամանակ հարձակում սկսեց ողջ գյուղացիության դեմ: Տեղերում կուսակցական ակտիվիստները իրահանգ ստացան՝ *անմիջապես և անճնուրեք կոլտնտեսություններ կազմավորել:* Ստալինի հրահանգները, որ բավականին մշուշապատ էին, թե հատկապես ինչ կերպ իրագործել այդ զանգվածային վերափոխումները, բացարձակ պարզ էին մի բանում՝ *դրանք պետք է իրականացվեն արագ, առանց ուշադրություն դարձնելու բողոքներին ու դժվարություններին, և՛ ցանկացած գնով:* Կոլտնտեսություն հիմնելու սովորական սցենարն այսպիսին էր. գյուղ էր ժամանում կուսաշխատողների մի խումբ ու միտինգ էր կազմակերպում, որի ժամանակ գյուղացիներից մի քանիսին ստիպում էին կոլտնտեսություն ստեղծելու համաձայնություն տալ: Կուսակտիվիստը բարձրաձայնում էր. «Ով որ դեմ է կոլտնտեսություններին, ուրեմն դեմ է խորհրդային իշխանությանը: Քվեարկում ենք. այսպես՝ ո՞վ է դեմ կոլտնտեսությանը»: Այնուհետև «առաջարկություն» էր ստացվում՝ բոլոր գյուղացիներն իրենց հողն ու անասունը հանձնեն կոլտնտեսության տնօրինությանը:

Նման գործողությունների հետևանքով *գյուղը փոթորկվեց:* «Կուսակցության պատվիրակներին» հաճախ ծեծում էին, երբեմն էլ՝ սպանում: Համատարած երևույթ դարձավ «կնիկների բուռնությունը»՝ կանանց ապստամբությունները, որոնք պահանջում էին վերադարձնել իրենց ունեցվածքը: Որոշ դեպքերում բանը հասնում էր զինված ելույթներին, որոնք *ճնշելու համար կառավարությունն ստիպված էր լինում դիմել բանակի ու ՊԲՎ-ի հատուկ ստորաբաժանումների օգնությանը:* Սակայն ընդդիմության ամենատարածված ձևը դարձավ գյուղացիական տնտեսություններում *անասունների զանգվածային մորթը:* Գյուղացիները գերադասում էին միսն ուտել, կամ վաճառել, բայց պետությանը չտալ: Այդ երևույթն ապշեցուցիչ չափերի հասավ: *1928-1932 թ.թ.-ների ընթացքում Ուկրաինան անասնազլխաբանակի գրեթե կեսը կորցրեց:* Շատ գյուղացիներ կոլտնտեսություններից փախչում ու գնում էին քաղաք՝ աշխատանք գտնելու: Խորհրդային իշխանավորների մոտ մեծ տագնապ առաջացավ, երբ կոլտնտեսություն հիմնելու ամենակատաղի հակառակորդներ դարձան հատկապես ՆԵՊ-ի շնորհիվ իրենց վիճակը քիչ թե շատ բարելաված միջակ ու աղքատ գյուղացիները:

Իր ներկայացուցիչների դիրքերն ամրապնդելու համար ռեժիմն օգնություն էր ուղարկում ՊԲՎ-ի աշխատակիցներին, որոնք *ծերբակալում էին կոլտնտեսությունների բացահայտ հակառակվողներին ու Սիբիր էին քշում:* Նման անզուսպ ու անմարդկային բռնությունների պայմաններում գյուղացիությանը խորհրդային իշխանության կամքին ենթարկելը լոկ ժամանակի խնդիր էր: *Մինչև 1930 թ.-ի մարտ ամիսը, Ուկրաինայի մոտ 3,2 մլն գյուղացիական*



տնտեսություններ, հալածված ու վախվորած, մտան կոլտնտեսությունների մեջ՝ սպասելով ճակատագրի հետագա հարվածներին:

**Գյուղատնտեսության սոսկալի ավերածությունը (բայց ոչ մարդկային արժեքների կորուստը) անհանգստացրեց Ստալինին:** 1930 թ.-ի մարտի 3-ին անսպասելի հայտնվեց նրա՝ «Գլխապտույտ՝ հաջողություններից» հոդվածը, որում հայտարարում էր, թե՝ «գյուղի արմատական շրջադարձը դեպի սոցիալիզմ՝ կարելի է արդեն ապահովված համարել»: Եվ անմիջապես հետևում էր մի ապշեցուցիչ հիմնավորում. «Ղնարավոր չէ կոլտնտեսություններ հիմնել ուժով: Դա մի անմիտ ու հետադիմական միջոց կլինի»: Ստալինյան այս տարօրինակ անցումն հասկանալի էր: Առաջինը՝ նա կուսակիցներին հասկանալ տվեց, որ գյուղացիության վրա ճնշումը ժամանակավորապես պետք է թուլացնել: Երկրորդը՝ իր հլու-հնազանդ կամակատար խորհրդային պաշտոնյաներին մեղադրելով «խտորունների» մեջ, նա ձգտում էր սահմանագատվել համայնացման ծնած մղձավանջներից:

**Ստալինի ելույթն ընդունելով որպես նահանջ համայնացումից, գյուղացիները պատասխանեցին կոլտնտեսություններից զանգվածորեն դուրս գալով:** Երեք ամսվա ընթացքում Ուկրաինայում կոլտնտեսություններ քշված գյուղացիության գրեթե կեսը վերադարձավ մենատնտեսությանը: Թվում էր, թե «մեծ բեկումը» գյուղում իր կատարյալ ձախողմանն է մոտենում:

### **Գյուղատնտեսության վերափոխումը. երկրորդ փուլ**

Ստալինի նահանջը գյուղում իրավիճակը կայունացնելու հնարավորություն ընձեռեց: Սակայն շուտով պարզ դարձավ, որ դա ընդամենը ժամանակավոր խաբուսիկ քայլ էր և *ռեժիմը նպատակ ունի շարունակել բռնի համայնացումը, բայց՝ մի փոքր այլ մարտավարություն ընտրելով:* Նոր մոտեցումը պետք է հանգեցնեց նրան, որ անհատական տնտեսավարությունը, տնտեսապես ձեռնտու և եկամտաբեր չլինելով, աստիճանաբար դուրս մղվեց: Կոլտնտեսությունից դուրս եկող գյուղացիներին հաճախ չէին վերադարձնում իրենց գույքն ու անասունը: Նրանց որպես հողաբաժին վատորակ, դժվար մշակվող հողակտորներ էին հատկացնում, մինչդեռ կոլտնտեսությունների մնում էին վավազույն հողատարածքները: Մասնավոր տրնտեսությունների վրա դրված հարկերը 2-3 անգամ բարձրացան, իսկ կոլտնտեսականներն, ընդհանրապես՝ մի քանի տարով ազատվում էին հարկերից: Այս ամենով հանդերձ, համայնացման առավել համար հակառակորդների հավանական հեռանկարը՝ կուլակների կարգին դասվելն ու Սիբիր արքարվելն էր: Այս ամենի արդյունքում *գյուղացիներին կոլտնտեսություն մտնելուց բացի, այլ ելք չէր մնում:* 1932 թ.-ին կուլեկտիվ տնտեսությունների մեջ էր գյուղացիության 70 %-ը, իսկ 1940 թ.-ին Ուկրաինայի ամբողջ գյուղացիությունն արդեն պարփակված էր 28 հազ. կուլեկտիվ տնտեսությունների մեջ:

*Տեսականորեն կոլտնտեսությունները պատկանում էին գյուղացիներին, իսկ փաստացի՝ գյուղատնտեսական մթերքների մատակարարման պետական պատվերներն էին կատարում և ամբողջովին պաշտոնյաների վերահսկողության տակ էին:* Պետական կարգազիրները կատարելուց հետո միայն կոլտնտեսություններն իրավունք էին ստանում տնօրինելու իրենց արտադրանքի ավելցուկը՝ այն բաժանելու իրենց անդամների մեջ: Ձուտ պետական գյուղատնտեսական ձեռնարկություններ էին քանակով համեմատաբար քիչ խորհրդատեսությունները (սովխոզները), որոնցում գյուղացիներն աշխատում էին վարձով: *Գյուղերում հիմնվում էին նաև մեքենա-տրակտորային կայաններ (ՄՏԿ), որի գլխավոր նպատակը՝ կոլտնտեսություններին տեխնիկայով ապահովելն էր:* Տրակտորների և գյուղատնտեսական մյուս տեխնիկայի պետական մենաշնորհը նույնպես կարևոր միջոց էր գյուղացիներին ստիպելու, որ կոլտնտեսությունների մեջ մտնեն: Եվ իսկապես, այդ ամբողջ համակարգը ստեղծվում էր մի նպատակով. պետության և՛ քաղաքական, և՛ տնտեսական բացարձակ գերիշխանությունն հաստատել գյուղատնտեսության և այդ ոլորտում զբաղված բոլոր մարդկանց վրա:

Ստալինն ու իր արբանյակները, սոցիալական ճնշումների ու բռնությունների մեծ վարպետ լինելով հանդերձ, *բացառիկ անտաղանդ էին գյուղատնտեսության բնագավառում:* Կոլտնտեսությունները ղեկավարող կուսաշխատողներն հաճախ կարգադրում էին ցանքս կատարել տվյալ մշակաբույսի համար միանգամայն աննպաստ հողերում: Ինչպես և արդյունաբերության մեջ, նրանք տառապում էին հսկայամուլությամբ և ստեղծում էին հսկայական, փաստորեն անկառավարելի հրեշ-կոլտնտեսություններ: Անհրաժեշտ տրանսպորտային միջոցների բացակայությունը պատճառ էր դառնում, որ հացահատիկի բերքը կամ փչանում էր, կամ դառնում էր մկների ու թռչունների կեր: Զգացնել էր տալիս լծկանի բացակայությունը, որ մեծ

մասամբ ոչնչացվել էր մի քանի տարի առաջ: Ինչևէ, կառավարական պաշտոնյաներն համոզված էին, որ ձիերի ու եզների պակասը կհամակշռեն տրակտորներով: Սակայն տրակտորների արտադրությունը շատ ու շատ ետ էր մնում պլանավորված քանակությունից, իսկ արտադրված մեխանիզմներն անհուսալի էին և դաշտ հասցվելուց հետո գրեթե անմիջապես կործանվում ու փչանում էին: Արդյունքում՝ 1931 թ.-ի բերքահավաքի շրջանում հացահատիկի երրորդ մասի կորուստ գրանցվեց, 1932 թ.-ին Ուկրաինայի մշակույթի հողատարածքները կործանվեցին 20 %-ով: Իրավիճակն ավելի սրվեց, երբ Ուկրաինայի հարավում երաշտ սկսվեց:

Այս ամենը նպաստում էր գյուղատնտեսության բնագավառի հարաճուն վատթարացմանը: Սակայն վճռական գործոնը հացամթերման ստալինյան անողոր քաղաքականությունն էր: *Արդյունաբերականացումը ֆինանսավորելու համար հացահատիկի խիստ կարիքն զգալով, չնայած իրավիճակի վատթարանալուն, ռեժիմը շարունակում էր գյուղացիության վզին փաթաթել հացամթերման ուռճացված պլաններ:* Հացահատիկը բացահայտ չէր բավարարում, որպեսզի և՛ կառավարության պետքերը հագեցնար, և՛ գյուղացիության կարիքները հոգար, այդ պատճառով էլ, 1931 թ.-ին Ուկրաինացի կոմունիստները բառացիորեն աղաչում էին Մոսկվային, որ պլանները նվազեցնի: Ստալինը, որոշ չափով զիջելով, այնուամենայնիվ սահմանեց նոր, բայց նույնպես անհրաժեշտ բարձր պլաններ:

Իր նշած ցուցանիշներն իրականացած տեսնելու համար, Ստալինն Ուկրաինա գործուղեց իր երկու մերձավոր զինակիցներին՝ *Վյաչեսլավ Մոլոտովին և Լազար Կազանովիչին*, որպեսզի վերահսկեն հացահատիկի մթերման գործընթացը: Կուսակցական ակտիվիստներն հերթափակում անգամ *կազմակերպված հարձակվեցին գյուղացիության վրա՝ վերջին կտոր հացը խլելու նպատակով:* Բայց հավանաբար նրանցից շատերն այնքան էլ հաճույքով չէին կատարում այդ անշնորհակալ առաքելությունը, քանի որ այդ ժամանակ կոլտնտեսություններում պատասխանատու պաշտոններից հեռացվեց ղեկավարության գրեթե երրորդ մասը: Իշխանությունն ակտիվիստներին օժանդակելու համար մոբիլիզացրեց կանոնավոր բանակի ու ՊԹՎ-ի զորամասերը, որոնք *անգործն կողոպտում էին հացահատիկն հանձնելուց հրաժարվող գյուղերը: Բռնագրավում էին նույնիսկ հացորդ տարվա ցանքսի համար անհրաժեշտ սերմացուն:*

Չնայած այս անմարդկային ջանքերին, կառավարությանն հաջողվեց գյուղացիությունից քանել պլանավորված հացահատիկի միայն 70 %-ը: 1933 թ.-ի հունվարին Ստալինն իր ճառում կուսակցական համակարգին կոչ արեց կրկնապատկել ջանքերը. «Թույլ մի՛ տվեք, որ ձեր ուշադրությունը շեղեն ամեն տեսակ հիմնապաշարներով ու պահեստային ֆոնդերով, մի՛ մոռացեք, որ ձեր հիմնական խնդիրը հացամթերման կամպանիա ծավալելն է... և արագացրե՛ք այն: Ձեր գլխավոր ու հիմնական առաքելությունը հացամթերումն իրականացնելն է»:

## **1932-1933 թ.թ.-ների սովասպանող**

Ուկրաինացիների համար 1932-1933 թ.թ.-ների սովը նույնն էր, ինչ 1915 թ.-ի եղեռնը՝ հայերի, և նացիստների կազմակերպած կոտորածը՝ հրեաների համար: *Այդ ողբերգությունը, որի չափերն անհար է պատկերացնել ու ըմբռնել, ազգին այնպիսի անուղղելի հարված հասցրեց, որի սոցիալական, հոգեբանական ու ժողովրդագրական հետևանքներն իրենց մինչև օրս էլ զգացնել են տալիս:* Այն սև սովը ձգեց նույնիսկ խորհրդային համակարգի «հաղթանակների» և դրանց հասնելու ձևերի ու միջոցների վրա:

1932-33 թ.թ.-ների սովահարության մեջ ամենասարսափելիին այն էր, որ դրանից կարելի էր խուսափել: Ստալինն ինքը հայտարարեց. «Ոչ ոք չի կարող ժխտել, որ 1932 թ.-ի հացահատիկի ընդհանուր բերքը գերազանցում էր 1931 թ.-ի ցուցանիշը»: Ինչպես նշում են *Ռոբերտ Կոնկվեստն* ու *Բոհդան Կրավչենկոն*, 1932 թ.-ի բերքն ընդամենը 12 %-ով էր զիջում 1926-1930 թ.թ.-ների միջին ցուցանիշներին: Այլ կերպ ասած՝ մթերքը բավարար էր: Սակայն կառավարությունը դրա մեծ մասն անընդհատ բռնի կորզում էր իր կարիքների համար: *Չնայած ուկրաինացի կոմունիստների խնդրանքներին ու նախագուշացումներին, Ստալինը հացամթերման պլանն Ուկրաինայում բարձրացրեց 44 %-ով: Նրա որոշումն ու այն իրագործելու դաժան միջոցները միլիոնավոր մարդկանց դատապարտեցին արհեստածին սովամահության:*

Ռեժիմի քաղաքականությանը զոհաբերվող մարդկային կյանքերի նկատմամբ իշխանությունների բացարձակ անտարբերության ակնառու վկայությունը 1932 թ.-ին իրագործված մի շարք միջոցառումներն էին: Օգոստոսին կուսակցական ակտիվիստներն իրավունք ստացան



բռնագրավելու գյուղացիական անհատական տնտեսությունների հացահատիկը: Միաժամանակ ընդունվեց «երեք հասկի մասին» տխրահռչակ օրենքը, որով մահվան էր դատապարտվում «սոցիալիստական սեփականությունը» կողոպտողը: *Ցանկացած մարդ, նույնիսկ երեխան, եթե բռնվեր մի բուռ ցորեն ձեռքին՝ պետական ամբարի, կամ կոլտնտեսության արտի մոտ, ենթակա էր մահապատժի:* Մեղմացուցիչ հանգամանքների դեպքում, նման «պետության դեմ հանցագործությունները» պատժվում էին 10 տարվա ազատազրկմամբ: Որպեսզի գյուղացին մթերք հայթայթելու համար չլքի կոլտնտեսությունը, անձնագրային կարգ սահմանվեց: Նոյեմբերին Մոսկվան օրենք ընդունեց, որով կոլտնտեսություններին արգելվում էր գյուղացիներին բերք բաժանել, քանի դեռ պետական հացամթերման պլանը չի կատարվել:

Մոլոտովի ընդհանուր ղեկավարությամբ ստեղծված հացամթերման արտակարգ հանձնաժողովի կուսակցական ակտիվիստների ջոկատները, հաց փնտրելիս, մանրակրկիտ խուզարկում էին ամեն մի խրճիթ, քանդում էին հատակը, սողոսկում ջրհորները: Նույնիսկ նրանց, ովքեր սովից ուռչել էին, չէր թույլատրվում իրենց համար ցորեն պահել: Մարդիկ, ովքեր քաղցածի տեսք չունեին, կասկածվում էին մթերք թաքցնելու մեջ: Անդրադառնալով այդ ժամանակների իրադարձություններին, կուսակառուցիկներին մեկն այսպես է պատճառաբանում իրենց գործողությունները. «Մենք հավատում էինք Ստալինի իմաստությանը՝ որպես ղեկավարի... Մենք խաբված էինք, բայց մենք ուզում էինք խաբված լինել: Մենք այնպես ինքնամոռաց ու անկեղծորեն էինք հավատում կոմունիզմին, որ պատրաստ էինք նույնիսկ ցանկացած հանցագործության, եթե այն փոքր ինչ գունագարդված էր կոմունիստական ճոռոնաբանությամբ»:

**1932 թ.-ի ողջ ընթացքում մոլեգնող սովը զագաթնակետին հասավ 1933 թ.-ի սկզբին:** Հաշվումները ցույց են տալիս, որ ձմռան սկզբին 5 հոգուց բաղկացած գյուղական միջին ընտանիքին մինչև հաջորդ բերքահավաք ընկնում էր մոտ 80 կգ հացահատիկ: Այլ կերպ ասած՝ ընտանիքի ամեն մի անդամին ամիսը հասնում էր 1,7 կգ հացահատիկ: Առանց հացի մնալով, գյուղացիներն ուտում էին ընտանի կենդանիներին, առնետներին, ծառի կեղև ու տերև էին ծածուկում, սնվում էին լավ մատակարարվող ղեկավարության խոհանոցի մնացորդներով: Մարդակերության շատ դեպքեր էլ եղան: Ինչպես գրում է խորհրդային հեղինակներից մեկը. «Սկզբում մեռնում էին տղամարդիկ: Հետո՝ երեխաները: Վերջինը մեռնում էին կանայք: Սակայն շատերը մեռնելուց առաջ խելագարվում էին, կորցնում մարդկային դեմքը»: **Չնայած այն բանին, որ արդեն ամբողջ գյուղերով էին մեռնում, կուսակցական ակտիվիստները շարունակում էին հացահատիկի բռնագրավումը:** Նրանցից մեկը՝ Վիկտոր Կրավչենկոն, հետագայում գրում էր. «Մարտի դաշտում մարդիկ արագ են մեռնում, նրանք պայքարում են, նրանք պահում է ընկերական համերաշխությունն ու պարտքի զգացումը: Այստեղ ես տեսա մարդկանց, որոնք մեռնում էին մեռության մեջ, դանդաղորեն, մեռնում էին սարսափելի, աննպատակ, անհույս՝ թե իրենց մահն արդարացված է: Նրանք ընկել էին բակարդոն ու մնացել այնտեղ՝ մեռնելու սովից, ամեն մեկն իր տանը, քաղաքական որոշումով, որ կայացվել էր ինչ-որ հեռու մայրաքաղաքում, խորհրդակցությունների ու ճաշկերույթների սեղանների շուրջ: Նույնիսկ անխուսափելիության սփոփանքը չկար, որ թեթևացներ այդ սարսափը... Ամենաանտանելի երեխաների տեսքն էր, որոնց կմայքացած վերջույթները կախ էին ընկած ուռած որովայնի կողքերից: Սովը նրանց դեմքից ջնջել էր մանկության բոլոր հետքերը՝ վերածելով նրանց տանջահար ու մղձավանջային ուրվականների, միայն նրանց աչքերում էր դեռ կայծակնուն հեռավոր մանկության ցուլքը»:

Իհարկե Ստալինն ու իր շրջապատն այլ կերպ էին նայում այս ամենին: 1933 թ.-ին **Սենդել Խատակիչը**, որ ստալինյան դրածոներից մեկն էր Ուկրաինայում և որը գլխավորում էր հացամթերման կամպանիան, հպարտորեն հայտարարում էր. «Մեր իշխանության և գյուղացիության միջև անողորմ պայքար է գնում: Դա ոչ թե կենաց, այլ մահու կռիվ է: Այս տարին եղավ մեր ուժի և նրանց տոկունության փորձության տարի: Սովը պետք էր, որ երևար, թե ով է այստեղ տերը: Այն միլիոնավոր կյանքեր խլեց, սակայն կոլտնտեսային համակարգը հաստատվեց: Մենք կռիվը շահեցինք»:

Այն ժամանակների խորհրդային վիճակագրությունն հայտնի է իր ոչ բարձր ստուգությամբ (հայտնի է, որ Ստալինը, դժգոհ լինելով 1937 թ.-ի մարդահամարի արդյունքներից, որտեղ պարզ երևում էր մահացության սարսափելի մակարդակը, հրամայել է գնդակահարել մարդահամարի գլխավոր կազմակերպիչներին): Այդ իսկ պատճառով, սովից մահացածների քանակը որոշելը շատ դժվար է: Ժողովրդագրական արտարկման մեթոդների վրա հիմնված

**հաշվարկները ցույց են տալիս, որ սովապանդի զոհերի թիվը կազմել է 3-6 մլն մարդ:**

Այն ժամանակ, երբ Ուկրաինայում, հատկապես նրա հարավ-արևելյան շրջաններում, և Հյուսիսային Կովկասում (որտեղ շատ ուկրաինացիներ էին ապրում) սովն էր մոլեգնում, Ռուսաստանի մեծ մասում այն հազիվ իրեն զգացնել էր տալիս: Այդ իրավիճակը պարզաբանելուն օժանդակող գործոններից մեկն այն էր, որ ըստ առաջին հնգամյա պլանի՝ «Ուկրաինային վերապահվում էր դառնալ ամբողջ խորհրդային Միության համար սոցիալ-տնտեսական և արտադրատեխնիկական վերակազմավորման նոր ձևերի հսկայական լաբորատորիա»: ԽՍՀՄ տնտեսական պլանները կազմողների համար Ուկրաինայի կարևորությունն, օրինակ, ընդգծվում էր 1933 թ.-ի հունվարի 7-ի «Պրավդայի» խմբագրական հոդվածում, որը վերնագրված էր. «Ուկրաինան՝ հացամթերման վճռորոշ գործոն»: Համապատասխանաբար, նաև չափից դուրս մեծ էին այն խնդիրները, որ դրվում էին հանրապետության առջև: Ինչպես ցույց է տվել Վեմլոդ Չոլուբնիչին, Ուկրաինան, որ ապահովում էր հացահատիկի համամիութենական բերքի 27 %-ը, պետք է ապահովեր հացամթերման ընդհանուր պլանի 38 %-ը: Բոհդան Կրավչենկոն հավելում է, որ դրա հետ մեկտեղ, Ռուսաստանի կոլտնտեսականների համեմատ, Ուկրաինայում կրկնակի քիչ էին վարձատրում:

Ուկրաինացիներն իրենց մասնավոր հողատիրական ավանդույթներին հավատարիմ՝ **ավելի կատաղորեն էին ընդդիմանում համայնացմանը, քան ռուսները:** Հենց այդ պատճառով էլ ռեժիմն Ուկրաինայում իր քաղաքականությունն ավելի խորն ու հետևողական էր կենսագործում, քան որևէ այլ տեղ՝ դրանից բխող սարսափելի հետևանքներով հանդերձ: Ինչպես նշում է գրող և նախկին կուսակցական ակտիվիստ Վասիլ Գրոսմանը. «Պարզ էր, որ Ուկրական հույսը դնում էր Ուկրաինայի վրա: Բայց արդյունքն այն եղավ, որ հետագայում ամենամեծ զայրույթը թափվեց հատկապես Ուկրաինայի վրա: Մեզ ասում էին, թե մասնավոր սեփականատիրական բնագոյներն այստեղ ավելի ուժեղ են, քան Ռուսաստանի հանրապետությունում: Եվ իսկապես, գործերի ընդհանուր վիճակն Ուկրաինայում ավելի վատ էր, քան մեզ մոտ»:

Ուսմանը համարում են, որ **Ստալինի համար սովահարությունը ուկրաինական ազգայնականությունն հաղթահարելու միջոց էր:** Հասկանալի է, որ ազգային զարթոնքի ու գյուղացիության փոխադարձ կապը չէր կրիպել խորհրդային ղեկավարության ուշադրությունից: Ստալինն ասում էր, որ «գյուղացիությունը հարցն էր հիմքում ազգային հարցի էությունն է: Ըստ էության, ազգային հարցը՝ դա գյուղացիության հարցն է»: 1930 թ.-ին Ուկրաինայի կոմունիստների գլխավոր լրագիրը զարգացրեց այդ միտքը. «*համայնացումն Ուկրաինայում իր առջև դրված հատուկ նպատակ ունի՝ խորտակել ուկրաինական ազգայնականության սոցիալական հիմքը՝ գյուղացիական անհատական տնտեսությունը*»: Եվ այսպես, լավագույն դեպքում կարելի է հետևություն անել, որ **միլիոնավոր մարդկանց մահը Ստալինի համար արդյունաբերականացման անխուսափելի գինն էր:** Վատագույն դեպքում կարելի է ենթադրել, որ նա գիտակցաբար թույլ տվեց, որ սովը ջնջի ընդունության թելուզև չնչին դրսևորումն իր կայսրության հատկապես անհանգիստ այդ շրջանում:

Ուշագրավ էր՝ սովը մարդկանց հիշողությունից ջնջելու իշխանությունների տեսակետն ու այդ ուղղությամբ զործադրվող ջանքերը: Դեռ բոլորովին վերջերս խորհրդային դիրքորոշումն այդ հարցում միանշանակ էր. ժխտվում էր հենց սովի փաստը: Հասկանալի է, որ եթե սովահարության իրական ընդգրկումն ու հետևանքները հայտնի դառնային բոլորին, անուղղելի վնաս կհասներ «խաղաղության ու առաջընթացի ջահի» այն կերպարին, որ Մոսկվան ջանում էր դաջել մարդկանց գիտակցության մեջ՝ ինչպես ԽՍՀՄ-ի ներսում, այնպես էլ արտասահմանում: Այդ պատճառով էլ երկար ժամանակ ռեժիմն արգելում էր այդ ողբերգության մասին նույնիսկ հիշատակել:

Արևմուտքի որոշ լրագրեր հասարակությանը տեղեկացրեցին սովի մասին, սակայն այստեղ ևս միանգամից ու լրիվ չընկալեցին դրա սարսափելի չափերը: 1930-ական թվականներին հացահատիկի չդադարող արտահանումը և ցանկացած արտասահմանյան օգնությունից հրաժարվելը, նրանց թյուրիմացության մեջ էր զցում: Արևմուտքում դժվար հավատային, որ այդ պայմաններում Ուկրաինայում սովն է մոլեգնում: Խնամքով կազմակերպված և իշխանավորներով շրջապատված ճամփորդություն կատարելով ԽՍՀՄ-ում, Արևմուտքի այնպիսի հռչակավոր մարդիկ, ինչպես **Բեռնարդ Հոուն**, կամ Ֆրանսիայի նախկին վարչապետ **Էդուարդ Էրիոն**, վառ նկարագրում էին խորհրդային իշխանության նվաճումները, չմոռանալով իհարկե, պատմել կյանքից զոհ ու բարզավաճող գյուղացիության մասին: «Նյու-Յորք թայմսի» մոսկովյան թղթակից **Ուլոբեր Դյուրանտին**, ձգտելով հաճոյանալ Ստալինին, իր հոդվածներում բազմիցս ժխտել է սովի փաստը (չնայած մասնավոր գրույցներում սովի



գրիերի հնարավոր թիվը համարում էր 10 մլն-ը) և ԽՍՀՄ-ից արած իր ռեպորտաժների «խորության, օբյեկտիվության, զգաստ գնահատանքի և բացառիկ պարզության համար», 1932 թ.-ին պարգևատրվել է Պուլխոցերովյան մրցանակով:

Չնայած արևմտյան տերությունները գիտեին սովի մասին, սակայն նրանց դիրքորոշումն այդ հարցում այնպիսին էր, ինչպես որ շարադրված էր բրիտանական արտաքին գործոց նախարարության փաստաթղթերից մեկում. «Մենք իսկապես Ռուսաստանի հարավում մոլեզունող սովի վերաբերյալ մամուլում հայտնվող լուրերին համանման բավականին լրատվություն ունենք մեր տրամադրության տակ... Սակայն հնարավոր չենք համարում այն դարձնել ժողովրդական զանգվածների սեփականությունը, քանի որ դա կարող է վիրավորել խորհրդային կառավարությանը և բարդացնել նրա հետ մեր հարաբերությունները»: Դրա հետ մեկտեղ, Մեծ լճացման ժամանակներում, արևմտյան մտավորականության մի մասը, որ Խորհուրդների նկատմամբ համակրանքով էր համակված, ԽՍՀՄ-ի հասցեին ոչ մի քննադատություն վճռականորեն չէր ընդունում, առավել և՛՝ սովի հարցի կապակցությամբ: Ինչպես նշում է Ռոբերտ Կոնկվեստը՝ «ամոթալին այն չէր, որ նրանք պատրաստ էին արդարացնելու Խորհուրդների ցանկացած գործողություն, այլ այն, որ նրանք նման որևէ բանի մասին չէին ցանկանում նույնիսկ լսել, պատրաստ չէին ուղիղ նայելու ճշմարտության աչքերի մեջ»:

## Մեծ ահաբեկչություն

Արդյունաբերականացումն ու համայնացումն ուղեկցվում էին Մոսկվայի ձեռքում իշխանության հետագա կենտրոնացմամբ: Ուկրաինայի համար դա բազմախոստում 1920-ական թվականների մի քանի իրական նվաճումների, հույսերի ու պատրանքների վերջնական կործանում էր նշանակում: Պարբերաբար ու հետևողականորեն ի չիք դարձնելով Ուկրաինայի ինքնավարության գրեթե բոլոր նշանները, Ստալինը ձգտում էր հանրապետությանը վերածել ընդամենը Խորհրդային Միության վարչական միավորներից մեկի: Բոլորն, ովքեր դեմ էին ստալինյան այդ ուղուն, ենթակա էին ոչնչացման:

Ուկրաինայում հնարավոր ընդդիմությանը ջախջախելու առաջին փուլում (իրականում ոչ մի լուրջ ընդդիմություն էլ չկար) գլխավոր թիրախ դարձավ ուկրաինական հին մտավորականությունը, հատկապես նրանք, ովքեր ակտիվորեն գործել էին ազգային կառավարությունների կազմում և 1917-1920 թ.թ.-ներին գլխավորել էին ոչ-բոլշևիկյան կուսակցությունները, ինչպես նաև՝ գիտա-մշակութային ընտրախավը: ՊԹԿ-ն գործեր էր հորինում «հակախորհրդային գաղտնի կազմակերպությունների» վերաբերյալ, այնուհետև ֆիզիկական ու հոգեբանական տանջանքներ կիրառելով, ստիպում էր իր զոհերին լայնորեն գովազդվող ցուցադրական դատավարությունների ընթացքում խոստովանել իրենց անդամակցությունն այդ կազմակերպություններին: Այդ միջոցով պատժիչ օրգաններն իրենց ահաբեկչական գործունեությանը ոչ միայն օրինականության բնույթ էին տալիս, այլև վարկաբեկում էին բոլոր նրանց, ովքեր կիսում էին դատապարտվածների հայացքները՝ հող նախապատրաստելով նոր ձերբակալությունների համար: Ուկրաինայում նման մարտավարություն առաջին անգամ կիրառվեց 1929-1930-ական թվականներին, երբ 45 ականավոր ու անվանի գիտնականներ, գրողներ և այլ բնագավառների մտավորականներ, որոնց թվում էին *Սերիյ Եֆրեմովը, Կոլոդի-միր Չեխովսկին, Անդրիյ Նիկոլսկին, Օսիպ Չերմայզեն, Միխայլո Սլաբչենկոն, Գրիհորիյ Գոլոսկիչն ու Լյուդմիլա Ստարիցկա-Չեռնյախովսկան*, մեղադրվեցին այսպես կոչված՝ «Ուկրաինայի ազատագրման միություն» (ՌԿԱՄ) ազգայնական գաղտնի կազմակերպությանն անդամակցելու մեջ: Իբրև թե այդ կազմակերպության նպատակներից էին՝ արտասահմանյան տերությունների օգնությամբ Ուկրաինան ԽՍՀՄ-ի կազմից դուրս բերելը, կապը հակահեղափոխական վտարանդիների հետ, համայնացման դեմ գյուղացիների ընդդիմություն կազմակերպելը, երկրի կուսակցական ու պետական բարձրագույն ղեկավարության դեմ ահաբեկչական գործողություններ նախապատրաստելը: Դատավարության միջոցով ՌԿԱՄ-ի դեմ կասկածանքի ու անհանդուրժողականության մթնոլորտ ստեղծելով, իշխանություններն անմիջապես լայն ճակատով հարձակման անցան մտավորական ընտրախավի դեմ: Ինչպես և կարելի էր ենթադրել, այդ հարձակման առաջին գծում հայտնվեց *Գիտությունների Գամա-ուկրաինական Ակադեմիան*: ՌԿԱՄ-ի դատավարությունից հետո, որտեղ գլխավոր մեղադրյալների թվում Ակադեմիայի մի շարք անդամներ կային, կառավարությունն սկսեց Ակադեմիայի գտումը «բուրժուական ազգայնականներից», փակեց առավել գործուն գիտական

հիմնարկները, խիստ զրաքննություն սահմանեց Ակադեմիական հրատարակությունների վրա: 1931 թ.-ին *ցրեցին Գրուշևսկու պատմական բաժանումը*, իսկ պատկառելի գիտնականին, մեղադրելով ևս մի «գաղտնի կազմակերպության» հետ կապի մեջ, արքայազն Ռուսաստան, որտեղ էլ, 1934 թ.-ին, վաստակաշատ մտավորականը կնքեց իր մահկանացուն: Նրա աշխատակիցներից շատերն ու գրեթե բոլոր աշակերտներն առավել դաժան հետապնդումների ենթարկվեցին:

ՌԿԱՄ-ի դատավարությունը դյուրինացրեց նաև Ուկրաինական ավտոկեֆալ ուղղափառ եկեղեցու կործանումը: Եկեղեցու առաջնորդներին մեղադրելով ՌԿԱՄ-ի հետ կապեր ունենալու մեջ, ստիպեցին 1930 թ.-ին ժողով հրավիրել, որն էլ հայտարարեց եկեղեցու «ինքնալուծարման» մասին: Ժողովից շատ չանցած, արքայի դատապարտվեցին միտրոպոլիտ Միկոլա Բորեցկին, տասնյակ եպիսկոպոսներ ու հարյուրավոր հոգևորականներ:

1933 թ.-ին, երբ ճնշումների առաջին պիլքը դեռ չէր նվազել, Ստալինը *ահաբեկչության նոր կամպանիա ձեռնարկեց, որն այս անգամ գլխավորապես ուղղված էր կուսակցության անդամների դեմ*: Կուսակցական գտումները նորություն չէին. 1920-ական թվականներին դրանք պարբերաբար գործողության մեջ էին դրվում՝ կուսակցությունը «մաքրելու» «պասիվ», «երեւուն», «անսկզբունք» տարրերից: Սակայն 1930-ական թվականներին «գտումներն» *ահագնացան՝ փոխվելով չարագույժ ահաբեկչության*: Կուսակցությունից վտարում էին հիմնականում «գաղափարական սխալների ու վրիպումների» համար, ինչն իրականում նշանակում էր Ստալինի հետ համաձայն չլինելու, կամ դրա մեջ կասկածվելու համար: Կուսակցությունից վտարելուն շատ հաճախ հետևում էր գնդակահարությունը կամ արքայազն: Այդպիսով, ահաբեկչությունը սովորական դարձավ ոչ միայն ժողովրդական լայն զանգվածների, այլև կուսակցական վերնախավի համար:

Ընդհանրապես, Խորհրդային Միությունում *ստալինյան ճնշումներն իրենց բարձրակետին հասան 1937-38 թ.թ.-ներին*, սակայն, ինչպես նկատում է Լև Կոպելը՝ «Ուկրաինայում 1937-ն սկսվել էր 1933 թ.-ին»: Ուկրաինայի նկատմամբ նման բացառիկ ուշադրության պատճառը ավելի շուտ, մի կողմից ազգային կոմունիզմի վտանգն էր, մյուս կողմից՝ ուկրաինացի կոմունիստների շրջանում դժգոհության հնարավոր բռնկումը՝ կապված համայնացման և սովի սարսափների հետ: Արհավիրքի մոտենալու վկայությունը գաղափարախոսական բարոյետորի տատանումներն էին: Տարիներ շարունակ կուսակցությունն հայտարարում էր, որ խորհրդային կարգերի մեծագույն սպառնալիքը ռուսական ազգայնամոլությունն է, ոչ-ռուս ժողովուրդների ազգայնականությունն համարելով երկրորդական, որն ըստ էության առաջինի հակազդեցությունն էր: Սակայն, արդեն 1933 թ.-ին ստալինյան շրջապատը պնդում էր, որ Ուկրաինայում ամենալուրջ խնդիրը ուկրաինական ազգայնականությունն է, որ գլուխ է քարծուցրել կուլակների օժանդակության շնորհիվ: Այստեղից հետապնդումների ու հալածանքների ուղիղ ճանապարհ էր բացվում ուկրաինացի այն կոմունիստների նկատմամբ, ովքեր ակտիվորեն մասնակցել էին ուկրաինացման գործընթացին:

Ուկրաինացիների և ուկրաինացման նկատմամբ Ստալինի թշնամական վերաբերմունքը ոչ մեկի համար գաղտնիք չէր: Ուկրաինական գյուղը երբեք չէր սատարել բոլշևիկներին, և երբ գյուղացիները զանգվածորեն հոսեցին դեպի քաղաքները, որ կոմունիստների ավանդական հենակետերն էին, թվաց, թե դրանք կարող է փոխակերպվեն ուկրաինական «ազգայնականության» և «անջատողականության» հենակետերի: Ստալինին ՌԿ(բ)Կ-ն «զտելու» մղող կարևոր պատճառներից մեկն էլ, առաջնորդի կարծիքով, այն էր, որ Ուկրաինայի կոմունիստները բավարար եռանդով չմասնակցեցին համայնացմանը: Միևնույն ժամանակ Ստալինը որոշեց նրանց քավության նոխազ դարձնել 1932-1933 թ.թ.-ների աղետի համար: Նրա հավանությամբ *սկսվեց ուկրաինացի կոմունիստների համընդհանուր ու անողոր պարսավանքի ու պախարակման կամպանիան*: «Պրավդայի» առաջնորդող հոդվածները, ԴամԿ(բ)Կ ԿԿ-ի բանաձևերը լեփ-լեցուն էին կուլակներին վերացնելու և հացամթերումը կազմակերպելու ընթացքում նրանց «զոհությունը կորցնելու» և «անբավարար հաստատականության» մեղադրանքներով:

Ուկրաինացի կոմունիստներն հայտնվեցին ողբերգական հակասությունների սարդոստայնում: Մի կողմից՝ նրանք պարտավոր էին կատարելու Ստալինի ցուցումները, մյուս կողմից՝ տեսնում էին, թե դրանք ինչ աներևակայելի աղետ ու չարիք են պատճառում ուկրաինացի ժողովրդին: Այդ պատճառով էլ, ոչ մինչև վերջ կարողանում էին կատարել առաջինը, ոչ թեթևացնել մյուսը: Զրկվելով Մոսկվայի բարեհաճությունից ու ժողովրդի աջակցությունից, ՌԿ(բ)Կ-ն լրիվ անօգնական դարձավ: Առավել ցավոտ հարված հետևեց 1933 թ.-ի հունվա-



րին, երբ հատուկ լիազորություններով Ուկրաինա ժամանեց Ստալինի հատուկ ներկայացուցիչ **Պավել Պոստիշևը**, որ լինելով ՌԿ(բ)Կ ԿԿ երկրորդ քարտուղարը, փաստորեն դարձավ առաջին դեմքը հանրապետությունում: Նրա հետ եկան **Վսեվոլոդ Բալիցկին**, որ գլխավորեց հանրապետության ՊԲՎ-ն, և հազարավոր ֆունկցիոներներ Ռուսաստանից: Պարզ դարձավ, որ անվերադարձ անցան այն ժամանակները, երբ ուկրաինացի կոմունիստները «իրենց տան տերերն էին»:

*Պոստիշևի առաքելությունն այն էր, որ ցանկացած գնով ավարտի համայնացումը, զտում կատարի ՌԿ(բ)Կ-ում և վերջ դնի ուկրաինացմանը:* Հազարավոր տեղացի ղեկավարներ փոխարինվեցին նրա մարդկանցով: Միաժամանակ Պոստիշևը հարձակում ծավալեց ուկրաինացման և նրա գործիչների դեմ: Ազգային առանձնահատկությանը մեծ ուշադրություն



*Ստանիսլավ Կոսիորն ու Նիկիտա խրուշչևը, 1927 թ.*

դարձնելը բնութագրելով որպես «համամիութենական պահանջներին չենթարկվելու դրսևորում», նա ուկրաինացումը կոչեց «մշակութային հակահեղափոխություն», որի նպատակը «պրոլետարիատի մեջ ազգային երկպառակություն սերմանելն է» և «ուկրաինական աշխատավորությանը ռուսական մշակույթի բարերար ազդեցությունից մեկուսացնելը»:

Նման հարձակումների ու մեղադրանքների գլխավոր քիրախը լուսավորության ժողովոմ *Սկրիպնիկն* էր: Չցանկանալով դավաճանել ուկրաինացման գործին, 1933 թ.-ի հուլիսի 7-ին նա ինքնասպանություն գործեց: Դրանից մի քանի ամիս առաջ այդպես էր վարվել նաև *Խվիլյովիչը*: Ավելի ուշ, ազգային կոմունիզմի գաղափարախոսներից ևս մեկը՝ *Շուստկին*, ինքնասպան կլինի ճամբարում (1946 թ.): *Պոստիշևի կողմից գործի զգված ահաբեկչական մեքենան գնալով թափ էր առնում, և դրա զոհերն էին դառնում արդեն նոր, խորհրդային մտավորականության ներկայացուցիչները, որոնց հազարներով գնդակահարում կամ ծանրաբաններն էին քշում:* Որոշ հաշվարկների համաձայն, 1920-ական թվականներին ստեղծագործական հորիզոնում հայտնված **240 գրողներից 200-ը անհետացան հաջորդ տասնամյակներում, 85 գիտնական-լեզվաբաններից 62-ը ոչնչացվեցին:** Նկարիչներին, փիլիսոփաներին, խմբագիրներին մեղադրում էին լրտեսության ու ահաբեկչության մեջ և բանտերն էին նետում: Պատմաբան Մատվիյ Յավորսկին ու իր աշխատակիցները՝ Ուկրաինայի մարքսիզմի ինստիտուտից, որ փորձում էին Ուկրաինայի պատմության մարքսիստական կուրս ստեղծել,

հայտնվեցին Սոլովկիում ու սիբիրյան ճամբարներում: «Բերեզիլ» նորարարական թատրոնը փակվեց, նրա ռեժիսոր *Լես Կուրբասն անհետացավ ճամբարներում, ինչպես և թատերագիր Կուլիշը:* Դովժենկոյի համաշխարհային ճանաչում գտած կինոնկարները հանեցին ցուցադրությունից, իսկ ինքը ստիպված եղավ տեղափոխվել Մոսկվա: Մի քանի հարյուր կորգարներ հրավիրվեցին հավաքի, ծերրակալվեցին և այնուհետև, ըստ հետագա լուրերի, գնդակահարվեցին: Սպանդից փրկվելու համար, որոշ գրողներ, ինչպես Պավլո Տիչինան ու Միկոլա Բաժանը, սկսեցին Մոսկվայի քիմքին հաճելի բաներ գրել:

1930 թ.-ին սկսված Ուկրաինայի պետական ու գիտա-մշակութային հաստատությունների ավերածությունն ու ջարդը բարձրակետին էր հասել: Լուսավորության, գյուղատնտեսության, արդարադատության ժողովուհատները, Գյուղատնտեսական ակադեմիան, թերթերի, գրական ամսագրերի, հանրագիտարանների խմբագրությունները, կինոստուդիաները հայտարարվեցին «ազգայնական հակահեղափոխության որջեր» և դաժան զտումների ու բռնությունների ենթարկվեցին: Ամփոփելով իր գործունեությունն Ուկրաինայում, 1933 թ.-ի նոյեմբերին Պոստիշևը հպարտությամբ նշում էր. «Սկրիպնիկի ազգայնական թեքումը մերկացնելով, մենք հնարավորություն ստացանք ուկրաինական սոցիալիստական մշակույթը մաքրել ազգայնական բոլոր տարրերից: Կատարված է մեծ գործ: Բավական է ասել, որ միայն **Լուսավորության ժողովուհատում 2 հազ. ազգայնական տարր բացահայտեցինք, որոնցից 300-ը գիտնականներ ու գրողներ էին:**»

*Պոստիշևյան զտումներից գերծ չմնաց նաև Ուկրաինայի քաղաքական վերնախավը:* Ազգայնականի պիտակով 15 հազ. մարդ հեռացվեց պատասխանատու պաշտոններից: Դրան հաճախ հավելում էին նաև այնպիսի մեղքեր, ինչպես օրինակ՝ «Ֆաշիզմը», «տրոցկիզմը», «բոլշևիկյան զգոնության կորուստը», «կապերը»՝ վտարանդիների ու արտասահմանյան պետությունների հետախուզության հետ: Այս ամենի արդյունքում, 1933 թ.-ի հունվարից մինչև 1934 թ.-ի հունվար, ՌԿ(բ)Կ-ն կորցրեց մոտ 100 հազ. անդամ: Պոստիշևն իր զեկույցներից մեկում նշում է, որ բոլոր հեռացվածները գնդակահարվել կամ աքսորվել են: Նույնիսկ Տրոցկին է խոստովանել, որ «ոչ մի տեղ բռնությունները, զտումները, ճնշումներն ու բյուրոկրատական սանձարձակության բոլոր ձևերը միասին չէին հասնում այնպիսի սարսափելի չափերի, ինչպես Ուկրաինայում, ուկրաինական զանգվածների՝ ավելի մեծ ազատության ու անկախության հզոր ու թաքուն ձգտումների դեմ պայքարում»:

Եթե 1930-ական թվականների սկզբին Ուկրաինայով մեկ մոլեգնող ճնշումներն ու ահաբեկությունն ուղղված էին հիմնականում ուկրաինացիների դեմ, ապա 1937-1938 թ.թ.-ների «մեծ զտումը» ընդգրկեց ողջ խորհրդային Միությունը, հարվածեց անխտիր բոլորին՝ հաշվի չառնելով սեռը, տարիքը, ազգությունը, կուսակցությունը և այլն: *Նրա նպատակն էր աշխարհի երեսից ջնջել Ստալինի բոլոր իրական և կարծեցյալ թշնամիներին, խորհրդային հասարակության մեջ, հատկապես՝ ղեկավար շրջաններում, սերմանել անպաշտպանվածության, հնազանդության ու «մեծ առաջնորդից» կախվածության զգացում:* Մի շարք աղմկալի ու զգայացուցիչ բաց դատավարությունների միջոցով վարկաբեկվեցին, այնուհետև ոչնչացվեցին բոլշևիզմի գրեթե բոլոր «հիմնադիր-հայրերը», այսինքն՝ Ստալինի կարծեցյալ հակառակորդները: Քաղաքական հետախուզության մարմինը, որ հիմա կոչվում էր ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատ (ՆԳՎ), զիշեր-ցերեկ գործեր էր «թխում» դավադրությունների, ահաբեկչության, վնասարարության և այլ թեմաներով, որոնց մեջ ներառվող մարդկանց շրջանակը գնալով ընդլայնվում էր: Առավել տարածված դատավճիռը դարձավ գնդակահարությունը, լավագույն դեպքում մարդկանց աքսորում էին սիբիրյան ճամբարները՝ գ թե անխուսափելի մահ գտնելու ուժից վեր աշխատանքից, սովից ու գրկավաճներից: ՆԳՎ-ի քննիչները «հայրենիքի դավաճանների» բավականաչափ պաշար պայանովելու համար երկու կարևոր հարց էին ընթացքի մեջ դրել. «ՌՎ է ձեզ հավաքագրել» և «Դուք ո՞ւմ եք հավաքագրել»: «Խոստովանությունների» մեջ հաճախ հնչում էին ծանոթների, բարեկամների և նույնիսկ ընտանիքի անդամների անունները: Եվ նույնիսկ, երբ պատերազմի վտանգը եվրոպայում ակնհայտ դարձավ, շարունակեցին ոչնչացնել զինվորական ղեկավարության և սպայական կազմի մեծ մասը՝ հնարավոր ընդդիմության դեռևս մնացած միակ բազան:

*Ուկրաինան կրկին վերածվեց առավել դաժան բռնությունների փորձադաշտի:* Ի տարբերություն 1933 թ.-ի «զտումների», որի ընթացքում վերացում էին համայնացման հակառակորդներին և ուկրաինացման կողմնակիցներին, 1937 թ.-ին Ստալինը որոշեց վերացնել հանրապետության ամբողջ կուսակցական վերնախավն ու նրա կառավարությունը: Նման որոշման դրդապատճառները հանկարծակի ծնվեցին: Սովասպանից հետո, շատ չանցած, Պոս-



տիշն անսպասելիորեն սկսեց կասկածել Ուկրաինայում տարվող «ստալինյան գծի» ճշտության վրա և նույնիսկ ուկրաինական ղեկավարության հետ միասին հրաժարվեց այդ «գտումներն» հասցնել Ստալինի նախանշած չափերին: Երբ Գոմոլինսկի այն բանից հետո, երբ Պոստիշևին հեռացրեցին Ուկրաինայից և նրա փոխարեն այնտեղ եկան Ստալինի անձնական ներկայացուցիչներ Վյաչեսլավ Մոլոտովը, Լիկոլայ Եժովն ու Լիկիտա Խրուշչևը (1937 թ.-ի օգոստոսին), Ուկրաինայի կոմունիստ ղեկավարները (Ստանիսլավ Կոսիոր, Զրիհորիյ Պետրովսկի, Պանաս Լյուբչենկո) շարունակեցին հակառակվել անվերջ գտումների քաղաքականությանը: Վերջիվերջո, **1938 թ.-ի հունիսին ձեռնարկվեցին ու զնդակահարվեցին խորհրդային Ուկրաինայի կառավարության բոլոր 17 նախարարները:** Կառավարության ղեկավարը՝ Լյուբչենկոն, ինքնասպան եղավ: Քաղբյուրոյի և ՌԿԿ(բ)Կ ԿԿ-ի գրեթե բոլոր անդամները զոհվեցին: Ուկրաինայի կոմունիստական կուսակցության անդամների գրեթե 37 %-ը (170 հազ. մարդ) բռնությունների ու ճնշման ենթարկվեցին: Ինչպես ասել է Ուկրաինայում Մոսկվայի նոր կամակատար Լիկիտա Խրուշչևը՝ «ՌԿԿ(բ)Կ-ն մաքրվել էր փայլելու աստիճան»:

ԵՊԺԿ-ն ձգտում էր ոչնչացնել հասարակության որոշակի շերտեր՝ կուլակներին, հոգևորականներին, նախկինում հակաբոլշևիկյան բանակներում ծառայած մարդկանց, նրանց, ովքեր եղել էին արտասահմանում կամ այնտեղ բարեկամներ ունեին, Գալիչինայից վտարանդիներին և այլն. զանգվածաբար զոհ էին դառնում հասարակ մարդիկ: Թե ինչ անսահման չափերի էր հասել «մեծ գտումը», վկայում է թեկուզև երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ **Վիննիցայում հայտնաբերված տեղաբնակների մասսայական գերեզմանը (մոտ 10 հազ. մարմին), որոնց զնդակահարել էին 1937-1938 թ.թ.-ներին:** Ստույգ տվյալներ չունենալու պատճառով, արևմտյան հետազոտողները չեն կարողանում ճշտել ստալինյան ահաբեկչության զոհերի քանակը: Ազան Ուլամի և մի քանի այլ գիտնականների մոտոլոր հաշվարկներով, **1937-1939 թ.թ.-ներին խորհրդային Միությունում ոչնչացվել է մոտ 500 հազ. մարդ և 3-12 մլն-ը՝ արտրովել:** Հաշվի առնելով Ուկրաինայում տիրող իրավիճակի առանձնահատկությունները, որոնց մասին վերևում մշել ենք, կարելի է ենթադրել, որ ամենաշատ զոհ տվել է Ուկրաինան:

1930-ական թվականների վերջին ամբողջովին մոռացության մատնվեց ուկրաինացիների և մյուս ոչ-ռուս ժողովուրդների այն պոչատ ու չնչին ինքնուրույնությունը, որ նախկինում ունեին: Մոսկվայի ձեռքում կենտրոնացան հասարակության կյանքի բոլոր ոլորտների կառավարման լծակները: Արհամարհելով ուկրաինացի կոմունիստների բոլոր արտոնությունները, պահանջներն ու բողոքները, Ստալինն իր անձնական էմիսարներ Պոստիշևի, կամ Խրուշչևի ձեռքով կառավարում էր Ուկրաինան: Հանրապետությունը, լինելով տնտեսական կարևորագույն տարածաշրջաններից մեկը, ոչ մի իրավունք չուներ տնօրինելու իր միջոցները, կապիտալ ներդրումները, արդյունաբերության զարգացումը և ինչն ամենակարևորն է՝ իր գյուղատնտեսությունը: Երբ Ստալինը սովի ամենակուլ շրջանում, Ուկրաինայի խորհրդային կառավարությունն առանց Մոսկվայի թույլտվության, չէր կարող տնօրինել նույնիսկ իր մի փոքր հացահատիկը: Փակվել, կամ «գաղափարապես վնասագրեծվել» էին «ուկրաինական յուրահատկություն» ունեցող մշակութային բոլոր հաստատությունները: Համամիութենական «համահարթեցման» էր բերվել հանրապետության բարձրագույն կրթության համակարգը: Սկրիպնիկի ժամանակ մշակված դպրոցական դասագրքերը նույնպես փոխարինվել էին համամիութենականներով: Համակենտրոնացման և միասնականացման գործընթացն այնքան էր խորացել, որ **Ստալինն ու իր շրջապատը քննարկում էին խորհրդային Միությունը հանրապետությունների բաժանելը վերացնելու հնարավորությունը:**

Ստալինը սիրում էր իր հրեշտավոր քաղաքականությունն ընդմիջել ժողովրդավարական շղարշով պատված գործողություններով, կամ՝ «ինքնաքննադատությամբ», որն ըստ էության զուտ փարիսեցիություն էր ու երկերեսանի, կեղծ քարոզչություն: Այսպես, **1934 թ.-ին՝ համակենտրոնացման գործընթացի եռուն շրջանում, Ուկրաինայի մայրաքաղաքը Խարկովից կրկին տեղափոխվեց պատմականորեն ավանդական կենտրոնը՝ Կիև:** 1936 թ.-ին, հետևեց ևս մեկ ճարպիկ խաբկանք. «Մեծ գտման» ընթացքում ԽՍՀՄ ժողովուրդներին առաջարկվեց մի Սահմանադրություն, որով նրանց տրվում էին բոլոր այն իրավունքները, որոնցից օգտվում էին «բուրժուական դեմոկրատիայի» երկրների ժողովուրդները: Պետական իշխանության գերագույն մարմին հռչակվեց Գերագույն Ստրուկտուրը, որ բաղկացած էր Միության խորհրդից և Ազգությունների խորհրդից: Ստալինը հաստատեց ԽՍՀՄ-ից դուրս գալու հանրապետությունների իրավունքը և դրանց թիվը չորսից հասցրեց 11-ի՝ Միջին Ասիան ու Կովկասյան տարածաշրջանը տրոհելու հաշվին: *Ստալինյան ցինիզմի ամենանշանավոր ու տարածված*

*Նմուշ դարձավ 1930-ականների սարսափի պայմաններում արտաբերած նրա մի դարձվածքը. «Կյանքը լավացել է, կյանքն ուրախ է դարձել»:*

## Ուկրաինացման ավարտը

Համակենտրոնացման հետ եկավ և համառուսացումը: Սկզբում՝ 1933 թ.-ին, այն իրագործվում էր Ռուսաստանից Ուկրաինա «ներարկված» հազարավոր գործիչների միջոցով, որոնք ժամանել էին համայնացումն «ամրապնդելու»՝ համար: Այդ տասնամյակի վերջում, ուկրաինացի կոմունիստներին կոտորելուց հետո, Ուկրաինայի պետական-քաղաքական բարձրագույն ղեկավարությունը, սկսած Լիկիտա Խրուշչևից, բաղկացած էր ռուսներից: Ուկրաինայի քաղաքական վերնախավում կատարված այդ փոփոխությունները որոշ գիտնականներ բնորոշում են որպես «ռուսների վերադարձը»:

Այդ կադրային փոփոխությունները հետևանք էին Մոսկվայի ազգային քաղաքականության մեջ 1933 թ.-ին կատարված վճռական տեղաշարժերի, երբ Ստալինը տեղական ազգայնականությունը (և ոչ թե ռուսական ազգայնամոլությունը) հռչակեց որպես խորհրդային Միության միասնության զլխավոր սպառնալիք: Այդ «գաղափարախոսական գլուխկոնծին» նշանակում էր *ուկրաինացման վերջը և ուկրաինական մշակույթի հետևողական խտրականության քաղաքականության սկիզբը:* Կրճատվում էր ուկրաինական դպրոցների քանակը, նկատելիորեն նվազում ուկրաինացի ուսուցիչների ու գիտնականների թիվը, գրադարաններից անհետանում էին ուկրաինացի գիտնականների ու գրողների հանրահայտ աշխատություններն ու ստեղծագործությունները, հարյուրավոր ուկրաինական պիեսներ էին արգելվում և տասնյակ ազգային թատրոններ էին փակվում, թանգարաններն հրահանգ ստացան դադարեցնել «կոզակության իդեալականացումը»: Ամեն մի պատեհ առիթով, լինել պաշտոնական, թե կիսապաշտոնական, քամահրական վերաբերմունք էր ցուցաբերվում «Ուկրաինայի ինքնության ազգայնական տեսություններին»:

Չուզահեռաբար, ռուսական մշակույթն ամբողջությամբ փառաբանելու կամպանիա էր ծավալվում, *ամեն կերպ շեշտվում էր ԽՍՀՄ-ում Ռուսաստանի առաջատար դերը:* Այդ ամենը, սակայն, արվում էր «համազգայնականություն», «պրոլետարական համերաշխություն» և «ժողովուրդների բարեկամություն» դաստիարակելու պատրվակով: 1936 թ.-ին Ստալինը մշում էր, որ խորհրդային ազգերի մեջ եղած տարբերությունները ջնջվում են. «արմատապես փոխվել է ԽՍՀՄ ժողովուրդների դեմքը... փոխադարձ անվստահության փոխարեն նրանց մեջ աճել է փոխադարձ բարեկամության զգացումը և... այսպիսով, մենք այսօր ունենք ժողովուրդների եղբայրական համագործակցություն՝ մեկ միասնական միութենական պետության մեջ»:

Հետևելով այդ «սրտաբաց» խոսքերին, խորհրդային գաղափարախոսները մշակեցին մի տեսություն, ըստ որի՝ *ռուսաց լեզուն ու մշակույթը լավագույնն են համապատասխանում ժողովուրդների համագործակցության ու բարեկամության ամրապնդման, առաջընթացի ու զարգացման ճանապարհին նրանց համախմբելու խնդիրներին:* Բավական տիպական էր նրանցից մեկի հայտարարությունը. «Ռուսաց լեզուն ռուսումնասիրում են ամբողջ աշխարհի աշխատավորները: Իր ժամանակին Մարքսն արժանին է մատուցել ռուսաց լեզվի հզորությանը՝ ռուսումնասիրելով այն և իր աշխատություններում օգտագործելով ռուսերեն սկզբնաղբյուրները... Մեզ մոտ ռուսաց լեզուն ԽՍՀՄ ժողովուրդների ազգամիջյան հարաբերությունների լեզուն է: Ռուսաց լեզվի ինացությունը ԽՍՀՄ ժողովուրդների հնարավորություն է ընձեռնում աղերսվելու մշակույթի բարձրագույն արժեքներին»:

Ինչպես նկատում է Ռ. Սալիվանը, փառաբանվում էր ոչ միայն ռուսաց լեզուն, ռուսներն իրենք իրենց ամեն կերպ իդեալականացնում էին՝ հեղափոխական մեծագործությունների համար՝ «գարդարվելով խորհրդային Միության, ինչու չէ՛ նաև աշխարհի բոլոր ժողովուրդների նկատմամբ մարքսիստական գերազանցության առեղծվածային հանդերձներով»: Խորհրդային քարոզչության այդ նորաբաց էջի օրինակ կարող է ծառայել հետևյալ հայտարարությունը. «Ռուս ժողովուրդը՝ մեծ ժողովուրդ է: Նա գտնվում է մարդկության ընթացքի ավանգարդում՝ դեպի սոցիալիզմի ու ժողովրդավարության հարթամակը տանող ճանապարհին: Իր բանվոր դասակարգի՝ աշխարհում ամենաառաջավոր դասակարգի ղեկավարությամբ, ռուս ժողովուրդը պատմության մեջ առաջին անգամ թոթափեց կապիտալիզմի ճնշման ու հարստահարման կապանքները: Ռուսական բանվոր դասակարգը օգնեց ցարական Ռուսաստանում ապրող ազգերի մեծ ընտանիքին՝ ազատվելու ազգային, քաղաքական ու



տնտեսական ճնշումներից»:

Նման կանխադրույթներ առաջ քաշելով, խորհրդային գաղափարախոսները կարողանում էին ապացուցել, որ Ստալինի քաղաքականությունը՝ դեպի առաջընթաց, սոցիալիզմ ու համազգայնացում տանող ամենահուսալի ճանապարհն է, և ոչ թե վերադարձ է դեպի ավանդական ռուսական ազգայնամոլությունը: Ընդ որում՝ ինքնըստինքյան հասկանալի էր դառնում, որ ուկրաինացիների և ոչ-ռուս ժողովուրդների մշակույթը հետամնացության ու գավառակացության գծեր է պարունակում:

Այս ամենի արդյունքում, 1930-ական թվականների վերջին ռուսաց լեզուն Ուկրաինայում դարձավ դասավանդման պարտադիր առարկա: *Ուկրաիններեն այբուբենը, քերականությունն ու բառարանը մոտեցվեցին ռուսաց լեզվի նորմերին, իսկ ռուսերենն սկսեց ուկրաիններեն լեզուն դուրս մղել ամենօրյա գործածությունից:* Դեռևս 1935 թ.-ի սկզբին Պոստիշևը խոստովանում էր, որ ՌԻԿ(բ)Կ անդամներն սկսել են ապաուկրաինացվել և նույնիսկ դադարել են խոսել ուկրաիններեն: Նման փոփոխություններ տեղի ունեցան նաև զանգվածային լրատվամիջոցներում: Եթե 1931 թ.-ին թերթերի 90 %-ը և ամսագրերի 85 %-ը լույս էին տեսնում ուկրաիններենով, ապա 1940 թ.-ին այդ ցուցանիշները նվազեցին, հասնելով համապատասխանաբար՝ 70 և 45 %-ի: Գրականության վերաբերյալ քաղաքական նույն սկզբունքն էր՝ գովաբանել, երկինք հասցնել ռուս մեծ գրողներին, ինչպես՝ Պուշկին, Տոլստոյ, Դոստոևսկի, և շեշտել, թե նրանք ինչ բարերար ազդեցություն են ունեցել ուկրաինացի գրողների վրա: Ի տարբերություն նախորդ տասնամյակի, երբ իշխանությունն օժանդակում էր քաղաքների ուկրաինացմանը, նոր քաղաքականությունն ակտիվորեն ուղղորդում էր գյուղի վրա ռուսական մշակույթի ազդեցության լայն տարածմանը:

\* \* \*

Ստալինյան՝ «հեղափոխություն՝ վերևից»-ը, ուկրաինացիների և ԽՍՀՄ մյուս ժողովուրդների կյանքում ապշեցուցիչ փոփոխությունների հանգեցրեց: Տնտեսության հիմնաքարը դարձավ ծանր արդյունաբերությունը: Արագորեն աճեցին քաղաքները և, մի քանի տասնամյակ անց, դարձան երկրի բնակչության մեծամասնության բնակավայրերը: Արմատական փոփոխություններ եղան գյուղատնտեսության բնագավառում, որտեղ գլխավոր իրադարձությունը հողի սեփականագրվումն էր: Այս բոլոր վերափոխումները, հատկապես՝ համայնացումն Ուկրաինայում, իրագործվում էին անասելի բռնություններով ու աներևակայելի մարդկային զոհերի գնով: Ինչպիսի բարիքներ էլ որ բերելու լինեք խորհրդային արդիականացումն Ուկրաինայում, դրա համար վճարված գինը կրկին անհամեմատ բարձր էր:

Նյութական ոլորտում տեղի ունեցած փոփոխություններին գումարվեցին նաև ուկրաինացիների քաղաքական ու մշակութային կյանքի տեղաշարժերը, որոնց չափերն ու հետևանքները դժվար է գնահատել: Ուկրաինացիների ազգային ինքնագիտակցության հիմքը կազմող երկու գլխավոր բաղադրիչները՝ մտավորականությունն ու գյուղացիությունը, ստալինյան ահաբեկչության արդյունքում անվերականգնելի կորուստ կրեցին: Որպես հետևանք՝ անհամար կողմնակիցներ կորցրեց ուկրաինական ազգի ինքնադրստորման գաղափարը, որ կյանքի էր կոչվել և լայնորեն ներդրվում էր 1920-ական թվականներին: Այդ կորուստն հատկապես տեսանելի է ուկրաինական մտավորականության երկու՝ նախահեղափոխական, և 1920-ական թվականներին բեմ ելած սերունդների օրինակով: Ազգի ձևավորման գործում հատկապես նրանք էին առաջատար դեր խաղում, և հատկապես նրանք ոչնչացվեցին Ստալինի կողմից: Դեռևս տարիներին ուկրաինացիների կյանքում տեղ գտած քաղաքական կամքի դրսևավորման համեմատական թուլությունն ու մշակութային կյանքի լճացումն ամենից առաջ բացատրվում են 1930-ականների ժողովրդագրական կորուստների ավերիչ հետևանքներով:

Եվ այսպես, Ուկրաինայի նոր սկզբնական քաղաքական գարգացումը Ստալինը ետ շրջեց: 1920-ական թվականներին, արդիականացման և ուկրաինացման գործընթացները զգալի չափով նպաստում էին միմյանց: Բայց երբ 1930-ականներին Ստալինը վերացրեց ուկրաինական վերնախավն ու անցավ ռուսացման, արդիականացումը կրկին միախուսվեց ռուսական մշակույթի հետ: Դամապատասխանաբար՝ *պարզ մեքենայությունների ու ածյալարարության ճանապարհով, ուկրաինական մշակույթը նորից նույնացրեցին պահպանողական, հետամնաց գյուղի հետ:*



## ԱՐԵՎՄՏՅԱՆ ՈՒԿՐԱԻՆԱՆ ՆԱՄԱՇԽԱՐՆԱՅԻՆ ԵՐԿՈՒ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ՄԻՋԵՎ

Դամաշխարհային առաջին պատերազմի և եվրոպական նախկին կայսրությունների փլուզման հետևանքով Արևելյան եվրոպայի կերպարանքն արմատապես փոխվեց. նրա քարտեզի վրա հայտնվեցին այդ տարածաշրջանում նոր քաղաքական կարգ սահմանող ազգային պետություններ: Չնայած ազգերի ինքնորոշման սկզբունքն այստեղ համընդհանուր ճանաչում ստացավ, սակայն ոչ ամենուրեք, և ոչ միշտ էր այն իրագործվում, և արդյունքում դրան ձգտող ոչ բոլոր ժողովուրդներն էին, որ պետականություն ձեռք բերեցին: Նրանք, որոնց դա հաջողվեց, որպես ժառանգություն ստացան խոշոր և անհանգստություն պատճառող ազգային փոքրամասնություններ: Այսպիսով, ազգային հարցն այստեղ դեռևս լրիվ լուծված չէր. իշխող ազգերի և նրանց հետ հավասար իրավունքներ չունեցող ժողովուրդների միջև հարաբերությունների լարվածության ուժեղացման հետ, այդ խնդիրը դառնում էր պայթյունավտանգ: Սոցիալ-տնտեսական հակասությունները, որ դեռևս կայսերական ժամանակներից ծվատում էին Արևելյան եվրոպան, միայն յուր էին լցնում կրակի վրա:

*Միակ խոշոր ազգը Արևելյան եվրոպայում, որ այդ ժամանակ չկարողացավ հասնել անկախության, Դաքսրուզների կայսրության նախկին հպատակներն էին՝ 7 մլն արևմտյան ուկրաինացիները:* Նրանց մեծ մասը մտավ Լեհաստանի կազմի մեջ, մնացածը հավաք կերպով տեղավորվել էին Չեխոսլովակիայում և Ռումինիայում: Ամենուրեք, հատկապես Լեհաստանում և Ռումինիայում խտրական քաղաքականության առարկա լինելով, արևմտյան ուկրաինացիներն իրենց գլխավոր խնդիրը դարձրին ինքնավարության հասնելը, որը, նրանց կարծիքով, պետք է իրենց սոցիալ-տնտեսական, մշակութային և քաղաքական խնդիրների բնականոն լուծման երաշխավորը դառնար: Այդ ձգտումները դեմ առան ծուլման ենթարկելու քաղաքականություն որդեգրած այն պետությունների խուլ պատին, որտեղ ապրում էին ուկրաինացիները, այդ իսկ պատճառով միջպատերազմական շրջանում նրանց քաղաքական կյանքում գերիշխում էր ազգային դիմակայությունը:

### Արևմտյան ուկրաինացիների նոր կարգավիճակը

Չնայած 1919 թ.-ին Արևելյան Գալիչիայում Լեհաստանը հաղթանակ տարավ ռազմական ընդհարման ժամանակ, սակայն արևմտյան ուկրաինացիների նկատմամբ նրա իշխանության իրավունքները՝ ինչպես միջազգային իրավունքի տեսակետից, այնպես էլ Անտանտի պետությունների տեսակետից, *մնում էին խիստ խնդրահարույց:* Վերջինները, ազգերի ինքնորոշման սկզբունքին հետևելու պարտավորություններ ստանձնելով (թեկուզև՝ ձևականորեն), չէին կարող ամբողջովին անտեսել լեհերի իշխանությունն իրենց վզին փաթաթելու դեմ արևմտյան ուկրաինացիների բողոքները: Այդ պատճառով, ընդհուպ մինչև 1923 թ.-ը, Արևելյան Գալիչիայի կարգավիճակի հարցը մնում էր արևմտյան տերությունների, հատկապես Անգլիայի և Ֆրանսիայի քննարկման առարկան: Միաժամանակ սակայն, Լեհաստանը իրավունք ստացավ տնօրինելու այդ տարածաշրջանը՝ նրան ինքնավար վարչակազմ երաշխավորելու և ուկրաինացիների ազգային իրավունքները պաշտպանելու պայմանով:

1919-1923 թ.թ.-ների ընթացքում Արևելյան Գալիչիայի ուկրաինացի մեծամասնության և




լեհական նոր վարչակազմի միջև ստեղծված լարված հարաբերություններն ամենից լավ բնորոշում է «փոխադարձ մերժողականություն» արտահայտությունը: Մինչ Անտանտի դեսպանների խորհուրդը Վերսալում փնտրում էր այդ խնդրի լուծումը, *Գալիչինայում ուկրաինացիները հրաժարվում էին իրենց նկատմամբ լեհական պետության իշխանությունն օրինական ճանաչելուց*: Նրանք բոյկոտեցին 1921 թ.-ի մարտահամարը և 1922 թ.-ի լեհական սեյմի ընտրությունները: Առավել արմատական տարրերը դիմեցին լեհ պաշտոնյաների դեմ ահաբեկչություն և կառավարական բոլոր նորամուծությունների դեմ նենգադուլ (սաբոտաժ) անելու մարտավարությանը: Իր կողմից, լեհական կառավարությունը գործում էր այնպես, կարծես թե Արևելյան Գալիչինան եղել է բուն լեհական տարածք՝ լրիվ վերահսկողություն սահմանելով տարածաշրջանի քաղաքական, տնտեսական ու մշակութային կյանքի վրա և ամբողջովին անտեսելով ուկրաինացիների կարիքները:

Այնուամենայնիվ, քաղաքակիրթ աշխարհի այբերին թոզ փչելով, լեհերը մշտապես ընդգծում էին իրենց պետությունում բնակվող ուկրաինացիների և ազգային այլ փոքրամասնությունների ազգային իրավունքները հարգելու իրենց պատրաստականությունը: Դրա վերաբերյալ նրանց պարտավորությունը նույնիսկ ամրագրված էր իրենց սահմանադրության մեջ: Վերջիվերջո, 1923 թ.-ին, երբ Լեհաստանը հերթական անգամ արևմտյան տերություններին հավատացրեց, որ ինքը երաշխավորում է Արևելյան Գալիչինայի ինքնավարությունը, կրոն-լատրի վարչական մարմիններում լեհերենի կողքին ուկրաիներեն լեզվի կիրառումը և կրացի ուկրաինական համալսարան, դեսպանների խորհուրդը ճանաչեց Լեհաստանի գերիշխանությունը Արևելյան Գալիչինայի նկատմամբ: Այդ որոշումը դեպի ետ վիատեցուցիչ քայլ էր գալիցյան ուկրաինացիների համար, քանի որ իրենք հանձնվում էին նրանց ողորմածությանը, ում իրենց ոխերիմ թշնամին էին համարում:

Իր քաղաքականության խտրականությունը ղնող բոլոր գծերով հանդերձ, Լեհաստանը համեմայն դեպս սահմանադրական սկզբունքների վրա հիմնված պետություն էր: Երկպալատ խորհրդարանի ընտրությունները, թեկուզ երբեմն բեմականացված, համեմատաբար ազատ էին անցկացվում: Նույնիսկ 1926 թ.-ին մարշալ Յուզեֆ Պիլսուդսկու իրականացրած ռազմական հեղաշրջումից հետո օրենքի իշխանությունը մնաց անփոփոխ (երբեմն, իրոք, որպես լեհական շահերը պաշտպանող միջոց ներկայացվելով): Այսպիսով, լեհական օրենքները ուկրաինացիներին տալիս էին պետական քաղաքականությանը դիմակայելու, թեկուզ սահմանափակ, բայց իրական հնարավորություններ: *Չնայած երկրորդ կարգի քաղաքացու իրենց կարգավիճակին, ուկրաինացիները Լեհաստանում քաղաքական առումով անհամեմատ ավելի լավ դիրք էին զրավում, քան նրանց եղբայրները ԽՍՀՄ-ում:*

Նորաստեղծ լեհական պետությունը Եվրոպայում առանձնանում էր ազգային փոքրամասնությունների ամենամեծ տեսակարար կշռով: 1921 թ.-ին նրա 27 մլն բնակչության մոտ երրորդ մասը կազմում էին ուկրաինացիները, հրեաները, բելոռուսները, գերմանացիները և ոչ-լեհ այլ ազգեր: Ուկրաինացիներն առավել զգալի ազգային փոքրամասնությունն էին նրանք մոտ 5 մլն էին, կամ կազմում էին պետության բնակչության մոտ 15 %-ը (միջպատերազմական Լեհաստանի ազգային փոքրամասնությունների վիճակագրությունը խիստ հակասական է. ըստ լեհական աղբյուրների՝ այստեղ ուկրաինացիների թիվն ընդամենը 4,5 մլն է եղել, մինչդեռ ուկրաինացիները պնդում են, որ իրենց թիվն անցնում էր 6 մլն-ը): Այսպիսով, լեհական մեծամասնության թվային գերակշռությունն այնքան վճռորոշ չէր, որպեսզի նրան թույլ տար ամբողջովին և մշտապես անտեսել ուկրաինացի փոքրամասնության ձգտումները:

Լեհաստանում ուկրաինացիները կազմում էին իրարից տարբերվող երկու համայնք (կառավարությունն անում էր իրենից կախված ամեն բան՝ այդ տարբերությունները խորացնելու համար): *Մեծամասնությունը բնակվում էր Արևելյան Գալիչինայի հարթերոզյան նախկին տարածքներում, կամ՝ Արևելյան Փոքր Լեհաստանում («Малопольской Восточной»)*՝ ինչպես սկսել էին անվանել այն: 1920 թ.-ին այդ տարածաշրջանը բաժանված էր 3 վոյեվոդությունների՝ Լվովի, Տեռնոպոլի և Ստանիսլավի: Դրանք բնակեցնող ավելի քան 3 մլն գալիցյան ուկրաինացիները, առավելապես հույն-կաթոլիկներ, աչքի էին ընկնում ազգային ինքնագիտակցության բարձր մակարդակով և հարաբերական կազմակերպվածությամբ: Ուկրաինացիների փոքր մասը, մոտ 2 մլն-ը, բնակեցնում էին Արևմտյան Վոլինը, Պոլեսյեն և Խոլմ-չչինան՝ տարածքներ, որ Ռուսաստանից խլել էր Լեհաստանը: Նրանք մեծ մասամբ ուղղափառներ էին և քաղաքական, սոցիալ-տնտեսական ու մշակութային առումով՝ նվազ զարգացած:



Արևմտյան ուկրաինացիները միջպատերազմական Գալիչինայում



## Լեհաստանի քաղաքականությունը ուկրաինացիների նկատմամբ

Արևմտյան ուկրաինացիներով բնակեցված տարածքների նկատմամբ լեհական հավակնությունները հիմնվում էին պատմական փաստերի վրա: XVIII դարի վերջին այդ տարածքները մտնում էին Լեհական Ռեչ Պոսպոլիտայի կազմի մեջ, և լեհերը համարում էին, որ դրանք պետք է լինեն 1919 թ.-ին ստեղծված լեհական պետության մի մասը: Այստեղ զգալի և միաժամանակ գերիշխող լեհական փոքրամասնության առկայությունը ամրապնդում էր այդ պահանջները: Արևելյան ծայրամասերի ոչ-լեհ մեծամասնությանը լեհական կառավարությունը մտադիր էր լեհացնել: Լեհացնելու գործում հաջողության հասնելու հավաստը հիմնվում էր երկու ենթադրությունների վրա. նախ՝ որ լեհական մշակույթն իրեն թե այնքան գրավիչ է, որ մյուս ժողովուրդները պատրաստակամությամբ այն կընդունեն որպես իրենցը և երկրորդ՝ որ փոքրամասնությունների ազգային շարժումները թվում էին շատ թույլ, որպեսզի կարողանային դիմակայել լեհական ճնշումներին: Ինչպես պարզվեց, լեհերը երկու դեպքում էլ սխալվել էին իրենց հաշիվներում:

Իր հիմքում լինելով պատժիչ, լեհական քաղաքականությունը ուկրաինացիների նկատմամբ, համենայն դեպս, համընդհանուր բնույթ չէր կրում և քննադատության էր ենթարկվում հենց լեհերի կողմից: Եթե այնպիսի ազդեցիկ գերազգայնականներ, ինչպես Ռոման Գնդակու գլխավորած և Արևելյան Գալիչինայի լեհական փոքրամասնության աջակցություն ունեցող ազգային-դեմոկրատներն էին, մշտապես բռնում էին մարտնչող հակաուկրաինական քաղաքականության կողմը, ապա մեծ հեղինակություն ունեցող որոշ լեհեր, ինչպիսիք էեոն Վասիլակին և Տադեուշ Գոլուվկոն էին, ազգային փոքրամասնությունների նկատմամբ չափավոր ու ճկուն քաղաքականության կոչ էին անում: Կենտրոնական իշխանությունը Վարշավայում ժամանակ առ ժամանակ ուկրաինացիների նկատմամբ զիջումների էր գնում, սակայն տեղերում՝ վարչակազմի, ոստիկանության ու բանակի «կոշտ գծի» կողմնակիցներն այդ զիջումները գորյի էին հանգեցնում: Ուկրաինացիների հետ հարաբերություններում կային նաև տարածաշրջանային տարբերություններ: Այսպես, Վոլինի վոյեվոդա Յենրիկ Յոզակին փորձում էր աննշան զիջումներ անելով ուկրաինացիներին ներգրավել պետությանը սատարելու մեջ, այն ժամանակ, երբ հարևան Գալիչինայում կառավարության պատժիչ միջոցները դաժանության գագաթնակետին էին հասել: Վերջապես, ճչացող հակապետություններ էին նկատվում արդեն այն բանում, որ լեհական կառավարությունը մի կողմից՝ Վարշավայում ապաստան էր տալիս Արևելյան Ուկրաինայի վտարանդի ուկրաինական կառավարությանը (որը կարելի էր օգտագործել ՆՄՅՄ-ի հետ պատերազմի դեպքում), իսկ մյուս կողմից՝ հրաժարվում էր ճանաչել արևմտյան ուկրաինացիների ցանկացած քաղաքական ձգտումներ:

Համենայն դեպս, արդյունքում կարելի է հանգել եզրակացության, որ *ուկրաինական փոքրամասնության հետ լեհական կառավարության հարաբերություններում գլխավոր գիծը հակամարտության քաղաքականությունն էր*: 1924 թ.-ին ընդունվեց պետական հիմնարկներում ուկրաիներեն լեզվի գործածությունն արգելող օրենք: Այդ նույն տարում, լուսավորության նախարար, հակաուկրաինական հայացքների մոլի կողմնակից Ստանիսլավ Գրաբսկին (հայտնի՝ Լեխ Գրաբսկի) բարեփոխումներ անցկացրեց, որոնց արդյունքում ուկրաինական դպրոցների մեծ մասը վերափոխվեց երկլեզու ուսումնական հաստատությունների, ուր գերակշռում էր լեհերենը: Ուկրաինացիներին հեռացրեցին Լվովի համալսարանից, փակվեցին ուկրաինական ամբիոնները, իսկ ուկրաինական համալսարան բացելու խոստումը մնաց անիրագործելի:

*Ուկրաինական գյուղացիության համար Գալիչինայի կառավարման առաջին տարիների լեհական քաղաքականության մեջ հատկապես ատելի էր գաղութարձակեցման ծրագիրը*: Չգտելով ուժեղացնել լեհերի ներկայությունն արևելյան ծայրամասերում, կառավարությունը 1920 թ.-ից սկսած խթանում էր լեհերի վերաբնակեցումը Արևելյան Գալիչինայում և Վոլինում: Սկզբում վերաբնակիչ-գաղութարձակների (այսպես կոչված՝ *օստդնիկների*) մեծամասնությունը բանակի վետերաններն էին (հատկապես Վոլինում), հետո սկսեցին գերակշռել քաղաքացիական անձինք: Չնայած նրան, որ Արևելյան Գալիչինան առանց այդ էլ Արևելյան Եվրոպայի ամենախիտ բնակեցված գյուղատնտեսական շրջաններից մեկն էր, լեհ գաղութարձակները հենց այստեղ ստացան լավագույն հողաբաժիններ և դրամական առատ օժանդակություններ: Հողագործությամբ զբաղվելու ցանկություն չունեցողներին գյուղական ժամ-

դարմների, մանր ծառայողների, փոստային և երկաթուղային աշխատակիցների արտոնյալ պաշտոններ էին տրվում: Ուկրաինական աղբյուրները նշում են, որ 1938 թ.-ի շեմին Արևելյան Գալիչինայի և Վոլինի գյուղերում վերաբնակեցվել են մոտ 200 հազ. լեհ, քաղաքներում՝ մոտ 100 հազ., իսկ լեհ հեղինակների գնահատմամբ՝ գաղութարձակների ընդհանուր թիվը հասնում էր մոտ 100 հազ.-ի: Ամեն դեպքում, չնայած լեհերի հոսքն այնքան մեծ չէր, որպեսզի կտրուկ փոխեր Լեհաստանի արևելյան տարածաշրջանների ազգային կազմը, սակայն այն լրիվ բավական էր ուկրաինացիների խիստ դժգոհությունն առաջացնելու համար:

Չնայած Պիլսուդսկու հեղաշրջման արդյունքում իշխանության եկավ ավելի հավակնոտ կառավարություն, սկզբում ուկրաինացիների հետ նրա հարաբերությունների հնարավոր բարելավման նշաններ հայտնվեցին: Նոր միտումների մարմնավորողը դարձավ 1927 թ.-ին Վոլինի վոյեվոդ նշանակված Յենրիկ Յոզեֆսկին: Պետական հողաբաժինները տեղի բնակիչների միջև բաժանելով, նա ուկրաինացի գյուղացիների համակրանքը շահեց: Չգտելով գալիցիացիների «կործանարար ազդեցությունից» մեկուսացնել վոլինյան ուկրաինացիների քաղաքական ղեկավարությանը, նա նույնիսկ քաղաքական որոշ զիջողությունների գնաց նրանց համար: Սակայն նրա բոլոր ջանքերը վերջիվերջո ի չիք դարձան վոլինյան ուղղափառների կրոնական խտրականության և տեղի պաշտոնյաների ու լեհ ազգայնականների անհաղթահարելի դիմադրության պատճառով:

*Ուկրաինա-լեհական հարաբերությունները լրջորեն վատթարացան Մեծ լճացման 1929-1933 թ.թ.-ների ընթացքում*, ինչը զգալի հարված հասցրեց ուկրաինացիներով բնակեցված հողագործական շրջաններին: Գյուղացիները տառապում էին ոչ այնքան անգործությունից, որքան իրենց եկամուտների աղետալի անկումից, ինչը գյուղատնտեսական արտադրանքի պահանջարկի կտրուկ նվազման հետևանք էր: Ճգնաժամի տարիներին մանր գյուղացիական տնտեսությունների մեկ ակրից (0,4 հա) ստացվող մաքուր շահույթը նվազեց 70-80 %-ով: Այդ պայմաններում կտրուկ սրվեց լավ ֆինանսավորվող լեհ գաղութարձակների և հարուստ լեհ կալվածատերերի նկատմամբ ուկրաինացի գյուղացիների ատելությունը: *Աճեց դժգոհությունը նաև ուկրաինական մտավորականության միջավայրում*, հատկապես երիտասարդության շրջանում, որոնք աշխատանք չունեին, քանի որ *պետության կողմից հատկացվող սակավաթիվ աշխատատեղերը անխուսափելիորեն զբաղեցնում էին լեհերը*: Այդ պատճառով էլ, *երբ ուկրաինական արմատական ազգայնականները լեհերի տիրապետության դեմ ակտիվ դիմադրության կոչ արեցին, դրան պատրաստակամորեն արձագանքեց ուկրաինացի երիտասարդությունը*:

### Պացիֆիկացիա (Հնազանդեցում)

1930 թ.-ի ամռանը Գալիչինայով անցավ լեհական կալվածքների ու տնտեսության վրա հարձակումների ալիքը, որը սովորաբար ավարտվում էր հրկիզումներով: Հաշվարկվել էր այդպիսի մոտ 2200 դեպք: Կառավարության պատասխան գործողությունները զանգվածային ու դաժան բնույթ էին կրում: Սեպտեմբերի կեսերին ոստիկանության ու հեծելազորի խոշոր ստորաբաժանումները հարձակվեցին ուկրաինական գյուղերի վրա՝ սկսելով այսպես կոչված՝ պացիֆիկացիայի (հնազանդեցման) կամպանիա, որի նպատակը կարգուկանոն հաստատելն էր: Գործելով խմբական երաշխավորության սկզբունքով, բանակային զորամասերը գրավելով մոտ 800 գյուղ, ավերում ու կողոպտում էին ուկրաինական ակումբներն ու ընթերցարարները, խլում էին գույքն ու մթերքը, ծեծում էին բոլոր նրանց, ով փորձում էր բողոքել: Չերբակալվեցին մոտ 2 հազ. ուկրաինացի, հիմնականում՝ գիմնազիականներ, ուսանողներ և երիտասարդ գյուղացիներ, նրանց համարյա երրորդ մասը երկար ժամանակով բանտ ընկավ: Սեյմի պատգամավորության ուկրաինացի թեկնածուներին տնային կալանքի վերցրին՝ թույլ չտալով նրանց մասնակցելու այդ ժամանակ անցկացվող ընտրություններին, ուկրաինացի ընտրողներին ահաբեկելով ստիպում էին քվեարկել լեհ թեկնածուների օգտին:

Ազգային Լիգային ուղղված ուկրաինացիների բողոքներն անսպասելիորեն համաշխարհային հասարակության առաջ մերկացրին ուկրաինացի փոքրամասնության ողբալի վիճակն ընդհանրապես, իսկ հնազանդեցման ժամանակ՝ առանձնապես, ինչը Եվրոպայի համար տիպիկ անակնկալ էր: Սակայն, եթե Եվրոպական (հատկապես՝ բրիտանական) քաղաքագետները դատապարտում էին լեհերի գործելակերպը, ապա Ազգերի Լիգայի Կոմիտեն ճնշումներ ու բռնություններ հրահրելու մեջ մեղադրում էր ուկրաինացի ծայրահեղականներին: Չնայած լեհական կառավարությունն արագորեն ճնշեց խռովությունները, սակայն նրա գործողություններն անհեռադատ էին, քանի որ միայն ավելի կատաղեցրին ուկրաինացիներին, հաղթա-



նակի գրավականներ տվեցին երկու կողմի ծայրահեղականներին էլ և առավել դժվարացրին խնդրի կառուցողական լուծումներ փնտրելը:

Եթե հնագանդեցումը գյուղում բերեց կարգուկանոնի խաբուսիկություն, ապա այն ոչ մի կերպ չթուլացրեց լեհական ռեժիմի դեմ պայքարելու երիտասարդ արմատական ազգայնականների վճռականությունը: **Ուկրաինական ազգայնականների կազմակերպությունը (ՈՒԱԿ)** միայն փոխեց մարտավարությունը՝ 1930-ական թվականների սկզբին անցնելով լեհ գործիչների ու պետական պաշտոնյաների քաղաքական սպանություններին և փոստատների վրա հարձակումներին՝ կազմակերպական կարիքների համար դրան ձեռք բերելու համար: Իր կողմից, կառավարությունը միայն ավելի խորացրեց ուկրաինացիների նկատմամբ անհաշտ վերաբերմունքը: Նա գյուղերում վերացրեց ինքնակառավարումը և դրանք հանձնեց լեհ պաշտոնյաների վերահսկողությանը: 1934 թ.-ին Բերեզա Կարտուզկայում կառուցվեց համակենտրոնացման ճամբար, որում կային մոտ 2 հազ. քաղբանտարկյալ, հիմնականում՝ ուկրաինացիներ: Մեկ տարի անց Լեհաստանը հրաժարվեց ազգային փոքրամասնությունների իրավունքները պաշտպանելու Ազգերի Լիգայի առջև ունեցած իր պարտավորություններից:

Կառավարության գործողությունները վկայում էին Լեհաստանում տեղի ունեցող ծայրահեղ աջ ուղղվածությանը դառնալու մասին: 1935 թ.-ին ընդունվեց նոր սահմանադրություն, որը կրճատեց սեյմի իրավունքները, բարձրագույն արժեք հռչակեց պետության շահերը և համարյա անսահմանափակ արտոնություններ տվեց նրա ղեկավարին՝ մարշալ Պիլսուդսկուն: Փոխվեց ընտրական համակարգը. այժմ կառավարությունը իրավունք ստացավ հաստատել կամ մերժել սեյմի պատգամավորության թեկնածուներին: Այդ նույն թվականին, Պիլսուդսկու մահից հետո, կառավարությունում ավելի ու ավելի մեծ դեր սկսեցին խաղալ զինվորական ունակները (կլիկները):

### Փոխզիջման փորձեր

Ե՛վ լեհական, և՛ ուկրաինական ճամբարներում կային ոչ ծայրահեղական ուժեր, որոնք անհանգստությամբ էին հետևում լեհ-ուկրաինական անվերջանալի դիմակայությանը: Ուկրաինական կողմից փոխզիջման նախաձեռնող հանդես եկավ ուկրաինական քաղաքական ամենամեծ կուսակցությունը՝ **Ուկրաինական ազգային-դեմոկրատական միավորումը (ՈՒԱԴՄ)**, որի առաջնորդները պարզորոշ գիտակցում էին ՈՒԱԿ-ի բռնի գործողությունների անօգտակարությունը և ուկրաինացիների դեմ դրանց հարուցած պատժիչ գործողությունների հետևանքները: ՈՒԱԴՄ-ից մերձեցման ուղիներ էին պահանջում նաև ուկրաինական բավականին զարգացած կոոպերատիվ շարժման գործիչները, որոնց բնականոն աշխատանքն անհնար էր առանց քաղաքական կայունության: Լեհական կողմը նույնպես փոխզիջման գնալու պատրաստակամության նշաններ էր ցուցաբերում: 1933 թ.-ին կառավարությունը հիմնեց «Լեհ-ուկրաինական տեղեկագիր» ամսագիրը, որը պետք է լուսաբաներ լեհ-ուկրաինական հարաբերությունների դրական տեսանկյունները: Դրանից քիչ անց վարչապետ Վալցլավ Եդրժիչը հրապարակայնորեն խոստովանեց, որ սխալներ թույլ են տվել երկու կողմն էլ: Ինչքան էլ տարօրինակ թվա, սակայն 1934 թ.-ին ՈՒԱԿ-ի անդամների կողմից ներքին գործերի նախարար Բրոնիսլավ Պարացկու սպանությունն արագացրեց մերձեցման գործընթացը, քանի որ ի մեծ բավարարություն կառավարությանը, այդ գործողությունը խստորեն դատապարտեցին և՛ ՈՒԱԴՄ-ն, և՛ միտրոպոլիտ Շեպտիցկին: Այդպիսով, 1935 թ.-ի շեմին, պայմաններ ստեղծվեցին ՈՒԱԴՄ-ի և կառավարության միջև սահմանափակ համաձայնագիր կնքելու համար, որը ստացավ **Նորմալացում** անունը:

Պայմանավորվածության համաձայն, ուկրաինացիները պաշտոնապես ճանաչեցին լեհական պետական շահերի առաջնայնությունը և քվեարկեցին նոր բյուջեի օգտին: Ի պատասխան, կառավարությունը ՈՒԱԴՄ-ից պատգամավորության թեկնածուներին ընտրություններին մասնակցելու իրավունք տվեց, ինչը զգալիորեն մեծացրեց սեյմում ուկրաինացիների ներկայացուցչությունը: Ընտրություններից անմիջապես հետո կառավարությունը մի շարք նոր զիջումների զննեց: ՈՒԱԴՄ-ի առաջնորդ **Վասիլ Մուդրին** ընտրվեց սեյմի փոխմարշալ: Ազատ արձակվեցին Բերեզա Կարտուզկայի կալանավորների մեծ մասը: Ուկրաինական որոշ կոոպերատիվներ և տնտեսական այլ հիմնարկություններ դրամական վարկեր ստացան: Կյանքը Լեհաստանի իշխանության տակ ՈՒԱԴՄ-ի շատ անդամներին սկսեց միանգամայն ընդունելի թվալ, հատկապես այն սարսափելի դժվարությունների համեմատ, որոնք այդ ժամանակ կրում էին Խորհուրդների իշխանության տակ ապրող ուկրաինացիները:

Սակայն նորմալացումը ուկրաինացիների համընդհանուր աջակցությունը չստացավ: ՈՒԱԴՄ-ի ընդդիմադիր ուժերը և ուկրաինական այլ կուսակցություններ միավորման ղեկավարությամբ մեղադրում էին նրանում, որ նա «բավարարվում է լեհական սեղանի փշուրնեքով»: Արմատական ազգայնականները, հասկանալի է, որ չընդունեցին նորմալացումը և շարունակում էին իրենց հեղափոխական գործունեությունը: Վերջապես, յուրաքանչյուր ուկրաինացու մեջ լեհերի նկատմամբ խորն արմատավորված անվստահությունը նպաստում էր մերձեցման հաջողության նկատմամբ ընդհանուր թերհավատությանը: Նորմալացմանը խոչընդոտում էին նաև լեհերից շատերի գործողությունները: Չնայած կենտրոնական կառավարության հրահանգներին, արևելյան տարածաշրջաններում համարյա յուրաքանչյուր վոյեվոդա, ավազանու անդամ, կամ նույնիսկ ոստիկանության պետ իր պարտականությունն էր համարում հավատարիմ մնալ ուկրաինացիների հետ «գործերը վարելու» իրենց անխուսափելիորեն կոշտ ու կոպիտ մեթոդներին: Նման գործողություններում նրանց պատրաստակամորեն աջակցում էր լեհ փոքրամասնությունը: Այսպես օրինակ, երբ լեհերի ամբոխը թալանում ու ավերում էր ուկրաինական հիմնարկությունները, դա արվում էր իշխանությունների գաղտնի համաձայնությամբ: Լեհ երիտասարդները, ստեղծելով կիսազինվորական զինված կազմավորումներ, օրինականություն ու կարգուկանոն պահպանելու պատրվակով հաճախ ահաբեկում էին ուկրաինացիներին: 1938 թ.-ին բոլորի վրա ահ ու սարսափ տարածելով, սահմանափակ ոստիկանությունը ԽՍՀՄ-ի սահմանի երկարությամբ ուկրաինացիներով բնակեցված շրջաններում «մինիհնագանդեցում» իրականացրեց:

Դատելով ամեն ինչից, նորմալացման առավել պնդաճակատ հակառակորդները լեհ զինվորականներն էին: 1930-ականների վերջին, պատերազմի սպառնալիքի աճին զուգընթաց, բանակային հրամանատարությունը իրենց վիճակից դժգոհ ուկրաինացիների մեջ սկսեց տեսնել երկրի անվտանգության ներքին գլխավոր սպառնալիքը: Ձգտելով ձեռքբազատվել այդ խնդրից, կամ թեկուզև իրեն վտանգագրեծել նրանից, բանակը դիմեց «բաժանիր, որ տիրես» մարտավարությանը: 1938 թ.-ին նա Կարպատներում բնակվող ուկրաինալեզու **հուցուների, բոյկերի** ու **լեմկերի** շրջապատում դիտավորյալ մի աղմկալից կամպանիա կազմակերպեց, որն ուղղված էր այն գաղափարի տարփողմանը, թե այդ ժողովուրդները ոչ թե ուկրաինական ազգի մի մասն են, այլ ինքնուրույն ազգային կազմավորումներ: Փորձեր էին արվում լեմկերի բարբառը առանձին լեզվի վերածելու համար, իսկ իրենց՝ լեմկերին, ստիպում էին հունա-կաթոլիկական հավատից անցնելու ուղղափառին, որպեսզի նրանց և զալիցյան ուկրաինացիների միջև անջրպետ առաջանա: Այս քաղաքականության տարբերակներից մեկը բանակային աստիճանավորների փորձերն էին՝ գյուղացիներից միայն բավականաչափ մաշված ազնվական տիտղոսներ ունենալով տարբերվող «տկլոր» ուկրաինական շյախտային համոզվել, որ նա բացարձակապես օտար է գյուղացիությանը ոչ միայն սոցիալական, այլև ազգային առումով:

Միաժամանակ շարունակվում էր լեհական իշխանությունների հարձակումը Վոլինի ուղղափառ եկեղեցու վրա, որտեղ ուղղափառությունը ուկրաինական ինքնակայության հիմքն էր: Ապացուցելով, որ Վոլինի և Խուլմշչինայի եկեղեցիներից շատերը մի ժամանակ պատկանել են հույն-կաթոլիկներին կամ ուղղափառ-կաթոլիկներին, իշխանությունները նրանց հանձնեցին մոտ 150 ուղղափառ եկեղեցի, իսկ 190-ը պարզապես ավերեցին: Արդյունքում, 1914 թ.-ին Վոլինում առկա 389 ուղղափառ եկեղեցիներից, 1939 թ.-ի շեմին փրկվել էին միայն 51-ը: Նույն մեթոդներն էին կիրառվում նաև հարևան Խուլմշչինայում և Պոլեսյեում: «Կրակուս» կազմավորման զինված զաղութաբնակների հրոսակախմբերն ահաբեկում էին տեղի բնակիչներին, ստիպում նրանց ընդունելու կաթոլիկությունը, իսկ ուղղափառ եկեղեցու գործավարությունը, աստվածաբանական ուսուցումը և նույնիսկ ժամերգությունները լեհերեն լեզվով էին անցկացվում:

## Սոցիալ-տնտեսական պայմանները

Չնայած քաղաքական հակադիր շահերի խիստ բախումներին, որի ակնհայտնում ու մասնակիցը եղան արևմտյան ուկրաինացիները՝ Ավստրո-հունգարական և Ռուսական կայսրությունների փլուզման, անկախության համար պայքարի և Լեհաստանի կազմի մեջ մտնելու հետևանքով, նրանց սոցիալ-տնտեսական բնագավառում որևէ զգալի փոփոխություն տեղի չունեցավ: Ուկրաինական հողերը, որ Լեհաստանի տարածքի մոտ 25 %-ն էին կազմում,



մնացել էին թույլ զարգացած հողագործական ծայրամասեր կամ ներքին գաղութներ, որոնք լեհական կենտրոնական շրջաններին էժամ հունք էին մատակարարում, փոխարենը ստանալով բավականին թանկ պատրաստի արտադրանք:

Ուկրաինան ցայտուն արտահայտված հողագործական շրջան էր նույնիսկ լեհական հասկացողությամբ. նրա բնակչության մոտ 80 %-ը կազմում էր գյուղացիությունը (լեհերի մոտ՝ միջին հաշվով 50 %-ը) և միայն 8 %-ն էին արդյունաբերական աշխատավորները (լեհերի մոտ՝ 20 %-ը): Այս կառուցվածքային անհամամասնությունները միակ խնդիրները չէին, որոնց բախվում էին ուկրաինացիները: Սրանց ավելանում էին հետպատերազմյան ավերածությունները, պետության տնտեսական խտրական քաղաքականությունը, Մեծ լճացման աղետալի հետևանքները: Մի խոսքով, *ուկրաինացիների վիճակը սոցիալ-տնտեսական բնագավառում նույնքան աննախանձելի էր, որքան և քաղաքականում:*

Միանգամայն հասկանալի է, որ տնտեսական հիմնական խնդիրները, որոնք մնացել էին չլուծված դեռևս մինչպատերազմյան ժամանակներից, վերաբերում էին գյուղատնտեսությանը. դրանցից հիմնականը գյուղերի գերբնակեցվածությունն էր և գյուղացիական տնտեսության սակավահողությունը: Լեհաստանի ուկրաինական տարածաշրջաններում գտնվող 1,2 մլն գյուղացիական տնտեսությունները տիրապետում էին հողերի 60 %-ին: Այս խնդիրը հատկապես սուր էր Գալիչիանայում, որտեղ գյուղացիական հողաբաժինների 75 %-ից ավելին 10 ակրից (4 հա) էլ պակաս էին: Այդ նույն ժամանակ, մոտ 2 հազ. լեհական խոշոր կալվածքներ, որոնցից մի քանիսը հասնում էին 10-20 հազ. ակրի (4-8 հազ. հա), զբաղեցնում էին հողերի 25 %-ը: Վոլինում, որտեղ լեհ հողատերերի թիվը քիչ էր, իսկ հողն ավելի բերրի և գյուղացիական հողաբաժիններն էլ ավելի մեծ, գյուղի վիճակն ավելի բարվոք էր:

Չգտելով թուլացնել սակավահողության հետ կապված լարվածությունը, կառավարությունը 1920 թ.-ին խրախուսում էր խոշոր կալվածքների վերաբաժանումը: Սակայն այդ ծրագիրը շատ քիչ բան տվեց գալիցյան ուկրաինացուն, քանի որ վերաբաժանված հողերը առաջին հերթին տրվում էին լեհ գյուղացիներին ու գաղութաբնակներին: Գյուղերի գերբնակեցվածությունը նվազեցնելու գործում պակասեց արտագաղթի դերը, քանի որ ԱՄՆ-ն և Կանադան (ավելի նվազ չափով) կրճատել էին ներգաղթի սահմանված նորմը: Արդյունքում, այդ ընթացքում Ամերիկա էին արտագաղթել ընդամենը 170 հազ. արևմտյան ուկրաինացի:

Արդյունաբերությունն առաջվա պես շատ քիչ բան էր կարողանում առաջարկել իր վիճակը բարելավել ցանկացող գյուղացուն: Արևելյան տարածաշրջանը, ինչպես և առաջ, թույլ զարգացած լեհական արդյունաբերության անհամաչափորեն փոքր մասն էր կազմում. դրա արդյունաբերական աճն ավելի նվազեց 1930-ական թվականներին, երբ պետական աճող կապիտալ ներդրումները համարյա ամբողջովին հատկացվում էին կենտրոնական Լեհաստանի արդյունաբերական զարգացմանը, անուշադրության մատնելով լայնածակ արևելյան ծայրամասերը: Ընդամենը միայն 135 հազ. արևմտյան ուկրաինացիներ էին աշխատում արդյունաբերությունում, հիմնականում՝ անտառանյութի և նավթահանության ճյուղերում: Գալիչիանայի կենտրոնական խոշոր քաղաքը մնում էր հիմնականում լեհերով ու հրեաներով բնակեցված 300 հազ. բնակիչ ունեցող Լվովը:

Արևմտաուկրաինացի հասարակության քաղաքական, մշակութային և նույնիսկ սոցիալ-տնտեսական կյանքում, ինչպես և համաշխարհային առաջին պատերազմից առաջ, առաջատար դեր էր շարունակում խաղալ մտավորականությունը: Սակայն, ի տարբերություն XIX դարի, երբ այդ սոցիալական շերտի մեծամասնությունը հոգևորականներն էին, միջպատերազմական շրջանում արդեն հիմնականում աշխարհիկ մտավորականությունն էր: Ըստ լեհ հետազոտողների տվյալների, 1930-ական թվականներին աշխատանք ունեցող արևմտաուկրաինացի բնակչության 1 %-ն էր կազմում (15 հազ. մարդ) մտավորականությունը, լեհերի մոտ այդ ցուցանիշը հասնում էր 5 %-ի: Կրթված ուկրաինացիների համեմատաբար փոքր թվի հիմնական պատճառը՝ ոչ-լեհերի համար բարձրագույն կրթություն ստանալուն խոչընդոտելու կառավարության քաղաքականությունն էր: Այսպես օրինակ՝ Լվովի համալսարանում ուկրաինացիները կազմում էին ուսանողության ընդամենը 10 %-ը:

Ուկրաինական մտավորականությունը հիմնականում կազմված էր ուսուցիչներից և արագորեն աճող կոռուպտիվ հիմնարկությունների ծառայողներից: Ուկրաինացիները հետըզհետե սկսեցին նվաճել այնպիսի բնագավառներ, ինչպես իրավագիտությունը, բժշկությունը, դեղագործությունը, որոնցում մեծաշնորհը սովորաբար հրեաներինն ու լեհերինն էր: Սակայն Արևելյան Եվրոպայում ամենատարածված աշխատանքը՝ պետական ծառայությունը, գործնականում ուկրաինացիների համար մնում էր անհասանելի, քանի որ բոլոր պաշտոնները

վերապահվում էին լեհերին: Նման անիրավահավասարության միակ դրական կողմն այն էր, որ քաղաքում աշխատանք չգտնող շատ մտավորականներ ստիպված էին գնալ գյուղ, ինչի հետևանքով նրա սոցիալ-տնտեսական և մշակութային զարգացման նկատելի տեղաշարժեր եղան: Բայց և այնպես, մասնագիտությանը համապատասխան աշխատանք փնտրելու դժվարությունները, որոնք հատկապես սրվեցին 1930-ական թվականների լճացման շրջանում, զգալիորեն վատթարացրին մտավորականության առանց այդ էլ աննախանձելի նյութական վիճակը: Դա իր հերթին խորացրեց կրթված ուկրաինացիների հակակրանքը լեհական ռեժիմի նկատմամբ և *ամրասկզբեց նրանց համոզվածությունն այն բանում, որ այդ բոլոր խնդիրները կարելի է լուծել միայն սեփական պետություն ունենալու դեպքում:*

## Ուկրաինացիների պատասխան գործողությունները

Միջպատերազմական շրջանում լեհ-ուկրաինական հարաբերությունների էությունը բնորոշող հիմնական գործոնը լեհական կառավարության գործունեությունն էր, այդ պատճառով էլ ուկրաինացիների ակտիվությունը սովորաբար իշխանությունների այս կամ այն գործողության հակազդեցությունն էր: Ամբողջությամբ ռեժիմի ընդդիմությունում մնալով, ուկրաինացիներն իրենց վերաբերմունքը նրա նկատմամբ արտահայտում էին հիմնականում երկու մոտեցումով. *օրինական*, որը հազիվ թե վատացներ իրենց առանց այդ էլ աննախանձելի վիճակը, և *բռնի՝ հեղափոխական գործողություններով*, դրանց հնարավոր հետևանքների վրա ուշադրություն չդարձնելով: Առաջին մոտեցումը գերիշխողն էր:

Չնայած «օրինականները» երբեք չէին հրաժարվել բոլոր ուկրաինացիներին անկախ պետությունում միավորելու գաղափարից, սակայն իրենց ամենօրյա գործունեությամբ առաջիկ կենտրոնանում էին այն ձեռքբերումների պահպանման վրա, որոնց հասել էին դեռևս Ավստրիական կայսրությունում լեհերի դեմ պայքարելիս: Նրանք մասնակցում էին քաղաքական կյանքին, ստեղծելով օրինական կուսակցություններ, վերականգնում և ընդարձակում էին կոոպերատիվ շարժումը, հոգ էին տանում ուկրաինական դպրոցի կարիքների և նրա պաշտպանության մասին: Ջարգացնելով ուկրաինական հասարակության այդ «հասարակական ոլորտը», «օրինականները» հույս ունեին, որ դրա շնորհիվ ուկրաինացիներն ավելի լավ պատրաստված կլինեն անկախ պետություն ստեղծելուն, երբ դրա համար դարձյալ հնարավորություն ներկայանա: Այդպիսի կառուցողական, ստեղծագործական, չնայած և ամբողջությամբ ամենօրյա, գործունեությունը հրապուրում էր հիմնականում ուկրաինական հասարակության կայուն տարրերին՝ նախապատերազմյան ժամանակների հասարակական գործիչներին, հոգևորականությանը, մտավորականության մեծ մասին, ունևոր գյուղացիներին:

### Քաղաքական կուսակցություններ

Լեհաստանում, որը քաղաքական առումով անսովոր բազմաշերտ հասարակություն էր իրենից ներկայացնում, 1925 թ.-ի շեմին հաշվվում էր 92 գրանցված քաղաքական կուսակցություն, որոնցից 32-ը ներկայացված էին սեյմում: Ուկրաինացիները ստեղծել էին մոտ մեկ դյուզին քաղաքական կուսակցություններ, որոնք արտացոլում էին ամբողջ գաղափարախոսական սպեկտրը՝ ծայրահեղ ծախսերից մինչև ծայրահեղ աջերը, և ամենաբազմազան քաղաքական ավանդույթները՝ Արևելյան Գալիչիանայի «ավստրիական» ուկրաինացիներից մինչև Վոլինի, Պոլեսայի և Խոլմշչինայի «ռուսական» ուկրաինացիները:

Բայց կար նաև մի խոշոր և ավելի ազդեցիկ կուսակցություն, քան բոլոր մյուսները միասին վերցրած: Դա 1925 թ.-ին մի շարք ոչ մեծ խմբավորումների հետ «Աշխատավորական կուսակցության» միաձուլման ճանապարհով ստեղծված ՌԻՄՄ-ն էր: Չնայած անվանման փոփոխմանը, ՌԻՄՄ-ն մնաց 1918-1919 թ.թ.-ների լեհ-ուկրաինական պատերազմից առաջ և դրա ժամանակ արևմտյան հասարակության մեջ առաջատար դիրքեր գրավող նախապատերազմյան շրջանի դեմոկրատների ամմիջակայն ժառանգորդը: *Լինելով ազատական կուսակցություն, ՌԻՄՄ-ն դավանում էր Ուկրաինայի անկախության և սահմանադրական ժողովրդավարության սկզբունքները:* Չգտելով ուկրաինացիներին պետական անկախությանը նախապատրաստելուն, նա կողմնակից էր «հասարակական զարգացման» և *գյուղատնտեսական բարեփոխումների քաղաքականությանը:* Համեմատաբար ճկուն քաղաքական մարտավարություն կիրառելով, նա ուկրաինա-լեհական հարաբերությունների կարգավորման նախաձեռնողը դարձավ: Սակայն քաղաքականության մեջ «ոսկե միջինին» հետևելու



ձգտումը մշտապես դեմ էր առնում լեհերի պատժիչ գործողություններին՝ մի կողմից, և ուկրաինացի ազգայնական ծայրահեղականների դիմադրությանը՝ մյուս կողմից:

ՈՒԱԴՄ-ն արևմտաուկրաինական «խթբելիշչեննի» (ղեկավարող և արտոնություններ ունեցող խմբավորման) կուսակցություն էր, որն իր շարքերում էր համախմբել ուկրաինական հասարակական գործիչների մեծամասնությանը, հիմնականում՝ մտավորականությանն ու հոգևորականությանը: Այն վերահսկում էր բազմաթիվ ֆինանսական, կոոպերատիվ և մշակութային հաստատությունների, այդ թվում արևմտաուկրաինական ամենաազդեցիկ թերթը՝ «Գործը» («Діло»): Ընտրությունների ժամանակ նա ստացավ ընտրողների մոտ 600 հազ. ձայն, ինչը նրան հնարավորություն տվեց իրեն պահել սեյմում ուկրաինացիներին հատկացված տեղերի զգալի մասը: ՈՒԱԴՄ-ի առավել հայտնի գործիչներն էին *Դմիտրո Լևիցկին, Վասիլ Մուդրին, Ստեֆան Բարանը, Օստայ Լուցկին, Միլենա Ռուդնիցկան, Իվան Կեդրինը:*

Բավականին ուժեղ, թեպետ որոշ չափով թերի էին ուկրաինացիների մեջ սոցիալիստական միտումները: Որպես նրանց հիմնական ներկայացուցիչ հանդես էր գալիս ուկրաինական հնագույն *«Արմատական կուսակցությունը»:* Նրա ծրագրային դրույթները պարունակում էին գյուղացիների միջև հողի արդարացի բաժանման, մասնավոր սեփականության սահմանափակման և պետությունից եկեղեցու անջատման պահանջները: Ընդ որում, ընդգծվում էր, որ այդ բոլոր նպատակներն իրականանալի են միայն բոլոր ուկրաինացիներին անկախ միասնական պետությունում համախմբելու դեպքում: Հատկապես այդ պատճառով 1920-1930-ական թվականներին արմատականները, որ մինչ այդ ԱՌԺՀ-ի բարեհայտ կողմակիցներն էին, հանդես էին գալիս որպես ուկրաինայի անկախության գլխավոր հակառակորդների՝ լեհերի և ԽՍՀՄ-ի, բացարձակ ընդդիմադիրներ:

1930-ական թվականներին «Արմատական կուսակցությունը» մոտ 20 հազ. անդամ ուներ, առավելապես՝ գյուղացիներ, գյուղատնտեսական աշխատավորներ և մասամբ՝ մտավորականներ: 1928 թ.-ի ընտրությունների ժամանակ կուսակցությունը 280 հազ. ձայն հավաքեց: Հիմնավորվելով գլխավորապես Գալիչինայում, արմատականները եռանդուն կերպով իրենց ազդեցությունն էին ընդլայնում Վոլինում, Պոլեսյայում և Խոլմշչինայում: 1926 թ.-ին միավորվելով Վոլինում գործող փոքր թվակազմ ունեցող «Ուկրաինական սոցիալ-հեղափոխական կուսակցության» հետ, նրանք ստեղծեցին «Ուկրաինական սոցիալիստական արմատական կուսակցությունը»: Նրա առավել հայտնի առաջնորդների թվում էին այնպիսի վետերաններ, ինչպիսիք էին *Լև Բաչինսկին և Իվան Մակուխը:* Եթե արմատականներն իրենց ծրագրերում նախապատվությունը տալիս էին ազգային գործունին, ապա մինչպատերազմյան շրջանի սոցիալիստական մյուս կուսակցությունը՝ սակավաթիվ և թույլ սոցիալ-դեմոկրատները՝ *Լև Հանկևիչի գլխավորությամբ, հակված էր կոմունիզմին:*

1920-ական թվականներին Արևմտյան Ուկրաինայի համար բնորոշ երևույթ էր խորհրդայնամետ տրամադրությունների տարածումը: Դա հիմնականում Լեհաստանի նկատմամբ արևմտյան պետությունների ակնհայտ բարյացակամության և ազգային փոքրամասնությունների նկատմամբ լեհական պատժիչ քաղաքականության թողտվության հակազդեցությունն էր: Անշուշտ, արևմտյան ուկրաինացիների վրա ոչ նվազ կարևոր տպավորություն գործեցին խորհրդային Ուկրաինայում ՆԵՊ-ի ժամանակ ուկրաինացման հաջողություններն ու գյուղացիության վերածնունդը: Խորհրդային իշխանությունը ձգտում էր ամեն կերպ քաջալերել այդ տրամադրությունները: Լվովում հյուպատոսներ էր նշանակում ուկրաինացիներին, ամեն կերպ աշխատում էր սիրաշահել արևմտաուկրաինական մտավորականությանը և ուսանողներին՝ գովաբանելով խորհրդային Ուկրաինայի ձեռքբերումները և կոչ անելով գնալ այնտեղ, խոստանալով ջերմ ընդունելություն և պատասխանատու պաշտոններ:

Արդյունքում, խորհրդային Ուկրաինա արտագաղթեցին արևմտաուկրաինական մտավորականության հայտնի շատ ներկայացուցիչներ, այնպիսիք, ինչպես *Միխայլո Լոզինսկին, Անտին Կրուչելնիցկին, Ստեպան Ռուդնիցկին,* ինչպես նաև հարյուրավոր ուսանողներ (համարյա նրանք բոլորը մահացան 1930-ականների բռնությունների ժամանակ): Գիտությունների Համաուկրաինական Ակադեմիայի հետ սերտ կապեր էր պահպանում Լվովի «Շեչեն-կոյի անվան գիտական ընկերությունը», թեպետև նա խորհրդային կառավարության հետ պաշտոնական հարաբերություններ չուներ: Արևմտաուկրաինական կոոպերատիվները տեղեկատվությունների փոխանակություն էին կատարում խորհրդային Ուկրաինայի իրենց գործընկերների հետ: 1923 թ.-ին բացահայտ խորհրդայնամետ դիրքեր էին գրավել Եվին Պետրուշևիչի արևմտաուկրաինական վտարանդի կառավարությունը և ՈՒԱԴՄ-ի ղեկավարության ազդեցիկ անդամները: Այնուամենայնիվ, այս բոլոր միտումները կարճատև էին. նման

տեսակի պատրանքներն անմիջապես հոդս ցնդեցին, երբ Արևմտյան Ուկրաինա թափանցեցին 1930-ականների բռնությունների, սովահարության ու համայնացման սարսափների մասին լուրերը:

Իր ծաղկման շրջանում այդ տրամադրությունները նպաստեցին մի շարք քաղաքական կազմակերպությունների առաջացմանն ու աշխուժացմանը: 1919 թ.-ին մի խումբ գալիցիացիներ՝ Ռուսաստանի նախկին ռազմագերիներ, հիմնեցին «Արևելյան Գալիչինայի կոմունիստական կուսակցությունը»: Երբ 1920 թ.-ին Կարմիր բանակը կարճ ժամանակով օկուպացրեց Գալիչինայի մի մասը, տեղի կոմունիստները (ուկրաինացիներ, լեհեր ու իրեաներ) ձևավորեցին վաղանցիկ «կառավարություն»: 1923 թ.-ին կուսակցությունը վերանվանվեց *«Արևմտյան Ուկրաինայի կոմունիստական կուսակցություն» (ԱՌԿԿ)* և, ենթարկվելով Կոմինտերնի ցուցմունքներին, ինքնավարության իրավունքով մտավ Լեհական կոմունիստական կուսակցության մեջ: Սակայն, այդ դեպքում էլ այս բազմազգ կուսակցության ուկրաինացի առաջնորդները, ինչպես օրինակ Կարոլ Մաքսիմովիչն ու Ռոման Կուզման, շարունակում էին պաշտպանել նրա ուկրաինական բնույթը՝ Մոսկվայի իրենց ղեկավարների համար անհաճո անկախություն ցուցաբերելով: Նրանք եռանդուն կերպով աջակցում էին Շումսկուն և ազգային-կոմունիստական տեսակետները խորհրդային Ուկրաինայում՝ դրանք դարձնելով միջազգային կոմունիստական շարժման սեփականությունը: Այդպիսի դիրքորոշումը վերջիվերջո հանգեցրեց ԱՌԿԿ-ի ուկրաինացի ղեկավարության հեռացմանը, սակայն դա կուսակցությանը չփրկեց ներքին բուռն գծադրություններից: 1938 թ.-ին Ստալինի կարգադրությամբ կուսակցությունը լուծարվեց: 1930-ական թվականներին ԱՌԿԿ-ն ուներ մոտ 4 հազ. անդամ, որոնցից կեսը ուկրաինացիներ էին, մնացածը՝ լեհեր ու իրեաներ:

Լինելով անօրինական, ընդհատակյա կուսակցություն, ԱՌԿԿ-ն 1926 թ.-ին, ժողովրդի աջակցությունը փնտրելով, նպաստեց օրինական, ժողովրդական զանգվածների վրա հենված «Ուկրաինական բանվորագյուղացիական միություն» («Գյուղբան») անունը կրող կազմակերպության ստեղծմանը: Սկզբում այն գլխավորում էին ռուսասեր Կիրիլո Վալնիցկին և վոլինցի ուկրաինացի սոցիալիստ Պավլո Վասիլչուկը: Ներքին գծադրությունները, որոնք ջրի երկու կաթիլի պես նման էին ԱՌԿԿ-ն պառակտող գծադրություններին, շատ արագ այս կազմակերպությունը նա պառակտեցին երկու խմբավորումների, որոնցից մեկը (աջը) պաշտպանում էր ուկրաինական ազգային շահերը, իսկ մյուսը (ձախը) բռնել էր Մոսկվայի կողմը: 1928 թ.-ին, իր վերելքի գագաթնակետին, մոտ 10 հազ. անդամ ունեցող կազմակերպությունը, իր երկու խմբավորումների ուժերով, ընտրություններում հավաքեց մոտ 240 հազ. ձայն: Ընդ որում, նրա կողմնակիցների մեծամասնությունը (գլխավորապես՝ Վոլինից ու Խոլմշչինայից) իրենց ձայները տվել էին աջերին: Սակայն ստալինյան քաղաքականությունը զգալիորեն նպաստեց այդ կազմակերպության ժողովրդականության նվազմանը, այդ պատճառով էլ, երբ 1932 թ.-ին այն լուծարվեց լեհերի կողմից, դա առանձնապես բողոքի տեղիք տվեց:

Ուկրաինական մյուս կուսակցությունները փոքր էին, թույլ և հակված էին լեհական կառավարության հետ համագործակցության: Նրանցից մեկը՝ Հրիհորիյ Խոմիչիցի գլխավորած «Ուկրաինական կաթոլիկական կուսակցությունը», ապարդյուն փորձում էր միավորել կղերական պահպանողականության կողմնակիցներին: Վերջնական անկում ապրած ռուսասերները հիմնեցին Ռուսիական գյուղացիական և Ռուսիական հողագործական կուսակցությունները, որոնք 1931 թ.-ին միավորվեցին: Սակայն, նրանց շարքային շատ անդամների դա էլ ետ չպահեց ուկրաինական քաղաքական կազմակերպությունների մեջ մտնելուց:

### Կոոպերատիվ շարժում

«Հենվիր սեփական ուժերիդ վրա» - այսպիսին էր արևմտյան ուկրաինական հասարակության «հասարակական ոլորտի» գործիչների նշանաբանը: Ի նկատի էր առնվում, որ ինքնահաստատման իրենց ձգտումների մեջ, ոչ ոք (առավել ևս լեհական կառավարությունը) չի աջակցի ուկրաինացիներին: Այդ նպատակին հասնելու լավագույն միջոցներից մեկն ուկրաինացիները համարում էին կոոպերատիվները: Մինչև 1914 թ.-ը կոոպերատիվների հիմնական մտահոգությունը տնտեսական զարգացումն էր: Լեհերի իշխանության օրոք նրանց գործունեությունը զգալիորեն ընդլայնվեց. կոոպերատիվները դարձան ինքնակառավարման դպրոց և տնտեսական ինքնապաշտպանության միջոց: Չափազանց կարևոր է այն, որ կոոպերատիվներում մարդիկ սովորում էին լինել իրենց սեփական հողի տերերը:

Կոոպերատիվ շարժման զարգացմանը նպաստող կարևոր գործոն դարձան ուկրաինական



բանակի հազարավոր վետերանները: Քաղաքական լավ դպրոց անցած և իրենց ուսերին պարտության դառն դասերն ունեցող հայրենասեր վետերանները կոոպերատիվները դիտում էին որպես ուկրաինական գործի համար պայքարը շարունակելու միջոց. «Աշխատելով կոոպերատիվներում, մենք կրկին ազգի զինվորներ ենք դառնում»: Յուրաքանչյուր նոր ստեղծվող կոոպերատիվը, նրա արտադրած յուրաքանչյուր ապրանքը կամ մատուցած ծառայությունը, ամեն մի գրոշը, որ ուկրաինացու և ոչ թե լեհի գրպանն էր դրվում, նրանց աչքում՝ հարված էր թշնամուն և մի քայլ՝ դեպի անկախությունը: Կոոպերատիվ շարժման մեջ մասնակցությունն ուներ նաև զուտ գործնական իմաստ. հաճախ կոոպերատիվները միակ տեղն էին, որտեղ վետերանները կարող էին աշխատանք գտնել:

Կոոպերատիվները շատ արագ միավորվեցին լավ կազմակերպված մի համակարգի մեջ: Վարկային միությունները միավորվեցին Կենտրոնական բանկում, գյուղական սպառողական և վաճառող ընկերությունները՝ Կենտրոնական միությունում, կաթի կոոպերատիվները՝ Յուրամթերքի միությունում, իսկ «ժողովրդական առևտուրը» միավորեց քաղաքային առևտրականներին: *Կազմակերպությունը, որ միավորում էր բոլոր կոոպերատիվները մի համակարգում, իրականացնում էր նրանց ֆինանսական գործարքների ու դրանց փաստաթղթերի վերահսկողությունը և ապահովում էր ընդհանուր ղեկավարումը, կոչվում էր «Ուկրաինական կոոպերատիվների վերստուգիչ միություն» (ՈՒԿՎՄ):* ՈՒԿՎՄ-ի հեղինակությունը շատ բարձր էր շնորհիվ այնպիսի գործիչների արհեստավարության ու անձնվիրության, ինչպիսիք Օստապ Լուցկին և Յուլիան Պավլովսկին էին:

Միջպատերազմական շրջանում կոոպերատիվների գերակշռող ձևը գյուղական սպառողական և վաճառող ընկերություններն էին, քանի որ գյուղացիներին համախմբելով և շուկայում նրանց շահերը ներկայացնելով, օգնում էին հաջողությամբ լուծել գյուղական արտադրողների գլխավոր խնդիրը՝ գյուղատնտեսական արտադրանքի ցածր գների և արդյունաբերական ապրանքների բարձր գների միջև անհամապատասխանությունը: Ամենամեծ հաջողությունների հասան Յուրամթերքների միության կոոպերատիվները, որոնք գերիշխողն էին ոչ միայն արևմտաուկրաինական շուկայում, այլև յուրացրել էին լեհական շուկայի մի մասը:

Կոոպերատիվների ցանցի արագ ընդլայնման մասին է վկայում վիճակագրությունը: Եթե 1921 թ.-ին Արևելյան Գալիչիանում հաշվվում էր մոտ 580 ուկրաինական կոոպերատիվ, ապա 1928 թ.-ին նրանց թիվը հասավ մինչև 2500-ի, 1939 թ.-ի շեմին դրանք արդեն 4 հազ. էին: Երկրորդ համաշխարհային պատերազմի շեմին նրանք միավորել էին մոտ 700 հազ. փայտտերթի և աշխատանքով էին ապահովել 15 հազ. ուկրաինացիների: Ընդ որում, կոոպերատիվների 90 %-ը կենտրոնացած էր Արևելյան Գալիչիանում. Վոլինում, Պոլեսյեում և Խոլմշչինայում ուկրաինացիներին ստիպում էին մտնել լեհական կոոպերատիվ միությունների մեջ: *Այնուամենայնիվ, յուրաքանչյուր ուկրաինացու երկու անգամ ավելի շատ կոոպերատիվ էր ընկնում, քան յուրաքանչյուր լեհի, չնայած նրան, որ վերջինները պետական աջակցություն էին ստանում:*

Բայց և այնպես ուկրաինական կոոպերատիվները լուրջ դժվարությունների էին բախվում: Լեհական կառավարական պաշտոնյաներն անհանգստանալով նրանց բուռն աճով, անում էին ամեն ինչ, որպեսզի խանգարեն ուկրաինական կոոպերատիվների հետագա զարգացմանը: Լեհերի մարտավարությունը հանգում էր մի ամբողջ շարք բյուրոկրատական խոչընդոտների ու մանրախնդիր պատճառաբանությունների՝ հաշվետվության սխալ կազմելու մշտական կասկածամտությունից մինչև կազմակերպական կանոնների խախտումն ու հիգիենայի նորմերը չպահպանելուն: Չնայած իրենց մեծ թվին ու կազմակերպական բարձր մակարդակին, ուկրաինական կոոպերատիվները, համենայն դեպս, զիջում էին լեհականին՝ տնտեսական ցուցանիշներով ու դրամական միջոցներով, ինչը լրջորեն սահմանափակում էր նրանց տնտեսական ազդեցությունը: Բայց և այնպես, չնայած այդ դժվարություններին, *կոոպերատիվ շարժումն արագացնում էր Գալիչիանայի ուկրաինացիների սոցիալական ակտիվացման և ազգային համախմբման գործընթացը, արտացոլելով իրենց գործերն ինքնուրույն ղեկավարելու ունակություններն ու ձգտումները:*

### Կրթությունը

Միանգամայն հասկանալի է, որ կրթության բնագավառը լեհ-ուկրաինական հարաբերություններում ամենացավազին տեղն էր: Ուկրաինացիները հանձինս կրթության տեսնում էին ոչ միայն մշակութային մակարդակի բարձրացման ուղին, այլև ազգային գիտակցության դաստիարակության միջոցը: Լեհերն իրենց հերթին համարում էին, որ լուսավորության

համակարգն ազգային փոքրամասնություններին պետք է դաստիարակի լեհական կառավարության նկատմամբ օրինապահության ոգով: Լեհերը հիմնականում ընդլայնում էին տարրական կրթության համակարգը հատկապես այնպիսի հետամնաց շրջաններում, ինչպես Վոլինը, Պոլեսյեն ու Խոլմշչինան էին: 1930 թ.-ի շեմին Լեհաստանի ուկրաինական տարածաշրջաններում անգրագիտությունը նվազել էր մինչև 28 %-ը (Վոլինում անգրագիտության մակարդակը մնում էր ավելի բարձր): Միաժամանակ, *հետևողականորեն փակվում էին ուկրաինալեզու դպրոցները* (հիմնականում երկլեզու դարձնելու պատրվակով), որոնց մեծ մասը հիմնվել էր դեռևս ավստրիացիների օրոք: 1912 թ.-ին Արևելյան Գալիչիանայում գործող ավելի քան 2400 ուկրաինական տարրական դպրոցներից, 1937 թ.-ին մնացել էին միայն 352-ը: Վոլինում, այդ նույն ժամանակահատվածում, ուկրաինական դպրոցների թիվը 440-ից հասել էր 8-ի: Ոչ պակաս միջաբարական վիճակ էր ստեղծվել նաև միջնակարգ կրթության բնագավառում: 1931 թ.-ին լեհական մեկ զինմագիա էր ընկնում 16 հազ. մարդուն, իսկ մեկ ուկրաինականը՝ 230 հազ.-ին:

*Ուկրաինացիների նկատմամբ խտրականությունը զգալի էր նաև բարձրագույն կրթության մակարդակի վրա:* Կառավարությունը բացի այն, որ այդպես էլ չկատարեց ուկրաինական համալսարան բացելու իր խոստումը, ամեն կերպ խոչընդոտում էր ուկրաինացիներին՝ ստանալու համալսարանական կրթություն: *Ի պատասխան, ուկրաինացիները, առանց իշխանության թույլտվության, 1920 թ.-ին Լվովում հիմնեցին «ընդհատակյա» համալսարան:* Այն իր ունկնդիրներին առաջարկում էր հանպատրաստից դասընթացների լայն ընտրանի, որոնք ստիպված էին յուրացնել գաղտնի պայմաններում: Իր ծաղկման շրջանում այս համալսարանը կազմված էր 3 ֆակուլտետից և 15 ամբիոնից, ուներ 54 դասախոս և այնտեղ սովորում էր մոտ 1500 ուսանող: 1925 թ.-ից հետո, երբ իշխանությունները ցրեցին համալսարանը, նրա ուսանողները կրթությունը շարունակելու զնացին արտասահմանում, հիմնականում՝ Չեխոսլովակիայում: Կրթության բնագավառում խտրական քաղաքականությունն ակնհայտորեն տալիս էր որոշակի արդյունքներ. *կրթված շատ ուկրաինացիներ համակվում էին հակալեհական ռազմատենչ տրամադրություններով և համալրում էին հակակառավարական ընդդիմության շարքերը:*

Միջնակարգ կրթության ոլորտում ուկրաինացիների պահանջարկը ձգտում էր բավարարել «Չայրենի դպրոց» լուսավորչական կազմակերպությունը, որը 1938 թ.-ի շեմին արդեն մոտ 40 զինագիտակներ, լիցենզիա ու մասնագիտական դպրոցներ էր հիմնել: Իր գործունեության համար անհրաժեշտ ծախսերը կազմակերպությունը հիմնականում անդամավճարների (նրա անդամների թիվը 1914 թ.-ի 5 հազ.-ից 1938 թ.-ին հասել էր 100 հազ.-ի), ինչպես նաև ԱՄՆ-ի և Կանադայի վտարանդիների նվիրատվությունների հաշվին էր աճում: Մշակութային ավելի լայն ծրագրերի իրականացումը մնում էր արևմտաուկրաինական բոլոր հասարակական կազմակերպությունների «մայրը» հանդիսացող, բոլորի կողմից հարգանք վայելող «Լուսավորություն» կազմակերպության գլխավոր հոգաբար: 1939 թ.-ին այն ուներ ավելի քան 360 հազ. անդամ: *«Լուսավորությունը»* կազմակերպում էր ընթերցարարների լայն ցանցի գործունեությունը, հրատարակում էր ուսումնական ձեռնարկներ, հիմնում էր մանկապարտեզներ, նախաձեռնում էր ամենատարբեր դասընթացների անցկացումը և այլն:

Գալիցիացիների կազմակերպչական ունակությունը դրսևորվեց նաև այլ բնագավառներում: *Շարունակում էին գործել մինչպատերազմյան շրջանի տարբեր երիտասարդական կազմակերպություններ*, ինչպես օրինակ՝ գյուղում գործող «Сокіл»-ը և «Луг»-ը (հին անվանումը՝ «Січ»): Ընդլայնվեց նաև ավելի ուշ ստեղծված կազմակերպությունների գործունեությունը, ինչպես օրինակ՝ 1911 թ.-ին հիմնված «Піракт»-ը, որը համախմբել էր քաղաքի մտավորականների երեխաներին և նախապատրաստում էր նրանց հասարակական կյանքում կարևոր դիրքեր գրավելուն: «Піракт»-ին ազգայնականության մեջ մեղադրելով, կառավարությունը 1930 թ.-ին արգելեց նրա գործունեությունը:

*Միջպատերազմական շրջանի կարևոր ձեռքբերում էր կանանց շարժման աշխուժացումը:* 1920 թ.-ին ստեղծված «Ուկրաինուհիների միությունը» իր առջև խնդիր դրեց՝ հասարակության մեջ իր արժանի տեղը զբաղեցնող նոր, գրագետ ու զարգացած, ազգայնորեն գիտակից ժամանակակից կնոջ դաստիարակությունը: 1930-ականներին նրանում 45 հազ.-ից ավելի ուկրաինուհիներ էին հաշվվում: Իր նախագահի՝ սեյմի պատգամավոր Միլենա Ռուդ-Ուիցկայի, հմուտ ղեկավարության շնորհիվ միությունը ծավալեց բարեգործական և մշակութային-լուսավորական լայն գործունեություն, ինչպես նաև սերտ կապեր հաստատեց միջազգային ֆեմինիստական կազմակերպությունների հետ:



## Եկեղեցին

Հունա-կաթոլիկական եկեղեցին, անշուշտ, արևմտյան ուկրաինացիների ամենախոշոր, ամենահարուստ և ամենաազդեցիկ հաստատությունն էր: Սակայն այն դերը, որ նա ուներ գալիցյան հասարակության մեջ, զգալի փոփոխություններ էր կրել: Ի տարբերություն XIX դարի, երբ հունա-կաթոլիկական եկեղեցին արևմտյան ուկրաինացիների միակ հաստատությունն էր, միջպատերազմական շրջանում այն դարձավ շատերից մեկը (թեպետև ամենամեծը), և այդպիսով արդեն չէր կարող հույս դնել, առանց բացառության, գալիցյան բոլոր ուկրաինացիների կողմից անվերապահ հեղինակության վրա:

1930-ականների վերջին եկեղեցին իր 3 հազ. ծխական համայնքներում ուներ մոտ 4 մլն ծխական: Նրան էր ենթարկվում նաև երիտասարդական և կանանց կազմակերպությունների մի ամբողջ ցանց, ուներ մի շարք հրատարակչություններ, նույնիսկ քաղաքական սեփական կազմակերպություն՝ «Ուկրաինական կաթոլիկ ազգային կուսակցությունը»: Երիտասարդությանը, հատկապես գյուղականին, ակտիվացնելու իր ունակությունը եկեղեցին ցուցադրեց 1933 թ.-ին, կազմակերպելով «Երիտասարդությունը հանուն Քրիստոսի» հավաքը, որին մասնակցեցին ավելի քան 50 հազ. մարդ: Եկեղեցին նպաստում էր նաև ուկրաինացիների կրթական մակարդակի բարձրացմանը՝ 1928 թ.-ին Լեհաստանում հիմնելով միակ ուկրաինական բարձրագույն ուսումնական հաստատությունը՝ **Լվովի Աստվածաբանական ակադեմիան**, որի ղեկավարը **Յոսիպ Սլիպիյն** էր: Եկեղեցուն պատկանում էր նաև 3 սեմինարիա:

Միջպատերազմական շրջանի իր նվաճումների համար հունա-կաթոլիկական եկեղեցին, անկասկած, պարտական էր միտրոպոլիտ **Անդրիյ Շեպտիցկուն**: Կամքի ուժ, լայն հայացքներ ունենալն ու լավատեսությունը նրան դարձրին արևմտաուկրաինական հասարակության ոչ միայն ամենահարգարժան, այլև ամենաազդեցիկ դեմքը: Միտրոպոլիտի հանրաճանաչության ամրապնդմանը նպաստեցին հունա-կաթոլիկական եկեղեցու նկատմամբ նրա հայացքները, ըստ որի, այն բացարձակ ուկրաինական հաստատություն էր, որի գլխավոր խնդիրը՝ արևելյան եկեղեցական ավանդույթների պահպանումն ու իր ժողովրդի ազգային ձգտումներին սատարելն էր: Դա լուրջ տարածայնությունների հանգեցրեց Շեպտիցկու և եպիսկոպոս Խոմիշինի գլխավորությամբ եկեղեցական նվիրապետության մի մասի ու Վասիլիանական միաբանության միջև, որոնք գերադասում էին կապերն ամրապնդել հռոմեա-կաթոլիկական եկեղեցու հետ և ոչ թե ամրապնդել իրենց եկեղեցու ինքնակայությունը:

Միտրոպոլիտը զգալի ազդեցություն ունեցավ նաև քաղաքական կյանքի վրա: 1930 թ.-ին նա եռանդուն կերպով բողոքում էր հնազանդեցման դեմ, իսկ հինգ տարի անց ակտիվորեն հանդես էր գալիս նորմալացման քաղաքականության օգտին: ՈԻԱԴՄ-ի չափավորների հետ սերտ կապեր պահպանելով, նա խստորեն դատապարտում էր ինչպես ազգայնական ծայրահեղականներին, այնպես էլ կոմունիստներին՝ ավելի բարձր արժեքների ծառայելու և ավելի լայն հայացքներ ունենալու մշտական կոչ անելով նրանց:


Վոլինի, Պոլեսայեի և Խոլմշչինայի ուկրաինացիների մեջ գերիշխող ուղղափառ եկեղեցին ուներ մոտ 2 մլն ծխական: Ի տարբերություն հունա-կաթոլիկական եկեղեցու, այն չուներ Հռոմի աջակցությունը, ուստի և խոցելի թիրախ էր լեհական հալածանքների համար: 1924 թ.-ին, կառավարության պահանջով, Լեհաստանի ուղղափառ եկեղեցին խզեց իր կապերը Մոսկվայի պատրիարքության հետ և հայտարարեց անկախություն (ավտոկեֆալություն): Չնայած եկեղեցական նվիրապետության վերններում դեռևս գոյություն ուներ ռուսասիրական համակրանք, ներքևներում՝ ուկրաիններեն լեզուն ժամասացության, եկեղեցական հրապարակումների և սեմինարիաների ուսուցման գործընթացի մեջ թափանցելուն զուգընթաց, արագ աճում ու ուկրաինական ազդեցությունը: Իրադարձությունների սման զարգացումից անհանգրստացած, լեհական իշխանությունները հետամուտ եղան եկեղեցական արարողությունները լեհերեն լեզվով վարելուն և ուղղափառներին կաթոլիկական հավատի բերելու գործողություններ ծավալեցին, ինչն ուղեկցվում էր ուղղափառ եկեղեցիների վերացումով: Լեհացումը թողեց որոշակի ազդեցություն, մասնավորապես՝ ժամասացություններում, սակայն ուկրաինացիների զանգվածային անցումը կաթոլիկության՝ տեղի չուներգավ:

## Հեղափոխական շարժում

### Նոր ազգայնականություն

Միջպատերազմական ժամանակաշրջանն ուշագրավ է նաև ուկրաինական ազգայնակա-

նության նոր տարատեսակի ի հայտ գալով: XIX դարի մեծամասամբ ազատական կամ սոցիալիստական մտավորականության ազգայնականությունն ազգային ինքնագիտակցության, հայրենասիրության և համամարդկային արժեքների մի անձև խառնուրդ էր: Չնայած նրան, որ այդ շարժումը մեծ որոշակիություն ձեռք բերեց 1917-1920 թ.թ.-ներին, երբ իր գլխավոր նպատակը դարձրեց պետական անկախության հասնելը, նրա գաղափարախոսության առանցքային տեղում, համենայն դեպս, դեմոկրատական և սոցիալիստական սկզբունքներն էին: Զարմանալի չէ, որ անկախության համար պատերազմում ուկրաինացի շատ քաղաքագետներ բախվում էին անլուծելի հակասություններին, որոնք ծնունդ էին առնում ազգային և



Միտրոպոլիտ Անդրիյ Շեպտիցկի

սոցիալիստական նպատակների միջև ընտրություն կատարելու անհրաժեշտությունից: Եվ ահա, 1920-ական թվականներին երիտասարդ ուկրաինացիների մեջ սկսեց բավականաչափ ուժ հավաքել ազգայնականության ծայրահեղ տարբերակը (որն այդ ժամանակ բնորոշ էր նաև եվրոպական շատ այլ ժողովուրդների համար), որը ստացել էր **արմատական ազգայնականություն** անվանումը:

Ուկրաինական արմատական ազգայնականության առաջացումն ու զարգացումն ամենից առաջ կապված է 1917-1920 թ.թ.-ների ազատագրական պայքարի ծախսողման հետ: Ինչպես նշում էր Ալեքսանդր Մոտիլը՝ «**ուկրաինական ազգայնականությունն իր էությանը ուկրաինական պետականության կործանման պատճառը հասկանալու և այն վերականգնելու ձևը գտնելու մի փորձ էր**»: Համոզված լինելով, որ սոցիալիզմն ու դեմոկրատիզմն իրենց վարկաբեկել են կուսակցական գծություններով ու տարածայնություններով, ապաշնորհ դեկավարությամբ և կուսակցության գործողությունների միասնության բացակայությամբ, որոնք վերջին հաշվով պարտության են տանելու, պատերազմի երիտասարդ վետերանները հրաժար-



վեցին հին իդեալներից: Փոխարենը, նրանք առաջարկում էին իրենցը, կոչ անելով *ստեղծել ուկրաինացու նոր տեսակ, որն ամբողջովին նվիրված կլինի միայն մեկ սրբության՝ իր ազգին, և կծառայի միայն մեկ նպատակի՝ անկախ պետության ստեղծմանը*: Այս հայացքներն ավելի ավարտուն և ամփոփ տեսքով շարադրեց նախկին սոցիալիստ, Արևելյան Ուկրաինայից վտարանդի *Դմիտրո Դոնցովը*, որը դարձավ ուկրաինական արմատական ազգայնականության առաջին գաղափարախոսը:

### Գաղափարախոսություն

Ուկրաինական արմատական ազգայնականությունն իր հիմքում չունեցրեց գաղափարների մանրամասն մշակված համակարգ, այն ավելի շուտ հենվում էր մի շարք կարևոր հասկացությունների վրա, որոնց նպատակը *ոչ թե իրականությունը պարզաբանելն էր, այլ մարդուն գործողությունների դրոշմը*: Դոնցովը պնդում էր, որ կատարյալ արժեք հանդիսանում է ազգը, և այդ պատճառով չկա ավելի մեծ նպատակ, քան պետական անկախության հասնելն է: Քաղաքականությունը տեսակների գոյատևման դարվիչյան պայքարի յուրօրինակ մարմնավորում է, այդ պատճառով էլ ժողովուրդների միջև բախումներն անխուսափելի են: Դրանից հետևում է, որ *նպատակն արդարացում է միջոցները, կամքը գերիշխում է առողջ դատողությանը, իսկ գործողությունը գերադասելի է սպասումից*: Իրենց հայացքներն ավելի հրապուրիչ դարձնելու համար, արմատական ազգայնականներն առասպելաբանական էին դարձրել ուկրաինական պատմությունը՝ ստեղծելով պայքարի, անձնագրողության և ազգային հերոսության պաշտամունքներ: Արմատական ազգայնականների գաղափարախոսության մեջ երբեմն սպորտում էր ռասիզմն ու հակասեմիտիզմը, սակայն, ամբողջությամբ վերցրած, դրանք գիտակցաբար չէին շեշտվում:

Արմատական ազգայնականությունը *քարոզում էր կոլեկտիվիզմ*, համաձայն որի ազգի շահերը վեր էին դասվում անհատի շահերից: Միաժամանակ, իր կողմնակիցներին կոչ էր անում դաստիարակել այնպիսի «ուժեղ անհատականություններ», որոնք ոչ մի բանի առաջ կանգ չեն առնում իրենց նպատակներին հասնելու համար: Նպատակներից մեկը՝ ազգը դասակարգերի, կուսակցությունների կամ տարածաշրջանային խմբավորումների բաժանելուց հրաժարվելն ու միասնական, կուռ ամբողջություն դարձնելն էր: Այստեղից էլ հենց՝ այդ շարժման ամեն ինչ ընդգրկող բնույթը, այն առանձնահատուկ նշանակությունը, որը նա տալիս էր համախմբման (ազգային միասնականության) սկզբունքին, տարածաշրջանայինը չընդունելն ու հասարակության կենսագործունեության բոլոր ոլորտներն իրեն ենթարկելու նրա ձգտումը: Արմատական ազգայնականությունը համակված էր իր համար դեպի «ազգային կյանքի բոլոր ոլորտները, նրա բոլոր անկյունները, բոլոր հաստատությունները, կազմակերպությունները, խմբավորումները, յուրաքանչյուր քաղաք և գյուղ, յուրաքանչյուր ընտանիք» ճանապարհ հարթելու գաղափարով: Ազգի բոլոր կենսակերպերի մենաշնորհն ունենալու ձգտման հետ, առաջ եկավ նաև այլախոհության նկատմամբ անհանդուրժողությունը: Միանգամայն համոզված, որ իրենց հայացքները ազգային նպատակներին հասնելու միակ ճիշտ ուղին է, արմատական ազգայնականները պատրաստ էին պատերազմ հայտարարել ցանկացած մեկին, ով, իրենց կարծիքով, այլ ուղու վրա էր կանգնած:

Ոչ Դոնցովը, ոչ էլ շարժման մյուս գաղափարախոսները հստակ պատկերացում անգամ չունեին, թե ինչ տեսակի պետություն և ինչ հասարակություն պետք է ձևավորվեին անկախություն ձեռք բերելուց հետո: Նրանք շատ քիչ բան կարող էին ասել նաև նրա սոցիալատնտեսական կառուցվածքի մասին, նշելով միայն, որ հիմնականում այն պետք է լինի հողագործական երկիր, իսկ հարաբերությունները նրանում հիմնված կլինեն պետության, կոոպերատիվների և մասնավոր կապիտալի համագործակցության վրա: Քաղաքական համակարգի հիմքում դրված էր միակ, այն է՝ ազգայնական կուսակցության կողմից կառավարման սկզբունքը: «Մարտիկների», կամ «լավագույն մարդկանց» հիերարխիան կազմում էր այդ կուսակցության հիմնամասն ու ղեկավար կազմը: Շարժման և ապագա պետության գլուխ կանգնած էր գերագույն ղեկավարը՝ անսահմանափակ և անառարկելի իշխանություն ունեցող առաջնորդը:

Միանգամայն ակնհայտ է, որ ուկրաինական արմատական ազգայնականությունն իր մեջ ֆաշիզմի և տոտալիտարիզմի տարրեր էր կրում: Նման միտումները 1920-ական թվականներին լայն տարածում ունեին Եվրոպայում, իսկ նրանց ազդեցությունը, մասնավոր իտալական ֆաշիզմի, հատկապես զգալի էր Արևելյան Եվրոպայում: Սակայն, ինչպես նշում է Իվան Լիսյակ-Ռուդնիցկին, արևմտյան ֆաշիզմը, որ երևան էր եկել քաղաքային, արդյունա-

բերական միջավայրում, ուկրաինական արմատական ազգայնականության հետ ազգակցական ոչ մի կապ չունեց: Վերջինն ավելի մոտ էր արևելաեվրոպական հողագործական երկրներում երևան եկած այնպիսի աջ-արմատական շարժումներին, ինչպիսիք էին «Երկաթյա գվարդիան»՝ Ռուսինիայում, «Ուստաշին»՝ Խորվաթիայում, «Նետ և խաչք»՝ Յուգոսլավիայում և համապատասխան շարժումները Սլովակիայում ու Լեհաստանում: Վերջին հաշվով, կարելի է ենթադրել, որ ուկրաինական արմատական ազգայնականությունն անկախ ծագում ուներ և արմատավորվում էր իր սեփական հասարակության մեջ: *Չհամակերպվելով Լեհական և խորհրդային իշխանության տակ ապրող ուկրաինացիների ողբերգական ճակատագրի հետ, կորցնելով հավատը օրինական ավանդական մեթոդների նկատմամբ, հիասթափվելով արևմտյան ժողովրդավարությունից, որը ճգնաժամ էր սպրում և ականջալուր չէր ուկրաինացիների օգնության աղաչանքներին, ուկրաինական արմատական ազգայնականները համարում էին, որ գոյություն ունեցող իրադրությունից իրենք սպասելու ոչինչ չունեն, ուստի հարկ է արմատական միջոցներ կիրառել՝ այն փոխելու համար*:

### Կազմակերպություն

Դեռևս մինչև արմատական ազգայնական շարժման գաղափարախոսության վերջնական ձևավորումը, ապագա արմատական ազգայնականների առանձին ցրված խմբեր հայտնվեցին Գալիչինայում և ավելի շատ՝ Չեխոսլովակիայի վտարանդիների մեջ: 1920 թ.-ին Պրահայում սպաների մի ոչ մեծ խումբ հիմնեց *«Ուկրաինական զինվորական կազմակերպություն» (ՈՒԶԿ)*, որը գործում էր գաղտնի և իր առջև նպատակ էր դրել շարունակել պայքարը Լեհական օկուպացիայի դեմ: Շուտով ՈՒԶԿ-ի հրամանատար ընտրվեց անկախության համար պայքարի նշանավոր գործիչ, Արևելյան Ուկրաինայի բանակի «սիչյան հրաձիգների» նախկին հրամանատար *Եվհեն Կոնովալեցը*: Լինելով հիանալի կազմակերպիչ, նուրբ և ճկուն քաղաքագետ, նա շատ արագ դարձավ միջպատերազմական շրջանի արմատական ազգայնականների աներկբա առաջնորդը:

Սկզբում ՈՒԶԿ-ն համապատասխան հրամկազմով զուտ զինվորական կազմակերպություն էր: Այն Գալիչինայի գորացրված վետերաններին և Չեխոսլովակիայի ներկալված զինվորներին *գաղտնի կերպով նախատրաստում էր հակալեհական հնարավոր ապստամբությանը, ինչպես նաև՝ օկուպացված տարածաշրջաններում Լեհերի դիրքի ապակայունացմանն ուղղված գործողություններ էր ծավալում*: ՈՒԶԿ-ի առավել հայտնի գործողություններից են՝ 1921 թ.-ին Ստեպան Ֆեդակի կողմից Լեհական կառավարության ղեկավար Պիլսուդսկու դեմ անհաջող մահափորձը, և 1922 թ.-ի մի մեծ շարք նենգադուլները: Մոտ 2 հազ. անդամ ունեցող կազմակերպությունը կապեր էր պահպանում ուկրաինական վտարանդի երկու կառավարությունների հետ և իր գործունեության համար գաղտնաբար միջոցներ էր ստանում արևմտաուկրաինական քաղաքական կուսակցություններից:

1923 թ.-ին ՈՒԶԿ-ի վիճակը կարուկ վատացավ: Այն բանից հետո, երբ դաշնակից երկրները ճանաչեցին Արևելյան Գալիչինայի նկատմամբ Լեհաստանի իշխանությունը, արևմտյան շատ ուկրաինացիներ պայքարը շարունակելու նպատակահարմարության վերաբերյալ կասկածներ ունեցան: ՈՒԶԿ-ի շարքերը լքեցին կազմակերպության շատ անդամներ: Սակայն ՈՒԶԿ-ն հրաժարվում էր փոխել իր մարտավարությունը, ինչի հետևանքով նրանից երես թերեցին ահաբեկչությունը մերժող օրինական կազմակերպությունները: Կոնովալեցը և կազմակերպության անդամների մեծամասնությունը, ուսիականության հետապնդումներից փրկվելով, ստիպված էին շտաբը տեղափոխել արտասահման:

Ճգնաժամը, որն ապրեց ՈՒԶԿ-ն, նպաստեց նրա գործունեության ընդհանուր վերակողմնորոշմանը: Քաղաքական և ֆինանսական աջակցության համար Կոնովալեցը դիմեց արտասահմանյան պետություններին, առաջին հերթին՝ Լեհաստանի գլխավոր հակառակորդներին՝ Գերմանիային ու Լիտվային: Իր նուսրացած շարքերը համալրելու համար ՈՒԶԿ-ն Արևելյան Ուկրաինայում հավաքագրեց զինմագիական և ուսանողական երիտասարդությանը: Իր գաղափարների տարփողման համար անօրինական ճանապարհով արտասահմանից այստեղ էր բերում *«Սուրմա» («Շեփոր»)* ամսագիրը: Առավել կարևորն այն էր, որ *ՈՒԶԿ-ն, մտադրություն ունենալով ստեղծել ազգայնական ավելի մեծ կազմակերպություն, հարաբերությունների մեջ էր մտնում ուսանողական մի շարք խմբերի հետ*, ինչպիսիք էին օրինակ՝ «Ուկրաինական ազգայնական երիտասարդությունն» ու «Ուկրաինական ազգայնականների լիգան»՝ Պրահայում և Պոդեբրադներում (Չեխոսլովակիա), ինչպես նաև «Ուկրաինական ազգայնական երիտասարդական միությունը»՝ Լվովում: Մի շարք նախապատրաստական



կոնֆերանսներ անցկացնելուց հետո, ՌԻԶԿ-ի և ուսանողական խմբերի ներկայացուցիչները 1929 թ.-ին հավաքվեցին Վիեննայում և հիմնեցին «**Ուկրաինական ազգայնականների կազմակերպությունը**» (ՌՄԱԿ): ՌՄԱԿ-ը հիմնականում կազմված էր գալիցյան երիտասարդությունից, իսկ **Կոնովալեցն** ու նրա զինակիցները կազմակերպությունը ղեկավարում էին արտասահմանից:

Այն դերը, որին հավակնում էր ՌՄԱԿ-ը, զգալիորեն ավելի մեծ էր, քան այն, որ ուներ ՌԻԶԿ-ն: Իր նախորդի նման, ՌՄԱԿ-ը մնում էր որպես «գաղտնի բանակ»: Նա հավատարիմ էր մնում ղեկավարման հին սկզբունքներին, գաղտնի գործունեությանն ու խիստ կարգապահությանը, ինչպես նաև շարունակում էր քաղաքական ահաբեկչությունը՝ լեհական կառավարության և նրա ներկայացուցիչների դեմ: Սակայն, միաժամանակ, նա ձգտում էր կազմակերպել և գլխավորել լայնածավալ հեղափոխական շարժում, որի գլխավոր նպատակն ուկրաինական արմատական ազգայնականության նպատակներին հասնելն էր: Մեծ ջանքեր էր թափում իր հայացքները հատկապես երիտասարդության մեջ տարածելու և արևմտաուկրաինական հասարակական, քաղաքական և տնտեսական կազմակերպություններում առաջնությունը նվաճելու համար: Այն ուկրաինացիները, որոնք խոչընդոտում էին ՌՄԱԿ-ի ծրագրերի իրականացմանը, հայտնվում էին ահաբեկչության սպառնալիքի տակ ճիշտ այնպես, ինչպես լեհական պաշտոնյաները:


Անկասկած, ՌՄԱԿ-ի ամենամեծ ձեռքբերումը՝ ուկրաինական երիտասարդությանը իր գաղափարներով հրապուրելու ունակությունն էր: Նրա հակվածությունը հեղափոխական գործողություններին, արմատական որոշումներին և «գերուկրաինացու» նոր տեսակ դաստիարակելու նրա կոչը հասկանալի ու մոտ էին երիտասարդությանը, որն իրեն լեհական իշխանության կողմից հիմարացված վիճակում էր գտնում, գործազրկության պատճառով հուսահատության էր հասել և հիասթափված էր ավագ սերնդի անհաջողություններից: Սկզբում ՌՄԱԿ-ի մեջ էին մտնում հիմնականում գալիցյան ուսանողներն ու բարձր դասարանների զիննազիականները: Լեհաստանի և արտասահմանի համարյա յուրաքանչյուր միջնակարգ դպրոցում ու համալսարանում, որտեղ ուկրաինացիներ էին սովորում, գործում էին ՌՄԱԿ-ի քիչ չէին: Բոհդան Կրավցիվի, Ստեպան Լենկավսկու, Ստեպան Օխրիմովիչի, Իվան Զրաբրուսևիչի և Վոլոդիմիր Յանիվի գլխավորած ազգայնականների իսկական ակունք դարձավ Լվովի համալսարանի ուկրաինացի ուսանողների «Ակադեմիական օջախը»: Վերադառնալով հարազատ վայրերը, երիտասարդները նպաստում էին գյուղում արմատական ազգայնականության գաղափարների տարածմանը:

Զգտելով ընդլայնել իր ազդեցությունը, ՌՄԱԿ-ը թափանցում էր տնտեսական, լուսավորական և երիտասարդական տարբեր կազմակերպություններ, կազմակերպում էր հայրենասիրական զանգվածային ցույցեր, ուսանողական բողոքներ և լեհական ապրանքների բոյկոտ, հրատարակում էր բազմաթիվ թերթեր ու գրքույկներ, իր գաղափարները եռանդուն կերպով տարածում էր Գալիչինայի և Վոլինի ուսանողների, բանվորների ու գյուղացիների մեջ: Այս գործունեության համար նա հենվում էր երիտասարդ շատ տաղանդավոր պոետների աջակցության վրա, ինչպես օրինակ՝ Եվհեն Մալանյուկի, Օլեհ Օլժիչ-Կանդիբայի, Օլենա Տելիհայի, Բոհդան Կրավցիվի: Արմատական ազգայնական հայացքների տարփողման համար հիմնական ամբիոն էր ծառայում Պրահայի «Ազգի կառուցում» ամսագիրը: Հետզհետե արմատական ազգայնականների ազդեցության տակ ընկան մի շարք այլ հրատարակություններ:

Թեպետ ՌՄԱԿ-ի անդամների թիվը ճշտելը շատ դժվար է, սակայն հայտնի է, որ երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրեին, մոտավոր գնահատմամբ, այն կազմում էր մոտ 20 հազ., իսկ համակիրների թիվը զգալիորեն մեծ էր: Ամեն դեպքում, նրա շարքերում եռանդուն, իդեալիստորեն տրամադրված, գործին նվիրված երիտասարդների գերակշռությունը ՌՄԱԿ-ին շատ արագ դարձրեց միջպատերազմական շրջանի ուկրաինական քաղաքական կյանքի առավել զորեղ շարժիչ ուժը:

1930-ական թվականներին ՌՄԱԿ-ը շարունակում էր իր «պատերազմը» լեհական ռեժիմի հետ, հարձակումներ կատարելով կառավարական հաստատությունների և փոստային գրասենյակների վրա և այդ ճանապարհով իր գործունեության համար միջոցներ ձեռք բերելով: Շարունակվում էր նաև պետական գույքի ոչնչացման և քաղաքական սպանությունների գործընթացը: Սակայն ՌՄԱԿ-ը (ինչպես և ՌԻԶԿ-ն) բռնություններն ու ահաբեկչությունը ինքնանսպատակ չէր համարում: Կազմակերպության անդամները հավատացած էին, որ իրենք վարում են ազգային-ազատագրական պայքար՝ հեղափոխական մեթոդներով, ինչպես դա

անում էին «Շիճն ֆեյն» հակաանգլիական կազմակերպության իռլանդացիները, կամ դեռևս պատերազմից առաջ ռուսների դեմ մարտնչող, ընդհատակյա գործող Պիլսուդսկին և իր ընկերները: Այդպիսի մարտավարության անմիջական նպատակը՝ դիմադրություն ցույց տալու հնարավորության մեջ ուկրաինացիներին համոզելը և ուկրաինական հասարակությանը «հեղափոխական մշտական խռովքի» մեջ պահելն էր: Միայն ինչպիսի գարգացում էր ունենում «հարատև հեղափոխության» այդ տեսակետը 1930 թ.-ի ազգայնական հրատարակություններից մեկում. «Անհատական ահաբեկումների և պարբերական զանգվածային ելույթների միջոցով բնակչության լայն խավերին կիրապուրենք ազատագրման գաղափարներով և նրանց կներգրավենք հեղափոխականների շարքերը... Միայն մշտական գործողություն-



Եվհեն Կոնովալեց

ներով կկարողանանք պահպանել օկուպացիոն իշխանության դեմ բողոքի ոգին և մարդկանց դաստիարակել այդ ոգով, խորացնել թշնամու նկատմամբ նրանց ատելությունը և վերջնական հատուցման ձգտումը: Չի կարելի թույլ տալ, որ մարդիկ ընտելանան կապանքներին, որ իրենց հարմարավետ զգան թշնամի պետությունում»:

1930-ական թվականների սկզբին ՌՄԱԿ-ի անդամները ոչ միայն հարյուրավոր եննգադուլներ ու պետական ունեցվածքի տասնյակ «սեփականագրվումներ» էին արել, այլև իրականացրել էին 60-ից ավելի ահաբեկչական գործողություն, որոնց մեծ մասը հաջողվել էր: Նրանց ամենակարևոր զոհերից էին՝ լեհ-ուկրաինական փոխգիջման հայտնի լեհ կողմնակից Տադեուշ Գոլուվկոն (1931 թ.), Լվովի լեհական ոստիկանության կոմիսար Էմիլիան Չեխովսկին (1932 թ.), ի պատասխան 1932-1933 թ.թ.-ների սովահարության սպանված՝ Լվովի խորհրդային հյուպատոսության աշխատակից Ալեքսեյ Մայլովը (1933 թ.), 1930 թ.-ի հնազանդեցման համար ՌՄԱԿ-ի կողմից մահվան դատապարտված Լեհաստանի ներքին գործերի նախարար Բրոնիսլավ Պերացկին (1934 թ.): Շատ մահափորձեր արվում էին ՌՄԱԿ-ին



հակառակորդ ուկրաինացիների դեմ: Դրանցից **ամենաաղմկահարույցը** 1934 թ.-ին ուկրաինացի հայտնի մանկավարժ Իվան Բարիի սպանությունն էր:

*Սակայն դիմակայության և բռնության քաղաքականությունը ՌԿԿ-ի վրա թանկ մատեց:* 1930թ.-ին ոստիկանության մի գործակալ սպանեց ՌԿԿ-ի մարտական խմբի հրամանատար **Յուլիան Յուլովսկու**։ Մեկ տարի անց լեհերը **մահապատժի** ենթարկեցին երկու երիտասարդ բանվորների՝ **Վասիլի Բիլասին** և **Դմիտրո Դանիլիչինին**, որոնք «սեփականագրվումներից» մեկի ժամանակ սպանել էին լեհ պաշտոնյայի: Պերացկու սպանությունից հետո լեհական ոստիկանությունը հատուցման լայնածավալ գործողություններ իրականացրեց, որոնց արդյունքում բանտարկվեցին **Գալիչինայում** ՌԿԿ-ի երկրամասային ղեկավարությունը, այդ թվում մահափորձի կազմակերպիչներ **Ստեպան Բանդերան** և **Միկոլա Լեբիզը**: Հրապարակային մի շարք դատավարություններից հետո երիտասարդ առաջնորդները երկարաժամկետ բանտարկությամբ հայտնվեցին **Բերեզա Կարտուզկայի** համակենտրոնացման ճամբարում և լեհական այլ կալանավայրերում: Նրանց միացան այդ նույն ժամանակ բռնված ՌԿԿ-ի հարյուրավոր շարքային անդամներ:

Այս կորուստներն ընդամենը ՌԿԿ-ին հետապնդող անհաջողությունների մի մասն էին: Շատ շուտով հայտնի դարձավ, որ կազմակերպությունում գործում են ոստիկանական գործակալները, ինչին կարելի էր սպասել, երբ ՌԿԿ-ը սկսեց զանգվածային հավաքագրումներ ձեռնարկել: Ավելի վիստեցուցիչ հանգամանք էր ՌԿԿ-ի աճող քննադատությունը հենց ուկրաինացիների կողմից: Հասարակական, մշակութային, երիտասարդական կազմակերպությունները դժգոհում էին նրանց իրեն ենթարկելու: ՌԿԿ-ի մշտական փորձերից: Քաղաքական օրինական կազմակերպությունները արմատական ազգայնականների մեղադրում էին նրանում, որ իրենց գործունեությամբ նրանք առիթ են տալիս կառավարությանը սահմանափակելու ուկրաինացիների օրինական գործունեությունը: Եվ վերջապես, միտրոպոլիտ **Շեպտիցկին** խստորեն դատապարտեց ՌԿԿ-ի «բարոյազանց» վարքը: *Փոխադարձ մեղադրանքներն ու կշտամբանքները սերունդների՝ «հասարակական ոլորտն» օրինականորեն ծավալող հայրերի և հեղափոխական ընդհատակում մարտնչող զավակների, հարաբերություններում աճող լարվածության արտացոլումն էր:*

Սերունդների միջև լուրջ տարածայնություններն իրենց ներգործությունն ունեցան նաև ՌԿԿ-ի, հատկապես՝ նրա ղեկավարության վրա: Շարժումն արտասահմանից ղեկավարում էին մինչպատերազմյան, «քաղաքակիրթ» ավագ սերնդի ներկայացուցիչները, տարիքի և ձեռք բերած փորձի շնորհիվ ավելի մեղմ ու չափավոր եվիեն Կոնովալեցն ու 1917-1920 թ.թ.-ների նրա զինակիցները՝ **Դմիտրո Անդրիակին**, **Օմելյան Սենիկը**, **Միկոլա Սցիբորսկին** և **Ռոման Սուշկոն**: ՌԿԿ-ի շատ մեթոդներ, հատկապես սպանությունները, նրանք վերապահորեն էին ընդունում, սակայն իրենց ենթակաների գործունեությունը հեռավորության վրա վերահսկելը նրանց համար գնալով ավելի էր դժվարանում: *Բռնի միջոցներից չհրաժարվելով հանդերձ, Կոնովալեցն ու նրա շրջապատը այնուամենայնիվ նախընտրում էին ուժերը կենտրոնացնել արտասահմանյան երկրներից, առաջին հերթին՝ Գերմանիայից աջակցություն ստանալու նոր ուղիներ փնտրելու վրա:*

Ի հակադրություն նրանց, **Գալիչինայի ՌԿԿ-ի երկրամասային ղեկավարությունը**, որն ըստ ամենայնի պետք է ենթարկվեր **Կոնովալեցին** ու **նրա մարդկանց**, **նախընտրում էր հեղափոխական գործունեությունը**: Գալիչինայի ՌԿԿ-ի երկրամասային շտաբի կազմում էին **Ստեպան Բանդերան**, **Միկոլա Լեբիզը**, **Յարոսլավ Ստեցկոն**, **Իվան Կլիմիլը**, **Միկոլա Կլիմիչինը** և **Ռոման Շուկևիչը**: Նրանք հազիվ քսանն անց էին, չէին մասնակցել անկախության համար պատերազմին և մեծացել էին լեհական տիրապետության ճնշող մթնոլորտում: Երիտասարդությունը և մշտական դիմակայությունը օտարերկրյա իշխանությանը, նրանց տրամադրում էր բռնությունների ու հերոսական գործողությունների, իսկ արտասահմանում ապրող ավագների հայացքների հարաբերական չափավորությունը (և ավելի հարմարավետ ապրելակերպը) նրանց մոտ արհամարհանք էր առաջացնում: Դժգոհությունը սաստկացավ 1934 թ.-ին, երբ գալիցյան ամբողջ ղեկավարությունը ձերբակալվեց և շշուկներ սողոսկեցին, թե այդ ձախողումը ՌԿԿ-ի արտասահմանյան ղեկավարների վատ աշխատանքի և նույնիսկ որոշ ղեկավար անդամների դավաճանության հետևանքն է:

Կոնովալեցի հեղինակությունը, վարկն ու դիվանագիտական ունակությունները կարողացան ժամանակավորապես կանխել անխուսափելի թվացող բախումները: *1938 թ.-ին Ռոտերդամում խորհրդային գործակալի ձեռքով Կոնովալեցի սպանությունը մեծագույն կորուստ էր ազգայնական շարժման համար:* Պատմական աշխարհացունց իրադարձությունների

նախօրեին ՌԿԿ-ը մնաց առանց փորձառու և, որ ամենակարևորն է՝ բոլորի կողմից ճանաչված առաջնորդի: Չնայած դրան, կազմակերպությունը ոչ միայն չկազմալուծվեց, այլև շարունակեց ընդլայնվել, ինչը վկայում է նրա շարքային անդամների կարգապահության, առաջընթացի և գործին անմնացորդ նվիրված լինելու մասին:

## Ուկրաինացիները Ռուսինիայի իշխանության տակ

Մյուս պետությունը, որ կարողացավ օգտվել 1918-1919 թ.թ.-ների քառսից և Ուկրաինայի տարածքից մի խոշոր պատառ ճանկել, Ռուսինիան էր: Ռուսինական վիճակագրության համաձայն, 1920 թ.-ին այդ պետության տարածքում ապրում էր մոտ 790 հազ. ուկրաինացի, ինչը կազմում էր ամբողջ բնակչության 4,7 %-ը: Ուկրաինացիները կազմել էին իրարից տարբերվող երեք խումբ: Նրանցից մեկը, մոտ 450 հազ. մարդ, բնակեցնում էր երկրի հարավ-արևելքը, Ռուսաստանի նախկին նահանգ **Բեսսարաբիան** (ներկայիս Մոլդովան), որը ելք ուներ դեպի Սև ծով: *1919 թ.-ին այստեղ՝ Խոտինի շրջանում, բուլշիկների գլխավորությամբ տեղի ունեցավ չքավոր գյուղացիության հակառուսինական ապստամբությունը, որի ճնշումից հետո ուկրաինացիներն այլևս քաղաքական հատուկ ակտիվություն չցուցաբերեցին:* Ուկրաինացիների ոչ մեծ մյուս խումբը բնակվում էր **Մարամորոշում**, հունգարական նախկին տարածաշրջանում, և նույնպես քաղաքականապես անգործուն էր: Ուկրաինական խմբակցության երրորդ և առավել գործունյա խումբը ներկայացնում էին **Բուկովինայի** մոտ 310 հազ. ուկրաինացիները: Ռուսինական օկուպացիան նրանց քաղաքական խորը բարոյալքման հասցրեց: Ավստրիացիների իշխանության ժամանակ Բուկովինան ինքնավար նահանգ էր, իսկ ուկրաինացիները, որպես նրա ամենամեծ ազգային խմբավորում, ունեին համեմատաբար ուժեղ քաղաքական ներկայացուցչություն Վիեննայում, տեղական լայն ինքնիշխանություն և ուկրաինալեզու կրթության զարգացած համակարգ: Ռուսինացիների գալով այս ամենը կորցրեցին: *Բուկովինացիները, որ ամենաշատ օգուտներ և իրավունքներ ունեցող արևմտյան ուկրաինացիներն էին, այժմ դարձան նրանցից ամենաճնշվածները:*

Իր բազմաթիվ ազգային փոքրամասնությունների նկատմամբ **ռուսինական իշխանության անհանդուրժողականությունն ավելի մեծ էր, քան նույնիսկ լեհերինը**: 1920 թ.-ից հետո, երբ արևմտյան դաշնակիցները օրինականորեն ճանաչեցին Բուկովինայի նկատմամբ Ռուսինիայի պահանջատիրությունը, կառավարությունը վերացրեց ուկրաինական բոլոր դպրոցները և նույնիսկ հրաժարվեց ուկրաինացիներին որպես առանձին ազգ ճանաչելուց: Դպրոցների ռուսինացմանն ուղղված 1924 թ.-ի կրթական չափորոշիչների համաձայն՝ ուկրաինացիները «մայրենի լեզվից զրկված, ռուսինական ծագում ունեցող քաղաքացիներ էին»: 1927 թ.-ի շեմին Բուկովինայի նախկին ինքնավարության բոլոր հետքերը վերացված էին, և այն ընդամենը դիտարկվում էր որպես Ռուսինիայի նահանգներից մեկը:

Ուկրաինացիների նկատմամբ ռուսինական 22-ամյա տիրապետությունը կարելի է բաժանել երեք պարզորոշ սահմանագատված շրջանների: Առաջին շրջանում՝ 1918 թ.-ից 1928 թ.-ը ներառյալ, ռուսինական կառավարությունը նահանգում պատերազմական դրություն հաստատեց: Իրավունքների կոպիտ ոտնահարումն ու մշակույթի ռուսինացումը, ավստրիական կանոնակարգված սահմանադրական համակարգին սովոր բուկովինյան ուկրաինացիներին շփոթվածության ու հոգեկան ցնցման մեջ գցեցին: Նրանք որոշ չափով աշխուժացան 1928-1938 թ.թ.-ների համեմատաբար ազատական շրջանում: Սակայն 1938 թ.-ին, երբ Ռուսինիայում իշխանությունն իր ձեռքը վերցրեց գիմվորական ոսմակը, ինչպես և Լեհաստանի դեպքում, դա նշանակում էր նոր շրջանի՝ ֆաշիստական ռեժիմի և նոր հալածանքների սկիզբը:

Հանգամանքներն այնպիսին էին, որ ուկրաինացիների հասարակական և մշակութային գործունեության որոշ աշխուժացում, այն էլ սահմանափակ շրջանակներում, հնարավոր դարձավ միայն կարճ ժամանակ՝ 1928-1938 թ.թ.-ների շրջանում: Միանգամայն հասկանալի է, որ Բուկովինայի ուկրաինական ոչ մեծ խմբակցությունը ռուսինական իշխանության գործողություններին արձագանքեց ճիշտ այն ձևով, ինչպես ուկրաինացիները Լեհաստանում: Սոցիալական ավելի լավ դիրք գրավող նրա ավագ սերնդի անդամները հակված էին օրինական «հասարակական» աշխատանքին և ռեժիմի հետ փոխգիջումների գնալուն: Նրանք վերականգնեցին մշակութային կազմակերպությունները, երգչախմբերը, թատերախմբերը և ուսանողական խմբակները, բաց արեցին մի քանի հրատարակչություններ: 1927 թ.-ին նույնիսկ ստեղծեցին «Ուկրաինական ազգային կուսակցություն»՝ *Վոլոդիմիր Զալոզեցկու*



գլխավորությամբ: Սակայն 1938 թ.-ին ուկրաինական կազմակերպությունների մեծամասնությունը, այդ թվում և այդ կուսակցությունը, լուծարվեցին: 1930-ական թվականներին ձևավորվեց ազգայնական, «հեղափոխական» ուղղություն՝ *Օրեստ Չիբաչինսկու, Պետրո Յրիհո-րևիչի և Դենիս Կվիտկովսկու* ղեկավարությամբ: Առավել հանգամանորեն ընտրելով կադրերին, քան ՌԲԱԿ-ը Գալիչինայում, բուկովինյան ազգայնականները, մեծաթիվ կազմակերպություն չլինելով հանդերձ, շատ արագ իրենց ազդեցությանը ենթարկեցին ուսանողական, երիտասարդական ու սպորտային ընկերություններին: Ընդհիվ իրենց զաղտնապահության և ջանադիր բողարկման, ՌԲԱԿ-ը Բուկովինայում միակ ուկրաինական կազմակերպությունն էր, որ չնայած կառավարության ճնշումներին ու բռնություններին, կարողացավ ոչ միայն գոյատևել, այլև ընդլայնել իր գործունեությունը:

## Ուկրաինացիները Չեխոսլովակիայում

Նկարագրելով միջպատերազմական շրջանում ուկրաինացիների գոյատևման ընդհանուր ճնշիչ պատկերը, ուրախալի է նրանում գտնել թեկուզև ոչ մեծ մի պատահիկ, որը մեզ ցույց կտա, որ այդ ազգի գոնե ինչ-որ մի մասը՝ Անդրկարպատների ուկրաինացիները, բարելավել են իրենց ճակատագիրը: Իրենց հայրենակիցներից Կարպատներով մեկուսացված լինելով, կարպատյան ուկրաինացիները (կամ, ինչպես իրենք են իրենց անվանում՝ ռուսիները) սոցիալ-տնտեսական, քաղաքական և մշակութային առումով ուկրաինացի ժողովրդի առավել հետամնաց մասն էին կազմում: Երբ Ավստրո-հունգարական կայսրության տապալումը վերջ դրեց հունգարական տիրապետությանը, այդ շրջանը մտավ Չեխոսլովակիայի կազմի մեջ: Ի տարբերություն բռնազավթված արևմտաուկրաինական այլ տարածքների ճակատագրի, Անդրկարպատյան ուկրաինայի միացումը Չեխոսլովակիային՝ կամավոր էր: 1918 թ.-ի նոյեմբերին Սբրենթոնում (ԱՄՆ-ի Փենսիլվանիա նահանգ) Չեխիայի առաջնորդների և Անդրկարպատներից վտարանդիների կողմից ստորագրված համաձայնագրի արդյունքում այդ տարածաշրջանը ինքնավարության իրավունքով մտավ չեխական նոր պետության կազմի մեջ:

Չեխոսլովակիան Եվրոպայի նորաստեղծ բոլոր պետություններից ամենաժողովրդավարականն էր: Իր ազգային փոքրամասնությունների նկատմամբ, ի տարբերություն Լեհաստանի և Ռումինիայի, խտրական և ձուլման բացահայտ քաղաքականություն չէր վարում: Դա, սակայն, չի նշանակում, որ կենտրոնական կառավարության և Անդրկարպատների բնակչության միջև հարաբերությունները խաղաղ էին ու անխռով: Պրահայի և նրա ամենաարևելյան նահանգի միջև լարվածության առիթը ինքնավարության խնդիրն էր: Սակայն, ամեն դեպքում, չեխերը կարպատյան ուկրաինացիներին տալիս էին քաղաքական և մշակութային ինքնարտահայտման այնպիսի հնարավորություն, որպիսին նրանք մինչ այդ երբեք չէին ունեցել:

1921 թ.-ին Չեխոսլովակիայում հաշվվում էին մոտ 455 հազ. կարպատյան ուկրաինացիներ, որոնցից 370 հազ.-ն ապրում էին Չեխիայում, իսկ 85 հազ.-ը՝ Սլովակիայի Պրյաշևի շրջանում: Չգտելով արդիականացնել իր նոր պետության բոլոր մասերը, չեխերը բավականին ջանք թափեցին Անդրկարպատներում կենսամակարդակի բարձրացման համար:

1920-ական թվականներին, հունգարական խոշոր կալվածքների բաժանման արդյունքում, մոտ 35 հազ. գյուղացիական տնտեսություն ստացավ լրացուցիչ հողաբաժիններ, յուրաքանչյուրն ավելի քան 2 ակր (0,8 հա): Ի տարբերություն Լեհաստանի և Ռումինիայի, չեխական կառավարությունն ավելի շատ միջոցներ էր ներդնում ուկրաինական հողատարածքների վրա, քան թե նրանցից ստանում էր: Այնուամենայնիվ, այդ կապիտալ ներդրումները բավական քիչ էին, որ կարողանային արմատապես փոխել այդ շրջանի աղքատ վիճակը: 1930-ականների Մեծ լճացման ժամանակ Անդրկարպատների բնակչությանը ծանր փորձություններ բաժին ընկան, այստեղ բռնկված սովը երբեմն ուղեկցվում էր մահացության դեպքերով:

Չեխական կառավարության քաղաքականությունը կրթության ու մշակույթի բնագավառում հաճելի հակադրություն էր նախկինում կիրառվող հունգարացմանը: Ամենից առաջ՝ կտրուկ աճեց դպրոցների թիվը. 1914 թ.-ից մինչև 1938 թ.-ը ներառյալ, տարրական դպրոցների թիվը 525-ից հասավ 851-ի, իսկ գիմնազիաների թիվը 3-ից հասավ 11-ի: Բացի այդ, չեխական կառավարությունն իր քաղաքացիներին թույլ էր տալիս ընտրելու ուսումնառության լեզուն: Նման ազատականությունը նպաստեց մշակութային այնպիսի ընկերությունների աճին, ինչպիսիք էին «Լուսավորություն» ու Դուխնովիչի անվան ռուսասերների ընկե-

րությունը: Ծաղկում էին ապրում թատերախմբերն ու երգչախմբերը: Դոկտոր որոշակի վերածննդի էին նպաստում գրողներ Վասիլ Դրեմչա-Դոնսկու, Անդրիյ Կարաբելեչի, Օլեքսանդր Մարկուշի ստեղծագործությունները:

Սակայն Անդրկարպատների մշակութային կյանքում առկա էին նաև դժվարություններն ու տարածայնությունները: Կրթական ոլորտի ընդլայնման և բնակչությանը ժողովրդավարական քաղաքական գործընթացների մեջ ներգրավելու հետ միասին առաջին պլան էր մղվում ուկրաինական տարածաշրջանների մեծ մասում արդեն լուծում ստացած ազգային ինքնակայության, ինքնատիպության խնդիրը: Բնական է, որ այդ խնդրի լուծումը դարձավ իրենց դիրքերն ամրապնդող մտավորականության գործը: Եվ ինչպես դա սովորաբար լինում է ազգային զարգացման սկզբնական փուլերում, մտավորականությունն այդ խնդրի շուրջ տարածայնություններ ունեցավ:

## Մտեցումներն ազգային հարցին

Ավագ սերնդի մտավորականների շրջանում, որոնք հիմնականում հունա-կաթոլիկական հոգևորականության ներկայացուցիչներ էին, տարածվում էին ռուսասիրական մտեցումները, ճիշտ այնպես, ինչպես դա նախկինում տեղի էր ունենում Գալիչինայում: Ռուսասերները, որոնց թվում կային տեղական շատ առաջատար գործիչներ, կարգավորում էին բազմաթիվ կազմակերպությունների ու ընկերությունների աշխատանքները (այդ թվում ստեղծել էին Դուխնովիչի անվան ընկերությանը կից ընթերցարանների լայն ցանց), սակայն նրանց վիճակված էր մի կարևոր դժվարություն կրել. ինչքան էլ չուզեցային, միևնույն է, նրանք չէին կարող ժխտել ակնհայտ փաստը, այն, որ ո՛չ լեզվական, և ո՛չ էլ մշակութային առումով իրենք չեն պատկանում ռուս ազգին: Այդ հանգամանքը ավելի ու ավելի էր ընդգծում նրանց գաղափարական ու քաղաքական ուղղվածության անպտուղ լինելը, և հատկապես դրանով էր բացատրվում կրթված երիտասարդությանն իրենց կողմը գրավելու հետ կապված դժվարությունները:

Մյուս մտեցումը հանգում էր տեղական առանձնահատկությունների շեշտադրմանը և այն գաղափարին, համաձայն որի՝ Անդրկարպատների սլավոնական բնակչությունն առանձին ազգ է՝ ռուսիներ են: Այս ուղղության շատ կողմնակիցներ հունգարացված քահանաներ էին, որոնք չեխերի գալուց հետո ծալովել էին տարածաշրջանայնության հազուստի տակ, որպեսզի թաքցնեին իրենց հունգարամետ համակրանքը: Մի քանի հարյուր հազար մարդկանցից առանձին ազգ ստեղծելու գաղափարը բավականին խաբուսիկ ու անիրական էր, հատկապես եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ Անդրկարպատիցիները միանգամայն ակնհայտորեն ազգակից էին Կարպատների մյուս կողմում ապրող ուկրաինացիներին: Այդ պատճառով էլ, ազգային հարցի լուծման տարածաշրջանային կամ ռուսիական տարբերակը ամենաթույլն էր:

Ամենից առաջընթացն ուկրաինասիրական ուղղությունն էր, որի կողմնակիցները նոր աշխարհիկ մտավորականներն էին՝ ռուսոցիչներն ու ռուսանոցները: Այնպես, ինչպես և XIX դարում Գալիչինայում, այն ծնունդ առավ որպես նարոդնիկական շարժում, որում երիտասարդ մտավորականությունը ձգտում էր կապերն ամրապնդել գյուղացիության հետ: Անդրկարպատյան նարոդնիկությունը ուկրաինասիրության փոխակերպելուն նպաստեցին երկու հիմնական գործոն. Կարպատների երկու կողմում ապրող ժողովուրդների լեզվի, մշակույթի և արևելաքրիստոնեական ավանդույթների ազգակցականության գիտակցության ամրապնդումը և Գալիչինայում ուկրաինական ազգային շարժման վերելքը:

Ուկրաինասերների աճող ազդեցությունն իր արտահայտությունն էր գտնում նրանց կազմակերպական աճի մեջ, հատկապես 1930-ական թվականներին: Ավգուստին Վոլոշինի, Միխայլո և Յուլիյա Բրաշչայկոների գլխավորությամբ ուկրաինասերները հիմնեցին «Լուսավորություն» ընկերությունը, որը շատ արագ դուրս մղեց իր մրցակցին՝ Դուխնովիչի անվան ռուսասիրական ընկերությանը: Երիտասարդ մտավորականության միջավայրում մեծ ժողովրդականություն ձեռք բերեց 3 հազ. անդամ ունեցող «Պլասատ» կազմակերպությունը: 1934 թ.-ի շեմին 1,2 հազ. անդամ ունեցող ուկրաինական ռուսոցիչների միավորումն ընդգրկում էր Անդրկարպատների ռուսոցիչների երկու երրորդը: Ուկրաինասերների ամենառանդուն կողմնակիցները համալսարանների ռուսանոցներն ու գիմնազիականներն էին: Քանի որ Անդրկարպատների ուկրաինացիներն իրենց քաղաքական ու ազգային խնդիրները բացահայտ քննարկելու բոլոր հնարավորություններն ունեին, ընդհատակում գործող ՌԲԱԿ-ն այստեղ լուրջ ազդեցություն չուներ ամբողջ 1930-ականների ընթացքում: Դետագայում ուկ-



րաինասերների մեծ մասը դարձավ արմատական ազգայնականության կողմնակիցներ, իսկ նրանց ոչ քիչ մասը խորհրդայնամետ դիրքորոշման անցավ:

### **Կարպատյան Ուկրաինայի ինքնավարությունը**

Անդրկարպատյան ուկրաինացիների միջև տարածայնություններն ու վիճաբանությունները չեխերին թույլ տվեցին երկար ժամանակ ձգձգել այդ տարածաշրջանին ինքնավարություն տալու վճիռ կայացնելը: Սակայն 1938 թ.-ին չեխական կառավարության դիրքերը զգալիորեն թուլացան միջազգային իրադրության փոփոխման հետևանքով: Մյունխենի դաշինքից հետո նացիստական Գերմանիային անցան Չեխոսլովակիայի գերմանացիներով բնակեցված տարածաշրջանները: արևմտյան տերությունների լուռ համաձայնությամբ նացիստները ծրագրել էին երկրի հետագա մասնատումը: Գերմանիայի աջակցությունն ունենալով, Չեխոսլովակյան հանրապետության կազմում ինքնավարություն ձեռք բերեցին սլովակները: Տեսնելով, թե ինչպես է երեւում Պրահայի կառավարությունը, *անդրկարպատյան բոլոր երեք ուղղությունների առաջնորդները միավորվեցին և նույնպես ինքնավարության պահանջ բարձրացրեցին:* Համաձայնություն տալուց բացի, չեխերին ոչինչ չէր մնում: **1938 թ.-ի հոկտեմբերի 11-ին Անդրկարպատները ինքնավարություն ստացավ:**

Ինքնավարության առաջին վարչությունը գլխավորում էին ռուսասերներ *Անդրիյ Բրոդին* և *Ստեպան Ֆենցիկը*, սակայն շուտով նրանք վարկաբեկվեցին որպես Յունգարիայի և Լեհաստանի գործակալներ: Նրանց փոխարեն Պրահան *Ավգուստին Վոլոշինի* գլխավորությամբ ուկրաինասերներից կազմված նոր վարչակազմ նշանակեց: Վոլոշինի կառավարությունն անհապաղ սկսեց աշխատանքներ ծավալել՝ Անդրկարպատները կամ, ինչպես կոչվում էր այն ժամանակ՝ Կարպատյան Ուկրաինան, առանձին ուկրաինական պետության վերածելու համար: Ուկրաինացիները վարչական մարմինը, իրատարակչական գործն ու կրթական համակարգը: 1939 թ.-ի փետրվարին կայացավ տարածաշրջանային խորհրդարանի ընտրություններ, որի ժամանակ ուկրաինասերները ստացան բոլոր ընտրողների ձայների 86 %-ը: Միաժամանակ ստեղծվեց «Կարպատյան Սիչ» ռազմական կազմակերպությունը, որում շատ շուտով արդեն 5 հազ. մարտիկ կար:

*Ռազմական ուժեր ստեղծելուն էին մղում արտաքին հանգամանքները:* Չեխոսլովակիայի մասնատմանը զուգընթաց, հարևան Յունգարիան ավելի էր բարձրաձայնում Անդրկարպատների նկատմամբ պահանջատիրական իր իրավունքները: Կարպատյան Ուկրաինայի կառավարության ձևավորումից անմիջապես հետո հունգարական զորքը օկուպացրեց տարածաշրջանի հարավային մասը, ստիպելով ուկրաինացիներին իրենց մայրաքաղաքը Ուժգորդից տեղափոխել Խուստ: *Իր կարծատն գոյության ողջ ընթացքում Կարպատյան Ուկրաինայի կառավարությունը հունգարական հարձակման սպառնալիքի տակ էր:*

Անդրկարպատներում ուկրաինական կառավարության ստեղծումը մեծ տպավորություն գործեց արևմտյան ուկրաինացիների վրա, հատկապես հարևան Գալիչինայում: Շատերը դրանում տեսնում էին անկախ, միասնական Ուկրաինայի շուտափույթ ստեղծման առաջին քայլը: Ազատություն ձեռք բերած ուկրաինական առաջին տարածաշրջանին օգնելու ցանկությամբ տոչորվելով, երիտասարդ շատ արմատական ազգայնականներ Գալիչինայից գաղտնի անցան սահմանն ու մտան «Կարպատյան Սիչ»: Ընդ որում, ՌԲԱԿ-ի ղեկավարությունում Անդրկարպատների իրադարձությունների շուրջ միասնական կարծիք չկար: Եթե գալիցյան երիտասարդ ազգայնականները պահանջում էին անհապաղ ու մեծ աջակցություն ցույց տալ Կարպատյան Ուկրաինային, ապա նրանց ավագների արտասահմանյան ղեկավարությունը, իրազեկ լինելով Գերմանիայի պլաններին, զսպվածության կոչ էր անում:

Ավագ սերնդի զգուշավորության պատճառները շուտով պարզ դարձան: *Գաղտնի դաշինք կնքելով, Հիտլերը համաձայնություն էր տվել Յունգարիայի կողմից Անդրկարպատների լիակատար օկուպացիային:* 1939 թ.-ի մարտի 14-ին հունգարական բանակը ներխուժեց Կարպատյան Ուկրաինայի տարածաշրջան: Անհուսորեն փոքրաթիվ և վատ զինված «Կարպատյան Սիչը» հերոսական, բայց անօգուտ դիմադրություն ցույց տվեց: **Մարտի 15-ին Վոլոշինի կառավարության կողմից անկախ Ուկրաինական Կարպատյան հանրապետության հռչակումը զուտ խորհրդանշական բնույթ ուներ:** Հենց նույն օրը կառավարությունը ստիպված էր հեռանալ արտասահման:

Կարպատյան Ուկրաինայի պատմությունն ամբողջությամբ հակասական է: Սոցիալական, տնտեսական, քաղաքական և մշակութային առումով լինելով արևմտաուկրաինական տարածաշրջաններից ամենահետամնացը, նա դարձավ միակը, որ թեկուզև սահմանափակ

իրավունքներով, բայց հասավ ինքնավարության: Չնայած իր կարճատև գործունեությանը, 1917-1920 թ.թ.-ների ուկրաինական կառավարության մասն, Կարպատյան Ուկրաինայի ուկրաինական կառավարությունն իր ազդեցությունն ունեցավ. այն նպաստեց երկրամասի բնակչության մեծամասնության, հատկապես՝ երիտասարդության, ազգային ինքնագիտակցության աճին: Այս միջադեպը, հիանալի կերպով ցույց տալով, թե ուկրաինացիները ինչքան քիչ կարող էին հույս դնել Հիտլերի բարի կամքի վրա, կարող է որպես լավ դաս ծառայել ուկրաինա-գերմանական հարաբերությունների համար:

\*\*\*

Միջպատերազմական շրջանում ազգերի անհավասարությունը, սոցիալ-տնտեսական բախումները, ինչպես նաև նացիստական Գերմանիայի և ԽՍՀՄ-ի տպավորիչ հզորացումը հանգեցրին ժողովրդավարության նկատմամբ հիասթափության և քաղաքական ծայրահեղության տարածմանը Արևելյան Եվրոպայում: Արմատականացման գործընթացը զնալով ավելի շատ էր ներգրավում ոչ միայն մտավորականությանը, այլև մշտապես պասիվ գյուղացիությանը: Իր ամբողջ սահմանափակությամբ հանդերձ, արդիականացումը նպաստում էր գյուղացիների ինքնարժեքի մասին և ինքնագիտակցության բարձրացմանը, ազգային խտրականության ու կենսամակարդակի անկման հետ չհամակերպվելուն և նրանցում արթնացնում էր լավ կյանքի նկատմամբ ձգտումը: Ավելին, գյուղացիությանը մղում էր քաղաքական ակտիվություն:

Արևմտյան ուկրաինացիները պետականության կամ ինքնավարության հասնելու հույսը կորցնելով, հիմնականում հակվում էին քաղաքական ծայրահեղություններին: Թեպետ նրանք ամեն կերպ ընդլայնում էին «հասարակական աշխատանքը», սակայն **ակնհայտ էր, որ առավել առաջընթաց չարժում դարձել է արմատական ազգայնականությունը՝ ի դեմս ՌԲԱԿ-ի, որն ամենաշատ կողմնակիցներն ուներ երիտասարդության մեջ:** Ի տարբերություն Խորհրդային Միությունում ապրող ուկրաինացիների, արևմտյան ուկրաինացիները լուրջ սոցիալ-տնտեսական փոփոխություններ չկրեցին: Միաժամանակ, չնայած նրանց աննախանձելի կենսամակարդակին, նրանք չապրեցին Ստալինի կողմից վարկաբեկված կոմունիզմի օրոք. նրանց մտքերին այլ գաղափարներ էին իշխում: 1930-ական թվականներին հասունության տարիքի հասած սերնդի մոտ ուկրաինական արմատական ազգայնականությունն իր զարգացման բարձր մակարդակին հասավ, դրսևորվելով որպես իդեալիզմի և ֆանատիզմի մի յուրօրինակ համաձուլվածք:





# ՈՒԿՐԱԻՆԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՆԱՄԱՇԽԱՐՏԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ

Եվրոպան գնում էր դեպի երկրորդ համաշխարհային պատերազմ, և թվում էր, թե, ամբողջությամբ վերցրած, ուկրաինացիները կորցնելու ոչինչ չունեին այն արմատական տեղաշարժերի ընթացքում, որոնք իր հետ կրում էր պատերազմը: Լինելով ստալինյան կամայականությունների և լեհերի, ռուսինացիների ու հունգարացիների կողմից անշեղորեն ածող ճնշումների մշտական օբյեկտ, ուկրաինացիները հույս ունեին, որ ցանկացած փոփոխություն, նույնիսկ պատերազմի բերած փոփոխությունները կբարելավեն իրենց կենսապայմանները: Սակայն նա, ով այդպես էր մտածում, չարաչար սխալվում էր. նրանց ծանր վիճակը դարձավ ուղղակի սարսափելի: Պատերազմի սկզբում Լեհաստանի անկումը հանգեցրեց նրան, որ արևմտաուկրաինական տարածքները հայտնվեցին խորհրդայինցի անհամեմատ դաժան ռեժիմում: Երբ գերմանացիները վերացրեցին խորհուրդները, նրանք Ուկրաինայում հաստատեցին իր անգթությամբ բացառիկ նացիստական ռեժիմ: Հայտնվելով ամբողջատիրական երկու հրեշների զոտեմարտի կիզակետում, չունենալով իրենց շահերը հետապնդող պետություն, ուկրաինացիները բոլորովին անպաշտպան էին պատերազմի ավերիչ ուժի և պատերազմը վարողների անողոր քաղաքականության դեմ:

## Պատերազմն Ուկրաինայում. առաջին շրջան

Ուկրաինայի համար երկրորդ համաշխարհային պատերազմը բավականին պարզորոշ բաժանվում է երկու ժամանակշրջանի: Առաջինն սկսվեց 1939 թ.-ի սեպտեմբերի 1-ին, երբ Գերմանիան սկսեց Լեհաստանի գրավումը, իսկ խորհրդային Միությունն անհապաղ օկուպացրեց նրա արևելյան տարածքները: Այս փուլի, միայն արևմտյան ուկրաինացիներին վերաբերող, հիմնական առանձնահատկությունն այն է, որ նրանց տարածքներում հայտնվեցին նոր զավթիչներ (խոսքն ամենից առաջ վերաբերում է խորհուրդներին): Երկրորդ շրջանն սկսվեց 1941 թ.-ի հունիսի 22-ին ԽՍՀՄ-ի վրա Գերմանիայի հարձակումով և շարունակվեց մինչև 1944 թ.-ի աշունը, երբ գերմանական զորքերը դուրս քշվեցին Ուկրաինայից: Համարյա այդ ամբողջ ժամանակաշրջանում Ուկրաինան ամբողջովին գրավված էր նացիստների կողմից և լիովին ճաշակեց պատերազմի բոլոր սարսափները:

Պատերազմին հանգեցնող բազմաթիվ գործոնների թվում հատուկ տեղ են գրավում անմիջականորեն ուկրաինացիներին վերաբերող դիվանագիտական երկու համաձայնագրերը: 1938 թ.-ի սեպտեմբերի 30-ին Մյունխենում Գերմանիայի հետ դաշնագիր (պակտ) ստորագրելով, արևմտյան տերությունները՝ Անգլիայի գլխավորությամբ, փորձ արեցին հանդարտեցնել Հիտլերին՝ թույլ տալով նրան հռչակելու Չեխոսլովակիան (և Անդրկարպատները): Սակայն դա ոչ այնքան բավարարեց Հիտլերին, որքան ցուցադրեց Արևմուտքի անսկզբունքայնությունը և ավելի շատ գրգռեց նացիստների փտորժակը՝ տարածքային «նվաճումների» նկատմամբ: Պատերազմի սանձազերծմանը ավելի շատ առնչություն ունի 1939 թ.-ի օգոստոսի 23-ին կնքած նացիստական-խորհրդային դաշնագիրը՝ պատմության մեջ ամենագարնանալի համաձայնագրերից մեկը: Հիտլերը, որ չէր թաքցնում ո՛չ խորհրդային համակարգի նկատմամբ իր ատելությունը, ոչ էլ Արևելքի նկատմամբ իր հավակնությունները, խորհրդային Միության չեզոքության կարիքն էր զգում, որպեսզի իր բոլոր ուժերը նետի՝ արևմրտյան հակառակորդներին ջախջախելու համար: Ստալինը, իր հերթին, նույնպես ամբողջ ուժով ձգտում էր Հիտլերի հետ կնքել չհարձակվելու և չեզոքություն պահպանելու պայմա-

նագիր, հույս ունենալով նացիստական ագրեսիան ուղղել Ֆրանսիայի և Անգլիայի դեմ և այդպիսով պատերազմին նախապատրաստվելու համար ժամանակ շահել՝ մինչ «կապիտալիստները» իրար մեջք կկտրեին: Երկու պետությունների այդ առաջնահերթ պահանջները բավարարելուց բացի, դաշնագիրը նախատեսում էր նաև միմյանց միջև գեների ու հումքի փոխանակում: Առավել կարևորն այն էր, որ դաշնագիրը պարունակում էր գաղտնի արձանագրություններ, որոնցում Հիտլերն ու Ստալինը համաձայնություն էին եկել՝ Արևելյան Եվրոպան ազդեցության և օկուպացիոն ոլորտների բաժանելու մասին: Այդ համաձայնագրին համապատասխան խորհրդային Միությանն էին անցնում արևմտաուկրաինական համարյա բոլոր տարածքները:

Խորհրդային Միության չեզոքության երաշխիքն ստանալով, Հիտլերը հարձակվեց Լեհաստանի վրա՝ սկիզբ դնելով երկրորդ համաշխարհային պատերազմին: Շտապելով զավթել կործանվող Լեհական պետության իր բաժնեմասը, խորհրդային զորքերն անցան նրա արևելյան սահմանները և սեպտեմբերի 17-ին բռնազավթեցին արևմտաուկրաինացիներով ու բելոռուսներով բնակեցված համարյա ամբողջ տարածաշրջանը: Ընդամենը չորս շաբաթվա ընթացքում Լեհաստանը ջնջվեց Եվրոպայի քարտեզից:

## Արևմտյան Ուկրաինայի խորհրդային օկուպացումը

Արևմտյան Ուկրաինայի իր առաջին բռնազավթումից սկսած, որը տևեց 21 ամիս, խորհուրդներն ամեն ջանք թափում էին մարդկանց «միտքն ու հոգին» նվաճելու համար: Նրանք իրենց հայտարարեցին «մարդասիրական վսեմ սկզբունքների դրոշակակիր» և նացիստների հետ Լեհաստանի բաժանման գործում համագործակցությունն արդարացում էին՝ ճնշված փոքրամասնություններին, հատկապես՝ իրենց «եղբայր» ուկրաինացիներին ու բելոռուսներին, ձեռք մեկնելու ձգտումով: Հատուկ ջանքեր էին ուղղվում նոր ռեժիմի «ուկրաինությունը» ցուցադրելու համար: Գալիչինա մտած խորհրդային զորքն անվանում էին Ուկրաինական զորաճակատ, որի հրամանատարն էր ակնհայտ ուկրաինական ազգանունով գեներալ Սեմյոն Տիմոշենկոն: Այս բոլոր խորհրդանշական փոխանցումները պետք է խորհրդային ներխուժմանը եղբայրական (ուկրաինացիներին՝ ուկրաինացիների) օգնության բնույթ տային:

Նոր ռեժիմը ձգտում էր նաև երևալ որպես ժողովրդավարական. 1939 թ.-ի հոկտեմբերի 22-ին կազմակերպեց ընտրություններ, որոնցում բնակչությունը ստիպված էր ձայնը տալ թեկնածուների միակ ցուցակին՝ խորհրդային Միության կողմից Արևմտյան Ուկրաինայի բռնազավթման կողմնակիցներին: Չարմանալի չէր, որ մոտ 93 %-ը քվեարկել էին այնպես, ինչպես դա ուզում էր ռեժիմը: 1940 թ.-ի հունիսին ԽՍՀՄ-ը ստիպեց Ռումինիային իրեն տալ Բեսսարաբիան և Բուկովինան: Այդպիսով ՌԽՍՀ-ի բնակչությանն ավելացավ Արևմտյան Ուկրաինայի ավելի քան 7 մլն բնակիչ:

Խորհրդային իշխանության որոշ միջոցառումներ որոշակի բարելավումներ բերեցին արևմրտյան ուկրաինացիներին: Շատ բան արվեց կրթական համակարգի զարգացման և ուկրաինացման համար: 1940 թ.-ի կեսերին Արևմտյան Ուկրաինայում տարրական դպրոցների թիվը հասավ մինչև 6900-ի, որոնցից 6 հազ.-ը ուկրաինական էին: Լվովի համալսարանը, լեհական մշակույթի այդ ամրոցը, ստացավ Իվան Ֆրանկոյի անունը, անցավ ուկրաիններեն լեզվով ուսուցման և իր դռները բացեց ուկրաինացի ուսանողների ու պրոֆեսորական կազմի համար: Ձգալիորեն բարելավվեց առողջապահական համակարգը, հատկապես գյուղական վայրերում: Ազգայնացվեցին հիմնականում լեհերին ու հրեաներին պատկանող արդյունաբերական ու առևտրական ձեռնարկությունները: Իսկ առավել ժողովրդական միջոցառում դարձավ խորհրդային իշխանության կողմից լեհական խոշոր հողատերերի սեփականագրվումը և գյուղացիների միջև հողերը վերաբաժանելու խոստումը:

Այս բարենորոգումների հետ միաժամանակ խորհուրդները սկսեցին լուծարել արևմտյան ուկրաինացիների ստեղծած քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային ենթակառուցվածքները: Շուտով, խորհրդային իշխանություն հաստատելուց հետո, Ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատը (ՆԳԺ) ձեռքակալեց և Արևելք արտաքսեց արևմտաուկրաինացի քաղաքական առաջնորդներին: ՌԽՄ-ն և այլ խոշոր ուկրաինական քաղաքական կուսակցությունները լուծարվեցին: Նույն ճակատագրին արժանացան կոպերատիվների մեծամասնությունը, իսկ մնացածներն էլ վերակազմավորվեցին խորհրդային օրինակով: Անդարեց «Լուսավորության» գործունեությունը: Գիտակցելով, որ իրենք պարուն են «փոխ առնված ժամանակներում», 20-30 հազ. ուկրաինացի ակտիվիստներ փախան գերմանացիների կողմից զավթված լեհական տարածքներ: Կենտրոնամետ ու ազատական միտումներ



ունեցող անձանց և կազմակերպությունների ու քաղաքական կուսակցությունների վերացումը հանգեցրեց նրան, որ *արևմտյան ուկրաինացիներին մնաց միայն մեկ կենսունակ քաղաքական կազմակերպություն՝ ՌԻԿ ընդհատակյա ցանցը:*

Նոր ռեժիմի կերպարը գեղազարդելուն ակնհայտորեն չէր նպաստում Արևմտյան Ուկրաինան հեղեղած խորհրդային բազմաթիվ պաշտոնյաների աշխատանքային ոճը: Նրանք, որ սովոր էին գործել «պրոլետարական» ոճով, հաճախ ուղղակի անհարմար վիճակի մեջ էին գցում տեղի ուկրաինացիներին՝ հատկապես «առաջատար հասարակարգի» զաղափարակիրների համար տարօրինակ իրենց կոպիտ ու գռեհիկ պահվածքով: *խորհրդային Ուկրաինայի ներկայացուցիչների կողմից ռուսաց լեզվի համարյա համատարած կիրառումը արագորեն ցրեց նրանց «ուկրաինության» մասին պատրանքը:*

Սկզբում խորհուրդներին աջակցում էին ընդհատակից դուրս եկած տեղի կոմունիստները, որոնց նոր իշխանությունները ջանադրաբար օգտագործում էին ուկրաինացի ազգայնականներին «քողագործելու» համար: Քանի որ այս կոմունիստներն և ԽՍՀՄ-ից ժամանած պաշտոնյաների մեջ շատ իրենաճեր կային, ապա արևմտյան ուկրաինացիների ու լեհերի շրջանում նկատելիորեն աշխուժացավ հակահրեական (հակասեմիտական) տրանսպորտությունները: Շատ շուտով տեղի կոմունիստներն էլ հիասթափվեցին խորհուրդներից, հատկապես՝ երբ նրանցից մի քանիսը ձերբակալվեցին և գնդակահարվեցին՝ տրոցկիական լինելու կասկածանքով:

*Ժամանակի ընթացքում ավելի ու ավելի բացահայտ դարձան խորհրդային ռեժիմի անիրապույր կողմերը:* Լեհ կալվածատերերից բռնագրավված և չբավոր գյուղացիներին «բաժանված» հողերն հանկարծ պետք եղան կուլտնտեսություններ ստեղծելու համար, և այդ հողերի մոտ 13 %-ը համայնացվեցին: Դրանից հետո գյուղացիության մեծամասնությունը, որն առաջ էլ չէր վառվում խորհուրդների նկատմամբ սիրով, վերջնականապես երես դարձրեց նոր ռեժիմից: Մտավորականները, որ զգալիորեն գոհ էին խորհուրդներից, քանի որ վերջինները նրանց աշխատանք էին տվել կրթական ու մշակութային հաստատություններում, շուտով հասկացան, որ հայտնվել են ռեժիմի խստորեն վերահսկվող հրահանգների կատարողի դերում և որի հետ անհամաձայնությունը սպառնում էր ձերբակալությամբ կամ աքսորով:

Հաշվի առնելով իրենց եկեղեցու հետ արևմտյան ուկրաինացիների առանձնահատուկ կապվածությունը, նոր իշխանությունը սկզբում բավականին զգուշորեն էր վերաբերվում հունա-կաթոլիկական եկեղեցուն՝ նրա գործունեության վրա դնելով համեմատաբար ոչ մեծ սահմանափակումներ: Քահանաներին պարտավորեցնում էին հատուկ անձնագրեր ունենալ, իսկ եկեղեցիների վրա բավականին բարձր հարկեր էին դրել: Սակայն ժամանակի ընթացքում այդ սահմանափակումները սպառնագին չափերի հասան: խորհուրդներն արգելեցին կրոնի դասավանդումը դպրոցներում, բռնագրավեցին եկեղեցական հողերը, ակտիվացրեցին հակակրոնական քարոզչությունը: Այդ քաղաքականությունը տարվում էր նաև Վոլինի ուղղափառ եկեղեցու նկատմամբ, ավելին՝ ջանքեր էին գործադրում այն Մոսկովյան պատրիարքության ենթակայության տակ փոխադրելու համար:

*1940 թ.-ի գարնանը ռեժիմը դադարեցրեց ժողովրդավարության իր խաղերն ու սկսեց լեհերի և ուկրաինացիների դեմ զանգվածային բռնությունների ծավալումը: Առավել տարածված էր և ահավոր՝ աքսորը:* Առանց որևէ նախազգուշացման, առանց դատ ու դատաստանի, առանց նույնիսկ ձևական մեղադրանք ներկայացնելու, նորաթուխ «թշնամիներին» ձերբակալում, անասունի պես լցնում էին վագոնները և տանում Սիբիր ու Ղազախստան՝ տուկալի պայմաններում ստրկական աշխատանք կատարելու: Աքսորվածներից շատերը մահանում էին, հաճախ՝ անբողջ ընտանիքով:

Աքսորի առաջին ալիքը քոչ-տարավ ուկրաինացի, լեհ և հրեա առաջատար քաղաքական գործիչների, այդուհետաքերողների, խոշոր հողատերերի, առևտրականների, պաշտոնյաների, դատավորների ու փաստաբանների, պաշտոնաթող սպաների ու քահանաների: Ավելի ուշ ձերբակալվում էր ամեն ոք, ով կասկածվում էր «ուկրաինական ազգայնականության» մեջ: Վերջին փուլում, 1941 թ.-ի գարնանը, ռեժիմն աքսորում էր մարդկանց՝ առանց խտրության: Արտաքսում էին բոլորին շարունակ. նրանց՝ ովքեր ազգականներ ունեին արտասահմանում կամ նամակագրական կապ ունեին նրանց հետ, նրանց՝ ովքեր իրենց ծանոթների մոտ էին, երբ վերջիններին ձերբակալում էին, նրանց՝ ում մատնել էին չարությունից կամ նախանձից դրդված, և վերջապես՝ ուղղակի մարդկանց, որոնք հայտնվել էին անպատեհ վայրում՝ աննպաստ ժամին: «Ոչ ոք, բառացիորեն ոչ ոք»,- գրում է այդ իրադարձությունների ականատեսը,- *համոզված չէր, որ հաջորդ գիշեր իր հերթը չէ:*

Միտրոպոլիտ Անդրիյ Շեպտիցկու տվյալներով՝ *խորհուրդները միայն Գալիչինայից աքսորել են մոտ 400 հազ. ուկրաինացի:* Ավելի շատ են տուժել լեհերը, հասկապես՝ գաղութաբնակները: Լեհական վտարանդի կառավարության հաշվարկներով, Լեհաստանի արևմտյան տարածքների խորհրդային օկուպացիայի ժամանակ, այստեղից ԽՍՀՄ-ի Արևելք են արտաքրվել մոտ 1,2 մլն մարդ՝ մեծամասամբ լեհեր: Դա ճակատագրի ողբերգական շրջադարձ էր լեհերի համար, որոնք կորցնելով պետությունը և նրա հովանավորությունը՝ հարստահարողից դարձան հարստահարվող:

Անկասկած, արևմտուկրաինական տարածքների ընդգրկումը ՌԽՍՀ-ի կազմում, պատմական մեծ նշանակություն ունեցող իրադարձություն էր, քանի որ *մի քանի հարյուրամյակի ընթացքում առաջին անգամ ուկրաինացիները միավորվեցին մի միասնական պետության մեջ:* Սակայն իր կարծատևության պատճառով, այդ բռնակցումն արժատական փոփոխություններ չբերեց ոչ Արևմտյան, և ոչ էլ խորհրդային Ուկրաինային: Այնուամենայնիվ, այդ իրադարձությունն իր խորն ու անմիջական արդյունքն ունեցավ. խորհրդային համակարգի հետ արևմտյան ուկրաինացիների առաջին մոտ ծանոթությունը նրանց համար դառն փորձ եղավ, և նրանցից շատերը եկան այն եզրակացության, որ ամեն գնով պետք է խուսափել «բոլշևիկյան» իշխանություններից:

### **Ուկրաինացիները գերմանական օկուպացիայի տակ**

1939-1941 թ.թ.-ներին արևմտյան ուկրաինացիների մեծամասնությունը խորհրդային իշխանության տիրապետության տակ էր, սակայն նրանց մի ոչ մեծ մասն ընկավ գերմանական օկուպացիայի տակ: Դրանք Լեհաստանի արևելյան սահմանում գտնվող Լեմկովչինայում ու Խուլմշչինայում բնակվող մոտ 500 հազ. ուկրաինացիներ էին: Բոլոր կողմերից լեհերով շրջապատված, ուկրաինական կենտրոններից մեկուսացած այդ շրջանների բնակիչները, մյուս բոլոր ուկրաինացիների համեմատությամբ, գտնվում էին սոցիալ-տնտեսական, քաղաքական ու մշակութային զարգացման ամենացածր մակարդակի վրա: 1939-1940 թ.թ.-ներին սակայն, Գալիչինայից այստեղ եկան 20-30 հազ. ուկրաինացի քաղաքական փախստականներ՝ փրկվելով խորհրդային բռնություններից ու հալածանքներից: Նրանց մի մասը մշտական բնակություն հաստատեց հայրենակիցների շրջապատում, մյուս մասը կենտրոնացավ ուկրաինացի փախստականների կենտրոնի՝ Կրակովի մոտ և նրանք բոլորը նպաստեցին *Գեներալ-նահանգապետության* (այդպես էր այժմ կոչվում գերմանացիների կողմից օկուպացված Լեհաստանի այդ տարածաշրջանը) Լեմկովսկի և Խուլմսկի շրջանների ուկրաինացիների հասարակական ակտիվացման վերելքին:

Այդ տարածաշրջանի գեներալ-նահանգապետ *Ֆանս Ֆրանկը* ուներ այն որպես գերմանական գաղութ համարելու Հիտլերի հատուկ հրահանգը, ինչին համապատասխան էլ այստեղի բնակչությունն ուներ նվազագույն իրավունքներ: Չնայած տեսականորեն տարածաշրջանում բարձրագույն իշխանության իրավունքը Ֆրանկին էր, որը կատարում էր Հիտլերի կարգադրությունները, գործակալնում սակայն նրանից ոչ քիչ լիազորություններ ուներ *գեստտապոն* (նացիստական քաղաքական ոստիկանությունը):

Գերմանացիների գալուց անմիջապես հետո սկսեցին հայտնվել, որպես կանոն, ՌԻԿ-ի անդամներից կամ կողմնակիցներից կազմված, փոխօգնության տասնյակ կոմիտեներ: Կոմիտեների հիմնական նպատակը Գեներալ-նահանգապետության ուկրաինացի բնակչության կենցաղային, տնտեսական և մշակութային ամենատարրական կարիքների բավարարումն էր: 1940 թ.-ի գարնանը, Ֆրանկի լուռ համաձայնությամբ, այդ կոմիտեները Կրակովում կազմավորեցին ուղղորդող մարմին՝ *Ուկրաինական կենտրոնական կոմիտե* (ՌԻԿԿ)՝ հայտնի գիտնական-աշխարհագրագետ *Վոլոդիմիր Կուրչյովիչի* գլխավորությամբ: *Փաստորեն, ՌԻԿԿ-ն իրենից ներկայացնում էր սոցիալական ապահովության գործակալություն*, որը փորձում էր օգնել հիվանդներին, ծեր ու անօգնական մարդանց, անապաստան երեխաներին, հոգ էր տանում առողջապահության ու կրթության մասին, օգնում էր ռազմագերիներին և պաշտպանում Գեներալ-նահանգապետությունից Գերմանիա ուղարկվող ուկրաինացի աշխատավորների շահերը: *Գերմանացիները միանգամայն պարզորոշ հասկացրին, որ ՌԻԿԿ-ն ոչ մի դեպքում քաղաքական որևէ արտոնություն չունի:*

Այնուամենայնիվ, կատարելով իր այդ պարտականությունները՝ *ՌԻԿԿ-ն չէր հրաժարվում իր մի քանի թաքուն նպատակներից, այսինքն՝ ուկրաինացիների վրա լեհական ազդեցությանը հակազդելու և ազգային ինքնագիտակցությունը բարձրացնելու ծրագրերից:* Իմանալով այդ մասին, գերմանացիները ոչ միայն չէին միջամտում, այլև մասնակիորեն համագոր-



ծակցում էին ՌԻԿԿ-ին, հուսալով, որ ուկրաինացիների ազգային ինքնագիտակցության աճը կհակակշռի շատ ավելի մեծաթիվ լեհերին: Հենց այդ նկատառումներից էլ ներկայումս էլ գերմանացիները նպաստում էին էթնիկ խառը շրջանների վարչակազմում կամ ոստիկանությունում ուկրաինացիներին ցածր պաշտոններ տալուն: Երբ որոշ ուկրաինացիներ օգտվում էին իրենց մոր դիրքից, որպեսզի հատուցեն լեհերին՝ նախապատերազմյան տարիներին իրենց պատճառած վիրավորանքների համար, գերմանացիներն առանձնապես ուշադրություն չէին դարձնում:

Կուրիյովիչի հմուտ ղեկավարությամբ և Գալիչինայի փախստականների օգնությամբ ՌԻԿԿ-ի մոտ 800 ներկայացուցիչ շատ արագ ստեղծեցին ուկրաինական դպրոցների ցանց, կոոպերատիվներ և երիտասարդական խմբեր՝ այն բոլոր տեղերում, որտեղ զգալի թվով ուկրաինացիներ էին ապրում: Կրակովում նրանք հիմնեցին նաև հրատարակչություն և նպաստեցին տարածաշրջանում ուկրաինական մամուլի տարածմանը: Նրանց գործունեությունն ուկրաինացիներին ոչ միայն օգնեց լրացնել լեհական հարստահարման ժամանակների կորուստները, այլև հաճախ բեթևացնում էր պատերազմի և գերմանական օկուպացիայի ծանրությունները: ԽՍՀՄ Գերմանիայի ներխուժումից և Գալիչինան Գեներալ-նահանգապետության կազմի մեջ մտցնելուց հետո ՌԻԿԿ-ի ազդեցության ոլորտը տարածվեց նաև Գալիչինայի վրա: Պատերազմի ժամանակ ՌԻԿԿ-ն մնաց միակ ուկրաինական կազմակերպությունը, որը կարող էր, թեկուզև բավականին սահմանափակ ծավալով, պաշտպանել ուկրաինացիների սոցիալ-տնտեսական շահերը Գեներալ-նահանգապետությունում:

### Ուկրաինացիները Հունգարական օկուպացիայի տակ

Այն բանից հետո, երբ 1939 թ.-ին հունգարական բանակը գրավեց Կարպատյան Ուկրաինան և տապալեց նրա կառավարությունը, Անդրկարպատները մտցվեց Հունգարիայի կազմի մեջ, որտեղ էլ մնաց ամբողջ պատերազմի ընթացքում: Քանի որ այստեղ ապրող մոտ 550 հազար ուկրաինացիները պահպանում էին մինչև 1918 թ.-ը շարունակվող հունգարական դարավոր տիրապետության ամենատհաճ հիշողությունները, նրանց վերադարձը, մեղմ ասած, մեծ հիացմունք չառաջացրեց: Ձգտելով հաճոյանալ ուկրաինացիներին, հունգարական կառավարությունն սկզբում նույնիսկ խոստացավ ինքնավարություն տալ Անդրկարպատներին: Սակայն շուտով պարզ դարձավ, որ այդ խոստումը չի կատարվելու և, որ ընդհակառակը՝ Անդրկարպատների աստիճանական հունգարացման նոր ալիք է պատրաստվում:

Համարյա անմիջապես էլ հունգարացիները ուկրաինասերների լայնածավալ հալածանքներ սկսեցին: Հարյուրավորները զնդակահարվեցին, հազարավորները բանտ նետվեցին, մոտ 30 հազ.-ը փախան հարևան Գալիչինա (որտեղից էլ, իր հերթին, Խորհուրդները քարտեցին նրանց Սիբիր): Արգելվեցին ուկրաինական բոլոր հրատարակչությունների ու կազմակերպությունների գործունեությունը: Սակայն, Անդրկարպատներում աճող ուկրաինական շարժումն արմատախիլ անելու որոշում ընդունելով, հունգարական կառավարությունը դեռևս պատրաստ չէր համընդհանուր հունգարացման (չնայած որ մշտապես նպաստում էր հունգարական մշակույթի ազդեցության ուժեղացմանը, հատկապես դպրոցներում): Այդ պատճառով էլ ընտրեց անցումային, կամ ռուսիսասիրական, տարբերակը, որը հենվում էր այն գաղափարի վրա, թե տեղի բնակչությունը ոչ այլ ոք է, եթե ոչ առանձին ռուսին ազգ, որը դարերով օրգանապես կապված է եղել հունգարների հետ: Այս մտտեցման հիմնական գաղափարախոսներն ու պաշտպանները դարձան տեղի երկու քաղաքագետ, բուդապեշտյան կառավարության բազմամյա գործակալներ Անդրիյ Բրոդին և Ստեպան Ֆենցիկը, որոնք հենվում էին հունգարացված հունա-կաթոլիկական հոգևորականության վրա:

Հունգարական ռեժիմը բերեց ոչ միայն քաղաքական հալածանքներ, այլև առաջ բերեց լուսավորության անկում և ուժեղացրեց տնտեսական շահագործումը երկրամասում: Անդրկարպատների հունգարական օկուպացիայի միակ դրականն այն էր, որ նա պահպանեց այդ տարածաշրջանը նացիստների ներկայությունից և այն ավերածություններից, որը հասցվեց Ուկրաինայի մեծ մասին: Եիշտ է, սակայն, որ այն չփրկեց մոտ 100 հազ. տեղացի իրենաներին, որոնց մեծ մասը մահացավ մահվան նացիստական ճամբարներում:

### ՌԻԿԿ-ի պառակտումը

Պատերազմի սկսվելու հետ, լարվածությունը, որ առաջացել էր ՌԻԿԿ-ի ներսում, ի դերև ելավ: ՌԻԿԿ-ի արտասահմանյան ղեկավարությունը կազմող շարժման վետերանների՝ 1917-1920 թ.թ.-ների ազատագրական պայքարի մասնակիցների, և 1930-ական թվականների

կազմակերպության մեջ մտած գալիցյան երիտասարդ արմատականների միջև սուր տարածայնություններ էին հասունացել: Արմատականների խումբը կատաղի պայքար էր մղում արևմտաուկրաինական տարածքներում լեհական ռեժիմի դեմ, և նրանցից շատերը նստած էին բանտերում: Այդ երկու ճամբարները սկզբունքային տարածայնություններ չունեին, քանի որ հիմնված էին ամուր ու արմատական ազգայնականության հիմնարար կանխադրույթների վրա: Փոխադարձ օտարացումը զալիս էր տարիքային տարբերությունից, անձնական հակակրանքից և ռազմավարության հարցերում ունեցած տարածայնություններից: 1938 թ.-ին Կոնովալեցի սպանությունից հետո, նրա հետնորդ էին տեսնում կիրթ, զուսպ և համբերատար մի անձնավորության՝ առաջնորդի մտերիմ զինակից Անդրիյ Մելնիկին: Իսկ երիտասարդ արմատականները ցանկանում էին որպես առաջնորդ տեսնել, միայն վերջերս լեհական ճամբարից դուրս եկած, հաստատական ու գործունյա Ստեպան Բանդերային, համարելով, որ



Անդրիյ Մելնիկ

մոր, ճգնաժամային պայմաններում նա ավելի է համապատասխանում այդ դերին:

Դեռևս մինչև տաժանավայրերից Բանդերայի ու նրա զինակիցների դուրս գալը, նրանց կողմնակիցներն ՌԻԿԿ-ի արտասահմանյան առաջնորդներին փոթորկալից քննադատությամբ հեղեղեցին: Նրանց մեղադրում էին արտասահմանյան (հատկապես Գերմանիայի կողմից) աջակցության դերի չափազանցման և միաժամանակ Արևմտյան Ուկրաինայի ժողովրդի հետ «հասարակական» կապերի զարգացմանը քամահրանքով վերաբերվելու մեջ, սրընթաց զարգացող իրադարձություններից ետ ընկնելուն տանող դանդաղկոտության ու անտարբերության մեջ, շարժման արդյունքում ղեկավար կազմում հայտնված «քաղաքական գեղծարարների և պատեհապաշտների» նկատմամբ թողտվության մեջ: 1939 թ.-ի սեպտեմբերին Բանդերան ՌԻԿԿ-ի առաջ հարց բարձրացրեց զինված ընդհատակ ստեղծելու մասին, որը պատրաստ կլինի պայքարել յուրաքանչյուրի դեմ, ով կանգնած է Ուկրաինայի անկախության ճանապարհին, նույնիսկ եթե դա գերմանացիները լինեն: Նա համառորեն պահանջում էր, որ ՌԻԿԿ-ը կապեր պահպաներ ինչպես Գերմանիայի, այնպես էլ արևմտյան դաշնակիցների հետ: Սակայն Մելնիկն ու նրա կողմնակիցները հաստատականորեն պաշտպանում էին իրենց դիրքերը, մատնանշելով, որ կապերի ամրապնդումն անհրաժեշտ է հենց Գերմանիայի հետ, քանի որ արևմտյան տերությունները ոչ մի հետաքրքրություն չեն ցուցաբերում ուկրաին-



նական ազգային ծգտումների նկատմամբ: Իսկ ինչ վերաբերում է զինված ընդհատակ ստեղծելուն, ապա այդ քայլն առաջ կրեթի գերմանացիների կողմից նոր բռնությունների և չի բերի ո՛չ քաղաքական, և ո՛չ էլ ռազմական օգուտներ:

Իսկական կրքերը բորբոքվեցին ՌԻԱ-ի նոր ղեկավար կազմի խնդրի շուրջը: 1939 թ.-ի օգոստոսին, քանի դեռ Մելնիկի խմբավորման հակառակորդներից շատերը բանտերում էին, Յոզովն կոնֆերանս հրավիրվեց, ուր նրան պաշտոնապես առաջնորդ հռչակեցին: Սակայն 1940 թ.-ի փետրվարին Ստեպան Բանդերան Կրակովում մի ուրիշ կոնֆերանս անցկացրեց, որն անվավեր ճանաչեց Յոզովն ընդունված որոշումը: Փոխզիջման զալ չկարողանալով, խմբավորումներից յուրաքանչյուրն ՌԻԱ-ի միակ օրինական ղեկավար իրեն հռչակեց: Բան-



Ստեպան Բանդերա

դերայի կողմնակիցները, հիմնականում երիտասարդներ, որ կազմում էին կազմակերպության մեծամասնությունը, սկսեցին իրենց անվանել **ՌԻԱ-Բ** կամ՝ **ՌԻԱ-Գ** (հեղափոխական), կամ էլ ուղղակի՝ **բանդերականներ**, իսկ ՌԻԱ-ի առավել չափավոր անդամները՝ Մելնիկի կողմնակիցները, իրենց անվանեցին **ՌԻԱ-Ս**, կամ **մելնիկականներ**:

Կասկածից դուրս է, որ այս պատակտունը հսկայական վնաս հասցրեց արմատական ազգայնականության գործին: Երկու խմբավորումների միջև հակամարտությունը հասավ այնպիսի շիկացման, որ նրանք հաճախ միմյանց դեմ պայքարում էին նույնպիսի մոլեգնությամբ, ինչքան ուկրաինական անկախության թշնամիների դեմ: Այսպիսով, հենց այն ժամանակ, երբ ուկրաինական արմատական ազգայնականները պատերազմի բերած մեծ փորձությունների առաջ էին հայտնվել, նրանք արդեն բաժանված էին երկու անհաշտ ճամբարների: Ավելին, սպառնալիքի տակ էր հայտնվել ուկրաինական արմատական ազգայնական շարժումն ամբողջությամբ, իսկ ներքին պառակտումները վնաս հասցրեցին նրա բարոյական հեղինակությանը:

## Պատերազմն Ուկրաինայում. երկրորդ շրջան

1941 թ.-ի հունիսի 22-ին նացիստական Գերմանիան անսպասելիորեն հարձակվեց ԽՍՀՄ-ի վրա: Տոտալիտար երկու համակարգերի բախումը հանգեցրեց հսկայական ծավալների և չտեսնված դաժանության հասնող պատերազմի: Մարտերը ծավալվում էին ավելի քան 3 հազ. կմ երկարություն ունեցող ճակատով, որը ձգվում էր հյուսիսի Սպիտակ ծովից մինչև հարավի Սև ծովը, ընդ որում՝ գերմանացիների և նրանց դաշնակիցների կողմից մարտերին մասնակցում էին մոտ 3 մլն մարդ, իսկ խորհրդային ուժերն ավելի քան 2 մլն էին: Այն պատճառով, որ Ստալինն անվերապահորեն հավատում էր Գիտլերի կողմից նացիստական-խորհրդային դաշնագրի պայմանների կատարմանը, խորհուրդներն անտեսեցին պատրաստվող ագրեսիայի մասին բազմաթիվ նախազգուշացումները և արդյունքում հանկարծակիի եկան: Բացի այդ, ստալինյան գեներալները սահմանի մոտ բավականին մեծ զորք կենտրոնացնելով, ռազմավարական կոպիտ սխալ թույլ տվեցին: Դա հնարավորություն տվեց գերմանական դյուրաշարժ տանկային զորասյուններին մասնատել, շրջանցիկ մանևրումներով շրջապատել ու ոչնչացնել նրանց: Խորհուրդները մեկը մյուսի ետևից արդարապես ձախողումներ ու կորուստներ էին կրում: Բարձրագույն ամբողջ ղեկավարությունը՝ Ստալինի գլխավորությամբ, խուճապի մեջ էր, կառավարությունում քառս էր տիրում. թվում էր՝ խորհրդային Միության կործանումը սարերի ետևում չէ:


Չավթիչների ամենամեծ զորամասը՝ բանակի «Գարավ» զորախումբը, Ֆելդմարշալ Կառլ Ֆոն Ռունդշտեդտի հրամանատարությամբ շարժվում էր դեպի Ուկրաինա: Գատկապես Ուկրաինայում գերմանացիներն ունեցան առաջին ամենատպալորիչ հաղթանակները, որոնցից ամենամեծը 1941 թ.-ի սեպտեմբերին Կիևի շրջանում խորհրդային խոշոր զորամիավորման ջախջախումն ու 650 հազ. մարդ գերեվարելն էր: Ռազմարշավը սկսելուց չորս ամիս հետո գերմանացիները գրավեցին համարյա ամբողջ Ուկրաինան: 1941 թ.-ի դեկտեմբերին մոտ նրանք բռնազավթել էին 80 մլն բնակչություն (ամբողջ խորհրդային Միության բնակչության 42 %-ը) ունեցող տարածք, ուր տեղավորված էին ԽՍՀՄ-ի արտադրական հզորությունների զգալի մասը: Գերի էին ըկել 3,8 մլն խորհրդային զինվոր (մոտ 1,3 մլն-ը ուկրաինացի էին): Այն, թե համեմատաբար ինչ հեշտությամբ էին գերեվարվել այդ մարդիկ, վկայում է, որ կարմիր բանակայիններից շատերը չէին ցանկանում պաշտպանել խորհրդային համակարգը:

Խորհուրդներին պաշտպանելու ավելի քիչ ցանկություն ցուցաբերեց Ուկրաինայի բնակչությունը: Արևմտյան Ուկրաինայում, որտեղ «խորհուրդները» հատկապես ժողովրդական չէին, գերմանացիներին հաճախ դիմավորում էին որպես ազատարարների: Արևելյան Ուկրաինայում գերմանացիներին ավելի զգուշավոր էին վերաբերվում, չնայած այստեղ նույնպես հույսեր էին տածում, թե նրանց զալուստը կբերի բարեփոխումներ, որոնք ստալինյան ռեժիմի համեմատությամբ ավելի տանելի կլինեն: Այստեղից էլ՝ գերմանական մամուլում հայտնված այն բազմաթիվ լուսանկարները, որոնք պատկերում էին գերմանացիներին աղ ու հացով դիմավորող, երջանիկ դեմքով ուկրաինացիներին:

Խորհուրդների հապճեպ նահանջը ողբերգական հետևանքներ ունեցավ Արևմտյան Ուկրաինայի բանտերում գտնվող հազարավոր քաղբանտարկյալների համար: Ի վիճակի չլինելով նրանց բոլորին Արևելք ուղարկել, ՆԳժԿ-ն մեկ շաբաթվա ընթացքում՝ 1941 թ.-ի հունիսի 22-29-ը, զանգվածային հաշվեհարդար տեսավ բանտարկյալների հետ, առանց հաշվի առնելու նրանց մեղավորության աստիճանը: Զանգվածային սպանություններ տեղի ունեցան Լվովում, Սամբորում և Ստանիսլավում (Պալիչինա), որտեղ զոհվեցին մոտ 10 հազ. բանտարկյալ, և Ռիվնեում ու Լուցկում (Վոլին), որտեղ զազանաբար սպանվեցին ևս 5 հազ. մարդ: Զանգվածային աքսորին հետևած այս լայնածավալ գնդակահարություններն ու խորհրդային աճող ահաբեկչությունը միայն խորացնում էին խորհուրդների նկատմամբ արևմտյան ուկրաինացիների նողկանքն ու ատելությունը:

Գաղթափարելով սկզբնական շփոթվածությունը, խորհրդային իշխանություններն սկսեցին ավելի կազմակերպված ձևով նահանջել: Միանգամայն ռուսական սովորույթի ոգով, նրանք ընտրեցին «այրված հողերի» մարտավարությունը, որը, Ստալինի խոսքերով՝ «կյանքը թշնամու թիկունքում պետք է դարձնեն անհնարին»: Բոլոր ձեռնարկությունները, որ կարող էին օգտագործել գերմանացիները, ենթակա էին ոչնչացման: Կիևը, օրինակ, ավելի շատ ավերածությունների ենթարկվեց նահանջող խորհուրդների կողմից, որոնք պայթեցրեցին քաղաքի բազմաթիվ նշանակալից կառույցներ, քան՝ հարձակվող գերմանացիների կողմից: Դոնբասում խորհուրդները ջրով ծածկեցին հանքահորերի մեծ մասը: Դնեպրոպետրովսկի





Գերմանիայի հարձակումը 1941 թ.-ին

հսկայական հիդրոէլեկտրահամալիրի հիմնական ձեռնարկությունները, ինչպես նաև Ուկրաինայի բոլոր 54 հրահալոցները պայթեցվեցին:

Խորհրդային նահանջի բնորոշ առանձնահատկությունը՝ պաշտպանական արդյունաբերության զործարանների, որակյալ բանվորների ու նտավոր հիմնական ուժերի տարիանումն էր անդրուրալյան շրջաններն ու Միջին Ասիա: Հնարավոր է, որ դա պատմության մեջ եղած խոշորագույն տարիանումն է, որի ընթացքում Խորհուրդները գերմանացիների համար անհասանելի տարածաշրջաններ տեղափոխեցին մոտ 1500 գործարան և ավելի քան 10 մլն մարդ: Պատերազմի ընթացքում Ուկրաինական խորհրդային կառավարությունը հաստատվեց Ուրալում գտնվող Բաշկիրիայի ինքնավար հանրապետության Ուֆա մայրաքաղաքում: Արդյունաբերական ձեռնարկությունների և աշխատուժի այդ զանգվածային տեղաշարժը զգալի չափով նպաստեց պատերազմը շարունակելու ԽՍՀՄ-ի ունակությունն ու հնարավորությունը մեծացնելու:

Տարիանման ժամանակ բացառիկ ակտիվություն ցուցաբերեց ՆԳժԿ-ն: Խորհրդային պետությանը դավաճանելու մեջ կասկածելով բոլոր նրանց, ով փորձում էր խուսափել տարիանումից, նա ձերբակալեց ու մահապատժի ենթարկեց բազմաթիվ մարդկանց: **Երեք տարուց ավելի դատվածություն ունեցող բանտարկյալներին գնդակահարում էին**, որպեսզի ազատվեն հակախորհրդային տարրերից, որոնց կարող էին օգտագործել գերմանացիները: Բացի այդ, ՆԳժԿ-ն իր շատ գործակալների թողեց տեղերում՝ հետագայում գերմանական օկուպացիոն վարչակազմ, հատկապես՝ ոստիկանություն, թափանցելու համար, և նաև հետևելու նրանց, ովքեր չհասցրեցին տարիանվել:

## ՌԻԱԿ-ը և նացիստական Գերմանիան

Ուկրաինական արմատական ազգայնականները խանդավառությամբ ողջունեցին Խորհրդային Միության վրա Գերմանիայի հարձակումը, այդ իրադարձության մեջ տեսնելով անկախ ուկրաինական պետություն կազմավորելու խոստումնալից հնարավորություն: Սակայն, չնայած ՌԻԱԿ-ն ու գերմանացիներն ունեին ընդհանուր թշնամի, նրանց շահերն ու նպատակներն ուղղակի անհամատեղելի էին: Գերմանացիներին ՌԻԱԿ-ը օգտակար էր թվում հիմնականում դիվերսիոն ուժի դերում, որը կկարողանար ավերել խորհրդային բանակի թիկունքը: Իր հերթին, արմատական ազգայնականները, որ բոլորովին վերջերս էին հիասթափվել Հիտլերից՝ Կարպատյան Ուկրաինայի նկատմամբ նրա գործողությունների հետ կապված, ակնհայտորեն չէին ձգտում որպես գործիք ծառայել Բեռլինին. նրանք նպատակ ունեին պատերազմն օգտագործել Ուկրաինայում սեփական ազդեցությունն ընդլայնելու համար: Այսպիսով, յուրաքանչյուրն ուզում էր մյուսին օգտագործել իր նպատակների համար, որոնք հաճախ միանգամայն հակասական էին:

ՌԻԱԿ-ի և նացիստների միջև առանց այդ էլ լարված հարաբերությունները բարդանում էին մի շարք այլ պատճառներով: Գերմանացիների մեջ կային լուրջ տարածայնություններ ՌԻԱԿ-ի հետ հարաբերությունների առնչությամբ. ծովակալ **Վիլհելմ Կանարիսի** արվերը (ռազմական հետախուզություն), որ տևական կապեր ուներ ՌԻԱԿ-ի հետ, նրա հետ համագործակցությունը համարում էր անհրաժեշտ, իսկ նացիստական կուսակցությունը, որ գլխավորում էր **Մարտին Բորմանը**, ՌԻԱԿ-ին չէր համարում լուրջ քաղաքական գործոն և արհամարհաբար մերժում էր նրա հետ հարաբերության հնարավորությունն իսկ: Բացի այդ, ՌԻԱԿ-ի հետ համագործակցելուն հակված գերմանացիների մոտ հարց էր առաջանում՝ հատկապես ո՞ր խմբավորմանը աջակցել. համեմատաբար զուսպ, բայց ավելի թույլ մելնիկովականների՞ն, թե՞ գործուն, ավելի մեծաթիվ, բայց ըմբոստ բանդերովականներին: Գերմանացիների աջակցությունն ստանալու համար պայքարն ավելի սաստկացրեց երկու խմբավորումների դիմակայությունը. յուրաքանչյուրն իրեն էր համարում ուկրաինացի ժողովրդի միակ ներկայացուցիչը:

ՌԻԱԿ-ի հետ գերմանացիների համագործակցության արդյունքը եղավ ԽՍՀՄ-ի վրա հարձակման նախօրեին ուկրաինական զինվորական ստորաբաժանման՝ «Ուկրաինացի ազգայնականների լեգեոնի» ստեղծումը: Գերմանացիների օկուպացրած տարածքներից հավաքագրած, հիմնականում բանդերովամետ կողմնորոշում ունեցող ուկրաինացիներից կազմված զորամիավորումը, որ ուներ մոտ 600 զինվոր, բաժանվում էր երկու զունարտակի՝ «Նախտի-հալ» և «Ռուլանդ» ծածկագիր անվանումներով: Եթե գերմանացիները պլանավորում էին այդ



ուժերն օգտագործել դիվերսիոն նպատակներով, ապա ՌԻԱԿ-Բ-ն հույս ուներ, որ նրանք կդառնան ուկրաինական բանակի միջուկը և միաժամանակ կնպաստեն բանդերովական խմբավորման ազդեցության ընդլայնմանը:

Գերմանական ներխուժման առաջին իսկ օրերին նացիստների և արմատական ազգայնականների շահերի բախումը առաջին պլան մղվեց: *Անխտեմուքյան հասնող համարձակությանը ՌԻԱԿ-Բ-ն, «Նախտիհալի» աջակցությունն ունենալով, առանց գերմանացիների հետ իր որոշումը համաձայնեցնելու, 1941 թ.-ի հունիսի 30-ին, նոր գրավված Լվովում հանդուզմ քայլի դիմեց՝ հռչակեց Ուկրաինական պետություն: Վարչապետ էր ընտրվել Բանդերայի մտերիմ զինակից Յարոսլավ Ստեփան: ՌԻԱԿ-Բ-ն ծայրահեղ ռիսկի գնաց, ենթադրելով, որ գերմանացիներն ավելի շուտ այդ ակցիան կընդունեն որպես կայացած փաստ, քան թե ներխուժման հենց առաջին օրերին հակամարտության կզգան:*

ՌԻԱԿ-Բ-ն ոչ միայն շրջանցեց գերմանացիներին, այլև փորձեց համոզել վախեցած ուկրաինացի բնակչությանը (սկզբում որոշակի հաջողությամբ), որ գործում է Բեռլինի խրախուսմամբ: Տարբեր խորամանկություններով ձեռք բերեց անկողնուն գամված ծեր միտրոպոլիտ Շեպտիհցկո՝ անկախության մասին հռչակագրին հավանություն տալու հայտարարությունը: Բայց եթե գերմանական զինվորական հրամանատարության հնարավոր անվճարկանության վերաբերյալ ՌԻԱԿ-Բ-ի առաջնորդներն այնքան էլ չէին սխալվել, ապա նացիստական քաղաքական ղեկավարությանը թերազնահատելով՝ իրենց հաշիվներում լիովին սխալվել էին: *Անկախությունը հռչակելուց անմիջապես հետո Բանդերան և նրա զինակիցները հայտնվեցին գեստապոյի բանտում:* Միևնույն ժամանակ, ՌԻԱԿ-Մ-ն, որը խուսափում էր գերմանացիների հետ հակամարտությունից, փորձեց օգուտ շահել իր հակառակորդների անհաջողությունից: Սակայն նա էլ մի քանի ամիս հետո կորցրեց նացիստների բարեհաճությունը:

ՌԻԱԿ-ի երկու խմբավորումներն համար ընդհանուր՝ գերմանացիներին կայացած փաստի առաջ կանգնեցնելու, ռազմավարության մասը դարձան՝ Ուկրաինայի օկուպացված շրջաններում տեղական վարչական մարմիններ ստեղծելու փորձերը (և դարձյալ առանց գերմանացիների հետ համաձայնեցնելու): Այդ նպատակի համար հավաքվել էին ՌԻԱԿ-ի մոտ 2 հազ. անդամ, հիմնականում բանդերովականներ, որոնք բաժանվելով այսպես կոչված «երթային խմբերի» («похідні групи»), պետք է հետևեին Ուկրաինայի խորքերին հարձակվող գերմանացիներին: Տեղերում այդ խմբերի անդամները բացահայտում էին իրենց հետ համագործակցելուն համաձայն ուկրաինացիների և նրանցից ձևավորում տեղական վարչակազմ: Չնայած արմատական ազգայնական գործի համար շարժումը երթային խմբերի երիտասարդ շատ անդամների խիզախության ու անձնվիրության բազմաթիվ օրինակներ տվեց, այն բացահայտեց նաև ՌԻԱԿ-ում խմբավորումների միջև պայքարի որոշ վանող կողմեր: Ամենացայտուն դեպքը 1941 թ.-ի սեպտեմբերին ժիտոմիրում մեկնիկովականների խմբավորման երկու առաջնորդների՝ *Օմելյան Սենիկի* և *Միկոլա Սցիբորսկու* սպանությունն էր (հնարավոր է, որ ՌԻԱԿ-Բ-ի մարտիկների կողմից): Դրանից հետո սպանություններն ու գերմանացիների մոտ փոխադարձ մերկացումները դարձան երկու խմբավորումների բախումների սովորական երևույթ:

Ինչ վերաբերում է արևելյան ուկրաինացիներին, ապա Խորհուրդների հապճեպ փախուստից հետո նրանք, որպես կանոն, գործել սկսելու համար ՌԻԱԿ-ի խմբերի կարիքը չունեին: Քանի որ օկուպացիայի առաջին ամիսներին գերմանական զինվորական իշխանությունները բնակչությանը վերաբերվում էին համեմատաբար մեղմ, շատ ուկրաինացիներ ինքնաբերաբար ստեղծեցին վարչական տեղական մարմիններ: Ակնկալելով, որ գերմանացիները կվերացնեն ատելի կոլտնտեսությունները և հողերը կվերաբաժանեն, գյուղացիները բերքը հավաքում էին բացառիկ ծանր պայմաններում: Ուսուցիչները բացում էին դպրոցներ, բանվորներն իրենք էին գործարաններում կարգավորում արտադրությունը:

Քահանաները, որ կարողացել էին ողջ պրծնել 1930-ական թվականներին, սկսեցին ժամասացություններ կատարել և զանգվածաբար մկրտել երեխաներին ու երիտասարդներին: Գոգևոր կյանքի աշխուժացումը եկեղեցու խնդիր բարձրացրեց: Վոլինի ուղղափառ եկեղեցին պառակտվեց երկու մասի՝ ինքնավար և անկախ (ավտոկեֆալ), որոնք սկսեցին իրենց ազդեցությունն ընդլայնել Ուկրաինայի կենտրոնական ու արևելյան շրջաններում: Ինքնավարը պահպանում էր իր գոյության ավանդական ձևերը և, Մոսկովյան պատրիարքության հետ կապերը չխզելով, պաշտպանում էր եկեղեցական ինքնավարության գաղափարը, բայց այնքան ժամանակ, քանի դեռ մոսկովյան կենտրոնը մնար Խորհուրդների իշխանության տակ: Ավտոկեֆալը վերականգնեց ՌԻԱԿ-ի 1920-ական թ.թ.-ների որոշ ավանդույթներ և իր շար-

քերն էր գրավում ազգային գաղափարներով տոգորված ուկրաինացիներին:

Ամբողջ Ուկրաինայով մեկ սկսեց լույս տեսնել ավելի քան 100 ոչ-կոմունիստական թերթ: Մեծ քաղաքներում, հատկապես Կիևում, առաջացան գրական, գիտական և հասարակական շատ խմբավորումներ: Նույնիսկ քաղաքական կազմակերպություններ ստեղծելու փորձեր էին արվում: 1941 թ.-ի հոկտեմբերին ՌԻԱԿ-Մ-ի անդամները, որոնք նոր էին դեռևս հաստատվել Կիևում, հանդես եկան «Ուկրաինական Ազգային Ռադայի» ստեղծման նախաձեռնությամբ, հուսալով, որ այն կդառնա ուկրաինական կենտրոնական կառավարության հիմքը: Քաղաքացիական կազմակերպություններ հայտնվեցին նաև Խարկովում ու Դնեպրոպետրովսկում: Ընդհանուր առմամբ, խորհրդային իշխանության տապալումն ուղեկցվում էր ամենատարբեր ուղորտներում ուկրաինացիների ակտիվության ինքնարուխ բարձրացումով, հուզմունքով սպասելով նրան, որ գերմանացիները ուր-որ է կստեղծեն ուկրաինական պետություն:

Սակայն գերմանացիները բոլորովին այլ ծրագրեր ունեին: Չդայնացած այն բանից, որ լվովյան կառավարության լուծարումից արմատական ազգայնականներն իրենց համար հետևություն չարեցին, զինվորական իշխանությանը փոխարինած նացիստական վարչակազմը վճռեց մույն դասը տալ՝ ավելի դաժանացնելով այն: 1941 թ.-ի սեպտեմբերին SS-ական (գերմ.՝ Schutzstaffeln - պահնորդական բաժանմունք՝ գերմանական գաղտնի ոստիկանություն) պատժիչ զորամասերը *ձերբակալեցին ու զնդակահարեցին ՌԻԱԿ-Բ երթային խմբի շատ անդամների*: Մոտավորապես երկու ամիս անց գեստապոն ձեռք գարկեց ՌԻԱԿ-Մ-ին, որը բավականին ազդեցիկ ուժեր էր կենտրոնացրել Կիևում: *Գերմանացիները զնդակահարեցին ՌԻԱԿ-Մ-ի ավելի քան 40 առաջատար գործիչների, այդ թվում հայտնի բանաստեղծուհի Օլենա Տելիհային*: Փակեցին «Ուկրաինական խոսք» հանրածանոթ թերթը: Կիևյան մամուլն անցավ գերմանացիների իրահանգները հնազանդորեն կատարող ռուսամետ խմբի վերահսկողության տակ: Այնուհետև նացիստները զնդակահարեցին Կիևի ուկրաինացի քաղաքապետ Վոլոդիմիր Բահազիին և վարչակազմը, ոստիկանությունն ու թերթերը մաքրեցին ազգայնորեն գիտակից բոլոր ուկրաինացիներից: *Արմատական ազգայնականներն ընդհատակ անցան. ակնհայտ դարձավ, որ նացիստական վարչակարգի հետ իրենց կարճատև «մեղրամիսն» ավարտվել է:*

## Նացիստական իշխանությունն Ուկրաինայում

Ալեքսանդր Դելլինի և երկրորդ համաշխարհային պատերազմի վերաբերյալ պատմության այլ մասնագետների կարծիքով. «Երրորդ ռայխի գրաված բոլոր արևելյան տարածքներից Ուկրաինան, անկասկած, ամենանշանակալիցն էր: Այն խորհրդային միության ամենամեծ հանրապետությունն էր, որ լիովին օկուպացվել էր գերմանացիների կողմից... և որպես սննդամթերքի ու աշխատուժի մատակարար՝ ուղղակի անփոխարինելի էր»: Որոշելով, թե ինչպես տնօրինել այդ արժեքավոր ավարը, նացիստական ղեկավարները երկու հիմնական տարբերակ էին քննարկում: *Առաջինը*, որ սովորաբար կապում էին առաջատար նացիստ գաղափարախոս *Ալֆրեդ Ռոզենբերգի* անվան հետ, *ենթադրում էր Կրեմլի դեմ պայքարում ուկրաինացիների օգտագործումը՝* նրանց սեփական պետություն ստեղծելու հնարավորություն տալու ճանապարհով, որը կմնար Գերմանիայի հոգածության տակ: *Երկրորդ տարբերակը*, որն ավելի տարածված էր նացիստական հիերարխիայում, *լիովին անտեսում էր ուկրաինացիների շահերը և նախատեսում էր նրանց անխիղճ շահագործումը նացիստական կայսրության օգտին*:

Սկզբում իրադարձությունները դասավորվում էին այնպես, որ թվում էր, թե հատկապես Ռոզենբերգը՝ որպես նացիստական ղեկավարության միակ անդամ, որ ամենիջականորեն ծանոթ է Լրևելյան Եվրոպային, կդառնա գրավված տարածքների վրա քաղաքականության ձևավորողը: Այդ կարծիքը ամրապնդվում էր այն փաստով, որ նա նշանակվել էր արևելյան տարածաշրջանների նախարարության ղեկավար: Ռոզենբերգը հասկանում էր պետականությունից զրկված այդ երկրամասի ժողովրդի ձգտումների էությունը (ինչը չէր բացառում Գերմանիայի կողմից նրանց տնտեսական շահագործումը): Նրա հանրածանոթ համոզմունքն այն բանում, որ Ռուսաստանին՝ Գերմանիայի այդ ամենավտանգավոր մրցակցին, լավագույն ձևով հաղթել կարելի է միայն կազմալուծելով այդ բազմազգ կայսրությունը, արմատական ազգայնական ուկրաինացիներին հիմք էր տալիս հուսալու, որ իրենք նացիստների հետ




փոխհամաձայնության կգան: Սակայն ՌԲԱԿ-ականները չգիտեին, որ ինքը՝ Հիտլերը, Ռոզենբերգի տեսությունների և, մասնավորապես, Ուկրաինայի վերաբերյալ նրա ծրագրերի մասին ընդհանրապես մեծ կարծիք չուներ:

Նացիստական ռասայական ուսմունքը (դոկտրինան) բոլոր սլավոններին համարում էր երկրորդ տեսակի մարդիկ՝ «չմարդ» (Untermenschen), որոնց միակ ճակատագիրն իշխող գերմանական ռասային ծառայելն է: Հիտլերը և կուսակցական նրա գինակիցների մեծամասնությունը Ուկրաինան դիտում էին ամենից առաջ որպես տարածք՝ գերմանացիների «կենսական տարածությունը» (Lebensraum) ընդլայնելու համար, իսկ ուկրաինացիներին՝ գերմանացի գաղութատերերի ապագա ճորտերի: Պատերազմի առաջին փուլի հաղթանակները Հիտլերին համոզեցին, որ ուկրաինացիների հետ նրբանկատությունն ավելորդ է: Եվ երբ եկավ Ուկրաինայի նացիստական կառավարիչ նշանակելու ժամանակը, Հիտլերն ընտրեց իր դաժանությամբ ու անհանդուրժողությամբ հայտնի **Երիկ Կոխին**, որն աչքի էր ընկնում նաև սլավոնների նկատմամբ բացառիկ ատելությանը: Նոր նշանակման նկատմամբ Կոխի վերաբերմունքը բավականին պարզորոշ արտահայտվել է 1941 թ.-ի սեպտեմբերին, Ուկրաինա գալուց անմիջապես հետո, իր շտաբին ուղղված նրա ուղերձում. «Պարոնայք, ես հայտնի եմ որպես կատաղած շուն: Դեռևս այդ պատճառով էլ ինձ նշանակել են Ուկրաինայի ռայխսկոմիսար: Մեր խնդիրը կայանում է նրանում, որպեսզի Ուկրաինայից քանենք բոլոր հյուսիսը՝ առանց հաշվի առնելու ուկրաինացիների զգացմունքները կամ նրանց ունեցվածքի չափը: Պարոնայք, ձեզանից պահանջում եմ խիստ և անողոք վերաբերմունք տեղի բնակչության նկատմամբ»: Մի այլ առիթով ուկրաինացիների նկատմամբ իր զգվանքն ընդգծել է այսպես. «Եթե գտնեմ մի ուկրաինացի, որն արժանի լինի ինձ հետ սեղան նստել, ես պարտավոր կլինեմ նրան գնդակահարել»: *Գտնել մեկ ուրիշին, որ ավելի լավ կարողանար գերմանացիների դեմ տրամադրել ուկրաինացիներին, դժվար կլիներ:*

Ուկրաինացիների նկատմամբ նացիստների վերաբերմունքը շատ արագ իր արտահայտությունը գտավ նրանց քաղաքականության մեջ: 1941 թ.-ի օգոստոսին բացարձակապես անտեսելով ուկրաինացիների բազային շահերը, Հիտլերը վավերացրեց Ուկրաինան առանձին վարչական միավորների բաժանումը: Դրանցից ամենամեծը, որ ներառում էր Աջափնյակն ու Չախափնյակի մեծ մասը և ստացավ «Ռայխսկոմիսարիատ Ուկրաինա» անվանումը, հանձնվեց Կոխին: Հրաժարվելով իր «մայրաքաղաքը» Ուկրաինայի ավանդական կենտրոն Կիևում հաստատելուց, Կոխը այդ նպատակի համար ընտրեց Վոլինի գավառային ոչ մեծ քաղաք Ռովնոն: Գալիչիան Ուկրաինայի մնացած մասին միացնելու փոխարեն, այն մտցրին *Լեհաստանի Գեներալ-նահանգապետության* կազմում, հարուցելով տեղի ուկրաինացի բնակչության խորը զայրույթը: Բուկովինան և Հարավ-Արևմտյան Ուկրաինայի մի մասն ու Օդեսան, որ վերանվանվել էր *Տրանսնիստրիա*, հանձնվեց գերմանացիների դաշնակից Ռումինիային: Վերջապես, Խարկովի շրջանի ամենաարևելյան տարածքները, որ հարում էին ճակատի գծին, մնացին գերմանական բանակի իրավասության տակ: Այս բոլոր գործողությունները պարզորոշ արտացոլում էին նացիստական բարձրագույն ղեկավարության տեսակետը, թե՛ «Ուկրաինա գոյություն չունի... դա ընդամենը աշխարհագրական հասկացություն է»:

Ուկրաինայում գերմանական քաղաքացիական վարչակազմի կառուցվածքն ու ծավալները կասկած չէին հարուցում նրանում, որ գերմանացիները մտադիր են այստեղ լիակատար վերահսկողություն սահմանել: Ուկրաինա էին ուղարկվել անսահման մեծ թվով պաշտոնյաներ: Սակայն, քանի որ Ուկրաինան զավթված վերջին տարածքներից մեկն էր, ապա նրան միայն գերմանական պաշտոնյա տակաճքները հասան: Այդ պատճառով էլ գերմանացիների ամբարտաճանությանն ու մեծամտությանը հաճախ զուգահեռվում էր անիրազեկությունը: *Ուկրաինայում նացիստական կառավարման անսասան սկզբունք դարձավ այն, որ մինչև գավառական մակարդակի բոլոր վարչական և տնտեսական կարևոր պաշտոնները տրվում էին միայն գերմանացիներին:* Ուկրաինացիներին թույլատրվում էր զբաղեցնել միայն վարչական ստորակարգ պաշտոնները՝ գյուղական ավագանու, գյուղաքաղաքների քաղաքագլխի, ցածրաստիճան ոստիկանների:

Նացիստական վարչակարգի էության ամենաբնորոշ հատկանիշը՝ ռազմագերիների և հրեաների նկատմամբ վերաբերմունք էր: Քանի որ խորհրդային իշխանությունը ոչ մի հատուկ ջանք չէր թափել հրեա բնակչության տարահանման համար (և լռության էր մատնում նրան հալածանքների ենթարկելու փաստը), հրեաների մեծ մասն ընկավ ֆաշիստների ձեռքը, որոնք Ուկրաինայում 50 գետտո (հրեաների համար հատուկ առանձնացված թաղեր) և ավելի քան 180 համակենտրոնացման ճամբարներ էին ստեղծել: Մի քանի ամսվա ընթաց-



Ուկրաինան գերմանական օկուպացիայի տակ 1941-1944 թ.թ.



քում նացիստները, հատկապես SS-ական հատուկ պատժիչ ջոկատները (Einsatzgruppen), **բնաջնջեցին մոտ 850 հազ. հրեայի: Կիևում, միայն երկու օրվա մեջ, Բաբին Յարում կոտորեցին 33 հազ. հրեայի:**

Նացիստների վերաբերմունքը խորհրդային ռազմագերիների նկատմամբ նույնպես անմարդկային էր: Պատերազմի առաջին 6 ամիսներին գերի հանձնվեցին միլիոնավոր կարմիր-բանակայիններ, ընդ որում շատերը՝ ինքնակամ: Համոզված, որ մոտ է վերջնական հաղթանակը և սլավոնների «ավելցուկը» վերացնելու տենդով բռնված, նացիստները գերիներին քշում էին փշալարերով շրջափակված, բաց երկնքի տակ գտնվող ճամբարները և թողնում էին նրանց մեռնելու այնտեղ՝ սովից, ցրտից ու հիվանդություններից, երբեմն նաև զնդակահարում էին: Արդյունքում, **պատերազմի վերջում 5,8 մլն խորհրդային ռազմագերիներից մոտ 3,3 մլն-ը մահացել էին գերմանական համակենտրոնացման ճամբարներում, նրանցից 1,3 մլն-ը՝ Ուկրաինայում:** Ռազմագերիների նկատմամբ այդպիսի վարվեցողությունը ոչ միայն բարբարոսական էր, այլև ուղղակի անշրջահայաց: Գերությունում գտնվող հրեանց ընկերների մասին լուրերը, որ հասնում էին Կարմիր բանակ, միայն ուժեղացնում էին դիմադրությունը և մեծացնում գերմանացիների կորուստները:

1941 թ.-ի օգոստոս-սեպտեմբեր ամիսներին նացիստները միջոցառումներ ձեռնարկեցին, որոնք խորը հետևանքներ ունեցան Ուկրաինայի ամբողջ ժողովրդի համար: Անտեսելով Ռոզնեբերգի և նրա գերատեսչության խորհուրդները, Կոխը որոշեց, որ Ուկրաինայի գյուղատնտեսությունը ավելի արդյունավետ կարելի է շահագործել (դա տնտեսական գլխավոր նպատակն էր), եթե անձեռնմխելի թողնվի կոլտնտեսային համակարգը, իհարկե՝ այլ անվան տակ, փոփոխված ձևով և գերմանացիների հսկողության տակ: Այդպիսով, ուկրաինացի գյուղացիության հույսերը, որ նոր վարչակարգը կվերացնի կոլտնտեսությունները, զուր դուրս եկան: Կոխը ոչ միայն նվազեցրեց գյուղացիների եկամուտները, այլև ստիպեց աշխատել լուսաբացից մինչև մայրամուտ: Միայն այդպիսի մոլեգին շահագործմամբ կարելի է բացատրել այն փաստը, որ **նացիստների կողմից խորհրդային միությունից դուրս կրվող ամբողջ պարենային պաշարի 85 %-ը բաժին էր ընկնում Ուկրաինային:**

Հակազերմանական տրամադրություններն ավելի սաստկացան, երբ նացիստներն Ուկրաինան սկսեցին օգտագործել ոչ միայն որպես պարենի գլխավոր մատակարարի, այլ նաև՝ որպես Գերմանիայի արդյունաբերության ու ֆերմերային տնտեսությունների համար աշխատուժի գլխավոր աղբյուրի: Սկզբում ուկրաինացիներն իրենք էին վարձվում Երրորդ ռայխում աշխատանքի՝ որևէ մասնագիտություն ստանալու հույսով, կամ՝ որպեսզի խուսափեն հայրենիքում կյանքի ծանր պայմաններից: Սակայն շուտով, երբ հայտնի դարձավ չափազանց խիստ կարգապահության, ծիծաղելիորեն ցածր աշխատավարձի և «օստարբայտերների» նկատմամբ նվաստացուցիչ վերաբերմունքի մասին, մարդիկ սկսեցին բոլոր հնարավոր միջոցներով խուսափել աշխատավորական հավաքագրումներից: 1942 թ.-ի սկզբում Կոխի ոստիկանությունը ստիպված էր կազմակերպել զանգվածային շուրջկալներ՝ երիտասարդ ուկրաինացիներին շուկաներում, եկեղեցիներից ու կինոթատրոններից դուրս գալուց բռնելու և Գերմանիա ուղարկելու համար: Այն «նախապատվության» մասին, որ այդ առումով գերմանացիները տալիս էին հատկապես Ուկրաինային, վկայում է այն փաստը, որ **պատերազմի վերջում Գերմանիայում գտնվող 2,8 մլն խորհրդային օստարբայտերներից 2,3 մլն-ը ուկրաինացիներ էին:**

Նացիստական իշխանության արտառոց դաժանությունը ոչ նվազ ուժով արտահայտվում էր նաև քաղաքային բնակչության ու մտավորականության նկատմամբ: Կոխը կտրուկ սահմանափակեց սննդամթերքի մուտքը քաղաքներ, պնդելով, թե Ուկրաինային ընդհանրապես քաղաքային կենտրոններ պետք չեն: Հեռանկարում գերմանացիներն ընդհանրապես մտադիր էին Ուկրաինան դարձնել բացարձակապես հողագործական երկիր, իսկ ներկա պահին Ուկրաինայի քաղաքաբնակներն ուտում էին այն սննդամթերքը ինչի կարիքն ուներ Գերմանիան: Այդ քաղաքականության արդյունքում սովը դարձավ սովորական երևույթ քաղաքներում, և բնակիչներից շատերը ստիպված եղան ցրվել գյուղերով մեկ: **Կիևն, օրինակ, կորցրեց բնակչության 60 %-ը: Խարկովը, որ գերմանացիների գալուց առաջ 700 հազ. բնակիչ ուներ, 120 հազ.-ից զրկվեց Գերմանիա ուղարկելու, 30 հազ.-ից՝ գերմանացիների կողմից զնդակահարվելու և 80 հազ.-ից՝ սովից մեռնելու պատճառով:**

Խստորեն սահմանափակվել էին նաև Ռայխսկոմիսարիատի բնակչության համար կրթություն ստանալու հնարավորությունները: SS-ի պետ Հենրիխ Հիմլերն առաջարկեց «վերացնել ուկրաինական մտավորականությանը»: Կոխը համարում էր, որ ուկրաինացիներին տար-

րական կրթության երեք դասարանն էլ բավական է: Նա հասավ մինչև այնտեղ, որ վերացնի բուժսպասարկումը՝ նպատակ ունենալով վիժեցնել «ուկրաինացիների կենսաբանական հնարավորությունները»: Գերմանացիների ռասայական գերազանցությունը և ուկրաինացիների «անլիարժեքությունը» ընդգծելու համար, բացվում էին ռեստորաններ, խանութներ և, նույնիսկ հասարակական տրանսպորտում առանձնացվում էին մասեր՝ «միայն գերմանացիների համար»:

Ուկրաինայում նացիստների կառավարման բոլոր դրսևորումները լիովին հասկանալու համար, հարկ է նկատի ունենալ, որ **«Ուկրաինա Ռայխսկոմիսարիատում» նացիստական ռեժիմը հասել էր իր ամենաձայրահեղ ձևերին:** Չնայած նման պայմանները տարածվում էին գերմանացիների կողմից օկուպացված Ուկրաինայի մյուս բոլոր տարածաշրջանների վրա ևս, սակայն վարչական գործունեությունը նրանցում զգալիորեն տարբերվում էր Կոխի տիրակալությունից: Գալիչինայում օրինակ, որը Լեհաստանի Գեներալ-նահանգապետության շրջան էր, գերմանական իշխանություններն այնպես դաժանորեն չէին կառավարում, ինչպես արևելյան տարածքներում: Իհարկե, այստեղ ևս տարվում էին այնպիսի ատելի միջոցառումներ, ինչպիսիք էին Գերմանիա աշխատանքի քշելը, գյուղերում մթերքի բռնագրավումը և քաղաքաբնակներին կիսաքաղց պահելը, սակայն ի տարբերություն իրենց արևելյան եղբայրների, Գալիչինայի բնակիչները հնարավորություն էին ստացել ներկայացուցչական մարմին ստեղծելու Լվովում՝ «Український земельний комітет», որը ղեկավարում էր **Կոստ Պանկիվսկին:** 1942 թ.-ի մարտից այդ կոմիտեն անցավ Կրակովում Կուբիյովիչի գլխավորած ՌԿԿ-ի ենթակայությանը:

**Չգտելով ուկրաինացի բնակչությանը պաշտպանել նացիստական բռնություններից, ընդլայնված ՌԿԿ-ն կիրառում էր ճկուն մարտավարություն,** խուսափելով գերմանացիների հետ հակամարտությունից և կենտրոնանալով քաղաքներում ուկրաինացիների ներկայությունն ամրապնդելու և արտադրական համակարգի զարգացման վրա: Սակայն, երբ անհրաժեշտ էր լինում, ՌԿԿ-ն ակտիվորեն պաշտպանում էր ուկրաինական շահերը: Օրինակ, երբ 1943 թ.-ի փետրվարին գերմանական գործողությունների արդյունքում երկրի երեսից ջնջվեցին մի քանի ուկրաինական գյուղեր, **Կուբիյովիչը համարձակորեն իր թողոքը հայտնեց Ֆրանկին, մետելով. «Հրեաներին վերացրեցիք, հիմա անցել եք ուկրաինացիների»:** Սյուս առավելությունը, որից օգտվում էին ուկրաինացիները Գեներալ-նահանգապետությունում՝ տարրական, միջնակարգ և մասնագիտական կրթական լայն ցանցի առկայությունն էր: Նրանց նաև որոշ սահմանափակումներով թույլատրվում էր կոոպերատիվներ կազմակերպել և մշակութային գործունեություն ծավալել: Ինչպես և ամենուր, Գալիչինայում նույնպես, բոլոր կարևորագույն պաշտոնների մենաշնորհը գերմանացիներինն էր: Սակայն ուկրաինացիները լեհերի հետ համեմատած ունեին առավելություններ տեղական վարչական մարմիններում: Այդ քաղաքականությունը վատթարացնում էր երկու համայնքների միջև առանց այդ էլ լարված հարաբերությունները, ինչը չափազանց զոհացնում էր գերմանացիներին:

Ձինվորական հրամանատարության իրավասության տակ գտնվող Ուկրաինայի ամենարևելյան շրջաններում իրավիճակը քիչ էր տարբերվում Ռայխսկոմիսարիատում ստեղծված իրավիճակից, սակայն ոստիկանական ահաբեկչությունն այստեղ լայն ծավալների չէր հասնում: Մասնավորապես, թույլատրվում էր քաղաքացիական որոշ կազմակերպությունների գործունեությունը. առավել հայտնին Խարկովում էր և ղեկավարում էր **Վուդդիմիր Դոլենկոն:** Ուկրաինայի հարավ-արևմուտքում՝ Տրանսնիստրիայում, ռուսինական ռեժիմը գերմանականի հետ համեմատած ավելի մեղմ էր: Ռուսինացիները չէին վերացնում իրեաներին (նրանց հանձնում էին նացիստներին), խուսափում էին քաղաքական վարածավալ ահաբեկչությունից և թույլատրում էին ազատ առևտուրը: Սակայն նրանք ամեն կերպ ճնշում էին ցանկացած ուկրաինական ազգային դրսևորում, արգելում էին ուկրաինական հրատարակությունները և համագործակցում էին ռուսալեզու խմբավորումների հետ:

Ուկրաինայում նացիստների քաղաքականությունն անողոք էր և անհեռատես: Հազվադեպ է որևէ օկուպացիոն ռեժիմի հաջողվել այդպիսի արագությամբ և վերջնականապես իր դեմ տրամադրել սկզբում այդքան բարեհամբույր կամ ուղղակի չեզոք ժողովրդի, ինչպես դա տարեցին նացիստներն Ուկրաինայում: Ուղղակի զարմանալի է, թե ինչ չափով էին նրանք գերի ռասայական գերազանցության իրենց տեսությանը, որպեսզի այդչափ կորցնեին քաղաքական իրականության զգացումը: Ամենակոպիտ քաղաքական սխալները, որ թույլ տվեցին գերմանացիներն Ուկրաինայում, ապշեցրին նույնիսկ Երրորդ ռայխի բարձրաստիճան որոշ անձանց: 1942 թ.-ի սկզբում, օրինակ, Ռոզենբերգի մտերիմ աշխատակիցներից մեկը՝ **Օստո**



**Քրաուտիզմը** նշեց, որ «40 մլն ուկրաինացի, որ ուրախությամբ դիմավորեցին մեզ որպես ազատարարներ, այսօր ոչ միայն անտարբեր են մեր նկատմամբ, այլև սկսում են անցնել մեր թշնամու ճամբարը»: Բայց նույնիսկ գիտակցելով իրենց սխալները, նացիստները շատ քիչ բան արեցին, որպեսզի ուղղեն դրանք: Ժամանակակից շատ պատմաբանների կարծիքով, խորհրդային ռեժիմի դեմ պայքարում ոչ-ռուս ժողովրդին (հատկապես ուկրաինացիներին) արդյունավետ օգտագործելու անկարողությունը **Գերմանիայի քաղաքական ամենամեծ սխալներից մեկն էր այդ պատերազմում:**

### **Համագործակցության խնդիր**

Նացիստների նկատմամբ իրենց վերաբերմունքում ուկրաինացիները երկընտրանքի մեջ էին՝ հնազանդություն, թե՛ դիմադրություն: Ինչպես և գերմանացիների կողմից օկուպացված ամբողջ Եվրոպայում, բնակչության մեծամասնությունը որոշեց հնազանդվել: Բայց եթե հնազանդությունը դուրս էր գալիս գերմանացիների հրամանները անտարբերությամբ կատարելու շրջանակներից, այն վերածվում էր համագործակցության: Արևմտյան Եվրոպայում, որտեղ իր պետության նկատմամբ օրինապահությունն ինքնին հասկանալի երևույթ էր և նացիստները մեծ-միակ թշնամի էին, նրանց հետ համագործակցությունը սովորաբար դիտվում էր որպես դավաճանություն: Ուկրաինայում այդ խնդիրն այնքան էլ հեշտ լուծելի չէր: Ամենից առաջ կասկածելի էր հենց ուկրաինացիների օրինապահությունը ստալինյան ռեժիմի կամ լեհական կառավարության նկատմամբ, որոնք նրանց վերաբերվում էին ոչ լավագույն ձևով: *Հարց էր առաջանում. ո՞վ էր ավելի մեծ թշնամին՝ ստալինյան համակարգը, որ այդքան չարիք բերեց 1930-ականներին, թե՛ նացիստական ռեժիմը, որ տեր ու տնօրինություն էր անում հիմա* (բայց հնարավոր է, որ ժամանակավոր): Վերջապես, եթե նկատի առնենք երկու ռեժիմների ծայրահեղ վայրագությունները՝ Ուկրաինայում նրանց գործողությունների ժամանակ, գերմանացիների հետ այս կամ այն ձևով համագործակցությունը հաճախ ուկրաինացիների համար դառնում էր ուղղակի փրկվելու միջոց:

Պատերազմը ուկրաինացիների առաջ դրեց խնդիրների խնդիրը. ինչպե՞ս լավագույն ձևով դուրս գալ փակուղային իրավիճակից: Այդ խնդրի էությունը սովորական մարդկանց մեծամասնության համար հանգում էր ավելի հեշտ խնդրի (միաժամանակ՝ շատ բարդ)՝ ինչպե՞ս պահպանել սեփական կյանքը: Գերմանացիների կողմից օկուպացված տարածաշրջաններում ուկրաինացի առաջնորդների և նրանց կազմակերպությունների հիմնական նպատակը (կամ, ավելի շուտ՝ անլուծելի խնդիրը)՝ ուկրաինացիների շահերը և նացիստներից, և զնալով հզորացող խորհուրդներից պաշտպանելու ձևը գտնելն էր: Այդ իրավիճակում **ուկրաինացի շատ առաջնորդներ ստիպված եղան բռնել որևէ մի տոտալիտար համակարգի կողմը (անկախ նրա նկատմամբ ունեցած նողկանքից), որպեսզի հակադրվեն մյուսին:** Բանի որ խորհրդային համակարգն արդեն տևական էր և ընդհանրապես ավելի մեծ սպառնալիք էր ներկայացնում, Երրորդ ռայխի ուկրաինական համարյա բոլոր կազմակերպություններն ընտրեցին գերմանացիների հետ համագործակցությունը, որպես կանոն, սահմանափակ և շատ ավելի մարտավարական նպատակներ ունեցող: *Կինելով պետություն չունեցող ազգ, ուկրաինացիները գործում էին թույլի դիրքերից:* Նրանք չէին կարող ոչ քաղաքականություն ձևավորել, ոչ էլ պատշաճ ձևով ազդել իրադարձությունների ընթացքի վրա: Այդ պատճառով էլ, գերմանացիների հետ ուկրաինացիների համագործակցությունը դաշնակցային բնույթ չուներ, ինչպես օրինակ՝ Երրորդ ռայխի դաշնակից-երկրների հետ Գերմանիայի համագործակցությունը: Գիշտ է, ուկրաինացիների մեջ կային նաև հարմարվողականներ, գաղափարախոսական մոլեռանդներ, հակասեմիտներ, **սակայն չի կարելի ասել, թե նրանց թիվն ավելի մեծ էր, քան օկուպացված այլ ժողովուրդների մեջ:**

Անհատական մակարդակի վրա գերմանացիների հետ համագործակցությունը սովորաբար հանգում էր տեղական վարչական համակարգում կամ գերմանական համապատասխան ստորաբաժանումներին ենթակա ոստիկանական օժանդակ բաժիններում աշխատելուն: *Ձավթիչների հետ համագործակցելու ամենատարբեր դրդապատճառներ էին բերվում:* Արևմտյան Ուկրաինայում, որտեղ մինչ պատերազմը լեհերն ուկրաինացիների մոտ չէին բողոքում վարչական ամենացածր պաշտոնի անգամ, դրդիչ հիմնական պատճառը՝ իրենց ձեռքում թեկուզ ամենաչնչին իշխանություն ունենալու փափագն էր: Ոչ պակաս կարևոր դրդապատճառ էր աշխատանք ստանալու ձգտումը կամ անձնական պատվախնդրության բավարարումը: Համագործակցության տխրահռչակ ձև էր՝ համակենտրոնացման ճամբարների պահակախմբում ծառայությունը: Այստեղ մշտապես հավաքում էին խորհրդային ռազ-

մագերիներին, որոնք կանգնում էին ծանր ընտրության առջև՝ աշխատել պահակախմբում, թե՛ մեռնել ճամբարում:

Ձանգվածային սպանություններում ուկրաինացիների մասնակցությունը ոչ մեծ էր, և ոչ էլ վճռորոշ, բանի որ ուկրաինացիները նացիստների մոտ զբաղեցնում էին ամենացածր պաշտոնները և երեսների բնաջնջման գործողություններում էլ մենաշնորհը ՏՏ-ինն էր: Նրանց մասնակցությունը սովորաբար հանգում էր նրան, որ հրեաներին գետտո քշելիս, որպես պահակ ուղեկցում էին ոստիկաններին: Մյուս կողմից, շատ ուկրաինացիներ, վտանգելով իրենց կյանքը, օգնում էին հրեաներին: **Ամենահայտնի օրինակը՝ միտրոպոլիտ Շեպտիցկին է. նա ոչ միայն հարյուրավոր հրեաների թաքցրեց վանքերում, այլև իր քարոզներում բացահայտ մեղադրում էր նացիստներին՝ հրեաներին կոտորելու համար:** 1943 թ.-ին Հիմլերին ուղղված ՏՏ-ի զեկույցում ասվում էր, որ միտրոպոլիտը նացիստական հակասեմիտական գործունեության անորոշվելի հակառակորդն է և արդեն նացիզմն համարում է ավելի մեծ չարիք, քան կոմունիզմը:

Պատերազմի առաջին օրերին ՌԻԱԿ-ի և գերմանացիների միջև շփումներից բացի, կազմակերպչական մակարդակի վրա ուկրաինացիների և զավթիչների շահերի ժամանակավոր համընկնման ամենամշանակալից միջադեպը՝ **ՏՏ «Գալիչինա»** կամավոր դիվիզիայի ստեղծումն էր: 1943 թ.-ի գարնանը, Ստալինգրադի տակ կրած պարտությունից հետո, նացիստական իշխանությունները որոշում կայացրեցին՝ բանակի կազմի մեջ ընդգրկել արևելյան տարածաշրջանների բնակիչներին: Գալիչինայի նահանգապետ Օտտո Վեխտերը դիմեց ՌԻԱԿ-ին՝ գերմանական բանակում ուկրաինական դիվիզիա ստեղծելուն աջակցելու առաջարկությամբ: Չնայած ՌԻԱԿ-ի ընդդիմությանը, երկար բանակցություններից հետո, Կուրիյովիչն ու նրա գործընկերները՝ մեծամասամբ ազատագրական շարժման վետերաններ, տվեցին իրենց համաձայնությունը: Գլխավոր պատճառը, որ դրդեց նրանց ընդունելու այդպիսի որոշում, այն էր, որ նրանք հույս ունեին, թե դա զոհե ինչ-որ կերպ կթեթևացներ ուկրաինացիների վիճակը: Ոչ քիչ նշանակություն ուներ նաև 1917-1920 թ.թ.-ների իրադարձությունների դառը փորձը: Կուրիյովիչն ու նրա գործընկերները (այնպես, ինչպես և միտրոպոլիտ Շեպտիցկին) համոզված էին, որ գլխավոր պատճառներից մեկը, որ առաջին համաշխարհային պատերազմից հետո ուկրաինացիները չկարողացան ստեղծել իրենց պետությունը, պատրաստված ու մարտունակ բանակի բացակայությունն էր: Հասկանալով, որ ամեն ինչից դատելով, մոտենում է Գերմանիայի պարտությունը, նրանք վճռեցին, որ այս անգամ ուկրաինացիները չպետք է մնան առանց կանոնավոր զինված ուժերի՝ գալիք քառսուն:

Դիվիզիայի ստեղծմանը նախորդած բանակցությունների ժամանակ ՌԻԱԿ-ն համառորեն պահանջում էր, որ այն կռվի միայն խորհուրդների դեմ: Հիմլերի ցուցմունքներին հետևելով, Վեխտերը պահանջում էր, որպեսզի դիվիզիայի հրամանատարությունն ամբողջովին լինի գերմանական, իսկ Հիտլերին չզայրացնելու համար դիվիզիան անվանել ոչ թե ուկրաինական, այլ՝ գալիցյան: Երբ 1943 թ.-ի հունիսին ՌԻԱԿ-ն դիվիզիա կազմավորելու գորակոչ հայտարարեց, արձագանքեցին 82 հազ. մարդ, նրանցից 13 հազ.-ը շուտով դարձան ՏՏ «Գալիչինա» կամավորների դիվիզիայի մարտիկներ:

Հարկ է նշել, որ **կամավորները հիմնականում առաջնորդվում էին հայրենասիրական գզացումներով:** Նացիստական ռեժիմի հանդեպ նրանք համակրանք չէին տածում և լի էին հավատով, որ յուրացնելով գերմանական զինվորական վարժածության լավ կողմերը, ապագա ուկրաինական կանոնավոր բանակի հիմքերը կդնեն:

Գալիցյան դիվիզիայի մարտիկները միակ ուկրաինացիները չէին Հիտլերի բանակում: **Գերմանական զինվորական համագզեստ կողո մոտ 1 մլն նախկին խորհրդային քաղաքացիներից, ուկրաինացիները մոտ 220 հազարն էին (մենացածր հիմնականում ռուսներ էին):** Համեմատության համար հարկ է հիշել, որ մոտ 2 մլն ուկրաինացի կռվում էին խորհրդային բանակի կողմից, ինչպես նաև մեծ թվով ուկրաինացիներ՝ լեհական, ռումինական, հունգարական, չեխական, ամերիկյան ու կանադական բանակներում էին: Այսպիսին էր պետություն չունեցող ժողովրդի ճակատագիրը:

## **Դիմադրության շարժում**

Ինչպես և օկուպացված Եվրոպայում ամենուր, Ուկրաինայում գերմանացիների զալուց ամմիջապես հետո սկսվեց **ընդհատակյա դիմադրություն:** Դրա առաջնալուծն ոչ պակաս չա-



փով նպաստեց այն, որ գերմանական զորքը չուներ բավարար թվով ուժեր, որպեսզի լիովին վերահսկեր գրավված տարածքները: Բացի այդ, Ուկրաինայում արդեն կար ընդհատակ, որ հիմնել էին ՌԻԱԿ-ը, Խորհուրդները և, հյուսիս-արևմուտքում՝ լեհերը, որն ի վիճակի էր ստեղծելու պարտիզանական կազմավորումներ: Պարտիզանների շարքերը համալրելու աղբյուրները բավականին շատ էին. այստեղ էին գալիս նախկին կարմիրբանակայինները՝ կոմունիստներն ու ազգայնականները, հրեաները, փախստակ-նստիկանները, երիտասարդները, որոնք թաքնվում էին աշխատուժի գերմանացիների հավաքագրումներից, և ուրիշ շատերը: Քանի որ Ուկրաինայի տարածքի հիմնական մասը գտնվում է տափաստանային գոտում, որը նպաստավոր չէ պարտիզանական պատերազմ վարելու համար, պարտիզանների գործողությունների հիմնական շրջաններ դարձան Վոլինի անտառները, Պոլեսյեի ճահճուտներն ու Կարպատները:

### Ուկրաինական ապստամբական բանակ

Ուկրաինացի ազգայնականների առաջին պարտիզանական ջոկատները հայտնվեցին Պոլեսյեում ու Վոլինում, և ինչքան էլ զարմանալի է, ՌԻԱԿ-ի հետ ոչ մի կապ չունեին: Նացիստների և Խորհուրդների միջև պատերազմը սկսվելուց շատ չանցած, տեղային ուկրաինացի գործիչ, Վարշավայի ՌԺՅ պետլյուրովյան վտարանդի կառավարության հետ կապեր պահպանող **Տարաս-Բուլբա-Բորովեցը** կազմավորեց «Поліська Січ» անվանումով ոչ կանոնավոր զորամաս, որի հիմնական նպատակն այդ տարածաշրջանը Կարմիր բանակի մնացորդներից մաքրելն էր: Երբ 1941 թ.-ի վերջին գերմանացիները փորձեցին ցրել նրա զորամասը, Բուլբա-Բորովեցն իր մարդկանց տարավ անտառ, որպեսզի կռվի և Խորհուրդների, և գերմանացիների դեմ: 1942 թ.-ին, թաքնվելով Կոխի հետապնդումներից, ՌԻԱԿ-ի և ՌԻԱԿ-Մ-ի անդամները Վոլինում նույնպես ոչ մեծ ջոկատներ կազմավորեցին:

1942 թ.-ի վերջին ՌԻԱԿ-ի ղեկավարները որոշում ընդունեցին խոշոր պարտիզանական ուժեր կազմավորել և այդպիսով ուկրաինական կանոնավոր բանակի հիմքը դնել, որը, նրանց խորը համոզմամբ, անհրաժեշտ կլիներ նացիստական-խորհրդային պատերազմի ավարտին: Կային նաև ավելի հրատապ պատճառներ. նախ՝ ուժեղացել էին տեղի բնակիչների նկատմամբ գերմանացիների բռնությունները և նրանք ՌԻԱԿ-ից պահանջում էին պաշտպանել իրենց, և երկրորդ՝ 1942 թ.-ի վերջին Ուկրաինայի հյուսիս-արևմուտք սկսեցին թափանցել խորհրդային պարտիզանական ջոկատներ Բելոռուսիայից, հետևաբար, ՌԻԱԿ-ը պետք է իր վրա վերցնե «ժողովրդական բանակի» դերը, քանի դեռ դա չէին արել Խորհուրդները:

Չգտելով համախմբել ազգայնական բոլոր ուժերը, ՌԻԱԿ-ն Բորովեցի և ՌԻԱԿ-Մ-ի ջոկատներին ստիպեց միանալ իր կազմավորումներին, որոնց տվել էր **«Ուկրաինական ապստամբական բանակ» (ՌԱԲ)** անվանումը: Ընդլայնված ուժերի գլխավոր հրամանատար նշանակվեց ՌԻԱԿ-ի ղեկավարության անդամ, վերջերս կազմավորված «Նախտիհալ» գումարտակի բարձրաստիճան սպաներից մեկը՝ **Ռոման Շուխիչը**: ՌԻԱԿ-ի ճյուղավորված ու արդյունավետ ընդհատակյա ցանցի վրա հենվելով, ՌԱԲ-ն շատ արագ դարձավ մեծ, լավ կազմակերպված պարտիզանական բանակ, որը վերահսկում էր Վոլինի և Պոլեսյեի, իսկ հետագայում նաև Գալիչինայի շրջանների մեծ մասը: Չնայած ուկրաինական արտագաղթային շատ աղբյուրներ վկայում են, որ իր ուժերի գագաթնակետին՝ 1943 թ.-ի վերջից 1944 թ.-ի սկիզբը, ՌԱԲ-ի կազմում 100 հազ. մարտիկ կար, սակայն ավելի ծանրակշիռ հաշվարկներով այն հասնում էր 30-40 հազ.-ի: Նացիստների կողմից օկուպացված Եվրոպայի ընդհատակյա այլ շարժումների հետ համեմատած, ՌԱԲ-ը բացառիկ երևույթ էր, քանի որ գործնականում չուներ օտարերկրյա հովանավոր: **Նրա հզորացումն ու ամրապնդումը վկայում էր ուկրաինացի ժողովրդի կողմից լուրջ ու լայնածավալ աջակցության մասին:**

ՌԱԲ-ի արագ ընդարձակումը նրա քաղաքական բազայի ընդլայնում էր պահանջում: Չնայած ՌԻԱԿ-ն կազմում էր ՌԱԲ-ի ղեկավարության հիմքը, սակայն պարզ էր, որ մի ազգայնական խմբավորում ի վիճակի չէր բոլոր ուկրաինացիների շահերի արտահայտիչ դերին հավակնել: Այդ պատճառով, 1944 թ.-ի հուլիսին, ՌԻԱԿ-ի նախաձեռնությամբ, Սամբրի շրջանում (Գալիչինա) գաղտնի կերպով հավաքվեցին արևմտաուկրաինական տարբեր կուսակցությունների ներկայացուցիչներ (բացի ՌԻԱԿ-Մ-ից) և պատգամավորներ Արևելյան Ուկրաինայից ու ստեղծեցին **«Ուկրաինական գլխավոր ազատագրական ռադա» (ՌԳԱՌ)**: Նոր կազմակերպության ծրագիրը աչքի էր ընկնում նրանով, որ այնտեղ արտացոլվել էին պատերազմի բերած փոփոխությունները, հատկապես՝ արևելյան ուկրաինացիների հետ շփումների փորձը, ինչի արդյունքում զգալիորեն լայնացել էր արմատական ազգայնական-

ների քաղաքական մտահորիզոնը:

Գաղափարախոսական այդ փոփոխություններից մի քանիսը նկատելի դարձան արդեն 1943 թ.-ին, երբ ՌԻԱԿ-ի վեհաժողովը հանդիսավոր կերպով հայտարարեց, որ «ՌԻԱԿ-ը պայքարում է իմպերիալիզմի և կայսրությունների դեմ», և այդ պատճառով «պայքարում է ԽՍՀՄ-ի և գերմանական «Նոր Եվրոպայի» դեմ»: Ընդգծելով հակամացիստական և հակախորհրդային ուժերի հետ իր համերաշխությունը, ՌԳԱՌ-ը միաժամանակ առաջարկեց արմատական ազգայնական ուսմունքի մի քանի կարևոր ճշգրտումներ ու լրացումներ: Նա կոչ էր անում ավելի հանդուրժողական լինել ոչ-արմատական ազգայնական գաղափարախոսությունների նկատմամբ, հրաժարվել ռասայական ու էթնիկական բացառիկությունից և զգալի-



Ռոման Շուխիչ (գեներալ Տարաս Զուպրինկա)

որեն մեծ ուշադրություն էր դարձնում խորհրդային ուկրաինացիների համար այնքան կարևոր սոցիալ-տնտեսական խնդիրներին: Բացի այդ, ՌԳԱՌ-ը Մոսկվայի դեմ համատեղ պայքարի կոչ էր անում ԽՍՀՄ-ի ոչ-ռուս ժողովուրդներին: Այնուամենայնիվ, շատ շուտով ակնհայտ դարձավ, որ չնայած ծրագրի բոլոր ճշգրտումներին, արմատական ազգայնականների համար անսահման ծանր է լինելու ապրել խստորեն վերահսկվող խորհրդային համակարգում:

### Լեհ-ուկրաինական սպանդ

ՌԱԲ-ը ստիպված եղավ պայքարել ոչ միայն նացիստների ու Խորհուրդների դեմ. Վոլինի, Պոլեսյեի և Խոլմշչինայի լեհ-ուկրաինական խառը բնակչություն ունեցող տարածքներում նա ներքաշվեց լեհերի հետ բացառիկ դաժան բախումների մեջ: Անկախ պատերազմի հնարավոր ելքից, ուկրաինացի արմատական ազգայնականները հաստատակամորեն որոշել էին լեհերին (նրանց մեծ մասը միջպատերազմական շրջանում գաղութատերեր էին) քշել այն բոլոր հողերից, որտեղ ուկրաինացիները մեծամասնություն էին: Իր կողմից, լեհական ազգայնական ընդհատակյա բանակը՝ **Կրայովայի բանակը**, ոչ պակաս վճռականությամբ էր լցված՝ լեհական պետության մասը կազմող հողերի վերահսկողությունն իր ձեռքը պահելու



համար: Արդյունքում մահացու պայքար սկսվեց տարածքների և հին հաշիվները մաքրելու համար, որը հաճախ հրահրում էին խորհրդային պարտիզանները, կամ էլ՝ թեժացնում էին գերմանացիները:

Ամենաողբալիս այն էր, որ այդ անմիտ բախումների ժամանակ ամենաշատը տուժում էր քաղաքացիական բնակչությունը: Լեհական աղբյուրների համաձայն, 1943-1944 թ.թ.-ներին ուկրաինացիների՝ հիմնականում ՌԻԱ-ի «Անվտանգության ծառայության» (ԱՃ) կողմից, Վոլինում կոտորվել է 60-80 հազ. լեհ՝ կին, տղամարդ, երեխա: Ուկրաինացիները պնդում են, որ իրենց հայրենակիցների ուսանողների սպանությունները սկսվել են ավելի վաղ՝ 1942 թ.-ին, երբ լեհերը հազարավոր ուկրաինացի գյուղացիների մորթեցին Խոլմշչինայի լեհական տարածքներում, և շարունակվեց նաև ավելի ուշ՝ 1944-1945 թ.թ.-ներին, երբ Սան գետից դեպի արևմուտք ընկած տարածքներում զոհ դարձավ անպաշտպան ուկրաինացի փոքրամասնությունը: Ամեն դեպքում, միանգամայն պարզ է, որ *և՛ ուկրաինացի, և՛ լեհ զինված կազմավորումները ներքաշվեցին համընդհանուր կոտորածի մեջ, որը դարձավ երկու ժողովուրդների միջև սերնդե-սերունդ հասունացող ատելության արյունահեղ գազաթնակետը:*

### **Խորհրդային պարտիզաններն Ուկրաինայում**

Գերմանական ներխուժումից անմիջապես հետո, կոմունիստական կուսակցության գործիչները սկսեցին պարտիզանական ջոկատներ կազմավորել թշնամու թիկունքում: Ամբողջ պատերազմի ընթացքում խորհրդային պարտիզանները խստորեն վերահսկվում էին Կրեմլի կողմից: Քանի որ խորհրդային ընդհատակ ընդլայնվում էր դանդաղորեն, իսկ նրա հաջողությունները 1941 թ.-ի ընթացքում և 1942 թ.-ի սկզբին զգալի չէին, Մոսկվայի պարտիզանական Կենտրոնական շտաբը 1942 թ.-ի մայիսին վերակազմավորեց այն: Հաջորդ ամսին ստեղծվեց ուկրաինական պարտիզանական հրամանատարություն՝ ՆԳՎ-ի բարձրաստիճան սպա Տիմոֆեյ Ստրոկաչի գլխավորությամբ: Ստալինգրադի տակ տարած հաղթանակից հետո զգալիորեն մեծացավ խորհրդային պարտիզանների թիվն ու ակտիվությունը, հատկապես՝ Բելոռուսիայի դժվարամատչելի ճահճային շրջաններում:

Ուկրաինայում, սակայն, խորհրդային պարտիզանները ոչ մի անգամ այնպիսի դեր չխաղացին, ինչպես Բելոռուսիայում: Արդեն ասվել է, որ Ուկրաինայի գյուղական տեղամքի մեծ մասը պարտիզանական պատերազմ մղելու համար պիտանի չէր: Արևմտյան Ուկրաինայում, որտեղ իշխում էր ՌԻԱ-ը, խորհրդային պարտիզանները բնակչության աջակցությունը չէին ստանում: Այդ պատճառով էլ նրանց գործողությունների մեծ մասը սահմանափակվում էր Վոլինի և Պոլեսյեի տարածքների մի մասով:

Խորհրդային պարտիզանների անելիքների մեջ էր մտնում գերմանական հաղորդակցությունների ավերումը (հատկապես արդյունավետ էր, այսպես կոչված, «ռելսային պատերազմը», որը զգալիորեն դժվարացնում էր ճակատին գերմանական համալրումներ հասցնելը), գերմանական զորքի ուշադրությունը իրենց վրա շեղելը, թշնամու թիկունքում անկարգություններ ու լարվածություն ստեղծող դիվերսիաներ կազմակերպելը, օկուպացված տարածքներում խորհրդային ներկայության հաստատումը: Խորհրդային պարտիզանների (ինչպես նաև ՌԻԱ-ի) ամենասիրած մարտավարությունը՝ իրենց հսկողության տակ գտնվող Պոլեսյեի և Վոլինի անմատչելի շրջաններից՝ «պարտիզանական հանրապետություններից», կատարվող *տևական ասպատակություններն էին:* Խորհրդային պարտիզանները հաճախ ընդհատումների մեջ էին մտնում ՌԻԱ-ի հետ, փորձելով վերացնել նրա հրամանատարներին և վնասել սատարող բազաներին:

Ուկրաինայում խորհրդային պարտիզանական հիմնական կազմավորումների հրամանատարներն էին *Սիդոր Կովալսկը, Ալեքսանդր Սաբուրովը* և *Պետրո Վերչիհորան:* Նշանավոր Կովալսկի ամրացել էր Պոլեսյեում 1943 թ.-ի սկզբին: Իր ենթակայության տակ ունենալով լավ պատրաստվածություն անցած սպաներ և կենտրոնից գեներալ Ն. Ջինամբերո ստանալով գաղտնի օդանավակայանների միջոցով, նա ստեղծեց մի քանի հազար մարդու կազմված խոշոր պարտիզանական միավորում: 1943 թ.-ի ամռանը նա ձեռնարկեց երկարատև ռազմարշավ դեպի Կարպատներ: Այդ գործողության հիմնական նպատակը՝ Մերձկարպատների նավթահանքերի ոչնչացումը՝ չիրականացվեց: Սակայն այն ունեցավ քաղաքական ու հոգեբանական մեծ նշանակություն, ցուցադրելով իրենց թիկունքում կարգ ու կանոն պահպանելու գերմանացիների անզորությունը և ցույց տալով խորհուրդների վերադառնալու հնարավորությունը:

Խորհրդային հեղինակները վստահաբար ապացուցում էին, որ կոմունիստական ընդհա-

տակն Ուկրաինայում համընդհանուր ինտերնացիոնալ շարժում էր, որում մասնակցում էին 62 ազգի ներկայացուցիչներ: Ընդ որում՝ հենց խորհրդային աղբյուրների համաձայն, խորհրդային պարտիզանների շարքերում շատ քիչ ուկրաինացիներ կային: Կազմելով բնակչության 80 %-ը, Ուկրաինայում գործող հինգ հիմնական պարտիզանական միավորումներում նրանք կազմել են ընդամենը մարտիկների 46 %-ը (Կովալսկի մոտ պարտիզանների միայն երրորդ մասն էր ուկրաինացի): Իսկ ռուսները, բնակչության կազմում իրենց մասի համեմատությամբ, խորհրդային պարտիզանների մեջ կազմել են անհամեմատ մեծ մասը՝ 37 %-ը: Խորհրդային հեղինակների որոշ աշխատանքներում հաստատվում էր, որ Ուկրաինայում խորհրդային պարտիզանների թիվը գերազանցում էր 250 հազ.-ը, և նույնիսկ 500 հազ.-ը, այն դեպքում, երբ այլ մասնագետների գնահատականներով՝ նրանց թիվը եղել է 50 հազ.-ից ոչ ավել: Արևմտյան հեղինակները սովորաբար վերջին գնահատականին են կողմ: Ամեն դեպքում, պարտիզանական շարժման խորհրդային վարկածը՝ որպես ուկրաինացիների զանգվածային հայրենասիրական վերելք, այնպես, ինչպես և ազգայնականների նմանատիպ նկարագրությունը, որ վերաբերում է ՌԻԱ-ին, չի համապատասխանում իրականությանը: Ուկրաինայի բնակչության ճնշող մեծամասնությունը պատերազմի ժամանակ մնացել էր քաղաքականապես պասիվ, և այնքան չէր մտահոգվում դիմադրություն կազմակերպելու, որքան ուղղակի գոյատևելու մասին:

### **Խորհուրդների վերադարձը Ուկրաինա**

*1943 թ.-ին նացիստական-խորհրդային պատերազմում վճռորոշ բեկում տեղի ունեցավ. գերմանացիները կորցրեցին իրենց հարձակողական ուժը և առաջխաղացումը դադարեց, իսկ խորհուրդներն, ընդհակառակը, հավաքելով ուժերը, անցան լայնածավալ հակահարձակման:* Առաջին վկայությունը, որ հիտլերյան բանակը սպառել էր իրեն, 1943 թ.-ի հունվարին Ստալինգրադի տակ խորհրդային զորքերի տարած տպավորիչ հաղթանակն էր: Հավաքելով պահեստային մնացած ուժերը, գերմանացիները վերջին անգամ նախաձեռնությունը իրենց ձեռքը վերցնելու փորձ արեցին 1943 թ.-ի ամռանը՝ Կուրսկի ճակատամարտում, սակայն այստեղ ևս պարտություն կրեցին: Այդ նույն ժամանակ, խորհուրդները, հենվելով մարդկային հսկայական պաշարների, կատարելագործված ռազմական արդյունաբերության և դաշնակիցների ռազմական հսկայական մատակարարումների վրա, Կուրսկի տակ հաղթանակից անմիջապես հետո սկսեցին հակահարձակումները՝ նպատակ ունենալով գերմանացիների ձեռքից խլել Չախսիմյա Ուկրաինան:

Ուկրաինայի վրա խորհրդային հարձակումը կենտրոնացված հարձակում էր, նրանում մասնակցում էին Կարմիր բանակի հետևակային զորքի 40 %-ը և հրասայլերի 80 %-ը: Արևմտյան աղբյուրների վկայությամբ, *Կարմիր բանակն ուներ մարդկային ուժի եռապատիկ և, ամերիկյան մատակարարումների շնորհիվ, տեխնիկայի հնգապատիկ առավելություն:* Իսկ *խորհրդային հեղինակները նշում էին, որ թվային գերազանցությունն ընդամենը կրկնապատիկ էր* և որ իր հաջողությունների համար Կարմիր բանակը պարտական է ոչ թե դրան, այլ իր զինվորների քաջությանը, արիությանն ու հմտությանը: Այսպես թե այնպես, բայց ի տարբերություն 1941 թ.-ի «կայծակնային պատերազմի», որ գերմանացիներին թույլ տվեց չորս ամսվա ընթացքում գրավել ամբողջ Ուկրաինան, խորհրդային «բուլդոզերը» շարժվում էր զգալիորեն դանդաղ՝ հետևողականորեն, ճակատամաս առ ճակատամաս դուրս մղելով հակառակորդին, ուժասպառ անելով նրա ուժերը: Մի տարուց էլ պակաս ժամանակում Ուկրաինան ետ նվաճվեց:

1943 թ.-ի ամռան վերջին և աշնանը խորհրդային զորքերը Իվան Կոնկի, Նիկոլայ Վատուտինի և Ռոդիոն Մալինովսկու հրամանատարությամբ գրավեցին Չախսիմյակն ու Դոնբասը: Օգոստոսի 23-ին գերմանացիները երկրորդ և արդեն վերջին անգամ կորցրեցին Խարկովը, սեպտեմբեր-հոկտեմբերին, կատաղի մարտերից հետո, Կարմիր բանակը ճեղքեց Դնեպրի երկարությամբ ձգվող գերմանացիների հզոր պաշտպանական գիծը և նոյեմբերի 6-ին Վատուտինը մտավ Կիև: 1944 թ.-ի հունվարի կարճատև ընդմիջումից հետո, մոտ 2,3 մլն-անոց Կարմիր բանակը սկսեց Աջափնյակն ու Դրինը գերմանացիներից ազատագրելու ռազմարշավը: Այդ նպատակի իրականացմանը նպաստեց Կորսուն-Շևչենկովսկու տակ տարած խոշոր հաղթանակը: Փետրվարի վերջին գերմանացիների ձեռքին մնացել էր միայն Արևմտյան Ուկրաինան:



Ուկրաինան ետ նվաճելու երրորդ փուլը սկսվեց 1944 թ.-ի հուլիսի կեսերին: Բրոդիների տակ խորհրդային զորքերը շրջապատեցին և ջախջախեցին գերմանական ութ դիվիզիա՝ ընդհանուր հաշվով մոտ 60 հազ. մարդ: Նրանց թվում էին նաև SS «Գալիչինա» դիվիզիայի 10 հազ. մարտիկները, որոնք, ի դժբախտություն իրենց, մարտական մկրտություն ստացան այդպիսի աղետալի հանգամանքներում: Դիվիզիայի մոտ 5 հազ. զինվոր փորձեցին ճեղքել շրջապատումը, այդ ընթացքում 3 հազ.-ը գոհվեցին, վիրավորվեցին կամ գերի ընկան, իսկ 2 հազ.-ը խուսափեցին գերությունից, և նրանցից շատերը հետագայում միացան ՌԻԱԲ-ին: Այդ հաղթանակից հետո խորհրդային զորքերը շատ արագ անցան Գալիչինան, հուլիսի 27-ին մոտ գրավելով Լվովը, Պերեմիշլը և Ստանիսլավը: Սեպտեմբերին նրանք անցան Կարպատները և 1944 թ.-ի հոկտեմբերի շեմին խորհրդային իշխանությունը վերականգնվեց ամբողջ էթնիկ ուկրաինական տարածքներում:

Այնպես, ինչպես դա արեցին խորհուրդները 1941 թ.-ին, նահանջող նացիստները դիմեցին «այրված հողերի» մարտավարությանը: Իր զորքերին տրված հրամանում շեշտվում էր. «Զի կարելի թույլ տալ, որ ուկրաինայից մեր նահանջի դեպքում, մեզանից հետո թողնենք թեկուզ մի մարդ, թեկուզ մի գլուխ անասուն կամ մի բուռ հացահատիկ... Թշնամին պետք է գտնի ամբողջովին այրված և ամայացված հողը»: Արդյունքում, Դնեպրի ծախ ամփի երկարությամբ ձգվող 300 կմ-անոց գոտուց քվեցին մարդկային հոծ բազմություններ, Պոլտավայի, Դնեպրոպետրովսկի, Կրեմենչուգի և շատ այլ քաղաքների զգալի մասն իսպառ այրվեց: Աջափնյակն այդպիսի ընդարձակ ավերածությունների չէր ենթարկվել, չնայած զանգվածային տարահանումներից չէր խուսափել:

### Ստալինի գաղափարախոսական հարձակումը

Ի տարբերություն Դիտլերի, Ստալինը դասեր էր քաղում սեփական սխալներից: Տեսնելով, թե որքան անտարբեր էր բնակչությունը իր ռեժիմի նկատմամբ պատերազմի սկզբում, նա որոշեց գաղափարախոսական լայն գործունեություն ծավալել: Նրա նպատակը՝ օկուպացված տարածքներում խորհրդային քաղաքացիներին՝ ֆաշիստներին դիմադրելու կոչ անելն էր, ինչպես նաև հասկացնել տալը, որ պատերազմից հետո ռեժիմն ավելի հանդուրժելի կդառնա: Քանի որ գերմանացիների դեմ պայքարում ազգային շարժառիթներն ակներևորեն գերակշռում էին մարքսիզմին, ապա այդ գործունեության հիմնական թեման դարձավ ազգայինը: Ռուսական ազգային զգացողությունը և նույնիսկ ռուսական ազգայնականությունը դրված էին ուշադրության կենտրոնում, հասարակական գիտակցության մեջ ձևավորվում էր Ռուսական կայսրության փառքի նոր կերպար, հիշատակվում էին անցյալում օտարերկրյա զավթիչների դեմ նրա պայքարը, ամեն կերպ օգտագործվում էին նրա մեծ հերոսների կերպարները:

Տպավորություն ստեղծելու համար, թե ՌԻԱՄԳ-ն ինքնիշխան է, նրա կառավարությունում ձևավորվեցին լրացուցիչ նախարարություններ՝ պաշտպանության և արտաքին գործերի: Ինչպես և մյուս հանրապետությունները, Ուկրաինան միջազգային կապերի մեջ մտնելու իրավունք ստացավ (սակայն ոչ իրական հնարավորություն): Ուկրաինացի նշանավոր գործիչները պետական բարձր պաշտոններ զբաղեցրին: Օրինակ, դրամատուրգ Օլեքսանդր Կորնիլչուկը դարձավ արտաքին գործերի նախարար, իսկ համընդհանուր հռչակ ունեցող պարտիզանական հրամանատար Կովկակը՝ պաշտպանության նախարար: Սակայն Ուկրաինան իր զինվորական կազմավորումներն ունենալ՝ կարող էր միայն թղթի վրա: Դրա փոխարեն ճակատի հարավային զորամասը անվանվեց Ուկրաինական ճակատ, հեղինակավոր նոր զինվորական շքանշանն ստացավ Բոգդան Խմելնիցկու անունը: Զգալիորեն թուլացավ ուկրաինացիների մշակութային գործունեության վերահսկողությունը, իսկ Կոլոդիմիր Սոսյուրայի «Սիրելի Ուկրաինան» հայրենասիրական բանաստեղծությունը նույնիսկ արժանացավ Ստալինյան մրցանակի:

Նկատելով, թե ինչ արագ ու խանդավառությամբ են օկուպացված տարածքներում ժողովուրդը վերադառնում կրոնին, Ստալինը հաշտվեց Ռուսական ուղղափառ եկեղեցու հետ՝ վերացնելով նրա գործունեության բազմաթիվ սահմանափակումները, և ցրեց «Մարտնչող անաստվածների Միություն» քարոզչական հակակրոնական կազմակերպությունը: Ուղղափառ եկեղեցին դրան շնորհակալությամբ հատուցեց՝ հավատացյալներին կոչ անելով մարտնչել գերմանացիների դեմ, և նգովելով նրանց, ովքեր համագործակցում էին գերմանացիների հետ:

### Խորհուրդների վերադարձը Արևմտյան Ուկրաինա

Քանի որ Արևմտյան Ուկրաինան խորհրդային իշխանության տակ մնացել էր շատ կարճ ժամանակով, ապա Կարմիր բանակի վերադարձն այստեղ բոլորովին այլ կերպ կատարվեց, քան խորհրդայնացված արևելքում: 1944 թ.-ին Արևմտյան Ուկրաինան վերցնելուց հետո, ի տարբերություն 1939 թ.-ի զգուշավոր քաղաքականության, խորհուրդներն՝ արագ, վճռական և առանց փոխզիջման, «ազգայնական» արևմտյան ուկրաինացիների վզին փաթաթեցին իրենց իշխանությունը:

18-ից մինչև 50 տարեկան բոլոր տղամարդիկ զորակոչվեցին Կարմիր բանակ և ուղարկվեցին ճակատ՝ վատ զինված և համարյա առանց զինվորական պատրաստվածության: Անմիջապես սկսվեցին հունա-կաթոլիկական եկեղեցու դեմ բռնությունները: Միտրոպոլիտ Շեպտիցկին ձերբակալվեց Լվովում և տնային կալանքի ենթարկվեց: Մի քանի ամիս անց նա մահացավ: Նրա փոխանորդ Յոսիպ Ալիպից ուղարկվեց համակենտրոնացման ճամբար: Սկսվեց հունա-կաթոլիկական եկեղեցին բռնի կերպով Մոսկվայի վերահսկողության տակ գտնվող Ռուսական ուղղափառ եկեղեցու կազմում ներառելու նախապատրաստությունը:

Արևմտյան Ուկրաինան հեղեղել էին Արևելյան Ուկրաինայից եկած ավելի քան 30 հազ. կուսակցական աշխատողներով և 3,5 հազ. հատուկ պատրաստված քարոզիչներով, որոնք սկսեցին տարածաշրջանի խորհրդայնացման նոր գործունեություն ծավալել: Քանի որ մտավորականությունն այստեղի բնակչության ազգայնորեն առավել գիտակից մասն էր, իշխանությունները հատուկ ջանքեր էին գործադրում՝ բանվորներին ու գյուղացիներին նրանցից հեռու պահելու համար, խոստանալով «հատուկ ուշադրություն» դարձնել այն մտավորականներին, ով կրթություն էր ստացել ոչ թե խորհուրդների ժամանակ, այլ՝ «բուրժուական» դպրոցներում: Արդյունքում, արևմտուկրաինական մտավորականության զգալի մասը նախընտրեց նահանջող գերմանացիների հետ փախչել այն տարածքներից, որոնք դեռ Կարմիր բանակը չէր օկուպացրել:

Խորհուրդների մուտքը Արևմտյան Ուկրաինա ՌԻԱԲ-ի ղեկավարության առջև դրեց Ստալինի գերազանցող ուժերի դեմ պայքարը շարունակելու նպատակահարմարության բարդ հարցը: Սկզբում ՌԻԱԲ-ը ենթադրում էր, որ պատերազմի ընթացքում նացիստներն ու խորհուրդները միմյանց կհասցնեն լրիվ ուժասպառության, այնպես՝ ինչպես եղավ 1917-1918 թվականներին: Սակայն, երբ պարզ դարձավ, որ արևելքում ԽՄԳՄ-ն հաղթում է, ՌԻԱԲ-ն սպասում էր, որ պարտված Գերմանիան դաշինքի մեջ կմտնի արևմտյան տերությունների հետ, որպեսզի կանխի խորհրդային էքսպանսիոնիզմը: Դատկապես այդ սին հույսերը զգալի չափով դրդեցին ՌԻԱԲ-ՌԻԱԲ-ի ղեկավարությանը շարունակելու խորհուրդների դեմ պայքարը:

Այն բանից հետո, երբ Կարմիր բանակի հիմնական ուժերը շարժվեցին Ուկրաինայով, ՌԻԱԲ-ը մի շարք գործողություններ ձեռնարկեց, որոնք ուղղված էին գորահավաքը վիժեցնելուն, «անհուսալի տարրերին» վտարելու մասին նախազգուշացնելուն և հունա-կաթոլիկական եկեղեցու նկատմամբ ճնշումներին հակազդելուն: ՌԻԱԲ-ի գործողություններն առաջին հերթին ուղղվում էին ՆԳԺԿ-ի, կոմունիստական կուսակցության անդամների դեմ, և նրանց դեմ, ով համաձայնվում էր համագործակցել խորհրդային իշխանության հետ: 1944 թ.-ի գարնանը, դարանակալվելով և ՌԻԱԲ-ի ջոկատի հետ մարտի բռնվելով, մահացու վիրավորվեց Կարմիր բանակի հայտնի գեներալ Նիկոլայ Վատուտինը: Զգտելով ոչնչացնել ՌԻԱԲ-ը, խորհրդային զորքերը պարտիզանական տարածքների լայնածավալ շրջափակում կազմակերպեցին, նրանց մոտ ուղարկեցին գործակալներ՝ հրամանատարներին վերացնելու համար, կազմավորեցին հակապարտիզանական հատուկ գումարտակներ: Խորհրդային քարոզչությունն ՌԻԱԲ-ին և ՌԻԱԲ-ին վարկաբեկելու արդյունավետ գործունեություն ծավալեց, նրանց ներկայացնելով որպես նացիստների օգնականներ, գործունեություն, որ շարունակվում էր մինչև վերջին ժամանակները:

ՌԻԱԲ-ի հետ խորհրդային բանակի մի քանի ընդհարումներ զգալի մասշտաբների հասան: Օրինակ, 1944 թ.-ի ապրիլին Վոլինի Կրեմենցի շրջանում ՌԻԱԲ-ի դեմ գործողության ժամանակ մասնակցում էր մոտ 30 հազ.-անոց ստորաբաժանում: Մյուս ընդհարումներն ավելի փոքրածավալ էին, բայց ավելի հաճախակի: Խորհրդային տվյալների համաձայն՝ 1944 թ.-ի աշնանը Վոլինում ՌԻԱԲ-ը ասպատակել է 800 անգամ: Միայն Գալիչինայի Ստանիսլավշի-նայում սպանվել են մոտ 1500 խորհրդային ակտիվիստներ: Այդ ժամանակաշրջանում, ըստ խորհրդային իշխանությունների հայտարարությունների, նրանց հաջողվել է ոչնչացնել ՌԻԱԲ-ի 36 «ավազակախմբերի»՝ ընդհանուր թվով 4300 մարդու: Ինչպես և պետք էր սպասել,



մարտերը ծայրաստիճան կատաղի էին. ոչ մի կողմը չէր գիշում մի թիզ հող անգամ: ՈՒՄԲ-ի վիրավոր մարտիկները հաճախ ինքնասպանություն էին գործում, միայն թե չընկնեն թշնամու ձեռքը: Պատերազմը ավարտվելու պահին՝ 1945 թ.-ի մայիսի 9-ին, խորհուրդների կողմից Արևմտյան Ուկրաինայի գյուղական շրջանների վերահսկողությունը դեռևս շատ հեռու էր լիակատար լինելուց:

\* \* \*

Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ Ուկրաինայի և նրա բնակչության կրած կորուստների նույնիսկ մակերեսային հաշվարկը տոսկալի տպավորություն է գործում: **Ընդհանուր հաշվով զոհվել է 5,3 մլն մարդ (վիճակագրությունն այժմ վերանայվում է), այսինքն Ուկրաինայի ամեն վեցերորդ բնակիչը:** Գերմանիա հարկադիր աշխատանքի են քշվել 2,3 մլն մարդ: Լրիվ կամ մասնակի ավերվել է ավելի քան 700 քաղաք և 28 հազ. գյուղ, անապատան է մնացել մոտ 10 մլն մարդ: Ակներևության համար կարելի է բերել այսպիսի փաստ՝ ֆրանսիական կամ չեխական մեկ ավերված գյուղին ընկնում է նույնպիսի ծակատա-գրի արժանացած 250 ուկրաինական գյուղ: Պատերազմն Ուկրաինային այնպիսի ավերա-ծություններ բերեց, ինչպիսիք չի տեսել եվրոպական ոչ մի այլ երկիր, այդ պատճառով էլ նրա տնտեսական վնասները թվում են անհավանական: Ավելի քան 16 հազ. արդյունաբերական ձեռնարկությունների և 28 հազ. կոլտնտեսությունների լրիվ կամ մասնակի ոչնչացումը նշա-նակում էր, որ Ուկրաինան գրկվեց իր ունեցածի մեծ մասից՝ ինչին չափազանց թանկ գնով հասել էր 1930-ականներին: Հաշվարկված է, որ Ուկրաինայի տնտեսության ընդհանուր կո-րուստը կազմում է 40 %: Այսպիսով, 10 տարուց քիչ ավել ժամանակաընթացքում ուկրաի-նացիները ծանր տառապանքներ կրեցին տոտալիտար վարչակարգերի կատաղի բախում-ներից:

Չնայած ուկրաինացիների ազգային գիտակցության մակարդակն արդեն զգալիորեն բարձր էր, քան 1917-1920 թ.թ.-ներին, սակայն երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ հայտնվել էին երկու մամլիչների՝ նացիստների ու խորհուրդների, արանքում: Ի խորին հիասթափություն արմատական ազգայնականների, ուկրաինացիները փաստորեն գրկված էին իրենց շահերի համար գործելու հնարավորությունից. ի տարբերություն 1917-1920-ականների, **նրանք կարող էին միայն արձագանքել իրադարձություններին, այլ ոչ թե ազդել նրանց ընթացքի կամ արդյունքների վրա:** Բայց և այնպես, չնայած ահավոր կորուստ-ներին ու անհաջողություններին, պատերազմի վերջնական արդյունքն իր մեջ կրում էր նաև ուկրաինացիների համար դրական կողմեր: Առավել կարևորն այն էր, որ խորհրդային Միության կողմից արևմտաուկրաինական տարածքների գրավման արդյունքում, **մի քանի հարյուրամ-յակների ընթացքում առաջին անգամ բոլոր ուկրաինացիները համախմբվեցին մի պետության մեջ՝** ԽՍՀՄ-ի, կամ ավելի որոշակի՝ Ուկրաինական խորհրդային Սոցիալիստա-կան Հանրապետության (ՈՒՄՅ) սահմաններում: Բացի այդ, Ստալինի ժամանակավոր զի-ջումները ոչ-նուս ժողովուրդների ազգային ձգտումներին, նրանց մեջ հույս էր ներշնչում, որ պատերազմից հետո «ամեն ինչ այլ կերպ կլինի»: Վերջապես, որպես ԽՍՀՄ-ի մաս, Ուկրաի-նան հանդիսանում էր այս ահավոր պատերազմի հաղթողներից մեկը: Շատ ուկրաինացիների մոտ հաղթանակի բերկրանքը ոգևորեց և հույսեր արթնացրեց, ինչի մասին խորհրդային մի սպա 1945 թ.-ին այսպես է արտահայտվել. «Ամբողջ մթնոլորտը լցված էր ինչ-որ նոր, ինչ-որ սքանչելի ու հանդիսավոր բանի սպասումով: Սեզանից ոչ մեկը չէր կասկածում մեր լուսա-վոր ապագային»:



## ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ

Երկրորդ համաշխարհային պատերազմը Ուկրաինայի համար միայն կործանարար հետե-վանքներ չէր, որ ունեցավ: Դետպատերազմյան Ուկրաինան շատ առումներով միանգամայն տարբերվում էր նախապատերազմյանից: Զգալիորեն ընդլայնվել էին նրա սահմանները, մեծացել էր նրա տնտեսական և քաղաքական դերը ԽՍՀՄ-ում, արմատապես փոխվել էր բնակչության կազմը և, վերջապես, ինչն առավել կարևոր է, հարյուրամյակների ընթացքում առաջին անգամ բոլոր ուկրաինացիները համախմբվել էին մի պետության շրջանակներում: Եվ ուկրաինական հասարակությունը, և՛ խորհրդային ռեժիմը ձգտում էին հարմարվել այս փոփոխություններին և այդ պատճառով էլ նրանց ջանքերն այդ ասպարեզում հետպատե-րազմյան Ուկրաինայի պատմության հիմնական թեման է:

## Տարածքային և ժողովրդագրական փոփոխություններ

Երկրորդ համաշխարհային պատերազմի արդյունքում ուկրաինացիների կարևորագույն տարածքային ձեռքբերումը՝ Արևմտյան Ուկրաինան ԽՍՀՄ-ի կազմի մեջ մտցնելն էր: Մեծա-գույն դառնություն պատճառելով լեհերին, Ստալինին հաջողվեց համոզել Մեծ Բրիտանիա-յին և ԱՄՆ-ին՝ ճանաչելու խորհրդային Միության կողմից բռնագրավված այն հողերի նկատ-մամբ իրավունքը, որտեղ արևմտյան ուկրաինացիները բնակչության մեծամասնություն էին կազմում: Արդյունքում, **1945 թ.-ի Յալթայի կոնֆերանսում, խորհուրդներին հաջողվեց ստի-պել վերականգնված լեհական պետությանը հրաժարվելու Գալիչիանայի և Վոլինի մեծ մասի նկատմամբ պահանջատիրությունից և համաձայնվել ԽՍՀՄ-ի հետ իր սահմանն, այսպես կոչված, «Կերզոնի գծով» անցկացնելուն:** Լեհերի համար հատկապես ցավալի էր Լվովի կորուստը՝ լեհական տիրապետության և մշակույթի այդ բազմամյա բաստիոնը:

Իսկ ինչո՞ւ էր Ստալինը այդպես համառորեն ձգտում Արևմտյան Ուկրաինայի միացմանը: Օրինականորեն նրա փաստարկները նրանում էին, թե չկա ավելի բնական բան, քան կեղեք-ված արևմտյան ուկրաինացիների վերամիավորումը խորհրդային Ուկրաինայի իրենց եղբայրների հետ: Այնուամենայնիվ, քանի որ ուկրաինացիների կարիքների մասին Ստալինի հոգածությունը շատ կասկածելի է թվում, ապա ակնհայտ է, որ այդ հարցում գլխավոր դեր էին խաղում նրա սեփական քաղաքական շահերը: Ոչ քաղաքական, ոչ ռազմական առում-ներով լեհերը չէին կարող մրցել Ստալինի հետ, և նա պարզապես կարիք չէր զգում նրանց վերադարձնելու Գալիչիանան ու Վոլինը: Բացի այդ, **տիրանալով Արևմտյան Ուկրաինային, խորհրդային Միությունը ռազմավարական հարմար դիրք ունեցավ Լեհաստանի, Գոմա-րիայի ու Չեխոսլովակիայի նկատմամբ:** Վերջապես, Ստալինը մտադիր էր ջախջախել ուկ-րաինական ազգայնականությունը, ինչի համար անհրաժեշտ էր տիրել Արևմտյան Ուկրաի-նային՝ այդ շարժման օջախին:

Լեհերի հետ տարածքային խնդիրների կարգավորումը ներառում էր նաև **բնակչության փոխանակում:** 1944 թ.-ից 1946 թ.-ը ներառյալ ընկած ժամանակաշրջանում խորհուրդները մոտավորապես 1 մլն լեհերի հնարավորություն տվեցին Գալիչիանայից ու Վոլինից տեղա-փոխվելու Լեհաստան (դրա մեջ մտնում էին զգալի թվով ուկրաինացիներ ու հրեաներ, որոնք իրենց ներկայացնում էին որպես լեհեր): Իր հերթին, կամավոր կամ ստիպողաբար, խորհր-դային Ուկրաինա փոխադրվեցին լեհական տարածքում մնացած մոտ 520 հազ. ուկրաի-նացի: Լեհերի այս վերջին տեղափոխությունը ավարտին հասցրեց Ուկրաինայից նրանց




տևական արտագաղթը, որ սկսվել էր դեռևս 1648 թ.-ին, երբ լեհական շլախտան կորցրեց Չախսահինյակի նկատմամբ իր վերահսկողությունը: Այն շարունակվել էր նաև XVIII-XIX դարերում. այն ժամանակ շլախտան սկզբում գրկվեց Աջափնյակում քաղաքական գերակշռությունից, իսկ ապա նաև տնտեսական ազդեցությունից: Այդ գործընթացն ավարտվեց երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, երբ Խորհուրդները լեհերին արտաքսեցին Գալիչինայից ու Վոլինից, այն տարածքներից, որտեղից 600 տարի առաջ սկսվել էր լեհերի էքսպանսիան Ուկրաինայում: Լեհերի հեռանալով շրջվեց Ուկրաինայի պատմության բավականին բովանդակալից, հակամարտ, բայց և հաճախ փոխհարստացված հարաբերությունների վերջին էջը, և 1947 թ.-ը այդ էջի վրա վերջակետ դրեց:

*Պատերազմի ավարտից շատ չանցած Մոսկվան կարողացավ «համոզել» նաև Չեխոսլովակիային ու Ռումինիային՝ համապատասխանաբար հրաժարվելու Անդրկարպատների և Բուկովինայի նկատմամբ իրենց հավակնություններից:* Այսպիսով, վերջապես ամբողջ Արևմտյան Ուկրաինան՝ իր 7 մլն բնակչությամբ և 110 հազ. քառ. կմ տարածքով մտավ ԽՍՀՄ-ի կազմի մեջ: 1945 թ.-ի վերջին Խորհրդային Ուկրաինայի տարածքը հասնում էր ավելի քան 580 հազ. քառ. կմ-ի, իսկ բնակչությունը՝ մոտ 41 մլն մարդու:

Լեհերը միակ էթնիկ փոքրամասնությունը չէին, որոնց ներկայությունն Ուկրաինայում պատերազմի հետևանքով կտրուկ նվազեց: Մինչև 1939 թ.-ը այստեղ ապրում էին մոտ 650 հազ. գերմանացի, հիմնականում XVIII դարի գաղութաբնակների հետնորդները: Զգուշանալով, որ նրանք կարող են անցնել իրենց հայրենակիցների կողմը, Ստալինը Ուկրաինայի համարյա բոլոր գերմանացիներին վերաբնակեցրեց Միջին Ասիայում: Նույն ճակատագրին արժանացան նաև Ղրիմի մոտ 200 հազ. թաթարները, որոնց տարածաշրջանը հետագայում ներառվեց ԽՍՀՄ-ի կազմի մեջ: Համոզված, որ նրանք բոլորն անխտիր համագործակցել են գերմանացիների հետ, 1944 թ.-ին Ստալինը հրամայեց նրանց բոլորին զանգվածաբար արտաքսել Ղրիմից: Իրենց տներից կոպտորեն ու դաժանորեն դուրս քշված Ղրիմի թաթարների միայն կեսը դիմացավ Միջին Ասիայում աքսորական կյանքին: Սակայն ամենաողբերգականը Ուկրաինայի հրեաների ճակատագիրն էր: Ոչնչացման գերմանական քաղաքականության, ինչպես նաև զանգվածային տարահանումների և բնակչության փոխանակումների արդյունքում, 1930-ականներին Ուկրաինայում ապրող մոտ 2,7 մլն հրեաներից մնացել էր մոտ 800 հազարը: Օկուպացված շրջաններում նրանցից համարյա ոչ ոք կենդանի չմնաց, սակայն հետպատերազմյան տարիներին Ուկրաինա վերադարձան Արևելք արտաքսված համարյա բոլորը:

Ազգային փոքրամասնությունների նվազման իրադրությունում ապշեցուցիչ հակադրություն էր Ուկրաինայում ռուս փոքրամասնության թվի զարմանալիորեն արագ աճը: Պատերազմից հետո Ուկրաինան, հատկապես նրա արևմտյան շրջանները, արդյունաբերությունում աշխատողների, դեկավար կադրերի և կուսակցական գործիչների մեծ կարիք ուներ: Խորհրդային կառավարության կողմից ուղարկված հարյուր հազարավոր ռուսներ լցվեցին այստեղ, հատկապես քաղաքներ՝ այդ աշխատատեղերը զբաղեցնելու համար: Նրանց թվաքանակի սրընթաց աճը վկայում է հետևյալ վիճակագրությունը՝ եթե 1939 թ.-ին Ուկրաինայում կար 4 մլն ռուս, այսինքն ընդհանուր բնակչության 12 %-ը, ապա 1959 թ.-ին նրանց թիվը դարձավ 7 մլն, այսինքն 16 %: Արևմտյան Ուկրաինայում, որտեղ մինչ պատերազմը ռուսներ համարյա չկային, 1959 թ.-ին նրանց թիվը հասնում էր 330 հազ.-ի, ինչը կազմում էր տեղի բնակչության 5 %-ը:

Ուկրաինայի բնակչության էթնիկ կազմի արմատական փոփոխությունները գործնականում հողին հավասարացրեցին այնպիսի ժողովուրդների դերը, ինչպիսիք էին լեհերը, հրեաները կամ Ղրիմի թաթարները, որոնք երկար ժամանակ կարևոր դեր էին խաղում Ուկրաինայի կյանքում և զգալիորեն հարստացրել էին նրա մշակութային խճանկարը: Նրանց տեղը հիմնականում զբաղեցրին ռուսները: Ավելին, արևմտյան տարածքների միացումը համարյա չմեծացրեց ուկրաինացիների տեսակարար կշիռն ամբողջությամբ վերցրած, քանի որ հիմնականում փոխհատուցեց պատերազմի արդյունքում կրած մարդկային կորուստները: Այս բոլոր գործընթացները բերեցին նրան, որ **Ուկրաինան բազմազգ հասարակությունից վերածվեց հիմնականում երկազգի, որում ժողովրդագրական առումով համարյա չաճող ուկրաինական մեծամասնությունը գոյակցում էր մշտապես աճող ռուսական փոքրամասնության հետ:**



Խորհրդային Ուկրաինայի տարածքային ձեռքբերումները 1939-1954 թ.թ.



## Վերականգնում

Պատմության մեջ ամենավերջ պատերազմի չորս տարվա արդյունքում խորհրդային Միությունը բախվեց տնտեսությունը վերականգնելու վիթխարի դժվարությունների հետ: Այսպես օրինակ, Ուկրաինայի արդյունաբերական արտադրանքի ծավալը 1945 թ.-ին կազմում էր 1940 թ.-ի ծավալի ընդամենը 26 %-ը: Ինչպես և հարկ էր սպասել, *խորհրդային իշխանությունը սկսեց վերականգնել իսպառ քայքայված տնտեսությունը՝ կազմելով չորրորդ հնգամյա պլանը (1946-1950 թ.թ.):* Նրանում դարձյալ դրսևորվել էր տոտալիտար համակարգին բնորոշ առանձնահատկությունը, այսինքն կենտրոնացնել և տնօրինել պաշարները՝ անտեսելով ժողովրդի կարիքներն ու ցանկությունները: Այստեղից էլ հետևում էր շճնեցուցիչ պահանջները՝ վերականգնել ավերված շրջանները, ոտքի կանգնեցնել արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը, հասցնել դրանք նախապատերազմյան մակարդակին և նույնիսկ առաջ անցնել նրանից. և այս ամենն ընդամենը հինգ տարում: Ստալինն առաջարկեց նաև բնության մի շարք վիթխարի «բարեփոխումներ» Ուկրաինայում, որոնք նախատեսում էին Դնեպրի վրա հսկայական ամբարտախի կառուցումն ու տափաստաններում լայնատարած անտառային գոտու ստեղծումը՝ երաշտները կանխելու և հողմահարության համար: Չնայած պատերազմի հետևանքով կրած կորուստներին ու հյուծվածությանը, խորհրդային աշխատավորներին սպասվում էր չափազանց ծանր աշխատանք, քանի որ հնգամյա պլանը պահանջում էր արտադրողականության մինչև 36 % բարձրացում:

### Տնտեսության վերականգնումը

Ինչպես և 1930-ական թվականներին, չորրորդ հնգամյա պլանի արդյունքները միանշանակ չէին: Ծանր արդյունաբերությունում, որտեղ 85 % կապիտալ ներդրումներ արվեց, վերականգնման գործընթացը զգալի հաջողությունների հասավ: 1950 թ.-ի շեմին, Ուկրաինայի արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալը 1940 թ.-ի մակարդակը գերազանցեց 15 %-ով: Արևմտյան Ուկրաինայում, որտեղ պատերազմից առաջ ծանր արդյունաբերություն փաստորեն գոյություն չուներ, առաջընթացն առանձնակի տպավորիչ էր. 1950 թ.-ի շեմին տարածաշրջանի արդյունաբերական արտադրանքի ծավալն աճեց 230 %-ով: *1950-ական թվականներին Ուկրաինան նորից դարձավ Եվրոպայի արդյունաբերական առաջատար պետություններից մեկը:* Բնակչության մի շնչի հաշվով արտադրում էր ավելի շատ չուգուն, քան Մեծ Բրիտանիան, Արևմտյան Գերմանիան և Ֆրանսիան (չնայած որ արևմտյան գերմանացիներն ավելի շատ պողպատ էին արտադրում), իսկ ածխահանությամբ առումով համարյա հավասարվել էր Արևմտյան Գերմանիային: Սակայն, եթե նույնիսկ Ուկրաինայի արդյունաբերությունը մինչպատերազմյան շրջանի համեմատությամբ դարձել էր ավելի հզոր, նրա մասնաբաժինը խորհրդային Միության արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալում նվազել էր, քանի որ անդրուրալյան շրջաններում ծնունդ առած արդյունաբերական նոր կենտրոնները զարգանում էին անհամեմատ արագ:

*Ավելի շատ և ավելի խոշոր գործարանների կառուցումը, սակայն, բնակչության կենսամակարդակի զգալի բարելավում չէր նշանակում:* Լայն սպառման ապրանքների արտադրության նկատմամբ խորհրդային իշխանությանը բնորոշ բամահրանքը հանգեցրեց այնպիսի ծայրահեղությունների, որ մի գույգ կոշիկ, ատամի խոզանակ և նույնիսկ մի բոջոն հաց գնելը մեծ հոգսի էր վերածվել: 1950 թ.-ի շեմին, թեթև արդյունաբերության արտադրությունը հազիվ հասել էր մինչպատերազմյան մակարդակի 80 %-ին: Բնակչության սպառողական հնարավորությունները նվազել էին նաև 1947 թ.-ի դրամական ռեֆորմի հետևանքով, որն արժեզրկեց կարողվածեցն ու հարվածեց քաղաքացիների անձնական խնայողություններին:

Սակայն *վերականգնման դժվարությունները ու անհաջողությունները ոչ մի տեղ այնքան նկատելի չէին, որքան գյուղատնտեսության մեջ՝* խորհրդային տնտեսության այդ ավանդական աքիլոսյան գարշապարուն: Զրկվելով անասունների մեծ թվով գլխաբանակից և տեխնիկայի մեծ մասից, պատերազմից հետո գյուղատնտեսությունն ավելի խորն անկում էր ապրում, քան արդյունաբերությունը: Դրությունը լրջորեն ծանրացավ նաև նրանով, որ պլանավորման խորհրդային մարմիններում գյուղատնտեսությունը, ինչպես միշտ, առաջնային ոլորտների թվում չէր, իսկ գյուղի նկատմամբ քաղաքականությունն ակներևորեն չէր նպաստում նրա արտադրողական ուժերի աճին: *Ուկրաինայի գյուղատնտեսության վիճակն աղետալի կերպով վատացավ նաև 1946 թ.-ի ահավոր երաշտի հետևանքով, երբ խորհրդային իշխանության տարիների ընթացքում երրորդ անգամ ուկրաինացի գյուղացին ճաշակեց*

*անտանելի սովի դժվարությունները:*

Չնայած գյուղում կոլտնտեսության ակնհայտ տևական խնդիրներին, խորհրդային կառավարությունը համոզված էր համայնացման գործընթացը շարունակելու և նույնիսկ ավելի ակտիվ ու հետևողական դարձնելու անհրաժեշտության մեջ: 1946 թ.-ին միջոցներ ձեռնարկվեցին գյուղացիների ձեռքից վերցնելու հողն ու գույքը, որ նրանց կողմից «սեփականաշնորհվել» էր պատերազմի ժամանակ: Հաջորդ տարի Նիկիտա Խրուշչևի նախաձեռնությամբ Ուկրաինայում՝ խորհրդային Միության գյուղատնտեսական փորձադաշտի վիճակին ընտելացած տարածաշրջանում, սկսվեց երևակայական հերթական ծրագրի իրագործումը, որը գյուղատնտեսական բոլոր խնդիրներն հեշտ ու արագորեն լուծելու հավակնություն ուներ: Այդ ծրագիրը նախատեսում էր բոլոր մանր կոլտնտեսությունների միավորումը մի հսկայական «ագրոքաղաքում», ինչն ըստ էության, պետք է՝ նախ թույլ տար առավել արդյունավետ օգտագործել քչություն անող գյուղատնտեսական տեխնիկան, երկրորդ՝ այդ հսկա տնտեսությունների բնակիչներին (նրանցից յուրաքանչյուրում նախատեսվում էր մոտ 5 հազ.) ապահովել քաղաքային կյանքի բոլոր առավելություններով: Նախագիծը ենթադրում էր նաև վերացնել տնամաշերձ հողամասերը, որոնցից գյուղացիները ստանում էին սննդամթերքի մեծ մասը: Վերջապես, այն նախատեսում էր գյուղացիական բնակչության վրա ավելի խիստ հսկողության իրականացում: Սակայն շատ փոքր, բայց գյուղացիների համար կենսական անհրաժեշտություն ունեցող հողատարածքները վերացնելու գաղափարն արդեն անցնում էր համբերության բոլոր սահմանները. պասիվ դիմադրությունն ու բարձրաձայն բողոքները այնպիսի չափերի հասան, որ իշխանությունները ստիպված հրաժարվեցին «ագրոքաղաքների» մտահղացումից: «Դարի նախագծի» առաջացրած ընդհանուր դժգոհություններն ու քառուս ավելի բարդացրին գյուղատնտեսական գործերի վիճակը: Արդյունքում, 1950 թ.-ի շեմին, Ուկրաինայում հացահատիկի արտադրությունը հասավ 1940 թ.-ի մակարդակի միայն 60 %-ին, և պարենային ապրանքը հայտնվեց ղեֆիցիտների շարքում:

### Քաղաքական կառույցների վերականգնումը

Չնայած որ պատերազմի սկզբում Ուկրաինայի կոմունիստական կուսակցությունը գտնվում էր շատ բարդ իրադրությունում, սակայն զարմանալիորեն լավ դիմացավ նրան: Կուսակցության վրա էր ընկնում պատերազմի սկզբնական փուլի պարտության պատասխանատվությունը, սխալներն ու ապշեցուցիչ կորուստները. նրա հեղինակությունն ու վարկը կտրուկ ընկավ: Զորահավաքների և ճակատում ունեցած կորուստների պատճառով նվազել էր Ուկրաինայի կոմունիստների թվաքանակը. 1940 թ.-ի ավելի քան 600 հազ.-ից 1945 թ.-ին հասել էր 200 հազ.-ի: Կուսակցության անդամների մեծ մասը տարհանվել էին խորհրդային նահանջի ժամանակ, այդ պատճառով էլ պատերազմի ժամանակ Ուկրաինայում մնացել էին միայն մոտ 15 հազ.-ը: Այնուամենայնիվ, երբ ճակատագիրը նորից դեմքով շրջվեց ղեպի խորհուրդները, այն ժպտաց նաև Ուկրաինայի կոմունիստներին:

Կուսակցության անդամները, հատկապես ղեկավար աշխատողները, որոնք պատերազմի ժամանակ զբաղվում էին ուկրաինական գործերով, աչքի էին ընկնում ներքին համերաշխության խորը զգացումով: Այն զգալիորեն աճեց պարտիզանական շարժման կազմակերպիչների ու առաջնորդների համար բնորոշ մարտական ընկերակցության հողի վրա: Ընտրյալների այդ սերտորեն կապված շրջանը, որ Ուկրաինայի կոմկուսի վերևներում հաճախ անվանում էին «պարտիզանական կլան», հետագայում տվեց ուկրաինական «մաֆիայի» շատ անդամներ, որոնց սովորաբար կապում էին *խրուշչևի* ու *Բրեժնևի* անունների հետ:

Պատերազմից հետո, երբ վերադարձան տարհանված ու զորացրված կոմունիստները և կուսակցության շարքերն համալրվեց նոր անդամներով, նրանք թիվը կտրուկ աճեց և 1950 թ.-ի շեմին գերազանցեց 700 հազ.-ը: Այնուամենայնիվ, *Ուկրաինայում կոմունիստների թիվը համեմատաբար մեծ չէր.* բնակչության յուրաքանչյուր 1000 մարդուն ընկնում էր կուսակցության 20 անդամ, այն դեպքում, երբ համախորհրդային միջին ցուցանիշը շատ ավելի բարձր էր՝ 30 կոմունիստ յուրաքանչյուր 1000-ին: *Կարևոր փոփոխություններ տեղի ունեցան նաև ՈՒԿ(բ)Կ-ի էթնիկ կազմում:* Աշխատելով հաղորդակից լինել պատերազմում հաղթանակ տարած խորհրդային վարչակարգին, փառասեր ուկրաինացիներն ավելի, քան երբևէ ձգտում էին մտնել կուսակցության շարքերը. եթե 1920 թ.-ին նրանում ուկրաինացիներն ընդամենը 19 % էին, ապա 1958 թ.-ի շեմին՝ արդեն ավելի քան 60 %: Ծիշտ է, ռուսներն առաջվա պես բարձր մակարդակներում կազմում էին անհամապատասխան մեծ տոկոս,



բայց այստեղ ևս սկսեց զգացվել ուկրաինացիների ներկայությունը: Ուկրաինայի կոմունիստների (ինչպես, ի դեպ, նաև համախորհրդային կոմունիստների) համար *ևս մեկ բնորոշիչ դարձավ՝ իր շարքերում խորհրդային սոցիալ-տնտեսական վերնախավի ավելի մեծ թվով ներկայացուցիչների ներգրավումը*: Այսպես, 1950-ական թվականներին կուսակցության անդամներ էին յուրաքանչյուր երրորդ ինժեները և յուրաքանչյուր հինգերորդ բժիշկը, այն դեպքում, երբ 35 բանվորներից մեկն էր կոմունիստ, իսկ կուլտնտեսականներից՝ 45-ից մեկը: Հետպատերազմյան կուսակցությունը ակնհայտորեն վերածվում էր խորհրդային «խաթերլիշ-մենթի» մտավորականներով հագեցված կազմակերպության:

Ուկրաինայի կոմունիստները կարող էին գոհ լինել հետպատերազմյան իրենց արագ վերածնունդով, սակայն Ստալինը նրանցից ավելի շատ էր պահանջում: Արդյունաբերության վերականգնումն Ուկրաինայում, Խորհրդային Միության մյուս տարածաշրջանների համեմատությամբ, դանդաղ էր առաջ ընթանում, հանրապետության համար չափազանց կարևոր գյուղատնտեսության ճյուղը գտնվում էր աղետալի վիճակում, ուկրաինացիների ազգայնական բուռն դրսևորումները, հատկապես Արևմտյան Ուկրաինայում, ամենևին էլ չէին մարել: Այդ պատճառով էլ 1947 թ.-ին Ստալինը Ուկրաինա ուղարկեց իր «վթարային մոնտյոր» *Կազանովիչին*, որը ՌԿԿ(բ)Կ ԿԿ-ի առաջին քարտուղարի պաշտոնում փոխարինեց Խրուշչևին: Սակայն ուկրաինացիների շրջանում հեղինակություն չվայելող Կազանովիչն անճշան հաջողությունների հասավ, և Խրուշչևը, չնայած իր ռուսական ծագմանը, հանդես բերելով տեղական հայրենասիրության նշաններ, վերադարձավ Կիև:

Կառավարական մակարդակով պատերազմի առավել ուշագրավ հետևանք էր Ուկրաինայի անսպասելի (և միանգամայն սահմանափակ) երևալը միջազգային ասպարեզում: Ստալինի համառ պահանջով *Ուկրաինան և Բելոռուսիան խՍՀՄ-ի հետ միասին ընդգրկվեցին Միացյալ Ազգերի Կազմակերպության հիմնադիր 47 պետությունների թվում*: Բոլորի կողմից ընդունված վարկածը, որ բացատրում է այդ հարցում Ստալինի բռնած դիրքը, հանգում է նրան, իբրև թե նա ձգտում էր ՄԱԿ-ում հնարավորինս շատ ծայն ունենալ (սկզբում ընդհանրապես ձգտում էր ծայնի առանձին իրավունքի հասնել խորհրդային 16 հանրապետություններից յուրաքանչյուրի համար): Այնուամենայնիվ, վկայություն կա, որ Ստալինի այդ քայլն ուղղված էր ուկրաինացիների արժանապատվության զգացումը բարձրացնելուն՝ կապված նացիստական Գերմանիայի նկատմամբ տարած հաղթանակում նրանց ունեցած դերի հետ: Այսպես թե այնպես, **1945 թ.-ից ՄԱԿ-ին կից գործում է ուկրաինական ներկայացուցչությունը**: Խորհրդային աղբյուրների համաձայն, 1950 թ.-ի շեմին Ուկրաինան դարձել է նաև 20 միջազգային կազմակերպությունների անդամ և իր անունից կնքել է 65 համաձայնագիր: Ընդ որում, *հասկանալի է, որ ՄԱԿ-ում և բոլոր մյուս կազմակերպություններում Ուկրաինան հետևում էր այն դիրքորոշմանը, որն ուներ խՍՀՄ-ը*: 1947 թ.-ին Մեծ Բրիտանիան Ուկրաինային առաջարկեց դիվանագիտական ուղիղ կապեր հաստատել, սակայն պատասխան չստացավ: Արևմտյան գիտնականներից մեկի խոսքերով, Ուկրաինայի արտաքին գործերի նախարարության պարտականությունները զուտ «հանդիսակարգային, գեղազարդային ու խորհրդանշային» էին:

Միջազգային ասպարեզ դուրս գալու Ուկրաինայի հնարավոր կարողությունները գնահատելիս, Յարոսլավ Բիլինսկին գրում էր. «ՌԽՍՀՄ-ի՝ իր հիմնով, պետական դրոշով և արտաքին գործերի նախարարությամբ, միջազգային ներկայացուցչությունը, անկասկած, խորհրդային սահմանադրական դեկորի մի տարրն է... Եթե վարչակարգին հաջողվի խեղդամահ անել ուկրաինացիների ազգայնական դրսևորումները, ապա սահմանադրական ոչ մի որոշում նրանց չի վերակենդանացնի: Իսկ եթե նման փորձերը տապալվեն, ապա այդպիսի ատրիբուտը, նույնիսկ ծաղկազարդ ցուցադրությամբ, որպես միջազգային ներկայացուցչություն, դեռևս մտածելու տեղիք կտա, իսկ հանգամանքների հաջող ընթացքի դեպքում կարող է դառնալ կայծ, որ գործողությունների խթան կհանդիսանա»:

## Արևմտյան Ուկրաինայի կլանումը

1654 թ.-ից, երբ ռուսական ցարերն ընդլայնեցին Ուկրաինայի նկատմամբ իրենց վերահսկողությունը, ուկրաինացիները երկու տարբեր աշխարհներում էին ապրում. մեկում իշխում էին ռուսները, մյուսում՝ լեհերն ու ավստրիացիները: Ուկրաինական երկու ընկերակցությունների տարբերությունը, ինչպես մենք հաճախակի հնարավորություն ենք ունեցել նկատել, որոշակիորեն դուրս էին գալիս քաղաքական համակարգերի սահմաններից և

հիմնվում էին պատմական, մշակութային, սոցիալ-տնտեսական և հոգեբանական նշանակալից առանձնահատկությունների վրա: Երկրորդ համաշխարհային պատերազմի արդյունքում վերջապես վերջ դրվեց Ուկրաինայի երկատմանը՝ Արևմտյանի և Արևելյանի, թեկուզև՝ քաղաքական մակարդակներում: Պատերազմից հետո (1939-1941 թ.թ.-ների ժամանակահատվածը բավականին կարճատև էր՝ երկարատև հետքեր թողնելու համար) *խորհրդային վարչակարգը՝ լավ թե վատ, ամեն կերպ փորձում էր արևմտյան ուկրաինացիներին համակերպել խորհրդային համակարգին և հավասարեցնել արևելյան իրենց հայրենակիցներին*: Երկար ժամանակ իրարից զատված ուկրաինական ժողովրդի երկու մասերի միաձուլումը դարձավ ոչ միայն հետպատերազմյան շրջանի գլխավոր, այլև՝ Ուկրաինայի ամբողջ պատմության դարակազմիկ նշանակություն ունեցող գործընթացներից մեկը:

Այդ նպատակին հասնելու համար խորհրդային վարչակարգը հենվում էր իր քաղաքական և ռազմական ուժի հսկայական առավելությունների վրա: Բայց խնդիրը, որ դրել էր իր առջև, արտասովոր բարդ էր, քանի որ Արևմտյան Ուկրաինայում նրան հակադրվում էին տեղի բնակչության բոլոր հիմնական ներկայացուցիչները. հունա-կաթոլիկական եկեղեցին՝ արևմտաուկրաինական այդ գեղազույն հաստատությունը, միանգամայն անհամատեղելի էր նոր վարչակարգի հետ, գյուղացիները՝ որ կազմում էին բնակչության մեծամասնությունը, սարսափում էին համայնացման հեռանկարից, երիտասարդությունը՝ որի զգալի մասը նվիրված էր ազգային գաղափարախոսությանը, խորհրդային իշխանության մեջ տեսնում էր իր ռիսե-րիմ թշնամուն:

## Չունա-կաթոլիկական եկեղեցու վերացումը

Քանի որ հունա-կաթոլիկական եկեղեցին հիմնական և առավել ամուր օղակն էր, որ արևմտյան ուկրաինացիներին կապում էր Արևմուտքի հետ, և գործում էր որպես ազգային եկեղեցի, ուստի դատապարտված էր առաջին նշանակետներից մեկը լինելուն, որոնց ուղղված էր խորհրդային իշխանության փոթորկային կրակը: Հակաեկեղեցական գործողությունները սկսելու ազդանշան ծառայեց 1944 թ.-ի նոյեմբերի 1-ին ժողովրդի անսահման սերն ու հեղինակությունը վայելող միտրոպոլիտ Անդրիյ Շեպտիցկու մահը: Երբ միտրոպոլիտը մահացավ և այդպիսով վերացավ հունա-կաթոլիկական եկեղեցու վրա հարձակումը սկսելու գլխավոր խոչընդոտը, մամուլն անմիջապես սկսեց հեղեղվել հողվածներով, որոնք *«ունիական» եկեղեցուն մեղադրում էին նացիստների հետ «կոլլաբորացիոնիզմի»\** և ուկրաինական ազգայնական ընդհատակին սատարելու մեջ: Այդ «բացահայտումներում» իր առանձնահատուկ եռանդով աչքի էր ընկնում արևմտաուկրաինացի կոմունիստ Յարոսլավ Հալանը: Զրպարտություններին և անհեթեթ մեղադրանքներին հետևեց սարքված գործերի հիման վրա կատարվող ձերբակալությունները, ինչի արդյունքում *հունա-կաթոլիկական եկեղեցու համարյա ողջ հովվապետությունը՝ Յոսիպ Սլիպիյի գլխավորությամբ, հայտնվեցին սիրիլյան ճամբարներում*:

Վերացնելով հունա-կաթոլիկական եկեղեցու վերնախավին, Խորհուրդները միաժամանակ համոզեցին հայտնի քահանա Հավրիլո Կոստելնիկին՝ կազմակերպելու հոգևորականության խումբ, հռոմի հետ միությունը խզելու քարոզարշավի համար: Այդ խմբի գործունեության հետևանքով ստեղծված ընդդիմությանը ջախջախեց ԼԳԺԿ-ն՝ ահաբեկչություն ծավալելով քահանաների դեմ: 1946 թ.-ի մարտի 8-ին, Կոստելնիկի կողմնակիցները հրավիրեցին սինոդ (բացարձակապես անիրավազոր գործողություն, քանի որ եպիսկոպոսները բացակայում էին)՝ հռոմի հետ հարաբերությունների հարցը քննարկելու համար: Արդյունքում ընդունվեց նախօրոք հայտնի որոշումը. 216 քահանա և աշխարհիկ 19 ներկայացուցիչ քվեարկեցին 1596 թ.-ի Բրեստի ունիան խզելու, հռոմի հետ հարաբերությունները պատակտելու և հունա-կաթոլիկական եկեղեցին ռուսական ուղղափառ եկեղեցուն «վերամիավորելու» օգտին: Շատ չանցած, նույն սցենարը՝ միայն մեկ ճշգրտումով, եպիսկոպոս Թեոդոր Ռոմժայի իբրև թե պատահական մահով, վերախաղարկեցին Անդրկարպատներում և 1951 թ.-ի շեմին հունա-կաթոլիկական եկեղեցին այս տարածաշրջանում ևս վերացվեց:

*Իրենց հովվապետների անհայտացումից շփոթված, Խորհուրդների ահաբեկչական մարտավարությունից ճնշված և իրենց ընտանիքների ճակատագրով անհանգստացած,*

\* **Կոլլաբորացիոնիզմ** - (ֆր.՝ collaboration - համագործակցություն) - հայրենիքի դավաճան, որ համագործակցել է ֆաշիստական զավթիչների հետ նրանց օկուպացրած երկրներում՝ երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ:



հունա-կաթոլիկական եկեղեցիների շատ քահանաներ ուղղափառություն ընդունեցին: Անհնազանդներին, որպես կանոն, ձերբակալում և քստորում էին Սիբիր: Սակայն, չպետք է կարծել, թե խորհուրդներին հաջողվեց հունա-կաթոլիկական եկեղեցիները վերացնել հերթական սովորական արգելքը դնելով: *Շատ քահանաներ ու ծխականներ միայն ձևացնում էին, թե ուղղափառություն են ընդունել, իրականում շարունակում էին գաղտնիորեն պահպանել հունա-կաթոլիկական եկեղեցու տոները, ծեսերը և ժամերգություններ կատարել:* Այն, որ արևմտյան ուկրաինացիները պահպանել են իրենց եկեղեցու նկատմամբ հավատարմությունը, որի հետ դարեր էին ապրել, վկայում էր խորհրդային քարոզչության անվերջ հոսքը, որը շարունակվում էր ընդհուպ մինչև վերջերս:

### Պայքար ՌԻՄ-ի դեմ

Զնայած Գալիչինայի և Վոլինի խորհրդային օկուպացիային, ՌԻՄ-ը շարունակում էր ստվարանալ: 1944-1945 թ.թ.-ներին բանակ մտան ավելի շատ կամավորներ, քան նա կարող էր զինել: Բանակի մարդկային պաշարների համալրման հիմնական աղբյուրը ՌԻՄ-ի ընդհատակյա անդամներն էին, որոնք շարունակում էին գործել ՌԻՄ-ի հետ զուգահեռ: Պարտիզանական բանակ էին մտնում նրանք, ովքեր փրկվում էին արտաքսումից կամ հակառակվում էին համայնացմանը: Համալրողների մեջ զգալի մաս էին կազմում Կարմիր բանակի դասալիքները և զորահավաքից խուսափող տեղի բնակիչները, ովքեր պարտիզանական պայքարը գերադասում էին ճակատում խորհրդային թնդանոթի միս դառնալու հեռանկարից: Այսպիսով, մինչև հաղթանակած Կարմիր բանակը գրոհում էր Բեռլինի վրա, խոշոր, զուստարտակի հասնող հակախորհրդային պարտիզանական ստորաբաժանումները հսկողություն էին սահմանում Արևմտյան Ուկրաինայի ընդարձակ տարածքների վրա, այնտեղ կազմավորելով կառավարման իրենց՝ արդեն փորձած, կառուցվածքը: Այդ ժամանակ ՌԻՄ-ի և նրա քաղաքական վերնաշենքի՝ ՌԳԱՌ-ի քաղաքականությունն ուղղված էր Արևմուտքում դեպքերի ընթացքի վրա (հիմնականում հույսը դրվում էր այն բանի վրա, որ կսկսվի նոր պատերազմ՝ ԽՍՀՄ-ի և արևմտյան դաշնակիցների միջև) և հանգում էր Արևմտյան Ուկրաինայում խորհրդային կարգերի հաստատմանը խոչընդոտելուն: *ՌԻՄ-ի գործունեության տպավորիչ ծավալները պայմանավորված են երկու հանգամանքով. նախ՝ ժողովրդի լայն աջակցության և գործողությունների արդյունավետ կազմակերպման, և երկրորդ՝ Ուկրաինայի արևմտյան տարածաշրջանում խորհրդային սահմանափակ զորաքանակի:*

Այնուամենայնիվ, 1945 թ.-ի մայիսին, Գերմանիայի կապիտուլյացիայից հետո, *խորհուրդները հնարավորություն ստացան ուժեղացնելու հետևողական ու լայնածավալ հարձակումները ՌԻՄ-ի դեմ:* 1945-1946 թ.թ.-ներին, Վոլինի ընդարձակ տարածքներում և Կարպատների նախալեռնային շրջաններում, ուր կենտրոնացել էին պարտիզանները, խորհրդային զորքերը (հիմնականում՝ ՆԳՆ-ի և ՆԳԺԿ-ի ուժերը, քանի որ կանոնավոր բանակում բավականին շատ ուկրաինացիներ կային, որ ՌԻՄ-ի հետ կռվել էին ցանկանում) կազմակերպեցին շրջափակում և հետախուզում: *Զգտելով վախեցնել արևմտաուկրաինական բնակչությանը և ՌԻՄ-ին զրկել ժողովրդի աջակցությունից, ՆԳԺԿ-ն մի շարք դաժան միջոցառումներ ձեռնարկեց:* Վտարում էին այն շրջանների բնակիչներին, որտեղ գտնվում էին ՌԻՄ-ի բազաները: Սիբիր էին քստորում յուրաքանչյուրին, ով կապ էր ունեցել պարտիզանների հետ, ինչի արդյունքում ամբողջ գյուղեր էին դատարկվում: Հաշվարկված է, որ *1946 թ.-ից մինչև 1949 թ.-ը ներառյալ, Ղյուսիս էին արտաքսել մոտ 500 հազ. արևմտյան ուկրաինացու:* Համարյա յուրաքանչյուր գյուղում հավաքագրված էին ՆԳԺԿ-ի գործակալներ, ավելի պարզ ասած՝ «գործ տվողներ»: ՌԻՄ-ին վարկաբեկելու համար կիրառվում էին ավելի կատարելագործված մեթոդներ: *ՆԳԺԿ-ի ստորաբաժանումները զգեստափոխվելով ՌԻՄ-ի համազգեստով, թալանում, բռնաբարում ու սպանում էին ուկրաինացի գյուղացիներին:* Քանի որ խորհրդայնամետ տարրերին վերացնելու ՌԻՄ-ի անվտանգության ծառայության գործողությունները հաճախ նույնպես աչքի էին ընկնում իրենց դաժանությանը, ապա այդ ահավոր դիմակահանդեսը շատ ճշմարտաման էր թվում և հաճախ հասնում էր իր նպատակին: Միաժամանակ, ծնունդ գետնափորերում ապրող, սովից հյուսված, մահվան եզրին հասած պարտիզաններին խորհուրդները, տառաջիորեն, ողողում էին քարոզչությամբ՝ նրանց գործը համարելով անհուսալի, կամավոր հանձնվելու առաջարկ անում՝ խոստանալով ներում շնորհել նրանց:

*Ծանր կորուստներ կրելով, ՌԻՄ-ը փորձեց հարմարվել նոր պայմաններին և փոխեց մարտավարությունը՝ բաժանվելով ոչ մեծ մանկրային ջոկատների:* 1947 թ.-ի վերջերից 1948 թ.-ի սկզբները, երբ ակնհայտ դարձավ, որ ամերիկա-խորհրդային պատերազմ չի նախատես-

վում, ՌԻՄ-ի հրամանատարության հրահանգով այդ ջոկատներից շատերը ցրվեցին: ՌԻՄ-ի անդամների մի մասը ՌԻՄ-ի քաղաքացիական ընդհատակ անցավ, սակայն այդ ցանցն արդեն առաջվա պես արդյունավետ չէր կարող գործել, քանի որ ՌԻՄ-ի շատ անդամներ մինչև այդ զոհվել էին, տարհանվել, բռնվել կամ խելագարվել՝ բաց դիմակայության ժամանակ: ՌԻՄ-ի համար նոր և լուրջ հարված էր համայնացման ծավալում գործունեությունը, քանի որ իշխանությունների կողմից աչալուրջ վերահսկվող կոլտնտեսականները չէին կարող պարտիզանների համար սննդամթերք մատակարարել:

Այդ վերջին փուլում ՌԻՄ-ը և ՌԻՄ-ի ընդհատակը, որ ժամանակ առ ժամանակ ունենում էին պատահական և անորոշ կապեր բրիտանական և ամերիկյան հատուկ ծառայությունների հետ, կենտրոնացան հակախորհրդային քարոզչության և նենգադուլի վրա: Նրանք խոչընդոտում էին համայնացման գործընթացին, խափանում էին բնակչության արտաքսումը, ամեն կերպ կազմալուծում էին խորհրդային վարչական կառույցների աշխատանքը, վերացնում էին ՆԳԺԿ-ի սպաներին, կուսակցական ակտիվիստներին և խորհուրդների հետ համագործակցության մեջ կասկածվողներին: 1948 թ.-ին, ենթադրաբար, ՌԻՄ-ի անդամները (որոշ հեղինակներ համարում են, որ դա ՆԳԺԿ-ի ձեռքի գործն է) հրազենով սպանեցին հայր Հավրիլո Կոստելնիկին՝ հունա-կաթոլիկական եկեղեցին վերացնելու գործում մասնակցության համար: Մեկ տարի անց ՌԻՄ-ի ընդհատակյա անդամները սպանեցին հայտնի խորհրդային քարոզիչ-լրագրող Յարոսլավ Հալանին: Սակայն *1950 թ.-ի մարտին ՌԻՄ-ը շատ զգալի կորուստ ունեցավ, երբ Լվովի տակ տեղի ունեցած ընդհարման ժամանակ զոհվեց նրա հրամանատար Ռոման Շուկսիչը (զեներալ Տարաս Չուպրինկան):* Նրա մահվանից հետո Արևմտյան Ուկրաինայում ՌԻՄ-ՌԻՄ-ը փաստորեն ղադարեցրեց իր գոյությունը որպես գործունակ կազմակերպություն, չնայած որոշ ոչ մեծ ջոկատներ մինչև 1950-ական թվականների կեսը շարունակում էին իրենց գործունեությունը:

ՌԻՄ-ի պատմության առանձին գլուխ է նրա գործունեությունը լեհական տարածքում, այն շրջաններում, որ բնակեցված էին *ուկրաինացի-լեմկերով:* 1944 թ.-ից 1947 թ.-ը ներառյալ, օգտվելով բնակչության աջակցությունից, այս տեղերում ՌԻՄ-ը զգալի ազդեցություն էր պահպանել: Լեհ զինվորական պատմաբանների (որոնց աշխատությունները շատ ավելի տեղեկատվական են քան նրանց խորհրդային պաշտոնակիցների քարոզչական տրակտատները) բարեխիղճ հետազոտությունների շնորհիվ մեզ հայտնի է, որ ՌԻՄ-ի ուժերն այդ շրջաններում կազմված էին մոտ 2 հազ. պարտիզաններից, որոնք կապ ունեին ՌԻՄ-ի ընդհատակյա 3 հազ. անդամների հետ: Ուկրաինական պարտիզաններին այստեղից դուրս հանելու լեհական բանակի բազմիցս արվող փորձերն ուղեկցվում էին լեհերի զգալի կորուստներով: 1947 թ.-ի մարտին ՌԻՄ-ի ստորաբաժանումներից մեկը դարանակալեց և սպանեց լեհ ակադեմիկոս զեներալ, պաշտպանության նախարարի տեղակալ Կարոլ Սվերչևսկուն: Դա ոչ միայն ՌԻՄ-ի ամենանշանակալից հաջողությունն էր այդ տարածաշրջանում, այլև դարձավ վախճանի սկիզբը պարտիզանական բանակի համար:

Սվերչևսկու սպանությունից կատարած, Լեհական կառավարությունը որոշեց վերացնել «ուկրաինական խնդիրը»: *1947 թ.-ի ապրիլին նա «Վիսլա» գաղտնագրային անվանումով գործողություն իրագործեց,* որը ոչ միայն ռազմական, այլև քաղաքացիական բնակչությանը վերաբերող առավել մեծ նպատակներ էր հետապնդում: *30 հազ.-անոց լեհական զորքը, որին աջակցում էին Չեխոսլովակիայի և ԽՍՀՄ-ի բազմաթիվ ստորաբաժանումներ, շրջապատեցին ուկրաինացի պարտիզաններին և կատաղի մարտերում ոչնչացրեցին ու գերի վերցրեցին նրանց մեծ մասին:* ՌԻՄ-ի առանձին ջոկատներ ճեղքեցին-անցան խորհրդային Ուկրաինայի տարածքը, իսկ մի քանի հարյուրը կռվելով անցնելով Չեխոսլովակիան, հասան օկուպացման խորհրդային գոտուն Գերմանիայում և այնտեղ զենքերը վայր դրեցին: *Այդպիսի ողբերգական վախճան ունեցավ նաև պարտիզաններից աջակցող ու թաքցնող ուկրաինացի-լեմկերի ճակատագիրը.* համարյա նրանց բոլորին (մոտ 150 հազ. մարդ) առանց նախագուշացման արտաքսեցին իրենց հայրենի գյուղերից ու ցրեցին Լեհաստանի ամբողջ տարածքով, որպեսզի մեկ անգամ և ընդմիջտ կանխվի ՌԻՄ-ի վերածնության հնարավորությունը Լեմկովչինայում: Այդ ձևով լեհերն ազատվեցին հարյուրամյակներ շարունակ իրենց կյանքը մռայլեցնող ուկրաինական խնդիրից:

### Համայնացում

Միայն 1947-1948 թ.թ.-ներին, երբ խորհուրդներն ընկճեցին ՌԻՄ-ի դիմադրությունը, նրանք կարողացան ամբողջ ուժով ծավալել համայնացման քաղաքականությունը: Ընդհա-



նուր առձամբ այն իրականացվում էր այն սցենարով, որը 20 տարի առաջ փորձարկվել էր խորհրդային Ուկրաինայում: Սկզբում ունևոր գյուղացիներին («կուլակներին») հակադրում էին համագյուղացիներին, իսկ հետո նրանց վրա այնպիսի հարկեր դրեցին, որ չկարողացան իրենց տնտեսությունն առաջ տանել: Առավել անհնազանդներին, ըստ սովորության, քստրում էին Սիբիր: Հետո, երկար հորդորներով ու պնդերես քարոզներով, գյուղացիության հիմնական զանգվածին քշում էին կոլտնտեսություններ: *Կոլտնտեսությունների նկատմամբ քաղաքական հսկողությունը, որն հատկապես չափազանց խիստ էր Արևմտյան Ուկրաինայում, իրականացվում էր մեքենա-տրակտորային կայաններին (ՄՏԿ) կից ձևավորվող կուսակցական բջիջների կողմից:* Արևմտյան ուկրաինացիների բախտից, նրանց մոտ համայնացումը չէր ուղեկցվում քաղցով, ինչպես Արևելյան Ուկրաինայում էր: Մյուս կարևոր տարբերությունն այն էր, որ համայնացումն այստեղ իրականացվում էր ՌԿԲ-ի զինված պայքարի ֆոնի վրա, որը չնայած թուլացել էր, բայց դեռևս գործունակ էր: Խորհրդային հեղինակի խոսքերով. «Աշխատավոր գյուղացիության ոխերին թշնամիները՝ կուլակներն ու բուրժուական ազգայնականները, հուսահատորեն դիմադրում էին արևմտյան հողերի համայնացման լայնածավալ շարժմանը՝ այրելով կոլտնտեսության շինությունները, սպանելով ակտիվիստներին, կոլտնտեսությունների նկատմամբ գյուղացիների մեջ կասկած սերմանելով»: Սակայն դիմադրությունն ապարդյուն անցավ. 1951 թ.-ի շեմին, համարյա բոլոր՝ 1,5 մլն արևմտաուկրաինական գյուղացիական տնտեսությունները միավորվել էին մոտ 7 հազ. կոլտնտեսություններում: Այդպես, ոչ վաղուց բռնազավթված արևմտաուկրաինական տարածքներում ամուր կերպով տեղակայվեց խորհրդային սոցիալ-տնտեսական համակարգի հիմնական հենարաններից մեկը:

Ինչպես և սպասելի էր, *համայնացմանը զուգահեռ լայն թափ ստացավ նաև արդյունաբերականացումը:* Ավստրիացիների և լեհերի իշխանության օրոք Գալիչիան տնտեսապես թուլացած, շահագործվող գյուղատնտեսական շրջան էր, վնասաբեր գներով պատրաստի ապրանքների արտահանման վայր: Հասկանալով, որ տնտեսական վիճակն այստեղ բարելավելով, դրանից զգալի քաղաքական օգուտներ կբաղեն, Խորհուրդները խոշոր կապիտալներդրումներ արեցին՝ Արևմտյան Ուկրաինայի արդյունաբերությունը զարգացնելու համար: Ընդլայնվեցին նախկին արտադրությունները (այնպիսիները, ինչպես օրինակ՝ նավթի արդյունահանումը), ստեղծվեցին արդյունաբերության մի շարք նոր ճյուղեր. ավտոմեքենաների, ավտոբուսների, ռադիոսարքավորումների, սպառման առարկաների արտադրություններ: Քանի որ շատ ֆաբրիկաներ նոր էին և հաճախ հանդերձվում էին Գերմանիայից բերված տեխնիկայով, *արևմտաուկրաինական ձեռնարկությունները դասվում էին ԽՍՀՄ-ի ամենաարդիականների շարքին:* 1951 թ.-ին մոտ, Արևմտյան Ուկրաինայում արդյունաբերական արտադրանքի մակարդակը 230 %-ով գերազանցում էր 1945 թ.-ի մակարդակը և կազմում էր ամբողջ հանրապետության մակարդակի 10 %-ը (1940 թ.-ի 3 %-ի փոխարեն): Արագ զարգացող Լվովը հանրապետության գլխավոր արդյունաբերական կենտրոններից մեկը դարձավ:

*Արդյունաբերականացումը նաև սոցիալական լուրջ փոփոխությունների հանգեցրեց:* Բազմաթիվ նոր ձեռնարկությունների համար անհրաժեշտ մասնագետների և որակյալ բանվորների սկզբնական պակասն առաջ բերեց ռուսների մեծ հոսք դեպի Արևմտյան Ուկրաինա: Սակայն շատ արագ զարգացավ նաև տեղի ուկրաինական բանվորական դասակարգը: 1940-ականների վերջին և 1950-ականների սկզբին ուսուցված բանվորների թիվն Արևմտյան Ուկրաինայում ամեն տարի աճում էր 20-30 հազ.-ով, հատկապես՝ տեղի բնակչության հաշվին: Արդյունաբերական բանվորների թիվը Լվովում 1945 թ.-ի 43 հազ.-ից 1958 թ.-ին հասել էր 148 հազ.-ի: Առաջացավ մինչ այդ բացակայող տեխնիկական մասնագիտություն ունեցող ուկրաինական մտավորականության շերտը: Այդպես, խորհրդային իշխանության հովանու տակ, Արևմտյան Ուկրաինայի երկար ձգձգվող սոցիալ-տնտեսական արդիականացումը արագորեն առաջ էր ընթանում:

Թերևս խորհրդային վարչակարգի առավել հրապուրիչ կողմը՝ կրթություն ստանալու համար լայն հնարավորություններ ընձեռնելն էր: Այնպես, ինչպես և 1939 թ.-ին, 1945 թ.-ին նոր վարչակարգը նպաստեց ուկրաինալեզու տարրական կրթության զգալի ընդլայնմանը: Արագորեն զարգանում էր նաև բարձրագույն դպրոցը. 1950 թ.-ին Արևմտյան Ուկրաինայի 24 բուհերում սովորում էին 24 հազ. ուսանող ստացիոնար բաժիններում և 9 հազ.՝ հեռակա բաժիններում: Սակայն, հանրակրթական մակարդակի բարձրացումը նշանակում էր նաև ռուսացման ուժեղացում. *1953 թ.-ին Արևմտյան Ուկրաինայի բոլոր բուհերում ուսուցման լեզուն դարձավ ռուսերենը:*

Եթե կրթություն ստանալու հնարավորությունների մեծանալը խորհրդային վարչակարգի այն առանձնահատկությունն էր, որ մեծ հաճույքով ընդունվեց Արևմտյան Ուկրաինայի կողմից, ապա կոմունիստական կուսակցությունն ակներևորեն ցանկալի հյուրերի թվում չէր: *Նույնիսկ պատերազմում խորհուրդների տարած հաղթանակից հետո էլ, արևմտյան ուկրաինացիները չէին ձգտում ՌԿ(բ)Կ-ի շարքերն անցնել:* 1944 թ.-ին այստեղ կուսակցության ընդամենը 7 հազ. անդամ ու անդամության թեկնածու կար, որոնցից միայն մի քանի հարյուրն էին բանվոր: 1946 թ.-ին այդ թիվը հասավ 31 հազ.-ի, իսկ 1950 թ.-ին՝ ՌԿ(բ)Կ-ին անդամագրվելու կոչի արդյունավետ կենսագործումից հետո՝ մինչև 88 հազ.-ի, ինչը, միևնույնն է, բնակչության ընդհանուր թվի համեմատությամբ շատ չնչին էր: Կուսակցության անդամների մեծ մասը ոչ շատ վաղուց եկել էին արևելքից: Օրինակ, 1950 թ.-ին, Լվովի քաղաքային կուսակցական կազմակերպության 23 հազ. անդամներից միայն 10 %-ն էին տեղացի: *Գյուղերում կոմունիստների թիվն ընդհանրապես չափից դուրս քիչ էր:* Այսպիսով, քաղաքական իշխանության մենաշնորհն ունենալով հանդերձ, կուսակցությունը չէր կարողացել խոր արմատներ գցել արևմտաուկրաինական բնակչության մեջ: Այդ պատճառով էլ վերջիններիս գիտակցության մեջ մնացել էր օտարերկրյա տիրապետության տակ ապրելու բավականին ակնհայտ զգացողությունը:

## Ստալինիզմի գաղափարախոսության ուժեղացումը

Չնայած բարոյական մեծագույն վերելքին, որ ապրեց խորհրդային հասարակությունը երկրորդ համաշխարհային պատերազմի հաղթանակի շնորհիվ, Ստալինը համարում էր, որ պատերազմն իր ռեժիմին գաղափարախոսական բնույթի շատ լուրջ կորուստներ է հասցրել: Պատերազմի ժամանակ ձգտելով բարձրացնել խորհրդային ժողովրդի մարտական ոգին, խորհրդային իշխանությունը խթանում էր ինչպես ռուսների, այնպես էլ ԽՍՀՄ-ի մյուս ժողովուրդների ազգային զգացումները, ինչպես նաև հանել էր կրոնի նկատմամբ սահմանափակումները: Բայց ռեժիմին ամենաշատ անհանգստությունը պատճառում էր այն հանգամանքը, որ մոտ 70 մլն խորհրդային քաղաքացի՝ ռազմագերիները և գերմանացիների կողմից օկուպացված տարածաշրջաններից հարկադիր աշխատանքի քշված բնակիչները, ծանոթացել էին Արևմուտքի հետ և յուրացրել արևմտյան ապրելակերպի որոշ կողմերը: Բացի այդ, բռնազավթման ժանապարհով խորհրդային Միության կազմի մեջ էին մտել տարածքներ՝ իրենց միլիոնավոր մարդկանցով, որոնք հիմնականում բացասաբար կամ լավագույն դեպքում կասկածամտորեն էին վերաբերվում խորհրդային գաղափարախոսությանը, քաղաքական համակարգին և տնտեսական կառուցվածքին: Այդ պատճառով էլ *Ստալինը համարում էր, որ ռեժիմը պետք է իր ձեռքի մեջ սեղմած պահի հասարակությանը, հատկապես՝ գաղափարախոսության ոլորտում:*

Մարդը, որին Ստալինը վստահեց «գաղափարախոսական մաքրության» վերականգնման խնդիրը, նրա ամենամեծավոր զինակից *Անդրեյ ժդանովն* էր: *1946 թ.-ի ամռանը այդ «հավատարիմ ստալինյանը» իսկական հարձակում ծավալեց նրանց դեմ, ովքեր ծարավի էին մշակույթի կլիմայի մեղմացմանը և հիանում էին արևմտյան քաղաքակրթության ձեռքբերումներով:* «Գրավել այդպիսի դիրքեր, - հայտարարում էր նա, - նշանակում է դժգոհություն և անբավարարվածություն ցուցաբերել խորհրդային մշակույթի նկատմամբ, ինչն ինքնին անընդունելի է»: «Մեր խնդիրն է, - հանդիսավոր կերպով հայտարարում էր նա, - հարձակում ծավալել հոտած և ծախու բուրժուական մշակույթի դեմ»: Սակայն, եթե ժդանովի և նրա համախոհների նպատակը խորհրդային մարդկանց համոզելն էր, որ հեռու մնան արևմտյան մշակույթից, ապա հարկավոր էր նրանց առաջարկել ավելի հրապուրիչ երկրներում:

Այդ խնդրին համապատասխան, ժդանովյան գաղափարախոսական գործունեության մեջ կարևոր տեղ էր հատկացվում ռուսական մշակույթի և գիտության ձեռքբերումների փառաբանմանը: Արևմուտքում արված յուրաքանչյուր գյուտի համար անհապաղ գտնվում էր համանման ձեռքբերում ռուսական պատմության մեջ՝ անշուշտ ավելի վաղուց արված, արևմտյան յուրաքանչյուր հայտնի հեղինակի համար գտնվում էր ռուս համանմանը, որը միշտ ավելի լավն էր, արևմտյան յուրաքանչյուր ականավոր գործիչի հակադրվում էր ռուս գործիչը, որի արժանիքներն անմրցելի էին: Ռուսական ազգայնականության այս նոր, ավելի լայն «հրատարակությունը» բոլորովին անսպասելի չէր. դեռևս 1945 թ.-ի մարտին Ստալինը կանխել էր այն՝ ռուս ժողովրդին ուղղված իր նշանավոր բաժակաճառով, որտեղ նրանց



բնութագրում էր որպես **«ամենաականավոր ժողովուրդ... Խորհրդային Միության առաջատար ուժ»:**

Ինչպես դա անցյալում էլ էր եղել, *ուկրաինացիները դարձան ստալինյան նորամտությունների ամենախոցելի օբյեկտը:* Հատկապես նրանք բոլորից երկար մնացին օկուպացիայի տակ, հատկապես ամենաշատը նրանց քշեցին Գերմանիա՝ հարկադիր աշխատանքի, հատկապես Արևմտյան Ուկրաինայում էր հակախորհրդային տրամադրություններն ամենակենսունակը, հատկապես արևմտյան ուկրաինացիների մոտ էր ամենացայտունն արտահայտվում «օտար» ազդեցությունները: **Ստալինի այն խոսքերը, թե նա բոլոր ուկրաինացիներին Միքիր կաքսորեր, եթե նրանք այդքան շատ չլինեին, ոչ մի լավ բան չէր կանխազուշակում:** Մոտեցող ջարդերի նշաններն Ուկրաինայում ի հայտ եկան 1946 թ.-ի հուլիսին, երբ Մոսկվայում կուսակցության Կենտրոնական կոմիտեի կողմից չարագույժ մեղադրանքներ հնչեցին ուկրաինական կուսկազմակերպության հասցեյին, թե նա «պատշաճ ուշադրություն չի դարձնում գիտության, գրականության ու արվեստի բնագավառներում կադրերի ընտրության և քաղաքական-գաղափարախոսական դաստիարակության հարցում», թե դրանցում գոյություն ունեն «թշնամական ազգայնա-բուրժուական գաղափարախոսության» դրսևորումներ և փորձեր են արվում «վերակենդանացնելու ուկրաինական ազգայնական տեսությունը»: Դա հետպատերազմյան շրջանում համեստ վերածնունդ ապրած ուկրաինական մշակույթի թաղման զանգերի ծայրն էր:

Մեկ ամիս անց, երբ հանրաճանաչ ուկրաինացի գրող-երգիծաբան *Օստապ Վիշնյան*, որ 1930-ականներին բռնությունների էր ենթարկվել, համարձակվեց արտահայտել այն միտքը, թե նկարիչը իր ստեղծագործական ինքնության և յուրօրինակության որոնումների մեջ սխալվելու իրավունք ունի, Մոսկվայից «գաղափարախոսական երեքունության» մեղադրանքների փոթորիկ պայթեց: Դա որպես գործողություններ սկսելու ուղեցույց ընկալելով, ուկրաինական կոմկուսի առաջնորդ *Նիկիտա Խրուշչևն* ու գաղափարախոսության գծով նրա տեղակալ *Կ. Զ. Լիտվինն* անմիջապես համազարկաշար արձակեցին ուկրաինացի ամբողջ մտավորականության ուղղությամբ, նրան մեղադրելով «բուրժուական ազգայնականության մեջ»:

Գտնվեցին նաև ավելի կոնկրետ հասցեատերեր. Լիտվինն, օրինակ, կենտրոնացավ վերջին ժամանակները հրապարակված «ուկրաինական գրականության պատմության» վրա: Նա հաստատում էր, որ այդ աշխատանքը պարունակում է լուրջ «բացթողումներ», քանի որ նրանում ուկրաինական գրականության զարգացումը դիտարկվում է դասակարգային պայքարից կտրված, չափազանցված են արևմտյան ազդեցությունները, այն դեպքում, երբ ռուսական մշակույթի բարերար ազդեցությանը շատ քիչ նշադրություն է հատկացված: Մեկ տարի անց այդպիսի քննադատության օբյեկտ դարձավ նոր «ուկրաինայի պատմությունը», որ լույս էր տեսել 1943 թ.-ին՝ Մ. Ն. Պետրովսկու խմբագրությամբ: Հեղինակների առջև խնդիր էր դրված՝ պատմական աշխատությունները «մաքրել» Հրուշչևսկու ազդեցությունից:

Իրենց ստեղծագործություններում ուկրաինական ավանդական եղանակներ օգտագործելու համար ստորացուցիչ հարձակումների ենթարկվեցին ուկրաինայի երգահանները: Կ. Դանկևիչի «Բոգդան Խմելնիցկի» օպերան քննադատվեց այն բանի համար, որ նրանում շատ քիչ էր խոսվում (կամ երգվում) ռուսների ակնառու դերի մասին. ուկրաինական գրական ամսագրերը և հանրագիտարանային հրատարակությունները բոլոր եղանակներով հիշատակվում էին՝ «նեղ» ուկրաինական թեմաների վրա կենտրոնացածության համար: *Ուկրաինական ազգայնականության դեմ պայքարը հատկապես դաժան երանգ ստացավ 1947 թ.-ին Ուկրաինայում Կազանովիչի լինելու կարճատև շրջանում*, որն ակներևորեն սադիստական բավականություն էր ստանում ուկրաինացի մտավորականների հալածանքներից:

**Գաղափարախոսական «պնդոզակները ձգելու» գազաթնակետը դարձավ 1951 թ.-ը, երբ բանադրանքի ենթարկվեց Կ. Սոսյուրայի «Միտել Ուկրաինան» բանաստեղծությունը, որ գրվել էր 1944 թ.-ին՝ հայրենասիրության վերելքի շրջանում և ստացել էր Ստալինյան մրցանակ:** Հեղինակին մեղադրեցին ազգայնականության մեջ և ստիպեցին հրապարակավ հանդես գալ նվաստացուցիչ զղջումով: Գաղափարախոսական շեղումների հետամտումներն հասան ուղղակի գրոտեսկային (հաճախ նաև մահացու) ձևերի, երբ հետապնդման օբյեկտ դարձան հրեաները: Հրեա շատ գրողներ, գիտնականներ, նկարիչներ, դերասաններ «հայրենամերժ կոսմոպոլիտների» դեմ պայքարի զոհը դարձան: Գաղտնի ոստիկանությունը նույնիսկ հրեա մտավորականության խմբի «դավադրության» վերաբերյալ գործ սարքեց, որն իբրև թե «միջազգային հրեության» օգնությամբ պատրաստվում էր գրավել Դրիմը և առանձնանալ Խորհրդային Միությունից: Հենց այդ ժամանակ ծագեց մի անհեթեթ միտք, որն

հետագայում իր մշտական տեղն ունեցավ խորհրդային քարոզչությունում՝ խորհրդային իշխանության դեմ պայքարում ուկրաինացի ազգայնականների և հրեա սիոնիստների համագործակցության մասին:

*Ամեն ինչ վկայում էր այն մասին, որ Ստալինն արյունահեղ նոր զտում է պատրաստում: Ուկրաինայի՝ մտավորականությունը խունապի մեջ էր.* ստեղծագործական գործունեությունը կանգ էր առել, բոլորը շտապում էին ընդունել իրենց սխալները և ներում խնդրել: Ակներև էր, որ ուկրաինացի մտավորականությունը յուրացրել էր 1930-ականների դասը. ապաշխարիր այսօր, եթե ուզում ես ապրել վաղը: Սակայն հենց այն ժամանակ, երբ բոլորը պատրաստվել էին ստալինյան հերթական կամայականություններին, 1953 թ.-ի մարտի 5-ին «ժողովուրդների հայրը» հեռացավ կյանքից: Կարծես լավեց, թե Ուկրաինան ինչպես թեթևացած շունչ քաշեց:

\* \* \*

Ուկրաինացիների մոտ, որոնք մինչև 1939 թ.-ը ապրել էին խորհրդային իշխանության օրոք, հետպատերազմյան շրջանում տեղի ունեցող ամեն ինչ «արդեն տեսածի» («дежа-вю») զգացում էր առաջացնում: Նրանք կրկին նետվեցին հսկայական, ուժասպառ անող շինարարական նախագծերի հորձանուտը, նրանք կրկին կրեցին գաղափարախոսական և մշակութային հարաբերական հանդուրժողական շրջանից դաժան ճնշումների և ուղղափառության ժամանակներին անցնելու տառապանքը, և կրկին նրանք հայտնվեցին սովի ու բռնությունների իրական սպառնալիքի առջև:

Արևմտյան ուկրաինացիների համար հետպատերազմյան տարիները դարձան բացարձակապես այլ աշխարհի մուտք գործելու փուլ, որի հետ կարճատև ու անհաջող ծանոթացել էին 1939-1941 թ.թ.-ներին: **ԽՍՀՄ-ի կազմի մեջ մտնելը նշանակում էր զատվել եվրոպական քաղաքական և մշակութային արժեքներից:** Այդ իրադարձության ոչ պակաս լուրջ հետևանք դարձավ արևմտաուկրաինական հասարակության ձեռքբերումների մեծ մասի կորուստը՝ նրա լայն կազմակերպչական բազայի՝ ի դեմս վաղեմի և կարևոր կառուցվածքի՝ հունակաթուղիական եկեղեցու, և մյուս՝ ավելի ուշ շրջանի՝ ՌԻԱ-ՌԻԱԲ-ի: Հենց դրանք էին օտարերկրյա տիրակալությունից պաշտպանվելու ուկրաինացիների բազում սերունդների հիմնական զենքը և ազգային յուրօրինակության արտահայտման ու պահպանման հիմնական միջոցը: Սակայն, խորհրդային բռնազավթման ոչ բոլոր հետևանքներն էին բացասական. Ստալինի թելադրանքով վերջապես լուծվեց լեհ-ուկրաինական տարածայնությունը, որը երկար տարիներ ուժասպառ էր անում երկու ժողովուրդին էլ: Բացի այդ, Խորհուրդները ձեռնարկեցին տարածաշրջանի արդյունաբերական և սոցիալական արդիականացման գործընթացը: Եվ վերջապես, **հենց նրանք, վերջիվերջո բոլոր ուկրաինացիներին միավորեցին մի միասնական պետությունում:**





## ԶՆՆԱԼ

Ստալինի մահից հետո Խորհրդային պատմության մեջ նոր դարաշրջան սկսվեց: Կառավարման իշխող ու առարկությունները չընդունող, անարդյունավետ ու վատնող, ուժասպառ անող մեթոդները, որ հենված էին ահաբեկչության ու զանգվածային բռնությունների վրա, չէին կարող անվերջ գոյատևել: Փոփոխությունների անհրաժեշտությունը գիտակցում էր նույնիսկ Խորհրդային ընտրախավը: Կյանքի բոլոր ոլորտների նկատմամբ ստալինյան դաժան վերահսկողության ընդհանուր թուլացման կենսական պահանջը հասունացել էր: Խորհրդային պետության կուտակած տնտեսական ու քաղաքական հսկայական հզորությունը պետք է վերջապես սկսեր ծառայել ժողովրդին, նրանց բարօրությանը: Սակայն, Կրեմլի բռնակալության թուլացմանը համապատասխան, հասարակական կյանքում առաջանում էին խնդիրներ, որոնք կարծես թե առաջներում լուծված էին, և դրանք լուծելու Ստալինի հետնորդների փորձերը հաճախ ծնում էին նոր խնդիրներ: Չնայած ստալինիզմի հիմնական ուղղություններից հեռանալը և կոմունիզմի կառուցման նոր մոտեցումներ որոնելը տեղի էին ունենում Խորհրդային Միության բոլոր հանրապետություններում, Ուկրաինայում այդ փոփոխություններն առանձնապես բազմաթիվ էին և ուշադրության արժանի:

### Նոր ղեկավարություն

Մտեցող փոփոխությունների տարբերիչ առանձնահատկությունը, որն, իհարկե, ժամանակավոր բնույթ ուներ, Ստալինի միահեծան կառավարման փոխարինումն էր «կոլեկտիվ ղեկավարումով»: Կուսակցական-պետական բարձրաստիճան գործիչներից կազմված կառավարման այդ յուրօրինակ կոմիտեն գործեց ոչ տևական ժամանակ և անցումային փուլ էր նոր, ուժեղ անհատի իշխանություն հաստատելու ճանապարհին: Իշխանության համար թաքուն պայքարում, որ ծավալվում էր «կոլեկտիվ ղեկավարության» ներսում, սկզբում թվում էր, թե կհաղթի պատժիչ մարմինների ղեկավար **Լավրենտի Բերիան**: Ստալինի շրջապատի ամենաահավոր դեմքերից մեկը: Փորձելով ընդլայնել իրեն աջակցողների շրջանը, Բերիան հասկանալ տվեց վրացիներին և հատկապես ուկրաինացիներին, որ պատրաստ է զնալ լուրջ զիջումների և ներողամիտ լինել նրանց նկատմամբ: Սակայն Բերիան գերազանցատեղ իր ուժերը և դրա համար կյանքով հատուցեց (դա վերջին դեպքն էր, երբ անհաջողակ քաղաքական հակառակորդը մահապատժի ենթարկվեց): Որոշ ժամանակ առաջին պլանում էր **Չեռոպի Մալենկովը**՝ տնտեսական բարեփոխումների կողմնակիցը, կառավարական և տեխնոկրատական բյուրոկրատիայի դրածոն: Սակայն, վերջիվերջո, իշխանության համար պայքարում հաղթեց **Նիկիտա Խրուշչևը**, որի կարիերան մշտապես ամուր կապված էր Ուկրաինայի հետ:

Ռուսական ծագումով և, Խրուշչևը ծնվել է ռուս-ուկրաինական սափմանի փոքր գյուղերից մեկում: Կենսուրախ, մարդամոտ ու զվարճասեր, բայց միաժամանակ կուսակցական անգութ գործիչ լինելով, նա բավականին արագ հասավ իշխանության վերին աստիճաններին՝ շնորհիվ ըմբռնողության, խելամտության, արագ արձագանքման և Ստալինի առջև հանդուզման ստորաքարշության: Ծառայողական աստիճաններով նրա առաջխաղացմանը զգալի չափով նպաստում էին նաև ստալինյան գտումները, որ շատ թափուր տեղեր էին առաջացնում կուսակցական հիերարխիայում: Ինչպես արդեն գիտենք, 1938 թ.-ին Խրուշչևին ուղարկեցին Ուկրաինա հատկապես «մեծ գտում» այստեղ ավարտին հասցնելու և Ուկրաինական կոմունիստական կուսակցության վերականգնման համար: Մեկ տարի անց, արևմտաուկրաինա-

կան բռնազավթված տարածքները Խորհրդային Միության կազմում ընդգրկելու գործընթացի վերահսկողն էր: Պատերազմի ժամանակ նա օգնեց պարտիզանական շարժման կազմակերպմանը: Դետպատերազմյան տարիներին Խրուշչևը հանրապետության տնտեսության վերականգնման, ԽՍՀՄ-ի մեջ Արևմտյան Ուկրաինայի կրկնական ընդգրկման պատասխանատուն էր և ղեկավարում էր «ուկրաինական ազգայնականության» դեմ պայքարը: *Լինելով ստալինյան բոլոր հրահանգների անվրեպ ու անգութ կատարողը, Խրուշչևն, համենայն դեպս, որոշ հեղինակության էր հասել Ուկրաինայում, ուշադրություն հատկացնելով «տեղի տիպականությանը»՝ ուկրաինական ասեղնագործ հազուստով հաճախ հայտնվելով և ուկրաինական ազգային երգերի նկատմամբ անկեղծ հիացմունք ցուցադրելով:*

1949 թ.-ին տեղափոխվելով Մոսկվա, Խրուշչևը պահպանեց ուկրաինական կոմկուսի հետ իր սերտ և փոխշահավետ հարաբերությունները: Պատահական չէր, որ իշխանության համար պայքարում առաջինը հանրապետական հենց այդ կուսակցական կազմակերպությունն աջակցեց նրան և միշտ մնաց նրա հուսալի հենարանը: Հատկանշական է, որ Խրուշչևն այդ աջակցության համար լրիվ վարձատրություն եղավ: Ստալինի մահից ընդամենը մեկ ամիս անց Ուկրաինայի կոմկուսի ԿԿ-ի առաջին քարտուղարի պաշտոնից ազատեցին Ուկրաինայում հեղինակություն չվայելող, բացահայտ ռուս ազգայնամուլ **Լեոնիդ Սելնիկովին** (մեղադրելով նրան Արևմտյան Ուկրաինայի բարձրագույն կրթությունը ռուսացնելու և տեղի կադրերի նկատմամբ խտրականություն դնելու մեջ): Նրա տեղը գրավեց **Օլեքսի Կիրիչենկոն**՝ այդ պաշտոնում առաջին ուկրաինացին (այդ ժամանակից սկսած առաջին քարտուղարները միայն ուկրաինացիներ էին նշանակվում): Մյուս բարձր պաշտոնները նույնպես ուկրաինացիներին հասավ. Ուկրաինայի Գերագույն Խորհուրդը գլխավորում էր **Դեմյան Կորոտչենկոն**, իսկ մախարարների Խորհուրդը՝ **Նիկիտա Կալչենկոն**: «Երեք Կ»-երի կառավարումն ուղեկցվում էր պատասխանատու պաշտոններում այլ ուկրաինացիների նշանակումներով: Կառավարության անդամներ դարձան ժամանակին հալածանքի ենթարկված դրամատուրգ Օլեքսանդր Կորնիլչուկը և արևմտաուկրաինացի հայտնի գրողի որդին՝ Սեմեն Ստեֆանիլը: Արևմտյան Ուկրաինայում տեղի կուսակցական կազմակերպությունը գլխավորում էր Բոհդան Դուդիկիչը՝ նախապատերազմյան շրջանի կոմունիստական հայտնի գործիչներից մեկը:

Ղեկավար կազմի փոփոխություններն ուղեկցվում էր ՌԿԿ-ի թվակազմի կտրուկ աճով. 1952 թ.-ին այն ուներ 770 հազ. անդամ և անդամության թեկնածու, 1959 թ.-ի շեմին՝ արդեն 1,3 մլն, որոնց 60 %-ը ուկրաինացիներ էին: Ի տարբերություն ստալինյան ժամանակների, երբ ուկրաինացիները հետապնդումների օբյեկտ էին, Կրեմլը այժմ նրանց սիրաշահելու քաղաքականություն էր կիրառում, ինչի մասին են վկայում բարձր պաշտոններում այդ բոլոր նշանակումները և ՌԿԿ-ի քանակական աճը:

Ուկրաինացի կոմունիստներն իրենց ներկայությունն ու ազդեցությունն ընդլայնեցին նաև իրենց հանրապետության սահմաններից դուրս. նրանցից շատերն ազդեցիկ պաշտոններ զբաղեցրին համամիութենական մակարակով: *Ռոդիոն Մալինովսկին, Անդրիյ Գրեչկոն և Կիրիլ Մոսկալենկոն* ծառայեցին մինչև Խորհրդային Միության մարշալի կոչմանը արժանանալը, իսկ առաջին երկուսը նույնիսկ ԽՍՀՄ-ի պաշտպանության նախարարներ եղան: *Վոլոդիմիր Սեմիչաստնին* գլխավորում էր ԽՍՀՄ-ի ՊԱԿ-ը, իսկ չորս ուկրաինացի՝ *Օլեքսի Կիրիչենկոն, Միկոլա Պիդորնին, Դմիտրո Պոլյանսկին և Պետրո Շելեստը* մտնում էին երկրի կառավարող բարձրագույն մարմնի՝ ԽՍՀԿ ԿԿ-ի 11 անդամներից կազմված Քաղբյուրոյի մեջ: Անշուշտ, նրանց առաջխաղացման հիմնական պատճառը ոչ թե ուկրաինական ծագումն էր, այլ այն, որ նրանք սերտ կապեր ունեին Խրուշչևի հետ: *Լինելով պաշտոնատուներ, ձգտելով հասնել Խորհրդային համակարգի բարձր պաշտոններին, նրանք իհարկե, քիչ էին տոչորվում ազգային շահերով և, որպես կանոն, այդ մասին չէին հիշատակում:* Այնուամենայնիվ, իշխանության վերևներում նրանց ներկայությունը վկայում էր ուկրաինացիների և նրանց հանրապետության դերի նշանակալից աճի մասին:

### Ուկրաինա. «հավասարների մեջ երկրորդը»

Այն դերը, որ զբաղեցնում էր ԽՍՀՄ-ում Ուկրաինան Խրուշչևի օրոք, դիպուկ բնութագրել է Բորիս Լևիցկին. *«հավասարների մեջ երկրորդը»*: Ամեն ինչ խոսում էր հօգուտ այն բանի, որ Կրեմլի և Կիևի միջև լիակատար փոխըմբռնում կար. իրենց աջակցության և համագործակցության փոխարեն ուկրաինացիներն ստացել էին Խորհրդային կայսրության կառավարման



գործում ռուսների կրտսեր ընկերակիցը լինելու դերը: «Ավագ եղբոր» դերը, անկասկած, վերապահված էր ռուսներին: Ուկրաինացիների համար, որոնք արդեն հույս չունեին կամ ընդհանրապես չէին ձգտում անկախության, XIX դարի «նալոռուս» արդիացված տարբերակը անհատական կարիերայի լայն հնարավորություններ էր ընծեռում: Իսկ Կրեմլի համար մեծ ձեռքբերում էր ուկրաինացիների աջակցությունն ստանալը, քանի որ նրանք ոչ միայն ԽՍՀՄ-ում քվաքանակով երկրորդ ազգն էին, այլև այն միակն էին, որոնք կարող էին ռուսական գերիշխանության (հեգեմոնիայի) լուրջ մրցակիցը դառնալ: Համագործակցությունը հեշտանում էր նաև երկու ժողովուրդների լեզվային և մշակութային ազգակցության, նրանց միջև պատմական սերտ կապերի շնորհիվ:


1954 թ.-ին, ակներևորեն ռուսների և ուկրաինացիների ընկերակցության ամրապնդման և տարփողման նպատակով, արտասովոր շքեղությամբ տոնվեց Պերեյասլավյան պայմանագրի 300-ամյա տարեդարձը: Ի հավելումն բազմաթիվ տոնակատարությունների, անհամար հրապարակումների և հանդիսավոր անթիվ ճառերի, ԽՍՀՄ ԿԿ-ն հրատարակեց 13 թեզ, որոնցում ապացուցվում էր ռուսների հետ ուկրաինացիների «հավերժ միության» աներերությունը: Ընդգծելու համար այդ միության առավելությունները, «ի նշան ռուս ժողովրդի հետ բարեկամության», Ուկրաինայի կազմի մեջ փոխանցվեց Դրիսը, որ մինչ այդ պատկանում էր Ռուսական Ֆեդերացիային:

Սակայն դրիմյան նվերը բոլորովին էլ օտարասիրության և բարի կամքի դրսևորում չէր: Նախ՝ քանի որ թերակղզին դրիմյան թաթարների պատմական հայրենիքն էր, որոնց երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ արտաքսեցին այստեղից, ապա ռուսներն այն նվիրելու, իսկ ուկրաինացիներն էլ՝ այն ընդունելու բարոյական իրավունք չունեին: Երկրորդ՝ Դրիմն առանց այդ էլ ավելի շատ ձգտում էր ոչ թե Ռուսաստանին, այլ Ուկրաինային, քանի որ անմիջական հարևան էր և նրանից տնտեսական կախվածության մեջ էր: Վերջապես, Դրիմի միացումով Ուկրաինան ծանրաբեռնվեց մի շարք տնտեսական և քաղաքական խնդիրներով: 1944 թ.-ի թաթարների արտաքսումը տնտեսական քառս սերմանեց թերակղզում, որի առաջացրած վնասները ստիպված կլինեին հատուցել Կիևի կառավարության բյուջեի հաշվին: Առավել կարևոր էր այն փաստը, որ 1959 թ.-ի մարդահամարի համաձայն Դրիմում ապրում էին ավելի քան 860 հազ. ռուս և միայն 260 հազ. ուկրաինացի: Եվ չնայած 1954 թ.-ից հետո տարածաշրջանում ուկրաինացիների թիվը մեծացնելու Կիևի ջանքերին, հիմնական մեծամասնությունն այստեղ, համենայն դեպս, կազմում էին ռուսները, որոնք հաստատակամորեն դիմակայում էին ուկրաինացման ցանկացած ձևին: Արդյունքում, *դրիմյան «նվերը» լրջորեն մեծացրեց ռուսների թիվը ՌԽՍՀՄ-ում:* Այս առումով, այն իսկապես կարելի է համարել իրադարձություն, որ տեղին էր Պերեյասլավյան պայմանագրի տարեդարձի տոնակատարության ժամանակ:

## Ձերբազատում անհատի պաշտամունքից

Ոչ ռուս, հատկապես ուկրաինացի ժողովուրդների լայն աջակցությունն ստանալու նոր դեկավարության փորձերը բարենորոգումների ավելի լայն ծրագրի մի մասն էր: Արդիականացման ստալինյան մեթոդը՝ ահաբեկչության, գաղափարախոսական հարձակումների և արագացված արդյունաբերականացման համակցությունը, արդյունավետ, սակայն խորհրդային ժողովրդի առաջադրման անբնական ձև էր: Խրուշչևը հասկանում էր, որ վերջիվերջո խորհրդային Միության առաջընթացը հնարավոր է ոչ թե բռնության՝ այլ համոզմունքի, արտադրողականության և նախաձեռնության աճի՝ այլ ոչ թե հեղափոխական մոլուցքի հիման վրա: *Ձարգացման նոր ուղուն անցնելու համար, հարկավոր էր նախ կապերը խզել հնի հետ:*

1956 թ.-ի ԽՍՀՄ XX-րդ համագումարում Խրուշչևն հանդես եկավ խորհրդային պատմության *ամենադրամատիկ ճառով:* Սեծագույն սարսափ ու շփոթվածություն առաջացնելով «տոկուն կոմունիստների» շարքերում, իր ընդարձակ ելույթում նա *մանրամասն ներկայացրեց ստալինյան ոճրագործությունների զարհուրելի պատկերը:* Այդ «զաղտնի զեկույցը» նշանակում էր *անհատի պաշտամունքից ձերբազատման գործընթացի սկիզբ*, որն ուղեկցվեց երկրի հողևոր կլիմայի շոշափելի փոփոխություններով: Թուլացավ պաշտոնական գաղափարախոսության ճնշումը և մշակութային կյանքում սկսվեց «հալիլոցը»: ԽՍՀՄ-ում գրոսաշրջության զարգացումը և արտասահմանյան ուղևորությունների ընդլայնումը (ի դեպ՝ մանրակրկիտ վերահսկվող) ճեղք բացեց ինքնամեկուսացման քաղաքականության մեջ: Ոչ-





ռուս ժողովուրդների ռուսացումը կորցրեց իր հարձակողական երանգը: Սկսվեց տնտեսութունում խորը և լայնածավալ փոփոխություններ կատարելու նախապատրաստությունը: Այս ամենը սակայն չէր նշանակում, որ տոտալիտար վարչակարգը տապալվեց. իր հիմնական գծերով ու դրսևորումներով այն մնացել էր անփոփոխ: Սակայն ստալինյան ժամանակներին բնորոշ համատարած վախի և ստեղծագործական կաթվածահարության շիկացած մթնոլորտը զգալիորեն հանդարտվել էր:

### **Փոփոխություններ Ուկրաինայում**

Սկզբում ուկրաինացիները նոր հովերին վերաբերվում էին ստալինյան ժամանակներին հատուկ զգուշությամբ: Սակայն երբ պարզ դարձավ, որ «անհատի պաշտամունքի» պսակագերծումն իսկապես է տեղի ունենում, նրանք այդ գործընթացին ներգրավվեցին իրենց պահանջների ու հավակնությունների անհամար հանրագրերով: Միանգամայն բնական է, որ դժգոհություններն ամենից բարձր հնչում էին մշակույթի գործիչների շարքերից: *Ե՛վ սկզբից, և՛ հետագայում դժգոհության հիմնական առիթը ուկրաիններեն լեզվի ցավալի վիճակն էր:* Մտավորականությունը, ուսանողները, բանվորները, նույնիսկ կուսակցական աշխատողները համառորեն կրկնում էին նույն բանը. ԽՍՀՄ-ում ռուսերեն լեզվի հատուկ կարգավիճակը՝ ուկրաիններենի նկատմամբ խտրականության չպետք է հանգեցնի: Հանրապետության բնակիչների, հատկապես ուսանողների շրջանում գնալով ավելի հաճախ էին հնչում ուկրաիններեն լեզուն պահպանելու և այն լայնորեն կիրառելու կոչերը:

*Ոչ պակաս ցավալի էր ուկրաինական գիտության անկումը:* Իսկական պատմաբանները (այլ ոչ թե կուսակցական կեղծ պատմաբանները) հանդես էին գալիս Մոսկվայի կողմից իրենց բնագավառի նկատմամբ տարվող գաղափարախոսական խիստ վերահսկողության դեմ, որը նրանց կարծիքով տանում էր «պատմության սնանկացմանը»: Այդ «սնանկացման» ամենաբնորոշ հատկանիշներն էին գավառականությունը, կուսակցական ցուցմունքներին ստրկամտորեն հետևելը, Ռուսաստանի հետ կապերի նշանակության ու դերի ուռճացումը և միաժամանակ՝ «ուկրաինական պատմական առանձնահատկության» նկատմամբ քամահրանքը: Նմանատիպ հավակնություններ իրենց ոլորտի նկատմամբ առաջ էին քաշում նաև գրականագետները:

Դատելով ամեն ինչից, Կրեմլը խուլ չէր մնում այդ պահանջների նկատմամբ: 1957 թ.-ին ուկրաինացի պատմաբանները թույլտվություն ստացան ունենալ սեփական հրատարակությունը՝ «*Ուկրաինական պատմական ամսագիր*ը»: Երկու տարի անց սկսվեց «*Ուկրաինական հորհրդային հանրագիտարանի*» առաջին հատորների հրատարակությունը, ինչը որոշ իմաստով Արևմուտքում վտարանդի ուկրաինացիների ձեռնարկած նման նախագծի պատասխանն էր: Դրանց ավելացան պատկառելի այնպիսի բազմահատոր հրատարակություններ, ինչպիսիք էին *ուկրաիններեն լեզվի բառարանը, ուկրաինական գրականության պատմությունը, ուկրաինական արվեստի պատմությունը և Ուկրաինայի քաղաքների ու գյուղերի շատ մանրամասն պատմությունը*, որի նմանը չունեին նույնիսկ ռուսները:

Զգուշանալով բարձրացնել ուկրաինական գիտության մակարդակը և այդպիսով մեծացնել ազգային մշակույթի հեղինակությունը, մտավորականությունը կենտրոնացավ ոչ միայն ավանդական հումանիտար գիտական ճյուղերի վրա, այլև պահանջեց հանրապետությունում ստեղծել գիտության նոր ճյուղերի զարգացման պայմաններ, այնպիսիք ինչպիսիք էին միջուկային հետազոտություններն ու կիբեռնետիկան: *1957 թ.-ին Կիևում ստեղծվեց համակարգչային կենտրոն, որը 1962 թ.-ին վերափոխվեց գիտությունների Ակադեմիայի կիբեռնետիկայի ինստիտուտի:* Այն դարձավ այդ ոլորտում համամիութենական առաջատարը: Միաժամանակ, բնական և հասարակական գիտությունների բնագավառներում սկսեցին հայտնվել ուկրաինալեզու բազմաթիվ ամսագրեր: Այնուհայտ էր, որ ուկրաինական մտավորական ընտրախավը ձգտում էր օգտվել «ձմեռալուծ» պայմանավորված հնարավորություններից՝ զարգացնելու համար նորագույն գիտական գիտելիքները, հենվելով ոչ թե ռուսերեն, այլ ուկրաիններեն լեզվի վրա:

*Քանի որ Խրուշչևն ընդունեց ստալինյան զոհերի նկատմամբ բռնությունների անօրինականությունը, ապա և առաջ եկավ նրանց արդարացնելու պահանջը:* Առաջին հերթին բարի անունը հետմահու վերադարձվեց գտումների ժամանակ տուժած կոմունիստներին: Ուկրաինայում հատուկ ուշադրություն էին պահանջում հատկացնել ԱՌԿԿ-ի անդամների և այնպիսի ազգայնական-կոմունիստների արդարացմանը, ինչպիսիք էին Սկրիպնիկն ու Խվիլյովիլը: Առաջ էին քաշվում նաև մշակութային այնպիսի խոշոր գործիչների արդարացման

առաջարկներ, ինչպես դրամատուրգ Միկոլա Կուլիշն էր, թատերական ռեժիսոր Լես Կուրբասը, համաշխարհային ճանաչում ունեցող կինոռեժիսոր Օլեքսանդր Դովժենկոն կամ XIX դարի ականավոր քաղաքական գործիչ Միխայլո Դրահոմանովը, որոնք շատ բան արեցին ուկրաինական մշակույթը նրան ներհատուկ գավառականությունից վեր բարձրացնելու համար: Քանի որ պատմության մեջ այդ անհատականությունների վերականգնումը արժարժում էր քաղաքական այնպիսի նրբագրգիռ խնդիրներ, ինչպիսիք էին ուկրաինական մշակութային անկախությունը և «դեպի կոմունիզմ տանող Ուկրաինայի սեփական ուղին», ապա կուսակցության արձագանքը շատ զգուշավոր էր և ոչ միանշանակ: Միայն արդեն այն փաստը, որ մտավորականությունը այդքան համառորեն ձգտում էր արդարացնել հատկապես այդ գործիչներին, վկայում էր այն մասին, որ նրանց գաղափարները պահպանել էին դեպի իրենց քաշող ուժը:

*Միբիրյան համակենտրոնացման ճամբարներում բանտարկված միլիոնավոր ուկրաինացիներ անսպասելի ազատություն ստացան.* շատերին ներում շնորհվեց և թույլատրվեց վերադառնալ իրենց տները: Ճամբարային հսկայական համակարգի այս մասնակի ապաստումն արագացվեց *Ճամբարային ապաստանությունների բռնկումներից, մասնավորապես՝ Կորկուտայում և Նորիլսկում (1953 թ.) կամ Կարագանդայում (1954 թ.), որոնցում առաջատար դեր էին խաղում ՌԻԱ-ՌԻԱ-ի նախկին անդամները:* Այդ նույն ժամանակ Կրեմլը միանգամայն պարզ հասկացնել տվեց, որ ինքը չի պատրաստվում հաշտվել այն տեսակի ազգայնականության հետ, որը քարոզում էր ՌԻԱ-ը: Պերեյասլավյան պայմանագրի տարեդարձի տոնակատարության թե՛ պահին գնդակահարվեց ՌԻԱ-ի ականավոր առաջնորդ, վտարանդի *Վասիլ Օխրիմովիչը*, որին Ուկրաինա էին հասցրել ամերիկացիները: *1956 թ.-ին տեղի ունեցան ՌԻԱ-ի անդամների մի շարք ցուցադրական դատավարություններ, որոնք ավարտվեցին մահապատժի դատապարտումով:* Այնուհայտ էր, որ վարչակարգը առաջվա պես պատրաստ է անողոր կերպով ճնշել ուկրաինական շահերը պաշտպանելու ակտիվ գործունեության ցանկացած դրսևորում, եթե այն, իր կարծիքով, դուրս էր գալիս թույլատրելի սահմաններից:

### **Ազգային հարցը**

Թերևս, խորհրդային ազգային քաղաքականության սկզբունքներին հետևելու (ընդ որում՝ գնալով երկրորդական զիջումների) Խրուշչևի վճռականության առավել պերճախոս վկայությունը 1958 թ.-ի կրթական բարեփոխումն էր: Դրա այն մասը, որ վերաբերվում էր մայրենի լեզուն սովորելու խնդրին, արտասովոր կերպով հակասական էր: Ընդհուպ մինչև 1958 թ.-ը սովորողները պարտավոր էին իրենց մայրենի լեզուն սովորել այնպես, ինչպես և ռուսերենը: Արտաքինից՝ Խրուշչևի ազատական բարեփոխումը ծնողներին իրավունք էր տալիս իրենց երեխաների համար ընտրել ուսուցման լեզուն: *Փաստացի՝ դա նշանակում էր, որ Ուկրաինայում ապրող ցանկացած ոք, կարող էր կրթություն ստանալ առանց ուկրաիններեն լեզուն սովորելու և ընդհանրապես առանց այն գիտենալու:*

Նկատի ունենալով, որ գոյություն ունեցող ռուսերեն լեզուն հարկադրված սովորելու օրինական և անօրինական ոչ քիչ խոչընդոտներ և նրբություններ, կարելի էր սպասել, որ շատ ծնողներ իրենց երեխաների ուսուցման համար կընտրեն հենց ռուսերենը և չեն ցանկանա նրանց ծանրաբեռնել էլի մեկ՝ թեկուզև մայրենի լեզու սովորելով: Չնայած գայրույթի ու բողոքների տարափին, որոնց միացան նույնիսկ որոշ կուսակցական գործիչներ, վարչակարգը, հանենայն դեպս, ոչ-ռուսերեն լեզուներ սովորելուն հասցրեց այդ հարվածը, ակնառու կերպով ցույց տալով, որ նույնիսկ ազատականացման ժամանակներում նա ընդունակ է ընդամենը կերպափոխել ռուսացման քաղաքականությունը, բայց չհրաժարվել նրանից:

Հասարակություն վրա ապաստանականացման ազդեցությունն ունեցավ մեծահասակներ, որոնք դուրս էին գալիս Կրեմլի քաղաքագետների և Կիևի մտավորականության միջև գոյություն ունեցող քաղաքական ու մշակութային տարածայնությունների շրջանակներից: Գաղափարախոսական պարտադրանքի ընդհանուր թուլացումն առաջ բերեց նոր տրամադրություններ քաղաքի կրթված երիտասարդների շրջանում: Եթե բռնկվող փոքրամասնությունը լի էր վճռականությամբ՝ հատուցելու ստալինյան ժամանակներում հասարակությանը հասցրած վնասները, ապա ճնշող մեծամասնությունը քիչ էր հետաքրքրվում քաղաքական-գաղափարախոսական խնդիրներով: Այնուամենայնիվ, ակներև էր, որ *երիտասարդության մոտ արթնացել էր հեղինակություններին ու իշխանությանը դիմակայելու ոգին և անհատականության ձգտումը, ինչն այդքան երկար հետապնդվում էր ստալինյան հետևողական բարոյա-*



**խոսությունը:** Երիտասարդությանը ծանծրացրել էր խորհրդային ապրելակերպի միատեսակությունն ու միօրինակությունը, հնացած բարոյախոսությունը, հազնվելու հնածն ոճը, գաղափարախոսությամբ հագեցած դաստիարակության համակարգը: Ի սարսափ և ի վրդովմունք ավագ սերնդի, երիտասարդները հրապուրվում էին արևմտյան ջազային և փոփ երաժշտությամբ: Այսպես կոչված «ստիլյագները» բացահայտ մարտահրավեր էին նետում ընդհանուր զանգվածին՝ նրանցից տարբերվելով իրենց արտասովոր (խորհրդային աչքի համար) հագուկապով և «հակահասարակական» պահվածքով: Ուկրաինայում, ինչպես և ամբողջ ԽՍՀՄ-ում *ժնունդ էր առնում նոր, ավելի գործնական և եսակենտրոն սերունդ* (Արևմուտքում արդեն հայտնված), որն ապշեցուցիչ կերպով տարբերվում էր այդքան թունդ կոմունիստներ ու ազգայնականներ ծնած հին սերնդից:

## Փորձարկումներ տնտեսությունում

Ստալինի հետնորդները հսկայական ուշադրություն էին հատկացնում խորհրդային համակարգի տնտեսական արդյունավետության բարձրացմանը: Այդ բնագավառի հաջողություններից էր առաջին հերթին կախված, թե խորհրդային Միությունը կարո՞ղ է տնտեսապես առաջ անցնել Արևմուտքից, և այդպիսով համախմբել իր քաղաքացիներին և ամբողջ աշխարհին ապացուցել կոմունիստական համակարգի առավելությունը: Որքան էլ տարօրինակ է, սակայն Խրուշչևը հասկանում էր, որ կոմունիզմի առավելությունն ապացուցելու համար, կուսակցությունը պետք է դարձնել ավելի պակաս գաղափարախոսական և ավելի շատ կառավարչական:

«Կուլեկտիվ կառավարման» ժամանակներում Կրեմլում չէին դադարում տնտեսական փոփոխությունների անցկացման եղանակների, ուղիների և մեթոդների շուրջ ծավալվող սուր վիճաբանությունները: Ընդ որում, բոլորը համակարծիք էին այն հարցում, որ խորհրդային տնտեսության թույլ տեղը շարունակ մնում է գյուղատնտեսությունը: Տարրական վիճակագրությունը դրա վկայությունն էր. եթե 1949 թ.-ից մինչև 1952 թ.-ը արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալը աճել էր 230 %-ով, ապա գյուղատնտեսական արտադրանքին ընդամենը 10 %-ով: Նման ցուցանիշները ոչ միայն շփոթության մեջ էին գցում խորհրդային իշխանությանը, այլև վկայում էին այդ իշխանության տնտեսական, քաղաքական և գաղափարախոսական լուրջ թերությունների մասին: Գյուղատնտեսության ցածր արտադրողականությունն առաջին հերթին նշանակում էր սննդամթերքի պակաս, ինչն ինքնըստինքյան լուրջ կասկածներ էր հարուցում խորհրդային իշխանության առավելության նկատմամբ ինչպես արտասահմանում, այնպես էլ՝ երկրի ներսում: Հենց դրա համար էլ Խրուշչևը՝ «գյուղատնտեսության այդ գիտակը», որն իրեն այդպիսին էր համարում տևական ժամանակ Ուկրաինայում գտնվելու պատճառով, անհավատալի ջանքեր էր գործադրում, որպեսզի բարելավի տնտեսության հողագործական սեկտորի իրավիճակը: Այդ փոփոխությունները հատուկ նշանակություն ունեին Ուկրաինայի համար, որը, որպես խորհրդային Միության շտեմարան, հերթական անգամ դատապարտված էր լինելու գյուղատնտեսական փորձարկումների լաբորատորիա:

### Գյուղատնտեսական նախագծեր

Խրուշչևի սիրատուն զավակը (և նրա նախագծերից առավել հաջողը) *խոպանի հերկումն էր*, ինչի շնորհիվ ենթադրվում էր յուրացնել և մշակման համար օգտագործելի դարձնել Ղազախստանի և Սիբիրի մոտ 16 մլն հա խամ հողերը: *Նախագիծը, որն իրականացնել սկսեցին 1954 թ.-ից, պահանջում էր նյութական ու մարդկային հսկայական պաշարների ներդրում, որոնց գծալի մասը պետք է տրամադրեր Ուկրաինան:* 1956 թ.-ի չեմիք, Ուկրաինայից խոպան էին հասցվել հազարավոր միավոր գյուղատնտեսական տեխնիկա և մոտ 80 հազ. գյուղատնտեսական որակյալ աշխատող: Նրանցից շատերն ընդմիշտ մնացին ապրելու այդ շրջաններում: Բացի այդ, ամեն գարուն Ուկրաինայից արևելք սեզոնային աշխատանքի էին մեկնում հարյուր հազարավոր ուսանող-«կամավորներ»: Չնայած խամ ու խոպան հողերի յուրացման էպոպեան ինքը ոչ միանշանակ արդյունքներ տվեց, սակայն միանգամայն ակնհայտ էր, որ *Ուկրաինայից դուրս հանեց պատկառելի պաշարներ և թուլացրեց հանրապետության գյուղատնտեսությունը:*

Մյուս փորձարկումը բավականին անսպասելի էր և շատ կասկածելի. *նախատեսվում էր*

*ամբողջ ԽՍՀՄ-ով մեկ մոտ 26 մլն հա տարածության վրա ցանել եգիպտացորեն:* Հետևելով ամերիկայի օրինակին, այն ցանկանում էին օգտագործել որպես կերային բազա քայքայված անասնաբուծության համար: Մի քանի տարի հետո Կրեմլը էլի մի նորամուծություն մոզոնեց. *կոլտնտեսականներին կարգադրվեց անցնել ցանքաշրջանառության նոր համակարգի:* Ինչպես միշտ, այդ բոլոր բարը և թանկարժեք նորամուծությունների ծանրության առյուծի բաժինն իր վրա էր վերցնում Ուկրաինան:

Միակ բարեփոխումը, որ պատրաստակամությամբ ընդունվեց Ուկրաինայում, և նույնիսկ առաջ եկավ տեղի նախածեռնությամբ, վերաբերում էր մեքենա-տրակտորային կայաններին (ՄՏԿ): Քանի որ հողի ճիշտ մշակման շուրջ ՄՏԿ-ների (որոնք նաև գաղափարախոսական հսկողություն էին իրականացնում) և կոլտնտեսությունների միջև մշտապես վեճեր էին ծագում, *ուկրաինացիները կառավարությանը վերջիվերջո համոզեցին ցրել ՄՏԿ-ները, իսկ նրանց տեխնիկան վաճառել կոլտնտեսություններին:*

Հողի մշակման աճող բարդությունը պահանջում էր լավ պատրաստված և տեխնիկապես զրագետ մասնագետներ, որոնց կարիքը խիստ զգացվում էր հենց Ուկրաինայում: 1953 թ.-ին, Ուկրաինայի 15 հազ. կոլտնտեսության նախագահներից 500-ից էլ պակաս մարդ ուներ բարձրագույն կամ թերի-բարձրագույն կրթություն: Իրավիճակի բարելավման համար մասնագետներին տարբեր արտոնություններով ու շահավետությամբ հրապուրելով, քաղաքներից բերում էին կոլտնտեսություններ: Ետ մնացող կոլտնտեսությունները կցվում էին տեխնիկական օգնություն ցուցաբերող շեֆական արդյունաբերական ձեռնարկություններին: Դրա հետևանքով գյուղում առաջացավ նոր, մասնագիտորեն հմուտ «գյուղատնտեսական տեխնոկրատների» խավը: Միևնույն ժամանակ կառավարությունը բարձրացրեց կոլտնտեսականների եկամուտները և *արդյունաբերական ու գյուղատնտեսական աշխատավորների կենսամակարդակների միջև ճշացող տարբերությունը սկսեց աստիճանաբար նվազել:*

Չնայած արմատական փոփոխություններին և հսկայական փորձերին, կառավարությանը չհաջողվեց գյուղատնտեսական արտադրանքը ցանկալի ծավալների հասցնել: Կրեմլը առաջվա պես չէր ցանկանում կոլտնտեսություններում աշխատանքի արտադրողականության բարձրացման ավելի արդյունավետ խթաններ գտնել, հեռավոր Մոսկվայի բյուրոկրատները շարունակում էին կոլտնտեսություններին ցուցումներ տալ՝ թե ինչ և ինչպես ցանեն, երբ հավաքեն բերքը, իսկ գյուղացիներին դարձյալ հալածում և տուգանում էին՝ իրենց աննշան (բայց բացառիկ արդյունավետ) տնամերձ հողակտորների վրա աշխատելու համար: Գյուղատնտեսության ոչ բավարար զարգացումը քաղաքական լուրջ հետևանքներ էր հարուցում Ուկրաինացի կոմունիստների համար: Խրուշչևը մեծ հույսեր էր կապում բարեփոխումների մեջ նրանց մասնակցության նպաստավորության հետ: Սակայն *Կիևում աճում էր Ուկրաինային ներկայացվող անհամեմատ բարձր պահանջների նկատմամբ դժգոհությունը:* Ուկրաինացի կոմունիստների հետ Խրուշչևի երբեմնի ջերմ հարաբերությունները գնալով պաղում էին:

### Փոփոխություններ արդյունաբերության մեջ

1950-ականների սկզբին Ուկրաինայի, ինչպես և ողջ ԽՍՀՄ-ի արդյունաբերությունը զարգանում էր մեծ հաջողությամբ: Փաստորեն, այդ ժամանակ նա ապրում էր իր ոսկե դարը: Սակայն տասնամյակի վերջում նրա զարգացման տեմպերը դանդաղեցին: Կրեմլի ղեկավարությունը բախվեց նոր խնդրի. շարունակել ուժեղ կերպով զարգացնել ծանր արդյունաբերությունը, թե՛ կապիտալ ներդրումները կենտրոնացնել թեթև արդյունաբերության մեջ, որպեսզի վերջապես գոնե ինչ-որ կերպ բավարարի ընչազուրկ խորհրդային սպառողին: Խրուշչևը հավակն էր դեպի ծանր արդյունաբերությունը, բայց ի տարբերություն Ստալինի, չէր կարող անտեսել սպառողների շահերը, առավել ևս, որ *խոստացել էր մինչև 1980թ.-ի սկիզբը տնտեսապես հասնել ու անցնել Արևմուտքից:* Արդյունքում, 1960-ականների սկզբին երկրի խանութներում սկսեցին հայտնվել հեռուստացույցներ, փոշեկուլներ, սառնարաններ, նույնիսկ ավտոմեքենաներ: Սակայն դրանց քանակը շատ սահմանափակ էր, իսկ որակը չափազանց ցածր:

Փորձելով լուծել արդյունաբերական արտադրանքի անկման խնդիրը, 1957 թ.-ին Խրուշչևը ծավալեց ժողովրդական տնտեսության խորհուրդների (ժողովնախորհի) հակասություններով լի բարենորոգումները՝ 1920 թ.-ից ի վեր առավել արմատական կազմակերպատնտեսական բարեփոխումներից մեկը: *Բյուրոկրատական խոչընդոտները շրջանցելու նպատակով, նա փորձ արեց տնտեսական պլանավորման և կառավարման կենտրոնը մոսկովյան*



ճախարարություններից տեղափոխել տարածաշրջանային մարմիններ: Ուկրաինական ժող- տրնություններին փոխանցվեց ավելի քան 10 հազ. արդյունաբերական ձեռնարկություն, և 1957 թ.-ի վերջին նրանք վերահսկում էին հանրապետության գործարանների ու ֆաբրիկա- ների 97 %-ը (1953 թ.-ին հանրապետության ենթակայության տակ էին ձեռնարկությունների ընդամենը 34 %-ը): Ջարմանալի չէ, որ Ուկրաինայի տնտեսական պլանավորման ու կառա- վարման բաժիններն ավելի շատ ուշադրություն էին հատկացնում հանրապետության, քան թե համամիութենական շահերին ու կարիքներին: 1960-ականների սկզբին, երբ Ուկրաինայի և մյուս հանրապետությունների տնտեսական ինքնուրույնությունը դարձավ խիստ արտա- հայտիչ, Մոսկվան տազնապ ազդարարեց: «Պաշտոնակալության» մեղադրանքներ տեղա- ցին: Ակնհայտ դարձավ, որ այս բնագավառում էլ խրուշչևյան բարեփոխումներն անսպա- սելի բարդություններ են առաջացրել: Ինչպես և հարկ էր սպասել, պարզվեց, որ Ուկրաինայի տնտեսական ինքնահաստատման փորձը վաղանցիկ էր:

Չնայած խրուշչևյան բարեփոխումները սպասելիք արդյունքները չտվեցին, սակայն հա- սարակության կյանքում առաջ բերեցին զգալի փոփոխություններ: Ի տարբերություն ստա- լինյան ժամանակների, ազգային համախառն արտադրանքի տպավորիչ աճը, որ մինչև 1970 թ.-ը գերազանցում էր ԱՄՆ-ի համապատասխան ցուցանիշները, նպաստեց խորհրդա- յին ժողովրդի կենսամակարդակի բարձրացմանը: Ուկրաինայում, օրինակ՝ աշխատավոր- ների միջին եկամուտները՝ 1951 թ.-ից մինչև 1958 թ.-ը ներառյալ, աճել էին 230 %-ով: Եկա- մուտների ավելի զգալի աճ նկատվում էր երկար ժամանակ թշվառության մեջ ապրող կոլ- տրնտեսականների մոտ: Այլ կերպ ասած, Ստալինի ժամանակ անձնական սպառման մա- կարդակը տարեկան աճում էր 1 %-ով, իսկ խրուշչևի ժամանակ՝ 4 %-ով:

Շնորհիվ միլիոնավոր հեկտար նոր հողերի մշակման, մեծացավ սննդամթերքի որակն ու տեսականին: Վերջապես, խորհրդային միջին ընտանիքի օրաբաժինը, որ սովորաբար կազ- մըված էր լինում հացից ու կարտոֆիլից, համալրվեց մսեղենի ու բանջարեղենի ավելի կա- նոնավոր օգտագործումով: Խանութներում հայտնվեցին նույնիսկ այնպիսի տարաշխարհիկ մրգեր, ինչպիսիք նարինջն ու կիտրոնն են: Հեռավոր գյուղերում ճանապարհներ զգվեցին և էլեկտրականություն ու ջրմուղ անցկացրին: Համեմատաբար ժամանակակից կենցաղային տեխնիկայի ի հայտ գալը որոշ չափով թեթևացրեց խորհրդային կնոջ ապրելակերպը, որոնց մեծ մասը լրիվ աշխատանքային օր աշխատելուց հետո էլ տնային ծանր գործերով էին զբաղվում: Կահավորանքի սովորական առարկա դարձավ հեռուստացույցը՝ քարոզչության ու զվարճությունների այդ հիանալի միջոցը: Քաղաքներում հիմնական խնդիրը մնաց բնա- կարանների պակասը, քանի որ ամեն տարի քաղաքային բնակչությունը համալրվում էր մոտ 2,5 մլն խորհրդային քաղաքացիներով: Չնայած խորհրդային մարդկանց կենսամակարդակը դեռևս շատ էր ետ մնում արևմտյանից, սակայն նրանց համար, որոնք այնքան էլ պահանջ- կոտ չէին և չէին մոռացել ոչ վաղուցվա մղձավանջային անցյալը, փոփոխությունները հսկա- յական քայլ էին դեպի առաջ: Խրուշչևի օրոք խորհրդային ժողովուրդն ավելի քիչ հիմնա- պատճառներ ուներ բողոքելու խորհրդային համակարգից, քան Ստալինի օրոք էր:

## Մտավորականության ակտիվացումը

1961 թ.-ին խրուշչևը սկսեց ստալինյանից ձերբազատվելու նոր փուլ, որի գագաթնակետը դարձավ դամբարանից միապետի մունիան հանելը: Ստալինի դեմ ուղղված ցանկացած գոր- ծողություն ուկրաինացիների համար միշտ լավ իրադարձություն էր: Իրենց նկատմամբ վստահությունը ամրապնդվում էր նաև այլ իրադարձություններով: Այդ տարի հանրապետու- թյունում հավաքված բերքը բացառիկ առատ էր, ինչը Ուկրաինայի կուսակցական ղեկա- վարությանը Կրեմլից նոր զիջումներ պահանջելու առիթ տվեց: Չգտելով ինչ-որ կերպ թու- լացնել գյուղատնտեսական խնդիրների պատճառով ուկրաինացիների և իրենց միջև առա- ջացած լարվածությունը, 1961 թ.-ին խրուշչևը լայնորեն զովագրվող ու լուսաբանվող ուղևո- թություն ձեռնարկեց Ուկրաինա՝ այցելելու նրա մեծ բանաստեղծ Տարաս Շևչենկոյի գերեզ- մանին: Այդ ժամանակ մշակութային «հալիլոցը» հասել էր բարձրակետին, և ռուս գրողները համարձակվում էին այնպիսի քայլերի, ինչպիսիք էին արտասահմանում Բ. Պաստեռնակի «Ղոկտոր ժիվագոյի» հրատարակումը, որը ոչ թե խորհրդային, այլ համամարդկային ար- ժեքներն էր հաստատում, կամ ԽՄԽՄ-ում Ա. Սոլժենիցինի «Իվան Դենիսովիչի մեկ օրը» գրքի հրատարակումը, որտեղ մանրամասն նկարագրվում էր ստալինյան ճամբարների սարսափ-

ները: Այս փաստերը տպավորություն էին ստեղծում, թե, չնայած Կրեմլից հնչող կոպիտ բղա- վոցներին, գրականության ու մշակույթի հետագա ազատականացումը հնարավոր է:

Ուկրաինայի մշակութային ընտրախափի ներկայացուցիչները, հատկապես գրականագետ- ները, վերսկսեցին ապաստալինականացումը ստեղծագործական ինքնադրսևորման հնա- րավորություններ ընդլայնելու համար օգտագործելու փորձերը: Նրանք կրկին սկսեցին հանրագունարի բերել այն կորուստները, որ Ստալինը հասցրեց ուկրաինական մշակույթին: Ավագ սերնդի գրողներն առաջվա պես համառորեն պահանջում էին վերականգնել բռնութ- յունների ենթարկված իրենց գործընկերների բարի անունը: Այսպես օրինակ, Կորնիլչուկը առաջարկեց հիմնել «20-ականների մեծերի գրադարանը», որպեսզի հրատարակվեն Բլա- կիտնիյի, Կուլիչի, Կուլբասի և զոտումների մյուս զոհերի ստեղծագործությունները: Մյուս- ները պահանջում էին վերականգնել 1940-ականների վերջի զոհերի պատիվը: Եվ բոլորը միասին հանդես էին գալիս ռուսացման շարունակվող գործընթացի դեմ:

Սակայն ամենաուշագրավ երևույթը գրողների նոր սերնդի ծնունդն էր, այնպիսիների, ինչպես Վասիլ Սիմոնենկոն, Լիմա Կոստենկոն, Եվհեն Սվերստյուկը, Իվան Չյուբան, Իվան Դրաչը, Միկոլա Վինիբանովսկին և Դմիտրո Պավլիչկոն, որոնք պահանջում էին ուղղել ստա- լինյան անցյալի «սխալները» և երաշխիքներ տալ, որ ուկրաինական մշակույթի զարգա- ցումն ապագայում չի ճնշվի: Նրանց կարծիքով, այդ նպատակին հասնելու լավագույն եղա- նակը «ճշմարտին վերադառնալը» կլիներ: Ստալինյանից ձերբազատման ոչ հետևողական գործընթացի անվորդով ականատեսը լինել չկարողանալով, այդ երիտասարդներն անձամբ ներգրավվեցին դրանում՝ պահանջելով դադարեցնել կուսակցության միջամտությունը գրա- կանության ու արվեստի գործերում, ձգտելով ձեռք բերել ստեղծագործական որոնումների իրավունք և պաշտպանելով ուկրաիններեն լեզվի գերակշռող դերը հանրապետության մշա- կութային կյանքում ու կրթական համակարգում: 1960-ականների սկզբին գրական նոր սերնդի ներկայացուցիչները, որոնք ստացան «վաթսուականներ» անվանումը, ոչ միայն մերժում էին իրենց ստեղծագործությունների մեջ կուսակցական բյուրոկրատների միջա- մտությունը, այլև դատապարտում էին իրենց ավագ գործընկերների երեսպաշտությունը, հարմարվողականությունը և չափազանց զգուշավորությունը: Այդ տաղանդավոր երիտա- սարդների անհնազանդությունն ակնհայտորեն դուրս էր խրուշչևյան ազատականացումով նախատեսված շրջանակներից: Բացի այդ, գրական նոր կոհորտան (սերտորեն համա- խմբված մարդիկ) գնալով լայն աջակցություն էր ստանում երիտասարդ մտավորականների կողմից:

## Հետադիմություն

Խորհրդային հասարակության մեջ ծավալվող տազնապալի անհանգստությունը հասավ մինչև խրուշչևին ու Կրեմլի նրա կողմնակիցներին: 1962թ.-ի դեկտեմբերին նա ժողովեց գրա- կան շրջանակների առաջատար ներկայացուցիչներին և զգուշացրեց նրանց՝ չափից դուրս չտարվել ընձեռնված ազատությունից: Մի քանի ամիս անց գրականության և արվեստի մի շարք գործիչներ, այդ թվում Բ. Պաստեռնակը, մամուլում ենթարկվեցին թունոտ հարձակում- ների: Ակնհայտ դարձավ, որ ռեժիմը ազատական մտավորականության նոր ջարդ է պատ- րաստում: Մոսկվայի գործողություններում տեսնելով հարձակման ազդանշանը, Կիևի կու- սակցական պաշտոնյաները նախապատրաստվեցին սանձահարելու ուկրաինական գրա- կան աշխարհի «տհաս տարրերին»:

1963 թ.-ի գարնանը ՌԻԿԿ ԿԿ-ի քարտուղար, գաղափարախոսության գծով պատասխանա- տու Անդրիյ Սկաբան խիստ մեղադրանքներով հարձակվեց զրաքննադատներ Սվերստյուկի, Սվիտլիչնու և Չյուբայի աշխատությունների վրա, այդպիսով սկսելով նոր «կամպանիա»: Նրան արծագանքում էր Արևմտյան Ուկրաինայի գաղափարախոսական վերահսկիչ Վալեն- տին Մալանչուկը, նշելով, թե որոշ երիտասարդ գրականագետներ իրենց վրա են վերցնում «անհատի պաշտամունքի դեմ պայքարի մարտիկների դերը, չափից դուրս շատ ուշա- դրություն են հատկացնում այն ժամանակների բացասական երևույթների վրա և, բացի այդ, զովերզում են արևմտյան գրողների ստեղծագործությունները»: «Ուկրաինական բուրժուա- կան ազգայնագիտության» բոլոր դրսևորումների դեմ պայքարի պարտադիր կոչի հետ միա- սին, նա հպարտորեն հայտարարում էր՝ կրոնի դեմ պայքարում իր ունեցած հաջողություն- ների մասին (նրա տարածաշրջանում պսակադրությունների թիվը նվազել էր), և խոստանում



եր եկեղեցական տոները փոխարինել խորհրդային այնպիսի տոներով, ինչպիսիք էին օրինակ՝ «Մուրճ ու մանգաղի Օրը» կամ «Աշխատանքային փառքի երեկոները»:

Ստալինիզմի տեսակետներին հարություն տալու էլի մեկ վկայություն էր հակահրեական թեմաներով կիսապաշտոնական հրապարակումների ի հայտ գալը: Դրանցից ամենաբնորոշը կարելի է համարել 1964 թ.-ին Ուկրաինայի գիտությունների Ակադեմիայի հովանու տակ և ավելի շուտ Մոսկվայի ցուցումներով հրատարակված Տ. Կիշկոյի «Չուդայականությունն առանց գունագարդումների» երկասիրությունը: Ինչպես և Ստալինի տիրապետության վերջին շրջանում, քարոզչական մարմինը «վեր հանեց» մի նյութ, որը նպատակ ուներ ապացուցելու ուկրաինացի ազգայնականների ու սիոնիստների միջև մոտիկ հարաբերությունների և սերտ համագործակցության գոյության մասին: Այդ գիրքը սուր քննադատության ենթարկվեց ազատական մտավորականների կողմից: Սակայն նրանց զայրույթն իր գագաթնակետին հասավ, երբ հայտնի դարձավ, որ 1964 թ.-ի մայիսին իսպառ այրվել է Ուկրաինայի պատմությանն ու մշակույթին վերաբերող հարյուր հազարավոր բարձրարժեք փաստաթղթեր ու հրատարակություններ պարունակող Ուեսթ-ի գիտությունների Ակադեմիայի գրադարանային ֆոնդերից մեկը: Այդ հերոստրատային գործողության մեղքն իր վրա վերցրեց ոմն Պոգրուժալսկի՝ հոգեկան շեղումներ ունեցող մի ռուսասեր: Մտավորականության մեջ շատ լուրջ կասկածներ կային, որ նա կապ ուներ ՊԱԿ-ի մարմինների հետ:

Այս բոլոր իրադարձություններն ասում էին այն մասին, որ Խրուշչևը լի էր մտավորականության շրջանում կարգապահություն վերահաստատելու վճռականությամբ: Սակայն «ամուր ձեռքի» քաղաքականությանը վերադառնալը փոքր ինչ ուշացել էր: Խորհրդային առաջնորդի դիրքերն արդեն անհուսորեն խարխլվել էին մի ամբողջ շարք ներքին և միջազգային անհաջողություններից՝ Կուբայում միջուկային զենք տեղակայելու ապարդյուն փորձերի հետ կապված «կարիքյան ճգնաժամի», Չինաստանի հետ հարաբերությունների խզման, բարենորոգումների հետևանքով առաջացած կազմալուծման և, վերջապես, 1963 թ.-ի աղետալի անբերրիության պատճառով: 1964 թ.-ի հոկտեմբերին Խրուշչևի գործընկերների համբերությունն սպառվեց և նրան ստիպեցին հրաժարական տալ: Բարեփոխումների, փորձարկումների և ազատականացման շրջանը մոտեցել էր ավարտին:

\* \* \*

Խրուշչևյան ժամանակաշրջանն ամենայն ակներևությամբ խորհրդային պատմության անցողիկ շրջան էր: Չնայած բարեփոխումների և փորձարկումների բերած բազմաթիվ ծախողումներին, հիասթափություններին, անսպասելի արդյունքներին ու չիրականացված երազանքներին, նա խորհրդային հասարակությունը՝ Ստալինի ժամանակների հրեշավոր կարգերի ու ահաբեկչության թագավորությունից, վերածեց զարգացած արդյունաբերական հասարակությանը մոտիկ, ավելի արդյունավետ մեթոդներով կառավարվող համակարգի: Այդ շրջանը հատկապես խորությամբ էր զգացվում Ուկրաինայում, որտեղ ստալինիզմը հասել էր իր ծայրահեղ դրսևորումներին:

Ի՞նչը փոխվեց (և որ քիչ կարևոր չէ՝ ի՞նչը չփոխվեց) խրուշչևյան բարեփոխումների արդյունքում: Առավել ակնհայտն այն էր, որ դադարեցին զանգվածային ձերբակալությունները, զտումներն ու ահաբեկչությունը: Բռնություններ գործադրող մարմինները, որոնց արտոնությունները զգալիորեն նվազել էին, այժմ «վտանգավոր տարրերին» հրավիրում էին «սրտաբաց» գրույցների և նրանց վրա ճնշում գործադրում՝ աշխատանքից ազատելու կամ նրանց երեխաներին բարձրագույն կրթություն ստանալու հնարավորություններից զրկելու սպառնալիքներով: Միայն այն դեպքում, երբ նման «կանխարգելումը» ցանկալի արդյունքներ չէր տալիս, հետևում էր ձերբակալությունը (սակայն արդեն չէին զնդակահարում): Աշխատանքային կարգապահության խստությունը թուլացավ: Որոշ ժամանակով ընդլայնվեց գրողների, պոետների, մշակույթի մյուս գործիչների ինքնադրսևորման ազատությունը: Ուկրաինայում, արդեն նշված փոփոխություններին, ավելացավ ուկրաինական կոմունիստական դեկավարության դերի ու կարևորության մեծացումը՝ ԽՍՀՄ-ում հանրապետության տնտեսական նշանակությամբ պայմանավորված: Այնուամենայնիվ, առավել անսպասելին, եթե ուշադրության առնենք 1930-ական թվերի ուկրաինացի մտավորականների կրած մեծ կորուստները, մշակութային գործիչների նոր, բազմախոստում սերնդի առաջացումն էր:

Սակայն խորհրդային ապրելակերպի բնորոշ հիմնական գծերից շատերը մնացել էին անփոփոխ: Պահպանվել էր գրաքննության դաժան հարկադրանքը, թե՛ ի՞նչ գրել, կարդալ կամ

լսել: Քաղաքական իշխանության բացարձակ մենաշնորհը կոմունիստական կուսակցությանն էր: Տնտեսությունն, առաջվա պես, դեկավարում էր բյուրոկրատիան, իսկ բոլոր քաղաքացիներն աշխատում էին միայն պետական հիմնարկություններում ու հաստատություններում և ապրանքներ էին գնում միայն պետական խանութներից: Չնայած ԽՍՀՄ-ում Ուկրաինայի դերի հարաբերական ուժեղացմանը և առանձին ուկրաինացիների քաղաքական հաջողություններին, հանրապետության շահերը, ինչպես և առաջ, ենթակա էին ամբողջ խորհրդային կայսրության շահերին:





# ԼՃԱՅՈՒՄ ԵՎ ԲԱՐԵՓՈՒՒՄՆԵՐԻ ՓՈՐՉԵՐ

Իր գոյության առաջին տասնամյակներում խորհրդային ռեժիմն ամենաարմատականն ու նորարարականն էր աշխարհում: Սակայն 1960-ականներին նրա ներքին քաղաքականության բնորոշ գծերը դարձան ծայրահեղ պահպանողական: Վախենալով, որ փոփոխությունները կհանգեցնեն անկանխատեսելի և անցանկալի հետևանքների, ԽՍՀՄ-ի ծերացող բյուրոկրատական ընտրախավը նախընտրեց պահպանել Ստալինի ստեղծած համակարգը, որոշ չափով մեղմացնելով այն: Ուկրաինայի համար դա առաջին հերթին նշանակում էր, որ իրեն վերաբերող հիմնական որոշումներն առաջվա նման ընդունելու է Մոսկվան և ոչ թե Կիևը: Ընդ որում, ԽՍՀՄ-ի մեծաթիվ ժողովուրդների «համախմբման» մեջ ռուսականացման դերը ոչ միայն մնաց հինը, այլ ավելի էր ուժեղանում:

Սակայն նույնիսկ խորհրդային ամենագոր և ամենահաս բյուրոկրատական կառույցն արդեն չկարողացավ հասարակության նկատմամբ լիարժեք վերահսկողություն իրականացնել: Ստավրականության մեջ տարածում գտավ այլախոհությունը, ինչն անհնար էր Ստալինի օրոք: Էլ ավելի անապասելի էր Կրեմլի բռնած կուրսի հետ ուկրաինական կուսակցական ղեկավարության հայացքների և դիրքորոշման տարակարծությունը (թեկուզև կարճ ժամանակով): Չնայած խորհրդային համակարգն ամբողջությամբ վերցրած մնում էր անհողողող, բնակչության մեջ աճում էր նրա գործունակության և հատկապես կենսամակարդակի բարձրացման հնարավորության նկատմամբ կասկածամտությունը: 1980-ականների կեսերին փոփոխությունների անհրաժեշտությունը դարձավ անառարկելի: Այդ պատճառով էլ խորհրդային օլիգարխիան իր միջավայրում գտավ մեկին, ով ընդունակ էր զգուշորեն բարեփոխումներ իրականացնել: Սակայն Ուկրաինայում այդ բարեփոխումներն ընթանում էին շատ դանդաղ և սահմանափակ շրջանակներում: Այնուամենայնիվ, բավական էր և այն, որ ռեժիմը չլուծված էր համարել քաղաքական, մշակութային և տնտեսական շատ խնդիրներ, որոնք նախկինում համարում էին գոյություն չունեցող:

## «Վերևների» մարդիկ

**Լեոնիդ Բրեժնևը**, ինչպես և նրա նախորդ Խրուշչևը, ծագումով ռուս էր և իշխանության եկավ մեծ մասամբ Ուկրաինայի հետ սերտ կապերի շնորհիվ: *Ի տարբերություն բռնկվող և անհետևողական Խրուշչևի, Բրեժնևն ավելի շրջահայաց էր, մշտապես հենվում էր խորհրդային օլիգարխիայի կողմից իր քաղաքականությանը խրախուսելու վրա, փոխարենը երաշխավորելով նրա դիրքի կայունությունը:* Այդ պատճառով էլ նրա 18-ամյա կառավարումն աչքի է ընկել պահպանողական միտումների աճով, չնայած արդեն ոչ թե համապարփակ (տոտալիտար), այլ ավելի շատ հեղինակային (ավտորիտար) հավակնտությամբ (հայտնի խորհրդայնագետ Մերլ Ֆեյնստոլդ ստալինիզմից խորհրդային ռեժիմի դանդաղ նահանջի գործընթացին տվել է «դիկտատորների պակասելու օրենք» սրամիտ անվանումը): Այնուամենայնիվ, եթե իշխանության գործունեությունն արդեն անսահման չէր, ինչպես Ստալինի ժամանակ, այն համենայն դեպս, անկասկած, մնում էր կուսակցության ձեռքում և կիրառվում էր խորհրդային ազդեցությունն արտերկրում ընդլայնելու և երկրի ներսում լիարժեք վերահսկողությունը պահպանելու համար:

## Շելեստը և Շչերբիցկին

Բրեժնևյան շրջանում Ուկրաինան ունեցել է կուսակցական երկու առաջնորդ՝ սկզբում Պետրո Շելեստը, որին հետո փոխարինեց Վոլոդիմիր Շչերբիցկին: Նրանց փաստացի գործունեությունը, չնայած դիրքորոշումների լուրջ տարբերություններին, բավականին ակնբևրաբեր են պահպանում է այն խնդիրները, որոնց ստիպված են եղել բախվել ուկրաինական քաղաքական ղեկավարները և այն համատեքստը, որում մինչև վերջերս հանրապետական մակարդակով քաղաքականություն է իրականացվել ԽՍՀՄ-ում:

*Շելեստը ՌԻԿԿ ԿԿ-ի առաջին քարտուղարի պաշտոնն է զբաղեցրել 1963 թ.-ից մինչև 1972 թ.-ը ներառյալ և այդ շրջանը հատկանշական է ուկրաինացիների ազգային ինքնագիտակցության աճով:* Արևմտյան հետազոտողների ունեցած սուղ տվյալները հիմք են տալիս ենթադրելու, որ այդ գործընթացը ԽՍՀՄ-ում Ուկրաինայի շահերը պաշտպանելու Շելեստի փորձերի արդյունքն է: Իհարկե, Շելեստը թաքուն ազգայնական չէր: Շատ առումներով նա ավելի շատ էր «աներեր» կոմունիստ, քան Մոսկվայի նրա տեղերը: Շատ բան է խոսում նրա հակաարևմտյան հաստատուն դիրքորոշումների մասին. Նա պաշտպանում էր 1968 թ.-ին Չեխոսլովակիա ներխուժումը (հավանորեն վախենալով, որ բարեփոխումնային «վարակը» այդտեղից կթափանցի Ուկրաինա), քամախանքով էր վերաբերվում Արևմտյան Ուկրաինայի շահերին, հանդես էր գալիս բանվորներին զիջողություններ անելուն դեմ և, իհարկե, առավելությունը տալիս էր ծանր արդյունաբերության զարգացմանը և ոչ թե սպառման առարկաների արտադրությանը: Ըստ երևույթին, որոշ հարցերում նրա հաստատականությունը ծանծրացրել է նույնիսկ Բրեժնևին:

Սակայն *Կրեմլի մտահոգությունն էին հարուցում Շելեստի գործելակերպի բուրրովին այլ կողմերը:* Այնպես էր թվում, թե Ուկրաինայի ղեկավարը միանգամայն լուրջ է վերաբերվում Սահմանադրությամբ ամրագրված հանրապետության անկախության գաղափարին և ԽՍՀՄ-ի ժողովուրդների իրավահավասարության սկզբունքին: Դրանից ելնելով, *նա չէր պատրաստվում հաշտվել խորհրդային Միությունում ռուսներին վերապահված «ավագ եղբոր» դերակատարության հետ:* Բացառված չէ, որ նա Ուկրաինայի համար ուզում էր այնպիսի կարգավիճակ, ինչպիսին ունեին Լեհաստանը, Չեխոսլովակիան կամ Դոնեցարիան, որոնց տնտեսական և մշակութային առանձնահատուկ պահանջները Մոսկվան հաշվի էր առնում:

*Շելեստի գլխավոր հոգսը Ուկրաինայի տնտեսական շահերն էին: Նա պահանջում էր համաձայնեցնական ծրագրեր կազմելիս ավելի շատ մասնակից դարձնել հանրապետությանը և առանձնակի խանդավառություն չէր ցուցաբերում Միբիրի տնտեսական զարգացման գործին, որը բերում էր ուկրաինական տնտեսության մեջ կապիտալ ներդրումների կրճատմանը: Երբ ուկրաինական տնտեսագետների մի խումբ կոնկրետ թվերով ապացուցեց նրան, որ Ուկրաինան տնտեսական առումով ավելի շատ է տալիս խորհրդային Միությանը, քան ստանում է, Շելեստը դարձավ հավասարության (պարիտետի) սկզբունքների կողմնակից, ըստ որի, Ուկրաինան հիմնապաշարները, ապրանքները և ծառայությունները ԽՍՀՄ-ից պետք է ստանար համամիութենական զանձատուփում իր ներդրումներին լիովին համապատասխան:*

*Շելեստն էլ ավելի եռանդով էր պաշտպանում ուկրաինացիների իրավունքները լեզվի և մշակութային բնագավառներում:* Իր ճառերում կոչ էր անում ուկրաինացիներին պահպանելու իրենց գլխավոր գանձը՝ գեղեցիկ ուկրաիներեն լեզուն: 1965 թ.-ին Ուկրաինայի լուսավորության նախարար և Շելեստի մտերիմ զինակից Յուրի Դադենկովը հանդես եկավ համալսարաններում և ինստիտուտներում ուկրաիներեն լեզվի գործածման ոլորտի ընդլայնման օգտին: Իսկ 1970 թ.-ին «Մեր խորհրդային Ուկրաինան» գրքում Շելեստն ուղղակի կամ անուղղակի ձևով ընդգծում էր Ուկրաինայի պատմական անկախության մասին միտքը, կրակության առաջատար դերի մասին, Մոսկվայի համար անցանկալի տոնով գրում էր *ցարիզմի կողմից Ուկրաինայի շահագործման մասին, ինչպես նաև՝ խորհրդային Ուկրաինայի ստավոլորիչ ձեռքբերումների մասին:* Ակնհայտ էր, որ Շելեստի հպարտությունն իր հանրապետության նկատմամբ, որն այդպես սրընթաց կերպով հողագործական հետամնաց երկրամասից վերածվեց ժամանակակից, տեխնոլոգիապես զարգացած հասարակության, անսահման մեծ էր կուսակցական բարձրագույն հիերարխիայի ներկայացուցչի համար:

Ինչպե՞ս կարելի է բացատրել խորհրդային Միության իշխանության բարձրագույն մարմնի՝ Քաղբյուրոյի անդամի, կարգապահ, փորձառու և նվիրյալ կոմունիստի այդպիսի «ստեղանությունը»: Ամենից հավանականն այն է, որ Շելեստը և Ուկրաինայի նրա բազում կողմնակիցները խորհուրդների կողմից ազգերի իրավահավասարության մասին հայտարարությունը հալած յուրի տեղ էին ընդունել, իսկ համամիութենական նպատակներին հասնելու,



Ուկրաինայի արդիականացման և ուկրաինական մշակույթի պահպանման մեջ իրար բացառող ոչինչ չէին տեսնում: Ինչպես Սկրիպնիկը 20-ական թվականներին, այնպես էլ Շելեստն այժմ, հավանաբար համարում էր, որ այստեղ խորհրդային իշխանության ամրապնդման լավագույն եղանակը ոչ թե Ուկրաինային ճնշելն է, այլ նրա տնտեսական ու մշակութային պահանջների առավելագույն բավարարումը: Բացի այդ, նա վճռեց, որ հանրապետության ղեկավարման գործում իր հաջողությունները շատ բաներում կախված կլինեն ուկրաինական մշակութային, գիտական ու քաղաքական ընտրախափի հետ համագործակցությունից, իսկ դա պահանջում էր չափազանց մեծ ուշադրություն նրա առանձնահատուկ խնդիրների նկատմամբ:

1972 թ.-ի մայիսին Շելեստին ազատեցին զբաղեցրած պաշտոնից, նրան մեղադրելով ուկրաինական ազգայնականության նկատմամբ «մեղմ» վերաբերմունքի և տնտեսական «տեղայնության» թողությունների մեջ: Նրա տեղն զբաղեցրեց ծագումով ուկրաինացի, բրեժնևյան «ղնեպրոպետրովսկյան» կլանի վարուցվա անդամ, Շելեստի մոլի հակառակորդ **Շչերբիցկին**: Դեթմանական մակայնի համար XVII-XVIII դարերի եղբայրասուպան պայքարի ոգով Շչերբիցկին ձգտելով «տապալել» Շելեստին, մշտապես Մոսկվային հեղեղում էր վերջինի «ուկրաինասիրության» մասին զրպարտագրերով: Որպես ՌԿԿ-ի առաջնորդ Շչերբիցկու պաշտոնավարումը երկարատևության յուրօրինակ ռեկորդ դարձավ: Ինչն էր այդպիսի «փայլուն» հաջողության պատճառը: Ըստ երևույթին, հիմնականում՝ լիակատար, անվերապահ ու ստրկական հնազանդությունն էր Մոսկվային: Շչերբիցկին կենտրոնի հրահանգների այնքան հյու-հնազանդ կատարող էր, այնպիսի պատրաստակամությամբ էր զոհաբերում Ուկրաինայի տնտեսական շահերը, այնպես էր նպաստում հանրապետության ռուսականացմանը, որ կարող էր պատմություն մեջ մտնել որպես «մալոռուսի» օրինակելի նմուշ:

1973 թ.-ին, հենվելով իր գաղափարախոսական վերահսկիչ Վալենտին Մալանչուկի և ուկրաինական ՊԿԿ-ի ղեկավար Վ. Վ. Ֆեդորչուկի վրա, Շչերբիցկին համեմատաբար չափավոր զտում իրականացրեց կուսակցությունում, ինչի հետևանքով կուսակցության շարքերից վտարվեցին 37 հազ. մարդ՝ ենթադրաբար Շելեստի կողմնակիցներ: Ի հակադրություն իր նախորդի, Շչերբիցկին պաշտոնական գործունեության մեջ ցուցադրաբար գործածում էր ռուսերեն լեզուն, աջակցում էր ուկրաինական տնտեսության նկատմամբ կենտրոնի հարկադրանքի վերականգնմանը և հսկայական կապիտալ ներդրումներին Սիբիրում: Բացի այդ, նա այլախոհներին դաժանորեն և անվերապահորեն ճնշելու կողմնակից էր:

Այնուամենայնիվ, այս «հավատարիմ ծառայությունը» նրան չբերեց այն գլխավորը, ինչին նա, ճիշտն ասած, ամենից շատ էր ձգտում. Մոսկվայում բարձր պաշտոնների հասնելը և, հնարավոր է, նույնիսկ Բրեժնևի հետնորդ լինելը: Այդ պատճառով 1980-ականների սկզբում Շչերբիցկին ավելի շատ ուշադրություն սկսեց դարձնել Ուկրաինայում իր դիրքերն ամրապնդելու վրա՝ բարելավելով մշակութային ընտրախափի հետ հարաբերությունները և արդեն զգուշավորությամբ իրականացնելով Մոսկվայի ձուլման քաղաքականությունը: 1985 թ.-ին բարեփոխումների տրամադրված Սիխայիլ Գորբաչովի իշխանության գալուց հետո խոսակցություններ էին պատվում, որ ուկրաինական կոմունիստների ղեկավարի պաշտոնում Շչերբիցկու օրերը հաշված են: Սակայն, ի գարմանս շատերի, նա դեռ երկար մնաց իր պաշտոնում, հնարավոր է՝ բարեփոխումներին ընդդիմացող Կրեմլի ուժերի աջակցության շնորհիվ:

Եթե գնահատենք 1960-80-ական թվականների Ուկրաինայի երկու գլխավոր քաղաքական առաջնորդների քաղաքականությունը, ապա ինչպիսի՞ հետևությունների կարելի է հանգել Ուկրաինայի նկատմամբ նրանց հայացքների և խորհրդային Սիությունում նրա դերի վերաբերյալ: Կասկած չի հարուցում, որ և՛ Շելեստը, և՛ Շչերբիցկին Ուկրաինայի ապագան տեսնում էին միայն խորհրդային համակարգի շրջանակներում՝ կոմունիստական գաղափարախոսության լույսի տակ: Նրանցից և ոչ մեկը Ուկրաինայի անկախության մասին նույնիսկ մտքով անգամ չէր կարող անցկացնել: Եվ յուրաքանչյուրն իր ձևով ուկրաինական կուսակցության ղեկավարության նկատմամբ Մոսկվայի կողմից իրականացվող խիստ վերահսկողության փայլուն օրինակ էր:

Սակայն, այս երկու մարդկանց ճակատագրերը պարզորոշ ցույց էին տալիս և այն, որ նույնիսկ խորհրդային քաղաքական համակարգի պայմաններում կարող էին առաջանալ Ուկրաինայի նկատմամբ քաղաքականության անսպասելիորեն հակասական մոտեցումներ: Որպես ԽՍՀՄ-ում ազգերի իրավահավասարության և նրանց տնտեսական հաշվեկշռված զարգացման կողմնակից, Շելեստը ցանկանում էր, որ Ուկրաինային վերաբերվեին որպես ինքնավար պետության՝ իսկական, այլ ոչ թե շինծու ֆեդերացիայի կազմում: Մի կողմից՝ այն զգալի

աջակցությունը, որ ցուցաբերվում էր Շելեստին ոչ միայն ուկրաինական մտավորականության, այլև հանրապետության կուսակցական մարմինների մի մասի կողմից, ցույց էր տալիս, որ ազգային կոմունիզմը, կամ, ծայրահեղ դեպքում՝ տարածաշրջանային կամ հանրապետական հայրենասիրությունը, խոր արմատներ են ձգել Ուկրաինայում: Մյուս կողմից՝ Շելեստի պաշտոնակալությունն իր ողջ ակներևությամբ հիշեցնում էր, որ նման հայացքները, առաջվա պես, Մոսկվայի համար անընդունելի են:

Շչերբիցկու գործելակերպն ու քաղաքականությունը կարելի է որոշ չափով համեմատել արևմտյան կառավարչի, ձեռնարկատիրոջ գործողությունների հետ: Այդպիսի մարդու համար ԽՍՀՄ-ն թվում է մի ինչ-որ հսկայական միավորում՝ կորպորացիա, որի կենտրոնը Մոսկվայում է: Այդ մոտեցմամբ, Ուկրաինան ոչ այլ ինչ էր, քան կարևոր ճյուղային ձեռնարկություններով հարուստ մի շրջան, որը, ըստ Կրեմլի տերերի ցանկության ղեկավարելու դեպքում, կարող էր դառնալ այդ կորպորացիայի ներսում իշխանության աստիճաններով վեր բարձրանալու կարևոր միջոց: Այստեղից էլ՝ եթե «ընդհանուր գործի» շահերը պահանջում էին առանձնահատկությունների վերացում, միօրինականացում (ռուսականացում)՝ Ուկրաինայում, ապա Շչերբիցկին պատրաստ էր իրականացնելու դա առանց երկար մտածելու և նույնիսկ ապացուցելով, որ «տեղական առանձնահատկություններին» հակավածությունը նվազեցնում է արդյունավետությունը և խոչընդոտում առաջընթացին: Երբ Ուկրաինայից պահանջվում էր սեփական պաշարները սպառելով օգնել «կորպորացիայի» մի այլ մասի զարգացմանը, Շչերբիցկին թույլ չէր տալիս իրեն խնդրելու, ցուցադրելով իր «լայն մտահորիզոնը»: Սակայն հին «մալոռուսականի» նոր դրսևորում ստացած այդպիսի «ճյուղային» մտածողության հիմնական խնդիրը կայանում է նրանում, որ այդ գաղափարակիրները հաշվի չեն առնում մի առանձնահատկություն, այն, որ նրանք ստիպված են գործ ունենալ ոչ միայն վարչական կամ սոցիալ-տնտեսական միավորների, այլ ամբողջ ժողովուրդների հետ:

### Ուկրաինայի կոմունիստական կուսակցությունը

Շելեստի և Շչերբիցկու դերն ու ազդեցությունը ԽՍՀՄ-ի սահմաններից շատ հեռու էին գնում: Նրանք երկուսն էլ, յուրաքանչյուրն իր ժամանակին, խորհրդային մակարդակով խոշոր քաղաքական գործիչներ էին, ամենից առաջ՝ երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, հատկապես՝ Ստալինի մահից հետո, ՌԿԿ-ի արագ աճի շնորհիվ: Խրուշչևի իշխանության գալով, հանրապետական կուսակցական կազմակերպության անդամների թիվն արագորեն աճեց: Այդ աճը, որն ավելի զգալի էր Ուկրաինայում, քան մյուս հանրապետություններում, շարունակվեց 1960-ական թվականներին և 1970 թ.-ի սկզբին: Եթե 1958 թ.-ին Ուկրաինայում հաշվվում էր կուսակցության 1,3 մլն անդամ, ապա 1971 թ.-ի շեմին այն հասնում էր 2,5 մլն-ի: Հանրապետությունում կուսակցական կադրերի բաշխումն ավելի համաչափ դարձավ: Նախկինում նրանց մեծամասնությունը կենտրոնացնում էր հարավ-արևելքում՝ ռուսականացված Դոնբասում ու Դնեպրոպետրովշինայում: Խրուշչևի օրոք ուկրաինական կուսակազմակերպությունում զգալիորեն աճեց Ուկրաինայի կենտրոնական ու հարավային շրջանների ներկայացուցչությունը:

Այս փոփոխություններն իրենց անմիջական հետքը թողեցին քաղաքական ղեկավարների նոր սերնդի վրա: Հանրապետության ղեկավար կազմում ուկրաինացիների թիվն ավելի էր, քան երբևէ: Այսպես օրինակ, 1964 թ.-ին կուսակցական 33 գլխավոր գործիչներից 30-ը ուկրաինացի էին: 1961 թ.-ին ԽՍՀՄ ԿԿ-ի կազմում Ուկրաինայի ներկայացուցիչների տեսակարար կշիռը հասավ աննախադեպ մեծության՝ 20 %-ի: Կրեմլի հետ սերտ կապերի և անդամների թվի անշեղորեն աճի շնորհիվ, ՌԿԿ-ն հավակնում էր ԽՍՀՄ-ում «օրինակելի» կուսակազմակերպություն լինելուն: Սակայն, միաժամանակ պարզ էր, որ իրենց արժեքի ու նշանակության զգացողությունը ուկրաինական ընտրախափի մոտ առաջ կրերի դժգոհություն՝ Կրեմլի գերկենտրոնացված քաղաքական ու տնտեսական քաղաքականության նկատմամբ, ինչն ի դեպ և հանգեցրեց Շելեստի ինքնավարության ձգտումներին: Իսկ այն, որ նրանց աջակցում էր կուսակցական կառույցի մեծ մասը, միանգամայն ակնհայտ էր. Շելեստի պաշտոնաթողությանը կողմ քվեարկեցին Ուկրաինայի մարզային կուսկազմակերպությունների 25 քարտուղարներից միայն երեքը:

Շելեստի պաշտոնանկությունը նշանակում էր ամբողջ ՌԿԿ-ի անհաջողություն: Դանդաղեց նրա թվային աճը, ԽՍՀՄ ԿԿ-ում ներկայացուցչությունը նվազեց մինչև 15 %-ը: Բայց և այնպես, «ամուր ձեռքի» քաղաքականության կողմնակից Շչերբիցկու իշխանությունը երկարատև իր ձեռքում պահելու ունակությունը վկայում էր այն մասին, որ նրա ղեկավարած



ՈԻԿԿ-ն մնում է որպես բավական կարևոր նշանակության գործոն՝ խորհրդային քաղաքական համակարգում:

## Այլախոհներ

1960-1970-ական թվականներին խորհրդային Միությունում ի հայտ եկավ ուշագրավ մի երևույթ, երբ մարդկանց փոքր, բայց մշտապես աճող մի խումբ, որ սովորաբար կոչվում էին **այլախոհներ**, սկսեց բացահայտ քննադատել կառավարության քաղաքականությունն ու պահանջել, որ պահպանվեն մարդկանց քաղաքացիական, կրոնական և ազգային իրավունքները: Ինչպես պատահեց, որ ահաբեկչության տասնամյակներից հետո, գաղափարախոսական դաժան վերահսկողությունից և «ուղեղների մշտական լվացումից» հետո, ծնվեց ռեժիմին ձեռնոց նետելու այդ զարմանահրաշ երևույթը: Այլախոհությունը մեծ մասամբ կարող էր լինել սկսված ապաստալիկականացման, «համապարփակ վախի» թուլացման գործընթացի արդյունք էր: Ստալինյան ժամանակաշրջանի սարսափելի ոճրագործությունների դրավորված բացահայտումները կասկած ու հիասթափություն ծնեցին ռեժիմի բերած մյուս երևույթների նկատմամբ: Հետևանքը եղավ այն, որ երբ Բրեժնևն սկսեց «ծրարել» ազատականացման քաղաքականությունը, բողոքի ալիք բարձրացավ, հատկապես՝ մտավորականության մոտ:

ԽՍՀՄ-ում այլախոհական շարժումը պայմանականորեն կարելի է բաժանել երեք հոսանքի, որոնք, այնուամենայնիվ, հաճախ միահյուսվում էին: Արտասահմանյան թղթակիցների հետ մոտ լինելու շնորհիվ, մեծ ճանաչում ստացավ Մոսկվայում հիմնավորված իրավապաշտպան, կամ ժողովրդավարական շարժումը: Նրա մասնակիցներից շատերը ռուս մտավորականներ էին, որոնց առաջնորդների թվում այնպիսի լուսավոր մարդիկ էին, ինչպես գրող **Ալեքսանդր Սոլժենիցին** ու **Ֆիզիկոս-միջուկագետ Անդրեյ Սախարովը**: Այլախոհության մյուս տեսակը կրոնական այլախոհությունն էր: Ուկրաինայում և ազգային այլ տարածաշրջաններում այլախոհական շարժումը բյուրեղանում էր ազգային խնդիրների շուրջ, որ մեծ մասամբ սերտորեն կապված էր քաղաքացիական իրավունքի և խղճի ազատության հետ:

Սկզբում ուկրաինական այլախոհության միջուկը ձևավորվեց հիմնականում «վաթսուհակամյակների» հաշվին, որ բոլորովին վերջերս հայտնի դարձած գրական-ստեղծագործական մտավորականության նոր սերունդն էր: Դրանց թվին էին պատկանում **Լինա Կոստենկոն**, **Վասիլ Սիմոնենկոն**, **Իվան Դրաչը**, **Իվան Սվիտլիչին**, **Եվհեն Սվերստյուկը**, **Միկոլա Վինհրանովսկին**, **Ալլա Գորսկան**, **Իվան Զյուբան**: Ավելի ուշ նրանց հարեցին **Վասիլ Ստուարը**, **Միխայիլ Օսադչին**, **Իհոր և Իրինա Կալինեցները**, **Միկոլա Գորբալը**, **Իվան Դելը**, **Հորին Եղբայրները**: Զարմանալի է, բայց այս խմբի առաջնորդների ընդհանուր առանձնահատկությունն այն էր, որ նրանք բոլորն էլ խորհրդային համակարգի կրթության ու դաստիարակություն օրինակելի արգասիք էին, որոնց խոստումնալից ապագա էր սպասվում: Մի քանիսը նույնիսկ համոզված կոմունիստներ էին: Կենտրոնացած լինելով հիմնականում Կիևում ու Լվովում, նրանք հանրապետության տարբեր շրջանների ծնունդ էին (մեծ մասը՝ Արևելյան Ուկրաինայից, սակայն շատերը սերտորեն կապված էին արևմտյան շրջանների հետ, որտեղ ժամանակին աշխատել, կամ սովորել էին): Ուկրաինական այլախոհների ևս մի ուշագրավ առանձնահատկությունն էլ նրանց սոցիալական ծագումն էր: Նրանք հիմնականում գյուղից էին և պատկանում էին քաղաքային մտավորականության առաջին սերնդին: Հնարավոր է, որ դրանով էին բացատրվում նրանց միամիտ իդեալիզմն ու բարդ հիմնավորումները, որ հաճախ բնորոշ էին իրենց հայտարարություններին: Ըստ էության դա փոքրաթիվ ու վատ կազմակերպված մարդկանց մի խառնամաղխ էր: Ուկրաինայում ակտիվ այլախոհների թիվը հազարից չէր անցնում, բայց նրանց բազմաազար մարդիկ էին համակրում:

Ինչի՞ դեմ, և հանուն ինչի՞ էին պայքարում այլախոհները: Ինչպես և մտավորականների ցանկացած խմբում, նրանց մոտ էլ էր նկատվում հայացքների տարբերություններ, հակասություններ ու տարածայնություններ: Նշանավոր այլախոհներից մեկը՝ գրաքննադատ Իվան Զյուբան, հավասարապես ձգտում էր հասնել ինչպես քաղաքացիական ազատությունների, այնպես էլ ազգային իրավունքների կիրարկմանը: Նա պարզորոշ ձևակերպում էր իր նպատակը՝ «ես առաջարկում եմ... միայն մի բան՝ ազատություն, ազգային խնդիրների ազնիվ ու հրապարակային քննարկման ազատություն, ազգային ընտրության ազատություն, ազգային ինքնաձևանաչման ու ինքնակատարելագործման ազատություն: Սակայն ամենից առաջ ու

**առաջնահերթ՝ բանավեճի և տարածայնության ազատություն»**: Ազգային կոմունիստ Չյուբանին անհանգստացնում էր խորհրդային տեսության ու գործնականի միջև եղած ահռելի տարբերությունը՝ հատկապես ազգերի իրավունքի բնագավառում, և նա իշխանություններին կոչ էր անում շուտափույթ վերացնել այդ տարբերությունը և՛ ի շահ խորհրդային համակարգի, և՛ ի շահ ուկրաինացի ժողովրդի: Պատմաբան **Վալենտին Մորոզն**, ընդհակառակը՝ շարունակում էր ուկրաինական արմատական ազգայնականության հոգևոր ավանդույթները, չէր թաքցնում իր ատելությունն ու նողկանքը խորհրդային համակարգից և հույս էր հայտնում, որ այն կկործանվի: *Եվ սակայն, այլախոհները հանդես էին գալիս հանուն ԽՍՀՄ-ում բարեփոխումների*, և ոչ թե հանուն հեղափոխության կամ Ուկրաինայի անջատման: *Նրանք դեմ էին Ուկրաինայում ազգային խտրականությանն ու ճնշումներին, և կողմ էին ԽՍՀՄ-ում քաղաքացիական իրավունքներին*:

Ուկրաինական այլախոհական շարժման արևմտյան հետազոտողները տարբեր կարծիքներ ունեն մարդկանց բացահայտ բողոքի մղող պայմանների ու դրդապատճառների վերաբերյալ: Ալեքսանդր Մոսիլը կարծում է, որ Ուկրաինայում, ինչպես և ընդհանրապես ԽՍՀՄ-ում, դա խորհրդային ղեկավարության քաղաքական կուրսի փոփոխության արդյունք էր: Խրուշչևյան «ծնհալը» փոխարինվեց այն ետ շրջելու բրեժնևյան փորձերով, ինչի հետևանքով էլ ծնվեց այլախոհական շարժումը: Իհարկե, Շելեստի ուկրաինամետ բաց գիծն էլ լրացուցիչ ազդակ հանդիսացավ, որ ուկրաինական մտավորականությունն էլ իր դժգոհությունն արտահայտի: Վսեվոլոդ Իսայիվն ու Բոհդան Կրավչենկոն պնդում են, որ այլախոհությունն առաջին հերթին կյանքի կոչվեց սոցիալ-տնտեսական տարածայնությունների պատճառով: Նկատի առնելով Մոսկվայի կողմից քաջալերվող ռուսների հսկայական ներհոսն Ուկրաինա, նրանք համարում են, որ «արևի տակ տեղի» համար մրցակցությունը, որ գնալով աճում էր արտոնյալ ռուսների և իրենց իրավունքների մասին հայտարարած ուկրաինացիների միջև, վերջիններիս մղում էր սատարելու Ուկրաինային ավելի մեծ ինքնուրույնություն տալու այլախոհների պահանջները: Ամեն դեպքում՝ այլախոհական շարժումն ուկրաինական մտավորականության և ռուսական կայսերական բյուրոկրատիայի սերնդե-սերունդ ձգվող հակամարտության միանգամայն նորագույն տարբերակ էր:

## Այլախոհության դրսևորումները

Այլախոհության ակտիվացման առաջին նշանները դրսևորվեցին 1950-ականների վերջին և 1960-ականների սկզբին, երբ Արևմտյան Ուկրաինայում ընդհատակյա մի քանի ոչ մեծ խմբեր ձևավորվեցին: Դրանց մեջ ամենահայտնին փաստաբան **Լևկո Լուկյանենկոյի** գլխավորած, այսպես կոչված՝ «իրավաբանների խումբն» էր: Խմբի անդամները պատրաստվում էին ժողովրդին քարոզելու, որ պետք է օգտվել Ուկրաինայի՝ ԽՍՀՄ-ի կազմից դուրս գալու սահմանադրական իրավունքից: Բացահայտելով այդ խմբերը, իշխանությունները նրանց հետ հաշվեհարդար տեսան մի շարք փակ դատավարություններով, որոնք ավարտվեցին դաժան դատավճիռներով:

Սակայն ստալինյանից ձերբազատվելու ինքերցիան շարունակում էր մտավորականության մեջ անհանգստություն սերմանել: 1963 թ.-ին, Կիևի համալսարանում կայացած ուկրաինական լեզվի ու մշակույթի խնդիրներին նվիրված կիսապաշտոնական կոնֆերանսը, որին հազարից ավելի մասնակից էր ներկա, վերջում ռուսականացման դեմ բաց ցույցի վերածվեց: Մոտավորապես այդ ժամանակներում էլ սովորույթ դարձավ մտավորականների ու երիտասարդության ամենամյա հավաքները Շևչենկոյի արձանի մոտ Կիևում (պաշտոնապես՝ մեծ բանաստեղծի ստեղծագործությունները կարդալու, իսկ իրականում՝ ռեժիմի մշակութային քաղաքականությունը քննադատելու նպատակով): 1964 թ.-ին, Գիտությունների ակադեմիայում բռնկված կասկածելի հրդեհը, որ ոչնչացրեց ուկրաինական գրականությունն ու ձեռագրերի հավաքածուն, գրականության առաջամարտիկների շրջանում բողոքի բուռն ցույցերի տեղիք տվեց: Վախենալով, որ իրավիճակը կարող էր հսկողությունից դուրս գալ, Կրեմլը որոշեց վերջ դնել այլախոհությանն ամբողջ ԽՍՀՄ-ում: Ուկրաինայում այդ որոշման հետևանքն այն եղավ, որ **1965 թ.-ին երկու տասնյակից ավելի այլախոհներ ձերբակալվեցին**: Նրանց համախոհներին ու կողմնակիցներին վախեցնելու նպատակով, իշխանությունները որոշեցին բաց դատավարություններ անցկացնել: Սակայն այդ ձևն հարվածեց հենց իրենց, քանի որ խռովությունները մոտ լիք բարձրացավ:

Լվովում տեղի ունեցող դատավարությունների վկա, երիտասարդ լրագրող, համոզված կոմունիստ **Վյաչեսլավ Զոնոպիլը** մերկացուցիչ փաստաթղթերի ու հոդվածների մի ժողովա-



ծու տարածեց՝ «Лихо з розуму» վերնագրով (Արևմուտքում այն լույս տեսավ «Չոռնովիի գրառուներ» խորագրով), որտեղ բացահայտվում էին իշխանությունների կողմից կիրառված «արդարադատության» անօրեն ու ցինիկ մեքենայությունների գաղտնիքները: Չյուբան իր հերթին, «Ուկրաինա» կինոթատրոնում հավաքված մեծ լսարանի առջև արտասանած կրակոտ ելույթում խստորեն դատապարտեց այդ ձերբակալությունները: Նա նաև Շելեստին ու Շչերբիցկուն ուղարկեց իր «**Չամազգայնություն, թե ռուսացում**» աշխատանքը, որ Ուկրաինայում կիրառվող ռուսացման տեսության ու գործելակերպի նուրբ, խորագիտակ ու մերկացուցիչ վերլուծությունն էր: 1970 թ.-ին, հակախորհրդային քարոզի ու տարփողման համար իր ձերբակալությունից հետո, Վալենտին Մորոզը գրեց «**Լրատվություն Բերիայի անվան արգելոցից**», որ առանձին անհատների ու ամբողջ ժողովուրդների բարոյալքման հասցնող խորհրդային պաշտոնակատարների դաժանության հուզիչ նկարագրությունն էր: Այլախո-



Վասիլ Ստուս (1938-1985)

ներին միմյանցից ու հասարակությունից մեկուսացնելու իշխանությունների ջանքերը խաթարելու նպատակով, ինչպես նաև համաշխարհային հասարակայնությանը խորհրդային ճնշումներին ու պատժիչ գործողություններին իրագեկ դարձնելու համար, 1970 թ.-ին ուկրաինական այլախոհները սկսեցին գաղտնի տպագրել «**Ուկրաինական լրաբեր**» ամսագիրը: ՊԱԿ-ը կարողացավ խափանել այդ նյութերի տարածումն Ուկրաինայում, սակայն չկարողացավ կանխել դրանց թափանցումն Արևմուտք: Ուկրաինացի տարաբնակների օգնությամբ դրանք հրատարակվեցին և լայն տարածում գտան, ինչը շփոթության մատուցեց խորհրդային իշխանություններին:

Շելեստի պաշտոնանկությունից հետո, 1972 թ.-ին Շչերբիցկին, կուսակցության գաղափարախոս Մալանցուկի և Ուկրաինայի ՊԱԿ-ի նախագահ Ֆեդորչուկի հետ միասին **սկսեցին**

այլախոհ մտավորականության զանգվածային հալածանքները, որ ուղեկցվում էին հարյուրավոր ձերբակալություններով ու առավել դաժան դատավճիռներով, քան իրականացվում էին 1965-1966 թ.թ.-ներին: Բացահայտ այլախոհներին, ինչպես նաև բոլոր նրանց, ովքեր կասկածվում էին «քաղաքական անբարեհուսության» մեջ, վտարում էին համալսարաններից, գիտական հիմնարկություններից, խմբագրություններից և այլն: Ստալինյան ժամանակներն հիշեցնող հալածանքների այդ ալիքը մտավորականության մի ողջ սերնդի հոգեկան ցնցումների պատճառ դարձավ և շատերին ստիպեց կամ դադարեցնել այլախոհական գործունեությունը, կամ հրապարակավ ապաշխարել, ինչպես դա արեց Չյուբան:

### Ուկրաինայի «Չելսինկյան խումբը»

Քանակապես նվազած, սակայն պայքարը շարունակելու վճռականությամբ լի այլախոհներն իրենց գործունեությունը շարունակելու նոր ազդակ ստացան, երբ 1975 թ.-ին ԽՍՀՄ-ն ստորագրեց Չելսինկյան պայմանագիրը և պարտավորվեց հարգել իր ժողովրդի քաղաքական կրթական իրավունքները: Համարելով, որ Կրեմլին բռնել են խոսքի վրա, այլախոհներն ստեղծեցին բացահայտ, և իրենց կարծիքով՝ օրինական հիմքերի վրա գործող խմբեր, որոնց հիմնական նպատակն էր հետևել, թե ինչպես են իրագործվում հելսինկյան պարտավորությունները: Առաջին **Չելսինկյան կոմիտեն ստեղծվեց Մոսկվայում՝ 1976 թ.-ի մայիսին: Դրանից շատ չանցած՝ նույն թվականի նոյեմբերին Կիևում հիմնադրվեց «Չելսինկյան ուկրաինական խումբը»:** Նման խմբեր ձևավորվեցին նաև Լիտվայում, Վրաստանում և Հայաստանում:

Ուկրաինայի Չելսինկյան խումբը գլխավորեց գրող Միկոլա Ռուդենկոն, որ երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ քաղաքական կոմիսար էր եղել և Ուկրաինայի Գրողների միության նախկին կուսակցական պաշտոնյա: Նրա մտերիմն ու համախոհը **Պետրո Չրիհորենկոն** էր՝ խորհրդային բանակի շարքերից հեռացված գեներալ: 37 հոգուց բաղկացած այդ խումբը, անդամների քաղաքական հայացքների տեսանկյունից, մի իսկական խճանկար էր ներկայացնում իրենից: Այդ խմբի մեջ էին այնպիսի այլախոհներ, ինչպես՝ **Նինա Ստրոկատան, Վասիլ Ստուսը, Լևկո Լուկյանենկոն, Իվան Կանդիբան, Նադիյա Սվիտլիչևան, Վյաչեսլավ Չոռնովիլը,** մարդիկ, որոնք իրենց համար սահմանված կալանքի ժամկետը կրելվերջացրել էին: Կային նաև տասնամյակներ շարունակ ստալինյան ճամբարներում տառապած ու կենդանի մնացած նախկին ազգայնականներ, ինչպես՝ **Սվյատոսլավ Կարավանսկին, Օքսանա Պոպովիչը, Օքսանա Մեչկոն, Իրինա Սեմիկը, Պետրո Սիչկոն, Դանիլո Շուժուկն ու Յուրի Շուխիչը** (ՌԻԱԲ-ի գլխավոր հրամանատար Ռոման Շուխիչի որդին), ուղղափառ քահանա **Վասիլ Ռոմանյուկի** նման կրոնական ակտիվիստներ:

Ուկրաինայի Չելսինկյան խմբի գործունեությունը երկու կարևոր առանձնահատկությամբ տարբերվում էր այլախոհական շարժման զարգացման նախկին փուլերից: Առաջինն այն էր, որ խումբը **ռեժիմամետ կազմակերպություն չլինելով հանդերձ, գործում էր բացահայտ, և օրինական գոյության էր հավակնում:** Ուկրաինայում խորհրդային կարգերի հաստատումից ի վեր նման բան երբեք չէր եղել: Նրա մյուս աննախընթաց հատկանիշն էլ այն էր, որ խումբը **ամբողջ ԽՍՀՄ-ում կապեր հաստատեց նման կազմակերպությունների հետ՝ ձգտելով իր գործունեությունն այդ կերպ «միջազգայնացնել»** քաղաքացիական ու ազգային իրավունքների պաշտպանության բնագավառում:

Նոր մտածելակերպը պարզ նկատելի էր նաև խմբի ծրագրային փաստաթղթերում, որտեղ շեշտվում էր օրինականության կողմնորոշումը. խմբի անդամներն համարում էին, որ հասարակական խնդիրները կարելի է լուծել միայն ամբողջապես՝ օրենքի իշխանություն հաստատելու և մասնավորապես՝ անհատի իրավունքները պահպանելու ճանապարհով: Հենց այս նկատառումներով էին նրանք իրենց գործունեությունն հաճախ բնութագրում որպես իրավապաշտպան գործունեություն: Ինչպես նկատում է Իվան Լիսյակ-Ռուդնիցկիին՝ **հենց օրինականությունն ու ճշմարիտ ժողովրդավարությունը շեշտելն էր, որ ուկրաինական քաղաքական մտքի պատմության մեջ արմատական շրջադարձ էր նշանակում, և ոչ թե մինչ այդ ուկրաինական մտավորականության մտածողությունը կաշկանդող ազգայնականության կամ մարքսիզմի գաղափարները:**

Չնայած Ուկրաինայի Չելսինկյան խմբի որոշ անդամներ քիչ թե շատ դեռ պահպանել էին հակվածությունը մարքսիզմին կամ ազգայնականությանը, սակայն մեծամասնության հայացքները կարելի է լուսաբանել նախկինում և՛ ազգայնական, և՛ կոմունիստ եղած, և գրեթե 40 տարի լեհական, մացիստական ու խորհրդային ճամբարներում տառապած Դանիլո Շուժուկի հիշողություններից մի հատվածով. «**Միայն ժողովրդավարությունը կարող է մարդկու-**



թյանը պահպանել ինչպես ծախս, այնպես էլ՝ աջ կողմնորոշման բռնատիրության վտանգից: Միայն բոլոր քաղաքացիների՝ իրենց գաղափարներն արտահայտելու, տարփողելու և պաշտպանելու անսահմանափակ, օրենքով երաշխավորված իրավունքը կարող է մարդկանց հնարավորություն տալ վերահսկելու և ուղղորդելու կառավարության քաղաքականությունը: Առանց այդ իրավունքի, խոսք անգամ չի կարող լինել ժողովրդավարության և խորհրդարանի ժողովրդավարական ընտրությունների մասին: Այնտեղ, ուր չկա ժողովրդի մեջ և խորհրդարանում հավասար իրավունքներից օգտվող օրինական ընդդիմություն, չկա նաև ժողովրդավարություն... Ես այդ հետևությանը եկա բազում տարիների մտորումներից, վերլուծություններից ու ընդհանրացումներից հետո, որոնք էլ ինձ հանգեցրին քննադատական վերաբերմունքի ինչպես կոմունիստների, այնպես էլ դոնցոլյան ազգայնականների նկատմամբ»:

Ազգայնականության ՌԲԿ-ական տարբերակին հատուկ քսենոֆոբիային հակառակ, ուկրաինական այլախոհների վառ հայրենասիրությունը չէր զուգակցվում այլ ժողովուրդների, նույնիսկ ռուսների նկատմամբ թշնամությամբ: 1980 թ.-ի նրանց մի հայտարարության մեջ ասվում է. «Մենք գիտակցում ենք, թե ինչ է նշանակում ապրել գաղութատիրական ճնշման տակ, այդ պատճառով էլ հայտարարում ենք, որ մեր երկրում ապրող ժողովրդին կտրվեն քաղաքական, տնտեսական և սոցիալական լայն իրավունքներ: Անպայման կերաշխավորվեն ազգային փոքրամասնությունների և կրոնական տարբեր միավորումների բոլոր իրավունքները»: Իրենց օրինականության սկզբունքներից ելնելով, Ուկրաինայի Զեխինկյան խմբի անդամները ենթադրում էին, թե Ուկրաինայի՝ անկախության հասնելու լավագույն ուղին խՍՀՄ կազմից դուրս գալու Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքից օգտվելն է: Խորհրդային Միության «ապագաղութացման» լավագույն միջոցը նրանք համարում էին խՍՀՄ ժողովուրդներին իսկապես ազատ ընտրություններ անցկացնելու հնարավորություն տալը:

Սակայն, ո՛չ Ուկրաինայի Զեխինկյան խմբի չափավորությունը, ո՛չ Արևմուտքի պահանջը, որ խՍՀՄ-ը չխախտի Զեխինկյան պայմանագիրը, այլախոհներին չփրկեցին նոր բռնություններից: 1980 թ.-ին Ուկրաինայի Զեխինկյան խմբի անդամների մոտ երեք քառորդը դատապարտվեց 10-15 տարվա ազատազրկման: Մնացածներն աքսորվեցին Ուկրաինայի սահմաններից դուրս, կամ՝ արևմտյան հասարակությանն հանդարտեցնելու համար, վտարվեցին խՍՀՄ-ից:

Այստեղ հարկ ենք համարում մեջբերել խՍՀՄ Գերագույն խորհրդի Նախագահությանն ուղղված Վասիլ Ստուիի դիմումը (խմբ.).

### ЗАЯВА Василя Стуса «В Президиум Верховного Совета СССР»

Я украинский литератор, репрессированный по политическим мотивам в январе 1972 г. Фактически меня осудили за стремление к социальной справедливости, ибо нашлись силы, которые вначале отнеслись к этому стремлению резко враждебно, а впоследствии назвали его преступной склонностью, ведущей к антигосударственной деятельности.

Я ратовал за демократизацию - это было расценено как попытка оклеветать советский строй; моя любовь к родному народу, моя озабоченность кризисным состоянием украинской культуры были квалифицированы как национализм; мое неприятие практики, на почве которой вырос сталинизм, вериевщина и другие подобные явления, восприняли как особо злостную клевету. Фактами пропаганды и агитации были признаны мои стихи, литературно-критические статьи, официальные обращения в ЦК КП Украины, Союз писателей Украины и другие органы.

Следствие и суд, по сути, перечеркнули все мои надежды на какое-либо участие в литературном процессе, надолго лишили меня человеческих прав. Все мои произведения - поэта, критика, переводчика, прозаика - были поставлены вне закона, а мой 15-летний труд был конфискован и, может быть, в значительной мере, уже уничтожен.

В условиях неволи я испытал на себе еще большие унижения, больно ранящие мое чувство человеческого достоинства.

Скрепя сердце, я долго удерживался от рокового шага - отказа от гражданства (Я

считаю себя несправедливо осужденным). Я надеялся, что в ближайшее время мое правовое положение, как и моих товарищей, будет восстановлено, а взятый курс на ожесточение внутривластного климата будет пересмотрен - хотя бы ввиду его очередной бесперспективности.

Оказалось, что я ошибался.

Репрессии 1972 г. показали, что в дискуссии с украинскими «диссидентами» власти не нашли более убедительных аргументов, чем применение силы. А лагерные условия убили в том, что пространство применения этой силы не знает пределов. Год назад я уже находился на грани смерти.

Совсем недавно, 14. V. 1976 г., из за моего отказа лечь в больницу без книг, на меня надели наручники, ругая при этом площадной бранью и награждая пинками. Все болит вот уже два месяца, но нанесенное мне моральное оскорбление куда ошутимее. Я подал на обидчиков в суд, в отместку меня подвергли новым наказаниям, продемонстрировав тем самым мою полную беззащитность перед здешним законом. Не остановились даже перед тем, чтобы человека, недавно перенесшего тяжелую операцию (резекция желудка), бросить на две недели в штрафной изолятор - яковы за клевету, содержащуюся в жалобах. Это настолько выходило из ряда обычной практики и лагерных наказаний, что вызвало двухнедельную голодовку восьми заключенных зоны, голодовку, которую администрация фактически спровоцировала своими действиями.

Добавлю к этому нещадную конфискацию моих писем ко мне, систематические аресты стихотворений, которые я переписываю в письмах к родным, реальную угрозу потерять рукописи своих лагерных стихотворений при освобождении, фактическое нелечение, полное отсутствие статуса политзаключенного и т.д. и т.п.

Нечего и говорить, насколько эти факты резко контрастируют с декларируемыми в СССР принципами гуманности и правопорядка, насколько они противоречат закону и положениям хельсинкских решений.

Сегодня я пришел к выводу, что меня сознательно низвели до положения неодоушевленной вещи, оприходованной по ведомству имущества КГБ.

Анализируя реакцию местных властей на мое обращение к Вам от 15. IV. 1976 г., я убедился, что репрессивные органы в лице КГБ при Совете Министров УССР прямо подталкивают меня к решению об отказе от советского гражданства. Это можно понять: ведь я украинский патриот, а с такой атрибуцией мне гарантирована пожизненная опека сыскных служб.

Итак, я заявляю: оставаться подданным СССР больше не считаю для себя возможным, а потому прошу выдворить меня за пределы страны, в которой мои человеческие права попираются столь бесцеремонным образом.

Решиться на подобный шаг слишком тяжело, но удержаться от него в создавшихся условиях, оказывается, еще тяжелее.

15 июля 1976 г.

Василь Стус

### Կրոնական այլախոհություն

Ուկրաինայում այլախոհության մի առանձին տեսակ էր կրոնական այլախոհությունը: Խորհրդային սահմանադրությունը տեսականորեն երաշխավորում էր դավանանքի ազատությունը: Սակայն իրականում ռեժիմը հավատացյալներին եկեղեցուց օտարելու բազում միջոցներ ուներ ձեռքի տակ: Այդ միջոցներից էին՝ կրոնական հրատարակությունների սահմանափակումը, դպրոցներում կրոնական առարկաների դասավանդումն արգելելն ու «աթեիստական դաստիարակությունը», ՊԿԿ-ի գործակալներին-հոգևորականներին ու եկեղեցու նվիրապետության միջավայր մտցնելը, եկեղեցիներ փակելը և վերջապես՝ իրենց հավատքին ամուր կառչածների դեմ սոցիալ-տնտեսական ու կրթական պատժամիջոցներ կիրառելը: Այդուհանդերձ՝ մի կողմից խորհրդային գաղափարախոսության հոգևոր սնանկությունը, մյուս կողմից՝ եկեղեցական հարցերում ռեժիմի դաժան մարտավարության հետևանքով առաջացող բողոքի զգացումը, նպաստում էին մարդկանց վերադարձին դեպի հավատքն ու եկեղեցին, հատկապես՝ գյուղական վայրերում: Դրա հետ մեկտեղ, աճում էր նաև հավատացյալների մի մասի մարտական տրամադրվածությունը:



Ուկրաինական հունա-կաթոլիկական «կատակոմբների» եկեղեցու նկատմամբ ռեժիմի դաժան հալածանքները սակայն չհանգեցրին նրա լրիվ ոչնչացմանը: *Վերջին մի քանի տասնամյակների ընթացքում Արևմտյան Ուկրաինայում 300-350 քահանա, մի քանի եպիսկոպոսների գլխավորությամբ, գաղտնի ժամերգություններ էին վարում հավատացյալների համար: Նույնիսկ ընդհատակյա վանքեր ու տպարաններ էին գործում: 1982 թ.-ին քահանա Յոսիպ Տերեյակ* Ուկրաինական հունա-կաթոլիկական եկեղեցու պաշտպանության Կոմիտե ստեղծեց, նպատակ ունենալով այն օրինականացնել: Ռեժիմը պատասխանեց ակտիվիստների ծերրակալություններով, սակայն Գալիչիյնայի և Անդրկարպատների ուկրաինացիների հավատարմությունն իրենց հնազույն եկեղեցուն՝ չսասանվեց:

Ուկրաինայի ուղղափառ եկեղեցին, որ պաշտոնապես կոչվում էր Ռուսական ուղղափառ եկեղեցի, ավելի նպաստավոր պայմաններում էր, քանի որ ճանաչվում էր կառավարության կողմից: Սակայն դրա համար նա վճարում էր իշխանությունների հետ համագործակցությամբ, որն հասնում էր ընդհուպ թժնանքի աստիճանի: Արդյունքում՝ այդ եկեղեցին ավելի շատ ծառայում էր պետության շահերին, քան եկեղեցու կարիքներին, իսկ եկեղեցուն, հատկապես բարձրագույն վեհապետությանը, քայքայում էր կաշառակերությունն ու երեսպաշտությունը: Գործերի նման ընթացքը հանգեցրեց նրան, որ շարքային քահանաների մի մասը, որոնց թվում և դաժանորեն հալածվող *Վասիլ Ռոմանյուկը*, բացահայտորեն դատապարտեցին ինչպես իրենց ղեկավարությանը, նույնպես և խորհրդային կառավարությանը՝ ուղղափառությունը քայքայելու համար:

Ամեն ինչից դատելով, *Ուկրաինայում բոլորից ավելի մարտունակ ու շարժուն կրոնական միավորումները բապտիստներն էին և մյուս բողոքական աղանդները՝* հիսնականները, ազվենտիստները ու Եհովայի վկաները: Նրանք իրենց եկեղեցական արարողությունները վարում էին առանձին աղոթատներում, երեխաներին դաստիարակում էին իրենց հավատքի դրվածքով և հաճախ հրաժարվում էին գրանցել իրենց կազմակերպությունները՝ դրանով դժվարացնելով պետության վերահսկողությունը: Նրանց արմատական հայացքները, հասարակ մարդկանց հարցապնդումներին կողմնորոշվելը, նրանց անմնացորդ նվիրվածությունը հավատին, շատերին էր գայթակղում, հատկապես Արևելյան Ուկրաինայում: Այդ տարիներին հենց աղանդավորներն էին կազմում ԽՍՀՄ-ում «խղճի կալանավորների» անհամեմատ մեծ մասը: Բապտիստների գլխավոր առաջնորդներից մեկը, մինչև ԱՄՆ մեկնելը, բողոքական քահանա (պատար) *Գեորգի Վինս* էր:

### Այլախոհության սանձումը

Զնայած իրենց իդեալիզմին ու անվեհերությանը և հալածողների դաժան ու անախորժ վարվեցողությանը, *այլախոհները ոչ Ուկրաինայում, և ոչ էլ ընդհանրապես ԽՍՀՄ-ում, լայն աջակցության չարժանացան:* Դրա պատճառներից մեկն այն էր, որ մերկացնելով ռեժիմն ու պահանջելով օրենքի իշխանություն հաստատել, *այլախոհները քաղաքական հստակ ծրագիր չձևակերպեցին:* Բացի դրանից, *նրանց բարձրացրած խնդիրները, որպես օրենք, անմիջական աղերս չունեին բնակչության մեծամասնության՝ բավորների ու կոլտնտեսականների ամենօրյա հոգսերի հետ:* Այդ պատճառով էլ այլախոհական սոցիալական բազան չընդլայնվեց և գրեթե բացարձակապես մնաց մտավորականության շրջանակներում:

*Սակայն այլախոհական շարժման անհաջողությունների գլխավոր պատճառը հակառակորդ ուժի գերազանցությունն էր:* Այլախոհների դեմ ուղղվեց խորհրդային համակարգի ողջ հզորությունը, ամենից առաջ՝ *ամենագոր ՊԱԿ-ը:* Ամբողջությամբ տիրապետելով զանգվածային հաղորդակցման միջոցներին, ռեժիմը այլախոհության վերաբերյալ տեղեկատվությունները սովորաբար թաքցնում էր հասարակությունից: Եթե որևէ լուր էլ հայտնվում էր, ապա կեղծված ու այլափոխված տեսքով, ուր այլախոհները ներկայանում էին բացասական ու աննպաստ լույսի տակ: Իր տրամադրության տակ ունենալով հարյուր հազարավոր սպանների, գործակալների ու լրտեսների, թվում էր, թե *ՊԱԿ-ն ամենուր է և ամեն ինչին տեղյակ:* Սակայն, ի տարբերություն ստալինյան ժամանակների, գաղտնի ոստիկանությունն արդեն աչքի չէր ընկնում իրական կամ հավանական այլախոհներին ֆիզիկապես վերացնելու մոլեռանդությամբ, այլ *գերադասում էր նրանց մեկուսացնել հասարակությունից, ուժեղացնել ճնշումները, վախեցնել՝ ստիպելով սխալը խոստովանել կամ լռություն պահպանել:* Ռեժիմից դժգոհները մնում էին անգործ, նրանց երեխաները զրկվում էին կրթություն ստանալու հնարավորությունից, կարող էին զրկվել նույնիսկ տարրական կենսապայմաններից ու ծածկից: *Առավել համառներին երկարաժամկետ աքսորում էին ճամբարները կամ թաքցնում հոգեբու-*

*ժարաններում, ուր այնպիսի դեղորայք էին ներարկում, որ ազդում էր և՛ ֆիզիկականի, և՛ հոգեկանի վրա: Մի քանիսին վերացնելով, ՊԱԿ-ը հաջողությամբ սարսափի էր մատնում շատերին:*

Չամենատած Մոսկվայի հետ՝ ուկրաինական ՊԱԿ-ն ավելի ազատ կարող էր գործել: Մոսկվայում տեղակայված արևմտյան լրատվական ծառայություններից հեռու գտնվելով, ուկրաինական այլախոհները, ի տարբերություն իրենց ռուս և իրենա տաղանդավոր համախոհների, զրկված էին նույնիսկ այդ պայմանական «հրապարակայնության հովանոցից»: Դրա հետ մեկտեղ, ուկրաինացիների ազգային իրավունքի խնդիրները արևմուտքին քիչ էին հետաքրքրում: Միաժամանակ, ուկրաինական ազգայնականությունից վախը ռեժիմին ստիպում էր հատկապես Ուկրաինայում դաժան ճնշումներ կիրառել: Այստեղից էլ՝ *Ուկրաինայի ՊԱԿ-ի համբավը՝ որպես ամենադաժանը Միությունում, և ուկրաինական «խղճի կալանավորների» անհամեմատ մեծ քանակը՝ կալանավայրերում:*

## Ռուսականացում

Կրեմլի տեսանկյունից՝ ազգային հարցը ԽՍՀՄ-ում վերին աստիճանի բարդ խնդիր էր: Խորհրդային առաջնորդները ստիպված էին գտնել ու մշակել բոլորի համար ընդհանուր ինչ-որ գաղափարներ ու նպատակներ մի հասարակության համար, որն իր մեջ ներառում էր հարյուրից ավելի ազգեր ու ազգություններ, և իրենից ներկայացնում էր պատմական, մշակութային և սոցիալական արժեքների ու տնտեսական շահերի մի բարդ խճանկար: Այդ գերխնդիրն իրագործելու ընթացքում, հետստալինյան շրջանի խորհրդային գաղափարախոսները մշակեցին հասկացողությունների մի ողջ համակարգ, որը պետք է կարողանար ստվերել, մոռացության մատնել ու վերացնել ԽՍՀՄ ժողովուրդների ազգային առանձնահատկությունները և ընդհակառակը՝ շեշտեր նրանց միջև եղած ընդհանուրն ու նմանը և մերժեցնել միմյանց: *Գաղափարախոսական այդ ամբողջ համակարգը հենվում էր հետևյալ «հիմնարար» հանգամանքների վրա. ազգերի «բարգավաճման գաղափարի»,* համաձայն որի՝ ԽՍՀՄ բոլոր ժողովուրդները խորհրդային իշխանության օրոք աննախադեպ առաջընթաց են ապրել, *«մերժեցման» գաղափարի,* որն ապացուցում էր, թե շնորհիվ ազգերի գարգացման համար ստեղծված քաղաքական, տնտեսական և մշակութային ընդհանուր պայմանների, նրանք ավելի են մոտենում միմյանց, *«միաձուլման» գաղափարի,* ըստ որի՝ ԽՍՀՄ բոլոր ժողովուրդներն աստիճանաբար միախառնվում են ու դառնում մի ամբողջություն, և վերջապես՝ *«պատմական նոր հանրության՝ խորհրդային ժողովրդի» առաջացման գաղափարի:*

Գաղափարախոսական այս ամբողջ «ճամարտակությունը», որի նպատակն էր համոզել մարդկանց, թե ազգերը, կորցնելով իրենց ինքնատիպությունն ու ինքնությունը, կարող են «ծաղկել ու բարգավաճել», ընդամենը քողարկում էր այն մեծ-միակ երևույթը, որ մշտապես եղել էր օրակարգում, իսկ ընթացիկ օրոք կրկին թափ առավ՝ *ռուսականացումը:* Քանի որ ռուսները մեծամասնություն էին կազմում, քանի որ նրանք ստեղծեցին բոլշևիկների կուսակցությունն ու խորհրդային համակարգը, քանի որ նրանք էին զբաղեցնում բոլոր կարևոր դիրքերն ու պաշտոնները և քանի որ նրանց լեզուն էր համարվում ԽՍՀՄ ազգամիջյան հարաբերությունների միջոցը, ուրեմն հատկապես նրանք պետք է կատարեին ԽՍՀՄ ժողովուրդների համախմբողի և միության հիմքերն ամրապնդողի պատասխանատու դերը: Եվ խորհրդային ղեկավարությունը գտնում էր, որ Միության մյուս ժողովուրդներն ինչքան շատ նմանեցվեն ռուսներին, այնքան ավելի ամուր կլինի համերաշխությունը նրանց միջև: Սակայն *արևմտյան շատ հետազոտողներ և ԽՍՀՄ ոչ-ռուս այլախոհներ «մերժեցում», «միաձուլում» և «խորհրդային ժողովուրդ» հասկացողություններն համարում էին ոչ ավելի, քան մյուս ժողովուրդների ռուսականացման ծածկագրեր:*

Ինչպես համոզվեցինք, *ուկրաինացի այլախոհների դժգոհության գլխավոր պատճառը ռուսականացումն էր:* Նրանք դեմ էին այն պնդումներին, թե «սոցիալական և միջազգային նոր տեսակի հանրություն՝ խորհրդային ժողովուրդ» ստեղծելու առաջընթաց ու ոգեշնչող խընդրում, ռուսաց լեզվի և մշակույթի գերազանցությունն անխուսափելի հավելում է: Նրանց կարծիքով՝ ռուսաց լեզվի հատուկ դերի շեշտադրումն ընդամենը նոր եղանակով երգվող հին երգն է: *Իվան Չյուրան իր «Միջազգայնացում», թե ռուսականացում» աշխատանքում բավականին համոզիչ կերպով ցույց տվեց, որ նոր ռուսականացման ետևում կանգնած են ռուսական հին ազգայնամոլությունն ու գաղութարարությունը՝ պարուրված կեղծ մարքսիստական*



գաղափարաբանությամբ: «Գաղութացումը,- գրում էր նա,- կարող է հանդես գալ ոչ միայն բացահայտ խտրականության տեսքով, այլև «եղբայրության», ինչը շատ բնորոշ է հատկապես ռուսական գաղութարարությանը»: Ընդարձակ մեջբերումներ անելով Լենինից, նա ձգտում էր ապացուցել, որ մարքս-լենինյան գաղափարախոսության մեջ կրեմլի կողմից ռուսներին տրվող հատուկ գերապատվությունն հիմնավորող դրույթներ չկան:

Ուկրաինայում ծուլման մամլիչն առանձնապես ծանր էր մեծ մասամբ ռուսների հետ լեզվական և մշակութային մերձավորության պատճառով, ինչի հետևանքով ուկրաինացիները ռուսականացման հարմար առարկա էին դիտվում: Դրան էր պարտադրում նաև Ուկրաինայի տնտեսական կարևորությունը ԽՍՀՄ-ի համար, որը նրան զրկում էր «անջատական» միտումների զարգացման հնարավորությունից: Համեմատաբար մեծաքանակ լինելով, ուկրաինացիները, բացի այս ամենից, ազգամիջյան հարաբերություններում «որոշիչ ծայնի» ներուժ ունեին. եթե նրանք ռուսների կողմն էին բռնում, ԽՍՀՄ-ում էթնիկ քաղաքականությունը կայուն էր մնում: Եթե նրանք հանկարծ թեքվեին ոչ-ռուս ժողովուրդների կողմը, դա կարող էր խորհրդային քաղաքական համակարգում խախտել ռուսների գերակայությունը և հանգեցնել արմատական փոփոխությունների:


### Լեզվի խնդիրը

«խորհրդային ժողովուրդ» կերտելու ձգտող խորհրդային ղեկավարության, և իրենց ազգային ինքնությունը պահպանել ցանկացող ուկրաինացիների միջև մղվող պայքարում, «ռազմաճակատի հիմնական գիծը» անցնում էր լեզվի խնդրի վրայով: Բրեժնևի օրոք **Կրեմլը խիստ սուր, նուրբ ու անդադար պայքար էր ծավալել ռուսաց լեզվի գործածության ոլորտն ընդլայնելու և ուկրաիններենը սահմանափակելու ուղղությամբ:** Այդ նպատակին հետամուտ խորհրդային իշխանությունը կարող էր հույսը դնել Ուկրաինայում բնակվող 10 մլն ռուսների և 1 մլն «մալուռուսների» վրա, որ ծագումով ուկրաինացի լինելով, լեզվի և մշակույթի առումով ռուսներ էին: Միաժամանակ «համոզիչ» հիմնավորումներ էին առաջ քաշում, իբր՝ ԽՍՀՄ-ում այն ամենամեծաքանակ և կարևոր ազգի լեզուն էր, մյուս ժողովուրդների միջև շփման և հաղորդակցման միակ միջոցը և վերջապես՝ գիտության և միջազգային հարաբերությունների լեզուն էր:

Իշխանություններն իրենց զինանոցում մարդկանց ուղղակի կամ անուղղակի ստիպելու բազում միջոցներ ունեին, որպեսզի նրանք միայն ռուսերեն խոսեն: Ռուսաց լեզվի գործածությունն արագորեն աճում էր ռուսումնական հաստատություններում, և կրթության բնագավառում հաջողության հասնելու ուղղակիորեն կախված էր ռուսաց լեզվին տիրապետելու աստիճանից: Նույնը վերաբերում էր նաև գործունեության ասպարեզին: Ուկրաինայում առավել կարևոր ու հետաքրքիր պարբերական հրատարակությունները տպագրվում էին ռուսերեն լեզվով, այն դեպքում, երբ նվազ հետաքրքիր ու հանրամատչելիները լույս էին տեսնում ուկրաիններեն լեզվով: Երբ դրանց տպաքանակը համապատասխանաբար նվազում էր, այդ հրատարակությունները փակվելու համար իշխանությունները գերազանց արդարացու էին ունենում: Այսպես՝ 1969-1980 թ.թ.-ներն ընկած ժամանակաշրջանում, ուկրաիններեն լեզվով հրատարակվող ամսագրերի տեսակարար կշիռը 46 %-ից իջավ 19 %-ի: 1958-ից մինչև 1980 թ.-ը, ուկրաիններեն լեզվով հրատարակվող գրքերի քանակը 60 %-ից հասավ 24 %-ի:

Ռուսերեն լեզվով հաղորդակցվելուն պարտադրող սոցիալական մամլիչն հատկապես հզոր ճնշում էր գործադրում քաղաքներում, իսկ ուկրաիններենն արհամարհվում էր, որպես «գեղջուկների» լեզու: Ռեժիմը գիտակցաբար ուկրաինացիների մեջ անլիարժեքության զգացում էր սերմանում մայրենի լեզվի ու մշակույթի նկատմամբ: Դրա ամմիջական արդյունքն այն էր, որ ուկրաինացիներն հաճախ էին իրենց երեխաներին ռուսական կրթության տալիս: «Ի՞նչ օգուտ ուկրաիններենից: Իմ երեխաները, հաջողության հասնելու համար, պետք է լավ տիրապետեն ռուսերենին»,- հաճախ կարելի էր լսել նախկին գյուղացիներից, որոնք ծգնում էին իրենց տեղը գտնել ռուսականացված քաղաքներում: Ուկրաինացի մտավորականներն հաճախ կեսկատակ ասում էին, որ եթե այսօր ուկրաինացման քաղաքականություն տարվի, իրեաները «կուկրաինանան» մեկ տարում, ռուսները՝ երեք, իսկ փառամուլ «խոխուլին» համոզելու համար, որ մայրենի լեզվով խոսի, առնվազն տասը տարի կպահանջվի:

Նա, ով մշտապես համառորեն խոսում էր ուկրաիններեն լեզվով, կարող էր հայտնվել «քաղաքականապես անբարեհույս» մարդու կարգավիճակում: Օրինակ՝ խորհրդային քննչական մարմինները մեծ վստահությամբ ու ըմբռնումով մոտեցան բանաստեղծ-այլախոհ Վասիլ Ստուսի հասցեին արված վկաներից մեկի հայտարարությանը. «ես միանգամից հասկացա,





**որ Ստույգ ազգայնամուլ է, որովհետև նա միշտ ուկրաիններեն էր խոսում»:**

Որքանով էր գործուն լեզվական ռուսացումը: Ուկրաինայում 1959-ից մինչև 1979 թ.-ը ուկրաիններենը մայրենի լեզու համարող ուկրաինացիների տեսակարար կշիռը նվազեց՝ 93,4 %-ից հասնելով 89,1 %-ի: Դեռ բոլորովին վերջերս, 2 մլն-ից ավելի ուկրաինացիներ ռուսներեն համարում էին մայրենի լեզու: Միևնույն ժամանակ՝ Ուկրաինայում բնակվող ռուսների երեքից միայն մեկն էր սովորում ուկրաիններեն խոսել: Դա նշանակում էր արդյոք, թե ուկրաինական մշակույթի կործանումը լուրջ ժամանակի խնդիր է: Եթե նման միտումները շարունակեին զարգանալ, ապա ուկրաիններեն լեզվի ապագան շատ տխուր գույներով կներկայանար: Հոռետեսները կանխագուշակում էին, որ ուկրաիններեն լեզուն կվերանա հենց այս հարյուրամյակի ընթացքում: Լավատեսները՝ հակառակը, մատնանշում էին, որ եթե ուկրաիններեն լեզվի նկատմամբ բազմադարյան հալածանքները չկործանեցին նրան, ուրեմն նա հետագայում էլ կապրի ու կհարատևի: Նրանք համարում էին, որ լեզվի վիճակն այնքան էլ վատ չէ, որքան որ թվում է: Եվ իսկապես՝ որոշակի տարածաշրջաններում, ինչպես Դոնեցկի արդյունաբերական շրջանում, խարկովի մարզում, Սև ծովի ափամերձ գոտում ուկրաիններենը գրեթե չի գործածվում: Սակայն, գյուղական վայրերից դեպի Կիև ուկրաինացիների անդադար հոսքը շնորհիվ, վերջին տարիներին ուկրաինայի մայրաքաղաքում մայրենի լեզուն զնալով ավելի մեծ տարածում է գտնում: Իսկ Արևմտյան Ուկրաինայում հիմա ուկրաիններենն ավելի շատ է տարածված, քան երկրորդ աշխարհամարտից առաջ: Այսպիսով՝ լեզվի խնդիրը, որ ուկրաինայում մշտապես կարևորագույն նշանակություն է ունեցել, դեռ շատ հեռու է իր վերջնական լուծումից:

**Ռուսներն Ուկրաինայում**

*Ուկրաինան ռուսականացնելու «հաջողված» եղանակներից մեկն էլ այն էր, որ ամեն կերպ խրախուսվում էր ռուսների ներգաղթն Ուկրաինա, և ուկրաինացիների արտագաղթը խՍՀՄ այլ շրջաններ:* Այդ քաղաքականությունն ընդհանուր առմամբ իրականացվում էր հանրապետությունների միջև «կադրերի արդյունավետ փոխանակում» ցուցանակի տակ: Այսպես՝ եթե մեծ թվով ռուսներ գալիս էին իրենց «ծիրք ու շնորհքով» Ուկրաինան հարստացնելու նպատակով, ապա Ուկրաինայից ոչ քիչ թվով բարձրակարգ մասնագետներ էլ մեկնում էին աշխատանքի խՍՀՄ այլ շրջաններ (որոնք, ի վերջո, որպես կանոն, ռուսացվում էին): Ժողովրդագրական այդ զանգվածային տեղափոխություններն իրականացվում էին խՍՀՄ ժողովուրդների իրար խառնելու և նրանց մեջ ընդհանրության զգացում մշակելու համար բարենպաստ պայմաններ ստեղծելու նպատակով: Արժե նշել, որ ընդհանրապես ռուսներն իրենց հանրապետությունից դուրս բնակվելու առանձնակի հակում ունեին: Փորձագետներն այդ առանձնահատկությունը բացատրում են ռուսական գյուղի հարաբերական աղքատությամբ և այն տարածված կարծիքով, որ *խորհրդային Միության ոչ-ռուսական շրջաններում ռուսները լավագույն աշխատատեղերն են ստանում:* Նրանք համար հատկապես նախընտրելի էր Ուկրաինան, որովհետև այստեղ կլիմայական բարենպաստ պայմաններ են, սոցիալ-տնտեսական և մշակութային զարգացման համեմատաբար բարձր մակարդակ և ամենակարևորը՝ ռուսներին ամենամոտ մշակույթն ու լեզուն:

Հասկանալի է, որ այդ «փոխատեղումների» արդյունքում Ուկրաինայում ռուս բնակչության քանակը կտրուկ աճեց: 1926 թ.-ին Ուկրաինայում 3 մլն ռուս էր բնակվում, 1959 թ.-ին նրանց քանակն հասավ 7 մլն-ի, իսկ 1979 թ.-ին՝ մինչև 10 մլն-ի: Ինչպես միշտ, ռուսները կենտրոնանում էին քաղաքներում՝ հատկապես Դոնբասում և Հարավում: 1980-ական թվականների ավարտին նրանք արդեն կազմում էին բնակչության 21 %-ից ավելին, իսկ բնակչության շրջանում նրանց ազդեցության տեսակարար կշիռը շատ ավելի բարձր էր:

Ռուսների սրընթաց աճն, իհարկե, միայն այդ «փոխատեղումների» քաղաքականության արդյունք չէր: Ուկրաինայում, այնպիսի ազգային փոքրամասնություններ, ինչպես՝ հրեաները, հույները, բուլղարները, ծուլվեցին ռուս ազգին: Ինչպես արդեն նշել ենք, նման երևույթներ նկատվում էին նաև ուկրաինացիների շրջանում: Այդ գործընթացն ավելի ծավալվեց ռուսների և ուկրաինացիների միջև ամուսնական կապերի բարձր տոկոսի շնորհիվ: 1970 թ.-ին, ամուսնությունների 20 %-ը (որոնցից՝ 30 %-ը քաղաքներում, 8 %-ը՝ գյուղերում) եթնիկապես խառն ամուսնություններ էին: Համեմատության համար նշենք, որ դարասկզբին, երբ ուկրաինացիներն ապրում էին համեմատաբար մեկուսացված գյուղերում, խառն ամուսնություններն ընդամենը 3 % էին կազմում:

Եթե երևույթը դիտարկենք հանրապետությունում ռուսական ներկայության բարձր ու

արագ աճի տեսանկյունից, ապա, հետևելով Ռոման Շպորյուկին, կարելի է խոսել երկու ուկրաինացիների մասին՝ «ռուսական» և «ուկրաինական»: Աշխարհագրական հասկացությամբ՝ առաջինն ընդգրկում է արդյունաբերական Դոնբասն ու Հարավի քաղաքները, տարածքներ, որ երբեք պատմական Ուկրաինայի մաս չէին կազմել: Միաժամանակ՝ այնպիսի շրջաններում, ինչպես Աջափնյակը, Արևմտյան Ուկրաինան, որ մշտապես բնակեցված են եղել ուկրաինացիներով, միշտ էլ գերիշխել են ուկրաիններեն լեզուն ու մշակույթը՝ հատկապես գյուղերում: Ի դեպ՝ «ռուսականի» և «ուկրաինականի» միջև գիծը կարելի է տանել նաև այլ հարթության վրա: Մեծ քաղաքների աշխարհը՝ քաղաքական, տնտեսական ու գիտական ընտրախափ, ընդհանուր առմամբ՝ արդիականացման ու առաջընթացի աշխարհը, հիմնականում ռուսալեզու էր: Գյուղական աշխարհը՝ կոլտնտեսությունների ու ժողովրդական ավանդույթների աշխարհը՝ հիմնականում ուկրաինալեզու էր: Այսպիսին էր իրավիճակը ցարիզմի օրոք: Խորհրդային իշխանությունն այդ իրավիճակը, առավել նուրբ ու կատարելագործված եղանակներով, պահպանում էր մինչև վերջին ժամանակներս:

Չնայած ռուսականացման քաղաքականությունն աննախադեպ խորամանկ ու ընդգրկում էր, բայց այն չկարողացավ կասեցնել ուկրաինական ազգի ձևավորման գործընթացը: Ընդամենը երկու սերունդ առաջ արևելյան ուկրաինացիների մեծ մասն իրեն կոչում էր «ռուսին», «խոխուլ» կամ «բնիկ»: Մեկ սերունդ առաջ, արևմտաուկրաինացիներից շատերն իրենց անվանում էին տարածքա-մշակութային եզրերով՝ լեմկո, հուցուլ կամ ռուսին: Նրանք երեխաներն ու թոռները հիմա իրենց ուկրաինացի են համարում: Նրանք հիմա արդեն այն տարատեսակ եթնիկ զանգվածը չեն, ինչպիսին էին դարասկզբին: Նույնիսկ այլ ազգությունների ներկայացուցիչներն են հիմա ուկրաինացի դառնում: Օրինակ՝ միաձուլվելու միտում են դրսևորում Ուկրաինայում բնակվող լեհերը: Տեղական հայրենասիրության զգացում է համալել արդեն մի քանի սերունդ այստեղ բնակվող ռուսներին:

Նույնիսկ քաղաքներում կենտրոնանալը չի կարելի այսուհետև դիտել որպես ապագայ-նացման տանող ուղի: Ուկրաինացի հետազոտող Վ. Վ. Պոկչիշևսկին գտնում է, որ քաղաքը նորեկներին ոչ միայն ծուլման (ռուսականացման) հոսանքի մեջ է նետում, այլև խթանում է «եթնիկ ինքնագիտակցության սրացումը»: Խոսելով Կիևում ուկրաինացիների քանակական աճի մասին, նա համարում է, որ ընդհանրապես ուկրաինացիների համար դա Կիևի գրավչության արդյունք է, և բացի այդ՝ «ուկրաինական ազգի հետագա համախմբման և եթնիկ ինքնագիտակցության ամրապնդման» հետևանք: Պոկչիշևսկին նշում է նաև. «Կարելի է ենթադրել, որ կիևցիների մի մասը, որոշ տատանումներից հետո, թե արդյո՞ք կարող են իրենց ուկրաինացի համարել, հենց այդպես էլ վարվեցին՝ դրանում բացարձակապես համոզված. խառն ամուսնություններից ծնված շատ երեխաներ նույնպես իրենց ուկրաինացի են համարում»:

Այսպիսով, ինչպես որ լեզվական խնդրի դեպքում, Ուկրաինան «միատարր» (հոմոգեն) դարձնելու Կրեմլի ջանքերը նույնպես վերջնական «հաջողության» չհանգեցրին:

**Սոցիալ-տնտեսական փոփոխություններ**

1960-ական թվականներին ուկրաինական հասարակությունը հսկայական սոցիալական փոփոխություններ կրեց: Տասը տարվա ընթացքում Ուկրաինայում քաղաքաբնակների թիվը հասավ 55 %-ի, իսկ դա նշանակում էր, որ ուկրաինացիների մեծ մասը դարձել էր քաղաքացի: Հետազոտողների հաշվարկների համաձայն, մինչև 2000 թ.-ը ուկրաինացիների 70 %-ը դառնալու է քաղաքաբնակ:

Քաղաքների արագ զարգացումը համաշխարհային երևույթ էր, և դրա ազդեցությունն ուկրաինացիների վրա ընդամենը ժամանակի խնդիր էր: Այդուհանդերձ, քանի որ Ուկրաինայի բնակչությունը միշտ էլ համարվել է մեծամասամբ գյուղաբնակ, իսկ նրա մշակույթը, աշխարհընկալումը, ազգային ինքնագիտակցությունը՝ խորապես գեղջկական, ապա հողագործների այդ հասարակությանը քաղաքային հասարակության վերափոխելը կարելի է մեծ փոխակերպում համարել:

Իսկ ի՞նչն ստիպեց ուկրաինացիներին լքել իրենց գյուղերն ու այդպես բազմությամբ քաղաքներ տեղափոխվել: Ընդհանուր առմամբ պատճառը նույնն էր, ինչ որ ամբողջ աշխարհում՝ աշխատանք գտնելու լայն հնարավորություններ, բարձրագույն կրթություն ստանալու միջոց, հանգիստն անցկացնելու ձևերի գրավիչ բազմազանություն, առավել հարմարավետ



կենցաղային պայմաններ: Ուկրաինացիների այդ հախուռն հոսքը հանրապետության քաղաքներ, հանգեցրեց նրան, որ ոչ-ուկրաինացի բնակչություն ունեցող բազմամյա բաստիոնները վերջապես դարձան ուկրաինական մեծամասնության կենտրոնացման վայր: Ամեն ինչից դատելով, ուկրաինական գյուղի և ռուսական (կամ լեհա-հրեական) քաղաքի միջև ավանդական երկվությունն աստիճանաբար վերանում էր:

Սակայն քաղաքաբնակեցման գործընթացն Ուկրաինայում իր ուշագրավ գծերն ուներ: Արագացված լինելով հանդերձ, այն թափը չուներ, ինչ խՍՀՄ մյուս շրջաններում: Այսպես՝ քաղաքաշինությունը Ռուսաստանում, որ 1970 թ.-ին հասել էր 62 %-ի, իր թափով համեմատելի էր ճապոնիայի և Գերմանիայի հետ, իսկ Ուկրաինայում նույն գործընթացն ավելի դանդաղ էր զարգանում և իր թափով ավելի մոտ էր Արևելյան կամ Հարավային Եվրոպային: Ընդ որում՝ աշխարհագրական առումով գործընթացն համաչափ չէր ընթանում: Դոնեցկի, Լուգանսկի, Դնեպրոպետրովսկի և Ջապրոոժնի արդյունաբերականացված (և ռուսականացված) շրջաններում այն չափազանց բարձր էր: Վերջին շրջանում սակայն, Ուկրաինայի արեւելքում՝ քաղաքաշինության թափը գնալով դանդաղում է, իսկ արևմտյան շրջաններում՝ հակառակը՝ արագանում: Նշանակալից է այն փաստը, որ այդ հողերի վաղեջյակն մշակը՝ ուկրաինացի գյուղացին, հիմա արագ թափով տեղափոխվում է քաղաք և դրանով իսկ կորցնում իր իսկական դեմքը:

Դեպքերի զարգացման նման ընթացքը, սոցիալականից բացի, ունի նաև գաղափարախոսական նշանակություն: Քանի որ ուկրաինական հասարակության մեջ գյուղացիության դերը նվազում է, անցյալ է դառնում նաև XIX դարի և XX դարասկզբի ուկրաինական գաղափարախոսության անկյունաքարը՝ նարոդնիկությունը և ժողովուրդ հասկացությունը, որ ավանդաբար պատկերանում էր որպես աղքատ ու ճնշված գեղջկական բազմություն, ուկրաինական քաղաքական մտածողության մեջ արդեն կենտրոնական դիրք չի գրավում:

### Տնտեսությունը

Ամուր միաձուլված լինելով խորհրդային Միության ժողովրդական տնտեսությանը, Ուկրաինայի տնտեսությունը սակայն տարբերվում էր զարգացման բավական բարձր մակարդակով: Բնական պաշարներով հարուստ, հզոր գյուղատնտեսություն և զարգացած արդյունաբերություն ունենալով հանդերձ՝ ի՞նչ էր իրենից ներկայացնում Ուկրաինան ամբողջ խորհրդային Միության հետ համեմատաբար: Ինչպես և սպասելի էր, նրա տնտեսությունն առավել, քան խՍՀՄ-ինն ամբողջությամբ, ուղղորդված էր դեպի գյուղատնտեսությունը: Իսկ արդյունաբերական ներուժը միութենական միջին ցուցանիշից որոշ չափով ցածր էր՝ արդյունաբերական հզոր շրջանների և բավական թույլ զարգացած արևմտյան շրջանների միջև եղած պատկառելի անհամաչափության պատճառով:

Ուկրաինայի արդյունաբերությունը տալիս էր համամիութենական արդյունաբերական արտադրանքի նշանակալի մասը՝ 17 %-ը: Համաշխարհային առումով՝ նույնպես արդյունաբերական կարևոր շրջան էր: Տալով ողջ խորհրդային Միության արտադրած պողպատի մոտ 40 %-ը, ածխի՝ 34 %-ը և թուջի՝ 51 %-ը, Ուկրաինան ազգային համախառն արտադրանքի ծավալով հավասարվել էր Իտալիային: Խորհրդային գիտնականները սիրում էին նշել, որ 1972 թ.-ին Ուկրաինայի արդյունաբերական արտադրանքի ծավալը 176 անգամ գերազանցում էր 1922 թ.-ի մակարդակը: Միանգամայն բնական է, որ Ուկրաինայի արդյունաբերությունը և՛ վերելքներ, և՛ անկումներ է ապրել: 1950-ական թվականներին և 1960-ականների սկզբին՝ արդյունաբերական հզոր վերելքի շրջանում, երբ աճն անմախաղեպ ցուցանիշների էր հասնում՝ տարեկան 11 %, գերազանցում էր միութենական միջին ցուցանիշները: 1970-1980-ականներին, երբ հանրապետությունում արդյունաբերական արտադրանքի աճը տարեկան 2-3 %-ով նվազում էր, նրա մակարդակն իջնում էր միութենական միջինից ցածր: Այդ ետաճի երևույթը սակայն, ավելի շատ կապված էր ածխարդյունաբերական և մետաղամշակման ու մետաղագործական գործարանների ու ձեռնարկությունների հնացած մեխանիզմների ու հետամնաց տեխնոլոգիաների հետ, մի երևույթ, որին ժամանակին առնչվել էին Ամերիկայի և Արևմտյան Եվրոպայի արդյունաբերական կենտրոնները:

Ուկրաինայում, ինչպես և ողջ խՍՀՄ-ում, տնտեսական զարգացման դանդաղումը անմախաղապ սրեց կապիտալ ներդրումների խնդիրը: Մոսկվայի պլանավորման մարմինները, որ սեռեցվել էին Սիբիրում կառուցվելիք արդյունաբերական հսկաների նախագծերի վրա, ամբողջովին ամոտեսել էին Ուկրաինայի շահերը: Շելեստի ժամանակ Ուկրաինայի տնտեսագետները հատկապես բարձրաձայն էին բողոքում կապիտալ ներդրումների նման անհամաչափ

փության դեմ, սակայն այդ բողոքը մնում էր որպես «ձայն բարբառո անապատի»: Իսկ Շչերբիցկին բոլորովին շահագրգռված չէր այդ խնդիրը բարձրացնելու, չնայած դա չէր նշանակում, թե այն գոյություն չուներ:

### Գյուղատնտեսությունը

Չնայած արդյունաբերությունը դարձել էր ուկրաինացիների զբաղվածության հիմնական ոլորտը, բայց նրանց երկիրը առաջվա պես դեռ մնում էր խորհրդային Միության շտեմարանը: Ուկրաինան այնքան հացահատիկ էր արտադրում, որքան Կանադան (ավելի արտադրում էին միայն ԱՄՆ-ն ու Ռուսաստանը), ավելի շատ կարտոֆիլ էր աճեցնում, քան Արևմտյան Գերմանիան և աշխարհում առաջինն էր՝ շաքարի ճակնդեղի արտադրությամբ: Իր տարածքում ունենալով խՍՀՄ բնակչության 19 %-ը, Ուկրաինան արտադրում էր գյուղմթերքների 23 %-ը: Սակայն, կառավարության վարած քաղաքականության պատճառով, հանրապետությունում հաճախ էր սենդամթերքի պակաս զգացվում:

Չզուտով հանրապետության գյուղատնտեսության բնագավառում բարձրացնել աշխատանքի՝ առանց այդ էլ բարձր արտադրողականությունը, կառավարությունը հսկայական միջոցներ էր ներդնում գյուղատնտեսական տեխնիկայի և պարարտանյութերի արտադրության մեջ: Սակայն խորհրդային գյուղատնտեսությանը շարունակում էին հետապնդել նրա մշտական ու հարատև խնդիրները: Բյուրոկրատական վերահսկողությունն ու խաթար վերակազմավորումներն ավելի շատ խառնաշփոթ էին առաջացնում, քան օգուտ էին տալիս: Չնայած կոլտնտեսականների աշխատավարձն «անշեղորեն» բարձրանում էր, սակայն նրանք առաջվա պես մնում էին սոցիալական սանդղակի ստորին աստիճանին, ինչն իհարկե չէր խթանում նրանց խանդավառությունն ու չէր մղում ավելի լավ աշխատելու պետության համար: Դրա փոխարեն նրանք գերադասում էին (ինչն հատկապես բնորոշ էր Ուկրաինային) իրենց ջանքերը կենտրոնացնել փոքրիկ տնամերձները (0,4 հա) մշակելու վրա: 1970 թ.-ի տվյալների համաձայն՝ այդ մասնավոր հատվածը, որը մշակովի հողատարածքների ընդամենը 3 %-ն էր կազմում, ապահովում էր համամիութենական մսի արտադրության 33 %-ը, կաթնամթերքի՝ 40 %-ը և ձվի՝ 55 %-ը: Ուկրաինայում տնամերձ հողամասերն ապահովում էին ընտանիքի ընդհանուր եկամտի 36 %-ը (Ռուսաստանում՝ 26 %-ը):

Գյուղատնտեսության բնագավառի խնդիրներից մեկն էլ շարունակում էր մնալ աշխատուժի արագ արտահոսքը դեպի քաղաքները: 1965 թ.-ին Ուկրաինայում գյուղատնտեսության մեջ զբաղված էր 7,2 մլն մարդ, 1975 թ.-ին այդ ցուցանիշն իջավ մինչև 6,4 մլն-ի, իսկ 1980 թ.-ին արդեն կազմում էր 5,8 մլն: Այսպիսով՝ ուկրաինական գյուղը, ուր կյանքը բավականին բարելավվել էր, այնուամենայնիվ գրկվում էր իր երիտասարդությունից, որը տեղափոխվում էր քաղաք: Շատ կոլտնտեսություններում աշխատողների հիմնական մասը կազմում էին տարեց կանայք, որոնք մեծ մասամբ զբաղվում էին ձեռքի աշխատանքով:

### Տնտեսական շահագործման խնդիրը

Ուկրաինայի տնտեսության պատմությանն առնչվող բանավեճերում մշտապես մի արտակարգ բարդ հարց էր գլուխ բարձրացնում. հանրապետությունը տնտեսապես շահագործվո՞ւմ է, թե՛ ոչ: Մի կողմից՝ խորհրդային իշխանության տարիներին Ուկրաինայի ձեռք բերած տնտեսական հսկայական վերելքն էր աչք շլացնում, մյուս կողմից՝ պարզորոշ երևում էր, որ Ուկրաինայի ներդրումները միութենական բյուջե ակնհայտորեն գերազանցում են այնտեղից եկող հատկացումները: Սակայն ռեժիմն համառորեն իրաժարվում էր իրապարակել վիճակագրությունը, որը լույս կսփռեր այդ ճշացող անարդարության վրա:

Խորհրդային առաջնորդներն ամեն կերպ տարփողում էին Ուկրաինայի տնտեսական աննախընթաց վերելքը, բայց և շեշտում, որ դա անհնար էր առանց այն հսկայական կապիտալ ներդրումների, տեխնիկական և տեխնոլոգիական օժանդակության, աշխատանքային միջոցների, որոնք նա ստանում էր խՍՀՄ «եղբայրական ժողովուրդներից», առաջին հերթին՝ ռուսներից: Դրանով նրանք ուզում էին ասել, որ հիմա էլ Ուկրաինայի հերթն է՝ տնտեսապես օժանդակելու խՍՀՄ մյուս՝ նվազ զարգացած շրջաններին: Այդ իսկ պատճառով, Մոսկվայի տեսանկյունից՝ խոսք անգամ չէր կարող լինել տնտեսական շահագործման մասին:

Արևմուտքի որոշ տնտեսագետներ այդ խնդրին այլ տեսանկյունից էին մոտենում: Նրանք, պարզ է, ընդունում էին, որ Ուկրաինան խորհրդային իշխանության օրոք տպավորիչ տնտեսական առաջընթաց է ապրել: Միաժամանակ չէին ժխտում, որ Մոսկվան հոգ է տանում նաև Միջին Ասիայի նման համեմատաբար աղքատ շրջանների, կամ բնական պաշարներով հա-



րուստ Սիբիրի մասին: Բայց նրանք համարում էին, որ *Ուկրաինան մշտապես ավելի շատ էր ներդրում, քան պարտավոր էր՝ ըստ ԽՍՀՄ-ում ունեցած իր տեսակարար կշռի*: Ամերիկացի տնտեսագետ Յոլանդ Յանթերն հավաստում է. «Ուկրաինայի ընթացիկ եկամուտը դուրս քաշելն ու ԽՍՀՄ-ով մեկ բաժանելը՝ ուկրաինական տնտեսության պատմության բնորոշ հատկանիշն է»: Բրիտանացի հետազոտող Պիտեր Ուայլզը հաշվարկել է, որ Ուկրաինան կանոնավոր կերպով մշտապես 10 %-ով ավել մուտք է արել միութենական բյուջե, քան այնտեղից ստացել է: Վոլոդիմիր Բանդերան ու Իվան Կորոպեցկին հաստատում էին, որ եթե Ուկրաինան բացարձակ ցուցանիշներով շարունակում էր առաջընթաց զարգացում ապրել, ապա Մոսկվայի և ԽՍՀՄ մյուս շրջանների, ինչպես նաև հարևան երկրների հետ համեմատած՝ տնտեսական առումով ետ էր մնում:

Անկախ շահագործման վերաբերյալ դիրքորոշումներից, այդ բանավեճերը լույս են սփռում այն կարևորագույն հարցի վրա, թե խորհրդային իշխանության օրոք ո՞վ էր որոշումներ կայացնում Ուկրաինայի տնտեսական զարգացման վերաբերյալ, և ո՞ւմ էր շահերն էին առաջին հերթին հաշվի առնվում: Հարցին այս տեսանկյունից մոտենալիս, պատասխանն համեմայն դեպս ինքնըստինքյան պարզ է դառնում. *Ուկրաինայի տնտեսության ճակատագիրը վճռվում էր Մոսկվայում, ուր Ուկրաինայի շահերը երբեք առաջնահերթ խնդիր չեն եղել*:

### Ժողովրդագրական պայմանները

Ուկրաինայի բնակչության աճի ընթացքը նոր ժամանակներում դրամատիկ փոփոխություններ կրեց: XIX դարավերջին և XX դարասկզբին Ուկրաինան բնակչության աճով Եվրոպայում առաջիններից մեկն էր: Այնուհետև ժողովրդագրական երկու աղետ տեղի ունեցավ. *1932-1933 թ.թ.-ների ընթացքում 3-6 մլն մարդ զոհվեց սովասպանդի ու ստալինյան ատարակչության հետևանքով, և մոտ 5,3 մլն զոհ խլեց երկրորդ համաշխարհային պատերազմը*: Այդպիսով՝ մեկ տասնամյակից էլ պակաս ժամանակում երկրի երեսից ջնջվեց Ուկրաինայի բնակչության մոտավորապես 25 %-ը (ընդ որում՝ մահացության աստիճանն հատկապես բարձր էր տղամարդկանց մոտ): 1980-ական թվականներին խորհրդային Միության մեջ բնակչության ամենացածր աճը Ուկրաինայում էր: Օրինակ՝ 1983 թ.-ին, հազար հոգու հաշվով այն կազմում էր ընդամենը 4 մարդ: Համեմատության համար ասենք, որ Միջին Ասիայում, ուր բնակչությունը շատ արագ էր աճում, այդ ցուցանիշը կազմում էր 25-30 մարդ: Եթե ժողովրդագրական նման միտումը փոփոխություն չկրի, սլավոնական բնակչության կազմում ուկրաինացիների քանակը խիստ կնվազի:

*Բնակչության դանդաղ աճի կարևոր պատճառներից մեկը ուկրաինացիների ապրած ժողովրդագրական աղետներն են: Փոքր դեր չունի նաև բնակչության հոսքը դեպի քաղաքները*: Բնակարանային բացարձակ վատ պայմանները, ինչպես նաև այն, որ կանայք լրիվ աշխատանքային օր անց են կացնում գործատեղերում, քաղաքաբնակ ուկրաինացիները գերադասում են ունենալ մեկ, ամենաշատը՝ երկու երեխա: Ուկրաինայում ժողովրդագրական իրավիճակը շատ բաներով նման է արևմտաեվրոպականին: *Բնակչության աստիճանական ծերացման և նրա դանդաղ աճի պատճառով մշտապես նվազում է ակտիվ աշխատողների թիվը և աճում թոշակառուների քանակը*: Սակայն Ուկրաինայում, ինչպես և ԽՍՀՄ-ում ընդհանրապես, ժողովրդագրական զարգացման մեջ կային նաև էական տարբերիչ հատկանիշներ: Զարգացած արդյունաբերություն ունեցող մյուս երկրների համեմատությամբ, խիստ հակադրություն էր նկատվում կյանքի միջին տևողության նվազման և մանկական մահացության աճի միջև: Փորձագետները դա բացատրում են այլոհուլիզմի լայն տարածմամբ՝ ինչպես տղամարդկանց, այնպես էլ կանանց շրջանում:

*ԽՍՀՄ մյուս շրջանների համեմատությամբ, Ուկրաինան ամենախիտ բնակեցված հանրապետությունն էր*: Եթե ԽՍՀՄ եվրոպական մասում միջին ցուցանիշը մեկ քառ. կմ-ի վրա 34 մարդ էր կազմում, ապա Ուկրաինայում այդ ցուցանիշը հասնում էր 82-ի: Դրա հետ մեկտեղ, *հանրապետության տարածքում բնակչությունն համաչափ չէր բաշխված*: Առավել խիտ են բնակեցված արևելյան շրջանները (որտեղ էլ բնակչության ամենաբարձր աճն է), ինչպես նաև Դրինն իր բուժիչ կլիմայով: Արևմտյան Ուկրաինայում բնակչության աճը մոտ է միջին ցուցանիշին, իսկ Աջ- և Ձախափնյակներում շատ ավելի ցածր է. այստեղ շրջաններ կան, որ բնակչությունը զնալով նվազում է: Սակայն *ժողովրդագրական իրավիճակն Ուկրաինայում ընդհանուր առմամբ բավարար է թվում*. 1989 թ.-ին, հանրապետության բնակչությունը, որ կազմում էր 51,7 մլն մարդ, այնքան քիչ չէր, որ կասեցներ տնտեսական զարգացումը, և այնքան շատ չէր, որ խեղդեր այն:

### Փոփոխություններ սոցիալական կառուցվածքում

Ինչպես տեսանք, *արդյունաբերականացումը, քաղաքաբնակեցումն ու արդիականացումը հիմնովին փոխեցին Ուկրաինայի ավանդական սոցիալական կառուցվածքը*: 1970 թ.-ին 16 մլն զբաղված բնակչության գրեթե երկու երրորդը արդյունաբերության բնագավառի աշխատողներն էին: *Մեկ սերնդի կյանքի ընթացքում բանվորները փոքրամասնությունից դարձան ճնշող մեծամասնություն*: Նրանք ոչ միայն քանակապես աճեցին, այլև էթնիկ կազմի առումով դարձան առավել ուկրաինական. եթե 1959 թ.-ին արդյունաբերության բնագավառում աշխատող ուկրաինացիները կազմում էին 70 %, ապա 1970 թ.-ին՝ 74 % էին: Ռուսներն արդեն շարքային բանվորների անհամաչափ մեծամասնությունը չէին կազմում: Ուկրաինայում, հատկապես վերջին տասնամյակներում, *զգալիորեն աճեց ծառայողների թիվը*: 1960-ից մինչև 1970 թ.-ը նրանց քանակը կրկնապատկվեց՝ 700 հազ.-ից հասնելով 1,4 մլն-ի: Սակայն այստեղ անհամեմատ մեծ թիվ էին կազմում ռուսները՝ բոլոր ծառայողների գրեթե մեկ երրորդը ռուսներ էին: Այսպիսով, համատարած կրթության աննախադեպ թռիչքը, որի հետևանքով Ուկրաինան բարձրակարգ մասնագետների թվով հավասարվեց (որոշ դեպքերում նույնիսկ գերազանցում էր) արևմտաեվրոպական երկրներին, ուկրաինացիներին՝ որպես ազգությամբ, սպասելի արդյունքը չբերեց: Հանրապետությունում կազմելով բնակչության 74 %-ը, Ուկրաինայի բոլոր բուհերի ուսանողների միայն 60 %-ն էր ուկրաինացի:

Իսկ ի՞նչն էր պատճառը, որ ուկրաինացիները քիչ էին և՛ բուհերում, և՛ տեխնիկական մտավորականության ու մշակույթի գործիչների միջավայրում: Արևմուտքի որոշ մասնագետների կարծիքով՝ քանի որ ուկրաինացի երիտասարդների մեծ մասը միջնակարգ կրթությունն ստանում էր գյուղական դպրոցներում, ուր ուսուցման որակը ցածր էր, բուհ ընդունվելիս նրանք անհավասար մրցակցության մեջ էին մտնում քաղաքներում ուսանած ռուսների հետ: Լրացուցիչ դժվարություն էր ստեղծում նաև այն հանգամանքը, որ բուհերում առարկաների մեծ մասը ռուսերեն լեզվով էր դասավանդվում, որին ուկրաինացի երիտասարդներից շատերը, հատկապես գյուղերից եկած, լավ չէին տիրապետում: Վերջապես, փոքր դեր չունեց նաև պետական քաղաքականությունը, որ խրախուսում էր հանրապետության մասնագետների արտահոսքը ԽՍՀՄ այլ շրջաններ (հաշվարկված է, որ այդպես էին վարվում մասնագետների մոտ 25 %-ը): Համապատասխանաբար, նվազում էր նաև բարձրագույն կրթություն ստացող նրանց երեխաների քանակը: Միաժամանակ, ուկրաինացի մտավորականների երեխաները, որոնք բարձրագույն կրթություն էին ստանում հանրապետությունից դուրս, հաճախ էին ուսակամանում:

### Կենսամակարդակը

Արդեն բազմիցս նշել ենք, որ խորհրդային Ուկրաինան բնական պաշարներով հարուստ, արդյունաբերական հզոր երկիր էր: Սակայն բնակչության կենսամակարդակով շատ ետ էր մնում արդյունաբերական այլ երկրներից: Իհարկե, շատ բարդ բան է կենսամակարդակների համեմատությունը: Ավտոմեքենաների, կենցաղային տեխնիկայի ու նորածն հագուստեղենի պակասը, որ խիստ զգուժ էին ուկրաինացիները, ինչ-որ չափով լրացվում էր անվճար կրթությամբ ու բժշկական սպասարկմամբ, ինչը որ պակասում էր հենց նույն ամերիկացիներին: Այնուամենայնիվ, ըստ արևմտյան տնտեսագետների մանրակրկիտ մշակված չափանիշների, ակնհայտ երևում է, որ խորհրդային տնտեսական համակարգն ի վիճակի չէր մարդկանց նյութական կարիքները բավարարել այնպես, ինչպես դա հաջողվում էր արևմուտքի տնտեսական համակարգին: Այսպես օրինակ՝ 1970 թ.-ին խորհրդային Միության բնակչի սպառողական մակարդակը կրկնակի ցածր էր, քան ԱՄՆ-ում: Այդ վիճակագրությունը հաշվի չէր առել խորհրդային Միությունում ապրանքի և մատուցվող ծառայության ընդհանուր ցածր որակը: Այլ կերպ ասած՝ շաքաթական սովորական սպառողական բանջրուղի համար Վաշինգտոնում պետք էր աշխատել 18 ժամ, իսկ Կիևում՝ 53 ժամ: *Չնայած ԽՍՀՄ-ում բնակարանի վարձն աշխարհում ամենացածրն էր, սակայն բնակարանային խնդիրն անլուծելի էր մնում*, և հաճախ մի ընտանիքի երեք սերունդ միասին ապրում էին երկսենյականոց բնակարանում: Նման իրադրության համար ժողովուրդը շատ բաներում պարտական էր Կրեմլի վարած քաղաքականությանը, որ ավանդաբար միջոցների առյուծի բաժինը ներդնում էր ծանր և պաշտպանական արդյունաբերության մեջ՝ անտեսելով լայն սպառման ապրանքների արտադրությունը: 1960-ական թվականներին և 1970-ականների սկզբին՝ տնտեսության տապալորիչ վերելքի շրջանում, դեռևս բարձր էր ժողովրդի լավատեսությունն ու հավատը, թե խորհրդային Միությունն ի վիճակի է հասնելու Արևմուտքի կենսամակարդակին: Բայց 1980-ական թվականներ



րին այդ լավատեսությունը մարեց, երբ խորհրդային տնտեսությունն սկսեց տեղում դռփել: *ԽՍՀՄ կազմում Ուկրաինան ժողովրդի կենսամակարդակով հիմնգրորդ տեղում էր՝ Ռուսաստանից և մերձբալթյան հանրապետություններից հետո: Ավելի* աշխատուժի առկայության պատճառով, այստեղ միջին աշխատավարձը համամիութենականից 10 %-ով ցածր էր: Սակայն գներն էլ համեմատաբար ցածր էին մնում: 1970-80-ական թվականների ընթացքում աշխատավարձի բնագավառում խորհուրդների վարած քաղաքականությունն օգտակար էր շատ ուկրաինացիների համար: Չգտելով կրճատել գյուղի և քաղաքի աշխատավորների աշխատավարձի միջև եղած տարբերությունը, կառավարությունը նկատելիորեն բարձրացրեց կոլտնտեսականների աշխատավարձը: Արդյունքում՝ 1960-ից մինչև 1970 թ.-ը նրանց աշխատավարձն աճեց 182 %-ով, այն դեպքում, երբ արդյունաբերության մեջ աշխատողներինը՝ միայն 38 %-ով: Ինչևէ, չնայած խորհրդային սպառողի վիճակը բարելավելու կառավարության բազում փորձերին, *խորհրդային սպառողն առաջվա պես առնչվում էր անորակ ապրանքի, վատ սպասարկման և բնակարանային անլուծելի դարձած խնդիրների հետ: Միջին ուկրաինացու կենսամակարդակը շատ ցածր էր մնում ոչ միայն Արևմտյան Եվրոպայի կամ Յուրասիային Ամերիկայի չափանիշներից, այլև Արևելյան Եվրոպայի կոմունիստական պետությունների բնակչի մակարդակից:*

### **Խորհրդային ուկրաինացիների հասարակական գիտակցությունը**

Ինչպիսի՞ն էր ուկրաինացիների վերաբերմունքը խորհրդային սոցիալ-տնտեսական և քաղաքական համակարգի նկատմամբ: Նման հարցին միշտ էլ շատ դժվար է եղել պատասխանելը, հատկապես այնպիսի հասարակության դեպքում, որտեղ բոլորովին վերջերս սկսեցին հրապարակել հասարակական կարծիքի հարցումների արդյունքները, որոնք, որպես կանոն, անց էին կացվում մանրազնին ընտրված թեմաների շուրջ: Սակայն՝ խորհրդային մամուլում հրապարակված բազմաթիվ հոդվածների ու բանավեճերի, ԽՍՀՄ-ից տարագիրների տված հարցազրույցների և այստեղ այցելած զբոսաշրջիկների պատմածների հիման վրա, կարելի է պատկերացում կազմել 1970-80-ական թվականներին խորհրդային ուկրաինացիների հայացքներն ու տրամադրությունները բնորոշող հիմնական հատկանիշների վերաբերյալ:

Ընդհանուր տպավորությունն այն էր, որ խորհրդային ուկրաինացիներից շատերը խորհրդային ռեժիմն ընդունում էին որպես օրինական իշխանություն և իրենց նույնացնում էին այդ իշխանության հետ: Պետության կողմից լրատվությունը մենաշնորհելու պատճառով, և շնորհիվ հզոր գաղափարական ազդեցության, նրանք լավագույն դեպքում աղոտ պատկերացումներ ունեին խորհրդային կարգերի կողմից «հեռավոր անցյալում» ուկրաինացիներին պատճառած ղժբախտությունների մասին: Նրանց մտածողությունը ձևավորելու գործում մեծ դեր էր խաղում այն իրողությունը, որ խորհրդային համակարգը բարձրացրել է իրենց կենսամակարդակը, սոցիալական խմբերի միջև որոշակի հավասարություն է հաստատել, բավականին բարելավել է սոցիալական ապահովության ոլորտը, հանրամատչելի է դարձրել կրթություն ստանալը, բազմաթիվ հնարավորություններ է ստեղծել կյանքում հաջողության հասնելու համար: Խորհրդային շատ ուկրաինացիներ հպարտանում էին ԽՍՀՄ-ի հզորությամբ ու հեղինակությամբ, որի մի կարևոր մասնիկն էլ իրենց էին համարում:

Հիմնականում դրական այս տեսակետների ու տրամադրությունների հետ զուգակցվում էին նաև բացահայտ կամ ներքին ղժգոհության տարրեր: Տնտեսական աճի դանդաղումը սրեց այն հարցը, թե ինչո՞ւ պետք է Միբիրն ու Միջին Ասիան առավելություններ ունենան ուկրաինայի նկատմամբ՝ ուկրաինայի հաշվին: Սղվեցին նաև սոցիալական զարգացման հնարավորությունները: Որոշումներ ընդունելու Մոսկվայի մենաշնորհի դեմ խուլ ղժգոհություն էր աճում տնտեսավարների, բյուրոկրատիայի և կուսակցական ղեկավարների շրջանում: Կրկին ռուսականացման դեմ ծայն բարձրացրեց ուկրաինայի մշակութային ընտրախավը: Համաձայն 1984 թ.-ի խորհրդային հասարակագիտական հետազոտությունների, ԽՍՀՄ-ում ղժգոհության ամենաբարձր աստիճանն ուկրաինայում էր: Թե ի՞նչն էր դրա պատճառը, գիտնականներն այդպես էլ չկարողացան որոշակի պատասխան տալ:

Խորհրդային ղեկավարությանը հատկապես անհանգստացնում էր ուկրաինայում, ինչպես և ԽՍՀՄ-ում ընդհանրապես, մարքս-լենինյան գաղափարախոսության նկատմամբ գնալով աճող անտարբերությունը: 1960-ականների սկզբին Արևմուտքի մտավորականությունն արդեն արդյունաբերական Արևմուտքում «գաղափարախոսությունների մահվան» և «հետգաղափարախոսական շրջանի» գալստյան խնդիրներն էր քննարկում: Հավանաբար, գաղա-

փարախոսական նման անկում տեղի էր ունենում նաև խորհրդային Միությունում: Իշխանություններն, հիարկե, հրաժարվում էին նման փաստն ընդունել, սակայն արևմտյան վերլուծաբաններն աշխատում էին բացատրություն տալ «ապագաղափարականացման» երևույթին: Նրանց հիմնավորումն համառոտ ձևով հետևյալն էր. XIX դարում և XX դարասկզբին ողջ Եվրոպան համակալած արդիականացման գործընթացն ուղեկցվում էր բուռն փոփոխություններով ու վերակազմավորումներով, ինչը շփոթվածության ու անկայունության զգացում էր ծնում: Գաղափարական վերլուծությունների, իրավիճակ մեկնաբանելու և զարգացման նոր ուղիներ փնտրելու անհրաժեշտություն առաջացավ: Սակայն արդիականացումը ժամանակի ընթացքում իր պտուղները տվեց. արդյունաբերական շրջանների սոցիալական կլիմայից դատելով, այն հարաբերական կայունություն բերեց: Արդյունքում՝ արագ փոփոխությունների շրջանում որպես ուղեցույց ծառայած գաղափարախոսության սուր կարիքն այլևս չէր զգացվում:

Ինչ էլ ուր լիներ, միանգամայն պարզ էր, որ չնայած «ուղեղների վազման» շարունակական գործընթացին, մարքսիզմ-լենինիզմի գործունե ազդեցությունը թուլանում էր: Իսկ ինչ վերաբերվում է ուկրաինական ազգայնականությանը, ապա այն, հատկապես իր ծայրահեղ, արմատական տարբերակով, տասնամյակներ առաջ արդեն ջնջվել էր ուկրաինացիների աշխարհայացքից: Այսպիսով՝ ուկրաինայի նորագույն պատմության երկու գլխավոր գաղափարախոսական ուղղություններն արդեն այնպիսի կարևոր դեր չէին խաղում նրա կյանքում, ինչպես առաջ էր:

Գաղափարական համոզվածությունն ու նվիրվածությունը մշտապես եղել են խորհրդային համակարգի առաջնային պահանջները, այդ իսկ պատճառով, հասարակության՝ հատկապես նրա մտավորական մասի համար, այդ զգացումների նվազումն իր հետ լավատեսության ու ակնկալիքի կորուստ էր բերում: Աշխատելով լրացնել այդ բացը, կառավարությունը կրկնապատկեց խորհրդային հայրենասիրության ոգով դաստիարակելու ճիգերը, բայց շատ շատերի համար, այդ հոգևոր և գաղափարական դատարկությունը լցնելու առավել հրապուրիչ ու հզոր միջոց դարձավ կրոնը:

Սակայն, բնակչության գերակշիռ մեծամասնության շրջանում աճում էր հակումը դեպի այն ամենը, ինչ Արևմուտքում կոչվում է միջին դասի արժեքներ, իսկ ԽՍՀՄ-ում անվանում էին «բուրժուական սպառողականություն»: Խորհրդային տեսաբանները նկատում էին, որ նոր հասարակություն կառուցելու կոչված երիտասարդությունը, որպես կանոն, ծագում է հեղինակավոր ու շահավետ պաշտոնների, գերադասում է ինժեների, գիտնականի ու բժշկի աշխատանքը և կտրուկ հրաժարվում է համալրել պրոլետարիատի շարքերը: Շատ երիտասարդներ էլ իրենց միտքն ու ջանքերն ուղղում էին միայն մի նպատակի՝ Արևմտյան բարձրակարգ ու նորածն ապրանք ձեռք բերելուն: Այնպես որ, խորհրդային երիտասարդության մեծ մասը բացարձակ չէր համապատասխանում «լենինյան գաղափարներին»:

## **Վերակառուցում**

Լեոնիդ Բրեժնևի մահով, 1982 թ.-ին, խորհրդային ղեկավարության գործունեության մեջ անցումային շրջան սկսվեց: Բրեժնևին փոխարինեց խելացի, խիստ ու բազմափորձ, ՊԱԿ-ի նախկին ղեկավար **Յուրի Անդրոպովը**, որը պատրաստ էր արմատական փոփոխություններ սկսելու: Սակայն երկու տարուց էլ պակաս մնալով իշխանության գլուխ, նա մահացավ և նրա տեղն զբաղեցրեց ծեր ու անզոր **Կոնստանտին Չեռնենկոն**՝ «հին գվարդիայի» «վերջին մոհիկանը», որը չէր ծառու, և չէր էլ կարող ԽՍՀՄ-ին օդի պես անհրաժեշտ բարեփոխումներ իրականացնել: Սակայն նա էլ, իշխանության գալուց հետո, շատ շուտ մահացավ: Խորհրդային զառամյալ առաջնորդների հաճախակի իրար հաջորդող թաղման «ճոխ» արարողությունները պարզորոշ ցույց տվեցին, որ անհրաժեշտ է իշխանության բերել եռանդուն ու վճռական, նորարարության ծագող ու կարող երիտասարդ ղեկավարների: Արդյունքում՝ 1985 թ.-ին կուսակցական վերնախավը երկրի բարձրագույն պաշտոնում առաջադրեց Անդրոպովի հովանավորյալ **Միխայիլ Գորբաչովին**: Նրա իշխանության գալով, գործունեության առաջին պլան մղվեց կուսակցական կառույցի երիտասարդ սերունդը: Խելամիտ, առավել զարգացած ու զործունյա Գորբաչովն ու իր համախոհները խորհրդային ղեկավարների առաջին սերունդն էին, որ Ստալինի օրոք չէին առաջադրվել:

Չնայած հասարակության ու կուսակցության մեջ խորապես արմատավորված պահպանո-



ղական ուժերի ընդդիմությանը, *Գորբաչովն սկսեց խորհրդային համակարգի վերակառուցումը, հատկապես՝ լճացած տնտեսության, հուսալով այն դարձնել առավել արդյունավետ, արտադրողական ու հզոր:* Իր նպատակներն իրագործելու համար *Գորբաչովն ընտրեց կառավարման նոր՝ «ժողովրդավարական» աշխատառժ, տպավորություն ստեղծելով, թե ավելի մոտ է կանգնած ժողովրդին, կոչ անելով հրապարակայնության ու բազմակարծության, բայց՝ սոցիալիստական համակարգի նախընտրության շրջանակներում:*

### **Չեռնոբիլ**

Նախքան գորբաչովյան բարեփոխումների դրսևորվելն Ուկրաինայում, այն ցնցվեց ահռելի չափեր և գլոբալ ազդեցություն ունեցող աղետից: *1986 թ.-ին պայթեց Կիևից 130 կմ հյուսիս տեղակայված Չեռնոբիլի հզոր ատոմային էլեկտրակայանի ռեակտորը:* Յվայական ռադիոակտիվ ամպը, որ անհամեմատ մեծ էր, քան Զիրոսիմայի ռեբակոնոմից առաջացած ամպը, արագորեն ծածկեց Չեռնոբիլի շրջակայքը, այնուհետև անցավ Բելոռուսիայի, Լեհաստանի ու Սկանդինավիայի տարածքների վրայով: *Աշխարհը բախվեց մի բանի հետ, ինչից անենաշատն էր վախենում՝ միջուկային աղետի:*

*Խորհրդային իշխանությունները, իրենց գործելու ձևին հավատարիմ, փորձեցին լուրջության մատնել աղետը, որը, ինչպես հետո պարզվեց, ռեակտորի անհաջող կառուցվածքի և կայանն սպասարկող անձնակազմի սխալների ու անփութության հետևանք էր: Երբ հետագա լուրջությունն անհնարին դարձավ, Մոսկվան խոստովանեց վթարի իրողությունն ու տեխնիկական օգնության համար դիմեց արևմտյան մասնագետներին:* Խորհրդային ինժեներներին հաջողվեց հանգցնել ռեակտորի իրոնեհն ու այն ամփոփել հսկայական «սարկոֆագում»: Խորհրդային աղբյուրների տեղեկատվության համաձայն, աղետի հետևանքով 35 մարդ է զոհվել (արևմտյան շատ մասնագետներ համարում են, որ զոհերի թիվը շատ ավելին է եղել), մի քանի հարյուր հոգի հոսպիտալացվել են, իսկ բարձր չափաբաժնով ճառագայթահարված հարյուր հազարավոր մարդկանց մոտ մեծացել է քաղցկեղով հիվանդանալու վտանգը: Մոտավորապես 135 հազ. մարդ (մեծ մասամբ չեռնոբիլյան շրջանի ուկրաինացիներ) ստիպված էին լքել իրենց բնակավայրերը, որոնց մեծ մասը՝ ընդմիջտ: Չեռնոբիլից մինչև Լապլանդիա ընկած ընդարձակ շրջանները երկարաժամկետ բնապահպանական հսկայական վնաս կրեցին:

1970 թ.-ից, երբ Չեռնոբիլում սկսվեց ատոմակայանի շինարարությունը, Ուկրաինայում Մոսկվայի որոշմանն ընդդիմացողներ կային, որոնք *անմտություն էին համարում էներգետիկ պաշարներով հարուստ հանրապետությունում ատոմակայան կառուցելը, այն էլ՝ Կիևին այդքան մոտ:* Արդյունքը եղավ այն, որ գնալով ծավալվեց դժգոհությունը Մոսկվայի ինքնակամ, անպատասխանատու որոշման դեմ, որով *Ուկրաինայի վզին փաթաթվեց «դանդաղ գործողության ռումբը»:* Բացի այդ, վկայություններ կան, որ աղետն ուժեղացրեց լարվածությունը Ուկրաինայի և միութենական կուսակցական ղեկավարության միջև, որոնք աղետը միայնակ վրա էին բարդում: Ամեն դեպքում, միանգամայն պարզ էր, որ *Մույնիսկ Չեռնոբիլից հետո Մոսկվան չէր պատրաստվում փոխել իր ծրագրերը՝ նպատակ ունենալով հանրապետությունը դարձնել զարգացող միջուկային էներգետիկայի կենտրոն:* Այդպիսով, *Կրեմլի և ուկրաինացիների միջև դիմակայության մի նոր աղբյուր էին դառնում բնապահպանական խնդիրները:*

### **Գորբաչովյան հրապարակայնությունը և Ուկրաինան**

Արդեն բացահայտ երևում էր, որ Մոսկվայում, չնայած կուսակցական-պետական համակարգում դեռևս ծանրակշիռ պահպանողականների լուրջ ընդդիմությանն ու հասարակության կասկածամիտ վերաբերմունքին, գորբաչովյան բարեփոխումները ճանապարհ են հարթում, հատկապես՝ մշակույթի բնագավառում: *Հիմնական թերթերն արդեն արտացոլում էին բացխոսության ու ինքնաքննադատության նոր տրամադրությունները.* հանրահայտ «Օգոնյոկ» ամսագիրը նոր խմբագրի՝ ուկրաինացի բանաստեղծ *Վիտալի Կորոտիչի* գլխավորությամբ, անդադար քարկոծում էր Ստալինի պաշտամունքը և սուր քննադատության էր ենթարկում բյուրոկրատիայի ու միլիցիայի չարաշահումները, սկսեցին հրատարակվել բացահայտ հակախորհրդային հայացքների տեր ռուս բանաստեղծները, «ТІАМЯТЬ» հասարակական կազմակերպությունը, որ հակամարքսիստական անհաշտ դիրքերից ռուսական ազգայնականություն ու հակաիրեություն էր քարոզում, հետապնդման ու հալածանքի չէր ենթարկվում:

Այս ամենի համեմատությամբ, *Ուկրաինայում «նոր հովերի» դրսևորումները շատ ավելի*

*հազվադեպ էին ու մեղմ:* Ուկրաինացիների շրջահայացությունն ու զուլուծությունը կարելի է հասկանալ: Կիևը դեռ մնում էր մոլի պահպանողական, ԽՍՀՄ ԿԿ Զաղբյուրություն բրեժնևյան ռեժիմից «պահպանված» միակ բեկորի՝ Շչերբիցկու, «պապենական կալվածքը»: Դրա հետ մեկտեղ, ուկրաինական ՊԱԿ-ը դեռևս պահպանում էր ԽՍՀՄ-ում «ամենապատժիչ» կազմակերպության համբավը: Եվ վերջապես, *ուկրաինական մտավորականությունը դեռևս շատ լավ էր հիշում, թե 1960-ականների խրուշչևյան բարեփոխումներին ի՞նչ խանդավառությամբ հավատաց, և ի՞նչ դաժանությամբ պատժվեց:*

Չնայած բոլոր այս կասեցող գործոններին ու մտավախություններին, մտավորականությունը շարժվեց դեպի բարեփոխումները: *1987 թ.-ի աշնանը Կիևում հիմնվեց Ուկրաինական մշակութաբանության ակումբ:* Հիմնադիրներից շատերը նախկին այլախոհներն էին, որոնք քաղաքական այնպիսի սուր խնդիրներ, ինչպես ասենք՝ 1932-1933 թ.թ.-ների սովասպանող, Քրիստոնեության հազարամյակն Ուկրաինայում, 1917-1920 թ.թ.-ների պայքարը հանուն անկախության և այլն, քննարկումների առարկա դարձնելով, ձգտում էին շոշափել հրապարակայնության սահմանները:

Լվովում, որը բարձր ազգային գիտակցություն ունեցող արևմտյան ուկրաինացիների կենտրոնն էր, հրապարակայնությունն առավել լայն ու եռանդուն աջակցության արժանացավ: 1988 թ.-ի հունիս-հուլիս ամիսներին այստեղ կառավարության կողմից չթուլատրված և իրենց բազմամարդությամբ նախադեպը չունեցող միտինգներ տեղի ունեցան: Ցույցերի ժամանակ, որ կազմակերպում էին նախկին այլախոհներ *Չոռնովիլը, Գորին եղբայրները, Իհոր և Իրինա Կալինցեները* և նոր սերնդի գործիչ *Իվան Սակարը*, Լվովում Տարաս Շևչենկոյի արձանը և ստալինյան զոհերի հիշատակին հուշակոթող կանգնեցնելու պահանջներ էին հնչում: Այդ գործիչները ելույթներ էին ունենում նաև կուսակցական բյուրոկրատների դեմ, որոնք Լվովից իրենք իրենց էին ընտրել Մոսկվայում պատրաստվող Համամիութենական XIX կուսկոնֆերանսի պատգամավոր: Նրանք բացահայտ խոսում էին նաև ուկրաինացիների նկատմամբ իրականացված և կատարվող ազգային բազմաթիվ ճշումների մասին: Լվովի ՊԱԿ-ը այս ամենին արձագանքեց սովորական ձևով. միտինգների ու ցույցերի կազմակերպիչները մեղադրվեցին «հակախորհրդային գործունեության» մեջ և նրանցից մի քանիսը ձերբակալվեցին: Դա մի ավելորդ անգամ ապացուցեց, որ ուկրաինացիները ճշմարիտ ժողովրդավարության հասնելու համար, դեռ երկար ճանապարհ ունեն անցնելու:

Դրանից առաջ ՌԽՍՀՄ պետականամետ Գորդների միության ներկայացուցիչները (որոնք ըստ էության կոչված էին պահպանելու ուկրաիններեն լեզուն) բախվեցին Շչերբիցկու շրջապատի պահպանողականների հետ՝ ռուսակամացման և ուկրաիններեն լեզվի օրինակաբանության հարատև խնդրի կապակցությամբ: 1986 թ.-ի հունիսին, ուկրաինացի մի խումբ գրողներ, որոնց թվում՝ *Օլես Յոնչարը, Դմիտրո Պավլիչկոն, Իվան Դրաչև* ու *Սերիյ Պլաչինդան*, բացահայտ դատապարտեցին դպրոցական ծրագրերից ուկրաիններեն լեզուն աստիճանաբար դուրս մղելու գործընթացը, իսկ Գորդների միությունը, ուսումնական հաստատությունների հետ կապը մշտապես պահելու համար, հատուկ համաձայնագրով ստեղծեց: 1987 թ.-ի ապրիլին ՌԽՍՀՄ Լուսավորության նախարար Մ. Ֆոմենկոն վիատեցնող, բայց լրիվ կանխատեսելի հաշվետվություն ներկայացրեց համաձայնագրով, ըստ որի՝ Ուկրաինայում 15 հազ. ուկրաինական դպրոց էր գործում, այսինքն՝ հանրապետության դպրոցների 75 %-ը, միևնույն ժամանակ, հանրապետության 4,5 հազ. ռուսական դպրոցներում, որ ընդհանուր թվի 22 %-ից էլ քիչ էին կազմում, սովորում էին աշակերտների ընդհանուր թվի կեսից ավելին: Առավել անբնական վիճակ էր Կիևում, ուր 300 հազ. աշակերտներից ուկրաիններեն լեզվով կրթություն էին ստանում միայն 70 հազ.-ը:

Այս վիճակագրությունը սակայն, կուսակցական գործիչներին չանհանգստացրեց: Իսկ Շչերբիցկին, ընդհանրապես բավականին յուրօրինակ ձևով մեկնաբանեց խնդիրը, հույս հայտնելով, որ աղետներն լեզվի գործածումը չի նվազելու: Ընդհանուր առմամբ, տպավորություն էր ստեղծվում, որ Ուկրաինայի կուսակցական «վերնախավը», որ գորբաչովյան որոշ նորամուծությունների նկատմամբ արդեն ընկալունակ էր դարձել, չի էլ շտապում ազգային հարցի հետ կապված իր դիրքորոշումը փոխել:

Այսպես էին, իմիջիայլոց, ուկրաինացիները ոտք դնում վերակառուցման չորրորդ տարվա շեմին:



Այն ժամանակաշրջանը, որն հետագայում կոչվեց «լճացման տարիներ», իսկապես էլ՝ քաղաքական գորշության, անհավատության, կեղծիքի ու հարմարվողականության մի իսկական հաղթարշավ էր: Քաղցկեղի արագությանը տարածվելով, այդ վարակված օղը պատրաստ էր թափանցել ու լափել խորհրդային ամբողջ ժողովրդին: Հսկայական, ժանրաշարժ ու անճոռնի կայսերական թափանիվն իր պտույտները կատարում էր իներցիայով միայն, սպառելով վերջին պաշարներն ու... ինքն իրեն: Սակայն նա դեռևս ի վիճակի էր ճխլել յուրաքանչյուրին, ով իր հետ համաձայն չլիներ: Եվ այդ իրադրությունն այնպես էր արմատացել մեծամասնության գիտակցության մեջ, որ թվում էր, թե ոչ մի ուժ ի վիճակի չէ այն տեղաշարժելու:

Նման իրավիճակում, եթե նույնիսկ հնարավոր էր որևէ փոփոխության հույս ունենալ, ապա՝ միայն վերևներից: Հենց վերևից էլ հետևեցին այդ փոփոխությունները: Տոտալ համակարգից սերված ու բռնապետական գաղափարներով դաստիարակված «վերակառուցման ճարտարապետները» դժվար թե ծրագրեին հեռուն գնալ «փոխել՝ ոչինչ չփոխելով» դարերով գործող սովորական բանաձևից: Բայց մեծ մասամբ ցուցադրական բարեփոխումներն իսկապես անկանխատեսելի ու դժվար վերահսկելի հետևանքներ ունեցան, ինչպես երկրի ներսում, այնպես էլ միջազգային առումով: Այդպես լեռներում բարձրագույն բառը կարող էր հսկա ձնահյուսի պատճառ դառնալ:

Սկզբնական շրջանում «վերակառուցման» ոգևորությունը, որ տարածվեց ու ընդգրկեց կենտրոնը, դեռևս կուռ կայսրության ծայրամասերում քիչ էր զգացնել տալիս: Սկզբում ուկրաինացիները, դատելով արմատացած իրենց կասկածամտությամբ, միայն հետևում էին մոսկովյան ժողովրդավարների ու պահպանողականների՝ մամուլով ու հեռուստատեսությամբ ընթացող ճակատամարտերին: Սակայն բարեփոխումների կարոտ ժողովուրդը կամաց-կամաց սկսում էր շարժվել: Դրա հետ միասին, ուկրաինացիները մի բան հաստատ գիտեին՝ քանի դեռ Շչերբիցկին է իշխանության գլուխ, ուկրաինայում ոչ մի բան տեղից չի շարժվի: Սակայն Մոսկվան, որ շատ կարճ ժամանակում փոխեց բոլոր հանրապետությունների ղեկավարներին, դեռևս դանդաղում էր: Եվ, ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, իզուր չէ, որ դանդաղում էր:



## ԱՐՏԱԳԱՂԹ

XX դարում միլիոնավոր ուկրաինացիներ լքեցին իրենց հայրենիքը՝ օտար երկրներում բախտ որոնելու հույսով: Շատերին դրան էր մղում սոցիալ-տնտեսական վիճակը: Հսկայական թվով արևելյան ուկրաինացիներ գաղթեցին, կամ էլ վերաբնակեցվեցին Ռուսական կայսրության, իսկ հետագայում՝ Խորհրդային Միության, ասիական մասում, և նրանց չի կարելի տարագիրներ համարել՝ այդ բառի ընդունված իմաստով: Ի հակադրություն նրանց, արևմտյան ուկրաինացիները գնում էին դեպի Արևմուտք՝ դեպի Նոր Աշխարհ, որտեղ նրանք դեմ էին առնում ոչ միայն անծանոթ երկրի, այլև բուրժուական ուրիշ քաղաքական, տնտեսական, սոցիալական ու մշակութային պայմանների: Հատկապես նրանց նկատմամբ կարելի է կիրառել «ուկրաինական տարագիրներ» հասկացությունը: Բազմաթիվ ուկրաինացիներ լքում էին իրենց հայրենիքը նաև քաղաքական պատճառներով: Չցանկանալով ճանաչել խորհրդային իշխանությունը, նրանք գերադասում էին արտագաղթը: Աշխատանքային ու քաղաքական արտագաղթն ուկրաինացիների երեք տարբեր ալիքներ առաջացրեց, որոնք մինչև այժմ էլ նրանց օտար ափեր են տանում:

### Առաջին ալիքը. մինչև 1914 թ.-ի արտագաղթը

Ուկրաինացիները, որ Նոր Աշխարհ էին գաղթել մինչև 1914 թ.-ը, մեծամասամբ փորձում էին բարելավել իրենց սոցիալ-տնտեսական վիճակը, որ ծայրահեղ ծանր էր հայրենիքում: Դրան հասնում էին երկու հնարավոր ճանապարհներից մեկով: Մեծ մասը Միացյալ Նահանգներ էին գալիս՝ մեծ քաղաքներում կամ նրանց շրջակայքում անձրևից հետո սնկի պես աճող ֆաբրիկաներում ու հանքավայրերում աշխատանք գտնելու: Հիմնականում դրանք չափազանց քիչ էին, որոնք մտադիր էին բավականին դրամ կուտակել, որպեսզի վերադառնան հայրենի գյուղ, անհրաժեշտ հողատարածք ձեռք բերեն և տնտեսությամբ զբաղվեն: Սակայն, ժամանակի ընթացքում ԱՄՆ-ում կյանքի հեռանկարները շատերի համար դառնում էին ավելի հրապուրիչ, քան հայրենիք վերադառնալը: Իսկ երբ գաղթեցին նաև ուկրաինուհիները, ուկրաինական համայնքները սկսեցին արագորեն աճել ԱՄՆ-ի հյուսիս-արևելյան շատ քաղաքներում:

Ուկրաինական առաջին տարագիրների մյուս խումբը նրանք էին, ովքեր լքում էին իրենց երկրամասերը, հույս ունենալով գյուղատնտեսությամբ զբաղվել այն երկրներում, որտեղ հողն էժան էր ու մատչելի: Հենց սկզբից էլ այս տարագիրները, որ գալիս էին ամբողջ ընտանիքներով, պատրաստվում էին ընդմիշտ բնակություն հաստատել իրենց նոր հայրենիքում: Քանի որ նման հողերը, որպես կանոն, գտնվում էին չբնակեցված շրջաններում, ինչպես օրինակ՝ Բրազիլիայի կամ Կանադայի խորքերում, այդ տարագիրները ստիպված էին ուժասպառ անող պայքարի մեջ մտնել բնության հետ:

### Արտագաղթ դեպի ԱՄՆ

Առանձին ուկրաինացիներ Ամերիկայում հայտնվել էին XIX-XX դարերի սահմանագծի առաջին զանգվածային արտագաղթից դեռևս շատ առաջ: Ուկրաինական անունների կարելի է հանդիպել Ջեյմսթաունի և Վիրջինիայի գաղթավայրերի հիմնադիրների կամ ամերիկյան հեղափոխության ու քաղաքացիական պատերազմի մասնակիցների շրջանում: Երբ Ռուսաստանն իր գաղթավայրերը հիմնեց Ալյասկայում ու Կալիֆոռնիայում, նրանց բնակիչների թվում կային ուկրաինացի կոզակներ ու քաղաքացիական անձինք: Այնուամենայնիվ,



Ամերիկայում ազգայնորեն գիտակից առաջին ուկրաինացու հայտնվելը սովորաբար կապում են Կիևի նահանգի ուղղափառ քահանա, Շևչենկոյի հետ անձամբ ծանոթ, հեղափոխական հայացքների տեր *Սհապիա Յոնչարենկոյի* անվան հետ: 1867-1872 թ.թ.-ներին այդ յուրօրինակ, արկածախնդիր խառնվածքի տեր անձնավորությունը *«Այասկայի լրաբեր»* թերթի խմբագիրն էր, *ամերիկյան առաջին թերթի, ուր հրատարակվում էին նյութեր Ուկրաինայի և նրա բնակիչների մասին*: Հետագայում Յոնչարենկոն շատ հայտնի դարձավ Կալիֆոռնիայում, որտեղ XX դարի սկզբին փորձեց հիմնել ուկրաինական սոցիալիստական գաղութ: Մյուս բավականին փայլուն դեմքը *Միկոլա Սուժիլովսկի-Ռուսսելն էր*, Կիևի բժիշկ ու հեղափոխական, որը 1880-ական թվականներին ապրել է Կալիֆոռնիայում և հետագայում տեղափոխվել Հավայիի նահանգ, որտեղ դարձել է տեղական սենատի նախագահ: Նա նույնպես փորձում էր ուկրաինացիներին հրապուրել իր նոր հայրենիքով:

Սակայն ԱՄՆ եկած ուկրաինացի տարագիրների առաջին մեծ խումբը զգալիորեն տարբերվում էր իրենց փայլուն նախորդներից: *Դրանք հիմնականում ամենաարևմտյան ու ամենաքիչ զարգացած ուկրաինական տարածաշրջանների՝ Անդրկարպատների և Լեմկովչինայի գյուղացիներ էին*: Ծովերից անդին գտնվող կիսաառասպելական երկրի մասին լուրերն առաջին անգամ անդրկարպատցիներին ու լեմկերին էին հասցրել նրանց արևմտյան հարեվանները՝ սլովակները, հունգարներն ու լեհերը: 1877 թ.-ին հնարավորություն ընձեռնվեց ստուգելու այդ առասպելների ճշմարտացիությունը: Փենսիլվանիայի ածխային ընկերությունը բախվելով գործադուլներին, վճռեց որպես շտրեյկբրեյտներ (գործադուլը վիժեցնող բանվորներ) օգտագործել Ավստրո-հունգարական կայսրության աղքատ տարածաշրջանների էժան աշխատուժը: Երբ ընկերության գործակալները երիտասարդ լեմկերին ու անդրկարպատցիներին Ամերիկա տեղափոխվելու դրամ առաջարկեցին (այդ գումարը հետագայում աշխատավարձից պահելու պայմանով), բավականին մեկնել ցանկացողներ հայտնվեցին: Իսկ երբ փող աշխատելու զնացածներից սկսեցին դրամական տպավորիչ փոխանցումներ և հուսադրող լուրեր (հաճախ ընկերության գործակալների կողմից չափազանցված) գալ, դեպի Ամերիկա արտագաղթը զանգվածային բնույթ կրեց:

Իր անթիվ նախորդների ու հետնորդների նման, երիտասարդությունը, որ երկար, դժվարին և ուժասպառ անող ճանապարհ էր անցել՝ Ամերիկա հասնելու համար, շուտով սկսեց հասկանալ, որ *այդ երկիրը ոչ միայն լայն հնարավորություններ է ընձեռնում, այլև պահանջում է լարված ու հոգնատանջ աշխատանք*: Սկզբնական շրջանում նորեկների մեծ մասն աշխատանքի էր տեղավորվում Արևմտյան Փենսիլվանիայի հանքահորերում ու մետաղամշակման գործարաններում, և այդ շրջանը դարձավ ուկրաինական վաղ ժամանակների տարագրության միջուկը: Մյուսներն աշխատանք էին գտնում Նյու-Յորքի, Նյու-Ջերսիի, Կոննեկտիկուտի, Օհայոյի, Իլինոյսի ֆաբրիկաներում:

*Սկզբում շատ դժվար էր. նախկին գեղջուկները դեմ էին առնում մի երկրի, որ օտար էր, զարմանալի, և անհասկանալի լեզու ուներ*: Եռուզեռով լի, անսովոր ու անհրապույր քաղաքների մի աշխարհ էին ընկել, որտեղ ստիպված էին աշխատել հսկայական ու աղմուկոտ, մշտապես շարժվող մեխանիզմների շրջապատում: Մինչև առաջին համաշխարհային պատերազմը, ֆաբրիկայի կամ հանքահորի բանվորի միջին աշխատավարձը կազմում էր 1-2 դոլար՝ 9-10-ժամյա աշխատանքային օրվա դիմաց: Հարկադրված էին ապրել ընկերության գերբնակեցված օբևանատներում կամ կահավորված սենյակներում: Քանի որ առաջին տարագիրների նպատակը մի քանի հարյուր դոլար կուտակելն ու հնարավորինս շուտ բուն վերադառնալն էր, նրանք սահմանափակում էին իրենց նույնիսկ ամենամահրաժեշտ բաներում, նվազագույն դրամ ծախսելով միայն ուտելիքի ու հագուստի վրա: Շատերին, իհարկե, գայթակղում ու դեպի իրենց էին ձգում պանդոկները, սակայն, ընդհանուր առմամբ, ուկրաինացի տարագիրները տնտեսապես ինքնաբավ ու օրինապահ էին: Տարագիրների այլ համայնքների համեմատությամբ, նրանց մեջ ամենաքիչ տոկոսն էին կազմում բարեգործության կարիք ունեցողներն (0,04 %) ու օրինախախտման մեջ մեղադրվողները (0,02 %), այն դեպքում, երբ վերջիններն իռլանդացիների մոտ կազմում էին 4 %, գերմանացիների մոտ՝ 1,8 %, լեհերի մոտ՝ 1 %:

Ամերիկայում առաջին տարագիրների մնալու ժամանակավոր բնույթը նկատելիորեն ազդում էր ամերիկյան հասարակության նկատմամբ նրանց վերաբերմունքի վրա. նրանք քամահարանքով էին նայում անզլերեն լեզուն սովորելուն, քիչ էին շփվում ամերիկացիների հետ, չէին ձգտում ամերիկյան քաղաքացիություն ստանալու, գործնականում չէին հետաքրքրվում Ամերիկայի քաղաքական կյանքով: Մեծ մասամբ նրանց հետաքրքրությունները

կապված էին հայրենիքի հետ: Սակայն, տարագրության աճին զուգընթաց տեղի էին ունենում նկատելի փոփոխություններ: Ավելի ու ավելի շատ տարագիրներ էին որոշում ընդմիշտ մնալ Ամերիկայում: Միևնույն ժամանակ Ուկրաինայից այստեղ սկսեցին գաղթել մեծ թվով ուկրաինուհիներ, չնայած նույնիսկ 1905 թ.-ի վերջին նրանք կազմում էին տարագիրների ընդամենը 25-30 %-ը: Սովորաբար նրանք որպես սպասուհիներ էին աշխատում ուկրաինական կամ լեհական հրեաների ընտանիքներում: Ավելի ուշ նրանցից շատերն աշխատանք էին գտնում կարի ֆաբրիկաներում: *Ընտանիքներ կազմելու, իրենց ամուսինների ու հայրերի մոտ կանանց ու երեխաների գալու հետ, ուկրաինական համայնքների կյանքն ԱՄՆ-ում բնականոն հունի մեջ էր ընկնում*:

Առավել ձեռներեց տարագիրները համայնքի ներսում կենցաղսպասարկման համակարգ էին ստեղծում՝ բացելով նպարեղենի ու մսամթերքի ոչ մեծ խանութներ, կահավորված սեն-



*Ուկրաինական տարագիրները ԱՄՆ-ում:  
(Հյուսիսային Դակոտայի նահանգ, XIX դարավերջ)*

յակներ: Ամենաշահութաբեր գործը պանդոկներ պահելն էր. նրանց տերերը համարվում էին համայնքների ամենահարուստ ու ամենաազդեցիկ անդամները: Սակայն, ընդհանուր առմամբ, *ուկրաինացիները փող աշխատելու բազմազան ու բազմատեսակ հնարավորություններից ընտրում էին ձեռքի աշխատանքը*: Դա նաև զարմանալի չէ, քանի որ նրանց մեծ մասն այլ ունակություններ ու հմտություններ չուներին: Օրինակ, 1905 թ.-ին՝ տարագրության զարգացման տարի, երբ ԱՄՆ էին գաղթել 14,5 հազ. ուկրաինացի, նրանցից միայն յոթն ունեին բարձրագույն կրթություն (չորսը քահանա էին), 200-ը որակյալ բանվորներ ու արհեստավորներ էին, մնացածը՝ գեղջուկներ ու որակավորում չունեցող բանվորներ: Շատ քչերն էին զբաղվում աշխատանքի ու կապիտալի մեծ ներդրումներ պահանջող ֆերմերությամբ: Բացառություն էին կազմում միայն *չտուճողիստները*՝ բողոքականների աղանդ, որ գաղթել էր Արևելյան Ուկրաինայից 1890-ական թվականներին և բնակություն հաստատել Վիրջինիայում ու Հյուսիսային Դակոտայում:

*Առաջին աշխարհամարտից առաջ ԱՄՆ-ում ուկրաինացիների ճշգրիտ թիվը պարզելը բավականին դժվար է*: Հաշվումներին խանգարում է այն հանգամանքը, որ տարագիրների մի մասը բազմակի անգամ գնում էր իրեն հայրենիք ու կրկին գալիս: Քանի որ շատ ուկրաինացիներ կրթություն չունեին, իսկ ազգային ինքնագիտակցության մակարդակը ցածր էր, ամերիկյան ներգաղթյալի ժառանգություններն ու զրագիրները նրանց հաճախ զրանցում էին այն պետության անունով, որտեղից նրանք ժամանել էին՝ ավստրիացիներ, կամ հունգարներ: Որոշ մասն իրեն նույնացնում էր ավելի հայտնի ու կայացած խմբերի հետ, օրինակ՝ սլո-



վակների հետ: Բացի այդ, քանի որ արևմտյան ուկրաինացիների ավանդական անվանումը ռուսին էր, նրանց հաճախ անվանում էին ռուսներ՝ առանձնապես չխորանալով այդ տարբերության մեջ: Ամեն դեպքում, հաշվարկների մեծ մասը հանգում է նրան, որ ուկրաինացիների ընդհանուր քիվն ԱՄՆ-ում, 1914 թ.-ի շեմին կազմում էր **250-300 հազ.** *մարդ*: Դրանց մոտավորապես կեսը լեմկեր ու անդրկարպատցիներ էին, որոնք գաղթել էին 1880-1890-ական թվականներին, մյուս կեսը գալիցիացիներ էին, որոնք զգալի քանակությամբ գաղթել սկսեցին հաջորդ տասնամյակներում: Միասին վերցրած, նրանք մի կաթիլ էին ամբողջ աշխարհից 1861-1914 թ.թ.-ներին ԱՄՆ գաղթած տարագիրների 25 միլիոնանոց ծովում:

### Տարագիրների հոգևոր կյանքը


Ուկրաինական գյուղում հոգևոր և հասարակական կյանքի կենտրոնը միշտ եղել է եկեղեցին: Գյուղական կյանքի բոլոր կարևոր իրադարձությունները՝ կնուները, հարսանիքը, թաղումը, տոների մեծ մասը, ուղղակիորեն կապվում էին կրոնի հետ: Գալով ԱՄՆ, ուկրաինացիները սուր կերպով զգում էին իրենց եկեղեցու բացակայությունը. առանց եկեղեցու կյանքը նրանց թվում էր անհիմաստ, միապաղաղ ու գորշ: Այդ պատճառով էլ *ուկրաինացի տարագիրների հասարակական կյանքի կազմակերպման առաջին ձևերը դարձան եկեղեցիներն ու ծխական համայնքները*:

Աստծուն և իր դավանակից եղբայրներին ծառայելու համար 1884 թ.-ին Փենսիլվանիա ժամանեց Գալիչինայի ջերմեռանդ քահանա, հայր **Իվան Վոլյանսկին**: Մի տարվա ընթացքում Շենանդո քաղաքատիպ ավանում նա կառուցեց ուկրաինական առաջին եկեղեցին: Նրա աջակցությամբ Կենտրոնական Փենսիլվանիայում մի քանի ծխական համայնքներ ստեղծվեցին: Շուտով նրան միացան Գալիչինայից ու Անդրկարպատներից ժամանած նորանոր քահանաներ: XIX դարի վերջին և XX դարի սկզբներին ուկրաինական համայնքներում մեծ թափ առավ եկեղեցաշինությունն ու ծխական համայնքների ստեղծումը, ինչը Վատիկանին ստիպեց Ֆիլադելֆիայում 1907 թ.-ին ստեղծել հունա-կաթոլիկական թեմ, որի առաջին եպիսկոպոս նշանակեց գալիցյան վանական **Ստեփ ֕րտինսկուն**: 1913 թ.-ի շեմին Ամերիկայի հունա-կաթոլիկական թեմն ուներ 152 ծխական համայնք, 154 քահանա և մոտ 500 հազ. ծխական:

Եկեղեցիները ոչ միայն հասարակական կյանքի կենտրոններն էին, այլև սուր վիճաբանությունների ասպարեզ, որոնք ծագում էին արդեն ամերիկյան հողի վրա: Առաջին տարագիրների համար «եկեղեցական քաղաքականությունը» իրոք քաղաքականության միակ ձևն էր, որում նրանք կարող էին և ցանկանում էին մասնակցել: Գլխավոր խնդիրը, որն ավելի սրվեց հենց Օրտինսկու նշանակումից առաջ, հունա-կաթոլիկական եկեղեցու տարագիր հավատավորների և համարյա ամբողջությամբ իռլանդացիներից կազմված հռոմեա-կաթոլիկական եկեղեցու նվիրապետության միջև լարված հարաբերություններն էին: Անտեսելով հունա-կաթոլիկական ծիսականության առանձնահատկությունը և արհամարհանքով վերաբերվելով արևելյան բոլոր եվրոպացիներին, հռոմեա-կաթոլիկական եպիսկոպոսները հաճախ էին բարդացնում նրանց կյանքը: Հունա-կաթոլիկական ծխականներն էլ, հրաժարվում էին իրենց նոր եկեղեցիները ժամասացության համար հռոմեա-կաթոլիկական եպիսկոպոսներին տրամադրելուց: Դրա հետևանքով լինում էին եկեղեցական երկար դատավեճեր, ոստիկանական ուժերով եկեղեցիներից ծխականների բռնի արտաքսում, տեղական հուզումներ և երկկողմանի անառողջ հարաբերությունների հետագա խորացում:

Հունա-կաթոլիկական քահանաները հռոմեա-կաթոլիկական նվիրապետությունից բողոքելու լրացուցիչ պատճառ ունեին: Քանի որ հռոմեա-կաթոլիկական եկեղեցու քահանաներին, ի տարբերություն հունա-կաթոլիկականի, չէր թույլատրվում ամուսնանալ, եպիսկոպոսները ամուսնացած քահանաներին որպես օրինական հովվապետներ չէին ճանաչում: Ինչպես ցույց է տալիս *Ալեքսիս Տոֆի* հետ պատահած դեպքը, կուսակրոնության (չամուսնանալու) վերաբերյալ հակասությունը շուտով անդրադարձավ և՛ հունա-, և՛ հռոմեա-կաթոլիկական եկեղեցիների վրա:

Աստվածաբանության պրոֆեսոր, բոլորի կողմից սիրված ու հարգարժան քահանա, այրի Տոֆը 1889 թ.-ին ժամանեց Միննեսոտայի, որպեսզի դառնա տեղի հունա-կաթոլիկական ծխական համայնքի հովվապետ: Սակայն, քանի որ նա մի ժամանակ ամուսնացած էր եղել, հռոմեա-կաթոլիկական եկեղեցու եպիսկոպոսը չհաստատեց նրա նշանակումը և վտարեց եկեղեցուց: Վերականգնվել չկարողանալով և չհանդավելով, որ ժամանակին Հռոմի կողմից ճանաչված իրենց հավատի բյուզանդական վաղեմի ավանդույթները անտեսվում են, Տոֆը և իր 365 ծխականները 1891 թ.-ին վճռական քայլի դիմեցին՝ ընդունեցին ուղղափառությունը:





Հաջորդ տասնամյակների ընթացքում տասնյակ հազարավոր լեմկեր, անդրկարպատցիներ ու գալիցիացիներ, խրախուսվելով Ամերիկայում լավ ապահովված ռուսական ուղղափառ առաքելության կողմից, անցան ուղղափառության, իսկ Ալեքսիս Տոֆն այդ երկրում հայտնի դարձավ որպես «ուղղափառության հայր»:

Ուղղափառության հովանու տակ անցումը ազգային-էթնիկական լուրջ հետևանքներ ունեցավ ուկրաինա-ռուսական տարազիրների համար: Քանի որ շատերը ծագումով Ուկրաինայի թույլ զարգացած ու մեկուսացված շրջաններից էին, ինչպես օրինակ՝ Անդրկարպատներից, նրանք ընդհանուր առմամբ աչքի չէին ընկնում ուկրաինական ազգային ինքնագիտակցության զգացումով: Ինչպես և Հին Աշխարհում, նրանց հոգևորականության միջավայրում գերակշռում էր ռուսասիրությունը: Արդյունքում, երբ անգրագետ ռուսիներն անցան ԱՄՆ-ի ռուսական ուղղափառ եկեղեցի, նրա նվիրապետները մեծ հաջողությամբ նրանց համոզում էին, որ իրենք ռուսներ են: Հիմա, երբ էթնիկական հարցը դարձել է ավելի ծանրակշիռ, այդ կեղծ ռուսների ամերիկացի դարձած սերունդները ի վիճակի չեն բացատրելու, թե ինչո՞ւ են իրենց «ռուսական արմատները» ծլարծակում ուկրաինական հողում:

### Գալիցիա-Անդրկարպատյան երկպառակություն

Եվս մի լուրջ տարածայնություն ծագեց եկեղեցական կյանքում՝ գալիցիացիների ու անդրկարպատցիների պառակտման հետևանքով: Անդրկարպատները, որ մինչև 1918 թ.-ը Հունգարիայի տիրակալության տակ էր, մյուս բոլոր արևմտաուկրաինական տարածաշրջաններից ամենաուշն ընկավ գալիցյան ուկրաինական ազգային շարժման ազդեցության տակ: Սկզբնական շրջանում, Անդրկարպատներից եկած տարազիրները և ավելի ուշ նրանց միացած գալիցիացիները հիմնում էին ընդհանուր եկեղեցիներ և միասնական համայնքներ, քանի որ իրենց միացնում էր լեզուն, սովորույթները, հունա-կաթոլիկական հավատը և ավանդական «ռուսինական» ինքնագիտակցությունը: Սակայն աստիճանաբար նրանց հոգևորականների մեջ հակասություններ էին հասունանում:

Սկզբում կռվախնձոր դարձավ պայքարը՝ ավելի շահավետ ծխական համայնքների համար: Այնուհետև կրակի վրա յուր ավելացրեց գալիցիացի Օրտինսկուն եպիսկոպոս օծելը, ինչը զայրացրեց անդրկարպատյան հոգևորականությանը և նրանց դրոշեց թշնամական գործունեություն ծավալել ինչպես նրա, այնպես էլ գալիցիացիների դեմ ընդհանրապես: Ձգտելով Օրտինսկուց հեռու պահել իրենց ծխականներին, անդրկարպատյան հոգևորականությունն ամեն կերպ չափազանցում էր անդրկարպատցիների ու գալիցիացիների միջև տարբերությունները: Քանի որ նրանց մրցակիցներն ազգայնորեն ակտիվ ուկրաինացիներն էին, ուստի և հարձակումների գլխավոր թիրախը դարձավ ուկրաինական ազգային շարժումը: Օրտինսկուն ու գալիցիացիներին մեղադրում էին նրանում, որ նրանց ավելի շատ հուզում է ոչ թե հոգևոր, այլ ազգային խնդիրները: Նրանց բնորոշում էին որպես ռուսինական ավանդույթների դավաճաններ, քանի որ նրանք իրենց անվանում էին այլ կերպ՝ ուկրաինացիներ: Ավելին, անդրկարպատյան պահպանողական և կատապալան հոգևորականությունն իրենց ծխականներին զգուշացնում էր, որ գալիցյան քահանաները, որպես կանոն, մասնակցություն ունենալով հասարակական կյանքին, անաստված են և սոցիալիստ-արմատականներ:

Իրենց կողմից, գալիցյան քահանաներն անդրկարպատյան գործընկերներին մեղադրում էին ավելի շատ հունգարական շահերին հետամուտ լինելու, քան թե սեփական ժողովրդի հոգսերի մասին մտահոգվելու մեջ: Եվ իրոք էլ. անդրկարպատյան հոգևորականությունը տանը գործածում էր հունգարերեն լեզուն, հաճախ այն հնչում էր նաև ժամասացությունների ժամանակ: Մի քանիսը շարունակում էին դրամ ստանալ բուդապեշտյան կառավարությունից, նույնիսկ ԱՄՆ տեղափոխվելուց հետո: Շատերը բացահայտ համագործակցում էին հունգարական կառավարության հետ, աշխատելով կանխել ուկրաինական ազգային ինքնագիտակցության տարածումը անդրկարպատյան տարազիրների մեջ: ԱՄՆ-ում նույնպես, ինչպես և Հին Աշխարհում, այդ պառակտիչ գործունեության հիմքում ընկած էր այն գաղափարը, թե ռուսիները գալիցիացիներից տարբերվող առանձին ազգ են:

Իր շարքերից եպիսկոպոս օծել չկարողանալով, անդրկարպատյան հոգևորականությունը Վատիկանին դիմեց՝ հունա-կաթոլիկական էլի մեկ թեմ ստեղծելու պահանջով: Նրանք պնդում էին, որ «չեն հանգստանա, քանի դեռ եկեղեցական միասնության մեջ են գալիցյան ուկրաինացիների հետ»: Մտադրություն ունենալով վերացնելու երկպառակության պատճառը, Վատիկանը բավարարեց նրանց պահանջը: 1916 թ.-ին նա ստեղծեց առանձին թեմ, որի կենտրոնը Պիտսբուրգում էր, և որին տվեց Բյուզանդական ռուսինական կաթոլիկ եկեղեցի

անվանումը: 1924 թ.-ին այն ուներ 155 եկեղեցի, 129 քահանա և 290 հազ. ծխական: Այդ ընթացքում ֆիլարեյֆիական թեմը դարձավ Ուկրաինական կաթոլիկ եկեղեցու հիմքը, որն ուներ 144 եկեղեցի, 129 քահանա և մոտ 240 հազ. ծխական: Այսպիսով, անդրկարպատյան-գալիցյան պառակտումն օրինականացվեց և կազմակերպական ձևեր ստացավ:

Պառակտումից տասնամյակներ անց էլ անդրկարպատյան եկեղեցին դեռևս անվճռակա-նության մեջ էր այն առումով, թե ազգային ո՞ր կողմնորոշումն ընտրի: Ելք չգտնելով, որոշեց ընդհանրապես շրջանցել այդ խնդիրը: Արդյունքում, այժմ նա կորցրել է ազգային դեմքը և փորձում է իր հավատացյալներին բնութագրել հիմնականում որպես հունա-կաթոլիկական (բյուզանդական) արարողակարգի հետևորդներ: Սակայն անդրկարպատյան-գալիցյան համարյա հարյուրամյա վաղեմություն ունեցող երկպառակության հետևանքները զգացվում են և այսօր, այն դեպքում, երբ Անդրկարպատների բնակչությունն իրեն համարում է ուկրաինացիներ, նրանց հեռավոր եղբայրներն ԱՄՆ-ում առաջվա պես պնդում են, որ «կարող են լինել ամեն ոք, միայն թե՛ ոչ ուկրաինացիներ»:

Այդ հոգևոր երկպառակության հետևանքով Արևմտյան Ուկրաինայի առաջին տարազիրների մոտ 20 %-ն իրենց անվանում էին ուղղափառ «ռուսներ», 40 %-ը՝ հունա-բյուզանդական կաթոլիկներ՝ ռուսիներ, մնացած 40 %-ը՝ հունա-կաթոլիկ ուկրաինացիներ:

### Միաբանություններ

Հիմնելով իրենց եկեղեցիները, ուկրաինացի տարազիրները բախվեցին իրենց ամենօրյա գործնական պահանջմունքները բավարարելու համար հասարակական կազմակերպություններ ստեղծելու անհրաժեշտությանը: Առաջնահերթ խնդիրը դարձավ թեկուզև նվազագույն սոցիալական պաշտպանության միջոցների ստեղծումը: Հանքահորերում ու ֆաբրիկաներում աշխատանքը հոգնեցուցիչ էր և ոչ անվտանգ, աշխատանքային օրը՝ չափից դուրս երկար, իսկ աշխատավարձը, ամերիկյան հասկացողությամբ՝ շատ ցածր: Տարածված երեվույթներ էին դժբախտ պատահարները, վնասվածքների ու մասնագիտական հիվանդությունների ծեռք բերումը: Միաժամանակ, ոչ հիմնարկությունները, և ոչ էլ կառավարությունը հոգ չէին տանում աշխատունակությունը կորցրածների և նրանց ընտանիքների մասին: Այդ պատճառով էլ, տարազիրների մեջ սկսեցին հայտնվել փոխօգնության կազմակերպություններ՝ միաբանություններ:

Ամենամայա համեստ անդամավճարների հաշվին այս կազմակերպությունները ապահովագրում էին մարդկանց՝ հիվանդանալու, աշխատունակությունը կորցնելու կամ մահվան դեպքերի համար: Բացի այդ, դրամական միջոցների աճի և անդամների թվի մեծանալու համեմատ, նրանք սկսեցին հոգ տանել նաև իրենց անդամների մշակութային ու կրթական պահանջմունքները բավարարելու մասին: Տարազիրները ձգտում էին անդամագրվել այդ միաբանություններին ոչ միայն սոցիալ-տնտեսական նկատառումներով. այստեղ հավաքվում էին մայրենի լեզվով խոսող «յուրայինները»: Ի տարբերություն եկեղեցիների, միաբանությունները կապված չէին Հին Աշխարհի հետ, նրանք Ամերիկայում տարազիրների կյանքի նոր պայմանների ծնունդ էին:

Փոխօգնության ուկրաինական առաջին միաբանությունն Ամերիկայում 1885 թ.-ին կազմակերպել է սբ. հայր Վոլյանսկին: Մի քանի տասնյակ մարդկանցից կազմված այդ միաբանության գլխավոր նպատակը՝ մահացած ընկերների թաղման համար միջոցներ հանգանակելն էր: Երբ Վոլյանսկին մեկնեց Գալիչինա, միաբանությունը կազմալուծվեց: Հետագայում այդպիսի միաբանություններ առաջացան ամբողջ Փենսիլվանիայով մեկ: 1892 թ.-ին կազմավորվեց «Հունա-կաթոլիկական ռուսինական միաբանությունների միությունը», որը շատ արագ զգալի ծավալվեց իր հասավ: Սակայն այն ամբողջապես էլ ընկավ հունգարամետ անդրկարպատյան հոգևորականության ազդեցության տակ և թշնամական դիրք գրավեց ազգայնորեն գիտակից ուկրաինացիների նկատմամբ:

Փոխօգնության զուտ ուկրաինական միաբանություն ստեղծելու նախաձեռնությամբ հանդես եկավ Գալիչինայից եկած երիտասարդ, եռանդուն ու վճռական յոթ քահանաներից կազմված խումբը, որը հայտնի է «Ամերիկյան երամ» անունով: Գալիցյան մտավորականության գործունյա ոգով լեցուն, նրանք դարձան իրենց ինքնավարության համար հունա-կաթոլիկական եկեղեցու պայքարի կազմակերպական միջուկը: Այդ խմբի անդամներից երկուսը՝ Իվան Կոստանտինովիչն ու Հրիտորի Գրուշկան, 1894 թ.-ին հիմնեցին «Ռուսիական ժողովրդական միություն» փոխօգնության միաբանությունը, որի կենտրոնը Ջեքսոն-Սիթիում էր: 1915 թ.-ին այն վերանվանվեց «Ուկրաինական ժողովրդական միություն»: Մեր օրերում, 85 հազ. անդամ



ունեցող այդ միութունը ուկրաինացիների ամենախոշոր ու ամենահարուստ հասարակական հոգևոր կազմակերպությունն է արտերկրում:

Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ ուկրաինական արտագաղթն Ամերիկա զգալիորեն քաղաքականացվեց: 1914 թ.-ին երկու հիմնական կազմակերպությունները՝ «Միացյալ Նահանգների ուկրաինացիների ֆեդերացիան» և նրանց մրցակից «Ամերիկայի ուկրաինական դաշնակցությունը», իրենց հայրենակիցների՝ պատերազմի հետևանքով գաղթածների, համար հավաքեցին զգալի գումար: Ավելի ուշ՝ 1919 թ.-ին, «Ուկրաինական ժողովրդական միությունը» սերտորեն համագործակցում էր ուկրաինական ազգային տարբեր կառավարությունների հետ՝ անգլերեն լեզվով հրատարակելով ուկրաինական խնդիրն վերաբերող նյութեր, ինչպես նաև ջանք չէր խնայում ԱՄՆ-ի Սպիտակ տանն ու կոնգրեսին համոզելու՝ ճանաչել Ուկրաինայի անկախությունը:

### Արտագաղթ դեպի Բրազիլիա

Ակերում ուկրաինացիներին Բրազիլիան թվում էր ամենագրավիչ վայրը: 1895 թ.-ին, երբ Գալիչինայում հայտնվեցին իտալական շոգենավային ընկերության գործակալներ՝ էժան և բերրի հողեր խոստանալով Բրազիլիայում, սկսվեց իսկական «բրազիլական տենդ»: Ճանապարհի ընկած մոտ 15 հազ. հողագուրկ գեղջուկներ, որոնք շատ աղուտ պատկերացում ունեին՝ թե ինչ երկիր է Բրազիլիան և որտեղ է այն գտնվում: Սակայն, տեղ հասնելով, խոստացած սևահողի փոխարեն նրանք ստացան այնպիսի հողաբաժիններ, որոնք գտնվում էին Պարանայի նահանգի Պրուտենդոպոլսի մերձակայքի անանցանելի ջուրհեղեղներում:

Բախտի քմահաճույքին թողնված, վնասակար կլիմայից տառապելով, բախվելով թշնամաբար տրամադրված հնդկացիներին և, ինչն ամենից վատն է՝ բուժօգնությունից բացարձակապես զուրկ, գաղթելուց շատ չանցած շատերը մահանում էին: Մնացածները փորձում էին տնտեսություն ստեղծել վայրի բնության հետ անդուլ պայքար մղելով: Սակայն, չնայած այս բոլոր դժվարություններին, էժան հողի երազանքը շարունակում էր գալիցիացիներին Բրազիլիա ձգել: Առաջին աշխարհամարտը սկսվելուց առաջ, Պարանայի նահանգ եկավ ուկրաինացի գաղթականների նոր ալիք՝ թվով 15-20 հազ. մարդ: Այնուամենայնիվ, երբ լայնորեն հայտնի դարձավ ԱՄՆ-ի և Կանադայի շատ ավելի բարենպաստ պայմանների մասին, տարագիրների հոսքը դեպի Բրազիլիա կտրուկ նվազեց: Միջպատերազմական շրջանում այստեղ փոխադրվեցին ընդամենը 9 հազ. մարդ, հիմնականում՝ Վոլինից: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո նրանց միացան ևս 7 հազ.-ը: Շատերը նրանցից, իհարկե, հետագայում փոխադրվեցին Դյուսիսային Ամերիկա: Ներկայումս Բրազիլիայում հաշվվում է մինչև 150 հազ. ուկրաինացի: Նրանցից մոտ 80 %-ը հավաք կերպով ապրում են Պարանայի նահանգում, «բրազիլական Ուկրաինա» կոչվող շրջանում: Ուկրաինական կյանքի կենտրոնը Պրուտենդոպոլսի քաղաքն է: Բրազիլիայում ուկրաինական ամենաազդեցիկ հաստատությունը Ուկրաինական կաթոլիկ եկեղեցին է, որն ունի 17 ծխական համայնք և 52 քահանա:

Վերջին ժամանակներս, այստեղի ուկրաինացիների շրջանում մեծացել է բիզնեսում, կրթության ոլորտում և ժամանակակից այլ մասնագիտությունների մեջ զբաղվածների թիվը: Սակայն բրազիլական ուկրաինացիներից շատերը, ինչպես և նրանց առաջին գաղթական նախնիները մնում են աղքատ ֆերմերներ: Այս հարաբերական լճացման առումով, սփյուռքում ապրող ուկրաինացիների մեջ նրանք եզակի երևույթ են: Մշակելով անբերրի հողերը, լավ եկամուտներ բերող աշխատանքի չձգտելով, ապրելով հետամնաց, մեկուսացած շրջաններում, ուկրաինացի ֆերմերները գատված են բրազիլական տնտեսության առաջավոր սեկտորից: Նրանք շարունակում են ապրել այնպիսի գյուղերում ու տներում, որոնք շատ քիչ են տարբերվում նրանցից, որոնցում ապրում էին իրենց նախնիները: Չնայած նրանց 90 %-ը ծնվել են արդեն Բրազիլիայում, սակայն ուրիշների հետ չչփվելու և համայնքված ապրելու հետևանքով պահպանել են իրենց մայրենի լեզուն: Շատ առումներով, նրանց գյուղական համայնքները հիշեցնում են XIX դարի գալիցյան «հրոմադաները»:

### Արտագաղթ դեպի Կանադա

Եթե Բրազիլիան հիասթափեցրեց, ապա Կանադան, ժամանակի ընթացքում և հսկայական ջանքեր գործադրելուց հետո, գերազանցեց ուկրաինացի գաղթականների բոլոր սպասելիքները: Նրա ընդարձակ տափաստանները Գալիչինայի ու Բուկովինայի հող փնտրող գյուղացիների բաղձանքի առարկա դարձան: Կանադայում առաջին ուկրաինացի գաղթականներ են համարվում խիզախ ու ձեռներեց Իվան Պիլիպիվն ու Վասիլ Ելենյակը: 1891 թ.-ին նրանք

բնակություն հաստատեցին Արևմտյան Կանադայում: Գալիչինա վերադառնալով, Պիլիպիվը հարազատ Նեբիլիվ գյուղի 6 ընտանիքի համոզեց փոխադրվել Կանադա: Արդյունքում, 1892 թ.-ին «Նեբիլիվյան խումբը» հիմնեց առաջին ուկրաինական մշտական բնակավայրը Էդնա-Սթարում՝ կանադական Ալբերտայի նահանգում, Էդմոնտոնի մերձակայքում:

Սակայն ուկրաինացիների գանգվածային արտագաղթը դեպի Կանադա սկսվեց հիմնականում պրոֆեսոր-գյուղատնտես, ուկրաինական նարոդնիկ Յոսիպ Օլենկիվի շնորհիվ: Գյուղացիության ճակատագրի բարելավման սևեռում գաղափարով համակված, 1895 թ.-ին նա եկավ Կանադա, որպեսզի անձամբ հետազոտի այդտեղի կյանքի պայմանները: Տեսնելով, թե ինչպիսի հնարավորություններ է ընձեռնում գյուղացիներին Կանադայի արևմուտքը, Օլենկիվը հրատարակեց հանրամատչելի գրքույկների մի ամբողջ շարք, որոնք լայն տարածում ստացան: Դրանցում գյուղացիներին հորդորում էր ետ կանգնել Բրազիլիա գաղթելու մտքից և կոչ էր անում փոխադրվել Կանադա: Նրա գործունեությանը աջակցում էր կանադական կառավարությունը: Կանադայի ներքին գործոց մասխարար Քլիֆորդ Սիֆտոնը սաստիկ զարմացած էր վայրի տափաստանները յուրացնելու աշխատանքի ուկրաինացիների ունակությամբ. «Ես կարծում եմ, որ ոչխարի մորթուց բուրբ հազած աժդահա գյուղացին, որ ծնվել է հողագործ-նախնիների տաս սերունդ ունեցող մի երկրում, իր աժդահա կնոջ և մի դյուժին երեխաների հետ, հենց այն է, ինչ մեզ պետք է»: Դեռ 1895-ին, այստեղի կյանքը վարդագույն երանգներով նկարագրող հիացական մամակներն ու շոգենավային ընկերությունների գործակալների տարածած խրախուսիչ լուրերը նպաստեցին տափաստաններում գաղթականների թվի աճին:

Կանադան իրոք շատ խոստումնալից էր: Տափաստանների հողը բերրի էր, չնայած որ մշակման համար տքնաջան աշխատանք էր պահանջում: Ջուրը բավականացնում էր բոլորին: Փայտը, որն այդքան թանկ էր Դին Ալխարիում, անսահմանափակ քանակությամբ էր ու մատչելի և՛ շինարարության, և՛ ջեռուցման համար: Կլիման էլ համարյա այնպիսին էր, ինչպես հայրենիքում: Դոգալով անմարդաբնակ տափաստանները բնակեցնելու մասին, կառավարությունը այստեղի հողերը վաճառում էր խորհրդանշական գներով՝ 160 ակրի (64 հա) համար 10 դոլար: Ուկրաինացիներին թույլատրվում էր բնակություն հաստատել հավաք կերպով, այդ պատճառով էլ, նրանց շուրջը՝ մեկ մղոնի վրա, հարևանները ուկրաինացիներ էին: Դրապարիչ էր և այն, որ Կանադայի քաղաքական համակարգը կայուն էր ու ժողովրդավարական, իսկ հասարակությունն ու տնտեսությունը՝ արդի և առաջադիմական:

Կանադայի ընձեռած հնարավորությունները հսկայական էին, սակայն ոչ պակաս ջանքեր էին պահանջվում նաև դրանց իրականացման համար: Օտար երկիր եկած տարագիրները դրան համարյա (կամ բոլորովին) չունեին, անգլերեն չէին խոսում և հաճախ անգրագետ էին: Երկար ու տանջալից ճանապարհից հետո նրանք հայտնվել էին անբնակ, ցուրտ ու անձայրածիր հարթավայրում: Առաջնահերթ ու ամենադժվար խնդիրը սովորական գոյատևումն էր: Ցրտից պաշտպանվելու համար մեկսենյականոց հյուղակներ էին կառուցում: Չունենալով դրան և դեռևս չմշակված հողում ցանքս անելու հնարավորություն, նրանք հայտնվում էին մշտական սովի կամ նույնիսկ մահվան սպառնալիքի առջև: Ամենաանհրաժեշտ կարիքներն հոգավու համար փող վաստակելու նպատակով տղամարդիկ կտրում-անցնում էին ամբողջ երկիրը: Իսկ կանայք, այդ ընթացքում մնալով իրենց հողակտորների վրա, զբաղվում էին կացարանի բարեկարգմամբ, խնամում էին երեխաներին և ցանքսի համար փորձում էին մաքրել հողը: Ի վիճակի չլինելով մեքենա կամ գոնե լծկան անասուն գնել, գաղթականներն ամբողջ աշխատանքը ձեռքով էին կատարում: Սովորաբար մի քանի տարի էր անցնում, մինչև որ հաջողվում էր հավաքել առաջին բերքը: Իսկ ամբողջ հողակտորը ցանքսի նախապատրաստելու համար, հաճախ 15-20 տարվա հոգնեցուցիչ ու տառապալից աշխատանք էր պահանջվում:

Իրադրությունը վատթարանում էր տարագիրների նկատմամբ բացահայտ խտրականության պատճառով: Չնայած Սիֆտոնն ու կառավարական մի քանի այլ պաշտոնյաներ ընդունում էին ուկրաինայից եկած գաղթականների օգտակարությունը, շատ կանադացիներ մտածում էին այլ կերպ: Առաջին անգամ բախվելով ծագումով ոչ անգլո-սաքսոնական գաղթականների հետ, Արևմտյան Կանադայի բնակչությունը բողոքեց «կեղտոտ, տգետ ու աղքատ արտասահմանցիների ներխուժման» դեմ: Շատ թերթեր հանդես եկան «Եվրոպայի թափփուկների» դեմ, որոնք կարող էին բարոյական ու հոգեկան վնաս հասցնել կանադական հասարակությանը, սովեր գցել նրա քաղաքակիրթ մակարդակի վրա: Այն, որ ուկրաինացիները բնակվում էին համայնքված համայնքներով, հազնվում էին ավանդական զգեստներ, խոսում էին իրենց լեզվով և հավատարիմ էին մնում բյուզանդական ծիսակարգին,



միայն ավելի էր բորբոքում կրքերը:

Չնայած այս դժվարություններին, ուկրաինացի տարագիրներն աստիճանաբար ընտելացնում էին ու հաստատվում Կանադայում: *Ժամանակի ընթացքում նրանք հերկեցին միլիոնավոր ակր խոպան հողեր: Կանադական լայնատարած հարթավայրերը ծածկված էին նրանց սպիտակ կոկիկ հյուղակներով և սոխածև գմբեքներ ունեցող եկեղեցիներով:* Երբ համաշխարհային պատերազմի նախօրեին հացահատիկի գները կտրուկ աճեցին, շատ ուկրաինացիներ միանգամից հարստացան: Վստահորեն ամրապնդվում էր նրանց վարկը՝ որպես բարեխիղճ, աշխատասեր ու լավ տնտեսատերեր, և նրանց նկատմամբ բշնամանքը գնալով մեղմանում էր: *Կանադացիները ստիպված էին խոստովանել ուկրաինացի տարագիրների*



Կոտլարևսկու անվան դրամատիկական ընկերությունը: Վիննիպեգ (Կանադա), 1914 թ.

կարևոր ու վճռորոշ դերը՝ անմարդաբնակ տափաստաններն աշխարհի ամենաարդյունավետ հացառատ վայրը դարձնելու գործում:

Առաջին աշխարհամարտի շեմին Կանադա էին փոխադրվել մոտ 170 հազ. ուկրաինացի: 85 %-ից ավելին բնակություն էին հաստատել տափաստաններում: Նրանք, ովքեր գերադասում էին բնակվել քաղաքներում, հիմնականում կենտրոնացել էին Վիննիպեգում, որը դարձել էր ուկրաինական կանադացիների հասարակական կյանքի գլխավոր կենտրոնը: Եթե հաշվի առնենք, որ Կանադայի արևմուտքի բնակչության ընդհանուր թիվը 1896 թ.-ին ընդամենը մոտ 200 հազ. էր, ապա միանգամայն ակնհայտ է, որ ուկրաինացի տարագիրները չէին կարող հսկայական ազդեցություն չգործել այդ տարածաշրջանի ապրելակերպի վրա: Եվ եթե նրանց հոսքը չընդհատվեր համաշխարհային առաջին պատերազմի հետևանքով, այն կարող էր դառնալ Կանադայի ամենախոշոր ուկրաինական բնակատեղին:

### Կրոնական խնդիրներ

Ինչպես և ամենուրեք, ամենաառաջին և ամենաազդեցիկ հաստատությունները, որ հիմնեցին տարագիրները Կանադայում, եկեղեցիներն էին: Այստեղ, ինչպես և ԱՄՆ-ում, նրանց աճն ուղեկցվում էր սուր հակասություններով ու տարածայնություններով: Բոլորովին չունենալով հունա-կաթոլիկական քահանայի, Կանադայի նորաբնակները օգնություն արեցին ԱՄՆ-ի իրենց հավատակիցներից: Արձագանքելով կանչին, 1897թ.-ին Փենսիլվանիայից

եկավ սբ. հայր Նեստոր Դմիտրիվը և այցելելով ծխական համայնքի ռահվիրաներին, հունակաթոլիկական առաջին մաթթանքն արեց կանադական հողում: Հաջորդ տարիներին նման այցելություններ կատարեցին Փենսիլվանիայի հունա-կաթոլիկական քահանաներից էլի մի քանիսը: Սակայն այս հատուկներն միջոցառումները չէին կարող փոխարինել մշտական եկեղեցի և հոգևոր հովիվ ունենալու Կանադայի տարագիրների ձգտումներին:

Ուկրաինացի նորաբնակների վրա իր իրավագրությունը փորձեց հաստատել տեղի, հիմնականում ֆրանկ-կանադացիներից կազմված, հռոմեա-կաթոլիկական թեմը: Սակայն դիմադրության հանդիպելով, իր մտադրությունից հրաժարվեց: Ավելի ուշ, հուն-կաթոլիկների նկատմամբ Կանադայի հռոմեա-կաթոլիկական նվիրապետությունն զգալիորեն ավելի մեծ հանդուրժողականություն ցուցաբերեց, քան իռլանդական եպիսկոպոսները ԱՄՆ-ում: Այդուհանդերձ խնդիրը մնում էր չլուծված: Քանի որ պապի 1894 թ.-ի հրովարտակով հունա-կաթոլիկական ամուսնացած քահանաներին արգելվում էր սպասավորել Հյուսիսային Ամերիկայում, իսկ կուսակրոնությանը կողմնակից գալիցյան սակավաթիվ քահանաները սովորաբար մեկնում էին ԱՄՆ կամ Բրազիլիա, ապա հոգևորականների շարքերը համալրելու գործում Կանադան չէր կարող հույսը դնել Հին Աշխարհի վրա: Փորձելով հարթահարել այս դժվարությունը, հունա-կաթոլիկական ծիսակարգն ընդունած ֆրանսիական ու բելգիական մի քանի քահանա ծառայության նշանակվեցին տարագիրների միջավայրում:

Սակայն այս միջոցառումն ակնհայտորեն չէր գոհացնում տարագիրներին: Նրանց համար դժվար էր ոչ-ուկրաինացի քահանաների հետ հարողակցվելը. ցավոտ խնդիր էր մնում կուսակրոնության ուխտը, և վերջապես, Կանադայում նույնպես տարագիրները չէին ցանկանում իրենց եկեղեցիները ենթարկեցնել հռոմեա-կաթոլիկական եպիսկոպոսներին: Նոր Աշխարհի ոգով համակված, շատերն ուզում էին իրենց եկեղեցին տեսնել անկախ, որևէ մեկի ազդեցությունից զերծ:

1903 թ.-ին ԱՄՆ-ից Վիննիպեգ եկավ եպիսկոպոս Սերաֆիմը՝ անհայտ ծագում ունեցող ռուսական ուղղափառ քահանան: Հենվելով արմատական մի խումբ մտավորականների աջակցության վրա, որոնք ուղիներ էին փնտրում ստեղծելու ուկրաինական եկեղեցի, որը կախված չի լինի ո՛չ հռոմեական կաթոլիկությունից, և ո՛չ էլ ռուսական ուղղափառությունից, նա հիմնեց այսպես կոչված՝ Անկախ հունական եկեղեցի: Քահանաների պակասը նա լուծեց շատ արագ, բայց և կանոնական տեսակետից բավականին դատապարտելի ճանապարհով. ուղղակի, մոր եկեղեցու քահանաներ նշանակեց ուկրաինական համայնքների քիչ թե շատ գրագետ մոտ 50 առաջնորդի: Ցրվելով ուկրաինական բնակավայրերով, նրանք տարածում էին ուղղափառության այդ նոր ձևը, որը չէր ճանաչում ոչ մի հովվապետի իրավունք և ընդունում էր հասարակության հոգածությունը եկեղեցու սեփականության նկատմամբ: Դատելով ամեն ինչից, տարագիրները պատրաստակամությամբ էին ընդունում նրանց գաղափարները. ընդամենը երկու տարվա ընթացքում մոր եկեղեցին 60 հազ. հետևորդ ունեցավ: Սակայն նրանց հակվածությունը ժամանակավոր ու անհաստատ դուրս եկավ, և մի քանի տարի հետո Սերաֆիմի եկեղեցին դադարեց գոյություն ունենալուց:

Հոտը կորցնելու և ուղղափառության խառնածին ձևին անցնելու սպառնալիքը հունա-կաթոլիկական եկեղեցուն ստիպեց ավելի գործունյա դառնալ: Գալիչիանայում հունա-կաթոլիկական եկեղեցու նվիրապետը՝ միտրոպոլիտ Անդրիյ Շեպտիցկին 1910 թ.-ին հոգևոր առաքելությամբ ուղևորություն ձեռնարկեց Կանադայի ուկրաինական համայնքներով: Մի քանի տարի անց նա համոզեց ռեդեպտորիստների բելգիական վանականների ուխտին՝ Գալիչիանայում բացելու իրենց մասնաճյուղերը (հաշվի առնելով հունա-կաթոլիկականի առանձնահատկությունները): Հետագայում, կուսակրոնության երդում տված այդ ուխտի որոշ անդամներ, որպես քարոզիչներ ուղարկվեցին Կանադայի ուկրաինական համայնքներ: 1912 թ.-ին, Շեպտիցկու խնդրանքով, Վասիլյանը Կանադայում հունա-կաթոլիկական առաջին եպիսկոպոս նշանակեց Միկիտա Բուդկային: Ի տարբերություն ԱՄՆ-ում Օրտինսկու, Բուդկան առաջին իսկ օրից մեծ հեղինակություն վայելեց: Շուտով տափաստաններում բազմապատկեցին հունա-կաթոլիկական ծխական համայնքները, եկեղեցիներն ու դպրոցները: 1931 թ.-ի շեմին ուկրաինական հունա-կաթոլիկական եկեղեցու հավատավորներ էին դարձել Կանադայի ուկրաինացիների մոտ 58 %-ը, այն ուներ 350 ծխական համայնք և 100 քահանա: Այնուամենայնիվ, եթե նկատի առնենք, որ ամենասկզբում վերաբնակների մոտ 80 %-ը հույն-կաթոլիկներ էին, ապա ակնհայտ է, որ այն լուրջ կորուստներ էր ունեցել:

Հույն-կաթոլիկությունից հրաժարվածներից շատերը դարձան 1918 թ.-ին ստեղծված Ուկրաինական ուղղափառ եկեղեցու հավատավորներ: Նրա կողմնակիցների կազմը բավակա-



մին բազմազան էր: Այստեղ էին՝ ուկրաինա-կանադական մտավորականությունը (հիմնականում՝ երկլեզու ծրագրով դպրոցների ուսուցիչները), ուղղափառ բուկովինացիները, Սերաֆիմի եկեղեցու նախկին անդամները և ուրիշներ: Հոգևորականությունն այստեղ կազմված էր ուկրաինացիներից, որոնք ձգտում էին պահպանել ուկրաինական եկեղեցական ավանդույթները, այդ պատճառով էլ Կանադայի ուղղափառ եկեղեցին՝ եպիսկոպոս Իվան Թեոդորովիչի գլխավորությամբ, անմիջական կապ ուներ ազգային ինքնագիտակցության աճի հետ, ինչն էլ անկասկած նպաստում էր նրա ժողովրդականությանը: Եթե զանգվածային արտագաղթի սկզբում տարագիրների միայն 15 %-ն էր ուղղափառ, ապա 1931 թ.-ի շեմին արդեն կանադական ուկրաինացիների 24 %-ը ուկրաինական ուղղափառ եկեղեցու հավատավորներ էին: Տարագիրների զգալի մասն ուկրաինացիների շրջանում ակտիվորեն գործող երիցական եկեղեցու անդամներ էին:

### Աշխարհիկ կազմակերպություններ

Ինչպես և եկեղեցիները, աշխարհիկ առաջին կազմակերպությունները տարագիրների կողմից «ներմուծվել» էին Հին Աշխարհից: Այնպես, ինչպես Գալիչինայում ու Բուկովինայում, տափաստաններում առաջանում էին «Լուսավորություններ», ընթերցարաններ, հանրային տներ: 1925 թ.-ի շեմին այստեղ հաշվվում էր մոտ 250 նմանատիպ մշակութային-լուսավորական կազմակերպություն:

Ինչ վերաբերում է Լուսավորության սովորական համակարգին, ապա Կանադայի ուկրաինացիներն այստեղ, այլ երկրներ գաղթածների համեմատությամբ, շատ շուտով մեծ առավելություններ ստացան: Քանի որ նրանց գյուղական համայնքներն ամբողջությամբ կամ մեծամասամբ ուկրաինական էին, նրանք պետության կողմից ֆինանսավորվող երկլեզու դպրոցական համակարգի իրավունք ստացան: 1916 թ.-ին գոյություն ունեին մոտ 400 այդպիսի դպրոցներ, որոնք հիմնականում գտնվում էին Մանիտոբա նահանգում: Այդ դպրոցների համար ուսուցիչներ պատրաստելու նպատակով նահանգի ղեկավարությունը 1907 թ.-ին Վինիպեգում հիմնեց «Ռուսինական ուսուցչական դպրոց»: Նրա շրջանավարտները, որ լավ տիրապետում էին և՛ անգլերեն, և՛ ուկրաիներեն լեզուներին, ծևավորում էին նոր, կրթված աշխարհիկ հասարակական առաջնորդների միջուկը:

Առաջին համաշխարհային պատերազմի հետևանքով առաջ եկավ օտարազգիներից վախի (քսենոֆոբիայի) հիստերիա, որը վերջ դրեց երկլեզու դպրոցական համակարգի զարգացմանը: Բայց դա չսասանեց իրենց երեխաներին ինչպես անգլիալեզու, այնպես էլ ուկրաինալեզու կրթության տալու տարագիրների վճռականությունը: Այդ նպատակին էին ծառայում, մասնավորապես, վասիլիանականների ուխտի հիմնած հունա-կաթոլիկական եկեղեցիները, ինչպես նաև ծխական «հայրենի» դպրոցները: Այնուամենայնիվ, հակակերական մտավորականությունն այլ ուղիներ էր փնտրում. 1916 թ.-ին Սասկատոնում նրանք հիմնեցին «Մոհիլյան ուկրաինական ինստիտուտը»: Փաստորեն դա հոգևոր դպրոց (բուրսա) էր, որ յուրօրինակ ուկրաինական միջավայր էր ստեղծում. այստեղ դասավանդում էին ուկրաիներեն լեզու, գրականություն ու պատմություն: Լիարժեք կրթություն ստանալու համար գյուղերից այստեղ էր գալիս երիտասարդությունը: Նման հոգևոր դպրոցներ, որ սովորաբար կապ ունեին կրոնական կազմակերպությունների հետ, ստեղծվեցին նաև Վինիպեգում, Էդմոնտոնում, Տորոնտոյում: Դրանց շրջանավարտները համալրում էին ուկրաինական քաղաքական ու մշակութային գործիչների շարքերը:

Չնայած մինչև առաջին աշխարհամարտը Կանադայի ուկրաինական համայնքների հիմքը կազմում էին հասարակական կյանքում անփորձ, հասարակ գյուղացի-ֆերմերները, սակայն նրանց մեջ արդեն ի հայտ էին գալիս քաղաքական գիտակցության նշաններ: Քաղաքական գործունեության ուղղություններից մեկն արտահայտվում էր հայրենիքում թափ առնող միտումներում: 1907 թ.-ին ուկրաինա-կանադական ակնավոր գործիչներ Կիրիլո Յենիկ-Բերեզովսկին, Իվան Բորոուիչը, Իվան Նեհրիչը, Միրոսլավ Ստեչիշինը և Տարաս Ֆեռլեյը (բոլորը սոցիալիստներ էին՝ գալիցյան Արմատական կուսակցության ոգով) հիմնեցին «Ուկրաինական սոցիալիստական միություն»: Միաժամանակ, նրանք և մի քանի այլ ուկրաինացիներ ակտիվորեն մասնակցում էին տեղի քաղաքական կյանքին: Կանադայի շատ շրջաններում մեծամասնություն ունենալով, 1902 թ.-ի շեմին նրանք կարողացան իրենց թեկնածուներն ունենալ քաղաքային տեղական մարմիններում, իսկ 1913 թ.-ին Անդրիյ Շանդրոն դարձավ Ալբերտա նահանգի խորհրդարանի պատգամավոր:

Կանադական քաղաքական մեկնաբանները որոշ տազնապով նշում էին, թե՛ «միանգա-

մայն ակնհայտ է, որ տափաստանային շրջաններում ռուսինները հզորանում են»: Սակայն, եթե ուկրաինացիները նույնիսկ սկսեցին իրենց համարել կանադական քաղաքական համակարգի անբաժանելի մասը, ապա առաջին աշխարհամարտի ժամանակ այդ սխալ կարծիքը հողմացրիվ եղավ: Քանի որ շատ տարագիրներ դեռևս պահպանում էին ավստրիական անձնագրերը, նրանցից մոտ 6 հազարն անվանվեցին «թշնամու դաշնակիցներ» և, որպես թշնամական պետության հպատակներ, մինչև պատերազմի ավարտն արգելափակվեցին հատուկ ճամբարներում:

## Երկրորդ ալիք. միջպատերազմական շրջան

Ուկրաինական տարագիրների հոսքը դեպի Արևմուտք չդադարեց նաև միջպատերազմական շրջանում: Սակայն այդ շրջանը զգալիորեն տարբերվում էր մինչպատերազմյանից: Մինչև 1914 թ.-ը Արևմուտք էին արտագաղթել ավելի քան 500 հազ. ուկրաինացի, միջպատերազմական շրջանում՝ միայն մոտ 200 հազ.-ը: Նվազման հիմնական պատճառը ԱՄՆ-ում և Կանադայում գործազրկությունն էր, որն առաջացել էր Մեծ լճացման պատճառով:

Երկրորդ ալիքի արտագաղթը տարբերվում էր նաև իր տարածաշրջանային ուղղվածությամբ: Տարագիրների առավել գերադասելի նպատակակետը մնում էր Կանադան: Սակայն գյուղատնտեսական շրջաններում վատթարացող տնտեսական իրավիճակը և ներգաղթի քաղաքականության խստացումը միջպատերազմական շրջանում նոր վերաբնակների թիվը սահմանափակեցին 70 հազ.-ով: Այժմ տարագիրները նախընտրում էին բնակություն հաստատել ոչ թե արևմուտքի տափաստաններում, այլ քաղաքներում՝ Վինիպեգում, Տորոնտոյում, Մոնրեալում: Էլ ավելի արմատականորեն փոխվեց իրավիճակն ԱՄՆ-ում: Մեծ լճացման տարիներին այստեղ ներգաղթի թուլատրված նորմը կտրուկ կրճատվեց: Արդյունքում, միջպատերազմական շրջանում այստեղ փոխադրվեցին միայն 10 հազ. ուկրաինացի՝ մի չնչին մասն այն հարյուր հազարավորների համեմատությամբ, որոնք մինչ 1914 թ.-ը հեղեղեցին ամերիկյան ափերը:

Եթե որոշ երկրներ էժան աշխատուժի կարիք արդեն չունեին, ապա մյուսները դեռ շարունակում էին գրավել տարագիրներին: Նրանց համար իրենց դռները բացեց Արգենտինան, որն ընդարձակ տարածքներ է բնակեցնելու և իր աճող քաղաքների համար աշխատուժի մեծ կարիք ուներ: Այստեղ եկան մոտ 40 հազ. ուկրաինացի: 30-40 հազ. արևմտյան ուկրաինացիներ գաղթեցին Ֆրանսիա, որտեղ աշխատանք գտան երկրի հարավում՝ Մեցի մերձակայքի ածխահորերում ու գործարաններում:

### Ուկրաինական քաղաքական վտարանդիությունը

Հավանաբար, միջպատերազմական շրջանում Ուկրաինայից արտագաղթողների համար բնորոշ էր այն, որ նոր տեսակի տարագիրներ էին հայտնվել՝ քաղաքական վտարանդիներ: 1918-1920 թ.թ.-ների ուկրաինական տարբեր կառավարությունների պարտությունից հետո, տասնյակ հազարավոր զինվորներ, սպաներ, պետական պաշտոնյաներ և գլխավորապես՝ ազգային մտավորականության ներկայացուցիչներ, նրանց հետ միասին վտարանդի էին դառնում: Սկզբում նրանց թիվը հասնում էր 100 հազ.-ի: Սակայն 1923 թ.-ին, երբ Գալիչինայում իրադրությունը կայունացավ, արևմտաուկրաինական քաղաքական վտարանդիների մեծ մասը տուն վերադարձավ: Դրանից հետո ուկրաինական քաղաքական վտարանդիների գերակշռող մասը Խորհուրդների կողմից Ուկրաինայի բռնազավթված արևելյան մասի բնակիչներից էին և հաշվվում էին 40-50 հազ. մարդ:

Այդ մարդկանց վտարանդիության հիմնական պատճառը քաղաքական համոզմունքներն էին: Շատերը զինվորականներ էին, սակայն զգալի մասը կազմում էր ազգային մտավորականությունը: Սրանց թվում էին մշակույթի ու գիտության հայտնի գործիչները կամ մարդիկ, ովքեր դեռ վերջերս պատասխանատու պաշտոններ էին վարում, բայց տանջալից ապրումներ ունեին իրենց քաղաքական սխալների պատճառով, իդեալիստորեն էին տրամադրված, բայց գաղափարապես անհաշտ էին: Ուկրաինայի անկախության համար պայքարը նրանցից շատերի ամբողջ կյանքի իմաստը մնաց: Չգտելով մոտ լինել իրենց հայրենիքին, նրանք բնակություն հաստատեցին Լեհաստանում կամ Չեխոսլովակիայում:

Ինչպես և բոլոր քաղաքական վտարանդիները, ուկրաինացիները բաժանված էին միմյանց թշնամի բազմաթիվ խմբավորումների: Վտարանդի տարբեր կառավարությունների կողմնա-



կիցներն այնպես էին տարվել հաշիվներ մաքրելով, որ հաճախ իրենց պարտության մեղքի մեծ մասը գցում էին մեկը մյուսի վրա, և ոչ թե՛ բոլշևիկների: Ընդ որում, ժամանակի և ուժերի առյուծի բաժինը ծախսում էին իրենց խմբավորումը ազգային-ազատագրական շարժման առաջատարը դարձնելու վրա: Որոշ վտարանդիներ դիմում էին քաղաքական արկածախնդրությունների (ավանտյուրայի) կամ համագործակցության էին գնում արտասահմանյան կառավարությունների հետ, նրանց մատուցելով բավականին կասկածելի բնույթի ծառայություններ: Այնուամենայնիվ, իրենց շարքերում ունենալով արժանավոր, տաղանդավոր, գերազանց կրթված ոչ քիչ մարդիկ, ուկրաինացիները բավական օգտակար գործունեություն ծավալեցին: *Ստեղծելով բազմաթիվ գիտական հաստատություններ, ուկրաինական մի ամբողջ արտասահմանյան մամուլ, նրանք Արևմտյան Եվրոպային ծանոթացնում էին ուկրաինական խնդրին:* Նրանց աշխատություններում բավականին բարձր մակարդակի հասավ ուկրաինական հասարակական-քաղաքական նոր մտածողությունը: Բավական մեծ արժեքավորությամբ առանձնանում են նրանց մշակութային շատ ձեռքբերումները, ինչն ավելի քան տպավորիչ է, եթե հաշվի առնենք, թե նյութական ու քաղաքական ինչ դժվար պայմաններում են նրանք ստիպված եղել ապրել ու աշխատել:

Արևելյան Ուկրաինայի քաղաքական վտարանդիների մեծամասնությունը հայրենիքը լքեց 1920 թ.-ին, երբ Ուկրաինական ժողովրդական Հանրապետության բանակը հեռացավ Լեհաստան: Մոտ 30 հազ. փախստականների արգելափակեցին տարբեր ճամբարներում: Վտարանդի կառավարությունը՝ Սիմոն Պետլյուրայի գլխավորությամբ, ապաստան գտավ Տարնուվում: Սակայն 1923 թ.-ին, երբ լեհերը դադարեցին աջակցել Պետլյուրային, Լեհաստանն այլևս չէր կարող հոգալ փախստականների մասին: Քաղաքական վտարանդիների մի մասն համեմայն դեպս մնաց այստեղ, հիմնականում՝ լեհերի կողմից օկուպացված Վոլինում, իսկ մեծ մասը փոխադրվեց Զեխսլովակիա: Զեխսլովակիայի կառավարությունն ընդհանրապես մարդասիրաբար էր վերաբերվում փախստականների նկատմամբ, և միաժամանակ ուկրաինացի երիտասարդությանը բարձրագույն կրթություն ստանալու հնարավորություն էր ընձեռնում, այդ պատճառով էլ *Պրահան շատ շուտով դարձավ ուկրաինացի վտարանդիների կենտրոնատեղին:*

Զեխսլակ կառավարության ֆինանսական աջակցության շնորհիվ ստեղծվեցին «*Ուկրաինական ազատ համալսարանը*» Պրահայում և «*Ուկրաինական գյուղատնտեսական ակադեմիան*»՝ Պոդեբրադներում: Միջպատերազմական շրջանում նրանք հարյուրավոր մասնագետներ տվեցին: Միաժամանակ, ուկրաինական գիտական ինստիտուտներ բացվեցին Բեռլինում ու Վարշավայում: Բազմաթիվ թերթեր ու հրատարակչություններ հիմնվեցին:

*Վտարանդիության մեջ շարունակում էին գործել ուկրաինական տարբեր երևութական կառավարություններ:* Պետլյուրովյան ՌԺԳ-ի կառավարության մի մասը մնաց Վարշավայում, իսկ ինքը՝ Պետլյուրան, փոխադրվեց Փարիզ, որտեղ, *Օլեքսանդր Շուլիինի* գլխավորությամբ, դեռևս բավականին ակտիվորեն գործում էր ՌԺԳ-ի դիվանագիտական ներկայացուցչությունը: Այստեղ Պետլյուրան սպանվեց 1926թ.-ին՝ իրև Սամուիլ Շվարցբարդի կողմից, որին ուկրաինացի վտարանդիները համարում էին բոլշևիկյան գործակալ (իրենցներն իրենց հերթին, զովաբանում էին Շվարցբարդին, որպես մի մարդու, որ վրեժ լուծեց քաղաքացիական պատերազմի ժամանակ կատարված հրեաների ջարդի համար): Զեքման Սկորոպակովսկին և ուկրաինական միապետականները հիմնավորվեցին Բեռլինում: 1923 թ.-ին այստեղ փոխադրվեց նաև Եվինեն Պետրուշևիչը, երբ արևմտաուկրաինական կառավարությունը ինքնալուծարվեց: Ավելի ուշ, շտաբակայանի հետ որոշ ժամանակով Բեռլինում տեղավորվեց Եվինեն Կոնովալեցը: Ուկրաինական սոցիալիստները՝ Միկիտա Շապովալի գլխավորությամբ, և ազատականները, ինչպես օրինակ՝ Դմիտրո Դորոշենկոն, հիմնվեցին Պրահայում: Ինչպես արդեն նշել ենք, *Արևելյան Ուկրաինայի վտարանդիները մեծ ներդրում ունեցան ուկրաինական հասարակական-քաղաքական մտածողության զարգացման գործում:* Դմիտրո Դոնցովը, որն ապրում էր Գալիչինայում, սկիզբ դրեց ուկրաինական արմատական ազգայնականության գաղափարախոսությանը, այն դեպքում, երբ Վյաչեսլավ Լիպինսկին Վիեննայում զարգացնում էր ուկրաինական միապետականության ու պահպանողականության իր յուրօրինակ գաղափարները:

### **Ուկրաինացիների քաղաքականացումն արտասահմանում**

Ողբերգական իրադարձություններն Ուկրաինայում 1917-1920 թ.թ.-ներին, մեծացրին հետաքրքրությունը նրա քաղաքական խնդիրների նկատմամբ նույնիսկ տարագիրների այն

մասի մոտ, որը լքել էր հայրենիքը տնտեսական կարգի նկատառումներով: Այդ հետաքրքրությունը խորացավ, երբ 1920 թ.-ին նրանց շարքերը համալրվեցին քաղաքական վտարանդիներով: *Ամենուրեք, որտեղ համախմբվում էին ուկրաինացիները, առաջ էին գալիս քաղաքական զանազան կազմակերպություններ:* Շուտով նրանց միջև գաղափարական պայքարն այնպիսի չափերի հասավ, որ ուկրաինացիներին մինչ այդ զբաղեցնող կրոնական երկպառակությունները երկրորդ պլան մղվեցին:

Առաջինը կազմակերպվեցին սոցիալիստները: Ինչպես գիտենք, դեռևս 1907 թ.-ին Կանադայում ստեղծվել էր մարքսիստական խումբ: Այդ նույն ժամանակ Նյու-Յորքում երևան եկավ «*Հայդամակներ*» սոցիալիստական ակումբը, որի անդամները միանգամայն որոշակի նպատակներ էին հետապնդում. ուկրաինացի բանվորների աշխատավարձի բարձրացում և աշխատանքային պայմանների բարելավում, ֆերմերների տնտեսական շահերի պաշտպանություն: Այդ խմբին միացան նաև նրանք, ովքեր դժգոհ էին ուկրաինական համայնքներում քահանաների ճնշիչ ազդեցությունից:

Առաջին աշխարհամարտից հետո, Արևմուտքն ընդգրկող լճացման ֆոնի վրա խորհրդային Ուկրաինայում արդիականացման և ուկրաինացման հաջողությունների տպավորության տակ, մոտ հազար ուկրաինացի մտան Կանադայի կոմունիստական կուսակցության շարքերը, կազմելով նրա անդամների երրորդ մասը: 1918 թ.-ին, այն ուկրաինացիները, որոնք հակված էին կոմունիստամետ հայացքներին, բայց գերադասում էին զուտ ուկրաինական կազմակերպությունները, կազմավորեցին «*Ուկրաինական աշխատավորների միությունը*»: 20 տարվա ընթացքում այն դարձավ *էթնիկական սկզբունքով ստեղծված ամենախտոր կոմունիստամետ կազմակերպությունը:* Հարաճում և լավ կազմակերպված միությունը գաղափարախոսական ակտիվ գործունեություն էր ծավալում, պարտ ու պատշաճը հատուցելով նաև մշակութային ու լուսավորական աշխատանքներին: 1939 թ.-ի շեմին այն ուներ ավելի քան 10 հազ. անդամ: Չնայած կոմունիստական գաղափարների կողմնակիցները կազմում էին Կանադայի ուկրաինացիների 5 %-ը միայն, սակայն նրանց ազդեցությունն ուկրաինական համայնքներում բավականին տպավորիչ էր:

*1920-ականների վերջում սկսեցին ի հայտ գալ ազգայնական կազմակերպություններ:* Նրանք հիմնականում կազմված էին երկրորդ ալիքի վտարանդիներից և քարոզում էին ուկրաինական անկախության և առանց փոխգիջման հակակոմունիզմի գաղափարներ: Առաջիններից մեկը *հեթման Սկորոպակովսկու* կողմնակիցներն էին: Լինելով ուկրաինական միապետության գաղափարների անձնավեր հետևորդներ և ձգտելով ուկրաինացիներին խանդավառել կոզակության ոգով, 1924 թ.-ին ԱՄՆ-ի և Կանադայի քաղաքներում նրանք ստեղծեցին «*Սիչ*» կազմակերպության մասնաճյուղերի մի ամբողջ ցանց: Այս կազմակերպությունը երբեք բազմանդամ չի եղել, սակայն կարող էր հպարտանալ իր բարձր կարգապահությամբ: Հիմնականում այս կազմակերպությունն անցկացնում էր իր անդամների գինավարժանք, որոնք կրում էին գրավիչ համազգեստ, իսկ ստորաբաժանման (կուրենի) մի քանի անդամ իրենց տրամադրության տակ նույնիսկ սավառակներ ունեին: Այս ուկրաինացի միապետականների պահպանողական գաղափարախոսությունը հարմար էր ուկրաինական կաթոլիկական հոգևորականությանը, որոնք զգալի աջակցություն էին ցույց տալիս նրանց:

Այնուամենայնիվ, *արտասահմանում ուկրաինացիների վրա մեծ ազդեցություն ուներ ազգայնականության ՌԲԱ-ի ուղղությունը:* Կոնովալեցի նախաձեռնությամբ Արևմուտքի բոլոր հիմնական ուկրաինական համայնքներում ստեղծվում էին ՌԲԱ-ամետ կազմակերպություններ, որոնք համախմբում էին քաղաքներում ապրող արտագաղթի առաջին և երկրորդ ալիքների տարագիրներին: Այսպես, 1920-ական թվականների վերջից մինչև 1930-ականների սկիզբը Կանադայում ի հայտ եկան «*Ուկրաինական ազգային միությունները*» (ՌԲԱՄ), իսկ ԱՄՆ-ում՝ «*Ուկրաինայի միապետության վերածննդի կազմակերպությունները*» (ՌԲՎԿ): Նմանատիպ կազմակերպություններ հայտնվեցին նաև Ֆրանսիայում ու Արգենտինայում: Երանց բազմաթիվ անդամները դավանում էին ծայրահեղ ազգայնականությունը, բողոքի ակցիաներ էին կազմակերպում՝ Լեհաստանում և Խորհրդային Միությունում իրենց հայրենակիցների նկատմամբ ճնշումներ գործադրելու դեմ, միջոցներ էին հայթայթում ՌԲԱ-ի գործունեության համար: *Քաղաքականապես ակտիվ ուկրաինացի տարագիրների մեծ մասը միջպատերազմական շրջանում պատկանում կամ համակրում էր հենց ազգայնական կազմակերպություններին:*



## Չուլում

Ոչ բոլոր տարագիրներն էին ակտիվորեն մասնակցում ուկրաինական քաղաքական կյանքին, նրանց զգալի մասն ընդհանրապես կորցրել էր հետաքրքրությունն ամենայն ուկրաինականի նկատմամբ: *Չուլման գործընթացն հատկապես ուժեղ էր ԱՄՆ-ում*, որտեղ տարագիրներին հետևողականորեն հարկադրում էին ամբողջությամբ «հավել» ամերիկյան «հալոցում»: *Ապագայնացման մշտական ճնշում կրելով դպրոցներում, և համայնքի ներսում անվերջանալի զզվոտոցից կշտացած, երիտասարդ շատ ուկրաինացիներ վճռականապես խզում էին կապն իրենց ազգային արմատների հետ*: Կանադայում, որտեղ ուկրաինացիներն ապրում էին ավելի ինքնամփոփ համայնքներով, ծուլումը շատ թույլ էր: Բայց նույնիսկ այստեղ տարագիրների հաջորդ սերունդների ազգային ինքնագիտակցության մակարդակը, առաջին վերաբնակների համեմատությամբ, շատ ցածր էր: *Ալենհայտ էր, որ տիրապետող մշակույթի ազդեցությունն ուկրաինացիների վրա անխուսափելի էր, որտեղ էլ որ նրանք ապրելիս լինեին*:

## Երրորդ ալիք. երկրորդ համաշխարհային պատերազմը և «տեղահանվածները»

Երբ ավարտվեց երկրորդ համաշխարհային պատերազմը, Գերմանիան ու Ավստրիան բառացիորեն լեցուն էին 16 մլն օտարերկրյա աշխատավորներով, ռազմագերիներով ու փախստականներով: Նրանցից մոտավորապես 2,3 մլն-ը ուկրաինացիներ էին, մեծամասամբ՝ «օտարբայտերներ»՝ երիտասարդ տղաներ ու աղջիկներ, որ բռնի տարվել էին աշխատելու Գերմանիայում: Պատերազմական գործողություններն ավարտվելուց անմիջապես հետո, այստեղ եկավ սպաներից ու քարոզիչներից կազմված հայրենադարձման խորհրդային ներկայացուցչությունը, որի հիմնական նպատակը խորհրդային քաղաքացիներին բոլոր միջոցներով համոզելն էր, որ վերադառնալ իրենց տները: Հայրենադարձման ընթացքում օտարբայտերների մեծ մասը՝ կամավոր կամ հարկադրական, վերադարձան ԽՍՀՄ: Սակայն մոտ 210 հազ. ուկրաինացի ոչ մի դեպքում չցանկացան վերադառնալ: Նրանցից բացի, ԽՍՀՄ-ի եվրոպական մասի ևս մոտ 2,5 մլն բնակիչ հրաժարվեցին վերադառնալ տուն: Նրանց սկսեցին պաշտոնապես անվանել «տեղահանվածներ» (անգլ.՝ displaced persons):

Փախստականների այս զանգվածների հոգան իր վրա վերցրեց ՄԱԿ-ին կից 1945 թ.-ին ստեղծված Օգնության և իրավունքների վերականգնման գործակալությունը: Երկու տարի անց նրա պարտականություններն անցան Օգնության միջազգային կազմակերպությանը: Հիմնականում նրանք զբաղվում էին տեղահանվածներին սննդով և օթևանով ապահովելով, մինչև որ նրանք իրենց համար մշտական բնակության տեղ կգտնեին: Փախստականներին, որ հաճախ խնդրում էին ըստ ազգային պատկանելության, տեղավորում էին ճամբարներում, որպես այդպիսին օգտագործելով դպրոցները, զինվորական բարաքները, հանրակացարանները: Ճամբարների բնակչությունը սեփական ղեկավարներ ընտրելու իրավունք ուներ՝ վարչակազմին վերահսկելու, կրթության ու մշակութային պահանջմունքների հետ կապված խնդիրները լուծելու համար: Այդ պատճառով էլ ճամբարները, որոնք գտնվում էին օկուպացիայի ամերիկյան, բրիտանական ու ֆրանսիական գոտիներում, հաճախ անվանում էին «տեղահանվածների հանրապետություններ»:

Ուկրաինացի փախստականների մոտավորապես երկու երրորդն ապրում էր այդպիսի ճամբարներում, որոնց մեծ մասն ամբողջությամբ ուկրաինական էր: Մնացածները տեղավորվում էին ինքնուրույն: Նմանատիպ գլխավոր ճամբարներից մի քանիսը գտնվում էին ամերիկացիների օկուպացրած Բավարիայում՝ Մյունխենում, Միտենվալդում, Ռեգենսբուրգում, Բերխտեսգադենում և Աուգսբուրգում: Նման ճամբարի բնակչությունը սովորաբար կազմում էր 2-4 հազ. մարդ:

Ուկրաինացի տեղահանվածներն իրենցից ներկայացնում էին շատ խայտաբղետ մի պատկեր: Փոքրամասնությանը՝ մոտ 20 %-ին, կարելի էր անվանել քաղաքական վտարանդիներ բառի բուն իմաստով: Դրանք հիմնականում խորհրդային համակարգը չընդունող և Կարմիր բանակի գալուց առաջ երկիրը լքած մտավորականներն էին: Տեղահանվածների ճնշող մեծամասնությունը կազմում էին պատերազմի ժամանակ բռնի կերպով Գերմանիա քված բանվորները: Հայրենադարձման խորհրդային ներկայացուցչության համառ հորդորները վճռաբար

չընդունելով, նրանք նույնպես դարձան վտարանդիներ: Տեղահանվածների մոտ երկու երրորդը գալիցիացիներ էին և պատկանում էին հունա-կաթոլիկական եկեղեցուն, մեկ երրորդը, որ եկել էին խորհրդային Ուկրաինայից, դավանում էին ուղղափառությունը: Եվս մի խումբ կազմում էին 1920-ական թվականների տարագիրները: Գերմանիայից եկած ուսանողները, համակենտրոնացման ճամբարների նախկին կալանավորներն ու ռազմագերիները: Իտալիայում ներկայված էին ՏՏ «Գալիչինա» դիվիզիայի մոտ 10 հազ. մարտիկ (երկրորդ հավաքի): 1947-1948 թ.թ.-ներին տեղահանվածների շարքերը համալրեցին ՌԲԲ-ի մի քանի հարյուր մարտիկներ, որոնք Կարպատների Չեխոսլովակիայով ճեղքել դուրս էին եկել Գերմանիա: Այսպիսով, այս ուկրաինական ամենամեծ վտարանդիությունը ներկայացնում էր տարբեր սոցիալական խմբերի, դավանանքների, քաղաքական ու մշակութային ուղղությունների, ավանդույթների խայտաբղետ մի ներկայակն:

Ի տարբերություն վտարանդիության նախորդ հոսքերի, սա առանձնանում էր կրթված մարդկանց մեծ քանակով: Այստեղ հաշվվում էր մոտ 1000 ուսուցիչ, 400 ինժեներ, 350 փաստաբան, 200 գիտնական և մոտ 300 քահանա: Նրանց հարկ է ավելացնել նաև համալսարանների մոտ 2 հազ. ուսանողներին: Այս թվերը մեկ անգամ ևս վկայում են այն մասին, որ արևմտաուկրաինական մտավորականության զգալի մասը չէր ցանկանում ապրել խորհրդային ռեժիմի պայմաններում:

Ճամբարականներից շատերի համար ճամբարում անցկացրած 2-3 տարին դարձան նրանց կյանքի փորձառության առանձնահատուկ, ոչ միշտ և ոչ ամեն ինչում անախորժ շրջանը: «Տեղահանվածների հանրապետությունները» լեցուն էին երիտասարդ, եռանդուն ու կրթված մարդկանցով: Ունենալով սնունդ և գլխին ծածկ, նրանք չէին կարողանում աշխատանք գտնել ավերված Գերմանիայում: Այդ պատճառով էլ, մասամբ՝ հանգամանքների ճնշման տակ, մասամբ՝ երկար անգործ չմնալու և եռանդն ու ստեղծագործական հնարավորություններն օգտագործելու հնար գտնելու համար, նրանք կազմակերպական, քաղաքական, մշակութային ու լուսավորական շատ բուռն գործունեություն ծավալեցին:

Դա են հաստատում նաև որոշ թվեր: Չնայած նյութական պաշարների շատ սահմանափակ լինելուն, ուկրաինացի տեղահանվածները հիմնեցին համալսարանատիպ երկու հաստատություն, մոտ 40 գիմնազիա և 100-ից ավելի տարրական դպրոց: Նրանք ղեկավարում էին նաև տասնյակ մասնագիտական դասընթացներ, հիմնել էին 85 ծխական համայնք և վերականգնել էին սկաուտական «Пост» կազմակերպության գործունեությունը: Հատկապես տպավորիչ է մշակութային գործունեությունը. ճամբարներում ստեղծվել էին 35 գրադարան, 41 երգչախումբ, 13 նվագախումբ, 33 թատերական խմբակ և 3 արհեստավար թատերախումբ: Նրանք 900 համերգ և 350 մշակութային հուշ-երեկոներ անցկացրեցին, բեմականացրեցին ավելի քան 1400 պիես: Չափազանց ակտիվ էր, չնայած ոչ միշտ որակով, հրատարակական գործունեությունը. լույս տեսան մոտ 230 պարբերական հրատարակություններ և 800 ամուն գիրք, որոնց հեղինակներից էին այնպիսի ականավոր գրողներ ու գրականագետներ, ինչպես՝ *Տոդոս Օսմաչկան, Լեոնիդ Մուսենձը, Ուլաս Սամչուկը և Իվան Բահրյանին* (հայտնի է նաև որպես քաղաքական գործիչ ու մտածող):

Սակայն ճամբարների «ջերմոցային» մթնոլորտը նպաստում էր նաև այլ երևույթների ի հայտ գալուն: *Հարկադրված լինելով ապրել մոտ հարևանությամբ, արևմտյան և արևելյան (խորհրդային) ուկրաինացիները բավականին արագ և ի ցավ երկու կողմերի գիտակցեցին ու զգացին միմյանց միջև առկա սոցիալ-հոգեբանական և մշակութային էական տարբերությունները*: Կաթոլիկների և ուղղափառների բաժանվելը միայն ավելի էր սրում իրավիճակը: Ամենաբայթայիչը ճամբարներում հայտնված քաղաքական բազմաթիվ կուսակցությունների միջև լուրջ տարածայնություններն էին: Հատկապես դաժան էր, նույնիսկ մահացու աստիճանի, ՌԲԿ-ի բանդերոլյան ու մելնիկոլյան խմբավորումների միջև թշնամանքը: Մտադրվելով իր գաղափարախոսական գերակայությունը հաստատել ուկրաինական ամբողջ վտարանդիության վրա, առանձնահատուկ դաժանություն ու անպատկառություն էր դրսևորում բանդերոլյան մեծաթիվ խմբավորումը: Մտավորականության մեջ զգալի աջակցություն չունենալով, նա համեմայն դեպս կարողացավ նկատելի ազդեցության հասնել փախստականների մեծամասնությունը կազմող գյուղացիների ու բանվորների միջավայրում: Արևելյան Ուկրաինայի վտարանդիների մեջ հատկապես մեծ համակրանք էր վայելում, «Ինչու չեմ ցանկանում վերադառնալ ԽՍՀՄ» հայտնի պարսավագրի հեղինակ, *Իվան Բահրյանու* խումբը:

1947-1951 թ.թ.-ներին տեղահանվածներն աստիճանաբար տեղավորվեցին իրենց բնակու-



թյան մշտական վայրերում: Մոտավոր թվերով, նրանք, ովքեր այդ տարիներին դուրս էին եկել Գերմանիայից ու Ավստրիայից, բաշխվեցին հետևյալ կերպ. ԱՄՆ-ում՝ 80 հազ., Կանադայում՝ 30 հազ., Ավստրալիայում՝ 20 հազ., Մեծ Բրիտանիայում՝ 20 հազ., Բելգիայում՝ 10 հազ., Ֆրանսիայում՝ 10 հազ., Բրազիլիայում՝ 7 հազ., Արգենտինայում՝ 6 հազ.: Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Բելգիա և Լատինական Ամերիկա մեկնածների մեծ մասը հետագայում փոխադրվեց Զյուսիսային Ամերիկա:

\* \* \*

Հայրենիքը լքելու որոշում կայացնելը, որպես կանոն, տարագիր ուկրաինացիներից յուրաքանչյուրի ճակատագրում լրջագույն բեկում էր: Այդպիսի քայլի սոցիալ-տնտեսական, մշակութային, հոգեբանական հետևանքները խորագույն ձևով անդրադարձան նրանց կյանքի ու ապրելակերպի վրա: Բայց ամեն դեպքում, հարցերի հարցն է առաջ գալիս. ո՞վ կատարեց ավելի հաջող ընտրություն՝ նա, ով լքեց հայրենիքը, թե՞ նա, ով մնաց: Այս հարցի փորձերով հաստատված հետազոտություններ գոյություն չունեն, այդ պատճառով էլ ստիպված ենք ապավինել ընդհանուր դիտարկումներին ու տպավորություններին:

Կարելի է մեծ արժանահավատությամբ ենթադրել, որ նրանք, ովքեր գաղթեցին, հասան ավելի լավ կենսապայմանների, ծայրահեղ դեպքում՝ նյութական առումով: Տարագիրները, բացի այդ, խուսափեցին այն աղետներից, որ նորագույն ժամանակներում թափվեցին իրենց նախկին հայրենիքի վրա: Անգնահատելի առավելություն էր այն, որ նրանք ապրում էին ազատ ու բացախոս հասարակությունում: Սակայն, այն գիցն էլ, որ նրանք վճարեցին հայրենիքը կորցնելու համար, քիչ չէր. ստիպված էին կարոտից տանջվել, հոգեբանական նեղվածություն և օտարություն զգալ, ենթարկվել խտրականության: Քաղաքական վտարանդիների համար, որոնք հայրենիքում հաճախ հասարակական երևելի դիրք էին գրավում, վտարանդիությունը բերեց սոցիալական կարգավիճակի կտրուկ անկման՝ կապված մասնագիտությամբ աշխատանք չլինելու հետ: Այնուամենայնիվ, թվում է, որ նրանք, ովքեր գաղթեցին, ավելի շատ ձեռք բերեցին, քան կորցրեցին: Բայց դրա փոխարեն լուրջ կորուստներ ունեցավ ուկրաինական հասարակությունը: Միայն վտարանդիների կազմակերպական գործունեությունը վկայում է այն մասին, թե որքան գործունյա մարդկանց կորցրեց Ուկրաինան: Այդ նույն բանն ես մտածում, երբ տեսնում ես, թե ինչ հսկայական ներդրում ունեն ուկրաինացիները՝ այդ բացառիկ աշխատասեր ժողովուրդը, իրենց ապաստան տված երկրների բարգավաճման գործում: Դա հատկապես վերաբերվում է Կանադային:



## ՈՒԿՐԱԻՆԱԿԱՆ ՍՓՅՈՒՌ

Ուկրաինական ծագում ունեցող ավելի քան 2,5 մլն մարդ այսօր ապրում է նախկին Խորհրդային Միության սահմաններից դուրս: \* Եթե՛հիկական ինքնագիտակցության տեսակետից, նրանց պայմանականորեն կարելի է բաժանել երեք խմբի: *Առաջինը կազմված է նրանցից, ում նախնիները հայրենիքը լքել են երեք, չորս կամ նույնիսկ հինգ սերունդ առաջ:* Որպես կանոն, նրանք արդեն չեն խոսում ուկրաիներեն, քիչ չփում ունեն կամ ընդհանրապես կապ չունեն ուկրաինական հասարակական կազմակերպությունների հետ և հաճախ շատ աղոտ պատկերացում ունեն իրենց էթնիկ արմատների մասին: *Երկրորդ խմբի ներկայացուցիչները, որ տարագիրների մեկ-երկու սերունդ ունեն իրենց ետևում,* սովորաբար ծանոթ են ուկրաինական մշակույթին և նույնիսկ անտարբեր չեն նրա նկատմամբ, բայց համարյա ոչինչ չեն անում այն պահպանելու համար: *Երրորդ խումբը, դա ակտիվ փոքրամասնությունն է, որ նվիրված է իր էթնիկական ժառանգությունը պահպանելու գաղափարին:* Հիմնականում կազմված լինելով երրորդ ալիքի քաղաքական վտարանդիներից և նրանց ժառանգներից (մասամբ՝ նաև նախորդ սերունդների վտարանդիներից), այն փաստորեն ուկրաինական համայնքների միջուկն է Արևմուտքում:

## Ամերիկյան ուկրաինացիները

Միանգամայն բնական է, որ *առավել մեծաթիվ, լավ կազմակերպված և ամենագործունյա ուկրաինական համայնքները կենտրոնացված են ԱՄՆ-ում ու Կանադայում:* Եթե խոսենք ամերիկյան ուկրաինացիների մասին, ապա նրանց համայնքի կարևոր առանձնահատկությունը՝ նրանց անհամեմատ մեծաթիվ լինելն է: Ուկրաինացիների մեծ մասը, լքելով հայրենիքը, հիմնականում ուղևորվում էին հատկապես դեպի ԱՄՆ, և այդ արտագաղթը ամենատևականն էր: Առաջին եկվորները ստեղծեցին համայնքի կազմակերպական հիմքերը՝ եկեղեցիներն ու միաբանությունները, որոնք հետագայում իրենց զարգացումն ունեցան երկրորդ ալիքի գաղթականների կողմից: Երրորդ ալիքը վրա հասավ ճիշտ ժամանակին, որպեսզի «հին» վտարանդիներից ընդունի հերթափոխը: Հիմք ունենալով իրենց նախորդների կողմից արդեն ստեղծված հաստատություններն ու կազմակերպությունները, նրանք կարող էին նորերը ստեղծել: Այսպիսով, ուկրաինական վտարանդիները ԱՄՆ-ում կարող էին ապահովել իրենց համայնքի ժառանգորդությունն ու զարգացման առաջընթացը: Նրանց բախտ էր վիճակվել ապրել մի հասարակությունում, որը բազմաթիվ հնարավորություններ ու միջոցներ էր ընձեռել՝ դրանք կյանքի կոչելու համար:

Սակայն նրանք, ովքեր ցանկանում էին պահպանել իրենց ազգային դեմքը, լուրջ դժվարությունների էին հանդիպում: Տնտեսական պայմանները ստիպում էին ուկրաինացիներին բնակություն հաստատել մեծ քաղաքներում, որտեղ շատ դժվար էր հավատարիմ մնալ գյուղացիության սովորույթներին: Դեռ մինչև վերջերս, ամերիկյան կրթական համակարգը ցայտուն արտահայտված ծուլման բնույթ ուներ: Արևմուտքի ուկրաինական մյուս համայնքների հետ համեմատած ամենամեծաթիվը լինելով հանդերձ, ամերիկյան ուկրաինացիներն, այնուամենայնիվ, համեմատաբար աննշան էթնիկական խումբ են կազմում ԱՄՆ-ում: Քանակի առումով նրանք գրավում են երկրում քսանմեկերորդ, իսկ միջինատյան նահանգներում, որտեղ հիմնականում կենտրոնացած են՝ իններորդ տեղը: Իսկ ինչ վերաբերում է նրանց քաղա-

\* XX դարի 80-ական թվականների տվյալներով:



քական ազդեցությանը, ապա այն ավելի քիչ է, քան կարելի էր սպասել: Ընդհանրապես, այդ առումով, բավականին դրական արդյունք տվեց երկրորդ համաշխարհային պատերազմից հետո «տեղահանվածների» մեծ հոսքը: Այն զգալիորեն աշխուժացրեց ուկրաինական համայնքը և մեծացրեց ակտիվիստների թիվը: Միաժամանակ, տեղահանվածների քաղաքականացման բարձր մակարդակը (հատկապես բանդերովականների ու մեկնիկովականների միջև գծաբաժանների հետ կապված) Ամերիկայում ուկրաինական համայնքին դարձրեց ամենաանջատական խմբավորումն Արևմուտքում:

Ինչպիսի՞ սոցիալ-տնտեսական առանձնահատկություններով են ամերիկյան ուկրաինացիները տարբերվում միջին ամերիկացիներից: Ավանդաբար, ուկրաինացու կերպարին էր շողկապվում կրթական համեմատաբար ցածր մակարդակը: Եվ դա զարմանալի չէ, քանի որ վաղ շրջանի և ավելի մեծաթիվ տարագրությունը կատարվում էր եվրոպայի ամենահետաժամաց տարածաշրջաններից, որտեղ անգրագիտությունն հասնում էր 50 %-ի: Այդ պատճառով էլ դեռ երկար ժամանակ, նույնիսկ Ամերիկայում ծնված ուկրաինացիները մի քանի անգամ ավելի շատ էին արհեստավորների մեջ, քան թե՛ ծառայողների: Վերջին ժամանակներս պատկերը փոխվում է: Եթե այժմյան մոտեցումները պահպանվեն, ապա մոտ ապագայում Ամերիկայում ուկրաինական երիտասարդությունն իր կրթական մակարդակով կգերազանցի ԱՄՆ-ի սպիտակ բնակչության և արևելավերոպական մի քանի այլ էթնիկական խմբերի միջին ցուցանիշները: Ավելի բարձր մասնագիտական-հասարակական կարգավիճակի հասնելու գործում զգալի ձեռքբերումներ ունեցան երրորդ սերնդի վտարանդիների երեխաները: Կարելի է վստահաբար ասել, որ այժմ ուկրաինացիները կազմում են Ամերիկայի միջին դասի անբախտելի մասը:

Ընդհանուր առմամբ, ուկրաինական ընտանիքներն այնքան էլ «ժամանակակից» չեն, ինչպես ամերիկյանները. այստեղ քիչ են ոչ լիարժեք (միայն մեկ ծնողով) ընտանիքները, շատերն ապրում են ծնողների կամ ավելի տարեց հարազատների հետ: Ուկրաինացիներն ավելի ուշ են ամուսնանում, չեն շտապում երեխա ունենալ և ավելի հաճախ են մնում միայնակ: Գյուղացիական ծագում ունենալով, նրանք պահպանողական են և՛ քաղաքականության մեջ, և՛ անձնական կյանքում:

Դիտարկողները նշում են, որ ուկրաինական համայնքն Ամերիկայում առանձնանում է կազմակերպությունների արտասովոր մեծ թվով: Մի քանիսը նույնիսկ խոսում են նրանց չափից դուրս շատ լինելու մասին: Այդ բացառիկ երևույթը կարելի է բացատրել նրանով, որ, նախ՝ զալիցիացիներն ու բուկովինացիներն ունեին հասարակական կազմակերպվածության տարածված սովորություն, երկրորդ՝ տարագիրների ամեն մի նոր ալիք ստեղծում էր իր հաստատությունները, երրորդ՝ հետպատերազմյան տեղահանվածները (որոնցից շատերը հասարակական ակտիվիստներ էին եղել Գալիչինայում) փորձում էին Ամերիկայում ստեղծել այն նույն կազմակերպությունները, որոնց ղեկավարում էին իրենց երկրում:

Ներկայումս, ԱՄՆ-ում ամենակայուն ուկրաինական հաստատություններն առաջին վտարանդիների հիմնադրումներն են՝ *Եկեղեցիներն ու միաբանությունները*: Կաթոլիկ եկեղեցին ներառում է մոտ 200 ծխական համայնք և 285 հազ. հավատացյալների, ուղղափառ կազմակերպությունները, որոնց մինչև իր մահկանացուն վերջերս կնքելը գլխավորում էր վեհափառ հովվապետ Մստիսլավ Սկրիպնիկը, հաշվվում է մոտ 125 հազ. ծխական, իսկ բապտիստները՝ մոտ 50 հազ.: *Միաբանություններից ամենախոշորն ու ամենահարուստը «Ուկրաինական ժողովրդական միությունն» է*, որը միավորում է 85 հազ. մարդու: Այն հրատարակում է Արևմուտքում ամենախիճ ու ամենաշատ ընթերցող ունեցող ուկրաինական «Ազատություն» շաբաթաթերթը, ինչպես նաև տեղեկատվական անգլիալեզու «Ուկրաինական շաբաթաթերթը»: Մոտ 25 հազ. անդամ ունի «Ուկրաինական եղբայրական միությունը» (նախկինում հայտնի որպես «Ուկրաինական աշխատավորների միություն»), որը հրատարակում է «ժողովրդի ազատություն» թերթն ու «Ֆորում» ամսագիրը: «Ուկրաինական կաթոլիկների միության» մեջ են մտնում 19 հազ. մարդ, այն հրատարակում է «Ամերիկա» ամենօրյա թերթը: Ուկրաինական պարբերական այլ հրատարակությունների ցուցակը շատ մեծ է՝ այստեղ ներկայացնելու համար:

Դեռ մինչև վերջերս ԱՄՆ-ում ուկրաինական բոլոր կազմակերպությունների ներկայացուցչական և համակարգող մարմինը «Ամերիկայի ուկրաինացիների միացյալ կոմիտեն» էր: Սակայն 1980 թ.-ին, երբ դրա վերահսկողությունն ստանձնեց բանդերովյան խմբավորումը, որպես հակակշիռ ստեղծվեց մի այլ կազմակերպություն՝ «Ամերիկայի ուկրաինացիների համակարգային ռադա»: Այս պառակտման հետևանքով ամերիկյան ուկրաինացիները զրկվեցին իրենց ընդհանուր շահերն օրենքով ներկայացնող միակ համարաճանաչ մարմնից:

վեցին իրենց ընդհանուր շահերն օրենքով ներկայացնող միակ համարաճանաչ մարմնից:

Շարունակելով զալիցյան սովորույթները և հաշվի առնելով կենսական կարևորագույն հանգամանքները, երրորդ ալիքի վտարանդիներն ԱՄՆ-ում ծավալեցին խնայողական և փոխատվական դրամարկղերի ու ընկերությունների, վարկային միությունների մի ամբողջ ցանցի գործունեությունը: Կանադայի և մյուս երկրների քույր կազմակերպությունների հետ միասին նրանք միավորում են մոտ 120 հազ. մարդու և ունեն մոտ 1 մլրդ գումարի վճարային մուտքեր: Մյուս կազմակերպությունը, որ Գին Աշխարհից տեղափոխել էին ամերիկյան միջավայր՝ «Կանանց ուկրաինական ազգային լիգան» էր (3,7 հազ. մարդ և 83 մասնաճյուղ ԱՄՆ-ում): Երիտասարդական բազմաթիվ կազմակերպություններից աչքի է ընկնում սկաուտական «Մոնարխ»-ը և առավել ազգայնական բանդերովյան «Ուկրաինական երիտասարդական ընկերությունը» (ՈՒԵԸ), որոնցից յուրաքանչյուրն ունի մոտ 4 հազ.-ական անդամ: Գիմնականում արևելյան ուկրաինացիների կողմից ստեղծված կազմակերպություններից հարկ է առանձնացնել «Գիտությունների ուկրաինական ինքնուրույն ակադեմիան», «Ուկրաինական դեմոկրատական երիտասարդական միությունը» (ՈՒԴԵՄ) և այլն: Մասնագիտական բազմաթիվ ընկերություններ միավորում են ուկրաինացի ինժեներներին, բժիշկներին, պրոֆեսորներին, ուսուցիչներին, լրագրողներին, գործարարներին: Գործում են պարային երիտասարդական խմբեր ու երգչախմբեր, որոնց կարելի է հանդիպել ուկրաինական համարյա յուրաքանչյուր համայնքում:


Վտարանդիները միշտ հոգ են տարել իրենց երեխաներին ուկրաիներեն լեզու սովորեցնելու մասին: Այդ ոլորտում անգլիալեզու ուսուցման և հոգևոր դաստիարակության հետ համատեղված ամենաբազմազան ծրագրերն է առաջարկում Ուկրաինական կաթոլիկ եկեղեցու դպրոցական համակարգը, որը 1970 թ.-ին կազմված էր 54 ծխական դպրոցից, 6 բարձրագույն ուսումնական հաստատությունից և 2 քոլեջից, որտեղ սովորում էին 16 հազ. մարդ: Այսպես կոչված շաբաթօրյա դպրոցներն իրենց ծրագրում ունեն միայն ուկրաինագիտական ճյուղեր: 1970 թ.-ին ԱՄՆ-ում հաշվվում էր այդպիսի մոտ 50 դպրոց՝ 200 մանկավարժներով ու 3,7 հազ. սովորողներով: Գիտական հաստատություններից ամենահայտնիները «Շևչենկոյի անվան գիտական ընկերությունն» ու «Արվեստի և գիտությունների ուկրաինական ակադեմիան» են, որոնք ձգտում են շարունակել իրենց լվովյան ու կիևյան նախատիպերի պահպանումը: Մշակութային ժառանգությունը պահպանելու գործում ուկրաինական համայնքի առավել տպավորիչ ձեռքբերումն Ամերիկայում եղավ միջոցների հանգամանակությամբ՝ 1970 թ.-ին Զարվարդի համալսարանում ուկրաինագիտական երեք ամբիոն հիմնելու համար: Այնուհետև դրանց հիմքի վրա ստեղծվեց «Զարվարդի ուկրաինական հետազոտությունների ինստիտուտը»: Այդ նախաձեռնության հաջողությունն զգալի չափով պայմանավորված էր Օմեյյան Պրիցակի անմիջական ղեկավարությամբ և 10 հազ. ուկրաինացի-վիրատուների առատաձեռնությամբ, որոնք հանգանակեցին 6 մլն դոլար:

Ամերիկյան ուկրաինացիների պատմության վերջին շրջանների մյուս մեծագույն իրադարձությունը 1964 թ.-ին Վաշինգտոնում Տարա Շևչենկոյի արձանի տեղադրումն էր, որը 100 հազարից ավելի մասնակից էր հավաքել: 1970-ական թվականներին ամերիկյան ուկրաինացիները մասնակցեցին բոլորի ակցիաների՝ ընդդեմ ՌԻՄՍ-ում ռուսականացման և այլախոհների դեմ ճնշումների ու հալածանքների: Այնպիսի այլախոհների ազատ արձակումն ու Զյուսիսային Ամերիկա գալը, ինչպիսիք էին Վալենտին Սորոզը, Պետրո Զրիկորենկոն, Սվյատոսլավ Կարավանսկին, Նինա Ստրոկատա-Կարավանսկան, Նադիյա Սվիտլիչնան, Լեոնիդ Պյուչը (փոխարդվեց Ֆրանսիա) և Ռաիսա ու Միկոլա Ռուդենկոները, զգալիորեն բարձրացրեցին ուկրաինական համայնքի ոգին: Սակայն 1980-ական թվականներին իրավիճակը նկատելիորեն վատթարացավ, երբ ռազմական հանցագործությունների խնդիր, որն ավելի սրվեց Իվան Դեմյանյուկի գործի հետ կապված, ուժեղացրեց ուկրաինական և իրենական համայնքների հարաբերությունների լարվածությունը: 1983 թ.-ին ուկրաինացիներին, որոնք նշում էին սովասպանդի 50 տարին, հաջողվեց ամերիկացիներին ծանոթացնել այդ աղետի հանգամանքների և բուն փաստի հետ: 1988 թ.-ին, Ուկրաինայում քրիստոնեության հազարամյակի տոնակատարության առիթով, նրանք կրկին միավորեցին իրենց ուժերը:

Միանգամայն ակնհայտ է, որ անցյալը դեռևս ճնշում է ԱՄՆ-ի ուկրաինացիների գիտակցությունը և թույլ չի տալիս նրանց լիաուժ ու լիաբուխ սեռովել ապագային: Մի քանիսը փորձում են դա բացատրել նրանով, որ ուկրաինական համայնքի ապագան, որպես այդպիսին, առանձնապես ոչ մի հեռանկար չունի: Մոտ տարագիրների հոսքը շատ աննշան է: Նախկին հայրենիքի հետ կապերը նոր միայն սկսում են կարգավորվել: Միաժամանակ ուժեղանում է



ծուլման գործընթացը: 1980 թ.-ին, ԱՄՆ-ի 730 հազ. ուկրաինական ծագում ունեցող բնակիչներից (սրա մեջ չեն մտնում անդրկարպատյան ռուսիների մոտ 500 հազ. հետնորդները) միայն 123 հազարն էին իրենց մայրենի լեզուն ուկրաիններենը համարում: Այնուամենայնիվ, կան նաև հուսադրող նշաններ: Ի տարբերություն իրենց նախորդների, երրորդ ալիքի վտարանդիները՝ ստեղծելով երիտասարդության հետ աշխատանք տանելուն նպատակաուղղված կազմակերպություններ, մեծ հաջողությունների հասան՝ նոր սերնդի հասարակական գործիչներ դաստիարակելու գործում: Նրանցից շատերը զբաղվում են բիզնեսով, մտավոր գործունեությամբ և գերազանց կողմնորոշվում են ամերիկյան միջավայրում: Բացի այդ, վերջին ժամանակներս ԱՄՆ-ում սկսել են շատ ավելի հանդուրժելի վերաբերվել ազգային խտրու-



**Ուկրաինական եկեղեցի Ռոչեստերում (Նյու-Յորքի նահանգ):**  
Ճարտարապետ՝ Ռադոսլավ ժուկ

յուններին: Վերջապես, Ամերիկայում ծնված շատ ուկրաինացիներ սկսում են գիտակցել որոշակի էթնիկ խմբին պատկանելու հոգեբանական ու սոցիալական առավելությունները: Այդ իսկ պատճառով, բացառված չէ, որ Ամերիկայի արդեն հարյուրամյա պատմություն ունեցող ուկրաինական համայնքն ավելի շատ բարենպաստ հեռանկարներ ունի, քան մտածում են որոշ հոռետեսներ:

## Կանադական ուկրաինացիներ

Արևմտքի բոլոր ուկրաինական համայնքներից ամենաբարենպաստ վիճակում գտնվում են կանադական ուկրաինացիները: Հաշվվելով մոտ 750 հազ. մարդ (որոնցից 530 հազ.-ի ծնողները երկու կողմից էլ ուկրաինացի են), նրանք թվով մոտենում են ԱՄՆ-ի ուկրաինացիներին: Սակայն Կանադայում ուկրաինական համայնքի ընդհանուր իրավիճակը շատ անգամ ավելի լավ է, իսկ ազդեցությունն էլ՝ ավելի մեծ: Քանի որ Կանադայի բնակչության թիվը 10 անգամ քիչ է ԱՄՆ-ի բնակչության թվից, ուկրաինացիներն իրենց այստեղ զգում են ինչպես մեծ ծուկը՝ փոքր ջրավազանում: Եթե ԱՄՆ-ում ուկրաինացիներն էթնիկ խմբերի մեջ ըստ թվաքանակի գրավում են 21-րդ տեղը, ապա Կանադայում՝ 5-րդը, կազմելով ամբողջ բնակչության 3 %-ը: Որպես կանադական տափաստանները բնակեցնող մարդիկ, նրանք կարող են իրենց համարել այդ հողերի ռաիվիրաները: Որոշ ուկրաինացիներ նույնիսկ կարծում են, թե իրենք Կանադան հիմնադրող ազգերից մեկն են: Տեղաբաշխվելով հոծ խմբերով՝ առաջին տարագիրները Կանադայում ավելի լավ կարողացան դիմակայել ծուլմանը, քան նրանց հայ-

րենակիցներն ԱՄՆ-ում: Արդյունքում, այստեղի տարագիրների երրորդ, չորրորդ և նույնիսկ հինգերորդ սերնդի ոչ քիչ ուկրաինացիներ խոսում են իրենց նախնիների լեզվով և ակտիվ մասնակցություն են ունենում ուկրաինական համայնքների գործերում:

Սակայն կանադական ուկրաինացիների ապագան նույնպես անամպ ու անխռով չէ. նրանց հարաբերական միասնականությանը սպառնում է արդիականացումը: Քաղաքակենտրոնացման համընդհանուր ձգտումը քայքայում է տափաստաններում միակուռ բնակավայրերը՝ Կանադայում ուկրաինական կյանքի այդ անրոցները: 1931 թ.-ին կանադական ուկրաինացիների ավելի քան 80 %-ն ապրում էին գյուղական շրջաններում, իսկ այսօր 75 %-ից ավելին քաղաքաբնակներ են: Կանադայում ուկրաինական կյանքի կենտրոններ են էդմոնտոնը, Վինիպեգը և հատկապես Տորոնտոն, որտեղ հիմնավորվել են երրորդ ալիքի շատ վտարանդիներ: Չնայած այդ քաղաքներից յուրաքանչյուրում կա մեծ ու ակտիվորեն գործող 70-80 հազ. մարդուց կազմված ուկրաինական համայնք, սակայն քաղաքային կյանքը Կանադայում քիչ է նպաստում էթնիկական ինքնության պահպանմանը: Դա են հաստատում ամենատարբեր փաստերը: Ահա դրանցից մի քանիսը. 1921 թ.-ին կանադական ուկրաինացիների 90 %-ից ավելին մայրենի լեզուն անվանում էին ուկրաիններենը, 1971 թ.-ին այդպիսի պատասխան տալիս էին արդեն 49 %-ը, իսկ դրանից հետո այդ տոկոսն ավելի ու ավելի է փոքրանում: 1931 թ.-ին ամուսնությունների 80 %-ից ավելին կայանում էր միայն ուկրաինացիների միջև, այժմ ներէթնիկական ամուսնությունների տեսակարար կշիռը հազիվ 50 % է կազմում: Նույնիսկ միանգամայն անորոշ է եկեղեցու ապագան: 1931 թ.-ին ուկրաինական կաթոլիկ և ուղղափառ եկեղեցիները ներգրավում էին ուկրաինացիների 82 %-ին, այժմ՝ ընդամենը 52 %-ին:

Սակայն, եթե կանադական ուկրաինացիներն ունենում են այն նույն խնդիրները, ինչ նրանց համերկրացիները հարավային սահմանից անդին, նրանք շատ ավելի լավ հնարավորություններ են ունենում դրանք լուծելու համար: Ամենից առաջ՝ նրանք շատ ամրակուռ են ու լավ կազմակերպված: Օրինակ՝ կանադական ուկրաինացիներին հաջողվել է պահպանել միակ, բոլորի կողմից ճանաչված «Կանադայի ուկրաինացիների կոմիտե» (ԿՈՒԿ) ներկայացուցչական կազմակերպությունը: Բացի այդ, Տորոնտոն «Ազատ ուկրաինացիների համաշխարհային վեհաժողովի» բազան է: Կանադայում գործում են նաև ԱՄՆ-ում «տեղահանվածների» կողմից ստեղծված կազմակերպություններից շատերը և նրանց միջև կապերը բավականին ամուր են: Եթե ԱՄՆ-ում առաջին ալիքի վտարանդիների հիմնած կազմակերպություններից շատերը լուծարվեցին (բացի եկեղեցիներից ու միաբանություններից), ապա Կանադայում նրանք շարունակում են գործել: Միաժամանակ, Կանադայում զարգացած է ուկրաինական մասնագիտական և բիզնես-ակումբների ցանցը, որը միավորում է հեղինակավոր և ժամանակակից մասնագիտությունների ոլորտներում աշխատող երիտասարդ ու եռանդուն ուկրաինացիներին: Առաջին տարագիրների թոռների ու ծոռների մոտ հատուկ ժողովրդականություն են վայելում պարային բազմաթիվ խմբերը: Միայն Արևմտյան Կանադայում գոյություն ունի այդպիսի 150 խումբ, որոնց մեջ ընդգրկված են մոտ 10 հազ. մարդ: Այնուամենայնիվ, կանադական ուկրաինացիների կազմակերպվածության աստիճանը չափազանցելու հարկ էլ չկա: Հասարակական կազմակերպություններում նրանց 10-15 %-ն է միայն ընդգրկված: Ցանկանալով ներգրավել նոր անդամներ, այդ կազմակերպությունների մեծ մասն աշխատում է խուսափել քաղաքական կամ ազգայնական երանգավորումից և կենտրոնանալ լուսավորական ու մշակութային գործունեության վրա:

Ի տարբերություն ԱՄՆ-ի իրենց հայրենակիցների, կանադական ուկրաինացիները ծավալել են մշակութային սեփական ավանդույթները: Գրողները, ինչպես օրինակ՝ Իլյա Կիրիլյակը տվել է ուկրաինացիների կողմից անբնակ տափաստանների յուրացման պատմության մեծարժեք գրական լուսաբանություններ (ուկրաիններեն ու անգլերեն լեզուներով): Ամբողջ երկրում հայտնի նկարիչ Վիլյամ Կուրիլիկն իր ստեղծագործություններում հաճախ օգտագործում է ազգային մոտիվները: Ճարտարապետ Ռադոսլավ ժուկը ավանդույթային և արդիական տարրերը համատեղում է ուկրաինական եկեղեցիների ճարտարապետության մեջ: Սակայն կանադական ուկրաինացիների, հատկապես երկրի արևմուտքում ապրողների, թերությունը կայանում է նրանում, որ ազգային մշակույթի զարգացման իրենց մոտեցումներում նրանք չափից դուրս են կողմնորոշված դեպի ժողովրդական բանահյուսությունն ու նահապետականությունը, ինչը բնորոշ չէ ԱՄՆ-ի ուկրաինացիներին: Հավանաբար դա պայմանավորված է նրանով, որ Կանադային բաժին է հասել ուկրաինական մտավորականության ավելի քիչ մասը, քան ԱՄՆ-ին:

Ամերիկյան ուկրաինացիների նման, կանադականները նույնպես ստեղծել են շաբաթօրյա



և, այսպես կոչված՝ «հայրենի դպրոցներ», ուր հաճախում են հիմնականում երրորդ արիւնքի տեղահանվածների երեխաները: Բացի այդ, ուկրաիններեն լեզու կարելի է սովորել սովորական պետական դպրոցներում, և մոտ 10 հազ. աշակերտ օգտվում են այդ հնարավորությունից: Ոչ այնքան վաղ ժամանակներից արևմտյան նահանգներում իրականացվում է անգլո-ուկրաինական երկլեզու ուսուցման գաղափարը: ԱՄՆ-ի հետ համեմատած, մյուս տարբերությունը վերաբերում է համալսարանական մակարդակով կատարվող ուկրաինական հետազոտություններին: Ի տարբերություն մասնավոր նվիրատվությունների վրա հիմնված «Չարվարդի ուկրաինական հետազոտությունների ինստիտուտի», նրա կանադական նմանակը՝ «**Ուկրաինական հետազոտությունների կանադական ինստիտուտը**» (ստեղծվել է 1976 թ.-ին և սկզբում գլխավորել է Սանուի Լուպուլը) զգալի չափով ֆինանսավորվում է Ալբերտա նահանգի վարչակարգի կողմից: Ուկրաինական հետազոտությունները Տորոնտոյի, Վինիպեգի, Սասկատոնի և այլ տեղերի համալսարաններում նույնպես ֆինանսավորվում է պետության կողմից:

Կանադայի ուկրաինական համայնքի առավել տպավորիչ գիծն այն է, որ նրա ներկայացուցիչների համեմատաբար *ավելի մեծ մասն է ակտիվորեն մասնակցում երկրի քաղաքական կյանքին*: Ուկրաինացիները եղել են այնպիսի մեծ քաղաքների քաղաքապետեր, ինչպիսիք են՝ Էդմոնտոնն ու Վինիպեգը: Սոտավորապես 100 ուկրաինացի ընտրվել են նահանգների (հիմնականում՝ արևմտյան) օրենսդիր մարմիններում: Սոտ 30-ը եղել են ֆեդերալ պառլամենտի դեպուտատներ, հինգը՝ սենատի, տասնյակները՝ երկրի ու նահանգի նախարարների կաբինետի անդամներ: Իհարկե, ուկրաինացիները հեռու են նրանից, որ ներկայացնեն Կանադայի առաջատար քաղաքական ուժերից մեկը, սակայն Արևմուտքի բոլոր ուկրաինական համայնքներից ամենաշատ քաղաքական ազդեցությունն ունեն կանադականները:

Երկրորդ աշխարհամարտի ժամանակ մոտ 35-40 հազ. ուկրաինացի (նրանց ընդհանուր թվի մոտ 15 %-ը), որպես կամավորներ, մտան Կանադական բանակ: Մինչև հիմա էլ դա կանադական ուկրաինացիների համար առանձնահատուկ հպարտության նյութ է: Սակայն պատերազմից հետո նրանց միջև նորից գծադրություններ սկսվեցին: 1940-ականների վերջերին և 1950-ականների սկզբներին թե՛ ժառանգալ պայքարը ազգայնական ու կոմունիստամետ ուժերի միջև: Ուկրաինացի կոմունիստամետների դիրքերն ամրացան հիմնականում շնորհիվ հաղթանակած հորհուրդների հետ իրենց կապերի: «Ուկրաինական աշխատավորների միության» անդամների թիվը 1946 թ.-ին հասավ 13 հազ.-ի: Նրանք նույնիսկ փորձեցին արգելափակել ազգայնականորեն կամ հակախորհրդայնականորեն տրամադրված տեղահանվածների ներգաղթը: Այդ փորձերը խափանվեցին, դրանց հաջորդեց նաև այլ անհաջողություններ: Դեպատերազմյան բարգավաճման և «սառը պատերազմի» սկսվելու հետ կոմունիզմը կորցրեց իր ձգողական ուժը: *Կոմունիստամետ տրամադրված իսկական ուկրաինացի-հայրենասերների վրա սթափեցնող ազդեցություն ունեցավ Ուկրաինայի ռուսականացումն ու 1968 թ.-ին խորհրդային ներխուժումը Չեխոսլովակիա: Ժամանակի ընթացքում ուկրաինական համայնքում առաջին պլան մղվեցին եռանդուն ու գործունյա «տեղահանվածները»:* Վերջին տարիներին կոմունիստների ներկայացուցիչներ էին հանդես գալիս մի խումբ տարեց ուկրաինացիներ, որոնք առևտրական կապերի մեջ էին խՍՀՄ-ի հետ. դա այն ամենն էր, ինչ մնացել էր երբևէ հզոր շարժումից:

1960-ական թվականներին առաջ եկավ ուկրաինացիներին շատ հուզող և մի խնդիր. *բազմամշակույթի խնդիրը*: Քվեբեկ նահանգում ֆրանկ-կանադացիների ակտիվ ելույթների տպավորության տակ էթնիկ խմբերը, որոնք պատկանում էին, այսպես կոչված՝ «երրորդ տարրին» (այսինքն՝ ոչ անգլո-և ֆրանկոլեզու), կառավարության առաջ բարձրացրեցին մշակույթի բնագավառին ամենվող իրենց պահանջները: Ուկրաինացիները կառավարության վրա ճնշում գործելու հետևանքով հաջողությունների հասածների առաջին շարքերում էին: Նրանք ստիպեցին կառավարությանը՝ մշակելու բազմամշակութայնական քաղաքականության հիմնական սկզբունքները և դրանք 1987 թ.-ին մտցնելու սահմանադրության մեջ:

1970-80-ական թվականներին Կանադայում ուկրաինական համայնքի հաջողությունների շարքին կարելի է դասել համալսարաններում ուկրաինական հետազոտությունները և «Ուկրաինական հետազոտությունների կանադական ինստիտուտի» իրատարակած անգլիալեզու «**Ուկրաինայի հանրագիտարանը**»: Այդ իրատարակության հիմքում դրված էր **Վուդդիմիր Կուրիյովիչի** խմբագրությամբ ուկրաինալեզու 10-հատորյա աշխատությունը: Խորհրդային Ուկրաինայի այլախոհների քաղցրելու գործողությունները նպաստեցին կալանավարներից

ազատելու *Դանիլո Շունուկին* և *Յոսիպ Տերեվիին*, որոնք 1987 թ.-ին եկան Կանադա: **Սովասպանդի 50-ամյակին կանադական ուկրաինացիները նկարահանեցին այդ աղետի վերաբերյալ փաստագրական ֆիլմ, որը լայն ճանաչում գտավ**: Ինչպես և ԱՄՆ-ում, 1980-ական թվականներին ռազմական հանցագործությունների խնդիրը հանգեցրեց Կանադայում ուկրաինացիների ու իրենցի հարաբերությունների սրացմանը:

## Ուկրաինական համայնքները Դյուսիսային Ամերիկայի սահմաններից դուրս

Այս համայնքները կարելի է բաժանել երկու խմբի: Մեկում գերակշռում են ծուլված «հին» տարագիրները՝ ոչ մեծ թվով «տեղահանվածների» հետ միասին: Սրանց թվում են Բրազիլիայի, Արգենտինայի և լատինաամերիկյան մյուս երկրների ուկրաինացիները: Այս համայնքներն այս կամ այն չափով ավելի վատ սոցիալ-տնտեսական պայմաններում են ապրում, քան մյուսները: Նույնիսկ հիմա դրանք կազմված են աղքատ ֆերմերներից: Չնայած իրենց մեծաթիվ լինելուն, կազմակերպվածությունը շատ թույլ է: Դրանցում հասարակական կյանքի հիմնական, իսկ հաճախ նաև միակ կենտրոնատեղին եկեղեցին է: Այս խմբի մեջ կարելի է ներառել նաև Ֆրանսիայի ուկրաինացիներին, քանի որ նրանք հիմնականում երկրորդ արիւնքի տարագիրներից են: Այնուամենայնիվ, ֆրանսիական ուկրաինացիները տարբերվում են լատինաամերիկյաններից, քանի որ հիմնականում աշխատում են արդյունաբերության մեջ և ձեռք են բերել համեմատաբար բարձր կենսամակարդակ: Ֆրանսիան դարձել է նաև այսպես կոչված «պետլյուրովյան» վտարանդիների մի մասի և «տեղահանվածների» հայրենիքը, որոնք ստեղծել են տարագիր մտավորականների շատ կարևոր կենտրոն: Դրա շնորհիվ, երկրորդ աշխարհամարտից հետո, փախստականների գիտական հիմնական կենտրոններից մեկը դարձավ Փարիզի մոտակայքի Սարսել քաղաքը: Այստեղ, Վուդդիմիր Կուրիյովիչի ղեկավարությամբ և ամբողջ Արևմուտքի ուկրաինական սփյուռքի ֆինանսական աջակցությամբ, իրատարակության պատրաստվեց նշանավոր «**Ուկրաինագիտության հանրագիտարանը**»:

Ուկրաինացի վտարանդիների երկրորդ խումբը համարյա ամբողջությամբ կազմված է «տեղահանվածներից» ու նրանց ժառանգներից: Այս խմբի մեջ են մտնում Գերմանիայի, Մեծ Բրիտանիայի, Իտալիայի և Ավստրալիայի համայնքները:

### Գերմանիա

Գերմանիայի ուկրաինական համայնքը հիմնականում կազմված է ոչ մեծաթիվ քաղաքական վտարանդիներից և նրանց ժառանգներից, որոնք 1940-ականների վերջին տարբեր պատճառներով չեն մասնակցել ճամբարներից «տեղահանվածների» զանգվածային արտահոսքին: Մի մասն արդեն այն տարիքին չէին, որպեսզի նոր կյանք սկսեին, մի մասն էլ կապված էին քաղաքական կուսակցությունների հետ, որոնք վճռել էին իրենց շտաբակայանները հիմնել հատկապես Գերմանիայում, քանի որ վերջինս մոտ էր Ուկրաինային: Մնալու որոշումը ճակատագրական եղավ ՌԼԿ-Բ-ի առաջնորդ Ստեպան Բանդերայի և մի այլ նշանավոր ազգայնականի՝ Լև Ռեբետի համար: Խորհրդային գործակալ Բոգդան Ստաշինսկին 1957 թ.-ին սպանեց Ռեբետին, իսկ երկու տարի անց՝ Բանդերային:

Մյունխենում այսօր էլ իր աշխատանքն է շարունակում դեռևս 1920 թ.-ին հիմնված «**Ուկրաինական ազատ համալսարանը**»: Այսպիսով, Գերմանիան երկրորդ հայրենիքը դարձավ երրորդ այլիքի վտարանդիության զգալի թվով (չնայած և շարունակ նվազող) քաղաքական առաջնորդների, հասարակական գործիչների ու գիտնականների համար, որոնք չգանկացան լքել Եվրոպան: Բայց և այնպես ուկրաինական համայնքն այստեղ ժողովրդագրական լայն բազա չունի:

### Մեծ Բրիտանիա

Գերմանիայի իրենց հայրենակիցների համեմատությամբ ուկրաինացիները Մեծ Բրիտանիայում որոշ չափով հակառակ իրավիճակում էին: Նրանց մեծ մասը ՏՏ «Գալիչինա» դիվիզիայի մարտիկներ էին, որոնք հանձնվել էին անգլիացիներին և պատերազմից հետո բերվել Մեծ Բրիտանիա: Շատերը հետագայում փոխադրվեցին Դյուսիսային Ամերիկա, սակայն մի մասը մնաց աշխատելու արդյունաբերական այնպիսի խոշոր կենտրոններում, ինչպիսիք



էին՝ Մանչեստրը, Քովենտրին, Բրադֆորդը, Նոտինգհեմը: Այստեղ, ի տարբերություն Գերմանիայի, ուկրաինացիների մեջ շատ քիչ մտավորականներ կային: Ուկրաինուհիներ չլինելու պատճառով, շատ տարագիրներ ամուսնացան տեղացիների հետ: Անկախ ամեն ինչից, ՏՏ «Գալիչինա» դիվիզիայի նախկին մարտիկների մոտ մինչև հիմա էլ ուժեղ է ազգայնականության մարտնչող ոգին:

### Իտալիա

Ուկրաինական սփյուռքի համար ոչ մեծ, սակայն կարևոր կենտրոն է Դոմոնդը: Խորհուրդների կողմից 1946 թ.-ին Ուկրաինական հունա-կաթոլիկական եկեղեցու գործունեությունն արգելելուց հետո, նրա շատ հաստատություններ տեղափոխվեցին «հավերժական քաղաք»։ Այստեղ են գտնվում Ուկրաինայի հետ կապ ունեցող վանականների ուխտի շտաբակայանները՝ վասիլիանների, սուուդիտների և այլն: 1959 թ.-ին այստեղ բացվեց, այսպես կոչված՝ Փոքր ճեմարանը: Հիմնականում, 1944-1984 թ.թ.-ներին Ուկրաինայի կաթոլիկ եկեղեցու հովվապետ, կարդինալ Սլիպիյի շնորհիվ 1960-ական թվականների վերջին Դոմոնդում սկսեց գործել Ուկրաինական կաթոլիկ համալսարանը, իսկ 1969 թ.-ին կառուցվեց սբ. Սոֆիայի մայր տաճարը: Իտալիայի մայրաքաղաքում այդպիսի հաստատությունների առկայությունը վկայում է այն մասին, որ Ուկրաինական հունա-կաթոլիկական եկեղեցին ոչնչացնելու Խորհուրդների ջանքերը զուր էին: Այդ փաստն առանձնակի ուժով դրսևորվեց, երբ 1988 թ.-ի ամռանը ամբողջ աշխարհից հազարավոր ուկրաինացի-կաթոլիկներ հավաքվեցին Դոմոնդ՝ Ուկրաինայում քրիստոնեության հազարամյակի տոնակատարությանը մասնակցելու համար: Այստեղ արժե հիշատակել և այն, որ խորհրդային իշխանություններն այդ դարակազմիկ իրադարձության տոնակատարության կենտրոն ընտրեցին Մոսկվան և ոչ թե Կիևը, որն այդ դերակատարության համար շատ ավելի իրավունք ուներ:

### Ավստրալիա

Ավստրալիայի ուկրաինացիներն իրենց ծագումը նույնպես սկսել են «տեղահանվածներից»: Չնայած իր աշխարհագրական մեկուսացվածությանն ու հեռավորությանը, այն սփյուռքի առավել կազմակերպված և ակտիվ համայնքներից մեկն է: 1951 թ.-ի շեմին այստեղ էին փոխադրվել բոլոր «տեղահանվածների» մոտ 10 %-ը (մոտ 21 հազ. մարդ): Ի տարբերություն վտարանդիության նախորդ փուլերի, այստեղ արևելյան ու արևմտյան ուկրաինացիների քանակը մոտավորապես նույնն է եղել. դրանք հիմնականում երիտասարդ, ակտիվ ու եռանդուն տղամարդիկ էին: Մեծ մասը բանվորներ էին, սակայն մտավորականություն էլ քիչ թիվ չէր կազմում: Տարագիրները տեղաբաշխվում էին հիմնականում խոշոր քաղաքներում՝ Սիդնեյում, Մելբուռնում և Ադելաիդայում: Ինչպես միշտ, սկսնակների համար շատ դժվար էր և նույնիսկ մտավորականներն էին ստիպված աշխատել որպես հասարակ բանվոր: Այնուամենայնիվ, հայտնվելով զարգացած տնտեսություն ունեցող երկրում, տարագիրները մշտապես բարելավում էին իրենց սոցիալ-տնտեսական վիճակը: Այժմ Ավստրալիայի 30 հազարանոց ուկրաինական համայնքը կարող է հպարտանալ իր բավականին բարձր կենսամակարդակով և հեղինակավոր մասնագիտությունների մեծաթիվ ներկայացուցիչներով:

Ի տարբերություն ԱՄՆ-ի և Կանադայի, որտեղ «տեղահանվածների» գալու պահին արդեն կային «հին վտարանդիների» կազմակերպություններ, Ավստրալիայում այդ առումով պետք էր սկսել զրոյից: Բայց և այնպես, կարճ ժամանակում հաջողվեց լուրջ ձեռքբերումներ ունենալ: Համայնքի ոչ մեծաթիվ և համեմատաբար մեկուսացված լինելը Ավստրալիական ուկրաինացիներին ստիպեցին միավորվելու և կազմակերպվելու: 1953 թ.-ին ստեղծվեց համակարգող և ներկայացուցչական մարմին՝ «Ավստրալիայի ուկրաինական կազմակերպությունների միությունը», որովք թիվն այդ ժամանակ հասնում էր արդեն 17-ի: Ավանդաբար, ուկրաինական ամենաազդեցիկ հաստատություններ դարձան կաթոլիկ և ուղղափառ եկեղեցիները: Մյուսների շարքում առանձնանում էին Կանանց միությունը (մոտ 700 անդամ), «Պլաստը» և ՌԷԸ-ն (յուրաքանչյուրում մոտ 800 մարդ) և տարբեր մասնագիտական ու մշակութային-լուսավորական միավորումներ: Շաբաթօրյա դպրոցների համակարգը երիտասարդությանը ծանոթացնում է ուկրաինական լեզվի ու մշակույթի հետ: Դեռ վերջերս ամեն տարի այստեղ էին հաճախում մոտ 1 000 աշակերտ, սակայն զնալով նրանց թիվը կրճատվում է: Սկզբում ուկրաինագիտության բնագավառում հետազոտությունների կենտրոն էր «Շևչենկոյի անվան գիտական ընկերությունը», իսկ 1970-ական թվականների վերջին ուկրաինագիտության ծրագրեր մտցվեցին նաև Մոնաշի (Մելբուռնի) և Մաքվորայի (Սիդնեյ) համալսարաններում:

Իրենց բոլոր ձեռքբերումների հետ միասին, ուկրաինացիներն Ավստրալիայում բախվում են այն նույն դժվարություններին, ինչ որ իրենց հայրենակիցներն ամբողջ Արևմուտքում: Այստեղ ծնված երիտասարդները շատ արագ ծուլվում են: Տարագիրների ավագ սերունդը պակասում է, նոր հոսք համարյա չկա, այնպես որ Ավստրալիայում ուկրաինական համայնքին շատ անորոշ ու մռայլ ապագա է սպասվում:

## Ուկրաինացիներն Արևելյան Եվրոպայում

Արևելյան Եվրոպայի մոտավորապես 450 հազ. ուկրաինացիների իրավիճակը զգալիորեն տարբերվում է ինչպես Արևմուտքում, այնպես էլ նախկին ԽՍՀՄ-ում իրենց հայրենակիցների վիճակից: Նրանք, որ ապրում են Սլովակիայում ու Ռումինիայում, բնակեցնում են իրենց պատմական տարածքները, որոնք տարբեր նկատառումներով Ստալինի որոշմամբ չմիացվեց խորհրդային Ուկրաինային: Լեհաստանում, ինչպես տեսանք, ուկրաինացիներին քշում էին իրենց իսկ հողերից, սակայն նրանք շարունակում են ապրել այդ պետության սահմանամերձ տարածքներում: Իսկ նախկին Հարավսլավիայում ուկրաինացիները դարձան նորագույն ժամանակների գաղթի գործընթացի նախակարապետները:

### Նախկին Հարավսլավիայի հանրապետությունները

Դեռևս XVIII դարի կեսերին, երբ Ավստրիացիները օսմանյան թուրքերին վճռեցին ներկայիս Բաշկա և Բանատ (Սերբիա) տարածքներից, դրանով նպաստեցին մարդկանցից դատարկված այս տարածքներում Անդրկարպատների գյուղացիների վերաբնակվելուն: Արդյունքում՝ Բաշկայի շրջանում, հատկապես Ռուսկի Կրստուր և Նովի-Սադ քաղաքների մերձակայքում, ինչպես նաև Խորվաթիայում, առաջ եկան ուկրաինական գաղթավայրեր: XX դարի սկզբում Հարավսլավիայում ուկրաինացիների թիվն աճեց, երբ Գալիչինայից Բոսնիա գաղթեցին մոտ 10 հազ. ուկրաինացի, իրենց համար բնակության վայր ընտրելով Բանյա-Լուկայի շրջանը: Համարյա բոլոր տարագիրները գյուղացիներ էին և ապրում էին ինքնապարփակ գյուղական համայնքներով: Դա նրանց ժառանգներին, որ հիմնականում հույն-կաթոլիկներ էին, թույլ տվեց պահպանելու ուկրաինա-ռուսինական ազգային ինքնագիտակցության բավականին բարձր մակարդակը և հասցնել այն մինչև մեր օրերը, ինչքան որ դա հնարավոր էր պատերազմական վերջին խառնակ ժամանակների պայմաններում:

### Ռումինիա

Դատելով ամեն ինչից, Ռումինիայի մոտ 70 հազ. հոգուց կազմված ուկրաինական համայնքը, Արևելյան Եվրոպայի ուկրաինական բոլոր վտարանդի խմբակցությունների համեմատությամբ, գտնվում է ամենածանր վիճակում՝ ինչպես սոցիալ-տնտեսական առումով, այնպես էլ՝ ազգային: Ցրված լինելով Հարավային Բուկովինայի, Դոբրուջայի, Մարամարոշի և Բանատի շրջաններում մեկ, նրանք մեկուսացած են մեկը մյուսից և կապ չունեն Արևմուտքի ու հայրենիքի ուկրաինացիների հետ: Դրանք հիմնականում չքավոր գյուղացիներ են: Քանի որ Ռումինիան Արևելյան Եվրոպայի ամենաաղքատ երկրներից մեկն է, այստեղի ուկրաինացիներն իրենց սոցիալ-տնտեսական վիճակը բարելավելու շատ փոքր հավանականություն ունեն:

Իրավիճակն ավելի է վատթարանում ռումինական կառավարության խտրական քաղաքականության հետևանքով: Ընդհուպ մինչև 1947 թ.-ը, այն ընդհանրապես իրաժարվում էր ուկրաինացիներին որպես առանձին ազգ ճանաչելուց: Իրավիճակը որոշ չափով բարելավվեց 1948-1963 թ.թ.-ների հարաբերականորեն ազատական ժամանակաշրջանում, երբ գյուղերում թույլատրվեց բացել ուկրաինական դպրոցներ. դրանց թիվը հասավ մոտ 120-ի, իսկ նրանցում սովորում էին մոտ 10 հազ. աշակերտ: Բուխարեստի համալսարանում բացվեց ուկրաիներեն լեզվի և գրականության բաժին: Սակայն 1964 թ.-ին սկսվեց հետադիմական շրջանը և նախկին շրջանի բոլոր ձեռքբերումները կառավարության կողմից չեղյալ հայտարարվեց: Ներկայումս ուկրաինական փոքրամասնությունը Ռումինիայում ոչ մի հասարակական կազմակերպություն չունի:

### Սլովակիա

Ուկրաինացիները (կամ ուկրաինացի-ռուսիները) Սլովակիայում գտնվում են անհամեմատ ավելի լավ վիճակում, քան Ռումինիայում: Հաշվվելով մոտ 100 հազ. մարդ (պաշտոնա-



կան վիճակագրությամբ՝ միայն 40 հազ.), նրանք բնակվում են Կարպատների ստորոտում, Պոլյաշիվի շրջանի մոտավորապես 300 գյուղերում (ուկրաիններեն մեկնությամբ՝ **Պոլյաշիվշինայում**)։ Չնայած այդ շրջանը համարվում է Սլովակիայի տարածաշրջանը, պատմականորեն այն միշտ սերտ կապերի մեջ է եղել Անդրկարպատների հետ, որն այժմ մտնում է Ուկրաինայի կազմի մեջ։

Չի կարելի ասել, թե պատմությունը, հատկապես վերջին շրջանում, վատ է վարվել Պոլյաշիվշինայի ուկրաինացի-ռուսիների հետ։ Ինքնավար Կարպատյան Ուկրաինայի գոյությունը ստեղծել է մի նախադեպ, որը դժվար կլիներ անտեսել։ Երկրորդ աշխարհամարտի ավարտից հետո ստեղծվել էր Պոլյաշիվշինայի տարածաշրջանային **«Ուկրաինական ազգային ռադա»**, որը ներկայացնում էր ուկրաինացիների շահերը և ձգտում էր հասնելու այդ շրջանի ինքնավարությանը։ Եվ չէիտերը Պրահայում, և սլովակները՝ Բրատիսլավայում, մերժողական պատասխան էին տալիս այդ քաղաքական պահանջին, զգալի զիջումների գնալով սակայն կրթության ու մշակույթի բնագավառներում։

1948 թ.-ի շեմին ուկրաինացի-ռուսիներն ունեին իրենց դպրոցական կրթական համակարգը, թերթերը, հրատարակչությունը, երիտասարդական կազմակերպությունը և թատրոնը։ Քանի որ տեղի մտավորականների գիտակցության վրա դեռևս իշխում էր ռուսասիրությունը (հիմնականում շնորհիվ Պոլյաշիվի տարածաշրջանի մեկուսացվածության), նշված կազմակերպությունների մեծ մասը գործածում էր ռուսերեն լեզուն։ 1950-ական թվականների սկզբին Չեխոսլովակիայի կոմունիստական նոր կառավարությունը ուկրաինացման ծրագիր ծավալեց, առաջին պլան մղելով ուկրաինական գրական լեզուն և ազգային կողմնորոշումը։ Միաժամանակ սկսեց գործել ուկրաինացի-ռուսիների շահերը ներկայացնող նոր, ապաքաղաքական կազմակերպություն՝ **«Ուկրաինական աշխատավորների մշակութային միություն» (ՌԻԱՄՍ)**։

Չեխոսլովակիայի կոմունիստական դառնալու հետ եկավ համայնացումը։ Հունա-կաթոլիկական եկեղեցու տեղը զբաղեցրեց Մոսկվայի հետ սերտորեն կապված ուղղափառ եկեղեցին։ Սակայն 1960-ական թվականների վերջում, երբ Դուբչեկի կառավարությունը փորձում էր կոմունիզմին «մարդկային կերպարանք» տալ, հունա-կաթոլիկական եկեղեցին կրկին գոյատևելու իրավունք ստացավ։ Դրա հետ միասին զգալիորեն մեծացավ եկեղեցու վրա սլովակյան ազդեցությունը։

Դուբչեկի նորամուծություններն ամբողջ Չեխոսլովակիայում և ուկրաինացի-ռուսիների միջավայրում ակտիվության ու խանդավառության պորթկում առաջացրեց։ 1968 թ.-ի գարնանը ծրագրված էր «Ուկրաինական ազգային ռադայի» գումարում։ Ուկրաինական թերթերը բառացիորեն լցված էին քաղաքական, տնտեսական ու մշակութային ինքնավարության կոչերով։ Ուկրաինա-ռուսիական մտավորականության տաղանդավոր նոր սերնդի գրական ստեղծագործությունն աննախադեպ մակարդակի բարձրացավ։ Պոլյաշիվի ուկրաինական ռադիոյի հայրենասիրական երանգն անհանգստացնում էր ոչ միայն Պրահային ու Բրատիսլավային, այլ նաև Կիևին։ Սակայն այս բոլոր գործընթացները շատ կոպիտ ու անպատկառ ձևով ընդհատվեցին 1968 թ.-ի օգոստոսին, երբ ԽՍՀՄ-ի և նրա դաշնակիցների զրեթե կեսմիլիոնանոց բանակը ներխուժեց Չեխոսլովակիա, որպեսզի խեղդի Դուբչեկի բազմախոստում «հեղափոխությունը»։

1970-1980 թ.թ.-ներին Չեխոսլովակիան ընդգրկող ճնշումներն ու բռնությունները չբերեցին ուկրաինա-ռուսիական մշակութային կազմակերպությունների ու հաստատությունների լրիվ ոչնչացմանը։ Առաջվա պես գործում էին Թանգարանը՝ Սվիդնիկում, ուկրաինական բաժինը՝ Պոլյաշիվի համալսարանում, մամուլն ու ՌԻԱՄՍ-ն, իհարկե՝ սլովակյան կառավարության աջակցությամբ հսկողության ներքո։ Ընդլայնվեց սլովակների կողմից ուկրաինացի-ռուսիների ծուլման գործընթացը։ Եթե ավելի շատ ուշադրություն դարձնենք դրական երևույթների վրա, ապա հարկ է նշել, որ ուկրաինացի-ռուսիները նյութապես սկսել էին շատ ավելի լավ ապրել։ Վերջին տասնամյակներին պետության ջանքերով հաղթահարվել է Պոլյաշիվի տարածաշրջանի մեկուսացվածությունն ու հետամնացությունը։ Այստեղ գործում են արդյունաբերական ձեռնարկություններ, զգվել են նոր ճանապարհներ, կարգավորվել է ենթադաստակարարման համակարգը։ Հիմա արդեն այստեղի ուկրաինացիների կեսից պակաս մասն է աշխատում գյուղատնտեսությունում։ Մեծամասնությունն են կազմում արդյունաբերության, սպասարկման ոլորտի աշխատողներն ու պետական մարմիններում ծառայողները։ Այնուամենայնիվ, ինչպես և 1968 թ.-ին, ուկրաինացի-ռուսիների միջին եկամուտը 40 %-ով պակաս է երկրի մասշտաբով վերցրած համանման եկամտից։ Այսպիսով, ինչպես նյութական, այն-

պես էլ ազգային առումով Սլովակիայի ուկրաինացիները շարունակում են խտրականության ենթարկվել։

### Լեհաստան

Ուկրաինական բոլոր համայնքներից լեհական ուկրաինացիները, թերևս, ամենածանր փորձություններ են կրել։ 1947 թ.-ին լեհական կառավարությունը բռնի կերպով վտարեց մոտ 170 հազ. ուկրաինացու, հիմնականում՝ Կարպատների նախալեռնային վաղնջական իրենց հողերից վտարեց լեմկերին, և սփռեց ամբողջ Լեհաստանով մեկ։ Մեծ մասը տեղավորվեց գերմանական նախկին տարածքներում, որոնք անցել էին Լեհաստանին։ Այսպիսով, ներկայումս համարյա 60 հազ. ուկրաինացի ապրում են Օլշտինսկու վոյեվոդությունում (նախկին Արևելյան Պոլուսիան), ևս 40 հազ.-ը՝ Կոշալինսկու վոյեվոդությունում՝ երկրի հյուսիսարևմուտքում, և մոտ 20 հազ.-ը՝ հարավ-արևմուտքում՝ Կրոցլավի մերձակայքում։ Քանի որ մոտ 20 հազ.-ը մնացին իրենց նախնիների հողերում՝ Լյուբլինի ու Պերեմիշլի (Պշեմիսլի) շրջակայքում՝ հարավ-արևելքում, ակնհայտ է, որ ուկրաինացիներին նպատակամետ կերպով տեղաբաշխել են Լեհաստանի բոլոր չորս անկյուններում։

Կառավարությունը հետևում էր, որպեսզի բնակության նոր վայրերում ուկրաինացիները հոծ համայնքներ չստեղծեն։ Յուրաքանչյուր գյուղում տեղավորում էին միայն մի քանի ընտանիք։ Սկզբում նրանք հողաբաժիններ չէին ստանում և պետք է աշխատեին լեհ ֆերմերների համար։ 1950-ական թվականների սկզբին նրանք թույլատրեցին ձեռք բերել նախկին գերմանական վատթարագույն հողատարածքները։ Դրությունը բարդացավ շատ խիստ արտահայտված հակաուկրաինականությամբ, որն առանձնապես բնորոշ էր Արևմտյան Ուկրաինայից վտարված լեհերին։ Մշտական հարձակումների ու ծուլման սպառնալիքի տակ լինելով, ուկրաինացիներն ստիպված էին լինում թաքցնել իրենց ազգությունը, խուսափել իրենց մայրենի լեզվի գործածությունից և նույնիսկ իրենց ծագումը թաքցնել հարազատ երեխաներից։ Կարելի է ասել, որ անպաշտպան, ոչ մեծաթիվ ուկրաինական փոքրամասնությունը Լեհաստանում ստիպված էր հատուցել լեհ-ուկրաինական դարավոր հակամարտության համար։

Համենայն դեպս, 1956 թ.-ին Կարշավան որոշ զիջումների գնաց ուկրաինացիների նկատմամբ։ Հնարավոր է, կառավարությունը վճռեց, որ նրանք այլևս պետության անվտանգության համար սպառնալիք չեն ներկայացնում, կամ էլ՝ վերջապես դասեր քաղեց նախապատերազմյան կառավարության փորձից և հասկացավ, թե ազգային քաղաքականության մեջ որքան աննպաստ ու անշահեկան է անհանդուրժողականությունը։ Այսպես թե այնպես, այդ տարի սկսեց լույս տեսնել ուկրաինալեզու **«Մեր խոսքը»** թերթը և ստեղծվեց **«Ուկրաինական հասարակական-մշակութային ընկերությունը» (ՈՒՀՄԸ)**։ Ավելորդ է ասել, որ նրանք գտնվում էին ներքին գործերի նախարարության աջակցությամբ հսկողության տակ։ Դա, այնուամենայնիվ, չէր խանգարում, որ կառավարությունը դրամով օժանդակեր նրանց գործունեությանը։ Ներկայումս **«Մեր խոսքը»** ունի մոտ 8 հազ. բաժանորդ, իսկ ՈՒՀՄԸ-ն՝ մոտ 4,5 հազ. անդամ։

Ջանադրոնեն խոյս տալով քաղաքականությունից, ՈՒՀՄԸ-ն հիմնականում զբաղված է մոտ 50 ուկրաինական երգչախմբերի ու պարային խմբերի գործունեության հովանավորությամբ։ Ամեն տարի կազմակերպում է ուկրաինական երգի ու երաժշտության ժողովրդականություն վայելող փառատոններ։ Սակայն ուկրաիններենով ուսուցումն ընդլայնելու բնագավառում ՈՒՀՄԸ-ի հաջողությունները շատ աննշան են։ 1970 թ.-ին Լեհաստանում ուկրաինացի երեխաների միայն 5 %-ն էր ուսուցվում մայրենի լեզվով։ Լեզնիցում գործում է նաև ուկրաինական լիցեյ, իսկ Բարտոշիցում՝ մանկավարժական լիցեյ, որի շրջանավարտների մեծ մասը չեն կարողանում իրենց մասնագիտությամբ աշխատանք գտնել, քանի որ ուկրաինական դպրոցները շատ քիչ են։ Ուկրաիններն իր բաժիններ են բացվել Վարշավայի և Գահանգային մի քանի համալսարանների բանասիրական ֆակուլտետներում։ Այստեղ աշխատում են ուկրաինացի բարձրակարգ գիտնականներ ու դասախոսներ։ Բացի այդ, ուկրաինագիտության հարցերով, բավականին բարձր մակարդակով, զբաղվում են մի քանի լեհ գիտնականներ։

Այնուամենայնիվ, միանգամայն ակնհայտ է, որ հին վերքերը դեռ չեն սպիացել։ Լեհ մտավորականության միջավայրում ուկրաինացիների նկատմամբ դրական նկատելի տեղաշարժեր են տեղի ունեցել, սակայն հասարակության մեջ հակաուկրաինականությունը դեռևս շատ տարածված է։ Բազմաթիվ զրբեր, հողվածներ ու կիռնակներն անողոր ըմբռնատուն ու մերկացնում են «ՌԻԱԲ-ի ավակալախմբերի բարբարոսությունները» (նրանք ընդհանրապես նույ-



նացնելով ուկրաինացիների հետ): Ուկրաինացին կարող է հաջողությունների հասնել, բայց միայն մի պայմանով՝ որ «մոռանա» իր ծագման մասին: *Իրենց նախնիների տարածքները վերադառնալու ուկրաինացիների բոլոր փորձերն անշեղորեն արգելափակվում են:*

Բավականին ցավոտ է մնում հունա-կաթոլիկական եկեղեցու խնդիրը, որին պատկանում են Լեհաստանում ապրող 200-250 հազ. ուկրաինացիների համարյա կեսը: Լեհերը կանխամտածված ձևով թույլ տվեցին, որ անկում ապրեն կամ նույնիսկ ոչնչանան Լեմկովշինայի շատ եկեղեցիներ, որոնց մեծ մասը բազմադարյա պատմություն ունեն, իսկ դա առաջ է բերում Լեհաստանի և Արևմուտքի ուկրաինացիների խիստ դժգոհությունը: Ուկրաինացիներին ոչ պակաս անհանգստացնում է այն, որ Լեհական կաթոլիկ նվիրապետությունը համառորեն չի ցանկանում աջակցել ուկրաինական կաթոլիկների համար եպիսկոպոս նշանակելուն: Այս ամենի մասին խոսելով, ի արդարացումն Լեհերի (այնպես, ինչպես և չեխերի ու սլովակների) հարկ է նշել, որ նրանք միշտ չէ, որ ինքնուրույն են որոշել ուկրաինացի փոքրամասնությունների նկատմամբ տարվող քաղաքականությունը: Արևելյան Եվրոպայի ուկրաինական համայնքներին հետևում էր *Մոսկվայի զգոն աչքը: Իսկ նա միշտ պատրաստ էր հրատապ «խորհուրդ» տալ իր դրածոներին, թե ինչպես պետք է լուծեն ուկրաինական հարցը:*

\* \* \*

Արտասահմանում, հատկապես՝ Արևմուտքում, ուկրաինական համայնքների հիմնական դերը՝ ոչ-խորհրդային Ուկրաինայի քաղաքական ու մշակութային արժեքների և ավանդույթների պահպանումն էր: Ոչ պակաս կարևոր խնդիր էր ուկրաինական ազգային շահերի պաշտպանությունն այնպիսի պայմաններում, երբ ուկրաինացիներն ՌԻՄՍՅ-ում ստիպված էին լռել: Եթե սփյուռքի անխոնջ գործունեությունը չլիներ, Ուկրաինան կարող էր ԽՍՀՄ-ի սահմաններից դուրս բոլորի համար մնալ բացարձակապես անհայտ տարածաշրջան: Ջարմանալի չէ, որ խորհրդային Ուկրաինայի և սփյուռքի միջև, ամբողջությամբ վերցրած, հակամարտ փոխհարաբերություններ էին: Առաջին ալիքի տարագիրները մնում էին իրենց եկեղեցու հետ կապված, հաջորդ սերունդները, հատկապես «տեղահանվածները», պահպանում էին հակավածությունն ազգայնականությանը: Ե՛վ մեկը, և՛ մյուսը, Խորհուրդներին առնվազն կասկածանքով վերաբերվելու հիմքեր ունեին: Միաժամանակ, ՌԻՄՍՅ-ից դուրս ժայթքող քարոզչությունն արտասահմանյան ուկրաինացիներին մշտապես ներկայացնում էր որպես «կապիտալիզմի, ֆաշիզմի ու Վատիկանի ծառայամիտներ»: Այսպիսով, հայրենիքի ու սփյուռքի միջև հարաբերությունները, որոնք կարող էին լինել փոխշահավետ (*հիանալի օրինակ է Հայաստանը*), ոչ մի օգուտ չբերեցին ո՛չ այս, ո՛չ էլ այն կողմի ուկրաինացիներին: Խորհրդային ուկրաինացիները չէին կարող արտասահմանի ուկրաինական համայնքներից օգտվել որպես պատուհան դեպի Արևմուտք, որն այդքան անհրաժեշտ էր իրենց, իսկ ուկրաինական սփյուռքը մնում էր առանց մշակութային և ժողովրդագրական լրասնուցման, որի կարիքը խստորեն զգում էր:

Չնայած նրան, որ սփյուռքի ուկրաինացիները գլխովին խրված են հասարակության կյանքի հորձանուտում, որտեղ ստիպված են ապրել և որի մեջ տարրալուծվել են, նրանք համենայն դեպս գիտակցում են իրենց էթնիկ խմբին պատկանելու առավելությունները: Իրենց պատմական հայրենիքը չտեսած և նրա հետ շփումներ չունեցող ուկրաինացիներն ավելի ու ավելի են օտարանում նրանից: Թափ են առնում ձուլման գործընթացները: Մնում է միայն հուսալ, որ Ուկրաինայի անկախության հաստատումից հետո սփյուռքի ու հայրենիքի ուկրաինացիները ուժ և ժամանակ կգտնեն արգասավոր փոխշահավետ հարաբերությունների համար:



## ՆՈՐ ԴԱՐԱՇՐՋԱՆ

XX-րդ դարի պատմության գլխավոր, բնորոշիչ թեմաներից մեկը, անկասկած, կայսրությունների դեմ աշխարհի ժողովուրդների պայքարն է: Բրածո դինոզավրերի նման, այդ մեծածավալ ու ծանրաշարժ հորինվածքները, որոնք կարծես թե գոյություն էին ունեցել արարման առաջին իսկ օրից, վերջիվերջո անկարող գտնվեցին գոյատևելու արագորեն փոփոխվող աշխարհում: Մեկը մյուսի ետևից, նրանք արդեն անխուսափելիորեն չէին կարողանում իրենց իշխանության տակ գտնվող ժողովուրդներին ետ պահել նոր անկախ պետություններ ստեղծելուց: Առաջին համաշխարհային պատերազմը փլուզեց Ռոմանովների, Հաբսբուրգների և Օսմանյան կայսրությունները: Համաշխարհային երկրորդ պատերազմից հետո Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան և Եվրոպական մյուս տերությունները հարկադրված էին հրաժարվել իրենց անդրծովյան տիրապետություններից: Ե՛վ ահա, հարյուրամյակի ամենավերջում, հերթը հասավ վերջին կայսրությանը՝ ԽՍՀՄ-ին: Խորհրդային համակարգը նոր պայմաններին հարմարեցնելու իրենց հուսահատ փորձերով՝ երկրի ղեկավարությունը վճռեց որոշակի բարեփոխումների գնալ: Սակայն դա հիմնականում Խորհրդային Միության բազմազգ ժողովուրդների ազգային մշտնջենական ձգտումների պոթեկմանը հանգեցրեց միայն և նպաստեց համակարգի վերջնական փլուզմանը, որն արդեն իսկ կործանման շեմին էր:

Ուկրաինան ռուսական-խորհրդային կայսերական համակարգի անկյունաքարն էր: Ինչպես հաճախ է պատահում, նման գոյության բազմամյա փորձը, ամեն ինչից գատ, որոշ օգուտներ էր ընձեռնում: Բայց ժամանակի հետ ավելի ու ավելի ակներևորեն էին դրսևորվում նաև խորհրդային իշխանության բացասական կողմերը. աստիճանաբար վատթարացող տնտեսությունը, կենսամակարդակի անկումը, ռեժիմի անցյալում կատարած ոճիրները, քաղաքացիական իրավունքների, ազգային ինքնագիտակցության ու ազգային մշակույթի ճնշումը: Ե՛վ վերջիվերջո, երբ հերթական անգամ հորիզոնում անկախության հնարավորություն նշնարվեց, Ուկրաինան չհապաղեց օգտվել դրանից: Այդ իրադարձությունը, առանց չափազանցության, հոգեհանգստյան ժամհարություն էր ողջ ԽՍՀՄ-ով մեկ, և թույլ տվեց ուկրաինացիներին միանալու ժամանակակից համաշխարհային պատմության ընթացքին, որում կայսրությունների համար արդեն վաղուց տեղ չկար:

## Բարեփոխումներ, անսպասելի արդյունքներ

Ինչպես արդեն ասվել է, վերակառուցման նպատակը խորհրդային համակարգի պահպանումն էր՝ այն արդիականացնելու և ազատականացնելու ճանապարհով: Բայց քանի որ այդ փոփոխությունները սպառնում էին կուսակցական կառույցի շահերին, վերջինն արեց ամեն հնարավորը՝ դրանց դիմակայելու համար: Շչերբիցկու գերպահպանողական Ուկրաինայում դա արտահայտվեց առանձնահատուկ ուժով, քան որևէ այլ տեղ ԽՍՀՄ-ում: Սակայն հրապարակայնության քաղաքականության ազդեցությունը չէր կարող չդրսևորվել և այստեղ:

*Ռեժիմի նկատմամբ հավատը վերականգնելու և բյուրոկրատիային կառուցողական գործողությունների մղելու նպատակով մտածված հրապարակայնությունը վերջիվերջո հանգեցրեց այնպիսի հետևանքների, որոնց մասին Գորբաչովը չէր կարող և հազիվ թե ցանկանար կանխատեսել:* Տնտեսական բարեփոխումների խթանից շատ ավելի մեծ չափով այն դրսևորվեց բոլորովին այլ ուղորտում. օգտվելով նրանից, ԽՍՀՄ-ի ժողովուրդները վերջապես ի լուր ամենքի հայտարարեցին իրենց ազգային վաղեմի պահանջախնդրությունների մասին:

Ինչ վերաբերում է Ուկրաինային, ապա դժգոհության հերթական ալիքը բարձրացրին,



հիարկե, չեռնորիլյան աղետի շուրջ կառավարության ձեռնածությունները: Չայրույթն հատկապես ուղղված էր մոսկովյան պաշտոնյաներին, որոնք ինչպես Չեռնորիլի ԱԷԿ-ի կառուցման ժամանակ, այնպես էլ հիմա, որոշումներ էին ընդունում, որոնք աղետալի էին դառնում Ուկրաինայի բնակչության համար: Չեռնորիլյան աշխարհավեր աղետը մարդկանց աչքերը բացեց նաև կենտրոնի կողմից իրագործվող բնապահպանական այլ ոճրագործությունների վրա՝ մթնոլորտի աղտոտման, գետերի ծանծաղանալու, հողերի թունավորման... Այս փաստերը, կենսամակարդակի սրընթաց անկման պատկերի վրա, խորհրդային շատ քաղաքացիների, նույնիսկ ամենաօրինակահերկին ստիպեցին թերահավատությամբ վերաբերվել այն համակարգի արժեքների նկատմամբ, որում նրանք ապրում էին:

Ստեղծված հնարավորություններն օգտագործելով, ուկրաինացիներն ավելի ու ավելի համարձակորեն սկսեցին շոշափել նաև ցավոտ այլ խնդիրներ, այդ թվում՝ մայրենի լեզուն կորցնելու խնդիրը: Ժամանակի ընթացքում բնապահպանության և լեզվի թեմաներով բանավեճերը հանգեցրին ոչ միայն 1989 թ.-ի փետրվարի 11-ին «Ուկրաիններն լեզվի Տ. Գ. ՇԼՅՆ-կոյի անվան ընկերության»՝ հանրապետությունում առաջին զանգվածային կազմակերպության ստեղծմանը, որն անմիջապես հանդես էր վերահսկվում կուսակցության կողմից, այլև՝ որ նրանց առաջնորդները՝ «վաթսուականների» սերնդի ուկրաինացի առաջատար գրողներն ու լրագրողները, առաջավոր դիրքեր գրավեցին գոյություն ունեցող իրավիճակը քննադատելու գործընթացում:

Այս ամենի հետ միասին փորձ արվեց անդրադառնալու ուկրաինական պատմության վաղուց բաց «սպիտակ էջերին»: Ընդ որում, հատկանշական է, որ ոչ թե արհեստավարժ պատմաբանները, այլ դարձյալ գրողներն ու լրագրողներն առաջինը համարձակորեն շոշափեցին այն հարցերը, որոնք երկար ժամանակ գաղափարախոսական արգելանքի տակ էին: **Իսկական հայտնությունը դարձավ 1932-1933 թ.թ.-ների սովասպանդի սարսփելի պատկերի երեկան հանունը**, որը խորհրդային պաշտոնյաներն աշխատում էին ջնջել մարդկային հիշողությունից: Ուկրաինացիներին ապշեցրեց նաև 1930-1940-ական թվականների ԼԳԺԿ-ի անմեղ զոհերի զանգվածային գերեզմանների հայտնաբերման մասին տեղեկությունները: Այս ամենը հասարակության լայն շերտերին ստիպեց ըմբռնել ոչ միայն վերջին, այլև ավելի վաղ շրջանի պատմության նենգափոխման ու փաստերի կեղծման աստիճանը, և դրանք ազգային ոգով մեկնաբանելու ձգտում առաջացրեց: Այսպես օրինակ, կոզակության՝ որպես ուկրաինական բացառիկ երևույթի, նկատմամբ հետաքրքրությունն առանձնահատուկ ձևով դրսևորվեց Չապորոժյան Սիչի հիմնադրման 500-ամյակի 1990 թ.-ի համաժողովրդական տոնակատարության ժամանակ: Սկսեցին հայտնվել հողվածներ, որոնցում Մազեպայի դերը և Մոսկվայի հետ կապերը խզելու նրա փորձերը մեկնաբանվում էին ոչ թե որպես դավաճանություն, այլ որպես հայրենասիրության դրսևորում: Անկախության հասնելու 1917-1920 թ.թ.-ների ուկրաինական կառավարության ջանքերը, որ երկար տարիներ մրոտվում ու արատավորվում էին, սկսեցին գնահատվել որպես ժողովրդի օրինական ձգտումների մարմնավորում: Եվ նույնիսկ այնպիսի «խուլ փակված» թեման, ինչպիսին էր երկրորդ աշխարհամարտի տարիներին խորհրդային իշխանության դեմ ՌԻՄԲ-ի պայքարը, այժմ, հատկապես՝ արևմտյան տարածաշրջաններում, բացահայտ դրվատանքի էին արժանանում:

Աստիճանաբար կյանքի էին վերակոչվում նաև ազգային խորհրդանիշները: Ի մեծ սարսափ իշխանավորների, ուկրաինական «կապույտ-դեղին» դրոշմը, որ մինչ այդ պաշտոնապես արգելված էր, 1989 թ.-ին հայտնվելով նախ Արևմտյան Ուկրաինայում, իսկ ապա նաև Կիևում, ավելի ու ավելի հաճախ էր ծածանվում հրապարակների վրա: Նորից հնչեց արգելված ազգային հիմնը՝ «*Ще не вмерла Україна*», իսկ շատ ուկրաինացիներ սկսեցին կրել «ազգայնական» եռաժանու կրծքանշանը: Այս խորհրդանիշները կարծես թե երկակի դեր էին կատարում՝ ցուցադրելով իրենց աջակցությունն ազգային վերածննդին և միաժամանակ՝ իրենց հրաժարվել խորհրդային համակարգից:

1989 թ.-ի ամբողջ ընթացքում Ուկրաինայում փոփոխությունների դանդաղ, բայց հարաճուն հոսքը մոտենում էր բեկման սահմանագծին և բանավոր ճակատամարտի ոլորտից վերածվում նպատակաուղղված քաղաքական գործունեության: Շոշափելի առաջխաղացում հանդիսացավ մարտի 26-ի ԽՄՅՄ Գերագույն Խորհրդի ընտրարշավը: Հասկանալի է, որ միջազգային չափանիշներով այդ ընտրությունները դեռևս հեռու էին ազատ լինելուց, քանի որ կուսակցական մարմինը, ըստ իր հին սովորության, տարբեր մեթոդությունների ու մեքենայությունների էր դիմում և ճնշում գործադրում ընտրողների վրա: Ավելի քարացած «հաշվեհամարային» շատ թեկնածուներ զգալի անհաջողություններ կրեցին: Բացի այդ, ժողովրդա-

վարական ընդդիմությունը ապագայի համար դաս քաղեց, այն, որ ընտրություններին հարկավոր է պատրաստվել շատ ավելի հիմնավոր ու կշռադատված:

### Ռուխ (շարժում)

Մեկ տարվա ընթացքում ամբողջ խորհրդային Միությունով մեկ առաջանում էին մեծ քանակությամբ այսպես կոչված «անօրինական», այսինքն պաշտոնապես չհաստատված, կազմակերպություններ: Ըստ որոշ հաշվարկների, նրանց թիվը հասնում էր մոտ 30 հազ.-ի: Ինչպես և կարելի էր սպասել, ուկրաինական անօրինականները, օրինակ՝ լվովյան «*ԼԼԻ ընկերությունը*», ավելի շատ ակտիվացել էին արևմտյան շրջաններում: 1989 թ.-ի սկզբին, այդ կազմակերպությունների անդամները, այդ թվում Կիևի առաջատար գիտնականներն ու գրողները, հիմնեցին «*Народний рух України за перебудову*» (Վերակառուցման Ուկրաինայի ժողովրդական շարժումը): Ի նշան իր աջակցության, հանրապետության Գրողների միության «*Літературна Україна*» թերթը տպագրեց նոր կազմավորման ծրագրի նախագիծը: Ժամանակի ընթացքում, երբ սեպտեմբերի 8-10-ին այդ կազմակերպությունը Կիևում անցկացրեց իր հիմնադիր համագումարը, նրա շարքերում արդեն հաշվվում էր 280 հազ. անդամ: Նրանց թիվն օրեցօր աճում էր: Իր ծրագրում Ռուխը պաշտպանում էր ուկրաինական հանրապետության անկախությունը, մայրենի լեզվի ու մշակույթի վերածնունդը, բարձրացնում էր բնապահպանությանն առնչվող խնդիրները, հանդես էր գալիս քաղաքական, տնտեսական և սոցիալական համակարգի ժողովրդականացմանը աջակցելու տեսակետից: Հատուկ ընդգծվում էր Ուկրաինայում բոլոր էթնիկ խմբերի միասնությունն ամրապնդելու անհրաժեշտությունը: Այդ պատճառով էլ, պատահական չէ, որ Ռուխին միացան հազարավոր ռուսներ, հրեաներ և այլ ազգերի ներկայացուցիչներ: Այդպիսով, ձեռք բերելով քաղաքական, սոցիալական և ազգային լայն բազա, Ռուխն առանձնապես չղարծավ ազգայնական կազմակերպություն: Նրա հայտնվելն Ուկրաինայում ստեղծեց որակապես նոր իրավիճակ. խորհրդային իշխանության հաստատումից ի վեր առաջին անգամ մարտահրավեր էր նետված կոմունիստական կուսակցության քաղաքական մենաշնորհին:

Չնայած Ռուխը գնալով ավելի շատ էր վայելում ժողովրդի համակրանքը, սակայն Ուկրաինայի տարբեր տարածաշրջաններում այն ներկայացված էր անհամաչափ կերպով: Նրա ազդեցության հիմնական ոլորտը սահմանափակվում էր Արևմտյան Ուկրաինայով և կիևյան մտավորականությամբ, այն դեպքում, երբ Արևելյան և հարավային Ուկրաինայում կոմկուսը դեռևս պահպանում էր իր անսասան գործելաձևը: Իր նպատակները հանրամատչելի դարձնելու և սոցիալական բազան ընդլայնելու համար, Ռուխը շատ հաճախ կազմակերպում էր զանգվածային ցույցեր ու միտինգներ՝ «իրապարակայնության դարաշրջանի» առավել հանրաճանաչ միջոցառումները: Դեռևս 1988 թ.-ի սկզբին Լվովում տեղի ունեցան մի շարք բազմահազարանոց միտինգներ, իսկ հաջորդ տարի դրանք ընդգրկեցին նաև Կիևը: Թերևս, Ռուխի ամենածավալուն գործողությունը 1990 թ.-ի հունվարի 21-ի «մարդկային շղթան» էր՝ ի պատիվ 1919 թ.-ի ՌԻՄԲ-ի և ԱՌԻՄԻ-ի միավորման («*Злуки*») տարեդարձի: Ուկրաինացիների համերաշխության ու միասնության այդ ցույցը ձգվում էր մոտ 500 կմ՝ Լվովից մինչև Կիև, և մասնակցում էին մոտ 300 հազ. մարդ:

Ռուխը ժողովրդավարական շարժման միակ կազմակերպությունը չէր, որ գոյություն ուներ Ուկրաինայում: 1990 թ.-ի հուլիսին ռուսացված Դոնեցկ և Դնեպրոպետրովսկ քաղաքների 250 հազ. աշխատավորներ զանգվածային գործադուլ կազմակերպեցին՝ հանդես գալով կոմունիստական կուսակցության արտոնությունների դեմ: Սկզբում նրանք իրենց Ռուխի համախոհներ չէին համարում, քանի որ այն իրենց չափից դուրս «ազգայնական» էր թվում, սակայն ժամանակի ընթացքում և շնորհիվ Լվովի մարզի (Չեռվոնոգրադ) ազգայնորեն գիտակից համբազորժ բանվորների, հասկացան, որ իրենք Ռուխի հետ միասին միևնույն նպատակներն են հետապնդում:

### Նոր քաղաքագետներ

Բացառիկ ակտիվության ու վերելքի մթնոլորտում Ուկրաինայում սկսվեցին առաջին համեմատաբար ազատ ընտրությունները: Դա Գերագույն Ռադայի և տեղական Ռադաների ընտրարշավն էր: Մրցակցում էին երկու ուժեր՝ ժողովրդավարական (Դեմոկրատական) դաշինքի, որը կազմում էին Ռուխը, «Հելսինկյան միությունը», բնապահպանական կազմակերպությունները և բազմաթիվ անօրինականներ՝ մի կողմից, և մյուս կողմից՝ կոմունիստական կուսակցության թեկնածուները: Քանի որ վերջինների տնօրինության տակ էին զանգվածային լրատ-



վամիջոցները, կադրային ազդեցիկ դիրքորոշումները և ֆինանսական հսկայական պաշարները, ապա առաջինները կարող էին ապավինել միայն սեփական եռանդին, համախոհների խանդավառությանը, և կոմունիստների՝ թվարկված առավելությունների դեմ զանգվածային բողոքներին:

1990 թ.-ի մարտի 4-ից 18-ը ներառյալ, մի քանի փուլով անցկացված ընտրությունների արդյունքները միանշանակ չէին: Ինչպես և կարելի էր ենթադրել, Ռադաներում տեղերի մեծ մասը կոմունիստներին էր: Բայց ժողդաշինքն էլ անսպասելիորեն նպաստավոր արդյունքներ ունեցավ, հատկապես Կիևում և առավել ևս՝ արևմտյան շրջաններում: Հատկանշական է, որ ընտրություններում վճռորոշ հաղթանակ տարան նախկին քաղաքատարկյալ թեկնածուները՝ *Լևկո Լուկյանենկոն*, *Վյաչեսլավ Չոռնովիչը*, *Բոհդան և Միխայլո Գորինները*, *Իրինա Կալինցը* և ուրիշներ: Վերջին հաշվով, *ժողդաշինքից ընտրված թեկնածուները խորհրդարանում ստացան 90 տեղ, իսկ նրանց հակառակորդները (այսպես կոչված «239 խումբը») կազմեցին մեծամասնությունը*: Բայց իրենց թվային բացարձակ գերակշռությամբ հանդերձ, կոմունիստներն առաջին անգամ ստիպված էին խորհրդարանի ներսում բախվել օրինական ընդդիմության հետ, և զրանից ակնհայտորեն շփոթված էին ու հուսալքված:

Ուկրաինական նոր խորհրդարանի ստեղծման փաստն ինքնըստինքյան բացառիկ կարևոր իրադարձություն էր: Մինչ այդ Ուկրաինայում քաղաքական գլխավոր մարմինը ՌԿԿ ԿԿ-ն էր: Իսկ հիմա, քաղաքակիրթ բոլոր երկրների նման, Ուկրաինան էլ ուներ խորհրդարան, որը հասարակական կարծիքի զգոն աչքի տակ էր և պարտավոր էր ներկայացնել իր ընտրողների շահերը: Հենց նա էլ հետագայում դարձավ Ուկրաինայում քաղաքական իշխանության նոր կենտրոնը:

Օգտվելով այն ժամանակվա տիրող ոգևորությունից, ինչպես նաև ընդդիմադիրների շփոթմանը, *ժողդաշինքը տպավորիչ հաղթանակ տարավ խորհրդարանում, երբ նրա նախածեռնությամբ 1990 թ.-ի հուլիսի 16-ին հաստատվեց «Декларация про державний суверенитет України» («Ուկրաինայի պետական անկախության հռչակագիրը»):*

### Կոմունիստները

Սովոր լինելով իրենց կողմից խստորեն վերահսկվող, իրենց իսկ թելադրանքով ձևավորվող և գործող քաղաքական համակարգին, կոմունիստները հայտնվեցին իրադարձությունների միանգամայն շփոթաբար դիտորդի դերում: Նրանց գործերը սրընթաց վատթարանում էին: 1989 թ.-ի սեպտեմբերի 28-ին հիվանդ Շչերբիցկին հրաժարական տվեց, իսկ շուտով հրաժեշտ տվեց նաև կյանքին: Կոմունիստների հույսերը, թե նրա վստահելի հետնորդ *Վոլոդիմիր Իվաչկոն* կկարողանա կայունացնել իրավիճակը, ի դերև ելան, երբ 1990 թ.-ի հուլիսին, հանուն Մոսկվայում բարձր պաշտոնի, նա անսպասելիորեն լքեց Ուկրաինայի կոմկուսը: Գերագույն Ռադայի ղեկավար ընտրվեց ՌԿԿ ԿԿ-ի գաղափարախոսության գծով նախկին քարտուղար *Լենինո Կրավչուկը*, իսկ *Ստանիսլավ Գուրենկոն* դարձավ ՌԿԿ ԿԿ-ի առաջին քարտուղարը: Այդ ընթացքում *հազարավոր կոմունիստներ դուրս էին գալիս բարոյալքված կուսակցության շարքերից*: Ժողովրդական լայն զանգվածների շրջանում աճում էր թշնամանքը կոմունիստների հանդեպ, որոնց ավելի ու ավելի բարձրաձայն էին մեղադրում հարմարվողականության ու պորտաբուծության մեջ: Իսկ Արևմտյան Ուկրաինայում արդեն սկսել էին հանել Լենինի արձանները:

Իրադարձություններն Ուկրաինայում, ինչպես և ողջ ԽՍՀՄ-ում, չնայած խարխուլեցին կոմունիստ պաշտոնյաների դիրքերը, բայց չհասան բուն իշխանությանը, որն առաջվա պես ամբողջովին վերահսկում էր զանգվածային լրատվամիջոցները, միլիցիան, ՊԱԿ-ը, բանակը, արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը: Այդ պատճառով էլ, երբ 1990 թ.-ի հոկտեմբերի սկզբին Կիևում ուսանողների հացադուլը հանգեցրեց նախարարների Ռադայի նախագահի՝ կոմունիստների դրածո *Վիտալի Մասոլի* պաշտոնանկությանը, կոմունիստ-պաշտոնյաներն հասկացան, որ հակահարձակման անցնելու ժամանակն է: Դրա վկայությունը եղավ, մասնավորապես, Արևմտյան Ուկրաինայից խորհրդարանի պատգամավոր, իր արմատական հայացքներով հայտնի *Ստեպան Խմարայի* բանտարկությունն ըստ ակնհայտորեն անհիմն մեղադրանքների:

Այդ ընթացքում կազմավորումները բավականին թուլացան, ինչից, պարզ է, որ անմիջապես օգտվեցին կոմունիստները: Անբավարար կազմակերպվածության և նոր գաղափարների պակասի պատճառով, Ռուխը նկատելիորեն կորցրեց հարձակողական նախածեռնությունը, նրա ղեկավարությունում սկիզբ առան տարածայնությունները: Միաժամանակ, մի

շարք նոր քաղաքական կուսակցությունների հայտնվելը, որոնք, թերևս, բացառությամբ Լևկո Լուկյանենկոյի *«Ուկրաինական հանրապետական կուսակցության»*, անդեմ էին ու փոքրաթիվ և միայն փոշեցրիվ էին անում ժողովրդավարական ուժերը:

Ուկրաինայի անկախության հակառակորդները նույնպես օգտվեցին այն հանգամանքից, որ ուկրաինացիները դարեր շարունակ զրկված էին ազգային միասնության և տարածքային ամբողջականության գաղափարներն դաստիարակելու հնարավորությունից: Ուստի և պահպանողականներին թվաց ոչ այնքան բարդ՝ արևելյան ու արևմտյան ուկրաինացիների միջև տարբերությունների օգտագործումը: Իսկ ռուսականացված Դոնբասում, Օդեսայի և հարավային այլ շրջաններում՝ Ուկրաինայից տարանջատվելու կոչեր էին հնչում: Անդրկարպատներում համանման գաղափարով հանդես էին գալիս նրանք, ովքեր տեղի բնակչությանը համարում էին «ռուսիներ», և ոչ թե ուկրաինացիներ: Վերջապես, կոմունիստների կողմից ամբողջովին վերահսկվող, առավելապես ռուսական Դրիմը փաստորեն հայտարարեց Կիևից իր անկախության մասին:

### Կրոնական գործունեությունը

Շոշափելի փոփոխություններ տեղի ունեցան նաև հասարակական կյանքի այլ ոլորտներում: Դրանք առավել նկատելի էին կրոնի մեջ: *Այն ժամանակ, երբ կոմունիստական գաղափարախոսությունն անդառնալիորեն կորցնում էր իր գրավչությունը, կրոնական կյանքը վերականգնվում էր ապշեցուցիչ արագությամբ*: Արևմտյան Ուկրաինայում «անձավներից» դուրս եկավ հունա-կաթոլիկական եկեղեցին և պահանջեց, որ պաշտոնապես ճանաչեն իրեն և վերադարձնեն առաջվա կարգավիճակը: Նրան վստահություն էր ներշնչում ժողովրդական հզոր աջակցությունը. արևմտյան ուկրաինացիները, անկախ տարիքից, բացառապես և պատրաստակամությամբ ու սիրով վերադառնում էին ավանդական ծիսակատարություններին: Մասնավորապես, 1990 թ.-ի հունվարին Ծննդի զանգվածային տոնակատարությունն ակներևաբար ցույց տվեց ՌԿԿ-ի ազդեցիկության աստիճանը: Շուտով, հունվարի 26-ին, հունա-կաթոլիկական նվիրապետությունը, եպիսկոպոս *Վոլոդիմիր Ստեռնյուկի* գլխավորությամբ, սինոդ հրավիրեց, որը չէր յալ հայտարարեց այդ եկեղեցու լուծարման 1946 թ.-ի հարկադրական որոշումը: *Դոգևոր պետերը ՌԿԿ-ին նրա իրավունքները և ունեցվածքը վերադարձնելու պայքար սկսեցին*: Այդ ընթացքում արևմտյան շրջանների մոտ 2 հազ. ծխական համայնք հայտարարեցին՝ հունա-կաթոլիկությանը իրենց վերադարձի մասին, իսկ Լվովի ժողովրդավարական մարզային Ռադան, ուղղափառների բողոքները հաշվի չառնելով, հույն-կաթոլիկներին վերադարձրեց սբ. Յուրիի նշանավոր մայր տաճարը: 1991 թ.-ի մարտին հունա-կաթոլիկական բարձրագույն հովվապետ կարդինալ *Միրոսլավ Լյուբաչիվսկին* Դոնմից վերադարձավ Լվով, որպեսզի գլխավորի իր 5 միլիոնանոց հոտը: *ՌԿԿ-ի վերածննդի տպավորիչ վկայությունն էր 1992 թ.-ի օգոստոսին սբ. հայրապետ Յոսիպ Սլիպիյի աճյունը Լվով տեղափոխելը*: Այս հսկայածավալ միջոցառմանը մասնակցում էին մոտ 1 մլն հավատացյալ:

Հավատացյալների կորցնելու հեռանկարից վախեցած, Ուկրաինայում Ռուսական ուղղափառ եկեղեցին 1990 թ.-ի հունվարին վերանվանվեց *Ուկրաինական ուղղափառ եկեղեցի*: Սակայն գարնանը, հավատացյալ հոգիների համար պայքարում, նրան նոր մրցակից հայտնվեց՝ *Ուկրաինական անկախ (ավտոկեֆալ) ուղղափառ եկեղեցին*, որը 1930 թ.-ի արգելանքից հետո գործում էր Արևմուտքում և հիմա վերականգնվում էր հայրենիքում: Հունիսին, մոտ 1650 ծխական համայնքների քահանաներ, հեռանալով Մոսկվայից հայրապետությունից, հայրապետ ընտրեցին արտասահմանում ՌԿԿ-ի առաջնորդ *Մստիսլավ Սկրիպնիկին*: Հոկտեմբերին, 46 տարվա բացակայությունից հետո, նա վերադարձավ Կիև:

Միաժամանակ, *կրոնական կյանքի վերածնունդն ուներ նաև բացասական կողմեր. դա առաջին հերթին հույն-կաթոլիկների և ուղղափառների միջև վաղեմի թշնամանքի բռնկումն էր*: Նրանց բախումները հատկապես սուր բնույթ ստացան արևմտյան շրջաններում, որտեղ եկեղեցական համայնքները հաճախ պառակտվում էին հենց ուղղափառ մնալու, կամ թե՛ կաթոլիկությանը վերադառնալու առիթով: Եկեղեցական ունեցվածքը բաժանելու խնդիրը նույնպես չէր նպաստում հաշտվելուն: Անհամաձայնությունն իրարից հեռացնում էր նաև 35 մլն ուղղափառներին. եթե մի մասը ցանկանում էր մնալ Մոսկվայի կողմից վերահսկվող ուղղափառ եկեղեցում, ապա մյուս մասն ընտրում էր անկախը (ավտոկեֆալը): Նույնիսկ առաջինի համախոհների մեջ տարածայնություններ կային: 1992 թ.-ի գարնանը *Կիևի միտրոպոլիտ Ֆիլարետը* խզեց կապերը Մոսկվայի հետ և իրեն հռչակեց ՌԿԿ-ի Կիևյան հայրապետության առաջնորդ: Չնայած իշխանությունների աջակցությանը, նրա գլխավորությունը



ճանաչեցին ընդամենը 350 ծխական համայնք: Ուղղափառ ուկրաինացիների մեծամասնությունը՝ 30 եպիսկոպոս և 5 հազ. ծխական համայնք, ճանաչեցին նորընտիր միտրոպոլիտ *Վոլոդիմիրին*, որն էլ գլխավորեց *Ուկրաինական ինքնավար եկեղեցին (Ուկրաինայում նախկին ՌՈՒԵ-ն)*: Ամեն դեպքում, բազմակարծությունը դարձավ իրականություն նաև հոգևոր գործերում:

### **Փոփոխություններ. մեղալի երկու կողմերը**

1990 թ.-ի վերջին ակնհայտ դարձավ, որ մեկ տարի տևած **լավատեսությունը**, բուռն ակտիվությունն ու ոգևորությունը զգալիորեն անկում են ապրել: Դրանց փոխարինելու են եկել աճող անհանգստությունը՝ կապված տնտեսական վիճակի վատթարացման հետ, որը, ինչպես պնդում էին պահպանողականները, Գորբաչովի և նրա **համախոհների** «վատ մտածված ու անկանոն» բարեփոխումների հետևանք էր: Տազնապալի հակասությունները բառացիորեն ընդգրկել էին կյանքի բոլոր ոլորտները: Մի կողմից՝ անկասկած էր այն, որ հրապարակայնության ու վերակառուցման հինգ տարիները արմատական փոփոխությունների հանգեցրին: Կոմունիստական գաղափարախոսությունը, խորհրդային **համակարգի** այդ հիմքերի հիմքը, ավելի հաճախ էր խոստովանում իր տապալումը: Դա կասկածի տակ դրեց հասարակության մեջ կոմունիստական կուսակցության «ղեկավարող և ուղղորդող» դերի պահանջատիրության (և, ինչը քիչ կարևոր չէ, նրա հարստության առյուծի **բաժնին** տիրանալու) օրինականությունը: *Գնալով ավելի շատ կողմնակիցներ էր ձեռք բերում ժամանակին մերժված շուկայական տնտեսության համակարգը*: Ազգային ինքնագիտակցության զարթոնքը, որն ավելի էր ամրապնդվում հակակենտրոնացման տրամադրությունների աճով, դառնում էր ավելի ու ավելի ակնհայտ փաստ ինչպես Ուկրաինայում, այնպես էլ մյուս **հանրապետություններում**: Բայց, թերևս, *ամենակարևոր փոփոխությունը՝ վախի հոգեբանության աստիճանական անհետացումն էր, որ տասնամյակներ շարունակ փոքրամասնությանը թույլ էր տալիս միահեծան իշխել մեծամասնության վրա*:

Մյուս կողմից՝ այդ տարիները, որոշակի կառուցողական փոփոխությունների տեսակետից, քիչ բան բերեցին խորհրդային հասարակությանը: Ինչպես **արդեն** նշվել է, *կոմունիստները շարունակում էին գերակշռել սոցիալական, տնտեսական ու քաղաքական հիերարխիայում*: Թվում էր, որ նրանք ցանկացած դեպքում ձեռքից բաց չեն թողնի իրենցը. եթե բարեփոխումները սահմանափակվեն նվազագույնով, ապա նրանք կմնան իրենց արտոնություններով, իսկ եթե մտցվեն շուկայական հարաբերություններ, ապա այստեղ էլ նրանք իրենց ավելի լավ կզգան, քան մնացած բոլորը: *Մռաջվա նման անսասան էր բյուրոկրատիան: Խանութների դարակներն ու ցուցափեղեկներ գնալով ավելի հաճախ էին գնորդներին դիմավորում սարսափելի դատարկությամբ*: Իսկ համարյա բոլոր ապրանքների գները գործնականում **հետևողականորեն բարձրանում էին** և արդեն վտանգավոր սահմանի էին հասել: Այստեղից էլ զարմանալի չէ, որ բնակչության բազմաթիվ խմբեր, հատկապես քիչ կրթված բանվորներն ու գյուղացիները, էլ չսասած արդեն հետևողական-կոմունիստների մասին, պատրաստ էին համաձայնվելու՝ վերադառնալ հին համակարգին:

Այս ամենով հանդերձ, ազգայնորեն գիտակից ուկրաինացիները կարող էին նշել նաև մի քանի առանձնահատուկ դրական կողմեր: Ուկրաինական անկախության գաղափարի աջակցությունը գալիս էր ամենամասշտաբի տեղերից: Իրեն հատուկ զգուշավոր ու կշռադատված ձևով **Լեոնիդ Կրավչուկը ավելի հաճախակի էր արտահայտում Ուկրաինայի ինքնորոշման նկատմամբ իր հավակնությունը**: Անկախության կողմնակից կոմունիստների ոչ մեծ, սակայն աճող խմբավորում հայտնվեց խորհրդարանում, իրենից ներկայացնելով 20-ական թվականների ազգային կոմունիստների նոր տարատեսակ: **Վերջապես, ինչպես ցույց տվեց 1991 թ.-ի մարտի 17-ի հանրաքվեն, նույնիսկ Ուկրաինայի շատ ռուսներ ու այլ ազգեր անկախության դեմ չէին առարկի, եթե այն բարելավեր իրենց կենսապայմանները**:

*Բարենպաստ տեղաշարժեր էին նկատվում նաև միջազգային տեսակետից*: Սերբերը սերունդ աշխարհը Ուկրաինայի և ուկրաինացիների մասին գործնականում ոչինչ չգիտեր: Սակայն, երբ ավելի ու ավելի ակնհայտ դարձավ ԽՍՀՄ-ի մոտալուտ փլուզման փաստը, իր տարածքով ու բնակչությամբ Եվրոպայի հիմնական տերություններին հավասար նրա երկրորդ խոշոր հանրապետության ձգտումները աճող հետաքրքրություն առաջացրեցին: Դրա վկայությունը, մասնավորապես, 1991 թ.-ի հուլիսին ԱՄՆ-ի նախագահ **Ջորջ Բուշի** այցելությունն էր Կիև: Սակայն, ելույթ ունենալով ուկրաինական խորհրդարանում, նախագահը որոշ չափով լսարանին հիասթափեցրեց ազգայնականության ու անջատողականության մասին

իր ելույթով:

Այնուամենայնիվ, 1991 թ.-ի ամռանը հասարակությունը համակված էր անտարբերությամբ ու խորը տարակուսանքով: Տնտեսությունը շարունակում էր անկում ապրել և մինչև անգամ վստահ չէին՝ բնակչությունը կդիմանա՞ արդյոք գալիք ծնունդը: Միաժամանակ, Ուկրաինայի քաղաքական հորիզոնում ավելի պարզորոշ էին ուրվագծվում վճռորոշ երեք թեմաները. նոր *Սահմանադրության նախագիծը, նախագահի ընտրությունը* և ամենակարևորը՝ *միութենական նոր պայմանագիրը*, որը կոչված էր բարեփոխված և ապակենտրոնացված խորհրդային Միությունում հանրապետություններին ապահովելու անհամեմատ շատ իրավունքներով: Այդ պայմանագրի նշանակությունը Ուկրաինայի համար դժվար էր գերազանահատել, քանի որ վճռվում էր լիարժեք, ինքնիշխան ու անկախ տերություն լինելու նրա ճակատագիրը: Ամեն ինչից ակնհայտ էր, որ բեկումնային որոշումների ժամանակն արդեն սարերի ետևում չէ: Մնում էր չպարզված միայն, թե՞ ո՞վ է ընդունելու այդ որոշումները և ինչպե՞ս են դրանք իրականանալու:

### **Չեղաշրջման փորձ**

*1991 թ.-ի օգոստոսին կոմունիստ հետադիմականները Մոսկվայում քաղաքական նախաձեռնությունն իրենց ձեռքը վերցնելու հուսահատ ու հանդուգն փորձ արեցին*: Գորբաչովին մեկուսացնելով Ղրիմում, նրանք երկրում արտակարգ դրություն հայտարարեցին և այն դեկավարելու համար ձևավորեցին այսպես կոչված *Արտակարգ դրությունների պետական կոմիտե*՝ *ԱԳՊԿ (ԴԿԿՄ)*: Կուսակցական վերնախափի, զինվորականների ու ՊԱԿ-ի մի մասի աջակցությունն ունեցող հապճեպ ստեղծված այդ մարմինը հույս ուներ հնարավորին չափ վերականգնել հին կարգերը: Սակայն խռովարարների խմբի (պուտչի) ապաշնորհ պատրաստականությունը և Բորիս Ելցինի ու նրա կողմնակիցների վճռական դիմադրությունը Մոսկվայում կանխորոշեցին դավադրության ելքը: Ի տարբերություն Ելցինի, Լեոնիդ Կրավչուկը խռովության ժամանակ երկակի քաղաքականությանը հետևեց. հայտարարելով, թե արտակարգ դրությունը չի տարածվում Ուկրաինայի վրա, նա նաև չդատապարտեց ԱԳՊԿ-ին: Օգոստոսի 21-ին արդեն պարզ դարձավ, որ հեղաշրջման փորձը տապալվել է: Սակայն, *չնայած այդ իրադարձության կարճատևությանն ու գրեթե խեղկատակությանը, նրա հետևանքներն հիրավի դարակազմիկ դարձան*:

Պուտչի գործողությունները հզոր խթան հանդիսացան հատկապես այն գործընթացների համար, որոնք նա մտադիր էր ընդհատել: Այն ամբողջությամբ և վերջնականապես վարկաբեկեց հին համակարգի կողմնակիցներին, և հատկապես կոմունիստական կուսակցությանը՝ որպես այդ դավադրության անմիջական կազմակերպիչ: Բացի այդ, ամբողջովին խարխուլեցին խորհրդային (իմա՝ ռուսական) կենտրոնացման հիմքերը, որը կրեմլյան ունակին թույլ էր տալիս տնօրինելու խորհրդային Միության բազմաթիվ ազգերի ճակատագրերը: Այնպիսի պայմաններ ստեղծվեցին, որոնց դեպքում նրանք, որոնք դժգոհ էին Մոսկվայի իշխանությունից, կարող էին վերջապես ազատվել նրանից: Եվ Ուկրաինան, իսկ ավելի ստույգ՝ նրա խորհրդարանի ժողովրդավարները, բաց չթողեցին այս թանկագին պատմական պահը: **1991 թ.-ի օգոստոսի 24-ին Գերագույն Ռադան համարյա միաձայն հռչակեց Ուկրաինայի անկախությունը**: Թեպետ, կոմունիստ պատգամավորներն իրենց շարքերում խուճապը հաղթահարելով, համեմայն դեպս, կարողացան ստիպել որոշակի սահմանափակումների գնալ՝ հասնելով անկախության վերաբերյալ դեկտեմբերի 1-ին հանրաքվե անցկացնելու որոշում ընդունելուն: Սակայն հին համակարգին առավել ցավոտ հարված հասցվեց օգոստոսի 29-ին, երբ հեղաշրջմանը մասնակից լինելու համար *խորհրդարանն արգելեց Ուկրաինայում կոմունիստական կուսակցության գործունեությունը*: ԽՄԿԿ-ի նոսրացող շարքերը Գորբաչովից հետո լքեց նաև Կրավչուկը: Ուկրաինայից առաջ և հետո, մեկը մյուսի ետևից խորհրդային հանրապետությունները հայտարարեցին իրենց անկախության մասին: Ամեն ինչից ակնհայտ էր, որ ԽՍՀՄ-ը ապրում է իր վերջին օրերը:

### **Անկախություն**

*Օգոստոսյան հեղաշրջման ծախողունը վերջ դրեց կոմունիստական փորձարարությանն ու հանգեցրեց հողազնդի վրա վերջին կայսրության փլուզմանը, որի տարածքում ձևավորվեցին 15 նոր պետություններ*: Չունենալով սեփական փորձ և լինելով քայքայված ու անկազմա-



կերպ, հին ռեժիմից ժառանգեցին նաև խնդիրների անասելի **ծանր մի** բեռ, որ կայսրությունն ի վիճակի չէր եղել լուծելու: *Երիտասարդ տերություններն ստիպված են իրականացնել միահեծան իշխանությունից՝ ժողովրդավարականի, պլանային տնտեսությունից՝ շուկայականի և մեկուսացվածությունից՝ միջազգային համագործակցությանը միանալու խիստ դժվարին անցում:* Ընդ որում՝ ամենակենսական անհրաժեշտությունը կար և մնում է *կենսամակարդակի կտրուկ անկումը կանխել:* Եվ այս բոլոր խնդիրները **պետք է** լուծվեն կենսունակ քաղաքական ու տնտեսական կազմավորումների միջոցով վերակառուցվելու նախկին խորհրդային հանրապետությունների փորձերին զուգահեռ:

Այն իրավիճակը, որում հայտնվել են Ուկրաինան և այժմ **արդեն** «ներծավոր արտասահմանյան» մյուս երկրները, իր եռթամբ եզակի է: Երբ XX դարի ընթացքում ամբողջ աշխարհում առաջանում էին անկախ պետություններ, նրանց գլխավոր հոգսը, որպես կանոն, դառնում էր հետամնաց հասարակությունից զարգացածին անցումը: Սակայն նախկին խորհրդային հանրապետությունների մեծ մասը բավականին զարգացած **երկրների** շարքին են դասվում: Սրանում է նաև խնդիրների խնդիրը, քանի որ նրանք զարգանում էին որպես քաղաքական ու տնտեսական մի ամբողջության բաղկացուցիչ մասեր, որը սերտորեն կապում էր նրանց, և ճիշտն ասած, հատկապես դրա համար էլ ստեղծված էր: Այստեղից էլ, *բազում կապերի խզումը՝ հատկապես տնտեսական կապերի, չափից դուրս ցավոտ են նախկին հանրապետությունների համար:* Խորհրդային Միությունից նրանց դուրս գալուն զուգընթաց տարվող հասարակության լիակատար բարեփոխումների գործընթացի **համար** հուսադրողն այն է, որ երիտասարդ տերությունները կկարողանան արդյունավետ գործել իրենց համար նոր միջավայրում, որտեղ գերակշռում են զարգացած շուկայական հարաբերությունները և ժողովրդավարությունը: Բայց բանն այն է, որ *արդեն գոյություն ունեցող, բայց փլուզված կառույցների բարեփոխումն ավելի բարդ խնդիր է, քան նորը ստեղծելը:*

### **Քաղաքական տեսանկյուններ**

*Ուկրաինայի զարգացման հետօգոստոսյան ուղին հիմնականում երկու դժվարության հետ է կապված՝ անկախության և տնտեսական ճգնաժամի:* Ինչ վերաբերում է առաջինին, ապա փոփոխություններն այստեղ իսկապես դարակազմիկ են: Սակայն **անկախության** հռչակումից մինչև այն իրականությունն դարձնելը, ինչպես միշտ, «մեծ տարածություն» կա...

1991 թ.-ի դեկտեմբերի 1-ին նշանակված էր հանրաքվե, որի հարցման արդյունքում պետք է պարզվեր՝ Ուկրաինայի բնակչությունն աջակցո՞ւմ է արդյոք **անկախության** մասին հռչակագրին: Այդ նույն օրը նախատեսված էր նաև նախագահի ընտրությունը: Այսպիսով, ուկրաինական ժողովուրդն աննախադեպ հմարավորություն էր ստացել ընտրելու զարգացման ուղին և նրան, ով կգլխավորեր այն:

1991 թ.-ի աշնանը ուժի մեջ էին մտնում անկախությունն ընտրելուն նպաստող նորանոր գործոններ: Դրանք հիմնվում էին ինչպես պատմական փաստարկների, այնպես էլ ավելի հրատապ նկատառումների վրա: Մինչ այդ, ուկրաինացիները միայն լսում էին այն օգուտների մասին, ինչն իբրև թե ունեին խորհրդային Միությունում ապրելու շնորհիվ: Այժմ ավելի խորն էին ըմբռնում այն գիճը, որ վճարում էին, և դեռ առաջվա պես վճարում են, կայսրության գոյատևման հարկադրական փորձարկման համար: Ստալինիզմի ոճիրները, հատկապես 1932-1933 թ.թ.-ների սովասպանող՝ Չեռնոբիլի աղետի հետ մի շարքում կանգնած, էլ ավելի էին սրում Մոսկվայի հանդեպ դժգոհությունը: Սակայն, թերևս, անկախության օգտին ամենալայն ճանաչում գտած փաստարկը շատերի համար այն մտածողությունն էր, որ Ուկրաինայի բարեբեր հողն ընդունակ է իրենց ապահովելու ավելի լավ, եթե այն ազատվի կայսերական ճիրաններից: Նույնիսկ կոմունիստները հիմքեր ունեին քվեարկելու անկախության օգտին, հույս ունենալով այդ ձևով մեկուսանալ Ռուսաստանից, որտեղ ելցինը կուսակցությանը՝ կատարած ոճիրների համար, սպառնում էր հետապնդումներով: ԽՍՀՄ-ի կազմից արդեն դուրս եկած մերձբալթյան հանրապետությունների օրինակը նույնպես ոգեշնչում էր ուկրաինացիներին: Մի խոսքով, անկախության գաղափարը, որ երկար ժամանակ ցնորք էր համարվում, դարձել էր միանգամայն տրամաբանված, հիմնավորված և լրիվ հասանելի:

**Դեկտեմբերի 1-ի հանրաքվեն դարձավ էլի մեկ պատմական ուղենիշ:** *Մասնակիցների 90 %-ն իրենց ծայրը տվել էին անկախության օգտին:* դա գերազանցեց ամենալավատեսական կանխագուշակություններն անգամ: Ոչ պակաս ուրախալի էր այն փաստը, որ ռուսների, իրեաների, լեհերի, հունգարների և մյուս ազգերի ներկայացուցիչները, ինչպես նաև ռուսականացված տարածաշրջանների բնակիչները նույնպես նախապատվությունը տվել էին Ուկրա-

ինայի անկախությանը: **Նախագահական ընտրություններում ծայրերի 62 %-ով համոզիչ հաղթանակ տարավ Լեոնիդ Կրավչուկը,** իսկ նրա հիմնական մրցակից, նախկին այլախոհ Կլաչեյսկալ Չոռնովիլը, ըստ քվեարկության արդյունքների, երկրորդ տեղում էր: Քվեարկությունը, որ անցավ կազմակերպված և կարգուկանոնի մթնոլորտում, ոչ մի կասկած չբողեց այն բանում, թե ինչի է ձգտում ժողովուրդը, ծայրահեղ դեպքում՝ ինչի էր ձգտում այդ պահին:

Հանրաքվեի հետևանքները հեռու գնացող էին և իրենց սպասեցնել չտվեցին: Եթե ԽՍՀՄ-ի կազմից մերձբալթյան երկրների դուրս գալու ու Ռուսաստանի ինքնիշխանության հռչակումը նշանավորեցին խորհրդային Միության փլուզման սկիզբը, ապա ուկրաինական իրադարձությունները նրա համար դարձան մահացու հարված: Իզուր չէր, որ Գորբաչովը համառորեն շեշտում էր, թե խորհրդային Միությունն առանց Ուկրաինայի անհնար է:

Շուտով, **դեկտեմբերի 7-8-ին, Ուկրաինայի, Ռուսաստանի և Բելոռուսիայի առաջնորդները Բելովեժյան Դուլչայում օրինականորեն լուծարեցին ԽՍՀՄ-ը և ստեղծեցին Անկախ պետությունների համագործակցություն (ԱՊՀ):** Կենտրոնամետ խորհրդային համակարգի գոյությունը դադարեցնելու իրենց ձգտումներում նրանք համակարծիք էին, սակայն նույնը չի կատարելի ասել նոր կազմավորման եռթյան նկատմամբ նրանց հայացքների մասին, ինչն էլ շատ շուտով բացահայտվեց:

*Ուկրաինայի համար մյուս կարևոր հարցն այն էր, թե ինչպե՞ս միջազգային հանրությունը կարծազանքի իր անկախությանը:* Հարևան մի քանի պետություններ, ինչպես օրինակ Յուգոսլավիան ու Լեհաստանը, անմիջապես հայտարարեցին իրենց աջակցության մասին, քանի որ ի դեմս Ուկրաինայի տեսնում էին հզոր ու վտանգավոր Ռուսաստանի իրենց համար ընդունելի հակակշիռը: Ուկրաինայի անկախությունն առաջինը ճանաչածների թվում էր Կանադան՝ իր մեծաթիվ ու ազդեցիկ ուկրաինական համայնքով: Սակայն մեծ տերությունները չէին շտապում: Մինչև վերջին պահը ԽՍՀՄ-ի պահպանմանն էր ձգտում Բուշի վարչակազմը, նրան որակելով որպես եվրասիայում կայունության երաշխավոր: Բացի այդ, ԱՄՆ-ի առաջատար շատ քաղաքագետներ մնում էին անուղղելի կենտրոնամետներ և պատկերացնել անգամ չէին կարող «միասնական ու անբաժանելի» ԽՍՀՄ-ի փլուզումը: Սակայն ինչ էլ լիներ, **դեկտեմբերի 25-ին Վաշինգտոնը, համենայն դեպս, տվեց իր «համաձայնությունը»:** Մի քանի ամսվա ընթացքում նույն կերպ վարվեցին նաև մյուս երկրներից շատերը: Միջազգային համագործակցության մեջ Ուկրաինայի մասնակցության սկիզբը դրված էր:

Սակայն շատ ավելի կարևոր էր հյուսիսային հարևանի արձագանքը: *Հանրաքվեի արդյունքներն այնքան ակնհայտ էին, որ դրանք ճանաչելուց բացի, Ելցինի կառավարությանն այլ ելք չէր մնում:* Միաժամանակ, Ուկրաինայի կորուստը ռուսներից շատերի մոտ իսկական ցնցում առաջացրեց: Ոմանց մոտ դա ուղղակի գլխում չէր տեղավորվում: Այդ իրադարձությունը կասկածի տակ դրեց Ռուսաստանի կարգավիճակը՝ որպես գերտերություն, քանդեց նրա առանց այդ էլ քայքայված տնտեսությունը: Հոգեբանական տեսակետից այն զգալիորեն սասանեց ռուս մարդու՝ որպես «ավագ եղբոր», հարմարավետության զգացումը: Բացի այդ, այն Ուկրաինայի մոտ 11 մլն ռուսների կտրեց հյուսիսի իր հայրենակիցներից: Ուստի և ամենակին էլ զարմանալի չէ, որ *Կիևի և Մոսկվայի հարաբերություններում հենց սկզբից էլ լարվածություն առաջացավ:*

Ռուսաստանի խորհրդարանի պատգամավորները համարյա միանգամից բարձրացրեցին Ուկրաինայի սահմանների մասին հարցը, չնայած որ Ռուսաստանի կառավարությունը խոստացել էր հարգել տարածքային նախապիճակը (ստատուս քվո): Կրքերի իսկական փորձի առաջացրեց Դրիմի խնդիրը. պատգամավորները փորձում էին ապացուցել, որ թերակղզին Ռուսաստանից Ուկրաինային հանձնելու մասին 1954 թ.-ի որոշումը սահմանադրական չէ: Այդ գաղափարը պաշտպանեցին դեռևս Դրիմը կառավարող հետևողական-կոմունիստները, ինչպես նաև ռուս ազգայնամուլները: Ուկրաինան բոլոր կողմերից պնդում էր սեփական սահմանների անխախտելիության մասին: Դրիմի հարցը նոր տարածայնությունների տեղիք տվեց Սևծովյան նավատորմի կապակցությամբ: Տեղակայված լինելով հիմնականում Սևաստոպոլում, մոտ 300 նավից բաղկացած և 60-70 հազ. անձնակազմ ունեցող այդ նավատորմը փաստացի մարմնավորում է չսառչող նավահանգիստներ ունենալու Ռուսաստանի դարավոր ձգտումը: Բայց քանի որ Դրիմի տարածքն օրենքով պատկանում է Ուկրաինային, Կիևը հայտարարեց ռուսական կայսերական պատմության այդ սրբության սրբոցի նկատմամբ իր պահանջատիրության մասին: Երկու կողմերի նախնական բանակցությունները փոխադարձ մեղադրանքներից բացի ոչ մի բանի չհամագեցրին:

*Միջազգային հանրությանը ավելի մեծ տազնապ էր պատճառում Ուկրաինայի և Ռուսաս-*



տանի հակամարտությունը միջուկային զենքի կապակցությամբ: Դեռևս ԽՍՀՄ-ի փլուզումից առաջ, Մոսկվան և Վաշինգտոնը ստորագրել էին պայմանագիր՝ իրենց միջուկային զինապաշարները կրճատելու մասին: Իսկ ԱՊՅ ստեղծելու հետ Ուկրաինան սկսեց պաշտպանել իր միջուկային զենքը Ռուսաստանում ոչնչացնելու համար այնտեղ տեղափոխելու (իսկ այդ հնարավորությունը թույլ է տալիս Ուկրաինային համարվելու աշխարհի միջուկային երրորդ գերտերությունը) և փոխարենը համապատասխան ֆինանսական փոխհատուցում ու հետագա անվտանգության երաշխիքներ ստանալու գաղափարը: Այդպիսի դիրքորոշումը հակասում էր նախօրոք ձեռք բերված պայմանավորվածություններին, ուստի և առաջ բերեց ինչպես Վաշինգտոնի, այնպես էլ Մոսկվայի դժգոհությունը:

Նախկին երկու «եղբայրական հանրապետությունների» միջև լարածությունը սաստկացավ նաև ԱՊՅ-ի լուծման խնդրի շուրջ տարածայնությունների պատճառով: Մոսկվան չէր քաջցնում, որ Համագործակցության տակ տեսնում է պետությունների բարձր կանգնած մի կազմավորում՝ իր բյուրոկրատական կառուցվածքով, որ կոչված է լինելու համակարգել անդամ երկրների ռազմական, քաղաքական և հատկապես տնտեսական ոլորտների գործունեությունը: Իսկ Կիևը, երկյուղելով, որ Ռուսաստանը ԱՊՅ-ում իշխող դեր կգրավի, հակված էր այն ավելի շուտ համարել որպես նախկին ԽՍՀՄ-ից «քաղաքակիրթ բաժանման» միջոց, որպես ներկայացուցչական ժողով, որտեղ կքննարկվեն ընդհանուր, հիմնականում՝ տնտեսական, խնդիրները, և որը ոչ մի դեպքում չի սահմանափակի Ուկրաինայի անկախությունը:

1992 թ.-ի ամռանը, այդ ծայրահեղ անախորժ խնդիրներից մի քանիսը լուծելուց հետո, որոշակի առաջընթացի հասան: Կրավչուկի ու Ելցինի հուլիսյան և օգոստոսյան հանդիպումների արդյունքում պայմանավորվածություն ձեռք բերվեց՝ հինգ տարի ժամանակով Սևծովյան նավատորմը երկու կողմի համատեղ վերահսկողությանը հանձնելու մասին: Սակայն Ռուսաստանի և Ուկրաինայի միջև անիրավահավասար վաղեմի հարաբերությունների վերակառուցման գործընթացը, լինելով շատ նրբաբույս և անսովոր բարդ, պահանջում է գերլարված աշխատանք և, ամենայն հավանականությամբ, կծղվի երկար տարիներ:

### Ներքին քաղաքականություն

Եթե երիտասարդ Ուկրաինական տերության հաջողությունները միջազգային մակարդակով բավականին տպավորիչ են, ապա դա բոլորովին չի կարելի ասել նրա ներքին իրադրության վերաբերյալ: Այստեղ կառավարությունը կարող է պարծենալ առայժմ միայն մի բանով, այնուամենայնիվ, շատ կարևոր ձեռքբերումով. *պայթյունավտանգ իրավիճակում նա կարողացավ պահպանել քաղաքացիական խաղաղությունը և կանխել էթնիկական հնարավոր հակամարտությունները*, այն դեպքում, երբ դրանք տեղի են ունենում խորհրդային նախկին հանրապետություններից շատերում: Չնայած որ սպայական կազմի 70 %-ը կազմում են ռուսները, հաջողությամբ իրականացվում է մոտ 3 մլն խորհրդային նախկին զինծառայողների վերակազմավորման գործընթացն ուկրաինական բանակում: Պաշտպանության նախարարությունը պլանավորում է այդ հսկայական ուժերը կրճատել մինչև 300-400 հազ. -ը և նույնիսկ այդ դեպքում ուկրաինական բանակը կմնա Եվրոպայում ամենամեծ բանակներից մեկը:

Սակայն այդ ամենը ի չիք է դառնում՝ *գնալով վատթարացող տնտեսական իրավիճակը* վերահսկելու կառավարության անկարողության պատճառով: Անշուշտ, նրանց առջև կանգնած խնդիրները հնարավոր չէ լուծել մի ակնթարթում, և նախկին խորհրդային հանրապետություններից ոչ մեկը դեռևս այդ առումով որևէ հաջողության չի հասել:

Ուկրաինայի անկախ գոյատևման ավելի քան մեկ տարվա ընթացքում *Վիտոլդ Ֆոկինի* կառավարությունը չափից դուրս դանդաղաշարժ էր և կառուցողական գործողություններ անելուն անընդունակ: Ավելին, նա միայն բարդացնում էր բոլոր խնդիրները, թույլ տալով չարաշահումների ու կաշառակերության անսահման աճ կառավարական պաշտոնյաների շրջանում: Ժամանակն անցնում էր անօգուտ կերպով և դա շատ թանկ էր նստում Ուկրաինայի քաղաքացիների վրա:

Ղեկավարությունը չէր շտապում նաև պետության ստեղծման ու կայացման հիմնարար խնդիրները լուծելու գործում: Մասնավորապես, դեռևս գոյություն չունեին Սահմանադրությունը, որը կսահմաներ այդ գործընթացի հիմնական ուղղությունները: Արդյունքում պարզ չէ, թե ինչպիսին պետք է լինի Ուկրաինան՝ նախագահական, թե՛ խորհրդարանական հանրապետություն: Այստեղից էլ բխում է իշխանության գործադիր և օրենսդիր ճյուղերի միջև լիազորությունների բաշխման անորոշությունը: Սկզբում նախագահ Կրավչուկն իր ազդեցու-

յունն ընդլայնելու և գործադիր իշխանությունն ամրապնդելու փորձ արեց. նա տեղերում նշանակեց իր ներկայացուցիչներին, կազմավորեց խորհրդակցական մարմինը՝ *Պուման*, և հրապարակեց օրենքի ուժ ունեցող մի շարք հրամանագրեր: Սակայն 1992 թ.-ի աշնանից նրա հետ մրցակցել սկսեց *խորհրդարանը*, որը գլխավորում էր *Իվան Պլուչչը*: Այս ամենը ոչ մի կերպ չէր նպաստում պետության կարևորագույն որոշումների արդյունավետությանը:

Լուծված չէ նաև այն հարցը, թե պետականության ինչպիսի համակարգի կողմնորոշումն է նախընտրելի. միացյալ (ունիտար), կենտրոնացած (ինչպես օրինակ՝ Ֆրանսիան), թե՛ ֆեդերատիվ (Գերմանիայի նման): Այս խնդիրը բարդացնում է իրենց նախկին վտանգներում մնալու կոմունիստական նախկին պաշտոնյաների ձգտումով, ինչպես նաև այն որպես «Կիևի ազգայնական քաղաքականություն» բնորոշող ռուսացված տարածաշրջանների բացասական վերաբերմունքով: Անջատվողական մոտեցումներ նկատվեցին Դոնբասում, Անդրկարպատներում և հատկապես բացահայտորեն՝ Դրինում:

**1992 թ.-ի հունիսի 30-ին թերակղզու կոմունիստ ղեկավարները, ոչ առանց Ռուսաստանի աջակցության, Կիևին ստիպեցին ճանաչել նրա ինքնավարությունը:**

Ընդհանուր առմամբ, ներքին քաղաքականությանը հատուկ է գնալով ավելի նկատելի երկակիությունը: Մի կողմից՝ կարծես թե գործում են օրենքները, նախարարությունները, նախագահի ներկայացուցիչները, նրա կարգադրությունները և այլն: Մյուս կողմից՝ տեղերում իշխանությունը մնում է շրջխորհուրդների, ձեռնարկությունների ու կոլտնտեսությունների ղեկավարների ձեռքում, այսինքն այն նույն կոմունիստական նախկին պաշտոնյաների, որոնք իրենց «սեփական խաղն են խաղում»: Դիտարկելով իրավիճակն Ուկրաինայում, արևմտյան որոշ տեսաբաններ այն եզրահանգման են գալիս, որ այստեղ ընդամենը երկու օրենք է գործում՝ Մերֆիի օրենքը և ջուևզլիների օրենքը...

*Ընդհանուր խառնաշփոթ խորանում է բազմաթիվ տարատեսակ կուսակցությունների առկայությամբ:* Բանն այն է, որ նախկին խորհրդային շատ քաղաքացիներ քաղաքական տարակարծության պայմաններում կյանքի դասերն ընկալել են իրենց ուզածի պես: Ինչ-որ մեկը տառապում է պարզ ու հասկանալի տոտալիտար համակարգի հանդեպ կարոտախտով, իսկ մեկ ուրիշն արդեն տարբերություն չի տեսնում տարակարծության և անիշխանականության միջև:

Ուկրաինայի անկախության մեկ տարին վեր է հանել մոտ 15 նոր կուսակցություն, հիմնականում՝ փոքրաթիվ և վատ կազմակերպված: Դրանցից շատ քչերն են ձեռք բերել ժողովրդի աջակցությունը, հատկապես տնտեսական ճգնաժամի և քաղաքական անտարբերության տարում: Այս նորակազմությունները, ինչպես արդեն նշվել է, միայն պղտորում են քաղաքական դաշտը, բայց մյուս կողմից, առանց նրանց չէր լինի նաև իրական ժողովրդավարություն:

Քաղաքական և գաղափարախոսական տարածայնություններ են տիրում նաև, այսպես կոչված՝ ժողովրդավարական ճամբարի ներսում: Լեհական «Համերաշխություն» կամ լիտվական «Սայուդիս» զանգվածային շարժումների նման, Ռուխն էլ իր նպատակներից շատերին, թեկուզև ձևականորեն, հասնելուց հետո լուրջ, եթե կարելի է այսպես արտահայտվել՝ «ոճի ճգնաժամ» էր ապրում: Երբ որոշ առաջնորդներ, մասնավորապես՝ *Իվան Դրաչը*, *Դմիտր Պավլիչկոն* և *Միխայլո Գորինը*, կոչ էին անում *պահպանել Ռուխը որպես ժողովրդավարական ուժերի միավորող ճակատ*, որը կարող է դառնալ երիտասարդ տերության քաղաքական պատկառելի հենարանը: Դա, բնականաբար, պետության հետ համագործակցություն էր ենթադրում: Իսկ *Վյաչեսլավ Զոռնովիչի* գլխավորած խմբավորումն ապացուցում էր, թե քանի որ հասարակության մեջ բոլոր կարևոր դիրքերն առաջվա պես վերահսկվում են նախկին պաշտոնավորների կողմից, ապա գործուն բարեփոխումները հնարավոր չեն այնքան ժամանակ, քանի դեռ նրանք չեն հեռացվել իշխանությունից: Ելնելով սրանից, *Ռուխը*, *իրենց կարծիքով*, պետք է դառնա *քաղաքական ընդդիմադիր կուսակցություն*:

Այս տարածայնությունները, որ սրվում էին Ռուխի առաջնորդների ավելորդ ինքնասիրության ու անհատական հակակրանքի դրսևորումների հետևանքով, բերեցին շարժման հանդեպ նրա շատ անդամների հիասթափությանը, ինչը և նրա թվի վրա անդրադարձավ: Փոխզիջումների գնալ չհաջողվեց և, 1992 թ.-ի դեկտեմբերի 6-ի իր IV համագումարից հետո, *Ռուխը փաստորեն վերածվեց ևս մեկ քաղաքական կուսակցության*, որը ղեկավարում էր Վյաչեսլավ Զոռնովիչը և ուներ մոտ 55 հազ. անդամ: Ժողովրդի մեջ աջակցություն ունենալու և իր ազդեցության տեսակետից, այն, անկասկած, երբեմնի կազմակերպության ստվերն էր միայն:

Այդ ընթացքում ժողովրդավարական մյուս առաջնորդները կազմավորեցին իրենց կուսակցությունները: Դրանցից *ամենամեծն* ու *կազմակերպվածը* «Ուկրաինական հանրապետա-



կան կուսակցությունն» է (12 հազ. անդամ), որը սկզբում գլխավորում էր *Լևկո Լուկյանենկոն*, իսկ հետո՝ *Միխայլո Չորիցը*: Մնացածներից կարելի է հիշատակել «*Ուկրաինայի ժողովրդավարական կուսակցությունը*»՝ սկզբում *Յուրի Բադոյի*, իսկ ավելի ուշ՝ *Վոլոդիմիր Յավորիվ-սկու* գլխավորությամբ, ինչպես նաև «*Գյուղացիական ժողովրդավարական կուսակցությունը*»: 1992 թ.-ի օգոստոսին այս կուսակցությունները «Լուսավորության», «Ուկրաիներեն լեզվի ընկերության» և «Ուկրաինացի ուսանողների միության» հետ միասին կազմավորեցին «Ազգային-ժողովրդական ուժերի ուկրաինական վեհաժողով» միությունը, որի նպատակը պետության ստեղծման ու կայացման գործում նախագահին աջակցելն է: Այդ նույն տարում կազմավորվեց ևս մեկ միություն՝ «Նոր Ուկրաինա», որում առաջատար դերը «Ուկրաինայի ժողովրդական վերածննդի կուսակցությանն» է՝ *Վոլոդիմիր Ֆիլենկոյի* գլխավորությամբ: Նրա կազմի մեջ մտնում են նաև «Ուկրաինայի սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը», «Կանաչների» կուսակցությունը, արհմիութենական կազմակերպություններ, աշխատավորական համայնքների և ծնունդ առնող բիզնեսի ներկայացուցիչներ: Այդ միավորման հիմնական հոգսը տնտեսական բարեփոխումների արագացումն է: Քաղաքական դաշտի աջ թևը ներկայացնում են գերազգայնական կուսակցություններն ու խմբերը, որոնք այս կամ այն չափով աջակցություն են ստանում ուկրաինական սփյուռքի համապատասխան շրջանակներից՝ «Ուկրաինացի ազգայնականների միության», «Ուկրաինական ազգային ընդհանուր ժողովի» և ՌԻԱ-ի: Նրանց անդամների ընդհանուր թիվը, ըստ որոշ հաշվարկների, 45 հազ. է:

Միանգամայն օրինական հարց է ծագում՝ ինչպիսի՞ն է արգելված ՌԻԱ-ի և նրա 3 մլն անդամների ճակատագիրը: Քանի որ նրանց մեծ մասը ժամանակին կուսակցության մեջ էին մտել պաշտոններ ստանալու համար, ապա նրանք լքեցին այն անմիջապես, հենց որ կուսակցության պատկանելությունը դադարեց արտոնություններ տալուց: Սակայն, չնայած դրան, կարելի էր սպասել, որ այդպիսի ամենահաս և բազմափորձ կազմակերպությունը կկարողանա պահպանել բավականին թվով ամենաթունդ կողմնակիցների: Դեռ մեկ ամիս էլ չէր անցել ԽՍՀՄ-ի վերջնական փլուզումից, երբ նրանք քաղաքական ասպարեզ դուրս եկան, հայտարարեցին կոմունիստական գաղափարներին իրենց հավատարմությունը և համախմբվեցին «*Ուկրաինայի սոցիալիստական կուսակցության*» մեջ, որը գլխավորում էր *Օլեքսանդր Մորոզը*: Սկզբնական բավական համեստ թվաքանակով (30 հազ.) հանդերձ, կուսակցությունը ստացավ անգործ մնացած խորհրդային նախկին պաշտոնավորներից շատերի, ինչպես նաև բնակչության պահպանողական տարրերի աջակցությունը: Բացի այդ, նրա կողմնակիցներից էին նաև այսպես կոչված «239 խումբը», որը մեծամասնություն էր կազմում խորհրդարանում:

### Տնտեսական ճգնաժամ

Ուկրաինայի շարքային քաղաքացու համար՝ «վերններում» տեղի ունեցող քաղաքական անվերջանալի ճակատամարտերը վերջիվերջո դարձան ավելի ու ավելի նվազ հետաքրքիր: Ավելին, շատերի մոտ քաղաքականության հանդեպ, որպես այդպիսին, դրանք ավելի շուտ զգվանք էին հարուցում: Եվ իզուր չի ասված՝ քաղաքագետները փոխարինում են մեկը մյուսին, նրանց խոստումները որպես խոստում էլ մնում են, իսկ կյանքն օրեցօր ցած է գլորվում հասնելու աղքատության մակարդակի: Հատկապես այդ խնդիրները լուծելու անկարողություն էր, որ խորհրդային ռեժիմին կործանման հասցրին: Եվ այժմ վախ կա, և միանգամայն տրամաբանական, որ եթե երիտասարդ Ուկրաինական տերությունը չկարողանա դուրս գալ տնտեսական ճգնաժամից, ապա նրան նույնպիսի ճակատագիր է սպասվում...

Անկախության օգտին հանրածանոթ փաստարկներից մեկը կայանում էր նրանում, որ Ուկրաինայի բնակչությունն անկասկած կբարելավի իր նյութական վիճակը, երբ երկիրն ազատվի Մոսկվայի գաղութային շահագործումից: Դա ամրապնդվում էր Ուկրաինայի մասին այն ավանդական պատկերացումներով, որ դա դրախտավայր է, և բավական է ճիշտ տնօրինել նրա բարիքները, և կշատրվանեն կաթի մեղրահոս գետերը... Բայց, ցավոք սրտի, հեքիաթներ չեն լինում: Գնաժամային իրավիճակը շարունակվում էր, և 1993 թ.-ի շեմին այն իսկապես դարձավ աղետալի:

Վիճակագրությունն ի գորու է արտացոլել միայն մի քանի կողմերը, բայց դրանց ետևում շատ բաներ կան: 1990 թ.-ից մինչև 1992 թ.-ը ներառյալ, ազգային համախառն արտադրանքը նվազել է 14 %-ով, իսկ աշխատանքի արտադրողականությունը՝ 15 %-ով: Աշխատելուց օգուտ չկար, քանի որ աշխատավարձը շատ արագ արժեզրկվում էր: Միայն 1992 թ.-ին դրամի արժեզրկումն հասել էր ապշեցուցիչ աստիճանի՝ 2000 %-ի: Հարկադրված լինելով ետ մնա-

ցող և անհագուրդ ձեռնարկություններին լրավճարներ հատկացնելու համար շարունակ մեծացնելու դրամի քանակական ծավալները, կառավարությունը հայտնվեց անելանելի վիճակում. կամ դրամի գերարժեզրկում, կամ զանգվածային գործազրկություն: Դրամի արժեզրկմանը նպաստում էր նաև *ներմուծվող կենսականորեն անհրաժեշտ ապրանքների և հումքի, հանրապետ տնտեսական նավթի ու գազի, զենքի սլացիկ աճը*: Եթե նույնիսկ ենթադրենք, որ մարդիկ մեծ մասամբ ի վիճակի են առաջին անհրաժեշտության ապրանքները գնել բարձր գներով, ապա այդ ապրանքները պարզապես անհնար էր գտնել: Դրանք փնտրել-գտնելը բնակչության մեծ մասի հիմնական զբաղմունքն էր դարձել: Դեռևս 1988 թ.-ին ուկրաինացիները միս, ծուկ և կաթնամթերք ավելի քիչ էին սպառում, քան դա նախատեսված է ընդունված նորմերով: Այժմ, բացառությամբ հացի և հացամթերքի, շարունակական թերսնումը դարձել է սովորական երևույթ: Ըստ որոշ գնահատականների, Ուկրաինայի բնակչության կեսից ավելին գտնվում է աղքատության շեմից ցածր վիճակում (1989 թ.-ին այդպիսիները կազմում էին 15 %): Հատկապես ծանր է ծեղերի համար, չխոսելով արդեն երեխաների՝ ազգի ապագայի, մասին: Բացի այդ, իրենց զգացնել են տալիս Չեռնոբիլի հետևանքները. մասնավորապես, 90-ականների սկզբին մահացությունն Ուկրաինայում գերազանցում էր մետելիությանը: Վերջապես, *համաճարակի ծավալների էին հասել կաշառակերությունն ու հանցագործությունը*:

Անկախության հակառակորդներն այս բոլոր դժբախտությունների ու չարիքի արմատը տեսնում են ԽՍՀՄ-ից Ուկրաինայի դուրս գալու մեջ: Դա հանգեցրեց նրան, ապացուցում են նրանք, որ ձեռնարկությունները կտրվել են հումքի ու պաշարների աղբյուրներից, արտադրողներն ու սպառողներն առանձնացվել են պետական սահմաններով, դրամական շրջանառությունը բարդացել է, իսկ առևտրի ճանապարհին անջրպետներ են դրվել: Նրանց կարծիքով, ԽՍՀՄ-ի «ժողտնտեսությունը համալիր ամբողջությունը» այնքան սերտորեն էր փոխկապակցված, որ ոչ մի դեպքում չպետք է այն քանդել, և միայն նախկին հանրապետությունների միահամուռ ջանքերը թույլ կտան լուծելու նրանց տնտեսական խնդիրները:

Այժմ ուշադրության առնենք անկախության կողմնակիցների փաստարկները: Նրանց համար տնտեսական ներկա ճգնաժամը խորհրդային համակարգի ի սկզբանե արատավոր, անբարոյական և անուղղելի էության էլի մեկ ապացույցն է: Նրանք պնդում են, որ տնտեսական անկումը սկսվել է դեռևս 80-ական թվականներին և շարունակում է թափ առնել: Համաձայնվելով, որ ԽՍՀՄ նախկին հանրապետությունների, հատկապես Ռուսաստանի հետ տնտեսական համագործակցությունն անկասկած անհրաժեշտ է, նրանք միաժամանակ նշում են, որ *յուրաքանչյուր երկիր պետք է փնտրի ու գտնի ճգնաժամից դուրս գալու սեփական ուղին՝ հաշվի առնելով իր առանձնահատկություններն ու խնդիրները*: Այսպիսով, անկախությունը հարկադրում է ազգային գիտակցություն ունեցող ուկրաինացիներին ավելի իրականորեն արժեքավորել իր տնտեսական հնարավորություններն ու հեռանկարները: Ավելին, նրանց մեջ ամրապնդվում է այն գիտակցությունը, որ *իրենց խնդիրները պետք է գլխավորապես ինքնուրույն լուծեն*:

Առաջին հայացքից, Ուկրաինայի տնտեսական հզորությունը կարող է տպավորիչ թվալ: Այն ունի մի շարք կարևորագույն ձեռնարկություններ, առաջին հերթին՝ ածխահանության, մետաղամշակման և մեքենաշինության, ինչպես նաև նախկին ԽՍՀՄ-ի քիմիական ձեռնարկությունների կեսը: Իրեն լավ կողմից է դրսևորել ուկրաինական նավաշինությունը: Ըստ խորհրդային չափորոշիչների, բավականին զարգացած է համարվում գյուղատնտեսությունը, որը 1989 թ.-ին տվել է համամիութենական արտադրանքի մոտ 21 %-ը և շաքարի մոտ կեսը: Ուկրաինայում է կենտրոնացած սևահողի համաշխարհային պաշարների 30 %-ը: Բավականացնում է նաև համեմատաբար ժամ աշխատուժը, այդ թվում՝ միջնակարգ ու բարձրագույն կրթություն ունեցողների: Միաժամանակ, երկիրն ունի գիտատեխնիկական բավականին մեծ ներուժ: Սակայն խորապես ճշգրտելիս, պարզվում է, որ այս ցուցանիշների մեծ մասը շատ խաբուսիկ է: Եթե բնական հանքաշերտերը, հիմնականում՝ ածխի ու երկաթի հանքաքարերի, իսկապես էլ շատ են, ապա դրանք մշակող ձեռնարկություններն անկման եզրին են, կամ էլ հումքի արդյունահանման արժեքը գերազանցում է նրա վաճառքից ստացվող եկամուտը: Դրա մեղավորությունը՝ հնացած տեխնոլոգիաներն են: Մետաղամշակումն ու մետաղագործությունը նույնպես անհապաղ արդիականացում են պահանջում: Այս ամենը իսկայական կապիտալ ներդրումներ է պահանջում, բայց կառավարությունն ի գորու չէ այդ ամենը: Նոր հանքավայրերի որոնումները առայժմ ոչ մի արդյունք չեն տվել, այսինքն՝ Ուկրաինան շուտով կարող է դադարել հումքի խոշոր մատակարար լինելուց: Իրավիճակից իրենց դժգոհու-



թյունն են բարձրաձայնում ծանր արդյունաբերության աշխատավորները, հիմնականում՝ ցածր որակավորում ունեցող բանվորները: Միաժամանակ, Ուկրաինայի արդյունաբերական արտադրանքի 40 %-ն ընկնում է ծանր արդյունաբերության վրա, որը հՄՀՄ-ի ռազմարդյունաբերական խոշոր միավորման մի մասն էր և համապատասխան ուղղվածություն ուներ: Վերջապես, ձեռնարկությունների մեծ մասը բնապահպանական առումով անվտանգ չէին և այդպիսին էլ մնում են: Այսպիսով, Ուկրաինայի տնտեսությունն ավելի շատ վնաս, քան եկամուտ բերելով, փաստորեն ուժասպառ է լինում:

Ինչ վերաբերում է գյուղատնտեսության ճյուղին, ապա նրա աշխուժացումը կրկին արգելակվում է արդյունաբերության անկմամբ: Միայն 1992 թ.-ին նրա արդյունավետությունը նվազել է 15 %-ով: Գյուղատնտեսական աշխատանքները խիստ կերպով դժվարացել են էներգետիկ ճգնաժամի պատճառով: Բացի այդ, գյուղը անհաճո անակնկալ մատուցեց: Դարերով երկրագործի նվիրական երազանքը եղել է սեփական հողատարածք ունենալը, և որքան շատ՝ այնքան լավ: Սակայն հիմա, երբ հնարավորություն ընձեռնվեց մասնավոր գյուղացիական տնտեսությանը վերադառնալուն, այն առանձնահատուկ ոգևորություն չառաջացրեց: Ֆերմերների հավակնորդներից շատերին վանում է կոլտնտեսությունների ղեկավարների դիմակայությունը, տեխնիկա ձեռք բերելու դժվարությունները, հարևանների նախանձը, վերջապես՝ ծանր աշխատանքի հեռանկարը: Պակաս անհանգստացնող չէ այն, որ գյուղացին կորցրել է հողի տերը լինելու ավանդական զգացումը, ինչը կոլտնտեսության կործանարար համակարգի բազմամյա տիրապետության արդյունքն է: Անշեղորեն կրճատվում է գյուղական բնակչության թիվը: 1975 թ.-ից մինչև 1990 թ.-ը այն կրճատվել է մոտ 16 %-ով, այսինքն՝ 17-20 մլն մարդով: Սակայն, գյուղի տնտեսական նշանակության անկումով հանդերձ, այն, համեմայն դեպս, մնում է բավականին էական: Ամենից ակնհայտ դա արտահայտվում է նրանում, որ շատ քաղաքաբնակներ ծանր ժամանակներին դիմանում են հատկապես գյուղի հետ ազգակցական կապերի և այնտեղից սննդամթերքի ներկրման շնորհիվ:

Ուրեմն հույս կա՞ արդյոք, որ իրավիճակը կփոխվի դեպի լավը: Ցավոք սրտի՝ առայժմ շատ քիչ: Տնտեսության բարեփոխման նախագծեր՝ ինչքան ուզես, իսկ նրանցից ամենաընդունելին ընտրելը և այն կյանքի կոչելն անընդհատ ձգձգվում է: Հիմնական պատճառն այն է, որ դրանով զբաղվողների մեծ մասը, ցավոք սրտի, մեզ ծանոթ այն նույն բյուրոկրատներն են՝ նախկին կոմունիստները, որոնք ոչ միայն չեն գիտակցում բարեփոխումների անհրաժեշտությունը, այլև ընդհանրապես դեմ են դրան: Իսկ Արևմուտքը: Արևմտյան բիզնեսի հետաքրքրությունն Ուկրաինայի նկատմամբ նույնպես դանդաղ է աճում: Նախ՝ արևմտյան տնտեսությունն ինքը՝ անկում է ապրում, երկրորդ՝ աշխարհում կապիտալ ներդրումների շատ ավելի գայթակղիչ հնարավորություններ կան, քան Ուկրաինայում, երրորդ՝ շատ քչերը կհամարձակվեն կապիտալ ներդրումներ անել, մինչև որ չպարզվի մասնավոր սեփականության իրավիճակը և չկարգավորվի բանկային համակարգը: Այսպիսով, արևմտյան կապիտալ ներդրումների հաշվին հազիվ թե հաջողվի տնտեսության մեջ, ծայրահեղ դեպքում՝ մոտ ժամանակներս, առաջընթաց ունենալ:

Քանի որ բարեփոխումների մեջ որևէ առաջընթացի բացակայությունն անհանդուրժելի էր, ուստի և 1992 թ.-ի սեպտեմբերի 30-ին **Վիտոլդ Ֆոկինը** հրաժարական տվեց, իսկ վարչապետի պաշտոնում խորհրդարանը հաստատեց Դենպրոպետրովսկի խոշորագույն գործարաններից մեկի նախկին տնօրենին՝ մեծ հեղինակություն ունեցող մասնագետ **Լեոնիդ Կուչմային**: Բառացիորեն անմիջապես վարչապետն առաջարկեց իրեն ժառանգություն հասած շատ բարդ խնդիրների վճռական և իրագործելի մոտեցման ուղիներ, բացահայտ խոստովանելով, որ Ուկրաինան ոչ թե տնտեսական ճգնաժամ, այլ իսկական աղետ է ապրում: Խորհրդարանից վեցամսյա ժամկետով արտակարգ լիազորություններ ստանալով, նա ձեռնարկեց բարեփոխումները մեռյալ կետից տեղաշարժելու մի շարք միջոցառումներ: Բայց ժամանակի ընթացքում, արդեն որերորդ անգամ, միայն հաստատվեց այն ակնհայտ ճշմարտությունը, որ Ուկրաինայում կառուցողական փոփոխության ցանկացած փորձ առաջվա պես դատապարտված է բարդ, ձգձգվող և ցավալի գործընթաց դառնալու:

\* \* \*

Պետականության բացակայությունն ու օտար երկրների կողմից Ուկրաինայի արդիականացման գործընթացների վերահսկողությունն իմ աշխատության հիմնական թեմաներն էին:

Դրանք զգալի չափով կարողացան պարզաբանել, թե ինչու այդպիսի ներուճակ հարուստ երկիրը, ինչպիսին Ուկրաինան է, մնաց աղքատ ու կեղեքված, թե ինչու այդպիսի վառ ու տպավորիչ պատմություն ունեցող ժողովուրդը, ինչպիսին ուկրաինացիներն են, ունեցել է ազգային ինքնագիտակցության ու ինքնակայության այդպիսի թույլ զգացողություն, և ինչու գործնականում այն հայտնի չէր աշխարհին:

Այսօր Ուկրաինան ի չիք դարձրեց այդ անսովոր երևույթներից առնվազն երկուսը. *այն դարձավ անկախ և միջազգային հանրության կողմից ճանաչված*: Սակայն անլուծելի է մնում արդիականացման, մարդկանց կենսամակարդակի բարձրացման խնդիրը: Այսօրվա բարդ ու խառն պայմաններում մի մասը կոչ է անում փրկվել հնին վերադառնալով, մյուս մասը պահանջում է խիզախորեն նետվել դեպի անհայտությունը, իսկ շատերն էլ համաձայն են գնալ ցանկացած ուղիով, միայն թե ազատվեն ողորմելի ու անբովանդակ կյանքից: Պարզ է միայն մի բան՝ արդիականացման ծախսողունը նաև պետականության ծախսողուն է: Ճգնաժամի շրջանում շատ ուկրաինացիներ համակվում են չարագուշակ կանխագացումներով, քանի որ այն շատ է հիշեցնում անցյալ ժամանակները, երբ անկախության կարծատն փորձերը տապալվում էին: Սակայն այժմյան իրավիճակը բոլորովին այլ որակ ունի, և դա հույս է ներշնչում: **Երկար հարյուրամյակների ընթացքում առաջին անգամ ուկրաինացիների ճակատագիրն իրենց իսկ ձեռքերում է:**







## ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Օրեստ Սուբտելնու «Ուկրաինա. պատմություն» գրքի հայերեն լեզվով լույս ընծայումը մեր երկու դարավոր բարեկամ ժողովուրդների կյանքում կարևոր իրադարձություն է: Բարեկամություն, որի վկայությունը ոչ միայն բազմաթիվ գրավոր աղբյուրներն են և՛ ուկրաիներեն, և՛ հայերեն լեզուներով, այլև մեզ հասած պատմական ու ճարտարապետական հուշարձանները: Տարբեր ժամանակներում այդ կապերի քննարկմանը նվիրված գիտական նստաշրջաններ են տեղի ունեցել և՛ Երևանում, և՛ Կիևում: Դրանցից վերջինը տեղի ունեցավ 2008 թ.-ի մայիսին՝ Լվովի Կաթոլիկ համալսարանի և Միչիգանի Գեոլոգիայի (ԱՄՆ) ջանքերով, ուկրաինական պատմագիտության նահապետ Յա. Դաշկևիչի նախագահությամբ, որի անունը քաջ հայտնի է Հայաստանում: XIX դարից սկսած բազմաթիվ հետազոտություններ են լույս տեսել՝ նվիրված այդ կապերի զանազան դրսևորումներին: Դրանով հանդերձ, ոչ Ուկրաինայում և ոչ էլ Հայաստանում, ոչ բնագրով և ոչ էլ թարգմանաբար, մեր ժողովուրդների պատմությանը նվիրված ոչինչ չի հրատարակվել բոլորիս հայտնի որոշակի պատճառներով: Խորհրդային ժամանակներում համարվում էր, որ նման «ճոխության» կարիքը չկա՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ բոլորն էլ կարող են ծանոթանալ այս կամ այն խորհրդային հանրապետության՝ ռուսերեն լեզվով հրատարակված, և պետության կողմից «հատուկ կուրսով» մեկնաբանված պատմությանը:

Սակայն, մեր ժողովուրդների անկախության ձեռք բերումից հետո նման հրապարակումների կարիքը խիստ զգացվեց և ամենից առաջ այն պատճառով, որ վերջապես վերացան գիտնականների հետազոտական աշխատանքներին խոչընդոտող բազմաթիվ հպարդելքները, այդ թվում պատմական ու քաղաքական գործիչների անունները հիշատակելու արգելքները: Բացի այդ, ինչպես Ուկրաինայում, այնպես էլ Հայաստանում պատմագիտությունը վերջապես ազատագրվեց պարտադրված մարքս-լենինյան գաղափարախոսության դաժան կապանքներից, հնարավորություն ստանալով ճշմարտացի մեկնելու հայտնի, բայց պաշտոնապես լռության մատնված պատմական իրադարձությունները կամ անհատների գործունեությունը: Որպես օրինակ՝ հիշատակենք 1917-1921 թ.թ.-ների մեր ժողովուրդների՝ կորսված պետականությունը վերականգնելու հերոսական, և միևնույն ժամանակ՝ աղետալի փորձերը: Հայ պատմաբան, պրոֆեսոր Գ. Պետրոսյանի ջանքերի շնորհիվ վերջերս վեր հանվեց և ուսումնասիրվեց պատկառելի թվով արխիվային նյութեր, որոնք վերաբերում են մասնավորապես 1918-1921 թ.թ.-ների հայ-ուկրաինական դիվանագիտական հարաբերությունների հաստատմանը: Դրանք դիվանագիտական գրագրությունների, հաշվետվությունների, դիմումների, նոտաների և այլնայլ փաստաթղթերի հարյուրավոր էջեր են, որոնք պահվում են Կիևի, Երևանի և Մոսկվայի արխիվներում:

Եվ դա այն դեպքում, երբ պատմության խորհրդային ողջ շրջանում նույնիսկ չի էլ հիշատակվել Հայաստանում՝ ուկրաինական, և Ուկրաինայում՝ հայկական դիվանագիտական առաքելությունների գոյության մասին:

Այս առումով, կանադացի ծանաչված պատմաբան Օրեստ Սուբտելնու մենագրության հայերեն լեզվով լույս ընծայումը պետք է ընկալել որպես այդ բացը լրացնելու ձգտում և հնարավորություն ընձեռնել ինչպես հայ պատմաբաններին, այնպես էլ բոլոր նրանց, ովքեր հետաքրքրվում են պատմությամբ, ծանոթանալու Ուկրաինայի պատմությանը՝ հեղինակավոր գիտնականի անաչառ տեսանկյունից:

Սակայն որոշ հայ ընթերցողների մոտ կարող է օրինաչափ հարց ծագել, թե Ուկրաինայի պատմությունն ինչո՞ւ է առաջին անգամ ներկայացվում հայերեն լեզվով հատկապես կանադացի՝ թեկուզև ծանաչված, թեկուզև ծագումով ուկրաինացի, պատմաբանի շարադրությամբ:

Այս հարցին պատասխանելու համար հարկ է վերադառնալ անցյալ դարի 80-ականների երկրորդ կես, երբ ԽՍՀՄ-ում սառույցը շարժվեց և գորբաշովյան հրապարակայնությունը հնարավոր դարձրեց փոքր-ինչ կիսաբաց անելու մինչ այդ խստագույնս փակ այլախոհության թթվածնի կափարիչը: Այդ ժամանակ Ուկրաինայում, ի դեպ, ինչպես նաև խորհրդ-

դային մյուս հանրապետություններում, շեշտակի աճեց հետաքրքրությունը նախկինում փակ թեմաների նկատմամբ: Դա հատկապես վերաբերում է պատմությանը, ինչպես հին, այնպես էլ՝ նոր: Օրինակ՝ Կենտրոնական Ասիայի մի քանի խորհրդային հանրապետություններում վերանայվեց վերաբերմունքն այնպիսի նվաճողների անհատականությանը, ինչպիսիք են Հինգիզ-խանն ու Լենկ-Թեմուրը: Հայաստանում ոչ միայն պատմաբանները, այլև ողջ գիտական հասարակայնությունը, իր ուշադրությունը սևեռեց Լեոնային Ղարաբաղի հարցին: Ինչ վերաբերում է Ուկրաինային, սկզբում մեկ, այնուհետև այլ պարբերականներում մեկը մյուսի ետևից հայտնվեցին ուսումնասիրություններ, որոնց հեղինակները ջանում էին նորովի իմաստավորել Ուկրաինայի պատմության այս կամ այն իրադարձությունները, ինչպես, ասենք՝ Ուկրաինայի վերամիավորումը Ռուսաստանի հետ, Ուկրաինայի անկախության հռչակումը և այնուհետև 1917-1921 թ.թ.-ների պայքարն հանուն այդ անկախության, 1932-1933 թ.թ.-ների սովասպանող, որ Ուկրաինայում միլիոնավոր գյուղացիների կյանք խլեց և որի մասին տասնամյակներ շարունակ չէր թույլատրվում նույնիսկ հիշատակել, Երկրորդ համաշխարհային պատերազմը և Ուկրաինական ապստամբած բանակի դաժան պայքարը ինչպես Վերմախտի զորամիավորումների, այնպես էլ ԵԳԺ-ի հատուկ ստորաբաժանումների ու Կարմիր Բանակի կանոնավոր զորամասերի դեմ...

Բայց հրապարակայնության զարթոնքն ու այնուհետև նաև անկախության ձևավորումը, հավանաբար մի փոքր անսպասելի էր ուկրաինական պատմագիտության համար, որպեսզի ժամանակին արձագանքեր հասարակության պահանջներին, նորովի վերաիմաստավորեր Ուկրաինայի պատմության ընթացքը:

Բացի այդ, ակադեմիական գիտնականներից շատերը զուտ հոգեբանորեն դրան պատրաստ չէին: Խորհրդային գաղափարախոսությունը չափազանց խորն էր արմատավորվել, շատերի մեջ բավականին հաստատուն էր բնավորվել վախը, որ տասնամյակներ շարունակ սերմանվող ահաբեկության արդյունք էր, և տասնամյակներ շարունակ համապատասխան «ընկերների» կողմից մեծ ջանադրությամբ էր կատարվել գիտական կադրերի գտումը:

Չէ որ խոսքը գնում էր ոչ թե պատմական փաստերը մեխանիկորեն վերականգնելու, այլ պատմության ընթացքի ողջ կառուցվածքը վերանայելու մասին, փոխարենն այն պատմության, որի հիմքում ինչպես գիտենք, ընկած էր «ՀամԿ(բ)Կ պատմության համառոտ դասընթացը»: Իսկ զառամյալ իշխանությունն այդ բանը չէր կարող թույլ տալ:

Հասարակության աճող հետաքրքրության ծարավը դուրս ինչ հազեցնելու համար, մասնավորապես վերահրատարակվեցին ժամանակակից ուկրաինական պատմագրության հիմնադիր Միխայլո Դրուշակու (1866-1934 թ.թ.), նրա տաղանդավոր հետևորդ Ի. Կրիպյակիչի (1886-1967 թ.թ.) և այլ պատմաբանների աշխատությունները, որոնք դեռևս հասցրել էին իրենց խոսքն ասել պատմագիտության բնագավառում: Օրինակ՝ Լվովի պրոֆեսոր Ի. Կրիպյակիչն իր «Ուկրաինայի պատմության» շարադրանքն ավարտել էր 1938 թ.-ին՝ Խորհրդային իշխանության՝ այնտեղ գալուց մեկ տարի առաջ:

Սակայն ուկրաինական պատմագրության այդ փայլուն նմուշները հրատարակվում էին «Ուկրաինայում պատմագիտական մտքի հուշարձաններ» շարքով, դրանով իսկ ակնարկելով, որ այդ ամենը «անցյալ՝ կորուսյալ» է:

Այս առումով, Օրեստ Սուբտելնու՝ Հարվարդի պատմագիտական դպրոցի սանի, 1988 թ.-ին Տորոնտոյում լույս տեսած մենագրությունը ճիշտ ժամանակին էր: Առավել ևս, որ հենց այդ տարիներին Ուկրաինայում մեծ արձագանք գտավ այդ պատմագիտական դպրոցի ևս մի ներկայացուցիչ՝ Ռոբերտ Կոնկլիստի «Վշտի հունձը» գիրքը, որ պատմում է իր չափերով սարսափելի 1932-1933 թ.թ.-ների սովահարության մասին, որի մեղքն ամբողջովին ընկած է այն ժամանակվա խորհրդային ղեկավարության վրա:

Օրեստ Սուբտելնու գրքի ուկրաիներեն թարգմանությունը (գիրքը գրված է անգլերեն լեզվով) առաջին անգամ հրատարակվել է 1991 թ.-ին, որն այնուհետև մի քանի հրատարակություն ունեցավ: Այդ գրքի համառոտ դասընթացը հանձնարարված է Ուկրաինայի դպրոցներում ուսուցանելու համար:

Եվ չնայած գիրքը հրատարակվեց քաղաքական բուռն կրքերի ժամանակ, այնուամենայնիվ այն հանդուրժողաբար ընդունվեց ինչպես աջ, այնպես էլ ձախ քաղաքական ուժերի կողմից՝ մեծ մասամբ շնորհիվ գրքի շարադրանքի զուսպ, հանգիստ տոնի՝ նույնիսկ այնպիսի բուռն վիճարանական թեմաների վերաբերյալ, ինչպիսիք են Ուկրաինայի փոխհարաբերությունները Ռուսաստանի կամ Լեհաստանի հետ: Ուշադրություն է գրավում նաև հեղինակի ձգտումը՝ ընդգծված անաչառ լինել պատմության այնպիսի բարդ երևույթների վերա-



ծության մեջ, ինչպիսիք են հեթանոս Ի. Մազեպայի գործունեությունը, կամ ասենք՝ Արևմտյան Ուկրաինայում բանդերովյան շարժումը:

Չընդունելով խորհրդային պատմագիտության մեջ սովորական դարձած չափից ավելի սոցիոլոգիականացումը, Օրեստ Սուբտելնի կարողացավ հասնել որոշակի համակշռման ոչ միայն պատմական իրադարձությունները շարադրելիս, այլև պատմագիտական տարբեր, այդ թվում և մարքսիստական դպրոցների ներկայացուցիչների լուսաբանումները վերլուծելիս:

Մեր կարծիքով այստեղ որպես օրինակ կարող է ծառայել բանավեճերն այն կապակցությամբ, թե որ ժողովրդին է պատկանում հին ռուսիական պատմական ժառանգությունը, ներառյալ լեզուն, մշակույթը, պետականությունը: Այս հարցի կապակցությամբ միակարծություն չի եղել պատմաբանների մեջ դեռևս XIX դարից սկսած, առավել ևս, որ արևելյան սլավոնների ծագումնաբանությունն առ այսօր դեռևս սպառիչ ուսումնասիրված չէ:

Խորհրդային պատմագիտության մեջ, այս հարցում կարծես թե փոխզիջումային լուծում գտնելու նպատակով, ինչպես հիշում ենք, առաջ էր քաշվել հին ռուսիական միասնական ժողովրդի գաղափարը, որից էլ իբրև թե ծագում են երեք եղբայր ժողովուրդները՝ ռուսները, ուկրաինացիները ու բելոռուսները:

Բայց այդ «փոխզիջման» իրական տությունը, որ ծնունդ էր առել խորհրդային կուսակցական գաղափարախոսների աշխատասենյակներում, կայանում էր նրանում, որ գիտականորեն հիմնավորեն ազգերի ծուլման գաղափարը, որը վերջիվերջո, անցյալ դարի 70-ական թվականներին նախադրյալ հանդիսացավ պնդելու, որ ի հայտ է եկել «պատմական նոր հասարակություն» խորհրդային ժողովուրդը:

Անկասկած է, որ վերևից իրահանգվող մման ուղղորդման պայմաններում արևելյան սլավոնների ծագումնաբանության ճշմարիտ հետազոտումներ ու հետևություններ դժվար էր հուսալ: Եվ դա այն դեպքում, երբ մի շարք պատմաբաններ, և ոչ միայն ուկրաինացի, համարում էին և համարում են, որ ժամանակակից երեք արևելասլավոնական ժողովուրդների միջև տարբերությունները առաջ են եկել ոչ թե XIII դարի թաթար-մոնղոլական արշավանքից հետո, ինչպես որ պնդում են մարքսիստ պատմաբանները և մի շարք ժամանակակից ռուս պատմաբաններ, այլ դրանից շատ ու շատ առաջ, սլավոնական ցեղային միությունների միջև եղած բնական տարբերություններից, որ գոյություն ունեին դեռևս մեր դարաշրջանի առաջին հարյուրամյակներում:

Իր գրքում ներկայացնելով տարբեր, այդ թվում նաև խորհրդային պատմաբանների տեսակետները, Օրեստ Սուբտելնի համենայն դեպս հայտնում է իր տարակուսանքը, թե՛ արևելասլավոնական ժողովուրդների ձևավորման գործընթացում թաթար-մոնղոլական արշավանքները, կամ՝ Լիտվայի ու Լեհաստանի կողմից ուկրաինական ու բելոռուսական հողերը բռնազավթելը կարող էին որոշիչ դեր խաղալ: Ուշագրավ է, որ այդ ընթացքում նա դիմում է նաև մարքսիստական հիմնավորումներին՝ դրանով կարծես թե մերկացնելով մարքս-լենինյան գաղափարախոսների առանձնակի են անդրադարձնում, երբ խոսքը վերաբերում է ուզած գնով նպատակին հասնելու անհրաժեշտությանը: «Դա բավականին անսպասելի շեղում է ազգերի ձևավորման գործընթացում սոցիալ-տնտեսական գործոնների հսկայական դերի վերաբերյալ մարքսիզմի ավանդական դիրքորոշումից, - միանգամայն տեղին նկատում է նա, - ավելին՝ նման մոտեցումից հետևում է, որ եթե հիշյալ արտաքին գործոնները չլինեին, ապա "հին ռուսիական ժողովրդի մեջ" ոչ մի շերտավորում տեղի չէր ունենա»:

Պետ է առանձնակի նշել կանադացի գիտնականի անաչառությունը, իր հետևություններում փաստերի տրամաբանությամբ և ոչ թե քաղաքական համոզմունքներով առաջնորդվելու ձգտումը: Հարցին առանձնակի են անդրադարձնում, քանի որ մեզ համար՝ ուկրաինացիներիս ու հայերիս, և հատկապես նրանց համար, ովքեր կյանքի մեծ մասն ապրել են խորհրդային ժամանակաշրջանում, երբեմն դժվար է եղել հաղթահարել քարացած կաղապարները, որոնք ինքնըստինքյան աշխարհընկալման մաս էին դառնում: Մյուս կողմից՝ մեզ համակում էր միանգամայն հասկանալի ազնիվ ձգտումը՝ կրկին վերականգնել մեր ժողովուրդների պատմության այն էջերը, որոնք խորհրդային պաշտոնական պատմագիտության ջանքերով դուրս էին մղվել և հարմարեցվել էին կուսակցական համապատասխան դոգմաներին: Արդյունքում՝ նման ձգտումն ու մոտեցումը երբեմն հանգեցնում էր պատմական նոր առասպելների առաջանալուն:

Ինչ վերաբերում է Օրեստ Սուբտելնուն, ապա նա իր մենագրության մեջ ցուցաբերում է այսպես կոչված՝ օբյեկտիվիստական մոտեցում, որն այնպես բնորոշ է ամերիկյան ակադե-

միական պատմագիտական դպրոցին:

Այս կապակցությամբ ես մտաբերում եմ ամերիկյան համալսարաններում Հայաստանի պատմության լուսաբանման առումով հայկական մամուլում ծագած բանավեճերը: Ուշադրության կենտրոնում էր հայտնվել Կալիֆոռնիայի համալսարանի ժամանակակից հայոց պատմության ամբիոնի վարիչ, աշխարհառջակ գիտնական, պրոֆեսոր Ռիչարդ Հովհաննիսյանը, որն իր ընդդիմախոսներին, որոնք հիմնականում նոր ԱՄՆ գաղթած հայեր էին, այսպես էր բացատրում. «Ուսուցման ամերիկյան սկզբունքը դասագրքերում տարաբնույթ կարծիքների ու տեսակետների առկայություն է ենթադրում, - ասում էր նա: - Իմ դասախոսություններում, օրինակ, ես ուսանողներին ներկայացնում եմ հայերի ծագման մասին տարբեր տեսակետներ, որոնք ես կարող եմ չկիսել, բայց դրանց գոյությունը լռության մատնելու իրավունք չունեն»:

Տարբեր տեսակետների առկայությունն Ուկրաինայի պատմության այս կամ այն փաստի վերաբերյալ, Օրեստ Սուբտելնու գրքի առանձնահատկություններից մեկն է: Պատմության այն դրվագների, որտեղ առանձին իրադարձություններ իսկապես աշխարհաքաղաքական նշանակություն ունեին ինչպես իր, այնպես էլ իր հարևանների համար (Կիևյան Ռուսիայի կողմից 988 թ.-ին քրիստոնեության ընդունումը, նրա նվաճումը թաթար-մոնղոլների կողմից, Ուկրաինայում զապորոժյան կղզակության առաջացումը, 1648-54 թ.թ.-ների ուկրաինացի ժողովրդի Ազատագրական պատերազմը՝ հեթանոս Բոգդան Խմելնիցկու գլխավորությամբ): Միևնույն ժամանակ՝ Ուկրաինայի պատմության որոշ ժամանակաշրջաններ կարծես թե դարավոր մշուշով են պատված, կամ դարձել են ժամանակակից պատմաբանների ու քաղաքագետների դաժան վեճերի ասպարեզ:

Հատկապես այդ վեճերի առումով, ինձ համար, որպես հայագետի և ուկրաինացի դիվանագետի, լրիվ հասկանալի է պրոֆեսոր Ռ. Հովհաննիսյանի ընդդիմախոսների պաթոսը՝ չնայած նրա անձնվեր գործունեության նկատմամբ իմ մեծագույն հարգանքին: Չեմ բացառում, որ Ուկրաինայի պատմության փաստերը ներկայացնելու Օրեստ Սուբտելնու ընդգծված անկողմնակալությունը Ուկրաինայում շատերի մոտ կարող էր որոշակի առարկությունների տեղիք տալ: Եվ պարզ է, թե ինչու: Չէ որ ուկրաինացի ժողովուրդը, ինչպես և հայերը, դարեր շարունակ չի կարողացել տնօրինել ոչ միայն իր ճակատագիրը, այլև իր պատմությունը: Մեր և ձեր ժողովուրդների պատմության մեջ, երբեմն անցյալի հակասական պահերը այս աշխարհի հզորները հաճախ մեկնաբանել և շարունակում են մեկնաբանել՝ ելնելով իրենց երկրների աշխարհաքաղաքական շահերից: Եվ ստացվել է այնպես, որ միտումնավոր գնահատականներն ու կամեխակալ տեսությունները մեծ հաջողությամբ պարտադրվել և այսօր էլ պարտադրվում են գիտական ու հասարակական շրջանակներին այն պարզ պատճառով միայն, որ մեր ընդդիմախոսները (մեղմ ասած) առավել մեծ հնարավորություններ ունեն: Եվ «օբյեկտիվիստական» մոտեցման ժամանակ այս փաստն անտեսելը, ինձ թվում է՝ այնքան էլ ճիշտ չէ: Չէ որ այն, ինչը արևմտյան որոշ պատմաբանների համար մեր պատմության որոշակի փաստեր լուսաբանելն ընդամենը տարբեր տեսակետներ են, մեզ համար՝ ուկրաինացիներին ու հայերին, դա, եթե կուզեք, գաղափարական դիմակայություն է այսօր, երբ մեր ժողովուրդները ձգտում են վերականգնել պատմական արդարությունը, մի գործընթաց, մի նպատակ, համուն որի ստիպված ենք գիշեր ու գօր պայքարել: Դրա վառ օրինակներից են Արևմտյան Հայաստանում 1915 թ.-ի եղեռնը, կամ Ուկրաինայում 1932-1933 թվականների Սովասպանդն ընդունելու համար հետևողական պայքարը: Ինչպես գիտեք, ուկրաինական իշխանությունների ու հասարակության՝ ստալինյան ռեժիմի ոճրագործությունների վրա համաաշխարհային հանրության ուշադրությունը հրավիրելու փորձերն անսպասելիորեն բախվեցին նախկին «ավագ եղբոր» կողմից հարուցված բացահայտ «անբարյացակամության» հետ: Հարևան երկրի հատկապես դաժան հակազդեցությունն առաջացրեց այն հանգամանքը, որ Ուկրաինան, (մի տեսք) պաշտոնապես հարց դրեց այդ ոճրագործությանը իրավական համապատասխան որակավորում տալու անհրաժեշտության մասին: Ի պատասխան՝ գործողության մեջ դրվեց քարոզչական այնպիսի մի հզոր մեքենա, որին կնախանձեին անգամ խորհրդային գաղափարախոսները: Էլ ի՞նչ գիտական բանավեճի մասին կարող է խոսք լինել:

Վերլուծելով ու գնահատելով հանդերձ Ռ. Հովհաննիսյանի և Օ. Սուբտելնու որպես պատմաբան գիտական մոտեցման որոշակի սկզբունքներն ու առանձնահատկությունները, մենք չպետք է մոռանանք գլխավորը: Իսկ գլխավորն այն է, որ շնորհիվ նրանց անձնվեր ու տքնաջան աշխատանքի, ստեղծվեցին մեր ժողովուրդների պատմության դասընթացներ, որոնք



լրիվ համապատասխանում են արդի պատմագիտության համաշխարհային մակարդակին: Ընդ որում՝ այն ժամանակ, երբ դժվար էր նույնիսկ պատկերացնել մեր ժողովուրդների պետականության վերածննդի հնարավորությունը, այնքան որ անսասան էր թվում խորհրդային բռնապետական ռեժիմը:

Պատմաբան Մարտին Գրեյնը, թե որոնք էին այն դրդապատճառները, որ Օ. Սուբուրնունը՝ սկզբում ուսանող, ապա և Չարլզայի համալսարանի դասախոս, մղեցին ձեռնարկելու այս ծավալուն աշխատանքը, հարկ է դիմել ուկրաիններեն առաջին հրատարակության առաջաբանին, որտեղ նա գրում է այն մասին, որ Ուկրաինայի պատմությունն ուսումնասիրելիս նրան ապշեցրել է մի «աղաղակող անհամապատասխանություն»: Այդ ինչպե՞ս է, որ այն ժամանակ, երբ աշխարհի ամենահետամնաց երկրները միանգամայն անկախ են, և՛ իր ներուժով, և՛ տարածքով ու բնակչությամբ նրանցից անհամեմատ հզոր Ուկրաինան գուրկ է եղել պետականությունից: Նա այդ անվանում է «պատմության առեղծվածը», որը նրան ստիպեց ավելի ուշադիր քննել Ուկրաինայի և ուկրաինացիների անցյալը, անցյալ, որն հաճախ է դուրս մնացել ուշադրությունից և ավելի հաճախ չի հասկացվել:

Ես կարծում եմ, որ շատ ու շատ հայերի համար էլ Ուկրաինան դեռևս առեղծված է մնում: Օրինակ՝ այդ ի՞նչ երկիր է, որ մինչև հիմա չի լուծել մայրենի լեզվի համընդհանուր գործածության հարցը, որն ինչպես անկախության արշալույսին, այնպես էլ ցայսօր մնում է որպես Ուկրաինայի ներքաղաքական գերզգայուն խնդիրներից մեկը: Եվ ոչ թե, օրինակ, Չայաստանում, ուր ամեն ինչ արվում է, որ բոլորը տիրապետեն հայոց լեզվին՝ հայոց պետական լեզվին: Եվ գեներալները, որ ամբողջ կյանքում ծառայել են Չայաստանից դուրս և Չայրենիքի կանչով վերադարձել են պաշտպանելու այն, և երեխաները, որոնք աշխատանքի բերումով ծնողների հետ արտասահման են մեկնել, վերադառնում են և համաձայն հայկական օրենսդրության, պարտավոր են սովորելու հատկապես հայկական դպրոցներում, քանի որ՝ էլ ի՞նչ հայ են, որ չհիմանա ըստ պապերի ու ապուլպապերի լեզուն:

Եվ ի՞նչ երկիր է այդ Ուկրաինան,- երկիր իրենք իրենց հարց են տվել այնտեղ այցելած հայերը,- որտեղ մինչև հիմա մարզային կենտրոնների գլխավոր փողոցները կոչվում են խորհրդային առաջնորդների անուններով, իսկ Կիևի կենտրոնում վեր է խոյանում հուշարձանը նրա, ով 1917-1921 թ.թ.-ներին դաժանորեն ճնշեց ուկրաինական պետականությունը վերականգնելու փորձերը և որի ստեղծած հատուկ մարմինները տասնամյակներ շարունակ ծրագրված ու հետտղականորեն ոչնչացնում էին ուկրաինացի ժողովրդի լավագույն գավակներին ինչպես Ուկրաինայում, այնպես էլ Ուկրաինայից դուրս: Այնինչ նման «հուշարձաններ» վաղուց արդեն չկան ոչ միայն Երևանում, այլև ողջ Չայաստանում:

Եվ ի՞նչ երկիր է այդ Ուկրաինան,- կրկին իրենք իրենց կհարցնեն այնտեղ այցելած հայերը,- որի գլխավոր եկեղեցին ենթարկվում է այլ պետության եկեղեցու վեհապետին: Եվ դա այն դեպքում, երբ Ուկրաինայում ուղղափառ համայնքները գրեթե կրկնակի ավելի են, քան այդ օտար պետության իսկ տարածքում: Եվ ոչ թե ինչպես Չայաստանում, որտեղ եկեղեցին ամուր կանգնած է երիտասարդ անկախ պետության ազգային շահերի պաշտպանության դիրքերում և ոչ մի արտաքին ուժ չի կարող նրա վրա ազդել:

Շարքային հայի կարծիքով նման անտրամաբանական երևույթների ցանկը Ուկրաինայում կարելի է երկար շարունակել:

Այդ հարցերի պատասխանները թաքցված են Ուկրաինայի պատմության խորքերում, որ պատմական իրավիճակների բերումով, երկար ժամանակ դատապարտված է եղել պետականագուրկ գոյության: Իսկ ազգն առանց պետականության,- ինչպես Ճզգրիտ նկատել է Ուկրաինայի ազգային-ազատագրական պայքարի նշանավոր դեմքերից մեկը՝ Վ. Վիննիչենկոն,- դա խաթարված կոլեկտիվ օրգանիզմ է: Եվ ժամանակակից Ուկրաինայի խնդիրներից շատերն սկիզբ են առել նրա պետականագուրկ ու խեղաթյուրված անցյալում:

Օրինակ, ի տարբերություն Չայաստանի, որ նույնպես երկար ժամանակ պետականություն չի ունեցել, ուկրաինացիները մեկ անգամ չէ, որ գրկվել են իրենց եկեղեցուց՝ XIV դարում և 1686 թ.-ին, երբ կիևյան միտրոպոլիտությունը, որ ավանդաբար կապված էր կոստանդնուպոլսյան պատրիարքի հետ, վերջնականապես վերանախարկեցին Մոսկվային: Եվ եթե հայոց ազգը իր գոյատևումով մեծ մասամբ պարտական է հայ առաքելական եկեղեցուն, ապա ուկրաինացիները գրկված են եղել նաև այդ համախառն գործոնից:

Նույնը վերաբերում է նաև ազգային դպրոցին, որը, ինչպես վկայում են Ուկրաինա այցելած օտարերկրացիները, իր ծաղկմանն է հասել XVII-XVIII դարերում, որից հետո բռնի կերպով փակվել է: Իսկ XIX դարում ցարի հատուկ հրամաններով ընդհանրապես խստագույնս ար-

գելվել է ուկրաիններեն լեզվով գրել-կարդալը, ընդհուպ կալանավորելու սպառնալիքով: Սակայն անձամբ ինձ համար առավել մեծ «պատմության առեղծված» այն է, որ ամենայն ուկրաինականի համապարփակ ճնշման ու արգելման դեպքում, երբ դրա հետ մեկտեղ ուկրաինական ազնվականության, կոզակական ավագանու մեծ մասն ըստ էության երես թեքեց իր ազգից՝ հանուն այն արտոնությունների, որ ստանում էր մեկ Լեհաստանի, մեկ Ռուսաստանի կողմից, ուկրաինացի ազգն ամեն դեպքում դիմակայեց: Իմ կարծիքով, դա իր տեսակի մեջ չտեսնված երևույթ է, քանի որ իշխող ազգի կողմից այդ ամբողջ ընթացքում ազգային ճնշման միջոցները փոխարինվում էին նոր, ավելի նուրբ ու կատարելագործված միջոցներով: Չամենայն դեպս, թող որ մեծ կորուստների գնով, բայց ազգը կանգուն մնաց:

Այդ ամենը լավ ըմբռնելու համար հիշենք Շոտլանդիայի կամ Իռլանդիայի պատմությունը, որ ինչ-որ տեղ ծակատագրով նման են Ուկրաինային: Որքան էլ տարօրինակ է, բայց եվրոպական ժողովուրդների գարնան դարաշրջանում, երբ պետականությունը կորցրած եվրոպական շատ ազգերի մոտ արթնանում էր ազգային ինքնագիտակցությունը, այդ երկրներում, օրինակ, չգտնվեց Տարաս Շևչենկոյի նման մի հզոր անհատ, որ իր հանձարեղ ըմբոստ խոսքով կարողանար հրդեհել հազիվ մարմրող ազգային ինքնագիտակցությունը, կյանք մերարկել անհետացող լեզվի մեջ: Բայց չէ՞ որ նման շևչենկոներ կարող էին դառնալ, օրինակ՝ Շոտլանդիայում Ռոբերտ Բյոռնսը կամ Վալտեր Սկոտը, որոնք իրենց, ի դեպ՝ բավականին հայրենասիրական գործերը գերադասեցին ստեղծել... անգլերեն լեզվով: Եվ հիմա, ասացե՛ք խնդրեմ, որտե՞ղ կարող ենք շփվել շոտլանդերեն կամ իռլանդերեն լեզուների հետ, եթե ոչ միայն համալսարանների հատուկ դասընթացներում:

Բայց չէ՞ որ Տարաս Շևչենկոն էլ կարող էր իր բազմակողմանի տաղանդով հետևել մյուս հանձարեղ ուկրաինացուն՝ Նիկոլայ Գոգոլին և դառնալ այլ ժողովրդի գրականության դասականը, այլ գրականության, մեծ, բայց՝ ոչ հայրենի:

Այն ժամանակների համար իր խեղաթյուրված ազգային ինքնագիտակցությամբ հանդերձ, 1917 թ.-ին հատկապես Ուկրաինան որոշիչ դեր խաղաց ցարական կայսրության ժողովուրդների ազգային ինքնագիտակցությունն արթնացնելու գործում, չնայած իր պետականությունը վերականգնելու փորձն այն ժամանակ անհաջողության մատնվեց: 1991 թ.-ին նույնպես, Ուկրաինայի դիրքորոշումից էր կախված, թե ինչպես կզարգանան դեպքերն հիմա արդեն խորհրդային կայսրությունում:

Նույնիսկ հիմա, խոշոր հաշվով, մեծ մասամբ Ուկրաինայից է կախված՝ կպահպանե՞ն արդյոք անկախացած հանրապետություններն իրենց ներկա կարգավիճակը, թե՞ կվերածվեն մի տեսակ կոնֆեդերացիայի, ինչպես որ այդ մասին որոշ տեղերում մտածում են: Դիշուս եմ, ինչպես 90-ական թվականների սկզբին, որպես Ուկրաինայի ԱԳ նախարարության ԱՊԳ երկրների վարչության պետ, ինձ բախտ վիճակվեց մասնակցելու այսպես կոչված՝ ԱՊԳ երկրների համատեղ զարգացման հեռանկարային ծրագրերի թե՛ քննարկումներին, ուր շոշափվում էին այնպիսի հասկացություններ, ինչպես՝ միասնական քաղաքացիություն, միասնական պետական լեզու, միասնական մշակութային և տեղեկատվական դաշտ և այլն, և այլն: Ի դեպ՝ այդ ծրագիրն ընդունելու և իրականացնելու օգտին կողմ էր արտահայտվում նաև Չայաստանի պատվիրակությունը:

Այն ժամանակ Ուկրաինային վերջիվերջո հաջողվեց իր գործընկերներին համոզել, որ նման ուղիով գնալը սխալ է, քանի որ աշխարհն արդեն փոխվել է, և վերադարձը դեպի կայսրություն, թող որ այլ անվանումով ու կերպարանքով, անհիմաստ է: Ի տրիտուր՝ ԱՊԳ երկրների շրջանում Ուկրաինան ձեռք բերեց ընդամենը կամակոր ու քմահաճ գործընկերոջ համբավ, որը պղտորում է հանընդհանուր հնազանդության ու համախոհության հարմարավետ ու անվրդով մթնոլորտը...

Սակայն բավական է մի հայացք նետել Ուկրաինայի՝ մեծ մասամբ ողբերգական պատմությանը, երբ ուկրաինացի ժողովուրդը մեկ անգամ չէ, որ հայտնվել է որպես ազգ կործանման եզրին, կամ այլ ազգերի կողմից ուժացվելու սպառնալիքի տակ, համոզվելու համար, թե մի սխալ քայլն հիմա ինչ կարժենա Ուկրաինային: Եվ այն ժամանակ, երևի շատերի համար հասկանալի դառնա նաև Ուկրաինայում այսօրվա քաղաքական բուռն կյանքը, ուր եռում են հիրավի շեքսպիրյան կրքեր, որոնք հաճախ, ինչպես և հեռավոր անցյալում, արտաքին սաղարթների արդյունք են: Եվ հավանաբար, դժվար չի լինի նկատել, թե Ուկրաինայի այսօրվա քաղաքական գործիչները ինչպես են հաճախ իրենց հեռավոր նախնիների նույն ճակատագրական սխալները կրկնում, կարծես հաստատելով այն ծեծված ճշմարտությունը, թե պատմությունը, ցավոք, ոչինչ չի սովորեցնում:



Ծանոթանալով Օ. Սուրբտելնու պատմությանը, հայ ընթերցողն հավանաբար ուշադրություն դարձրեց այն հանգամանքին, թե որքան հաճախ է հեղինակը հիշատակում այլ ազգության ներկայացուցիչների տեղն ու դերը Ուկրաինայի պատմության մեջ: Ցավոք սրտի, դրանց մեջ եղել են նաև անհատներ, որոնք դաժանորեն շահագործել են ուկրաինացիներին՝ անձնական հարստություն դիզելու նպատակով: Եվ երբ հասարակ ժողովրդի համբերությունն հատել է, իրենց ողջ զայրույթը, հաճախ դաժան ու անկառավարելի, թափել է այդ «ցեցերի» գլխին, ինչպես նմաններին դիպուկ բնութագրում է հայ գրականության նշանավոր դեմքերից մեկը՝ Պերճ Պոռոջյանը:

Ինչ վերաբերվում է հայերին, ապա վաղուց անտի ուկրաինացիների շրջանում նրանք վարպետ արհեստագործների ու ձեռներեց վաճառականների համբավ են վայելել, ինչը հաճախ է նշում Օրբեստ Սուրբտելնին:

Մեր կողմից ավելացնենք. հայերն Ուկրաինայում եղել են նաև վարպետ շինարարներ, տաղանդավոր սրբապատկերագործներ, մանրանկարիչներ, բառարանագիրներ, տպագրիչներ և այլն, ինչի մասին վկայում են մեզ հասած պատմական, ճարտարապետական ու մշակութային բազմաթիվ ու բազմազան հուշարձաններն ու գրավոր աղբյուրները:

Հայերն առաջին անգամ Ուկրաինա գաղթեցին սելջուկ-թուրքերի՝ Հայաստան կատարած արշավանքների պատճառով: Կիևում հայերի վերաբերյալ հնագույն հիշատակումները վերաբերում են 1080-ական թվականներին: Ղրիմի նվաճումը թաթար-մոնղոլների կողմից նույնպես պատճառ հանդիսացավ, որ հայերը գաղթեցին Կիևյան Ռուսիայի խորքերը: XIII-XIV դարերում իրենց համայնքներն հիմնելով Գալիցիա-Վոլինյան իշխանության այնպիսի քաղաքներում, ինչպես՝ Լվովը, Լուցկը, Վոլոդիմիրը և այլն, նրանք իրենց ձեռքում կենտրոնացրեցին ուկրաինական բնակավայրերի առևտուրը Միջին և Մերձավոր Արևելքի հետ: Ինչպես նշում է հայ-ուկրաինական կապերի նշանավոր հետազոտող Յա. Դաշկևիչը, Արևելքից ներմուծվող ապրանքներն այլ կերպ չէին կոչվում, քան՝ «հայկական»:

Եվ եթե խոսքը վերաբերում է պատմությանը, ապա պետք է նշել նաև հետևյալը. քանի որ Ուկրաինական բնակավայրերում հայերը որոշակի ինքնավարություն էին ձեռք բերել, ապա ունեին իրենց դպրոցը և իրենց առանձին դատարանը, որ գործում էր հայ ազգային օրենսդրության հիմունքներով: Ավելին՝ հայ թատրոնի հետազոտող և գիտակ Գոյանի վկայությամբ հենց Լվովում է սկսվել հայ թատրոնի վերածնունդը (XVI դարի երկրորդ կես)՝ սբ. Շուշանիկի տառապանքների մասին ողբերգության դպրոցական բեմադրությամբ:

Ուկրաինայի հայերի ազգային ինքնության պահպանման գործում մեծ դեր է խաղացել Հայ առաքելական եկեղեցին, որ հաստատել էր սեփական եպիսկոպոսությունը (եպիսկոպոսներ Կիևում, Լվովում, ինչպես նաև կարճ ժամանակով՝ Լուցկում, Յալիվցում, Բելզորոդ-Ղնեստրովկայում):

Չնայած որպես առանձին էթնիկ խումբ Ուկրաինայի իրենց գաղթավայրերում հայերը մինչև մեր օրերը չեն պահպանվել, սակայն իրենցից հետո թողել են արխիվային նյութերի հազարավոր էջեր: Նրանցում արտացոլված են ոչ միայն հայկական գաղթօջախների կյանքը, այլև այն իրադարձությունները, որ տեղի են ունեցել ուկրաինական տարածքներում XVI-XVII դարերում, մասնավորապես դրվագներ՝ հեթման Բոգդանի համելիցկու գլխավորած ուկրաինացի ժողովրդի 1648-1654 թ.թ.-ների ազատագրական կռիվներից:

Ուշագրավ է, որ Ուկրաինական այդ առաջին հեղափոխության (ինչպես այն անվանում են մեր որոշ պատմաբաններ) բուն տարիներին, հայերն աչքի են ընկել իրենց անմիջական մասնակցությամբ, իսկ նրանցից ոմանք, շնորհիվ իրենց խիզախության ու խելամուռության, կոզակական բանակում հասել են մինչև գնդապետի աստիճանի: Հայկական աղբյուրները պատմում են նաև 1621 թ.-ի Խոտինի ճակատամարտում ուկրաինացի կոզակների մասնակցության մասին, երբ ուկրաինա-լեհական միացյալ բանակը կանգնեցրեց թուրք-թաթարական բազմահազարանոց արշավանքը: Այդ կռիվում իր քաջությամբ փառաբանվեց զապորոժյան կոզակների հեթման (Ղոջի օտաման) Պ. Սահայդաչնին, ինչպես այդ մասին «Խոտինի պատերազմի պատմություն»-ում գրում է հայ հեղինակ Հովհաննես Կամենացին, որի ազգանունն ասում է այն մասին, որ նա ապրել է Կամենեց քաղաքում: Իր հերթին, Ղրիմում գրված հայկական ժամանակագրությունները տեղեկություններ են պարունակում դեպի անաստղիական ափերը զապորոժյան կոզակների ռազմա-ծովային հաջող արշավանքների մասին:

Ուշադրության է արժանի և այն, որ հայկական որոշ տեքստերում, մասնավորապես Կամենց-

նեց-Պոդոլսկի քաղաքի հայկական դատարանի արձանագրություններում, տեղ-տեղ հանդիպում են այն ժամանակվա ուկրաինական բառեր ու արտահայտություններ, որոնք հատուկ հետաքրքրություն են ներկայացնում ուկրաինեթեն լեզվի պատմության ուսումնասիրության համար, քանի որ հայերեն տառերով բերված են նրանց հնչյունաբանական տառադարձությունը, ձևաբանական առանձնահատկությունները և տարբեր բառերի գործածման համատեքստերը:

Ուսումնասիրելով հայ-ուկրաինական բազմադարյա կապերը, պատմաբանները հնարավորություն ունեն գրավոր աղբյուրներից բացի, իրենց հետազոտություններում հիմնվել նաև Ղրիմի, Գալիչինայի, Բուկովինայի, Պոդոլյեի և Ուկրաինայի այլ տարածաշրջանների բազմաթիվ պատմա-ճարտարապետական հուշարձանների վրա: Հայկական հնագույն արվեստի ու արհեստների բավականին ցուցանմուշներ պահպանվում են ուկրաինական տարբեր թանգարաններում:

Այս կապակցությամբ տեղին է հիշատակել 2008 թ.-ի հուլիսին Ուկրաինայում հայկական հայտնի Սուրբ Խաչ վանական համալիրի 650-ամյա հոբելյանի ճոխ տոնակատարությունը, որին մասնակցում էին նաև Հայաստանի և Ուկրաինայի նախագահները, պետական ու հոգևոր պաշտոնյա շատ այրեր: Նշենք նաև, որ ի նշանավորումն այդ իրադարձության, Ուկրաինայի Ազգային բանկը թողարկեց վանական համալիրի պատկերով 10 հրիվա անվանական արժեքով արծաթե հուշադրամ, կարծեք թե դրանով շեշտելով հայկական ճարտարապետության նկատմամբ վերաբերմունքը՝ որպես ոչ միայն հայ, այլև ուկրաինացի ժողովրդի ազգային սեփականություն: Դրա ավագույցն է նաև այն, որ Ստարի Ղրիմ քաղաքից 8 կմ հեռավորության վրա գտնվող Սուրբ Խաչ վանական համալիրի վերականգնողական աշխատանքները կատարվել էին ուկրաինական պետության հաշվին, սակայն հայ մասնագետների, շինարարների ու վերականգնիչ-արվեստագետների ուժերով: Էլ ո՞վ կարող էր ավելի լավ և ավելի հոգատար անել դա, եթե ոչ հայերը...

Հարկ է հիշեցնել, որ XIX-XX դարերի ուկրաինական հայտնի մի շարք ընտանիքներ, հատկապես Արևմտյան Ուկրաինայում, հայկական արմատներ ունեին: Կարևոր է նաև, որ նրանց սերունդները դեռևս պահպանվել են և հպարտանում են իրենց հայկական ծագումով: Հայկական ծագում ունեցող ուկրաինացիները մասնակցություն են ունեցել 1917-1920 թ.թ.-ների ազատագրական պատերազմին, ինչպես նաև XX դարի 30-40-ական թվականների ուկրաինական ազգային ընդհատակյա գործունեությանը:

Ուկրաինայի անկախության վերականգնումից հետո հայտնի դարձան արխիվային նյութեր, որոնք պատմում են 1920-1921 թ.թ.-ներին Արևմտյան Հայաստանից Ուկրաինա եկած հազարավոր հայ փախստականների մասին: Նրանց զգալի մասը բնակություն է հաստատել Խարկովում, որն այն ժամանակ Խորհրդային Ուկրաինայի մայրաքաղաքն էր: Կարճ ժամանակում այնտեղ բացվել են հայկական ազգային դպրոցներ, մանկավարժական տեխնիկում, թատրոն, հրատարակել են իրենց թերթը: Պատահական չէ, որ հայ գրականության մեծ երկրպագու պոետ Պավլո Տիչինան այնքան է տարվել հայերեն լեզվով, որ սովորելով այն, կատարել է հանճարեղ պոետ Գ. Թումանյանի ստեղծագործությունների ուկրաինեթեն անգուղական թարգմանությունները: Բայց և այնպես, ազգային մշակութային կյանքի վերելքը կարճ տևեց, և շուտով ստալինյան կոշտ քաղաքականության հետևանքով, որն ուղղված էր ինչպես ուկրաինական, այնպես էլ իտալական «ազգայնականության» դեմ, մշակութային կապերը կտրվեցին:

Ուկրաինայում հայերի վերաբնակեցման ամենամեծ հոսքը տեղի ունեցավ XX դարի 90-ական թվականներին: Այսպես օրինակ, եթե 90-ականների սկզբին Ուկրաինայում հաշվվում էր մոտ 30 հազ հայ, ապա տաս տարվա ընթացքում նրանց թիվը հասավ 300 հազ.-ի: Ուկրաինայի մարզային շատ կենտրոններում կառուցվել են հայկական եկեղեցիներ, իր արգասավոր գործունեությունն է ծավալել Ուկրաինայի հայերի Միությունը, սկսել են հրատարակվել հայկական թերթեր ու ամսագրեր, գրականություն, գործում են կիրակնօրյա դպրոցներ և ազգային դասարաններ: Մի քանի դարյա ընդմիջումից հետո Ուկրաինայում իր գործունեությունն է վերականգնել Հայկական առաքելական եկեղեցու արքեպիսկոպոսարանը Կիևում: Հայերն ակտիվորեն մասնակցում են Ուկրաինայի քաղաքական կյանքին, մասնավորապես, որպես բոլոր մակարդակների պատգամավորներ, այդ թվում՝ Ուկրաինայի Գերագույն Ռադայի:

Առանձնապես չխորանալով այդ թեմայի մեջ, որն անշուշտ մանրամասն ու առանձին խոսակցության նյութ է, հարկ է նշել, որ նույնիսկ բերված փաստերն էլ բավական են հայ-ուկրաինական հարաբերությունների ուսումնասիրման լայն դաշտի առկայության մեջ



Անկախ Ուկրաինայի տարեգրություն

համոզվելու համար: Ուկրաինայի և Հայաստանի պատմությունը ուսումնասիրելու առումով, այդ կապերի հետազոտման համար ժամանակին շատ բան է արվել այնպիսի հայտնի ուկրաինացի և հայ պատմաբանների կողմից, ինչպիսիք էին՝ Յա. Դաշկևիչը, Վ. Գրիգորյանը, Վ. Հրաբովեցկին, Լ. Խաչիկյանը, Յա. Իսակիչը, Գ. Անասյանը և ուրիշներ: Հայ-ուկրաինական կապերի հետազոտման համար Վ. Գրիգորյանը վերջերս պարզևատրվել է «Ճառապությունների համար» Ուկրաինայի շքանշանով:

Հայ-ուկրաինական կապերի նորագույն պատմության մեջ իրենց ուրույն տեղն ունեն Ուկրաինայի և Հայաստանի այլախոհական շարժման ներկայացուցիչները: Ձերբակալված և Մորդովայի ճամբարները քված հայ և ուկրաինացի այնպիսի հայտնի իրավապաշտպաններ, ինչպես Հայկազ Խաչատրյանը, Վյաչեսլավ Չոռնովիլը, Պարույր Հայրիկյանը, Վասիլ Ստուսը, Աշոտ Նավասարդյանը, Միխայիլ Գորինը, Ռազմիկ Մարկոսյանը, Վասիլ Օվիենկոն, Անդրանիկ Մարգարյանը, Լևկո Լուկյանենկոն և ուրիշներ, ծանրագույն պայմաններում ոչ միայն սատարում ու քաջալերում էին միմյանց, այլև ուղիներ էին գտնում խորհրդային տոտալիտար համակարգի դեմ ընդհանուր պայքարը շարունակելու համար: Երբ ՊԱԿ-ի ճնշման տակ որոշ հայ այլախոհներ ստիպված էին դուրս գալ հայկական Ազգային միացյալ կուսակցության շարքերից, ԱՄԿ-ին էին անդամագրվում ուկրաինացի իրավապաշտպաններ Վասիլ Ստուսը, Իրինա Կալինեցը, Ստեֆանյա Շաբատուրան, Ռոման Սենենյուկը, Միկոլա Մատուսկիչը և այլք:

Հայ և ուկրաինացի առաջադեմ մտավորականության միմյանց սատարելու վառ օրինակ է հայտնի պատմաբան Յարոսլավ Դաշկևիչի հայագիտական գործունեությունը: Այն բանից հետո, երբ 60-70-ական թվականներին խորհրդային իշխանությունները նրան արգելեցին տպագրվել Ուկրաինայում, իր հայ պատմաբան-գործընկերների աջակցության շնորհիվ նա Հայաստանում տպագրվելու և հայագիտությանը զբաղվելու հնարավորություն ստացավ:

Եվ նշանակալից է, որ հատկապես Երևանի պետհամալսարանի պատվավոր դոկտոր և Հայաստանի Գիտությունների ակադեմիայի պատվավոր անդամ Յա. Դաշկևիչի ջանքերի շնորհիվ էր, որ ավելի քան 40-ամյա ընդմիջումից հետո, 2008 թ.-ին Լվովում կայացավ Ուկրաինայի կաթոլիկ համալսարանի և Միչիգանի (ԱՄՆ) համալսարանի կողմից կազմակերպված հայագիտական միջազգային կոնֆերանսը, որին ուկրաինացի և հայ գիտնականներից բացի, մասնակցում էին նաև այլ երկրների ներկայացուցիչներ:

Անշուշտ, այդպիսի գիտաժողովներ անցկացնելու սովորույթը, որի հիմքերը դրվել են դեռևս 1960-ականներին, իրեն արժանի շարունակությունն է պահանջում: Առավել ևս, որ այդ ընթացքում Հայաստանում և Ուկրաինայում պատմագիտությունը հարստացել է նոր նյութերով, որոնք պատշաճ իմաստավորում են պահանջում, իսկ նախկինում հայտնի փաստերը՝ առավել լրջմիտ ընթերցում:

Այդ իմաստով, հայերեն լեզվով Օ. Սուբետելնու «Ուկրաինա. պատմություն» գրքի լույս ընծայումը դրա ևս մեկ ապացույցն է:

**Օլեքսանդր Բոկլո**  
Հայաստանում Ուկրաինայի արտակարգ  
և լիազոր դեսպան



**1991 թ. օգոստոսի 24** - Շրջադարձային տարեթիվ Ուկրաինայի պատմության մեջ. Ուկրաինական ԽՍՀ Գերագույն խորհրդի արտահերթ նիստում ընդունվեց մի պատմական փաստաթուղթ, որով հռչակվեց Ուկրաինայի անկախությունը՝ նոր էջ բացելով երկրի պատմության մեջ:

**1991 թ. օգոստոսի 30** - Ուկրաինայի Գերագույն խորհրդի նախագահությունը որոշում ընդունեց Ուկրաինայի Կոմունիստական կուսակցության գործունեությունը դադարեցնելու վերաբերյալ:

**1991 թ. սեպտեմբերի 4** - Կիևում Գերագույն խորհրդի շենքի վրա բարձրացվեց ազգային կապույտ-դեղին դրոշը:

**1991 թ. հոկտեմբերի 24** - Ուկրաինայի Գերագույն խորհուրդը որոշում ընդունեց Ուկրաինայի ոչ միջուկային կարգավիճակի մասին:

**1991 թ. նոյեմբերի 1** - Ուկրաինայի Գերագույն խորհուրդը հռչակագիր ընդունեց Ուկրաինայի ազգերի իրավունքների վերաբերյալ:

**1991 թ. դեկտեմբերի 1** - Անցկացվեց համաուկրաինական հանրաքվե և կայացավ Ուկրաինայի նախագահական ընտրությունները: Հանրաքվեի մասնակիցների 90,3 %-ը քվեարկեց իրենց իրավունքները Ուկրաինայի անկախության: Երկրնտրամբային ընտրության արդյունքում անկախ Ուկրաինայի առաջին նախագահ ընտրվեց Լ. Կրավչուկը:

**1991 թ. դեկտեմբերի 5** - Ուկրաինայի Գերագույն խորհուրդը որոշում ընդունեց դիմելու «Աշխարհի խորհրդարաններին և ազգերին»՝ 1922 թ.-ի՝ ԽՍՀՄ-ը որպես պետություն ձևավորելու պայմանագիրը չեղյալ հայտարարելու վերաբերյալ:

Ուկրաինայի Գերագույն խորհրդի նախագահ ընտրվեց Ի. Պլուչչը:

**1991 թ. դեկտեմբերի 8** - Բելոռուսիայում տեղի ունեցավ Ուկրաինայի, Բելոռուսիայի և Ռուսաստանի Դաշնության ղեկավարների հանդիպումը, որտեղ համաձայնություն ձեռք բերվեց ԽՍՀՄ գոյությունը դադարեցնելու և ԽՍՀՄ տարածքում ԱՊՀ ստեղծելու վերաբերյալ: Ուկրաինան, որպես ԱՊՀ-ի ստեղծման նախաձեռնողներից մեկը, Միևսկում ստորագրեց համապատասխան համաձայնագիրը:

**1992 թ. հունվարի 15** - Ուկրաինայի Գերագույն խորհուրդը հաստատեց պետական հիմնը: Այն է՝ «Դեռ չի մահացել Ուկրաինան», երաժշտությունը՝ երգահան Ն. Վերբիցկու (1864 թ.), խոսքը՝ Պ. Չուրինսկու:

**1992 թ. հունվարի 28** - Ուկրաինայի Գերագույն խորհուրդը հաստատեց նոր պետական դրոշը՝ վերևից ներքև կապույտ-դեղին՝ երկու հորիզոնական հավասար շերտերով:

**1992 թ. փետրվարի 19** - Ուկրաինայի Գերագույն խորհուրդը հաստատեց պետության զինանշանը՝ եռաձանի, որի պատկերը դեռ Կիևի Մեծ իշխան Վոլոդիմիր Սվյատոսլավիչի օրոք դրոշմվում էր մետաղադրամների վրա: Ուկրաինայի անկախությունից ի վեր այդ զինանշանը Ուկրաինայի ազգային վերածննդի խորհրդանիշն է:

**1992 թ. մարտի 4** - Ուկրաինայի Գերագույն խորհուրդն ընդունեց օրենք՝ «Պետական ձեռնարկությունների գույքի սեփականաշնորհման» վերաբերյալ:

**1992 թ. մարտի 10** - Ուկրաինան անդամակցեց Հյուսիսատլանտյան համագործակցության խորհրդին:

**1992 թ. օգոստոսի 21-24** - Կիևում տեղի ունեցավ ուկրաինացիների համազգային համաժողով:

**1994 թ. հուլիսի 10** - Ուկրաինայի նախագահի ընտրությունների երկրորդ փուլում նախագահ ընտրվեց Լ. Կուչման:

**1994 թ. սեպտեմբերի 20** - Ուկրաինայի Գերագույն խորհուրդն Ուկրաինայի նոր սահմանադրության նախագիծ կազմելու նպատակով հաստատեց հանձնաժողովի նոր կազմը:

**1995 թ. հոկտեմբերի 31** - Գերագույն խորհուրդը որոշում կայացրեց դիմելու Եվրախորհրդին Ուկրաինայի անդամակցության վերաբերյալ:

**1996 թ. հունիսի 28** - Ուկրաինայի Գերագույն խորհուրդն ընդունեց Ուկրաինայի սահմանադրությունը, որն իրավաբանորեն ձևակերպեց ուկրաինական հասարակության քաղաքական, տնտեսական և հոգևոր նոր իրողությունները:

**1996 թ. սեպտեմբերի 1** - Ուկրաինայում շրջանառության մեջ մտցվեց ազգային դրամական նոր արժույթը՝ հրիվնան (այն ուկրաինական հողերում տարածված էր դեռևս Կիևյան Ռուսիայի ժամանակներից):



**1997 թ. նոյեմբերի 19** - Մեկնարկեց ամերիկյան տիեզերանավ «Կոլումբիան», որի միջազգային անձնակազմի մեջ էր նաև ամերիկյան Ռուսիայի Գերագույն խորհրդի հեթաբակյան ընտրությունները: Առաջին անգամ խորհրդարանի պատգամավորների 50 %-ն ընտրվեց քաղաքական կուսակցություններից ու միավորումներից՝ համամասնական ներկայացուցչության հիմունքներով:

**1998 թ. ապրիլ** - Կիևում տեղի ունեցավ Ռուսիայի ազգային բանկի դրամատան պաշտոնական բացումը:

**1998 թ. նոյեմբեր** - Ի հիշատակ 1932-1933 թ.թ.-ների արհեստածին սովետական միլիոնավոր անմեղ զոհերի, Ռուսիայի նախագահի հրամանով հաստատվեց «Սովետական զոհերի հիշատակի օր», որը կնշվի ամեն տարի նոյեմբերի չորրորդ շաբաթ օրը:

**1999 թ. հունվարի 21** - Հաշվի առնելով միասնական Ռուսիայի ստեղծման համար 1919 թ.-ի Ռուսիայի ժողովրդական Հանրապետության և Արևմտյան Ռուսիայի ժողովրդական Հանրապետության միավորման քաղաքական ու պատմական մեծ նշանակությունը, Ռուսիայի նախագահն իր հրամանագրով սահմանեց Ռուսիայի միասնականության օր, որը կնշվի ամեն տարի հունվարի 22-ին՝ Միավորման մասին փաստաթղթի հռչակման օրը:

**1999 թ. մարտի 25** - Ավտոմեքիկայի գոհվեց հայտնի քաղաքական գործիչ, պատգամավոր, Ռուսիայի ժողովրդական շարժման նախագահ Վ. Չոռնովիչը:

**1999 թ. նոյեմբերի 14** - Տեղի ունեցավ Ռուսիայի նախագահական ընտրությունների երկրորդ փուլը: Չայների մեծամասնությամբ (56,23 %) վերընտրվեց Լ. Կուչման:

**1999 թ. նոյեմբերի 29** - Ռուսիայի նախագահն Ռուսիայի խորհրդանիշները հաստատելու նպատակով, հրամանագրով սահմանեց իշխանության պետական խորհրդանիշները՝ Ռուսիայի նախագահի դրոշմը, Ռուսիայի նախագահի զինանիշը, Ռուսիայի նախագահի զինանշանային կնիքը և Ռուսիայի նախագահի մականը:

**2000 թ. հունվարի 13** - Ռուսիայի Գերագույն խորհրդում ձևավորվեց մեծամասնություն: Գերագույն խորհրդի նախագահ ընտրվեց Ի. Պլուչչը:

**2000 թ. փետրվարի 22** - Ռուսիայում վերացվեց մահապատիժը:

**2000 թ. հուլիսի 16** - Ռուսիան հանդիսավոր կերպով նշեց Ռուսիայական ԽՍՀ Գերագույն խորհրդի կողմից ընդունված երկրի պետական ինքնիշխանության հռչակագրի 10-ամյակը:

**2000 թ. հուլիսի 24** - Այս օրը հռչակվել է երկրի ազգային դրոշի օր: 10 տարի առաջ Կիևի քաղաքապետարանի վրա բարձրացվել է ազգային կապույտ-դեղին դրոշը: Այդ իրադարձությունը, որ տեղի էր ունեցել Ռուսիայի Գերագույն խորհրդի կողմից՝ Ռուսիան որպես ինքնիշխան պետություն հռչակելուց մեկ շաբաթ անց, խորհրդանշում էր երկրի զարգացման նոր ուղի:

**2000 թ. դեկտեմբերի 4** - Կիևում անցկացվեցին միջազգային խորհրդարանական լսումներ՝ նվիրված Չեռնոբիլի ատոմային էլեկտրակայանի փակման խնդիրներին: Աշխարհի 7 երկրների խորհրդարանների, 30 միջազգային կառույցների, Եվրախորհրդի խորհրդարանական Համաժողովի, ինչպես նաև 20 երկրների ներկայացուցիչներ Ռուսիայում մասնակցեցին այդ լսումներին և հանգեցին Չեռնոբիլի ատոմային էլեկտրակայանի փակման գաղափարին:

**2000 թ. դեկտեմբերի 15** - Ուլիղ ժամը 12-ին ամբողջությամբ դադարեցվեց Չեռնոբիլի ատոմային էլեկտրակայանի աշխատանքը, որի վթարը մարդկության ողջ պատմության մեջ դարձավ տեխնիկական ամենախոշոր աղետներից մեկը:

**2000 թ. դեկտեմբերի 22** - Ռուսիայում առաջին անգամ նշվեց Ռուսիայական դիվանագիտության օրը: Հենց 1917 թ.-ի այդ օրը Կենտրոնական Ռուսիայի դրոշում ընդունեց ստեղծել Ռուսիայական ժողովրդական Հանրապետության արտաքին գործերի գերագույն բարտուղարություն:

**2001 թ. մարտի 15** - Եվրոպական խորհրդարանը Ռուսիային վերաբերող Եվրոպական Միության ընդհանուր ռազմավարության մասին հռչակագիր ընդունեց (ճանաչվում է Եվրամիության անդամ դառնալու Ռուսիայի իրավունքը):

**2002 թ. մարտ** - խորհրդարանական ընտրությունները կայացան նոր օրենքին համապատասխան՝ մեծամասնական և համամասնական ընտրակարգով: Դրա արդյունքում ձայն խմբակցությունների հավաքած ձայների քանակը պակասեց: Մանդատների մեծամասնությունը՝ 70, ունեցավ Կիևտոր Զուլչենկոյի «Մեր Ռուսիան» կուսակցությունը, 59 մանդատ՝ Ռուսիայական Կոմունիստական կուսակցությունը, 35՝ «Հանուն միասնական Ռուսիայի» կուսակցությունը, 22՝ Յուլյա Տիմոշենկոյի բլոկը, 20՝ Ռուսիայի Սոցիալիստական կուսակցությունը, և 19 մանդատ՝ Ռուսիայի Սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը:

**2002 թ. նոյեմբեր** - Ռուսիայի նախագահ Լ. Կուչման աշխատանքից ազատեց վարչապետ Ա. Կիմախին: Կառավարության ղեկավար ընտրվեց Դոնցկի մարզի պետական վարչության ղեկա-

վար Կիկտոր Յանուկովիչը:

**2003 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր** - Կրասնոդարի երկրամասից ռուսական կողմը սկսեց ամբարտակի կառուցումը դեպի Ռուսիայի պատկանող Տուզլա կղզի՝ այդպես փորձելով փոխել միջպետական սահմանագիծը Կերչի նեղուցում: Ռուսիան քաղաքական-դիվանագիտական միջոցներ ձեռնարկեց իր տարածքի բռնագրավումն արգելելու համար, նաև ուղերձ հղեց ՄԱԿ-ին:

**2003 թ. հոկտեմբերի 23** - Ամբարտակի կառուցումը դադարեցված է: Ռուսիան սահմանապահների և ռուսական շինարարների միջև տարածությունը մոտ 100 մ է:

**2003 թ. նոյեմբերի 26** - Ռուսիայի նախարարների կաբինետի և Լեհաստանի Հանրապետության կառավարության միջև համաձայնագիր ստորագրվեց «Օդեսա-Բրոդի» նավթամուղի շահագործման և լեհական նավթամուղիների դրա միացման վերաբերյալ: Նրանք հանդես եկան ընդհանուր հայտարարությամբ՝ դեպի Պոլոցկ քաղաք «Օդեսա-Բրոդի» նավթամուղի կառուցման նախագծի ավարտական աշխատանքներն իրականացնելու համար իրավական հիմքեր ստեղծելու կապակցությամբ:

**2004 թ. հոկտեմբերի 31** - Տեղի ունեցավ Ռուսիայի նախագահական ընտրությունների առաջին փուլը: Պաշտոնին հավակնում էին 26 թեկնածու: Առաջին փուլի քվեարկության արդյունքները ԿԸԳ-ն հրապարակեց միայն նոյեմբերի 10-ին. Վ. Յուլչենկոյի օգտին քվեարկել էին ընտրողների 39,87 %-ը, Վ. Յանուկովիչի օգտին՝ 39,32 %-ը, այսինքն 0,55 %-ով պակաս:

**2004 թ. նոյեմբերի 21** - Տեղի ունեցավ նախագահական ընտրությունների երկրորդ փուլը: Հաղթող ճանաչվեց Վ. Յանուկովիչը:

**2004 թ. նոյեմբեր-դեկտեմբեր** - «Նարնջագույն հեղափոխություն»՝ բողոքների զանգվածային շարժում նախագահական ընտրությունների կեղծիքների և խախտումների դեմ:

**2004 թ. նոյեմբերի 25** - Ռուսիայի Գերագույն դատարանը դադարեցրեց նորընտիր նախագահին իշխանությունը փոխանցելու գործընթացը:

**2004 թ. դեկտեմբերի 3** - Ռուսիայի Գերագույն դատարանը որոշում ընդունեց, որը վերջ դրեց քաղաքական դիմակայությանը: Դատարանն անհրաժեշտ համարեց նոր քվեարկության միջոցով վերականգնել ընտրական գործընթացի սուբյեկտի իրավունքները՝ Ռուսիայի նախագահի ընտրությունների մասին օրենքի սահմանած կանոններով: Երկրորդ փուլի նոր ընտրություններ նշանակվեցին դեկտեմբերի 26-ին: Գերագույն դատարանի վճիռը, որ բողոքարկման ենթակա չէր, դարձավ կայունացնող գործոն և նպաստեց Ռուսիայական հասարակությունում հույզերի հանդարտվելուն:

**2004 թ. դեկտեմբերի 8** - Ռուսիայի Գերագույն ռազան առանց քննարկման, ծրարային քվեարկությամբ ընդունեց ԿԸԳ-ի հրաժարականի վերաբերյալ օրենքը և քաղաքական բարեփոխումների օրենքներ:

Նախարարների կաբինետը գործադիր իշխանության մարմինների համակարգում դառնում է վերադաս մարմին,

Կառավարությունը նշանակվում է խորհրդարանի կողմից՝ Ռուսիայի նախագահի միջնորդագրով:

Ռուսիայի վարչապետի թեկնածու առաջադրում է Ռուսիայի նախագահը՝ Գերագույն խորհրդում մեծամասնություն ձևավորած պատգամավորական կալիցիայի առաջարկությամբ, Գերագույն խորհուրդը պետք է աշխատի ոչ թե 4 այլ 5 տարի,

խորհրդարանական ընտրություններն անցկացվում են համամասնական ընտրակարգով, Գերագույն խորհրդում մեկ ամսվա ընթացքում խորհրդարանական մեծամասնություն չձևավորվելու դեպքում նախագահը վերջինիս գործունեությունը վաղաժամկետ դադարեցնելու իրավունք է ձեռք բերում:

**2004 թ. դեկտեմբերի 26** - Նախագահական ընտրությունների քվեարկության վերաբերյալ ԿԸԳ-ի տրամադրած արդյունքներն են՝ Վ. Յուլչենկոն հավաքել է 15 116 հազ. ձայն (ընտրողների 51,99 %-ը), Վ. Յանուկովիչը՝ 12 849 հազ. ձայն (ընտրողների 44,2 %-ը), իսկ 682 հազ. հոգի (2,3 %-ը) ոչ մեկի օգտին չի քվեարկել:

**2005 թ. հունվարի 23** - Տեղի ունեցավ նոր նախագահի՝ Կիկտոր Անդրիյի Յուլչենկոյի, պաշտոնի ստանձնման արարողությունը:

**2005 թ. հունվարի 24** - Ռուսիայի վարչապետ ընտրվեց Յուլյա Տիմոշենկոն:

**2005 թ. հունվարի 13** - Եվրախորհրդարանը ձայների ճնշող մեծամասնությամբ (467 կողմ, 19 դեմ) որոշում ընդունեց՝ Եվրամիությանը ապագայում Ռուսիայի անդամակցության հնարավորության վերաբերյալ:

**2005 թ. հոկտեմբերի 18-20** - ՆԱՏՕ-ի հատուկ հանձնախմբի այցը Ռուսիան: ՆԱՏՕ-ի 26



անդամ պետությունների մշտական ներկայացուցիչները և գլխավոր քարտուղար Յապ դե Դոուպ Ալխեֆերը մասնակցեցին Ուկրաինա-ՆԱՏՕ հանձնաժողովի նիստին:

**2005 թ. հոկտեմբերի 23-24** - ՆԱՏՕ-ի գագաթնաժողովը՝ Ուկրաինան Վիճակում (Լիտվա): ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Յապ դե Դոուպ Ալխեֆերը հայտարարեց, որ Դաշինքը պատրաստ է Ուկրաինային օգնություն ցուցաբերել: ՆԱՏՕ-ին անդամակցելու համար Կիևին անհրաժեշտ քաղաքական ու ռազմական բարեփոխումներ իրականացնելու գործում: ԱՄՆ-ի Պաշտպանության նախարար Դոնալդ Ռամսֆելդը Կիևին խոստանում է Վաշինգտոնի բազմակողմանի օգնությունը:

**2006 թ. հունվար** - Առաջին «գազային պատերազմը». հակասություններ Ռուսաստանի հետ՝ բնական գազի գնի և տարանցման արժեքի վերաբերյալ: Ռուսաստանը միակողմանի փակում է բնական գազի մատակարարումը և փորձում է թելադրել իր պայմանները:

**2006 թ. մարտի 26** - Կայացան Ուկրաինայի Գերագույն խորհրդի հերթական ընտրությունները: Գինգերոլը գումարման Գերագույն խորհուրդ անցան Ռեզիդենտի կուսակցությունը (186 մանդատ), Յուլյա Տիմոշենկոյի Բլոկի (129), «Մեր Ուկրաինա» ազգային միությունը (81), Ուկրաինայի Սոցիալիստական կուսակցությունը (33), Ուկրաինայի Կոմունիստական կուսակցությունը (21):

Երկարատև բանակցություններից հետո Ռեզիդենտի կուսակցությանը հաջողվեց Գերագույն խորհրդում ձևավորել մեծամասնություն և հասնել նրան, որ վարչապետ նշանակվի կուսակցության առաջնորդ Վիկտոր Յանուկովիչը:

**2006 թ. սեպտեմբերի 14** - Գտնվելով Բրյուսելում՝ Ուկրաինայի վարչապետ Վ. Յանուկովիչը հայտարարեց ՆԱՏՕ-ին անդամագրվելու Ուկրաինայի անպատրաստականության մասին:

**2007 թ. ապրիլի 2** - Ուկրաինայի նախագահ Վ. Յուշչենկոն ցրեց Գերագույն խորհուրդը և Ուկրաինայում նշանակեց վարչապետ Նոր ընտրություններ՝ որոշումն հիմնավորելով որպես այլ քաղաքական ուժերի կողմից Զակաճգնաժամային կոալիցիայի պատգամավորների «գնում»:

**2007 թ. հունիսի 24** - Տեղի ունեցան խորհրդարանական ընտրություններ: Արդյունքում Յուլյա Տիմոշենկոյի Բլոկից և «Մեր Ուկրաինա» ազգային միությունից ձևավորվեց «Մարնջագույն կոալիցիա», իսկ Ռեզիդենտի կուսակցությունը և Ուկրաինայի Կոմունիստական կուսակցությունն անցան ընդդիմության շարքերը («Լիտվիցի դաշինքը» անորոշ դիրք էր զբաղեցնում): Ուկրաինայի Գերագույն խորհրդի նախագահ ընտրվեց Ա. Յացենյուկը:

**2007 թ. դեկտեմբերի 18** - Յուլյա Տիմոշենկոն նշանակվում է վարչապետ:

**2008 թ. հունվարի 1** - Ուժի մեջ է մտնում Ուկրաինայի և Եվրամիության միջև վիզային համալարի մեղմացման մասին համաձայնագիրը:

**2008 թ. հունվար** - «Երեքի նամակը» (Ուկրաինայի նախագահ Վ. Յուշչենկո, Ուկրաինայի վարչապետ Յուլյա Տիմոշենկո, Գերագույն խորհրդի նախագահ Ա. Յացենյուկ) ՆԱՏՕ-ի ղեկավար մարմիններին՝ Դաշինքի հետ երկխոսության խնդիրները փոխարինելու վերաբերյալ:

**2008 թ. ապրիլի 22 - հունիսի 4** - Ուկրաինայի պատմության մեջ առաջին անգամ դպրոցներում տեղի ունեցավ թեստավորում, որը փոխարինեց ԲՈՒՀ-երի ընդունելության քննություններին: Թեստավորմանը մասնակցեցին դպրոցների այդ տարվա բոլոր շրջանավարտները, ինչպես նաև ԲՈՒՀ-երում սովորելու ցանկություն հայտնաձևող նախորդ տարիների շրջանավարտները:

**2008 թ. մայիսի 16** - Ուկրաինան դառնում է Համաշխարհային առևտրային կազմակերպության լիիրավ անդամ:

**2008 թ. հուլիս** - Համայն Պատրիարք Բարթոլոմեոսի այցը Ուկրաինա:

**2008 թ. սեպտեմբերի 16** - Գերագույն խորհրդի խոսնակ Ա. Յացենյուկը հայտարարեց, որ «Դեմոկրատական կոալիցիան» պաշտոնապես դադարեցրել է իր գործունեությունը, իսկ հաջորդ օրը հրաժարական տվեց նաև ինքը:

**2008 թ. հոկտեմբերի 8** - Ուկրաինայի նախագահ Վ. Յուշչենկոն իր հեռուստաուղերով հայտարարեց վեցերորդ գումարման Գերագույն խորհուրդը ցրելու և նույն տարվա դեկտեմբերի 7-ին վաղաժամկետ ընտրություններ նշանակելու մասին:

**2008 թ. դեկտեմբերի 9** - Ուկրաինայի Գերագույն խորհրդի նախագահ ընտրվեց Վոլոդիմիր Լիտվինը: Կազմավորվեց նոր կոալիցիա՝ Յ. Տիմոշենկոյի Բլոկի, «Մեր Ուկրաինա» ազգային միության մի մասի, «Ժողովրդական ինքնապաշտպանություն» միավորման և Վ. Լիտվինի Բլոկի կազմով: Տեղի ունեցավ «Մեր Ուկրաինա» ազգային միության պառակտումը: Հաշվի առնելով համաշխարհային տնտեսական ճգնաժամի հնարավոր ազդեցությունն Ուկրաինայի ֆինանսական և տնտեսական վիճակի վրա, քաղաքական ուժերը եկան այն եզրակացության, որ վաղաժամկետ ընտրություններ անցկացնելը նպատակահարմար չէ:

**2008 թ. դեկտեմբերի վերջ - 2009 թ. հունվար** - հերթական «գազային պատերազմը»՝ որպես Ուկրաինա-ռուսական հարաբերությունների սրման վկայություն:

**2009 թ. մայիսի 13** - Ուկրաինայի Սահմանադրական դատարանը հաստատեց Ուկրաինայի նախագահի հերթական ընտրությունների օրը՝ 17-ը հունվարի 2010 թ.: Հիմնական թեկնածուներն էին Յուլյա Տիմոշենկոն և Վիկտոր Յանուկովիչը:

**2009 թ. հուլիսի 21** - ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Յապ դե Դոուպ Ալխեֆերի հայտարարությունը՝ ՆԱՏՕ-ի կազմի մեջ մտնելու Ուկրաինայի և Վրաստանի անպատրաստականության մասին:

**2009 թ. ամառ** - Համաշխարհային տնտեսական ճգնաժամի պատճառով Ուկրաինայի ՀՆԱ-ն 2009 թ.-ի առաջին կիսամյակում նվազեց 20,3 %-ով:

## Հայաստանի և Ուկրաինայի միջև երկկողմ հարաբերությունների տարեգրությունը

Հայաստանի Հանրապետությունը ճանաչել է Ուկրաինայի անկախությունը 1991 թ.-ի դեկտեմբերի 18-ին: Երկու պետությունների միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատվել են 1991թ.-ի դեկտեմբերի 25-ից՝ արտաքին գործերի նախարարների կողմից Ուկրաինայի և ՀՀ միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու վերաբերյալ պաշտոնական հայտագրերի փոխանակման ճանապարհով: 1993 թ.-ին բացվում է Հայաստանի Հանրապետության դեսպանությունն Ուկրաինայում, իսկ 1996 թ.-ի սեպտեմբերից Երևանում իր գործունեությունն է ծավալում Ուկրաինայի դեսպանությունը:

### Հանդիպումներ նախագահների մակարդակով

**1996 թ. մայիսի 14-15** - տեղի ունեցավ Ուկրաինայի նախագահ Լ. Կուչմայի պաշտոնական այցը Հայաստան, որի ընթացքում ստորագրվեցին Հայաստանի Հանրապետության և Ուկրաինայի միջև բարեկամության և համագործակցության մասին պայմանագիրը և մի շարք այլ համաձայնագրեր: Նախագահների բանակցությունների արդյունքում ընդունվեց համատեղ կոմյունիկե:

**1997 թ.** - տեղի ունեցավ ՀՀ առաջին նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի պաշտոնական այցը Ուկրաինա:

**1998 թ. հունիս** - ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանը Յալթայում մասնակցեց ՄՕՏՀ գագաթնաժողովին, որտեղ հանդիպեց նաև Ուկրաինայի նախագահ Լ. Կուչմայի հետ:

**1999 թ. սեպտեմբեր** - ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանը մասնակցեց Ուկրաինայի նախագահի նախաձեռնությամբ Դրիմում անցկացվող Բալթյան-Սևծովյան տարածաշրջանի պետությունների (կառավարությունների) ղեկավարների հանդիպմանը:

**2000 թ. օգոստոս (ք. Յալթա) և 2001 թ. օգոստոս (ք. Սոչի)** - ՀՀ և Ուկրաինայի նախագահները հանդիպեցին ԱՊՀ անդամ պետությունների ոչ պաշտոնական նիստերի շրջանակներում:

**2001 թ. մարտ** - տեղի ունեցավ ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի պաշտոնական այցը Ուկրաինա, որի ընթացքում որոշվեցին առևտրատնտեսական համագործակցության զարգացման հիմնական ուղղությունները:

**2002 թ. հոկտեմբերի 9-11** - Ուկրաինայի նախագահ Լ. Կուչման պաշտոնական այցով եղավ Հայաստանում: Այցի ընթացքում ստորագրվեցին 4 համաձայնագիր:

**2003 թ. հունվարին**՝ Կիևում և սեպտեմբերին՝ Յալթայում - երկու պետությունների ղեկավարները հանդիպեցին ԱՊՀ անդամ պետությունների ոչ պաշտոնական նիստերի ժամանակ:

**2004 թ.** - ՀՀ և Ուկրաինայի նախագահները հանդիպեցին Եվրոպական տնտեսական համաժողովի շրջանակներում (ապրիլ, ք. Վարշավա) և ԱՊՀ անդամ պետությունների ղեկավարների նիստի ժամանակ (սեպտեմբեր, ք. Աթանա):

Ուկրաինա-հայկական հարաբերությունների ակտիվացմանը նոր շունչ հաղորդեց **2008 թ.-ի հուլիսի վերջերին** Դրիմում Ուկրաինայի և ՀՀ նախագահների հանդիպումը՝ Սուրբ Խաչ վանական համալիրի հիմնադրման 650-ամյակին նվիրված տոնակատարությունների շրջանակներում՝ հայկական պատվիրակության մասնակցությամբ:

### Կառավարությունների ղեկավարների մակարդակով

**1997 թ. հունիսի 23-26** - Կիևում տեղի ունեցավ Հայ-ուկրաինական Առևտրատնտեսական հարցերով միջկառավարական հանձնաժողովի աշխատանքային նիստ:

**1998 թ. հունիսի 22-25** - Երևանում տեղի ունեցավ Հայ-ուկրաինական առաջին բիզնես ֆորումը:



Այն կարևորվեց տնտեսական հարաբերությունների զարգացման առումով: Կողմերը բարձր գնահատեցին բիզնես ֆորումի արդյունքները, որը մատնանշում էր երկու կողմերի տնտեսվարող սուբյեկտների միջև ուղիղ կապերի ամրաժեշտությունը:

**1999 թ. հուլիս, Կիև** - ԳՀ վարչապետ Վ. Սարգսյանը մասնակցեց միջազգային համաժողովի աշխատանքներին:

**1999 թ. հուլիսի 20** - Կիևում տեղի ունեցավ հայ-ուկրաինական առևտրատնտեսական հարցերով միջկառավարական հանձնաժողովի հերթական նիստը:

**1999 թ. հոկտեմբերի 29** - Ուկրաինայի վարչապետ Վ. Պուստոլոյտենկոն մասնակցեց ԳՀ խորհրդարանում ահաբեկչական գործողության զոհերի հիշատակին նվիրված արարողություններին:

**2004 թ. ապրիլ (ք. Չոլպոն-Աթա)** և **սեպտեմբեր (ք. Աթանա)** - Ուկրաինայի և Հայաստանի Հանրապետության կառավարությունների ղեկավարները հանդիպեցին ԱՊՀ անդամ պետությունների ղեկավարների նիստի շրջանակներում:

**2004 թ. մայիս** - տեղի ունեցավ ԳՀ վարչապետ Ա. Մարգարյանի պաշտոնական այցը Ուկրաինա, որի շրջանակներում անցկացվեց տնտեսական փոխհարաբերությունների հարցերով համատեղ միջկառավարական հանձնաժողովի երրորդ նիստը:

**2006 թ. մայիսի 24** - Ուկրաինայի Ջինված ուժերի գլխավոր հրամանատար, Ուկրաինայի ՋՈՒ շտաբի պետ Ա. Կիրիչենկոյի այցը Հայաստան:

### խորհրդարանների նախագահների մակարդակով

**1995 թ. մարտի 15-17** - տեղի ունեցավ ԳՀ խորհրդարանի խոսնակ Բ. Արարքյանի պաշտոնական այցը Ուկրաինա:

**1997 թ. մայիս** - պաշտոնական այցով Հայաստանում եղավ Ուկրաինայի Գերագույն խորհրդի նախագահ Ա. Մորոզը:

**2005 թ. օգոստոս** - Ուկրաինայի և Հայաստանի խորհրդարանների նախագահները հանդիպեցին Նյու-Յորքում՝ խորհրդարանների նախագահների համաշխարհային գագաթնաժողովի շրջանակներում:

**2005 թ. նոյեմբերի 21-22** - ԳՀ ԱԺ նախագահ Ա. Բաղդասարյանը պաշտոնական այց կատարեց Ուկրաինա, որի ընթացքում հանդիպումներ ունեցավ Ուկրաինայի նախագահ Վ. Յուշչենկոյի և Արտաքին գործերի նախարար Բ. Տարասյուկի հետ:

### Արտաքին գործերի նախարարների մակարդակով

**1996-1997 թ.թ.**-ների ընթացքում ԳՀ և Ուկրաինայի արտգործնախարարներ Վ. Փափազյանը և Գ. Ուդովենկոն կատարել են պաշտոնական փոխադարձ այցեր:

**1997 թ. հունիսի 23-26** - տեղի ունեցավ ԳՀ ԱԳ նախարարի տեղակալ Ս. Մանասերյանի գլխավորած պատվիրակության այցն Ուկրաինա, որի ընթացքում քննարկվեցին երկկողմ հարաբերություններին առնչվող հարցեր:

**1999 թ. դեկտեմբեր** - տեղի ունեցավ ԳՀ ԱԳ նախարար Վ. Օսկանյանի պաշտոնական այցը Ուկրաինա, որի ընթացքում ստորագրվեցին 6 համաձայնագիր:

**2001 թ. հոկտեմբեր** - Ուկրաինայի արտգործնախարար Ա. Զլենկոն պաշտոնական այցով ժամանեց Հայաստան:

**2003 թ. ապրիլ** - երկու երկրների արտգործնախարարները՝ Ա. Զլենկոն և Վ. Օսկանյանը հանդիպեցին ԱՊՀ անդամ պետությունների արտգործնախարարների նիստի շրջանակներում (ք. Դուշանբե), և **դեկտեմբերին** ԵԱԳ արտգործնախարարների նիստի շրջանակներում (ք. Մասստրիխտ):

**2004 թ.-ի մարտին (ք. Մինսկ)** և **սեպտեմբերին (ք. Աթանա)** ԳՀ և Ուկրաինայի արտգործնախարարներ Վ. Օսկանյանը և Կ. Գրիչչենկոն հանդիպեցին ԱՊՀ անդամ պետությունների արտգործնախարարների նիստի շրջանակներում, ինչպես նաև **հունվարին**՝ Վրաստանի նախագահ Մ. Սահակաշվիլու երդման արարողության ժամանակ:

**2005 թ. սեպտեմբեր** - Նյու-Յորքում տեղի ունեցավ Ուկրաինայի և ԳՀ արտգործնախարարներ Բ. Տարասյուկի և Վ. Օսկանյանի հանդիպումը՝ ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 60-րդ նիստի և Համազգային գագաթնաժողովի շրջանակներում:

**2005 թ. դեկտեմբերի 5** - նախարարները հանդիպեցին ԵԱԳ արտգործնախարարների նիստի

ժամանակ (ք. Լյուբլյանա):

**2006 թ. հունիսի 19** - տեղի ունեցավ ԳՀ արտգործնախարար Վ. Օսկանյանի պաշտոնական այցը Ուկրաինա, որի ընթացքում նա հանդիպեց Ուկրաինայի նախագահ Վ. Յուշչենկոյի, Յու. Եխանուրովի և արտգործնախարար Բ. Տարասյուկի հետ:

**2007 թ. մարտի 28** - Ուկրաինայի արտգործնախարար Ա. Յացենյուկը աշխատանքային այց կատարեց Հայաստան, ուր հանդիպեց իր գործընկեր Վ. Օսկանյանի հետ:

**2007 թ. ապրիլ, Կիև** - խորհրդակցություններ Ուկրաինայի և ԳՀ արտաքին քաղաքական գերատեսչությունների մակարդակով: Ուկրաինական պատվիրակությունը գլխավորում էր փոխնախարար Վ. Խանդոզին, հայկականը՝ փոխնախարար Գ. Դարիբջանյանը:

**2008 թ.** - ԵՄ անդամ երկրների և Սևծովյան պետությունների արտգործնախարարների նիստի ժամանակ տեղի ունեցավ ԳՀ և Ուկրաինայի արտգործնախարարներ Վ. Օսկանյանի և Վ. Օզրիզկոյի հանդիպումը:

**2009 թ. մարտի 24, Երևան** - խորհրդակցություններ Ուկրաինայի և ԳՀ արտաքին քաղաքական գերատեսչությունների մակարդակով: Ուկրաինական պատվիրակությունը գլխավորում էր Ա. Պոնոմարենկոն, հայկականը՝ փոխնախարար Ա. Բայբուրտյանը:

**2009 թ. ապրիլի 16** - տեղի ունեցավ ԳՀ արտգործնախարար Է. Նալբանդյանի հանդիպումը Ուկրաինայի արտգործնախարարի տեղակալ Օ. Կուպչիշինի հետ՝ ՍԾՏ արտգործնախարարների խորհրդի նիստի շրջանակներում:

### խորհրդատվություններ

**1999 թ. մայիսի 24-25** - Կիևում տեղի ունեցան ԳՀ և Ուկրաինայի ԱԳ նախարարությունների միջև ամենամյա հերթական քաղաքական խորհրդատվությունները:

**2000թ. մայիսի 30-31** - Երևանում տեղի ունեցան ԳՀ և Ուկրաինայի ԱԳ նախարարությունների միջև քաղաքական խորհրդատվությունները:

**2006 թ. մարտի 24** - Երևանում տեղի ունեցան ԳՀ և Ուկրաինայի ԱԳ նախարարությունների միջև ամենամյա հերթական քաղաքական խորհրդատվությունները:

**2007 թ. ապրիլի 11-12** - Կիևում տեղի ունեցան ԳՀ և Ուկրաինայի ԱԳ նախարարությունների միջև ամենամյա հերթական քաղաքական խորհրդատվությունները:

**2008 թ. ապրիլի 4-5** - Երևանում տեղի ունեցան ԳՀ և Ուկրաինայի ԱԳ նախարարությունների միջև ամենամյա հերթական քաղաքական խորհրդատվությունները: Ուկրաինայի ԱԳ նախարարությունը մասնակցեց հայ-ուկրաինական դիվանագիտական կապերի 90-ամյակին նվիրված ցուցահանդեսի բացմանը:





- Armstrong J.* Ukrainian Nationalism, 1939-1945. New York, 1955.  
*Bazyłow L.* Dzieje Rosji, 1801-1917. Warszawa, 1970.  
*Bilinsky Y.* The Second Soviet Republic: The Ukraine after World War II. New Brunswick, 1964.  
*Blackwell W.* The Beginnings of Russian Industrialization. Princeton, 1968.  
*Bohachevsky-Chomiak M.* The Spring of Nation: The Ukrainians in Eastern Galicia in 1848. Philadelphia, 1967.  
*Borys J.* The Sovietization of Soviet Ukraine 1917-1923. Edmonton, 1980.  
*Braichevskiy M.* Annexation or Reunification / Ed. and trans. by G. Kulchycky. Munich, 1974.  
*Conquest R.* The Harvest of Sorrow: Soviet Collectivization and the Terror-Famine. New York, 1986.  
*Cooper M.* The Phantom War: The German Struggle against Soviet Partisans, 1941-1944. London, 1979.  
*Dallin A.* German Rule in Russia, 1941-1944: A Study in Occupation Policies. London, 1957.  
*Dashkevych Yaroslav.* Armenia and Ukraine. Edition m. p. Kots. Lviv - New York, 2001.  
*Davies N.* God's Playground: A History of Poland. New York, 1982.  
*Dmytryshyn B.* Moscow and the Ukraine 1918-1953. New York, 1956.  
*Doroshenko D.* A Survey of Ukrainian Historiography // Annals of the Ukrainian Academy of Arts and Sciences in the United States. 1957. N 5-6.  
*Drozdowski M.* Spoleczenstwo, panstwo, politycy II Rzeczpospolitej. Krakow, 1972.  
 Dzieje Polski. Warszawa, 1976.  
*Dzyuba I.* Internationalism or Russification. London, 1968.  
 Famine in Ukraine, 1932-1933 / Ed. by R. Serbyn and B. Krawchenko. Edmonton, 1986.  
*Feldman W.* Stronictwa i programy polityczne w Galicji, 1846-1906. Krakow, 1907. T. 2.  
 The Foreign Office and the Famine: British Documents on Ukraine and the Great Famine of 1932-1933 / Ed. by M. Carynnyk, L. Luciuk and B. Kordan. Kingston, 1988.  
 The Grigorenko Memoirs. New York, 1982.  
*Herder J.* Journal meiner Reise im Jahre 1769 // Herders Samtliche Werke. Berlin, 1878. Bd. 4.  
 A. Heritage in Transition: Essays in the History of Ukrainians in Canada / Ed. by M. Lupul. Toronto, 1982.  
*Hesse E.* Der sowjetrussische Partisanenkrieg 1941 bis 1944 im Spiegel deutscher Kampfanweisungen und Befehle. Gottingen, 1969.  
 History of Herodotus / Ed. by G. Rawlinson. New York, 1882. Vol. 3.  
*Hobsbawn E.* Bandits. New York, 1969.  
*Holubnychy V.* The Causes of the Famine of 1932-1933 // Meta. 1979. N 2.  
*Hrushevsky M.* The Traditional Scheme of "Russian" History and the Problem of a Rational Organization of the History of the Eastern Slavs // Annals of the Ukrainian Academy of Arts and Sciences in the United States. 1952. N 2.  
*Hunczak T.* Russian Imperialism. New Brunswick, 1974.  
*Kamenetsky I.* Hitler's Occupation of Ukraine, 1941-1944: A Study of Totalitarian Imperialism. Milwaukee, 1956.  
*Kenez P.* Civil War in South Russia, 1917-1920. Berkeley, 1977.  
*Kohn H.* The Idea of Nationalism. New York, 1961.  
*Kohut Z.* The Abolition of Ukrainian Autonomy (1763-1786): A Case Study in the Integration of a Non-Russian Area into the Empire: PhD dissertation. University of Pennsylvania, 1975.  
*Kopelev L.* The Education of a True Believer. New York, 1978.  
*Kozik J.* Miedzy reakcja a rewolucja: Studia z dziejow Ukrainskiego ruchu narodowego w Galicji w latach 1848-1849. Warszawa, 1975.  
*Kozik J.* Ukrainski ruch narodowy w Galicji w latach 1830-1848. Krakow, 1973.  
*Kravchenko V.* I Chose Freedom. New York, 1946.  
*Krawchenko B.* Social Change and National Consciousness in Twentieth Century Ukraine. New York, 1985.  
*Kuropas M.* To Preserve a Heritage: The Story of Ukrainian Immigration in the United States. New York, 1984.  
 The Lay of the Warfare Waged by Igor. Moscow, 1981.  
 Lenine et la question ukrainienne en 1914: le discours "separatiste" de Zurich // Pluriel. 1981. N 25.  
*Lewin M.* Russian Peasants and Soviet Power: A Study of Collectivization. Evanston, 1968.  
*Lewytzkyj B.* Politics and Society in Soviet Ukraine, 1953-1980. Edmonton, 1984.  
*Lewytzkyj B.* Die Sowjet Ukraine, 1944-1963. Cologne, 1964.  
 Le Livre de la Genese du Peuple Ukrainien. Paris, 1956.  
*Luckyj G.* Between Gogol and Sevcenko. Munich, 1971.  
*Luckyj G.* Literary Politics in the Soviet Ukraine, 1917-1934. New York, 1956.  
*Macartney C.* The House of Austria. Edinburgh, 1978.  
*Magocsi P.* Our People: Carpatho-Rusyns and Their Descendants in North America. Toronto, 1984.  
*Mickiewicz A.* Literatura slowian // Dzieta. 1955. N 10.  
*Motyl A.* The Turn to the Right: The Ideological Origins and Development of Ukrainian Nationalism, 1919-1929. Boulder, 1980.

- Motyl A.* Ukrainian Nationalist Political Violence in Inter-War Poland, 1921-1939 // East European Quarterly. 1985. N 1.  
*Motyl A.* Will the Non-Russians Rebel? Ithaca; London, 1987.  
*Mykhaylo Drahomanov:* A Symposium and Selected Writings / Ed. by I. L. Rudnytsky // Annals of the Ukrainian Academy of Arts and Sciences in the United States. 1952. N 2.  
*Nolde B.* Essays in Russian State Laws // Annals of the Ukrainian Academy of Arts and Sciences in the United States. 1955. N 4.  
*Pares B.* History of Russia. New York, 1926.  
*Petryshyn J.* Peasants in a Promised Land: Canada and the Ukrainians 1891-1914. Toronto, 1985.  
*Pidhainy O.* The Formation of the Ukrainian Republic. Toronto, 1966.  
*Pipes R.* The Formation of the Soviet Union: Communism and Nationalism 1917-1923. Cambridge, 1954.  
*Pipes R.* Russia under the Old Regime. New York, 1974.  
 Poland and Ukraine: Past and Present / Ed. by P. Potichnyj. Edmonton, 1980.  
 Political Thought of the Ukrainian Underground 1943-1951 / Ed. by P. Potichnyj and Y. Shtendera. Edmonton, 1986.  
*Pritsak O.* The Origin of Rus'. Cambridge, 1981.  
*Pushkarev S.* The Emergence of Modern Russia. New York, 1963.  
*Reshetar J.* The Ukrainian Revolution. 1917-1920: A Study in Nationalism. Princeton, 1952.  
*Riasanovsky N.* A History of Russia. New York, 1984.  
*Rudnytsky I. L.* Observations on the Problem of "Historical" and "Non Historical" Nations // Harvard Ukrainian Studies. 1981. N 5.  
*Rudnytsky I. L.* The Political Thought of Soviet Ukrainian Dissent // Journal of Ukrainian Studies. 1981. N 6.  
*Rudnytskyj S.* Ukraine: Land und Volk. Berlin, 1916.  
 The Russian Primary Chronicle / Ed. and trans. by S. Cross. Cambridge, 1930.  
*Serczyk W.* Historia Ukrainy. Wroclaw, 1979.  
*Szczesniak A., Szota W.* Droga do nikad. Warszawa, 1973.  
*Sulimirski T.* The Sarmatians. London, 1972.  
*Sullivant R.* Soviet Politics and the Ukraine, 1917-1957. New York, 1962.  
*Treadgold D.* Twentieth Century Russia. Chicago, 1976.  
 Ukraine in the Seventies / Ed. by P. Potichnyj. Oakville, 1975.  
 The Ukraine, 1917-1921: A Study in Revolution / Ed. by T. Hunczak. Cambridge, 1977.  
 The Ukraine within the USSR: An Economic Balance Sheet / Ed. by I. Koropecykj. New York, 1977.  
 Ukrainian-Jewish Relations in Historical Perspective / Ed. by P. Potichnyj and H. Aster. Edmonton, 1988.  
*Ulam A.* A History of Soviet Russia. New York, 1976.  
*Vernadsky G. Karpovich M.* Kievan Russia. New Heaven, 1948.  
*Von Mohrenschildt D.* Toward a United States of Russia. Rutherford, 1981.  
*Weinryb B.* The Hebrew Chronicles on Bohdan Khmelnytsky and the Cossack-Polish War // Harvard Ukrainian Studies. 1977. N 1.  
*Weinryb B.* The Jews of Poland: A Social and Economic History of the Jewish Community in Poland from 1100 to 1800. Philadelphia, 1972.  
*Wojcik Z.* Dzikie Pola w ogniu. O kozaczyznie w dawnej Rzeczpospolitej. Warszawa, 1968.  
*Wolte B.* Three Who Made a Revolution. New York, 1964.  
*Yaremko M.* Galicia. New York, 1967.

- Ананійчук В.* Визволення західних областей України від німецько-фашистських окупантів. К., 1969.  
*Антоненко-Давидович Б.* Землю українською. Львів, 1942.  
*Антонович В.* Моя исповедь // Основа. 1862. N 1.  
 Археологія Української РСР: У 3 т. К., 1971. Т. 1.  
*Бачинський Ю.* Українська імміграція в З'єднаних Державах Америки. Львів, 1914.  
 Борьба трудящих західних областей УРСР проти фашистських загарбників у роки Великої Вітчизняної війни Радянського Союзу. К., 1984.  
*Будзіновський А.* Аграрні відносини Галичини // Зап. Наук. т-ва ім. Шевченка. 1894. Кн. 4.  
*Винниченко В.* Відродження нації. Київ; Відень, 1920.  
*Витанович І.* Історія українського кооперативного руху. Нью-Йорк, 1964.  
*Воловувев М.* До проблеми української економіки // Документи українського комунізму. Нью-Йорк, 1962.  
*Волющенко А.* Нариси з історії суспільно-політичного руху на Україні в 70-х – на початку 80-х років XIX ст. К., 1974.  
*Головущий В.* Запорізька Січ в останні часи свого існування. 1734-1775. К., 1961.  
*Григорян В. Р.* История армянских колоний Украины и Польши (армяне в Подолии). Ереван, 2005.  
*Грушевський М.* Історія України – Руси: У 10 т. Нью-Йорк, 1954.  
*Гуржій І.* Україна в системі всеросійського ринку 60-90-х років XIX ст. К., 1968.





*Дорошенко В.* Українство в Росії. Відень, 1917.  
*Дорошенко Д.* Історія України 1917–1923 рр. Ужгород, 1932.  
*Дорошенко Д.* Нарис історії України. Варшава, 1932.  
*Жученко В.* Соціально-економічна програма революційного народництва на Україні. К., 1969.  
*Замлинський В.* Українська радянська історіографія про партизанський рух на Україні в роки Великої Вітчизняної війни // Укр. іст. журн. 1971. № 1.  
 Західна Україна під большевиками / За ред. М. Рудницької. Нью-Йорк, 1958.  
*Ісаєвич Я.* Братства та їхня роль в розвитку української культури XVI-XVII ст. К., 1966.  
 Історичні пісні / За ред. І. Березовського. К., 1961.  
 Історія русів / За ред. О. Оглоблина. Нью-Йорк, 1956.  
 Історія селянства Української РСР: У 2 т. К., 1967.  
 Історія Української РСР: У 8 т., 10 кн. К., 1977-1979.  
 Колівщина. К., 1970.  
*Костомаров Н.* Автобіографія. Літературне насліддя. СПб., 1890.  
*Крупницький Б.* Гетьман Данило Апостол і його доба. Аугсбург, 1948.  
*Лапчинський Г.* Гомельське совещание: Воспоминания // Летопись революции. 1926. № 5.  
*Левницький К.* Історія політичної думки галицьких українців. 1814-1914. Львів, 1926.  
*Липинський В.* Листи до братів-хліборобів. Відень, 1926.  
 Літопис Самовидця. К., 1971.  
*Лозинський М.* Галичина в роки 1918-1920. Відень, 1922.  
*Лужницький Г.* Українська церква між Сходом і Заходом. Філадельфія, 1954.  
*Любавський М.* Очерк истории Литовско-Русского государства. М., 1910.  
*Мавродин В.* Образование древнерусского государства и формирование древнерусской народности. М., 1971.  
*Миколаєвич (Стахів) М.* Москофільство: його батьки і діти. Львів, 1936.  
*Миллер Д.* Очерки из истории и юридического быта старой Малороссии: Превращение малорусской старшины в дворянство // Киев. старина, 1897. Кн. 1.  
*Оглоблин О.* Гетьман Іван Мазепа та його доба. Нью-Йорк, 1960.  
*Охримович Ю.* Розвиток української національно-політичної думки. Львів, 1922.  
*Погодин М.* Записка о древнем языке русском // Изв. отд. рус. яз. и словесности Академии наук. СПб., 1856. Кн. 5.  
*Полонська-Василенко Н.* Історія України. Мюнхен, 1972.  
*Попов Н.* Очерки истории Коммунистической партии (большевиков) Украины. Х., 1933.  
 Революционная ситуация в России в 1859-1861 гг.: В 6 т. М., 1960-1972.  
 Розстріляне відродження: Антологія 1917-1933 / За ред. Ю. Лавриненка. Париж, 1959.  
*Рудницький І.* Між історією і політикою. Нью-Йорк, 1973.  
*Славченко М.* Матеріали до економічно-соціальної історії України XIX століття: У 2 т. Одеса, 1925-1927.  
*Соловьев С.* История России: В 15 кн. М., 1959-1966.  
*Софроненко К.* Общественно-политический строй Галицко-Вольнской Руси XI-XIII вв. М., 1955.  
*Старожилов Н.* Партизанские соединения Украины в Великой Отечественной войне. К., 1983.  
*Стороженко Н.* К истории малороссийских козаков в конце XVIII и в начале XIX вв. // Киев. старина. 1897. Кн. 11.  
*Стус Василь.* Листи до сина. Івано-Франківськ Лілея-НВ, 2001.  
*Тихомиров М.* Древнерусские города. М., 1950.  
*Томашівський С.* Історія України: Старинні віки і середні віки. Мюнхен, 1948.  
*Холмський (Крип'якевич) І.* Історія України. Нью-Йорк; Мюнхен, 1949.  
*Шумук Д.* За східним обрієм. Париж; Балтімор, 1974.  
*Яворський М.* Україна в епоху капіталізму. К., 1924.  
*Ястрєвов Ф., Гуслистий К.* Нариси з історії України. К., 1937, Вип. 1.

*Պետրոսյան Փեղամ:* Հայաստանի Հանրապետության և Ուկրաինայի դիվանագիտական հարաբերությունների պատմությունից (1918-1920 թ.թ.): Երևան-2002:



ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ. ՀՆԱԳՈՒՅՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ.....	5
Մասն առաջին. ԿԻԵՎՅԱՆ ՈՌԻՍԻԱ.....	17
1. Կիևյան Ռուսիայի վերելքն ու անկումը.....	18
2. Կիևյան Ռուսիայի հասարակությունն ու մշակույթը.....	39
3. Գալիցիա - Վոլինյան իշխանություն.....	50
Մասն երկրորդ. ԼԵՂ - ԼԻՏՎԱԿԱՆ ՇՐՋԱՆ.....	59
4. Լեհաստանի և Լիտվայի իշխանության ներքո.....	60
5. Սոցիալ-տնտեսական փոփոխություններ.....	70
6. Կրոն և մշակույթ.....	80
Մասն երրորդ. ԿՈՉԱԿԱԿԱՆ ԴԱՐՎԵՐՋԱՆ.....	91
7. Կազմավորման փուլ.....	92
8. Մեծ ապստամբություն.....	110
9. Ավերումը.....	125
10. Հեթմանշինա.....	144
11. Հասարակություն, տնտեսություն, մշակույթ.....	164
Մասն չորրորդ. ԿԱՅՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ.....	185
12. Ուկրաինյան Ռուսական և Ավստրիական կայսրությունների կազմում.....	186
13. Ազգային ինքնագիտակցության զարթոնք.....	203
14. Կայսերական բարեփոխումներ.....	224
15. Սոցիալ-տնտեսական փոփոխություններ.....	239
16. Ստավրականության գործունեությունը.....	257
17. Արևելյան Գալիչինա. ուկրաինության պատվար.....	282
Մասն հինգերորդ. ՈՒԿՐԱԻՆԱՆ XX ԴԱՐՈՒՄ.....	307
18. Պատերազմ և հեղափոխություն.....	308
19. Ուկրաինական հեղափոխություն.....	323
20. Խորհրդային Ուկրաինա. նորարարական 20-ականները.....	345
21. Խորհրդային Ուկրաինա. դրամատիկական 30-ականները.....	366
22. Արևմտյան Ուկրաինան համաշխարհային երկու պատերազմների միջև.....	385
23. Ուկրաինան երկրորդ համաշխարհային պատերազմում.....	410
24. Վերականգնում.....	435
25. Չնհալ.....	448
26. Լճացում և բարեփոխումների փորձեր.....	460
27. Արտագաղթ.....	485
28. Ուկրաինական սփյուռք.....	503
29. Նոր դարաշրջան.....	515
Օ. Բոժկո. Վերջաբանի փոխարեն.....	530
Հավելված.....	539
Հիմնական աղբյուրների ցանկը.....	546



# Օրեստ Սուրսեչևի



Գրախոսականը՝ Պատմական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր, Հայաստանի  
Գիտությունների Ակադեմիայի և ԵՊՀ-ի պատվավոր դոկտոր **Յարոսլավ Ղազկևիչի**

Թարգմանությունը՝ *Ջառա Թումանյանի և  
Ղափթ Բաղդասարյանի*

Ընդհանուր խմբագրությունը  
և վերջաբանը՝ *Օլեքսանդր Բոկլոյի*

Խմբագիր և սրբագրիչ՝ *Միեր Բաղդասարյան*

Համակարգչային շարվածքը  
և ձևավորումը՝ *Գոհար Մակարյանի*

Շապիկի առաջին էջում՝ *Թեոդոս Հումենյուկի «Իմ Ուկրաինա» կտավը*  
Առաջին էջում՝ *Ջապորոժյան կղզակների կնիքը*  
Երկրորդ էջում՝ *Հեթմանի ընտրություններ (XVII դար)*  
Առաջնաթերթում և վերջնաթերթում՝ *Ուկրաինայի քարտեզը (XVII դար)*

Թուղթը՝ օֆսեթ 80 գ  
Չափսը՝ 70x100, 1/16  
Ծավալը՝ 34,5 տպագրական մամուլ  
Տպաբանակը՝ 1000 օրինակ



+9  
2-92  
հռ



Ուկրաինայի անցյալը մեծավ մասամբ պատմությունն է մի ժողովրդի, որն ստիպված էր պայքարել հանուն ինքնուրույն գոյատևման ու զարգացման՝ արդեն կայացած պետությունների ազդեցության ոլորտներից զերծ։ Միջնադարում, Կիևյան Ռուսիայի ժամանակ, Ուկրաինան միջուկն էր կազմում զարմանքի արժանի բաղաբալան, տնտեսական ու մշակութային հզոր մի միության։

XVII դարում ուկրաինական կոզակները հաջողությամբ պայքարում էին իրենց երկիրը օտարերկրյա նվաճողներից ազատագրելու համար։

XVII դարավերջին և XVIII դարասկզբին հատկապես ուկրաինացիներն էին նորի ու առաջադիմականի տիպար շուսների համար, և ոչ թե հակառակը, ինչպես որ դարձավ հետագայում։ XX դարասկզբին ուկրաինացիները լուրջ ու որոշիչ բայլեր ձեռնարկեցին՝ դառնալու սեփական սոցիալ-տնտեսական ու բաղաբալան ճակատագրի տերը՝ որպես ազգ և պետություն։

ՕՐԵՍ ՍՈՒԲՏԵԼՆԻ